ԳԱՌՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՏՈՐ

Գ

ԳԻՐՔ Ի

ՄԵԼ-Ռ

8(092)
Ս-88

ԳԱՌՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

(ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ)

ԵՐԵՔ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ Գ

ԳԻՐՔ Ի

ՄԵԼ–Ռ

2744

ՀԱՅԿ ԳԱ ՄԵՆԱՆՑԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ԲԻՍԼԻՈԹԵԿԱ
Կենտ. Ասիայի և Հարավ. Կովկասի ազգ. գրադարան

ԵՐԵՎԱՆ, «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂ» 1990

ԳՄԴ 92
Ս 887

Ստեփանյան Գ. Խ.
Ս 887 Կենսագրական բառարան։ (Հայ մշակույթի գործիչներ)։ Երեք հատորով.— Եր.։ Խորհրդ. գրող, 1990
Հ. 3։ Գիրք 1։ Մել.—Ռ.— 1990.— 320 էջ։

Կենսագրական բառարանի Գ հատորը լույս է տեսնում գրքով։ Առաջին գիրքը ամփոփում է Մ տառից Ռ տառերը, երկրորդը՝ Ս-ից Ֆ տառերը։

ԳՄԴ

Ս $\frac{4602040000}{705(01)89}$ —92—89

ISBN 5—550—00265—5
ISBN 5—550—00228—0

© «Խորհրդային գրող» հեղինակների համար 1990

Մ

ՄԵԼԻՔ-ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ *(1882—1955).*— Քանդակագործ։ Ծնվել է Երևանում։ 1898 թ. մեկնել է Պետերբուրգ, սովորել բարոն Շտինգլիցի նկարչական ուսումնարանում։ 1902 թ. վերադարձել է ծննդավայրը, աշխատել որպես նկարչության ուսուցիչ։ 1909 թ. նորից է մեկնել Ռուսաստան, սովորել է Մոսկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում, աշակերտելով քանդակագործ ակադեմիկոս Ս. Մ. Վոլնուխինին։ Քանդակել է Ալ. Ծատուրյանին։ 1915-ից Երևանում շարունակել է մանկավարժական և ստեղծագործական աշխատանքը։ Պատրաստել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի նորակառույց շենքի ներսի հայկական ոճի քանդակազարդերը, Գևորգ կաթողիկոսի կիսանդրին (1914) և այլն։ Խորհրդային տարիներին պատրաստել է Կ. Մարքսի, Վ. Ի. Լենինի, Ալ. Մյասնիկյանի, Հ. Աբելյանի և այլ գործիչների կիսանդրիներ։ Մասնակցել է ցուցահանդեսների։

ՄԵԼԻՔ-ՀԱՅԿԱԶՅԱՆ (ԲԵԿԶԱԴՅԱՆ) ՀԵՂԻՆԵ *(1874—1968).*— Գրող։ Ծնվել է Շուշիում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, իսկ բարձրագույնը՝ Անգլիայում և Ֆրանսիայում։ Ունեցել է բազմակողմանի զարգացում. իմացել է անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, անշուշտ նաև հայերեն։ Ճանապարհորդել է բազմաթիվ երկրներ, հասել մինչև Հեռավոր Արևելք։ Վերադառնալով Կովկաս՝ լույս է ընծայել «Մի պառույտ Ճապոնիայում» ճանապարհորդական տպավորությունները (Թիֆլիս, 1905)։ Աշխատակցել է մամուլին։ Եղել է Թիֆլիսի «Վերնատան» անդամներից՝ Թումանյանի, Շանթի, Խահակյանի, Դեմիրճյանի հետ միասին։ Առանձին գրքով լույս է ընծայել նաև «Երկու հազար մետր հողի տակ» վեպը։

ՄԵԼԻՔ-ՄՈՒՇԵԳԱՄԲԱՐՅԱՆ (ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ) ՏԻՐԱՑՐ *(1867 — 1956).*— Բանասեր, հոգևորական գործիչ։ Ծնվել է Արցախի Վարանդա գավառի Նորշեն գյուղում։ Կրթությունն ստացել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա սովորել Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում։ Միաժամանակ հետևել է աստվածաբանական ակադեմիայի դասընթացներին։ Այնուհետև մեկնել է Փարիզ, սովորել Սորբոնի համալսարանում։ Այցելել է Լոնդոն, ծանոթացել Բրիտանական թանգարանում և Օքսֆորդի համալսարանում պահվող հայկական ձեռագրերին, կազմել վերջինիս ցուցակը, արտագրել է Ֆրիկի տաղերը։ Եղել է նաև Բրյուսելում, Վիեննայում, Վենետիկում, Կ. Պոլսում, նայել է բազմաթիվ տաղարաններ, կազմել է Ֆրիկի Դիվանը, 1912 թ. հանձնել է Ն. Ցա Մառին, որ Ռուսաստանի կայսերական ակադեմիայի համաձայնությամբ տպագրել տա։ Տպագրությունն սկսվել է 1917 թ., բայց ընդհատվել է։ 1921 թ. մեկնել է Ամերիկա, պաշտոնավարել իբրև ամերիկահայերի հոգևոր առաջնորդ, շարունակելով զբաղվել բանասիրությամբ։ Ֆրիկի Դիվանը հրատարակել է 1952 թ., Նյու Յորքում, ընդարձակ առաջաբանով ու մանրակրկիտ ծանոթագրություններով։ Պարբերական մամուլում տպագրել է բանասիրական հոդվածներ։ Ռուսերենից, անգլերենից և ֆրանսերենից կատարել է թարգմանություններ։ Գրել է արձակ և չափածո երկեր, հավաքել ժողովրդական բանահյուսության նմուշներ։

ՄԵԼԻՔ-ՆԱԶԱՐՅԱՆ (ԻԶՄԻՐՅԱՆ) ՍՈՓԻԱ *(1843 — 1904).*— Դերասանուհի։ Ծնվել է Թիֆլիսում։ Բեմական ասպարեզ է մտել արևելահայ պրոֆեսիոնալ թատրոնի առաջին տարում՝ 1863 թ., կատարելով Սանդուխտի դերը «Սանդուխտ» ողբերգությունում։ Հասարակությանը ներկայացել է Նվարդ անունով։ Պ. Պողոշյանի վկայությամբ օժտված է եղել բեմական ակընհայտ տվյալներով, գեղեցիկ արտաքինով, հաճելի ձայնով։ Ամուսնացել է Թիֆլիսի քաղաքապետ, արևելահայ թատրոնի հիմնադիրներից Գրիգոր Իզմիրյանի հետ։ Խաղացել է մինչև 1866—1867 թատերաշրջանը, ապա թողել է բեմական կյանքը, զբաղվել է նկարչությամբ, աշակերտել հայտնի նկարիչ Ստեփան Ներսիսյանին։

ՄԵԼԻՔ-ՇԱՀՅԱՆ ՊՈՂՈՍ (ՖԻԶԻԿԱ ՊՈՂՈՍ) *(1788 — 1855).*— Կրթական գործիչ, գիտնական։ Ծնվել է Թուրքիայի Քրքաղաջ քաղաքում։ Կրթությունն ստացել է Զմյուռնիայում և Կ. Պոլսում։ Զբաղվել է ուսուցչությամբ, որպես ականավոր մանկավարժ ձեռք է բերել մեծ համբավ։ Համարվել է ժամանակի ամենազարգացած, սրամիտ մարդկանցից մեկը։ Որպես

դաստիարակ աշխատել է հայանի Պեղճյան ամիրայի տանը։ 1820 թ. մեկնել է Երուսաղեմ, այնտեղից՝ Եգիպտոս։ Վերադառնալով՝ պաշտոնավարել է Զմյուռնիայի, Կ. Պոլսի, Բրուսայի հայկական դպրոցներում։ Զուգահեռ ունեցել է գիտական գործունեություն։ Գրել է տասից ավելի աշխատություն, որոնցից մի քանիսը բնագիտության վերաբերյալ իրենց պարունակած առաջադիմական գաղափարների պատճառով թշնամական մթնոլորտ են ստեղծել նրա շուրջ։ Հակառակորդներին հաջողվել է նրան աքսորել տալ Կեսարիա, իսկ ձեռագրերը՝ այրել։ Միայն մեկն է փրկվել և արժանացել է տպագրության՝ «Տրամաբանություն». լույս է տեսել հեղինակի մահից հետո՝ 1876-ին և հետագայում վերահրատարակվել է։ Նրա մասին ստեղծվել է մեծ գրականություն։

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՍԱՐԵԹ (ԼԻԶԱ) *(1886 — 1932).*— Դերասանուհի։ Ծնվել է Լեռնային Ղարաբաղում։ Բեմական ասպարեզ է մտել 1920-ական թվականների սկզբներին։ 1925 թվականից խաղացել է Բաքվի հայկական դրամատիկական թատրոնում։ 1929 թ. մասնակցել է Հովհ. Աբելյանի խմբի ներկայացումներին Ղարաբաղում և Զանգեզուրում (Ստեփանակերտ, Գորիս)։ Խաղացել է «Գատավճիռ», «Կրիչնկու հարսանիքը», «Սևիլ», «Նամուս», «Պատվի համար», «Զար ոգի», «Հույսի կործանումը» և այլ պիեսներում։ Լավագույն դերերից են՝ Էգիլյա («Սևիլ»), Նադո («Գիքոր»), Վան-Մեյսեն («Ռոսնիկ»), Մարիա Կարպովնա («Մեղք»), Եվա («Փարիզ»), Սանամ («Նամուս»), Գերտրուդ («Համլետ», Վ. Փափազյանի հետ) և այլն։ Մասնակցել է նաև ադրբեջաներեն ներկայացումների։ Ադրբեջաներեն լեզվով կատարել է Դեզդեմոնայի դերը, որպես Օթելլո խաղընկեր ունենալով Հ. Արաբլինսկուն։

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԿՈՍՏԱՆԴԻՆ *(1857—1940).*— Երգիծաբան։ Ծնվել է Շուշիում։ Կրթությունն ստացել է ծննդավայրի թեմական դպրոցում և Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ Ապա մեկնել է Դերբենդ, զբաղվել ուսուցչությամբ։ Այնտեղ բաց է արել Մարիամյան ուսումնարանը, որի տեսչի պաշտոնը վարել է ինքը։ Կարճ ժամանակ Թիֆլիսում աշխատելուց հետո մեկնել է Եվրոպա, սովորել Մոնպելիեի (Ֆրանսիա) երկրագործական դպրոցում։ Վերադառնալով Կովկաս՝ նշանակվել է Էջմիածնի կալվածների ընդհանուր կառավարիչ։ Ունեցել է գրական, հրապարակախոսական գործունեություն։ Երկար տարիներ աշխատակցել է «Մեղու Հայաստանի», «Նոր դար», «Մշակ», «Աղբյուր», «Արձագանք», «Թատրոն» և այլ պարբերականներին։ Լայն ժողովրդականություն է ձեռք բերել Ղարաբաղի բարբառով գրած երգիծական երկերով, որոնք մամուլում լույս են տեսել «Տմբլաչի Խաչոն» ծածկանունով և հետագայում ամփոփվել են երեք հատորանոց «Զուռնա-Տմբլա» ժողովածուում (տպ. Թիֆլիս, 1900—1901 թթ.)։ Գրել է մանկական պատմվածքներ, մանրապատմություններ, ռոմանավորներ, որոնք լույս են տեսել Տ. Նազարյանցի «Աղբյուր» ամսագրում։ Վերահրատարակել է պատմվածքների մի մասը 1888 թ. տպագրել է Շուշիում, «Փշրանքներ» խորագրով։ Հետագայում տպագրել է «Փշրանքների» Բ գրքույկը։ Ունի նաև այլ հրատարակություններ՝ «Ուղեցույց գործնական շնորհամապահության» (Թիֆլիս, 1890), «Ուղեցույց գործնական գինեգործության» (1885), «Վազի մշակությունը» (1900) և այլն։

ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ *(1862—1942).*— Գրող։ Ծնվել է Շուշիում։ Կրթությունն ստացել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ավարտել է 1883-ին։ Որպես ուսուցիչ աշխատել է Ագուլիսում, Դանձակում, Բաքվում։ 1890-ական թվականներին Ա. Արասխանյանի «Մուրճ» ամսագրում տպագրել է գեղարվեստական արձակ երկեր, ինչպես «Վիթխարի ընկուզենին», «Ընկածը», «Երազների աշխարհում», «Հայ գյուղացու սև օրը» և այլն։ Վերջինս լույս է տեսել նաև առանձին գրքով (Թիֆլիս, 1890)։ Հետագայում աշխատակցել է այլ պարբերականների, իսկ 1913 թ. տպագրել «Գործակատար Մարտիրոսը»։

ՄԵԼԻՔ-ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ *(ծն. 1911).*— Թարգմանիչ։ Ծնվել է Կարսի նահանգի Սարիղամիշ ավանում։ Կրթությունն ստացել է Թբիլիսիում։ 1943 թվականից աշխատակցել է «Խորհրդային գրականություն» ամսագրին։ 1948 թվականից զբաղվել է թարգմանչական աշխատանքով։ Առանձին գրքերով լույս տեսած թարգմանություններից են. Բ. Լուկյանով, Վ. Լատով «Նրանք մանկություն չունեն» (1953), Վ. Զորին «Ամերիկայի անթագակիր արքաները»

(1963), Մ. Գալայ «Փորձարկված է երկնքում» (1964), Ն. Կուզնեցով «Նախօրեին» (1968), Ի. Ֆիլիպով «Նոթեր երրորդ ռայխի մասին» (1972) և այլն։ Երկար տարիներ եղել է «Հայֆիլմ» կինոստուդիայի թարգմանիչը, թարգմանել է գեղարվեստական և գիտահանրամատչելի բազմաթիվ ֆիլմերի տեքստերը։

ՄԵԼԻՔ-ՎԻԹԱՆԵՍՅԱՆ ԿՈՍՏԱՆԴԻՆ *(1899—1970).*— Կոմպոզիտոր, երաժշտագետ, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ *(1961)։* Ծնվել է Սուրմալուի գավառի Ալիզամար գյուղում *(այժմ՝ Թուրքիա)։* Մասնագիտական կրթությունն ստացել է Լենինգրադի կոնսերվատորիայում։ Հորինել է տարբեր ժանրի մի շարք երկեր, ինչպես՝ «Կարմիր բանակին», «Երգ բարի երթի», «Վրեժ», «Երգ սիրո մասին» (էստրադային նվագախմբի համար), պար՝ սիմֆոնիկ նվագախմբի համար և այլն։ Առանձին գրքույկներով հրատարակել է երաժշտագիտական հետևյալ աշխատությունները՝ «Ա. Ա. Տիգրանյան» (Մոսկվա, 1939), «Պ. Ի. Չայկովսկի» (1940)։

ՄԵԼԻՔ-ՎՐԹԱՆԵՍՅԱՆ ՕԼԳԱ *(ծն. 1926).*— Ռեժիսոր. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Էջմիածնում։ 1944 թվականին սովորել է Երևանի նորաբաց թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետում։ 1956 թվականից աշխատում է Հայաստանի հեռուստատեսության ստուդիայում որպես ռեժիսոր։ Նրա լավագույն բեմադրություններից են «Գյուլնազ տատի հեքիաթը» շարքը, «Վշտից փախչողը բախտ չի գտնի», «Զինվորն ու օձը», «Փայտե թագավորը» և այլն։ Նկարահանել է լիամետրաժ և կարճամետրաժ ֆիլմեր՝ «Խաչատուր Աբովյան», «Երևանյան էսքիզներ», «Մի անգամ անտառում»։ Հեռուստատեսային բեմադրություններից են «Բարդի իմ, կարմիր գլխաշորով», «Զատ», «Քո սիրո համար», «Եվ դու Բրուտոս» և այլն։ Բեմադրություններ է ունեցել նաև Երևանի Տիկնիկային թատրոնում։ Մասնագիտական հարցեր շոշափող հոդվածներ է տպագրել մամուլում։ Առանձին գրքով 1966-ին լույս է ընծայել «Խորհրդահայ ռեժիսուրայի զարգացման պատմությունից» աշխատությունը։

ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ *(1905—1964).*— Դիրիժոր. ԽՍՀՄ ժողովրդական արտիստ *(1951)։* Ծնվել է Թիֆլիսում։ Երաժշտական սկզբնական կրթությունն ստացել է ընտանիքում, աշակերտելով պրոֆեսոր Հարտմանին։ 1921 թվականից եղել է Թիֆլիսի օպերային թատրոնի դաշնակահար կոնցերտմեյստերը, իսկ 1923-ից՝ դիրիժոր։ Ղեկավարել է Դոլիձեի «Լեյլա» օպերան։ 1924-ին Լենինականի օպերա-օպերետային խմբում ղեկավարել է «Ֆաուստ», «Կարմեն», «Ենգենի Օնեգին» օպերաները՝ հայերեն։ 1928—1930 թթ. սովորել է Լենինգրադի կոնսերվատորիայում, ավարտել դիրիժորական բաժինը։ Մեկ տարի աշխատել է Թիֆլիսի պետական օպերայում, 1931-ին նշանակվել է Մոսկվայի Մեծ թատրոնի դիրիժոր, 1953—1962 թթ.՝ գլխավոր դիրիժոր։ Ղեկավարել է ռուսական, արևմտաեվրոպական և խորհրդային կոմպոզիտորների մի քանի տասնյակ օպերաներ, որոնցից են «Օթելլո», «Վիլհելմ Տել», «Կարմեն», «Պիկովայա դամա», «Բորիս Գոդունով», «Ռուսլան և Լյուդմիլա», «Ամրա», «Դեկաբրիստներ», «Պատերազմ և խաղաղություն», «Ֆաուստ» և այլն։ 1950—1960-ական թվականներին եղել է արտասահմանյան մի շարք երկրներում։ Պրագայում 1958-ին ղեկավարել է «Իշխան Իգոր» և «Կարմեն» օպերաները, Լոնդոնում՝ «Պիկովայա դամա» *(1961), «Ամրան» (1963),* Բուդապեշտում՝ «Ֆաուստը»։ Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում 1958-ին Մոսկվայի Մեծ թատրոնի խմբով ղեկավարել է «Իվան Սուսանին», «Իշխան Իգոր» օպերաները։ Գրել է տարբեր ժանրի մի քանի երկեր, այդ թվում «Տասներկուերորդ գիշեր» օպերան՝ ըստ Շեքսպիրի համանուն գործի, սիմֆոնիա, սոնատներ՝ Ա. Պուշկինի, Ի. Էրենբուրգի խոսքերով։ Արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակների՝ «Չեբեվիչկի» և «Վիլհելմ Տել» օպերաների ղեկավարման համար։ Պարգևատրվել է ֆրանսիական «Գրան պրի» և ամերիկյան արվեստների ակադեմիայի մրցանակներով։

ՄԵԼԻՔ-ՔԱՐԱՄՅԱՆ ԷՐԱԶՄ *(տես Քարամյան Էրազմ)։*

ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ *(1893—1970).*— Հայագետ, Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս *(1965)։* Ծնվել է Մեղրու շրջանի Կալեր գյուղում։ Կրթությունն ստացել է Գանձակի գիմնազիայում,

ապա՝ 1913 թվականից՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում։ 1914 թ. մեկնել է Գերմանիա, հայագետ Յոզեֆ Մարկվարտի օժանդակությամբ ընդունվել Բեռլինի համալսարանը որպես աղատունկնդիր։ Հետևել է գերմաներենի, իրանական, հին հունական լեզուների, գրականության, ինչպես և Հռոմի պատմության ու ասորական գրականության դասընթացներին։ 1920 թ. եկել է Հայաստան։ 1921 թ. նշանակվել է Էջմիածնի գիտական ինստիտուտի նախագահ։ Ավելի քան մեկ տասնամյակ դասավանդել է Երևանի պետական համալսարանում և մանկավարժական ինստիտուտում։ 1930 թվականից աշխատել է Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտում, ապա՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտում որպես գիտական քարտուղար, բաժնի վարիչ։ 1935 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի, 1962 թ.՝ գիտության վաստակավոր գործչի կոչում։ Գրել է բանասիրական, գրականագիտական, աղբյուրագիտական բազմաթիվ աշխատություններ, որոնցից են «Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի» (1947), «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահնամեում» ու հայ մատենագրության մեջ» (1934), «Մհիթար Մհերը Սասնա ծռերի մեջ» (1946), «Հայ միջնադարյան գեղարվեստական արձակը» (1947) և այլն։ Խոշոր աշխատանք է կատարել «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի պատումների հավաքման, գրառման և հրատարակության գործում։ Նրա գրի առածների մեջ բացառիկ արժեք է ներկայացնում ալաշկերտցի Մանուկ Թորոյանի ընդարձակ պատումը։ Համադրծակցել է ակադեմիկոս Մանուկ Աբեղյանին՝ «Սասնա ծռերի» պատումների երկու մեծագիր հատորների պատրաստման ու տպագրման գործում՝ գրելով տեղեկատու բաժինները, ներածականները, աշխարհագրական բացատրությունները, կազմելով բառարանը, հատուկ անունների ցանկը և այլն։ Նրա կատարած բանասիրական աշխատանքներից են Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» քննական բնագրի գիտական հրատարակությունը՝ հետազոտական ծավալուն ներածականով (Երևան, 1961), «Պատմութիւն Փարէզի և Վէննայի» միջնադարյան վեպի հայկական տարբերակների քննա-համեմատական բնագրի լույս ընծայումը համապատասխան ծանոթագրություններով (1966)։ Հայերենից առաջին անգամ կատարել է թարգմանություններ, որոնցից են «Սասունցի Դավիթ» էպոսի տասը ընտիր պատումները, Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորը և Կորյունի «Վարք Մաշտոցին» (1962)։

ՄԵԼԻՔՅԱՆ Ա.Ս.Յ.Ա. (ծն. 1900).— Դերասանուհի։ Ծնվել է Թիֆլիսում։ Կրթությունն ստացել է ծննդավայրի Քամոյան օրիորդաց դպրոցում։ Նախ խաղացել է Ավետյանի բանվորական թատրոնում, ապա՝ Պրոլետարական թատրոնում, 1930—1937 թթ.՝ Լենինականի պետական թատրոնում, իսկ 1937-ից մինչև խոր ծերություն՝ Թիֆլիսի հայկական դրամատիկական թատրոնում։ Լավագույն դերերից են՝ Սաստ («Ապանված աղավնի»), Մարգարիտ («Պատվի համար»), Կեկել («Պեպո»), Շպանիկ («Նամուս») և այլն։

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ (1879—1937).— Հեղափոխական գործիչ, հրապարակախոս-խմբագիր։ Կոմունիստական կուսակցության անդամ 1906-ից։ Ծնվել է Շարուր Դարալագյազի գավառի Փաշալու գյուղում (այժմ՝ Վայքի շրջանի Ջառիթափ)։ Կրթությունն ստացել է Երևանի արական գիմնազիայում, ավարտել 1899 թ. և ընդունվել Խարկովի համալսարանը։ Կապվել է հեղափոխական կազմակերպությունների հետ. մասնակցել է ուսանողական ելույթների, որի պատճառով 1901-ին հեռացվել է համալսարանից։ Հաջորդ տարի ծանոթացել է Ստեփան Շահումյանի հետ։ Նույն տարում ընդունվել է ՌՍԴԲԿ շարքերը, ընտրվել է Ռիգայում հրավիրված համառուսաստանյան ուսանողական համագումարի պատվիրակ։ 1903-ին մեկնել է արտասահման, որտեղ ապրել է մինչև 1912 թ.։ Նախ սովորել է Յուրիխի համալսարանի փիլիսոփայության բաժնում, ապա՝ Նյուշատելի (Շվեյցարիա) ակադեմիայի գրականության ֆակուլտետում, ավարտել 1905 թ.։ Արտասահմանում ծանոթացել է Վ. Ի. Լենինի, Գ. Վ. Պլեխանովի, Ռ. Լյուքսեմբուրգի, Ա. Բեբելի, Կ. Լիբկնեխտի հետ։ 1912 թվականից Երևանի Դայանյան օրիորդաց դպրոցում դասավանդել է ռուսաց լեզու, գրականություն, նաև՝ պատմություն։ 1913-ի վերջերին Երևանում

խմբագրել է բոլշևիկյան «Խոսք» թերթը, որի առաջնորդողների զգալի մասը գրել է ինքը, տպագրել փիլիսոփայական, պատմական, տեսական հոդվածներ։ 1914 թ. ցարական կառավարությունը փակել է «Խոսքը»։ 1918 թ. հաջողվել է վերահրատարակել այն որպես ՌՍԴԲԿ Երևանի կոմիտեի օրգան։ Փետրվարյան հեղափոխության օրերին և հաջորդող շրջանում գործել է Երևանում։ 1920 թ. մեկնել է Մոսկվա, եղել է «Կոմունիստիչեսկի տրուդ» պարբերականի խմբագրի տեղակալ, ապա աշխատել Արտգործժողկոմատի մամուլի բաժնում։ 1921 թ. նշանակվել է Թիֆլիսում լույս տեսնող «Կարմիր ասող» թերթի պատասխանատու քարտուղար։ Եղել է «Մարտակոչ» (հետագայում «Պրոլետար») թերթի ղեկավար աշխատողներից։ 1924 թվականից դասախոսել է Թիֆլիսում նոր բացված 26 կոմիսարների անվան Անդրկովկասյան կոմունիստական համալսարանում։ Նրա «Ընտիր երկերը» լույս է տեսել առանձին գրքով, Երևանում, 1982 թ.։

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՍԵՆ (ծն. 1935).— Ճարտարապետ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում, ավարտել 1958-ին։ 1974-ից Տեխնիկական էսթետիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայկական մասնաճյուղի գիրեկտորն է։ Նախագծել և կառուցել է հասարակական և բնակելի մի շարք շենքեր Երևանում և հանրապետության այլ բնակավայրերում (Սևան, Վարդենիս և այլն)։ Աբովյան փողոցի բարեկարգման և ջրավազանի նախագծման համար արժանացել է մրցանակի։ Նրա նախագծերով երիտասարդական պալատներ են կառուցվել աֆրիկյան մի քանի երկրներում (Կոնգո, Դվինեա)։ Հանրապետական և համամիութենական մամուլում տպագրել է ճարտարապետական հարցերին նվիրված հոդվածներ։ Հեղինակակից է 1968 և 1972 թթ. Մոսկվայում լույս տեսած «Երևան» և «Խորհրդային Հայաստանի ճարտարապետությունը» գրքերի։ 1976 թ. երեք գեղանկարչական գործերով մասնակցել է Բուդապեշտում կայացած հայկական գեղարվեստի ցուցահանդեսին։

ՄԵԼԻՔՅԱՆ (ԲԱՐՍԵՂՅԱՆ) ԱՐՏԱՇԵՍ (1890—1925).— Կրթական գործիչ, բանահավաք։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Նարեկ գյուղում։ Կրթությունն ստացել է Աղթամարում, ինքնազարգացմամբ սովորել ռուսերեն և եվրոպական լեզուներ։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եկել է Ռուսաստան, ապրել Հյուսիսային Կովկասում, ապա՝ Հայաստանում։ Երկար տարիներ որպես հայոց լեզվի, պատմության և աշխարհագրության ուսուցիչ աշխատել է Արմավիրի, Կրասնոդարի, Կիրովականի, Լենինականի հայկական դպրոցներում։ Կազմել է Հայաստանի պատմական քարտեզներ։ Արտաշես Բարսեղյան և Մեհենեղակ ստորագրությամբ բանաստեղծություններ և հոդվածներ է տպագրել մամուլում։ 1915—1917 թթ. եղել է Ե. Լալայանի կազմակերպած ազգագրական արշավախմբի գիտական քարտուղարը։ Գրի է առել մոտ 200 հեքիաթներ, զրույցներ, ավանդություններ։ Նրա գրի առած «Մանասար և Բաղդասար» պատումը հրատարակվել է «Մասնա ծռերի» Ա հատորում, «Ռոստոմ Զալ» վեպը՝ «Ֆիրդուսի» ժողովածուում (1934), մի շարք հեքիաթներ էլ զետեղվել են «Հայ ժողովրդական հեքիաթներ» բազմահատորյակի տարբեր հատորներում։

ՄԵԼԻՔՅԱՆ ԵՂԻԱ-ԵՐՎԱՆԴ (1888—1966).— Գրող, թարգմանիչ։ Ծնվել է Էվերեկում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Տարսոնի ամերիկյան կոլեջում։ 1910 թ. մեկնել է Ամերիկա, շարունակել ուսումը Այովայի համալսարանում, հետևել փիլիսոփայության։ Ավարտելուց հետո որպես փիլիսոփայության դասախոս պաշտոնավարել է Միչիգանի համալսարանում։ Զուգահեռ զբաղվել է գեղարվեստական գրականությամբ։ Աշխատակցել է «Բազմավեպ», «Հայաստանի կոչնակ», «Նավասարդ», «Փյունիկ» և այլ պարբերականների, տպագրելով պատմվածքներ, գեղարվեստական ակնարկներ, որոնց մի մասը հետագայում լույս է ընծայել «Մոխիրներ և կայծեր» խորագրով։ 1967 թ. նամահու տպագրվել է այդ ժողովածուի Բ հատորը՝ Բեյրութում։ Անգլերենից կատարել է գեղարվեստական թարգմանություններ, տպագրել սփյուռքահայ պարբերականներում։ Անտիպ է մնացել նրա «Գերմարդը Նիցշեի փիլիսոփայության մեջ» փիլիսոփայական հետազոտությունը։

ՄԵԼԻՔՅԱՆ ՁՈՒԼՅԻ (1920 — 1967).— Նկարչուհի։ Ծնվել է Թիֆլիսում։ Դուստրն է կոմպո-

գիտոր Սպիրիդոն Մելիքյանի։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստական ինստիտուտում, ավարտել 1941-ին։ Աշխատել է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում որպես նկարիչ-դեկորատոր։ 1950 թվականից զբաղվել է կիրառական արվեստով։ 1960-ից աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կիրառական արվեստի բաժնում։ Գործվածքների էսքիզներով մասնակցել է հանրապետական ցուցահանդեսների։ Հավաքույթ էսքիզներից են «Սիրամարգ», «Հեքիաթ», «Ոսկե աշուն», «Հայկական էլեմենտներ», «Ճնճղուկներ», որոնցից մի քանիսը կիրառվել են արտադրության մեջ։

ՄԵԼԻՔՅԱՆ ՀԵՆՐԻԿ *(ծն. 1926).*— Պատմաբան. պատմական գիտությունների դոկտոր (1972)։ Ծնվել է Մարալիկում (Հայկական ԽՍՀ Անիի շրջան)։ 1948 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը։ 1949—1971 թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանում (1973-ից՝ պրոֆեսոր)։ Դասավանդել է նաև Կոմիտասի անվան կոնսերվատորիայում։ 1969—1971 թթ. եղել է ՀԿԿ Երևանի քաղաքամի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ, 1971—1980 թթ.՝ Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր՝ գիտական աշխատանքների գծով։ 1980-ից աշխատում է Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալում։ Առանձին գրքերով լույս է ընծայել՝ «Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռում (1899—1908)» (Երևան, 1957), «Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան բանակը» (1970), «Հեղափոխական շարժումները Կովկասյան բանակում (1914—1917)» (1975) և այլն։

ՄԵԼԻՔՅԱՆ ՀՈՎԻԿ *(1902 — 1953).*— Գրող, բանաստեղծ։ Ծնվել է Լեռնային Ղարաբաղի Խանլարի շրջանի Խաչական գյուղում (այժմ՝ Ադրբեջանական ԽՍՀ Խանլարի շրջանի Ղուշչի)։ 1926—1928 թթ. աշխատել է «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում որպես բաժնի վարիչ։ 1928—1930 թթ. սովորել է Մոսկվայի ժուռնալիստիկայի ինստիտուտում։ 1937—1939 թթ. աշխատել է «Գրական թերթում», 1938—1941 թթ.՝ Արմֆանում որպես գրականության և արվեստի ինստիտուտի դիրեկտոր, 1944 — 1946 թթ.՝ «Խորհրդային գրականություն և արվեստ» ամսագրում, ապա՝ մինչև կյանքի վերջը՝ Հայկական ԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում իբրև ավագ գիտաշխատող։ 1920-ական թվականների կեսերից մամուլում տպագրել է արձակ երկեր։ Առանձին գրքերով լույս է ընծայել՝ «Զղջում» (Երևան, 1928), «Պատմվածքներ» (1930), «Մի կին գնում է» (Մոսկվա, 1930), «Ճակատագիր» (պատմվածքներ, Երևան, 1931), «Աղջիկը մորու փումը ձեռքին» (1936) և այլն։

ՄԵԼԻՔՅԱՆ ՀՐԱՉՅԱ *(ծն. 1947).*— Կոմպոզիտոր։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի պետական կոնսերվատորիայում, որի ստեղծագործական ֆակուլտետն ավարտել է 1972-ին։ Հորինել է տարբեր ժանրի բազմաթիվ գործեր, ինչպես՝ երգեր Ղ. Ալիշանի, Ա. Խաչատրյանի և այլ բանաստեղծների տեքստերով, «Էջ, ո՞վ կա այնտեղ» օպերան՝ ըստ Վ. Սարոյանի համանուն վիպակի, «Ամբոխները խելագարված» վոկալ սիմֆոնիկ պոեմը՝ ըստ Ե. Չարենցի համանուն երկի, սոնատներ՝ դաշնամուրի, չուպակի, թավջութակի, ֆլեյտի համար և այլն։ Մասնակցել է երիտասարդության համամիութենական մրցույթին և արժանացել է դիպլոմի։

ՄԵԼԻՔՅԱՆ ՀՐԱՉՅԱ *(1913—1941).*— Կոմպոզիտոր։ Ծնվել է Թիֆլիսում։ Որդին է կոմպոզիտոր Սպիրիդոն Մելիքյանի։ Մասնագիտական կրթությունն ստացել է Մոսկվայի Գնեսինների անվան երաժշտական տեխնիկումում, 1933—1935 թթ. սովորել է ստեղծագործական դասարանում, զբաղվար ունենալով Մ. Ֆ. Գնեսինին։ 1940 թ. ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիայի ստեղծագործական դասարանը։ Զորվել է Հայրենական պատերազմում։ Հորինել է մի քանի երգեր՝ այսպես սիմֆոնիկ նվագախմբի համար, «Սասունցի Դավիթ» (պոեմ), լարային կվարտետ, պիեսներ, սոնատներ և այլն։

ՄԵԼԻՔՅԱՆ ՄԵԼԻՔ (ԴԵԴՈՒՇԿԱ) *(1868 — 1918).*— Հեղափոխական գործիչ, գրող։ Կոմունիստական կուսակցության անդամ 1898-ից։ Ծնվել է Բանանկ գյուղում (այժմ՝ Ադրբեջանական ԽՍՀ Դաշքեսանի շրջան)։ Երիտասարդ հասակից որպես բանվոր աշխատել է Բաքվում և Թիֆլիսում։ Մասնակցել է բանվորական շարժումներին։ Նույն տարում մի քանի ընկերներով Թիֆլիսում ստեղծել են բանվորների առաջին Մարքսիստական խմբակը։ Լ. Կրասինի, Բ. Կնունյանցի, Լ. Կեցխովելու հետ 1901-ին եղել է ՌՍԴԲԿ Թիֆլիսում ստեղծված «Հայ սոցիալ-դեմոկրատների միություն» կազմում։ Մասնակցել է «Ինենա» ընդհատակյա տպարանի ստեղծման աշխատանքներին։ Եղել է Ալավերդու բանվորների 1905 և 1906 թվականների գործադուլները կազմակերպողներից։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո աշխատել է Բաքվում, պայքարել Բաքվի կոմունայի ստեղծման համար։ Աշխատակցել է «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր», «Պայքար» բոլշևիկյան թերթերին, Անհաշտ, Բանվոր, Դեղուշկա և այլ ծածկանուններով։ Գրել է պատմվածքներ։ Սպանել են մուսավաթականները Բաքվի կոմունայի անկման օրերին։ Նրա պատմվածքները, հոդվածները վերահրատարակվել են 1974-ին, Երևանում, առանձին գրքով։

ՄԵԼԻՔՅԱՆ ՄԵՀԵՆԴԱԿ *(ծն. 1919).*— Փիլիսոփա. փիլիսոփայական գիտությունների դոկտոր (1969)։ Ծնվել է Կրասնոգարում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի միջազգային հարաբերությունների ֆակուլտետն ավարտել է 1950 թ.։ Ապա ուսումը շարունակել է նույն համալսարանի ասպիրանտուրայում՝ փիլիսոփայության գծով։ Մինչև 1952 թ. եղել է «Պիոներ կանչ» թերթի բաժնի վարիչ, «Երևանի համալսարան» թերթի խմբագիր և այլն։ 1952-ից անցել է դասախոսական աշխատանքի Երևանի պետական համալսարանում։ Դասավանդել է դիալեկտիկական և պատմական մատերիալիզմ։ Եղել է համալսարանի գիտահետազոտական բաժնի վարիչ, 1970-ից պատմական մատերիալիզմի և բարոյագիտության ամբիոնի վարիչ։ Գիտական մամուլում տպագրել է փիլիսոփայական, պատմագրական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Սոցիալիզմը և ազգերը» (Երևան, 1969), «Հայ ազգի կազմավորման և նրա սոցիալիստական վերափոխման հարցի շուրջը» (1957), նույնը ռուսերեն՝ 1957, «Տոհմը, ցեղը, ազգությունը, ազգը որպես մարդկանց ընդհանրության պատմական ձևեր» (1960) և այլն։

ՄԵԼԻՔՅԱՆ ՌՈՄԱՆՈՍ *(1883 — 1935).*— Կոմպոզիտոր, խմբավար։ Ծնվել է Հյուսիսային Կովկասի Ղզլար քաղաքում։ Միջնակարգ կրթությունն ստացել է Նոր Նախիջևանի թեմական դպրոցում, որտեղ ձեռք է բերել երաժշտական առաջին գիտելիքները։ 1902 թ. ավարտել է թեմական դպրոցը, շարունակել ուսումը Ռոստովի երաժշտական ուսումնարանում։ 1905 թ. մեկնել է Մոսկվա, աշխատել Լաղարյան հեմարանում որպես ուսանողական երգչախմբի ղեկավար, միաժամանակ սովորել է ժողովրդական համալսարանում, դասեր վերցրել պրոֆ. Յավորսկուց և կոմպոզիտոր Մ. Իպոլիտով-Իվանովից։ Զբաղվել է հայ ժողովրդական երգերի մշակումով։ Գրել է ռոմանսներ ու խմբերգեր՝ «Նավաքարշներ», «Մի լար, մի լար» (Լերմոնտովի խոսքերով), «Գյուղը», «Երեկո» և այլն։ Հիվանդության պատճառով ընդհատել է ուսումը, վերադարձել է Թիֆլիս։ 1908 — 1910 թթ. երաժշտություն է դասավանդել Հովնանյան դպրոցում։ Ա. Մանուկյանի և այլ երաժիշտ-մանկավարժների հետ հիմնել է «Երաժշտական լիգան», կազմակերպել է երաժշտական երեկոներ, հրատարակել մանկական երգերի ժողովածուներ։ Գրել է «Վարդը» երգ-ռոմանսը, «Ուռենին» զուգերգը։ Կրկին մեկնել է Ռուսաստան և 1910 — 1914 թթ. սովորել է Պետերբուրգի կոնսերվատորիայում, 1912 թ. «Էսքիզներ» խորագրով լույս է ընծայել իր մշակած ժողովրդական երգերից մի քանիսը («Կոտ ու կես», «Լուսնյակն անուշ», «Անձրև եկավ», «Ինչու Բինգյոլը մտար» և այլն)։ Պետերբուրգում գրել է «Աշնան տողեր» ռոմանսների շարքը, «Հին երգը» բալլադը։ 1915-ին եկել է Թիֆլիս։ Այցելել է Վան, Մուշ, Սասուն։ Վերադառնալով Թիֆլիս, գրել է «Զմրուխտի երգեր» ռոմանսների շարքը՝ Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի և ուրիշների խոսքերով։ Դրանցից «Շատիաղ կուտասը», «Սև կաքավիկը», «Միլծիլը», «Օրորը», «Մանուկն ու ջուրը» լայնորեն տարածվել են և արժանի տեղ գրավել համերգային ծրագրերում։ 1921-ին Խորհրդային Հայաստանի հրավերով եկել է Երևան։ Գլխավորել է երաժշտական ստուդիայի և կոնսերվատորիայի (1923) ստեղծման աշխատանքները, կազմակերպել և ղեկավարել է երգչախմբեր։ Տպագրված գործերից են «Զմրուխտի», «Զառ-վառ», «Երկու երգ», «Հայ ժողովրդական երգեր», «Երաժշտական այբբենարան», «Դպրոցական երգեր», «Աշնան մոտիվներ»։ 1929-ին և 1930-ին նրա խմբագրու-

թյամբ լույս են տեսել «Պիոներական» և «Կարմիր բանակային երգեր» ժողովածուները, նաև «Նոր օրեր» երգերի շարքը։

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՊԻՐԻԴՈՆ *(1880 — 1933).*— Կոմպոզիտոր. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1933)։ Ծնվել է Վաղարշապատում։ Կրթություն ստացել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որտեղ նրա երաժշտության ուսուցիչը եղել է Կոմիտասը։ Ուսման ընթացքն ավարտել է 1902-ին և նույն տարվանից պաշտոնավարել է ճեմարանում որպես երգի ու երաժշտության ուսուցիչ, միաժամանակ եղել է Կոմիտասի օգնական խմբավարը։ 1905 — 1908 թթ. մասնագիտությունը կատարելագործել է Բեռլինում, հետևել երաժշտության տեսության և խմբավարության. աշակերտել է Ռ. Շմիդտին։ Բեռլինի համալսարանում էլ հետևել է փիլիսոփայության և երաժշտության պատմության դասընթացներին։ Վերադառնալով Կովկաս՝ 1908 թ. պաշտոնավարել է Շուշիի թեմական դպրոցում, 1909 — 1921 թթ.՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Մոտիկից մասնակցել է «Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության» ստեղծման աշխատանքներին, եղել է այդ ընկերության արշավախմբի կազմում։ Գրի է առել Շիրակի, Վանի երգերից նմուշներ։ 1921-ից աշխատել է Խորհրդային Հայաստանում որպես երաժշտության ուսուցիչ, իսկ 1924 — 1933 թթ. Երևանի պետական կոնսերվատորիայում իբրև տեսական առարկաների դասախոս և խմբավար։ Կարճ ժամանակ եղել է ռեկտոր։ 1926-ին ընտրվել է Հայկական ԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի անդամ։ Հեղինակել է «Աղթամար» բալլադը (ըստ Հովհ. Թումանյանի) երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար։ Մշակել է բազմաթիվ ժողովրդական երգեր, որոնցից լայնորեն տարածվածներից են՝ «Թիկոնդա», «Պիլիբի», «Մամբել», «Քելեր ցոլեր» և այլն։ Հրատարակել է երաժշտագիտական աշխատություններ, ինչպես՝ «Հունական ազդեցությունը հայ երաժշտության տեսականի վրա», «Հայ ժողովրդական երգի գամմաները» (1930), «Կոմիտասի ստեղծագործությունների անալիզը» (1932), «Ուրվագիծ հայ երաժշտության պատմության» (1935)։ Հրատարակել է հայ ժողովրդական երգերի մի քանի ժողովածուներ՝ «Շիրակի երգեր» (1917), «Հայ ժողովրդական երգեր և պարեր» (հատ. 1—2, 1949 — 1952)։ Կազմել և առաջարանով հրատարակել է Գ. Գարասաշյանի գրի առած «Վանա ժողովրդական երգերը» (1937 — 1938, 2 պրակ)։

ՄԵԼԻՔՅԱՆ ՎԱՐԴԱՆ *(ծն. 1908).*— Կրթական գործիչ, թարգմանիչ։ Ծնվել է Թեհրանում (Իրան)։ Կրթությունն ստացել է տեղի հայկական և պարսկական դպրոցներում։ 1946 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան։ Այդ տարվանից պարսկերեն է դասավանդել Երևանի պետական համալսարանի արևելագիտական ֆակուլտետում։ Զուգահեռ զբաղվել է գեղարվեստական գրականության թարգմանությամբ և բանասիրությամբ։ 1955 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ Հայերենից պարսկերեն է թարգմանել Հ. Պարոնյանի, Հովհ. Թումանյանի, Ե. Օտյանի, Ե. Չարենցի և այլ գրողների ստեղծագործություններից նմուշներ։ 1969 թ. Հովհ. Թումանյանի ծննդյան հարյուրամյակի առթիվ «Հայաստան» հրատարակչությունը նրա թարգմանությամբ լույս է ընծայել «Շունն ու կատուն», ապա՝ «Ախթամարը» և «Մի կաթիլ մեղրը»։ Թարգմանել է նաև «Անուշը» և «Թմկաբերդի առումը»։ Պատրաստել է «Պարսկերենի և հայերենի զրամվածաբանական ընդհանրությունները» աշխատությունը։

ՄԵԼԻՔՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ *(1868 — 1928).*— Դերասանուհի։ Ծնվել է Թիֆլիսում։ Բուն անունը եղել է Վարվառե։ Կրթությունն ստացել է Գայանյան օրիորդաց դպրոցում։ 15 տարեկանից խաղացել է Թիֆլիսի հայկական թատրոնում։ Նրա բեմական տաղանդը բարձր գնահատողներից են եղել Գ. Զմշկյանը, Գ. Սունդուկյանը։ Լավագույն դերերից են համարվել՝ Պոլինա («Եկամտավոր պաշտոն»), Մարիա Անդրեևնա («Ռևիզոր»), Էմմա («Ոճրագործի ընտանիքը»), Նատալիա («Խաթաբալա»), Եփեմիա («Պեպո»), Դեզդեմոնա («Օթելլո»), Ժուլֆ («Փարիզի շրջագիծը»), Խանում (համանուն պիեսում) և այլն։

ՄԵԼԻՔՍԵԹ ԿԱԶՄՈՂ *(16-րդ դ.).*— Քարգործ վարպետ։ Ապրել և գործել է հիմնականում Նոր Բայազետում (այժմ՝ Կամո)՝ 16-րդ դարի երկրորդ կեսին։ 1541 և 1567 թթ. նրա քանդակազարդած երկու խաչքարերը գտնվում են Կարմիր գյուղի ս. Աստվածածին եկեղեցու շրջափակում, իսկ 1546 և 1549 թթ. քանդակած խաչքարերը՝ ս. Գևորգ կիսավեր եկեղեցու հարավային պատի

տակ։ Նրա պատրաստած խաչքարերից մեկն էլ պահվում է Կորագույզ գյուղում։ Համարվում է 16-րդ դարի ամենից հմուտ քարգործ վարպետներից։

ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ ԼԵՎՈՆ *(1890 — 1968).*— Հայագետ-բանասեր. Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ (1945)։ Ծնվել է Թիֆլիսում։ 1908 թ. ավարտել է Թիֆլիսի ռեալական ուսումնարանը, 1913 թ.՝ Օդեսայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ Վերադառնալով Թիֆլիս՝ աշխատել է որպես ուսուցիչ տարբեր դպրոցներում։ Եղել է Հայոց ազգագրական ընկերության խմբագրական մասնաժողովի անդամ քարտուղարը, Մոսկովյան հնագիտական ընկերության կովկասյան բաժանմունքի խորհրդի անդամ, ապա՝ գիտական քարտուղար, վրաց լեզվի և պատմության դասատու՝ Թիֆլիսի 3-րդ արական գիմնազիայում։ 1918 թ. նշանակվել է Թիֆլիսի նորաստեղծ համալսարանի դասախոս, այդ պաշտոնում մնացել մինչև մահվան տարին։ Դասավանդել է նախ հայոց լեզու, ապա՝ հայ մատենագրության պատմություն։ Եղել է հայկական բանասիրության ամբիոնի վարիչ։ Հայագիտական և վրացագիտական առարկաներ է դասավանդել նաև Երևանի և Բաքվի համալսարաններում ու ինստիտուտներում։ 1913-ից աշխատակցել է Ն. Մառի խմբագրությամբ լույս տեսնող «Խրիստիանսկի վոստոկ» հանդեսին։ 1920-ական թվականներից սկսած՝ հայկական, վրացական և ռուսական մամուլում տպագրել է հարյուրավոր հոդվածներ պատմաբանասիրական, հնագիտական բնույթի։ Նրա առաջին ծավալուն հետազոտությունն է «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց և նրանց ինքնությունը» (Թիֆլիս, 1928, վրացերեն)։ Ապա լույս է ընծայել «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» եռահատոր աշխատությունը (Ա հատ.՝ Երևան, 1934, Բ հատ.՝ 1936, Գ հատ.՝ 1955)։ Նկատելի աշխատանք է կատարել սկզբնաղբյուրների հրատարակման գործում։ 1927 թ. հրատարակել է Վախտանգ 6-րդի «Օրենսգրքի» հայկական մասը (Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հատվածը), 1952 թ.՝ Ստեփաննոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական»երկի 66-րդ գլխի 18-րդ դարում կատարված վրացերեն թարգմանությունը, 1941 թ. լույս է ընծայել «Հայ հին պատմական մատենագրությունը» վրացերեն աշխատությունը։ Կազմել և 1958 թ. հրատարակել է Ջամշի Մելքոյի երգերի ժողովածուն։ Վրացերեն է թարգմանել Մայաթ Նովայի հայերեն խաղերը։ Գիտական մամուլում ունի տասնյակ հետազոտություններ նվիրված հնագիտական հարցերի։ 1964 թ. լույս է ընծայել «Հայ գրողները և Վրաստանը» գիրքը։

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԿԱՐՈ *(ծն. 1938).*— Բանաստեղծ։ Ծնվել է Ալավերդու շրջանի Արևածագ գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, ավարտել 1965 թ.։ Աշխատել է «Գարուն» ամսագրի, «Ավտոմեքենա և ճանապարհորդ» թերթի խմբագրություններում, իսկ 1971 — 1975 թթ.՝ Երևանի ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեում։ Ապա շարունակել է ուսումը Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի երկամյա գրական դասընթացներում 1971 — 1975, 1979-ից կրկին աշխատել է հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեում։ Առանձին գրքերով հրատարակել է «Աղամամութ» (1968), «Ոսկե ափ» (1978) և «Ոսկե փեթակ» (1984) բանաստեղծությունների ժողովածուները։

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՀՈՎԻԿ *(ծն. 1931).*— Պատմաբան։ Ծնվել է Ալավերդու շրջանի (այժմ՝ Թումանյան) Շեղ գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում։ 1962 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ Հաջորդ տարվանից դասախոսել է Երևանի պետական համալսարանում, դասավանդելով հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմություն։ Մամուլում և գիտական ժողովածուներում տպագրել է պատմագրական հոդվածներ։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Խորհրդային Հայաստան (1915—1940)» (Երևան, 1975), «Սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը Խորհրդային Հայաստան (1921—1925)» (ռուսերեն, 1962), «Բանվոր դասակարգի միջազգային հեղափոխական շարժումը արդի էտապում» (1964) և այլն։

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՍԱՐԳԻՍ *(1899 — 1980).*— Թատերագետ. արվեստագիտության դոկտոր (1972)։ Ծնվել է Գանձակում (այժմ՝ Կիրովաբադ)։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիս-

յան դպրոցում։ 1935 թվականից դասավանդել է Հայաստանի թատերական տեխնիկումում, հետագայում՝ 1944—1950 թթ.՝ Երևանի թատերական ինստիտուտում, որտեղ եղել է նաև դեկան, թատերագիտական ամբիոնի վարիչ, 1923—1925 թթ.՝ «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությունում բաժնի վարիչ, 1934—1938 թթ. «Խորհրդային արվեստի» պատասխանատու խմբագրի տեղակալ և խմբագիր, ապա՝ թատերական բանդարանի դիրեկտոր։ 1950—1954 թթ. աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ-ի արվեստի պատմության և տեսության սեկտորում որպես ավագ գիտաշխատող, 1955 թվականից՝ Գրականության և արվեստի թանգարանում նախ որպես թատեր-երաժշտական բաժնի վարիչ, 1963-ից՝ դիրեկտոր։ Գրել է բանաստեղծություններ, որոնք տպագրվել են մամուլում և առանձին գրքույկներով։ 1927 թվականից ամբողջովին նվիրվել է թատերագիտության։ Առանձին գրքերով հրատարակած գործերն են. «Քիթ Մաթոն» (Երևան, 1925), «Երևանի պետական թատրոնը» (1933), «Անաթեմայից» մինչև աշխատանքի շքանշանը» (1934), «Մեր թատրոնի ուղին» (ռուսերեն, 1941), «Թատերական ակնարկներ» (1945), «Գևորգ Չմշկյան — իմ հիշատակարանը» (գրքի կազմում, առաջաբան և ծանոթագրություններ, 1953), «Հովհաննես Աբելյան» (1954), «Ուրվագիծ խորհրդահայ թատրոնի պատմության» (1960, հանդիսանում է նրա դոկտորական դիսերտացիան), «Մտերմական Շիրվանզադեն» (1965), «Մեծ արվեստի ուժը» (1968), «Կյանք և բեմ» (1970), «Շեքսպիրը և մերոնք» (1974)։

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՎԱՂԻՄ *(ծն. 1924).*— Լրագրող։ Ծնվել է Երևանում։ Որդին է թատերագետ Մարգիս Մելիքսեթյանի։ Բարձրագույն կրթություն ստացել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանում, որի ժուռնալիստիկայի ֆակուլտետն ավարտել է 1955-ին։ Վերադառնալով Երևան՝ աշխատել է «Խորհրդային արվեստ» ամսագրի խմբագրությունում իբրև բաժնի վարիչ, ապա՝ Հ. Բեկնազարյանի անվան կինոստուդիայում իբրև սցենարական բաժնի, Գ. Սունդուկյանի անվան թատրոնում գրական բաժնի վարիչ։ Դասախոսել է գեղարվեստա-թատերական ինստիտուտում։ Մամուլում տպագրել է հոդվածներ, նվիրված գրականության և արվեստի հարցերին։ Գրել է գեղարվեստական ֆիլմերի սցենարներ, Գ. Սունդուկյանի անվան թատրոնում բեմադրել է պիեսներ։

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՎԱՍՊՈՒՐ *(1912 — 1977).*— Պատմաբան. Հայկական ԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Կարսի շրջանի Գորխանա գյուղում։ 1938 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղի պատմության ֆակուլտետը։ 1948-ին պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ 1940 թվականից աշխատել է Հայաստանի պատմության պետական թանգարանում. նախ եղել է բաժնի վարիչ, 1947 թվականից՝ գիտական քարտուղար։ 1949 — 1955 թթ. համատեղության կարգով դասավանդել է Լենինականի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում։ Մամուլում տպագրել է պատմագիտական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Զեյթունի 1862 թ. հերոսական ապստամբությունը» (Երևան, 1950), «Հայ ժողովրդի պատմություն» (3-րդ մաս, միջնակարգ դպրոցների դասագիրք, կոլեկտիվ աշխատանք) (1957), «Ուրվագծեր Խորհրդային Հայաստանի պատմության» (1950), «Զեյթունի հերոսամարտերը» (1960), «Ուղեցույց Հայաստանի պատմության թանգարանի» (կոլեկտիվ աշխատանք, 1961) և այլն։

ՄԵԼՅԱՆ ԱՐԱՄ (ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱ) *(1859—1941).*— Կրթական գործիչ, խմբագիր։ 1880-ական թվականների սկզբներից որպես ուսուցիչ պաշտոնավարել է Երևանի թեմական դպրոցում։ Հետագայում ընդունել է հոգևորական կոչում, կոչվել Մեսրոպ քահանա։ Աշխատակցել է «Մշակ», «Նոր դար» և այլ պարբերականների, օգտագործելով Մուրճ, Մեսրոպ երեց ծածկանունները։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Հայոց մեծ վարդապետ ս. Մեսրոպը» (Թիֆլիս, 1883), «Քահանայական խնդրի շուրջը» (1901), «Հիսնամյակ հայոց հոգևոր դպրանոցի Երևանում» (1888) և այլն։ Խորհրդային տարիներին հրաժարվել է էջմիածնի միաբանությունից և 1924 թ. Երևանում հիմնադրել է «Ազատ եկեղեցի» պարբերականը, որը խմբագրել է մինչև 1929 թ.։

ՄԵԼՅԱՆ ՌՈԶԱ *(ծն. 1905).*— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել

է Երևանում։ 1923-ից սովորել է Երևանի պետական համալսարանի հասարակագիտական բաժնում։ 1924—1931 թթ. եղել է Երևանի լուսաշխի տան դրամատիկական խմբի նախագահը։ Ներկայացումներ է տվել հայկական և ադրբեջանական գյուղերում։ Մասնակցել է Հովհաննես Աբելյանի ներկայացումներին, իսկ 1931-ից խաղացել է պրոֆեսիոնալ թատերախմբերում։ Երկար տարիներ աշխատել է Ստեփանավանի շրջանային թատրոնում, ապա՝ Դիլիջանում, նորից Ստեփանավանում, իսկ 1945—1972 թթ.՝ Լենինականի Ա. Մռավյանի անվան պետական թատրոնում։ Լավագույն դերերից են՝ Կրուչինինա («Անմեղ մեղավորներ»), Ամալիա («Ավազակներ»), Արբայամայր («Արա գեղեցիկ»), Սառա («Սպանված աղավնի»), Ռուզան (համանուն պիեսում), Զառնիշան («Զար ոգի») և այլն։

ՄԵԼՈՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ *(1884 — 1939).*— Կրթական գործիչ, թարգմանիչ։ Ծնվել է Վանում (Արևմտյան Հայաստան)։ Կրթությունն ստացել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ Խորհրդային տարիներին աշխատել է Թիֆլիսի «Կարմիր աստղ», «Մարտակոչ» թերթերի և «Նոր աշխարհ» ամսագրի խմբագրություններում։ Վերոհիշյալ պարբերականներում տպագրել է ինքնուրույն և թարգմանական մի շարք երկեր, նաև բանասիրական հոդվածներ։ Թարգմանել է Պլեխանովի «Պատմության մատերիալիստական ըմբռնումը» (Թիֆլիս, 1928), Պուշկինի «Բորիս Գոդունովը» (1950) և այլն։

ՄԵԼՈՅԱՆ ԶԵՎԱՆԴ *(1877 — 1967).*— Գրող։ Ծնվել է Վանում, կրթությունն ստացել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, աշակերտել Կոմիտասին։ 1910-ական թվականներից աշխատակցել է Թիֆլիսի հայկական մամուլին։ Հետագայում ապրել է Կ. Պոլսում, որտեղ 1911 թ. հրատարակել է «Մայրը» վեպը, հաջորդ տարի՝ «Նկարներ» ժողովածուն։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո մեկնել է Շվեյցարիա, այնտեղից՝ Ֆրանսիա, 1918 թ. ժնևում լույս է ընծայել «Արմենուշ» ֆրանսերեն պիեսը, որի նյութը վերցված է եղեռնի օրերից։ Այդ պիեսը լայն արձագանք է գտել օտար մամուլում, արժանացել մրցանակի, թարգմանվել հայերեն ու բեմադրվել, հեղինակի անվան շուրջ ստեղծելով հետաքրքրություն։ 1921 — 1923 թթ. ամերիկահայ մամուլում տպագրել է «Անառակ որդին» («Արեգ» հանդեսում) և «Դավոյի գավազանությունը» պիեսները։ Հետագայում Փարիզում լույս է ընծայել «Երեք ընկերներ» վեպը։ «Արմենուշի» հայերեն թարգմանությունը տպագրվել է Փարիզում, 1937 թ.։ Գրականագիտական հոդվածներով, գեղարվեստական ստեղծագործություններով աշխատակցել է «Զվարթնոց», «Կյանք և արվեստ», «Անդաստան» և այլ հանդեսների։

ՄԵԼՈՅԱՆ ՖԵԼԻՔՍ *(ծն. 1940).*— Բանաստեղծ, լրագրող։ Ծնվել է Շենգավիթ գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, որի պատմաբանասիրական ֆակուլտետն ավարտել է 1962-ին։ 1964 — 1968 թթ. աշխատել է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, 1966 — 1971 թթ.՝ «Գրական թերթի» խմբագրությունում որպես քննադատական բաժնի վարիչ, 1971—1978 թթ. «Խորհրդային գրականություն» ամսագրում որպես գլխավոր խմբագրի տեղակալ։ 1987-ից «Գրական թերթի» գլխավոր խմբագիրն է։

ՄԵԼՔԻՍԵԹԵԿ *(14-րդ դ.).*— Գրիչ և մանրանկարիչ։ Գործել է Վասպուրականում։ Նրա նկարազարդումներով մեզ հասել է 1338 թ. ընդօրինակված մի Ավետարան, պահվում է Երևանի Մատենադարանում՝ 4813 թվահամարի տակ։ Պարունակում է «Քրիստոսի ծնունդը», «Տեառնընդառաջը», «Հարությունը», «Չորս Ավետարանիչների դիմանկարները» և այլ նկարներ, բոլորն էլ կատարված մեծ արվեստով։ Համարվում է Վասպուրականի մանրանկարչական դպրոցի լավագույն ներկայացուցիչներից մեկը։

ՄԵԼՔԻՍԵԹԵԿ ՊԱՂԱԹԵՅԻ *(18-րդ դ.).*— Կրթական գործիչ, թարգմանիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Ունեցել է կրթական, մանկավարժական գործունեություն։ 1767 թ. թարգմանել է Ալեքսանդր Կանչելարիոսի «Գիրք Պետրոսի մեծին» երկը։ Ձեռագիրը պահվում է Երուսաղեմի հայոց վանքի մատենադարանում։ 1772 թ. էլ թարգմանել է Գեորգի Ֆրանցեսի «Պատմութիւն Յունաց տէրութեան և Կ. Պոլսոյ առման» երկը։

ՄԵԼՔԻՍԵԹԵԿ ՍՈՒՊՂԻ *(17-րդ դ.).*— Բանաստեղծ, հոգևորական, կրթական գործիչ։ Կրթություն ստացել է Կ. Պոլսում։ Վարել է հոգևորական, կրթական պաշտոններ։ 1698 թ. ընտրվել է Կ. Պոլսի հայոց պատրիարք։ Ունեցել

է փոթորկահույզ կյանք։ Գրել է հայատառ թուրքերեն և հայերեն բանաստեղծություններ, որի համար կոչվել է նաև Շաիր, այսինքն՝ բանաստեղծ։

ՄԵԼՔՈՍԵԹ ԵՐԵՑ *(15—16-րդ դդ.).*— Ծաղկող։ 1501 թ. Սասունի ս. Հակոբ վանքում ծաղկել է մի Ավետարան, պահվում է Երևանի Մատենադարանում։

ՄԵԼՔՈՆ ԱՍԱՏՈՒՐ *(տե՛ս Ուղուրլյան Հմայակ)։*

ՄԵԼՔՈՆ ԿԱՋՄՈՂ *(17-րդ դ.).*— Քարգործ վարպետ։ 1667 թ. քանդակել է մի խաչքարգանվում է Գետաբեկի մոտակայքի Հորանց վանքում (Ադրբեջ. ԽՍՀ)։

ՄԵԼՔՈՆ ԿԵՂԵՑԻ *(18-րդ դ.).*— Ծաղկող։ Ապրել է 18-րդ դարի առաջին քառորդում։ 1720 թ. Կեղիում ընդօրինակել ու ծաղկել է Գր. Տաթևացու «Լուծմունք առակաց, երգոց երգոյն» երկը։

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՇՈՏ *(ծն. 1930).*— Նկարիչ։ Ծնվել է Դոնի Ռոստովում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Լենինականի Մերկուրովի անվան նկարչական դպրոցում, Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան ուսումնարանում և Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում, որի գեղանկարչության բաժինն ավարտել է 1956-ին։ Հաջորդ տարվանից մասնակցել է հանրապետական, հետագայում նաև միութենական և արտասահմանյան ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Կարդացող աղջիկը», «Գարնան զարթոնք», «Գետափին», «Իմ ընտանիքը», «Գարնանային ջրեր», «Մոլգավուհու դիմանկարը» և այլն։

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՍԼԱՆ *(1905 — 1971).*— Պատմաբան։ Ծնվել է Վանի նահանգի Արճեշի գավառի Բլուրմակ գյուղում (Արևմտյան Հայաստան)։ 1925 — 1928 թթ. սովորել է Երևանի կուսդպրոցում, 1929 — 1934 թթ.՝ Լենինականի պլանային տնտեսագիտական ինստիտուտում, 1935 — 1937 թթ.՝ ԽՄԿԿ Կենտկոմին կից Սվերդլովի անվան պրոպագանդիստների բարձրագույն դպրոցում։ Եղել է ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից կուսպատ ինստիտուտի դիրեկտոր (1937—1939), Հայկական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր (1941 — 1944), մարքսիզմ-լենինիզմի ամբիոնի վարիչ՝ բժշկական, մանկավարժական, գյուղատնտեսական և այլ ինստիտուտներում (1939 — 1957)։ 1957 թվականից մինչև կյանքի վերջը աշխատել է Երևանի պետական համալսարանում որպես ԽՄԿԿ պատմության ամբիոնի դոցենտ։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Բագրատ Ղարիբջանյան» (Երևան, 1954), «Սուրեն Սպանդարյան» (1957), «Կոմունիստական կուսակցությունը քաղաքացիական պատերազմի սկզբնական շրջանում» (1960), «Մայիսյան ապստամբության հարցի շուրջ» (1965) և այլն։

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԶԱՐԵՀ *(ծն. 1924).*— Գրող։ Ծնվել է Հալեպում (Սիրիա)։ Կրթությունն ստացել է Հալեպի Հայկազյան վարժարանում, ամերիկյան և ֆրանսիական դպրոցներում, Կիլիկիայի Մելքոնյան կրթական հաստատություններում, իսկ բարձրագույնը՝ Բեյրութի ամերիկյան համալսարանում։ Ավարտելուց հետո որպես ուսուցիչ, ապա տնօրեն աշխատել է Բեյրութի Դարուհի Հակոբյան վարժարանում։ Առանձին գրքերով լույս ընծայած գործերն են. «Ես և մարդիկ» (1943), «Ջրհեղեղն հետո» (1947), «Երգանկություն» (1950), երեքն էլ բանաստեղծությունների ժողովածուներ։ Գրել է «Սիրո ցանցի մեջ» և «Անգո հետքեր» պիեսները։ Կազմել է «Գործնական քերականություն» և «Գրական գիտելիքներ» դասագրքերը։ 1968-ին տեղափոխվել է Ամերիկա։

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԼԵՎՈՆ *(ծն. 1924).*— Ճարտարապետ. Հայկական ԽՍՀ վաստակավոր ճարտարապետ (1972)։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում, որի ճարտարապետության ֆակուլտետն ավարտել է 1951 թ.։ Նույն տարվանից աշխատել է «Հայարդնախագիծ» ինստիտուտում, որտեղ հետագայում ղեկավարել է ճարտարապետա-շինարարական բաժինը։ Նրա նախագծերով Երևանում և հանրապետության տարբեր շրջաններում կառուցվել են մի շարք բնակելի տներ, հյուրանոցներ, կապի շենքեր և այլն, ինչպես բնակելի տներ՝ Երևանի Սպանդարյան հրապարակի վրա, Աղայան—Տերյան փողոցի անկյունում, ամառանոցային ավան Մաղկաձորում, հյուրանոց՝ Երևանի Սովետների փողոցում, պանսիոնատ՝ Հրազդան քաղաքի շրջակայքում, կապի հանգույցի շենքեր՝ Արարատում, Մարտունիում, Հոկտեմբերյանում, Սպիտակում, Արտաշատում, Հրազդանում և այլ շրջաններում։

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ *(1849—1934).*— Մեկենաս։ Ծնվել է Թալասում (Թուրքիա)։ Երիտասարդ հասակում եղբոր՝ Գրիգոր Մելքոնյանի հետ տեղափոխվել են Եգիպտոս, զբաղվել ծխախոտի առևտրով, հիմնել Մելքոնյան սիգարետների մեծ գործարանը, դիզել վիթխարի հարստություն՝ մոտ 6000000 անգլիական ոսկի, որը 1925 թ. խոր ծերության հասակում, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցով կտակել են հայ ժողովրդին։ Այդ նվիրատվությամբ է գործում Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունը, որտեղ հայկական դաստիարակություն են ստացել և այժմ էլ ստանում են բազմաթիվ հայ երեխաներ՝ մեծ մասամբ արաբական երկրներից։ Վերոհիշյալ գումարի մի մասն էլ՝ կտակակատար միության՝ Բարեգործականի միջոցով տրամադրվել է հայագիտական հրատարակությունների, որով 1920-ական թվականների կեսերին Երևանում հիմնվել է Մելքոնյան ֆոնդ հրատարակչությունը և տպագրվել են Հր. Աճառյանի, Հ. Մանանդյանի, Մ. Աբեղյանի և այլ գիտնականների բազմաթիվ գործերը։

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱԿՈԲ.— Գրող։ Ծնվել է Բուրգասում (Բուլղարիա)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Սոֆիայի պետական համալսարանի լրագրության բաժնում։ Գրել է ֆանտաստիկ պատմվածքներ, որոնք տպագրվել են բուլղարական մամուլում և թարգմանվել խորհրդային Միությունում, Լեհաստանում, Հունգարիայում, Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունում և այլ երկրներում։ 1980 թ. Սոֆիայում 45 000 տպաքանակով լույս է տեսել նրա «Հուշ երկրագնդի մասին» ֆանտաստիկ պատմվածքների ժողովածուն՝ բուլղար հայտնի արձակագիր Լ. Գիլովի առաջաբանով։ Վարում է բուլգարական «Օրբիտա» շաբաթաթերթի գիտության բաժինը։

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ *(1923 — 1983).*— Բանաստեղծ։ Ծնվել է Հալեպում (Սիրիա)։ 1937 — 1944 թթ. սովորել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում։ Ավարտելուց հետո աշխատել է որպես ուսուցիչ։ 1946 թ. ծնողների հետ ներգաղթել է Խորհրդային Հայաստան, շարունակել կրթությունը Երևանի պետական համալսարանում, ավարտել 1958-ին։ Ասպիրանտական շրջանն անց է կացրել Լենինգրադում՝ ասորագետ Նինա Վիկտորովնա Պիկուլեվսկայայի մոտ։ 1962 թ. ավարտել է ասպիրանտուրան, աշխատել Հայկական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնում։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից (III—V դարեր)» (Երևան, 1970), «Ասորական աղբյուրներ». պարունակում է վեցերորդ դարի ասորի պատմիչներից թարգմանություններ և ուսումնասիրություն (Երևան, 1976)։

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(ծն. 1937).*— Գրող։ Ծնվել է Արթիկի շրջանի Անի-Պեմզա բանավանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում։ Ավարտելուց հետո աշխատել է «Ավանգարդ», «Հայրենիքի ձայն», «Գրական թերթ», «Գարուն» պարբերականների խմբագրություններում։ 1988-ից Հայաստանի գրողների միության քարտուղար է։ 1961-ից հանրապետական թերթերում տպագրել է արձակ երկեր։ Առանձին գրքերով լույս ընծայած գործերն են՝ «Քարավան» (Երևան, 1971), «Հեռավոր հողի ձայնը» (1973), «Հարցաքննություն» (1977), «Մոր ձայնը» (1980), «Հիշողության դաշտ» (1987) և այլն։ Գրիգոր Զալիկյանի հետ գրել է «Հայր Տոնապետի մենախոսությունը» պիեսը, որը բեմադրվել է Երևանի դրամատիկական թատրոնում, 1973 թ.։

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԵԼԻՔՍԵԹ *(ծն. 1932).*— Բանաստեղծ, գրող։ Խորհրդային Միության «Գիտելիք» ընկերության կրկնակի դափնեկիր գիտամասսայական գրականության գծով։ Ծնվել է Լենինականում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի ժուռնալիստիկայի բաժինն ավարտել է 1955-ին։ Մի քանի տարի աշխատել է Ալավերդու «Պղնձի ֆրոնտում» և Լենինականի «Բանվոր» թերթերի խմբագրություններում, ապա՝ Լենինականի քաղաքային կոմիտեում, ռադիոհաղորդումների խմբագրությունում։ 1972-ից աշխատել է ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում իբրև ավագ գիտաշխատող։ Դասավանդել է բարձրագույն ուսումնական հաստատություններում։ 1976 — 1981 թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի համալսարանի հոնորարական արվեստի ամբիոնի վարիչ։ 1972 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա՝ «Մկրտիչ Արմենի ստեղծագործությունը» թեմայով։

Առանձին գրքերով լույս ընծայած գործերն են՝ «Մկրտիչ Արմենն» (1970, 1981), «Հեռատոր դառնում են», «Հրեղեն խոսքի ուժը» (1979), «Հայրենական պատերազմին նվիրված գրականությունը խորհրդահայ գրականագիտության գնահատմամբ» (1985), «Հայրենական մեծ պատերազմը խորհրդահայ գեղարվեստական արձակում» (1985), «Ոչ միայն հացիվ» (1987), «Հունգարական գրականությունը հայերենով» (1988) (հետազոտական աշխատություններ) «Հայր և որդի» (1972), «Մարդու ժպիտը» (1974) (վավերագրական գեղարվեստական ակնարկներ)։ Մասնակցում է Վ. Ի. Լենինի երկերի 5-րդ հրատարակության թարգմանությանը։

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՍԻՐՈՔ (ծն. 1930).— Նկարիչ։ Ծնվել է Թեհրանում (Իրան)։ Կրթությունն ստացել է ծննդավայրի հայկական և պարսկական դպրոցներում, ավարտել Թամադոնի բարձրագույն դպրոցը, իսկ մասնագիտական ուսումը՝ Մարգո Գրիգորյանի «Գալերի էսթետիկ» արվեստանոցում։ 1950-ական թվականների սկզբներից մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների։ 1950, 1951, 1952 թթ. նրա նկարները ցուցադրվել են Իրանա-խորհրդային կուլտուրական կապի ընկերության տարեկան ցուցահանդեսներում, 1953, 1954 թթ.՝ Մեհրդանի, 1956 թ.՝ Թեհրանի Սպիտակ պալատում կազմակերպված 10 լավագույն նկարիչների ցուցահանդեսներում։ Այնուհետև գրեթե ամեն տարի մասնակցել է Թեհրանում և այլ քաղաքներում կազմակերպված ցուցահանդեսների, ինչպես՝ Նյու Յորքում (1973), Արևմտյան Գերմանիայում (1973), Ֆրանսիայում (1976), միշտ իրանական նկարիչների գործերի հետ։ Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Թեհրանում՝ 1957, 1962, 1973, 1978 թթ., Ֆրանսիայում՝ 1976։ Արժանացել է մի քանի մրցանակների։ Իրանական և եվրոպական մամուլը բարձր է գնահատել մասնավորապես պարսկական կյանքը արտացոլող գործերը, ինչպես՝ «Հուսահատ գործադուլավորները», «Պարսիկ կանայք», «Սրճարանում», «Զրույց», «Պարսիկ տղան» և այլն։

ՄԵԼՔՈՆՅԱՆ-ԱՐԱՔՍՄԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ (ծն. 1915)։ Դերասանուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Վանում։ Տարրական կրթությունն ստացել է Լենինականի մանկատներում, իսկ մասնագիտականը՝ Երևանի առաջին պետական թատրոնին կից թատերական ստուդիայում, որտեղ սովորել է 1931—1933 թթ.։ Վերադառնալով Լենինական՝ խաղացել է Ա. Արմենյանի ղեկավարած խմբում։ 1943 թ. տեղափոխվել է Երևան, աշխատել պատանի հանդիսատեսի թատրոնում։ Տարիների ընթացքում կատարած մի քանի տասնյակ դերերից են՝ Գիքոր (համանուն պիեսում), Տուանետ («Երեվակայական հիվանդ»), Մմերալդինա («Երկու տիրոջ ծառա»), Մարգրիտ («Թաթարալա»), Քալի («Քանդած օջախ») և այլն։

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԳՈՀԱՐԻՆԵ (1905—1960).— Օպերային երգչուհի, ռեժիսոր, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թբիլիսի կոնսերվատորիայում, ավարտել է 1922 թ. և ընդունվել է Մոսկվայի Կ. Ս. Ստանիսլավսկու անվան օպերային թատրոնը, աշխատել որպես մենակատարուհի։ Այնտեղ նա միաժամանակ հետևել է ռեժիսորության։ 1936 թ. տեղափոխվել է Երևան, աշխատել Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում։ Հանդես է եկել «Տոսկա», «Բոհեմա» և այլ օպերաներում։ 1938 թվականից անցել է ռեժիսորական աշխատանքի նույն թատրոնում. այնուհետև, ավելի քան երկու տասնամյակ, աշխատել է որպես ռեժիսոր, բեմադրելով բազմաթիվ օպերաներ՝ «Զիո-Զիո-Սան», «Ֆլորիա-Տոսկա», «Հակմե», «Սևիլյան սափրիչ», «Վաճառված հարսնացուն», «Տրուբադուր», «Դավիթ Բեկ» և այլն։ Ունեցել է նաև մանկավարժական գործունեություն։ Երկար տարիներ ղեկավարել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի օպերային դասարանը։

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԷԼԵՈՆՈՐԱ (ծն. 1938).— Երգչուհի։ Ծնվել է Բաքվում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Բաքվի երաժշտական ուսումնարանում, ավարտել 1961-ին։ 1961—1963 թթ. սովորել է Մոսկվայի Չայկովսկու անվան կոնսերվատորիայում, 1963—1968 թթ.՝ Երևանի պետական կոնսերվատորիայում։ Ավարտելուց հետո՝ 1969-ին մասնակցել է Անդրկովկասի երգի մրցույթին և արժանացել է առաջին մրցանակի։ Նույն տարվանից աշխատում է Հայհամերգ երգչախմբում իբրև մենակատար երգչուհի։ 1980-ից երգում է նաև «Շարական» անսամբլում։ Հայհամերգ երգչախմբի կազմում

եղել է Հարավսլավիայում, Ավստրալիայում, Ռումինիայում, Աֆղանստանում և այլ երկրներում։

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ՝ ԹԱՄԱՐ (1914—1981).— Դերասանուհի. Ադրբեջանական ԽՍՀ ժողովրդական արտիստուհի (1961)։ Ծնվել է Բաքվում։ 1931-ից սովորել է Բաքվի հայկական թատրոնին կից դրամատիկական ստուդիայում, միաժամանակ աշխատել է նույն թատրոնում։ Հետագայում խաղացել է Ստեփանակերտի Մ. Գորկու անվան դրամատիկական թատրոնում։ Լավագույն դերերից են՝ Էվելինա («Պեպո»), Սալոմե («Քանդած օջախ»), Մարգարիտ («Պատվի համար»), Նատաշա («Հատակում»), Սևիլ (համանուն պիեսում), Խուրամ («Վագիֆ») և այլն։

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՄԵԼՔՈՒՄ (ծն. 1917).— Մանկավարժ-հոգեբան։ Ծնվել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Նուշիբենդ գյուղում։ 1936-ին ավարտել է Նուշիի մանկավարժական բանֆակը, աշխատել որպես ուսուցիչ։ 1947—1952 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանում։ 1955-ից դասավանդում է նույն համալսարանում։ 1967—1972 թթ. ղեկավարել է մանկավարժության և հոգեբանության ամբիոնը։ Թարգմանել է ուսումնական ձեռնարկներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են. «Երեխաների զարգացումն ու տարիքային մի քանի առանձնահատկությունները» (Երևան, 1957), «Ծնողական դաստիարակության շրջանի խորհրդահայ մանկական գրականությունը և նրա կրթա-դաստիարակչական նշանակությունը» (1960), «Վ. Ի. Լենինը ժողովրդական կրթության և աճող սերնդի կոմունիստական դաստիարակության մասին» (1961), «Էսթետիկական դաստիարակության ընդհանուր խնդիրներն ու կենսագործման մի քանի ուղիները» (1961), «Կոմունիզմը և դպրոցը» (1962), «Դպրոցականների գեղագիտական զգացումունքների դաստիարակությունը» (1967), «Վ. Ի. Լենինը կրթության և դաստիարակության մասին» (1972) և այլն։

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ (1900—1970).— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստուհի։ Ծնվել է Թբիլիսում։ 1919 թվականից խաղացել է Թբիլիսի հայկական թատերախմբերում։ Հետագայում սովորել է ռեժիսոր Մ. Քափանակյանի ղեկավարած թատերական ստուդիայում։ Ավարտելուց հետո աշխատել է Թբիլիսի հայկական դրամատիկական թատրոնում։ 1923 թ. մեկնել է Մոսկվա, սովորել հայկական թատերական ստուդիայում։ Վերադառնալով Թբիլիս, մինչև 1930 թ. շարունակել է խաղալ նույն թատրոնում, ապա տեղափոխվել է Երևան։ Երևանում երկար տարիներ աշխատել է Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնում։ Լավագույն դերերից են՝ Լեդի Միլֆորդ («Սեր և խարդավանք»), Էմիլիա («Օթելլո»), Գերտրուդ («Համլետ»), Կոմսուհի («Ֆիգարոյի ամուսնությունը»), Գլաֆիրա («Եղբոր Բուլբուլով և ուրիշներ») և այլն։

ՄԵԼԱԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ (ծն. 1940).— Գրող։ Ծնվել է Հայկական ԽՍՀ Ապարանի շրջանի Երնջատափ գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինն ավարտել է 1967-ին, իսկ 1978-ին ավարտել է Մոսկվայի կինոսցենարիստների և ռեժիսորների համամիութենական բարձրագույն դասընթացները։ 1967—1969 թթ. աշխատել է «Շինարար» թերթում, ապա՝ «Գարուն» ամսագրի, իսկ 1971—1976 թթ.՝ «Խորհրդային Հայաստանի» խմբագրություններում։ 1979-ից աշխատում է «Հայֆիլմ» կինոստուդիայում։ Գրել է «Լեգենդ սրնգահարի մասին» և «Մազրաթուի ժպիտը» գեղարվեստական ֆիլմերի սցենարները։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Ինչ տաք ես ճամփա» (Երևան, 1966), «Սեղմված շուրթեր» (1973), «Ուշանում եք տղաներ» (1975), «Այս ճանապարհը» (1977), «Իմ և քո ծառը» (1980), «Ապաստան» (1983), «Փոքրիկ սրնգահարի ոգիականը» (1985)։ 1977 թ. Մոսկվայում լույս է տեսել նրա «Երկնագույն թիթեռ» ռուսերեն ժողովածուն։ Պատմվածքներից նմուշներ թարգմանվել են ուկրաիներեն, լեհերեն, գերմաներեն։

ՄԵԼԻԱ ԷՄԻ ՌԱՄՈՍ (ՇԱՀՊԱՐՈՆՅԱՆ ԱՐՓԻԼԵՆ).— Երգչուհի, նկարչուհի։ Ծնվել է Բուենոս Այրեսում (Արգենտինա)։ Մասնագիտական կրթությունն ստացել է ծննդավայրի կոնսերվատորիայում։ Երգել է Բուենոս Այրեսի «Թեաթրո Կոլոն» թատրոնում։ Հետագայում հետևել է նկարչության և ավելի լայն ճանաչում ձեռք բերել։ Մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների, իսկ 1950-ական թվականների կեսերից ունեցել է անհատական ցուցահանդեսներ։ 1956 թ. անհատական ցուցահանդեսում նրա ներկա-

յացրած բնանկարները բարձր գնահատման են արժանացել արգենտինյան մամուլում։ Արգենտինյան թերթերում և հանդեսներում տպագրել է հոդվածներ հայ ժողովրդի պատմության, գրականության և արվեստի մասին։ Աշխատակցել է նաև ամերիկահայ և արգենտինահայ մամուլին։

ՄԵՍԱՏՈՒՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ *(1909—1966).*— Քանդակագործ. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Սուխումում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Վրաստանի գեղարվեստների ակադեմիայում, որի քանդակագործության բաժինն ավարտել է 1941 թ.։ 1930 թվականից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Խորհրդային տանկիստների մարտական անցումը», Ա. Ի. Միկոյանի կիսանդրին, Մ. Սարյանի, Ս. Առաքելյանի դիմաքանդակները և այլն։

ՄԵՍԱՐԵՆՑ ՄԻՍԱՔ *(1886—1908).*— Բանաստեղծ։ Ծնվել է Ակն քաղաքի Բինկյան գյուղում (Արևմտյան Հայաստան), Մեծաուրյանների ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում։ 1895 թվականի կոտորածներից հետո, երբ հիմնովին քանդվել է հայրենի գյուղը, տեղափոխվել է Սեբաստիա, եղբոր մոտ, շարունակել ուսումը։ Ապա սովորել է Մարզվանի ամերիկյան կոլեջում։ Այնուհետև մեկնել է Կ. Պոլիս, սովորել Կեդրոնական վարժարանում։ Աշակերտական տարիներից գրել է բանաստեղծություններ, որոնցից մի քանիսը տպագրվել են «Մասիս» և «Ծաղիկ» պարբերականներում՝ Սիրանույշ Պերպերյան ծածկանունով։ Հետագայում իր ուսանավորներն ստորագրել է Շավասպ Միածան, ավելի ուշ՝ Միսաք Մեծարենց։ 1907 թ. Կ. Պոլսում լույս են տեսել նրա բանաստեղծությունների «Միածան» և «Նոր տաղեր» ժողովածուները։ Նրա բանաստեղծություններն արտատպվել են տանջալի ժողովածուներում, դասագրքերում. նմուշներ թարգմանվել են ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն և այլ լեզուներով։ 1924 թ. Կ. Պոլսում վերահրատարակվել են նրա երկերը «Միածան և նոր տաղեր» խորագրով։ Գրել է նաև արձակ բանաստեղծություններ, որոնք լույս են տեսել Կ. Պոլսում, «Ոսկե արիշին տակ» ժողովածուում։ Նրա չափածո երկերը կրկնակի տպագրության և հատուկ հետազոտությունների են արժանացել խորհրդային տարիներին։ Երկերի ամբողջական և լավագույն հրատարակությունն է Վ. Աճառյանի և Վ. Նորենցի կազմածը (Երևան, 1934)։ Հետագայում մի այլ տպագրություն է կատարվել 1956 թ.։ Առանձին գրքերով նրա մասին լույս տեսած աշխատություններից են Թ. Ադամյանի «Միսաք Մեծարենց. իր կյանքը» (Կ. Պոլիս, 1922), Էդ. Չրբաշյանի «Միսաք Մեծարենց» (Երևան, 1959) և այլն։

ՄԵՍՀԱԲՅԱՆ ԱՐՇԱԿ *(1865 — ?).*— Գրող, թարգմանիչ, հրատարակիչ։ Ծնվել է Շուլավերում։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Ունեցել է մանկավարժական երկարամյա գործունեություն. պաշտոնավարել է Թիֆլիսի, Շուշիի, Երևանի հայկական դպրոցներում։ Օգտագործել է Սրինդ, Սյումբյուլ ծածկանունները։ Առանձին գրքերով լույս ընծայած գործերն են՝ «Երբախայրիք պատկերազարդ, հատվածներ մանուկների համար» (Ա գիրք՝ Գարուն, Թիֆլիս, 1887, Բ գիրք՝ Ամառ, 1887, Գ գիրք՝ Աշուն, 1888, Դ գիրք՝ Ձմեռ, 1889), «Բնության երգեր և բանաստեղծություններ» (1891), «Բանաստեղծություններ» (Մոսկվա, 1891)։

ՄԵՍՀԱԲՅԱՆ ԵԼԵՆԱ (ՀԵՂԻՆԵ) *(1893—?).*— Տավիղահար։ Ծնվել է Մոսկվայում։ 1911 թ. ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիան և մինչև 1915 թ. աշխատել է Մոսկվայի սիմֆոնիկ նվագախմբում որպես տավիղահար։ 1915-ից պաշտոնավարել է Եկատերինոդարի երաժշտանոցում որպես ավագ ուսուցիչ։ Տավիղի համերգներ է տվել Ռուսաստանի մի շարք քաղաքներում։ 1919 թ. ամռանը՝ Հաբությունի Մեհրաբյանի հետ մեկնել է Կ. Պոլիս, աշխատել «Պոլսո հայ դրամատիկ» թատերախմբում, ապա՝ 1923-ին տեղափոխվել է Ամերիկա, որտեղ մասնակցել է երգահանդեսների, տվել բազմաթիվ համերգներ։ Ունեցել է հատուկ ստուդիա։

ՄԵՍՀԱԲՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ *(ծն. 1952).*— Մշակութային գործիչ։ Ծնվել է Երևանում։ Ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի փիլիսոփայության բաժինը։ 1971-ից ստեղծել է Պարույր Սևակի ֆոնդ-արխիվ, շուրջ տասը հազար միավոր նյութ (գրքեր, ամսագրեր, թերթեր, լուսանկարներ, ձայնագրություններ, ազդագրեր, հրավիրատոմսեր, բուկլետների հավաքածու և այլն), որոնք գի-

տական դասակարգումով և համապատասխան քարտագրությամբ ամփոփված են 17 բաժիններում։ Պ. Սևակ ֆոնդ-արխիվի ստեղծման, դրա նշանակությանը վերաբերող՝ «Մաքուր էր նրա կյանքի ճանապարհը» վերնագրով հոդված է տպագրել (Մոսկվա, «Սովետսկայա բիբլիոգրաֆիա» № 1, 1990) ամսագրում։ Որպես հեղինակ-կազմող հրատարակել է «Նորից քեզ հետ» (1990), Պ. Սևակի կյանքն ու գործը լուսաբանող պատկերազարդ գիրքը։ Գրացիա Բաղդասարյանի հետ կազմել է «Պ. Սևակ. գրականության և արվեստի մասին» (1990) գիրքը։ Որպես խորհրդատու մասնակցել է «Պարույր Սևակ» (1990) վավերագրական ֆիլմի ստեղծման աշխատանքներին։ Հանրապետական մամուլով և ռադիո-հեռուստատեսությամբ տարբեր տարիների քանիցս հանդես է եկել Պ. Սևակ ֆոնդ-արխիվի, ինչպես քաղաքամայր Երևանում գիտամշակութային օջախ հիմնելու, այնպես էլ «Պարույր Սևակ»-ի անվան բանկում ընթացիկ հաշվեհամար բացելու խնդիրների շուրջ։ Այդ առումով հիշատակելի են նաև այն բազմաթիվ հրապարակումները, որոնք նվիրվել են է. Մեհրաբյանի ստեղծած Պարույր Սևակ ֆոնդ-արխիվին։

ՄԵՍՀԱԲՅԱՆ ԼԵՎԱՆ *(1890—1954).*— Գրող։ Ծնվել է Թիֆլիսում։ Կրթությունն ստացել է Ներսիսյան դպրոցում, ավարտել 1912-ին և դրաղվել է ուսուցչությամբ։ 1920-ական թվականների սկզբներից «Հոկտեմբերյան սերունդ», «Հոկտեմբերիկ», «Կարմիր ծիլեր» պարբերականներում տպագրել է մանկական երկեր, նաև պիեսներ։ Առանձին գրքույկներով լույս ընծայած երկերն են՝ «Շեկլիկ Շեկո» (Թիֆլիս, 1926), «Պետիկի դեղատոմսը» (Երևան, 1941), «Պատկերազարդ գիրք» (1955). Նրա «Շեկլիկ Շեկո» և «Մանի» պիեսները բեմադրվել են հայկական թատրոններում։

ՄԵՍՀԱԲՅԱՆ ՀԱԲՈՒԹՅՈՒՆ *(1886—1961).*— Կոմպոզիտոր, խմբավար։ Ծնվել է Թիֆլիսում։ Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Երաժշտական նախնական գիտելիքներն ստացել է Մակար Եկմալյանի մոտ, ապա շարունակել է Դոնի Ռոստովի և Մոսկվայի կոնսերվատորիաներում։ 1919 թ. մեկնել է Կ. Պոլիս, 1923 թ. սկզբներին՝ Ամերիկա, բնակություն հաստատել Նյու Յորքում։ Այստեղ կոմպոզիտոր Գր. Սյունու հետ ստեղծել են մեծ երգչախումբ, տվել համերգներ Նյու Յորքում, Ֆիլադելֆիայում, Դիտրոյտում և այլ քաղաքներում, լայնորեն օգտագործելով հայ ժողովրդական երաժշտության մոտիվները։ Նրա երգերից ժողովրդականություն են ձեռք բերել «Խնձորի ծառի տակին», «Դումբ նստել ես աղբրա ակին», «Արևի պես սիրուն Զարուս», «Սարերի աղջիկ», «Գնչուհու երգը» և այլ երգեր։ Երաժշտագիտական հոդվածներով աշխատակցել է ամերիկահայ մամուլին։ 1944-ին լույս է ընծայել «Կոմիտաս վարդապետ» աշխատությունը։

ՄԵՍՀԱԲՅԱՆ ՍԵՐԳ *(ծն. 1931).*— Քանդակագործ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի քանդակի բաժինն ավարտել է 1957-ին։ 1960 թվականից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Հանքափորը», «Խաղաղության պաշտպանության դիրքերում», Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձաններ՝ Մեղրիում, Աշտարակում և այլն։

ՄԵՂՈՒՐՆՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ *(ծն. 1925).*— Նկարիչ։ Ծնվել է Ախալքալաքում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թբիլիսիի գեղարվեստների ակադեմիայում։ 1958-ից մասնակցել է ցուցահանդեսների Երևանում, Թբիլիսիում։ Նրա նկարներից պահպանվում են Գորիի և Ցխինկալիի թանգարաններում։ Լավագույն գործերից են՝ «Գորի», «Հին Թիֆլիսը», «Վերադարձ կոլտնտեսական շուկայից» և այլն։ Ապրում է Թբիլիսիում։

ՄԵՑԻԱՆԵՋՅԱՆ ԽՈՐԵՆ *(ծն. 1937).*— Դիրիժոր. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Հալեպում (Սիրիա)։ 1946 թ. ընտանիքով ներգաղթել են Խորհրդային Հայաստան։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, որի խմբավարական ֆակուլտետն ավարտել է 1965-ին, իսկ դիրիժորականը՝ 1978-ին։ Դեռևս կոնսերվատորիայում սովորելու շրջանում, 1962 թ. հրավիրվել է Հայաստանի պետական երգչախումբ՝ դիրիժոր-խմբավարի պաշտոնով, աշխատել է մինչև 1978 թ.։ Այժմ դասախոսում է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում։ Իր ղեկավարած կամ այլ սիմֆոնիկ նվագախմբի հետ հանդես է եկել Խոր-

բին ուխտը», «Հակոբ Հովնաթանյան» և այլն։ 1973 թվականից աշխատում է հեռուստատեսային ֆիլմերի «Երևան» ստուդիայում։ Այստեղ որպես ռեժիսոր և օպերատոր նկարահանել է «Գուսանի սերը», «Ասք Սասնի մասին» և այլ ֆիլմեր։

ՄԵՍՐՈՊ ԳԵՎՈՐԳ (ՏԵՐ-ՄԵՍՐՈՊՅԱՆ) *(1881—1948).*— Մանկավարժ, պատմաբան։ Ծնվել է Պարտիզակում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Երուսաղեմի հայոց ժառանգավորաց վարժարանում, ավարտել 1904 թ.։ 1922 թ. մեկնել է Բուլղարիա, Ֆիլիպեում հիմնել Մեսրոպյան վարժարանը։ Ունեցել է կրթական երկարամյա գործունեություն։ Դարասկզբից պատմա-բանասիրական հոդվածներով աշխատակցել է պարբերական մամուլին։ Առանձին գրքերով հրատարակել է հետևյալ աշխատությունները՝ «Քրիստոնեության մուտքն ի Հայս Գրիգոր Լուսավորիչեն առաջ» (Կ. Պոլիս, 1910), «Ուրարտու կամ Հայաստանի նախաբնիկները և իրենց քաղաքակրթությունը» (1911), «Հայոց պատմություն» (Ա. հատ. Կ. Պոլիս, 1914), «Հայոց պատմություն» (դասագիրք, Ա. և Բ. մասեր, 1913—1914), «Պատմություն հայ եկեղեցվո» (2 հատոր, 1913—1914), «Հայաստան. աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական և մշակութային տեսակետով» (1919), նույնը՝ ֆրանսերեն։ 1921 թ. Կ. Պոլսում տպագրել է «Փերիճեր. հայ իշխանի մը օրագիրը» գրքույկը։ Գրել է երկու պիես՝ «Հայ թարգմանիչները Բյուզանդիոնի մեջ» և «Ազատության իդեալը»։

ՄԵՍՐՈՊ ԼԵՎՈՆ *(1880—1960).*— Գրող, բանասեր, թարգմանիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը, 1904 թ. ավարտել Ռոբերտ կոլեջը։ Ապա մեկնել է Եվրոպա, զբաղվել գորգի առևտրով։ Պատերազմից հետո վերջնականապես բնակություն է հաստատել Փարիզում, նվիրվել գրականության։ Պարսկերեն բնագրից թարգմանել է Օմար Խայամի քառյակները և այլ երկեր։ Ֆրանսահայ մամուլում տպագրել է ինքնուրույն վիպակներ, պատմվածքներ, բանասիրական հոդվածաշարքեր։ Առանձին գրքերով լույս ընծայած վեպերն են՝ «Զարի», «Հաշիշին» (1939), «Քերպելայի գիշերները» (1946), «Կախարգող լեռ և ներգաղթող ձին» (1949) և այլն։ Վերջինս վերահրատարակվել է Երևանում։ Տպագրել է նաև «Մատաթ Բեհա», «Ծառաբկանը», «Շուշիում երկրորդ պիեսներ», «Քուրտիստան և թուրքերը» և այլ գրքեր։ Կազմել և լույս է ընծայել «1915—Աղետ և վերածնունդ» և «Տեր-Զոր» (1935) ժողովածուները։

ՄԵՍՐՈՊ ԽԻԶԱՆՅԻ *(17-րդ դ.).*— Ծաղկող։ 1615—1643 թթ. ժաղկել է մի քանի Ավետարան, Գր. Տաթևացու «Գիրք հարցմանցը» և մի ճաշոց։

ՄԵՍՐՈՊ ՄԱՂԿՈՂ *(17-րդ դ.).*— 1627 թ. Շուշում (Բուլահան, Իրան) ժաղկել է մի Հայսմավուրք, կատարել է ոչ միայն թռչնագրեր, լուսանցազարդեր, այլև մանրանկարներ։

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ *(362—440).*— Հայոց գրերի ստեղծող, կրթական գործիչ, թարգմանիչ։ Ծնվել է պատմական Հայաստանի Տարոն գավառի Հացեկաց գյուղում։ Հոր անունը եղել է Վարդան, Փոքր հասակից ստացել է հունական կրթություն։ Հետագայում եկել է Այրարատյան դավառը, Արշակունիների մայրաքաղաք Վաղարշապատ և ծառայել արքունի գիվանատանը որպես քարտուղար, ապա ստացել է դիվանական կոչում։ 394 թ. ընդունել է հոգևորական կոչում։ Զբաղվել քարոզչությամբ Գողթն գավառում։ Իր քարոզչական պաշտոնում զգացել է հայերեն գրերի անհրաժեշտությունը։ Վերադառնալով Վաղարշապատ, հայտնել է հայերեն գրեր ստեղծելու իր մտադրությունը Սահակ կաթողիկոսին, որը խոստացել է օժանդակել։ Նրանք իրենց ծրագիրը ներկայացրել են Վռամշապուհ թագավորին, նրա օգնությամբ բերել են տվել ոմն Դանիել եպիսկոպոսի մոտ գտնվող գրերը, սակայն, նկատելով, որ դրանք չեն համապատասխանում հայերենի հնչյունային համակարգին, որոշել են որոնել այլ միջոց։ Թագավորի առաջարկով, մի խումբ աշակերտների հետ մեկնել է Ասորիք, եղել Ամիդ և Եդեսիա քաղաքներում, ուսումնասիրել ասորերեն և հունարեն լեզուները, նրանց տառերի հնչյունային համակարգը։ Եդեսիայում ստեղծել է հայերեն գրերը՝ համապատասխան մեր լեզվի հնչյունների։ Եդեսիայից մեկնել է Սամոսատ, հույն գեղագիր գրիչ Հոռփանոսի աջակցությամբ վերջնականապես ձևավորել է հայոց այբուբենը, իր աշակերտների հետ սկսել թարգմանել Աստվածաշնչից Սողոմոնի առակները։ Վերադառնալով Հայաստան, մեծ հանդիսությամբ դիմավորվել է Վաղարշապատ մայրաքաղաքում։ Այնտեղ Սահակ կաթողիկոսի հետ ձեռնարկել է կրթական, գրական,

թարգմանական լայն աշխատանք։ Բաց է արել դպրոցներ, պատրաստել աշակերտներ, թարգմանել գրքեր։ Եղել է Գողթն գավառում, Մյուսերիում և այլ վայրերում, ամենուր զբաղվել կրթական աշխատանքով և քարոզչությամբ։ Ապա մեկնել է Վրաստան, ստեղծել վրացական գրերը, Հայաստանի արևելյան մասում իր աշխատանքներն ավարտելուց հետո մեկնել է հունական գերիշխանության տակ գտնվող գավառները, դպրոցներ բաց արել։ Վերադառնալով Արևելյան Հայաստան, եղել է Աղվանքում, հորինել աղվանական գրերը։ Հունարենից և ասորերենից կատարել է թարգմանություններ, մատնակցել է Աստվածաշնչի թարգմանության դժվարին գործին։ Նրան վերագրվում են նաև ինքնուրույն երկեր, ինչպես Ապաշխարության շարականները, Պրոկղ եպիսկոպոսին ուղղված թուղթը և այլն։ Մահվանից երեք տարի անց, ի հավերժացումն նրա անվան՝ կանգնեցվել է հատուկ տաճար գերեզմանի վրա, իսկ առաջավոր աշակերտներից Կորյունը գրել է մեծ ուսուցչի ընդարձակ «Վարքը»։

ՄԵՍՐՈՊ ՍԵՎԱՆՅԻ *(15-րդ դ.).*— Տաղերգու։ Կրթությունն ստացել է Ջուղայեցի Ստեփանոս վարդապետի մոտ։ Գրել է տաղեր, որոնցից նմուշներ (*«Ի ժամ աշնան», «Պատմեմ աղէտս», «Մարմին»* և այլն), պահվում են Երևանի Մատենադարանում։

ՄԵՍՐՈՊ ՎԱՅՈՑՁՈՐԵՑԻ *(10-րդ դ.).*— Մատենագիր։ Ծնվել է Վայոց ձորի Հողոցմանց գյուղում։ 967 թ. գրել է Մեծն Ներսեսի և Մամիկոնյան տոհմի պատմությունը, որը տպագրվել է Կ. Պոլսում, 1737 թ. հետևյալ խորագրով՝ «Պատմութիւն երջանիկ վարուց և մահուան երանելի առն Աստուծոյ՝ սրբոյն Մեծին Ներսէսի... և վասն արիական գործոցն քաջին Մուշեղայ Մամիկոնայ»։ Բ. տպագրությունը կատարվել է Մադրասում (Հնդկաստան), 1775 թ., Գ. տպագրությունը՝ Վենետիկում, 1853 թ.՝ Ղ. Ալիշանի «Սուիերք Հայկականքի» Զ. գրքում։ Ֆրանսերեն թարգմանությունը լույս է ընծայել Վ. Լանգլուան։

ՄԵՍՐՈՊ ՎԱՆԵՑԻ *(15-րդ դ.).*— Ծաղկող։ 1475 թ. Խիզանում ժաղկել է մի «Հայսմաւուրք»։

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ *(15-րդ դ.).*— Մատենագիր։ Գրել է մի ներբող, նվիրված Գրիգոր Տաթևացուն։

ՄԵՍՐՈՊ ՐԱԲՈՒՆԱՊԵՏ *(14-րդ դ.).*— Մանկավարժ, կրթական գործիչ։ Ապրել և գործել է Մեծ Հայքում։ Եղել է Եսայի Նչեցու ժամանակակիցը։ Արտազի ս. Թադեի մենաստանում բաց է արել հատուկ լսարան, որտեղ սովորել են Հայաստանի տարբեր գավառներից եկած աշակերտներ։ Ունեցել է մեծ համբավ։

ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱ *(11—12-րդ դդ.).*— Ծաղկող։ Մեր անունով իր ընկերոջ հետ ժաղկել է մի Ավետարան, որը պահվում է Երևանի Մատենադարանում, 4807 թվահամարի տակ։

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՂԱՎՆԻ *(1891—1954).*— Դաշնակահարուհի, նկարչուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ Քույրն է վիպասան Լևոն Մեսրոպի։ Կրթությունն ստացել է ծննդավայրի էսայան վարժարանում։ 1906 թ. ծնողների հետ տեղափոխվել է Լոնդոն, սովորել Լոնդոնի արքայական կոնսերվատորիայում, ավարտել 1911 թ.՝ առաջին կարգի դաշնակահարուհու վկայականով։ Նույն տարիներին զուգահեռ հետևել է Լոնդոնի գեղարվեստների ակադեմիայի գեղանկարչական բաժնի դասընթացներին։ Վերադառնալով Կ. Պոլիս, որպես դաշնակահարուհի աշխատել է հայկական դպրոցներում, միաժամանակ մասնակցել Կոմիտասի կազմակերպած համերգներին, մոտիկից ծանոթանալով մեծ երգահանի հետ։ 1919 թ. ամուսնու հետ եկել է Թիֆլիս, որտեղ մնացել է մինչև 1931 թ., ապա վերջնականապես բնակություն է հաստատել Երևանում։ 1931—1946 թթ. եղել է Երևանի ռադիոկոմիտեի երաժշտական հաղորդումների դաշնակահարուհի մենակատարը։ Հետագայում զբաղվել է նկարչությամբ, միաժամանակ գրել իր արժեքավոր հիշողությունները Կոմիտասի, Գր. Զոհրապի, Դ. Վարուժանի և այլ գրողների մասին։ Նկարչական գործերից հիշատակության արժանի են «Հոգեկոչուս Կոմիտասը», «Հայկական պանթեոն», «Սասնա», «Թրքուհին» և այլ գործեր։

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԲԱՂԴԱՍԱՐ *(ծն. 1913).*— Նկարիչ։ Ծնվել է Վանում (Արևմտյան Հայաստան)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստական տեխնիկումում և Մոսկվայի Վ. Սուրիկովի անվան կերպարվեստի ինստիտուտում, ավարտել է 1938 թ.։ 1929-ից մասնակցել է ցուցահանդեսներին։ Աշխատել է հիմնականում գրքի ձևավորման բնագավառում։ Նկարազարդել է Ավ. Իսահակյանի, Հովհ. Թու-

մանյանի, Ստ. Զորյանի, Մ. Կապուտիկյանի, Նահապետ Քուչակի և այլոց գրքերը։ 1971 թ. Մոսկվայում լույս է ընծայել «Հայաստանում» ալբոմը։

ՄԵՍԲՈՊՅԱՆ ՆԱՐԵԿ (ծն. 1943).— Արվեստաբան։ Ծնվել է Բաքվում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Լենինգրադի գեղարվեստների ակադեմիայում, որի արվեստագիտության ֆակուլտետն ավարտելուց հետո ապրել է Կիրովականում, աշխատել քաղաքային «Կայծ» թերթի խմբագրությունում։ Մամուլում տպագրել է «Հայկական ճարտարապետության զոհարները» հոդվածաշարքը։ Առանձին գրքերով լույս ընծայած արվեստաբանական աշխատությունները են՝ «Գեղանկարներ և ճակատագրեր» (Երևան, 1976), «Արևը վրձնի վրա» (1978)։ Գրել է պիեսներ, որոնք բեմադրվել են հանրապետության տարբեր թատրոններում։

ՄԵՍԲՈՊՅԱՆ ՍԻՐԱՐԴ (1926—1981).— Ասմունքող. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Հալեպում (Սիրիա)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի հայկական դպրոցում։ 1946 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան։ Սովորել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի դերասանական ֆակուլտետն ավարտելուց հետո աշխատել է Հայթիվարմոնիայում որպես ասմունքող։ 25 տարի աշխատել է այդ ընագավառում, ձեռք բերելով լայն ժողովրդականություն։ Տրագրում ունեցել է հայ դասական շատ գրողների ստեղծագործությունները, նաև միջնադարյան պոեզիայի նմուշներ։ Երկար տարիներ բեմական խոսք է դասավանդել Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում։

ՄԵՍՈՒՄԵՆՑ ԱՎԵՏԻՍ (ծն. 1905).— Կոմպոզիտոր։ Ծնվել է Արաբկիրում (Արևմտյան Հայաստան)։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զրկվել է ծնողներից, ընկել Ուրֆայի որբանոցները, ապա տեղափոխվել է Բեյրութ, որտեղ, դարձյալ որբանոցում, ստացել է նախնական կրթությունը։ 1924 թ. մեկնել է Ֆրանսիա։ 1927 թ. ընդունվել է Լիոնի կոնսերվատորիան, ավարտելուց հետո նվիրվել է ստեղծագործական աշխատանքի։ 1930 թ. կազմակերպել է «Կոմիտաս» երգչախումբը, որը նրա ղեկավարությամբ գործել է մինչև 1934 թ.։ Ապա Բորդո քաղաքում հիմնել է «Սունգուկյան» թատերախումբը։ 1946 թ. տեղափոխվել է Փարիզ։ Գրել է մի շարք երգեր, գործիքային երկեր, օպերաներ։ Դրանցից են «Գիսակ և Սիբվարդ» երաժշտական դրաման, «Տեր Կոնյակ» կատակերգությունը, «Լուսընթաց բալետը, «Ղարաբաղի մելիքներ» օպերետը, «Անուշ» վոկալ սիմֆոնիկ պոեմը (ըստ Հովհ. Թումանյանի համանուն երկի) և այլն։ Մշակել ու հրատարակել է ժողովրդական երգեր, պարեղանակներ, ինչպես «Նարատ», «Հարսանեաշան», «Մշեցիների հարսանիքը»։

ՄԵՏԱՔՍԵ (ՊՈՂՈՍՅԱՆ) (ծն. 1928).— Բանաստեղծուհի։ Ծնվել է Արթիկի շրջանի Եգանլար (այժմ՝ Արևշատ) գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, ավարտել 1952 թ.։ Ապա սովորել է Մոսկվայում, ԽՍՀՄ գրողների միության կից Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի դասընթացներում, ավարտել 1958 թ.։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Ջահելություն» (Երևան, 1957), «Կնոջ սիրտ» (1960), «Սիրելի արցունքները» (1963), «Նվիրում» (1968), «Զգույշ, սիրտ է» (1974), «Սերը հավատ է» (1977), «Վիլիթը և բադիկները» (1977), «Սիրո թայիֆան» (1983)։ Ռուսերենից կատարել է թարգմանություններ, որոնցից մի քանիսը լույս են տեսել նաև առանձին գրքույկներով։ Ռուսերեն լույս են տեսել նրա «Ճակատագիր» (Մոսկվա, 1960) և «Կյանքի գրկում» (1976) ժողովածուները։ Բանաստեղծություններից նմուշներ թարգմանվել են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներով։ 1967 թվականից աշխատել է Հայաստանի գրողների միությունում որպես խորհրդական։

ՄԵՏԱՔՍՅԱՆ-ՇԵԼԿՈՎՆԻԿՈՎ ՍԵՐԳԵՅԻՆ (1871—1929).— Օպերային երգիչ։ Ծնվել է Երևանում, բուն անունը եղել է Սարգիս Մետաքսյան։ Միջնակարգ կրթությունն ստացել է Գանձակում (այժմ՝ Ադրբեջանական ԽՍՀ, Կիրովաբադ), բարձրագույնը՝ Մոսկվայի համալսարանում։ Պետերբուրգում ստացել է երաժշտական կրթություն, ձայնը մշակել Իտալիայում։ 1904 թվականից երգել է Վարշավայի օպերային մեծ թատրոնում, հանդես գալով «Պայացներ» օպերայում։ Հենց այդ առաջին ելույթով իր վրա է հրավիրել Վարշավայի երաժշտագետների ուշադրությունը և կարճ ժամանակից դարձել օպերայի կենտրոնական դեմքերից մեկը։ Հանդես է եկել մի շարք կարևոր դերերում, ինչպես՝ «Էկսամիլիո («Կարմեն»), Ժերմոն («Տրավիատա»), Ռիգոլետտո (համանուն օպերայում), Ամոնասրո («Աիդա»), Զեզար Անջելոտտի («Տոսկա») և այլն։ 1907 թ. ընտրվել է Վարշավայի օպերայի դիրեկտոր, շարունակելով կատարել տարբեր դերեր։ 1914 թ. զորակոչվել է բանակ, ուղարկվել Կովկասյան ռազմաճակատ։ 1918 թ. զորացրվել է։ 1924 թվականից այլևս չի երգել օպերայում, հանդես է եկել համերգներով, կիթառի նվագակցությամբ կատարելով կովկասյան, մասնավորապես հայկական, վրացական, ադրբեջանական երգեր։ 1927 թվականից ղեկավարել է լեհական «Բագատելա» թատրոնի աշխատանքները և զբաղվել մանկավարժությամբ։ Լեհական մամուլում տպագրել է երաժշտագիտական հոդվածներ։

ՄԵՏՐԵՎԵԼԻ (ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ) **ՄԱՐԳԱՐԻՏ** (ծն. 1913).— Նկարչուհի. Վրացական ԽՍՀ վաստակավոր նկարիչ։ Ծնվել է Թբիլիսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թբիլիսի գեղարվեստների ակադեմիայում, ավարտել է 1938 թ.։ Հաջորդ տարվանից մասնակցել է ցուցահանդեսների։ Կազմակերպել է անհատական ցուցահանդեսներ 1944—1945 թթ. Թբիլիսիում և Բաթումում, 1961 թ.՝ Ռուսթավիում։ Լավագույն գործերից են՝ «Ճանապարհ են դնում նորապսակներին», «Մենք վրեժ կլուծենք», «Թիկունքի աշխատավորները», «Առավոտը գյուղում» և այլն։ Ապրում և ստեղծագործում է Թբիլիսիում։

ՄԵՐԱՆԴՈՒԼՅԱՆ ԱՐԱՄ (1902—1967).— Երաժիշտ-խմբավար, կոմպոզիտոր. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ (1959)։ Ծնվել է Զանգեզուր գյուղում (այժմ՝ Նախիջևանի ԽՍՀ Օրդուբադի շրջան)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի կոնսերվատորիայում, որտեղ 1926—1928 թթ. հետևել է ժող. գործիքների դասընթացներին, աշակերտել Թառահար Ս. Օգանիզաշվիլուն, իսկ 1942-ին ավարտել է ստեղծագործական դասարանը։ Դեռևս 1927-ին կազմակերպել է հայ ժողովրդական գործիքների անսամբլը, որը ղեկավարել է մինչև կյանքի վերջին տարիները։ Ունեցել է ստեղծագործական բեղուն գործունեություն։ Գրել է մի քանի տասնյակ երգեր, պարեղանակներ, մշակել ժողովրդական և դուսանական երգեր։ Վոկալ գործերից են՝ «Խաչատուր Աբովյան», «Լեռներ հայրենի», «Ալ գառներ», «Երազիս մեջ», «Ալ աղբյուր» երգերի շարքը՝ գրված Հովհ. Շիրազի «Սիամանթո և Խջեզարե» պոեմի համար, գործիքային երկերից են՝ «Պարային սյուիտ», «Հարսանեկան պար», «Վարդերով պար», «Անահիտ» պար և այլն։ Գրել է «Սայաթ-Նովա» հեռուստատեսային ֆիլմի երաժշտությունը։ Ստեղծագործություններ մի մասը 1972 թ. լույս է տեսել առանձին ժողովածուով։ Երկար տարիներ պաշտոնավարել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում և Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում։ 1967-ից նրա անունով է կոչվում իր հիմնադրած ժողգործիքների անսամբլը։

ՄԵՐԱՍՅԱՆ ԱԹԱՆԱՍ (18-րդ դ.).— Բանաստեղծ, թարգմանիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է Վենետիկի Մխիթարյանների վանքում, որտեղ ունեցել է կրթական, բանասիրական գործունեություն։ Լատիներենից թարգմանել է կրոնական գրքեր։ 1750 թ. Վենետիկում լույս է տեսել նրա «Մատ. կենաց» գիրքը, որը վերահրատարակվել է 1781 թ.։ Առավել կարևոր է նրա «Համառոտ քերականութիւն արարեալ իտալական, հայկական և տաճկական լեզուաւ» երկը (Վենետիկ, 1774)։

ՄԵՐԶԱՆ (ՄԻՐԶԱՅԱՆ ՀՈՎՍԵՓ) (1861—1943).— Հունգարահայ հայագետ։ Ծնվել է Կլուժում (Հունգարիա)։ Կրթությունն ստացել է Կլուժի և Վիեննայի համալսարաններում։ Հայագիտական հմտությունը ձեռք է բերել Մխիթարյանների վանքում։ Հայ ժողովրդի պատմության, մշակույթի, հունգարահայ գաղութի մասին հոդվածներ է տպագրել «Արմենիա» և Բուխարեստի «Արարատ» պարբերականներում։ Խմբագրել է «Էրդելյ» հունգարերեն թերթը։ Եղել է Կլուժի ազգագրական թանգարանի հիմնադիրներից։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հայ եպիսկոպոսությունը» (1896), «Տրանսիլվանիայի հայերի ապագան» (1896), «Հայկական խալը» (1903), «Հայերի Տրանսիլվանիա գաղթելու պատմությունը» (1913) և այլն, բոլորն էլ հունգարերեն լեզվով։ Հայերենից հունգարերենի է թարգմանել Մ. Նալբանդյանի «Ազատությունը»։

ՄԵՐԺԱՆՈՎ ՎԻԿՏՈՐ (ծն. 1919).— Դաշնա-

կահար, մանկավարժ. ՌԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1966)։ Ծնվել է Տամբովում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Մոսկվայի կոնսերվատորիայում, հետևել դաշնամուրի և երգեհոնի։ 1949-ից դասավանդել է Մոսկվայի կոնսերվատորիայում (1964-ից պրոֆեսորի ատիճանով), 1973—1978 թթ.՝ Վարշավայի կոնսերվատորիայում։ 1946-ից որպես մենակատար աշխատել Մոսկվայի ֆիլհարմոնիայում։ 1950-ից հանդես է եկել Կոմիտասի անվան կվարտետի հետ։ Արժանացել է մրցանակների 1945 թ. Մոսկվայի, 1949 թ. Վարշավայի միջազգային մրցույթներում։ Ելույթներ է ունեցել ԽՍՀՄ և արտասահմանյան բազմաթիվ քաղաքներում։

ՄԵՐԿՈՒՐՈՎ ՍԵՐԳԵՅ *(1881—1952).*— Քանդակագործ. ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀ ժողովրդական նկարիչ (1943, 1950). ԽՍՀՄ գեղարվեստների ակադեմիայի իսկական անդամ (1947)։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական), հունադավան հայկական ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի յոթնամյա արհեստագործական դպրոցում, ապա սովորել է Թիֆլիսի ռեալական ուսումնարանում, 1901 թ.՝ Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտում, 1902-ից՝ Յուրիևի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում, իսկ 1902—1905 թթ. Մյունխենի գեղարվեստի ակադեմիայում։ Ապա եղել է Փարիզում, ուսումնասիրել հին արևելյան և հունական անտիկ արձանագործությունը։ Վերադառնալով Ռուսաստան՝ 1910-ից ապրել և ստեղծագործել է Մոսկվայում։ Նախախորհրդային տարիների լավագույն գործերից են Ֆ. Դոստոևսկու գրանիտե արձանը (1911—1913), որը կանգնեցվել է Մոսկվայում, 1918 թ., Լ. Ն. Տոլստոյը (մարմար, 1911) (Տրետյակովյան պատկերասրահ)։ 1921-ին ստեղծել է Կ. Մարքսի (Սիմֆիրսկ), Կ. Ա. Տիմիրյազևի (1922—1923, Մոսկվա) գրանիտե հուշարձանները։ Գլուխգործոց ստեղծագործություններից են Վ. Ի. Լենինի մարմարյա արձանը (ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նիստերի դահլիճ), որը 1939-ին արժանացել է պետական մրցանակի), Վ. Ի. Լենինի 16 մետրանոց գրանիտե մոնումենտը (1937, գրված Մոսկվայի անվան ջրանցքի գլխամասում), 9 մետրանոց պղնձյա մոնումենտը Երևանի Վ. Ի. Լենինի հրապարակում (1940), Ստ. Շահումյանի գրանիտե հուշարձանը Երևանում (1931), Ֆ. Զերժինսկու պղնձյա արձանը, «Բաքվի 26 կոմիսարների գնդակահարումը» գրանիտե բարձրաքանդակով, տեղադրվել է Բաքվում, 1958-ին, ինչպես և մի շարք դիմաքանդակներ։ Մոտիկից կապված է եղել հայ իրականությանը, միշտ նշել է իր արվեստի ներշնչանքը հայ իրականությունից, Ալեքսանդրապոլի եկեղեցիներից, շիրմաքարերի քանդակներից ստանալը, առաջին քանդակները հայ քարգործ վարպետների մոտ կատարելը։ Նրա հանած առաջին դիմակը եղել է Խրիմյան Հայրիկինը (1907)։ Հանել է նաև Հովհ. Թումանյանի դիմակը։ Նրան շնորհվել է Լենինականի պատվավոր քաղաքացու կոչում, տեղի նկարչական դպրոցը կոչվում է նրա անունով (1947-ից)։

ՄԵՐՀԱՄԵԹՅԱՆ ՁԵՆՈՒՐ *(1831—1911).*— Ճարտարապետ։ Ծնվել է Կ. Պոլսի Պեշիկթաշ թաղամասում, որտեղ ստացել է հայկական կրթությունը, ապա հետևել է ճարտարապետության։ Նրա նախագծերով Բոսֆորի ափերին կառուցվել են բազմաթիվ շենքեր։ Հետագայում դարձել է Եգիպտոսի Խեդիվ Իսմայիլ փաշայի արքունի ճարտարապետը։ Կահիրեում նախագծել է հանրային օգտագործման շատ շենքեր, պետական պաշտոնյաների ամառանոցներ։ Մոտիկից կապված է եղել եգիպտահայ հասարակական մշակութային կյանքին։ Աշխատակցել է եգիպտահայ մամուլին։

ՄԵՔԻՆՅԱՆ ՀԱԿՈԲ *(ծն. 1948).*— Երաժիշտ, ջութակահար։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Զալկովսկու անվան երաժշտական դպրոցում, ավարտել 1966-ին։ Նույն տարում ընդունվել է Երևանի պետական կոնսերվատորիայի գործիքային ֆակուլտետը։ Հետագայում շարունակել է ուսումը կոնսերվատորիայի ասպիրանտուրայում, ավարտել 1978-ին։ 1973 թվականին մասնակցել է Անդրկովկասյան երիտասարդ կատարողների մրցույթին և շահել է առաջին մրցանակ։ 1976-ից նվագում է Կոմիտասի անվան կվարտետում, որի կազմում մասնակցել է ԽՍՀՄ և արտասահմանյան մի շարք փառատոների, 400-ից ավելի համերգների։

ՄԵՔԻՆՅԱՆ ՀՐԱՉՅԱ *(ծն. 1923).*— Թատերական նկարիչ։ Ծնվել է Լենինականում, Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստական ուսումնարանում և գեղարվեստա-թատերական ինստիտուտում, որի գեղանկարչության բաժինն ավարտել է 1955-ին։ Նույն տարվանից աշխատել է «Հայֆիլմ» ստուդիայում։ Մասնակցել է «Սիրտը երգում է», «Մոր սիրտը», «Գլուզում», «Ջրերը բարձրանում են» և այլ ֆիլմերի ձևավորման աշխատանքներին։ 1964 թվականից աշխատում է Լենինգրադում, որտեղ ձևավորել է «Կախարդական փայտիկը» հեռատատեսային ֆիլմը, «Ավրորայի համաղարկը» գունավոր ֆիլմը և այլ ժապավեններ։

ՄԸՍԿԻՆ ԵՐԵՑ ԱՆՈՒՇԱՎԱՆ *(15-րդ դ.).*— Տաղերգու։ Գրել է «Ողբ մայրաքաղաքին Եղեգնյաց» արժեքավոր ողբը, որի ձեռագիրը պահվում է Երևանի Մատենադարանում։

ՄԸՍԸՐԵՆՑ (ՄԵՍՐՈՊՅԱՆ) ՄԵՍՐՈՊ *(ծն. 1915).*— Դրամատուրգ, թատերական գործիչ։ Ծնվել է մեծ գաղթի ճանապարհին, վասպուրականցի ծնողներից։ Երկար տարիներ Կիրովականում ղեկավարել է թատերական ինքնագործ խմբեր, միաժամանակ թատերախոսականներով և այլ հոդվածներով աշխատակցել է «Կայծ» թերթին։ Գրել է տասից ավելի պիեսներ, որոնք բեմադրվել են տարբեր քաղաքներում։ Դրանցից «Թմկաբերդի առումը» բեմադրվել է Ստեփանակերտի թատրոնում, տպագրվել մամուլում։

ՄԻԱՆՍԱՐՅԱՆ ԴԵՎՈՐԳ *(1881—1959).*— Նկարիչ։ Ծնվել է Թիֆլիսում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում։ Հետագայում մասնավոր ուսուցիչների մոտ հետևել է նկարչության։ Վերադառնալով Կովկաս՝ ապրել և ստեղծագործել է Թիֆլիսում։ Մասնակցել է ցուցահանդեսներին։ Լավագույն գործերից են՝ «Գետնախնձորի հավաքը կոլտնտեսությունում», «Ամառանոցում», «Ծաղիկներ» և այլն։

ՄԻԱՆՍԱՐՅԱՆ ՀԱՅԿԱՍՍԱՐ *(1888—1962).*— Դերասան. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Գանձակում (այժմ՝ Ադրբեջանական ԽՍՀ, Կիրովաբադ)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա սովորել է էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ Պատանեկան հասակից ծննդավայրում մասնակցել է հայերեն ներկայացումների, երգել է Կոմիտասի երգչախմբում։ Հետագայում խաղացել է պրոֆեսիոնալ թատերախմբերում՝ Բաքվում և այլուր։ Խորհրդային տարիներին գործել է Հայաստանում. խաղացել է Լենինականում։ Կատարել է տասնյակ դերեր, որոնցից են՝ Գիժ Դանիել («Զար ոգի»), Հայրապետ («Նամուս»), Պոլոնիուս («Համլետ»), Բրաբանցիո («Օթելլո»), Սաղաթել («Պատվի համար»), Բարոն («Հատակում»)։ «Զանգեզուր» ֆիլմում կատարել է Աշուղի դերը։

ՄԻԱՆՍԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ *(1830—1880).*— Բանաստեղծ, մշակութային գործիչ։ Ծնվել է Թիֆլիսում։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և Մոսկվայի Լազարյան ճեմարանում, իսկ 1857-ին ավարտել է Պետերբուրգի կայսերական հեծելազորային բարձրագույն ուսումնարանը։ Փոխգնդապետի ատիճանով ծառայել է ցարական բանակում։ Ունեցել է գրական, հրապարակախոսական, բանասիրական եռուն գործունեություն։ Աշխատակցել է «Հյուսիսափայլ», «Մեղու Հայաստանի», «Կավկազ» (ռուսերեն) պարբերականներին։ Ձեռք բերելով հայերեն տառեր, 1860-ական թվականների կեսերից Պետերբուրգում ձեռնարկել է հրատարակչական գործի։ 1868 թ. լույս է ընծայել իր կազմած «Քնար հայկական» ստվար ժողովածուն, որը պարունակում է լավագույն նմուշներ հայ ժողովրդական ստեղծագործություններից, աշուղական գրականությունից, այդ թվում՝ Սայաթ-Նովայից, Ագբաբ Աղամից, Շիրինից, ինչպես և հայ մի շարք գրողներից։ Ապա հրատարակել է թարգմանական մի քանի գրքեր (Լաբուլեի «Ազգային կրթությունը», Կոմբի «Ենամատարություն մանկանց» և այլն)։ 1872 թ. հրատարակել է «Կանոնավոր և վայելուչ գրության պատմությունը և տեսությունը», հաջորդ տարի «Հայկական կանոնավոր և վայելուչ գրությունը» (վարժություններ)։ Առավել ուշագրավ է նրա «Կովկասի և Անդրկովկասի մատենագիտություն» աշխատությունը, որտեղ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, վրացերեն և այլ լեզուներով ներկայացված են մոտ 6000 գրքեր, հոդվածներ և այլն։

ՄԻԱՆՍԱՐՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ *(ծն. 1919).*— Նկարիչ։ Ծնվել է Թիֆլիսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թբիլիսիի գեղարվեստների ակադեմիայում, 1951 թվականից մասնակցել է ցուցահանդեսների՝ Թբիլիսիում և Մոսկվայում։ Լավագույն գործերից են Տոլբուխինի, Անտոնովի, Առաքիշվիլու, Պալիաշվիլու և այլոց դիմանկարները, «Պիկովայա դամա», «Աննա Կարենի-

նա» և այլ բեմագրությունների ձևավորումները։ Ապրում և ստեղծագործում է Թբիլիսիում։

ՄԻԼԵՐՅԱՆ ԵՎԴԵՆԻ *(ծն. 1913).*— Հոգեբան. հոգեբանական գիտությունների դոկտոր (1968)։ Ծնվել է Փոթիում։ Կրթությունն ստացել է Սուխումի (ՈՒԽՍՀ) մանկավարժական ինստիտուտում։ Աշխատել է Կիևի հոգեբանության ինստիտուտում, որտեղ եղել է աշխատանքային հոգեբանության սեկտորի վարիչ։ 1975-ից աշխատում է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, որպես հոգեբանության պրոբլեմային լաբորատորիայի աշխատանքային հոգեբանության և պրոֆեսիոնալական կրթության սեկտորի վարիչ։ Ստեղծել է մի շարք սարքեր, մեխանիզմներ, կատարել գյուտեր, որոնցից են՝ «Օպտիկական գգայությունների ցուցադրման սարքը», «Վարորդների մասնագիտական պիտանիության ստուգման սարքը» և այլն։ 1973 թ. Մոսկվայում լույս է տեսել նրա «Психология. формирования общетрудовых политехнических умений» գիրքը։

ՄԻԼԻՏՈՆՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ *(ծն. 1952).*— Բանաստեղծ։ Ծնվել է Երևանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 1974-ին։ Աշխատել է «Պիոներ» ամսագրի, ապա՝ 1975—1978 թթ. «Գարուն» ամսագրի խմբագրություններում, իսկ 1978-ից ՀԽԿԵՄ Կենտկոմում։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Լուսինն հայելու մեջ» (Երևան, 1976), «Երեք խնձոր» (1977), «Ամպե որսորդը» (1979), «Հիշատակի զանգեր» (1979), «Գնելը դրսում, Գնելը ներսում» (1982), «Մաղիկ ծովային» (1985) և այլն։

ՄԻԼՍՈՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ *(ծն. 1940).*— Տավիղահար երաժիշտ։ Ծնվել է Վենետիկում։ Երաժշտական կրթությունն ստացել է Վենետիկի կոնսերվատորիայում, հետևել տավիղահարության։ 14 տարեկան հասակից համերգներ է տրվել Իտալիայի տարբեր քաղաքներում, իսկ 1959 թ. արժանացել է Ռուբինշտեյնի անվան մրցանակի։ Նույն տարվա վերջերին Իտալիայի կողմից մասնակցել է Թել Ավիվում կազմակերպված տավիղահարների համաշխարհային փառատոնին, 34 մրցորդների մեջ շահել առաջին մրցանակ։ Իտալական մամուլը ջերմորեն ողջունել է նրա այդ փայլուն հաջողությունը։ Ապա հրավիրվել է Հոլանդիա, մասնակցել է Բաղդադում հովանավորությամբ Ամառերդամում կազմակերպված տավիղահարների համերգին։ Համերգներ է տվել Եվրոպայի մի շարք քաղաքներում, ամենուր արժանանալով մամուլի բարձր գնահատականը։ 1978 թ. եղել է նաև Երևանում։

ՄԻԿՈՅԱՆ ԱՆԱՍՏԱՍ *(1895—1978).*— Կուսակցական, պետական գործիչ։ Սոցիալիստական աշխատանքի հերոս (1943)։ Ծնվել է 1895 թ. նոյեմբերի 25-ին Հայաստանի Սանահին գյուղում (այժմ՝ Թումանյանի շրջան)։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի ներքին դպրոցում և Էջմիածնի Գևորգյան Սեմինարիայում։ Ուսանելու տարիներից սկսել է քաղաքական գործունեությունը։ 1915 թ. ընդունվել է ՌՍԴԲԿ շարքերը։ Հեղափոխական աշխատանքներ է կատարել Էջմիածնում, Թիֆլիսում։ Աշխատակցել է սոցիալ-դեմոկրատական մամուլին։ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Էջմիածնում ստեղծել է բանվորադյուգացիական խորհուրդ։ Ընտրվել է ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի կազմում։ Նույն տարվա հոկտեմբերին մասնակցել է Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների I համագումարին։ Ընտրվել է բոլշևիկների Բաքվի կոմիտեի նախագահության անդամ։ Խմբագրել է «Սոցիալ-դեմոկրատ» հայերեն, «Իզվեստիա բակինսկոյ սովետա» ռուսերեն թերթերը։ 1918 թ. մարտ ամսին մասնակցել է մուսավաթիստական խռովության ճնշմանը, գերմանաթուրքական ինտերվենտների դեմ մղված մարտերին։ Ձերբակալվել է, բանտարկվել։ Բաքվի կոմունայի պարտությունից հետո՝ 1918 թ. հուլիս ամսին եղել է կուսակցության ընդհատակյա քաղկոմի նախագահ։ Հաջորդ տարի ընտրվել է կովկասյան երկրային կոմիտեի անդամ։ Նույն 1919-ին Մոսկվայում հանդիպել է Վ. Ի. Լենինին։ 1920 թ. ապրիլ ամսին 11-րդ կարմիր բանակի հետ մտել է Բաքու։ Նույն տարում աշխատել է Նիժնի Նովգորոդում (այժմ՝ Գորկի) իբրև կուսակցության նահանգային կոմիտեի բաժնի վարիչ, բյուրոյի անդամ, քարտուղար։ 1922-ից վարել է պատասխանատու մի շարք պաշտոններ։ Եղել է ՌԿ(բ)Կ Հարավ-արևելյան բյուրոյի քարտուղար, Հյուսիսային Կովկասի երկրկոմի քարտուղար, ԽՍՀՄ արտաքին և ներքին առևտրի ժողկոմ (1926—1930), մատակարարման ժողկոմ, սննդարդյունաբերության ժողկոմ (1934—

1937), 1937—1946 թթ.՝ ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահի տեղակալ, միաժամանակ՝ արտաքին առևտրի ժողկոմ։ 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի տարիներին եղել է կարմիր բանակի մթերա-իրային մատակարարման կոմիտեի նախագահ, ԽՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեի անդամ, 1946—1955 թթ. ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, ապա առաջին տեղակալ։ Այդ նույն տարիներին զուգահեռ վարել է պատասխանատու այլ պաշտոններ՝ ԽՍՀՄ արտաքին առևտրի մինիստր, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ։ 1923-ից եղել է ԽՍՀՄ Կենտկոմի անդամ, 1935—1952 թթ.՝ քաղբյուրոյի անդամ, 1952—1966 թթ. ԽՄԿԿ Նախագահության անդամ։ Եղել է ԽՍՀՄ I—VIII գումարումների Գերագույն խորհրդի գեղուտատ։ Պարգևատրվել է 6 Լենինի, Հոկտեմբերյան հեղափոխության, Կարմիր դրոշի և այլ շքանշաններով։ Գրել է իր ընդարձակ հիշողությունները՝ «Պայքարի ճամփով» խորագրով, որի Ա հատորը լույս է տեսել 1971 թ. ռուսերեն, 1972-ին՝ հայերեն, Բ հատորը՝ 1978-ին։ Առանձին գրքով լույս է տեսել նաև նրա «Խոհեր և հիշողություններ Լենինի մասին» գործը (1970 թ.)։

ՄԻԿՈՅԱՆ ՍԵՐԳՈ *(ծն. 1929).*— Միջազգայնագետ-պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր (1976)։ Ծնվել է Մոսկվայում։ Որդին է Անաստաս Միկոյանի։ Բարձրագույն կրթությունն ստացել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտում, ավարտել 1952-ին։ 1960—1969 թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ համաշխարհային էկոնոմիկայի և միջազգային հարաբերությունների ինստիտուտում։ 1970-ից հանդիսանում է «Լատինական Ամերիկա» ամսագրի գլխավոր խմբագիրը։ Մասնակցել է «Միջազգային հարաբերությունները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» և «Տնտեսական պարզացման դիվանագիտությունը» կոլեկտիվ աշխատությունների ստեղծմանը։ Գրել է մոտ 90 գիտական աշխատություն, որոնցից են «ԱՄՆ-ը» (Մոսկվա, 1969), «Կուբան կառուցում է սոցիալիզմ» (1976) և այլն։ Մասնակցել է մի շարք գիտաժողովների։

ՄԻԿՈՒԼԻ ԿԱՌԼ *(տես՝ ՄԻՔՈՒԼԻ ԿԱՌԼ)։*

ՄԻՀԱՆԱՋՅԱՆ ՀՈՎԱԿԻՄ *(1883—1938).*— Նկարիչ։ Ծնվել է Դնեպրոպետրովսկի մարզի Բախմուտ քաղաքում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում։ 1900-ական թվականների կեսերից մասնակցել է ցուցահանդեսների՝ հիմնականում Արևելքը պատկերող նկարներով։ Լավագույն գործերից են՝ «Վաղ գարուն», «Խոպանուհին», «Արևելյան հեքիաթ», «Ամուսիններ», «Արևելյան պար», «Գյուլիզար», «Աղջիկը վիթի հետ» և այլն։ Մոսկվայի հայկական թատերական ստուդիայի համար կատարել է թատերական ձևավորումներ 1920-ական թվականներին։

ՄԻՀՐԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ *(1894— ?).*— Թատերական նկարիչ։ Ծնվել է Բաթումում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Լենինգրադի գեղարվեստական արդյունաբերական տեխնիկումի թատերա-դեկորատիվ արվեստանոցում, ավարտել է 1928-ին։ Մինչև 1932 թ. աշխատել է շրջիկ թատրոններում, ապա եղել է Պետերգոֆի թանգարանների և զբոսայգիների գլխավոր նկարիչը։ 1945-ից ապրել և ստեղծագործել է Կույբիշևում։ 1918 թվականից մասնակցել է ցուցահանդեսների՝ Բաթումում, Թիֆլիսում, Լենինգրադում, Կույբիշևում և Սարատովում։ Լավագույն գործերից են՝ «Երեք սոճիների տեղը», «Ա. Պուշկինի գերեզմանը աշնանը», «Ա. Պուշկինի տունը Բուլդինո գյուղում» և այլն։

ՄԻՀՐԻԱՏՅԱՆՑ ԹԱԴԵՈՍ *(1816—1873).*— Բանաստեղծ, հրապարակախոս։ Ծնվել է Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում։ Նախնական կրթությունն ստանալուց հետո զբաղվել է ուսուցչությամբ։ Ունեցել է ձեռագրերի և հին վավերագրերի մեծ հավաքածու։ Եղել է «Մասիս» թերթի մեկուսն աշխատակիցներից։ Բանաստեղծներ է տպագրել նաև «Փարիզ», «Մեղու» և այլ պարբերականներում։ «Փարիզի» 1863 թ. մի շարք համարներում տպագրել է «Ցուցակ հայ լրագրաց և հանդեսից» աշխատությունը, որտեղ տալիս է «Ազդարարից» մինչև իր օրերը տպագրված հայ պարբերականների ցանկը՝ որոշ տեղեկություններով։ Այս իմաստով նա հանդիսանում է հայ պարբերական մամուլի առաջին հետազոտողը։ Գրել է պատմա-բանասիրական և բանավեճային տասնյակ աշխատություններ, որոնց մեծ մասը մնացել են անտիպ և իր մահից հետո անհետ կորել են նրա ճոխ հավաքածուի հետ միասին։ Տպագրված աշխա-

տությունները՝ «Նկարագիր աղետից Երուսաղեմի», տպագրվել է 1860-ին և մեծ աղմուկ բարձրացրել հետագայ տարիների մեջ, առիթ տվել Տերոյենցի (Զամուռճյան) բուռն հարձակումներին։ Վերջինիս պատասխանել է «Դատաքննություն դատաքննությանց և խոսք առ անկյալն ի ճշմարտութենե Հովհաննես Զամուռճյան» գրքույկով, որը լույս է տեսել որպես հավելված՝ «Մեղու» առաջադիմական թերթի։ Բանասիրական գործերից է «Հատկություն Արարատա», որտեղ խոսում է Արարատ անվան ծագման մասին։ Մեծ եռանդով մասնակցել է Վատիկանի գործակալների, առհասարակ կաթոլիկական պրոպագանդայի դեմ մղվող պայքարին՝ «Հրարուխ Արարատա նորին՝ ամենամաքուր եկեղեցվույն դեմ մաքառող թշնամյաց» և այլ գրքույկներով։ Տպագրված մյուս աշխատություններից են՝ «Բանասիրական հետազոտություն», «Դիտողություն ի վերա ամուսնացյալ կղերականության» (1871) և այլն։ Պատկանել է Հ. Սվաճյանի գլխավորած «Ռոնամիջյան» կոչվող առաջադիմական խմբակցության, որն ստեղծվել էր Միքայել Նալբանդյանի Կ. Պոլսում եղած ամիսներին (1861)։

ՄԻՆԱՍ *(13-րդ դ.).*— Ճարտարապետ։ 1248 թ. կառուցել է Հաղարծինի վանքի սեղանատունը, արձանագրության մեջ հիշելով իր անունը։ Համարվում է միջնադարի ականավոր ճարտարապետներից։

ՄԻՆԱՍ *(14-րդ դ.).*— Ծաղկող։ Ծաղկել է մի ժողովածու, որը պահվում է Երևանի Մատենադարանում, 6501 թվահամարի տակ։

ՄԻՆԱՍ *(15-րդ դ.).*— Մանրանկարիչ։ Ապրել և գործել է Կիլիկիայում։ 1465 թ. Սիս քաղաքում նկարազարդել է մի Շարակնոց։

ՄԻՆԱՍ *(15-րդ դ.).*— Մանրանկարիչ։ Ապրել և գործել է Վասպուրականում, հավանաբար Արճեշում։ Համարվում է Վասպուրականի մանրանկարչության դպրոցի ականավոր ներկայացուցիչներից։ Նկարազարդել է ձեռագրեր, բերված խառաբաստավանքից, Վանից, Արծկեից, Կռուցից, Ոստանից և այլ վայրերից։ Մեզ հասած նրա առաջին աշխատանքը՝ մի Ավետարան, նկարազարդված է Արճեշում, 1433-ին, վերջինը՝ 1483-ին, ինչ-որ ենթադրել է տալիս, թե ունեցել է կես դարի նկարչական գործունեություն։ Նրա նկարազարդած կամ ծաղկած ձեռագրերից 19-ը պահվում են Երևանի Մատենադարանում, մի քանիսը Ավետարաններ են, կան ճառընտիրներ, Հայսմավուրքներ և այլն։ Հիշատակարաններից երևում է, որ նրա ուսուցիչներն են եղել Մկրտիչ Խերպատը, Թուման, իսկ աշակերտներից՝ Կարապետ և Մուրատ Աղթամարցիները։ Համարվել է «հռչակավոր և անվանի նկարիչ», «քաջ նկարող»։

ՄԻՆԱՍ *(17-րդ դ.).*— Մատենագիր։ Եղել է Գրիգոր Դաբանաղցու աշակերտը։ Գրել է «Ժամանակագրութիւն» և «Ճանապարհորդութիւն յԵրուսալէմ» երկերը։

ՄԻՆԱՍ (ՏԵՐ ՄԻՆԱՍ) *(17—18-րդ դդ.).*— Տաղերգու։ Նրա տաղերից նմուշներ («Տուի ես խնկալի», «Այն որ նստի» և այլն) պահվում են Երևանի Մատենադարանում։

ՄԻՆԱՍ ԱԲԵՂԱ *(18-րդ դ.).*— Տաղերգու։ Եղել է էջմիածնի միաբան։ Գրել է տաղեր, որոնցից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանում։

ՄԻՆԱՍ ԱՄԴԵՑԻ *(17-րդ դ.).*— Մատենագիր։ Ծնվել է պատմական Ամիդ (Տիգրանակերտ, այժմ՝ Դիարբեքիր) քաղաքում։ Ստացել է հոգևորական կրթություն, վարել կրոնական պաշտոններ Եվդոկիայում և այլուր։ Եղել է Երուսաղեմի պատրիարք 1696, 1698—1702, 1704 թթ.։ 1704 թ. գործել է Կիպրոսում։ Թողել է մի «Օրագրութիւն», որը համարվում է հավաստի աղբյուր ժամանակաշրջանի հասարակական քաղաքական պատմության համար։ Ընդգրկում է 1680—1704 թթ.։ Գրել է նաև «Ազգաբանութիւն թագաւորացն Հայոց» երկը։ Լույս է տեսել Կ. Պոլսում, 1735 թ. (Բ. տպ.՝ Վաղարշապատ, 1870)։

ՄԻՆԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԴԻՐԵԱՆԴԱ *(18-րդ դ.).*— Մշակութային գործիչ։ Եղել է էջմիածնի միաբանության անդամ, որպես նվիրակ մեկնել է Կ. Պոլիս, որտեղ ունեցել է գրական գործունեություն։ Հրատարակել է Իգնատիոսի «Թուղթք» (1783)։ Թողել է իր քարոզները պարունակող մի ժողովածու։

ՄԻՆԱՍ ԷՏԻՐՆԵՑԻ *(17—18-րդ դդ.).*— Ծաղկող։ 1693 թ. Ագրիանապոլսում ծաղկել է «Մաշտոց ձեռնադրութեան» ծիսարանը, իսկ 1689 թ.՝ մի ժողովածու։

ՄԻՆԱՍ ԹՈԽԱԹԵՑԻ *(1510—1623).*— Տաղերգու։ Ծնվել է Եվդոկիայում (այժմ՝ Թոխատ), որտեղ ստացել է կրթությունը։ Զբաղվել է կազմարարությամբ և մանրանկարչությամբ։ 1540 թ. մեկնել է Կամենեց (Լեհաստան), այնտեղից՝ Սուչավա, ապա՝ Լեմբերգ (Լվով), որտեղ ապրել է մինչև կյանքի վերջը, որպես քարտուղար աշխատել արքեպիսկոպոսարանում, զուգահեռ զբաղվել է գրչությամբ ու գրականությամբ։ Արտագրել է հայերեն ձեռագրեր, կցելով նրանց ուշագրավ հիշատակարաններ։ Գրել է «Ողբ ի վերայ Օլախաց երկրին հայերուն», որտեղ նկարագրում է Օլախաց երկրում (Մոլդավիա) հայերի դեմ 1551 թ. կիրառված բռնությունները ականատեսի հարազատությամբ։ Նախ լույս է տեսել Պետերբուրգում, 1884 թ. Ք. Պատկանյանի «Նշխարք մատենագրութեան հայոց» ժողովածուում, ապա վերահրատարակվել է քանիցս, թարգմանվել գերմաներեն։ Ավելի լայն ճանաչում է գտել նրա «Գովասանք հերիսի» տաղը, գրված 1563 թ., որը միջնադարյան հայ երգիծական գրականության լավագույն նմուշներից մեկն է համարվում։ Լույս է տեսել «Արևելյան մամուլ» ամսագրում, 1886 թ., ապա արտատպվել է տասնյակ ժողովածուներում։ Միրային տաղերից է «Տաղ սիրո», գրված հայերեն և հայատառ թուրքերեն։ Բացի չափածո այս ստեղծագործություններից, գրել է Լեմբերգի հայերի դատարանի «Գրքենքը»։ Ընդգրկում է 1572—1619 թթ. ժամանակաշրջանը։ Նրա այս կարգի աշխատություններից մեկն էլ կոչվում է «Տումար ժողովարարութեանց», և պարունակում է Լեմբերգի հոգևոր թեմի ժողովների արձանագրությունները։

ՄԻՆԱՍ ԼՈՒԹՖԻ *(1892—1957).*— Բանաստեղծ։ Ծնվել է Խարբերդի շրջանի Քեսիրիկ գյուղում։ 1913 թ. մեկնել է Ամերիկա, սովորել է Հարվարդի ու Բրաունի համալսարաններում, ավարտել 1922 թ.։ Գրական ասպարեզ է մտել 1910-ական թվականներին։ Առանձին գրքերով հրատարակել է բանաստեղծությունների հետևյալ ժողովածուները՝ «Այգերգ», «Նոր գարուն», «Ծիր կաթին», «Արփիական», «Փշրված բաժակ»։ Գրել է նաև անգլերեն բանաստեղծություններ։

ՄԻՆԱՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ *(1610—1689).*— Նկարիչ։ Ծնվել է Նոր Ջուղայում, որտեղ ստացել է նախնական կրթությունը։ Նկարչական արվեստը սովորել է Հալեպ քաղաքում, մի ֆրանսիացի նկարչի մոտ։ Վերադառնալով Իսպահան՝ զբաղվել է նկարչությամբ, ձեռք բերել մեծ համբավ ոչ միայն հայ իրականությունում, այլև՝ պարսկական արքունիքում։ Համարվել է «պարծանք մերում ազգին»։ Ջուղայեցի հարուստ շատ վաճառականներ նրան են պատվիրել իրենց տների որմնանկարները։ Պատրաստել է ժամանակի հայտնի մարդկանցից մի քանիսի յուղաներկ դիմանկարները։ Բարձր գնահատելով նրա արվեստը՝ Շահ Սեֆին նրան դարձրել է պալատական նկարիչ։ Ժամանակակիցների վկայությամբ նկարներ էր պատրաստում «ձիթով և առանց ձիթո, պատկեր ի քարտիսի, ի կտավի, ի տախտակի, ի պղնձի, ի յորմն և այլ ինչ կերպիւ յոր և պիտոյանայր»։ «Ոսկւով և լաջուարդով ծաղկեալ» նկարազարդել է ձեռագրեր։ Նրա նկարներից են՝ Զրասխանի դիմանկարը, «Բաղեն և ռուս բազեյակիրը», Խոջա Սաֆրազենց և Խոջա Պետրոս Վելիջանենց ապարանքների դեղեցիկ որմնանկարները, Շահ-Աբաս 2-րդը և իր սիրուհին, Սուլթանի ամառանոցի զարդանկարները, «Արևելյան բանկար», «Իրանցի սպասուհին», «Զբնաղ պարսկուհին», «Սիրահարների երջանկությունը»։ Նրան են վերագրվում Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի հոյակապ նկարները։ Հայ իրականությունից վերցված գործերից են Խոջա Ոսկան և Խոջա Հակոբջան Վելիջանյանների դիմանկարները։

ՄԻՆԱՍՅԱՆ ԱԲԵԼ *(1880— ?).*— Նկարիչ, արվեստագետ լուսանկարիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է տեղի Պերպերյան վարժարանում, ապա մեկնել է Փարիզ, հետևել նկարչության ու փորագրության։ Ստեղծել է մի շարք մատիտանկարներ, որոնցից լավագույնները ցուցադրվել են Փարիզում, արտատպվել մամուլում։ Աչքի է ընկել քաղաքական ծաղրանկարներով։ Դրանցից է «Եվրոպան պատվո խաչ է մատուցում Թուրքիային», որը տպագրված է Թեոդիկի «Ամենուն տարեցույցում» (1924)։ Հետագայում զբաղվել է գեղարվեստական լուսանկարչությամբ. այդ բնագավառում դարձել է հայտնի դեմք Փարիզում, իր «Աբել» լուսանկարչատնով։

ՄԻՆԱՍՅԱՆ ԱԶԱՏ *(1918—1985).*— Փիլիսոփա. փիլիսոփայական գիտությունների դոկտոր *(1961)*։ Ծնվել է Իջևանի շրջանի Սևքար գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի քի-

միական ֆակուլտետն ավարտել է 1946 թ.։ 1948—1951 թթ. շարունակել է ուսումը Հայկական ԽՍՀ ԳԱ փիլիսոփայության սեկտորի ասպիրանտուրայում։ 1951 թ. պաշտպանել է դիսերտացիա, ստացել փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան և անցել է դասախոսական աշխատանքի։ 1949—1952 թթ. աշխատել է երկամյա կուսակցական դպրոցում։ Այնուհետև, մինչև 1956 թ. դասախոսել է Երևանի պետական համալսարանում, որտեղ 1952 թվականից եղել է փիլիսոփայության ամբիոնի վարիչ։ 1956 թվականից դասախոսել է Երևանի բժշկական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնում։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Մատերիայի փոփոխման և զարգացման թռիչքաձև բնույթը» (Երևան, 1955), «Անօրգանական բնության անցումը քանակական փոփոխությունից որակականի» (1958, ռուսերեն), «Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մասին», «Դիալեկտիկական մատերիալիզմը և ժամանակակից բնագիտության մի քանի հարցեր» (1959) և այլն։

ՄԻՆԱՍՅԱՆ ԱՐՓԵՆԻԿ (ծն. 1921).— Բանաստեղծ։ Ծնվել է Հալեպում (Սիրիա)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանում։ 1945 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժինը։ 1949—1958 թթ. աշխատել է Արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերությունում, ապա՝ Հայկական ԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում։ 1966 թվականից դասավանդում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում։ 1963 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա «Սաադի «Գոլեսթանը» և նրա հայերեն թարգմանությունները» թեմայով, որը առանձին գրքով լույս է տեսել 1972 թ.։ 1980 թ. տպագրել է «Սիպիլ» մենագրությունը, 1985-ին՝ «Սիպիլի ստեղծագործությունների մատենագիտությունը»։

ՄԻՆԱՍՅԱՆ ՓԻՐՈՒԶԻՆ (1927—1974).— Գրող։ Ծնվել է Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում։ 1940-ական թվականների կեսերից մամուլում տպագրել է բանաստեղծություններ։ Առանձին գրքերով հրատարակել է հետևյալ ժողովածուները՝ «Բանաստեղծություններ», «Զրույց արտիս հետ», «Դարերի հետ», «Օրերի հեռք»։

ՄԻՆԱՍՅԱՆ ԵՍԱՅԻ (ծն. 1912).— Նկարիչ, մանկավարժ. Հայկական ԽՍՀ վաստակավոր ուսուցիչ (1963)։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Լամզկերտ գյուղում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստական տեխնիկումում, որն ավարտել է 1930 թ., շարունակել ուսումը Լենինգրադի գեղարվեստների ակադեմիայում։ 1937-ին վերադառնալով Հայաստան՝ նվիրվել է ստեղծագործական և մանկավարժական աշխատանքի։ Մասնակցել է հանրապետական ցուցահանդեսների։ 1938-ից նկարչություն է դասավանդել Երևանի գեղարվեստական ուսումնարանում, որտեղ եղել է նաև ուսումնական բաժնի վարիչ։ Լավագույն գործերից են՝ «Ծաղիկներ», «Նամակ հայրենիքից», «Հին Գորիսը», «Աշունը Մաշչանում», «Տնտարան Ռընդամալից», «Բջնի» և այլն։

ՄԻՆԱՍՅԱՆ ԻԼԻԱ (ծն. 1929).— Երաժիշտ-սրճագետ. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1961)։ Ծնվել է Երևանում, որտեղ ստացել է կրթությունը, սովորել Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում։ Ինքնուրույն սովորել է դուդուկ նվագել, ապա աշակերտել է հայտնի դուդուկահար Լևոն Մադոյանին։ 1948-ից նվագել է Հալֆիլհարմոնիայի ժողովրդական գործիքների անսամբլում։ 1957 թ. մասնակցել է երաժիշտ կատարողների համահայաստանյան առաջին փառատոնին, արժանացել մրցանակի, նույն տարում նվագել է նաև համամիութենական փառատոնին, իսկ 1958 թ. էստրադային արտիստների համամիութենական փառատոնին և արժանացել է 3-րդ մրցանակի՝ Մոսկվայի «Ռոնգոն» և հայկական «Սոխակի երգը» սրնգի վրա կատարելու համար։ Մեծ վարպետությամբ կատարել է հայկական «Կռունկ», «Երազ» երգերը, Ա. Խաչատրյանի «Սրերով պարը» և այլն։ Ելույթներ է ունեցել Խորհրդային Միության բազմաթիվ քաղաքներում և արտասահմանյան երկրներում՝ Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Իրաք, Բելգիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Ֆինլանդիա, Մեքսիկա, Ամերիկա, Կանադա, Վենեսուելա, Չիլի, Գերմանիա, Չինաստան, Չեխոսլովակիա և այլն։

ՄԻՆԱՍՅԱՆ ԼԵՎՈՆ (ծն. 1905).— Նկարիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Որդին է ֆրանսագիր գրող Խաչուհի Մինասի։ Մասնագիտական կրթությունն ստացել է Վենետիկի գեղարվեստների ակադեմիայում՝ 1921—1926 թթ.։ 1930 թվականին մասնակցել է «Անի» խմբակցության կողմից Փարիզում կազմակերպված ցուցահանդեսին, ներկայացնելով «Զբոսայգի», «Կանացի դիմանկար», «Լեռնցի պառավը», «Մանկատան դռնապանը» և այլ գործեր։ Հետագա տարիներին ստեղծած լավագույն ստեղծագործություններից են «Պատուհան ծովի վրա», «Լքված կարուսել», «Իրերը արշալույսին», «Կոմպոզիցիա» և այլն։ Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Խորհրդային Միությունում։ 1930-ից մասնակցել է Վենետիկի Բիենալեի ցուցահանդեսներին։ Նրա նկարները հաճախ են ցուցադրվել նաև Գերմանիայում, Ֆրանսիայում, Դանիայում, Նորվեգիայում և այլ երկրներում, արժանացել մրցանակների։ Գործերից մի քանիսը պահվում են Վենետիկի ժամանակակից արվեստի ազգային պատկերասրահում, Պադուայի Չիվիկո թանգարանում և այլուր։ 1958-ին Պադուայում հրատարակվել է նրա գծանկարների ալբոմը։

ՄԻՆԱՍՅԱՆ ԼԵՎՈՆ (ծն. 1920).— Բանաստեղծ, կրթական գործիչ, գրող։ Ծնվել է Իսպահանի գավառի Վերին Խոյգան գյուղում (Իրան)։ 1933—1938 թթ. սովորել է Նոր Ջուղայի հայկական դպրոցում, ապա՝ Իսպահանի անգլիական կոլեջում։ 1960—1963 թթ. հետևել է Իսպահանի գրական համալսարանի հայոց լեզվի ու գրականության դասընթացներին որպես ազատ ունկնդիր։ Տասը տարի աշխատել է որպես ուսուցիչ։ Եղել է Փերիա գավառի հայկական դպրոցների շրջանային տեսուչ։ 1957-ից վարել է Նոր Ջուղայի հայոց վանքի թանգարանի վարիչի պաշտոնը, իսկ 1972-ից՝ տպարանի վերահսկիչի պաշտոնը։ 1940-ական թվականների սկզբներից աշխատակցել է իրանահայ և այլ հայկական մամուլին։ Հոդվածներ է տպագրել նաև Հայկական ԽՍՀ ԳԱ «Տեղեկագրում»։ «Հոնար վե մարդում» պարսկերեն հանդեսում էլ տպագրել է հոդվածներ առնչվող հայ մշակույթին։ Պարսկերենից հայերեն կատարել է թարգմանություններ։ Առանձին գրքերով լույս ընծայած բանասիրական աշխատություններն են՝ «Պատմություն Փերիայի հայերի» (Անթիլիաս, 1971), «Ցուցակ Նոր Ջուղայի թանգարանի ձեռագրերի» (Վիեննա, 1971), «Փերիայի հայ աշուղները» (1964), «Իրանի հայկական վանքերը», (Թեհրան, 1971), «Նոր Ջուղայի տպարանը» (Նոր Ջուղա, 1972) և այլն։ 1977 թ. լույս է ընծայել «Մտորումներ» բանաստեղծությունների ժողովածուն։

ՄԻՆԱՍՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (1908—1966).— Նկարիչ. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1956)։ Ծնվել է Կարսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Լենինականի նկարչական ստուդիայում, 1925—1929 թթ. կատարելագործվել Թբիլիսի գեղարվեստի ակադեմիայում, իսկ 1931—1936 թթ. սովորել է Լենինգրադի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ինստիտուտում։ 1936—1938 թթ. աշխատել է Լենինականի դրամատիկական թատրոնում որպես գլխավոր նկարիչ, 1938—1944 թթ.՝ Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնում։ Հետագայում որպես թատերական նկարիչ աշխատել է Երևանի Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնում և Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոններում։ Նրա ձեռագրություններով վերոհիշյալ թատրոններում բեմադրվել են մի քանի տասնյակ պիեսներ, օպերաներ, որոնցից են՝ «1905 թվականը», «Վենետիկի վաճառականը», «Ֆլանդրիա», «Ռուզան», «Հյուրանոցի տիրուհին», «Գիքորը», «Օթելլո», «Աղբյուրի մոտ», «Իրկուտսկյան պատմություն», օպերային թատրոնում՝ «Գևը», «Խանդութ», «Սևան», «Ռոմեո և Ջուլիետ», «Ֆաուստ», «Մարմար»։ 1938-ից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների։ Երկար տարիներ դասավանդել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում։ Եղել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի գեղագիտության ֆակուլտետի հիմնադիրն ու ղեկավարը։ Ձևավորել է Հայաստանի գրականության և արվեստի թանգարանի թատերական և գրական բաժինների մշտական ցուցահանդեսները, որոնցից առաջինը 1956 թ. ցուցադրվեց նաև Մոսկվայում։ Ստեղծել է տարբեր ժանրի բազմաթիվ գործեր, որոնցից են՝ «Ժայռ Սևանում», «Զմեռը Արզնիում», «Երեկոն Սևանում», «Հրազդան», «Գարունը Երևանում», «Վարդեր», ինչպես նաև Ա. Ավետիսյանի, Գ. Զանիբեկյանի և այլոց դիմանկարները։

ՄԻՆԱՍՅԱՆ ԿՈՄԻՏԱՍ *(1837—1903)*.— Դրող, թարգմանիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Եղբայրն է դրամատուրգ Մեսրոպ Լազ-Մինասյանի։ Կրթությունն ստացել է Փարիզի Մուրատյան վարժարանում։ 1852 թ. վերադարձել է Կ. Պոլիս, վարել տարբեր պաշտոններ, զուգահեռ ունեցել գրական-հրապարակախոսական գործունեություն։ Հրապարակախոսական հոդվածներով և գրական երկերով աշխատակցել է «Մեղմուտի հավատիս» թերթին։ Պոլսի ֆրանսերեն մամուլում տպագրել է բանաստեղծություններ, որոնցից նմուշներ թարգմանվել են հայերեն և տպագրվել հայ մամուլում («Ծաղիկ», «Մասիս» և այլն)։ Գրել է նաև հայերեն բանաստեղծություններ, առակներ, դրամատիկական երկեր։ Ֆրանսիական գրականությունից կատարել է թարգմանություններ (Վ. Հյուգո, Լաֆոնտեն և այլն)։

ՄԻՆԱՍՅԱՆ ՀԱՄԼԵՏ *(ծն. 1923)*.— Նկարիչ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունը ստացել է Երևանի գեղարվեստական տեխնիկումում և գեղարվեստական ինստիտուտում, որի գեղանկարչության բաժինն ավարտել է 1951 թ.։ Աշխատել է գեղարվեստական կոմբինատում որպես ձևավորող նկարիչ։ 1952 թվականից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների, որոնց թվում՝ Մոսկվայում կայացած կինոյի և թատերական նկարչության 1952 թ. ցուցահանդեսին։ Նախասիրած բնագավառը բնանկարչությունն է։ Լավագույն գործերից են՝ «Գյուղական բակ», «Կուրթանի ձորը», «Վերջալույսը Սևանում», «Գարունը լեռներում», «Լռավա ձորը» և այլն։ Ձևավորել է Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար» պիեսը։

ՄԻՆԱՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ *(ծն. 1910)*.— Նկարիչ։ Ծնվել է Ռաշտում (Իրան)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, միջնակարգը՝ Թավրիզի թեմական դպրոցում, ինքնազարգացմամբ կատարելագործել մասնագիտությունը։ Նկարչություն է դասավանդել Թավրիզի և Թեհրանի հայկական դպրոցներում։ 1940-ական թվականների սկզբներից մասնակցել է Իրանում կազմակերպված ցուցահանդեսների։ 1953-ից նրա նկարները ցուցադրվել են կամ անհատական ցուցահանդեսներ է ունեցել տարբեր երկրների բազմաթիվ քաղաքներում՝ Փարիզ, Լոնդոն, Մանչեստր, Կահիրե, Ալեքսանդրիա, Բեյրութ, Նյու Յորք, Բոստոն, Ֆիլադելֆիա և այլն։ 1958-ին մասնակցել է Վիեննայի «Բիլնալ» միջազգային ցուցահանդեսին։ Օտար մամուլը բարձր է գնահատել նրա իրանական բնանկարները, նաև «Նեոաժշտական» շարքը («Բեթհովենի հինգերորդ սիմֆոնիան», «Բեթհովենի ինևերորդ սիմֆոնիան», «Վագների Վալկիրիան», «Շուբերտի վալսը»), «Շերոպիրական» շարքը («Համլետ», «Օթելլո», «Լիր արքա», «Կլեոպատրա» և այլն), որ նա ցուցադրել է 1964-ին, Շեքսպիրի 400-ամյակի առիթով։ Գեղանկարչական մյուս գործերից են՝ «Առաջին համբույրը—Ադամ Եվա», «Հուդայի համբույրը», «Առավոտ» և այլն, որոնք 1954-ին ցուցադրվել են Փարիզում։ Թեհրանում ունեցել է իր սեփական «Աֆրոդիտա» ստուդիա-պատկերասրահը և նկարչական դպրոց։

ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(1928—1972)*.— Նկարիչ։ Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ (1970)։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում և Լենինգրադի Ի. Ե. Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ինստիտուտում, որի գեղանկարչության բաժինն ավարտել է 1954-ին, ասպիրանտուրան՝ 1958-ին։ Աշխատել է հասարակային և մոնումենտալ դեկորատիվ գեղանկարչության ասպարեզում, հակում ցույց տալով դեպի պատմական թեմատիկան՝ «Վահագն Վիշապաքաղ», «Փառք հայ գրի և գրչության» (գրված է Օշականի Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, հեղինակակից Հ. Մամյան)։ Լավագույն գործերից են նաև «Սրինգ», «Հիդրոշինարարներ», «Աշտարակ», «Վերածնունդ»։ Մասնակցել է երիտասարդության համաշխարհային 5-րդ (Վարշավա, 1955), 6-րդ (Մոսկվա, 1957), 7-րդ (Վիեննա, 1959) փառատոներին, ինչպես և հանրապետական, միութենական, արտասահմանյան բազմաթիվ ցուցահանդեսների։ Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երևանում 1959-ին, 1963-ին և 1974-ին (վերջինը՝ հետմահու)։

ՄԻՆԱՍՅԱՆ ՄԱՐԱՏ *(ծն. 1937)*.— Քանդակագործ։ Ծնվել է Կիրովականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում և գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի քանդակագործության բաժինն ավարտել է 1965-ին։ 1966—1974 թթ. աշխատել է Կիրովականի նկարչական դպրոցում։ 1966 թվականից մասնակցել է հանրապետական, հետագայում նաև միութենական ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են Հովհաննես Աբելյանի դրանիտյա հուշարձանը (դրված Կիրովականում), «Պայքարից առաջ», «Քարհատ», «Ըմբիշներ» քանդակները, նաև Ե. Օթարովի, հին բոլշևիկ Մալումյանի և այլոց դիմաքանդակները։ 1971-ից Կիրովականի նկարիչների միության նախագահն է։ 1974-ին նշանակվել է Կիրովականի կերպարվեստի թանգարանի դիրեկտոր։

ՄԻՆԱՍՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ *(1870—1936)*.— Հրապարակախոս-խմբագիր, պատմաբան։ Ծնվել է Խարբերդում (Արևմտյան Հայաստան)։ Կրթությունն ստացել է Պարտիզակի ամերիկյան կոլեջում։ Որպես ուսուցիչ աշխատել է Ադանայի և Տարսոնի հայկական դպրոցներում։ 1897 թ. մեկնել է Ամերիկա, սովորել Էլլի համալսարանում, ապա մեկ տարի (1900) հետևել է Հարվարդի համալսարանի փիլիսոփայության դասընթացներին։ Աշխատակցել է Ամերիկայում լույս տեսնող «Կոչնակ» շաբաթաթերթին, միաժամանակ եղել է նրա խմբագիրը։ 1901—1908 թթ. Ամերիկայում հրատարակել է «Լույս» շաբաթաթերթը։ 1909 թ. վերադարձել է Թուրքիա, որպես տնօրեն պաշտոնավարել Վանի վարժարանում։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո կրկին մեկնել է Ամերիկա, 1925—1926 թթ. վերահրատարակել «Լույսը»։ Ապա Ֆրեզնոյում խմբագրել է «Սիսուան» պարբերականը։ Երկար տարիներ որպես պրոֆեսոր պաշտոնավարել է Կալիֆոռնիայի համալսարանում։ Առաձին գրքերով լույս ընծայած աշխատությունների են՝ «Մագումն ու նկարագիր հայ ազգին», «Բնիկ նախնիք հայոց», «Տավրոսյան եղբայրակցություն», «Բնաշրջանի մը ներշնչումներ» (2 հատոր, 1905), «Կրթական սկզբունքներ և իդեալներ», «Պատանեկան հուշեր» և այլն։

ՄԻՆԱՍՅԱՆ ՅՈՒՐԻ *(ծն. 1942)*.— Քանդակագործ։ Ծնվել է Թբիլիսիում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում և գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի քանդակի բաժինն ավարտել է 1969-ին։ Հաջորդ տարվանից դասավանդել է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում։ 1969-ից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների, որոնցում ցուցադրված գործերից են՝ «Որբը», «Երևանյան մետրոյի շինարարները», «Պաղաբերություն», «Անմահություն», «Ահեղ օրեր», «Փահլեվան», «Գուսան Ջիվանի»։

ՄԻՆԱՍՅԱՆ ՊԵՏՐՈՍ *(1799—1867)*.— Դրամատուրգ, կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է Վենետիկի Մխիթարյանների վանքում, հմտացել եվրոպական մի շարք լեզուներին։ 1835 թ. նշանակվել է Պադուայի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի տնօրեն. այդ շրջանում նրա աշակերտների թվում է եղել գրող Մ. Պեշիկթաշլյանը։ 1846 թ. վերադարձել է Կ. Պոլիս։ Մտրի մասնակցություն է ունեցել նույն տարում հիմնադրված «Համազգայց» միության ստեղծման գործին, մի ընկերություն, որի նպատակն էր առանց դավանական խտրության զարկ տալ լուսավորական, կրթական շարժմանը, ամրապնդել հայ ժողովրդի միասնականությունը։ Պոլսից հետո պաշտոնավարել է Տրապիզոնում, որտեղ նույնպես ունեցել է կրթական, մշակութային գործունեություն, կազմակերպել է թատերական ներկայացումներ։ Գրական աշխատանքով զբաղվել է 1830-ական թվականներից։ 1834 թ. Վենետիկում լույս է տեսել նրա «Արվեստագիտություն» աշխատությունը, իսկ 1844 թ.՝ «Թվաբանություն մտավոր» գիրքը, երկուսն էլ ուսումնական ձեռնարկներ։ «Բաղմավեպի» առաջին տարիների համարներում տպագրել է հոդվածներ թատրոնի դերի ու նշանակության մասին։ 1845 թ. Վենետիկում լույս է տեսել նրա «Թատերգութիւնք. հատ. Ա.» գիրքը, որը պարունակում է երկու ողբերգություն՝ «Խոսրով Մեծ» և «Սմբատ Ա.» ընդարձակ առաջաբանով, որտեղ մանրամասնորեն շարադրել է իր թատերագիտական ըմբռնումները։ Նրա վերոհիշյալ պիեսները հաճախ են բեմադրվել, թեև գրված են խրթին գրաբարով։

ՄԻՆԱՍՅԱՆ ՌՈԶԱ *(1907—1987)*.— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1950)։ Ծնվել է Արտաշատի շրջանի Դվին գյուղում։ 1925 թվականից խաղացել է Երևանի առաջին պետական թատրոնում։ 1930 թ., երբ հիմնադրվել է Կիրովականի թատրոնը, դարձել է նրա հիմնադիր ուժերից։ Ապա սովորել է Լենինգրադի թատերական ինստիտուտում, որի ռեժիսորական ֆակուլտետն ավարտել է 1936 թ.,

վերադարձել Հայաստան, աշխատել Լենինականի թատրոնում։ Հայրենական պատերազմի տարիներին բեմադրել է մի շարք պիեսներ Հայաստանի ադրբեջանական և քրդական թատրոններում։ 1951 թվականին նշանակվել է Լենինականի թատրոնի դիրեկտոր և ռեժիսոր։ Գլխավոր դերակատարումներից են՝ Նատաշա («Փառք»), Մալյուտինա («Անձնական գործ»), Զեյնաբ («Դավաճանություն»), Վասիլիսա և Նատաշա («Հատակում»), Ոորցիա («Վենետիկի վաճառականը»), Անուշ («Պաղատասար աղբար»), Ջոու-ֆան («Թայֆուն»), Ռոզալիա («Կորրադո»)։ Բեմադրություններից են՝ «Դավաճանություն», «Առերեսում», «Պաղատասար աղբար», «Բոռ», «Անմեղ մեղավորներ», «Ավազակներ» և այլն։

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԻԼՎԱ (ծն. 1926).— Բալետի մենապարուհի. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ (1963)։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի պարարվեստի ուսումնարանում, ավարտել 1944 թ.։ Երկու տարի կատարելագործվել է Մոսկվայում, Մեծ թատրոնին կից պարարվեստի ուսումնարանում։ 1946 թվականից աշխատել է Երևանի Ա.Լ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում, որտեղ հանդես է եկել պատասխանատու մի շարք դերերում՝ Խանդութ, Դայանե, Մարմար (համանուն բալետներում), Կիտրի («Դոն Կիխոտ»), Գյուլնար («Շեհերազադե»), Ռուզան («Սևան»), Տաո Խուա («Կարմիր կակաչ»), Օդետա-Օդիլիա («Կարապի լիճը»), Միրտա («Ժիզել»), Ռայմոնդա («Ռայմոնդա»), Էգինա («Սպարտակ»), Խպանացի աղջիկ («Բալերո») և այլն։ Ունեցել է նաև մանկավարժական գործունեություն։

ՄԻՆԱՍՅԱՆ ՎԱՀԻՄԻՐ (ծն. 1922).— Նկարիչ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում և Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել է 1953 թ.։ Նույն տարվանից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների, ներկայացնելով կոմպոզիցիոն կտավներ, բնանկարներ, դիմանկարներ։ Լավագույն գործերից են՝ «Խաղաղ առավոտ», «Զի մոռացվի», «Դասից ուշացողը»։

ՄԻՆԱՍՅԱՆ ՕՇԱԿԱՆ (ծն. 1930).— Բանաստեղծ, երաժշտագետ-խմբավար, կրթական գործիչ։ Ծնվել է Սիրիայում։ Հայկական կրթությունն ստացել է Լիբանանում, ապա մեկնել է Ամերիկա, 1962—1975 թթ. Բոստոնի համալսարանում հետևել է եկեղեցիների պատմության, երաժշտության և այլ առարկաների դասընթացներին։ Կրթական, խմբավարական պաշտոններ է վարել Նյու Յորքում և Ամերիկայի այլ քաղաքներում։ Տարբեր դասընթացներում և դպրոցներում դասավանդել է հայոց լեզու (գրաբար և աշխարհաբար), գրականություն, հայ եկեղեցու պատմություն, համաշխարհային կրոնների պատմություն և այլն։ Ղեկավարել է երգչախմբեր, ինչպես և «Երևան» երգչախումբը, որը պարբերաբար ելույթներ է ունեցել։ Բանաստեղծական հոդվածներով աշխատակցել է ամերիկահայ մի շարք պարբերականների։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Ամերիկահայոց եկեղեցին 1888—1970» (տպ. 1974), «Համառոտ պատմություն հայ եկեղեցու» (1958), «Երաժշտ Ռուբեն Գրիգորյան» (հայերեն և անգլերեն, Բոստոն, 1956), «Երևան» երգչախմբի համերգների հուշագրքեր և այլն։ Սրանցից առաջինը պաշտպանել է որպես դոկտորական դիսերտացիա։ Գրել է աշխատություն Կոմիտասի մասին։

ՄԻՆԱՍՈՎԻՉ ՅԱՆ (1797—1854).— Ծագումով հայ լեհական նկարիչ, արվեստաբան։ Մասնագիտական կրթությունն ստացել է Վարշավայի համալսարանի նկարչության բաժնում, ապա՝ 1829—1835 թթ. սովորել է Փարիզում, Միլանում, Ֆլորենցիայում, Հռոմում։ Վերադառնալով Վարշավա, զբաղվել է նկարչությամբ և մանկավարժությամբ։ Ստեղծել է մի շարք դիմանկարներ, որոնցից նմուշներ պահպանվում են Վարշավայի ազգային թանգարանում և այլ պատկերասրահներում։ Լեհական մամուլում տպագրել է արվեստաբանական հոդվածներ, բանաստեղծություններ։

ՄԻՆԱՍՈՎԻՉ ՅՈՒՉԵՖ ԳԻՈՆԻՍ (1792—1849).— Ծագումով հայ լեհական գրող, թարգմանիչ։ Ծնվել է Վարշավայում, լեհահայ ազնվականի ընտանիքում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Լայպցիգի համալսարանում, որի իրավաբանական ֆակուլտետն ավարտել է 1814-ին։ 1817-ից աշխատել է լեհական դատախազությունում, նախ որպես գլխավոր թարգմանիչ, ապա՝

դատախազի տեղակալ։ 1820—1821 թթ. Վարշավայում խմբագրել է «Երաժշտական շաբաթաթերթ» պարբերականը։ Դասախոսել է Վարշավայի համալսարանում պրոֆեսորի աստիճանով։ Լայն ժողովրդականություն է ձեռք բերել «Մարգը» բանաստեղծությամբ (1816)։ 1825 թ. առանձին գրքով լույս են տեսել նրա գրած հոգևոր երկերի տեքստերը։ 1844-ին տպագրել է իր ինքնուրույն և թարգմանական երկերի 4-րդ հատորը։ Թարգմանությունների մեջ եղել են Շիլլերի, Գյոթեի երկերից նմուշներ։

ՄԻՆԱՍՈՎԻՉ ՅՈՒՉԵՖ ԷՊԻՖԱՆ (1718—1796).— Ծագումով հայ լեհական գրող, հրապարակախոս, թարգմանիչ։ Կրթությունն ստացել է Վարշավայի Հիսուսյանների դպրոցում և Կրակովի համալսարանում, որն ավարտել է իրավաբանական դոկտորի աստիճանով։ 1769-ից սկսած երկար տարիներ խմբագրել է «Մոնիթոր» հանդեսը։ Լեհերեն և լատիներեն լեզուներով գրել է պատմագրական, փիլիսոփայական, բարոյախոսական գրքեր, հրատարակել բանաստեղծությունների ժողովածուներ, թարգմանություններ։ Իր աշխատություններից մի քանիսում խոսել է լեհահայերի մասին։ Այդպիսի գրքերից է «Լվովի լեհահայերի արքեպիսկոպոսների վարքագրությունը», շարադրված քառյակներով (1762)։ Ֆրանսերենից, իտալերենից, լատիներենից և հունարենից լեհերենի է թարգմանել տարբեր հեղինակների գործեր (Բոկաչիո, Պետրարկա, Անակրեոն, Հորացիո, Հոմերոս և այլն)։ Նրա թարգմանած երկերից մեկն էլ կոչվում է «Տիգրանես» (կատակերգություն, 1767)։ Գրել է «Նշանավոր լեհահայերի կենսագրություններ» խորագրով մի աշխատություն, որը մնացել է անտիպ և համարվում է կորած։

ՄԻՆԵՅԱՆ (ԳԱԼԱՅԱՆ) ՄԱՐԻ (ծն. 1890).— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ Բեմական առաջին քայլերը կատարել է 1909 թվականին, Էմիլիայի դերով հանդես գալով Վահրամ Փափազյանի ներկայացրած «Օթելլոյում»։ Մինչև 1924 թ. խաղացել է պոլսահայ տարբեր թատերախմբերում, մասնակցել նաև Թուրքերին ներկայացումների։ Հայերեն ներկայացումների դադարելուց հետո՝ 1920-ական թվականների կեսերից խաղացել է բացառապես թուրքական խմբերում, նկատելի ճանաչում ձեռք բերելով դրամատիկ դերերում։ Հանդես է եկել նաև օպերետներում («Լեպլեպիճի Հորհոր աղա», «Քեռան քեհյա», «Զարտուշի թագուհի» և այլն)։ Հետագայում մեկնել է Բելգրադ, սիրողներից կազմել թատերախումբ, տվել հայերեն ներկայացումներ։

ՄԻՍԱՅԵԼ ԻՄԱՍՏԱՍՍԵՐ (9-րդ դ.).— Մատենագիր։ Գրել է «Մեծի կոզմանցն և Քոստիփառնայ նահանգին ի ս. Խաչն Քրիստոսի» երկը, որը տպագրվել է «Բազմավեպում» 1911 թ.։ Մեզ հասել է նաև նրա մի թուղթը, գրված բաղբեդոնականության դեմ։

ՄԻՍԱՔՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ (1805—1891).— Գրող, մանկավարժ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է հայանի հայկաբան Գրիգոր Փեշտիմալճյանի մոտ։ 1838 թ. նշանակվել է Սկյուտարի նորաբաց ճեմարանի հայկաբանության ուսուցիչ։ 1840 թ. հրաժարվել է այդ պաշտոնից, մասնավոր դասեր տվել ամիրայական ընտանիքներում, դառնալով հարուստ խավի հովանավորյալ դաստիարակներից մեկը։ 1848 թ. մեկնել է Փարիզ, որպես հսկիչ Պետրոս աղա Խորասանճյանի ուսանող որդիների։ Այնտեղ տպագրել է «Եպիմենդես ի Վոստիոր» (1854), «Կուրաց դաստիարակություն», «Տքնություն հայրենասերի» (1860) գրքույկները՝ ուղղված իր հակառակորդների դեմ։ Գրել է նաև «Սոփիա» խորագրով վեպ, որի մի հատվածն է միայն լույս տեսել հեղինակի մահից հետո՝ 1892 թ. Գր. Զոհրապի «Մասիս» գրական հանդեսում։ 1871 թ. Փարիզից վերադարձել է Կ. Պոլիս, շարունակել մանկավարժական, գրական գործունեությունը։ Հրապարակախոսական հոդվածներով աշխատակցել է «Մասիս», «Փունջ» և այլ պարբերականների։ Գրել է կիսագրաբար բանաստեղծություններ, որոնք իրենց հոռում լեզվի, պահպանողական գաղափարների պատճառով խստորեն քննադատվել են Հ. Պարոնյանի կողմից, «Ազգային ջոջերում»։

ՄԻՍԿԻՆ ԲՈՒՐՋԻ (1810—1847).— Աշուղ։ Ծնվել է Նախիջևանում։ Հետագայում ապրել է Գանձակում։ Եղել է միականի։ Հորինել և կատարել է հայերեն և ադրբեջաներեն բազմաթիվ երգեր, որոնք գրի է առել 1832 թվականին, կազմել Դավթար։ Նրա երգերը լայնորեն տարածված են եղել հայ և ադրբեջանցի ժողովուրդների մեջ։ Նմուշներ զետեղված են Միանսարյանի «Քնար հայկական» (Պետերբուրգ, 1868) և այլ ժողովածուներում։

ՄԻՐԱԽՈՐՅԱՆ ՄԱՆՎԵԼ *(1856—1934).*— Բանասեր։ Ծնվել է Վանում։ 1868 թ. ընդունվել է Վարագա վանքի ժառանգավորաց վարժարանը, աշակերտել Մ. Խրիմյանին։ 1872 թ. մեկնել է Կ. Պոլիս, շարունակել ուսումը Խասգյուղի Նուպար-Շահնազարյան վարժարանում, ավարտելուց հետո պաշտոնավարել է նույն դպրոցում որպես ուսուցիչ։ Բանասիրական ընդարձակ հոդվածներ է տպագրել «Մասիս» թերթում։ 1882 թ. որպես դպրոցական տեսուչ՝ եղել է Մուշի, Վանի և այլ գավառների շատ գյուղերում, հավաքել աղգագրական, տեղագրական հնչյական նյութ։ Վերադառնալով Կ. Պոլիս, 1884—1885 թթ. հրատարակել է «Նկարագրական ուղեցույց ի հայաբնակ գավառս արևելյան Տաճկաստանի» խորագիրը կրող եռահատոր աշխատությունը, որը 1887 թ. արժանացել է Սահակ-Մեսրոպյան մրցանակի։ Կ. Պոլսում հավաքել է 2500 կտոր գիրք, նպատակ ունենալով Վանում հիմնել գրադարան, սակայն մահանության պատճառով 1890 թ. ձերբակալվել է համիդյան ոստիկանության կողմից։ Հաջորդ տարի ազատ է արձակվել, բայց չի կարողացել ծրագիրը կենսագործել, քանի որ ձերբակալվելիս նրանից բռնագրավված բոլոր ձեռագրերն ու գրքերը այրվել էին։ Հաստատուն մեկնել է Ռումինիա, որտեղ ապրել է մինչև կյանքի վերջը, մերթընդմերթ բանասիրական հոդվածներ տպագրելով «Արևելք», «Մանգումեն», «Արմենիա» և այլ պարբերականներում։

ՄԻՐԱՂՅԱՆ ԳԵՎՈՆԴ *(1859—1919).*— Գրաբան, թատերական գործիչ։ Ծնվել է Թիֆլիսում, որտեղ ստացել է կրթությունը, սովորել 1-ին գիմնազիայում։ Ավարտելուց հետո տասը տարի որպես ուսուցիչ աշխատել է հայկական դպրոցներում։ 1897 թվականից պաշտոնավարել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Բեմական ասպարեզ է մտել 1870-ական թվականների վերջերից, մասնակցել հայերեն ներկայացումների։ 1884 թվականից խաղացել է Թիֆլիսի հայկական թատերախմբում, ապա մոտ քսան տարի՝ վրացական բեմում, աչքի ընկնելով կարևոր մի շարք դերերում, ինչպես Պոլոնիուս («Համլետ»), Գրումմո («Անսանձ կնոջ սանձահարումը»), Սգանարել («Դոն Ժուան»), Օրգոն («Տարտյուֆ»), Բեն Ակիբա («Ուրիել Ակոստա»), Թարտոլո («Սեբիլյան սափրիչ»), Բոբչինսկի («Ռևիզորը»)։ Հայկական բեմում կատարած դերերից են՝ Զամբախով («Խաթաբալա»), Օսեփ («Քանդած օջախ»), Պեպո («Պեպո»), Սաղաթել («Պատվի համար») և այլն։ Ունեցել է նաև հրապարակախոսական գործունեություն։ 1890-ական թվականներից «Մշակ», «Մուրճ», «Թատրոն», հետագայում «Գեղարվեստ» և այլ պարբերականներում տպագրել է բազմաթիվ հոդվածներ՝ նվիրված թատերական հարցերի։ Ռուսերենից հայերեն և վրացերեն է թարգմանել պիեսներ, որոնք բեմադրվել են տարբեր թատերախմբերի կողմից։

ՄԻՐԱՂՅԱՆ ԴԵՎՈՐԳ *(1840—1875).*— Դերասան։ Ծնվել է Թիֆլիսում։ Միրաղյան Գեղեցկի եղբայրն է։ Կրթությունն ստացել է Ներսիսյան դպրոցում, ավարտել 1864 թ. և զբաղվել ուսուցչությամբ։ 1860-ական թվականների սկզբներից հանդես է եկել Գ. Սունդուկյանի կատակերգություններում, աչքի ընկել մի քանի դերերում, որոնցից են՝ Օսկան Պետրովիչ («Օսկան Պետրովիչը էն կինոքումը»), Խաչի («Խաթաբալա»), Ղազո («Նոր Դիոդինեա») և այլն։ 1870 թ. «Էլի մեկ գոհ» առաջին ներկայացմանը կատարել է Օսեփի և Սուտաբովի դերերը։ Գլուխգործոցը համարվել է Գիքորի դերը «Պեպոյում»։

ՄԻՐԱՆԻ (ՍԻՆԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ) *(1837—1886).*— Աշուղ։ Ծնվել է Թուրքիայի Մարզվան քաղաքում, աշուղ Գնորգ Սինանյանի ընտանիքում։ Հորինել է թուրքերեն երգեր, կատարել սազի նվագակցությամբ։ Իր ուսուցչի՝ հայ աշուղ Բուսանիի հետ երկու տարի ճանապարհորդել է Փոքր Ասիայի բազմաթիվ քաղաքներում։ Այդ ճանապարհորդության մասին հորինել է ընդարձակ դաստան, որը համարվում է նրա լավագույն ստեղծագործությունը։ Մի դաստան էլ հորինել է արհեստների մասին, անելով աշխատանքի գովքը։ Նրա երգերից նմուշներ տպագրվել են «Բյուրակնում», 1900 թ.։

ՄԻՐԱՔՅԱՆ ՎԱՀԱՆ *(1866—1942).*— Բանաստեղծ։ Ծնվել է Շուլավերում։ Նախնական կրթություն ստացել է ծննդավայրում, ապա՝ Թիֆլիսի երկաթուղային տեխնիկական ուսումնարանում, Դորպի ուսուցչական սեմինարիայում և Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտում։ Ավարտելուց հետո 1888 թվականից սկսած՝ երկար տարիներ որպես ուսուցիչ աշխատել է Կովկասի տարբեր քաղաքների հայկական դպրոցներում։ Գրական ասպարեզ է մտել 1887 թվականից,

«Ակունք», «Տարազ», «Մուրճ» և այլ պարբերականներում տպագրել է բանաստեղծություններ, արձակ երկեր։ Առանձին գրքերով լույս ընծայած գործերն են՝ «Առանց լարերի» (բանաստեղծությունների ժողովածու, Թիֆլիս, 1897), «Վալվարի որսը» (պոեմ, 1901), «Նոր գյուղի շեմքին» (պիես), «Մանուշի հարսանիքը» (Երևան, 1927), «Խոզարածի կինը» (1928) և այլն։ Հայ գրականության պատմության մեջ արժանի տեղ է բռնել մասնավորապես «Վալվարի որսը» պոեմով, որը քանիցս վերահրատարակվել է, վերածվել է նաև ֆիլմի՝ «Վալվարի որսկանը» խորագրով։

ՄԻՐԶԱ ԱԴԻԳՅՈՒԶԱԼ ԲԵԿ *(19-րդ դ.).*— Մատենագիր։ Գրել է «Որպիսութիւնք խանացն Գանձակայ» («Ղարաբաղնամե») խորագրով մի երկ, որի ձեռագիրը պահվում է Երևանի Մատենադարանում։

ՄԻՐԶԱ ՋՈՒԼ-ՂԱՌՆԱՅՆ (Ալեքսանդր) *(1592—1656).*— Ծագումով հայ հեղինակ երաժիշտ, բանաստեղծ։ Ծնվել է Հնդկաստանի Աքրա քաղաքում, որտեղերին է Աքբար կայսեր 9-րդ՝ քրիստոնյա կնոջ՝ Մարիամ Թագուհու։ Հայրը եղել է հալեպցի հայ վաճառական Ալեքսանդրը (Իսկանդար)։ Ստացել է զինվորական կրթություն, եղել բանակի հրամանատար։ 1627 թվականից կառավարել է Բենգալի նահանգը։ 1654 թ. թողել է վարչական աշխատանքը, ապրել նոր մայրաքաղաք Դելհիում։ Գրել է բանաստեղծություններ, որոնք գնահատված են հնդկական «Ռազմալ» կոչվող տաղարանում։ Հորինել է նաև երաժշտական ստեղծագործություններ, որոնք մեզ չեն հասել։

ՄԻՐԶԱ ՄԵԼՔՈՒՄ ԽԱՆ *(1833—1908).*— Պետական գործիչ, գրող, հրապարակախոս։ Ծնվել է Նոր Ջուղայում։ Բուն անունը եղել է Հովսեփ Մելքումյան, նախնական կրթությունն ստացել է Թեհրանում, ապա ուսումը շարունակել է Փարիզի հայկական Մուրատյան վարժարանում և նույն քաղաքի համալսարանում, որի իրավաբանական բաժինն ավարտելուց հետո վերադարձել է Պարսկաստան, հիմնել «Արվեստների տուն» կոչեցը, դասավանդել այնտեղ։ 1851-ից աշխատել է դիվանագիտական ասպարեզում։ Նախ եղել է պետական թարգմանչ։ 1856—1857 թթ. որպես պարսկական պատվիրակության անդամ Փարիզում մասնակցել է Անգլիայի հետ հաշտության պայմանագրի կնքմանը։ 1858 թ. նշանակվել է պարսկական դեսպանատան խորհրդական Ֆրանսիայում։ 1862-ին, Թեհրանում նրա հիմնած «Ծարամուշխանե» ընկերության փակումից հետո աքսորվել է Պարսկաստանից, բայց կարճ ժամանակից նրան առաջարկվել է աշխատել Կ. Պոլսի պարսկական դեսպանատանը։ 1871 թ. նշանակվել է Պարսկաստանի պատրամենտի պրեմիեր մինիստրի խորհրդական, 1873-ին՝ Պարսկաստանի դեսպան Անգլիայում։ 1878 թ. մասնակցել է Բեռլինի կոնգրեսին որպես Պարսկաստանի ներկայացուցիչ։ Պաշտպանել է Պարսկաստանի շահերը ընդդեմ Թուրքիայի։ Այդ ծառայությունների համար պարսից շահը նրան շնորհել է «Մեծ դեսպան» տիտղոսը, նշանակել Պարսկաստանի դեսպան Գերմանիայում։ Կյանքի վերջին տարիներին եղել է Հռոմի պարսկական դեսպանը։ Ունեցել է գրական-հրապարակախոսական բեղուն գործունեություն։ Գրել է թե գեղարվեստական ստեղծագործություններ և թե Պարսկաստանը օտարներին ծանոթացնող հոդվածներ։ Պարսկերեն լեզվով գրած կատակերգությունների մեջ ծաղրել է պարսկական արքունիքի որոշ մարդկանց տգիտությունը, կաշառակերությունը։ 1890—1893 թթ. Լոնդոնում հրատարակել է «Քանուն» (Օրենք) պարսկերեն պարբերականը, նպատակ ունենալով եվրոպական լուսավորությունը տարածել հետամնաց Պարսկաստանում։ Թե պարսիկ և թե օտար ականավոր շատ մարդիկ բարձր են գնահատել նրա դերը երկրի լուսավորության գործում։

ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ ՋԱՆԻ *(ծն. 1930).*— Բանաստեղծ։ Ծնվել է Խոյահանի Նահանգի Ջարմահալի շրջանի Լիվանաքան գյուղում (Իրան)։ 1946 թ. նրանց ընտանիքը ներգաղթել է Խորհրդային Հայաստան։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 1952 թ.։ Մի քանի տարի աշխատել է որպես ուսուցիչ, ապա՝ 1958—1963 թթ.՝ Հայաստանի գրականության և արվեստի թանգարանում, 1963-ից՝ Հայկական ԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում, 1978-ից՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում որպես հայոց լեզվի ամբիոնի վարիչ։ 1965 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ Գիտական մամուլում տպագրել է հոդվածներ։ Առանձին գրքով 1971 թ. լույս է

ընծայել «Մեսրոպ Թաղիադյան» մենագրությունը։ Եղբոր՝ Միրզաբեկյան ժորայի հետ կազմել են «Ռուս-պարսկերեն պոլիտեխնիկական բառարանը», որը լույս է տեսել Մոսկվայում, 1973 թ.։

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԵՎԻՆԵՆ (1904—1985).— Պատմաբան։ Ծնվել է Թիֆլիսում։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց դպրոցում։ Հետագայում սովորել է Երևանի պետական համալսարանում, որի պատմության ֆակուլտետն ավարտելուց հետո աշխատել է որպես ուսմասվար և դասատու։ 1938 թվականից շարունակել է ուսումը պետական համալսարանի ասպիրանտուրայում՝ հին աշխարհի պատմության մասնագիտությամբ։ Պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա «Տիբերիոսի պրինցիպատը» թեմայով։ 1938 թվականից աշխատել է Երևանի պետական համալսարանում, դասավանդելով հին աշխարհի պատմություն և հարակից այլ առարկաներ։ Գիտական մամուլում տպագրել է հոդվածներ անտիկ աշխարհի պատմության վերաբերյալ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններ են՝ «Հին Հունաստանի պատմագրության ուրվագծեր» (Երևան, 1967), «Հին Հռոմի պատմագրության ուրվագծեր» (1971), որոնք օգտագործվել են որպես ուսումնական ձեռնարկներ։

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԼԵՆ (ծն. 1923).— Պատմաբան։ Ծնվել է Երևանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի իրավաբանական ֆակուլտետն ավարտելուց հետո շարունակել է ուսումը ասպիրանտուրայում՝ ԽՄԿԿ պատմության մասնագիտությամբ։ 1951 թվականից աշխատում է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում իբրև կուսպատմության ամբիոնի դոցենտ, միաժամանակ վարելով կուլտուրայի ֆակուլտետի դեկանի պաշտոնը։ Գիտական մամուլում և առանձին ժողովածուներում տպագրել է պատմագրական հոդվածներ։ Հեղինակակից է «Հայաստանի կոմերիմիությունը» աշխատության։ Առանձին գրքերով լույս ընծայած գործերն են՝ «Հայաստանի կոմերիմիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» և «Հանուն հայրենիքի» (Երևան, 1970)։

ՄԻՐԶԱՅԱՆ ՁՈՐԱՅՐ (1916—1964).— Գրող, թարգմանիչ։ Ծնվել է Թեհրանում։ Որդին է թարգմանիչ Հովսեփ Միրզայանի։ Կրթությունն ստացել է ծննդավայրի հայկական դպրոցում և ամերիկյան կոլեջում։ Գրական առաջին փորձերը կատարել է Թեհրանում լույս տեսնող «Վերածնունդ» առաջադիմական թերթում։ Գրական երկերով, բանաստեղծական հոդվածներով ու թարգմանություններով աշխատակցել է նաև սփյուռքահայ այլ պարբերականների («Զվարթնոց», «Սիյուռք», «Շիրակ», «Գայթար» և այլն)։ Եղել է իրանահայ «Նոր էջ» գրական խմբակի գործուն անդամներից, ինքն է խմբագրել այդ միության հրատարակությունը հանդիսացող «Նոր էջ» գրական ժողովածուներից մի քանիսը։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Թաց մայթը» (բանաստեղծությունների ժողովածու), Բաբա Թահիրի «Քառյակներին», Դոստոևսկու «Հեղինկի», Մարկ Տվենի «Պատմվածքների» թարգմանությունները, «Աբու Ալի Սինայի կյանքը» (ուսումնասիրություն)։ Լավագույն ստեղծագործություններից մի քանիսը հետմահու լույս են տեսել «Բանաստեղծություններ, պատմվածքներ» ժողովածուում, որը կազմում է «Նոր էջի» 14-րդ գիրքը։

ՄԻՐԶԱՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ՎԱՆԱՆԴԵՑԻ) (1772—1840).— Գրող, կրթական գործիչ։ Ծնվել է Վանում։ Բուն անունը եղել է Ամիրզադե։ Նախնական կրթությունն ստացել է Կռուց անապատի վանքում, որտեղ ընդունել է հոգևորական կոչում։ 1792 թ. մեկնել է Կ. Պոլիս, սովորել մայր դպրոցում։ Այդ տարիներից գրել է գրաբար բանաստեղծություններ։ 1798 թ. նշանակվել է Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանի ուսուցիչ։ Մանկավարժական երկարամյա գործունեությանը զուգընթաց զբաղվել է գրականությամբ։ Գրել է գրաբար չափածո ծավալուն երկեր, որոնք լույս են տեսել Կ. Պոլսում, Զմյուռնիայում և այլուր։ Դրանցից են՝ «Արփիական Հայաստան» (Կ. Պոլիս, 1836), «Ոսկի դար Հայաստանի» (Զմյուռնիա, 1841), «Տեսարան հանդիսից Հայկա, Արամա և Արայի» (Զմյուռնիա, 1856), «Ճառ ներբողական» (Մոսկվա, 1853) և այլն։ Ոմանք նրան են վերագրում «Հայաստան. երկիր դրախտավայր» հայտնի երգի տեքստը, որի երաժշտությունը գրել է Կոմիտասը։

ՄԻՐԶԱՅԱՆ ՀՈՎՍԵՓ (1866—1935).— Թարգմանիչ, պետական գործիչ։ Ծնվել է Համադանում (Իրան)։ Կրթությունն ստացել է Նոր Ջուղայի հայկական դպրոցում և Թեհրանում։ Ինքնազարգացմամբ ձեռք է բերել լայն գիտելիքներ։ Իմացել է հայերեն, պարսկերեն, ֆրանսերեն և անգլերեն։ Երիտասարդ հասակից մինչև կյանքի վերջը վարել է պետական պաշտոններ։ Քանիցս ընտրվել է Իրանի մեջլիսի դեպուտատ (1910, 1915, 1923)։ Պետական գործունեությունը զուգահեռ՝ զբաղվել է գրական, թարգմանչական աշխատանքով։ Անգլերեն բնագրից թարգմանել է Բայրոնի «Մանահեղը», «Չայլդ Հարոլդը», Լոնգֆելլոյի «Կյանքի սաղմոսը», Վ. Ակոտոյի «Կղզիների լորդը», «Լճի լեղին», որոնք տպագրվել են հայ մամուլում։ Բնագրից թարգմանել է Օմար Խայամի «Քառյակները», որ նախ լույս է տեսել Թեհրանում, 1923-ին, հետագայում ճոխ նկարազարդումներով վերահրատարակվել է 1963-ին։ Թարգմանություններ է կատարել նաև Սաադիից և ուրիշներից։

ՄԻՐԶԱՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (1888—1958).— Կոմպոզիտոր, երաժշտագետ։ Ծնվել է Թիֆլիսում։ Կրթությունն ստացել է Ներսիսյան դպրոցում և Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում, որի կոմպոզիցիայի դասարանն ավարտել է 1910 թ.։ 1912 թ. նրա մասնակցությամբ Թիֆլիսում հիմնադրվել է «Հայ երաժշտական ընկերությունը»։ 1924 թ. Լուսժողկոմ Մռավյանի հրավերով տեղափոխվել է Երևան, երաժշտություն դասավանդել Երևանի կոնսերվատորիայում, երաժշտական ուսումնարանում և այլ դպրոցներում։ Կյանքի վերջին տարիներին աշխատել է Ալ. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում որպես ուսմասվար և դասատու։ Նրա ակտիվ մասնակցությամբ 1926 թ. ստեղծվել է Երևանի մանկական երաժշտական թատրոնը, որը գործել է երկու տարի։ Ունի 300-ից ավելի ստեղծագործություն՝ մանկական, մասսայական, էպիկական, քնարական, էստրադային երգեր, խմբերգեր, ինչպես՝ «Ճպուռն ու մրջյունը», «Միտն ու սարը», մասսայական երգերից՝ «Ծլել է արտս», «Սարի աղջիկ», «Գեղչկուհու երգը», «Բերքի երգը», քնարական՝ «Խոհեր», «Կուզեմ լինեմ», «Սիրերգ» և այլն, հայրենասիրական՝ «Բանակ եմ գնում», «Բարի երթ», «Հայրենիք և սեր», էպիկական՝ «Զենով Օհանի ափսոսանքը» և այլն։ Կազմել է երաժշտական ձեռնարկներ, դասագրքեր, որոնք օգտագործվել են մասսայական դպրոցներում։

ՄԻՐԶԱՅԱՆ ՍԱՐԳԻՍ (ՎԱՆԱՆԴԵՑԻ) (1806—1871).— Դրամատուրգ, մշակութային գործիչ։ Ծնվել է Զմյուռնիայում։ Որդին է Միրզայան Հովհաննեսի։ Կրթությունն ստացել է ծննդավայրում, որտեղ ունեցել է գրական, մանկավարժական բեղուն գործունեություն։ 1840-ական թվականների սկզբներից աշխատակցել է «Արշալույս Արարատյան» թերթին։ Եղել է Զմյուռնիայի «Վասպուրական» թատրոնի հիմնադիրներից (1861)։ 1860—1862 թթ. խմբագրել է Հաշտենից միության օրգան «Միություն Հաշտենից» հանդեսը, իսկ 1868 թ.՝ «Իրավունք» շաբաթաթերթը։ Գրել է մի քանի պիես, որոնցից «Մեծն Ներսես կամ Հայաստանի բարերարը» 1858 թ. տպագրվել է Փարիզում, 1863 թ.՝ Նրուսաղեմում։ Այս պիեսն է, որ բեմադրվել է Մոսկվայում (1858 թ.) «Արիստակես» խորագրով։ Հետագայում, 1863 թ. բեմադրվել է նաև Զմյուռնիայում, ավելի ուշ՝ Կ. Պոլսում։ 1866 թ. Զմյուռնիայում լույս է տեսել նրա մի այլ աշխատությունը՝ «Վիկտորիա Անգղիո թագուհույն Արշակունի հայ թագավորներն սերելոյ»՝ անգլերեն և հայերեն։ Մի պիես էլ գրել է «Վիրգինիա» խորագրով, հռոմեական կյանքից։

ՄԻՐԶԱՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴԻՐ (1868—1928).— Նկարիչ։ Ծնվել է Վրաստանի Սղնախի քաղաքում։ Գիմնազիական կրթությունն ստացել է Թիֆլիսում, մասնագիտականը՝ Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիայում։ Վերադառնալով Թիֆլիս՝ որպես նկարչության դասատու աշխատել է Հովնանյան, Ներսիսյան, Գայանյան դպրոցներում և ռուսական գիմնազիայում։ 1907-ից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Կազբեկ», «Ս. Գրիգորի վանքի ավերակները Լոռում», «Սառցալեռներ», «Երազվայի կիրճը Մցխեթի մոտ», «Թբիլիսի», «Անիի շրջակայքում», «Գաղթականի աղոթքը», «Հրազդան», որոնք ցուցադրվել են 1921 թ. Թիֆլիսում և Կ. Պոլսում։

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՇՈՏ (ծն. 1913).— Թատերական նկարիչ։ Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1956)։ Ծնվել է Թավրիզում։ Նախնական կրթությունն ստացել է Երևանում, մասնագիտականը՝ Լենինգրադի գեղարվեստների ակադեմիայում, որի դեկորատիվ նկարչության և գեղանկարչության բաժինն ավարտել է 1938-ին։ Այդ տարվանից մինչև 1944 թ. դասավան-

գել է Երևանի գեղարվեստական ուսումնարանում։ Աշխատել է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում որպես գլխավոր նկարիչ, ապա՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում։ Նրա նկարչական ձևավորումներով բեմադրվել են՝ «Անօժիտը», «Արտիստը», «Դավիթ Կոպերֆիլդ», «Միջամառային գիշերվա երազը», «Երկու տիրոջ ծառան»՝ պատանի հանդիսատեսի թատրոնում, իսկ պետական օպերայում՝ «Ռիգոլետտո», «Նամուս», «Անուշ», «Խանդութ», «Եվգենի Օնեգին», «Տոսկա», «Օթելլո», «Լակմե», «Արծվաբերդ», «Արշակ Բ», «Դավիթ բեկ»։ Ունեցել է մանկավարժական գործունեություն, Դասավանդել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում։

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ *(1913—1980)*.— Պատմաբան։ Ծնվել է Նախիջևանի Ալիբաղ գյուղում (այժմ՝ Մյասնիկյարաղ)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի պատմության ֆակուլտետն ավարտել է 1938 թ.։ 1948—1953 թթ. աշխատել է Հայաստանի պետական պատմական թանգարանում որպես դիրեկտորի տեղակալ, 1953—1956 թթ.՝ պետական գրադարանում որպես գիրեկտոր, 1956—1961 թթ. եղել է հեռակա մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր՝ գիտատեսչական գծով։ Քաղաքատնտեսություն է դասավանդել նույն ինստիտուտում, իսկ 1969-ից՝ Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում։ 1957 թ. առանձին գրքույկ է ընծայել «Հին Երևանի պատմությունից» աշխատությունը։

ՄԻՐԶՈՅԱՆ (ՄԻՐԶՈՎ) ԳԱՐԵԳԻՆ *(ծն. 1935)*.— Նկարիչ։ Ծնվել է Թբիլիսում։ Որդին է նկարիչ Գրիգոր Միրզոյանի։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թբիլիսիի գեղարվեստների ակադեմիայում, որի խեցեգործության ֆակուլտետն ավարտել է 1962-ին։ Նույն տարվանից մասնակցել է ցուցահանդեսների։ Հիմնականում զբաղվել է կիրառական արվեստով։ Հավաքույթ գործերից են՝ Դեկորատիվ պանոն», «Նամուրմուրտ», «Մրգի սկուտեղ», «Գինու բաժակ», «Գինու սափոր» և այլն։

ՄԻՐԶՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ *(ծն. 1903)*.— Նկարիչ։ Ծնվել է Թբիլիսում։ Մասնագիտական կրթությունը ստացել է տեղի Պոլյտեխնիկումի կերպարվեստի սեկցիայում, ապա կատարելագործվել է Թբիլիսիի գեղարվեստների ակադեմիայում, սովորել գրաֆիկայի ֆակուլտետում, մինչև 3-րդ կուրսը։ 1930-ից զբաղվել է պլակատներ նկարելով։ Մասնակցել է մի շարք ցուցահանդեսների։ Նրա պատրաստած պլակատներից տպագրվելով բազմացվել են հետևյալները՝ «Հասնել և անցնել», «Ո՛չ, պատերազմին», «Ատոմը կյանքի համար», «Ժողովուրդների ուժը միասնության մեջ է», «Կոմունիզմի փարոսը» և այլն։

ՄԻՐԶՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ *(1906—1960)*.— Դերասան։ Ծնվել է Վլադիկավկազում (այժմ՝ Օրջոնիկիձե)։ Երկար տարիներ աշխատել է Գրոզնու ռուսական պետական դրամատիկ թատրոնում։ Հետագայում տեղափոխվել է Հայաստան և 1939-ից մինչև կյանքի վերջը աշխատել Կիրովականի Հ. Աբելյանի անվան պետական թատրոնում։ Լավագույն դերերից են՝ Յագո («Օթելլո»), Մոնտանելլի («Բոռ»), Ռուսամ («Նամուս»), Պրեզիդենտ («Սեր և խարդավանք»), Սուրեն («Պատվի համար») և այլն։

ՄԻՐԶՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ *(տես Սյունի Գրիգոր)*։

ՄԻՐԶՈՅԱՆ ԳՈՒԻԴՈՆ *(1892—1976)*.— Կոմպոզիտոր, դիրիժոր. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1950)։ Ծնվել է Թբիլիսում։ Կրթությունն ստացել է Ներսիսյան դպրոցում։ Միաժամանակ սովորել է Թբիլիսի երաժշտական ուսումնարանում, ավարտել 1911-ին։ Այդ տարիներից որպես երաժշտության ուսուցիչ աշխատել է Տաշքենդի, Բաքվի, Թբիլիսի հայկական, ռուսական և ադրբեջանական դպրոցներում։ 1919—1922 թթ. սովորել է Թբիլիսի կոնսերվատորիայում, աշակերտել Զ. Պալիաշվիլուն, Ք. Քուչնարյանին, Մ. Իպոլիտով-Իվանովին։ Ավարտելուց հետո մեկ տարի աշխատել է Երևանի կոնսերվատորիայում, հինգ տարի՝ Գանձակի (այժմ՝ Կիրովաբադ) երաժշտական տեխնիկումում որպես դասատու և դիրեկտոր։ Վերադառնալով Թբիլիս՝ Վրաստանի կառավարության հանձնարարությամբ կազմակերպել է երաժշտական դպրոց, որտեղ աշխատել է որպես դիրեկտոր և դասատու։ Հետագայում տեղափոխվել է Հայաստան, աշխատել Լենինականի թատրոնում որպես դիրիժոր, երաժշտական ուսումնարանում որպես դասատու-ուսմասվար, իսկ 1937 թ. աշնանից՝ որպես ֆիլհարմոնիայի նորակազմ ժողգործիքների նվագախմբի կոմպոզիտոր-դիրիժոր։ Հորինել է դաշնամուրի համար

պիեսներ, որոնք լույս են տեսել շորս պրակներով, ռոմանսներ, մանկական երգեր, լարային կվարտետ, կոնցերտ թառի համար և այլն։

ՄԻՐԶՈՅԱՆ ԳՈՒԻԴՈՆ *(1911—1975)*.— Երաժիշտ-կատարող. քյամանչահար. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ (1967)։ Ծնվել է Թբիլիսում։ Կրթությունն ստացել է ծննդավայրի քաղաքային ուսումնարանում, 76-րդ աշխատանքային դպրոցում, միաժամանակ հաճախել է Հայաստան երաժշտական ստուդիան։ 1927—1929 թթ. աշխատել է Բաքվի ռադիոկոմիտեում որպես մենակատար և ժողգործիքների նվագախմբի կոնցերտմեյստր։ 1929-ից աշխատել է Երևանի ռադիոկոմիտեի ժողգործիքների անսամբլում։ 1933-ից շարունակել է ուսումը Երևանի պետական կոնսերվատորիայի ստեղծագործական բաժնում, միաժամանակ դասավանդել կոնսերվատորիայի քյամանչայի դասարանում։ Հայաստանի ֆիլհարմոնիայի կազմակերպվելուց հետո աշխատել է այնտեղ որպես ժողովրդական գործիքների անսամբլի գեղարվեստական ղեկավար և ֆիլհարմոնիայի մենակատար։ Հորինել է երաժշտական մի շարք երկեր։

ՄԻՐԶՈՅԱՆ ԶՈՐԱՐ *(ծն. 1947)* .— Նկարիչ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունը ստացել է Մոսկվայում՝ գեղարվեստական արդյունաբերության բարձրագույն ուսումնարանում, ավարտել 1970 թ. մոնումենտալ դեկորատիվ նկարչության մասնագիտությամբ։ 1972-ից մասնակցել է հանրապետական, միութենական ցուցահանդեսների։ Նրա կոմպոզիցիոն նկարները, նատյուրմորտները, դիմանկարները ցուցադրվել են Երևանում, Մոսկվայում, Թբիլիսիում, Բաքվում, Բուդապեշտում, Հելսինկիում, Ֆրանսիայում, Անգլիայում և այլ երկրներում, գնահատվել են մամուլում, արժանացել դիպլոմների, մեդալների։ 1971-ից զբաղվել է նաև մոնումենտալ-դեկորատիվ գեղանկարչությամբ։ Այդ բնագավառում նրա լավագույն գործերից են՝ «Արև» մոզաիկ պանոն կուրորտոլոգիայի և ֆիզիոթերապիայի ինստիտուտի շքամուտքում, «Հող», «Երկինք», «Ջուր», «Արև» մոզաիկ պանոների շարքը, «Երաժշտություն» պանոն Սոչիի կինոհամերգային սրահում և այլն։

ՄԻՐԶՈՅԱՆ ԷԴՎԱՐԴ *(ծն. 1921)*.— Կոմպոզիտոր. ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1981)։ Ծնվել է Գորիում (Վրացական ԽՍՀ)։ Որդին է կոմպոզիտոր Միքայել Միրզոյանի։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որի ստեղծագործական բաժինն ավարտել է 1941-ին։ 1946—1948 թթ. կատարելագործվել է Մոսկվայում։ Գրել է տարբեր ժանրի բազմաթիվ երկեր, որոնցից են՝ «Սիմֆոնիկ պարեր» (1945), «Տոնական նախերգանք» (1947), կանտատներ՝ «Հայաստան», «Տոնական», թավջութակի և դաշնամուրի սոնատ, «Սիմֆոնիա լարային նվագախմբի և լիտավրների համար», ռոմանսներ՝ Ավ. Իսահակյանի տեքստերով («Ասում են», «Երազ»)։ Գրել է երաժշտություն մի քանի կինոֆիլմերի համար («Երբ քեզ հետ են ընկերներդ», «Փյուղում», «Այսօր արևոտ օր է», «Քասս», «Հեղկոմի նախագահը», «Աբսոլյուտ № 011»։ Նրա ստեղծագործություններից մի քանիսը, մասնավորապես «Սիմֆոնիան» կատարվում են Խորհրդային Միության և արտասահմանյան շատ քաղաքներում։ Ունեցել է մանկավարժական բեղմնավոր գործունեություն։ 1948-ից ստեղծագործական առարկաներ է դասավանդում Երևանի պետական կոնսերվատորիայում։ Քսան տարուց ի վեր Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահն է։

ՄԻՐԶՈՅԱՆ ԹԵՐԵԶԱ *(ծն. 1922)*.— Քանդակագործ. Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ (1967)։ Ծնվել է Կիրովականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Վրաստանի գեղարվեստների ակադեմիայում։ 1949 թվականից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Մանածագործուհին», «Հունան Ավետիսյանի կիսանդրին», «Գետափին», «Հաղթանակի դրոշը», «Սուսերամարտիկը», «Մայրություն», «Կժով աղջիկը», «Հորթապահը», «Մտածող կինը»։ Նրա քանդակներից նմուշներ պահվում են Երևանի, Մոսկվայի և միության այլ քաղաքների թանգարաններում, իսկ Անուշի և Սարոյի կոմպոզիցիոն քանդակը՝ Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում։

ՄԻՐԶՈՅԱՆ ՀՐԱՉՅԱ *(1906—1970)*.— Լրագրող, խմբագիր։ Ծնվել է Դոնի Ռոստովում։ Փոքր հասակից նրանց ընտանիքը տեղափոխվել է Լենինական, որտեղ ստացել է կրթությունը։ 1925-ից ապրել է Երևանում, խմբագրել նորա-

ստեղծ «Պիոներ կանչ» թերթը, ապա աշխատել է «Պատկում» (հետագայում՝ «Պիոներ» ամսագրի, «Խորհրդային Հայաստան» օրաթերթի խմբագրություններում։ 1932—1937 թթ. եղել է «Ավանգարդ» թերթի պատասխանատու խմբագիրը։ 1945 թվականից մինչև կենսաթոշակի անցնելը աշխատել է Հայաստանի հեռագրական գործակալությունում նախ որպես խմբագիր, ապա՝ դիրեկտորի տեղակալ։

ՄԻՐԶՈՅԱՆ ՀՐԱՉՅԱ (ծն. 1940).— Փիլիսոփա, փիլիսոփայական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Նոյեմբերյանի շրջանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի պատմության ֆակուլտետն ավարտել է 1963 թ.։ 1967 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա, 1984 թ.՝ դոկտորական։ 1966—1967 թթ. աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտորում, 1967 թ.՝ Երևանի պետական համալսարանում. դասավանդում է հայ և ընդհանուր փիլիսոփայության պատմություն։ Գիտական մամուլում տպագրել է փիլիսոփայության պատմության նվիրված հոդվածներ։ Առանձին գրքերով լույս է ընծայել «Սիմեոն Զուղայեցի» (1971) և «XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն» (1983) աշխատությունները։

ՄԻՐԶՈՅԱՆ ՍԵՐԳԵՅ (ծն. 1925).— Նկարիչ։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, 1957 թվականից մասնակցել է հանրապետական, հետագայում նաև միութենական ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Շինարարներ», «Լենինականյան բանկարների շարքը, բանկարներ՝ Մայիշկա գյուղից, արդյունաբերական թեմաներով նկարներ՝ Լենինականից, որոնց թվում՝ տեքստիլ գործարանի բանվորուհի Աստղիկ Պետրոսյանի դիմանկարը, «Փառքդ նվաճիր աշխատանքով» գործը և այլն։

ՄԻՐԶՈՅԱՆ ՍՈՒՐԵՆ (1903—1960).— Դերասան, ռեժիսոր. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Վանի գավառի Խառակոնիս գյուղում։ Կրթությունն ստացել է Երևանում։ Թեմական ասպարեզ է մտել 1923 թ., Երևանում։ Հետագայում խաղացել է հիմնականում շրջանային թատրոններում, աստիճանաբար զբաղվելով ռեժիսորական աշխատանքի։ Հայրենական պատերազմի տարիներից աշխատել է Գորիսի շրջանային թատրոնում։ Կատարած դերերից կարևորներից են՝ Դոն Ժուան, Կարլ Մոր («Ավազակներ»), Էլիզբարով («Պատվի համար»), Ռուստամ («Նամուս»), Գիժ Դանել («Զար ոգի») և այլն։ Բեմադրություններից են՝ «Սամվել», «Պատվի համար», «Ավազակներ», «Պեպո», «Արմենուհի», «Նամուս», «Մեծ սիրտ»։

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴԱՆ (1877—1968).— Դերասան, ռեժիսոր, թատերական գործիչ. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ (1949)։ Ծնվել է Նախիջևանի Երնջակ գյուղում։ Նախնական կրթությունը ստացել է Թիֆլիսում։ 1904 թ. մեկնել է Մոսկվա, այնտեղից՝ Պետերբուրգ, որտեղ հետևել է դրամատիկական դասընթացներին, աշակերտել դերասան-ռեժիսորներ Դավիդովին, Յակովլևին և Պետրովսկուն։ Վերադառնալով Կովկաս՝ 1907 թվականից կարճ ժամանակ խաղացել է Թիֆլիսի դրամատիկական ընկերության խմբում, ապա ինքն է ստեղծել թատերախումբ և տվել ներկայացումներ բանվորական միջավայրերում։ Խաղացել է Ավճալյանի, Հավյարարի և այլ թատրոններում, շրջել Անդրկովկասի բազմաթիվ քաղաքներ։ 1919 թ. Երևանում հիմնել է դրամատիկական ստուդիա, որը շարունակել է գործել նաև խորհրդային տարիներին, մեծապես նպաստելով հայ բեմական ուժերի պատրաստմանը։ 1920-ական թվականների սկզբներից աշխատել է Լենինականում և Բաքվում, որպես դրամատիկական խմբերի ղեկավար։ Տարիների ընթացքում խաղացած մի քանի տասնյակ դերերից են՝ Ոսկան («Զար ոգի»), Գրիգոր աղա («Ժայռ»), Վասիլ Լեկապեն («Կայսր»), Ներոն («Հո երթաս»), Զիմզիմով և Գիքո («Պեպո»), Սաղաթել («Պատվի համար»)։ Ունեցել է նաև նկարչական և գրական գործունեություն։ Իր բեմադրությունների զգալի մասի դեկորները, վարագույրները ինքն է պատրաստել։ Ինքնուրույն և թարգմանական երկերով աշխատակցել է «Թատրոն», «Հուշարար», «Թատրոն և երաժշտություն» և այլ պարբերականների։ 1966 թ. լույս է տեսել նրա «Թատերական օրագրեր» հիշողությունները։

ՄԻՐԻՄԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ (1831—1853).— Բանաստեղծ։ Ծնվել է Թիֆլիսում։ Կրթությունն

ստացել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ապա՝ Դորպատի համալսարանում, հետևել տնտեսագիտության։ Ուսանողական տարիներին ունեցել է գրական, մշակութային գործունեություն։ Եղել է Ե. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը ձեռագիր վիճակում Դորպատի համալսարանի հայ ուսանողների մեջ տարածողներից։ Հեղինակն է «Հայոց աղջիկներ ձեր հոգուն մատաղ» հայտնի երգի։ Հորինել է նաև այլ երգեր։

ՄԻՐԻՄԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (1870—1956).— Գրող, թարգմանիչ։ Ծնվել է Ախալքալաքի շրջանի Ծիթելի գյուղում։ Կրթությունն ստացել է Թիֆլիսում։ Գրական ասպարեզ է մտել 1890-ական թվականների սկզբներին, «Աղբյուր» և «Տարազ» պարբերականներում տպագրելով պատմվածքներ, մեծ մասամբ մանկական երկեր։ Վրացերենից կատարել է թարգմանություններ։ Երկար տարիներ զբաղվել է Շոթա Ռուսթավելու կյանքով ու նրա «Ընձենավոր» երկով։ 1896 թ. «Մուրճ» ամսագրում տպագրել է «Շոթա Ռուսթավելի և նրա պոեման» հոդվածաշարքը՝ որը հանդիսանում է հայերեն առաջին ամբողջական հետազոտությունը դասական այդ ստեղծագործության մասին։ «Մուրճի» նույն տարվա համարներում տպագրել է «Ընձենավորի» իր արձակ սեղմ թարգմանությունը և լույս ընծայել նաև առանձին գրքով՝ Շ. Ռուսթավելու կենսագրությամբ ու նկարով (Թիֆլիս, 1896)։ Կատարել է նաև հայերենից վրացերեն թարգմանություններ։

ՄԻՐԻՄԱՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ (ծն. 1894).— Դաշնակահարուհի։ Ծնվել է Թիֆլիսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում, ապա կատարելագործել Պետերբուրգի և Վիեննայի կոնսերվատորիաներում։ 1915 թ. վերադարձել է Կովկաս, տվել համերգներ։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո կրկին մեկնել է արտասահման, համերգներով հանդես եկել Բեռլինում, Լոնդոնում, Փարիզում և այլ քաղաքներում, ամենուր արժանանալով օտար մամուլի բացառիկ գնահատանքին։ 1923 թ. ժնևում նվագել է Ազգերի լիգայի նստաշրջանի փակման առթիվ կազմակերպված համերգում։ 1927 թ. համերգներ է տվել Եգիպտոսի Կահիրե և Ալեքսանդրիա քաղաքներում։ Հետագայում հիմնականում ապրել է Փարիզում։ Մոտիկից կապված է եղել ֆրանսահայ մշակութային կյանքին, մասնակցել է երեկույթ-ցերեկույթների։ 1930-ական թվականների կեսերից զբաղվել է մանկավարժական աշխատանքով։

ՄԻՐԻԶԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ (ծն. 1933).— Բանաստեղծ, թարգմանիչ, բանաստեղծ։ Ծնվել է Երևանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ու գրականության բաժինն ավարտել է 1955 թ., իսկ 1962-ին՝ Հայկական ԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան։ Ուսմանը զուգընթաց՝ 1950-ից աշխատել է «Պիոներ կանչ», ապա «Գրական թերթի», իսկ 1957-ից՝ «Երևան» թերթի խմբագրություններում։ 1962—1967 թթ. եղել է ԳԱ գրականության ինստիտուտի գիտական քարտուղար, 1967—1975 թթ.՝ «Հայաստան» հրատարակչության գեղարվեստական գրականության խմբագրության վարիչը, 1975-ից՝ Հայկական ԽՍՀ գրքասերների ընկերության հանրապետական վարչության նախագահի առաջին տեղակալը։ 1989-ից նույն ընկերության նախագահն է։ 1949-ից բանաստեղծություններ է տպագրել մամուլում, 1958-ին լույս է տեսել նրա առաջին ժողովածուն՝ «Այգեստաններ» խորագրով։ Հետագայում առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Հեռու-հեռուներից» (1959), «Ծովի կարոտ» (1965), «Երգի Հովիվը» (1969), «Կանաչ ապրիլ» (1970 և 1987), «Դեպի ծով» (1971), «Ճանապարհ» (1975), «Ծաղկաղարդ» (1981), «Առագաստ» (1983), «Բաղումք» (1989)։ Մանկական երկերից են՝ «Միշակ Սոսը» (1973), «Ճնճղուկի ուղածը» (1977)։ Նրա «Երգի Հովիվը» պոեմը 1969 թ. Բելգրադում արժանացել է Թեքեյան առաջին մրցանակի, առանձին գրքով լույս տեսել նաև արաբերեն (Բեյրութ, 1974) և անգլերեն (Լոնդոն, 1983) թարգմանությամբ։ Մոսկվայում ռուսերեն թարգմանությամբ լույս են տեսել՝ «Ծովի կարոտ» (1970), «Դեպի ծով» (1975), «Ծաղիկների տոնը» (1988) ժողովածուներ։ Բաքվում ադրբեջաներեն թարգմանությամբ լույս է տեսել «Ծովի կարոտ» ժողովածուն (1975)։ «Ուկրաինայի քամին» խորագրով Կիևում լույս է տեսել (1986) նրա բանաստեղծությունների ու պոեմների ժողովածուն՝

ուկրաիներեն թարգմանությամբ։ Առանձին բանաստեղծություններ թարգմանվել են վրացերեն, լիտվերեն, չեխերեն, ֆրանսերեն, իսպաներեն և այլ լեզուներով։ Նրա թարգմանությամբ առանձին գրքերով լույս են տեսել Ալեքսանդր Բլոկի «Տասներկուսը» պոեմը (1968), Գրիգորի Մկռվորոդայի «Հաստնտիրը» (1972)։ «Հայ քնարերգություն» մատենաշարից գրաբարից թարգմանել է «Անտիկ շրջանից մինչև Ը դար» (1981) և «Ներսես Շնորհալի. Երգեր, Եղեսիայի ողբը» (1982) ժողովածուները։ Հեղինակն է «Էն Լոու ձորն է» և «Իմ կանաչ քաղաք» վավերագրական ֆիլմերի սցենարների։ Գրել է հետևյալ պատմա-բանասիրական գրքերը՝ «Հայ բանաստեղծության ակունքները» (Ա. գիրք, Երևան, 1977, ռուսերեն թարգմանությունը՝ 1980), «Վերընթերցելով Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» (1979), «Հայկական հնագույն մատյանը» (1981), «Պատմության և առասպելի սահմանները» (1986), «Հայկյաններ» (1988)։

ՄԻՐԻՋԱՆՅԱՆ ԵԱԶԻԿ (ծն. 1930).— Քանդակագործ։ Ծնվել է Բուրգասում (Բուլղարիա)։ 1932 թ. նրանց ընտանիքը ներգաղթել է Խորհրդային Հայաստան։ Մասնագիտական կրթություն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում և գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի քանդակի բաժինն ավարտել է 1960-ին։ 1953-ից մասնակցել է ցուցահանդեսների։ 1970 թ. անհատական ցուցահանդես է ունեցել Երևանի բնության թանգարանում՝ «Անտառային հեքիաթներ» թեմայով, 1978-ին՝ Երևանի կենդանաբանության ինստիտուտում՝ «Կենդանիների աշխարհում» թեմայով։ Լավագույն գործերից են՝ «Լենինը գիմնազիստ», «Ծովակալ Խակով», «26 կոմիսարներ» (պահվում է հեղափոխության թանգարանում), «Զորավար Անդրանիկ» (Ոսկեհասկ գյուղ), «Եղնիկներ», «Սպիտակ արջ», «Հովազ» (Հայէլեկտրագործարան), «Գանգրահեր տղան» (Զարենցավանի մուտքի մոտ), ինչպես և Հայրենական պատերազմում զոհված մարտիկների հիշատակին նվիրված հուշարձաններ՝ Հայաստանի տարբեր բնակավայրերում։

ՄԻՐԻՋԱՆՅԱՆ ՎԵՐՋԱՆՈՒՇ (ծն. 1916).— Դերասանուհի, Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1963)։ Ծնվել է Իզգիրում։ Կրթությունն ստացել է Երևանում։ 1933 թվականից խաղացել է Երևանի առաջին պետական թատրոնում, միաժամանակ սովորել նույն թատրոնին կից թատերական ստուդիայում, ավարտել 1936 թ.։ 1937—1947 թթ. աշխատել է Ալավերդու շրջանային թատրոնում, ապա նորից Գ. Սունդուկյանի անվան թատրոնում։ Տարիների ընթացքում կատարել է մի քանի տասնյակ դերեր, որոնցից են՝ Կրուչինինա («Անմեղ մեղավորներ»), Ռուզան (համանուն պիեսում), Շուշան («Պեպո»), Սուսան («Նամուս»), Ջավահիր («Ջար ոգի»), Սաթենիկ («Ժայռ»), Սեսիլ (համանուն պիեսում), Տիկին Տրուզվուդ («Դավիթ Կոպերֆիլդ»), Սահականուշ («Գեորգ Մարզպետունի»), Խախո («Քանդած օջախ»), նկարահանվել է բազմաթիվ կինոֆիլմերում։

ՄԻՐՈՒՆ ԱՍԱԴ (ՄՍՏՈՅԱՆ ՄԻՐՈ) (ծն. 1919).— Գրող, խմբագիր. Հայկական ԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Արագածի շրջանի Ալագյազ գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Մոսկվայի համամիութենական հեռակա իրավաբանական ինստիտուտում, ավարտել 1947-ին։ 1955-ից խմբագրում է քրդական «Ռյա Թազա» թերթը։ Հրատարակել է «Սխեմ» պատմվածքների (1961), «Հայրենիքի զավակը» (1969), «Սրտի զգացումը» (1973) բանաստեղծությունների ժողովածուները, բոլորն էլ՝ քրդերեն։ Հովհ. Թումանյանի, Ե. Չարենցի և այլ գրողների երկերից նմուշներ թարգմանել է քրդերեն։

ՄԻՔԱՅԵԼ (17-րդ դ.).— Ծաղկող։ Ապրել և գործել է Թիֆլիսում։ 1693 թ. ծաղկել է մի Ավետարան, 1664 թ.՝ մի Շարակնոց։

ՄԻՔԱՅԵԼ ԱՍՈՒՐԻ (1126—1199).— Մատենագիր, ասորի։ Ծնվել է Մելիտինեում։ Ստացել է կրոնական դաստիարակություն և վարել է հոգևորական պաշտոններ։ 1166-ից եղել է Հակոբիկյան եկեղեցու պատրիարք։ Գրել է մի շարք երկեր։ Բացառիկ արժեք է ներկայացնում «Ժամանակագրությունը», որտեղ համառոտ շարադրված են պատմական դեպքերը հնագույն դարերից մինչև իր օրերը։ Այդ աշխատության համառոտ տարբերակը հայերեն է թարգմանվել դեռևս 1248-ին և մեզ հասել է երկու օրինակներով։ Դրանք հրատարակվել են Երուսաղեմում 1870—1871 թթ.։ Մինչև 19-րդ դարի վերջը բնագիրը կորած համարվելով՝ հայերեն թարգմանությունը ունեցել է բնագրի արժեք։ Հետագայում հայտնաբերվել է այդ երկի ոչ միայն բնագիրը, այլև նրա լրաբերեն թարգմանությունը։ Բնագիրը Ժ. Բ. Շաբոյի ֆրանսերեն թարգմանությամբ լույս է տեսել 1899, 1901, 1905 թթ.՝ երեք հատորով։

ՄԻՔԱՅԵԼ ՈՐԴԻ ԲԱՐԼԱՄԻ (17-րդ դ.).— Մատենագիր։ Նրանից մեզ հասել է «Պատմություն տաղիս չափեալ ուսանաւոր նահատակութեան Դաւթի Սեբաստացւոյ» խորագրով մի ստեղծագործություն, որը հրատարակվել է «Հայոց նոր վկաներ» ժողովածուում։ 1660 թ. Սեբաստիայի Ս. Նշան վանքում ընդօրինակել ու ծաղկել է մի Ավետարան։

ՄԻՔԱՅԵԼ ԵՐԶՆԿԱՑԻ (17-րդ դ.).— Ծաղկող։ 1659 թ. Տրապիզոնում ընդօրինակել ու ծաղկել է «Տօնացոյց» խաղատետր և պարզատումար» ձեռագիրը։ Պահվում է Զմմառի վանքում։

ՄԻՔԱՅԵԼ ԿՐՈՆԱՎՈՐ (13-րդ դ.).— Մատենագիր։ Հեղինակ՝ «Հարցմունք, առակք, խրատք» աշխատության, որի ձեռագիր մեկ օրինակը պահվում է Վիեննայի Մխիթարյանների վանքում։

ՄԻՔԱՅԵԼ ՍԱՐԿԱՎԱԳ (18-րդ դ.).— Տաղերգու։ Գրել է երգիծական չափածո երկեր, որոնցից մեկը՝ այբուբենի տառերով սկսվող տներով, նվիրված է գինու, կերուխումի և տպագրված է «Բաղմավեպ» 1866 թ. համարներից մեկում և 1868-ին արտատպվել է Միանսարյանի «Քնար Հայկականում»։

ՄԻՔԱՅԵԼ ՓԵՂՈՒՐՅԱՆ (17-րդ դ.).— Մատենագիր։ Գրել է «Վահան հաւատոյ ի դէմս մահմետականաց» երկը։

ՄԻՔԱՅԵԼ ՔԱՀԱՆԱ (17-րդ դ.).— Թարգմանիչ։ Ապրել է Լվովում։ Գրաբարից թաթարերենի է թարգմանել Պողոս առաքյալի 14 թղթերը՝ լեհահայ գաղութի թաթարախոս հատվածի համար։ Ձեռագիրը պահվում է Վենետիկի վանքում։

ՄԻՔԱՅԵԼ ՔԱՀԱՆԱ (16—17-րդ դդ.).— Ծաղկող։ 1603 թ. Խուի գյուղում ընդօրինակել ու ծաղկել է մի ժողովածու. պահվում է Երևանի Մատենադարանում։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱԼԲԵՐՏ (ծն. 1930).— Բալետի մենակատար. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1972)։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի պարարվեստի ուսումնարանում, ապա կատարելագործվել է Մոսկվայում. 1950—1951 թթ. սովորել է Մոսկվայի հայկական կուլտուրայի տան կից վերապատրաստման երկամյա կուրսերում։ 1945 թվականից աշխատում է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում։ Կատարած դերերից են՝ Գիքոր («Գայանե»), Կրասս («Սպարտակ»), Աշոտ («Սևան»), Լեսնիչիյ («Ժիզել»), Կապուլետի («Ռոմեո և Ջուլիետա»), Շելխ («Երեք արմավենի»), Այբոլիտ («Բժիշկ Այբոլիտ») և այլն։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՎԵՏԻՍ (ՍՈՒԼԹԱՆԶԱԴԵ) (1889—1941).— Հեղափոխական գործիչ, լրագրող։ Ծնվել է Մարազայում (Իրան)։ Երիտասարդ հասակից Բաքվում մասնակցել է հեղափոխական գաղտնի խմբակների աշխատանքներին։ 1913 թ. ընդունվել է ՌՍԴԲԿ շարքերը։ Սովորել է Մոսկվայի առևտրական ինստիտուտում։ 1921 թ. աշխատել է Կոմինտերնում, եղել Վ. Ի. Լենինի ռեֆերենտներից՝ Արևելքի հարցերում։ Դասախոսել է Նարիմանովի անվան արևելագիտական ինստիտուտում։ Երկար տարիներ աշխատել է Իրանում, եղել իրանական կոմունիստական կուսակցության ղեկավարներից՝ Գիլանյան հեղափոխության օրերին։ Հրատարակել է աշխատություններ Արևելքի ժողովուրդների, մասնավորապես Իրանի ագրարային քաղաքականության, բանվորական շարժումների մասին։ Եղել է Իրանական կոմունիստական կուսակցության ընդհատակյա օրգան «Սետարեե սորխ» (Կարմիր աստղ) (1929—1931) և «Փեյխար» (Պայքար) (1930—1933) թերթերի կազմակերպիչներից ու աշխատակիցներից։ Ռուսերենից պարսկերեն է թարգմանել մարքսիստական գրականություն։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ (1885—1935).— Արևելագետ-պատմաբան։ Ծնվել է Այնթապում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է ծննդավայրի ֆրանսիական դպրոցում և Ջենովայի ասոցիացիոնական կոլեջում։ Իմացել է թուրքերեն, արաբերեն, իտալերեն, ֆրանսերեն։ Սեմական լեզուներ է դասավանդել Ֆրիբուրգի (Գերմանիա) կաթոլիկական համալսարանում։ 1920-ական թվականների սկզբներից կրթական աշխատանքին զուգընթաց զբաղվել է արևելագիտությամբ,

այդ թվում՝ հայ-հիթիթական լեզվական առընչություններով։ Արևելագիտական արժեքավոր հոդվածներ է տպագրել Հալեպի հնագիտական ընկերության պաշտոնաթերթի «Ռեվյու Արքեոլոժիք Սիրիեն» պարբերականում, որի խմբագիրներից է եղել ինքը։ Գրել է «Հայաստանի պատմությունը ըստ հնագիտական տվյալների» երկհատոր աշխատությունը, որը մնացել է անտիպ։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԳԵՎՈՆ *(ծն. 1907).*— Պատմաբան։ Ծնվել է Նոր Բայազետում (այժմ՝ Կամո)։ 1942 թվականից սովորել է Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում, սակայն թերի է թողել ուսումը, ծառայել է Խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո շարունակել է կրթությունը Երևանի պետական համալսարանում, որի պատմության ֆակուլտետն ավարտել է 1950 թ.։ 1959-ից աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում։ 1968 թ. լույս է ընծայել «Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները» աշխատությունը, 1980-ին՝ «Նոր Բայազետը» («Հայ ազգագրություն և բանահյուսություն») մատենաշարի 2-րդ գրքում։ Պատերազմի տարիներին հայրենիքին մատուցած ծառայությունների համար արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման, Լենինի, Կարմիր դրոշի և այլ շքանշանների։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԳՐԻԳՈՐ *(1893—1953).*— Պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Դոնի Ռոստովում։ Ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը։ Ունեցել է մանկավարժական երկարամյա գործունեություն։ 1933 թվականից մինչև կյանքի վերջը պատմական առարկաներ է դասավանդել Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում։ 1944—1953 թթ. համատեղության կարգով աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող։ 1944 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա, 1948 թ.՝ դոկտորական՝ «Կիլիկիայի հայկական թագավորությունը» թեմայով։ Գիտական մամուլում տպագրել է հոդվածներ, գերազանցապես հայ ժողովրդի պատմության կիլիկյան շրջանի մասին։ Առանձին գրքով 1952 թ. լույս է ընծայել «Կիլիկյան հայկական պետության պատմությունը» ռուսերեն հետազոտությունը։ Հեղինակակից է «Հայ ժողովրդի պատմության» դասագրքի (1951)։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (ՊԱՍՄԱՃՅԱՆ) ԳՈՒՏՅԻ.— Գրող։ Ծնվել է Հալեպում (Սիրիա)։ Կրթությունն ստացել է տեղի Հայկազյան դպրոցում և ամերիկյան կոլեջում, ավարտել է 1948 թ., իսկ 1953-ին՝ Բեյրութի «Ջունիբը» կոլեջը։ 1962 թ. մեկնել է Ամերիկա, հետևել եվրոպական և ամերիկյան վիպագրության դասընթացներին։ Աշխատակցել է բազմաթիվ թերթերի և հանդեսների։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերը են՝ «Վախճանը» (1954), «Մինչև ժամը հինգ» (1958), «Արտավազդ անդունդեն դեպի գագաթ», բոլորն էլ վիպակներ։ Գրել է «Դեպի ուր, Բեյրութ» խորագրով մի վեպ, որից հատվածներ տպագրել է մամուլում։ 1981 թ. «Արև» թերթում որպես թերթոն տպագրել է «Շունիկ գերեղման մը գնելու առթիվ» արձակ երկը՝ սփյուռքահայ կյանքից։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԵԼԵՆԱ *(ծն. 1925).*— Օպերային երգչուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստուհի (1960)։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, ավարտել 1953 թ.։ Նույն տարվանից աշխատել է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում։ Գլխավոր դերերգերից են՝ Անուշ, Արիա (համանուն օպերաներում), Ամելիա («Պարահանդես-դիմակահանդես»), Տատյանա («Եվգենի Օնեգին»), Ստեֆանո («Լուսնո և Ջուլիետա»), Լեոնորա («Տրուբատուր»), Մարո («Արծվաբերդ») և այլն։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ *(ծն. 1928).*— Նկարիչ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստի ինստիտուտում և Լենինգրադի Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության և հարտարապետության ինստիտուտում, որի գեղանկարչության բաժինն ավարտել է 1957-ին։ 1960-ական թվականների սկզբներից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսներին։ Նրա առաջին շրջանի գործերից են՝ «Այլվերդու բանվորների 1920 թ. գործադուլը», «Երիտասարդ նկարչուհին», «Ճախարակ մանող կինը», «Հանքափորի դիմանկարը» և այլն։ Հետագայում հիմնականում աշխատել է ձեռագրումների և կիրառական արվեստի բնագավառում։ Մասնակցել է Բեյրութում, Դամասկոսում, Հալեպում, Կիպրոսում կազմակերպված միջազգային ցուցահանդեսների Հայաստանի տաղավարների ձևավորման աշխատանքներին։ Հոկտեմբերյան հեղափոխության 60-ամյակին նվիրված համամիութենական ցուցահանդեսի համար նրա կատարած ձևավորումները արժանացել են մրցանակի։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ *(1905—1987).*— Դրամատուրգ։ Ծնվել է Կարսի շրջանի Բայրաղդար գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտում, որի լեզվագրական ֆակուլտետն ավարտել է 1933 թ.։ Եղել է Հայաստանի խորհրդային գրողների միության Լենինականի բաժանմունքի քարտուղար։ Գրական ասպարեզ է մտել 1930-ական թվականների սկզբներին։ 1931 թ. «Գրական սերունդ» ամսագրում տպագրել է «Առաջին գրոհը» դրաման, Ապա գրել է «Դոշ» պատմական դրաման, որը 1927-ից բեմադրվել է Լենինականի, Կիրովականի, Ստեփանակերտի, Արտաշատի, Այլվերդու և այլ շրջանային թատրոններում։ 1941 թ. Լենինականի թատրոնը բեմադրել է նրա «Վարազդատ» պատմական ողբերգությունը, որը նույնպես ներկայացվել է տարբեր քաղաքների հայկական թատրոններում։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Պիեսների ժողովածու» (1955), «Զարիևա» (վեպ, Երևան, 1958), «Պատմական ողբերգություններ» (1963, 1981), «Սիրո ճանապարհը» (1968), «Վարդենիք» (1974)։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ *(1883—1942).*— Գրող, թարգմանիչ։ Ծնվել է Վերին Ագուլիսում։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և Ենայի (Գերմանիա) համալսարանում։ Դարասկզբից պարբերական մամուլում տպագրել է պատմվածքներ։ 1907 թ. Թիֆլիսում լույս է ընծայել պատմվածքների առաջին ժողովածուն՝ «Զրկանքի հույզեր» խորագրով, իսկ 1912-ին՝ «Զմռան երեկո» ժողովածուն։ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո վարել է պատասխանատու պաշտոններ։ Որպես ՀՕԿ-ի պատվիրակ՝ մեկնել է արտասահման, վերադարձից հետո լույս ընծայել «Մաժեստիկ» (Երևան, 1928), ապա՝ «Գույների կոիվը» ժողովածուները։ Նրա պատմվածքներից մի քանիսը 1930 թ. լույս են տեսել Մոսկվայում ռուսերեն, 1932 թ. Խարկովում՝ ուկրաիներեն։ 1961 թ. Երևանում լույս է տեսել նրա «Կեցցեն հաղթվածները» ժողովածուն։ Ռուսերենից թարգմանել է Օսկար Ուայլդի հեքիաթները (Մոսկվա, 1920), Ջ. Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունը» (Երևան, 1958)։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ *(ծն. 1943).*— Դերասան, թատերական գործիչ։ Ծնվել է Հալեպում (Սիրիա)։ Կրթությունն ստացել է տեղի Հայկազյան, Կյուլպենկյան վարժարաններում և Դամասկոսի պետական համալսարանում, ավարտել 1970-ին։ Որպես ուսուցիչ աշխատել է Հալեպի և Դամասկոսի հայկական դպրոցներում։ 1970-ից ավելի քան տասը տարի եղել է Հալեպի «Ադամյան» թատերախմբի հիմնական դեմքերից, աշխատել որպես դերասան, դիմահարդար, նկարիչ։ Թատերական և այլ բնույթի հոդվածներով աշխատակցել է «Բարձունք», «Քուլիս», «Նահրի», «Շիրակ» և այլ պարբերականների։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՄԱՐՏԻՆ *(ծն. 1926).*— Ճարտարապետ. Հայկական ԽՍՀ վաստակավոր ճարտարապետ (1968)։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, ավարտել 1949-ին, զբաղվել նախագծման աշխատանքով նախ Ս. Սաֆարյանի ճարտարապետական արվեստանոցում, ապա՝ 1955-ից՝ «Հայպետնախագիծ» ինստիտուտում։ 1963-ից ղեկավարում է ճարտարապետական արվեստանոց։ Նախագծել է բազմաթիվ բնակելի, հասարակական շենքեր, որոնցից են «Արարատ» ռեստորանը և սրճարանը Լենինի հրապարակի վրա, դպրոցների տիպային սերիա, որոնք կառուցվել են հանրապետության տարբեր քաղաքներում, առողջարաններ Սևանում, Ջերմուկում, Արզականում, կուլտուրայի տներ և այլն։ 1955-ից դասավանդում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում։ Ունի ճարտարապետական գիտությունների թեկնածուի աստիճան։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ *(1909—1954).*— Դերասան։ Ծնվել է Քիլիսում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Կահիրեի (Եգիպտոս) Գալուստյան ազգային վարժարանում և Ֆրերների ֆրանսիական դպրոցում։ 1925-ից խաղացել է «Եգիպտահայ դրամատիկ» թատերախմբում։ Եղել է նրա այբի ընկնող ուժերից։ 1927—1928 թթ. մասնակցել է Հակ. Զարիֆյանի հյուրա-

խաղային բոլոր ներկայացումներին։ Երկար տարիներ որպես դիմահարդար աշխատել է եգիպտական թատրոններում։ 1951-ից ապրել է Բուենոս Այրեսում (Արգենտինա), որտեղ էլ վախճանվել է։ Նրա լավագույն դերերից են եղել՝ Հայր Դյուվալ («Քամելիաազարդ կինը»), Ագրիպաս («Զարշրլը Արթին աղա»), Բրաբանցիո («Օթելլո»), Մաջոր Շաքեր («Անմահ բոցը») և այլն։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ *(1879—1943)*.— Քանդակագործ։ Ծնվել է Հայաստանի Ագարակ գյուղում (այժմ՝ Հայկական ԽՍՀ Ղափանի շրջան)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Պետերբուրգում։ Նախ սովորել է Շտիգլիցի նկարչական դպրոցում (1897), ապա՝ 1898—1900 թթ. Գեղարվեստների ակադեմիայում։ Երկու տարի էլ մասնագիտությունը կատարելագործել է Հռոմում։ 1903 թվականից ստեղծագործել է Թիֆլիսում։ Նրա քանդակներից մի քանիսը առաջին անգամ ցուցադրվել են Թիֆլիսում և Երևանում, 1919, 1921 թթ.՝ Հայ արվեստագետների միության ցուցահանդեսներում։ Ստեղծել է բազմաթիվ քանդակներ, գերազանցապես կենցաղային թեմաներով, ինչպես՝ «Տաճկահայ գյուղացին», «Ժամկոչ Սափան», «Երկու աղջկա ֆիգուր» (1904), «Հայ մշակը», «Ասեղ թելող կինը» (1906), «Կուժը կոտրած աղջիկը», «Սիծաղող աղջիկը» (1915), «Պառավ վրացուհին», «Սայլապանը», «Կինտոն» և այլն։ Ստեղծել է Խ. Աբովյանի, Միք. Նալբանդյանի, Բաֆֆու, Ղ. Ալայանի, Ներենցի, Սիրանույշի և այլոց դիմաքանդակները։ Մամուլում տպագրել է արվեստաբանական հոդվածներ, որոնցից ուշագրավ է «Արձանագործությունը հայոց աշխարհում» հոդվածաշարքը։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆԱՆՍԵՆ *(ծն. 1931)*.— Բանաստեղծ։ Ծնվել է Ախալքալաքի շրջանի Կարծախ գյուղում (Վրացական ԽՍՀ)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետի եվրոպական լեզուների ու գրականության բաժինն ավարտել է 1958 թ.։ 1961—1966 թթ. աշխատել է «Պիոներ կանչ» թերթի խմբագրությունում, նախ որպես գրական աշխատող, ապա՝ բաժնի վարիչ, 1966-ից՝ «Ոգնի» երգիծական հանդեսում որպես բաժնի խմբագիր։ 1952-ից մամուլում տպագրել է բանաստեղծություններ։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Իմ գարուն» (1958), «Խորանքներ» (1960), «Կապույտ կրակներ» (1963), «Արև իմ, սեր իմ» (1967), «Թարմ ընթրանք» (1971), «Կարոտի աշխարհ» (1975), «Վեռան ստվերը» (1980), «Թափանցող տարիներ», «Մանուշակի փունջ» (1985) և այլն։ Ռուսերենից կատարել է թարգմանություններ, որոնցից մի քանիսը լույս են տեսել առանձին գրքույկներով։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ *(ծն. 1925)*.— Գրող։ Ծնվել է Լենինականում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինն ավարտել է 1959-ին։ 1960-ից ապրել և ստեղծագործել է Մոսկվայում։ Հայերենից թարգմանվել և Մոսկվայում 1972-ին լույս է տեսել նրա «Ես մարդ եմ ծնվել» գիրքը։ Իսկ 1985-ին դարձյալ Մոսկվայում լույս է տեսել «Մարդը մարդուն» բանաստեղծությունների ժողովածուն։ 1959-ին Սուրեն Շիրակ ծածկանունով Երևանում տպագրել է «Ախուրյանի ափին» բանաստեղծությունների ժողովածուն։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ) ՎԱՀԷ *(1900—1967)*.— Թարգմանիչ։ Ծնվել է Վանում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Երամյան վարժարանում, բարձրագույնը՝ Թիֆլիսի օտար լեզուների ինստիտուտում, որի ֆրանսիական բաժինն ավարտել է 1927-ին։ Հաջորդ տարվանից աշխատել է Երևանի պետական համալսարանում որպես դասախոսի վարիչ, ապա դասավանդել է ֆրանսերեն։ Որպես ոճաբան աշխատել է «Խորհրդային գրականություն» ամսագրում և «Գրական թերթում»։ Զուգահեռ այդ աշխատանքներին՝ թարգմանություններ է կատարել ֆրանսերենից և ռուսերենից, իսկ հետագայում ամբողջովին նվիրվել է թարգմանչական աշխատանքի։ Նրա թարգմանությամբ առանձին գրքերով լույս են տեսել արևմտաեվրոպական և ռուսական դասական գրողների քսանից ավելի վեպերը, որոնցից են՝ Պրոսպեր Մերիմեի «Կարմեն, Կոլոմբա, Լոքիս», Երևան, 1936), Ֆլոբերի «Տիկին Բովարի» (1937), Վ. Հյուգոյի «Թշվառներին» հինգ հատորները (1940—1951), «Փարիզի Աստվածամոր տաճարը» (1953), Բալզակի «Գնդապետ Շաբերը», «Գոբսեկը», «Անհայտ գլուխ գործոցը», «Գյուղացիները» (որոնք տեղ են գտել Բալզակի Երկերի տասհատորյակի տարբեր գրքերում), Ա. Դոդեի «Պատիկը», Շառլ Կոստերի «Ուլենշպիգելի և Լամմե Գուդզակի լեգենդը», Մոպասանի մի շարք պատմվածքները և այլն։ Ռուսերենից թարգմանել է Ա. Չեխովի, Յու. Լերմոնտովի, Մ. Գորկու, Մ. Շոլոխովի, Ի. Էրենբուրգի, Վ. Կատաևի, Վ. Կորոլենկոյի և ուրիշների բազմաթիվ ստեղծագործությունները։ Դրանց մեծ մասը լույս են տեսել առանձին գրքերով, մյուսները՝ այդ հեղինակների ժողովածուների մեջ։

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՐԴԵՍ *(ծն. 1924)*.— Պատմաբան. պատմական գիտությունների դոկտոր *(1966)*։ Ծնվել է Հայկական ԽՍՀ Ղուկասյանի շրջանի Ղազանչի գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի միջազգային հարաբերությունների ֆակուլտետն ավարտել է 1952-ին, ասպիրանտուրան՝ 1955-ին։ 1955—1959 թթ. աշխատել է «Խորհրդային Հայաստան» ամսագրի խմբագրությունում իբրև բաժնի վարիչ, 1959—1960 թթ.՝ «Պատմաբանասիրական հանդեսի» խմբագրությունում, 1959—1972 թթ.՝ ԴԱ պատմության ինստիտուտում իբրև ավագ գիտաշխատող։ 1972-ից՝ ԴԱ «Լրաբեր» (հասարակական գիտություններ) ամսագրի խմբագրությունում իբրև գլխավոր խմբագիր։ Գիտական մամուլում և ժողովածուներում տպագրել է պատմագրական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հայաստանի գյուղացիությունը խորհրդային իշխանության համար մղված պայքարի ժամանակաշրջանում» (Երևան, 1960), «Ղրիմի հայկական գաղութի պատմություն» (1964), «Ղրիմի հայկական գաղութի պատմություն. 1801—1917» (1970), «Ղրիմի հոդում» (ռուսերեն, 1974), «Հայ-իտալական առնչություններ. ջենովական փաստաթղթեր ղրիմահայերի մասին» (1974), «Ծովակալ Ս. Մ. Սերեբրյակով» (1979), «Ղրիմահայոց պատմությունը» (1987) և այլն։

ԹԻՔԱՅԵԼՅԱՆ ՓԱՅԼԱԿ *(1904—1936)*.— Գրող, հրապարակախոս։ Ծնվել է Երզնկայում (Արևմտյան Հայաստան)։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կորցրել է ծնողներին, ընկել Կ. Պոլսի մանկատները, 1922-ին որբերի հետ տեղափոխվել է Հունաստան, ապա՝ Ֆրանսիա, որտեղ կատարել է տարբեր աշխատանքներ, զուգահեռ զբաղվել գրականությամբ։ Սփյուռքահայ մամուլում տպագրել է բանաստեղծություններ և արձակ գործեր։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Ծվա, ծվա», «Արև, արև»։ Վերջինը նրա տարիների օրագրություններն են։ Օգտագործել է Ցոլակ Զանգի ծածկանունը։

ՄԻՔՈՒԼԻ ԿԱՌԼ *(1821—1897)*.— Դաշնակահար, կոմպոզիտոր, երաժշտագետ։ Ծնվել է Լեհաստանի Զերնովիցի քաղաքում, հայկական ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա սովորել Վիեննայի համալսարանում։ 1844 թ. մեկնել է Փարիզ, հետևել երաժշտության, աշակերտելով աշխարհահռչակ կոմպոզիտոր Շոպենին։ 1848 թ. ավարտել է ուսման ընթացքը, վերադարձել Լեհաստան, տվել դաշնամուրային համերգներ։ 1858 թ. ընտրվել է Լվովի երաժշտական ընկերության գիրեկտոր։ Երկար տարիներ վարել է Լվովի կոնսերվատորիայի դիրեկտորի պաշտոնը։ Գրել է վոկալ և գործիքային երկեր, դաշնամուրային վարիացիաներ, մազուրկաներ, վալսեր, պրելյուդներ և այլն։ Նրա որոշ գործերը տեղ են գտել Ռուսաստանի կոնսերվատորիաների դաշնամուրային դասարանների ծրագրերում։ Նրա աշքի ընկնող ծառայություններից մեկը համարվում է Շոպենի ստեղծագործությունների հրատարակությունը, որտեղ նա կատարել է կարևոր սրբագրություններ, մեկնաբանել շատ տարբերակներ, նշումներ։

ՄԼԷԼ ԹԱԳՈՒՀԻ *(9-րդ դ.)*.— Հայոց թագուհի։ Եղել է Սմբատ Ա թագավորի եղբայր Շապուհ իշխանի դուստրը, Գագիկ Ա Արծրունու կինը։ Նրա անվան հետ է կապվում հայոց հնագույն գրչագրերից մեկը, որը կոչվում է Մլքե թագուհու Ավետարան։ Գրված է 851 թ., թագուհին այն նվիրաբերել է Վարագա վանքին, իսկ այժմ սեփականությունն է Վենետիկի Մխիթարյանների վանքի։ Մխիթարյանները ձեռագրի գեղեցիկ նկարազարդումները հրատարակել են 1982 թ. «Զարդանկարք Ավետարանի Մլքե թագուհւոյ» խորագրով։

ՄՆԱՑԱԿԱՆ ԳՐԻԳՈՐ *(1867—1937)*.— Բանաստեղծ։ Ծնվել է Պարտիզակում (Թուրքիա)։ Մինչև 1915 թ. որպես ուսուցիչ պաշտոնավարել է Պարտիզակում, Զենկիլերում, Արմաշում, Օմանքլում։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո մեկնել է Եգիպտոս, որպես տեսուչ աշ-

խատել Կահիրեի Գալուստյան ազգային վարժարանում, ապա անցել է Երուսաղեմ, նույն պաշտոնը վարել տեղի Ժառանգավորաց վարժարանում։ Եգիպտահայ մամուլում տպագրել է հոդվածներ։ Գրել է «Ժողովուրդի զավակի մը հիշատակները» հուշագրական երկը, որը տպագրվել է Ամերիկայում, 1924 թ.։ Ավելի ուշագրավ է նրա «Պարտիզակն ու պարտիզակցին» ընդարձակ հետազոտությունը (Կահիրե, 1938), որը պարունակում է փաստական հարուստ նյութ այդ քաղաքի հայերի վերաբերյալ։

ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ *(13-րդ դ.).— Մատենագիր, կրթական գործիչ։ Ծնվել է Երևանում, դրա համար կոչվել է նաև Երևանցի։ Կրթությունը ստացել է Գեղարդա վանքում (Այրիվանք)։ 1279-ից եղել է նույն վանքի վանահայրը։ Գրել է մի շարք տաղեր, գանձեր, ճառեր, քարոզներ։ Կազմել է մի «Ճառընտիր» (գրված Այրիվանքում, 1283-ին), որտեղ զետեղված են իր ժամանակի բարձրագույն դպրոցներում սովորողների համար անհրաժեշտ մոտ 100 երկ (հայ հեղինակների և թարգմանական)։ Նրա ուշագրավ երկերից է «Ստորագրութիւն պատմութեան Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի» աշխատությունը, իսկ գլուխգործոցը՝ «Պատմութիւն հայոց»-ը, որտեղ համառոտ տրվում է հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև 1289 թվականը։ Պարունակում է նաև վրացիների, աղվանների, հույների, պարսիկների, սելջուկների, թաթարների, հռոմայեցիների պատմությանը վերաբերող տեղեկություններ՝ թագավորների, իշխանների անվանացանկեր և այլն։ Նրա այդ աշխատությունը նախ լույս է տեսել Մոսկվայում, 1860-ին, Մ. Էմինի ջանքերով։ Բ տպագրությունը կատարել է Ք. Պատկանյանը (Պետերբուրգ, 1867)։ Ռուսերեն թարգմանությունն էլ, դարձյալ Պատկանյանի ջանքերով, հրատարակվել է Պետերբուրգում, 1869-ին։ Նույն տարում Բրոսեն հրատարակել է ֆրանսերեն թարգմանությունը։*

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ *(12-րդ դ.).— Մատենագիր։ Եղել է Անիի Կաթողիկե եկեղեցու ավագերեցը։ Հառիճի վանքի վանահայր Գրիգոր վարդապետի առաջարկով գրել է «Հայոց պատմությունը», որը փաստորեն Բագրատունյաց թագավորության պատմությունն է։ Այդ աշխատությունը նախնական վիճակում բաղկացած է եղել երեք մասից։*

ա) Բագրատունյաց պատմության հին շրջանը՝ Պարույր Ա. թագավորից մինչև Հովհաննես-Սմբատ. բ) Հովհաննես-Սմբատից մինչև Բարսեղ կաթողիկոսի ղեկավարության տարիները. գ) Բարսեղից մինչև Գրիգոր Տղայի մահը (1192)։ Պահպանվել է միայն մի մասը, որը հրատարակել է Ք. Պատկանյանը 1879-ին։ Պարսկերենից թարգմանել է «Պատճառ խաւարման արեգական և լուսնի» երկը՝ աստղաբաշխական աղյուսակներով, սակայն նրա այդ գործը մեզ չի հասել։ Հիշատակվում է այլ աղբյուրներում։

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ *(13—14-րդ դդ.).— Մանրանկարիչ։ Ապրել և գործել է Անիում։ Կրթությունն ստացել է Հոռոմոսի վանքում, որտեղ զբաղվել է գրչությամբ։ Գլաձորի մանրանկարիչներից Ավագի հետ Սուլթանիայում (Պարսկաստան) նկարազարդել է մի քանի ձեռագիր։ Ջարդանկարները կատարել է ինքը, սրբանկարները՝ Ավագը։ Նրանց նկարազարդած ձեռագրերից չորսը պահվում են Երևանի Մատենադարանում, մեկը՝ Երուսաղեմի վանքում։*

ՄԽԻԹԱՐ ԱՊԱՐԱՆԵՑԻ *(14—15-րդ դդ.).— Մատենագիր։ Կրթությունն ստացել է Մաղաքիա Ղրիմեցու մոտ։ Հետագայում դարձել է կաթոլիկական մոլեռանդ քարոզիչ։ Շրջագայել է Հայաստանի և Վրաստանի մի շարք գավառներում։ Գրել է դավանաբանական երկեր, ինչպես՝ «Գիրք տրամաբանութեան ուղղափառաց», «Գիրք հակաճառութեան»։ Մի գիրք էլ գրել է Արևորդիների մասին։ Մեռել է 1410 թ.։*

ՄԽԻԹԱՐ ԱՐԾԿԵՑԻ *(14-րդ դ.).— Մատենագիր։ Գրել է «Յաղագս միաբանութեան բնութեան և բանիս Աստուծոյ» երկը։*

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ *(1120—1213).— Մատենագիր-օրենսգետ։ Ծնվել է Գանձակում։ Կրթությունն ստացել է Հովհաննես Տավուշեցի վարդապետի մոտ, ապա սովորել է Սև լեռան վանքում։ Վերադառնալով հայրենիք՝ զբաղվել է կրթական աշխատանքով։ Հետագայում մեկնել է Խաչեն գավառի Հաթերք գյուղը, այնտեղից՝ Կայեն գավառի Գետիկ վանքը, շարունակել կրթական աշխատանքը։ Երբ երկրաշարժից քանդվել է այդ վանքը, Իվանե իշխանի նյութական աջակցությամբ Տանձուտի ձորում կառուցել է մի նոր վանք, կոչել Նոր Գետիկ, զբաղվել մատենագրությամբ և ուսուցչությամբ։ Կիրակոս Գանձակեցին հիշատակում է նրա հետևյալ երկասիրությունները՝ «Համառօտ մեկնութիւն մարգարէութեան Երեմիայի», «Սուղ ինչ կանոնս վասն սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեառն», «Ողբք ի վերայ բնութեանս», «Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդեմ ամենայն հերձուածողաց»։ Գլուխգործոց երկերն են՝ «Դատաստանագիրք Հայոց»-ը և «Առակք» ժողովածուն։ «Դատաստանագիրքը» գրել է 1184-ին։ Բաղկացած է երեք մասից. ա) «Նախադրութիւն», որտեղ շարադրված են Դատաստանագիրքը գրելու դրդապատճառները. բ) և գ) մասերում բերված են օրենքները։ «Դատաստանագիրքը» օգտագործվել է ոչ միայն բուն Հայաստանում, այլև լեհահայերի, Ղրիմի և այլ վայրերի հայերի մոտ։ Հետագայում այն լայնորեն օգտագործել է Սմբատ Գունդստաբլը՝ Կիլիկյան Հայաստանի համար կազմած Դատաստանագրքում։ Առաջին անգամ լույս է տեսել Վաղարշապատում, 1880 թ. Վահան վարդապետ Բասամյանցի ընդարձակ և հմտալից առաջաբանով՝ «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց» խորագրով։ Առակների առաջին տպագրությունը կատարվել է Վենետիկում, 1790 թ.՝ «Առակք և ոտանաւոր խրատականք» խորագրով (Բ տպ.՝ Վենետիկ, 1842, Գ տպ.՝ 1854 և այլն)։ Դրանք վերահրատարակվել են նաև խորհրդային տարիներին՝ «Առակներ» (Երևան, 1951), «Գիրք դատաստանի» (Երևան, 1975)։*

ՄԽԻԹԱՐ ԵՐԶՆԿԱՑԻ *(13—14-րդ դդ.).— Գրիչ, բանաստեղծ։ Ծնվել է Երզնկայում։ Կրթությունն ստացել է Տիրաշենի վանքում, որտեղ մնացել է մինչև 1300 թ., ապա իր ուսուցիչ Գրիգորիսի հետ մեկնել է Գլաձորի վանքը, աշակերտել Եսայի Նչեցուն, զբաղվել գրչությամբ։ Ենթադրվում է, թե եղել է հոգևորական, ապա հրաժարվել է կուսակրոնությունից, ամուսնացել, սակայն շարունակել ապրել վանքերի շրջանում, կատարել արտագրություններ։ Իր արտագրած ձեռագրերից մի քանիսին կցել է չափածո արժեքավոր հիշատակարաններ։ Աշխույժ, սրամիտ լեզվով, ժամանակի ոճակոբեռով գրված այդ հիշատակարանները վկայում են նրա բանաստեղծական կարողության մասին։*

ՄԽԻԹԱՐ ԿԱՉՄՈՂ *(12-րդ դ.).— Քարգործ վարպետ։ Համարվել է միջնադարի մեր լավագույն քանդակագործ վարպետներից։ 1185 թ. Սանահինի վանքում քանդակել է Գրիգոր Տաթևորդու հուշարձան-խաչքարը։*

ՄԽԻԹԱՐ ԿԱՉՄՈՂ *(16-րդ դ.).— Քարգործ վարպետ։ 1549 թ. պատրաստել է մի խաչքար, գտնվում է Մարտունու շրջանի Զորագյուղ գյուղում։*

ՄԽԻԹԱՐ ԿԱԼԿԱՑԻ *(13-րդ դ.).— Թարգմանիչ։ Ապրել և գործել է Անի քաղաքում։ Առաքել Անեցու և Շերանի հետ արաբերենից թարգմանել է մի երաղահան, որից մի քանի օրինակ պահվում է Երևանի Մատենադարանում։*

ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ *(12-րդ դ.).— Մատենագիր-գիտնական, բժիշկ։ Ծնվել է պատմական Հայաստանի Հեր (այժմ՝ Խոյ, Իրան) գավառում։ Ստացել է հիմնավոր կրթություն, սովորել արաբերեն, պարսկերեն, հունարեն, կարդացել այդ լեզուներով գրված գիտական երկեր։ Շնորհալու հաջորդ՝ Գրիգոր Պահլավունի Տղայի առաջարկով 1184 թ. գրել է իր «Ջերմանց մխիթարութիւն» բժշկական նշանավոր աշխատությունը՝ ժամանակի խոսակցական լեզվով, օգտվելով արաբական, հունական և պարսկական գրքերից։ Գրել է մի գիրք էլ «Վասն քարանց և հատկութեանց նոցա և բժշկութիւն նոցա» խորագրով և այլ երկեր, որոնցից հատվածներ են պահպանվել հետագա դարերում գրված բժշկարաններում։ «Ջերմանց մխիթարութիւն» երկից պահպանվել է չորս արտագրություն, որոնցից երեքը պահվում են արտասահմանյան ձեռագրատներում, իսկ մեկը՝ ամենահինը՝ գրված 1279 թ., Երևանի Մատենադարանում։ Առաջին անգամ լույս է տեսել Վենետիկում, 1832 թ.։ Գերմաներեն թարգմանությունը տպագրվել է Լայպցիգում, 1908 թ., ռուսերենը՝ Երևանում, 1955 թ., հեղինակի ծննդյան 800-ամյակի առիթով։ Նույն առիթով Հայաստանի կառավարության որոշմամբ Հերացու անունով է կոչվել Երևանի փողոցներից մեկը։*

ՄԽԻԹԱՐ ՀՅՈՒՍՆ *(12-13-րդ դդ.).— Ճարտարապետ։ Ապրել և գործել է 12-րդ դարի երկրորդ կեսին և 13-րդ դարի սկզբներին։ Ենթադրվում է, որ քսան տարի՝ 1188—1208 թթ. ամբողջովին նվիրվել է ճարտարապետական կառուցումների։ Նա է կառուցել Գոշավանքի հուշարձանների համալիրի նկատելի մասը։ 1191—1196 թթ. կառուցել է Գոշավանքի գլխավոր ս. Աստվածածին եկեղեցին, որի ներսում*

հատուկ արձանագրության մեջ նշված է նրա անունը։ Կառուցել է նաև վանքի ս. Հովհաննես Կարապետ փոքր եկեղեցին, ս. Առաքելոց և ս. Հռիփսիմե մատուռները, ս. Հոգի և ս. Համբարձման եկեղեցիները։ Նրա անունը հիշատակված է իր կառուցումներից մի քանիսի արձանագրություններում և Կիրակոս Գանձակեցու պատմության մեջ։

ՄԽԻԹԱՐ ՁՄՇԿԱՆՑ *(13-րդ դ.).*— Թարգմանիչ։ Առաքել աբեղա Ակնեցու հետ 1222-ին արաբերենից թարգմանել է մի երգաշան։

ՄԽԻԹԱՐ ՍԱՍՆԵՑԻ *(1260—1337).*— Մատենագիր։ Կոչվել է նաև Կերմանացի։ Ծնվել է Սասունում։ Հոր մահից հետո մոր հետ տեղափոխվել է Ապահունյաց Կերմանից գյուղը։ Կրթությունն ստացել է Գլաձորի վանքում, աշակերտել Ներսես Մշեցուն և Եսայի Նչեցուն։ Ավարտելով ուսման ընթացքը, այցելել է Կերմանից, Մեծոփա և Արճեշի վանքերը։ Գրել է «Մեկնութիւն թղթոց և հանգստեան Յովհաննու, խօսք ընդդէմ տօմարին Լեռնի» աշխատությունը և բազմաթիվ ճառեր։ Մահվանից 106 տարի հետո Մեծոփա վանքի միաբանները ի հարգանս նրա՝ գերեզմանի վրա կանգնեցրել են հատուկ խաչքար։ Դանիել Մեծոփեցին՝ գրի առնելով նրա կենսագրությունը, մացրել է «Հայսմավուրքի» մեջ։ Նրա վարքը գրի է առել նաև Մկրտիչ Մեծոփեցին, որ լույս է ընծայել Գ. Հովսեփյանը Վաղարշապատում, 1899-ին։

ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ *(1676—1749).*— Հայագետ, մշակութային, հոգևորական գործիչ, հայտնի Մխիթարյան միաբանության հիմնադիրը։ Ծնվել է Սեբաստիայում։ Նախնական կրթությունն ստացել է տեղի ս. Նշան վանքում, ընդունել հոգևորական կոչում։ Էջմիածնի նվիրակ Միքայել աթթեպիսկոպոսը նրան բռնել է Էջմիածին։ Ցանկացել է Սևանա կղզում հիմնել միաբանություն, զարկ տալ կրթական, մատենագրական աշխատանքի, սակայն հանդիպելով ժամանակի հետադեմ կղերականության դիմադրությանը, հարկադրված է եղել վերադառնալ Սեբաստիա, մեծ դժվարություններ կրելով՝ հասնել Պոլիս։ Այնտեղ կաթոլիկ քարոզիչների օժանդակությամբ 1701 թ. ստեղծել է իր միաբանությունը, որի անդամների թիվը եղել է 10։ Պոլսի լուսավորչական պատրիարքի հալածանքներին ենթարկվելով՝ միաբանությունը տեղափոխել է Իտալիա։ Հռոմի պապը, հաշվի առնելով, որ նրա միաբանությունը կարող է օգտակար լինել կաթոլիկական կրոնի ներթափանցմանը Արևելք, օժանդակել է, տվել մի գյուղ, նաև նյութական միջոցներ, իսկ 1717 թ. նրան է հանձնել Վենետիկի մոտ գտնվող ս. Ղազար կղզին։ Հաստատվելով այդ կղզում, միաբանությունը նրա գլխավորությամբ ծավալել է գրական, բանասիրական, թարգմանչական գործունեություն։ 1720-ական թվականների սկզբներից Վենետիկի իտալական տպարաններում տպագրել հայերեն գրքեր, կրոնա-բարոյախոսական, պատմագրական և հայագիտական բովանդակությամբ։ Հետագայում, 1789 թ. միաբանությունն ունեցել է սեփական տպարան և ավելի ծավալել հրատարակչական գործը։ Այդ տպարանում, որը մինչև այսօր էլ գործում է, անցած 200 տարիների ընթացքում տպագրվել են հարյուրավոր գրքեր՝ ինքնուրույն և թարգմանական։ Ինքը՝ միաբանության հիմնադիրն ունեցել է գրական, բանասիրական բեղուն գործունեություն։ Նրա աշխատություններից առավել հիշատակության արժանի են՝ «Գուսն գերականութեան աշխարհաբար լեզուի հայոց» (Վենետիկ, 1725), «Քերականութիւն գրաբար լեզուի» (1730), «Բառգիրք հայկազեան լեզուի», բաղկացած երեք հատորից (Վենետիկ, 1769)։ Գրել է նաև կրոնաշունչ բանաստեղծություններ։ Հայ մշակույթի պատմության մեջ արժանի տեղ ունի իր ստեղծած վերոհիշյալ միաբանությամբ, որն արդեն 250 տարուց ավելի է իր երկիցուղ հատվածներով (Վենետիկի և Վիեննայի միաբանություններ) մեծ դեր է կատարել հայագիտության զարգացման, հայ մատենագիրների երկերի հրատարակության, հունա-հռոմեական գրականության ընտիր նմուշների թարգմանության, հայաշատ կենտրոններում կրթական աշխատանքի ծավալման գործում։

ՄԽԻԹԱՐ ՍԿԵՎՌԱՑԻ *(13-րդ դ.).*— Մատենագիր։ Ապրել է Կիլիկիայի Հայաստանում, 13-րդ դարի կեսերին։ Ուղեկցել է Հեթում Ա թագավորին՝ թաթարների Մանգու խանի հետ բանակցելիս՝ 1254 թ.։ Հետագայում, 1263 թ. որպես պատվիրակ մեկնել է Աբբյա (Պաղեստին), Ուրբանոս Դ պապի նվիրակ Տյուրոս Գուլիելմոսի հետ վիճել է Հռոմի եկեղեցական աթոռի գերիշխանության դեմ։ Հեթում թագավորի հրամանով գրել է վերոհիշյալ դեպքերի պատմությունը «Պատասխանիք յաղագս հաստատութեան երկոտասան առաքելոց» խորագրով։ Տպագրվել է Երուսաղեմում, 1865 թ.։ Գրել է նաև դավանաբանական մի ճառ։

ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ *(17-րդ դ.).*— Տաղերգու։ Նրա տաղերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № 1737, 2339 և 4256 ձեռագրերում։

ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ *(17-րդ դ.).*— Մատենագիր։ Գրել է «Գաւազանագիրք հնոց և նորոց կտակարանաց» երկը։

ՄԽԻԹԱՐ ՓՈՐԱԳԻՐՔ *(13-րդ դ.).*— 1271 թ. փորագրել է Անիի մոտակայքում գտնվող Կարմիր վանքի շինությանը վերաբերող գեղագիր արձանագրությունը։

ՄԽԻԹԱՐ ՔԱՀԱՆԱ *(14-րդ դ.).*— Մանրանկարիչ։ 1319 թ. նկարազարդել է մի Ավետարան, մի այլ Ավետարան էլ՝ 1329 թ.։

ՄԽԻԹԱՐ ՔԱՐԳՈՐԾ *(13-րդ դ.).*—1263 թ. կառուցել և քանդակազարդել է մի կոթող խաչքար, որը գտնվում է Վերին Ախտա գյուղում։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱԲԵԼ *(1804—1873).*— Բանաստեղծ։ Կրթությունն ստացել է Էջմիածնի ժառանգավորաց վարժարանում. ավարտելուց հետո դարձել է Էջմիածնի միաբանության անդամ, վարել է կրթական, կրոնական պաշտոններ։ Երկար տարիներ որպես հոգևոր առաջնորդ աշխատել է Տրապիզոնում, որտեղ ունեցել է մշակութային նկատելի գործունեություն, հիմնել է «Թանգարան հայկազյան» ընկերությունը, զարկ տվել դպրոցական գործին։ Պաշտոնավարել է նաև Կ. Պոլսում, իսկ կյանքի վերջին տարիներն անց է կացրել Էջմիածնում, զբաղվելով բանասիրական աշխատանքով։ Աշխատակցել է «Կոչնակ հայոց աշխարհին», «Բանաստեղծ», «Արարատ» և այլ պարբերականների։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Ճանապարհորդութիւն յԱնի» (Կ. Պոլիս, 1855), «Պատմութիւն մեծաստանին Հառիճոյ ի Շիրակ» (Թիֆլիս, 1856), «Վեպ գաղթականութեան հայոց Տրապիզոնու» (Կ. Պոլիս, 1857), «Անուշաւան ի գերեվարս, վիպասանութիւն ազգային» (Մոսկվա, 1860), «Ճանապարհորդութիւն ի Դարեժ» (տպագրվել է «Կոչնակում», 1861 թ.), «Պատմութիւն Հոռոմոսին վանաց ի Շիրակ և վանօրէից ոմանց ի նմին տեղագրութիւնք» (Վաղարշապատ, 1870), «Վաղարշապատ, քաղաքմայր Հայաստանի» (Վաղարշապատ, 1874), «Կաթողիկէ մայր եկեղեցի Վաղարշապատ ընդ չորից վանօրէից նորին» (Վաղարշապատ, 1875) և այլն։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ *(1846—1916).*— Բանահավաք, բանասեր։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Երկար տարիներ պաշտոնավարել է Ալեքսանդրապոլի գպրոցներում։ 1867 թ. բաց է արել իր մասնավոր դպրոցը նույն քաղաքում։ 1889 թ. թողել է ուսուցչությունը, զբաղվել գրավաճառությամբ։ Ունեցել է իր սեփական գրատունը, որը նկատելի դեր է կատարել գավառական այդ քաղաքի մտավոր կյանքում։ Միաժամանակ ունեցել է գրական, բանասիրական գործունեություն։ Զապիտաձո երկերով աշխատակցել է «Արարատ» ամսագրին և այլ պարբերականների։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Տաղեր և խաղեր» (Ալեքսանդրապոլ, 1900), «Փշրանքներ Շիրակի ամբարներից» (Էմինյան ազգագրական ժողովածու, հատ. Ա. Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901), «Զվարճալի զրոսարան» (1910) և այլն։ Գրել է նաև այլ բնույթի երկեր, ինչպես՝ «Ուղեցույց Անի քաղաքի և շրջակա ավերակաց» (Ալեքսանդրապոլ, 1902), «Էջեր հայ ազատագրական շարժումների պատմությունից» և այլն։ Թուրքերենից թարգմանել է և առանձին գրքույկներով հրատարակել արևելյան մի քանի սիրավեպեր՝ «Լեյլի և Մեջնուն», «Շիրին և Ֆարհատ» և այլն։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՄԱՅԱ *(ծն. 1912).*— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Երևանում։ 1936—1968 թթ. աշխատել է Երևանի Հովհ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում, որտեղ տարիների ընթացքում կատարել է մի քանի տասնյակ դերեր՝ Նատո («Տերն ու ծառան»), Եղեգնուհի, Արեգնազան, Կարմիր գլխարկ (համանուն պիեսներում), Մանուշ («Գառնիկ ախպեր»), Բոբոն («Գնդիկ բոքոնիկ») և այլն։ 1935 թ. մասնակցել է Մոսկվայում կայացած երգչախմբային տասնօրյակին, 1937 թ.՝ տիկնիկային թատրոնների տասնօրյակին, դարձյալ Մոսկվայում։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԲԱԿ (ծն. 1911).— Եգիպտագետ-պատմաբան։ Ծնվել է Քանթայում (Եգիպտոս). հայրը եղել է հայանի Մաթոսյան ծխախոտի գործարանի տնօրենը։ Նախնական կրթությունն ստացել է Երուսաղեմի արաբական դպրոցում, իսկ մայրենի լեզուն սովորել է ծնողներից։ 1925 թվականից ուսումը շարունակել է Բելգիայում և Փարիզում, հետևելով արևելագիտության, մասնավորապես եգիպտագիտության։ Աստիճանաբար դարձել է համաշխարհային չափանիշով եգիպտագետ։ Մասնակցել է Եգիպտոսում կատարվող բազմաթիվ պեղումների, օտար մամուլում գրել արժեքավոր հետազոտություններ հնագիտական տարբեր հարցերի մասին։ Երկար տարիներ եղել է Բելգիայի Ելիզավետ թագուհու անվան եգիպտագիտական ինստիտուտի քարտուղարը, Բրյուսելի թանգարանի իսլամական բաժնի վարիչը, արաբերենի դասախոս՝ Բրյուսելի համալսարանում։ Միաժամանակ վարել է հայերենի և արաբերենի դասընթացները Բրյուսելում։ Եգիպտագիտության վերաբերյալ դասախոսություններ է կարդացել տարբեր քաղաքներում, այդ թվում՝ Երևանում։ 1964 թ. Փարիզում լույս է ընծայել «Հին Եգիպտոսի կրոնքը» ընդարձակ հետազոտությունը։ Նրա մյուս աշխատություններն են՝ «Հին Եգիպտոսի նկարչությունը» (1959), «Ներածություն Եգիպտոսի մասին» (1964) և այլն։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ (1912—1956).— Բանաստեղծ։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի Շերվանշեյխ գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի պատմության ֆակուլտետը ավարտել է 1946 թ.։ 1949—1959 թթ. աշխատել է ՀԿԿ Կենտկոմի կուսակցական դպրոցում որպես ավագ դասախոս, 1959 թվականից պաշտոնավարում է Երևանի պետական համալսարանում, դասավանդում փիլիսոփայական առարկաներ։ 1953 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա, 1972 թ.՝ դոկտորական՝ «Ազատությունը և պատմական անհրաժեշտությունը» թեմայով։ 1974 թ. ստացել է պրոֆեսորի կոչում։ Գիտական մամուլում տպագրել է փիլիսոփայական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Ազատություն և պատմական անհրաժեշտություն» (Երևան, 1963), «Սոցիոլոգիական ուսմունքների պատմություն» (պրակ 1-ին, 1971, 2-րդ՝ 1974, 3-րդ՝ 1976), «Ազատություն և

պատմական անհրաժեշտություն» (ռուսերեն, 1976) և այլն։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԴԵՂԶԱՆԻԿ (ծն. 1908).— Նկարչուհի։ Ծնվել է Վանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Լենինգրադի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ինստիտուտում, ավարտել 1933 թ.։ 1940 թվականից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն ստեղծագործություններից են՝ «Այրվածը», «Արագածը Ոսկեվազից», «Բերքահավաք», «Սերժանտ Էլոյանի դիմանկարը», «Հայաստանի լեռներում», «Կալը Օձունում» և այլն։ Ունեցել է անհատական ցուցահանդեսներ։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԽԱՐԵՆ (1822—1903).— Գրող, բանաստեղծ, հոգևորական, կրթական գործիչ։ Ծնվել է Վանում։ Կրթությունն ստացել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում։ Վարել է հոգևորական, կրթական պաշտոններ Վանում, Կ. Պոլսում, Զմյուռնիայում։ Զուգահեռ ունեցել է գրական, բանասիրական նկատելի գործունեություն։ Աշխատակցել է «Մասիս» և այլ թերթերի։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Համառոտ պատմություն Երուսաղեմի և ստորագրություն սրբազան տեղյաց» (Երուսաղեմ, 1867), «Համառոտություն Թեսավրոսի բարոյախոսության» (Զմյուռնիա, 1877), «Համառոտություն իմացական փիլիսոփայության» (Կ. Պոլիս, 1883), «Պատմություն պաշտամանց և կրոնական արարողության հին և նոր ազգաց» (1890)։ Հրատարակել է նաև գեղարվեստական գործեր, որոնցից են՝ «Արկածք Կատարինեի» (Զմյուռնիա, 1887), «Նեսահար աղավնի» (1889, բ. տպ.՝ 1890)։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԵՂԻՆԵ (ծն. 1932).— Քանդակագործ։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Լենինգրադի գեղարվեստների ակադեմիայի Ռեպինի անվան ինստիտուտում, որի քանդակագործության ֆակուլտետն ավարտել է 1962-ին։ 1968-ին հրավիրվել է Ալմա Աթա՝ մասնակցելու այդ քաղաքի համագումարների պալատի ձևավորման աշխատանքներին։ Պատրաստել է մի շարք քանդակներ, որոնցից «Արխարը» և «Ղազախուհին» գրվել են Ուլյանովսկ (Ղազախական ԽՍՀ) քաղաքի զբոսայգիներից մեկում։ «Ղազախֆիլմ» ստեղծել է վավերագրական ֆիլմ՝ նրա մասին։ 1970-ից ապրում և ստեղծագործում է Երևանում։ Մասնակցել է հանրապետական, միութենական և արտասահմանյան մի շարք ցուցահանդեսների։ Մասնակցել է «Արմենիա» նավի ձևավորման աշխատանքներին։ Նրա գործերից նմուշներ գտնվում են Ալմա Աթայի, Երևանի, Կարագանդայի և այլ քաղաքների պատկերասրահներում, նաև Սարդարապատի ազգագրական թանգարանում։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԳՈ (ծն. 1920).— Բանաստեղծ։ Ծնվել է Շամշադինի շրջանի Ներքին Կարմիրաղբյուր գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Բաքվի մանկավարժական ինստիտուտում, որի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետն ավարտել է 1941 թ., իսկ 1947 թ.՝ Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ հայ նոր գրականության մասնագիտությամբ։ 1948—1956 թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանում որպես ասպիրանտուրայի բաժնի վարիչ, 1956—1960 թթ. Մատենադարանում, 1960 թվականից՝ Հայկական ԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում, իսկ 1965 թվականից՝ պատմության ինստիտուտում։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Հյուսիսափայլ» ամսագիրը (Երևան, 1958), «19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից» (1976)։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՀՐԱՆ (1904—1972).— Ճարտարապետ. Հայկական ԽՍՀ վաստակավոր շինարար։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Բերդակ գյուղում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի ինդուստրիալ տեխնիկումում, որպես շինարար աշխատել է Լենինականում։ Հետագայում ուսումը շարունակել է Լենինգրադում, 1935 թ. ինժեներ-ճարտարապետի կոչումով վերադարձել է Երևան, աշխատել «Հայարդնախագիծ» միավորումում որպես նախագծող ճարտարապետ։ 1937—1939 թթ. եղել է նույն հիմնարկի դիրեկտորը։ Նրա նախագծերով կառուցված շենքերից են՝ Երևանի ժամացույցի գործարանը, կոմպլեքսային էլեկտրոսարքավորումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր շենքը, կաբելի գործարանի գլխավոր շենքը և այլն։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՆԵՐՍԵՍ (1875—?).— Կրթական, հոգևորական գործիչ, խմբագիր։ Ծնն-

վել է Արդվինում։ Կրթությունն ստացել է Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանում, 1891-ից շարունակել Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում։ 1896-ից դարձել է Մխիթարյան միաբանության անդամ։ 1904—1908 թթ. հաճախել է Պադուայի համալսարանը, ավարտել բնական գիտությունների դոկտորի վկայականով։ 1908—1909 թթ. խմբագրել է «Բազմավեպ» հանդեսը։ Կրթական պաշտոններ է վարել Տրապիզոնում, Կ. Պոլսում, Նիկոմիդիայում։ 1916 թ. նշանակվել է Վենետիկի ս. Ղազար վանքի տպարանապետ, ապա կրկին ստանձնել է «Բազմավեպի» խմբագրությունը։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Ուսումնական ուղեկացություն մը Բատուայի Լակատինոս» (1907), «Արդի գարու կյանքեն» և այլն։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ *(ծն. 1926).*— Գրող։ Ծնվել է Երևանում։ 1956 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը։ 1958-ից աշխատել է «Ոգնի» երգիծական հանդեսում, 1972-ից Հայկական հեռուստատեսությունում։ Երգիծական պատմվածքներ է տպագրել հայկական և ռուսական մամուլում։ 1961 թ. Մոսկվայում, «Կրոկոդիլի» մատենաշարով լույս է տեսել նրա «Ես կարմիր լույս եմ» երգիծական պատմվածքների ժողովածուն։ 1965 թ. տպագրել է երկրորդ ժողովածուն՝ «Ինչ կասեն մարդիկ» խորագրով։ Ռուսերենից կատարել է թարգմանություններ։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍԵՐՈՎԲԵ *(ծն. 1907).*— Բանասեր։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Ռըշտունիքի Գավաշ գավառի գյուղերից մեկում։ 1915 թ. գաղթի օրերին եկել է Կովկաս, ապաստան գտել Թիֆլիսի որբանոցներում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, ապա երկու տարի սովորել է Ներսիսյան դպրոցում։ 1918 թ. մեկնել է Վլադիկավկազ (այժմ՝ Օրջոնիկիձե), 1920 թ. եկել Երևան, այնտեղից՝ Կ. Պոլիս։ 1923 թ. հայ որբերի հետ տեղափոխվել է Հունաստան, 1926 թ.՝ Ֆրանսիա։ Գրական առաջին փորձերը կատարել է 1924 թ.՝ աշխատակցելով Հունահայ մամուլին։ Ֆրանսիայում 1936 թ. աշխատակցել է Մ. Մանուչյանի խմբագրած «Զանգու» պարբերականին, հետագայում՝ «Ժողովուրդ», «Աշխարհ» և այլ առաջադիմական թերթերի։ Առանձին գրքերով հրատարակած երկերն են՝ «Հին ու նոր երգեր» (բանաստեղծությունների ժողովածու, 1937), «Գաղութահայ իգեալիստներ» (1945), «Հայկական հարցը» (1968), «Ցրանաբերենով արտահայտվող հայ արվեստագետներ» (1969), «Հայոց լեզուն և «փյուտքը» (1974), բոլորն էլ տպագրված Փարիզում։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ *(1845—1892).*— Հոգևորական, կրթական գործիչ, բանաստեղծ։ Ծնվել է Ալեքսանդրապոլում։ Նախնական կրթությունն ստացել է Ծննդավայրում, ապա սովորել էջմիածնի վանքի ժառանգավորաց վարժարանում, ավարտելուց հետո ընդունել է հոգևորական կոչում։ 1872 թ. նշանակվել է Տաթևի վանքի վանահայր, ապա՝ Բեսարաբիայի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ, իսկ 1886 թվականից մինչև մահը վարել է Ատրպատականի թեմի առաջնորդի պաշտոնը։ Եղել է ուսումնասեր մարդ. դպրոցներ է բաց արել, դարի տվել կրթական, լուսավորական կյանքին։ Նրա առաջնորդության շրջանում Թավրիզում աշխուժացել է թատերական կյանքը, տրվել են հայերեն և թուրքերեն ներկայացումներ։ Ունեցել է գրական-բանասիրական նկատելի գործունեություն։ Աշխատակցել է «Արարատ» ամսագրին։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Ստորագրություն հռչակավոր մեծի ուխտին Այրի վանաց սրբուն Գեղարդա հանդերձ պատմական ծանոթությամբք» (էջմիածին, 1873), «Ստորագրություն հռչակավոր ս. Գևորգա վանուց որ ի Մուղնի» (Թավրիզ, 1889), «Պատմություն Սյունեաց, հանդերձ աշխարհագրական տեղեկությամբք» (անտիպ), «Պատմություն կաթողիկոսաց ի Ղուկասն ցՄակար», «Ստորագրություն Խոր Վիրապ վանուց» և այլն։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ *(ծն. 1911).*— Պատմաբան. պատմական գիտությունների դոկտոր (1966)։ Ծնվել է Կազզվանի Զանգի գյուղում (Կարսի մարզ)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Լենինգրադի արևելագիտության ինստիտուտում, ավարտել 1937-ին։ 1941—1942 թթ. ծառայել է խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո՝ 1944—1952 թթ. աշխատել է ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրությունում, 1952-ից՝ ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտում իբրև ավագ գիտաշխատող, ապա՝ սեկտորի վարիչ։ Գիտական մամուլում տպագրել է պատմագրական բազմաթիվ հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Բանվոր դասակարգը և ազգային ազատագրական շարժումները Վիետնամում (1885—1930) (Մոսկվա, 1965), նույնը վերահրատարակվել է 1967 թ., «Վիետնամի, Լաոսի և Կամպուչիայի ժողովուրդների պայքարը՝ ազգային անկախության, դեմոկրատիայի և խաղաղության համար» (1954), «Բանվորական և պրոֆիտերնական շարժումը Վիետնամում» (1960)։

ՄԿՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(1831—1909).*— Բանասեր։ Ծնվել է Պարտիզակում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Նիկոմեդիայում, որտեղ ընդունել է հոգևորական կոչում, վարել կրթական, եկեղեցական պաշտոններ։ Եղել է Լոնդոնի հայոց հոգևոր հովիվ, Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ և այլն։ Ունեցել է պատմական վավերագրերի մեծ հավաքածո և շատ հարուստ գրադարան։ Մահից հետո գրադարանը ցաք ու ցրիվ է եղել, իսկ փաստաթղթերի հավաքածոյի մի մասը փրկվել է, հետագայում հասել Հայաստան և այժմ պահվում է Հայաստանի գրականության և արվեստի թանգարանում։ 1870-ական թվականներից մամուլում և առանձին գրքերով հրատարակել է մի շարք հետազոտություններ, ինչպես՝ «Ազգարանություն Պատկանյան տոհմին», լույս է տեսել «Արևելք» օրաթերթում, 1899 թ.։ Առավել արժեքավոր է նրա «Կենսագրություն Մեսրոպաբ Դավթյան Թաղիադյանց Երևանցվոյ» աշխատությունը. լույս է տեսել նախ «Արձագանք» շաբաթաթերթում, ապա՝ առանձին գրքով (Թիֆլիս, 1886)։ Աշխատության Ա. մասում տրված է Թաղիադյանի կենսագրությունը, գրված մի անծանոթ անձնավորության (ենթադրվում է, որ Հովհաննես Խաչիկյանն) կողմից, Բ. մասը պարունակում է հեղինակի դիտողությունները։ Գրել է նաև այլ երկեր, դեղաբանցապես կրոնա-բարոյախոսական բովանդակությամբ։

ՄԿՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ *(1907—1983).*— Գրականագետ. բանասիրական գիտությունների դոկտոր, Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ (1956)։ Ծնվել է Վանում։ 1915 թ. ընտանիքով գաղթել են Անդրկովկաս, 1919-ից ապրել Երևանում։ Միջնակարգ կրթությունն ստանալուց հետո մեկ տարի աշխատել է Նոր Բայազետի շրջանում որպես ուսուցիչ։ 1926 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանը, որի պատմագրական ֆակուլտետն ավարտել է 1930 թ.։ Եղել է պրոֆեսոր Ա. Տերտերյանի առաջին ասպիրանտը գրականության պատմության գծով։ 1933-ից սկսած աշխատել է Երևանի պետական համալսարանում որպես հայ գրականության պատմության դասախոս։ 1949—1953 թթ. աշխատել է ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում որպես դիրեկտոր։ 1954-ից եղել է պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ։ Երկար տարիներ վարել է համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնը։ 1945 թ. «Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը» թեմայով պաշտպանել է դիսերտացիա, ստացել բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան, հաջորդ տարի՝ պրոֆեսորի կոչում, իսկ 1956-ին ընտրվել է Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ։ Պարբերական մամուլում տպագրել է գրականագիտական բազմաթիվ հոդվածներ։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «13—18-րդ դարերի հայ աշխարհիկ գրականությունը» (տեքստի պատրաստում և առաջաբան, Երևան, 1938), «Ֆրիկի բանաստեղծությունները» (տեքստի պատրաստում և առաջաբան, 1940), «Գրիգոր Նարեկացի» (1951), «Էջեր հայ վիպասանության պատմությունից» (1957), «Մովսես Խորենացի» (1970), նույնը ռուսերեն, «Հայ հին գրականության պատմություն» (1976), «Հովհ. Թումանյանի ստեղծագործությունը» (1981) և այլն։ 1933-ից կազմել է հայկական միջնակարգ դպրոցների 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարանների հայ գրականության դասագրքեր, որոնք արժանացել են բազմաթիվ տպագրությունների։ «Հայ գրականության» դասագիրք է կազմել նաև սփյուռքահայ դպրոցների համար։

ՄԿՐՏԻՉ *(15-րդ դ.).*— Ծաղկող։ 1452 թ. Սերի վանքում (Մակս) ծաղկել է մի Ավետարան. պահվում է Երևանի Մատենադարանում։

ՄԿՐՏԻՉ *(15-րդ դ.).*— Ծաղկող։ Գործել է 15-րդ դարի վերջերին։ 1491 թ. Կեչառիսում ծաղկել է մի Ավետարան. պահվում է Երևանի Մատենադարանում։

ՄԿՐՏԻՉ *(15-րդ դ.).*— Ծաղկող։ 1425 թ. Աղթամարում ծաղկել է մի Ավետարան։

ՄԿՐՏԻՉ *(17-րդ դ.).*— Ծաղկող։ 1677 թ. ս. Թադեի վանքում ծաղկել է Գր. Տաթևացու «Գիրք հարցմանցը». պահվում է Երևանի Մատենադարանում։

ՄԿՐՏԻՉ *(18—19-րդ դդ.).*— Տաղերգու։ Ապրել է Բայազետում։ Գրել է տաղեր, որոնցից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № 1990 ձեռագրում։

ՄԿՐՏԻՉ ԱԲԵՂԱ *(16-րդ դ.).*— Մատենագիր։ Ապրել է պատմական Ամիտ քաղաքում (այժմ Դիարբեքիր, Թուրքիա)։ Գրել է իր մտերիմ ընկեր Պաուտաֆ Ամտեցու նահատակության պատմությունը, տպագրված է «Հայոց նոր վկաներ» ժողովածուում (Վաղարշապատ, 1903)։

ՄԿՐՏԻՉ ԱԲԵՂԱ *(17-րդ դ.).*— Մատենագիր։ Ապրել է նախ Գանձասարում, ապա՝ Թեոդոսիայում։ Գրել է «Թուական Շահարասին» երկը։

ՄԿՐՏԻՉ (ՄԿՐՏՉՅԱՆ) ԱՐՇԱՎԻՐ *(ծն. 1913).*— Գրող։ Ծնվել է Ցաղզում (Իրան)։ Կրթությունն ստացել է Խսպահանի և Թեհրանի ամերիկյան կոլեջներում։ Գրել է չափածո ստեղծագործություններ, որոնք տպագրվել են իրանահայ պարբերականներում («Վերածնունդ», «Նոր էջ» և այլն)։ 1957 թ. Թեհրանում լույս է տեսել նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Զորս հողմերը և ես» խորագրով։ Իրանական ժամանակակից գրականությունից կատարել է թարգմանություններ, որոնցից նմուշներ տես «Նոր էջ»-ի 12-րդ և այլ գրքերում։

ՄԿՐՏԻՉ ԳԱՆԶԱՍԱՐ *(14-րդ դ.).*— Տաղերգու։ Գրել է մի շարք տաղեր, որոնք մեզ հասել են այժմ Լոնդոնում պահվող մի ձեռագիր ժողովածուով։

ՄԿՐՏԻՉ ԳԱՆԶԱՍԱՐ *(15-րդ դ.).*— Տաղերգու։ Եղել է Մեծոփա վանքի միաբան։ Գրել է տաղեր, որոնցից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանում։

ՄԿՐՏԻՉ ԳՐԻԳ *(13-րդ դ.).*— Քարգործ վարպետ, 1231 թ. Շիրակավանում քանդակել է խոշոնքի ընդարձակ արձանագրությունը։

ՄԿՐՏԻՉ ԴՊԻՐ *(15-րդ դ.).*— Տաղերգու։ Գրել է տաղեր, որոնցից նմուշներ («Մայր մարմնացելոյ», «Մաքուր անբիծ», «Մեծացեալ կաս յինէն» և այլն) պահվում են Երևանի Մատենադարանում։

ՄԿՐՏԻՉ ԴՊԻՐ *(Եբերիացի) (17-րդ դ.).*— Ծաղկող։ 1627—1641 թթ. Թիֆլիսում ընդօրինակել ու ծաղկել է երկու Ավետարան։

ՄԿՐՏԻՉ ԵՐԵՑ *(17-րդ դ.).*— Ծաղկող։ Ապրել և գործել է Եգիպտոսում, որտեղ 1611 թ. ծաղկել է մի Ավետարան։

ՄԿՐՏԻՉ ՄԵՍՈՓԵՑԻ *(14-րդ դ.).*— Մատենագիր։ Կրթությունն ստացել է Մխիթար Սասնեցու մոտ։ Գրել է իր ուսուցչի կենսագրությունը, որը լույս է ընծայել Գ. Հովսեփյանը Վաղարշապատում, 1889 թ. «Մխիթար Սասնեցի» խորագրով։

ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇ *(15-րդ դ.).*— Տաղերգու, մանրանկարիչ, հոգևորական գործիչ։ Ծնվել է պատմական Հայաստանի Բաղեշ քաղաքի Պոռ գյուղում, մոտավորապես 1394—1395 թվականներին, Առաքել քահանայի ընտանիքում։ Ստացել է աստվածաբանական, փիլիսոփայական կրթություն, իմացել արևելյան մի քանի լեզու, նաև հին հունարեն։ 1420-ական թվականներին, կնոջ մահից հետո իր որդու հետ մեկնել է Միջագետք, Ամիդ քաղաքում ձեռնադրվել վարդապետ, ունեցել հասարակական, մշակութային գործունեություն։ 1430 թ. կաթողիկոսը նրան նշանակել է 24 գավառների եպիսկոպոս և կաթողիկոսի տեղապահ։ Վայելելով Միջագետքի տիրակալ Օթման բեկի հովանավորությունը, վերանորոգել, կառուցել է եկեղեցիներ ու վանքեր, նրանց կից ստեղծել դպրոցներ։ Օթմանի մահից հետո ստեղծված քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով 1440-ական թվականների սկզբներին մեկնել է Կ. Պոլիս, այնտեղից Ղրիմ, չորս տարի գործել Թեոդոսիայում, նորից վերադարձել Միջագետք, որտեղ էլ ապրել է մինչև կյանքի վերջը (1469)։ Նկարազարդել է մի քանի ձեռագիր, որոնցից մեկն է այժմ Մյունխենում պահվող մի Աստվածաշունչ, զարդարված բազմաթիվ նկարներով ու լուսանցազարդերով, կատարված Ամիդ քաղաքում։ Հորինել է աշխարհիկ բովանդակությամբ տաղեր («Տաղ հարսանեաց և ուրախութեան», «Տաղ վասն վարդին և պլպուլին», «Տաղ վասն դարիպի» և այլն), որոնք տեղ են գտել բազմաթիվ ժողովածուներում, թարգմանվել ռուսերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով։ Նրա «Տաղ վասն դարիպին» տեղ է գտել հայերեն առաջին տպագիր տաղարանում, 1512 թ.։ Ամբողջական ժողովածուն առաջին անգամ հրատարակել է Կ. Կոստանյանը Վաղարշապատում, 1898 թ., իսկ մեր օրերում՝ էդ. Խոնդկարյանը, 1965 թ.՝ հետազոտական առաջաբանով։

ՄԿՐՏԻՉ ՈՍԿԵՐԻՉ *(14-րդ դ.).*— Ոսկերիչ-մանրանկարիչ։ Գործել է 1321 թ. Երուսաղեմում գրված մի Ավետարանի կազմը։

ՄԿՐՏԻՉ ՋԱՀԱՆԿՈՒԼ *(17-րդ դ.).*— Ծաղկող։ Ապրել է 17-րդ դարի կեսերին, Եվդոկիայում, որտեղ 1656 թ. ծաղկել է մի Հայսմավուրք, 1661 թ.՝ մի Ավետարան, 1679 թ.՝ Ճաշոց։

ՄԿՐՏԻՉ ՋՈՒՂԱՅԵՑԻ *(17-րդ դ.).*— Տաղերգու։ Նրա տաղերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № 1171 ձեռագրում։

ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ *(16-րդ դ.).*— Տաղերգու։ Ապրել է Դերջանի գավառի Փթառիջի վանքում։ Եղել է աշխարհիկ կյանքով ապրող կենսուրախ մարդ։ Գրել է խրատական բովանդակություն ունեցող մի շարք բանաստեղծություններ։ Դրանցից է՝ «Օրհնեալ Աստուծոյ անունն, որ բարեաց դռներն բացեր, զաշխարհս գեղեցիկ ստեղծել և երեք դիմաց բաժանել»։

ՄԿՐՏԻՉ ՏԱՐՈՆԵՑԻ *(16-րդ դ.).*— Նրա տաղերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № 1661 և 3081 ձեռագրերում։

ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱ *(15-րդ դ.).*— Նկարիչ։ 1441 թ. Արճեշում նկարազարդել է իր պատվերով ընդօրինակված մի Ճաշոց։

ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱ *(15-րդ դ.).*— Մատենագիր։ Գրել է մի Տարեգրություն, որտեղ խոսվում է 1421—1457 թթ. դեպքերի մասին։

ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱ *(16-րդ դ.).*— Տաղերգու։ Ապրել է 16-րդ դարի վերջերին և 17-րդ դարի սկզբներին։ Գրել է մի շարք տաղեր, որոնցից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № 3651 ձեռագրում։

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ *(1907—1969).*— Բանաստեղծ։ Ծնվել է Բաղեշի գավառի Կալհոկ գյուղում (Արևմտյան Հայաստան)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետում։ Գիտական մամուլում տպագրել է հոդվածներ հայ հին գրականության տարբեր հարցերի մասին։ Առանձին երեք պրակներով լույս է ընծայել «Նյութեր 10—18-րդ դարերի հայոց գրականության պատմության» աշխատությունը, իսկ 1968-ին՝ «Հինգերորդ դարի հայ դպրությունը» ծավալուն մենագրությունը։

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ *(ծն. 1909).*— Բանաստեղծ, գրադարանավար։ Ծնվել է Ղարաքիլիսայում (այժմ՝ Կիրովական)։ 1936 թ. ավարտել է Մոսկվայի պետական գրադարանային ինստիտուտը։ Նույն տարվանից աշխատել է Հայկական ԽՍՀ լուսավորության, ապա կուլտուրայի մինիստրություններում, միաժամանակ գրադարանագիտական առարկաներ է դասավանդել տարբեր ուսումնական հաստատություններում։ Աշխատում է Հայկական ԽՍՀ ԳԱ կենտրոնական գրադարանում որպես դիրեկտորի տեղակալ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Գրադարանավարի համառոտ ձեռնարկ», «Գրքի կլասիֆիկացիայի մեթոդիկա», «Գրադարանային գործի կազմակերպումը» և այլն։

ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ *(ծն. 1924).*— Ռեժիսոր. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Թբիլիսիում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի թատերական ինստիտուտում, որի ռեժիսորական ֆակուլտետն ավարտել է 1951 թ.։ Որպես ռեժիսոր աշխատել է Ալավերդու, Արտաշատի, Լենինականի, Երևանի թատրոններում։ Բեմադրած պիեսներից են՝ «Մեծապատիվ մուրացկաններ», «Քանդած օջախ», «Մորգանի խնամին», «Անօժիտը», «Հյուրանոցի տիրուհին», «Մարի Թյուդոր», «Բրոուդի ամրոցը», «Դոն Կիխոտ» և այլն։

ՄԿՐՏՉՅԱՆ ԷԱՐԻԿ *(ծն. 1923).*— Նկարիչ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթություն ստացել է Երևանի Գեղարդտեխնիկումում և Գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել է 1953-ին։ Նույն տարվանից մասնակցել է հանրապետական, հետագայում նաև միութենական և արտասահմանյան ցուցահանդեսներին։ Գեղանկարչական գործերից են՝ «Ալավերդու գործարանը», «Ջուրը գալիս է», «Բնանկար Քաջարանից», «Լեռներ նվաճողները», «Գեղամա լեռները», «Երևկո», «Բանվորի դիմանկար», «Կոլխոզնիկի դիմանկար» և այլն։ Կատարել է գրքի ձևավորումներ։

ՄԿՐՏՉՅԱՆ ԻԴԱ (ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ ԱԴԵԼԱԻԴԱ) *(ծն. 1914).*— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Կոկանդում (Ուզբեկական ԽՍՀ)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Մոսկվայում։ 1929-ից աշխատել է Երևանի պատանի հանդիսատեսի

թատրոնում, ապա կրկին մեկնել է Մոսկվա, սովորել Ռ. Սիմոնովի հայկական թատերական ստուդիայում։ 1937 թվականից շարունակել է խաղալ Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում, իսկ 1950 թվականից՝ Երևանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում։ Լավագույն դերերից են՝ Բեատրիչն («Ոչնչից մեծ աղմուկ»), Միրաբելլա («Դնչուների բարոնը»), Ռոզսուրա («Վենետիկյան երկվորյակներ»), Թելլի («Արշին մալ այան»), Սոնա («Զար ոգի»), Լուիզա («Սեր և խարդավանք»), Կեկել («Պեպո»), Պոլինա («Սկամտավոր պաշտոն»), Ամալյա («Ավազակներ») և այլն։

ՄԿՐՏՉՅԱՆ ԼԵՎՈՆ (1865—1932).— Հրապարակախոս, հասարակական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է ծննդավայրի հայկական դպրոցում և Ռոբերտ կոլեջում, ավարտել է 1886-ին։ Մի քանի տարի աշխատել է որպես ուսուցիչ և դպրոցի տնօրեն։ Պատկանել է հնչակյան կուսակցության։ Եղել է «Հընչակ» թերթի Կ. Պոլսի թղթակիցը։ Աշխատակցել է նաև «Մասիս», «Ծաղիկ» և այլ թերթերի, նաև Պետերբուրգի «Արաքսին»՝ Առյուծ ծածկանունով։ 1895 թ. մեկնել է Աթենք, այնտեղից Եգիպտոս, մինչև կյանքի վերջը ապրել Ալեքսանդրիայում։ Վարել է տարբեր պաշտոններ, շարունակելով հրապարակախոսական հոդվածներ տպագրել արևմտահայ, արևելահայ և օտար մամուլում («Բյուզանդիոն», «Մշակ», «Դաշինք», «Պայքար», «Արև», «Լա ռեֆորմ» և այլն)։ Եղել է «Արևի» առաջին արտոնատերը։ Ունի առանձին գրքերով հրատարակություններ, ինչպես «Ամուսնական խնդիրներ», «Զինվորական պարտականություն» և այլն։

ՄԿՐՏՉՅԱՆ ԼԵՎՈՆ (ծն. 1933).— Բանասեր, բանասիրական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Ախալցխայում (Վրացական ԽՍՀ)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետի ռուսական բաժինն ավարտել է 1958 թ.։ Նույն տարվանից դասախոսում է համալսարանում։ 1973—1978 թթ. եղել է ռուսաց լեզվաբանության և թարգմանության տեսության ամբիոնի վարիչը, 1978-ից՝ ռուս գրականության ամբիոնի վարիչ, 1980-ից՝ ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետի դեկանը։ Միաժամանակ 1975—1979 թթ. եղել է Հայաստանի գրողների միության վարչության երկրորդ քարտուղարը։ 1950-ական թվականների կեսերից մամուլում տպագրել է հոդվածներ՝ թարգմանական աշխատանքի, մասնավորապես հայ շափածո գրականության թարգմանության հետ կապված հարցերի մասին։ Նրա առաջաբաններով և ծանոթագրություններով լույս են տեսել ռուսերեն մի շարք ժողովածուներ, ինչպես՝ Վ. Զվյագինցևա. «Իմ Հայաստան» (Երևան, 1963 թ., բ. տպ՝ 1969), Ս. Շերվինսկի. «Հայ պոեզիայից» (1964), «Սա Հայաստանն է. ռուս բանաստեղծները Հայաստանի մասին» (1967), «Նահապետ Քուչակի «Հարյուրումեկ հայրենը», Գր. Նարեկացու «Մատյան ողբերգությանը», «Հայ միջնադարյան դասական գրականությունը» և այլն։ Առանձին գրքերով ռուսերեն լույս ընծայած աշխատություններն են՝ «Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը» (Երևան, 1963, 1975), «Ավետիք Իսահակյանը ռուսերեն» (1964), «Բանաստեղծությունների և թարգմանությունների մասին» (1965), «Հայ պոեզիան և XIX—XX դարերի ռուս բանաստեղծները» (1966), «Բարին ընդ ձեզ» (1971), «Հարազատ գծեր» (1973), «Քաղցր է լույսը» (1977), «Բան ժամանակաց» (Մոսկվա, 1977), «Հարազատն ու մտերիմը» (1978)։ Հայերեն լեզվով լույս ընծայած գրքերն են՝ «Հայաստանի բանաստեղծը» (Երևան, 1974), «Եթե Բաբելոնում թարգմանիչներ լինեին» (1976), «Վ. Սարոյանը մոտիկից» (1978), «Պոեզիայի հասակը» (1979), «Քաղցր է լույսը» (1980), «Զրույցներ բանաստեղծի հետ» (1984), «Իմանալ ղբանա հանճարոյ» (գրականագիտական էսսեներ, 1985) և այլն։

ՄԿՐՏՉՅԱՆ ԿՐԵԿՈՒԱՐ (ծն. 1902).— Նկարիչ։ Ծնվել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, որտեղ ստացել է մասնագիտական կրթություն, աշակերտել նկարիչ Պալենին, 1930 թ. ստեղծել է իր արվեստանոցը՝ «Գալերի Կրեկուարը»։ Այդ տարիներից սկսած մասնակցել է Եգիպտոսում կազմակերպված բազմաթիվ ցուցահանդեսների, նաև եգիպտահայ նկարիչների 1945 և այլ տարիների ցուցահանդեսներին, արժանանալով հայ և օտար մամուլի («Լա բուրս էժիպսիեն», «Լա Սըմեյն էժիպսիեն», «Լե պրոդրե էժիպսիեն» և այլն) բարձր գնահատմանը։

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ծն. 1903).— Գրող, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր (1975)։ Ծնվել է Վասպուրականի Արճեշ գավառի Փայլներ գյուղում։ Առաջին համաշխարհային պատերազմի օրերին զրկվել է ծնողներից, ապաստան գտել էջմիածնի որբանոցում։ Ապա ընդունվել է Գևորգյան ճեմարան։ Բարձրագույն կրթությունն ստացել է Թբիլիսի 26 կոմիսարների անվան կոմունիստական համալսարանում, ավարտել 1926 թ., իսկ 1940 թ.՝ Երևանի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը (էքստեռն)։ 1920-ական թվականների վերջերից վարել է մի շարք պաշտոններ՝ «Աշխատանք» ամսագրի պատասխանատու քարտուղար, Հայաստանի արվեստի աշխատողների միության նախագահ, Գ. Սունդուկյանի անվան թատրոնի դիրեկտոր, Հայպետհրատի դիրեկտոր և այլն։ Խմբագրել է «Գրական թերթ», «Խորհրդային գրականություն» պարբերականները։ Ունեցել է նաև մանկավարժական գործունեություն, դասախոսել է մանկավարժական ինստիտուտում, իսկ 1969-ից՝ Երևանի պետական համալսարանում՝ պրոֆեսորի աստիճանով։ Գրական ասպարեզ է մտել Հայրենական պատերազմի տարիներին՝ ռազմաճակատից ուղարկած ակնարկներով, որոնք տպագրվել են խորհրդահայ մամուլում և 1945 թ. ամփոփվել «Նովելներ և ակնարկներ» ժողովածուում։ Հետագայում առանձին գրքերով հրատարակած երկերն են՝ «Նովելներ և ակնարկներ» (1947), «Անմահական այրին» (1957), «Հայրենի երկրում» (1963), «Անհայտ զինվորի հիշատակարանը» (գիրք 1, 1966, 1969, գիրք 2, 1973, գիրք 3, 1975)։ «Անհայտ զինվորի հիշատակարանը» (1980), «Մի հայի պատմությունը» (1986) և այլը։ Գրականագիտական աշխատություններն են՝ «Գրական դեմքեր» (1953), «Ստեփան Զորյան» (1954), «Միքայել Նալբանդյան» (հայերեն և ռուսերեն, 1955), «Ակսել Բակունց. կյանքը և ստեղծագործությունը» (1958)։

ՄԿՐՏՉՅԱՆ ՄԱՆԻԿ (1913—1984).— Բանաստեղծ։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում։ 1941 թվականից աշխատել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի խմբագրությունում։ 1944—1952 թթ. դասավանդել է Երևանի պետական համալսարանում և Հեռակա մանկավարժական ինստիտուտում։ 1954 թվականից աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում որպես ավագ գիտական աշխատող։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Նաղաշ Հովնաթան» (1957), «Հայ ժողովրդական պանդխտության երգեր (ուսումնասիրություն և բնագրեր» (1961), «Հայ ժողովրդական հեքիաթներ. հատ. 4-րդ և 9-րդ (կազմել, ծանոթագրել և առաջաբանները գրել է (1963, 1968), «Մարգիս Ապուշեխցի» (ուսումնասիրություն և բնագրեր) (1971), «Ներսես Շնորհալի. «Ողբ Եդեսիոյ» (քննական բնագիր, ծանոթագրություններ, առաջաբան) (1973), «Հայ միջնադարյան պանդխտության տաղեր (1979)։

ՄԿՐՏՉՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ (18—19-րդ դդ.).— Գրող, հրապարակախոս, խմբագիր։ Ծնվել է Շիրազում (Պարսկաստան)։ Ապրել և ստեղծագործել է Հնդկաստանում։ Եղել է Բոմբեում 1815 թ. հիմնված «Օճանասփյուռյան» մշակութային ընկերության անդամներից։ Ունեցել է կրթական, գրական գործունեություն։ Նրա անվան հետ է կապվում հայ առաջին տպագիր պիեսի՝ «Խտրադիմայ դժբողութեան»-ի խմբագրման ու հրատարակության գործը։ Վերոհիշյալ ընկերության հանձնարարությամբ վերցրել է ոմն Մատապի վերագրվող արձակ «Խտրադիման», վերածել չափածոյի, ավելացրել խոսվածքներ, ենթարկել որոշ մշակման, լույս ընծայել Կալկաթայում, 1821 թ.։ Նրա գրչին է պատկանում «Խտրադիմայի» վերջում տպագրված 135 էջանոց ընդարձակ «Հասարակախօսութիւն» աշխատությունը, որտեղ խոսվում է թատրոնի դերի ու նշանակության մասին։ 1821—1823 թթ. խմբագրել է Կալկաթայում լույս տեսած «Շտեմարան» պարբերականը։ 1831 թ. նույն քաղաքում տպագրել է «Վիկտորիա այբուբենարան» դասագիրքը, որն օգտագործվել է Հնդկաստանի հայկական դպրոցներում։

ՄԿՐՏՉՅԱՆ ՄԿՐՏԻՉ (ծն. 1941).— Բանաստեղծ։ Ծնվել է Հայկական ԽՍՀ Եղեգնաձորի շրջանի Ռինդ գյուղում։ Բարձրագույն կրթություն ստացել է Երևանի համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 1968-ին։ 1969 թվականից աշխատել է «Խորհրդային

գրող» հրատարակչությունում, 1978-ից՝ որպես ավագ խմբագիր։ Առանձին գրքերով լույս է ընծայել «Արևոտ անուրջներ» (1970), «Ցայտաղբյուր» (1973), «Ոսկե հովիտ» (1981), «Կավե սափոր» (1985) բանաստեղծությունների ժողովածուները և «Գեղանիստ» պոեմը (1977)։

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՀԵՐ (ՖՐՈՒՆԶԻԿ) (ծն. 1930).— Դերասան. ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1984)։ Մնվել է Լենինականում, որտեղ ստացել է նախնական կրթությունը։ 1943-ից մասնակցել է Տեքստիլ գործարանի ինքնագործ թատերախմբի նեկայացումներին, իսկ 1947-ից խաղացել է Լենինականի Ա. Մռավյանի անվան պետական թատրոնում, որտեղ նրա կատարած դերերից են՝ Եգոր (Բարձունքներում») Սաղաթել («Պատվի համար»), Խլեստակով («Ռևիզոր»), Տրաֆալդինո («Երկու տիրոջ ծառա») և այլն։ 1953-ին տեղափոխվել է Երևան, սովորել գեղարվեստաթատերական ինստիտուտում, միաժամանակ խաղացել Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնում։ Այստեղ նրա կատարած դերերից են՝ Հայրապետ («Նամուս»), Արամ («1905»), Եղոլպոս (համանուն պիեսում), Գվիդոն («Սրտի արատ»), Մերկուտիո («Ռոմեո և Ջուլիետա»), Պաղտասար աղբար (համանուն պիեսում), Ղաղար («Ղազարը գնում է պատերազմ»), Կարճիկյան («Գեպի ապագան»), Սերանո («Սերանո Դը Բերժրակ»), Զամբախով («Խաթաբալա») և այլն։ 1958 թվականից հանդես է եկել «Հայֆիլմի» մի շարք ֆիլմերում («01—99», «Նվագախմբի տղաները», «Եռանկյունի», «Հայրիկ», «Մենք ենք մեր սարերը», «Տղամարդիկ», «Լուսանկար», «Հուշարձան», «Տերն ու ծառան», «Խաթաբալա», «Նահապետ», «Պաղտասարը բաժանվում է կնոջից», «Զինվորը և փիղը», «Մհերը գնում է արձակուրդ» և այլն)։ Նկարահանվել է նաև «Օդեսֆիլմում» («Միածանի ֆորմուլան»), «Մոսֆիլմում» («Մի վշտանա», «26 կոմիսարներ», «Սպիտակ դաշնամուր», «Երաժշտական նովելներ», «Կովկասի գերուհին», «Միմինո», «Ունայնություն ունայնությանց» և այլն)։ «Հայրիկ» ֆիլմում կատարած դերի համար Տաշքենդի փառատոնում ստացել է մրցանակ, «Եռանկյունիի» համար՝ Հայկական ԽՍՀ պետական մրցանակ, «Միմինո» ֆիլմում կատարած դերի համար՝ միջազգային ոսկյա մեդալ։ 1984-ին նրա գլխավոր դերակատարմամբ ցուցադրվել է «Պաղտասար աղբար» հեռուստատեսային կինոֆիլմը։

ՄԿՐՏՉՅԱՆ ՆԵՐՍԵՍ (ծն. 1928).— Լեզվաբան։ Մնվել է Երևանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում։ 1961 թվականից աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում։ Մասնակցել է «Արարատյան բարբառի խոսվածքները» կոլեկտիվ աշխատության պատրաստմանը՝ տալով Ագիրբեկովի, Ախուրյանի, Գուգարքի խոսվածքների նկարագրությունը։ 1967-ից աշխատում է Հայկական ԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում որպես խնդրագիր։ Հանրապետական և միութենական գիտական մամուլում տպագրել է հոդվածներ՝ խեթերենի և այլ լեզուների հետ հայերենի ունեցած առնչությունների մասին։ Նրա բարբառագիտական աշխատություններից մի քանիսը տպագրվել են «Միքրիհիսարի պատմագիրք» (1965) և «Հուշամատյան հայ Դամիրքի» (1972) գրքերում։ Տպագրության է հանձնել «Սեմական աշխարհը և Հայաստանը» մենագրությունը։ Մասնակցել է համամիութենական և միջազգային գիտաժողովների, այդ թվում՝ 1973-ին Հունգարիայում, 1978-ին Գերմանիայում կայացած գիտաժողովներին։

ՄԿՐՏՉՅԱՆ ՆԻԿԻՏԱ (ծն. 1901).— Կոմպոզիտոր. Վրացական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ։ Մնվել է Ղազարում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թբիլիսիի կոնսերվատորիայում, ապա կատարելագործել է Մոսկվայի հատուկ դասընթացներում՝ Ռ. Մ. Գլիերի, Վ. Ա. Յուկերմանի և ուրիշ արվեստագետների ղեկավարությամբ։ Գրել է տարբեր ժանրի բազմաթիվ երկեր՝ սոնատ թավջութակի և դաշնամուրի համար, «Պատանի հայրենասերներ» բալետը, որը բեմադրվել է 1942-ին Թբիլիսիում։ Վերջին տարիների գործերից ուշագրավ է «Արուլայա Մահարի» պոեմի մոտիվներով գրված վոկալ-սիմֆոնիկ կանտատը։ 1940—1960-ական թվականներին գրել է դրամատիկական մի քանի բեմադրությունների երաժշտություն («Պաղտասար աղբար», «Նամուս», «Սամվել», «Խաթաբալա», «Վարդանանք» և այլն)։ Նրա ստեղծագործություններից մի քանիսը մրցանակներ են շահել Թբիլիսիում, Բաքվում, Երևանում, Մոսկվայում, Տաշքենդում և այլուր։ Ունեցել է նաև մանկավարժական գործունեություն։

ՄԿՐՏՉՅԱՆ ՇՈՒՐԻԿ (ծն. 1911).— Երգչուհի. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ (1954)։ Մնվել է Վանի վիլայեթի Ընձակ գյուղում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի երաժշտական ուսումնարանում։ 1937 թվականից աշխատել է Հայֆիլհարմոնիայի ժողովրդական գործիքների անսամբլում որպես մենակատար։ 1934 թ. Անդրկովկասյան ժողովուրդների արվեստի օլիմպիադայում շահել է առաջին մրցանակ, իսկ 1936-ին մասնակցել է ԽՍՀՄ ժողովուրդների ստեղծագործությունների փառատոնին և գործել շահել է առաջին մրցանակ։ Մասնակցել է Մոսկվայում կայացած հայ գրականության և արվեստի 1939 և 1956 թթ. տասնօրյակներին, ելույթներ է ունեցել Խորհրդային Միության բազմաթիվ քաղաքներում և արտասահմանյան մի քանի երկրներում։ Ժամանակակից գուսանական և ժողովրդական երգերի նրա կատարումներից շատերը վերցվել են ձայնապնակների վրա և լայնորեն տարածվել հայրենիքում ու սփյուռքահայ կենտրոններում։ Պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր դրոշի և Պատվո նշան շքանշաններով։

ՄԿՐՏՉՅԱՆ ՌԱՖԱՍ (ծն. 1944).— Երգչուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1977)։ Մնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում։ 1965 թ. մասնակցել է հանրապետական փառատոնի, արժանացել մրցանակի։ Հաջորդ տարվանից աշխատել է Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության էստրադային նվագախմբում որպես մենակատար։ 1968 թ. մասնակցել է Մոսկվայի «Երիտասարդություն» ռադիոկայանի հայտարարած մրցույթին։ Լայն ժողովրդականություն է ձեռք բերել Ա. Բաբաջանյանի, Կ. Օրբելյանի, Մ. Մավիսակյանի և այլ կոմպոզիտորների երգերի կատարմամբ։ Համերգներով հանդես է եկել Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում և արտասահմանյան երկրներում (Չեխոսլովակիա, Հունգարիա, Ֆրանսիա, Լիբանան, Սիրիա, Գերմանիա, Ամերիկա և այլն)։ Լենինականի Մոսկա քաղաքում կայացած համաշխարհային երգի փառատոնում արժանացել է մրցանակի։

ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱՄՎԵԼ (1901—1951).— Կինոդերասան։ Մնվել է Թիֆլիսում։ Կրթությունն ստացել է Ներսիսյան դպրոցում։ Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատումից հետո աշխատել է Հայաստանում։ Հայկական առաջին կինոֆիլմերից «Նամուսում» կատարել է Սեյրանի դերը։ Ապա Մուրադի դերով հանդես է եկել «Զար ոգի», Սամվելի դերով՝ «Ով է մեղավորը», Սպայի դերով՝ «Կարոտ» և այլ ֆիլմերում։ «Քաջ Նազարում» կատարել է Վարժապետի դերը, «Լեռնային արշավում»՝ Դանիելյանի։

ՄԿՐՏՉՅԱՆ ՍՅՈՒԶԱՆ (1898—1984).— Նկարչուհի։ Մնվել է Կարինում (Արևմտյան Հայաստան)։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի Հովնանյան դպրոցում և գեղարվեստի ուսումնարանում։ Ավարտելուց հետո զբաղվել է ուսուցչությամբ։ 1925 թ. մեկնել է Լոնդոն՝ հարազատների մոտ։ Նույն տարում ընդունվել է Բրիտանական կոմկուսի շարքերը։ Լոնդոնից աշխատակցել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթին։ Վերադառնալով Ռուսաստան, աշխատել է Լենինգրադում, ապա Ս. Մ. Կիրովի հանձնարարությամբ գործուղվել է Մոսկվա, աշխատել Կոմինտերնում։ 1927 թ. տեղափոխվել է Երևան, աշխատել կենսագործկոմին կից կանանց կենցաղը բարելավող հանձնաժողովում, 1931—1934 թթ.՝ Դիլիջանում, ապա՝ Մարտունիում։ 1940-ից սկսած՝ զուգահեռ զբաղվել է նկարչությամբ. մասնակցել է մի քանի ցուցահանդեսների, ունեցել երեք անհատական ցուցահանդես։

ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՂՈՄՈՆ (ծն. 1913).— Մանկական գրող։ Մնվել է Արտաշատի շրջանի Գեղաշեն գյուղում։ 1941 թ. ավարտել է Երևանի ուսուցչական ինստիտուտը։ 15 տարի որպես ուսուցիչ, ուսմասվար կամ դպրոցի դիրեկտոր աշխատել է Կոտայքի, Վեդու և Ազիզբեկովի շրջաններում։ 1956-ից աշխատել է «Պիոներ» ամսագրի խմբագրությունում։ Առանձին գրքերով լույս ընծայած ժողովածուներն են՝ «Ուր գարուն է միշտ» (1947), «Առվակ» (1956), «Հայրենի դողանջներ» (1958), «Շուշանի երազը» (1958), «Գարնանային հրավեր» (1960), «Անթառամ ծաղիկներ» (1975) և այլն։ Ռուսերենից կատարել է թարգմանություններ։

ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ (ծն. 1925).— Գրականագետ. բանասիրական գիտությունների դոկ-

տոր (1984)։ Ծնվել է Հայաստանի Սարդարապատ գյուղում (այժմ՝ Հոկտեմբերյանի շրջան, Հոկտեմբեր)։ Բարձրագույն կրթություն ստացել է Երևանի պետական համալսարանում։ Վարել է պատասխանատու պաշտոններ՝ ՀԼԿԵՄ Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղար, Հայպետհրատում գլխավոր խմբագիր, «Հայֆիլմ» կինոստուդիայում դիրեկտոր, Մամուլի պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ, «Հայաստան» հրատարակչության դիրեկտոր և այլն, իսկ 1974-ից՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեկտոր։ 1952-ին պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ 1983-ին պաշտպանել է դոկտորական դիսերտացիա։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Շիրազի պոեզիայի պոետիկան» (Երևան, 1958), «Գրողը աշխարհի արձագանքն է» (1968), «Դերենիկ Դեմիրճյանի «Վարքն է» (1968), «Դերենիկ Դեմիրճյան» դասանքը» (1977) և «Դերենիկ Դեմիրճյան» (ռուսերեն, 1982)։

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԱՆԱՀԻՏ *(1904—1970)*.— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստուհի (1961)։ Ծնվել է Թիֆլիսում։ Կրթություն ստացել է տեղի Գայանյան օրիորդաց դպրոցում, որն ավարտելուց հետո մեկնել է Մոսկվա, սովորել Մեյերհոլդի անվան պետական փորձարարական թատերական ստուդիայում (1925—1928)։ Մինչև 1934 թ. Լենինականում աշխատելուց հետո տեղափոխվել է Երևան և այդ տարվանից մինչև կյանքի վերջը խաղացել Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնում։ Տարիների ընթացքում նրա կատարած տասնյակ դերերից են՝ Վասսա Ժելեզնովա (համանուն պիեսում), Զեյնաբ («Դավաճանություն»), Գլորիա («Աֆրոդիտեի կղզին»), Սոդոմե («Պաղտասար աղբար»), Դեզդեմոնա («Օթելլո»), Գերտրուդ («Համլետ»), Սալոմե («Էլի մեկ զոհ»), Խամփերի («Խաթաբալա»), Տատյանա («Բեկում»), Վասիլիսա («Հատակում»), Մարգարիտ («Պատվի համար»), Լեդի Միլֆորդ («Սեր և խարդավանք») և այլն։

ՄՀՈՅԱՆ ՇԱՔՐՈ *(ծն. 1930)*.— Պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Արագածի շրջանի Ալագյազ գյուղում։ Բարձրագույն կրթություն ստացել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, որի պատմության ֆակուլտետն ավարտել է 1952-ին։ Աշխատել է որպես ուսուցիչ, ապա՝ «Ռյա թաղա» թերթի խմբագրությունում՝ իբրև բաժնի վարիչ։ 1960-ից աշխատում է Հայկական ԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտում, նախ իբրև գիտաշխատող, 1981-ից ընդգծիտության բաժնի վարիչ։ 1963 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա, 1978-ին՝ Մոսկվայում, դոկտորական՝ «Քուրդ ժողովրդի ազգային ինքնավարության պրոբլեմը իրաքյան հանրապետությունում» թեմայով, որը տպագրվել է 1977 թ. և թարգմանվել է արաբերեն, լույս տեսել Բեյրութում։ Առանձին գրքերով լույս ընծայած մյուս աշխատություններն են՝ «Քրդական ազգային ազատագրական շարժումներն Իրաքում, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» (Երևան, 1965), «Ազգային անկախության համար պայքարը հարավային Քուրդիստանում» (1970), 1968-ից Երևանի պետական համալսարանում դասավանդում է Մերձավոր և Միջին Արևելքի նորագույն պատմություն։

ՄՃՆԳԼՈՎ ՄԻՀՐԱՆ *(ծն. 1928)*.— Փիլիսոփա. փիլիսոփայական գիտությունների դոկտոր (1968), ՌԽՖՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1978)։ Ծնվել է Թիֆլիսում։ Բարձրագույն կրթություն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի միջազգային հարաբերությունների ֆակուլտետն ավարտել է 1953 թ.։ Աշխատել է Մոսկվայում, 1960—1976 թթ. որպես «Կոմունիստ» տեսական ամսագրի փիլիսոփայության և իրավունքի բաժնի վարիչ։ Մոսկվայի համալսարանի պատմական մատերիալիզմի ամբիոնի պրոֆեսոր, 1976-ից՝ ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ։ ԳԴՀ-ում լույս տեսնող Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի երկերի լիակատար ժողովածուի հրատարակության խմբագրական հանձնաժողովի անդամ է։ Պատմական մատերիալիզմի, գիտական աթեիզմի, գիտական կոմունիզմի հարցերին նվիրված հոդվածներ է տպագրել մամուլում և գիտական ժողովածուներում։ Առանձին գրքերով լույս տեսած աշխատություններն են՝ «Ժամանակակից կաթոլիկության էվոլյուցիան» (Մոսկվա, 1967), «Կաթոլիկություն» (2-րդ հրատ. 1974), «Ապրելակերպը և գաղափարական պայքարը» (Երևան, 1977) և այլն։

ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ *(1886—1925)*.— Կուսակցական, պետական գործիչ, գրականագետ։ Ծնվել է Նոր Նախիջևանում։ Նախնական կրթությունն ստացել է տեղի ս. Խաչ եկեղեցու ժխական դպրոցում, ապա սովորել է Նոր Նախիջևանի թեմական դպրոցում, ավարտել 1903-ին, ուսումը շարունակել Մոսկվայի Լազարյան ճեմարանում։ Այդ տարիներից ընդգրկվել է հեղափոխական շարժումների մեջ, մասնակցել է 1905 թ. ուսանողական ցույցերին։ 1906 թ. ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը։ 1907—1908 թթ. աշխատել է Բաքվում՝ Մա. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ա. Ջափարիձեի և ուրիշների հետ։ 1909-ից սովորել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, ավարտել 1911-ին։ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից զորակոչվել է բանակ, որտեղ շարունակել է հեղափոխական աշխատանքը։ Փետրվարյան հեղափոխությունից հետո ծառայել է Բելոռուսիայում։ Ընտրվել է ռազմաճակատի զինվորական կոմիտեի անդամ, ապա՝ բոլշևիկյան ֆրակցիայի ղեկավար։ Որպես Արևմտյան ռազմաճակատի և Բելոռուսիայի բոլշևիկների պատգամավոր՝ մասնակցել է ՌՍԴԲԿ VI համագումարին։ 1917 թվականի սեպտեմբեր ամսին ընտրվել է ՌՍԴԲԿ Հյուսիս-արևմտյան մարզային կոմիտեի նախագահ։ Ընտրվել է Մինսկում ստեղծված Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի ռազմ-հեղկոմի նախագահ, ապա՝ Արևմտյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար։ 1918 թ. գարնանը ղեկավարել է Պոլոցկի ռազմաճակատի գործողությունները։ 1919 թ. սկզբին ընտրվել է Բելոռուսիայի կենտգործկոմի և կոմկուսի կենտրոնական բյուրոյի նախագահ։ Նույն տարվա մարտ ամսից աշխատել է Մոսկվայում, որպես ՌԿ(բ)Կ Մոսկվայի քաղաքային ու նահանգային կոմիտեների առաջին քարտուղար։ 1920 թ. ամռանը մասնակցել է Անտանտի զորքերի դեմ մղվող մարտերին, որպես Արևմտյան ռազմաճակատի քաղվարչության պետ։ 1921 թվականի սկզբից աշխատել է Հայաստանում իբրև նորաստեղծ Խորհրդային Հայաստանի կառավարության նախագահ և ռազմական գործերի ժողկոմ։ Անդրֆեդերացիայի կազմավորումից հետո (1922) եղել է ֆեդերացիայի գործադիր կոմիտեի նախագահներից, ապա՝ կուսակցության Անդրկովկասյան երկրային կոմիտեի առաջին քարտուղարը։ Կուսակցական, քաղաքական, պետական աշխատանքներին զուգընթաց ունեցել է գրական, բանասիրական բեղուն գործունեություն։ Հայ մամուլում («Մշակ», «Սոցիալ-դեմոկրատ», «Մարտակոչ», «Խորհրդային Հայաստան», «Նորք» և այլ պարբերականներում տպագրել է բազմաթիվ հոդվածներ, օգտագործելով Ալ. Մարտունի գրական ծածկանունը։ Աշխատակցել է տասնյակ ռուսերեն թերթերի, որոնց թվում՝ «Պրավդա», «Իզվեստիա», «Զվեզդա», «Բուրեվեստնիկ», «Զարյա Վոստոկա» և այլն։ 1919 թ. Մոսկվայում լույս է տեսել նրա «Միքայել Նալբանդյան» աշխատությունը, որը հետագայում, մասնակի խմբագրմամբ վերահրատարակվել է 1923-ին և ըստ էության առաջին մարքսիստական հետազոտությունն է հայ մեծ հեղափոխական դեմոկրատի մասին։ Նա հոդվածներ է տպագրել Հովհաննես Հովհաննիսյանի, Ալեքսանդր Ծատուրյանի մասին։ 1923 թ. Թիֆլիսում լույս է ընծայել «Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը» գիրքը։ Սրանցից բացի՝ հրատարակել է աշխատություններ քաղաքական հարցերի նվիրված, ինչպես՝ «Ազգային հարցի առթիվ» (Մոսկվա, 1919), «Սոցիալիստ հեղափոխականները» (Մոսկվա, 1919), «Բելոռուսիայի կոմունիստական կուսակցության առաջին համագումարը» (ռուսերեն, Մինսկ, 1919), «Գաղութահայ կուսակցությունները» (Թիֆլիս, 1923) և այլն։ Եղել է կուսակցության VI—XIII համագումարների պատգամավոր, XII—XIII համագումարներում ընտրվել է ՌԿ(բ)Կ ԿԿ անդամության թեկնածու։ Եղել է ԽՍՀՄ կենտգործկոմի նախագահության, ԽՍՀՄ Ռազմահեղափոխական խորհրդի անդամ։ 1957 թ. Երևանում լույս է տեսել նրա «Ընտիր երկերի» միհատորյակը հայերեն, իսկ 1965-ին՝ ռուսերեն ժողովածուն։

ՄՅԱՍՆԻԿՅԱՆ (ՄՅԱՍՆԻԿՈՎ) ԱՍԱՏՈՒՐ *(ծն. 1913)*.— Նկարիչ. գրաֆիկ։ Ծնվել է Նոր Նախիջևանում։ Մասնագիտական կրթություն ստացել է Մոսկվայի Սուրիկովի անվան գեղարվեստական ինստիտուտում։ 1939 թվականից մասնակցել է ցուցահանդեսների՝ Մոսկվայում, Երե-

վանում, Սոֆիայում և այլ քաղաքներում։ Հիմնականում զբաղվել է վիմագրական էստամպներով։ Նկարազարդել է բազմաթիվ գրքեր։ Կատարել է բնանկարներ՝ Հայաստանից և Ղրիմից։ Նրա գործերից նմուշներ կան Մոսկվայի Պուշկինի անվան թանգարանի գրավչուրային նկարների բաժնում և Սիմֆերոպոլի թանգարանում։

ՄՅՈՒՀԵՆՏԻՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(1810—1891).*— Փորագրիչ-արվեստագետ, երաժշտագետ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է հանրակրթական և երաժշտական ուսումը, աշակերտել հայտնի երաժշտագետ Համբարձում Լիմոնճյանին։ Եղել է լավ դաշնակահար։ Որոշ ժամանակ իբրև գրիչ աշխատել է Կուսկունջուկ Թաղամասի հայոց եկեղեցում։ Այս շրջանում գրել է հետազոտություն արևելյան նոտագրության մասին, սակայն չի կարողացել լույս ընծայել։ Մի հատված տպագրվել է Թեոդիկի «Ամենուն տարեցույցում» (1914)։ Սրագրել է հայկական եկեղեցական երաժշտությունը տպագրել հայկական խազերով, պատրաստել է այդ խազերի համար տպարանական մայրեր (մատրիցաներ)։ 1839 թվականից ամբողջովին նվիրվել է տպագրական տառատեսակների ստեղծման, ձուլման, տպագրության աշխատանքին։ 1840 թ. պողպատի վրա փորագրված տառերով տպագրել է մի օրացույց՝ 100 000 տպաքանակով, որն անանխընթաց երևույթ է եղել հայ իրականության համար։ Աստիճանաբար կատարելագործելով տպագրական արվեստը, գյուրացրել է հայկական տառերի ձուլումը։ 1843 թ. հրավիրվել է Թուրքական պետական տպարան՝ Թուրքերեն տառատեսակներ պատրաստելու, ձուլելու առաջարկով։ Նպաստավոր պայմաններով հորինել է մի քանի տեսակ ճաշակավոր արաբերեն տառեր, ձուլել դրանք տարբեր չափերով։ Այդ տառերը մեծ հեղաշրջում են առաջացրել Թուրքական տպագրական արվեստում։ Դրանք, այնուհետև, մինչև 1928 թվականը, այսինքն մինչև արաբերենի փոխարեն լատիներեն տառերի ընդունումը, օգտագործվել են և կոչվել Մյուհենդիսյան տառեր։ Ապա, մեծ դժվարությամբ բաց է արել սեփական տպարան, ձուլել է բազմատեսակ տառեր՝ հայերեն և Թուրքերեն, տպագրել գրքեր, թերթեր։ 1847 թ. հրատարակել է իր հնարած և ձուլած տառատեսակները պարունակող մի գրքույկ, «Հայտարարություն վասն նորակերտ տառից» խորագրով։ Թուրքական կառավարությունը առաջարկել է նրան՝ գծագրել և պատրաստել 250, 500 և 1000 զուգուշանոց թղթադրամի կաղապարներ, որոնցով տպագրվել են այդ թղթադրամները միլիոնավոր տպաքանակով։ Նրա հորինած հայերեն տառատեսակները տարվել են տարբեր քաղաքներ, բերվել նաև Թիֆլիս։ Թուրքերը նրան համարել են իրենց Գուտենբերգը։

ՄՅՈՒՀԵՆՏԻՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ *(1895—1952).*— Դիրիժոր, ջութակահար։ Ծնվել է Կ. Պոլսում։ Մասնագիտական կրթություն ստացել է հայտնի ջութակահար Հ. Մինասյանի մոտ։ 1919-ից ջութակի դասեր է տվել Կ. Պոլսի դպրոցներում և անհատական կարգով։ 1923-ին իր աշակերտներից ստեղծել է սիմֆոնիկ նվագախումբ, որը նրա ղեկավարությամբ գործել է մոտ 20 տարի։ Կազմել է ջութակի ուսուցման ձեռնարկ։ Իր ուսուցման մեթոդն ամփոփել է «Etudes déxtentions» ֆրանսերեն գրքում։

ՄՆԱԿՅԱՆ ԱԶՆԻՎ *(1866—?).*— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ 1885 թվականից խաղացել է Մ. Մնակյանի թատերախմբում։ Աչքի է ընկել մասնավորապես դաժան, գոռոզ կանանց դերերում։ Լավագույն դերերից են եղել՝ Օլիմպ («Վրեժխնդիր մայրը»), Ժանն («Հացագործ կինը»), Մաբի («Նախանձոտը»), Ռոզալի («Կարմիր կամուրջի ոճիրը»), բոլորն էլ Եվրոպական մելոդրամաներում։

ՄՆԱԿՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ *(1837—1920).*— Դերասան, ռեժիսոր։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթություն։ 1856-ից մասնակցել է խաղադյուղում կազմակերպված հայերեն ներկայացումներին, իսկ 1861-ից խաղացել է «Արևելյան թատրոնում», այդ խմբի առաջին ներկայացումում՝ «Երկու հիանալի ներում»՝ բացառիկ հաջողությամբ կատարելով Մարշալի կենտրոնական դերը։ Հինգ տարի խաղացել է այդ խմբում, նրա հետ եղել Զմյուռնիայում, արժանանալով հայ և օտար մամուլի բացառիկ հիացմունքին։ 1872 թ. վերադարձել է Կ. Պոլիս, շարունակել բեմական կյանքը։ Նախ խաղացել է Օրթագյուղում, Մաղաքյանի թատերախմբում, ապա՝ Հ. Վարդովյանի խմբում, մինչև 1878 թ., վերջինիս մելոդրամատիկ խաղացանկում կատարելով գլխավոր դերերը։ 1878 թ. միացել է Մ. Պենկլյանի խմբին, մասնակցել

Ադրիանապոլսում նրա կազմակերպած օպերետային ներկայացումներին։ 1880 թ. եկել է Թիֆլիս, երկու թատերաշրջան խաղացել Թիֆլիսի հայ բեմում, արժանանալով Պ. Ադամյանին հավասար չերմ ընդունելության, հատկապես դասական դերերում, ինչպես՝ Հայր Դյուվալ («Կամելիաղարդ կինը»), Ֆամուսով («Խելքից պատուհաս»), Կլավդիոս («Համլետ»), Շայլոկ («Վենետիկի վաճառականը»)։ Վերադառնալով Կ. Պոլիս, 1884 թ. միացել է Մ. Պենկլյանի օպերետային խմբին, որպես ռեժիսոր և առաջին դերակատար։ Խումբը նրա մասնակցությամբ փայլուն հաջողություն է ունեցել Եգիպտոսում, որտեղ արժանացել է եգիպտական մամուլի գրվատանքին։ Վերադառնալով Կ. Պոլիս, Վարդովյանի փակված թատրոնի ուժերով ստեղծել է «Օսմանյան դրամատիկ» թատերախումբը և մոտ 30 տարի ղեկավարել այն, տալով միայն Թուրքերեն ներկայացումներ, քանի որ հայերեն ցուցադրումները արգելված էին։ 1892—1893 թատերաշրջանում նրան հաջողվել է տալ հայերեն մի քանի ներկայացում, այդ թվում Պ. Դուրյանի «Թատրոն կամ Թշվառներ» դրաման։ Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո (1908) նորից անցել է մայրենի բեմ։ Ունեցել է ռեժիսորական երկարամյա գործունեություն, բեմադրել է տասնյակ պիեսներ, մամուլում տպագրել հոդվածաշարք իր ռեժիսորական ըմբռնումների մասին։ Ֆրանսերենից թարգմանել է բազմաթիվ պիեսներ («Աղքատ երիտասարդը», «Անծանոթը», «Դարբնոցապետը», «Դրամօժիտը», «Լիոնի սուրհանդակը» և այլն), որոնք բոլորն էլ բեմադրվել են հայ թատրոնում։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ *(ծն. 1936).*— Կոմպոզիտոր։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթություն ստացել է Լենինգրադի կոնսերվատորիայում, որի ստեղծագործական դասարանն ավարտել է 1961-ին, ասպիրանտուրան՝ 1964-ին։ Հաջորդ տարվանից աշխատել է նույն կոնսերվատորիայում, նախ իբրև դասախոս, 1973-ից՝ տեսական-կոմպոզիտորական ֆակուլտետի դեկան։ Հորինել է տարբեր ժանրի բազմաթիվ երկեր՝ սիմֆոնիաներ, պոեմ՝ Կամոյի հիշատակին, երեք պիես երգեհոնի համար, երգեր, խմբերգեր՝ Հովհ. Թումանյանի, Յա. Դոլյակովի և այլոց տեքստերով։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ *(1912—1983).*— Բանաստեղծ, պատմական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում։ 1928—1932 թթ. սովորել է Վաղարշապատի երկրորդ ատիճանի դպրոցում, ապա՝ Թբիլիսիի գյուղատնտեսական ինստիտուտում։ Ուսանողական տարիներից գրել է բանաստեղծություններ, որոնք տպագրվել են մամուլում Ասատուր Շեմս գրական անունով, նաև ամփոփվել առանձին գրքույկներում՝ «Հանցանք», «Բանաստեղծություններ» և այլն։ 1940 թվականից աշխատել է Երևանի Մատենադարանում։ 1942—1945 թթ. ծառայել է Խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո շարունակել է աշխատել նույն հաստատությունում, նախ իբրև գիտաշխատող, հետագայում՝ բաժնի վարիչ։ 1959 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա, 1964 թ.՝ դոկտորական՝ «Հայկական զարդարվեստը» թեմայով։ Գիտական մամուլում և ժողովածուներում տպագրել է ծավալուն հետազոտություններ, որոնցից է Գալուստ Շերմազանյանի «Նկարագրություն ինչ-ինչ գործոց Կարապետ եպիսկոպոսի» երկի տեքստի հրապարակումը (Մատենադարանի Բանբեր, № 2, 1951)։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Նաղաշ Հովնաթան, բանաստեղծություններ» (Շ. Նազարյանի համատեղ աշխատասիրությամբ) (Երևան, 1951), «Հայկական զարդարվեստ» (1955), «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» (1956), «Պաղտասար Դպիր, Տաղիկներ» (հեղինակակից Շ. Նազարյան, 1958), «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը» (1966, նույնը ռուսերեն՝ 1969), «Գրիգոր Տաթև — Բանաստեղծություններ և պոեմներ» (1972), «Հայ միջնադարյան հանելուկներ» (1980) և այլն։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ *(1911—1984).*— Պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր (1951)։ Ծնվել է Աշտարակի շրջանի Բյուրական գյուղում։ 1931—1934 թթ. սովորել է Կոմունիստական համալսարանում, 1937—1940 թթ.՝ Հայկական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում։ 1938—1953 թթ. վարել է խմբագրական և կուսակցական պատասխանատու պաշտոններ։ 1953 թվականից աշխատել է ԳԱ պատմության ինստիտուտում, միաժամանակ Մարքսիզմ-լենինիզմի ինստի-

տուտի հայկական ֆիլիալում, ապա կրկին պատմության ինստիտուտում։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատությունները են «Հայ ռազմիկների հերոսական տարեգրությունները» (Երևան, 1947), «Գերմանաթուրքական գործակալության ձախողումը Կովկասում» (1948), «Ամերիկյան ագրեսորների և նրանց գործակալների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատմությունը (1912—1921)» (1953), «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում» (1954), «Ալեքսանդր Մյասնիկյան» (1955), նույնը ռուսերեն՝ 1957, «Խորհրդային Ռուսաստանի պատվիրակները Հայաստանում» ռուսերեն, (1959), «Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները» (1961), «Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը (1963), «Կոմունիստական պարտիան հայ ժողովրդի ազատարարն է» (1964), «Հայ ժողովրդի ողբերգությունը» (1965), «Հոկտեմբերի բարիկադների վրա» (1967), նույնը ռուսերեն, (1973), «Լենինը և ազգային հարցի լուծումը ԽՍՀՄ-ում» (1970), «Մարշալ Բագրամյան» (1978), ինչպես և մի շարք բրոշյուրներ։ Մասնակցել է հայ ժողովրդի խորհրդային շրջանի պատմության և Հայաստանի Կոմունիստական կուսակցության պատմության ստեղծմանը, գրելով մի քանի գլուխներ։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԴԵՎՈՐԴ *(ծն. 1923).*— Նկարիչ։ Ծնվել է Թբիլիսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թբիլիսիի գեղարվեստների ակադեմիայում, ավարտել 1951 թ.։ Հաջորդ տարվանից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների։ 1965 թվականից աշխատում է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի գծանկարի ամբիոնում, 1977 թվականից որպես դոցենտ։ Լավագույն գործերից են՝ «Մեծ գեղքերի նախօրյակին», «Հին Թբիլիսը», «26 կոմիսարների գնդակահարությունը», «Մեսրոպ Մաշտոց», «Սայաթ-Նովա» և այլն։ Ձևավորել է մանկական մի շարք գրքեր։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԷԼՎԻՐԱ *(ծն. 1944).*— Բալետի մենակատար. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի պարարվեստի ուսումնարանում, ավարտել 1963 թ.։ 1965 թվականից պարում է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում։ Կատարած դերերից են՝ Ժիզելլ, Ջուլիետա, Մոխրոտ («Համանուն բալետներում»), Էզմեռալդա («Սպարտակ»), Խումար («Անտունի»), Օդետա-Օդիլիա («Կարապի լիճը»), Կիտրի («Դոն Կիխոտ»), Ֆրանչեսկա («Ֆրանչեսկա դա Ռիմինի») և այլն։ Հյուրախաղերով եղել է Իրաքում, Լիբանանում, Գերմանական Ֆեդերատիվ Հանրապետությունում և այլուր։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ *(1906—1978).*— Հնագետ-պատմաբան։ Ծնվել է Կարսի նահանգի Բագրաթան գյուղում։ 1930 թվականից սովորել է Երևանի պետական համալսարանում, որի լեզվագրական ֆակուլտետն ավարտել է 1933 թ.։ Երկար տարիներ աշխատել է Հայաստանի պատմության թանգարանում որպես հնագիտության բաժնի վարիչ։ Ղեկավարել է Հայաստանի տարբեր շրջաններում (Ջրառատ, Ցամաքաբերդ, Բատարդեշար, Վարդենիս, Սևան, Քաղսի և այլն) պեղումներ կատարող արշավախմբերը, որոնց վերաբերյալ ուշագրավ հաղորդումներ է տպագրել հայ և ռուսական մամուլում, մասնավորապես Լճաշենի պեղումների մասին։ Մասնակցել է Կարմիր բլուրի, Դվինի, Գառնիի պեղումներին։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Խոսում են հուշարձանները» (Երևան, 1968), «Արևելապաշտության հետքերը հին Հայաստանում» (1948) և այլն։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ *(ծն. 1922).*— Նկարիչ-գծագրող։ Ծնվել է Էջմիածնի շրջանի Ներքին Զեյվա գյուղում։ 1936 թվականից որպես գրաշար աշխատել է Երևանի առաջին տպարանում, 1941—1945 թթ. ծառայել է Խորհրդային բանակում։ 1946—1949 թթ. աշխատել է գյուղատնտեսության մինիստրությունում որպես գծագրող, 1949 թվականից՝ Պետհրատում իբրև գրքերի ձևավորող նկարիչ։ 1950 թվականից նվիրվել է տպագրական տառատեսակների ստեղծման գործին։ Նույն տարվանից մասնակցել է նոր տառատեսակների ստեղծման համար հայտարարված մրցանակաբաշխություններին և շահել մրցանակներ։ Նրա գծագրած նոր տառատեսակներից մի քանիսը 1958—1970 թթ. ընդունվել են պետական մարմինների կողմից և դրվել գործածության մեջ, ինչպես՝ «Մովսիսյան նոր», «Մնացականյան», «Աստղ», «Զվարթնոց», «Այբբենարան», «Հանրագիտարան», «Լրագրային» և այլ տառատեսակները։

Առանձին գրքերով լույս ընծայած աշխատությունները են՝ «Հայկական տպագրական և գեղարվեստական տառատեսակները» (Երևան, 1955), «Շենքերի ներքին գունազարդումը» (1964), «Հայկական տառատեսակները» (ալբոմ, 1973)։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՄԱՆՈՒԿ *(ծն. 1934).*— Գրող։ Ծնվել է Երևանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում։ 1976 թվականից աշխատել է Հայկական ԽՍՀ հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեում որպես գրական-գեղարվեստական հաղորդումների գլխավոր խմբագիր։ Առանձին գրքերով լույս ընծայած գործերն են՝ «Մեծ քաղաքի աղմուկը» (Երևան, 1962), «Հալոցք» (1966), «Երկուշաբթիից երեքշաբթի» (1968), «Նահանջ տարի» (1974), «Հեռավոր օրերի կանչը» (1983) և այլն։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՄԱՐԿ *(ծն. 1932).*— Բալետմեյստր։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Մոսկվայի պետական թատերական ինստիտուտում (ԳԻՏԻՍ), որն ավարտելուց հետո տեղափոխվել է Պետրոզավոդսկ, բեմադրել Կարա Կարաևի «Ամպրոպի սրահետով» բալետը։ Դեռևս ուսանողական տարիներին Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան թատրոնում բեմադրել է «Փիզելլը»։ Հետագայում բեմադրել է Էդ. Հովհաննիսյանի «Հավերժական կուռք» և այլ բալետներ։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ *(1923—1986).*— Երգիչ. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Երևանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում։ Երգել է փոքր տարիքից։ Ա. Մեքանգուլյանը նրան կապել է ռադիոյի և հեռուստատեսության ժողովրդական գործիքների անսամբլի հետ, որտեղ նրա կատարմամբ ձայնագրվել է Դ. Ղազարյանի «Մի սիրտ ունեմ, ընքուշ, բարի» երգը։ Հետագայում հարստացրել է երգացանկը նոր երգերով՝ «Առանց սերի, առանց յարի», «Կարմիր վարդեր», «Համեստ աղջիկ», «Ով սիրուն սիրուն», «Անուշ յար ջան» և այլն։ Նրա անունը ավելի է տարածել «Սայաթ-Նովա» հեռուստատեսային բեմադրությունը, որտեղ հանդես է եկել Սայաթ-Նովայի երգերի կատարմամբ։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՊԵՏՐՈՍ *(1867—1933).*— Հրապարակախոս-խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ։ Ծնվել է Գանձակում (այժմ՝ Կիրովաբադ)։ 1890-ական թվականների վերջերից աշխատել է Թիֆլիսում։ Մասնակցել է բանվորական շարժումներին, եղել է Հայ բանվոր հեղափոխականների ասոցացիայի, նրա օրգան «Ազատ Հայաստան» պարբերականի խմբագրության կազմում՝ Ս. Խանոյանի, Ա. Խումարյանի հետ միասին։ Հետագայում աշխատակցել է «Հոսանք», «Պայքար» (1917), «Բանվորի խոսք» (1918), «Սոցիալ-դեմոկրատ» (1917) թերթերի։ Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո գործել է Բաքվում, որտեղ էլ աշխատակցել է «Կոմունիստ» թերթին։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ *(ծն. 1920).*— Նկարիչ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստի ուսումնարանում և Լենինգրադի գեղարվեստների ակադեմիայում։ Ունեցել է անհատական ցուցահանդես։ Լավագույն գործերից են՝ «Սասունցի Դավթի թոռը», «Գնդապետ Մադաթյանը գերում է գերմանական շտաբը», «Փոթորիկից հետո», «Բերքահավաքը Արարատյան դաշտում», «Գյուղի առավոտը», «Հերոսուհին», «Խաղողաքաղ», «Զիարշավ» և այլն։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍԻԼՎԱ *(ծն. 1923).*— Քանդակագործ։ Ծնվել է Նոր Բայազետում (այժմ՝ Կամո)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում և Մոսկվայի Վ. Սուրիկովի անվան գեղարվեստական ինստիտուտում, սակայն չավարտած՝ տեղափոխվել է Երևան, սովորել Գեղարվեստական ինստիտուտում, ավարտել 1950 թ.։ Լավագույն գործերից են՝ «Բանվոր Կ. Սարգսյանի դիմաքանդակը», «Վ. Փափազյանը Օթելլոյի դերում», դերասան Գ. Գարբիելյանի կիսանդրին, «Ա. Գրիբոյեդով» և այլն։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍՏԵՓԱՆ *(ծն. 1917).*— Ճարտարապետ. Ճարտարապետական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Նոր Բայազետում (այժմ՝ Կամո)։ 1934 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը։ 1941—1946 թթ. ծառայել է Խորհրդային բանակում։ 1946 թ. վերջին ըն-

գունվել է Հայկական ԽՍՀ ԳԱ ասպիրանտուրան՝ Հայկական ճարտարապետության պատմության գծով։ Լենինգրադի գեղարվեստների ակադեմիայում 1950 թ. պաշտպանել է թեկնածուական, 1965 թ.՝ դոկտորական դիսերտացիա՝ «Սյունիքի ճարտարապետությունը 4—14-րդ դդ.» թեմայով։ 1950 թվականից աշխատում է Հայկական ԽՍՀ ԳԱ-ի արվեստի ինստիտուտում, նախ որպես ավագ գիտաշխատող, իսկ 1965 թվականից որպես բաժնի վարիչ։ Մասնակցել է Խորհրդային Միությունում և արտասահմանյան տարբեր երկրներում, այդ թվում Իտալիայի Միլան քաղաքում կայացած գիտաժողովների։ Հանդես է եկել հայ ճարտարապետության պատմությանը նվիրված զեկուցումներով։ Գիտական մամուլում և ժողովածուներում տպագրել է տեսական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հայկական պալատական ճարտարապետությունը» (Երևան, 1952, ռուսերեն), «Հայկական գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը» (1956), «Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը» (1960), «Հայկական ճարտարապետությունը 6—11-րդ դարերում» («Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» գրքում, 1963), «Հաղբատ» (իտալերեն, Միլան, 1968, Ալպագո Նովելլոյի հեղինակակցությամբ), «Նիկողայոս Մառը և հայկական ճարտարապետությունը» (1969), «Խորհրդային Հայաստանի ճարտարապետական հուշարձանները» (Լենինգրադ, 1970, ռուսերեն, Ն. Ստեփանյանի հեղինակակցությամբ), «Զվարթնոց» (Մոսկվա, 1971, ռուսերեն), «Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները» (1971), «Երևանը և նրա շրջակայքը» (ճարտարապետական հուշարձաններ, 1971), «Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը 9—14-րդ դարերում» (1976), «Վարպետաց վարպետ» (1982) և այլն։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱԶԳԵՆ *(ծն. 1915).*— Գրականագետ։ Ծնվել է Ադրբեջանի Գետաշեն գյուղում (այժմ՝ Ադրբեջանական ԽՍՀ Խանլարի շրջանի Ջայբենդ)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Լենինգրադի օտար լեզուների ինստիտուտում, որի ֆրանսերենի ֆակուլտետն ավարտել է 1939-ին։ Ապա շարունակել է ուսումը նույն ինստիտուտի ասպիրանտուրայում։ 1941—1946 թթ. ծառայել է խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո աշխատել է Հայկական ԽՍՀ արտաքին գործերի մինիստրությունում և Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերությունում։ 1948—1953 թթ. խմբագրել է «Գրական թերթը», 1958—1961 թթ. «Խորհրդային գրականություն» ամսագիրը։ 1961 թվականից աշխատում է Հայկական ԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Գրական հարցեր» (Երևան, 1958), «Գեղամ Սարյանի պոեզիան» (1963), «Ժամանակի հետ» (1968), «Տարիներ և ճակատագրեր» (1978), «Քննադատի աշխարհը» (1981), «Խոստովանք կամ հարյուր նամակ Ստեպանին» (1985) և այլն։

ՄԱՐՈՅԱՆՑ ԱՆՈՍ *(1910—1966).*— Ճարտարապետ. պետական և Լենինյան մրցանակների դափնեկիր։ Ծնվել է Բաթումում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Օդեսայի քաղաքացիական և կոմունալ շինարարության ինժեներների ինստիտուտում, որի ճարտարապետության ֆակուլտետն ավարտել է 1932-ին։ Վերադարձել է Բաթում և աշխատել որպես քաղաքի գլխավոր ճարտարապետ։ 1935 թ. մեկնել է Մոսկվա, մոտ 15 տարի աշխատել Շչուսևի ղեկավարած նախագծային արվեստանոցում։ Մասնակցել է մեծ թվով հասարակական և բնակելի տների նախագծմանը։ Ճարտարապետ Միխայիլ Պոսոխինի հետ նախագծել է Մոսկվայի խոշոր հրապարակներից մեկում կառուցված բարձրահարկ բնակելի տուն, որի համար 1949 թ. արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի։ Նույն ճարտարապետի համագործակցությամբ նախագծել է բազմաթիվ շենքեր՝ ԽՍՀՄ պաշտպանության մինիստրության վերակառուցված շենքը, Տնտեսական փոխօգնության խորհրդի 30 հարկանի շենքը՝ Կալինինի պողոտայի վրա, Մոնրեալի համաշխարհային ցուցահանդեսի խորհրդային տաղավարը, Պիցունդայում կառուցված առողջարանային համալիրը և այլն։ Եղել է Մ. Պոսոխինի ղեկավարած ճարտարապետների այն խմբի կազմում, որը նախագծել է Կրեմլի համագումարների պալատը։ Հեղինակային այդ կոլեկտիվի հետ 1962-ին նրան շնորհվել է Լենինյան մրցանակ։ Երկար տարիներ եղել է ԽՍՀՄ ճարտարապետների միության վարչության անդամ և նրա Մոսկվայի բաժանմունքի նախագահի տեղակալը։ Ճարտարապետ Կ. Հալաբյանի մահից հետո գլխավորել է նրա ղեկավարած նախագծային արվեստանոցի աշխատանքները։

ՄՆԵՅԱՆ ԲՅՈՒՐԵՂ *(ծն. 1935).*— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Կրթությունն ստացել է Կամո քաղաքում։ 1953 թվականից աշխատում է Կամոյի պետական թատրոնում որպես դերասանուհի։ Նրա կատարած դերերից են՝ Սոնա («Զար ոգի»), Դավիթ («Դավիթ Կոպերֆիլդ»), Մաշենկա («Համանուն պիեսում»), Օվսաննա («Քո ժպիտը միլիոն արժի»), Անուշ («Պաղտասար աղալար»), Թամար («Վարազդատ»), Մարգրիտ («Խաթաբալա»), Էլիսաբեթ («Բաղնսի բոխչա») և այլն։

ՄՆԵՅԱՆ ԳԵՎՈՐԳ *(1905—1978).*— Պատմաբան. Հայկական ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ։ Ծնվել է Նոր Բայազետի (այժմ՝ Կամո) շրջանի Սարուխան գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Մոսկվայում, ՀամԿ(բ)Կ կենտկոմին կից Կոմունիստական համալսարանում, որի պատմության ֆակուլտետն ավարտել է 1933 թվականին։ Վարել է կուսակցական, կոմերիտական պատասխանատու պաշտոններ։ 1939-ից անցել է գիտամանկավարժական աշխատանքի։ ԽՄԿԿ պատմության է դասավանդել հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում։ 1945—1948 թթ. եղել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի մարքսիզմ-լենինիզմի ամբիոնի վարիչ, իսկ 1948-ից աշխատել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում որպես ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ։ Հանրապետական մամուլում տպագրել է պատմագրական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Ստեփան Շահումյանի կուսակցական և պետական գործունեությունը» (Երևան, 1958), «Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքը 1905—1907 թթ.» (1956), հեղինակակից է «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր» գրքի (Երևան, 1958, 1967)։

ՄՆԱՋԱՐԻ ՀԱԿՈԲ (ՏԵՄԻՐՃՅԱՆ) *(1886—1978).*— Գրող։ Ծնվել է Երզնկայի գավառի Փոքր Արմտան գյուղում։ Փոքր հասակից ապրել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթություն։ Սովորել է Ղալաթիա թաղամասի նախակրթարանում, ապա՝ Ռոբերտ կոլեջում։ Ավարտելուց հետո վերադարձել է ծննդավայրը, աշխատել որպես ուսուցիչ։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին նորից է մեկնել Պոլիս, շարունակել կրթական գործունեությունը։ Գրական ասպարեզ է մտել 1906 թվականին՝ «Մասիս» պարբերականում տպագրելով գյուղական կյանքից վերցված մի պատկեր։ Հետագայում պոլսահայ թերթերում, հանդեսներում լույս է ընծայել բազմաթիվ պատմվածքներ, նորավեպեր, հեքիաթներ, գերազանցապես երզնկայի հովտի գավառական կյանքից, ինչպես՝ «Սուրբ Գևորգը», «Ղզրիա մորքուրը», «Մատանին խաղը», «Կարմիր կանաչ ապրշում», «Ոճիր մը» և այլն։ Պոլսական կյանքը ներկայացնող պատմվածքներից է «Ցուրթոնա Ալին»։ Նրա արժեքավոր այս պատմվածքները երկար տարիներ մամուլի էջերում մնալուց հետո, 1957 թ. լույս են տեսել «Կապույտ լույս» ժողովածուում։ 1966 թ. Երևանում և սփյուռքում նշվեց նրա ծննդյան 80-ամյակը։ Այդ առիթով նրա երկերը վերահրատարակվեցին նաև Երևանում, «Կապույտ լույս» խորագրով (1968)։ 1974 թ. Իստանբուլում լույս է տեսել նրա «Կռունկ, ուստի՞ կուգաս» ժողովածուն։

ՄՆՏԻԿՅԱՆ ՄԱՅՏԱ *(ծն. 1914).*— Նկարչուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ Փոքր հասակից ծնողների հետ տեղափոխվել է Իտալիա, որտեղ ստացել է կրթությունը ֆրանսիական մի կոլեջում։ 16 տարեկանից զբաղվել է նկարչությամբ, մասնագիտական կրթություն ստացել իտալացի ականավոր նկարիչների մոտ։ Անհատական առաջին ցուցահանդեսը ունեցել է Նյու Յորքում, 1949 թ., ապա՝ Միլանում՝ 1951, 1954 և 1959 թվականներին։ Օտար մամուլը նրա ստեղծագործություններից բարձր է գնահատել «Ոսկեգույն վարսերով աղջիկը», «Ներ ձկնորսը», «Զմեռ» բնանկարը և այլն։

ՄՇԱԿ *(18-րդ դ.).*— Տաղերգու։ Գրել է բազմաթիվ տաղեր, որոնց մի մասը հասել է մեզ և պահվում են Երևանի Մատենադարանի № № 875, 932, 3417, 8990, 10293 և այլ ձեռագրերում։

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԼԵՎՈՆ *(1890—1958).*— Հրապարակախոս, խմբագիր, գրող։ Ծնվել է Շապին Կարահիսարում (Թուրքիա)։ Նախնական կրթությունն ստացել է Սեբաստիայում, ապա ուսումը

շարունակել է Կ. Պոլսի Կենտրոնական վարժարանում։ 1910-ական թվականներից աշխատակցել է պոլսահայ մամուլին։ 1919—1921 թթ. Ադանայում խմբագրել է «Կիլիկիա» պարբերականը։ Ապա մեկնել է Կ. Պոլիս, 1923-ին՝ Հունաստան, 1925-ին՝ Ֆրանսիա, որտեղ էլ աշխատել է և գործել, հետագայում հրատարակել «Արևմուտք» պարբերականը։ Աշխատակցել է սփյուռքահայ մի շարք թերթերի։ Առանձին գրքերով հրատարակած երկերն են՝ «Հայ գաղթաշխարհը իր գոյության հարցականին առջև», «Հայ ազգային ոգին մեր ներկա աշխարհաբարին մեջ», «Աքսորականի մը ոգիտականը»։ Ֆրանսերենից կատարել է թարգմանություններ, այդ թվում Մ. Գորկու «Ֆոմա Գորդեև» վեպը (1925), Դոստոևսկու «Կարամազով եղբայրները», «Ոճիր և պատիժը» և այլն։ Կյանքի վերջին տարիներին եղել է «Աշխարհ» և այլ առաջադիմական թերթերի մնայուն աշխատակիցը։

ՄՈՂՅԱՆ ՄԻՀՐԱՆ *(1866—1922)*.— Մշակութային, կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթություն ստացել է Պերպերյան վարժարանում։ Ավարտելուց հետո զբաղվել է ուսուցչությամբ, միաժամանակ ունեցել է գրական հրապարակախոսական նկատելի գործունեություն։ Աշխատակցել է բազմաթիվ թերթերի («Բուլգաստան մանկանց», «Երկրագունդ», «Հայրենիք», «Բյուրակն» և այլն)։ Կարճ ժամանակ խմբագրել է «Բուլգաստան մանկանց»-ը։ Հրատարակել է «Վարք երևելի արանց» ամբողջատրերը (12 տետր), որը խմբագրել է 1887 թ. Համիդյան գրաքննության կողմից։ Առանձին գրքերով հրատարակած երկերն են՝ «Հավարածո հատընտիր քերթվածոց Ֆրանսական մատենագրության», «Բնագիտություն», «Համառոտ բնագիտություն»։ 1922 թ. լույս է ընծայել նշանավոր մարդկանց կյանքը ներկայացնող մի քանի գրքույկ՝ «Հուլիոս», «Բեթհովեն», «Ինչպես Վագներ» և այլն)։ Թարգմանել է Շեքսպիրի «Հուլիոս Կեսարը»։

ՄԱՆՈՒԱՐՅԱՆ ԱՆՏՈՆ *(1847—1902)*.— Հունգարագիր բանաստեղծ, խմբագիր։ Ծնվել է Հունգարիայի Սամոշուվար քաղաքում, որտեղ ստացել է նախնական կրթություն, իսկ բարձրագույնը՝ Բուդապեշտի համալսարանում։ 1879 թ. խմբագրել է «Հունգարական թերթ» պարբերականը, հաջորդ տարվանից՝ «Հունգարիա և տիեզերք» պատկերազարդ շաբաթաթերթը։ Իմացել է հայերեն, ուսումնասիրել է հայ ժողովրդի անցյալը, գրել բազմաթիվ հոդվածներ հայերի մասին։ Եղել է «Արմենիա» հունգարերեն ամսագրի հիմնադիրներից, այնտեղ տպագրել է արժեքավոր հոդվածներ՝ «Հայերը Թուրքիայում», «Հայերը արևելյան հոսմեական կայսրության գահի վրա», «Ագաթանգեղոս պատմագիրը» և այլն։ Հունգարերեն լեզվով հրատարակել է պատմաբանասիրական գրքեր, ինչպես՝ «Պատկերազարդ ընդհանուր պատմություն», «Հունգարացիների հարաբերությունները Արևելյան երկրների հետ» և այլն։

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՎԻԼԼԻ *(ծն. 1932)*.— Ջութակահար, մանկավարժ. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ *(1974)*։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Եր. Վանի Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ դպրոցում և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որի դասընթացն ավարտել է 1956-ին, իսկ ասպիրանտուրան՝ 1966-ին։ 1961—1965 թթ. նվագել է Երևանի պետական կոնսերվատորիային կից արիոյում որպես առաջին ջութակ։ 1960-ին մասնակցել է երաժիշտ կատարողների անդրկովկասյան 1-ին մրցույթին և արժանացել է 2-րդ մրցանակի։ Սիմֆոնիկ նվագախմբերի հետ ելույթներ է ունեցել Խորհրդային Միության մի շարք քաղաքներում։ 1956-ից սկսած ունեցել է մանկավարժական գործունեություն։ Նախ դասավանդել է Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում, 1958-ից՝ Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, որտեղ 1963-ից վարել է մասնագիտական դասարան, 1973-ից՝ ջութակի ամբիոնը։ 1974—1976 թթ. աշխատել է Կուբայում, դասավանդել Հավանայի արվեստի դպրոցում։ 1976-ից շարունակել է աշխատանքը Երևանի կոնսերվատորիայում, 1978-ից իբրև լարային գործիքների ամբիոնի վարիչ։ 1980 թ. ստացել է պրոֆեսորի կոչում։ Ունի ձայնասկավառակներ՝ թողարկված «Մելոդիա» և արգենտինյան ֆիրմաների կողմից։

ՄՈՎՍԵՍՅԱՆ ՄԱՐԻԱՄ *(1904—1972)*.— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ։ Ծնվել է Ալեքսանդրապոլում *(այժմ՝ Լենինական)*։ Դուստրն է գրող Պետրոս Մովսիսյանի։ Միջնակարգ կրթություն ստացել է ծննդավայրում. սովորել է հայկական նախակրթարանում և ռուսական գիմնազիայում, ավարտել 1921-ին։ 1923—1925 թթ. աշխատել է Թբիլիսիի հայկական դրամատիկական թատրոնում, ապա՝ երեք տարի Լենինականում աշխատելուց հետո նորից է մեկնել Թբիլիսի, խաղացել տեղի հայկական դրամատիկական թատրոնում։ Տարիների ընթացքում կատարել է 200-ից ավելի դերեր, հայկական, ռուսական և արևմտաեվրոպական խաղացանկից։ Գլխավոր դերերից են՝ Կրուչինինա («Անմեղ մեղավորներ»), Օֆելյա («Համլետ»), Մարգարիտ («Պատվի համար»), Մանյա («Ուրիշի երեխան»), Անուշ («Պաղտասար աղբար»), Ֆիրուզա («Շահնամե»), Սոնյա («Արիստոկրատներ») և այլն։

ՄՈՒՇՈՒՏՅԱՆ ՊԵՏՐՈՍ *(1869—1939)*.— Գրող։ Ծնվել է Ալեքսանդրապոլում, որտեղ ստացել է կրթությունը, զբաղվել ուսուցչությամբ։ Գրական ասպարեզ է մտել 1890-ական թվականների սկզբներին, կովկասահայ մամուլում տպագրելով բանաստեղծություններ, պոեմներ, արձակ երկեր։ Աշխատակցել է «Բազմավեպ», «Զանգ», «Գեղարվեստ» և այլ պարբերականների։ 1892 թ. Ալեքսանդրապոլում լույս է ընծայել «Բանաստեղծություններ», 1894 թ.՝ «Վշտի աղբյուրից» ժողովածուները։ Հետագա տարիներին առանձին գրքերով հրատարակած երկերն են՝ «Տիգրանի կալանավորը» (հոգերանական էյուդ, Ալեքսանդրապոլ, 1889), «Սրտի վերքեր» (արձակ բանաստեղծություններ, 1901), «Հայրենի ավերակներ» (ճանապարհորդական տպավորություններ և հուշեր, Ալեքսանդրապոլ, 1912), «Մամիկոնյան առյուծը» (պոեմ, 1909) և այլն։

ՄՈՄԻԿ *(13—14-րդ դդ.)*.— Մանրանկարիչ, բանդակագործ, ճարտարապետ։ Ծնվել է պատմական Վայոց ձոր գավառի *(այժմ՝ Եղեգնաձորի շրջան)* Վերին Ուղյար գյուղում, 13-րդ դարի 60-ական թվականներին։ Կրթությունն ստացել է Գլաձորի վանքում, համարվում է Գլաձորի մանրանկարչական դպրոցի հիմնադիրը։ Հիմնականում գործել է նույն Վայոց ձորում գտնվող Նորավանքում, որը նույնպես եղել է մշակութային խոշոր կենտրոն։ Կարճ ժամանակով էլ եղել է Կիլիկիայում։ Նրա գործերից մեզ հասածներն են՝ 1) Մանրանկարներ մի ձեռագիր ժողովածուի մեջ, որը կազմվել է 1283 թ. Կիլիկիայի Մլեհ վանքում և այժմ պահվում է Վիեննայի Մխիթարյանների վանքում. 2) 1292 թ. նկարազարդած մի Ավետարան, պահվում է Երևանի Մատենադարանում. 3) 1302 թ. նկարազարդած մի Ավետարան, պատկանել է Սա-Օրբելյանին. 4) Բարձրարվեստ մի խաչքար, կերտված Օրբելյան իշխանուհի Թամթա խաթունի պատվերով, որը 1303 թ. Նորավանքից տեղափոխվել է Էջմիածին՝ կաթողիկոսական պալատ. 5) Պատմագիր Ստ. Օրբելյանի հիշատակին Նորավանքում կանգնեցված մի խաչքար. 6) Օրբելյանների իշխանական տան կենտրոնատեղի Արփա գյուղի եկեղեցին, կառուցել է 1321 թ.. 7) Բուրթելաշեն կամ սուրբ Աստվածածին կոչվող եռահարկ եկեղեցին՝ Նորավանքում, կառուցված 1339 թ., ինչպես և մի շարք այլ խաչքարեր, մանրանկարչական գործեր։

ՄՈՄՃՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ *(ծն. 1922)*.— Նկարիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Փոքր հասակից ընտանիքով տեղափոխվել են Ֆրանսիա, որտեղ ստացել է նկարչական կրթություն։ Նախասիրած բնագավառն է բնանկարը, մասնավորապես ծովանկարը։ Լավագույն գործերից են՝ «Մանեժը», «Պասքյան ծովափը», «Տրուվելի ծովափը», «Թյուիրլիի պարտեզը» և այլն։

ՄՈՄՃՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ԺԱՆ ՄԻՍԱԿ) *(1876—1948)*.— Նկարիչ։ Ծնվել է Թուրքիայի Մարաշ քաղաքում, կրթությունն ստացել է Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում։ 1902 թ. ընդունվել է Պադուայի համալսարանը, սակայն չի ավարտել։ Հետագայում, դարձյալ Եվրոպայում, հետևել է նկարչության, մասնակցել ցուցահանդեսների և հայտնի դարձել Ժան Միսակ անունով։ 1920-ական թվականների սկզբներից Դամասկոսում, Հալեպում, ապա Բեյրութում ունեցել է նկարչական արվեստանոցներ։ Սիրիայի և Լիբանանի հայկական եկեղեցիների համար նկարել է մի շարք գործեր։ Մասնակցել է արքայական պալատների նկարազարդումներին։ 1936 թ. կազմակերպված մի ցուցահանդեսում շահել է մրցանակ։ Նրա անհատական վերջին ցուցահանդեսը եղել է 1945 թ. Բեյրութում։ Զբաղվել է նաև գրականությամբ։ Գրել է մի քանի պիեսներ։

ՄՈՄՋՅԱՆ ԽԱՉԻԿ *(ծն 1909)*.— Փիլիսոփա. փիլիսոփայական գիտությունների դոկտոր. ՌԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ *(1969)*։ Ծնվել է Տրապիզոնում։ 1927—1931

ԹԹ. որպես ուսուցիչ աշխատել է Թիֆլիսի հայկական դպրոցներում։ Ապա սովորել է Մոսկվայի պատմության, փիլիսոփայության և գրականության ինստիտուտում, որի փիլիսոփայության ֆակուլտետն ավարտել է 1934 թ.։ 1937 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ Մի քանի տարի աշխատել է Մոսկվայի կենտրոնական հակակրոնական թանգարանում։ 1941 թ. տեղափոխվել է Երևան։ Եղել է նորաստեղծ Արմֆանի առաջին գիտական քարտուղարը։ Հայրենական պատերազմի տարիներին լույս է ընծայել հակաֆաշիստական մի քանի գրքույկ։ 1944—1946 ԹԹ. աշխատել է գիվանագիտական ասպարեզում։ 1947—1949 ԹԹ. ղեկավարել է Հայկական ԽՍՀ ԳԱ փիլիսոփայության սեկտորը։ 1951 թ. պաշտպանել է դիսերտացիա, ստացել փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան։ 1950—1952 ԹԹ. խմբագրել է Հայկական ԽՍՀ ԳԱ-ի հասարակական գիտությունների բաժանմունքի «Տեղեկագիրը»։ 1954 թ. տեղափոխվել է Մոսկվա, որտեղ ունեցել է գիտական, մանկավարժական բեղուն գործունեություն։ Ղեկավարել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի ամբիոնը։ 1958—1962 ԹԹ. եղել է «Կոմունիստ» տեսական ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ՝ փիլիսոփայության և իրավունքի գծով։ 1962—1967 ԹԹ. դասախոսել է Մոսկվայի պետական համալսարանում որպես պրոֆեսոր։ 1967-ից ղեկավարել է ԽՄԿԿ Կենտկոմին կից հասարակագիտական ակադեմիայի մարքսիզմ-լենինիզմի փիլիսոփայության ամբիոնը։ 1977 թ. ընտրվել է ԽՍՀՄ սոցիոլոգների ասոցիացիայի պրեզիդենտ։ Լույս է ընծայել մենագրական բազմաթիվ աշխատություններ նվիրված պատմական մատերիալիզմի և արևմտաեվրոպական փիլիսոփայության հարցերին, ինչպես՝ «Սոցիալիստական հասարակարգը և մասսաների ստեղծագործական ակտիվությունը» (Երևան, 1954), «Վաֆարգը և մարքսիստական գաղափարախոսության մի քանի հարցեր» (1954), «Հելվեցիուսի փիլիսոփայությունը» (Թարգմանվել է ֆրանսերեն, գերմաներեն և ռումիներեն), «Սոցիալիզմը. նրա ներկան և ապագան» (1963), որը թարգմանվել է արտասահմանյան 10 լեզուներով, «Մարքսիզմը և ռենեգատ Գարոդին» (1973), «Լաֆարգը և մարքսիստական փիլիսոփայությունը» (1977)։ Հեղինակակից և խմբագիրն է «Ժամանակակից ռեֆորմիզմի գաղափարախոսությունը», «Մարքս-Լենինյան փիլիսոփայության հիմունքները» (1973, 1975) և այլ գրքերի։ Խմբագրել և նախաբանական ընդարձակ հոդվածներ է գրել «Դ. Դիդրո — Հակակրոնական տեղեկագրություններ» (1956), Սիլվեն Մարեշալ — «Հակակրոնական ընտիր երկեր» (1958), «Պոլ Հոլբախ—Ընտիր երկեր» (2 հատորով, 1963), «Հելվեցիուս—Ընտիր երկեր» (1974) ժողովածուների համար։

ՄՈՎՍԵՍ ԱՐՄԿԵՑԻ *(15-րդ դ.).*— Գրիչ, մատենագիր։ Ապրել և գործել է 15-րդ դարի երկրորդ կեսին, Բզնունյաց գավառի Արծկե քաղաքում և Ամիդում։ Ընդօրինակել է մի շարք ձեռագրեր, որոնց կցած հիշատակարանները փաստական հարուստ նյութ են պարունակում դարաշրջանի քաղաքական իրադարձությունների մասին։ Գրել է չափածո մի Տարեգրություն և Միրաք Թավրիզեցու նահատակության պատմությունը, տպագրվել է «Հայոց նոր վկաներ» ժողովածուում (1903)։

ՄՈՎՍԵՍ ԳՐԻՉ *(13-րդ դ.).*— Մանրանկարիչ, գրիչ։ Իր երկու ընկերների՝ Հակոբոսի ու Մխիթարի հետ 1269-ին Երզնկայում արտագրել և նկարազարդել է մի Ավետարան, որն ըստ Գ. Հովսեփյանի, իր ճոխ արվեստով կազմում է Երզնկայի մանրանկարչական դպրոցի գարդը։

ՄՈՎՍԵՍ ԴԱՍԵՈՒՐԱՆՑԻ *(10-րդ դ.).*— Մատենագիր։ Խմբագրել, շարունակել է Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհին» երկը, ընդգրկելով արաբական տիրապետության շրջանից մինչև 10-րդ դարի կեսերը։ Նրա այդ հավելումը կազմում է Կաղանկատվացու աշխատության 3-րդ գիրքը, ամբողջացնում է Ուտիք և Արցախ նահանգների պատմությունը։

ՄՈՎՍԵՍ ԵՐԵՑ *(17-րդ դ.).*— Նաղկող։ 1650—1660-ական թվականներին ծաղկել է մի Ավետարան, մի Հայսմավուրք, որոնք պահվում են Երևանի Մատենադարանում։

ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ *(14-րդ դ.).*— Մատենագիր, կրթական գործիչ։ Ծնվել է պատմական Հայաստանի Կամախ քաղաքում, Ներսես քահանայի ընտանիքում։ Կրթությունն ստացել է Երզնկայի Ավագ վանքում։ Ապա մեկնել է Կիլիկիա, օրինակել է մի Աստվածաշունչ, բերել Երզնկա։ Բերել է նաև այլ գրքեր, ուսուցանել իր կառուցած վանքում ու եկեղեցում (1310)։ Նրա մի ոգբը՝ իր ուսուցչի մահվան առթիվ գրված, լույս է տեսել Ալիշանի «Սիսուանում», և «Հայապատումում»։ Կազմել է «Ոսկեփորիկ» ժողովածուն, որը պարունակում է խրատներ և վարքեր, «Համառօտ ժամանակագրութիւն հայոց», «Բողոք անավարդեցի կաթողիկոսի և Լեվոն Դ. Թագավորի դեմ» և այլն, ինչպես և թղթեր, աղոթքներ։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ *(5-րդ դ.).*— Մատենագիր, պատմիչ։ Ծնվել է Տարոնի Խորնի կամ Խորոնք գյուղում, մոտավորապես 410—415 թվականների միջոցում։ Եղել է Սահակի և Մեսրոպի աշակերտներից։ Եղբայրն է Մամբրե վարդապետի։ Նախնական կրթությունն ստացել է հայրենիքում։ Հետագայում, մոտավորապես 430-ական թվականների կեսերին ուղարկվել է Ալեքսանդրիա՝ հունարեն լեզվի և հունական մատենագրության մեջ խորանալու։ Ճանապարհին եղել է ժամանակի մշակութային խոշոր կենտրոններից մեկը հանդիսացող Եդեսիա քաղաքում, ուսումնասիրել տեղի հարուստ ձեռագրատունը։ Կարճ ժամանակով էլ Երուսաղեմ այցելելուց հետո, հասել է Ալեքսանդրիա, այնտեղի ճոխ մատենադարանում ուսումնասիրել հունական գրականությունն ու լեզուն։ Ալեքսանդրիայից Հունաստան մեկնելիս՝ հանդիպել է Իտալիա, կանգ առել Հռոմում, ծանոթացել նշանավոր այդ քաղաքին, ապա հասել Աթենք։ Դեպի Հայաստան ուղևորվելիս՝ իր ընկերների հետ եղել է Բյուզանդիայում։ Ենթադրվում է, որ այս երկար ճանապարհորդությունը տևած պիտի լինի 7—8 տարի։ Երբ հասել է Հայաստան, նրա ուսուցիչները՝ Սահակն ու Մեսրոպը, արդեն վախճանված են եղել։ Ժամանակի խավարամոլ հոգևորականները հալածել են, ասպարեզ չեն տվել, մինչև որ Սահակ Բագրատունին գնահատելով նրան, առաջարկել է գրել հայ ժողովրդի պատմությունը, որ կենսագործել է՝ հորինելով իր նշանավոր «Հայոց պատմությունը»։ Բացի այդ գրքից նրան են վերագրվում նաև այլ աշխատություններ, ինչպես «Պատմութիւն և ներբողեան Հռիփսիմեանց», «Գիրք պիտոյից», «Ճառ վարդավառի», Շարականներ, «Աշխարհացոյցը», «Մեկնութիւն քերականին» և այլն։ Սրանցից «Աշխարհացոյցը» մեր օրերում վերագրվել է Ա. Շիրակացուն, մյուսներից մի քանիսի վերաբերյալ կան տարակարծություններ։ Գլուխգործոց երկասիրությունը «Հայոց պատմությունն» է, բաղկացած երեք մասից. Ա. մասում խոսվում է հայ ժողովրդի պատմության առասպելական շրջանի մասին, տալով նմուշներ նախամեսրոպյան հայ անգիր գրչությունից։ Բ. և Գ. մասերում շարադրված է հայ ժողովրդի պատմությունը Պարթևների տիրապետության շրջանից մինչև հեղինակի ապրած օրերը՝ այսինքն հայ գրերի գյուտին հաջորդող տարիները։ Աշխատությունը արժանացել է բազմաթիվ հրատարակությունների, թարգմանվել տանյակ լեզուներով։ Ա տպագրությունը տեղի է ունեցել Ամստերդամում, 1695 թ. Բ. տպ.՝ Լոնդոնում, 1736 թ., Գ. տպ.՝ Վենետիկում, 1752 թ. և այլն։ Ուշագրավ է Վենետիկի 1843 թ. հրատարակությունը՝ «Մովսեսի Խորենացւոյ մատենագրութիւնք» խորագրով, որտեղ «Հայոց պատմությունից» բացի զետեղված են նաև նրան վերագրվող երկերը, այդ թվում «Գիրք պիտոյից» և «Աշխարհացոյցը»։ Լավագույնն է 1913 թ. Թիֆլիսյան գիտական հրատարակությունը, կատարված Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի ջանքերով, տարբեր ձեռագրերի համեմատությամբ։ Լույս է տեսել նաև աշխարհաբար մի քանի թարգմանությամբ։ 1889 թ. Թիֆլիսում տպագրվել է Խորեն Ստեփանեի թարգմանությունը, ընդարձակ ծանոթագրություններով, որը որոշ ուղղումներով վերահրատարակվել է 1898 թ.։ Խորհրդային տարիներին լույս տեսավ ակադեմիկոս Ստ. Մալխասյանի նոր թարգմանությունը (Երևան, 1940), որը նույնպես վերահրատարակվել է հետագայում։ Դեռևս 1723 թ. «Հայոց պատմությունը» թարգմանվել է լատիներեն, լույս տեսել Ստոկհոլմում։ Երեք տարի անց Լոնդոնում տպագրվել է անգլերեն թարգմանությունը, 1836, 1855 ԹԹ. Փարիզում, ֆրանսերեն, 1841 և 1850 ԹԹ. Վենետիկում՝ իտալերենը։ Այնուհետև թարգմանվել է գերմաներեն, հունգարերեն և այլ լեզուներով, Ռուսերեն առաջին թարգմանությունը կատարել է Հովհաննիսյան սարկավագը, տպագրել Պետերբուրգում, 1809 թ.։ Երկրորդ, ավելի հմտալից թարգմանությունը կատարել է Մ. Էմինը (Մոսկվա,

1858)։ Անցած 100-ամյակի ընթացքում նրա շուրջ ստեղծվել է հարուստ գրականություն։

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ (7-րդ դ.).— Մատենագիր։ Ծնվել է պատմական Հայաստանի Ուտիք գավառի Կաղանկատույք գյուղում։ Ենթադրվում է, որ եղել է Աղվանից Վիրո կաթողիկոսի մերձավորներից։ Գրել է «Պատմութիւն Աղուանից աշխարհին» երկը, որը պարունակում է Հայաստանի արևելյան մասի՝ Արցախի, Ուտիքի և այլ գավառների պատմությունը։ Աշխատությունը մեր մատենագրության մեջ հիշատակվել է դեռևս 8-րդ դարից։ Երկում հիշատակված եղելությունները հասնում են մինչև 10-րդ դարը, ինչ որ ենթադրել է տվել ոմանց, թե նա 10-րդ դարի պատմիչ է։ Ըստ երևույթին 7-րդ դարում նրա գրած պատմության վրա հետագա դարերում կատարվել են հավելումներ Մովսես Դասխուրանցու կողմից։ Պատմությունը բաղկացած է երեք մասից։ Ա. մասը, որ վերաբերում է առասպելական շրջանին, պատմական մեծ արժեք չի ներկայացնում, քանի որ հիշատակված փաստերի մեծ մասը առկա է Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի և այլ պատմիչների մոտ։ 2-րդ մասը պարունակում է առավել վավերական իրադարձություններ, քանի որ հեղինակը ժամանակակից է եղել դրանց։ Այս մասում աղվաններից բացի խոսվում է խազարների, հոների և հյուսիսային այլ ցեղերի մասին։ Պատմական մեծ արժեք է ներկայացնում Դավթակ Քերթողի «Ողբ Ջուանշիր թագավորի» երկը, բաղկացած 36 տեղից, հայերեն այբուբենի շարքով, որը համարվում է հայ չափածո գրականության հնագույն նմուշներից։ 3-րդ գիրքը, գրված ուրիշների կողմից, մեծ մասամբ վերաբերում է արաբական շրջանին և դարձյալ պարունակում է արժեքավոր տեղեկություններ։ Երկի Ա. տպագրությունը տեղի է ունեցել Փարիզում, 1860 թ. Կ. Շահնազարյանի ջանքերով, Բ. տպագրությունը՝ Մոսկվայում, նույն 1860-ին, Մ. Էմինի շնորհիվ, Գ. տպագրությունը՝ Երևանում, 1969 թ. Վ. Առաքելյանի աշխարհաբար թարգմանությամբ։ Ռուսերեն թարգմանությունը, կատարված Ք. Պատկանյանի կողմից, լույս է տեսել Պետերբուրգում, 1861-ին, անգլերենը՝ Լոնդոնում, դարձյալ 1861-ին։

ՄՈՎՍԵՍ ԿԱՐՆԵՑԻ (12—13-րդ դդ.).— Տաղերգու։ Նրանից մեզ հասել է 14 տաղ, որոնցից մեկում՝ «Ողբ ի վերայ աղգին մերոյ», ողբում է հայ ժողովրդի տառապյալից վիճակը օտար բռնակալների լծի տակ։ Նրա տաղերի մեծ մասը պահվում է Վիեննայի Մխիթարյանների վանքի ձեռագրերում։

ՄՈՎՍԵՍ ՋՈՒՂԱՅԵՑԻ (18-րդ դ.).— Մատենագիր։ Ապրել ու գործել է Նոր Ջուղայում։ Գրել է «Համառօտ ժողովածու ի պէտս բանասիրաց», «Համառօտ ժողովածու ի պէտս քարոզից», «Յաղագս վիպասանութեան» երկերը։

ՄՈՎՍԵՍ ՏԱԹԵՎԱՑԻ (17-րդ դ.).— Կրթական գործիչ, մատենագիր։ Ծնվել է Տաթևում։ Կրթությունն ստացել է Սրապիոն կաթողիկոսի մոտ։ 1612 թ. մեկնել է Երուսաղեմ, խորացրել գիտելիքները։ Վերադառնալով հայրենիք, Սյունյաց աշխարհում հիմնել է բազմաթիվ դպրոցներ։ Հալածվելով Մելիքսեթեկ կաթողիկոսի կողմից, 1620 թ. եկել է Երևան, ս. Անանիայի եկեղեցում հիմնել կրթարան, շարունակել մանկավարժական աշխատանքը։ 1627 թ. դարձել է Էջմիածնի Լուսարար, իսկ 1629 թ.՝ ընտրվել է կաթողիկոս։ Իր շինարարական, լուսավորական աշխատանքների համար կոչվել է Բ. լուսավորիչ։ Ունեցել է նաև գրական գործունեություն։ Գրել է մի զանձ, մի տաղ, նաև՝ «Թուղթ առ Ուրբանոս պապ», «Թուղթ առ Վչամիշլավ է. արքա Լեհաց» (1632)։ Մահել է 1633 թ. և թաղվել Երևանի Կողեոնում։ Նրա ընդարձակ կենսագրությունը հրատարակել է Հ. Ն. Ակինյանը «Մովսես Գ. Տաթևացի» վերնագրով (Վիեննա, 1936)։ Կոչվել է նաև Մովսես Սյունեցի։

ՄՈՎՍԵՍ ՏԱՂԱՍԱՑ.— Ծնվել է Կարինում։ Ծննդյան և մահվան թվականներն անհայտ են։ Հորինել է մի շարք տաղեր, որոնցից «Տաղ ըղձական», «Տաղ զարիպութեան», «Մենացեալ այրիմ» և այլն, լույս են տեսել «Բազմավեպի» տարբեր տարիների համարներում (1849, 1858, 1870), իսկ մի քանիսն էլ՝ Կ. Կոստանյանի «Նոր ժողովածուի» Բ. գրքում։

ՄՈՎՍԵՍ ՓԻԼԻՊՈՓԱ (6-րդ դ.).— Մատենագիր։ Եղել է Վահան Մարզպանին ժամանակակից։ Գրել է մի թուղթ իր հակառակորդների դեմ «Ահաւոր նզովս ի վերեւ գլխաւորաց քահանայութեանց» խորագրով։

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԲԴԱԼ (1905—1967).— Մանկավարժ. մանկավարժական գիտությունների դոկտոր (1959)։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Խնուսի գավառի Խալիլ-Չաուշ (Խաչալուս) գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, 1927—1931 թթ.։ Ավարտելուց հետո վարել է պատասխանատու պաշտոններ։ Եղել է Հայաստանի Լուսաշխի միության վարչության նախագահ, Լուսավորության մինիստրության բաժնի վարիչ, Մանկավարժական գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր։ Եղել է «Կոմունիստական դաստիարակություն», «Խորհրդային մանկավարժ», «Կուլտուրական ֆրոնտ», «Խորհրդային դպրոց» պարբերականների խմբագիր։ 1931 թվականից մինչև կյանքի վերջը դասավանդել է Երևանի պետական համալսարանում, Հայկական մանկավարժական ինստիտուտում և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում։ Երկար տարիներ Երևանի պետական համալսարանում ղեկավարել է մանկավարժության և հոգեբանության ամբիոնը։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության» (Երևան, 1958), «Հին հայերի կրթության մասին» (Երևան, 1939), «Հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության զարգացումը սկզբից մինչև 18-րդ դարը») տպագրվել է «Խորհրդային ժողովուրդների դպրոցի և մանկավարժական մտքի զարգացումը» (բազմահատորյակի 1-ին հատորում), «Ուշնկու ազդեցությունը 70-ական թվականների հայ մանկավարժների վրա» (1945) և այլն։

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՏԵՄ (1896—?).— Նկարիչ. Ադրբեջանական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Ախալցխայում։ Միջնակարգ կրթությունը Բաքվում ստանալուց հետո տեղափոխվել է Իրան, Թեհրանում հետևել նկարչության։ Ապա վերադարձել է Բաքու և երկար տարիներ աշխատել որպես դեկորատոր-նկարիչ։ Կատարել է բազմաթիվ շենքերի, ցուցասրահների ձավորումներ։ Ունի նաև այլ բնույթի նկարներ։

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԼՈՐԻԿ.— Երգչուհի։ Ծնվել է Թավրիզում։ Երաժշտական կրթությունն ստացել է իրանահայ կոմպոզիտոր Լևոն Գրիգորյանի մոտ։ 1925 թվականից համերգներ է տվել Իրանի քաղաքներում։ Թիֆլիսում մշակել է ձայնը, վերադարձել Իրան։ 1936 թ. մեկնել է Հնդկաստան, տվել համերգներ տարբեր քաղաքներում, ծրագրում ունենալով հայերեն, ռուսերեն և իտալերեն երգեր. նախընտրած հայ կոմպոզիտորներն են եղել՝ Կոմիտաս, Սպենդիարյան, Ալեմշահ, Ռ. Մելիքյան։ Միաժամանակ երգել է Կալկաթայի ռադիոկայանից։ Ապա շրջագայել է Մերձավոր Արևելքում, եղել Սիրիայում, Իրաքում, Լիբանանում։ 1956 թ. Թեհրանում նշվել է նրա երաժշտական գործունեության 30-ամյակը։ Նրա հայերեն երգերից մի քանիսը՝ «Բարձր սարեր», «Սև աչեր», «Ուռին» և այլն, վերցվել են ձայնասկավառակների վրա և լայնորեն տարածվել սփյուռքում։

ՄՈՎՍԻՍՅԱՆ (ԱԲՐԱՀԱՄՅԱՆ) ՀԱՄԼԵՏ (ծն. 1930).— Գրող։ Ծնվել է Հայկական ԽՍՀ Ախուրյանի շրջանի Բենիամին գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Լենինականի մանկավարժական ինստիտուտում, որի լեզվագրական ֆակուլտետն ավարտել է 1951-ին։ Հաջորդ տարվանից զբաղվել է մանկավարժական աշխատանքով։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Եթե արկերը լցվեին ավազով» (Երևան, 1966), «Վայրի հասկ» (1975), «Հատուցման շրջեքշրթին» (1980)։

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ (ծն. 1924).— Բանաստեղծ-արևելագետ։ Ծնվել է Փեհլեվիում (Իրան)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի օտար լեզուների ինստիտուտում, ավարտել անգլիական բաժինը։ 1961-ին Լենինգրադում պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա՝ «Բոզորգ Ալավիի գրական ստեղծագործությունը» թեմայով։ Աշխատում է Հայկական ԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտում իբրև ավագ գիտաշխատող։ Հանրապետական և միութենական գիտական մամուլում տպագրել է հոդվածներ Իրանի արդի գրականության և հայ-պարսկական գրական առնչությունների վերաբերյալ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Սոցիալական մոտիվները պարսկական գրականության մեջ» (համահեղինակ, Երևան, 1968), «Պարսկական առածներ» (1969), «Բոզորգ Ալավիի ստեղծագործությունը» (1980), «Իրանական պոեզիա» և այլն։ Իրանական գրականությունից կատարել է թարգմանություններ, տպագրել «Իրանական պատմվածքներ» ժողովածուում (Երևան, 1963)։

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ (1853—1924).— Բա-

նասեր։ Մնվել է Էջմիածնի գավառի Մարգարա գյուղում։ Կրթությունն ստացել է Էջմիածնի ժառանգավորաց վարժարանում, ավարտել է 1871 թ., ընդունել հոգևորական կոչում։ Որպես ուսուցիչ պաշտոնավարել է Գևորգյան ճեմարանում։ «Արարատ» ամսագրի էջերում տպագրել է բանասիրական, հնագիտական տասնյակ հոդվածներ՝ «Հայոց հեթանոսական պաշտամունքը» (1884), «Կարսի վիճակի հնությանց վրա տեղեկություններ» (1890)։ Այդ հոդվածներից առավել ընդարձակները լույս են տեսել նաև առանձին գրքերով, ինչպես՝ «Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցվո պատմություն» (Վաղարշապատ, 1884), «Ս. Հայրապետական աթոռի մասին համառոտ տեսություն» (1904)։ Սրանցից բացի հրատարակել է կրոնական դասագրքեր։

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ (ծն. 1914).— Պատմաբան։ Մնվել է Լեռնային Ղարաբաղի Խանքենդ քաղաքում (այժմ՝ Ստեփանակերտ)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի պատմության ֆակուլտետն ավարտել է 1938 թ.։ 1941—1946 թթ. ծառայել է խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո վարել է կուսակցական պաշտոններ, զուգահեռ դասախոսել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում։ 1953—1956 թթ. եղել է Երևանի պետական համալսարանի ԽՄԿԿ պատմության ամբիոնի վարիչ, 1960—1965 թթ. և 1974-ից՝ համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան։ 1951 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ Գիտական մամուլում տպագրել է պատմագրական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Կովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարը և Ստեփան Շահումյանը» (Երևան, 1955), «Խորհրդային պետության ֆունկցիաները կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում» (1959), «ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման Լենինյան պլանը և նրա կենսագործումը» (1965), «Վ. Ի. Լենինը և կոմունիզմի կառուցման մի քանի հարցեր» (1970), «Կուսակցության ղեկավար դերի աճը կոմունիստական շինարարության արդի էտապում» (1972) և այլն։

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՍԱՀԱԿ (?—1942).— Քանդակագործ։ 1928 թ. ավարտել է Երևանի գեղարվեստարդյունաբերական հիմնավոր կրթությունն ստացել է Լենինգրադի գեղարվեստների ակադեմիայում։ 1941 թ. զորակոչվել է բանակ, զոհվել ֆաշիստների դեմ կռվելիս։ Թողել է մեծ քանակությամբ էսքիզներ, կատարված Լենինգրադում։ Նրա առավել աչքի ընկնող գործերից է «Հովիվը» մեծադիր արձանը, որ գրվել է Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի հայկական տաղավարի մատքի մոտ։ Մասնակցել է Մոսկվայի Մետրոպոլիտենի «Զերժինսկայա» կայարանի քանդակազարդմանը։

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՍԱՀԱԿ (ԲԵՆՍԵ) (1867—1939).— Բանաստեղծ, բանահավաք, մանկավարժ։ Մնվել է Արևմտյան Հայաստանի Բուլանրխ գավառի Կոփ գյուղում։ Սովորել է Մուշի Կենտրոնական վարժարանում։ 1892 թ. ծննդավայր Կոփ գյուղում հիմնադրել է Սահակ—Մեսրոպյան դպրոցը։ 1896 թ. քաղաքական դեպքերից հետո եկել է Կովկաս, ծանոթացել Ղ. Ալիշանի, Ե. Լալայանի և այլ մտավորականների հետ, որոնք նրան մղել են դեպի ազգագրություն։ Լալայանը «Ազգագրական հանդեսում» տպագրել է նրա հավաքած նյութերի մի մասը՝ «Բուլանրխ կամ Հարք գավառ» խորագրով։ 1903 թ. ուսուցչական պաշտոնով մեկնել է Խնուս, որտեղ շարունակել է ազգագրական նյութերի հավաքումը։ Գրի է առել «Սանասար և Բաղդասար» ժողովրդական վեպը։ 1915 թ. ընտանիքով գաղթել է Կովկաս, հաջորդ տարվանից աշխատել Ղարաքիլիսայում (այժմ՝ Կիրովական)։ Կյանքի վերջին տարիներին գրել է «Քրդերենի թերականությունը», հատուկ ուսումնասիրություն՝ Մուշ—Բուլանրխ բարբառի մասին։ Նրա գրի առած հեքիաթները հրատարակության է պատրաստել որդին՝ բանաստեղծ Սողոմոն Տարոնցին և տպագրել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» բազմահատորյակի 10-րդ հատորում (Երևան, 1967)։ Օգտագործել է Բենսե ծածկանունը։

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԼՐՈՒՏ (ծն. 1911).— Նկարիչ։ Մնվել է Կարսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թբիլիսիում՝ Մ. Թոիձեի ստուդիայում, ապա՝ Վրաստանի գեղարվեստների ակադեմիայում, ավարտել 1931 թ., աշակերտել պրոֆեսոր Լանսերեին։ 1930-ից մասնակցել է ցուցահանդեսների՝ Թբիլիսիում, Կիևում, Լենինգրադում և Մոսկվայում, հավաքույթ գործերից են՝ «Կովկասյան բնանկար», «Բարեկամության և խաղաղության դրոշը», «Թիֆլիսի մայիսմեկյան ցույցը» (1901) և այլն։ Ապրում և ստեղծագործում է Լենինգրադում։

ՄՈՐՈՒԶՈՎ ՆԻԿԻՏԱ (ՄԿՐՏԻՉ ՄՈՐՈՒԶՅԱՆ) (1864—1925).— Կոմպոզիտոր։ Մնվել է Նովոչերկասկ քաղաքում (այժմ՝ Ռոստովի մարզ)։ Կրթությունն ստացել է ծննդավայրի գիմնազիայում և Մոսկվայի համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետում, ավարտել է 1887 թ.։ Այդ նույն տարիներին զուգահեռ հետևել է երաժշտության, սովորել Մոսկվայի ֆիլհարմոնիկ ուսումնարանում և կոնսերվատորիայում, որտեղ երաժշտության տեսության դասարանում նրա դասընկերներից է եղել Ս. Ռախմանինովը։ 1893—1923 թթ. պաշտոնավարել է նույն կոնսերվատորիայում։ 1890-ական թվականների վերջերից դասավանդել է նաև Մոսկվայի Մարինյան օրիորդաց ուսումնարանում, ղեկավարել աշակերտուհիներից կազմված երգչախումբը, որին նվագակցել է Ռախմանինովը։ Մտերմական կապեր է պահպանել Ռախմանինովի հետ, որը նրան է նվիրել իր ստեղծագործություններից «Գարուն» կանտատը (1902)։ 1900 թ. ճանապարհորդել է Եվրոպական մի շարք երկրներում (Գերմանիա, Շվեյցարիա, Իտալիա և այլ)։ Գրել է երաժշտական և երաժշտագիտական բազմաթիվ երկեր, որոնցից են՝ Պլես՝ դաշնամուրի համար (1890), «Ալլեկո»—օպերա մեկ գործողությամբ (լիբրետատ՝ Նեմիրովիչ Դանչենկոյի)։ եղել է նրա ավարտական աշխատանքը Մոսկվայի կոնսերվատորիայում (1892), ռոմանսներ, երգեր և այլն։ Տեսական աշխատություններից են՝ «Ռիտմունք մեղեդու մասին», «Թեմի մասին» (1-ին մաս՝ 1909, 2-րդ մաս՝ 1914), «Երաժշտության կառուցվածքը» (Մոսկվա, 1920), «Հնչյունի մասին» (1924) և այլն։ 1909 թ. Բեռլինում տպագրել է «Կենսագրական բառարան երաժշտական գործիչների» գերմաներեն գիրքը, որը հետագայում արժանացել է մի քանի տպագրության։ 1900—1925 թթ. Ռախմանինովի կողմից նրան ուղղված նամակները տպագրված են «Ս. Ռախմանինով — Նամակներ» գրքում (Մոսկվա, 1955)։

ՄՈՒԱՎՅԱՆ ԱՍՔԱՆԱԶ (1885—1929).— Կուսակցական, պետական գործիչ։ Մնվել է Գանձակում (այժմ՝ Կիրովաբադ)։ Կրթությունն ստացել է Երևանի թեմական դպրոցում և Պետերբուրգի հոգևորաղղիական ինստիտուտում, որն ավարտել է 1915 թ.։ Ուսանողական տարիներից մասնակցել է հեղափոխական շարժումներին։ 1905 թ. ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը։ 1905—1908 թթ. գործել է Երևանում, Գանձակում և Բաքվում։ Աշխատակցել է «Կայծ», «Նոր խոսք» բոլշևիկյան թերթերին, «Պրավդային»։ 1917 թ. եղել է «Պայքար» թերթի խմբագիրներից։ 1917—1918 թթ. աշխատել է ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի օրգան «Բանվորի կոչով» և «Բանվոր» թերթերի խմբագրություններում։ 1918-ի մայիսից աշխատել է Վլադիկավկազում (այժմ՝ Օրջոնիկիձե). վարել է ՌԿ(Բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի քարտուղարի և այդ կոմիտեի օրգան «Կավկազսկայա պրավդա» թերթի խմբագրի պաշտոնները։ Ապա աշխատել է Հայաստանում։ 1920 թ. նոյեմբերին ընտրվել է Հեղկոմի կազմում։ 1921—1923 թթ. եղել է Հայկական ԽՍՀ արտաքին գործերի, 1923—1929 թթ. լուսավորության ժողկոմ և ժողկոմխորհի նախագահի տեղակալ։ 1961 թ. Երևանում լույս է տեսել նրա «Հոդվածներ և ճառեր» ժողովածուն։

ՄՍԵՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1846—1893).— Հրապարակախոս, խմբագիր, հրատարակիչ։ Մնվել է Զմյուռնիայում։ Կրթությունն ստացել է տեղի Մեսրոպյան վարժարանում։ Մեկ տարի էլ սովորել է նույն քաղաքի Մխիթարյանների դպրոցում։ Ավարտելուց հետո զբաղվել է առևտրով և գրական աշխատանքով։ Ֆրանսերենից կատարել է թարգմանություններ, որոնցից առանձին գրքերով տպագրվածներից են՝ Ալ. Դյումայի «Բոլին» վեպը, Օ. Ֆեոեի «Աղքատ երիտասարդի մը» վեպը, Բոկկաչիոյի «Դեկամերոնի» ընտիր նովելները պարունակող մի հատորը։ 1878 թ. հիմնել է սեփական տպարան, հրատարակել «Մեսեռբա» հանդեսը, որն իր առաջադիմական ուղղության պատճառով թշնամական մթնոլորտ է ստեղծել նրա շուրջ։ Ընդամենը երեք գիրք լույս ընծայելուց հետո հարկադրված է եղել դադարեցնել «Մեսեռբան», շարունակելով աշխատակցել մամուլին։ Մասնակցել է լեզվապայքարին։ Սյունի ծածկանունով ուշագրավ հոդվածներ է տպագրել «Արևելյան մամուլում» աշխարհաբարի օգտին։ Հրատարակել է «Նոր այբբենարան ֆրանսերենի», «Ընթեր-

ցարան», «Համառոտ դիցաբանություն» դասագրքերը։

ՄՍԵՐՅԱՆ ՁԱՐՄԱՅՐ *(1836—1889)*.— Հրապարակախոս, խմբագիր։ Ծնվել է Քիշինևի մոտակայքում գտնվող Հնչեստ ավանում (այժմ՝ Մոլդավիա)։ Որդին է Մսեր Մսերյանի։ 1848 թ. նրանց ընտանիքը տեղափոխվել է Մոսկվա, որտեղ ստացել է կրթությունը, սովորել Լազարյան ճեմարանում, ավարտել 1855 թ.։ 1860-ական թվականների կեսերից վարել է պետական պաշտոններ, աշխատել որպես մամուլի գործերի տեսուչ։ Ջուգահետ ունեցել է գրական-հրապարակախոսական գործունեություն։ 1858—1862 թթ. օժանդակել է հորը՝ «Ճառաքաղ» ամսագրի խմբագրման գործում, այդ ամսագրի էջերում տպագրել է բազմաթիվ հոդվածներ։ 1861—1864 թթ. Մոսկվայում հրատարակել է «Համբավարեր Ռուսիո» կիսամսյա հանդես, 1872—1876 թթ. «Փարոս» տարեգիրքը, իսկ 1879—1881 թթ. «Փարոս Հայաստանի» պատկերազարդ հանդեսը, որի Կ. Պոլսի թղթակիցն է եղել Հակոբ Պարոնյանը։ Առանձին գրքով հրատարակել է «Նոր այբբենարան հայերեն լեզվի ռուսերեն թարգմանությամբ» դասագիրքը (Մոսկվա, 1856), որը վերահրատարակվել է 1863 թ.։ Ֆրանսերենից և ռուսերենից կատարել է թարգմանություններ։

ՄՍԵՐՅԱՆ ԼԵՎՈՆ *(1867—1933)*.— Հայագետ. համեմատական լեզվաբանության դոկտոր։ Ծնվել է Մոսկվայում։ Որդին է Զարմայր Մսերյանի։ Կրթությունն ստացել է Լազարյան ճեմարանում, ավարտելուց հետո սովորել է Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետում։ Ուսանողական տարիներին գրել է լեզվաբանական մի հետազոտություն, որի համար նրան տրվել է ոսկե մեդալ։ 1897 թ. Պետերբուրգում պաշտպանել է մագիստրոսական դիսերտացիա՝ «Ուրվագծեր հայ բարբառագիտության. մասն 1-ին. համեմատական հնչյունաբանություն Մշո բարբառի, կապված գրաբարի հնչյունաբանության հետ» թեմայով, իսկ 1901 թ. դարձյալ Պետերբուրգում պաշտպանել է դոկտորական դիսերտացիա՝ նույն աշխատության 2-րդ մասը հանդիսացող՝ «Համեմատական ձևաբանություն Մշո բարբառի, կապված գրաբարի և միջին հայերենի ձևաբանության հետ» թեմայով։ Մի քանի տարի Լազարյան ճեմարանում դասավանդել է համեմատական լեզվաբանություն և պահլավերեն։ 1893 թ. որպես դոցենտ աշխատել է Մոսկվայի համալսարանում, իսկ 1905—1912 թթ. պրոֆեսորի կոչումով դասախոսել է Վարշավայի համալսարանում, որտեղ զբաղեցրել է համեմատական քերականության ամբիոնի վարիչի պաշտոնը, դասավանդել է նաև հին Արևելքի պատմություն։ 1915 թ. վերադարձել է Մոսկվա, աշխատել Լազարյան ճեմարանում և Մոսկվայի համալսարանում, դասավանդելով պահլավերեն, հին հունարեն և սանսկրիտ։ Մասնակցել է արևելագիտական մի շարք համաժողովների՝ Փարիզում, Համբուրգում, Հռոմում, Աթենքում և այլ քաղաքներում, կարդացել արժեքավոր զեկուցումներ, որոնք տպագրվել են գիտական տեղեկագրերում և հանդեսներում։ 1897 թ. Պետերբուրգի համալսարանում կարդացած զեկուցումը՝ «Հայերեն բարբառախոսություն», 1899 թ. լույս է տեսել հայերեն թարգմանությամբ, Վիեննայում։

ՄՍԵՐՅԱՆ ՄՍԵՐ *(1808—1873)*.— Պատմաբան, խմբագիր։ Ծնվել է Զմյուռնիայում։ Կրթությունն ստացել է հայոնի գրաբարաբան, գրող Հովհան Միրզա-Վանանդեցու մոտ։ 1825 թ. եկել է Կովկաս, նպատակ ունենալով էջմիածնում ստանալ հոգևորական դաստիարակություն։ Էջմիածնում եղել է խցակից Խ. Աբովյանի հետ, դարձել են մտերիմներ։ Հետագայում գրել է նրան նվիրված բանաստեղծություններ։ Աշխատել է որպես կաթողիկոսի կոնդակագիր։ Հրաժարվել է հոգևորական դասակարգությունից և մեկնել է Թիֆլիս։ 1832 թվականից ապրել է Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքում, Հ. Ալամդարյանի հետ։ 1834 թ. Ներսես Աշտարակեցու կարգադրությամբ մեկնել է Քիշնև։ Ունեցել է հատուկ դպրոց, որտեղ սովորել են Միրզայանների ընտանիքից դուրս ապրող հայերի երեխաները, մեծ մասամբ թուրքախոս։ Նրանց համար գրել է հայատառ թուրքերեն մի պիես՝ «Հայկի վերադարձը Բաբելոնից և նրա կռիվը Բելի դեմ», որը բեմադրվել է աշակերտների ուժերով, 1837 թ.։ Գրել է նաև «Երկու Կիրակոս» երկը, որտեղ արծարծվում են լուսավորական հարցեր։ Այս երկու գործերի ձեռագրերը պահվում են Երևանի Մատենադարանում, Մսերյանների ֆոնդում։ 1848 թ. ընտանիքով տեղափոխվել է Մոսկվա, պաշտոնավարել Լազարյան ճեմարանում որպես հայոց լեզվի և կրոնի ուսուցիչ։ Նա այդ պաշտոնում մնացել է մինչև մահվան տարին։ Ջուգահետ՝ Մոսկվայում 1858—1862 թթ. հրատարակել է «Ճառաքաղ» ամսագիրը պահպանողական ուղղությամբ։ Հրատարակել է կրոնի մի քանի դասագրքեր՝ «Հրահանգ քրիստոնեական հավատոյ», «Հավատապատում» և այլն։ Առավել արժեքավոր են նրա պատմագրական երկու աշխատությունները՝ «Ցիշատակարան կենաց և գործոց մեծանուն պայազատաց Հաղարխան տոհմին» (Մոսկվա, 1856) և «Պատմութիւն կաթողիկոսաց էջմիածնի ի Սիմոնէ մինչև ցՅովհաննէս Ը» (Մոսկվա, 1876), երկուսն էլ դրաբար։

ՄՍԵՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ (ՁԻՆԱՐՈՎ) *(1869—1943)*.— Թատերական գործիչ։ Ծնվել է Մոսկվայում։ Որդին է հրապարակախոս-խմբագիր Զարմայր Մսերյանի։ Միջնակարգ և բարձրագույն կրթությունն ստացել է Մոսկվայում։ Ունեցել է բեմական գործունեություն։ Որպես գերասան և ռեժիսոր աշխատել է ռուսական տարբեր թատերախմբերում։ Երկար տարիներ գործել է Կազանում։ Արվեստին վերաբերող հոդվածներով աշխատակցել է ռուսական մամուլին, օգտագործելով տարբեր ծածկանուններ՝ Ջինարով, Ռուբեն, Կորբեսպ և այլն։ Գրել է պիեսներ, որոնցից «Դիմակը հանած» և «Թանկագին համբույրը» 1910-ական թվականներին հաճախ են բեմադրվել Կովկասում։

ՄՍՏՈՅԱՆ ՄԻՐՈ *(ծն. 1919)*.— Գրող, խմբագիր. Հայկական ԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Մեծ Ջումուշլու գյուղում (այժմ՝ Հայկական ԽՍՀ Արագածի շրջանի Ալագյազ)։ 1937 թ. ավարտել է Երևանի քրդական մանկավարժական տեխնիկումը։ Ապա սովորել է Մոսկվայի համամիութենական հեռակա իրավաբանական ինստիտուտում, ավարտել 1947 թ.։ 1943—1944 թթ. եղել է Հայաստանի քրդական շրջիկ թատրոնի դիրեկտոր։ Վարել է կուսակցական, պետական պաշտոններ, 1955 թ. նշանակվել է «Ռյա թազա» քրդերեն թերթի խմբագիր։ Քրդերեն լեզվով առանձին գրքերով հրատարակել է հետևյալ երկերը՝ «Սիսե» (Երևան, 1961), «Հայրենիքի զավակը» (1969), «Սրտի զգացումը» (1973)։ Խաչատուր Մուրադի հետ կազմել է քրդերեն դասագրքեր։

ՄՍԼԵՅԱՆ ԱՀԱՐՈՆ *(1872— ?)*.— Ջութակահար, կոմպոզիտոր։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է տեղի Նարեկյան վարժարանում, իսկ մասնագիտականը՝ Նեապոլի (Իտալիա) կոնսերվատորիայում, ավարտել 1908 թ.։ Կոնսերվատորիայի ժյուրին առաջին մրցանակի է արժանացրել նրա «Պոլոնեզ», «Էլեգիա», «Սոնատա», «Ռոմանս» ստեղծագործությունները։ Իտալական երաժշտական մի ընկերություն գնել է դրանք։ Վերադառնալով Պոլիս Օսմանյան սահմանագրության առաջին տարիներին՝ ծավալել է երաժշտական լայն գործունեություն։ Երաժշտագիտական հոդվածներով աշխատակցել է պարբերական մամուլին, դասավանդել է երաժշտական առարկաներ հայկական դպրոցներում, հրատարակել է «Քնար հայկական» երաժշտական հանդես, որը կարճ կյանք է ունեցել։ Նրա գնահատված երկերից են համարվել «Իդեալ», «Վերանգա», «Ռոզեթ» և այլ գործեր։ Նա է գրել Ավ. Իսահակյանի «Ծառ ամայի ճամփեքով» տարածված երգի երաժշտությունը։ 1911 թ. Կ. Պոլսում տպագրել է «Դասընթաց ձայնական երաժշտության» ուսումնական ձեռնարկը։

ՄՍԼԵՅԱՆ ԱՍՏՂԻԿ *(ծն. 1932)*.—Դաշնակահարուհի։ Ծնվել է Կահիրեում։ Դուստրն է խմբագիր տպարանատեր Երվանդ Մսլյանի։ Երաժշտական նախնական կրթությունն ստացել է Կահիրեում, ապա՝ 1947-ից կատարելագործել է Փարիզի կոնսերվատորիայում, ավարտել 1951-ին։ Հաջորդ տարվանից համերգներ է տվել Կահիրեում, Եթիոպիայում, հետագայում Մերձավոր Արևելքի բազմաթիվ քաղաքներում, նաև Ժնևում, Լոզանում։ Երգարում լայն տեղ է տվել հայ կոմպոզիտորների ստեղծագործություններին։ Հայիթիում տված մի համերգի առիթով «Լը Ֆալանժ» ֆրանսերեն թերթը անդրադառնալով Ա. Խաչատրյանի և Ա. Բաբաջանյանի ստեղծագործությունների նրա կատարմանը, գրել է, թե նա այդ կոմպոզիտորների ստեղծագործությունների միջից պեղել, գտել է հանել այն, ինչ կարող էր «լավագույնս ոգեկոչել հայկական հոգին և բանաստեղծությունը»։

ՄՍԼԵՅԱՆ ՊԵՎՈՒՊ *(1886—1950)*.— Արաբագետ-պատմաբան, թարգմանիչ։ Ծնվել է Կեսարիայում։ Փոքր հասակից ծնողների հետ տեղափոխվել է Եգիպտոս, սովորել արաբական դպրոցում, հմտացել արաբերենի մեջ։ 1910-ական թվականներից պատմա-բանասիրական

հոդվածներով աշխատակցել է արարական և հայկական մամուլին։ Հրատարակել է արժեքավոր հետազոտություններ հայ-եգիպտական հնագույն հարաբերությունների վերաբերյալ, գրավելով եվրոպական, նաև խորհրդային արևելագետների ուշադրությունը։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ Իբն Խալիքանի «Վեֆայաթ էլ Այան» (Կահիրե, 1935), «Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ»։ Կապված է եղել Եգիպտահայ կյանքի հետ։ Եղել է Կահիրեի հայոց առաջնորդարանի դիվանապետ։

ՄՍԼՅԱՆ ԵՐՎԱՆԴ *(1886—1971).*— Հրապարակախոս, խմբագիր, հրատարակիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ 1904 թ. մեկնել է Եգիպտոս, աշխատել ֆրանսիական մի տպարանում։ 1908 թ. վերադարձել է Կ. Պոլիս, պաշտոնավարել «Մանզումեի Էֆքյար» հայերեն թերթի տպարանում, ապա հիմնել է «Գյուլենմբերգ» տպարանը, որտեղ տպագրվել են հայերեն թերթեր և բազմաթիվ գրքեր։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին կրկին մեկնել է Եգիպտոս, Կահիրեում հիմնել տպարան, հրատարակել «Խարաշո» երգիծաթերթը։ 1918 թ. նույն քաղաքում հիմնել է «Ոսկետառ» հայտնի տպարանը, հիմնադրել «Սավառնակ» երգիծաթերթը։ Թե տպարանը և թե այդ պարբերականը պահել է մինչև կյանքի վերջը։ Նրա «Ոսկետառ» տպարանում են տպագրվել հայ հրատարակչական «Արգոս» ընկերության լույս ընծայած տասնյակ վեպերը, թարգմանված ֆրանսերենից, Աշոտ Պատմագրյանի պատրաստած «Գանձարան հայ երգերու» ժողովածուների վեց հատորները և տասնյակ այլ գրքեր։ Կյանքի վերջին տարիներին այցելել է Խորհրդային Հայաստան։

ՄՍԼՅԱՆ ԶԱՎԵՆ *(ծն. 1938).*— Բանաստեղծ, կրթական գործիչ։ Ծնվել է Բեյրութում (Լիբանան)։ Կրթությունն ստացել է Բեյրութի Մխիթարյան, Տրիպոլիի Նուպարյան և Բեյրութի ս. Նշան վարժարաններում՝ 1942—1950 թթ.։ Ապա մինչև 1955 թ. սովորել է Բեյրութի հայ ավետարանական կոլեջում, 1955-ից՝ Ամերիկյան համալսարանում, որի եվրոպական պատմության բաժինն ավարտել է 1959 թ., իսկ Միջին արևելքի պատմագրության բաժինը՝ 1963-ին՝ արվեստի մագիստրոսի աստիճանով։ 1960-ից աշխատել է Բեյրութի Հայ ավետարանական կոլեջում, դասավանդել պատմություն, իսկ 1967-ից եղել է նույն կոլեջի տնօրենը։ Անդամ է «Շիրակ» ամսագրի խմբագրական մարմնի, նաև «Սիփան» տարեգրքի։ Աշխատակցել է «Շիրակին», «Հայկազյան հայագիտական հանդեսին», «Հասկ» հայագիտական տարեգրքին, «Զարթոնքին»։ Հրատարակել է պատմագրական մի քանի գրքույկներ, ինչպես՝ «Հայկական հարցի մասին» (1978), «Երեք դաշնագրեր» (1979)։ 1981 թ. լույս է ընծայել իր հոր՝ Մկրտիչ Մսըլյանի ազգային քաղաքական գործունեության մասին ծավալուն մի գիրք։

ՄՍԼՅԱՆ ՄԿՐՏԻՉ *(1898—1979).*— Հասարակական, մշակութային գործիչ։ Ծնվել է Փոքր Ասիայի Էլմալու քաղաքում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է ծննդավայրում։ 1922-ին անցել է Սիրիա, այնտեղից՝ Լիբանան, աշխատել Բեյրութում, որտեղ ունեցել է մշակութային, հասարակական նկատելի գործունեություն։ Եղել է Հայկական բարեգործական ընկերության և մշակութային այլ միությունների գործուն անդամներից, «Զարթոնք» օրաթերթի, «Անի» հանդեսի Թեքեյան մշակութային միության հիմնադիրներից, սահմանել է գրական մրցանակներ։ Ունեցել է հասարակական բեղուն գործունեություն։ Որդին՝ Զավեն Մսըլյանը 1981 թ. Բեյրութում լույս է ընծայել ծավալուն մի հետազոտություն նրա հասարակական, մշակութային գործունեության մասին։

ՄՍԼՅԱՆ ԱՐԱՔՍԻ *(1906—1971).*— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Սարիղամիշում (այժմ՝ Թուրքիա)։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո նրանց ընտանիքը գաղթել է Ռուսաստան, բնակություն հաստատել Վլադիկավկազում (այժմ՝ Օրջոնիկիձե), որտեղ ստացել է հայկական միջնակարգ կրթություն։ Բեմական ասպարեզ է մտել 1926 թ.։ Մինչև 1934 թ. աշխատել է Հյուսիսային Կովկասի հայկական թատերախմբերում, ապա տեղափոխվել Հայաստան, խաղացել նախ Ալավերդու, ապա՝ 1951—1964 թթ.՝ Կիրովականի թատրոնում։ Կատարած դերերից են՝ Կրուչինինա («Անմեղ մեղավորներ»), Աննա Դեմբի («Քին»), Եփեմիա («Պեպո»), Ուստիան («Քաջ Նազար»), Մարգարիտ («Պատվի համար»), Դեզդեմոնա («Օթելլո»), Ամալիա («Ավազակներ»), Զարնիշան («Զար ոգի»), Ռոզալիա («Ոճրագործի ընտանիքը») և այլն։

ՄՍԵՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(1888—1965).*— Բանաստեղծ, կրթական գործիչ։ Ծնվել է Սեբաստիայի գավառի Էրզաս գյուղում։ Կրթությունն ստացել է Եվզոնիայի Հիսուսյան կաթոլիկական վարժարանում, ավարտել 1906 թ. և զբաղվել ուսուցչությամբ։ 1910 թ. մեկնել է Ֆրանսիա, ստացել բարձրագույն կրթություն, սովորել հին ու նոր մի քանի լեզու։ 1926 թ. դարձել է Բեյրութի Սեն-Ժոզեֆ համալսարանի դասախոս։ Հետագայում՝ 1929—1932 թթ. Փարիզում կատարելագործել է իր գիտելիքները, հետևել Ա. Մեյեի համեմատական լեզվաբանության դասընթացներին։ 1932 թ. մի քանի ամիս Սորբոնի համալսարանում դասավանդել է Հայ եկեղեցու պատմություն։ Նույն թվականից Ֆրանսիայի գեղարվեստների ակադեմիայի առաջարկով պեղումներ է կատարել Անտիոքի շրջանում։ 1933 թվականից Սեն-Ժերմենի համալսարանում դասավանդել է բյուզանդական և հայկական արվեստի պատմություն, այնտեղ ստեղծել հայագիտական ամբիոն։ Մասնակցել է արևելագիտական և բյուզանդական մի քանի գիտաժողովների։ 1931 թ. ընտրվել է Փարիզի Ասիական ընկերության, իսկ 1948 թ.՝ Բյուզանդագիտական միջազգային համաժողովի անդամ։ Հայագիտական մի շարք ուսումնասիրություններ է տպագրել «Բյուլետեն Արմենոլոժիք» հանդեսում և այլ հրատարակություններում։

ՄՍԵՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(1897—1973).*— Դերասան. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Կարսում։ Բեմական ասպարեզ է մտել 1916 թ. Կարսում, մասնակցելով Հովհ. Զարիֆյանի կողմից կազմակերպված ներկայացումներին։ Հետագայում տեղափոխվել է Թիֆլիս, խաղացել Հայարտանը կից գործող դրամատիկական թատրոնում, Արաքսյանի թատրոնում, Արհեստավորաց ակումբում՝ ռեժիսորներ Ա. Արմենյանի, Ս. Քափանակյանի, Լ. Քալանթարի, Ա. Բուրջալյանի ղեկավարությամբ։ Գլխավոր դերերից են՝ Ցագո («Օթելլո»), Ֆրանց («Ավազակներ»), Սաղաթել («Պատվի համար»), Հայրապետ («Նամուս»), Վուրմ («Սեր և խարդավանք»), Շմագա («Անմեղ մեղավորներ»), Գիքո («Պեպո»), Իսայի («Խաթաբայա»), Մոնտանելլի («Բոռ»), Պոլոնիուս («Համլետ») և այլն։

ՄՍԵՐՅԱՆ-ՕՔՍՈՒԶՅԱՆ ՊԵՐՃԱՆՈՒՇ *(ծն. 1914).*— Ճարտարապետ. Հայկական ԽՍՀ վաստակավոր շինարար (1967)։ Ծնվել է Այեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, որի շինարարական ֆակուլտետն ավարտել է 1938 թ.՝ ճարտարապետ շինարարի կոչումով։ Նույն տարվանից աշխատել է Երքաղսովետի գործկոմի ճարտարապետական-հատակագծային արվեստանոցում նախ որպես նախագծող ճարտարապետի օգնական, ապա՝ ավագ ճարտարապետ և գլխավոր մասնագետ։ Քսան տարի անընդմեջ աշխատել է այդ հաստատությունում, առաջին 10 տարին՝ ճարտարապետ Մ. Գրիգորյանի ղեկավարությամբ։ Հիմնականում աշխատել է Երևանի գլխավոր հատակագծերի վրա։ Հեղինակն է Ջերմուկ բուժավայրի առաջին գլխավոր հատակագծի, որն արժանացել է ԽՍՀՄ ճարտարապետների միության վարչության պատվոգրին։ Նախագծել է բնակելի տներ, վարչական շենքեր, ինչպես Ավ. Իսահակյանի առանձնատունը, որն այժմ վարպետի տուն-թանգարանն է։ 1970 թվականից անցել է մանկավարժական աշխատանքի Երևանի շինարարական տեխնիկումում որպես մասնագիտական առարկաների դասատու։ Հրատարակել է «Տնամերձ պարտեզների կանաչապատումը» գրքույկը (Երևան, 1949)։

ՄՐՄՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ *(1860—1926).*— Գրող, բանաստեղծ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է Սկյուտարի հայկական դպրոցում։ Ինքնաուսուցմամբ սովորել է անգլերեն, ֆրանսերեն, կատարելագործել գրաբարը։ Գրել է պատմագրական, գեղարվեստական, փիլիսոփայական երկեր, որոնք լույս են տեսել պարբերական մամուլում, գերազանցապես «Բյուզանդիոն» օրաթերթում և առանձին գրքերով։ Դրանցից հիշատակության արժանի են՝ «Հին օրեր» (Կ. Պոլիս, 1901), «Պոետ Խաչատուր Միսաքյան» (1907), «Թուրքահայոց հին վաճառականությունը» (1908), «Տասնեհինգերորդ դար և Տերոյենց» (1908), «Մասնական պատմություն հայ մեծատուններու» (1909), որոնք փաստական հարուստ նյութ են պարունակում 19-րդ դարի հայ հասարակական, մտավոր և տնտեսական կյանքին վերաբերող։ Առանձին

գրքերով հրատարակած մյուս աշխատություններից են՝ «Պատմություն հայ գրականության» (1911), «Ալելույա ինքնակ», «Ալելույա Երուսաղեմ» (1903) և այլն։ Որպես ծածկանուն օգտագործել է Ուխտավոր։ Ֆրանսերենից և անգլերենից կատարել է թարգմանություններ, մեծ մասամբ փիլիսոփայական երկեր։

ՄՈՒԹԱՖՅԱՆ ՋԱՐԵՀ *(1907—1980).*— Նկարիչ։ Ծնվել է Սամսոնում (Թուրքիա)։ Մեծ եղեռնի օրերին զրկվել է ծնողներից, ընկել որբանոցները, որտեղ ստացել է տարրական կրթություն։ 1923 թ. սովորել է Մխիթարյանների Միլանի որբանոցում, հաջորդ տարվանից՝ Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, իսկ 1927—1931 թթ.՝ Միլանի գեղարվեստների ակադեմիայում։ Այնուհետև մասնագիտությունը կատարելագործել է Հռոմում։ 1933 թ. Միլանում ունեցել է անհատական առաջին ցուցահանդեսը։ Մասնակցել է Ցյուրիխում կազմակերպված դիմանկարի ցուցահանդեսին, շահել առաջին մրցանակ։ 1937—1939 թթ. ապրել է Շվեյցարիայում, իսկ 1939-ից՝ Փարիզում։ Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Բեռլինում, Ժնևում, Փարիզում, Երևանում (1967, 1971) և այլ քաղաքներում։ Լավագույն գործերից են՝ «Զարդը», «Մահ և կյանք», «Հայ մամիկը», Ա. Զոպանյանի դիմանկարը, «Տաթև», «Արարատ և Արաքս», «Մոր հրճվանքը», «Զրկնորսները» և այլն։ Արվեստաբանական հոդվածներով աշխատակցել է «Բազմավեպ», «Անդաստան», «Զվարթնոց» և այլ պարբերականների։ Հայաստան կատարած առաջին ճանապարհորդության ընթացքում ստեղծել է գեղանկարչական մի շարք գործեր։ Փարիզ վերադառնալուց հետո հրատարակել է «Հայաստանի մեջ վրձինով և գրիչով» գիրքը (Փարիզ, 1970)։ Նրա գործերից մի քանիսը՝ «Լքված ագարակը», «Ամբերդ», «Անտառ», «Ոսկե աշուն» և այլն, պահվում են Հայաստանի պետական պատկերասրահում։

ՄՈՒԹԱՖՅԱՆ ԼԵՎՈՆ *(ծն. 1910).*— Երաժիշտ-կլարնետահար։ Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1956)։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Մասնագիտական կրթություն ստացել է Երևանի երաժշտական ուսումնարանում, ավարտել 1936 թ., իսկ 1941 թ. ավարտել է Երևանի պետական կոնսերվատորիան։ 1936 թվականից որպես մենակատար նվագել է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում։ Ունեցել է մանկավարժական երկարամյա գործունեություն։

ՄՈՒՇԵՂՅԱՆ ԱԼԲԵՐՏ *(ծն. 1931).*— Բանաստեղծ, թարգմանիչ։ Ծնվել է Երևանում։ Փոքր հասակում ստացած մի արկածից կորցրել է տեսողությունը։ Կրթությունն ստացել է կույր երեխաների գիշերօթիկ յոթնամյա դպրոցում, 1949 թ. ավարտել է Երևանի № 3 երկրյան դպրոցը, 1954-ին՝ Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական բաժինը, 1959-ին՝ ասպիրանտուրան։ 1956-ին կազմակերպել է կույրերի համար ուսուցիչ տառերով (բուլյան տառեր) գրքեր տպագրելու տպարան և աշխատել է այնտեղ որպես գլխավոր խմբագիր։ Այնտեղ են լույս տեսել հայերեն առաջին բալյան գրքերը՝ Ե. Չարենցի երկերի ժողովածուն, Մ. Արմենի «Հեղնար աղբյուրը», Ավ. Իսահակյանի պոեմներն ու պատմվածքները և այլն։ 1958—1966 թթ. խմբագրել է կույրերի միավորման ամսագիրը՝ ուսուցիչ տառերով։ 1965—1973 թթ. եղել է Հայաստանի կույրերի միավորման կենտրոնական վարչության նախագահ։ Ապա շորս տարի աշխատել է ԴԱ արվեստի ինստիտուտում, այնուհետև՝ գրականության ինստիտուտում։ Գերմաներենից թարգմանել է Հ. Հայնեի «Զմեռային հեքիաթ» պոեմը, որը տպագրվել է Հայնեի երկերի երկհատորյակի 2-րդ հատորում (Երևան, 1959)։ 1983 թ. առանձին գրքով լույս է ընծայել «Ավետիք Իսահակյան, վաղ տարիներ» աշխատությունը։

ՄՈՒՇԵՂՅԱՆ ԳԱՐԻԿ *(ծն. 1910).*— Դերասան, ռեժիսոր։ Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1950)։ Ծնվել է Երևանում։ 1928 թվականից աշխատել է Երևանի պետական առաջին թատրոնում, միաժամանակ սովորել այդ թատրոնին կից գործող թատերական տեխնիկումում, ավարտել 1932 թ.։ Նույն տարվանից ունեցել է նաև ռեժիսորական գործունեություն Գ. Սունդուկյանի անվան թատրոնում։ Երևանում, Կիրովականում, Այլավերդիում բեմադրել է մի շարք պիեսներ, ինչպես՝ «Պաղատասար աղբար», «Մեծապատիվ մուրացկաններ», «Քաղքենին աղնվական», «Ժլատ ասպետը»։ 1934 թ. նշանակվել է Լենինականի Ա. Մռավյանի անվան պետական թատրոնի ռեժիսոր, այնտեղ բեմադրել է «Վենետիկյան երկվորյակներ», «Ավերակների վրա», «Կրիչինսկու հարսանիքը»։ 1946 թ. տեղափոխվել է Երևան և աշխատել տիկնիկային թատրոնում որպես դիրեկտոր և գեղարվեստական ղեկավար։ Բեմադրել է «Շունն ու կատուն», «Անահիտ», «Կաշտանկա», «Գիքոր» և այլ մանկական պիեսներ։ 1952 թվականից աշխատում է «Հայֆիլմ» կինոստուդիայում որպես ռեժիսոր։ Նկարահանվել է Հայֆիլմի, Մոսֆիլմի և Գրուզֆիլմի մի քանի կինոնկարներում։ Գրել է պիեսներ, սցենարներ, կատարել պիեսների թարգմանություններ, որոնք բեմադրվել են մեր թատրոններում և կինոյում։

ՄՈՒՇԵՂՅԱՆ ԳԵՎՈՐԳ *(ծն. 1911).*— Ճարտարապետ։ Հայկական ԽՍՀ վաստակավոր շինարար (1961)։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում, որի ճարտարապետության բաժինն ավարտել է 1937-ին։ Աշխատել է Ալ. Թամանյանի արվեստանոցում, մասնակցել է Երևանի նախագծման աշխատանքներին։ Նրա նախագծերով Երևանում, Լենինականում և հանրապետության այլ վայրերում կառուցվել են հանրային օգտագործման և բնակելի տասնյակ շենքեր, կամուրջներ, հուշարձաններ, որոնցից են՝ ակումբ Արտաշատում, Վ. Ի. Լենինի հուշարձանը Գորիսում (քանդակագործ՝ Ս. Ստեփանյան), բնակելի շենքերի համալիրներ Երևանի մի քանի փողոցներում և պողոտաներում, «Կարապի լիճը», «Էրեբունի» լիճը և այլն, հանրակացարան Երևանի Ազատության պողոտայի վրա, Երևանի № 60 դպրոցը և այլն։

ՄՈՒՇԵՂՅԱՆ ԽԱՉԻԿ *(ծն. 1919).*— Գրամագետ-պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր (1976)։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ 1948-ին ավարտել է Լենինականի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, ուսումը շարունակել Լենինգրադի Էրմիտաժի ասպիրանտուրայում, աշակերտելով Ա. Ս. Բիկովին, Վ. Ի. Բելյաևին, Հ. Ա. Օրբելուն և այլ ականավոր արևելագետների, մասնագիտանալով դրամագիտության մեջ։ Վերադառնալով Հայաստան՝ 1951-ից մասնակցել է Դվինի հնագիտական պեղումներին։ 1955 թվականից աշխատել է Հայաստանի պատմության պետական թանգարանում, 1958-ին նշանակվել է նույն թանգարանի դրամագիտության բաժնի վարիչ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հայաստանի դրամական գանձերը» (հատ. 1-ին Երևան, 1973), «Դրամական շրջանառությունը Հայաստանում» (Վիեննա, 1979, նույնը՝ Երևան, 1983), «Դրամական շրջանառությունը Դվինում, ըստ դրամագիտական տվյալների» (ռուսերեն, Մոսկվա, 1962), «Հայաստանի միջազգային կապերը ըստ դրամագիտական տվյալների» (ֆրանսերեն)։ 1966 թվականից «Հայկական դրամագիտություն» է դասավանդում Երևանի պետական համալսարանում։

ՄՈՒՍԹԱՐԻՀ ՎԵՆՍԱՆ *(ծն. 1935).*— Ծագումով հայ արաբագիր բանաստեղծ։ Ծնվել է Ցաղուպին արաբախոս հայկական գյուղում (Սիրիա)։ Կրթությունն ստացել է Ֆրանչիսկյան միաբանության Բեթղեհեմի դպրոցում և Երուսաղեմի մայրավանքում։ Երեք տարի էլ սովորել է Հռոմում։ Հայերենը սովորել է Երուսաղեմում՝ Հովսեփ վարդապետ Մամուրից և Զմմառի վանքում, կատարելագործել է Վենետիկի Մխիթարյանների վանքում ու Հռոմի Լեոնյան վարժարանում։ Իմացել է հին և նոր մի շարք լեզուներ, որոնց թվում՝ գրաբար և աշխարհաբար հայերեն։ Որպես փոխտնօրեն աշխատել է Մուսքիի (Կահիրե) Ֆրանչիսկյան քույրերի Արևելյան քրիստոնեական ուսումնասիրությունների կենտրոնում։ Այնտեղ խմբագրել է «Քոլեքթանխա» գիտական տարեգիրքը։ Հայ հին մատենագրությունից կատարել է մի շարք թարգմանություններ, որոնք տպագրվել են վերոհիշյալ տարեգրքում։ Հրատարակել է «Հայկական մատենագիտություն» երկհատոր աշխատությունը (1969, 1980)։ Գրաբարից իտալերեն է թարգմանել Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի» մեկնության առաջին չորս գլուխները (Կահիրե, 1968)։ Գևորգ Սկևռացու երեք վարքերն էլ թարգմանել է ֆրանսերենի (1970)։

ՄՈՒՍԻՆՅԱՆ ՆԻՆԱ.— Դաշնակահարուհի։ Մասնագիտական նախնական կրթությունն ստացել է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, ապա սովորել է Մոսկվայի կոնսերվատորիայում, որի ասպիրանտուրան ավարտել է Հայրենական պատերազմի առաջին տարիներին, աշակերտելով Կ. Իգումնովին։ 1942 թվականից ունեցել է հրա-

պարակային ելույթներ, նախ նվագել Նովոսիբիրսկում, Լենինգրադի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբում, ապա՝ նույն տարվանից՝ ականավոր թավջութակահար Դանիել Շաֆրանի հետ շրջագայել է Խորհրդային Միության և արտասահմանյան տասնյակ քաղաքներ, եղել է Չեխոսլովակիայում, Գերմանիայում, Հունգարիայում, Ռումինիայում, Լեհաստանում, Ֆինլանդիայում, Ամերիկայում, Իտալիայում և այլն։ Եղել է նաև Խորհրդային Հայաստանում, ամենուր արժանանալով բարձր գնահատման։ Ունեցել է մանկավարժական գործունեություն։ Որպես դոցենտ աշխատել է Մոսկվայի կոնսերվատորիայում։

ՄԱՒՐԱԴ (15-րդ դ.).— Ծաղկող։ 1460 թ. Արծկեում և Աղթամարում ծաղկել է մի Ավետարան, իսկ 1471 թ.՝ մի Մաշտոց։

ՄԱՒՐԱԴ (17-րդ դ.).— Ճարտարապետ։ Կառուցել է Աշտարակի շրջանի Մուղնի գյուղի եկեղեցին։

ՄԱՒՐԱԴ ԱԿՈՌԵՑԻ (17-րդ դ.).— Մանրանկարիչ։ Ապրել է Մասիս սարի լանջին գտնված Ակոռի գյուղում, որտեղ 1666 թ. նկարազարդել է մի Ավետարան, որտեղ կան նաև նկարչի, իր կնոջ ու որդու նկարները։ Ձեռագիրը պահվում է Երևանի Մատենադարանում։ Կոչվել է նաև Մուրադ Դպիր։

ՄԱՒՐԱԴ ԴԱՎԱՔ (18—19-րդ դդ.).— Աշուղ։ Նրա հորինած և կատարած տաղերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № № 3055, 4322, 9004, 9966 ձեռագրերում։

ՄԱՒՐԱԴԵԼԻ (ՄԱՒՐԱԴԻՎ) ՎԱՆՈ (1908—1970).— Կոմպոզիտոր. ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1968)։ Ծնվել է Գորիում (Վրացական ԽՍՀ)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թբիլիսիի կոնսերվատորիայում, սովորել Ս. Բարխուդարյանի ստեղծագործական դասարանում։ 1934—1938 թթ. կատարելագործվել է Մոսկվայի կոնսերվատորիայում։ 1929—1931 թթ. աշխատել է Թբիլիսիի շրջիկ թատրոնում որպես դերասան և կոմպոզիտոր, 1942—1944 թթ.՝ ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի անսամբլում որպես գեղարվեստական բաժնի պետ։ 1939—1948 թթ. եղել է ԽՍՀՄ կոմպոզիտորների միության նախագահության կազմկոմիտեի անդամ, 1958—1960 թթ.՝ ՌԽՖՍՀ կոմպոզիտորների միության կազմկոմիտեի նախագահի տեղակալ, 1959-ից՝ ՌԽՖՍՀ կոմպոզիտորների միության Մոսկվայի բաժանմունքի նախագահ, 1960-ից՝ ՌԽՖՍՀ կոմպոզիտորների միության վարչության քարտուղար, 1968-ից՝ ԽՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության քարտուղար։ 1946 և 1951 թթ. արժանացել է պետական մրցանակներ։ Հորինել է տարբեր ժանրի բազմաթիվ երկեր. օպերաներ՝ «Մեծ բարեկամություն». նախ բեմադրվել է Դոնեցկում, 1947-ին, ապա՝ Մոսկվայում, «Հոկտեմբեր». բեմադրվել է 1964-ին, Մոսկվայում, Կրեմլի համագումարների դահլիճում, ԽՍՀՄ մեծ թատրոնի ուժերով, «Կապուտաչյա աղջիկը». (օպերետ, բեմադրվել է նախ Մոսկվայում, 1966-ին, ապա՝ այլ քաղաքներում)։ Գրել է սիմֆոնիաներ, սյուիտներ, բազմաթիվ երգեր, ռոմանսներ՝ տարբեր գրողների տեքստերով, այդ թվում հայ հեղինակներից՝ Ավ. Իսահակյանի, Հովհ. Թումանյանի, Ս. Կապուտիկյանի, նաև երաժշտություն՝ տասնյակ կինոֆիլմերի և թատերական ներկայացումների համար։

ՄԱՒՐԱԴԵԱՆ ԱԲՐԱՀԱՄ (1833—1903).— Հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Արմաշում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է ծննդավայրի և Նիկոմեդիայի հայկական դպրոցներում, իսկ ավելի ուշ՝ Երուսաղեմի հայոց վանքի ժառանգավորաց վարժարանում։ 1850—1853 թթ. Նիկոմեդիայում հրատարակել է «Հայրենասեր» պարբերականը։ Աշխատակցել է տարբեր թերթերի։ 1860 թ. Փարիզում հիմնել է «Փարիզ» թերթը, որը լույս է տեսել երեք տարի, արձագանքելով 1860-ական թվականների առաջավոր գաղափարներին՝ ջերմ տողեր նվիրելով Միք. Նալբանդյանին։ «Փարիզը» դադարեցնելուց հետո՝ 1863-ին մեկնել է Եգիպտոս, նշանակվել Ալեքսանդրիայի Խորենյան նորաբաց վարժարանի տեսուչ։ 1865-ից Եգիպտոսում լույս է ընծայել «Արմավենի» պարբերականը, որը նույնպես ունեցել է կարճ կյանք։ 1860-ական թվականների վերջերից ապրել է Կ. Պոլսում, զբաղվել ուսուցչությամբ, շարունակելով աշխատակցել պոլսահայ մամուլին։ Ֆրանսերենից կատարել է թարգմանություններ, այդ թվում՝ Միշլեի «Սերը»։ Կազմել է մի «Այբբենարան», որի Ա մասը լույս է տեսել Կ. Պոլսում, 1889 թ., Բ մասը՝ 1890 թ.։

ՄԱՒՐԱԴԵԱՆ ԱՎԵՏԻՍ (1898— ?).— Նկարիչ։ Ծնվել է Սեբաստիայում։ Սովորել է տեղի ֆրանսիական, ապա՝ հայկական դպրոցներում, վերջինում աշակերտել է Դանիել Վարուժանին։ Հետագայում մասնագիտական կրթություն է ստացել Կ. Պոլսի գեղարվեստների դպրոցում։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո մեկնել է Սիրիա, այնտեղից՝ Երուսաղեմ, որտեղ ստեղծել է իր լավագույն գործերից մի քանիսը՝ «Հրեուհին», «Սողոմոնի տաճարի պատի մոտ», «Օձահման», «Հրեայի տիպար», «Ասորի կինը» և այլն։ Այս նկարները ցուցադրվել են Երուսաղեմում, արժանացել են մըրցանակի։ 1922-ին նա իր գործերը ցուցադրել է Եգիպտոսի Կահիրե, Ալեքսանդրիա և Լուքսոր քաղաքներում, ներկայացնելով նաև մի քանի նոր կտավներ՝ «Սուլտանուհին», «Բերբերի», «Հաշիշամոլը», «Ոճրագործը», «Հաբեշ ծերունին» և այլն։ Հաջորդ տարի նա իր աշխատանքները ցուցադրել է Իտալիայում, արժանացել իտալական մամուլի («Իլ ջուրնալե դ'Իտալիա», «Իլ Մեսաջեր», «Լա Թրիբունա» և այլն) բարձր գնահատմանը։ 1925 թվականին էլ ցուցահանդես է ունեցել Հունաստանում, իր գործերը ցուցադրել Քորֆուի արքայական պալատի սրահներից մեկում։

ՄԱՒՐԱԴԵԱՆ ԲԱԳՐԱՏ (1887—1958).— Դերասան. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1931)։ Ծնվել է Թիֆլիսում։ Խաղացել է Թիֆլիսի Մուրաշկոյի թատրոնում։ Խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ 1924—1932 և 1945—1948 թթ. խաղացել է Երևանի Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնում, 1933—1940 թթ.՝ Բաքվի, 1940—1945 թթ.՝ Երևանի պատանի հանդիսատեսի թատրոններում։ Աշխատել է նաև Գիլիջանի շրջանային թատրոնում։ Լավագույն դերերից են՝ Շամա («Անմեղ մեղավորներ»), Բեն Ակիբա («Ուրիել Ակոստա»), Զիմզիմով («Պեպո»), Իսայի («Խաթաբալա»), Վարմ («Սեր և խարդավանք»), Ֆրանց («Ավազակներ»), Փարսիզ («Քանդած օջախ»), Սապոթել («Պատվի համար»), Քաջ Նազար և այլն։

ՄԱՒՐԱԴԵԱՆ ԵԼԻԱԶԱՐ (1841—1891).— Մանկավարժ։ Ծնվել է Վանում։ Կրթությունն ստացել է Կ. Պոլսում։ Սկզբում հիմնել է մասնավոր դպրոց։ Կազմել ու հրատարակել է մի շարք դասագրքեր, որոնք արժանացել են բազմաթիվ հրատարակությունների, ինչպես՝ «Նոր ճաշակ դպրության կամ համառոտ ճարտասանություն» (Երուսաղեմ, 1868), «Նոր ընթացք գրաբար լեզվի ուսման» (Կ. Պոլիս, 1868), «Քերականություն գաղիերեն լեզվի, հայերեն բացատրությամբ» (1869), Առձեռն դրագիտություն կամ համառոտ ընթացք տրամաբանության, ճարտասանության և բանաստեղծության» (1872), «Ծաղիկ արդի մատենագրության» (2 հատոր, 1884—1885) և այլն։ Եամահու լույս է տեսել նրա «Քննական պատմություն Արշակ Բ-ի և անոր Պապ որդույն» աշխատությունը (Ալեքսանդրիա, 1900)։ Գրել է երկու պիես՝ «Վարդան Մամիկոնյան» և «Աղասի», որոնք բեմադրվել են 1870-ական թվականներին։ Ֆրանսերենից թարգմանել է բժշկական գրքեր, ինչպես՝ «Տնական բժիշկ», «Ամուսնական առողջաբանություն» և այլն։

ՄԱՒՐԱԴԵԱՆ ԶԱՐԵՀ (ծն. 1913).— Բալետի մենակատար, ռեժիսոր. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Խարբերդում (Արևմտյան Հայաստան)։ Մասնագիտական նախնական կրթությունն ստացել է Երևանի պարարվեստի ուսումնարանում, 1930 թվականից սովորել Մոսկվայի Մեծ թատրոնին կից պարարվեստի ուսումնարանում, ավարտել 1935 թ.։ 1936 թվականից՝ Երևանի Ա.Ս. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, որտեղ նրա կատարած դերերից են՝ Իշխան («Բախչիսարայի շատրվանը»), Գիքո («Գայանե»), Լի Շան Ֆու («Կարմիր կակաչ») և այլն։ Ունեցել է ռեժիսորական գործունեություն։ Բեմադրել է «Գոն Կիխոտ», «Խանդութ», «Սևան», «Կարապի լիճը», «Վալբուրգյան գիշեր», ինչպես և «Նամուսի», «Պաղատասար աղբարի» և այլ ներկայացումների պարային մասերը։ 1944 թվականից աշխատում է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում իբրև պարային առարկաների ուսուցիչ։

ՄԱՒՐԱԴԵԱՆ ԷԴՎԱՐԴ (1907—1980).— Դերասան։ Ծնվել է Խարբերդում։ Կրթությունն ստացել է Հալեպի (Սիրիա) Հայկազյան վարժարանում, որն ավարտել է 1924-ին։ Հաջորդ տարի ներգաղթել է Խորհրդային Հայաստան։ 1925—1927 թթ. խաղացել է Երևանի պետական թատրոնում, 1928—1930 թթ.՝ Բանվորական շրջիկ, 1930—1948 թթ. Պատանի հանդիսատե-

սի թատրոններում։ 1949 թվականից աշխատել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, նախ եղել է դերասանական ֆակուլտետի դեկան, բեմադրական մասի գեկավար, իսկ 1959 թվականից՝ ինստիտուտի գիտական քարտուղար։ Տարիների ընթացքում խաղացած դերերից են՝ Բիլլի («Տրիլբի»), Դոբչինսկի («Ռևիզոր»), Տիլ Ուլենշպիգել («Տիլ Ուլենշպիգել»), Լևոն («Արտիստը»), Սիլվիո («Երկու տիրոջ ծառան»), Սուրեն («Պատվի համար»), Շայլոկ («Վենետիկի վաճառականը»), Մասիսյան («Խաթաբալա») և այլն։ Նկարահանվել է մի քանի ֆիլմերում։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԿԻՄ (ծն. 1938).— Բանասեր, բանասիրական գիտությունների դոկտոր (1986)։ Ծնվել է Ախալքալաքի շրջանի Ղաղուար գյուղում (Վրացական ԽՍՀ)։ Բարձրագույն կրթություն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 1965-ին։ Ապա ուսումը շարունակել է Հայկական ԽՍՀ ԳԱ ասպիրանտուրայում՝ հայ հին գրականության մասնագիտությամբ։ 1970—1978 թթ. աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ «Լրաբեր» (հասարակական գիտություններ) ամսագրում, 1973-ից իբրև պատասխանատու քարտուղար։ 1978-ից աշխատում է ԳԱ արևելագիտության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող։ Առանձին գրքերով 1976 թ. լույս է ընծայել «Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ» աղբյուրագիտական ուսումնասիրությունը, 1983-ին՝ «Գրիգոր Նարեկացին հայ մատենագրության մեջ»։ 1984-ին նրա աշխատասիրությամբ լույս է տեսել «Յաղագս Վեցաւրեայ արարչութեան»-ը (քննական բնագիր)։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ (ծն. 1914).— Նկարիչ։ Ծնվել է Բիթլիսում (Արևմտյան Հայաստան)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում, ավարտել է 1931 թ.։ Հիմնականում զբաղվել է գրքի ձևավորմամբ և պլակատներ պատրաստելով։ 1936 թվականից մասնակցել է ցուցահանդեսների, իսկ 1942 թ. Երևանում ունեցել է առաջին ցուցահանդեսը։ Լավագույն գործերից են՝ «Բջնի գյուղը», «Սոցիալիստական Երևանը», «Մերձբալթյան քաղաքներ» (նկարաշարք)։ Աշխատակցում է «Խորհրդային գրականություն», «Վիտեբսկայա Արմենիա» և այլ պարբերականների։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿԱԶ (ծն. 1927).— Քանդակագործ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել է 1957-ին։ Նույն տարվանից մասնակցել է հանրապետական ցուցահանդեսների։ 1981-ին Հոկտեմբերյանի հրապարակի համար հայտարարված Վ. Ի. Լենինի հուշարձանի նախագծի մրցույթում շահել է մրցանակ։ Լավագույն գործերից են Արմենակ Մնջոյանի, Լեոյի, Մայակովսկու և այլոց կիսանդրիները։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅՐԻԿ (ծն. 1905).— Երգիչ-բանահավաք։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Շատախ գավառի Ջնդուկ գյուղում։ 1921 թ. եկել է Խորհրդային Հայաստան։ Վարել է կոմերիտական, արհմիութենական և կուսակցական տարբեր պաշտոններ, զուգահեռ ստացել կրթություն։ 1548 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը. 1952—1962 թթ. եղել է Գուգարքի մետալուրգիայի աշխատողների արհմիութենական հանրապետական կոմիտեի նախագահը։ 1962-ին անցել է կենսաթոշակի և նվիրվել երգարվեստի։ Երևանի պետական համալսարանում, Պոլիտեխնիկական ինստիտուտում և այլուր հասարակական կարգով ստեղծել է ուսանողական երգչախմբեր, սովորեցրել և ինքն էլ կատարել է ժողովրդական երգեր։ Զուգահեռ գրի է առել նման բազմաթիվ երգեր։ Կատարումներից մի քանիսը լույս են տեսել 1980-ին «Հայրենի երգեր» խորագրով։ Հրատարակել է մի շարք հոդվածներ՝ հայ ժողովրդի պատմության հիշարժան դրվագների և ժողովրդական երգերի մասին։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ծն. 1916).— Նկարիչ։ Ծնվել է Թիֆլիսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստական ինստիտուտում, ավարտել 1950 թ.։ 1937 թվականից մասնակցել է ցուցահանդեսների։ 1942 թ. ունեցել է անհատական ցուցահանդես։ Նրա նկարները ցուցադրվել են Երևանում, Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, նաև արտասահմանյան երկրներում (Լեհաստան, Ճապոնիա, Հունգարիա, Ամերիկա և այլն)։ Լավագույն գործերից են՝ «Միտինգ Հյուսիսային բևեռում», «Դավթի հրաժեշտը Կռիվ գնալուց», «Կանացի դիմանկար», «Հերթափոխ» և այլն։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ծն. 1940).— Քանդակագործ։ Ծնվել է Երևանում։ 1964 թվականից սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի գեղագիտության ֆակուլտետում, որի քանդակագործության բաժինն ավարտել է 1968-ին։ Նույն տարվանից մասնակցել է հանրապետական, հնգամյա նաև համամիութենական և արտասահմանյան ցուցահանդեսների։ Նրա գործերը ցուցադրվել են Երևանում, Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, Ռիգայում, Կիևում, Քիշնևում, Բեռլինում (1977) և այլ քաղաքներում։ Լավագույն գործերից են «Զորավար Անդրանիկ» (մարմար, ցուցադրված է Կիրովականի պատկերասրահում), «Զաքար Խաչատրյան» (բրոնզյա դիմաքանդակ, Սևանի պատկերասրահ), «Գյուղական ուսուցչուհի Գ. Դավթյան» (Մոսկվա), «Հայուհին» (մարմար), «Գ. Մարտիրոսյանի դիմաքանդակը» (Զարենցավանի պատկերասրահ), «Արմենակ Շահմուրատյան» (Ջերմուկի պատկերասրահ) և այլն։ 1971-ից դասավանդում է Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտում։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1920—1986).— Լեզվաբան. բանասիրական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Մեղրիում։ Բարձրագույն կրթություն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 1952 թ.։ 1957 թվականից աշխատել է գիտությունների ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում։ Առանձին գրքերով լույս է ընծայել հետևյալ աշխատությունները. «Կարճանի բարբառը» (Երևան, 1960), «Կարավարերդի բարբառը» (1967), «Օմար Խայամի քառյակները» (տպագրված է «Ուսանողական գիտական աշխատություններ» ժողովածուի 6-րդ գրքում)։ Լեզվաբանական հոդվածներ է տպագրել գիտական մամուլում։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՒՇՍԻՄԵ (ծն. 1924).— Նկարչուհի։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում և գեղարվեստի ինստիտուտում, որի գեղանկարչության բաժինն ավարտել է 1954-ին։ Նույն տարվանից մասնակցել է հանրապետական ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են «Աղջկան դիմանկարը», «Քնած երեխան», «Հասմիկի դիմանկարը», «Տատը թոռան հետ», «Ընկերուհիներ», բնանկար՝ Կիրովականից և այլն։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՐԱՉ (1907—1964).— Գրականագետ. բանասիրական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Սուրմալուի գավառի Էվջիլար գյուղում։ 1918 թ. նրանց ընտանիքը գաղթել է Կովկաս, բնակություն հաստատել Երևանում։ 1928 թ. ավարտել է Դոնի Ռոստովի հայկական մանկավարժական տեխնիկումը, երկու տարի աշխատել Կրասնոդարի հայկական դպրոցում որպես ուսուցիչ։ 1930 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանը, որի լեզվագրական ֆակուլտետն ավարտել է 1933 թ.։ Հայոց լեզու է դասավանդել Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում։ 1935-ից աշխատել է Երևանի գրական թանգարանում։ Հետագայում երկար տարիներ աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Պերճ Պռոշյան» (Երևան, 1937), «Խաչատուր Աբովյան» (1939), «Ղազարոս Աղայան» (1941), «Հավերժության ուղևորը» (դրամատիկական պոեմ՝ Խ. Աբովյանի մասին, 1947), «Ժամանակակիցները Աբովյանի մասին» (ժողովածու) և այլն։ Նրա առավել ծավալուն հետազոտություններն են՝ «Դերենիկ Դեմիրճյան» (1961) և «Ռափայել Պատկանյան» (1956)։ Եռամատոր՝ 1965 թ. լույս է տեսել նրա «Գրաքննադատական ակնարկներ» ժողովածուն։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄԱՔԵՎՈՍ (1911—1987).— Երաժշտագետ. արվեստաբանության դոկտոր։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Շատախի գավառի Տղասպար գյուղում։ 1915 թ. ընտանիքով գաղթել են Վան, այնտեղից՝ Միջագետք։ 1921 թ. եկել է Հայաստան։ 1930 թ. ավարտել է Մանկավարժական տեխնիկումը։ 1930—1934 թթ. աշխատել է Երևանի տարբեր դպրոցներում որպես գրաշար։ Սովորել է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի ջութակի դասարանում, ավարտել 1937 թ.։ Նույն տարվանից շարունակել է ուսումը Երևանի պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության և տեսության ֆակուլտետում։ Մասնակցել է խորհրդային բանակում։ Զորացրվե-

լուց հետո 1946-ից աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ երաժշտության պատմության և տեսության սեկտորում, ապա՝ մինչև կյանքի վերջը՝ ԳԱ արվեստի ինստիտուտում, որտեղ երկար տարիներ եղել է ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ։ 1930-ական թվականներին գրել է բանաստեղծություններ, որոնք տպագրվել են մեր մամուլում, նաև լույս տեսել «Շտուրմային օրեր» ժողովածուում (Երևան, 1932)։ 1953 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա, իսկ 1971 թ.՝ դոկտորական՝ «Հայ երաժշտությունը 19-րդ դարում և 20-րդ դարասկզբում» աշխատությամբ, որը տպագրվել է 1970 թ.։ Գիտական մամուլում և ժողովածուներում տպագրել է երաժշտագիտական բազմաթիվ հոդվածներ։ Առանձին գրքերով տպագրած մյուս աշխատություններն են՝ «Ազատ Մանուկյան» (Երևան, 1950), «Քրիստափոր Կարա Մուրզա» (1950), «Խորհրդային Հայաստանի երաժշտական կուլտուրան» (Ս. Գասպարյանի հեղինակակցությամբ, 1951), «Արմեն Տիգրանյան» (Ռ. Աթայանի հեղինակակցությամբ, 1953), «Քրիստափոր Կարա Մուրզան և բազմաձայնության արմատավորումը հայ երաժշտության մեջ» (1956), «Ակնարկ հայ երաժշտության պատմության» (հեղինակակից, 1963) և այլն։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ (ծն. 1927).— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Ախալցխայում, որտեղ ստացել է կրթություն։ Բեմական ասպարեզ է մտել 1949 թ.։ Խաղացել է Գ. Սունդուկյանի անվան թատրոնում։ Գլխավոր դերերից են՝ Սուսան («Նամուս»), Դեզդեմոնա («Օթելլո»), Կորդիլիա («Լիր արքա»), Շուրա («Եգոր Բուլչով»), Սուրիա («Թևհրան»), Մարթա («Շառերը կանգնած են մահանում») և այլն։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄԵԼԻՔՍԵԹԵԿ (1836—1903).— Կրթական, հոգևորական գործիչ։ Ծնվել է Շամշադինի շրջանի Տավուշ (Թովուզ) գյուղում։ Կրթությունն ստացել է Սանահինի վանքի ժառանգավորաց վարժարանում և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Ավարտելուց հետո աշխատել է նույն դպրոցում որպես վերակացու և ուսուցիչ։ Մեկ տարի էլ Շուշու դպրոցում պաշտոնավարելուց հետո մեկնել է Թուրքիա, այնտեղից՝ Երուսաղեմ, դարձել այդ միաբանության անդամ և տեղի Ժառանգավորաց վարժարանի տեսուչ, միաժամանակ «Սիոն» պաշտոնաթերթի խմբագիր։ 1873 թ. ճանապարհորդել է մի շարք երկրներում։ Եղել է Ռումինիայում, Տրանսիլվանիայում, Հունգարիայում, Լեհաստանում, Շվեյցարիայում, Իտալիայում, ծանոթացել է այդ երկրների հայ գաղութներին, գրի առել իր տպավորությունները, լույս ընծայել «Մասիս» թերթում։ Ապա որպես հոգևոր առաջնորդ պաշտոնավարել է Զմյուռնիայում, որտեղ վերակառուցել է Մեսրոպյան և Հռիփսիմյան վարժարանները։ Ունեցել է մանկավարժական բեղուն գործունեություն՝ Զմյուռնիայում և Կ. Պոլսում։ Աշխատակցել է արևելահայ և արևմտահայ բազմաթիվ թերթերի, ինչպես՝ «Կռունկ հայոց աշխարհին», «Մեղու Հայաստանի», «Արևելյան մամուլ» և այլն։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Պատմություն Հայաստանյայց եկեղեցվո» (Երուսաղեմ, 1972), «Ընդհանուր եկեղեցական պատմություն» և այլն։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՆՇԱՆ (1908—1982).— Բանասեր. բանասիրական գիտությունների դոկտոր (1976)։ Ծնվել է Մարգարա գյուղում (այժմ՝ Հայկական ԽՍՀ Հոկտեմբերյանի շրջան)։ Որպես ուսուցիչ աշխատել է Բասարգեչարի և Բայազետի դպրոցներում, 1933—1945 թթ.՝ Երևանի գրական թանգարանում, 1947—1953 թթ.՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնում իբրև գրական բաժնի վարիչ, «Հայֆիլմ» կինոստուդիայում իբրև խմբագիր։ 1945 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտը։ Մի քանի տարի աշխատել է ԳԱ գրականության ինստիտուտում, 1967-ից՝ արվեստի ինստիտուտում իբրև ավագ գիտաշխատող՝ Հեքսպիրագիտական կենտրոնում։ Մասնակցել է «Հեքսպիրական» ժողովածուների պատրաստման աշխատանքներին։ Գիտական մամուլում, ժողովածուներում տպագրել է բանասիրական բազմաթիվ հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Միքայել Նալբանդյան» (Երևան, 1954), «Արմեն Արմենյան» (1959), «Հովհաննես Հովհաննիսյանի արվեստը» (1964), «Աբովյանի պոետիկան» (1979), «Նալբանդյան. կյանքը և գործը» (1980), «Հեքսպիրի կյանքը» (1986)։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ (ծն. 1933).— Պատմաբան. պատմական գիտությունների դոկտոր (1986)։ Ծնվել է Ախալքալաքի շրջանի Ղադոլար գյուղում (Վրացական ԽՍՀ)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական հաստատարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 1958-ին։ Մեկ տարի Երևանի Մատենադարանում աշխատելուց հետո ընդունվել է պետական համալսարանի ասպիրանտուրան՝ վրաց հին մատենագրության գծով։ Ուսումնասիրությունն անց է կացրել Թբիլիսիի պետական համալսարանում, ակադեմիկոս Կեկելիձեի և Ճանիձեի ղեկավարությամբ։ 1963—1970 թթ. աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում, 1971-ից՝ Երևանի պետական համալսարանի հնագիտության և աղբյուրագիտության ամբիոնում, 1976-ից՝ ԳԱ արևելագիտության ինստիտուտում իբրև բաժնի վարիչ։ Գիտական մամուլում տպագրել է հոդվածներ հայ-վրացական մատենագրական առնչությունների մասին։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Սայաթ-Նովան ըստ վրացական աղբյուրների» (Երևան, 1963), «Հայ-վրացական մատենագրական փոխհարաբերությունները 18-րդ դարում» (ռուսերեն, 1966), «Վրաց ժամանակագրություն» (1971), «Հայաստանի վրացերեն արձանագրությունները», «Վրաստանի հայերեն արձանագրությունները» (2 հատոր, ռուսերեն)։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ (1760—1816).— Հասարակական, մշակութային գործիչ, մեկենաս։ Ծնվել է Եվդոկիայում։ Փոքր հասակից հոր հետ մեկնել է Հնդկաստան, ապրել Մադրասում, որտեղ ստացել է կրթությունը, զբաղվել առևտրով, ձեռք բերել մեծ հարստություն։ Մոտիկից մասնակցել է հնդկահայ գաղութի մշակութային կյանքին, օգնել կրթական հաստատություններին, հոգացել հայերեն գրքերի տպագրության ծախսը։ Մահվանից մեկ տարի առաջ հատուկ կտակով հատկացրել է անհրաժեշտ գումար՝ հայկական մի դպրոց հիմնելու համար։ Այդ գումարով է, որ 1836 թ. Պադուայում հիմնվել է Մուրադյան վարժարանը, որը հետագայում տեղափոխվել է Փարիզ, ավելի ուշ միացել Վենետիկի Ռաֆայելյան վարժարանին, կոչվել Մուրադ-Ռաֆայելյան և մեկ դարից ավելի է, որ շարունակում է իր գոյությունը, նկատելի դեր կատարելով հայ մշակութային, կրթական կյանքում։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՐԳԻՍ (ծն. 1927).— Նկարիչ. Հայկական ԽՍՀ ժողովրդական նկարիչ, ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի թղթակից անդամ (1983)։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել 1951-ին։ 1947 թվականից մասնակցել է հանրապետական, 1956-ից՝ համամիութենական, հետագայում նաև միջազգային ցուցահանդեսների։ 1961-ին Էջմիածնում և Կիրովականում ունեցել է անհատական ցուցահանդեսներ, իսկ 1979-ին՝ Երևանում, ապա՝ Մոսկվայում, Կիևում, Լենինգրադում, Ռիգայում, Թբիլիսիում, 1980-ին՝ Լեհաստանի Վարշավա, Կրակով և այլ քաղաքներում։ 1976 թ. «Խաղաղ երկնքի տակ» և «Լուսաբացից առաջ» նկարների համար արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի։ 1969-ին նրան շնորհվել է Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարչի, 1972-ին արվեստի վաստակավոր գործչի, իսկ 1977-ին՝ հանրապետության ժողովրդական նկարչի կոչում։ Ստեղծագործական ուղևորություններ է կատարել արտասահմանյան տարբեր երկրներ։ Եղել է Խորհրդային արվեստի ցուցահանդեսների կոմիսար Իրանում, Գերմանական Ֆեդերատիվ Հանրապետությունում, Լեհաստանում, Ռումինիայում, Սիրիայում, 1982—1987 թթ. Հայաստանի նկարիչների միության նախագահ։ 1961 թվականից զբաղվել է նաև մանկավարժական աշխատանքով։ Այժմ դասավանդում է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում իբրև գեղանկարչության ամբիոնի պրոֆեսոր։ Լավագույն գործերից են՝ «Վերջին գիշերը — Կոմիտաս», «Վերադարձ դեպի հայրենի գյուղը», «Հարսանիք Հրազդանում», «Գարունը եկավ», «Անտունի», «Անուրջներ», «Հիշողություններ որդու մասին», Մարտիրոս Սարյանի, Նաթիա Էմիրաջիրիի, Լիա Էլիավայի և այլոց դիմանկարները։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ծն. 1930).— Գրող, թարգմանիչ։ Ծնվել է Ալավերդու շրջանի Ակներ գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում։ 1952—1956 թթ. աշխատել է «Պիոներ կանչ» թերթի, 1957—1964 թթ.՝ «Ավանգարդիա», 1964—1968 թթ.՝ Երևանի ռադիոյի երիտասարդական հաղորդումների, 1968-ից՝ «Խորհրդային Հայաստան» ամսագ-

բի, «Արևիկ» հրատարակչության խմբագրություններում։ 1948-ից մանկական բանաստեղծություններ է տպագրել հանրապետական մամուլում։ Առանձին գրքերով լույս ընծայած ժողովածուներն են՝ «Առաջին երգ» (Երևան, 1953), «Գառնարածի երգը» (1957), «Մե՞ծ եմ, թե փոքրիկ» (1966), «Գարնան մատիտները» (1968), «Թագուհին մեր տանը» (1971), «Վարդեր և փշեր» (1972), «Երկնքից երեք խնձոր ընկավ» (1973), «Կարմիր ասպետը» (1976), «Կապույտ թռչուն» (1976), «Ցոթ ցանկություն» (1977), «Իմ այգին» (1980), «Ոսկե տերևաթափ» (1982), «Սերունդների հետ միշտ նորանալով», 50-ից ավելի ժողովածուներ։ Մոսկվայում, ռուսերեն լույս են տեսել նրա «Փոստատարի երգը» (1970), «Նապաստակի մուշտակը» (1974), «Հնարամիտ Արտոն» (1979) գրքույկները։ Նրա երկերից նմուշներ լույս են տեսել առանձին գրքույկներով նաև ուկրաիներեն, բելոռուսերեն, տաջիկերեն, արաբերեն, ուզբեկերեն, լիտվերեն և այլ լեզուներով։ Գրել է «Մադամանի գաղտնիքը», «Պոշատ ազվեսը» մանկական պիեսները, որոնք բեմադրվել են Երևանի տիկնիկային թատրոնում։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ *(1850—1879).*— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում։ Բեմական ասպարեզ է մտել 1870 թ.։ Խաղացել է Հ. Վարդովյանի թատերախմբում։ Հետագայում գերազանցապես աշխատել է օպերետային թատերախմբերում։ Հանդես է եկել Տ. Զուխաջյանի «Լեպլեպիճի Հորհոր աղա», «Արիֆի խարդախությունը», «Քեռան քեհյա», «Ժիրոֆլե Ժիրոֆլյա», «Մադամ Անգոյի աղջիկը» և այլ օպերետներում, ինչպես և երգախառն զավեշտներում։

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԻԿՏՈՐ *(ծն. 1913).*— Պատմաբան. պատմական գիտությունների դոկտոր (1969)։ Ծնվել է Լենային Ղարաբաղի Կեմրակում գյուղում։ Բարձրագույն կրթություն ստացել է Բաքվի համալսարանում։ Հետագայում աշխատել է Բաքվում, 1968-ից՝ Երևանում, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի (ԻՄԼԻ) հայկական մասնաճյուղում որպես գիտաշխատող։ Մամուլում տպագրել է պատմագրական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Մարտական համագործակցություն» (Բաքու, 1964), «Եղբայրություն, ամրացված արյունով» (Մոսկվա, 1969), «Մարտական եղբայրություն» (1978) և այլն, բոլորն էլ ռուսերեն։ Համահեղինակ է մի քանի ժողովածուների, ինչպես՝ «Խորհրդային Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին»։

ՄՈՒՐԱԴՈՎ ԼԵՎՈՆ *(1893 — ?).*— Քանդակագործ։ Ծնվել է Թիֆլիսում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, հետևել նկարիչ Եղիշե Թադևոսյանի դասընթացներին։ Ապա աշակերտել է քանդակագործ Նիկոլաձեին։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակից սկսել է իր քանդակագործական գործունեությունը, 1920 թ. մեկնել է Կ. Պոլիս, այնտեղից՝ Փարիզ, սովորել քանդակագործ Բուրդելի արվեստանոցում։ 1928 թ. մասնակցել է Ֆրանսիայի արվեստագետների ընկերության ցուցահանդեսին, արժանացել առաջին մրցանակի։ 1930 թ. Փարիզում ստեղծել է իր սեփական արվեստանոցը։ Այնուհետև մասնակցել է տարբեր ցուցահանդեսների, իսկ 1942 թ. կազմակերպել է իր ստեղծագործությունների առաջին մեծ ցուցահանդեսը։ Անհատական նման ցուցահանդես է ունեցել նաև 1946 թ.։ Մամուլը բարձր է գնահատել նրա գործերից հետևյալները՝ «Արևելյան պարուհին», «Փափագ», «Ընտրած աղջիկը», «Ներշնչում», «Եվա», «Հայ պարուհին», «Բեթհովենի կիսանդրին», «Տղամարդու կիսանդրի» և այլն։ Նա է քանդակել Զորավար Անդրանիկի գերեզմանի վրա կանգնեցված հուշարձանը՝ Փարիզի Պերլաշեզի գերեզմանատանը։ Նրա քանդակներից նմուշներ ցուցադրված են Փարիզի Մոդեռն արվեստների և Աննեսի թանգարաններում, Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում և այլն։

ՄՈՒՐԱԴՈՎ ԽԱՉԻԿ *(1914—1979).*— Գրող, թարգմանիչ։ Ծնվել է Կարսում։ Բարձրագույն կրթություն ստացել է Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտում, ավարտել 1938 թ., հետագայում, 1966-ին ավարտել է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը։ 1959—1960 թթ. աշխատել է Երևանի ռադիոյի և հեռուստատեսության քրդերեն հաղորդումների խմբագրությունում, 1969—1973 թթ. «Ռյա Թաղա» քրդերեն թերթի խմբագրությունում որպես պատասխանատու քարտուղար, ապա՝ խմբագրի տեղակալ։ Առանձին գրքերով և քրդերեն լեզվով լույս է

ընծայել հետևյալ երկերը՝ «Հեքիաթ Միրզա Մահմուդի մասին» (Թբիլիսի, 1957), «Կանթեղ» (Երևան, 1959), «Գյուլփերի» (1962), «Նոր պարուն» (1965), «Զորրորդ քայլը» (1972)։ Կազմել է քրդերեն դասագրքեր՝ Միրոյե Ասադի հեղինակակցությամբ։ Հայ և ռուս գրականությունից մի շարք երկեր թարգմանել է քրդերեն։

ՄՈՒՐԱՑԱՆ (ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ) *(1854—1908).*— Գրող։ Ծնվել է Շուշիում, 1854 թ. դեկտեմբերի 1-ին։ Կրթությունն ստացել է ծննդավայրում, սովորել մասնավոր դպրոցում, ինքնազարգացմամբ ձեռք բերել լայն գիտելիքներ։ 1881 թ. գրել է «Ռուզան» պատմական դրաման, որը բեմադրվել է հաջորդ տարի՝ Պ. Ադամյանի մասնակցությամբ և ունեցել է մեծ հաջողություն, մնացել հայ թատրոնի խաղացանկում մինչև մեր օրերը։ Նույն տարում «Մեղու Հայաստանի» թերթում տպագրվել է նրա «Հայ բողոքական ընտանիքը» վիպակը, որը 1883 թ. տպագրվել է նաև առանձին գրքով։ Այնուհետև «Նոր դար» թերթում լույս են տեսել նրա «Հասարակաց որդեգիրը» (1884), «Հարուստները զվարճանում են» (1884), «Իմ կաթոլիկ հարսնացուն» (1885), «Ինչ լայեղ է» (1886), «Անպատճառ իշխանուհի» (1886), «Խորհրդավոր միանձնուհին» (1889), «Լուսավորության կենտրոնը» (1892—1893) և այլն։ 1896 թ. «Արձագանք» շաբաթաթերթում տպագրվել է նրա գլուխգործոց «Գեորգ Մարզպետունին» պատմավեպը։ 1890-ական թվականների վերջերից «Լումա» հանդեսում լույս է ընծայել «Անդրեաս երեցը», «Նոյի ագռավը», «Առաքյալը» և այլն։ Սրանցից «Նոյի ագռավը», «Առաքյալը» և «Խորհրդավոր միանձնուհին» 1904 թ. հրատարակել է առանձին գրքով որպես իր երկերի Ա. հատոր, սակայն չի կարողացել տպագրել մյուս հատորները։ Եմամուտ՝ 1912-ին Թիֆլիսում վերահրատարակվել է «Գեորգ Մարզպետունին»։ Խորհրդային տարիներին նրա երկերը արժանացել են բազմաթիվ հրատարակություններ։ 1936—1939 թթ. հրատարակվել են չորս հատորով, 1951—1954 թթ.՝ հինգ հատորով, 1961—1965 թթ.՝ յոթ հատորով։ Քանիցս վերահրատարակվել է «Գեորգ Մարզպետունին», թարգմանվել ռուսերեն, վերծանվել է պիեսի և բեմադրվել թե հայրենիքում և թե սփյուռքահայ կենտրոններում։

ՄՈՒՐԱՑԱՆ ՌՈՒԶԱՆ.— Քանդակագործուհի։ Ծնվել է Թիֆլիսում. դուստրն է գրող Մուրացանի։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, մասնագիտականը՝ Դերմանիայում, որտեղ հետևել է քանդակագործության, ապրել ու ստեղծագործել է։ Մասնակցել է 1910 թ. Խ. Աբովյանի հուշարձանի համար հայտարարված մրցանակաբաշխությանը, սակայն ժյուրին ընդունել է Ռ. Տեր-Մարությանի քանդակը։

ՄՈՒՐՃԱ ԳԵՈՐԳԻ *(ծն. 1910).*— Ճարտարապետ. Հայկական ԽՍՀ վաստակավոր շինարար։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում։ Նրա նախագծերով հանրապետությունում կառուցվել են հանրային օգտագործման և բնակելի մի շարք շենքեր, օբյեկտներ, ինչպես Պուշկինյան լեռնանցքի աղբյուր-հուշարձանը, Երևանի մի քանի շրջանների և միկրոշրջանների կառուցապատումը, Բուսաբանական այգին և այլն։ Մասնակցել է Երևանի 1950 և 1971 թթ. գլխավոր հատակագծերի ստեղծման աշխատանքներին։

ՄՈՒՐԶԱԵՎ ԷԴՈՒԱՐԴ *(ծն. 1908).*— Ֆիզիկա-աշխարհագրագետ. աշխարհագրական գիտությունների դոկտոր (1949), բնախույզների գերմանական «Լեոպոլդինա» ակադեմիայի անդամ (1961), Մոնղոլական ժողովրդական Հանրապետության ԳԱ պատվավոր պրոֆեսոր (1961), ՌԽՖՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1970)։ Ծնվել է Սիմֆերոպոլում, Սահակ Մուրզաևի հայկական ընտանիքում։ Բարձրագույն կրթություն ստացել է Լենինգրադի համալսարանում, ավարտել 1930-ին։ Հաջորդ տարվանից աշխատել է ԽՍՀՄ ԳԱ աշխարհագրության ինստիտուտում։ Այդ ինստիտուտի Անդրկովկասյան արշավախմբի կազմում մասնակցել է Արագածի ուսումնասիրության աշխատանքներին, նաև Միջին և Կենտրոնական Ասիայի արշավախմբերի աշխատանքներին։ Գրել է բազմաթիվ հետազոտություններ երկրագրության, աշխարհագրական տեղանունների ծագման, աշխարհագրական տերմինաբանության և աշխարհագրական հետազոտությունների պատմության մասին։

ՄՈՒՐԹՈՒԶԱ *(18-րդ դ.).*— Աշուղ։ Նրա հորինած և կատարած երգերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանում։

ՄՈՒՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ *(1910—1967).*— Լեզվաբան. բանասիրական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Վրաստանի Սղնախի քաղաքում։ 1933—1938 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում։ Ավարտելուց հետո ընդունվել է Արմֆանի լեզվի ու գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ վրացագիտության մասնագիտությամբ, ղեկավար ունենալով ակադեմիկոս Ակակի Շանիձեին։ 1943 թ. Թիֆլիսում պաշտպանել է դիսերտացիա «Քերականական կարգերը հայոց և վրաց լեզուներում» թեմայով, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան։ Նույն թվականից աշխատել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտում, հիմնականում զբաղվելով հայ-վրացական լեզվական առնչությունների հարցերով։ 1948 թ. պաշտպանել է դիսերտացիա «Հայոց և վրաց լեզուների ընդհանրությունները» թեմայով, ստացել բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան։ Պարբերական մամուլում և առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Հայերենի բայածանցները» (լույս է տեսել Լեզվի ինստիտուտի «Աշխատություններիս» ժողովածուում, 1946 թ.), «Հայ-վրացական բառային զուգադիպումներ» (տպագրվել է պետական համալսարանի հրատարակած Մասի կոբինետի «Աշխատությունների» **2-րդ** գրքում, 1947), «Հայերենի մասնիկները և նրանց առնչությունները վրաց և կովկասյան մյուս լեզուների հետ» (տպագրվել է Լեզվի ինստիտուտի «Աշխատությունների» 4-րդ գրքում, 1949 թ.), «Հայոց լեզվի բառային կազմը» (Երևան, 1950), «Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն» (Երևան, 1959) և այլն։

Յ

ՅԱԳՈՒԻՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ *(1842—1919).*— Պետական, մշակութային գործիչ։ Ծնվել է Կահիրեում (Եգիպտոս), Արթին Զրագյան ամիրայի ընտանիքում։ Կրթությունն ստացել է Փարիզում։ Նախ սովորել է Մուրադյան հայկական դպրոցում, ապա՝ Փարիզի համալսարանում։ 1873-ին վերադարձել է Եգիպտոս, պաշտոնավարել Խեդիվ Իսմայիլ փաշայի արքունիքում որպես նրա երկու որդիների դաստիարակ։ Նրանցից մեկը՝ Թուսուն, հետագայում դարձել է Եգիպտոսի թագավոր։ 1881 թ. ընտրվել է Եգիպտոսի Ակադեմիայի անդամ, հետագայում՝ մինչև մահը եղել է այդ ակադեմիայի նախագահը։ Վարել է պետական պատասխանատու պաշտոններ։ 1883—1906 թթ. եղել է Եգիպտոսի կրթական նախարարի խորհրդականը։ Հիմնել է բարձրագույն դպրոցներ, զարկ տվել գրականությանը և արվեստին։ Նա է հիմնադրել իգական առաջին դպրոցը Եգիպտոսում։ 1906 թ. Կահիրեի համալսարանը նրան շնորհել է գիտության դոկտորի կոչում։ Մոտիկից կապված է եղել եգիպտահայ կյանքի հետ, օգնել է հայկական դպրոցներին, մշակութային միջոցառումներին։ Եղել է 1906 թ. հիմնադրված Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադիրներից։ Հրատարակել է ֆրանսերեն մի քանի աշխատություն։

ՅԱԳՈՒՊՅԱՆ ԼՈՒԹՖԻ *(1885—1949).*— Նկարիչ։ Ծնվել է Մարաշում (Թուրքիա)։ Փոքր հասակից ընտանիքով գաղթել են Ամերիկա։ Մասնագիտական կրթությունն ստացել է Էյլի համալսարանում, կատարելագործել՝ Փարիզում։ Միաժամանակ էլ Հռոմում սովորելուց հետո 1911 թ. վերադարձել է Ամերիկա, զբաղվել նկարչությամբ։ Մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների, ունեցել անհատական ցուցահանդեսներ։ Ամերիկյան մամուլը գրվատանքով է խոսել մասնավորապես Շեքսպիրի «Համլետ» թեմայով նրա կատարած 36 նկարների մասին։ Նրա անունը տեղ է գտել ամերիկյան «Ով է նա» հայտնի կենսագրական բառարանում։

ՅԱՂԲՃՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ *(1898—?).*— Պատմաբան։ Ծնվել է Այնթապում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է տեղի Վարդանյան կրթարանում և Կիլիկյան ճեմարանում։ 1915—1916 թթ. ապրել է Սիբիրյում և Իրաքում, ականատես եղել մեծ եղեռնի ահասարսուռ տեսարաններին։ 1919-ից սովորել է Բեյրութի Սենթ Ժոզեֆ համալսարանում։ Երկար տարիներ ապրել է Փարիզում։ Պատմագրական և հուշագրական հոդվածներով աշխատակցել է ֆրանսահայ մամուլին։ Երկար տարիներ նյութեր հավաքելով՝ գրել է «Աբդյուլ Համիդ Բ, կարմիր սուլթանը» խորագրով ծավալուն մի աշխատություն, որը լույս է տեսել 1980 թ. և հայ մամուլում համարվել է կոթողային գործ։

ՅԱՂԲՃՅԱՆ ՀՈՎՍԵՓ *(1838—1893).*— Դերասան, թատերական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է Վենետիկի Ռաֆայելյան վարժարանում, ավարտել 1857 թ.։ 1860-ական թվականների սկզբներից խաղացել է պոլսահայ տարբեր թատերախմբերում։ Գրել է «Պերայի հրդեհին մեկ գաղտնիքը» խորագրով մի պիես, որը բեմադրվել է հայկական թատերախմբերի կողմից։ Ֆրանսերենից թարգմանել է պիեսներ, որոնք տեղ են գտել թե արևմտահայ և թե արևելահայ թատերախմբերի խաղացանկերում։ Այդ պիեսներից են՝ «Լյուսի Դիդիե», «Մերոպե զահակորույս թագուհին» և այլն։

ՅԱՂԲՃՅԱՆ ՄԱՐԻ *(1856—1905).*— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ Բեմական ասպարեզ է մտել 1873 թվականին։ Կարճ ժամանակ խաղացել է Հ. Վարդովյանի թատրոնում, ապա Ա. Պենկլյանի օպերետային խմբում, ի հայտ բերելով կոնտրալտո երգչուհու հարուստ տվյալներ։ Հանդես է եկել Տ. Զուխաջյանի «Վեպլեպիճի Հորհոր աղա», «Քեռան քեհյան», «Արիֆի խարդախությունը», նաև Օֆենբախի ու

Լբոքի մի քանի օպերետներում՝ Կ. Պոլսում, Ադրիանապոլսում և այլ քաղաքներում։

ՅԱՋԸՃՅԱՆ ՍԻՄՈՆ (1851—1912).— Նկարիչ, կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում, որտեղ ստացել է կրթությունը, հետևել նկարչության։ Երկար տարիներ որպես նկարչության ուսուցիչ աշխատել է Կ. Պոլսի հայկական դպրոցներում։ 1870-ական թվականների սկզբներից կապված է եղել Հ. Սվաճյանի «Մեղվի» հետ, նրա էջերում տպագրել է կենցաղային և քաղաքական մի շարք ծաղրանկարներ։ Հետագայում եղել է Հ. Պարոնյանի «Թատրոն» երգիծաթերթի հիմնական ծաղրանկարիչներից։

ՅԱՋԸՃՅԱՆ ՍՏԵՓԱՆ (1815—1893).— Բանասեր։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է Վենետիկի Մխիթարյանների վանքում։ Ունեցել է գրական-մանկավարժական գործունեություն։ «Բազմավեպի» առաջին տարիների, այսինքն 1840-ական թվականների համարներում տպագրել է հնագիտական և այլ բնույթի հոդվածներ։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Համառօտ քերականութիւն գաղիական լեզուի» (1838, բ. տպ 1849), «Համառօտ աշխարհագրութիւն» (1840, բ. տպ. 1847), «Տարերք քաղաքական, ուսումնական և բնական աշխարհագրութեան» և այլն։

ՅԱՄՈՆՃՅԱՆ ՍԵՆԵՔԵՐԻՄ (1882—1915).— Կրթական գործիչ։ Ծնվել է Թուրքիայի Մուշեհիր քաղաքում։ Կրթությունն ստացել է Սեբաստիայի և Մարզըվանի ամերիկյան կոլեջներում։ Որպես ուսուցիչ աշխատել է Սեբաստիայի և Շապին-Կարահիսարի հայկական դպրոցներում։ Աշխատակցել է պոլսահայ մի շարք պարբերականների։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Բուդդայի ավետարանը», «Զարիքի հարցը»։ Թարգմանել է Մեսերլինգի «Կապույտ թռչունը»։ Զոհվել է 1915 թ.։

ՅԱՅՏԸՋՃՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ (1860—1910).— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում։ Բեմական ասպարեզ է մտել 1876 թվականին։ Խաղացել է Հ. Վարդովյանի թատրոնում։ Հետագայում դարձել է Մ. Մնակյանի «Օսմանյան դրամատիկ» թատերախմբի հիմնական ուժերից մեկը։ Հավասար հաջողությամբ խաղացել է հայերեն և թուրքերեն, արժանանալով թուրք մամուլի գնահատականներին։

ՅԱԿՈՒԼՈՎ ԿԵՎՈՐԿ (1884—1928).— Թատերական նկարիչ։ Ծնվել է Թիֆլիսում։ 1893 թ. ընտանիքով տեղափոխվել են Մոսկվա, որտեղ ստացել է կրթությունը։ Մոսկվայի Լազարյան ճեմարանում որպես գեղեցիկի 6-րդ դասարանից թողել է ճեմարանը, 1900 թ. ընդունվել նկարիչ Կ. Յուոնի ստուդիան։ Ապա երկու տարի սովորել է Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և հարդարապետության ուսումնարանում։ Ավարտելուց հետո մի քանի տարի ապրել է Կովկասում, ստեղծել բազմաթիվ նկարներ, մասնակցել «Մոսկովյան նկարիչների ընկերության» ցուցահանդեսներին։ Ներկայացրած գործերից «Զիարշազը» հետագայում գնվել է Տրետյակովյան պատկերասրահի կողմից։ Այնտեղ ցուցադրած մյուս նկարներից են՝ «Ամբոխի մարդը», «Աբաղաղները», «Սուխումը ձյան տակ» և այլն։ 1910—1913 թթ. ճանապարհորդել է Իտալիայում և Ֆրանսիայում, ուսումնասիրել դասական և ժամանակակից նկարչությունը, կատարել բազմաթիվ էսքիզներ։ Վերադառնալով Ռուսաստան, ամբողջովին նվիրվել է թատերական նկարչության։ Մոսկվայում նրա ձեռքբերմամբ բեմադրվել են՝ «Թարեությունն», «Կանաչ թուֆակ», «Բրամբիլա գյուղին», «Միստերիա բուֆֆ», «Ժիրոֆլե Ժիրոֆլյա», «Թափառական հրեա», «Էդիպ արքա» և այլ պիեսներ։ Երևանում ձեռքբերել է «Մորգանի խնամին», «Վենետիկի վաճառականը», Թիֆլիսում՝ «Կարմենսիտա», Բաքվում՝ «Լյուսի լիճը», Մինսկում՝ «Վենետիկի վաճառականը»։ Մոսկվայի հայկական դրամատիկական ստուդիայի համար ձեռքբերել է «Մեծապատիվ մուրացկանները» և «Գեղեցկուհի Լուլուն»։ Նրա գեղանկարչական և քանդակագործական աշխատանքներից են «Քսանվեցի հուշարձանը» Բաքվում, «Բարբալո կայարանը», «Մոնտե Կարլո», «Ամազոնուհիների մարտը», «Կոշիկ մաքրող տղան», Հ. Հովհաննիսյանի, Ա. Թամանյանի դիմանկարները և այլն։ Եռմահու նրա գործերի ցուցահանդեսներ են կազմակերպվել՝ 1959, 1967, 1975 թթ. Երևանում, 1975 թ. Մոսկվայում։ Նրա մասին առանձին աշխատություն է գրել Ս. Ալաջալովը և լույս ընծայել 1972 թ.։

ՅԱՂՃՅԱՆ ԷՄՄՈՆՏ (ծն. 1904).— Նկարիչ։ Ծնվել է Խարբերդում։ Փոքր հասակից տեղափոխվել է Ամերիկա, որտեղ ստացել է մասնագիտական կրթությունը, սովորել Նյու Յորքի նկարչական դպրոցներից մեկում, աշակերտելով Վ. Ֆոն Շլեգելին և Իվան Օլինսկուն։ Նրա նկարները ցուցադրվել են ամերիկյան բազմաթիվ քաղաքներում, գնվել տարբեր թանգարանների ու անհատ մարդկանց կողմից։ Ամերիկյան մամուլը, այդ թվում «Նյու Յորք թայմսը» բարձր են գնահատել նրա ռեալիզմը, հատկապես «Դիշերը Մենհեթենում», «Լույսի կղզին», «Շտաբվանը» գործերը։ Անհատական ցուցահանդես է ունեցել Նյու Յորքում, 1940 թ.։

ՅԱՂՃՅԱՆ ՀԱՅԿ (1923—1965).— Դիրիժոր։ Ծնվել է Ֆրեզնոյում (Ամերիկա)։ Երաժշտական կրթությունն ստացել է Ֆրեզնոյի կոնսերվատորիայում, որտեղ նախ հետևել է չութակի, ապա՝ դիրիժորության։ 1958 թ. Լիվերպուլում կայացած երիտասարդ դիրիժորների միջազգային մրցույթում շահել է առաջին մրցանակ։ 1954—1959 թթ. ղեկավարել է Ֆրեզնոյում իր ստեղծած սիմֆոնիկ նվագախումբը։ Հանդես է եկել Ամերիկայի մի շարք քաղաքներում։ 1964 թ. մայիս ամսին այցելել է Երևան, ունեցել փայլուն հաջողություն, որպես հյուր ղեկավարել է Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը։ Մեռել է հաջորդ տարվա մարտ ամսին, սրտի կաթվածից։

ՅԱՂՋՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1916—1983).— Դերասան, դրամատուրգ. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1956)։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ 1930-ական թվականների սկզբներից խաղացել է Լենինականի դրամատիկական թատրոնում, 1936—1940 թթ.՝ Կիրովականի, 1944—1947 թթ.՝ Ստեփանավանի թատրոններում։ 1966 թվականից աշխատել է Երևանի դրամատիկական թատրոնում որպես դրական բաժնի վարիչ։ Գրել է մի շարք պիեսներ, որոնք բեմադրվել են Հայաստանի և Անդրկովկասի տարբեր քաղաքների հայկական թատրոններում։ Դրանցից են՝ «Զոյա» (1942), «Ոսկի քաղաք» (1951), «Կյանքի շեմին» (1954), «Գարնան շունչը» (1956), «Գիշերային հրաշք» (1957) և այլն։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Պիեսների ժողովածու» (1955), «Նոր նախագահը» (1955), «Մուրացկան» (պիես, 1956), «Արայիկը կազդուրվում է» (մանկական պիես, 1970), «Կյանքի իրավունք» (պիեսների ժողովածու, 1978), «Մարդը հեշտ չի ծնվում» (1982)։

ՅԱՂՈՒԲ ՕՂԼԻ (1796—1847).— Աշուղ։ Ծնվել է Թիֆլիսում։ Երկար տարիներ ապրել է Աստրախանում։ Եղել է այդ քաղաքի սիրված աշուղներից։ Աստրախանի բարբառով հորինել ու կատարել է սիրային, կենցաղային բազմաթիվ երգեր, որոնցից նմուշներ տպագրված են Գ. Ախվերդյանի «Հայ աշուղներ» ժողովածուի Բ հատորում (Թիֆլիս, 1903)։

ՅԱՂՈՒԲՋԱԴԵՍ ՀՈՎՀԱՆՆԵՍ (18-րդ դ.).— Թարգմանիչ։ 1706 թ. հայերենից հայատառ թուրքերենի է թարգմանել «Պոլսեն քաղաքի պատմությունը՝ համապատասխան կաֆաներով։ Գրքի վերջում թողել է թուրքերեն չափածո հիշատակարան, մի հիշատակարան էլ հայերեն։ Ձեռագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյանների վանքում։

ՅԱՂՈՒՊՅԱՆ ԱՏՈՒՐ (ՀԱՐՈՒԹՅՈՒՆ) (1883—?).— Բառարանագիր, բանասեր։ Ծնվել է Այնթապում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է ծննդավայրի Ազգային հայկական վարժարանում և Անտիոքի ամերիկյան կոլեջում։ Որպես ուսուցիչ կամ տեսուչ պաշտոնավարել է Այնթապի և Օջակլի հայկական դպրոցներում։ Կիլիկիայի կոտորածից հետո (1909) մեկնել է Ամերիկա, շարունակել ուսումը, հետևել լեզուների։ Իմացել է անգլերեն, իսպաներեն, լատիներեն, իտալերեն։ Աշխատակցել է ամերիկահայ մամուլին («Հայաստանի կոչնակ», «Նոր օր» և այլն։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հայատառ թուրքերենի հայերեն բառարան» (Նյու Յորք, 1919), «Անգլերեն հայերեն և հայերեն անգլերեն լատինատառ բառարան» (Լոս Անջելես, 1944)։

ՅԱՂՈՒՊՅԱՆ ԴԵՎՈՐԳ (1890—1941).— Դիրիժոր։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է ծննդավայրի Կալաթա-Սերայի պետական լիցեում, հետևել երաժշտության։ 1909 թ. մեկնել է Փարիզ, սովորել կոնսերվատորիայի դիրիժորական բաժնում, աշակերտելով Էմիլ Բեսարին և ուրիշների։ 1919 թ. ավարտել է կոնսերվատորիան և հաջորդ տարի հրավիրվել է Փարիզի Շանզելիզեի թատրոնը՝ ղեկավարելու իտալական օպերային մի խումբ՝ այդ թատերաշրջանում։ 1922 թ. վերադարձել է Կ. Պոլիս, տվել համերգներ, ղեկավարել հայկական օպե-

ռետային թատերախմբի ներկայացումները։ 1924 թ. կրկին մեկնել է Փարիզ, որտեղ կնքել է պայմանագիր և մեկնել է Սայգոն (Հնդկաչին) ղեկավարելու օպերային մի նվագախումբ։ Պայմանաժամը լրանալուց հետո վերադարձել է Փարիզ, ղեկավարել ֆրանսիական օպերային մի քանի թատրոնների նվագախմբերը։ Մասնակցել է ֆրանսահայ գաղութի երաժշտական միջոցառումներին, ղեկավարել որոշ ներկայացումներ։ Գրել է մի քանի երկեր, մշակել հայ ժողովրդական երգեր։ Ծրագրել է հորինել «Անուշ» օպերա, որի Ա մասն է միայն ավարտել։ 1936 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան, աշխատել Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, որտեղ ղեկավարել է արևմտաեվրոպական դասական մի քանի օպերաներ։

ՅԱՆՊԵԿՅԱՆ ԳԵՎՈՐԿ (ծն. 1923).— Երաժիշտ-խմբավար, կոմպոզիտոր։ Ծնվել է Կահիրեում (Եգիպտոս)։ Կրթությունն ստացել է ծնողավայրի Գալուստյան ազգային վարժարանում և Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունում, հետևել է երաժշտության։ 1943 թ. Եգիպտոսում կազմել է լարային նվագախումբ, տվել համերգներ։ Ապա ղեկավարել է «Կոմիտաս», «Ալագյազ» երգչախմբերը։ 1952-ին մեկնել է Փարիզ, հետևել «Էկոլ նորմալ»-ի դասընթացներին։ Այնտեղ կազմակերպել է մեծ երգչախումբը, որը հանդես է եկել Յունեսկոյի սրահներում Սորբոնի համալսարանի հանդիսությունների օրերին։ 1858 թվականից աշխատել է Սերի Մուրադյան հայկական դպրոցում որպես երգի ու երաժշտության ուսուցիչ։ Վերջին տարիներին ղեկավարել է «Նայիրի» երգչախումբը, որը նկատելի դեր է կատարել ֆրանսահայ գաղութի երաժշտական կյանքում։ Երգչախմբի համար մշակել է «Ես լսեցի մի անուշ ձայն», «Կիլիկիա», «Արևն ելավ» և այլ երգեր։ Հորինել է երգեր՝ Մ. Զարիֆյանի, Վ. Թեքեյանի, Վ. Վահյանի և այլ բանաստեղծների խոսքերով։ Նրա ղեկավարած երգչախմբի կատարումների մեծ մասը վերցվել են ձայնապնակների վրա և լայնորեն տարածվել են սփյուռքահայ կենտրոններում։

ՅԱՆՏԸՄՅԱՆ ՀԱԿՈԲ (ծն. 1923).— Քանդակագործ։ Մանկությունն անց է կացրել Փարիզում։ 1932 թ. նրանց ընտանիքը տեղափոխվել է Արգենտինա։ Մասնագիտական կրթությունն ստացել է Բուենոս-Այրեսի գեղարվեստների բարձրագույն դպրոցում։ Ավարտելուց հետո զբաղվել է քանդակագործությամբ։ Նախ քանդակել է իր տատիկին։ Նրա այդ գործը Բուենոս-Այրեսում կազմակերպված մի ցուցահանդեսում շահել է 2-րդ մրցանակ։ Հետագայում իր քանդակները ցուցադրել է տարբեր առիթներով և արժանացել արգենտինյան մամուլի («Լա պրենսա», «Լա նասիոն», «Էլ մունդո» և այլն) բարձր գնահատականի։ Հայկական թեմաներով կատարված գործերից են Պողոս Նուպարի, Գարեգին Եսայանի, Եղիշե Դուրյանի կիսանդրիները։

ՅԱՍՄՆ (ԲԱԼԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ).— Նկարչուհի։ Ծնվել է Կահիրեում (Եգիպտոս)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Նկարիչ Աշոտ Զորյանի արվեստանոցում, ապա կատարելագործել է Իտալիայում։ Վերադառնալով Եգիպտոս՝ Կահիրեում բաց է արել Ախնաթոն ցուցասրահը, որտեղ պարբերաբար ցուցադրել է իր և այլ նկարիչների գործերը։ Ունեցել է անհատական ցուցահանդեսներ, շահել մրցանակներ։ 1969 թ. արժանացել է արաբ բանաստեղծ Սայիդ Աբբալի անվան մրցանակի։ Հետագայում տեղափոխվել է Բեյրութ, շարունակել նկարչական գործունեությունը։ Նախասիրած բնագավառը բնանկարչությունն է։ Մամուլը բարձր է գնահատել նրա գործերից «Ծառերը կանգնած են մահանում», «Ջմեռ», «Ծառերը» և այլն։ Հայկական թեմաներով ստեղծած գործերից է «Անձրևն եկավ շաղալով»։

ՅԱՎԵՐ ՄԱՏԼԵՆ (ծն. 1904).— Գրող, հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է ծննդավայրի Էսայան, Պեզազյան վարժարաններում, ապա՝ ֆրանսիական դպրոցում։ Հետևել է նաև երաժշտության։ Կ. Պոլսում ճանաչված դեմք է եղել որպես դաշնակահարուհի։ 1920-ական թվականների սկզբներից պոլսահայ մամուլում («Վերջին լուր», «Առավոտ» և այլն) տպագրել է պատմվածքներ, արձակ բանաստեղծություններ։ Հետագայում ապրել է Ֆրանսիայում։ 1936 թ. Մարսելում խմբագրել է «Ժողովուրդի ձայն» պարբերականը։ Աշխատակցել է սփյուռքահայ մամուլին, այդ թվում Ամերիկայի «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթին։

ՅԱՎՐՈՒՅԱՆ ՍԵԴՐԱԿ (ծն. 1931.)— Դաշնակահար։ Ծնվել է Կ. Պոլսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Փարիզի «Էկոլ նորմալ դ՝ մյուզիկ» երաժշտական դպրոցում և նույն քաղաքի կոնսերվատորիայում, ավարտել է 1953 թ.։ 1955-ից որպես մենակատար նվագել է Փարիզի ռադիոյում և հեռուստատեսությունում։ Նույն տարվանից համերգներ է տվել Փարիզում, Բուդապեշտում, Մադրիդում և այլ քաղաքներում։ 1960 թ. հանդես է եկել Լոնդոնի Ռոյալ Հոլի համերգային մեծ սրահում, արժանացել անգլիական մամուլի բարձր գնահատականի։

ՅԱՎՈՒՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ (ծն. 1935).— Կինոօպերատոր։ Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1977)։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Մոսկվայի՝ կինեմատոգրաֆիայի համամիութենական ինստիտուտի օպերատորական ֆակուլտետում, ավարտել 1962 թ.։ Երկու տարի աշխատել է Հայֆիլմի կինոստուդիայում որպես օպերատոր-բեմադրող, իսկ 1964-ից՝ Երևանի «Հայֆիլմ» ստուդիայում։ Նկարահանել է մոտ քսան գեղարվեստական և վավերագրական ֆիլմ, որոնցից են՝ «Բարև, ես եմ», որը 1965 թ. շահել է Հայկական ԽՍՀ պետական մրցանակ, «Յոթ երգ Հայաստանի մասին» (1967), «Երևանյան օրերի խրոնիկա» (1971), «Այստեղ, այս խաչմերուկում», «Երկունք» (1976), «Սգավոր ձյունը» (1978)։ 1977-ից կինոօպերատորական վարպետություն է դասավանդում Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում։

ՅԱՐԱՅԱՆ ԱԼԲԵՐՏ (ծն. 1934).— Նկարիչ։ Ծնվել է Թբիլիսիում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիայում, որի գրաֆիկայի բաժինն ավարտել է 1963-ին։ Աշխատել է գրքի նկարազարդման և հաստոցային գրաֆիկայի բնագավառում։ 1963-ից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Զանգեզուր», «Սայաթ-Նովա», «Խնձորեկ», «Հայաստանում», Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի նկարազարդումը և այլն։

ՅԱՐԱՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ծն. 1927).— Նկարիչ։ Ծնվել է Կիրովաբադում (Ադրբեջանական ԽՍՀ)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել 1953 թ.։ Հաջորդ տարվանից մասնակցել է հանրապետական, հետագայում նաև միութենական ցուցահանդեսների՝ ներկայացնելով գերազանցապես գրաֆիկական աշխատանքներ և ժաղրանկարներ։ Լավագույն գործերից են՝ «Ճանապարհները տարբեր են, նպատակը մեկ» (1967), «Խորհրդային քաղաքական պլակատը 50 տարում» (ցուցահանդես), «Ընդանք խաղաղության պաշտպաններ են» և այլն։ Հանրապետական մամուլում, մասնավորապես «Ոգնի» երգիծաթերթում տպագրել է քաղաքական և կենցաղային բազմաթիվ ժաղրանկարներ, ընկերական շարժեր։ Զևավորել է գրքեր։ 1974 թ. լույս է տեսել նրա «Շարժեր» ալբոմը, իսկ 1980 թ.՝ Խորհրդային Հայաստանի 60-ամյակի առիթով մի նոր ալբոմ, որտեղ զետեղված են Անդրբկովկասի երեք հանրապետությունների դրոշներին պատկերող 90 շարժեր։

ՅԱՐԱՅԱՆ (ՅԱՐԱՅԻՎ) ՅՈՒՐԻ (ծն. 1911).— Ճարտարապետ. Ճարտարապետության դոկտոր (1967)։ Ծնվել է Թբիլիսում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Բաքվի արդյունաբերական ինստիտուտում, ավարտել 1937-ին։ Վարել է պատասխանատու մի շարք պաշտոններ։ Եղել է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի Լենինյան և պետական մրցանակների կոմիտեի անդամ (1957-ից), ԽՍՀՄ Ճարտարապետների միության քարտուղար (1965-ից), Ճարտարապետության տեսության և պատմության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր։ «Ճարտարապետության համընդհանուր պատմության» բազմահատորյակը 1979 թ. արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Թումանյան» (Մոսկվա, 1950), «Հայաստանի ճարտարապետությունը» (1960, համահեղինակ՝ Ն. Բունիաթով), «Ազգայինը և ինտերնացիոնալը խորհրդային ճարտարապետությունում» (1971), «Հերոս քաղաք Մոսկվա» (1976) և այլն, բոլորն էլ ռուսերեն։

ՅԱՐԱՄԻՇԵՎ ԱԲՍԵՆ (1862—1930).— Երաժիշտ-թառահար։ Ծնվել է Շուշիում։ 12 տարեկան հասակից նվագել է թառ։ Հետագայում Բաքվում քամանչիստ Ավանեսի և Ջ. Կարյագդու հետ կազմել են տրիո, մի քանի տարի համերգներ տվել Անդրկովկասի տարբեր քաղաք-

ներում։ 1913 թ. Կիևում ձայնագրվել են նրա կատարումներից մի քանիսը։ Կյանքի վերջին տարիներին աշխատել է Բաքվի կոնսերվատորիայում։

ՅԱՍԻՈՒՄՅԱՆ ՌԻՉԱՐԴ (1917—1985).— Կոմպոզիտոր։ Ծնվել է Ֆիլադելֆիայում (Ամերիկա), հայ քահանա Հայկ Յարդումյանի ընտանիքում։ Մայրը եղել է երգեհոնահար։ Երաժշտական նախնական գիտելիքները ձեռք է բերել ընտանիքում, կատարելագործել 22 տարեկանում։ 1936 թ. գրել է իր առաջին ստեղծագործությունը՝ «Հայկական սուիտը», որը հրապարակ է հանել տարիներ անց։ 1945 թ. առաջին անգամ Ֆիլադելֆիայի սիմֆոնիկ նվագախումբը կատարել է նրա «Լքված քաղաքը» նվագախմբային երկը, որին հաջորդել են այլ ստեղծագործություններ և արագորեն հռչակել նրա անունը Ամերիկայում։ Գրել է դաշնամուրային պիեսներ, խմբերգեր, նվագախմբային երկեր, 1-ին սիմֆոնիա և այլն։ Վերջին տարիներին հորինած երկերի մեջ զգալի տեղ են բռնում հայկական մոտիվներով կատարածները։ Մշակել է հայկական պատարագը, որը վերցվել է ձայնապնակի վրա և լայնորեն տարածվել սիյուռքահայ կենտրոններում։ Նրա ստեղծագործությունները կատարվում են Դետրոյտի, Բոստոնի, Հուստոնի, Նյու-Օռլեանի, Ֆիլադելֆիայի և այլ քաղաքների նվագախմբերի կողմից։ Դրանք նվագվել են աշխարհի տարբեր երկրներում, հեղինակի անվան շուրջ ստեղծելով միջազգային համբավ։

ՅԱՓՈՒՃՅԱՆ ԱՌԱՔԵԼ (ծն. 1933).— Նկարիչ։ Ծնվել է Դամասկոսում (Սիրիա)։ Կրթությունն ստացել է ծննդավայրի հայկական դպրոցում և Բեյրութի Բուրջ Համուտ թաղամասի Մեսրոպյան վարժարանում։ Ավարտելուց հետո նվիրվել է նկարչությանը։ 1954 թվականից սկսած մասնակցել է Լիբանանում կազմակերպված ցուցահանդեսների։ 1959 թ. նրա գործերից մի քանիսը՝ «Մար Մխայիս վանքը», «Դորայի մեջ մի լճակ», «Մոր դիմանկարը» և այլն, ցուցադրվել են Յունեսկոյի ընդարձակ սրահում բացված մեծ ցուցահանդեսում և բարձր են գնահատվել հայ և օտար մամուլի կողմից։

ՅԱՓՈՒՃՅԱՆ ԱՎԵՏԻՍ (ծն. 1931).— Պատմաբան, հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Կահիրեում (Եգիպտոս)։ Կրթությունն ստացել է տեղի Գալուստյան ազգային վարժարանում։ Ապա հեռակա կարգով հետևել է Լոնդոնի մանկավարժական ինստիտուտի դասընթացներին, ավարտել նրա ժամանակակից լրագրության բաժինը։ 1949 թվականից աշխատել է Կահիրեի «Արև» օրաթերթի խմբագրությունում իբրև թարգմանիչ-հոդվածագիր, իսկ 1967-ից՝ պատասխանատու խմբագիր։ Անգլերենից և ֆրանսերենից թարգմանել է գեղարվեստական և գիտական բազմաթիվ գործեր, այդ թվում՝ ծավալուն վեպեր, որոնք տպագրվել են «Արև» թերթում որպես թերթոն։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հայ ժողովուրդի մեծ գոյամարտը և Հայաստանի հանրապետությունը ստրկացնողները» (Կահիրե, 1968), «Ով կազմակերպեց փետրվարյան արկածախնդրությունը և ինչ եղավ անոր հետևանքը» (1969), «Արևմտահայաստանի կորուստը և անոր պատասխանատուները» (1970), «Եվ վերածնավ հայ ժողովուրդը հուրեն ու սուրեն» (1971), «Հայաստանի հանրապետության քաղաքական, զինվորական, տնտեսական և ընկերային կացությունը» (1972), «Պաքուի հերոսամարտը և անոր պատասխանատուները» (1973), «1918 թվի թրքական արշավանքը Հայաստան և Պաթումի պայմանագիրը» (հանդիսանում է նրա թեկնածուական դիսերտացիան, որ պաշտպանել է Երևանում, 1974 թ.), «Համառոտ պատմություն Ռամկավար ազատական կուսակցության կազմության» (1977), «Մեծ եղեռնը օտար մտավորականության գնահատումով» (1980), «Եգիպտահայ մշակույթի պատմություն» (լույս է տեսել «Արեւմի» 200-ից ավելի համարներում, ապա՝ առանձին գրքով, 1981 թ.։

ՅՈՀԱՆՆԱ ԷԼ-ԷՐՄԵՆԻ (18-րդ դ.).— Նկարիչ։ Ծնվել է Երուսաղեմում, հայկական ընտանիքում։ Հոր անունը եղել է Կարապետ։ Մասնագիտական կրթությունն ստացել է ծննդավայրում, զբաղվել եկեղեցիների նկարազարդումով։ 1740—1780-ական թվականներին ապրել է Եգիպտոսում, որտեղ նկարազարդել է հին Կահիրեի Ղպտիական մի շարք եկեղեցիներ, որոնց պատերը զարդարող և նրա ստորագրությունը կրող նկարների թիվը անցնում է 120-ից։ Դրանց մի մասը կատարված է Իբրահիմ էլ Նասխի անուն նկարչի համագործակցությամբ. մնացածները իր հեղինակություններն են։ Նրա գործերից են «Ս. Մարգարիտա» (1745), «Ս. Գեորգ» (1753), «Ս. Ոնոփրեսս» (1783)։ Աբուլ Սեֆեյն եկեղեցում կատարված նկարներից են՝ «Ավետումը», «Հիսուսի ծնունդը», «Զաքարոսի հարությունը», «Քրիստոսի մկրտությունը», «Ալյակերպություն», «Հարություն», «Խաչելություն», «Վերջին ընթրիքը», «Հիսուսի մուտքը Երուսաղեմ», «Սամարուհին», «Մոլսեսը և հրավառ մորենին», «Առաքյալները ձուկ են որսում» և այլն, մեծ մասամբ աստվածաշնչային թեմաներով և կատարված մեկ տարում՝ 1762 թ.։ Նույնպիսի նկարներ պահպանվել են Ալ-Մուալլաքա, Անբա Շընուտա, Քասրիեթ էր Ռիհան, Աբու Մարկա և այլ եկեղեցիներում, բոլորն էլ կատարված 1748—1781 թթ.։ Նկարների մի մասը ոսկեզօծ է։ Մի քանիսի տակ ստորագրված է Յուհաննա, մի քանիսը՝ Հաննա, բայց միշտ էլ-Էրմեեի (այսինքն՝ հայ), երուսաղեմացի։ Մի նկարի տակ էլ արաբերեն լեզվով գրված է. «Նկարեց խոնարհ Հաննա Կարապետ հայը երուսաղեմացի»։ Սրբերի անունները գրված են ղպտիերեն և արաբերեն, բացատրությունները՝ արաբերեն։ Նկարիչ-արվեստաբան Օննիկ Ավետիսյանի կարծիքով նրա արվեստը կապված չէ 16—17-րդ դարերի բյուզանդական նկարչության հետ, այլ աղղվել է առաջին հերթին հայկական մանրանկարչությունից, մասնավորապես Սարգիս Պիծակից, որի նկարազարդումները տեսած պիտի լիներ երուսաղեմի մատենադարանում։

ՅՈՐԿԻԱՏԻՍ ՎԱՍԻԼ (ԿԱՐՄԻՐ) (1902—?).— Լրագրող, հասարակական գործիչ։ Ծնվել է Խարբերդի գավառի Մեղրե գյուղաքաղաքում (Արևմտյան Հայաստան)։ Հայրը եղել է հույն, մայրը՝ հայ։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Մխիթարյան վարժարանում։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո մեկնել է Կ. Պոլիս, այնտեղից՝ Ամերիկա, որպես բանվոր աշխատել Նյու Յորքում։ Ունեցել է հասարակական, քաղաքական, լրագրական բեղուն գործունեություն։ Եղել է Ամերիկահայ բանվորական կուսակցության ստեղծողներից, որի գործունեությունը սերտորեն կապված էր Ամերիկայի կոմունիստական շարժման հետ։ 1922 թվականից աշխատել է ամերիկահայ առաջադիմական մամուլում։ Եղել է «Պրոլետար», «Նոր աշխարհ», «Բանվոր», «Լրաբեր» թերթերի խմբագրական մարմինների անդամ, հաճախ՝ խմբագիր։ Այդ թերթերի էջերում վերջին հիսուն տարիների ընթացքում տպագրել է հարյուրավոր հոդվածներ՝ բոլորն էլ ստորագրված Խորհրդային Հայաստանի նկատմամբ նվիրվածության ոգով։ 1920—1930-ական թվականներին նրա որոշ հոդվածները արտատպվել են «Խորհրդային Հայաստան» օրաթերթում։ Օգտագործել է Վ. Զավենի, Վ. Ազարյանի, Վ. Արեգյանի և այլ ծածկանուններ։ Առավել հայտնի է Կարմիր ծածկանունով, որով ստորագրել է իր «Կարմիր կայծեր» այունակները երկար տարիներ՝ «Բանվոր» և «Լրաբեր» թերթերում։

ՅՈՒԱՆԵՍՔՈՒ ԱՆԴՐԱՆԻԿ (1835—1906).— Լեզվաբան, խմբագիր։ Ծնվել է Ռումինիայի Ռոման քաղաքում, հարուստ հայ կալվածատերի ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի հայկական ծխական դպրոցում, որի 4-րդ դասարանից շարունակել է ուսումը ռումինական միջնակարգ դպրոցում։ Ավարտելուց հետո կարճ ժամանակ աշխատել է դատարանում որպես քարտուղար, ապա Վիեննայում հետևել է իրավաբանության և երկար տարիներ աշխատել է իրավաբան։ Միաժամանակ հետաքրքրվել է լեզվաբանությամբ։ Նպատակ է ունեցել մեսրոպյան տառերը փոխարինել լատիներենով։ 1883 թ. Կ. Պոլսում հրատարակել է լատիներեն, բայց հայերեն երկու գիրք, ինչպես և մի քերականություն։ Ջանենալով հաջողություն, Վառնայում (Բուլղարիա) բաց է արել տպարան, 1885—1886 թթ. լույս է ընծայել «Huïs» (Հույս) լատիներեն հայերեն թերթը։ Ապա՝ փակելով թերթը, տեղափոխվել է Վիեննա, Մխիթարյանների վանքի մոտ տուն վարձել և ամբողջովին նվիրվել է մի արտառոց բառարանի ստեղծմանը, որի նպատակն էր ցուցադրել, որ աշխարհի բոլոր լեզուների բառերը առաջացել են հայերենից։ Ապա տեղափոխվել է Փարիզ, շարունակել նույն աշխատանքը։ Նրա նյութական միջոցներից օգտվել են Պոլսից արտասահման փախած և տնտեսական վատ պայմանների մեջ գտնվող հայ մտավորականները և ուսանողները, որոնք աշխատել են նրա մոտ որպես քարտուղար (Ե. Օտյան, Հր. Աճառյան, Զ. Եսայան և ուրիշներ)։ Ե. Օտյանը մանրամասն նկարագրել է իր աշխատանքը «Տասներկու տարի Պոլսեն դուրս» գրքում։

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ ԲԵՆԻԿ *(1919—1975)*.— *Բանասեր. բանասիրական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Դորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտում։ 1946 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ արտասահմանյան գրականության մասնագիտությամբ։ Ուսման շրջանը հիմնականում անց է կացրել Մոսկվայում։ 1951 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա «Հանրի Բարբյուսի գրականագիտական հայացքները» թեմայով։ Դասավանդել է Երևանի դեղաբվեստաթատերական ինստիտուտում։ 1951 թվականից աշխատել է Երևանի պետական համալսարանում որպես արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ։ 1940-ական թվականների վերջերից գիտական մամուլում, ժողովածուներում տպագրել է բազմաթիվ հոդվածներ՝ նվիրված հայ, ռուս և արտասահմանյան գրականության հարցերին։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Ֆ. Էնգելսը և ռեալիզմի հարցերը» (1960), «19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ֆրանսիական գրականությունը և Անատոլ Ֆրանսը» (1964), «Մ. Գորկին և գրականագիտության մի քանի հարցեր» (Երևան, 1968), «Արտացոլման Լենինյան տեսությունը և գրականությունը» (1972), «Սոցիալիստական ռեալիզմի գեղագիտության պատմությունից. գիրք 1. Անատոլ Ֆրանս» (1976)։ 1973 թ. պաշտպանել է դոկտորական դիսերտացիա «Լենինյան ուսմունքը գրականության մասին և սոցիալիստական ռեալիզմի մի քանի հարցեր» թեմայով։*

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ ԵՎԳԵՆՅԱ *(ծն. 1904)*.— *Դերասանուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստուհի (1950)։ Ծնվել է Դորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում։ Փոքր հասակից ընտանիքի հետ տեղափոխվել է Միջին Ասիայի Զարժոյ քաղաքը (այժմ՝ Թուրքմենական ԽՍՀ), որտեղ ստացել է կրթությունը հայկական ծխական դպրոցում և ռուսական իգական գիմնազիայում, ավարտել 1918 թ.։ 1920—1922 թթ. աշխատել է Բաքվում, միաժամանակ սովորել տեղի թատերական ստուդիայում։ 1930 թ. հաճախել է Տաշքենդի թատերական ստուդիան, շարունակելով խաղալ Ուզբեկական ԽՍՀ հայկական շրջիկ թատերախմբում, մինչև 1937 թ., երբ վերադարձել է Լորհրդային Հայաստան և աշխատել էջմիածնի շրջանային թատրոնում։ Հայրենական պատերազմի տարիներին ծառայել է խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո դարձյալ աշխատել է էջմիածնում, դպրոցներում կազմակերպել ինքնագործ թատերախմբեր, տվել ներկայացումներ։ 1958 թ. ստեղծել է ժողովրդական թատերախումբ։ Տարիների ընթացքում խաղացել է մի քանի տասնյակ դերեր, որոնցից են՝ Լուիզա («Սեր և խարդավանք»), Սոզոմե («Պաղտասար աղբար»), Վարդանուշ («Գոշ»), Ռայբուծեի վարիչ («Պլատոն Կրեչետ»), Մագդաղ («Մորգանի խնամին») և այլն։ Ունեցել է նաև ռեժիսորական գործունեություն։*

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ ԿԱՐԵՆ *(ծն. 1927)*.— *Բանասեր. պատմական գիտությունների դոկտոր (1974)։ Ծնվել է Թբիլիսիում։ Միջնակարգ կրթությունն ստացել է Երևանում։ 1946—1948 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանում, հմտանալով գրաբարի մեջ, ապա ուսումը շարունակել է Լենինգրադի համալսարանում, որտեղ հետևել է Բյուզանդիայի պատմության։ 1951—1954 թթ. սովորել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում, ուսման շրջանն անցկացնելով ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում։ 1954—1958 թթ. աշխատել է Երևանի Մատենադարանում որպես ձեռագրական բաժնի վարիչ։ 1957 թ. Լենինգրադում պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ Հաջորդ տարվանից աշխատել է ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում։ Գիտական մամուլում տպագրել է մի շարք հոդվածներ հայագիտական և բյուզանդագիտական հարցերի մասին։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Արիստակես Լաստիվերտցի» (քննական տեքստը, Երևան, 1963), նույնի ռուսերեն թարգմանությունը՝ 1968, ֆրանսերեն՝ 1972, Հ. Օրբելու կենսագրությունը (ռուսերեն՝ 1964, հայերեն՝ 1971), «Եղիշեի «Վարդանանց պատերազմը. տեքստի պատրաստում, առաջաբան և ծանոթագրություններ» (1971) և այլն։*

ՅՈՒԶԲԱՇՅԱՆ ՅՈՒՐԻ *(ծն. 1935)*.— *Երաժիշտ-մանկավարժ։ Ծնվել է Դորիսում (Հայկական ԽՍՀ)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում և պետական կոնսերվատորիայում, որի խմբավարական բաժինն ավարտել է 1964-ին։ 1956-ից հանրապետության դպրոցներում աշխատել է որպես երաժշտության ուսուցիչ և երգչախմբերի ղեկավար։ 1965 թվականից դասախոսում է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում։ 1981 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա՝ մանկավարժության գծով։ Հրատարակել է մանկավարժական, մեթոդական մի շարք աշխատություններ, ինչպես «Նոտագրության ուսուցումը հարաբերական և բացարձակ մեթոդներով» (Երևան, 1972), «Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացումը» և այլն։ Անդամ է Զուլտա Կոտայի անվան երաժշտական դաստիարակության միջազգային ընկերության։*

ՅՈՒՇԱՐԻ *(1850—1922)*.— *Աշուղ։ Ծնվել է Ալեքսանդրապոլում։ Բուն անունը եղել է Խաչատուր։ Հորինել է հայերեն երգեր, որոնք կատարել է թառի նվագակցությամբ։ Նրա երգերից նմուշներ տպագրված են Գ. Թարվերդյանի «Հայ աշուղներ» ժողովածուում (Երևան, 1937)։*

ՅՈՒՍՏԻՆՈՎ ՊԻՏՐ *(ծն. 1921)*.— *Կինոդերասան, ռեժիսոր, գրող։ Ծնվել է Լոնդոնում։ Հայրը եղել է հայ, մայրը՝ ռուս դերասանուհի։ Ստացել է անգլիական կրթություն, հետևել թեմական արվեստին։ Լոնդոնում համարվել է ճանաչված դերասան, աչքի ընկել հատկապես Ներոնի դերով՝ «Հո երթաս» պիեսում և իր գրած «Ջուլիետ» պիեսի արական գլխավոր դերով։ Գրել է տասից ավելի պիեսներ և մեկ վեպ։ Հետագայում ամբողջովին նվիրվել է կինոարվեստին, խաղացել է բազմաթիվ ֆիլմերում։ Գլխավոր դերերով հանդես է եկել «Օդնտա», «Սպարտակ», «Ռոմեո և Ջուլիետա», «Կատակերգակներ», «Օրվա լույսը» և այլ ֆիլմերում, խաղընկերներ ունենալով Էլիզաբեթ Թեյլորի և Ռիչարդ Բարդոնի նման աշխարհահռչակ ատաղներ։ Միաժամանակ եղել է սիրված ծաղրանկարիչ։ Նրա ծաղրանկարները տպագրվել են անգլիական շատ թերթերում և հանդեսներում։*

ՅՈՒՍՈՒՖՅԱՆ ԶԱՐԵՀ *(1870—1940)*.— *Հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է Օրթագյուղի Շահնազարյան վարժարանում և իրավաբանական դպրոցում։ Երիտասարդ հասակում խմբագրել է Կ. Պոլսում լույս տեսնող ֆրանսերեն «Ֆար դյու Բոսֆոր» թերթը։ Աշխատել է ֆրանսիական առևտրական մի ընկերությունում և այդ ընկերության պաշտոնաթերթը նույնպես ինքն է խմբագրել։ Եղել է 1884 թվականից լույս տեսնող հայերեն «Արևելք» օրաթերթի խմբագիրներից և եռանդուն աշխատակիցներից, ապագրելով գերազանցապես ֆրանսերենից թարգմանած գիտական հոդվածներ, որոնք իրենց հանրամատչելի լեզվով մեծ ժողովրդականություն են ունեցել։*

ՅՈՒՍՈՒՖՅԱՆ ՀՈՎՍԵՓ *(1857—1913)*.— *Կրթական գործիչ, հրապարակախոս։ Ծնվել է Կ. Պոլսում։ Ունեցել է կրթական, մանկավարժական երկար տարիների գործունեություն։ Եղել է 1884 թ. հրատարակած «Արևելք» օրաթերթի խմբագիրներից։ Հրատարակել է ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, ինչպես «Պատկերազարդ թվաբանություն», «Երկրաչափական գիտելիքներ» և այլն։*

Ն

ՆԱԳԱՇՅԱՆ ԱՎԵՏԻՍ *(1868—1943).*— Գրող, հրապարակախոս։ Ծնվել է Այնթապում (Թուրքիա)։ 1887 թ. ավարտել է ծննդավայրի ամերիկյան կոլեջը, 1894 թ.՝ Բեյրութի բժշկական համալսարանը։ Ապրել է Կ. Պոլսում, որտեղ ունեցել է գրական-հրապարակախոսական գործունեություն։ Աշխատակցել է «Բահնյումա», «Ավետաբեր» և այլ պարբերականներին։ Գրել է հիմնականում երգիծական երկեր, որոնցից լավագույնները ամփոփել է «Սեյեահաթ խաթբրելերի» հայատառ թուրքերեն հատորում։ 1915 թ. ապրիլի 24-ին Պոլսի հայ մտավորականների հետ աքսորվել է Այաշ, խոշտանգումից փրկվել ամերիկյան դեսպան Մորգենթաուի միջնորդությամբ։ 1922-ին մեկնել է Եգիպտոս, 1924-ին՝ Ամերիկա։ Հայկական և ամերիկյան մամուլում տպագրել է երգիծական գործեր։ Հայերենների մի մասը հրատարակել է «Զվարթ պատմություններ» ժողովածուում։ Տպագրել է «Այաշի բանտը» հուշագրական գործը և «Հայրենիքը գտած մարդը» կենսագրական վեպը՝ անգլերեն (Նյու Յորք, 1940)։

ՆԱԳԱՇՅԱՆ ՀԱՅԿ *(ծն. 1926).*— Գրող, հրապարակախոս։ Սովորել է Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունում։ Ավարտելուց հետո աշխատել է Բեյրութում, ապա՝ 13 տարի՝ Եթովպիայում։ Գրական առաջին փորձերը կատարել է 1956-ին՝ Ադիս Արեբայում հրատարակվող «Փյունիկում»՝ տպագրելով գեղարվեստական երկեր։ Եղել է այդ պարբերականի խմբագիրներից։ 1979-ին լույս է ընծայել «Որսորդի ուղիներով» պատմվածքների ժողովածուն, 1981-ին՝ «Մարգերիտայի առյուծները», որի նյութը նույնպես վերցված է Եթովպիայի կենդանական աշխարհից։ Աշխատակցել է «Զարթոնք», «Արև», «Պայքար» և այլ պարբերականներին։ Նրա «Որսորդական ուղիներով» գիրքը վերահրատարակվել է նաև Երևանում, 1982-ին։ 1965-ից հանդիսանում է «Շիրակ» ամսագրի խմբագրական մարմնի անդամ։

ՆԱՀԻՐՅԱՆ ԱՆՆԱ (ՎԱՐԴՈՒՀԻ) *(1862—1945).*— Դերասանուհի։ Ծնվել է Թիֆլիսում։ Օրիորդական ազգանունը եղել է Նամուրաղյան։ Բեմական ասպարեզ է մտել 1879-ին՝ Թիֆլիսի հայկական թատերախմբում կատարելով մի շարք դերեր՝ Պետրոս Ադամյանի խաղընկերակցությամբ։ 1880 թ. Ադամյանի հետ շրջագայել է Անդրկովկասի քաղաքներում, մասնակցել նրա բոլոր ներկայացումներին։ Երկար տարիներ խաղացել է Թիֆլիսի հայկական տարբեր թատրախմբերում, աչքի ընկնելով մասնավորապես Գ. Սունդուկյանի պիեսներում։ Ժամանակի մամուլը բարձր է գնահատել նրա դերերից Շուշանը («Պեպո»), Խամփերին («Խաթաբալա»), Բարբարեն («Էլի մեկ զոհ»), Քույր Ջուզեպան («Քույր Թերեզա»), Դորինան («Տարտյուֆ»), Կուկուշկինան («Եկամտավոր պաշտոն») և այլն։ 1922 թ. հունվար ամսին Շուշանի դերով մասնակցել է Երևանի պետական առաջին թատրոնի հիմնադրման առիթով ներկայացված «Պեպոյին»։ 1934 թ. Երևանում նշվել է նրա բեմական գործունեության 55-ամյակը։

ՆԱԳԱՆԻ (ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ—ՏԵՐԵՆՑ ՀՈՎՀԱՆՆԵՍ) *(1870—1912).*— Բանաստեղծ։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Մոսկվայի համալսարանում։ Վերադառնալով ծննդավայրը՝ աշխատել է որպես իրավաբան և ուսուցիչ։ Գրել է բանաստեղծություններ, որոնք ամփոփել է «Սրտի խոսքեր» (1892) և «Սիրո տաղեր» (1913) ժողովածուներում։ Հրատարակել նաև «Մեր խալֆան» խորագրով մի վիպակ։ Ավելի մեծ ժողովրդականություն է ձեռք բերել աշուղական երգերով, որոնցից են՝ «Ես մի խոսնակ թառ ունեի», «Տերև աչքերիդ ատաս փայլից», «Ո՞ւր ես, ո՞ւր ես, ազիզ աղջիկ», «Յաբ քեզ հետ խոսելիք ունեմ» և այլն։

ՆԱԶԱՐ ԲԱՍԵՆՑԻ *(16—17-րդ դդ.).*— Տաղերգու։ Նրա «Փառք և պատիվ արարողին» տաղը պահվում է Երևանի Մատենադարանի 7707 թվահամարը կրող ձեռագրում։

ՆԱԶԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ *(18-րդ դ.).*— Մատենագիր։ Գրել է «Պատմութիւն վարուց Մովսէսի Եղիսաբեթեցւոյ վարդապետի» (1710—1770) աշխատությունը։

ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆ ԱՎԵՏԻՍ (ԼԵՌԵՆՑ) *(1866—1939).*— Հասարակական, քաղաքական գործիչ, գրող, հրապարակախոս-խմբագիր, Ս. Դ. Հնչակյան կուսակցության հիմնադիրներից։ Ծնվել է Թիֆլիսում, Պարսկաստանից այնտեղ գաղթած ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է Թիֆլիսում։ 1880-ական թվականների սկզբներից սովորել է Պետերբուրգի համալսարանում, որտեղ էլ տարվել է նարոդնիկական գաղափարներով։ 1883 թ. մեկնել է Փարիզ, հետևել իրավաբանության և սոցիալական գիտություններին։ Ապա մեկնել է Ժնև, որտեղ կապեր է հաստատել Պլեխանովի, Զասուլիչի, Ակսելրոդի և այլ հեղափոխականների հետ։ Քանիցս հանդիպել է Վ. Ի. Լենինին։ Ժնևում ամուսնացել է գաղափարական նույն դիրքերում կանգնած Մարո Վարդանյանի հետ, որ հետագայում զբաղվել է Նազարբեկյան։ Նրանք 1887 թ. մի խումբ ընկերներով Ժնևում հիմնադրել են «Հնչակ» պարբերականը և Ս. Դ. Հնչակյան կուսակցությունը։ «Հնչակը» դարձել է կուսակցության պաշտոնաթերթը։ Այդ տարիներից ծավալել է հասարակական-քաղաքական և գրական-հրապարակախոսական բեղուն գործունեություն։ «Հնչակ», «Գաղափար», «Ապտակ» և այլ պարբերականներում տպագրել է սոցիալիստական գաղափարներ արծարծող բազմաթիվ հոդվածներ, բանաստեղծություններ։ Եղել է մարքսիզմի առաջին տարածողներից մեկը հայ իրականությունում։ Գրել և թարգմանել ու հրատարակել է քաղաքական մի շարք բրոշյուրներ, օգնական ունենալով առաջին հերթին Մարո Նազարբեկյանին։ Միաժամանակ նկատելի դեր է կատարել թուրքական տիրապետության տակ տառապող հայ ժողովրդի ծանր վիճակը, նրա ազատագրական պայքարը և հայկական հարցը ստար պետություններին ծանոթացնելու գործում, տարբեր լեզուներով հրատարակելով կոչեր, կոտրածներին վերաբերող փաստաթղթեր։ 1880-ական թվականներից հայ մամուլում Լեռենց ծածկանունով տպագրել է բանաստեղծություններ, պոեմներ։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Ազատ ժամեր» (բանաստեղծություններ, Թիֆլիս, 1887), «Բանաստեղծություններ» (Պետերբուրգ, 1890), «Դարբներեր» (Ռուսչուկ, 1909), «Մարտում» (Աթենք, 1893), «Սասուն» և այլն։ 1934 թ. Ամերիկայից եկել է Խորհրդային Միություն, ապրել Մոսկվայում։

ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆ ՄԱՐՈ *(1864—1941).*— Հասարակական, քաղաքական գործիչ։ Ծնվել է Կովկասում։ Օրիորդական ազգանունը եղել է Վարդանյան։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի առաջին իգական գիմնազիայում, ավարտել 1881-ին։ Որպես ուսուցչուհի աշխատել է հայկական ծխական դպրոցում։ Ապա մեկնել է Պետերբուրգ, հետևել Բեստուժևյան կանանց դասընթացների բնագիտության ճյուղին։ Ուսանելու այդ շրջանում տարվել է նարոդնիկական գաղափարներով, իր վրա հրավիրել ոստիկանության ուշադրությունը։ Հարկադրված 1885 թ. մեկնել է Փարիզ, այնտեղից անցել Ժնև, որտեղ շարունակել է կրթությունը շվեյցարական համալսարանում։ Ամուսնանալով Պետերբուրգի համալսարանի նախկին ուսանող Ավետիս Նազարբեկյանի հետ, ամբողջովին նվիրվել է քաղաքական պայքարի։ Մոտիկից կապված է եղել «Աշխատանքի ազատագրություն» մարքսիստական խմբի ղեկավարներ Պլեխանովի, Վ. Զասուլիչի և այլոց հետ։ Նկատելի դեր է կատարել Հնչակյան կուսակցության և նրա պաշտոնաթերթ «Հնչակ» ամսագրի հիմնադրման գործում։ Նրա տանն է ստեղծվել Ժնևում հայկական առաջին տպարանը, որտեղ տպագրվել է «Հնչակը», նաև քաղաքական բրոշյուրներ, կոչեր, թռուցիկներ։ Դրանց մեծ մասը նա է գրել, թարգմանել կամ խմբագրել։ 1892-ին տեղափոխվել է Աթենք։ Ապա շրջագայել է մի շարք երկրներում (Սիրիա, Եգիպտոս և այլն), կրկին մեկնել է Աթենք, այնտեղից՝ Ֆրանսիա։ Այստեղ թարգմանել է «Կոմունիստական մանիֆեստը», հատվածներ տպագրել «Գաղափար» հնչակյան պարբերականում, 1894 թ.։ Թարգմանություններ է կատարել Պլեխանովից։ 1900—1904 թթ. ապրել է Փարիզում. այդ տարիներին հաճախ է հանդիպել Վ. Ի. Լենինին, լսել նրա դասախոսությունները։ 1904-ին բաժանվել է ամուս-

նուց, վերադարձել Ռուսաստան։ Նախ գործել է Պետերբուրգում, ապա՝ Թիֆլիսում։ 1910-ին ձերբակալվել է, հաջորդ տարի խիստ հսկողության տակ աքսորվել Սիբիր։ Արտասահմանի հայ մամուլը լայնորեն արձագանքել է այդ դեպքին, պահանջելով նրա ազատումը, նրան համարելով հայկական Ժաննա դ'Արկ։ 1916-ին անցել է Ստոկհոլմ, 1917-ին հանդիպել Ռուսաստան վերադարձող Լենինին, որի օժանդակությամբ եկել է Պետերբուրգ, այնտեղից՝ Թիֆլիս։ 1919-ին Թիֆլիսում նրա անմիջական մասնակցությամբ հիմնադրվել է «Գործավոր» շաբաթաթերթը։ Խորհրդային կարգերի հաստատումից հետո ապրել է Թիֆլիսում, որտեղ 1924 թ. ընդունվել է Կոմունիստական կուսակցության շարքերը։

ՆԱԶԱՐԵԹ (16-րդ դ.).— Տաղերգու։ Նրա «Նկրտիլ սակայն ի բարեաց» տաղը պահվում է Երևանի Մատենադարանում, 1113 թվահամարը կրող ձեռագրում։

ՆԱԶԱՐԵԹ (17-րդ դ.).— Մատենագիր։ Գրել է խրատական երկեր, որոնք՝ ամփոփված «Վասն մարդկան օգտի» ժողովածուում, պահվում են Երևանի Մատենադարանում, 1495 թվահամարի տակ։

ՆԱԶԱՐԵԹ (ՏԵՐ ՆԱԶԱՐԵԹ) (18-րդ դ.).— Աշուղ։ Գրել է մի շարք երգեր, որոնցից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանում, 1265 թվահամարը կրող ձեռագրում։

ՆԱԶԱՐԵԹ ԴՊԻՐ (17-րդ դ.).— Մատենագիր։ Կրթությունն ստացել է Երուսաղեմի հայոց վանքում, Գրիգոր Պարոնտեր պատրիարքի ժամանակ։ 1610 թ. գրել է նրա կյանքի ու գործունեության մասին մի աշխատություն՝ «Պատմութիւն և վարք Պարոնտէրի» խորագրով։ Ձեռագիրը պահվում է Երուսաղեմի վանքում։

ՆԱԶԱՐԵԹՅԱՆ ԴԱՎԻԹ (1840—1911).— Բանաստեղծ, թարգմանիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, կրթությունն ստացել է Վենետիկի Մխիթարյանների վանքում, 1860 թ. դարձել է այդ միաբանության անդամ։ Ունեցել է երկարամյա կրթական գործունեություն։ 1861—1865 թթ. որպես ուսուցիչ և օգնական վերակացու պաշտոնավարել է նույն վանքում. 1865—1869 թթ.՝ Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում։ Ապա տասը տարի եղել է ս. Ղազար վանքի վերակացու, իսկ 1880—1885 թթ.՝ տեսուչ Մուրադ-Ռափայելյան վարժարանում։ Այնուհետև կրթական պաշտոններ է վարել Պոլսում, Պատուայում և այլուր։ Ինքնուրույն և թարգմանական երկերով աշխատակցել է «Բազմավեպին»։ Միառժամանակ եղել է այդ պարբերականի օգնական խմբագիրը։ Բնագրից գրաբար է թարգմանել Դանթեի «Աստվածային կատակերգությունը», որից հատվածներ տպագրել է 1875 թ. «Հատընտիր քերթուածք յԱստվածային տեսլարանէն» խորագրով։

ՆԱԶԱՐԵԹՅԱՆ ԽԱՉԻԿ (ծն. 1931).— Դերասան. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր։ Ծնվել է Պլովդիվում (Բուլղարիա)։ Կրթությունն ստացել է տեղի պրոգիմնազիայում (ազգային վարժարան)։ 1946 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան։ Բեմական ասպարեզ է մտել 1949 թվականին։ Նախ խաղացել է Ստեփանավանի շրջանային թատրոնում, ապա՝ Արտաշատի, Գորիսի թատրոններում, 1956-ից Երևանի պետական հանդիսատեսի թատրոնում, իսկ 1977-ից Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում։ Տարիների ընթացքում կատարած տասնյակ դերերից են՝ Կարսեցյան («Գործագաշտ»), Սեյրան («Նամուս»), Սիլվիո («Երկու տիրոջ ծառա»), Քիպար («Պաղատասար աղքար»), Գոդուն («Բեկում»), Մասիսյանց («Խաթաբալա»), Զաքարիա իշխան («Ռուզան»), Տուլ Օֆիտիոս («Կորիուլան»), Սիմլեն Լենկտոն («Ջոն արքա») և այլն։ Նկարահանվել է մի շարք ֆիլմերում, ինչպես՝ Օթարյան («Պատվի համար»), գնդապետ Բագրատունի («Երաժշտախմբի տղաները»), Կարապետ Էֆենդի («Մոսյո Ժաք և ուրիշներ»), Բորյան («Բաքվի 26 կոմիսարներ»), Խաչիկ («Կյանքի լավագույն կեսը») և այլն։ Մոտ հարյուր դեր է կատարել հեռուստատեսային և ռադիո բեմադրություններում, աչքի ընկնելով մասնավորապես արևմտահայ հեղինակների գործերում, ինչպես «Թաղականին կնիկը» հեռուստատեսային ֆիլմում՝ Սասանյան Մարգար աղայի դերը։

ՆԱԶԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ (ծն. 1929).— Երաժշտագետ, կոմպոզիտոր։ Ծնվել է Խարբերդում։ 1931 թ. նրանց ընտանիքը տեղափոխվել է Հալեպ (Սիրիա), որտեղ ստացել է երաժշտական նախնական կրթությունը, աշակերտել կոմպոզիտոր Բարսեղ Կանաչյանին։ Ապա ուսումը շարունակել է Վենետիկի Բենեդետտո Մարչելո կոնսերվատորիայում, ավարտել 1962 թ.՝ կոմպոզիտորի վկայականով։ Գրել է սիմֆոնիաներ, գործիքային երկեր, մանկական երգեր, որոնք բոլորն էլ տպագրվել են և մի մասը տեղ գտել Մերձավոր Արևելքի հայկական դպրոցների, անդամ իտալական դպրոցների դասագրքերում։ Օրկար տարիներ երաժշտական առարկաներ է դասավանդել Վենետիկի վերոհիշյալ կոնսերվատորիայում։ 1973 թվականից հանդիսանում է «Վենետիկի արվեստի հանձնախումբ» կազմակերպության հինգ անդամներից մեկը։ Նրա երկերից «Vocalizo»-ն 1965 թ. շահել է Վենետիկյան մրցանակ։ 1966 թ. էլ մրցանակ է շահել նրա մի օրատորիան։

ՆԱԶԱՐՅԱՆ ԵՆՈՔ (1868—1928).— Նկարիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է ծննդավայրի գեղարվեստների դպրոցում, ապա կատարելագործվել է Իտալիայում։ Վերադառնալով Պոլիս՝ զբաղվել է նկարչությամբ և մանկավարժական աշխատանքով։ 1891 թ. նա է նկարել դերասան Պետրոս Ադամյանին՝ դաղաղում։ Այդ շրջանում նրա ստեղծած գործերից հիշատակության արժանի են «Բոսֆորյան տեսարաններ» նկարները։ 1895—1896 թթ. հայկական ջարդերից հետո տեղափոխվել է Նոր Նախիջևան, այնտեղից՝ Թիֆլիս, որտեղ նկարել է Շալամյան և Այվազյան ամուսիններին (1897)։ 1906 թվականից մինչև կյանքի վերջը ապրել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Խորհրդային տարիներին Լենինականի գավգործկոմի պատվերով նկարել է Վ. Ի. Լենինի դիմանկարը։ Ստեղծել է մի շարք դիմանկարներ, այդ թվում՝ դերասան Ա. Արմենյանի, Եկ. Դուրյան-Արմենյանի, Միք. Մանվելյանի, Հովհ. Աբելյանի, գրող Ատրպետի և ուրիշների։

ՆԱԶԱՐՅԱՆ ԷԼԻ (ծն. 1916).— Գրող, հրապարակախոս, խմբագիր։ Ծնվել է Այնթապում (Թուրքիա)։ 1923-ին ընտանիքով տեղափոխվել են Հալեպ (Սիրիա)։ 1929-ին ավարտել է տեղի Կրթասիրացի հայկական դպրոցը, շարունակել ուսումը ֆրանսիական լիցեում։ Հետագայում հեռակա հետևել է Փարիզի ABC դպրոցի լեզվի ու գրականության դասընթացներին։ Աշխատակցել է հայերեն և ֆրանսերեն բազմաթիվ թերթերի («Եփրատ», «Հայ սիրտ», «Կավռոշ», «Պայքար», «Ապագա», «Արև» և այլն)։ Եղել է օգնական խմբագիր Հալեպում լույս տեսնող «Էլբլեր Դյու Նոր» և «Կուրիե դը Սիրի» թերթերի։ 1936—1939 թթ. խմբագրել է հայերեն «Եփրատ» թերթը։ Կարևոր երկերն են՝ «Պատմություն Նաղարյան տոհմին և Այնթապի Նաղարյան գերդաստանին», «Գաղութահայ ծաղիկներ», «Աղգային սափրիչ» (երգիծական), «Անավարտ մեղեդիներ» (պատմվածքների ժողովածու)։ Գրել է ֆրանսերեն պատմվածքներ, որոնք լույս է ընծայել «Բոնշերտոս ան Ռոզ» խորագրով։ Օգտագործել է Էլի, Նազար, Ե. Լեո, Ընկեր խորվիրապ, Էդվարս, Հայկազ Արմեն և այլ ծածկանուններ։

ՆԱԶԱՐՅԱՆ ՀԱԿՈԲ (1872— ?).— Ջութակահար, կոմպոզիտոր։ Ծնվել է Նոր Նախիջևանում։ 12 տարեկանից սովորել է զինվորական գիշերօթիկ գիմնազիայում, հետևել է երաժշտության։ 1889 թ. ընդունվել է Պետերբուրգի կոնսերվատորիան։ Ապա տեղափոխվել է Մոսկվա, սովորել պրոֆեսոր Կոլակովսկու մոտ։ Որպես ջութակի ուսուցիչ պաշտոնավարել է Եկատերինոդարում։ Գրել է երաժշտական մի շարք երկեր, որոնցից շատերը տպագրվել են ռուսական երաժշտական հանդեսներում։ 1914 թ. լույս է ընծայել «41 ընտրոյ պիեսներ» ժողովածուն՝ ջութակի համար։ Գրել է «Սիրո դասեր» օպերետը։ Նրա մյուս գործերից են՝ «Տխուր երգ», «Ննանի նանա», «Արևելյան պար», «Քաջերի պարը», «Օրորոցի երգ» և այլն։ Դրանցից շատերը կատարվել են հայ և օտար ջութակահարների կողմից։ Հրատարակել է «Ձեռնարկ ջութակի համար. Ա. մաս՝ ջութակի այբբենարան», նույնի Բ. մասը՝ «Ձեռնարկ բարձր տեխնիկայի զարգացման»։

ՆԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1852—1912).— Մանկավարժ։ Ծնվել է Մեծ Ղարաքիլիսայում (այժմ՝ Հայկական ԽՍՀ, Կիրովական)։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Պաշտոնավարել է Թիֆլիսի Հավլաբար թաղամասի հայկական դպրոցում, Գայանյան օրիորդաց դպրոցում, նաև Ագուլիսի, Սիմֆերոպոլի և այլ քաղաքների հայկական դպրոցներում։ 1880-ական թվականների վերջերին ընդունել է հոգևորական կոչում, անունը փոխել է Էմանվելի։ Կազմել է մի շարք քրիստոնեական, ուսումնական ձեռնարկներ, ինչպես «Հա-

յոց լեզվի ուսուցիչ» (Ա, Բ, Գ և Դ տարի), «Ընտիր հատվածներ» (քրիստոմատիա, Ա և Բ մասեր), «Համառոտ քերականություն» և այլն։ Մամուլում տպագրել է պատմա-բանասիրական հոդվածներ՝ «Շեքսպիրը նոր դարի առջև», «Ռուս գրողները Տոլստոյի մասին»։ 1876 թ. Բաքվում հրատարակել է «Անեկդոտներ» ժողովածուն, որը օտար անեկդոտների հետ միասին պարունակում է նաև հայկական կյանքից վերցված մանրադեպեր։ Հրատարակել է նաև օրացույցներ, 1880-ական թվականների վերջերին։

ՆԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(1868—1924)*.— Կրթական գործիչ։ Ծնվել է Սեբաստիայում, որտեղ ստացել է նախնական ուսումը, ապա շարունակել է Արմաշի դպրեվանքում։ Հետագայում ժնևի համալսարանում ստացել է բարձրագույն կրթություն։ Վերադառնալով Թուրքիա, որպես ուսուցիչ աշխատել է Հալեպում (այժմ՝ Սիրիա)։ Պարբերական մամուլում տպագրել է բանասիրական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Կրթական վերածնություն» (1909), «Երջանկության երկիրը» (1910), «Արշալույս Ընթերցարան» (1912)։ Մեռել է Հալեպում։

ՆԱԶԱՐՅԱՆ ՀՐԱՆՏ *(1884—1962)*.— Գրող։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է տեղի Պերպերյան վարժարանում։ 1900 թ. մեկնել է արտասահման, եղել Իտալիայում, Ֆրանսիայում, տարվել սիմվոլիստ գրողներով։ Վերադառնալով ծննդավայրը, 1902—1903 թվականներից մամուլում տպագրել է բանաստեղծություններ։ Նրա գրիչը ավելի բեղմնավոր է դարձել օսմանյան սահմանադրության տարիներին (1908—1914), երբ ինքնուրույն և թարգմանական երկերով աշխատակցել է տասնյակ թերթերի, հանդեսների, տարեգրքերի, իր անվան շուրջ ստեղծելով նկատելի հետաքրքրություն։ Առանձին գրքերով լույս է ընծայել հետևյալ գործերը՝ «Խաչված երազներ» (բանաստեղծությունների ժողովածու, Կ. Պոլիս, 1912), «Հերանույշ Արշակյան. իր կյանքը և բանաստեղծությունները» (Կ. Պոլիս, 1910), «Եղիա Տեմիրճիպաշյանի սիրային նամակները» (1910)։ Հրատարակել է իտալերեն գրքույկներ՝ Ա. Զապանյանի, Պ. Դուրյանի և այլ գրողների մասին։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ապրել է Իտալիայում, ատիճանաբար ավելի ու ավելի մղվելով դեպի հուսալքումը։ Մանր անդամալույծ վիճակում երկար տառապելուց հետո վախճանվել է՝ մատնված մոռացության։

ՆԱԶԱՐՅԱՆ ՆԱԶԱՐ *(ծն. 1932)*.— Թարգմանիչ։ Ծնվել է Քեսաբում (Թուրքիա)։ Բարձրագույն կրթություն ստացել է Դամասկոսի (Սիրիա) պետական համալսարանում, որի իրավաբանական բաժինն ավարտել է 1964 թ.։ Բանասիրական հոդվածներով և թարգմանական երկերով աշխատակցել է հայկական և արաբական մամուլին։ Հայ գրողներից կատարել է թարգմանություններ, որոնք տպագրվել են արաբական թերթերում և հանդեսներում։ «Էլ էդեբ էլ էջներիե» հանդեսում տպագրել է Ե. Չարենցի «Ամբոխները խեղդվածք» պոեմի իր թարգմանությունը, իսկ «Էտաղրա» թերթում՝ Վ. Թեքեյանի բանաստեղծություններից նմուշներ։ Առանձին գրքերով էլ հրատարակել է Դ. Վարուժանի «Հացին երգը» (1970) և Ավ. Իսահակյանի «Աբու լալա Մահարի» պոեմը (1976)։

ՆԱԶԱՐՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ *(ծն. 1913)*.— Բանասեր. բանասիրական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Էջմիածնում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի լեզվագրական ֆակուլտետի գրական բաժինն ավարտել է 1938 թ.։ 1938—1942 թթ. իբրև ուսուցչուհի աշխատել է Երևանի Զերժինսկու անվան միջնակարգ դպրոցում։ 1945—1948 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայում։ 1946 թվականից աշխատում է Երևանի Մատենադարանում, որտեղ նախ եղել է գիտաքարտուղար, իսկ 1962-ից՝ ավագ գիտաշխատող։ 1952 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1972-ին՝ դոկտորական դիսերտացիա՝ «Պետրոս Ղափանցի» թեմայով։ Գիտական մամուլում և ժողովածուներում («Բանբեր Մատենադարանի», «Պատմա-բանասիրական հանդես», «Լրաբեր», «Բազմավեպ») տպագրել է հոդվածներ հայ հին մատենագրության տարբեր հարցերի նվիրված։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Նաղաշ Հովնաթան. Բանաստեղծություններ» (հեղինակակից՝ Աս. Մնացականյան) (Երևան, 1951), «Պատմութիւն Ցարման մանկան» (1957), «Պաղտասար դպիր. Տաղիկներ սիրոյ և կարօտանաց» (հեղինակակից՝ Աս. Մնացականյան) (1958), «Հովհաննես Կարնեցի. Տաղարան» (1962), «Պետրոս Ղափանցի» (1969), «Կռունկ» երգը և նրա պատմությունը» (1977)։

ՆԱԶԱՐՅԱՆ ՍԵՂՐԱԿ *(ծն. 1938)*.— Նկարիչ։ Ապրում և ստեղծագործում է Իրանում։ Նկարչական առաջին քայլերը կատարել է «Արարատ» գրական-մշակութային դպրոցում՝ աշակերտելով նկարիչ Հարությունն Մինասյանին։ 1952 թ. Թեհրանի հայ ակումբում տվել է առաջին ցուցահանդեսը և ունեցել հաջողություն։ Մի քանի օրվա ընթացքում գնվել են ցուցադրված 40 նկարների մեծ մասը։ Հավաքույթ գործերից են՝ «Երկաթուղու կայարանը», «Հանդիպում», «Ճանապարհ» և այլն։

ՆԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ *(1924—1980)*.— Լրագրող։ Ծնվել է Լենինականում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո սովորել է ասպիրանտուրայում, ավարտել 1955-ին։ 1950—1952 թթ. աշխատել է «Պիոներ կանչ» թերթում որպես բաժնի վարիչ, 1956-ից՝ «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթում, 1957—1971 թթ. «Երեկոյան Երևան» օրաթերթում։ 1971 թ. նշանակվել է «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթի պատասխանատու խմբագիր։ Լույս է ընծայել մի քանի գրքույկ, գերազանցապես նվիրված մարզական հարցերի։

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ *(1812—1879)*.— Հրապարակախոս, խմբագիր, մանկավարժ։ Ընտրվել է Թիֆլիսում։ Կրթությունն ստացել է Ներսիսյան նորաբաց դպրոցում, հանդիսացել նրա առաջին շրջանավարտներից, Խ. Աբովյանի հետ միասին։ Ապա ուսումը շարունակել է Դորպատի համալսարանում, ավարտել 1840 թ. ստանալով փիլիսոփայության թեկնածուի աստիճան։ Պետերբուրգում էլ հետևել է արևելյան լեզուների ուսումնասիրմանը։ 1843 թ. նշանակվել է Կազանի համալսարանի դասախոս։ Նույն համալսարանի պաշտոնաթերթում հաջորդ տարի լույս է ընծայել գիտական առաջին հոդվածը՝ հայ հին գրականության մասին։ 1846 թ. տպագրել է նույն հոդվածի երկրորդ մասը՝ 14—19-րդ դարերի հայ գրականության մասին։ 1849 թ. Ֆիրդուսու «Շահնամեին» նվիրված մի հետազոտության համար նրան շնորհվել է գիտության դոկտորի աստիճան։ Նույն տարում նշանակվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի դասախոս։ 1851 թ. Մոսկվայում լույս է տեսել նրա «Ցաղագս փորձնական հոգեբանութեան» դրաբար աշխատությունը, որի առաջաբանում պաշտպանել է աշխարհաբարը գրական լեզու դարձնելու անհրաժեշտությունը։ 1857 թ. դարձյալ Մոսկվայում տպագրել է «Հանդես նոր հայախօսութեան» երկհատոր ժողովածուն, որը պարունակում է ընթերցանության նյութեր՝ պատմության, գրականության, աշխարհագրության, բնագիտության և այլ բնագավառների վերաբերյալ։ 1858 թ. հունվար ամսից Մոսկվայում հրատարակել է «Հյուսիսափայլ» ամսագիրը, որն իր գոյության յոթ տարիների ընթացքում մեծ դեր է կատարել հայ հասարակական, մտավոր կյանքում, դառնալով լուսավորական շարժման կենտրոնը՝ արևելահայերի մոտ։ Այդ գործում նրա մերձավորագույն գինակիցն է եղել հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը։ «Հյուսիսափայլի» յուրաքանչյուր համարում տպագրել է ծանրակշիռ հոդվածներ՝ գրականության, լեզվի, պատմության, թատրոնի և այլ հարցերի մասին, տակավին պայքարի մեջ լինելով հետադիմական հասանքի հետ։ Նրա այդ հոդվածների մի մասը հետագայում լույս է տեսել հատուկ ժողովածուով «Ստեփանոս Նազարյանցի երկասիրությունները» խորագրով։ Ռուսերենից և օտար լեզուներից կատարել է թարգմանություններ, որոնք տպագրվել են «Հյուսիսափայլում» կամ առանձին գրքերով։ 1876 թ. լույս է ընծայել «Առաջնորդ ռուսաց լեզվի» ձեռնարկը։ Մեր օրերում լույս է տեսել նրա «Նամականին»՝ բանասեր Ռ. Նանումյանի առաջաբանով և ծանոթագրություններով։ Նրա մասին առաջինը ընդարձակ հետազոտություն է գրել Լեոն («Ստեփանոս Նազարյանց», Թիֆլիս, 1902), իսկ 1978 թ. լույս է տեսել Ռ. Նանումյանի «Ստեփանոս Նազարյան—կյանքը և գործունեությունը» հետազոտությունը։

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ *(ծն. 1929)*.— Քանդակագործ. Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում և Գեղարվեստաթատերական ինստիտուտում,

որի գեղանկարչության ֆակուլտետն ավարտել է 1957 թ.։ Հաջորդ տարվանից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Քաղաքական բանտարկյալները», «Կոչ», «Դարասկիզբը», «Գեղարվեստական մարմնամարզություն», «Բերքի տոն», «Գայլ», (գրված է Երևանում), «Ջարենցավան քաղաքի մուտքը», «Խաղաղության պաշտպանը», Ֆրիկի արձանը, գրված Մատենադարանի առջև։

ՆԱԶԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ (1858—1926).— Հրապարակախոս-խմբագիր։ Մնվել է Շուշիում (Լեռնային Ղարաբաղ)։ Տարրական կրթությունն ստացել է ծննդավայրում։ Մանկավարժ Գալուստ Փափազյանի մոտ սովորել է գրաբար, գերմաներեն և ռուսերեն։ Սովորել է նաև Շուշիի քաղաքային դպրոցում։ Պատանի հասակից ֆրանսերենից կատարել է թարգմանություններ։ Տեղի երիտասարդներից ստեղծել է թատերախումբ, տվել հայերեն ներկայացումներ, որոնցով է սկսվել թատերական կյանքը Շուշիում։ Գրել է «Ճրպատրդ քոլադ կտրի» պիեսը, որը հաճախ է բեմադրվել նույն քաղաքում, իսկ հետագայում տպագրվել է Թիֆլիսում։ Շուշիում հիմնել է «Հրատարակչական գրասենյակ», լույս ընծայել մի քանի գրքեր, այդ թվում՝ Նիկողոս Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակը»։ 1870-ական թվականների վերջերից աշխատակցել է «Մշակ» թերթին՝ Շուշեցի և Արցախեցի ծածկանուններով։ 1881 թ. տեղափոխվել է Թիֆլիս, 1883-ին հիմնադրել «Աղբյուր» մանկապատանեական ամսագիրը, իր շուրջը համախմբելով ժամանակի ալքի ընկնող գրողներից շատերին՝ (Ղ. Աղայան, Բաֆֆի և ուրիշներ)։ 1889 թ. մեկնել է Եվրոպա, եղել Փարիզում, Վիեննայում, Վենետիկում, վերադարձին իր հետ Թիֆլիս է բերել տպագրական նոր մեքենա և հայերեն տառեր, ընդարձակել է հրատարակչական գործունեությունը։ 1890 թ. հիմնադրել է «Տարազ» պատկերազարդ պարբերականը, որը 16 տարի որպես շաբաթաթերթ լույս ընծայելուց հետո, դարձրել է ամսագիր, շարունակել մինչև 1919 թ.։ Կարճ ժամանակ հրատարակել է նաև ռուսերեն «Անոնս» թերթիկը։

ՆԱԶԻԼԱ (18-րդ դ.).— Տաղերգու։ Մնվել է Թուրքիայում։ Հորինել և սազի նվագակցությամբ կատարել է հայերեն երգեր, որոնցից մեկը կոչվում է «Պատմություն Նազիլիային»։ Աշխարհաբար լեզվով 1796 թ. գրված այդ տաղից երևում է, որ նա շրջագայել է Արևմտյան և Արևելյան Հայաստանների գրեթե բոլոր քաղաքներում, եղել մինչև Մեղրիում, Ջուղայում։ Իր վերոհիշյալ տաղում այդ բոլոր քաղաքները բնութագրել է սեղմ տողերով, տալով շատ արժեքավոր տեղեկություններ ժամանակի կենցաղի, ամեն քաղաքի հայերի նախասիրությունների մասին։

ՆԱԶԻԿՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1909—1982).— Մանկավարժ. մանկավարժական գիտությունների դոկտոր։ Մնվել է Իզմիրի գավառի Օվաճըգ գյուղում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Պարտիզակի ամերիկյան որբանոցում և Իզմիրի Մեսրոպյան վարժարանում։ 1922 թ. տեղափոխվել է Հունաստանի Քիոս կղզին, աշխատել որպես կոշկակար բանվոր։ 1925—1932 թթ. ապրել է Աթենքում։ 1929 թ. ընդունվել է Հունաստանի կոմունիստական կուսակցության շարքերը, եղել է նրա հայկական սեկցիայի բյուրոյի անդամ և քարտուղար։ Աշխատել է առաջադիմական «Ժողովուրդի ձայն», «Նոր շարժում» թերթերի խմբագրություններում։ Այդ թերթերում տպագրել է հոդվածներ Զզյիկ, Ծաղկունի, Մարդիկ ծածկանուններով։ Հեղափոխական գործունեության համար քանիցս ձերբակալվել է, աքսորվել։ 1933 թ. եկել է Խորհրդային Հայաստան։ 1933—1936 թթ. սովորել է Երևանի կոմունիստական բարձրագույն գյուղատնտեսական դպրոցում։ 1953 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ 1949 թվականից զբաղվել է դասախոսական աշխատանքով։ Դասավանդել է Օտար լեզուների, Հայկական մանկավարժական, Հեռակա մանկավարժական ինստիտուտներում և Երևանի պետական համալսարանում։ Եղել է Մանկավարժական ինստիտուտի մանկավարժության ամբիոնի վարիչ։ Մամուլում և գիտական ժողովածուներում տպագրել է մանկավարժական բազմաթիվ հոդվածներ, որոնցից «Խորհրդային Հայաստանի հանրակրթական դպրոցը Հայրենական պատերազմի տարիներին» հետազոտությունը տպագրվել է «Ակնարկներ Խորհրդային Հայաստանի հանրակրթական դպրոցի պատմության» ժողովածուում։ Նրա ամենածավալուն աշխատությունն է «Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը 19-րդ դարի սկզբից

մինչև 19-րդ դարի 50—60-ական թվականները», որով նա պաշտպանել է դիսերտացիա և ստացել մանկավարժության դոկտորի աստիճան։

ՆԱԶԻՆՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ (ծն. 1924).— Բանաստեղծ, ազգագրագետ։ Մնվել է Իջևանի շրջանի Այգաբեր գյուղում։ 1948 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը։ Նույն տարում ընդունվել է ԳԱ գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ հայ ժողովրդական բանահյուսության մասնագիտությամբ։ 1952—1959 թթ. աշխատել է ԳԱ գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության սեկտորում, նախ որպես գիտաշխատող, ապա՝ սեկտորի վարիչ։ 1960 թվականից աշխատել է ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, որպես հայ ժողովրդական բանահյուսության սեկտորի վարիչ։ Գիտական մամուլում տպագրել է բազմաթիվ նյութեր նվիրված հայ ժողովրդական բանահյուսության հարցերին։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Խորհրդահայ գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը» (Երևան, 1954), «Հայկական ժողովրդական հեքիաթներ» (կազմում, մշակում, առաջաբան. Երևան, 1956, վերահրատարակվել է Կահիրեում, 1959 թ.), «Խորհրդահայ ժողովրդական բանահյուսությունը» (Երևան, 1957), «Հայ ժողովրդական հեքիաթներ» (գիտական հրատարակություն բազմահատորյակ-տեքստերի պատրաստում, նախաբան, ծանոթագրություններ, բառարան ցանկեր) (1959—1980, տասը հատոր)։

ՆԱԶԻՐԻ (18—19-րդ դդ.).— Աշուղ։ Նրա երգերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանում, № № 2842, 6438, 7653, 8020 ժողովածուներում։

ՆԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1875—1957).— Կրթական գործիչ, բանասեր։ Մնվել է Խարբերդում (Արևմտյան Հայաստան)։ 1887 թ. մեկնել է Կ. Պոլիս, այնտեղից ուղարկվել է Հռոմ, որտեղ սովորել է Լեոնյան կաթոլիկական դպրոցում, Պատրոնավարել է նույն դպրոցում որպես հայոց լեզվի և մատենագրության ուսուցիչ, իսկ 1908—1911 թթ.՝ տնօրեն։ Հետագայում կրթական պաշտոններ է վարել Սիրիայում և Լիբանանում։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Պատմական տեսություն Անարատ հղության հայ քույրերու միաբանության վրա», որը պարունակում է հետաքրքիր տեղեկություններ անցած հարյուրամյակի հայ հասարակական կյանքին վերաբերող։ Առավել ուշագրավ է նրա երկհատոր մեծադիր ֆրանսերեն հիշողությունները (Վենետիկ, 1955), որտեղ ականատեսի հավատարմությամբ նկարագրված են մեծ եղեռնի օրերի դեպքերը։

ՆԱԹԱԼԻ ՇԱՀԱՆ (ՀԱԿՈԲ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ) (1884—1983).— Գրող, հասարակական գործիչ։ Մնվել է Խարբերդի շրջանի Հուսենիկ գյուղաքաղաքում (Արևմտյան Հայաստան)։ Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի Պերպերյան միջնակարգ դպրոցում։ Կարճ ժամանակ ծննդավայրում որպես ուսուցիչ աշխատելուց հետո, 1904 թ. մեկնել է Ամերիկա։ Այդ թվերին լույս է ընծայել իր բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն՝ «Շանթեր» խորագրով, իսկ 1908 թ.՝ «Ամպեր» ժողովածուն։ Օսմանյան սահմանադրության տարիներին (1909—1914) ապրել է Կ. Պոլսում, աշխատել «Շանթ» շաբաթաթերթի խմբագրությունում, աշխատակցելով պոլսահայ մի շարք թերթերի։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո կրկին մեկնել է արտասահման, ունեցել քաղաքական գործունեություն, ապա մեկնել է Ամերիկա, որտեղ 1928 թ. հիմնադրել է «Աղատամարտ» շաբաթաթերթը, որը կարճ կյանք է ունեցել։ Հրատարակել է նաև «Ամբոց» շաբաթաթերթը՝ ընդամենը մի քանի համար։ Եղել է դաշնակցական, հետագայում հրաժարվել է, դարձել Հայկական բարեգործական ընդհանուր միության գործուն անդամներից։ Այցելել է Խորհրդային Հայաստան, վերադարձին արտահայտվել հիացմունքով։ Գրել է նաև պատմվածքներ, որոնցից մի քանիսը լույս է ընծայել առանձին գրքով, «Օրենքի և ընկերության զոհերեն» խորագրով։ Լույս է ընծայել նաև բանաստեղծությունների «Քեզի», «Սիրո և առելության երգեր», «Քավության երգեր», «Վրեժի ավետարան» ժողովածուները, նաև «Մարդը», «Ասյանբեկ» պիեսները, «Աշխարհի հեղափոխությունները» (2 հատոր), «Գիրք հատուցման և մատուցման» և այլն։

ՆԱԹԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (1868—1954).— Բանասեր, թարգմանիչ։ Մնվել է Վանի Այգեստան թաղամասում։ Կրթությունն ստացել է Վանի

վարժապետանոցում, ավարտելուց հետո ունեցել է հասարակական, մշակութային, կրթական գործունեություն։ Եղել է Արմենական կուսակցության եռանդուն գործիչներից։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, քանական թվականների սկզբներին մեկնել է Եգիպտոս, աշխատել «Արև» թերթի խմբագրությունում։ Պատմաբանասիրական բազմաթիվ հոդվածներ է տպագրել սփյուռքահայ մամուլում («Արև», «Հայաստանի կոչնակ», «Պայքար», «Ամենուն տարեցույցը» և այլն)։ «Պայքար» տարեգրքի մի քանի տարվա գրքերում տպագրել է ուշագրավ և փաստալից ուսումնասիրություն Ալեքսանդրետի սանջակի, առհասարակ Կիլիկիայի վերջին քաղաքական իրադարձությունների մասին։ Նրա գրական մշակմամբ 1947 թ. Կահիրեում լույս է տեսել հասարակական գործիչ Արմենակ Եկարյանի հուշերը։ Ֆրանսերենից թարգմանել է վեպեր, որոնք որպես թերթոն լույս են տեսել «Արև» օրաթերթում։

ՆԱՖԹԱՆՅԱՆ ՊՈՂՈՍ (1856—1886).— Բանաստեղծ, մշակութային գործիչ։ Ծնվել է Վանում, որտեղ ստացել է կրթությունը, ընդունել հոգևորական կոչում։ Կրթական պաշտոններ է վարել Վանում և այլ քաղաքներում։ Շրջագայել է Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում և իր տպավորությունները լույս ընծայել առանձին գրքույկներով, որոնք հարուստ նյութ են պարունակում 19-րդ դարի գավառի հայ կյանքի տնտեսական, քաղաքական վիճակի մասին։ Նրա այդ գրքերից են՝ «Առաջին տեղագրություն վիճակին Նիկոմիդիոյ» (Կ. Պոլիս, 1871), «Տեղագրություն Սիվրիհիսարու» (1872), «Տեղագրություն ընդհանուր վիճակին Դաղատիոյ» (1873), «Տեղագրություն ընդհանուր վիճակին Սեբաստիոյ և անոր կուսակալության ներքև գտնվող մեկ քանի գլխավոր քաղաքաց» (1877), «Արտոսր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուա, Քարբերդու, Չարսանճագի, Ճապաղջուրի և Երզընկայու» (1878)։ Այս գրքի շեշտված հակառուսական բովանդակության պատճառով սուլթանական կառավարությունը ձերբակալել է նրան, ենթարկել ծաղրուծանակի։ Գրել է նաև բանաստեղծություններ, որոնցից մեկը՝ «Զարդիր որդյակ»-ը, եղանակավորվելով լայնորեն տարածվել է ժողովրդի մեջ որպես ազգային երգ, զետեղվել տասնյակ տպագիր երգարաններում։

ՆԱԼԲԱՆԴ ՕՂԼԻ (19-րդ դ.).— Աշուղ։ Հորինել և կատարել է հայերեն երգեր, որոնցից երկուսը տպագրվել է Դ. Ախվերդյանի կազմած «Հայ աշուղներ» ժողովածուի Բ հատորում (Թիֆլիս, 1903)։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱԼԲԵՐՏ (ծն. 1940).— Գրող, թարգմանիչ։ Ծնվել է Օրջոնիկիձեում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Օրջոնիկիձեի մանկավարժական ինստիտուտում։ Հետագայում, 1979-ին ավարտել է ԽՍՀՄ գրողների միության առանձին գրական երկամյա դասընթացները։ Մինչև 1973 թ. աշխատել է Օրջոնիկիձեում և Դոնբասում։ Ապա տեղափոխվել է Հայաստան, նախ աշխատել է Արմենպրեսում, ապա՝ «Վիտերատուրնայա Արմենիա» ամսագրի խմբագրությունում որպես պատասխանատու քարտուղար, իսկ 1979-ից՝ «Կոմունիստ» թերթի խմբագրությունում։ 1963-ին լույս է ընծայել «Կիսաձայն» բանաստեղծությունների ժողովածուն՝ ռուսերեն։ Ռուսերեն է թարգմանել հայ դասական պոեզիայից բազմաթիվ նմուշներ։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՌԱՔԵԼ (1841—1910).— Գրող, առակագիր։ Ծնվել է Ղրիմի Ղարասուբազար քաղաքում։ Կրթությունն ստացել է Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում։ Վարել է տարբեր պաշտոններ Ղրիմում, Կովկասում։ Գրականությամբ զբաղվել է 1870-ական թվականներից։ Սիմֆերոպոլից աշխատակցել է «Արարատ» ամսագրին, տպագրելով ինքնուրույն և թարգմանական առակներ։ Հետագայում երկար տարիներ աշխատակցել է «Բազմավեպ» ամսագրին։ 1906 թ. Թիֆլիսում լույս է ընծայել իր առակները առանձին ժողովածուով, մի մասն ինքնուրույն, մի մասը՝ փոխադրություն Կռիլովից և Լաֆոնտենից։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՐՓԵՆԻԿ (1916—1964).— Նկարչուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ։ Ծնվել է Թիֆլիսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թիֆլիսի գեղարվեստի ակադեմիայում, ավարտել 1941-ին։ Նույն տարվանից մասնակցել է ցուցահանդեսների։ Ստեղծագործական այդ առաջին շրջանի գործերից են՝ «Բնորդուհին», «Մտորումների մեջ», «Ինքնանկար», «Կարմիր գլխարկով աղջիկը» և այլն։ Հետագայում ապրել և ստեղծագործել է Երևանում։ Մասնակցել է հանրապետական և միութենական մի շարք ցուցահանդեսների։ Մամուլում

բարձր են գնահատվել նրա «Հանդստացող կոլտնտեսուհին», «Ինքնադիմանկարը», Վ. Աճեմյանի, Ս. Խանդայանի դիմանկարները, «Ադյուրի մոտ», «Ոսկեվազքի պատավը», «Տատիկի հեքիաթը», «Աշտարակ», «Ախթալա» բնանկարները և այլն։ Դասախոսել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում։ Եռամյա 1968 թ. Երևանում բացվել է նրա ստեղծագործությունների անհատական մեծ ցուցահանդեսը։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳԱՌԵՆԻԿ (ծն. 1916).— Նկարիչ։ Ծնվել է Փրավիտենսում (Ամերիկա), որտեղ ստացել է կրթությունը։ 1937—1941 թթ. աշխատել է WPA արվեստի նախագծման հասարակությունում։ 1943-ից նկարչություն է դասավանդել Փրավիտենսի և Մեյնի նկարչական դպրոցներում։ Ստեղծել է գեղանկարչական բազմաթիվ գործեր, կրելով վերացական արվեստի ազդեցությունը։ 1946 թ. Նյու Յորքում ունեցել է անհատական ցուցահանդես, որտեղ ներկայացրել է 40-ից ավելի կտավներ։ Ամերիկյան մամուլը բարձր է գնահատել նրա արվեստը, զգացմունքների ուժգնությունը։ Լավագույն գործերից են՝ «Աղոթող կինը», «Կարմիր հեծյալը» և այլն։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳԵՂԱՄ (1889—1957).— Դերասան. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1940)։ Ծնվել է Մեծ Ղարաքիլիսայում (այժմ՝ Սովետական ԽՍՀ, Կիրովական)։ Կրթությունն ստացել է ծննդավայրի ռեալական դպրոցում։ Բեմական ասպարեզ է մտել 1920 թ.։ Նախ խաղացել է Ամո Խարայանի շրջիկ թատրոնում, ապա՝ Կիրովականի պետական թատրոնում, ինչի խոր ծերություն։ Կատարել է հիմնականում կատակերգակ դերեր։ Լավագույն դերերից են՝ Խալի («Խաթաբալա»), Շամագա («Անմեղ մեղավորներ»), Սարգիս («Էլի մեկ ղոհ»), Նիկ («Առատնարույմն արևելյան»), Սաղաթել («Պատվի համար»), Գիքո («Պեպո») և այլն։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳԵՈՐԳԻ (ծն. 1926).— Բանասեր, բանասիրական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Ջիտայում (ՌԽՖՍՀ)։ Միջնակարգ կրթությունն ստացել է Թեհրանի (Իրան) Ֆիրուզաբրամ դպրոցում, բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների ու գրականության բաժինն ավարտել է 1951 թ.։ 1955 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա, 1972-ին՝ դոկտորական։ Գիտական մամուլում և ժողովածուներում տպագրել է արևելագիտական հոդվածներ։ Առանձին գրքույկներով լույս է ընծայել իր դասախոսությունների մի մասը, նաև պարսկերեն լեզվի, գրականության հետ կապված աշխատություններ, որոնցից են՝ «Իրանական լեզուներն ու բարբառները» (Երևան, 1960), «Միջին պարսկերեն» (1962), «Հին պարսկերեն» (1963), «Նմուշներ ժամանակակից պարսկական արձակի» (1964), «Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը» (1964), «Իրանական ազգային էպոսի գործող անձանց անունները հայոց մեջ» (1970), «Պարթևներենից փոխառյալ հայկական անձնանունները» (1970), «Պարսից լեզվի քերականություն» (1980) և այլն։ Տպագրության է պատրաստել, խմբագրել է Ռ. Աբրահամյանի «Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարանը»։ Պարսկերեն է թարգմանել Մ. Խորենացու «Հայոց պատմությունը», գրելով առաջաբան և ծանոթագրություններ։ Կազմել է «Հայերեն-պարսկերեն լիակատար բառարան», որը պարունակում է 140.000 բառ և արտահայտություն։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԴՄԻՏՐԻ (ծն. 1906).— Նկարիչ. ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ (1969), ԽՍՀՄ գեղարվեստների ակադեմիայի իսկական անդամ (1953), ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր։ Ծնվել է Թիֆլիսում, 1922-ից սովորել է Թիֆլիսի նկարչական նախապատրաստական ստուդիայում, 1924—1929 թթ.՝ Թիֆլիսի գեղարվեստների ակադեմիայում, որտեղ աշակերտել է Ե. Լանսերեին, Ե. Թադևոսյանին և այլ ականավոր նկարիչների։ Ուսանողական տարիներին աշխատել է Վրաստանի «Դոսկինպրոմում» որպես մուլտֆիլմերի նկարիչ։ Ապա աշխատել է Օդեսայի կինոստուդիայում։ 1931 թ. տեղափոխվել է Մոսկվա, նվիրվել պատմահեղափոխական նկարների ստեղծմանն։ Այդ շրջանի լավագույն գործերից են «Ս. Մ. Կիրովի ելույթը կուսակցության XVII համագումարում» (1935)։ Պահվում է Կրեմլի թանգարանում։ Հայրենական պատերազմի տարիներին ապրել և ստեղծագործել է Հայաստանում։ Ստեղծել է մի շարք նկարներ պատերազմական թեմաներով և հայ ականավոր դեմքերի դիմանկարները։ Պատերազմից հետո կատարել է երկարատև

ճանապարհորդություն, եղել Եվրոպայում, Հընդկաստանում, կատարել էքսկուրսներ։ 1934 թվականից սկսած նրա նկարները ցուցադրվել են Երևանում, Մոսկվայում, Լենինգրադում, Բաքվում, Տաշքենդում, ինչպես և արտասահմանյան բազմաթիվ քաղաքներում՝ Բրյուսել, Պրագա, Բեռլին, Բուդապեշտ, Սոֆիա, Դելի, Հռոմ, Պեկին, Նյու Յորք և այլն։ 1958 թ. անհատական ցուցահանդես է ունեցել Մոսկվայում, 1963-ին՝ Երևանում։ Նրա գործերից նմուշներ գտնվել են Մոսկվայի, Լենինգրադի, Երևանի, Բաքվի և այլ քաղաքների թանգարանների կողմից։ Լավագույն գործերից են՝ «Վ. Ի. Լենին 1919 թվականին», «Վ. Ի. Լենին», «Գ. Կ. Օրջոնիկիձե», «Կրեմլի բանակար», «Ռիցա լիճը», «Ագրա. Թաջ-Մահալ», «Հովվի առավոտը», «Գնդապետ Զաքիյանի վերջին հրամանը», «Նամակ ռազմաճակատից», «Վերնատունը», «Մոր դիմանկարը», Ավ. Իսահակյանի, Հովհ. Բաղրամյանի, Վ. Վաղարշյանի, Ս. Քոչարյանի և այլոց դիմանկարները։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԻՆԳԵ ԿՈԼԼԻՆ *(1879—1929).*— Գրող, թարգմանիչ. ծագումով գանիցի։ Ծնվել է Կոպենհագենում, պետական խորհրդական պրոֆեսոր Կոլլինի ազնվական ընտանիքում։ Միջնակարգ կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա մեկնել է Շվեյցարիա, սովորել Լոզանի համալսարանում։ Այնտեղ 1902 թ. ծանոթացել է նույն համալսարանի քիմիայի դասախոս Մարտիրոս Նալբանդյանի հետ, ամուսնացել 1904 թ.։ Միասին մեկնել են Դանիա, սակայն ծնողները չեն համաձայնվել, որ ազնվական ընտանիքից սերած մի աղջիկ ամուսնանա հասարակ ծագումով արևելքցու հետ։ Վտարվելով տանից՝ կրկին վերադարձել է Լոզան, ապրել ամուսնու հետ։ Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո՝ 1909 թ. մեկնել են Կ. Պոլիս, որտեղ ամուսինը նշանակվել է Կենտրոնական վարժարանի տնօրեն, ինքը նվիրվել է հայոց լեզվի, գրականության և պատմության ուսումնասիրմանը։ Հիմնովին սովորել է հայերենը և ձեռնամուխ եղել հայ ժողովրդի պատմությունը, գրականությունը իր հայրենակիցներին ծանոթացնելու գործին։ Թարգմանել է Միքայել Նալբանդյանի «Ազատությունը», Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը», Մ. Պեշիկթաշլյանի «Գարունը» և այլ բանաստեղծություններ, որոնք տպագրել է դանիական գրական հանդեսներում։ Հայկական մեծ եղեռնի օրերի իր տպրտումները գրի է առել «Եղբորդ արյունն է գոռում» երկում, որը տպագրել է հետագայում։ 1916 թ. վախճանվել է ամուսինը և մնացել է անօգնական իր չորս զավակների հետ։ Պատերազմից հետո մեկնել է Դանիա, ապրել հայրական ընտանիքում, շարունակելով գրական աշխատանքը։ Գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ հայերի մասին։ Դրանց մի մասը թարգմանվել են նորվեգերեն, հոլանդերեն, ֆրանսերեն։ Անգամակցել է Դանիայում ստեղծված «Հայ բարեկամների կոմիտեին»։ Օժանդակել է Օգե Մայեր Բենեդիկտի «Հայոց պատմություն» աշխատության ստեղծմանը, գրելով հատվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Բանաստեղծություններ և երգեր», «Երեխաները», «Երիտասարդը» և այլն։ Մի գիրք էլ գրել է ամուսնու մասին, որը թարգմանվել է նաև ֆրանսերեն, տպագրվել 1918 թ. Փարիզում։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԼԵՎՈՆ *(ծն. 1924).*— Թատերական նկարիչ։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է նախ Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում, ապա՝ Գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել է 1952 թ. Հիմնականում զբաղվել է թատերական նկարչությամբ, պլակատներ, արդյունաբերական և բիզեներ պատրաստելով։ Նրա ձեռագործումները հանրապետության տարբեր թատրոններում իրականացվել են՝ «Սամվել», «Մեսրոպ Մաշտոց», «Ղուկաս Ղուկասյան», «Եկամավոր պաշտոն», «Վաճառված տուն», «Կամո» և այլ պիեսներ։ Գեղանկարչական գործերից են՝ «Ծովափի քարեր», «Նավակներ», «Արևածաղիկներ» և այլն։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԼՈՒԻԶԱ *(1926—1974).*— Պատմաբան։ Ծնվել է Ամերիկայի Սան Ֆրանցիսկո քաղաքում, երդնակից այնտեղ գաղթած հայ ընտանիքում։ Կրթությունն ստացել է Կալիֆոռնիայի համալսարանում, հետևելով պատմության և գրականության։ Զբաղվել է գիտահետազոտությամբ։ Որպես պրոֆեսոր-դոկտոր վարել է Կալիֆոռնիայի համալսարանի հայագիտության ամբիոնը։ Հայոց լեզու է դասավանդել Լոս Անջելեսի համալսարանում։ Ամերիկյան և ամերիկյան մամուլում տպագրել է պատմագրական մի շարք հոդվածներ։ 1963 թ. առանձին գրքով տպագրել է «Հայ հեղափոխական գաղափարները» մենագրական աշխատությունը, որտեղ մանրամասնորեն խոսվում է 19-րդ դարի հայ ազատագրական շարժումների և քաղաքական կուսակցությունների գործունեության մասին։ 1973 թ. մասնակցել է Փարիզում գումարված արևելագետների համաժողովին։ Մեկնել է 1974 թ. դեկտեմբերի 2-ին՝ ավտովթարից, երիտասարդ հասակում։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՀԱԿՈԲ *(1891—1952).*— Պատմաբան, կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Փոքր հասակից ընտանիքով տեղափոխվել են Եգիպտոս։ Նախնական կրթությունն ստացել է Ալեքսանդրիա քաղաքի ազգային վարժարանում։ Մեկ տարի էլ անգլիական դպրոցում սովորելուց հետո, 1905 թ. մեկնել է Վենետիկ, սովորել Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, ավարտել 1913 թվականին։ Այնուհետև Բրյուսելի համալսարանում հետևել է քաղաքական և սոցիալական գիտությունների դասընթացներին։ Վերադառնալով Եգիպտոս, նվիրվել է կրթական աշխատանքի։ Երկար տարիներ պաշտոնավարել է Ալեքսանդրիայի հայկական դպրոցում (1915—1920 և 1923—1929 թթ.)։ 1930—1934 թթ. դասավանդել է ավանդել արաբական միջնակարգ վարժարաններում։ 1934—1942 թթ. վարել է Սամիրքի ազգային վարժարանի տեսչի պաշտոնը, ապա՝ մինչև 1947 թ. Ալեքսանդրիայի ազգային վարժարանի տեսչի։ 1947 թ. ընտանիքով ներգաղթել է Հայաստան։ Կրթական աշխատանքին զուգընթաց ունեցել է գրական-բանասիրական և թարգմանական գործունեություն։ Թարգմանել է Սերվանտեսի «Դոն Կիխոտի» առաջին մասը, որը լույս է տեսել Եգիպտոսում։ Բացի դրանից թարգմանել է Մաքիավելու «Իշխանը» գիրքը։ Եգիպտահայ մամուլում տպագրել է մի շարք հոդվածներ հայ-եգիպտական հարաբերությունների մասին, օգտագործելով արխիվային բազմաթիվ փաստաթղթեր։ Հրատարակել է հայոց լեզվի դասագրքերի շարք «Մեր լեզուն» խորագրով, բաղկացած հինգ գրքերից, նախակրթարանի 5 դասարանների համար։ Դրանք օգտագործվել են Եգիպտոսի, Եթիոպիայի, Պաղեստինի, Կիպրոսի հայկական դպրոցներում։ Եռամհատոր լույս է տեսել «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին» (Երևան, 1965) գիրքը։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(1871—1942).*— Զութակահար. ՌԵՖՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Սիմֆերոպոլում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, 10 տարեկան հասակից հետևել ջութակի։ 1886 թ. ընդունվել է Պետերբուրգի կոնսերվատորիան, փայլուն առաջադիմության համար ստացել ուսանողական թոշակ։ 1890 թ. ավարտել է ջութակի դասարանը, 1894 թ.՝ որպես առաջավոր ուսանող ուղարկվել է Բեռլին, որտեղ հաճախել է աշխարհահռչակ ջութակահար Խոախիմի դասընթացներին։ Բեռլինից անցել է Լոնդոն, 1895 թ. վերադարձել է Պետերբուրգ, աշխատել իր ավարտած կոնսերվատորիայում, որպես ջութակի ուսուցիչ։ 1900 թ. կոնսերվատորիայում նրան տրվել է առանձին դասարան, 1905 թ. ավագ դասատուի, 1908 թ. պրոֆեսորի կոչում։ Մանկավարժական աշխատանքին զուգընթաց համերգներ է տվել Ռուսաստանի և արտասահմանի բազմաթիվ քաղաքներում՝ Մոսկվա, Պետերբուրգ, Ռիգա, Կիև, Խարկով, Բեռլին, Քյոլն, Ֆրանկֆուրտ և այլն։ 1912 թվականին վերադառնալով Ռուսաստան, շարունակել է աշխատել Պետերբուրգում, պարբերաբար դուրս գալով նոր շրջագայություններ, որոնց ընթացքում եղել է նաև Անդրկովկասում (Թիֆլիս, Բաքու, Երևան, Ալեքսանդրապոլ և այլն)։ Խորհրդային կարգերի հաստատումից հետո համերգներ է տվել մի շարք քաղաքներում։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ *(1872—1916).*— Կրթական, մշակութային գործիչ, գիտնական։ Ծնվել է Սեբաստիայում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, զբաղվել ուսուցչությամբ։ 1891 թ. մեկնել է Պոլիս, սովորել է Պերպերյան վարժարանում, ավարտել 1894 թ.։ Մի քանի տարի որպես ուսուցիչ աշխատելուց հետո, 1897 թ. անցել է արտասահման։ Երկու տարի պաշտոնավարել է Ժենևի համալսարանում, ապա մեկնել է Լոզան, այնտեղ հիմնել է հայկական վարժարան։ 1904 թ. ամուսնացել է դանիացի Ինգե Կոլլինի հետ, որն այնուհետև գրվել է Ինգե Նալբանդյան և նշանակալից դեր կատարել հայ մշակույթը օտարներին ծանոթացնելու գործում։ 1904 թ. Լոզանում հրատարակել է «Գիտություն» հայերեն հանդեսը, սակայն հազիվ մեկ տարի կարողացել է շարունակել։ 1909 թ. տեղափոխվելով Կ. Պոլիս, որ-

պես տնօրեն աշխատել է կենտրոնական վարժարանում, միաժամանակ գիտական հոդվածներով աշխատակցել է «Բյուզանդիոն», «Արևելք», Թեոդիկի «Ամենուն տարեցույցը» և այլ պարբերականներին։ Աստղագիտության վերաբերող նրա որոշ հոդվածները, մասնավորապես Հալլեի գիսավորի առիթով գրածները լայն արձագանք են գտել ֆրանսիական մամուլում։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ *(1829—1866).*— Գրող, հրապարակախոս, հեղափոխական գործիչ։ Ծնվել է Նոր Նախիջևանում, 1829 թ. նոյեմբերի 14-ին։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում՝ Գաբրիել Պատկանյանի դպրոցում։ Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Խալիբյանի կողմից իր դեմ սկսված հալածանքների հետևանքով հարկադրված է եղել մեկնել Մոսկվա, այնտեղից՝ Ստ. Նազարյանցի խորհրդով անցել է Պետերբուրգ, քննություն տվել համալսարանում, ստացել հայոց լեզվի ուսուցչի իրավունք։ Վերադառնալով Մոսկվա, նշանակվել է Լազարյան ճեմարանի դասախոս, սակայն, Խալիբյանի և Ներսես կաթողիկոսի թելադրանքով Լազարյանները 1854 թ. աղատել են նրան ճեմարանից։ Ուստիր շարունակել է Մոսկվայի համալսարանում, հետևել բժշկության։ Այստեղ հիմնավորապես տարվել է հեղափոխական-դեմոկրատական գաղափարներով, ուսումնասիրել Չերնիշևսկու, Բելինսկու ստեղծագործությունները։ 1858 թվականից՝ «Հյուսիսափայլի» հիմնադրման առաջին տարվանից, աշխատակցել է այդ պարբերականին, դառնալով նրա դեմոկրատական թևի կենտրոնական դեմքը։ Այնտեղ նա տպագրել է «Մեռելահարցուկ» վեպը, հայտնի «Հիշատակարանները», ինչպես և չափածո մի շարք երկեր («Ազատություն», «Մանկության օրեր» և այլն), որոնք կարճ ժամանակում արտատպվել են նաև արևմտահայ դեմոկրատական մամուլում, մասնավորապես «Մեղվում», նրա անունը հռչակելով ամբողջ հայ իրականությունում։ 1861 թ., Մ. Բարաջանյանի կտակի գործով ուղևորվել է Հնդկաստան, ճանապարհին եղել Փարիզում, Լոնդոնում, Պոլսում, Ալեքսանդրիայում, մոտիկից շփվել հայ հասարակական տարբեր հոսանքների հետ, գտել գաղափարական համախոհներ։ Լոնդոնում կապեր է հաստատել Գերցենի գլխավորությամբ գործող ռուս պրոպագանդիստների հետ, գործել նրանց մերձավոր գործակիցը։ Նրա նախաձեռնությամբ Պոլսում ստեղծվել է հեղափոխական գաղտնի խմբակ, որի մեջ ընդգրկվել են Հ. Սվաճյանը, Ս. Բալվաքյանը, Հ. Բյուրեղյանը, Մ. Այվազյանը։ Այս ուղևորության ընթացքում գրավոր պայքար է մղել հետադիմական տարրերի դեմ, «Մեղվում» լույս է ընծայել «Հրաշափառ խայտառակություն» հոդվածը Հ. Տերոյենցի դեմ, Փարիզում 1861 թ. «Երկու առղ» գրքույկը, իսկ 1862 թ. «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» ծրագրային աշխատությունը, որը գաղտնի ճանապարհով առաքվել է Թուրքիա և Ռուսաստան։ 1862 թ. վերադարձել է Ռուսաստան, հագիվ հասած ծննդավայրը՝ Նոր Նախիջևան, ձերբակալվել է Լոնդոնի ռուս վտարանդիների հետ կապ ունենալու մեղադրանքով։ Բանտում գրել է «Հեգելը և նորա ժամանակը», «Կրիտիկա «Սոս և Վարդիթերի» փիլիսոփայական երկերը», նաև «Աշխարհարարի քերականությունը», որը մնացել է անավարտ։ 1865 թ. աքսորվել է Սարատովի նահանգի Կամիշին քաղաքը, որտեղ էլ վախճանվել է հաջորդ տարվա մարտի 1-ին։ Դեռևս 1903—1906 թթ. Բոստոնում տպագրվել է նրա երկերի երկհատորյակը, հետագայում առանձին ստեղծագործություններ։ 1935 թ. Մոսկվայում լույս է տեսել նրա «Անտիպ երկերը»։ Ա. Հովհաննիսյանի խմբագրությամբ և ընդարձակ ծանոթագրություններով, իսկ Ե. Շահազիզը 1932 թ. տպագրել է «Դիվան Մխիթար Նալբանդյանի» ժողովածուն, որը պարունակում է նրա անտիպ նամակները։ 1945—1949 թթ. ԳԱ հրատարակությամբ լույս են տեսել նրա երկերի լիակատար ժողովածուի չորս հատորները և «Ընտիր երկերի» մի հատորյակը ռուսերեն։ Նախախորհրդային տարիներին և մեր օրերում նրա մասին հրատարակվել են մենագրական տասնյակ հետազոտություններ։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՆԱԶԻԿ *(ծն. 1913).*— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1967)։ Ծնվել է Վանում (Արևմտյան Հայաստան)։ Միջնակարգ կրթությունն ստացել է նրվանում, ավարտել 1930 թ.։ 1933-ից խաղացել է Տաշքենդի հայկական դրամատիկ թատրոնում, 1935—1940 թթ.՝ Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում, ապա՝ տասը տարի Խորհրդային անվան թատրոնում, իսկ 1951-ից՝ Երևանի Հովհ. Թումանյանի անվան դրամատիկական թատրոնում։ Տարիների ընթացքում կատարել է մի քանի տասնյակ դերեր, որոնցից են Էմմա («Ոճրագործի ընտանիքը»), Գարգարիա («Խաթաբալա»), Շուշան («Պեպո»), Եղի Միլֆորդ («Սեր և խարդավանք»), Լեդի («Թոմ Կենտի»), Զավահիր («Զար ոգի»), Սամանուշ («Սամվել»), Անուշ («Պաղտասար աղբար»), Բուլան (համանուն պիեսում) և այլն, ինչպես և մի շարք դերեր՝ տիկնիկային թատրոնում։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՌՈԲԵՐՏ *(1912—1974).*— Թատերական նկարիչ. Վրացական և Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ։ Ծնվել է Ղարաքիլիսա-ում (այժմ՝ Կիրովական)։ Տարրական կրթությունն ստացել է Թբիլիսում, մասնագիտացել Երևանի կերպարվեստի տեխնիկումում։ Ապա սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում։ 1940 թվականից որպես գլխավոր նկարիչ աշխատել է Թբիլիսիի հայկական և ռուսական թատրոններում։ Թատերական ձևավորումներ է ունեցել նաև Աղրբեջանում, Հայաստանում, Ռուսաստանում։ Կատարել է շուրջ 300 ներկայացումների ձևավորումներ, ինչպես «Գոլեմ», «Ուրիել Ակոստա», «Խաթաբալա», «Պեպո», «Դիմակահանդես», «Մակբեթ», «Մաքբեթովա» և այլն։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՍԱՐԳԻՍ *(1904—1934).*—Քանդակագործ-փորագրիչ, նկարիչ։ Ծնվել է Զմյուռնիայում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Պոլսեցյան Արմենո ֆրանսիական դպրոցում։ Հիվանդության պատճառով ընդհատել է ուսումը և աշակերտել մի փորագրիչի, ապա մեկնել վրա փորագրելու գործին։ Զմյուռնիայի հայտնի աղետից հետո (1922) նրա ընտանիքը տեղափոխվել է Փարիզ, որտեղ սկսել է փորագրչական արվեստը, միաժամանակ հաճախել Պլաս դեվոժի դիշերային դասընթացներին, հետևելով քանդակագործության նկարչության։ Ուսանելու այդ տարիներից սկսել է մրցանակաբաշխությունների, շարունակել մրցանակներ։ 1925 թ. քանդակագործական մրցանակաբաշխությունում արժանացել է երրորդ մրցանակի, իսկ 1927-ին՝ առաջին մրցանակի։ 1929 թ. մասնակցել է Աշնան սալոնի մրցույթին, ապա՝ «Ազատ արվեստագետների» հայկական միության տարեկան երկու ցուցահանդեսներին։ Նախապատրաստել էր մեդալիոնների պատրաստումը։ Պատրաստել է Կ. Մարքսի, Վ. Ի. Լենինի և այլ նշանավոր մարդկանց մեդալիոնները։ Պատրաստել է մի շարք կիսանդրիներ։ Եղել է Փարիզի 20կ-ի գործուն անդամներից, ջերմ համակիր Խորհրդային Հայաստանին։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՍԻՄՈՆ *(ծն. 1906).*— Լրագրող, խմբագիր։ Ծնվել է Մեծկերտ գյուղաքաղաքում (Արևմտյան Հայաստան)։ Մանկությունն անց է կացրել մանկատներում, այդ թվում՝ Կիրովականի մանկատնում, որտեղ ստացել է նախնական որոշ կրթություն։ 1931-ից մինչև թոշակի անցնելը աշխատել է մամուլի բնագավառում։ Եղել է «Ավանգարդ» թերթի բաժնի վարիչ, էջմիածնի, Ղամարլուի շրջանային թերթերի խմբագիր, 1938-ից՝ «Խորհրդային Հայաստան» օրաթերթի բաժնի վարիչ։ Հայրենական պատերազմի առաջին ամիսներից մինչև 1955 թ. ծառայել է Խորհրդային բանակում, եղել հայկական 89-րդ Թամանյան դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթի խմբագիր։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 15 տարին», «Կոմիսարի կյանքը»։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՎԱՀԱՆ *(1876—1902).*— Գրականագետ. փիլիսոփայական գիտությունների դոկտոր (1901)։ Ծնվել է Վանում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Երամյան վարժարանում, ապա սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ավարտել 1894 թ.։ Մեկնել է Գերմանիա, Լայպցիգի համալսարանում հետևել է փիլիսոփայության և գրականագիտության։ Գերմանիայում ուսանելու տարիներից աշխատակցել է «Անահիտ», «Մշակ», «Մուրճ» և այլ պարբերականների, գրելով գրականագիտական, տեսական հարցերի մասին, ինչպես «Գեղարվեստի էությունն ու նպատակը», «Հենրիկ Իբսենն», «Պետրոս Դուրյան» և այլն։ 1902 թ. Լայպցիգում լույս է տեսել նրա դիսերտացիան գերմաներեն լեզվով։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՎԱՉԵ *(ծն. 1919).*— Գրականագետ. բանասիրական գիտությունների դոկտոր (1969), Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ։ Ծնվել է Նոր Բայազետում (այժմ՝ Կամո)։ 1936-ին ավարտել է միջնակարգ կրթու-

թյունը, 1941 թ.՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը։ 1941—1946 թթ. ծառայել է խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը, 1946—1949 թթ. սովորել պետական համալսարանի ասպիրանտուրայում՝ հայոց հին գրականության մասնագիտությամբ։ 1948—1953 թթ. վարել է կուսակցական պաշտոններ։ Եղել է ՀԿԿ Երևանի Կիրովյան շրջկոմի քարտուղար, ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի կուսակցական օրգանների բաժնի վարիչ։ 1952—1953 թթ. աշխատել է Երևանի Մատենադարանում որպես դիրեկտոր։ 1948-ից հայ հին գրականություն է դասավանդել Երևանի պետական համալսարանում, որտեղ 1956—1965 թթ. վարել է գիտական գծով պրոռեկտորի պաշտոնը։ 1965—1977 թթ. եղել է Հայկական ԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի դիրեկտորը, 1977-ից՝ ԳԱ նախագահության առընթեր գրադարանային խորհրդի նախագահ-հիմնակազմ գրադարանի դիրեկտոր։ 1953-ին պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա, 1969-ին՝ դոկտորական՝ «4-րդ դարի Հայաստանը և Ստ. Զորյանի պատմավեպերը» թեմայով։ Գիտական մամուլում տպագրել է գրականագիտական մի շարք հոդվածներ։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Վարդանանց պատերազմը և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը» (Երևան, 1955), նույնը ռուսերեն (Երևան, 1956), «Միջնադարյան հայ տաղերգուներ» (1958), «Թբիլիսին հայ մատենագրության մեջ» (Երևան, 1958), նույնը վրացերեն (Թբիլիսի, 1959), նույնը ռուսերեն (Երևան, 1961), «Եղիշե» (1959), նույնը ռուսերեն (1962), «Գրողը և պատմությունը» (1970), «Հայ գրականություն» բուհական դասագիրք, (Մոսկվա, ռուսերեն, 1976, համահեղինակներ՝ Ս. Աղաբաբյան և Ս. Սարինյան), «Սայաթ-Նովա» (1987) և այլն։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ (ծն. 1929).— Գրող, թարգմանիչ։ Ծնվել է Կահիրեում (Եգիպտոս)։ Նախնական կրթությունն ստացել է ֆրանսիական դիշերօթիկ դպրոցում։ 1942—1947 թթ. սովորել է Գալուստյան ազգային վարժարանում։ 1947 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան, շարունակել ուսումը Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, որի հոգեբանության և տրամաբանության ֆակուլտետն ավարտել է 1952 թ.։ Երկու տարի որպես ուսուցիչ աշխատել է Ազիզբեկովի և Իջևանի շրջանում, ապա՝ տարբեր հիմնարկներում, զուգահեռ զբաղվել գրականությամբ և թարգմանությունների։ Առանձին գրքույկներով հրատարակած ինքնուրույն երկերն են՝ «Հրաշիկը և ձկան յուղը» (Երևան, 1961), «Ջմեռ տարի» (1962), «Անծանոթ աղջիկը» (1962), «Զարմանալի զարնանը» (1967), «Անցումը» (1971), «Այս պատմության մեջ ի՞նչն է ճիշտը» (1974), «Գրիգորյանի երազանքները» (1977), «Դարպասը երրորդ հարկում» (1980), «Այս նավը ի՞նչ պիտի շարժվի» (1985) և այլն։ Թարգմանությունները՝ Բեկ-Կատարյան թարգմանություններն են՝ Բեկ-Ժոզեֆ՝ «Տրիստանի և Իզոլդայի սիրավեպը» (1958), Բուսենար Լուի՝ «Ադամանդ որոնողները» (թարգմանության հեղինակակից՝ Մեկրոսյան) (1960), Դիդրո Դ.՝ «Փիլիսոփայական դիտողություններ գեղեցիկի ծագման բնույթի մասին», «Գրամատիկական բանաստեղծության մասին» (1963), Դրյուոն Մորիս՝ «Այս աշխարհի հզորները» (1963), Տրիստ Էլլա՝ «Ավինյոնի սիրահարները» (1965)։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՏԻՐԱՆ (1878—1954).— Դիր. տեսնոր։ Ծնվել է Վանում (Արևմտյան Հայաստան)։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որտեղ աշակերտել է կոմպոզիտոր Մակար Եկմալյանին։ Ապա հրատարակի տարի սովորել է Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում, իսկ 1898-ից ուսումը շարունակել է Պետերբուրգի կոնսերվատորիայում, աշակերտելով պրոֆեսոր Գաբելին։ Այդ տարիներից սկսելով պրոֆեսոր Գաբելին։ Այդ տարիներից սկսելով դես է եկել որպես երգիչ և աշքի ընկել իր բարիկական տեսոր ձայնով։ 1906 թ. ավարտելով կոնսերվատորիան և Ալ. Մանթաշյանի թաթոշակով մեկնել է Իտալիա, Միլանում մի կել ձայնը։ 1909 թվականից համերգներ է տվել Իտալիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և այլ երկրներում, ծրագրում ունենալով արևմտաեվրոպական, ռուսական և հայկական ստեղծագործություններ, այդ թվում՝ «Կռունկը», «Մայր Արաքսին», Սայաթ-Նովայի մի քանի երգերը։ Մեծ համբավ է ձեռք բերել հայ իրականությունում։ «Կռունկով» հիացողներից է եղել մեկենասը՝ Ալ. Մանթաշյանը։ 1913—1918 թթ. զբաղվել է մանկավարժությամբ։ 1918 թ. մեկնել է Աստրախան, այնտեղից՝ Արմավիր, ստեղծել է ժողովրդական կոնսերվատորիա, զեկավարել մինչև 1922 թ., երբ եկել է Երևան և որպես վոկալ բաժնի ուսուցիչ աշխատել է Երևանի երաժշտական ստուդիայում։ Հետագայում նույն պաշտոնը վարել է Բաքվի կոնսերվատորիայում։ 1950 թ. մինչև կյանքի վերջը դարձյալ պաշտոնավարել է Երևանի երաժշտական ուսումնարանում։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՏՐԻԱՏ (ծն. 1908).— Նկարիչ։ Ծնվել է Վանում, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եկել է Կովկաս, ապրել Թիֆլիսում, որտեղ 1921—1922 թթ. սովորել է գեղարվեստական դպրոցում, իսկ 1924 թ. ավարտել է Նկարիչ Մ. Թոիդեի գեղարվեստական ստուդիան։ Այդ տարվանից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Հրավոր մարտիկների դադարը», «Զկնորսները», «Հին Թիֆլիսը», «Կալը կոլխոզում», «Լեռնային» և մի շարք դիմանկարներ։ Նրա գործերից նմուշներ պահվում են Թբիլիսիի, Երևանի և Բուենոս Այրեսի թանգարաններում։ Ապրում է Թբիլիսիում։

ՆԱԼՋԱ ՄԵՂՐԵՏԻ (18-րդ դ.).— Տաղերգու։ Եղել է «Երգ ի վերայ զանազան քաղաքացւոց Լեհաց» գավեշտական տաղը, որից հասել է երեք արտագրություն, հնագույնը՝ 1792 թվականից։

ՆԱՀԱՊԵՏ ԹԱԴԵՈՍ (1843—1876).— Դերասան, դրամատուրգ, թարգմանիչ։ Ծնվել է Կ. Պոլսի Խասգյուղ թաղամասում։ Կրթությունն ստացել է ս. Փրկչի նախակրթարանում։ Որպես ուսուցիչ աշխատել է նախ Կ. Պոլսում, ապա՝ Զմյուռնիայում։ 1868-ին վերադարձել ծննդավայրը, խաղացել Հ. Վարդովյանի թատրոնում, որի հետ կապված է եղել մինչև կյանքի վերջը։ Կատարած դերերից են եղել՝ Վալանթե («Երկու հիսնապետներ»), Պոլ («Հավատք, հույս, սեր»), Գասպար Քատրուս («Մոնթե Քրիստոս»), Գոպ Նորար («Լիոնի սուրհանդակը»), Շարոնիե («Գիրկինը նեղում է»), Մեմեշ աղա («Համանուն ստեղծագործությունում») և այլն։ Տ. Զուխաջյանի տեսարանները կատարել է առաջին բարիտոնի դերերը։ Ֆրանսերենից հայերեն և թուրքերեն է թարգմանել բազմաթիվ պիեսներ, որոնք բեմադրվել են Վարդովյանի թատրոնում, դրանցից են՝ «Գեղեցկուհի Հեղինե», «Տելեմաք ի տաճարն Աստղկան» օպերետները, Շիլլերի «Ավազակները» և այլն։ Հեղինակել է «Հայրենասեր զինվորի եռանդը» զուգերգը, որ կատարել է դերասանուհիներ Աղնիվ Հրաչյայի կամ Վ. Գարագաշյանի հետ։ Գրել է Տ. Զուխաջյանի «Վեպլեպիճի Հորհոր աղա» օպերետի լիբրետոն։

ՆԱՀՅԱՆ ՀԱԿՈԲ (1701—1764).— Հոգևորական, մշակութային գործիչ։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքի գյուղերից մեկում։ Փոքր հասակից տեղափոխվել է Կ. Պոլիս, որտեղ ստացել է կրթությունը, սովորել Հովհ. Կոլոտ պատրիարքի մոտ։ Հրատարակել է կրոնա-բարոյախոսական մի շարք գրքեր՝ ժողովրդական խոսվածքի առատ օգտագործմամբ։ Դրանցից են «Վեմ հաւատոյ» (տպ. 1733), «Մեկնութիւն Նարեկի» (1745), «Գիրք կոչեցեալ գանձարան Մանուցմանց» (1758), վերջինս պարունակում է հանրագիտական բնույթի օգտակար գիտելիքներ, լեզուն՝ կիսագրաբար, թուրքերենով խառն։ Ավելի լայն տարածում է գտել նրա «Գիրք կոչեցեալ Զէն հոգևոր» աշխատությունը (1757), որն արժանացել է կրկին տպագրության շնորհիվ իր պարունակած աշխարհիկ նյութերի, բարոյախոսական պատմությունների, մանրաղեպերի։ Գրքի մոտ 200 էջը գրված է արևմտահայ ժողովրդական լեզվով։ Հ. Պարոնյանի հերոսների մոտ հաճախ է հիշվում այս գիրքը, ինչը վկայում է նրա լայն տարածում գտած լինելու մասին։ Մյուս գործերն են՝ «Գրքուկս կոչեցեալ Երգ ճշմարտութեան», «Գրքուկս կոչեցեալ հոգեշահ» և այլն, որոնք բոլորն էլ տպագրվել են Կ. Պոլսում։

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՂԱՍԻ (1887 — ?).— Դերասան։ Ծնվել է Ալեքսանդրապոլում, որտեղ ստացել է կրթությունը։ Բեմական ասպարեզ է մտել 1909 թ. Բաքվում, խաղալով հայկական խմբերում։ Կատարած դերերից են՝ Օթարյան («Պատվի համար»), Ռուստամ, Բարխուդար («Նամուս»), Վանահայր («Հին աստվածներ»), Օգսեն («Պաղտասար աղբար»), Կորբաղ («Ոճրագործի ընտանիքը»), Կարլ Մոոր («Ավազակներ»), Լաբրա («Համլետ»), Ցաղո («Օթելլո») և այլն։

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐՓԻԿ (ծն. 1899).— Դերասանուհի։ Ծնվել է Թիֆլիսում։ Գիմնազիական

դպրոցը ավարտելուց հետո սովորել է Գ. Ստանիսլավսկու անվան թատրոնական ուսումնարանում։ Ավարտելուց հետո աշխատել է Ալեքսանդրապոլի, Գորիսի, Սարատովի, Ռոստովի, Ստավրոպոլի, Գրոզնիի, Ալմա-Աթայի, Ուրալսկի, Ուֆայի, Ալեքսանդրիայի, Ալեքսանդրիայի, Ալեքսանդրի

կրթությունն ստացել է Սոչիում։ 1922-ից ապրել է Բաթումում, որտեղ մասնակցել է սիրողական խմբերի ներկայացումներին։ Ամուսնացել է դերասան Աղասի Նալչաջյանի հետ, հիմնականում խաղացել է Լենինականի և Կիրովականի պետական թատրոններում։ Լավագույն դերերից են՝ Տրիլբի (համանուն պիեսում), Էմմա («Ոճրագործի ընտանիքը»), Սուսան («Նամուս»), Մարգարիտ («Պատվի համար»), Ամալյա («Ավազակներ»), Նաստյա («Հատակում»), Կատերինա («Ամպրոպ») և այլն։

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳՐԵՏԱ *(ծն. 1936).*— Թատերական նկարիչ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում։ 1961 թվականից շարունակել է ուսումը գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի գեկորատիվ նկարչության բաժինն ավարտել է 1966-ին։ Աշխատել է գեղարվեստական կոնստրուկտորային բյուրոյում իբրև նկարիչ։ 1970 թվականից աշխատում է «Հայֆիլմ» կինոստուդիայում։ Մասնակցել է հանրապետական և միութենական մի քանի ցուցահանդեսների։ Կատարել է «Քանդած օջախ», «Քաջ Նազար» և այլ բեմադրությունների ձևավորումները, նաև կինոֆիլմերի ձևավորումներ («Հեղկոմի նախագահը», «Կյանքի լավագույն կեսը», «Խոշոր շահում» և այլն)։ Ձևավորել է մանկական գրքեր, կատարել արտադրական գրաֆիկայի աշխատանքներ։

ՆԱԿՑԱՆ (ՆԱԽՅԱՆ) ՌՈՒԲԵՆ *(1897—1987).*— Քանդակագործ։ Ծնվել է Նյու Յորքում, 1875 թ. Զեյթունից այնտեղ գաղթած Գեորգ Նախյանի ընտանիքում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Նյու Յորքի Ազատ արվեստների դպրոցում՝ 1912—1915 թթ., կատարելագործվել Փարիզում և Իտալիայում։ 1920-ական թվականների սկզբներից մասնակցել է ցուցահանդեսներին։ Նրա առաջին տարիների գործերից են՝ «Ցուլը և կովը», «Հորթը», «Փոկը» և այլն։ Մետրմական կապերով կապված է եղել նկարիչ Արշիլ Գորկու հետ (Ոստանիկ Ադոյան), որը նրան մղել է դեպի դասական թեմատիկան ու դիմանկարը։ Աստիճանաբար լայն ճանաչում է ձեռք բերել Ամերիկայում։ Նրա գործերը գնվել են տարբեր թանգարանների կողմից, այդ թվում Նյու Յորքի Ուիթնի թանգարանի, տիկին Ռոկֆելլերի անձնական հավաքածոյի, 1934 թ. քանդակած մարդիկ Բեյբ Ռութը հեղինակի լավագույն գործերի հետ միասին տպագրվել է «Նյու Յորք Թայմս» թերթում։ 1935 թ. Վաշինգտոնի Կոնգրեսն գեղարվեստի դահլիճում ցուցադրել է Ռուզվելտի, պետական քարտուղար Հելի, պետական ներքին գործերի նախարար Ջոնսոնի և այլոց քանդակները։ Հետագայում տարվել է դիցաբանական և աստվածաշնչային թեմաներով. «Վենեռայի ծնունդը», «Լեդան և կարապը», «Սալոմեի պարը» և այլն։ Նրա «Խաչից իջեցնելը» գործը 1972 թ. գրվել է Նյու Յորքի հայոց ս. Վարդան եկեղեցում։

ՆԱՅՈ ՔԵՌԻ *(1851—1915).*— Բանաստեղծ։ Ծնվել է Մոկս գավառի Գինեկանց գյուղում (Արևմտյան Հայաստան)։ Երիտասարդ հասակից եկել է Էջմիածին և երկար տարիներ որպես պահակ աշխատել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ 1886 թ. Մ. Աբեղյանը գրի է առել «Սասունցի Դավիթ» էպոսի նրա պատումը և լույս ընծայել 1889 թ., հետագայում զետեղելով «Սասմա ծռեր» ժողովածուի Ա. հատորում։ Համարվում է դյուցազնավեպի լավագույն պատումներից մեկը։ Կոմիտասն էլ նոտագրել է վիպերգի թեմաներով նրա կատարած երգերը, իսկ նկարիչ Վարդգես Սուրենյանը նկարել է նրան Մոսկի տարազով. նկարը պահվում է Երևանի պետական պատկերասրահում։

ՆԱՀԱՊԵՏ *(17-րդ դ.).*— Ծաղկող։ 1653 թ. Էջմիածնում ծաղկել է մի Ճաշոց, որը պահվում է Երևանի Մատենադարանում 981 թվահամարի տակ։

ՆԱՀԱՊԵՏ ԱԳՈՒԼԵՑԻ (ԴՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ) *(1629—1695).*— Մշակութային գործիչ, ապագրիչ։ Ծնվել է Ագուլիսում։ Զբաղվել է առևտրով։ Հետագայում գործել է Վենետիկում, որտեղ հայերեն գեղեցիկ տառեր ձուլել տալով, 1687 թ. տպագրել է «Պարզաբանութիւն սաղմոսաց» գիրքը, որի վրա դրոշմել է իր շատ ուշագրավ նկարը՝ հայկական տարազով։

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ *(16-րդ դ.).*— Տաղերգու։ Ենթադրվում է, որ ծնվել է Վանի մոտակայքում գտնվող Խառակոնիս գյուղում, որտեղ բաղված են եղել ինքը և թոռը՝ աշուղ Քուչակը։ Բանաստեղծները նրան են վերագրում մի շարք տաղեր, մեծ մասամբ քառյակային, որոնք իրենց բանաստեղծական արժեքով և խորապես աշխարհիկ զգացողությամբ համարվում են մի

նոր դարյան հայ չափածո գրականության ամենափայլուն նմուշներից և արդեն հարյուր տարուց ավելի է, որ զբաղեցնում են հայագիտական միտքը, ինչպես Ա. Զոպանյանին, Մ. Աբեղյանին, Մ. Մկրյանին և ուրիշների։ Նրա երգերից մի քանիսը առաջին անգամ լույս է ընծայել բանաստեղծ Տեկանցը «Հայերգ» ժողովածուում (1852), այլ երգեր՝ Կ. Կոստանյանը՝ «Նոր ժողովածու»-ներում։ Ա. Զոպանյանը 1902 թ. Փարիզում տպագրել է նրա տաղերի ստվար մի ժողովածու «Նահապետ Քուչակի դիվանը» խորագրով։ Մեր օրերում, Երևանում, 1957 թ. լույս է տեսել «Հայրենի կարգավ» ժողովածուն։ Նրա երգերը թարգմանվել են մի շարք լեզուներով։ Զոպանյանը իր թարգմանությունները զետեղել է 1923 թ. Փարիզում լույս ընծայած «Le Roseraie d'Armenie» ժողովածուի Բ. հատորում։ Ռուսերեն նմուշներ տպագրվել են Վ. Բրյուսովի «Պոեզիա Արմենիի» ժողովածուում։ 1973 թ. Երևանում տպագրվել է ռուսերեն առաջին ժողովածուն, իսկ 1976 թ. շքեղ տպագրությամբ մի նոր ժողովածու՝ «Сто и один айрен» խորագրով, Լ. Մկրտչյանի ընդարձակ առաջաբանով, ծանոթագրություններով և աղացի թարգմանությամբ։

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ *(1857—1939).*— Կրթական գործիչ, բանասեր։ Ծնվել է Հայաստանի Քյավթառու գյուղում (այժմ՝ Արթիկի շրջանի Փանիկ)։ Կրթությունն ստացել է Վենետիկի Մխիթարյանների վանքում, 1874-ին դարձել այդ միաբանության անդամ։ 1877—1883 թթ. սովորել է Հռոմի համալսարանում, որի փիլիսոփայության ֆակուլտետն ավարտելուց հետո պաշտոնավարել է Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում նախ որպես ուսուցիչ, ապա տեսուչ։ 1919—1920 թթ. խմբագրել է «Բազմավեպ» հայագիտական հանդեսը։ Հետագայում մի քանի տարի (1928—1930 և 1934—1936) եղել է Փարիզի Մուրադյան վարժարանի տեսուչը։ 1900-ական թվականներից «Բազմավեպում» տպագրել է բանասիրական, վիպաբանական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Ուղղագրություն աղգային մատենագրաց» (Վենետիկ, 1907), «Սուրբ Մեսրոպ և Հայաստանի լուսավորումը» (1914), «Քրիստոնեական հարատևություն» (1930) և այլն։

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ *(1910—1983).*— Բանասեր, Հայկական ԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Վասպուրականի Գանձակ գյուղում (Արևմտյան Հայաստան)։ Կրթությունն ստացել է Երևանում։ 1940-ին ավարտել է Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտը։ 1931—1936 թթ. վարել է կոմերիտական աշխատանքներ։ 1937-ին նշանակվել է «Ավանգարդ» թերթի խմբագիր։ Երկար տարիներ դասավանդել է բարձրագույն ուսումնական հաստատություններում։ 1961—1965 թթ. եղել է Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի ռեկտոր, ապա՝ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, «Լույս» հրատարակչության դիրեկտոր և այլն։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Նարիրի Զարյան» (Երևան, 1948), «Հովհաննես Թումանյանը ժողովուրդների բարեկամության և խաղաղության երգիչ» (1954), «Բաֆֆի» և այլն։

ՆԱՂԱՇ ՀԱՅՐԱՊԵՏ *(15-րդ դ.).*— Նկարիչ։ Ապրել և ստեղծագործել է Տաթևի հռչակավոր վանքում, որտեղ էլ ստացել է կրթությունը, հմտացել մանրանկարչության մեջ։ Նկարազարդել է մի շարք ձեռագրեր, որոնցից մեկը այժմ պահվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում՝ նկարազարդված 1407 թ.։

ՆԱՂԱՇ ՄԱՆՎԵԼ *(15-րդ դ.).*— Մանրանկարիչ։ 1459 թ. նկարազարդել է Գր. Անգեղակոթեցու կողմից ընդօրինակված մի Ավետարան։

ՆԱՂԱՇ ՔԱՐԻՄ *(15-րդ դ.).*— Մանրանկարիչ։ Նկարազարդել է 1439 թ. գրված մի Հայսմավուրք։

ՆԱՂԱՇՅԱՆ ՋԱՎԵՆ *(ծն. 1921).*— Փորագրիչ-արվեստագետ։ Ծնվել է Երևանում, փայտագործ արվեստագետ Հովհաննես Նաղաշյանի ընտանիքում։ Արվեստը սովորել է հորից, զբաղվել փայտափորագրությամբ։ Աշխատել է նաև Երևանի ժամացույցի գործարանում որպես նկարիչ-նկարազարդող։ Իր պատրաստած փայտափորագրական գործերով մասնակցել է հանրապետական բազմաթիվ ցուցահանդեսների, արժանացել դիպլոմների, պարգևատրությունների, պատվոգրերի։ Նրա աշխատանքները ցուցադրվել են Մոսկվայում, Վիլնյուսում, Աթենքում և այլ քաղաքներում։

ՆԱՂԱՇՅԱՆ ՀԱՍՄԻԿ *(ծն. 1919).— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստուհի (1956)։ Ծնվել է Երևանում։ Դուստրն է նկարիչ-փորագրող Հովհաննես Նաղաշյանի։ 1939-ին ավարտել է Երևանի թատերական տեխնիկումը։ 1941—1943 թթ. աշխատել է Երևանի շինարարական տեխնիկումի փայտամշակման արհեստանոցում որպես փորագրող։ Ապա նվիրվել է բեմական ասպարեզին։ 1943—1946 թթ. խաղացել է Դիլիջանի, 1946—1949 թթ.՝ Նոր Բայազետի թատրոններում, այնուհետև Կիրովականի Հ. Աբելյանի անվան թատրոնում, իսկ 1965-ից՝ Երևանի Հովհ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում։ Հավաղույն դերերից են՝ Շուշան («Պեպո»), Նատալիա («Խաթաբալա»), Սուսան, Սանամ («Նամուս»), Անուշ («Պաղտասար աղբար»), Սոֆի («Առատնաբույժն արեևլյան»), Լիզա («Պլատոն Կրեչետ»), Էմիլիա («Օթելլո»), Պաուլինա («Զմեռային հեքիաթ») և այլն։*

ՆԱՂԱՇՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(1876—1968).— Փայտագործ-քանդակագործ արվեստագետ։ Ծնվել է Երևանում։ Նախնական կրթությունն ստացել է ս. Սարգիս եկեղեցուն կից դպրոցում, մասնագիտությունը կատարելագործել է Թիֆլիսում, կահույքագործ վարպետների մոտ և ձեռք բերել լայն հմտություն։ 1909 թ. պատրաստել է Կարսի ռուսական եկեղեցու ավագ խորանի փայտյա խաչկալի նախագիծը, ապա՝ Սարիղամիշի և Երևանի ռուսական Նիկոլաևյան տաճարների դռներն ու խաչկալները։ Խորհրդային իշխանության տարիներին փայտագործության արվեստը դասավանդել է Երևանի ինդուստրիալ (հետագայում՝ Շինարարական) տեխնիկումում, որտեղ աշխատել է 35 տարի, աճեցնելով կահույքագործ վարպետների մի քանի սերունդ։ Նրա նախագծերով ու ղեկավարությամբ է պատրաստվել Հանրային գրադարանի կահույքը (1938), Մատենադարանի կաղնու փայտից պատրաստված շքեղ դռները և այլ կահույքներ։ Եղել է Հայաստանի նկարիչների միության անդամ։ Նրա արվեստի մասին 1974 թ. գիրք-ալբոմ է հրատարակել դուստրը՝ ինժեներ Վարդուհի Նաղաշյանը։*

ՆԱՂԱՇՅԱՆ ՎԱՐՈՒՀԻ *(ծն. 1917).— Ինժեներ։ Ծնվել է Երևանում։ Դուստրն է նկարիչ-փորագրիչ Հովհ. Նաղաշյանի։ Բարձրագույն կրթությունն ստացել է պոլիտեխնիկական ինստիտուտում։ Աշխատել է իր մասնագիտությամբ, միաժամանակ ուսումնասիրել է իր հոր փայտափորագրության արվեստը և 1974-ին լույս է ընծայել «Հովհաննես Նաղաշյանի փայտագրվեստը» գիրք-ալբոմը։*

ՆԱՂԴԱՅԱՆ ՍՏԵՓԱՆ *(ծն. 1921).— Կոմպոզիտոր։ Ծնվել է Կախեթիայում (Վրացական ԽՍՀ)։ 1925-ին նրանց ընտանիքը տեղափոխվել է Երևան։ Մասնագիտական կրթություն ստացել է Երևանի երաժշտական ուսումնարանում և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որն ավարտել է 1949 թ.։ Որպես դիրեկտոր աշխատել է Ալավերդու երաժշտական դպրոցում։ Ապա մեկ տարի տոմսերել է Մոսկվայում, Հայաստանի կուլտուրայի տանը։ Վերադառնալով Հայաստան՝ 1953 թվականից աշխատել է Երևանի Ե. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում։ Գրել և հրատարակել է տարբեր ժանրի բազմաթիվ երկեր, որոնցից են՝ «Աշխատանքային երգեր» (1953), «Դաշնամուրային տրիո» (1954), «Մանկական պիեսներ դաշնամուրի համար», «Հայկական երգերի և պարերի ժողովածու», «Երգչախմբային ստեղծագործություններ» (1968) և այլն։ Նրա երկերից մի քանիսը լույս են տեսել նաև Մոսկվայում, Կիևում, Բեյրութում։ «Դաշնամուրային տրիոն» կատարվել է Արգենտինայում, Պրագայում, Ռիգայում և այլ քաղաքներում։*

ՆԱՃԱՐՅԱՆ ԱՆՆԱ *(ծն. 1923).— Նկարիչ, խեցեգործ արվեստագետ։ Ծնվել է Դպրոցում (Արխազական ԱԽՍՀ)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Վրաստանի գեղարվեստների ակադեմիայի խեցեգործության ֆակուլտետում։ 1953 թվականից մասնակցել է ցուցահանդեսների. նրա նախագծերով պատրաստվել են վրացական ոճի թեյի սպասք, «Խաղաղություն» վազը, «Մադիկ» շատրվան, գինու բաժակներ և այլն։ Ապրում և ստեղծագործում է Կիևում։*

ՆԱՆՈՒՄՅԱՆ ՌՈՒԶԱՆ *(ծն. 1913).— Բանաստեղծ։ Ծնվել է Հյուսիսային Կովկասի Արմավիր քաղաքում։ Փոքր հասակից նրանց ընտանիքը տեղափոխվել է Թիֆլիս, որտեղ ստացել է միջնակարգ կրթություն։ 1933 թվականից սովորել է Երևանի պետական համալսարանում, արևելագիտական ֆակուլտետն ավարտել է 1938 թ.։ Աշխատել է Հայաստանի պետական գրական թանգարանում։ 1939—1942 թթ. սովորել է պետական համալսարանի ասպիրանտուրայում։ 1941—1944 թթ. եղել է Հայաստանի պետական գրական թանգարանի դիրեկտոր։ 1945 թ. պաշտպանել է դիսերտացիա, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան։ Աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում որպես արխիվային բաժնի վարիչ, ապա՝ ավագ գիտաշխատող։ Մամուլում տպագրել է գրականագիտական բանասիրական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հայաստան գրական կապերի մասին» (Երևան, 1945), «Մեսրոպ Թաղիադյան. կյանքը և գործը» (1948), «Վերնոց» (1962), «Վրթանես Փափազյան— կյանքը և գործը» (1956), «Ստեփանոս Նազարյան. կյանքը և գործունեությունը» (1978), «Ստեփանոս Նազարյան — Նամականի» (կազմել է, ծանոթագրել է և առաջաբանը գրել)։ Մասնակցել է «Հայ գրականության պատմության» բազմահատորյակի ստեղծմանը, գրել առանձին գլուխներ։*

ՆԱՆՈՒՇՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ *(1924—1980).— Նկարիչ. գրաֆիկ։ Ծնվել է Ալաստակ գյուղում (Վրացական ԽՍՀ Ախալքալաքի շրջան)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել 1953 թ.։ 1949 թվականից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների։ Գրաֆիկական լավագույն գործերից են՝ «Վարդան Մամիկոնյան», «Կոմիտաս», «Զարթի ամիրսպասալար», «Նամակներ ռազմաճակատից», ինչպես և բազմաթիվ պլակատներ, որոնցից «Կորչի պատերազմը» շահել է դիպլոմ՝ Բեռլինի միջազգային ցուցահանդեսում։ Նկարազարդել է գեղարվեստական գրքեր։*

ՆԱՖԱՐՅԱՆ ԿՈՍՏԱՆԴԻՆ *(1882—1937).— Ինժեներ-կառուցող։ Ծնվել է Շամախիում (Ադրբեջանական ԽՍՀ)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, բարձրագույն մասնագիտականը՝ Գերմանիայում։ 1910 թ. ավարտել է ուսման ընթացքը, վերադարձել Կովկաս, աշխատել Բաքվի նավթահանքերում որպես ինժեներ։ 1929 թ. ԽՍՀՄ կառավարությունը նրան է վստահել Վ. Ի. Լենինի գրանիտե դամբարանի շինարարությունը, համաձայն Ա. Շուսևի նախագծի։ Եղել է այդ շինարարության պետը և գլխավոր ինժեները։ Օգտագործել է նաև Հայաստանից տարված գրանիտներ և ավարտել է բարձր որակով։ Դամբարանի կառուցման աշխատանքները վերջացնելուց հետո ղեկավարել է Կրեմլի Մեծ պալատի վերաշինման աշխատանքները, պարգևատրվել Լենինի շքանշանով։*

ՆԱՍԻԲՅԱՆ-ԷՔՄԵՔՉՅԱՆ ԱԴԱՊԻ.— *Պատմաբան։ Ծնվել է Կիպրոսի Լիմասոլ քաղաքում։ Կրթությունն ստացել է Մելքոնյան կրթական հաստատությունում։ 16 տարի իբրև ընդհանուր պատմության ուսուցիչ աշխատել է նույն դպրոցում, որից հետո մեկնել է Անգլիա, ավարտել Գլազգոյի համալսարանի պատմագիտական ֆակուլտետը։ 1981-ին Օքսֆորդի համալսարանում պաշտպանել է դիսերտացիա, ստացել պատմական գիտությունների դոկտորի աստիճան։ 1984-ին Լոնդոնում հրատարակել է «Բրիտանիան և հայկական հարցը. 1915—23 թթ.» աշխատությունը, որն ունեցել է մեծ հաջողություն և դարձյալ Անգլիայում վերահրատարակվել հաջորդ տարի։ 1986-ից Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատության տնօրենն է։*

ՆԱՍԻՊԻ *(19-րդ դ.).— Աշուղ։ Ծնվել է Յոզղատում (Թուրքիա)։ Պատանեկան տարիքից հետևել է աշուղական արվեստին։ Հետագայում ապրել է Կ. Պոլսում։ Հորինել և կատարել է թուրքերեն սիրային, կենցաղային, երգիծական երգեր, որոնցից մեկը՝ ուղղված Հռոմի պապի դեմ, առիթ է տվել օտար դեսպանների միջամտությանը և պատճառ դարձել նրա բանտարկության։ Բանտում հորինել է Սուլթան Ազիզին ձոնված մի երգ, հասցրել պալատ, սուլթանին, արժանացել է նրա ներողամտությանը և ազատ է արձակվել, ուղարկվել է Կեսարիա, որտեղ ապրել է 8—10 տարի։ 1870-ական թվականներին մեկնել է անորոշ ուղղությամբ ու այլևս չի վերադարձել, առանց իր գաղտնիքը հայտնելու անգամ հարազատ որդուն՝ Արմենակին։*

ՆԱՍՈՒՄԻ *(18-րդ դ.).— Աշուղ։ Նրա հորինած տաղերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանում, 2842 թվահամարը կրող ձեռագրում։*

ՆԱՎԱՍԱՐԴ ԱՆԱՀԻՏ (ԱՎԵՏԻՍՅԱՆ) *(1896—1970).— Կրթական, մշակութային գործիչ, գրող։ Ծնվել է Կահիրեում։ Դուստրն է թարգմանիչ, կրթական գործիչ Կարապետ Նավասար-*

դի։ Փոքր հասակից ծնողների հետ տեղափոխվել է Զմյուռնիա, որտեղ ստացել է կրթությունը՝ նախ տեղի Հռիփսիմյանց վարժարանում, ապա՝ Զմյուռնիայի օրիորդաց ամերիկյան կոլեջում, որն ավարտել է 1916 թ.։ Հաջորդ տարվանից պաշտոնավարել է Զմյուռնիայի Բարաթաշ արվարձանի Վարդանյան վարժարանում որպես ուսուցչուհի։ Զմյուռնիայի հայտնի աղետից հետո (1922) մեկնել է Եգիպտոս։ 1937 թ. ամուսնացել է նկարիչ Օնիկ Ավետիսյանի հետ և այնուհետև գրվել Ավետիսյան։ Ամուսնու հետ նախ տեղափոխվել են Կիպրոս, ապա տարբեր պաղեստիններ։ Դեռևս Զմյուռնիայում ապրելու տարիներից արձակ բանաստեղծություններով, պատմվածքներով և ակնարկներով աշխատակցել է «Արևելյան մամուլին», իսկ Եգիպտոսում Կահիրեի «Արև» օրաթերթին, ստորագրելով Անահիտ Կ. Նավասարդ և Ա. Կ. Ն.։

ՆԱՎԱՍԱՐԴ (ՅԱՆ) ԿԱՐԱՊԵՏ (1860—1940).— Կրթական գործիչ, հրապարակախոս-թարգմանիչ։ Ծնվել է Նիկոմիդիայում (Իզմիթ, Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Զմյուռնիայում, ավարտելուց հետո երկար տարիներ որպես ուսուցիչ աշխատել է Զմյուռնիայի Հռիփսիմյաց վարժարանում։ Հետագայում տեղափոխվել է Եգիպտոս։ Զմյուռնիայում ապրելու տարիներին աշխատակցել է «Արևելյան մամուլ» և «Դաշինք» պարբերականներին, իսկ Եգիպտոսում՝ Կահիրեի «Արև» օրաթերթին և Ալեքսանդրիայի «Փունջ» մանկական հանդեսին, գերազանցապես թարգմանական երկերով։ Երկար տարիներ աշխատել է «Արև» օրաթերթի խմբագրությունում, որպես թարգմանիչ։ Բացի ընթացիկ նյութերից՝ ֆրանսերենից թարգմանել է ծավալուն վեպեր, որոնք լույս են տեսել «Արևմուտ» որպես թերթոն, ինչպես Բալզակի «Հոլտի շուշանը», Ա. Դոդեի «Սաֆոն» և այլն։

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ (ծն. 1946).— Դաշնակահարուհի. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ (1984)։ Ծնվել է Ալավերդիում։ Մանկագիտական նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի երաժշտական դպրոցում։ 1955-ից շարունակել է Երևանում։ Սովորել է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, 1964—1968 թթ.՝ Երևանի պետական կոնսերվատորիայում, 1968—1971 թթ.՝ Մոսկվայի կոնսերվատորիայում։ 1972—1974 թթ. եղել է ասպիրանտ նույն կոնսերվատորիայում։ 1974-ից դասախոսում է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, 1981-ից՝ դոցենտի ասոցիացված։ Ուսանողական տարիներից ունեցել է համերգային ելույթներ, մասնակցել միութենական և արտասահմանյան մրցույթների։ 1966-ին Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունում կայացած Ռ. Շումանի անվան երկրորդ մրցանակաբաշխությանը արժանացել է մրցանակի։ Ապա մրցանակների է արժանացել 1968-ին՝ Լայպցիգում կայացած Բախի անվան մրցույթում, 1972-ին՝ Բրյուսելում կայացած Ելիզավետ թագուհու միջազգային մրցույթում, 1977-ին՝ Սիդնեի (Ավստրալիա) միջազգային մրցույթում և այլն։ 1966-ից սկսած համերգներ է տվել խորհրդային Միությունում և արտասահմանյան բազմաթիվ վայրերում (Ֆրանսիա, Շվեյցարիա, Իտալիա, Բելգիա, Լեհաստան, Բուլղարիա, Գերմանական Դեմոկրատական Հանրապետություն, Հունգարիա, Չեխոսլովակիա, Հունաստան, Լատինական Ամերիկայի մի քանի երկրներ և այլն), կատարելով դասական հեղինակների ստեղծագործությունները։ Ստար մամուլը հաճախ է անդրադարձել նրան և բարձր գնահատել կատարողական արվեստը։

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՏԻԳՐԱՆ (1861—1927).— Բանաստեղծ։ Ծնվել է Վաղարշապատում։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ապա մեկնել է արտասահման, շարունակել ուսումը Ժենևի համալսարանում։ Ավարտելուց հետո վերադարձել է Կովկաս, զբաղվել մանկավարժությամբ, զուգահեռ նվիրվել է հայ ժողովրդական ստեղծագործությունների (հեքիաթներ, ավանդություններ, առակներ և այլն) հավաքմանը։ Դրանք 1882—1903 թթ. պարբերաբար լույս է ընծայել «Հայ ժողովրդական հեքիաթներ» ընդհանուր խորագրով, բաղկացած 12 գրքույկից։ 1903 թ. Թիֆլիսում տպագրել է «Բառգիրք արարատյան բարբառի» աշխատությունը, որը պարունակում է 50 000 բառ և ոճական դարձվածք։ Աշխատակցել է արևելահայ մի շարք պարբերականների։

ՆԱՎԱՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ (1875—1955).— Բանաստեղծ, թարգմանիչ, կրթական գործիչ։ Սրվել է Ռոդոսթոյում (Թեքիրդաղ, Թուրքիա)։ Կրթությունն ստացել է նախ Կ. Պոլսի Մեծ-ուքյան վարժարանում, ապա՝ 1889-ից Արմաշի դպրեվանքում, որտեղ աշակերտել է ականավոր պատմաբան Մաղաքիա Օրմանյանին։ Հետագայում Ալ. Մանթաշյանի կրթաթոշակով շարունակել է ուսումը Փարիզում, սովորել Կոլեժ դը Ֆրանսում և Սորբոնի համալսարանում, հետևելով գրականության և մանկավարժության դասընթացներին։ 1922-ից վերջնականապես ապրել է Փարիզում։ Աշխատակցել է հայկական, ֆրանսիական, ռումինական, ռուսական մի շարք պարբերականներին։ Առանձին գրքերով հրատարակած երկերն են՝ «Եղերերգություններ» (Կ. Պոլիս, 1895), «Արևելյան պոեմներ» (ֆրանսերեն, 1903, Օգդավ Միրբոյի առաջաբանով), Le Soleil (բանաստեղծությունների ժողովածու, Փարիզ, 1927)։ Այդ նույն տարիներին հրատարակել է «Հայ բանաստեղծների Անտոլոգիան» ֆրանսերեն։ Եղել է անդամ ֆրանսիական բանաստեղծների միության, արժանացել շքանշանների։ 1953 թ. լույս է ընծայել «Բանաստեղծություն և նյութ» գիրքը։

ՆԱՏԻՐԻ (1845—1904).— Աշուղ։ Բուն անունը եղել է Նաղարեթ Պոհճալյան։ Ստացել է հայկական նախնական կրթություն։ 10 տարեկանից հորինել է աշուղական երգեր, որոնք կատարվել են իր և այլ երգիչների կողմից։ Կեսարիայի քաղաքապետը, հմայված նրա գեղեցիկ ձայնով, նրան կոչել է Նատիրի, որ նշանակում է անզուգական։ Հետագայում մեկնել է Երուսաղեմ, այնտեղից՝ Պոլիս, շարունակել հորինել բանաստեղծություններ, երգեր, մեծ մասամբ խրատական բովանդակությամբ և թուրքերեն լեզվով։ Նմուշներ տպագրված են Ա. Այպոյանցյանի «Պատմություն հայ Կեսարիո» գրքի Բ. հատորում։ Մի ընդարձակ դաստան էլ գրել է 1895 թ. հայկական ջարդերի մասին։

ՆԱՐ-ԴՈՍ (ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ) (1867—1933).— Գրող։ Ծնվել է Թիֆլիսում, 1867 թ. մարտի 1-ին։ Կրթությունն ստացել է նախ Հավլաբարի հայկական ծխական, ապա քաղաքային երկդասյա դպրոցներում։ Ավարտելուց հետո ուսումը շարունակել է Խոնիի (Քութայիսի նահանգ) ուսուցչական սեմինարիայում, որը թերի թողնելով սովորել է Թիֆլիսի Մելքոնյան արհեստագիտական դպրոցում։ Մի տարուց թողել է նաև այդ դպրոցը, աշխատել «Նոր Դար», հետագայում նաև «Աղբյուր-Տարաղ», «Սուրհանդակ» և այլ թերթերի խմբագրություններում որպես քարտուղար, ոճաբան։ Այդ տարիներից էլ աղատ ժամերին գրել է պատմվածքներ։ 1886 թ. գրել է «Մեղր և ճանճեր» կատակերգությունը, իսկ 1887 թ.՝ «Եղբայր» դրաման, որը մնացել է անավարտ։ Նույն այդ տարիներին վերոհիշյալ պարբերականներում տպագրվել են նրա արձակ երկերից մի քանիսը՝ «Ճշմարիտ բարեկամը» (1886), «Բարերար և որդեգիր» (1887) և այլն։ 1887 թ. լույս է տեսել նրա առաջին վեպը՝ «Քնքուշ լարերը», իսկ հաջորդ տարի՝ «Անանա Սարոյան» վիպակը։ Զուգահեռ գրել է Թիֆլիսի արհեստավորական խավի կյանքը պատկերող պատմվածքներ, որոնք հետագայում ամփոփել է «Մեր թաղը» ժողովածուի մեջ։ 1898 թ. հրատարակել է «Սպանված աղավնին» վիպակը, 1901 թ.՝ «Տանտիրոջս աղջիկը», 1904 թ.՝ «Նեղ օրերից մեկը», իսկ 1911 թ.՝ «Պայքար» վեպը։ 1890-ական թվականներից աշխատել է ընդարձակ մի վեպի վրա, մամուլում տպագրել հատվածներ՝ «Մեծ գործի սկզբում» խորագրով, հետագայում ամբողջացրել է, մշակել և 1912 թ. տպագրել «Մահը» նոր խորագրով։ Խորհրդային իշխանության հաստատումից հետո հիմնականում զբաղվել է ռուսական դասական գրականության թարգմանությամբ։ Թարգմանել է Լ. Տոլստոյի «Կենդանի դիակը», Դոստոևսկու «Ապուշը» և այլն։ Բացի առանձին հրատարակություններից, նրա երկերը քանիցս հրատարակվել են բազմահատորյակներով. 1932—1933 թթ. լույս են տեսել չորս հատորով, 1955 թ. երեք ստվար հատորով, հետագայում դարձյալ մի քանի հատորով։ Նրա բոլոր կարևոր գործերը թարգմանվել են ռուսերեն, ինչպես՝ «Մահը», «Վերջին մոհիկանները», «Պատմվածքներ, վիպակներ» և այլն։

ՆԱՐԻՈՒՆԻ ՇԱՎԱՐՇ (ԱՅՎԱԶՅԱՆ) (1898—1968).— Գրող, հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Արմաշում (Թուրքիա), որտեղ ստացել է նախնական կրթությունը, ապա շարունակել է ուսումը Ադաբազար քաղաքի հայկական կենտրոնական վարժարանում։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո կարճ ժամանակ հաճախել է Կ. Պոլսի բժշկական վարժարանը, հետագայում բժշկական բարձրագույն ուսում է ստացել Փարիզում, ավարտել 1927 թ.։

Գրական ասպարեզ է մտել 1920-ական թվականների վերջերից՝ աշխատակցելով փարիզահայ մամուլին։ 1930 թվականից մինչև մահը Փարիզում հրատարակել է «Հայ բուժ» բժշկական հանդեսը, որոշ ընդմիջումներով։ Մամուլում տպագրել է պատմվածքներ, հեքիաթներ, որոնք ամփոփված են նաև առանձին ժողովածուներում, ինչպես «Հեքիաթներու աշխարհ», «Մեղեդիներ, մեղեդիներ», «Երուսաղեմ, Երուսաղեմ», «Բաներ, բաներ, ի՞նչ բաներ», «Կանաչ բժակով», «Մաղկամատյան» և այլն, բոլորն էլ տպագրված Փարիզում։

ՆԱՐԻՄԱՆ ԽԱՆ (1836—1906).— Պետական գործիչ։ Ծնվել է Թեհրանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Փարիզում, որտեղ սովորել է եվրոպական մի քանի լեզու։ Վերադառնալով Պարսկաստան, վարել է պետական մի շարք պաշտոններ, եղել պարսկական դեսպանի խորհրդական Թուրքիայում, Շահի թիկնապահ-թարգմանը, 1878—1904 թթ. պարսկական դեսպան Վիեննայում։ Ունեցել է գրական-բանասիրական գործունեություն, եվրոպական մամուլում տպագրել է պատմագրական աշխատություններ։

ՆԱՐԻՄԱՆԵԱՆ ԱՆՆԱ (Armena) (ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ԷՆԻԿԱՈՊ).— Գրող։ Ծնվել է Վիեննայում։ Դուստրն է պետական գործիչ Նարիման խանի։ Ստացել է եվրոպական հիմնավոր կրթություն, իմացել մի քանի լեզու, իր պերճախոսությամբ, բազմակողմանի գիտելիքներով մեծ համբավ է ձեռք բերել գիվանագիտական շրջաններում, նրան համարել են «խելքի շտեմարան»։ Armena ծածկանունով ֆրանսիական մամուլում տպագրել է կրթող հոդվածներ հայկական ջարդերի պատասխանատուների դեմ, հատկապես 1904 թ. Սասունի կոտորածներից հետո։ Առանձին գրքերով հրատարակած երկերից իր ժամանակին բարձր է գնահատվել «Considerations»-ը, որ լույս է տեսել Ֆլորենցիայում և եվրոպական մամուլում արժանացել բացառիկ գնահատման։ Անգլիայի ականավոր պետական գործիչ Լորդ Կլեմանսոն այն համարել է իր սեղանի գիրքը, ֆրանսիացի ականավոր մի հրապարակախոս էլ գրել է, թե ինքը չգիտի մի այլ կին, որ այդքան քաջատեղյակ լինի պատմության և զարմանում է, որ այդ կինը արևելքցի է։

ՆԱՐԻՆՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ (1830—1906).— Դերասան, թարգմանիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է տարրական կրթությունը։ 1850-ական թվականների կեսերից մասնակցել է թատրոնի թատրոնների ներկայացումներին, իսկ 1861 թվականից խաղացել է հայ առաջին պրոֆեսիոնալ թատերախմբում՝ «Արևելյան թատրոնում»։ Երկու թատերաշրջան եղել է այդ խմբի աշխի ընկնող ուժերից մեկը, փայլելով մասնավորապես կատակերգակ դերերում։ 1860-ական թվականների վերջերից թողել է բեմական ասպարեզը, զբաղվել առևտրով։ Ունեցել է գրական, թարգմանչական գործունեություն։ Հոդվածներ է տպագրել ժամանակի հայկական և հայատառ թուրքերեն մամուլում։ Ֆրանսերենից և անգլերենից թարգմանել է պիեսներ, որոնք ներկայացվել են հայկական թատերախմբերի կողմից։ 1858 թ. լույս է ընծայել «Հոնք ուղղելու փոխարեն աչքը հանել» կատակերգության թարգմանությունը, կատարված անգլերենից (հայատառ թուրքերեն)։

ՆԱՐԻՆՋ ՕՂԱՆ (18-րդ դ.).— Աշուղ։ Նրանից մեզ հասել է մի երգ, որը տպագրվել է Գ. Ախվերդյանի «Հայ աշուղներ»-ի Բ. հատորում (1903)։

ՆԱՐՈՅԱՆ ՄԵՍՐՈՊ (1875—1944).— Հոգևորական, մշակութային գործիչ։ Ծնվել է Տարոնի Հարգերդ գյուղում։ Կրթությունն ստացել է Մշո ս. Կարապետ վանքի ժառանգավորաց վարժարանում, 1895 թ., ապա սովորել է Արմաշի դպրեվանքում, ավարտել 1899 թ.։ Ընդունելով հոգևորական կոչում, վարել է կրթական մի շարք պաշտոններ, 1904—1909 թթ. եղել է Արմաշի դպրեվանքի տեսուչ և փիլիսոփայության, հոգեբանության, կրոնի ուսուցիչ։ 1927 թ. ընտրվել է Կ. Պոլսի պատրիարք։ 1900-ական թվականների սկզբներից պոլսահայ մամուլում («Բյուզանդիոն», «Լույս», Թեոդիկի «Ամենուն տարեցույցը» և այլն) տպագրել է գրական, բանասիրական երկեր, քննադատական հոդվածներ։ Նրա այդ հոդվածները եմամեու լույս են տեսել Կ. Պոլսում, «Նշխարներ» խորագրով։ Երուսաղեմում էլ լույս է տեսել նրա «Նշանավոր դեպքեր հայկական անցյալեն» գիրքը։

ՆԱՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ (1915—1986).— Բանասեր, թարգմանիչ։ Ծնվել է Թբիլիսում։ Փոքր հասակից նրանց ընտանիքը տեղափոխվել է Լենինական, որտեղ ստացել է միջնակարգ և բարձրագույն կրթություն։ 1940 թ. ավարտել է Լենինականի մանկավարժական ինստիտուտը։ Երկար տարիներ աշխատել է Լենինականի «Բանվոր» թերթի խմբագրությունում որպես թարգմանիչ և սրբագրիչ։ 1955 թ. տեղափոխվել է Երևան, տասը տարի որպես թարգմանիչ աշխատել Հայաստանի հեռագրական գործակալությունում, ապա ԳԱ արվեստի ինստիտուտում որպես գիտաշխատող։ 1965-ին պաշտպանել է դիսերտացիա, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան։ Մամուլում տպագրել է բանասիրական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են. «Շուշանիկ Մատակյան» (Երևան, 1975), «Սունդուկյան և Սայաթ-Նովա» (1976)։ Զբաղվել է գեղարվեստական գրականությամբ։ 1945 թ. հրատարակել է «Զկնորսի տան», հաջորդ տարի՝ «Կոմիտաս» պոեմները։ Առանձին գրքերով լույս տեսած թարգմանություններն են՝ Կ. Սիմոնով՝ «Օրեր և գիշերներ» (1949), Մ. Շահինյան՝ «Առաջին համառուսականը» (1970), Ֆ. Մուհամմադին՝ «Ճանապարհորդություն դեպի այն աշխարհ կամ մեծ հաշի պատմություն» (1973) և այլն։

ՆԱՖԻԼՅԱՆ ԼԵՎՈՆ (1877—1937).—Ճարտարապետ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Հայկական նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, մասնագիտականը՝ Փարիզի գեղարվեստների դպրոցում, ավարտել է 1905 թ. ճարտարապետի վկայականով։ Հիմնականում ապրել և ստեղծագործել է Եգիպտոսում։ Նրա նախագծերով Եգիպտոսում կառուցվել են բազմաթիվ շենքեր, իշխանական դղյակներ, ապարանքներ, ինչպես՝ Բրրահիմ փաշայի ամառանոցը, իշխանուհի Մալիհայի ապարանքը և այլն։ Կ. Պոլսում էլ նրա նախագծերով կառուցվել են հանրային և մասնավոր շենքեր, ինչպես Շիրքեթի խայրիե ազգային ընկերության գրասենյակը, Միլլի ապահովագրական ընկերության պաշտոնատեղին։ Նրա նախագծով է կառուցվել Կահիրեի ս. Գեորգ նորակառույց եկեղեցին հայ դասական ճարտարապետության ոճով։

ՆԵՆՋԱՆ ՋԵՆՈՒ (1810—1866).— Երաժիշտ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Որդին է Հայտնի երաժշտագետ Համբարձում Լիմոնճյանի։ Մասնագիտական կրթությունն ստացել է հորից։ Եղել է վարպետ սրնդահար։ Նվագել է պետական բարձրաստիճան պաշտոնյաների, հայ ամիրաների ընտանեկան խնջույքներում։ Ամիրաները ցանկացել են, որ նա մասնակցի նաև եկեղեցական արարողություններին, սակայն ժամանակի պատրիարքը արգելել և համարել է սրբապղծություն։ Մի քանի տարի նվագել է Սուլթան Մեջիդի պալատում, եղել է նրա սիրած երաժիշտը, 1863 թ. մեկնել է Եգիպտոս։ Նվագել Խեդիվի պալատում։

ՆԵՇՏԱՐ (1843 — ?).— Աշուղ։ Ծնվել է Դարալագյազի Փաշալու գյուղում։ Բուն անունը ազգանունը եղել է Մանասեր Ավետիսյան։ Աշուղական արվեստը սովորել է Ֆղարա Թոմասի մոտ։ Հորինել է հայերեն և ադրբեջաներեն սիրային, կենցաղային և խրատական բազմաթիվ երգեր, որոնք կատարել է սազի նվագակցությամբ։ Շրջագայել է բազմաթիվ գյուղեր ու քաղաքներ, ունեցել լայն ժողովրդականություն։ Նրա երգերից նմուշներ տպագրվել են «Բազմավեպի» 1857 թ. 11—12-րդ համարում։

ՆԵՊԱԹԻ (18—19-րդ դ.).— Աշուղ։ Նրա երգերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № 6438 ձեռագրում։

ՆԵՍԵՄԻ (18—19-րդ դ.).— Աշուղ։ Նրա երգերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № 9195 ձեռագրում։

ՆԵՎՆԻ (18—19-րդ դ.).— Աշուղ։ Նրա երգերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № 6438 ձեռագրում։

ՆԵՎՇԵՀԻՐՅԱՆ ՋՈՒԼԻԱ.— Երաժշտագետ, նկարիչ, քանդակագործ։ Ծնվել է Ամերիկայում, որտեղ ստացել է կրթությունը։ Սկզբում տարվել է երաժշտությամբ, հետագայում հետևել նաև նկարչության և քանդակագործության։ Որպես երաժշտագետ դասավանդել է Դետրոյտի Մրսի կոլեջում, ապա՝ Կանադայի Օթվիլ քաղաքում հիմնել է երաժշտական ստուդիա, միաժամանակ շարունակել ուսումը Տորոնտոյի համալսարանում, ավարտել երաժշտության մագիստրոսի աստիճանով։ Ստեղծել է գեղանկարչական և քանդակագործական բազմաթիվ գործեր, որոնցով մասնակցել է տարբեր ցուցահանդեսների։ Քանդակներից մի քանիսը զարդարում են Օթվիլի զրոսայգիները։ Դրանցից լավագույնն է համարվում «Անդրոմաքե» արձանը։

ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ *(ծն. 1935).*— Քանդակագործ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստական ուսումնարանում։ 1960 թվականից շարունակել է ուսումը Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի քանդակի բաժինն ավարտել է 1965-ին և աշխատել նույն ինստիտուտում, նախ որպես լաբորանտ, ապա՝ դասախոս։ 1962-ից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների, 1973-ին՝ Իտալիայում կայացած կիրառական արվեստի ցուցահանդեսին և արժանացել է դիպլոմի։ Ստեղծել է խեցեգործական բազմաթիվ աշխատանքներ։

ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ *(ծն. 1914).*— Պատմաբան. պատմական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Ղարաքիլիսայի (այժմ՝ Կիրովական) Հաջի դարա գյուղում (այժմ՝ Լեռնապատ)։ 1930—1933 թթ. սովորել է Կիրովականի մանկավարժական տեխնիկումում։ Աշխատել է որպես ուսուցիչ։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որտեղ սովորել է 1938—1941 թթ., ապա ծառայել խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը և ավարտել 1946-ին, իսկ 1949-ին համալսարանի ասպիրանտուրան։ Նույն տարվանից դասախոսել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում։ 1950-ից աշխատել է ԽՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալում, մինչև 1961 որպես գիտաշխատող, այնուհետև՝ դիրեկտորի տեղակալ, շարունակելով դասախոսական աշխատանքը պետական համալսարանում։ 1950 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա, 1968-ին՝ դոկտորական։ Մամուլում և գիտական ժողովածուներում տպագրել է պատմագրական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած առավել ծավալուն աշխատություններն են՝ «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում» (1921—1925) (Երևան, 1956), «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման առաջին տարիներին» (1926—1929) (Երևան, 1971)։ Գրել է «Ակնարկներ Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության» գրքի 2-րդ գլուխը (1967), «Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պատմության» կոլեկտիվ աշխատության 1-ին և 2-րդ գրքերի համար ընդարձակ հատվածներ։ Հրատարակել է մի քանի բրոշյուր հայ ժողովրդի պատմության խորհրդային շրջանի վերաբերյալ։

ՆԵՐՇԱՊՈՒՀ ԳԱԲՐԻԵԼ.— Գրող, կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Երկար տարիներ որպես ուսուցիչ աշխատել է Օրթագյուղ թաղամասի թարգմանչաց վարժարանում, որտեղ նրան աշակերտել են Գրիգոր Զոհրապը, Ա. Արփիարյանը և ուրիշներ։ 1886 թ. Կ. Պոլսի Մարդի գյուղ թաղամասում բաց է արել Ներշապուհյան վարժարանը՝ դիշերօթիկ, ցերեկային և կիրակնօրյա բաժիններով, որը գործել է ավելի քան 10 տարի։ Գրել է բանաստեղծություններ, որոնք լույս են տեսել երկու տարբեր ժողովածուներով՝ «Տետր Ա.— Բերկրանք և վիշտ» (Կ. Պոլիս, 1881), «Տետր Բ.— Գարնան շողեր, աշնան ցողեր» (1894)։ Ֆրանսերենից կատարել է թարգմանություններ, որոնցից Ա. Դրպեի «Ամուսնական առողջապահությունը» արժանացել է երեք հրատարակության, 1880-ական թվականներին։

ՆԵՐՍԵՍ *(13—14-րդ դ.).*— Ծաղկող։ Ընդօրինակել, նկարազարդել է մի Ճաշոց, որը պահվում է Երևանի Մատենադարանի № 940 ձեռագրում։

ՆԵՐՍԵՍ *(15-րդ դ.).*— Մատենագիր։ Գրել է «Վկայաբանութիւն Յովհաննէս Խորասանցւոյ» երկը։

ՆԵՐՍԵՍ *(17-րդ դ.).*— Տաղերգու։ Նրա «Նորաստեղծեալ Բանն յանէից» տաղը պահվում է Երևանի Մատենադարանում, № 8540 ձեռագրում։

ՆԵՐՍԵՍ *(18-րդ դ.).*— Քարգործ վարպետ։ 1745 թ. նրա քանդակած մի խաչքարը գտնվում է Կամոյի շրջանի Նորաղուղ գյուղի գերեզմանատանը։

ՆԵՐՍԵՍ *(18-րդ դ.).*— Մատենագիր, հոգևորական գործիչ։ Եղել է Աղվանքի կաթողիկոս։ Գրել է «Գիաւաղանագիրք կաթողիկոսաց Ազուանից» աշխատությունը։

ՆԵՐՍԵՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ *(15-րդ դ.).*— Ծաղկող։ 1474 թ. Խիզանում նկարազարդել է մի Ավետարան, որը պահվում է Երևանի Մատենադարանում, 4779 թվահամարով։

ՆԵՐՍԵՍ ԱՂԹԱՄԱՐՑԻ *(18-րդ դ.).*— Երաժիշտ, կրթական գործիչ։ Եղել է Աղթամարա վանքի միաբան։ 1741 թ. ուխտի է գնացել Երուսաղեմ, Որպես երաժիշտ Աղթամարում ունեցել է կրթական գործունեություն։ Գրել է մի աշխատություն՝ Աղթամարա վանքի կաթողիկոսների մասին։

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ *(1770—1857).*— Հոգևորական, մշակութային, քաղաքական գործիչ։ Ծնվել է Աշտարակում։ Կրթությունն ստացել է Էջմիածնի ժառանգավորաց վարժարանում, որն ավարտելուց հետո վարել է կրթական, հոգևորական պաշտոններ։ 1814 թ. նշանակվել է Վրաստանի թեմի առաջնորդ և ունեցել է մշակութային նկատելի գործունեություն։ 1815 թ. Թիֆլիսում հիմնել է հայկական դպրոց, որտեղ ուսուցիչ է եղել Պողոս վարդապետ Ղարադաղցին։ 1823 թ. հիմնել է Թիֆլիսի հայանի Ներսիսյան դպրոցը, որն իր գոյության հարյուր տարիների ընթացքում մեծ դեր է կատարել արևելահայերի մտավոր զարգացման գործում։ Վայելել ժողովրդականություն է ձեռք բերել 1828 թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ։ Համոզված, որ հայ ժողովրդի փրկությունը կապված է ռուսական զենքի հաղթանակի հետ, հորդոր է կարդացել հայ ժողովրդին անձնազոհ մասնակցություն ունենալ պարսիկների դեմ մղվող կռիվներին։ Ինքն էլ, հայ կամավորների գլուխն անցած, անձամբ մասնակցել է կռիվներին։ Հաղթական պատերազմից հետո, երբ կազմվել է հայկական մարզը, կազմակերպել է մեծ ներգաղթ Պարսկաստանից և Թուրքիայից, նպատակ ունենալով փրկել այդ երկրներում տարբեր հայերին՝ բնաջնջումից։ Մեծ թվով հայեր գաղթել են Պարսկաստանից, մոտ 90 000 հայեր էլ Կարսո նահանգից տեղավորվել են հիմնականում Ախալցխայի և Ախալքալաքի շրջաններում 1828—1829 թթ.։ Ապա նշանակվել է Բեսարաբիայի թեմի առաջնորդ, իսկ 1843-ից մինչև մահը եղել է հայոց կաթողիկոս։ Նրա կաթողիկոսության տարիներին Էջմիածնում կատարվել են մի շարք բարենորոգումներ։ Նա է սկսել տվել Էջմիածնի անտառը, շինել Էջմիածնի լիճը, բարեկարգել է վանքը, զարկ տվել մասավոր կյանքին։ Նրա մասին ստեղծվել է մեծ գրականություն։

ՆԵՐՍԵՍ ԲԱՂԻՇԵՑԻ *(17-րդ դ.).*— Կրթական գործիչ, տաղերգու։ Սովորել է Ներսես Մատաղի մոտ։ Ունեցել է կրթական գործունեություն։ Նրա աշակերտներից է Ներսես Ամկեցին։ Եղել է նաև տաղերգու։ Նրանից մեզ հասած տաղերից մեկը գրված է 1618 թ.։ Պահվում է Վենետիկի Մխիթարյանների վանքում։

ՆԵՐՍԵՍ ԲԱՆԱՍԵՐ *(15-րդ դ.).*— Տաղերգու։ Նրա տաղերից մեկը, նվիրված Հովհաննես եպիսկոպոսի նահատակությանը, տպագրված է Փիրզալեմյանի «Նոտաբք հայկականք» ժողովածուում։

ՆԵՐՍԵՍ ԲՈՒՆԵՑԻ *(17-րդ դ.).*— Մանրանկարիչ։ Ապրել է 16-րդ դարի վերջերին և 17-րդ դարի սկզբներին։ Նկարազարդել է մի քանի ձեռագիր, որոնցից չորսը Ավետարաններ են և այժմ պահվում են Երևանի Մատենադարանում։

ՆԵՐՍԵՍ ԳԱԶՈՐԵՑԻ *(13-րդ դ.).*— Կրթական գործիչ։ Ծնվել է Մուշում, որի համար կոչվել է նաև Մշեցի։ Կրթությունն ստացել է Մշո Առաքելոց կամ Ղազարու վանքում, ապա՝ Գյաձորի համալսարանում, որտեղ ունեցել է կրթական գործունեություն։ Հմուտ է եղել հունարեն և լատիներեն լեզուներին։ Աճեցրել է բազմաթիվ աշակերտներ, որոնցից են Եսայի Նչեցին, Ստեփանոս Օրբելյանը, Հովհաննես Արճիշեցին, Մխիթար Սասնեցին և ուրիշներ։ Մեռել է 1284 թ.։

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ *(15-րդ դ.).*— Մանրանկարիչ։ 1474 թ. նկարազարդել է մի Ավետարան, որն այժմ պահվում է Երևանի Մատենադարանում, 4779 թվահամարի տակ։

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ *(16—17-րդ դդ.).*— Տաղերգու։ Նրա «Աւ տէր Կարապետ բարեմասպետ» տաղը պահվում է Երևանի Մատենադարանում, 519 թվահամարը կրող ձեռագրում։

ՆԵՐՍԵՍ ԵՐԵՑ *(14—15-րդ դդ.).*— Ծաղկող։ 1413—1414 թթ. Խիզանում նկարազարդել է Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը», որի ձեռագիրը պահվում է Երևանի Մատենադարանում, 2063 թվահամարի տակ։

ՆԵՐՍԵՍ ԵՐԵՑ *(16-րդ դ.).*— Ծաղկող։ 1535 թ. Կեսարիայի շրջանի Իսպիլյա գյուղում ընդօրինակել, նկարազարդել է մի «Մաշտոց ձեռաց», որի ձեռագիրը պահվում է Երևանի Մատենադարանում, 2570 թվահամարի տակ։

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ *(1153—1198).*— Մատենագիր, բանաստեղծ, երաժիշտ, կրթական գործիչ։ Ծնվել է Կիլիկիայի Լամբրոն ամրոցում։ Կրթությունն ստացել է Հռոմկլայի հայրապետանոցի դպրոցում, Ներսես Շնորհալու հովանավորությամբ և օժանդակությամբ հմտացել է բազմակողմանի գիտելիքների, սովորել լեզուներ՝ հունարեն, լատիներեն, ասորերեն, եբրայերեն, զպտիերեն։ Նրան քահանա է ձեռնադրել Ներսես Շնորհալին, աշխարհական Սմբատ անունն էլ փոխել Ներսեսի։ 1175 թ. կարգվել է Տարսոն նահանգի արքեպիսկոպոս։ Գործել է Լևոն Բ թագավորի արքունիքում որպես պալատական խորհրդատու և թարգմանիչ։ Եղել է նշանավոր հռետոր, համեմատվել Դեմոստենեսի և Կիկերոնի հետ։ Գրիգոր Սկևռացին գրել է, թե նա «աղբյուրի նման բխում էր, գետի նման հոսում, ծովի նման ծավալվում»։ Գործել է Տարսոնում, Լամբրոնում, Հռոմկլայում, Սկևռայում, ամենուր զարկ տվել կրթական, գրչագրական աշխատանքի։ Ստեղծել է դպրոցներ, գրադարաններ, կառուցել վանքեր, հավաքել կամ ընդօրինակել տվել ձեռագրեր, որոնցից է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի մեզ հասած հնագույն ընդօրինակումը, կատարված 1173-ին։ Պահվում է Երևանի Մատենադարանում։ Գրել է մեկնություններ, քարոզներ, ճառեր, նամակներ, շարականներ, հորինել դրանց եղանակները, ներբողներ։ Դրանցից են Հռոմկլայի համագումար ժողովում 1179-ին արտասանած «Ատենաբանութիւնը», որը տպագրվել է 1749-ին, թարգմանվել գերմաներեն, ռուսերեն, «Թուղթ առ Լևոն արքայն» և այլն։ Ամենաընդարձակ և արժեքավոր գործերից է՝ «Գովեստ ներբողական պատմագրական բանիւ յաղագս վարուց մեծի հայրապետին տեառն Ներսէսի Կլայեցւոյ հայոց կաթողիկոսի» պոեմը, բաղկացած 937 տողից, որտեղ նկարագրվում են Ներսես Շնորհալու գործերը։ Լատիներենից կատարել է թարգմանություններ, ինչպես «Գիրք կարգաց լատին եկեղեցւոյ», «Օրհնութիւն թագաւորի», «Համառոտ ժողովումն օրինաց» և այլն։ Նրա «Մեկնութիւն խորհրդոյ պատարագին» երկը թարգմանվել է լատիներեն, ֆրանսերեն, անգլերեն, հունարեն։ Հանկարծամահ է եղել քարոզի պահին։

ՆԵՐՍԵՍ ԾԱՂԿՈՂ *(15-րդ դ.).*— Մանրանկարիչ։ Ապրել և ստեղծագործել է 15-րդ դարի վերջերին։ 1475 թ. նկարազարդել է Խիզանում արտագրված մի Ավետարան, որն այժմ պահվում է Երևանի Մատենադարանում։

ՆԵՐՍԵՍ ԾԱՂԿՈՂ *(17-րդ դ.).*— Մանրանկարիչ։ Նրա նկարազարդած մի Ավետարանը պահվում է Երևանի Մատենադարանում, 4683 թվահամարի տակ։

ՆԵՍԵՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ (ԱՇՏԱՐԱԿԵՑԻ) *(6-րդ դ.).*— Հոգևորական գործիչ, մատենագիր։ Ծնվել է Բագրևանդի գավառի Աշտարակ գյուղում։ 548—557 թթ. եղել է հայոց կաթողիկոս։ Նա է գումարել Դվինի 551 և 554 թթ. կրոնական ժողովները, օտարամուտ աղդեցությունների, այսինքն նեստորականների դեմ պայքարելու համար։ Գրել է «Թուղթ հաւատոյ» խորագրով մի երկ՝ Մուշեղ Բագրատունու խնդրանքով։

ՆԵՐՍԵՍ ԿԱՋՄՈՂ *(18-րդ դ.).*— Քարգործ արվեստագետ։ Ապրել է 18-րդ դարի կեսերին։ 1745 թ. քանդակել է մի խաչքար, որը կանգնեցված է Նորագույլ գյուղի գերեզմանատանը։

ՆԵՐՍԵՍ ԿԱՏԱՅԵՑԻ *(15-րդ դ.).*— Տաղերգու։ Նրա տաղերից մի քանիսը պահվում են Երևանի Մատենադարանում, 1990, 3081, 3504 թվահամարները կրող ձեռագրերում։

ՆԵՐՍԵՍ ՄԱՏԱՂ *(16-րդ դ.).*— Տաղերգու։ Կրթությունն ստացել է Գրիգոր Արճիշեցու (Զորթանի) մոտ։ Գրել է մի շարք գանձեր, տաղեր, որոնք պահվում են տարբեր ձեռագրերում։ Մեռել է 1530 թ.։

ՆԵՐՍԵՍ ՄԵԾ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ (ՊԱՐԹԵՎ) *(4-րդ դար).*— Հոգևորական, կրթական գործիչ։ Փոքր հասակից ուղարկվել է Կեսարիա, որտեղ ստացել է կրթություն, սովորել ասորերեն, հունարեն։ 350 թ. վերադարձել է Հայաստան, դարձել Արշակ Բ. թագավորի սենեկապետը։ Հաջորդ տարի ուղարկվել է Բյուզանդիոն՝ Հայաստան բերելու Աբլաբիոս իշխանի դուստր Օլիմպիադա իշխանուհուն, որը ամուսնացել է Արշակ Բ-ի հետ, դարձել հայոց թագուհի։ 353—373 թթ. եղել է հայոց կաթողիկոս։ Նա է գումարել Աշտիշատի հայտնի ժողովը 354 թ., որի նպատակն էր բարեկարգել հայ եկեղեցական գործերը։ Ունեցել է կրթական, մշակութային բարենորոգչական գործունեություն։

Հիմնել է հույն և ասորի լեզուներով գործող դպրոցներ, աղքատանոցներ, որբանոցներ, հյուրանոցներ, հիվանդանոցներ, վանքեր։ 364 թ. Արշակ թագավորը նրան ուղարկել է Բյուզանդիոն՝ որպես պատգամավոր Վասիլ կայսեր մոտ։ Արշակ Բ-ի հետ ունենալով տարակարծություններ, հեռացել է արքունիքից, սակայն Պապ թագավորի օրով նորից նշանակվել է իր պաշտոնին։ Փորձել է քաղաքական իշխանությունը ենթարկել եկեղեցուն, որի համար էլ վրեժխնդիր Պապը թունավորել է նրան՝ աղատվելու համար ուժեղ հակառակորդից։ Թաղվել է Թիլ ավանում։ Նրա շուրջ ստեղծվել է պատմական և գեղարվեստական մեծ գրականություն։

ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՑԻ (ԲԵՂԱՌ) *(1560—1625).*— Կրթական գործիչ, տաղերգու։ Ծնվել է Մոկաց աշխարհի Ակնջավա գյուղում։ Կրթությունն ստացել է Ամրդոլու վանքում, աշակերտել Բարսեղ Բաղիշեցուն։ Հետագայում Սյունյաց աշխարհի Մեծ անապատ վանքում ստեղծել է իր դպրոցը, դարձել «Իմաստասիրական ուսմանց», այսինքն՝ փիլիսոփայական գիտությունների դասախոս։ Այդ դպրոցի փակումից հետո մեկնել է Վասպուրական, հիմնել Լիմ անապատի վանքը՝ 1622 թ.։ Այնտեղ նա ունեցել է մոտ 60 աշակերտ, որոնցից աչքի են ընկել Մելիքսեթ Վժանեցին և Ստեփանոս Շատախեցին։ Գրել է մի շարք տաղեր, որոնցից են՝ «Ներբողեան վիպասանական ի փոփոխումն Աստուածածնին կուսին...», «Ներբողեան գովեստից շորեցունց տրանցն», «Ներբող յաղագս շինման և հաստատութեան Լմայ ծովապատ անապատին ս. Գէորգայ», «Պատմութիւն սաման Երուսաղեմի ի Սալահադինայ», «Տաղ վարդավառին», «Տաղ ազնիւ և գեղեցիկ երկնուց և գետնուց ասացեալ» և այլն։ Գրել է փիլիսոփայական երկեր։ Կոչվել է նաև Բեղլու՝ թավ բեղեր ունենալու պատճառով։ Նրա երկերից նմուշներ տպագրվել են Ալիշանի «Հայապատում», «Հուշիկ հայրենեաց», «Միսկական» գրքերում։

ՆԵՐՍԵՍ ՄՈՒՐԱԲԵՐԴՑԻ (ՄԱՆՈՒԿԵՆՑ) *(1580—1650).*— Մատենագիր։ Ծնվել է Վանա լճի ափին գտնվող Մոխրաբերդ գյուղում։ Կրթությունն ստացել է Կարապետ Բաղիշեցու մոտ։ Երկար տարիներ գործել է Բաղեշում, դրա համար կոչվել է նաև Բաղիշեցի։ Ունեցել է կրթական, մատենագրական գործունեություն։ Սովորեցրել է մի շարք աշակերտների, որոնցից հիշատակվում է Հայրապետ Ղուլթիկեցին։ Գրել է «Ողբ զղջական, խօսք ընդ Աստուծոյ», «Տաղ ի Ներսէս վարդապետէ» և այլ տաղեր, ինչպես և 1604—1607 թթ. «Տարեգրութիւնը», որտեղ նկարագրվում է դեպի Պարսկաստան հայերի բռնագաղթի պատմությունը։ Հրատարակել է Հ. Ակինյանը «Հանդես ամսօրյայի» 1951 թ. օգոստոս—հոկտեմբեր համարներում։

ՆԵՐՍԵՍ ՇԻՆՈՂ *(7-րդ դ.).*— Հոգևորական, մշակութային գործիչ։ Ծնվել է Տայոց աշխարհի Իշխան գյուղում։ Փոքր հասակից ապրել է Բյուզանդիոնում, որտեղ ստացել է կրթություն, հմտացել հունարենին և հունական մատենագրությանը։ Նախ ծառայել է որպես զինվորական, հետագայում ընդունել է հոգևորական կոչում, վարել կրոնական պաշտոններ։ 641—661 թթ. եղել է հայոց կաթողիկոս, ծավալել շինարարական մեծ աշխատանք։ Նրա կաթողիկոսության շրջանում և անմիջական նախաձեռնությամբ են կառուցվել Դվինի ս. Սարգիս, Արտաշատի ս. Գրիգոր, Վաղարշապատի ս. Աստվածածին եկեղեցիները ու մի քանի վանքեր։ Նրա ամենամեծ գործն է համարվում հայ ճարտարապետական արվեստի փառքը հանդիսացող Զվարթնոցի տաճարը, որի կառուցումն սկսվել է 643 թ., ավարտվել 652 թ., այսինքն ընդամենը 9 տարի։ Այս շինարարությունների շնորհիվ կոչվել է Ներսես Շինող։ Նրա օրոք են գումարվել Դվինի 5-րդ (645) և 6-րդ (648) ժողովները, որոնցում մերժվել են Քաղկեդոնի ժողովի որոշումները և պաշտպանվել հայ եկեղեցու ինքնիշխան իրավունքները։ Մեռել է 661 թ.։

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ *(կամ ԿԼԱՅԵՑԻ) (1098—1173).*— Բանաստեղծ, երաժիշտ։ Ծնվել է Կիլիկիայի Ծովք ամրոցում, այդ բերդի տեր իշխան Ապիրատ Պահլավունու ընտանիքում։ Կրթությունն ստացել է Սև լեռան վանքերում։ 1139 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս։ 1166 թ. ընտրվել է կաթողիկոս։ Մինչև կյանքի վերջը ապրել և ստեղծագործել է Հռոմկլա ամրոցում, դրա համար էլ կոչվել է նաև Կլայեցի։ Ունեցել է գրական, մշակութային հսկա գործունեություն։ Թողել է հարուստ ժառանգություն, որի մեջ բացառիկ տեղ են բռնում նրա շափածո երկերը՝ «Առավոտ լուսո, արեգակն արդարոյ»,

«Նորահրաշ պսակաւոր» և այլն, ինչպես և «Հիսուս Որդի» վիպասանական ողբերգութիւնը, որը գրել է 1152 թ.։ Գյուխգործոցն է «Ողբ Եդեսիոյ» պոեմը։ Գրել է հանելուկներ, կրոնաբարոյախոսական երկեր, որոնցից պատմագրական նկատելի արժեք է ներկայացնում «Թուղթ ընդհանրականը»։ Եղել է ականավոր երաժիշտ, երաժշտություն է ուսուցանել Հռոմկլայի վանքում, գրել է երգեր, վերանայել, խմբագրել է երաժշտական մատյաններ, այդ թվում հայանի «Շարակնոցը» և «Պատարագամատոյցը»։ Նրա երկերից նմուշներ հրատարակվել են դեռևս 16-րդ դարում։ 1724 թ. Կ. Պոլսում տպագրվել են հանելուկները, 1828 թ. Փարիզում՝ «Ողբ Եդեսիոյ», 1830-ին՝ Վենետիկում՝ «Բանք շափաւ» ժողովածուն, 1865-ին էջմիածնում՝ «Թուղթ ընդհանրականը»։ Հետագայում տարբեր վայրերում տպագրվել են զանազան գործեր, իսկ 1973 թ. Երևանում կատարվել է «Ողբ Եդեսիոյ» պոեմի գիտական հրատարակությունը, աշխատասիրությամբ Մանիկ Մկրտչյանի։ Նրա երաժշտական ժառանգությունը հատուկ ուսումնասիրության նյութ է դարձրել Ն. Թահմիզյանը։

ՆԵՐՍԵՍ ՊԱՂԱՆ (կամ ՊԱԼԻՆՆՑ) (14-րդ դ.).— Մատենագիր։ Ծնվել է Սիսում (Կիլիկիա)։ Ստացել է կրոնական դաստիարակություն։ 1336 թ. եղել է Ուրմիայի եպիսկոպոս, հարել է ունիթորական շարժման, պայքարել հայ եկեղեցու դեմ։ Ունեցել է գրական-մշակութային գործունեություն։ Թարգմանել է Ֆրա Մարթինի «Հռոմի կայսերաց և պապերի ժամանակագրություն» (1348)։ Ըստ բանաստեղծ Վ. Թորգոմյանի՝ գրել է Կիլիկիայի ջերմուկների պատմությունը, որը մեզ չի հասել։ Մեզ հասած երկերից են՝ «Իշխանութիւն և թագաւորութիւն հայոց» և «Շար հայրապետացն հայոց»։

ՆԵՐՍԵՍ ՊԱՏԱՆԻ (14—15-րդ դդ.).— Մաղկոզ։ 1400—1413 թթ. Խառաբաստա վանքում ընդօրինակել և ծաղկել է մի ժողովածու, որը պահվում է Երևանի Մատենադարանում. 5435 թվահամարի տակ։

ՆԵՐՍԵՍ ՊԱՏՐԻԿ (6-րդ դ.).— Զինվորական գործիչ։ Եղել է Հուստինիանոս կայսեր զորավարներից։ Վարել է մի շարք պատերազմներ, նվաճել է Իտալիան, վերջ տվել Գոթերի պետությանը (552)։ Հուստինիանոս կայսեր մահից հետո Բյուզանդական արքունիքում նրա շուրջ ստեղծվել է անընդատ մթնոլորտ, որի պատճառով անցել է Լանգոբարդացիների կողմը, օժանդակել նրանց՝ Իտալիայի դեմ մղվող կռվում (571)։ Մեռել է Հռոմում 572 թ.։

ՆԵՐՍԵՍ ՍԱՄՍՈՆԵՑԻ (15-րդ դ.).— Տաղերգու։ Նրա «Ողբ վասն Տէր Աստուծոյ» տաղը պահվում է Երևանի Մատենադարանում, 9597 թվահամարը կրող ձեռագրում։

ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ (ՂԱՐԻԻ) (15—16-րդ դդ.).— Տաղերգու։ Նրա գրած տաղերից երկուսը՝ «Ինձ ճ հայոց թուին» և «Ղարիբն յոգեմ» պահվում են Երևանի Մատենադարանում, 7709, 8605, 7709 թվահամարները կրող ձեռագրերում։

ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ (15-րդ դ.).— Թարգմանիչ։ Եղել է Ֆլորենտիայի կաթոլիկական ժողովի պատգամավորների թարգմանը։ Մասնակցել է ժողովի բոլոր նիստերին և նրա վճիռները լատիներենից թարգմանել է հայերեն։

ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԵՏ (16-րդ դ.).— Քարգործ վարպետ։ 1576 թ. պատրաստել է մի տապանաքար, որի վրա քանդակել է կենցաղային մի պատկեր՝ մարդկային ֆիգուրներով։ Գտնվում է Մարտունու շրջանի Վերին Դարանլուխ գյուղի գերեզմանատեղը։

ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ (12-րդ դ.).— Մատենագիր։ Ծնվել է Կիլիկիայում. որդին է Ներսես Լամբրոնացու բրոջ Մարիամի։ Կրթություն ստացել է Ներսես Լամբրոնացու և 1198 թվականից՝ Գրիգոր Սկևռացու մոտ։ Գրել է մի ներբողական Գրիգոր Սկևռացու, մի երկ էլ՝ Լամբրոնացու մասին։

ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ (13—14-րդ դդ.).— Մաղկոզ։ 1304 թ. Սիսում (Կիլիկիա) նկարազարդել է մի Ավետարան, որը պահվում է Երևանի Մատենադարանում, 6253 թվահամարով։

ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ (1279—1301).— Երաժիշտ։ Ծնվել է Կիլիկիայում։ Որդին է Լևոն Գ. թագավորի, եղբայրը՝ Հեթում Բ-ի։ Կրթություն ստացել է Արքակաղին վանքում, զարգել նրա միաբանը և նվիրվել երաժշտության։ Վայելել է նշանավոր երաժշտի համբավ, անեցրել է աշակերտներ։

ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ (ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ) (18—19-րդ դդ.).— Տաղերգու։ Ապրել և գործել է Ցաշում (Ռումինիա)։ Գրել է մի շարք տաղեր, որոնցից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № 9819 ձեռագրում։ Թարգմանել է «Գիրք հակատամարտութեան Նեսփինտոս սրեղային» երկը։ Ընդօրինակել է ձեռագրեր։

ՆԵՐՍԵՍ ՄՈՍՏԵՍՈՎԻՉ (18-րդ դ.).— Լեհահայ ոսկերիչ-արվեստագետ։ Նրա պատրաստած ոսկեզարդված թրերը և այլ իրեր հայանի են եղել Լեհաստանում և նրա սահմաններից դուրս։

ՆԵՐՍԵՍՈՎԻՉ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ (17-րդ դ.).— Հոգևորական գործիչ, բառարանագիր։ Կրթություն ստացել է Հռոմում, տիրապետել է լատիներենին։ Հավանորեն վարել է կրոնական պաշտոններ։ Պատրաստել է «Բառգիրք լատինացւոց և հայոց» բառարանը, որը տպագրվել է Հռոմում, 1695 թ.։

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՆԱՅԻՍ (ծն. 1937).— Բանաստեղծուհի, բանասեր։ Ծնվել է Բուխարեստում (Ռումինիա), կրթություն ստացել է Բուխարեստի համալսարանում։ 1961 թ. ավարտել նրա պատմա-փիլիսոփայական ֆակուլտետը, աշխատանքի ընդունվել Բուխարեստի ազգային գրադարանում։ 17 տարեկանից գրել է բանաստեղծություններ ռումիներեն լեզվով։ Առաջին բանաստեղծությունը տպագրվել է «Երիտասարդ դրող» ռումինական հանդեսում, հետագայում արդեն տարբեր հանդեսներում և թերթերում։ Առանձին գրքերով լույս է ընծայել բանաստեղծությունների հետևյալ ժողովածուները՝ «Ապակի երգիչը» (1973), «Քնարերգական պատկերներ» (Բուխարեստ, 1976), «Անցման կնիքը» (1978), «Արևային կշիռ» (1980)։ Բանաստեղծական ուշագրավ հոդվածներով աշխատակցում է Բուխարեստում լույս տեսնող «Նոր կյանք» հանդեսին շաբաթաթերթին, գրելով գեղագիտական ռումինահայ գաղութի անցյալի մասին։ Հիմնովին տիրապետել է ֆրանսերենին, և ֆրանսերեն թարգմանությունների միջոցով հաղորդակից դարձել հայ հին և նոր գրականության լավագույն նմուշներին։

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՇՈՏ (1904—1984).— Դերասան. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական), որտեղ ստացել է նախնական կրթություն։ 1920-ական թվականների սկզբներից որպես սիրող խաղացել է Երևանի պետական թատրոնում։ 1924 թ. մեկնել է Մոսկվա, սովորել Ռ. Սիմոնովի ղեկավարությամբ գործող հայկական դրամատիկական ստուդիայում։ Ավարտելուց հետո վերադարձել է Երևան, կարճ ժամանակ աշխատել պետական թատրոնում, ապա 1928 թվականից Լենինականի պետական թատրոնում։ Հետագայում մեկնել Մոսկվա, սովորել ԳԻՏԻՄ-ի ռեժիսորական ֆակուլտետում։ Վերադառնալով Կովկաս՝ աշխատել է Բաքվի հայկական թատրոնում։ Նրա կատարած դերերից առավել ուշագրավներն են՝ Սուրեն («Պատվի համար»), Միլոզորով («Անմեղ մեղավորներ»), Գիքո («Պեպո»), Մարկիզ («Հյուրանոցի տիրուհին»), Պիկալով («Հյուրով ցարովայա»), Տիխոն («Ամպրոպ») և այլն։ 1945 թ. տեղափոխվել է Երևան, խաղացել Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնում, որտեղ խաղացած դերերից են՝ Հարդի («Ռուսական հարց»), Կոսմե («Տիկին անտեսանելի») և այլն։ Նկարահանվել է մի քանի ֆիլմերում։ «Ոսկե ցլիկում» կատարել է Պողոսի դերը, «Մոր սիրտը» ֆիլմում՝ փոստատար Վարդանի և այլն։

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐԱՄ (1873—1959).— Գրող։ Ծնվել է Շամախիում (այժմ՝ Ադրբեջանական ԽՍՀ)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի հայկական դպրոցում, ապա շարունակել է Բաքվի ռուսական ռեալական դպրոցում։ 1900 թվականից աշխատակցել է «Մուրճ» ամսագրին՝ Լոնդոնից ուղարկած թարգմանական երկերով՝ պատմվածքներ, ռնտանագիտական հոդվածներ։ Հոդվածներ է տպագրել նաև «Մշակ» և այլ թերթերում։ Հետագայում ապրել է Իստանբուլում, որտեղ 1946 թվականից «Անիվ», «Մարմարա», «Ակոս» և այլ պարբերականներում տպագրել է պատմվածքներ, քննադատական հոդվածներ, ռուս գրականությունից կատարած թարգմանություններ։ 1950-ական թվականների կեսերին մեկնել է Կանադա։ Օգտագործել է Սյունեցի, Օշական և այլ ծածկանուններ։

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ (ծն. 1907).— Կրթական գործիչ, կոմպոզիտոր. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1952)։ Ծնվել է Կաղզվանում (Կարսի մարզ)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի պետական կոնսերվատորիայում, որի կապել-մեյստրական դասընթացն ավարտել է 1933 թ.։ Լենինականում ունեցել մանկավարժական գործունեություն։ 1930-ական թվականներից տպագրել է երաժշտական ստեղծագործություններ՝ «Երգ կառուցման», «Տրիոլետներ կոլխոզական», «Կարմիր

բանակային երգ։ Գրել է շորս սյուիտ, քայլերգեր փողային նվագախմբի համար, մասսայական երգեր և այլն։

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ (1917—1986).— Դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1972)։ Ծնվել է Թիֆլիսում, որտեղ ստացել է կրթություն։ Բեմական առաջին քայլերը կատարել է Թիֆլիսի պատանի հանդիսատեսի հայկական թատրոնում, 1933-ից։ Տասը տարի աշխատել է այդ թատրոնում, ապրելով բեմական առաջին հասունացումը։ Այնտեղ նրա կատարած դերերից են՝ Համբո («Գիքոր»), Ֆերդինանդ («Սեր և խարդավանք»), Քաջ Նազար (համանուն պիեսում), Զամբախով («Խաթարալա»), Արիստոդոմ ագա («Մեծապատիվ մուրացկաններ») և այլն։ 1944—1955 թթ. խաղացել է Թբիլիսիի հայկական դրամատիկական թատրոնում, որտեղ կատարած նոր դերերից են՝ Գրիգոր ագա («Ժայռը»), Պետո («Պետո»), Միքայել («Քառս»), Օսեփ («Քանդած օջախ»), Նեղնամոլ («Անմեղ մեղավորներ»), Արբենին («Գիմակահանդես»)։ Հայկական ԽՍՀ կուլտուրայի մինիստրության հրավերով 1956 թ. տեղափոխվել է Երևան, խաղացել Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, ստանձնաբար դառնալով այդ թատրոնի գլխավոր ուժերից մեկը։ Այստեղ նրա կատարած առաջին դերերից են՝ Մաուրիսիո («Մառերը կանգնած են մահանում»), Բեն Ալեքսանդր («Իմ սիրտը լեռներում է») և այլն։ Հետագայում կատարել է տասնյակ նոր դերեր, որոնցից են՝ Արա գեղեցիկ (համանուն պիեսում), Գևորգ («Նույն հարկի տակ»), Տիգրան («Վերջին մեխակներ»), Պեպինո («Շաբաթ, կիրակի, երկուշաբթի»), Միքայել («Քառս»), Նապոլեոն («Մադամ Սան-Ժեն») և այլն։ Զբաղվել է նաև ասմունքով։ Ելույթներ է ունեցել հարյուրավոր համերգներում, մանավանդ Հայրենական պատերազմի տարիներին, վիրավոր մարտիկների համար՝ հայերեն, վրացերեն և ռուսերեն լեզուներով արտասանելով Հովհ. Թումանյանի, Տերյանի, Խաչատրյանի, Չարենցի, Լերմոնտովի, Եսենինի, Պուշկինի, Ճավճավաձեի բանաստեղծություններից նմուշներ։ Նկարահանվել է մի շարք ֆիլմերում՝ Արտա Միրզա («Հյուսիսային ծիածան»), Սյուրմելյան («Սարոյան եղբայրներ»), Մատուրյան («Կամոյի վերջին սիրանը»), Սայաթ-Նովա (հեռուստաֆիլմ), Մաքսիմ Խանջյան («Քառս») և այլն։

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1887—1937).— Գրող, կուսակցական գործիչ։ Ծնվել է Շուշիում, կրթությունն ստացել է նույն քաղաքի թեմական դպրոցում։ 1915—1917 թթ. սովորել է Մոսկվայի առևտրական ինստիտուտում։ Ապա որպես ուսուցիչ աշխատել է Ալեքսանդրապոլում (տարժամ՝ Լենինական)։ Այնտեղ էլ՝ 1917-ին ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը։ 1919 թվականից կուսակցական աշխատանքներ է կատարել Լեռնային Ղարաբաղում, Արխաղիայում, կրկին Ղարաբաղում։ 1912 թ. Շուշիում լույս է տեսել նրա «Խորտակված հույսեր» բանաստեղծությունների ժողովածուն։ Հետագայում հրատարակել է «Հոկտեմբերյան երգեր», «Բանաստեղծություններ» (1928) ժողովածուները, պոեմներ՝ «Սաթին ու Լեյլին» (1930), «Գրբաց Բղդոն» (1931)։ Գրել է «Ջախջախված ժանիքներ» պիեսը, որը բեմադրվել է Մատենադարանում։ 1929-ին նույն քաղաքում խմբագրել է «Կայծ» ամսագիրը։

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԺԵՆՅԱ (ծն. 1931).— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստուհի (1976)։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի դերասանական ֆակուլտետն ավարտել է 1953-ին։ Նույն տարվանից աշխատել է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում։ Լավագույն դերերից են՝ Ջավահիր («Ջար ոգի»), Խաչո («Քանդած օջախ»), Կապա («Ալվան ծաղիկ»), Մորաքույր Պոլի («Թոմ Սոյերի արկածները»), Կուկուշկինա («Եկամտավոր պաշտոն»), Ռոզալիա («Պատվի համար»), Նատո («Գիքոր») և այլն։

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ (1895—1961).— Դերասան. ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1956)։ Ծնվել է 1895 թ. նոյեմբերի 12-ին (հ. տ.) Կ. Պոլսից ոչ հեռու գտնվող Նիկոմեդիա հայաշատ քաղաքում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, սովորել տեղի Սեն Բարբ ֆրանսիական դպրոցում և ամերիկյան կոլեջում։ Հետագայում ուսումը շարունակել է Կ. Պոլսի էսայան հայկական դպրոցում, սակայն չի ավարտել։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ծառայել է թուրքական բանակում, Բեմական ասպարեզ է մտել պատերազմից հետո, 1918 թ. վերջերին։ Նախ մասնակցել է Ա. Պենկյանի օպերետային խմբի մի քանի ներկայացումներին, ապա խաղացել է «Պոլսո հայ դրամատիկ» թատերախմբում, ներշնչվելով նույն խմբում կարճ ժամանակ աշխատող Հովհ. Աբելյանի և Օգի Սեմոյանի արվեստից։ Այդ տարիներին նրա դերերից հիշատակության արժանի են՝ Օթարյան («Պատվի համար»), Մուրատ («Ջար ոգի») և այլն։ 1922 թ. աշնանը Վ. Փափազյանի, Մ. Ջանանի հետ եկել է Կովկաս, մի քանի ամիս խաղացել Բաթումում և Սուխումում, ապա հաջորդ տարի եկել է Երևան, իր բախտը ընդմիշտ կապել Երևանի առաջին պետական թատրոնի հետ, որտեղ խաղացել է մինչև կյանքի վերջին ամիսները։ Տարիների ընթացքում կատարել է մի քանի տասնյակ դերեր, որոնցից են՝ Լուչենցիա («Կամակոր կնոջ ստանձնարարությունը»), Տարթյուֆ (համանուն պիեսում), Կասիա («Օթելլո»), Մակբեթ (համանուն պիեսում), Համլետ, Ժաղով («Եկամտավոր պաշտոն»), Ելեստակով («Ռևիզոր»), Կիպար («Պաղտասար աղբար»), Սուրեն («Պատվի համար»), Ռուստամ («Նամուս»), Հայնրիխ («Ջրասույզ զանգ»), ժամանակակից պիեսներում՝ Ժորժ («Մորգանի խնամին»), Վլադիմիր («Բուք»), Բեսենե («Բեկում»), Նիգաբուտինով («Խոստովանություն»), Ռամզան («Լապտերի մոտ»), Սիմոն («Ցասում»), Պլատոն Կրեչետ (համանուն պիեսում)։ Բեմական տասվել հասունացում է ապրել հետագա տասնամյակներում, կատարելով տասից ավելի նոր դերեր, որոնք համարվում են խորհրդահայ թատրոնի ակնառու նվաճումները, ինչպես Թալատաֆ («Վինձորի զվարճասեր կանայք»), Գիսակ («Գիմակահանդես» (Վ. Փափազյանի խաղընկերակցությամբ որպես Արբենին), Էլիզբարով («Պատվի համար»), Պաղտասար աղբար (համանուն կատակերգությունում), Պրոտասով («Կենդանի դիակ»), Լիր արքա (համանուն ողբերգությունում)։ Պաղտասար աղբարով հանդես է եկել Մոսկվայում հայ արվեստի տասնօրյակի օրերին, 1956 թ.։ Նրա վերջին անմոռանալի դերը եղավ Մեք Գրեգորը («Իմ սիրտը լեռներում է»)։ Հայկինոյի գործունեության առաջին օրերից կարևոր դերերով հանդես է եկել գրեթե բոլոր ֆիլմերում, դրանցից են՝ Ռուստամը՝ «Նամուսում», Պետոն՝ «Պետո» հնչյունային առաջին ֆիլմում, Անդրեաս էլիզբարովը «Պատվի համարում» և այլն։ ԽՍՀՄ կառավարությունը բազմիցս նրան արժանացրել է շքանշանների և մրցանակների, իսկ 1956-ին ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչման։ Մահացել է 1961 թ. նոյեմբերի 6-ին։

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ (ծն. 1910).— Պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս։ Ծնվել է Աշտարակի շրջանի Փարպի գյուղում։ Միջնակարգ կրթությունն ստացել է Երևանի Խ. Աբովյանի անվան դպրոցում, բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանում, որի պատմության ֆակուլտետն ավարտել է 1931-ին, ասպիրանտուրան՝ 1933-ին։ 1931—1937 թթ. աշխատել է ՀԿ(բ)Կ կենտկոմին կից կուսակցության պատմության ինստիտուտում, 1937—1941 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի պատմության և նյութական կուլտուրայի ինստիտուտում։ 1941—1943 թթ. ծառայել է խորհրդային բանակում։ 1944—1947 թթ. եղել է Հայկական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր, 1948—1950 թթ.՝ ՀԿ(բ)Կ կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի կուսակցության պատմության սեկտորի վարիչ։ 1946 թ. պաշտպանել է դոկտորական դիսերտացիա, 1950 թ. ընտրվել է Հայկական ԽՍՀ ԳԱ իսկական անդամ։ 1950—1966 թթ. աշխատել է ԳԱ-ում որպես վիցեպրեզիդենտ և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար։ 1966—1977 թթ. եղել է Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ապա ԳԱ պատմության ինստիտուտի բաժնի վարիչ։ Զուգահեռ վերոհիշյալ աշխատանքներին՝ 1944—1946 թթ. խմբագրել է ԳԱ հասարակական գիտությունների «Տեղեկագիրը», իսկ 1958-ից, «Պատմա-բանասիրական հանդեսի հիմնադրման առաջին տարվանից առ այսօր՝ նրա գլխավոր խմբագիրն է։ Գիտական մամուլում և տարբեր ժողովածուներում տպագրել է հարյուրից ավելի հոդվածներ, նվիրված հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարցերին և հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում» (Երևան, 1940), «Հայ ժողովրդի ազա-

տագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ» (1955), «Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից» (հատ. Ա և Բ. ռուսերեն, 1956, 1961), «Դեկաբրիստները Հայաստանում» (1958), «1812 թ. Հայրենական պատերազմը և Կովկասի ժողովուրդները» (1965), «Մուլորովը և հայ-ռուսական հարաբերությունները 1770—1780-ական թթ.» (ռուսերեն, 1981) և այլն։ 1966-ին նրա խմբագրությամբ լույս է տեսել «Արևմտահայերի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ (1915—1916 թթ.)» ռուսերեն ժողվածուն, 1972-ին՝ «Հայ ժողովրդի պատմությունը» մեկհատորյակը։ Երկար տարիներ դասախոսել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում և պետական համալսարանում։

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՆԱԶԱՐԵԹ (ՀԻԼՄԻ) (1864—1922).— Կրթական գործիչ, թարգմանիչ, խմբագիր։ Ծնվել է Այնթապում (Թուրքիա), որտեղ ստացել է կրթություն, որպես ուսուցիչ աշխատել տեղի Ներսիսյան վարժարանում։ 1882 թ. մեկնել է Կ. Պոլիս, հետևել բժշկության։ Աշխատել է դատական նախարարությունում։ 1895 թվականից գործել է Զմյուռնիայում, որտեղ խմբագրել է «Խտրեթ» Թուրքերեն թերթը։ 1900-ական թվականներից աշխատակցել է նաև հայկական մամուլին, մասնավորապես Զմյուռնիայի «Արևելյան մամուլին»։ Ֆրանսերենից թարգմանել է Լա Ռոշֆուքոյի «Բարոյական առածներ և խորհրդածություններ» գիրքը (տպ. Իզմիր, 1912)։ 1922-ին էլ հրատարակել է Բ. Ֆրանկլինի «Բարեբախտության ճամփան» գրքի թարգմանությունը։ Ֆրանսերենից Թուրքերեն է թարգմանել ֆրանսիական օրենսգիրքը։ Հրատարակել է «Օսմանյան ռազմական օրենքի մեկնաբանությունը» հինգ հատորով։ Կազմել և հրատարակել է Թուրքերենից ֆրանսերեն և ֆրանսերենից Թուրքերեն առձեռն մի բառարան։ Ունեցել է մանկավարժական երկարամյա գործունեություն։

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍՏԵՓԱՆ (1815—1884).— Նկարիչ։ Ծնվել է Երևանում. էրզրումից (Արևմտյան Հայաստան) Կովկաս գաղթած ընտանիքում։ Փոքր հասակում զրկվել է ծնողներից, դարձել էջմիածնի վանքի որդեգիր։ Կրթություն ստացել է նույն վանքի ժառանգավորաց վարժարանում։ Ապա, մի քանի տարի՝ մինչև 1833 թ. սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Խ. Աբովյանի վկայությամբ նա մեծ դժվարությամբ 1835 թ. ընկել է Պետերբուրգ, տարբեր մարդկանց միջնորդությամբ և նյութական օժանդակությամբ հետևել է Գեղարվեստների ակադեմիայի դասընթացներին, իսկ 1838-ից պաշտոնապես արձանագրվել ուսանող։ Այնտեղ նա աշակերտել է դիմանկարի մեծ վարպետ Ա. Գ. Վարնեկին, ակադեմիկոս Ա. Ի. Զաուերվեյդին և այլ ականավոր նկարիչների։ 1840 թ. ավարտել է ակադեմիան «աղատ նկարչի» վկայականով։ Մի քանի տարի Պետերբուրգում նկարչությամբ զբաղվելուց հետո, 1846-ին վերադարձել է Թիֆլիս։ 1830-ական թվականների կեսերից ուշադրություն է դրավել իր նկարներով, որոնցից են՝ «Կրակող ասիացին» (1837), Արշակ Տեր-Ղուկասյան (1839), Ներսես Աշտարակեցի (1843—1844), «Անհայտ կնոջ դիմանկարը» (1849), Գեներալ Մ. Արղությանի-Երկայնաբազուկ (1849), Գեներալ-լեյտենանտ Վ. Բեհբուդյան և այլն։ 1850 թ. նշանակվել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի նկարչության ուսուցիչ։ 1853—1857 թթ. դասավանդել է օրիորդաց ինստիտուտում, 1858 թ. Շուշիի թեմական դպրոցում՝ ապա կրկին Թիֆլիսում։ Ստեղծագործական կյանքի երկրորդ շրջանում նկարել է գեղաղանցապես հայ մշակույթի գործիչների, որոնցից են թատերական գործիչ Գրիգոր Իզմիրլյանը, արևելահայ առաջին գերասանուհի Սոփիա Իզմիրյանը։ Նրա վերջին գործերից են Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի դիմանկարները, որոնք պատճենավորվելով կամ տպագրվելով մոտ մեկ դար զարդարել են դպրոցների, հանրային հաստատությունների դրասենյակները, զետեղվել դրոշակների դասագրքերում և ստացել վավերական արժեք։ Ոմանք նրան են վերագրում նաև Խ. Աբովյանի մեզ հասած միակ նկարը (յուղաներկ), որն այժմ պահվում է Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում։

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՎՐԵԺ (ծն. 1948).— Բանասեր, հայագիտության դոկտոր։ Ծնվել է Թեհրանում։ Կրթությունն ստացել է էջմիածնի հոգևոր ճեմարանում։ Ապա, որպես Գալուստ Կյուլբենկյանի հաստատության թոշակառու սովորել է Լոնդոնի համալսարանում, ավարտել 1972 թ.

1975 թ. պաշտպանել է դոկտորական դիսերտացիա «Պավլիկյանների և Թոնդրակեցիների շարժման ծագումն ու զարգացումը հայ եկեղեցու մեջ 9—11-րդ դարերում» թեմայով։ Աշխատում է Բրիտանական գրադարանում որպես հայկական բաժնի վարիչ։ Լոնդոնի Արևելյան գրքերի «Լուսաբ» հրատարակչությունը 1976 թ. լույս է ընծայել նրա կազմած «Հայկական ուսումնասիրություններ արևմտյան հանդեսներում» (1872—1972) մատենագրական աշխատությունը ներածական ընդարձակ հոդվածով։ Գործուն անդամներից է Լոնդոնում հիմնադրված «Հայ երաժշտության ինստիտուտի»։

ՆԵԿՈՂԱՅՈՍ ԵՐԵՑ (17-րդ դ.).— Տաղերգու։ Նրա տաղերից մի նմուշ, որ կոչվում է «Յասարտաս ով շինեաց իւր տուն», պահվում է Երևանի Մատենադարանի № 1624 ձեռագրում։

ՆԵԿՈՂԱՅՈՍ ՄԵԼԱՆԱՎՈՐ (17-րդ դ.).— Մաղկոդ։ Ապրել և գործել է Կաֆայում (Թեոդոսիա), դրա համար էլ կոչվել է նաև Կաֆայեցի։ Ընդօրինակել, ծաղկել և կազմել է մի քանի ձեռագիր՝ Ավետարաններ, դանձարաններ, մի Շարակնոց, Հայսմաուրքներ, երկու Աստվածաշունչ և մեկ ժողովածու, որոնք պահվում են Երևանի Մատենադարանում՝ № № 210, 289, 312, 2534, 2536, 6341, 6673, 6992, 7623 և այլ թվահամարների տակ։

ՆԵԿՈՂԱՅՈՍ ՍՏԱՄՊՈՒԼՑԻ (16-րդ դ.).— Մատենագիր։ Գրել է «Ողբ առման Կիպրոսի ի Թուրքաց» երկը (1570)։ Տպագրել է Ն. Ակինյանը «Անահիտ» հանդեսի 1931 թ. 5—6 միացյալ համարում։

ՆԵԿՈՂԱՅՈՍ ՍՏԱՄԲՈՒԼՑԻ (18-րդ դ.).— Տաղերգու։ Ծնվել է Վանում։ Ապրել և գործել է Կ. Պոլսում։ Նրանից մեզ հասել են հետևյալ տաղերը՝ «Տենչալի փափաքմամբ», «Տաղ ի վերայ Երուսաղէմի», «Էին անեղին»։

ՆԵԿՈՂՈՍՅԱՆ ԱՐԱՄ (ծն. 1922).— Երաժիշտ-կատարող, խմբավար. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1964)։ Ծնվել է Լենինականում։ Միջնակարգ կրթությունն ստացել է Երևանում։ Հորից սովորել է թառ նվագել։ 1941—1943 թթ. աշխատել է Երևանի Զ. Զաբաբլիի անվան ազրբեջանական թատրոնում որպես մենակատար թառահար, 1944 թվից Երևանի ռադիոյի ժողովրդական գործիքների անսամբլում։ Ղեկավարել է մի շարք ինքնագործ խմբեր։ Համերգներով հանդես է եկել Խորհրդային Միության բազմաթիվ քաղաքներում, նաև Անգլիայում, Ֆրանսիայում, Ալժիրում, Լեհաստանում, Հունգարիայում։ Ինքնագործ խմբերի ղեկավարման համար շահել է բազմաթիվ մեդալներ։ Նրա խմբերի կատարումները վերցվել են քանից ավելի ձայնապնակների վրա։

ՆԵԿՈՂՈՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1852—1921).— Հրապարակախոս, հասարակական գործիչ։ Ծնվել է Ուտիքի Վարդաշեն գյուղում։ Ստացել է գինվորական կրթություն։ 1877—1878 թթ. ռուս-Թուրքական պատերազմի տարիներին ծառայել է ցարական բանակում։ Եղել է Թիֆլիսի «Մշակ» թերթի ռազմաճակատային թղթակիցը, այդ թերթում տպագրել է բազմաթիվ հոդվածներ։ Պատերազմից հետո ապրել է Կ. Պոլսում, մոտիկից մասնակցել արևմտահայերի հասարակական մշակութային կյանքին։ Ապա տեղափոխվել է Պետերբուրգ, եղել «Գոլոս» թերթի թղթակիցը։ Անցնելով «Նոր Դար» թերթի կողմը, բուռն պայքար է մղել Գր. Արծրունու դեմ։ 1906—1907 թթ. աշխատակցել է «Հովիվ» շաբաթաթերթին։ Հրատարակել է մի քանի գրքույկ, որոնցից մեկը կոչվում է «Տեսություններ և նամակներ» (1904)։

ՆԵԿՈՂԱՅՈՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ (ծն. 1928).— Նկարիչ։ Ծնվել է Օդեսայում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Բուխարեստում (Ռումինիա), 1954 թ. ավարտել Բուխարեստի «Նիկոլաե Կրիկորեսկու» կերպարվեստի ինստիտուտը։ Նույն տարվանից մասնակցել է տարեկան ցուցահանդեսներին, նաև Պրագայում, Հելսինկիում, Լյուբլյանայում, Վիեննայում կազմակերպված ռումինական ցուցահանդեսներին, ինչպես և ժնևի ժամանակակից նկարչության միջազգային ցուցահանդեսին (1970 թ.)։ Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Բուխարեստում 1966, 1970, 1974 և 1975 թթ.։ Կատարել է յուղաներկ գործեր, գրաֆիկ նկարներ, որմնանկարներ։

ՆԵԿՈՂՈՍՅԱՆ ԿԱՐՊԻՍ (ծն. 1929).— Նկարիչ, թատերական գործիչ։ Ծնվել է Եգիպտոսում, որտեղ ստացել է կրթություն, հետևել նկարչության։ Միաժամանակ մասնակցել է թատերական ներկայացումներին։ 1950-ական թվականներին տեղափոխվել է Սիդնեյ (Ավստրալիա), որտեղ ունեցել է թատերական նկատելի

գործունեություն։ Բեմադրել է «Շողոքորթը», «Աղջիկտես», «Ուշ լինի, նուշ լինի» և այլ պիեսներ, որոնց բոլորի մեջ հանդես է եկել գլխավոր դերերով։

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ (ծն. 1941).— Նկարիչ։ Ծնվել է Երևանում, որտեղ ստացել է կրթությունը, հետևել նկարչության։ Նկարել է պատանեկան հասակից։ 1975 թ. Հայաստանի նկարիչների տանը ունեցել է առաջին ցուցահանդեսը, որտեղ ներկայացված գործերից մամուլը գնահատել է հետևյալները՝ «Ինքնանկար», «Ինանկար՝ իշուկով», «Սպասում», «Նախանձ», ինչպես և մի շարք այլ բնանկարներ։ Անհատական երկրորդ ցուցահանդեսն ունեցել է 1979 թ., ներկայացնելով վերջին տարիների նկարները, ինչպես՝ «Ինքնանկար՝ սև կատվի հետ», «Գյուղում», «Երիտասարդ մայրը», «Մայրություն», «Հոփսիմեի դիմանկարը», «Ընկերուհիները» և այլն։

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՀԱԿՈԲ (1864—1937).— Կրթական, մշակութային գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը։ Որպես ուսուցիչ և տեսուչ երկար տարիներ աշխատել է Կ. Պոլսի հայկական դպրոցներում։ Նույն քաղաքում հիմնել է օրիորդաց դպրոց, որն ունեցել է բեղուն գործունեություն։ Կրթական և այլ բնույթի հոդվածներով աշխատակցել է «Աբեղյան», «Բյուզանդիոն» և այլ թերթերի։ 1920-ական թվականների սկզբներին տեղափոխվել է Ամերիկա, ապրել Նյու Յորքում, շարունակելով մանկավարժական գործունեությունը։ Այնտեղ հրատարակել է «Փեթակ» դասագրքերի շարքը։

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ-ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՐԱՉՅԱ (ծն. 1927).— Երգիչ. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1967)։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում։ Որպես քամանչահար աշխատել է Լենինականում, իսկ 1944-ից՝ Երևանի Հայֆիլհարմոնիայի ժողովրդական գործիքների անսամբլում։ Որպես մենակատար նվագել է Հայաստանի և Ադրբեջանի մի քանի անսամբլներում։ Տարբեր խմբերի հետ շրջագայել է Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում և արտասահմանյան շատ երկրներում (Սիրիա, Եգիպտոս, Լիբանան, Ամերիկա, Կանադա, Անգլիա, Ավստրիա, Շվեդիա, Բելգիա, ԳՖՀ, Լեհաստան, Ռումինիա, Հունգարիա և այլն)։ Այժմ աշխատում է Երևանի պիոներների պալատում։

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ (1815—1895).— Մանկավարժ, հրապարակախոս-խմբագիր։ Ծրնվել է Կեսարիայում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է ծննդավայրում, աշակերտել ժամանակի ականավոր մանկավարժներից Ֆիդիկա Պողոսին։ 1847-ին ընդունել է հոգևորական կոչում և ամբողջովին նվիրվել մանկավարժական աշխատանքի։ Նույն տարում ծննդավայրում հիմնել է մի դպրոց, որը կոչել է Հմմարան։ Գործել է երեք տարի։ Առաջին անգամ Կեսարիայում հիմնել է իգական դպրոց և երեկոյան դասընթացներ՝ չափահասների համար։ 1854—1863 թթ. եղել է Կեսարիայի թեմի առաջնորդը, շարունակելով կրթական գործունեությունը։ Աշխատակցել է «Մյունատիի էրմիաս», «Մանդումեի էֆքյար» և այլ պարբերականների։ 1863-ին Կ. Պոլսում հրատարակել է «Վարդ Կեսարիո» երկշաբաթաթերթը՝ հայերեն և հայատառ թուրքերեն։

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ (ծն. 1918).— Քանդակագործ. Հայկական ԽՍՀ (1977) և ԽՍՀՄ (1982) ժողովրդական նկարիչ։ Ծնվել է Մեծ Շահրիար գյուղում (այժմ՝ Հոկտեմբերյանի շրջան, Նալբանդյան)։ Մասնագիտական կրթությունն ստացել է նախ Երևանի գեղարվեստական տեխնիկումում, ապա՝ 1937—1940 թթ. սովորել է Լենինգրադի գեղարվեստների ակադեմիայում, իսկ 1947-ին ավարտել է Մոսկվայի Վ. Սուրիկովի անվան գեղարվեստի ինստիտուտը։ Հիմնականում ապրել և ստեղծագործել է Մոսկվայում։ 1940-ից մասնակցել է Խորհրդային Միության և արտասահմանյան տարբեր քաղաքներում կազմակերպված տասնյակ ցուցահանդեսների (Մոսկվա, Լենինգրադ, Երևան, Պրագա, Վարշավա, Ռիգա, Պեկին, Վենետիկ, Բեռլին և այլն)։ Ունեցել է անհատական ցուցահանդեսներ Մոսկվայում, Երևանում։ Հայրենական պատերազմի տարիներին ապրել է Երևանում և ստեղծել է մնայուն արժեք ներկայացնող մի շարք գործեր՝ «Պարտիզանի ընտանիքը» արձանիկների շարք՝ «Մայրը», «Հարսը», «Դուստրը» (1942), պահվում են Հայաստանի պետական պատկերասրահում։ Նույն այդ տարիներին և հետագայում ստեղծել է հայ, ռուս և օտար ականավոր մի շարք արվեստագետների, գրողների դիմաքանդակային արձանիկները՝ Ա. Ռեկանյան, Ա. Խաչատրյան, Ավ. Իսահակյան, Իգումնով, Հովհ. Բաղրամյան, Տ. Մակարովա, Լ. Արազոն, Ե. Սիմոնով, Մ. Աբելյան, Վ. Վաղարշյան, Գ. Ջանիբեկյան, Մ. Պլիսեցկայա, Լ. Քալանթար. պահվում են Երևանի, Մոսկվայի, Լենինգրադի, Օդեսայի, Քիշնևի և այլ քաղաքների պատկերասրահներում, թանգարաններում, թատրոններում։ Նրա մոնումենտալ քանդակներից են Միքայել Նալբանդյանը (1966, Երևան), Ավ. Իսահակյանը (Լենինական, 1976), 15 ֆիգուրանի կոմպոզիցիան Վարշավայի գիտության և մշակույթի պալատի շենքի վրա (1954—1956), ճարտարապետ Կարո Հալաբյանի մահարձանը (1962, Նովոդևիչի գերեզմանատուն, Մոսկվա) և այլն։

ՆԻԿՈՅԱՆ ՀԵՆՐԻԿ (ծն. 1936).— Նկարիչ, խեցեգործ։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Լենինգրադի բարձրագույն Գեղարվեստա-արդյունաբերական ուսումնարանում, որի խեցեգործական և ապակու գեղարվեստական մշակման բաժինն ավարտել է 1962 թ.։ 1961 թվականից մասնակցել է Երևանում, Մոսկվայում, Կանադայում, Լայպցիգում և այլ վայրերում կազմակերպված ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Արդյունաբերություն», «Տիեզերք», «Օղու սպասք», «Սափոր», «Մոխրաման», «Մրգահյութի բաժակ» և այլն։

ՆԻԿՈՐՈՎԻՉ ՅՈՒԶԵՖ (1824—1890).— Լեհահայ կոմպոզիտոր։ Մասնագիտական կրթությունն ստացել է Վիեննայում։ Երկար տարիներ դասավանդել է Լվովի կոնսերվատորիայում՝ կոմպոզիտոր Կ. Միկուլինի դիրեկտորության տարիներին։ Գրել է երգեր, մազուրկաներ, վալսեր։ Նրա ստեղծած մեղեդիներից մեկի համար բանաստեղծ Ուելսկին հորինել է հեղափոխական տեքստ։ Այդ երգը մեծ տարածում է գտել Լեհաստանում՝ «Հրդեհի բոցերից» խորագրով։ Մուսորգսկին նրա լեհական երգերից մի քանիսը օգտագործել է իր ստեղծագործություններում։

ՆԻՀԱՏԻ (17—18-րդ դդ.).— Աշուղ։ Նրա երգերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № № 6438, 10285 ձեռագրերում։

ՆԻՏԱՅԻ (18—19-րդ դդ.).— Աշուղ։ Ծնվել է Կարինում (Արևմտյան Հայաստան)։ Իսկական անունը եղել է Խաչատուր։ Հորինել է հայերեն և թուրքերեն երգեր, կատարել սազի նվագակցությամբ։ Լայն ճանաչում է գտել Թուրքիայում և նրանից դուրս, մասնակցել աշուղական մրցումների և հաղթել։ Պոլսում ապրելու տարիներին, լսելով, որ որդուն գավառից բերել են Պոլիս, որպեսզի իրավազուրկ վիճակում աշխատեցնեն Իբլիկհանեում, հորինել է սրտառուչ մի երգ, կատարել սուլթանի ներկայությամբ և ազատել որդուն։

ՆԻՐԱՆԻ (1822 — ?).— Աշուղ։ Ծնվել է Վաղարշապատում։ Իսկական անունը եղել է Հովհաննես։ Կրթությունն ստացել է Մեսրոպ Թաղիադյանի մոտ, որից սովորել է հայերեն, ադրբեջաներեն, պարսկերեն։ Հետագայում աշակերտել է Հովհաննես արքեպիսկոպոս Շահխաթունյանին։ Զբաղվել է ոսկերչությամբ, զուգահեռ հետևել աշուղական արվեստին։ 1835 թվականից հորինել է հայերեն և ադրբեջաներեն երգեր, որոնք կատարել է սազի, հետագայում նաև չոնգուրի նվագակցությամբ։ 1842-ից ընդունել է Նիրանի աշուղական անունը։ Նրա հայերեն երգերից մի քանիսը զետեղված են Մ. Միանսարյանի «Քնար հայկական» (1868) և Գ. Ախվերդյանի «Հայ աշուղներ» (1903) ժողովածուներում։

ՆՇԱՆ ՄԻՐԶԱ (ՄԻՐԶԱՅԱՆ) (1849—?).— Գրող, հրապարակախոս։ Ծնվել է Զմյուռնիայում (Իզմիր, Թուրքիա)։ Եղբայրն է Սարգիս Միրզա-Վանանդեցու։ Կրթությունն ստացել է ծննդավայրի Մեսրոպյան վարժարանում։ Երկար տարիներ աշխատակցել է Զմյուռնիայում լույս տեսնող «Արշալույս Արարատյան» և այլ պարբերականների, գրելով կրթական, լեզվաբանական հարցերի նվիրված հոդվածներ, որոնցից ուշագրավ է «Գրաբա՞ր թե աշխարհաբար» հոդվածաշարքը, տպագրված «Արշալույս Արարատյանի» 1876—1877 թթ. համարներում։ Նույն թերթի 1879 թ. համարներում մաս-մաս տպագրել է «Օրիորդ Մարի» վեպը, սակայն չի ավարտել, իսկ 1883—1884 թթ. համարներում՝ «Երվանդ և Ամելիա» վեպը։ Առանձին գրքով լույս է ընծայել «Տորա» վեպը, 1870 թ.։

ՆՇԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1881—1963).— Գրող, կրթական գործիչ։ Ծնվել է Կեսարիայի նահանգի (Թուրքիա) Տերեվանք (Զորավանք) գյուղում։ Կրթությունն ստացել է Կ. Պոլսի Պեր-

պերյան վարժարանում։ Ավարտելուց հետո զբաղվել է ուսուցչությամբ և հրապարակախոսությամբ։ 1900-ական թվականներից աշխատակցել է «Մանզումեի էֆբյար» և այլ թերթերի, հետագայում՝ «Վերջին լուր», «Ժամանակ» թերթերին։ 1922-ին մեկնել է Հունաստան, որպես ուսուցիչ աշխատել Կորնթոսի որբանոցում։ Այնտեղից աշխատակցել է Կ. Պոլսի «Վերջին լուր» օրաթերթին՝ «Կորնթյան նամականի» ընդհանուր խորագիրը կրող հոդվածաշարքով, որը հետագայում ամփոփել է մի հատորի մեջ, լույս ընծայել Աթենքում։ Օգտագործել է Մոնաղն ծածկանունը։

ՆՇԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (ՇԱՌԼ) *(1861—1950)*.— Նկարիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, ապա մեկնել է Իտալիա, հինգ տարի գեղարվեստների դպրոցում աշակերտել է Դոմենիկո Մորելլիին։ Ուսման ընթացքն ավարտելուց հետո վերադարձել է ծննդավայրը։ Համիդյան բռնակալության տարիներին եկել է Կովկաս, ապրել նախ Բաքվում, ապա՝ Թիֆլիսում, Վլադիկավկազում *(այժմ՝ Օրջոնիկիձե)*։ Կովկասում նա կատարել է բազմաթիվ նկարներ, որոնք ցուցադրվել են տարբեր քաղաքներում։ 1897 թ. Թիֆլիսում ցուցադրել է «Հայի գլուխը», «Նամակի ընթերցումը», «Շեմքի մոտ» և այլ նկարներ, որոնք արժանացել են «Մուրճ» ամսագրի ջերմ գնահատականը։ Կովկասում նա մի շարք նկարներ էլ եկեղեցիների համար կատարելուց հետո, մեկնել է արտասահման, 1906 թվականից բնակություն հաստատել Փարիզում, որտեղ էլ ապրել է մինչև կյանքի վերջը։ Լավագույն գործերից են համարվել «Մշեցիների հարսանիքը», «Եգիպտացի պարուհին», «Թուրք երաժիշտը», «Դերվիշը» և այլն։

ՆՇԱՆՅԱՆ ՄԵՍՐՈՊ *(1872—1944)*.— Բանաստեղծ, հոգևորական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում։ Նախնական կրթությունն ստացել է Նարլը Կափուի թաղային դպրոցում, ապա սովորել է Պերայի Նարեկյան վարժարանում *(1881—1887)*։ Այնուհետև ուսումը շարունակել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում, ավարտել 1891 թ., ընդունել է հոգևորական կոչում և որպես ուսուցիչ աշխատել է նույն վարժարանում։ Հետագայում եղել է Երուսաղեմի մատենադարանի տեսուչ, ապարանի տեսուչ։ 1939 թվականին, Թ. Գուշակյանի մահից հետո ընտրվել է Երուսաղեմի պատրիարք։ Ունեցել է գրական, բանասիրական նկատելի գործունեություն։ Պատմա-բանասիրական հոդվածներով աշխատակցել է պարբերական մամուլին, հրատարակել է հայ հին մատենագրությունից նմուշներ, որոնցից հիշատակության արժանի են հատկապես Գրիգոր Պարոնեաղյու «Ժամանակագրությունը» *(Երուսաղեմ, 1915)* և Երեմիա Չելեպի Քեռմյուրճյանի «Օրագրությունը, գանձերը, թղթերը» *(Երուսաղեմ, 1939)*, երկուսն էլ ընդարձակ ծանոթագրություններով ու մեկնաբանություններով։

ՆՇԱՆՅԱՆ ՍԻՐՈՒՀԻ *(1900 — ?)*.— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է տեղի էսայան վարժարանում։ Բեմական առաջին քայլերը կատարել է Պոլսո հայ դրամատիկ թատերախմբում, 1922-ին։ Նույն տարում ամուսնացել է դերասան Տ. Նշանյանի հետ և մեկնել Փարիզ, որտեղ նրանք ստեղծել են Փարիզահայ դրամատիկ թատերախումբը։ Եղել է այդ խմբի հիմնական ուժերից մեկը, մասնակցել մի քանի տասնյակ պիեսների *(«Բլանշեթ», «Սամսոն», «Նոր պապ», «Տրիբի», «Մոննա-Վաննա», «Հայր լը բոնար», «Մրտերի պայքար» և այլն։* Հիմնականում կատարել է դրամատիկ դերեր, հազվադեպ՝ կատակերգական։ Գլխավոր դերերից են՝ Աննա Դեմրի *(«Քին»)*, Դեզդեմոնա, Էմիլիա *(«Օթելլո»)*, Իշխանուհի *(«Հին աստվածներ»)*, Մարգարիտ *(«Պատվի համար»)*, Անուշ *(«Պաղտատար աղբար»)*, Սուսան *(«Նամուս»)*, Ան Մարի *(«Սամսոն»)*, Սեդա *(«Հին աստվածներ»)*, Մոննա Վաննա *(համանուն պիեսում)* և այլն։ Ամուսնու հետ 1931—1933 թթ. շրջագայել է Բուլղարիայում և Ռումինիայում, մասնակցել իրենց բեմադրած բոլոր ներկայացումներին։ Հետագայում խաղացել է Լիոնում Տ. Նշանյանի ստեղծած նոր թատերախմբում։

ՆՇԱՆՅԱՆ ՏՐԴԱՏ *(1892—1964)*.— Դերասան, ռեժիսոր, թատերական գործիչ, գրող։ Ծնվել է Սեբաստիայում *(Արևմտյան Հայաստան)*։ Կրթությունն ստացել է Կ. Պոլսի Մխիթարյան և Կենտրոնական վարժարաններում։ Հետագայում սովորել է նաև Սկյուտարի միջնակարգ դպրոցում, ավարտել 1908 թ.։ Հաջորդ տարվանից նվիրվել է բեմական ասպարեզին։ Նույն տարում բեմադրել է Մ. Պեշիկթաշլյանի «Կոռնակ» պատմական ողբերգությունը, կատարել Կառնակի գլխավոր դերը։ 1911-ին բեմադրել է «Արշակ Բ» ողբերգությունը։ 1912-ից գործել է Եգիպտոսում։ Կահիրեում և Աղեքսանդրիայում բեմադրել է «Պատվի համար», «Զարշքը Աբթին աղան» և այլ պիեսներ։ 1918—1922 թթ. խաղացել է Պոլսո հայ դրամատիկ թատերախմբում, դարձել նրա կենտրոնական ուժերից մեկը։ Այդ տարիներին նրա կատարած դերերից են՝ Մակբեթ, Լորդ Մերվիլ *(«Քին»)*, Կորբաղո *(«Ոճրագործի ընտանիքը»)*, Օգսեն *(«Պաղտատար աղբար»)*, Դը Սանթրոս *(«Ուրիել Ակոստա»)*, Ուրսուս *(«Հո երթաս»)*, Ռուսամ *(«Նամուս»)*, Կարլոս *(«Ավազակներ»)*, Պոլոնիոս *(«Համլետ»)* և այլն։ 1922-ին իր տիկնոջ՝ Սիրուհի Նշանյանի հետ մեկնել է Փարիզ, ստեղծել Փարիզահայ դրամատիկ թատերախումբը, որը գործել է երկար տարիներ։ Այնուհետև, բացառությամբ մի քանի տարվա, երբ հյուրախաղերով եղել է Բուլղարիայում և Ռումինիայում *(1931—1933)*, նաև Պոլսում *(1951)* եղել է ֆրանսահայ թատրոնը իր ուսերին պահող միակ նվիրյալը, այդ թատրոնին ծառայելով մինչև մահվան տարին։ Բեմադրել է հայ և օտար հեղինակների մի քանի տասնյակ պիես, մեծ մասի մեջ հանդես գալով գլխավոր դերերում։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին որպես քանդակագործ աշխատել է Լիոնում։ Մասնակցել է ֆաշիզմի դեմ ուղղված դիմադրական շարժմանը։ Պատերազմից հետո կրկին գլխավորել է փարիզահայ թատերախմբի աշխատանքները։ Գրել է երկու վեպ, որոնք տպագրվել են «Պայքար» և «Ժամանակ» օրաթերթերում որպես թերթոն, նաև «Մինչև հաղթանակ», «Բարեգործության ուղիով», «Հայրենի կանչ» պիեսները, որոնք բեմադրվել են Փարիզում և Լիոնում։ 1932 թ. Փարիզում հրատարակել է «Հայ կյանք» թատերական շաբաթաթերթը։

ՆԻՇԵՋՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ՊԻԵՐ ՆՈՅԵ) *(ծն. 1928)*.— Նկարիչ։ Ծնվել է Վիեննում *(Ֆրանսիա)*։ Մասնագիտական կրթությունն ստացել է ծննդավայրի քաղաքաշինական դպրոցի նկարչական բաժնում, ապա կատարելագործել է Լիոնում, որտեղ հետևել է նաև արվեստի պատմության դասընթացներին։ 1950-ական թվականների սկզբներից մասնակցել է Փարիզի Անկախների ու Աղատ արվեստի միջազգային ցուցահանդեսներին։ 1964 թ. Փարիզում ունեցել է իր անհատական ցուցահանդեսը և արժանացել է ֆրանսիական մամուլի ջերմ գնահատանքին։

ՆՈՎԱՐՈՒՉ *(19-րդ դ.)*.— Աշուղ։ Նրա տաղերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № 8748 ձեռագրում։

ՆՈՎԵՑԿԱՅԱ (ՄԱՐԳԱՐՅԱՆ) ՆԵԼԼԻ *(ծն. 1930)*.— Նկարչուհի, խեցեգործ արվեստագետ։ Մասնագիտական կրթությունն ստացել է Վրաստանի Գեղարվեստների ակադեմիայում, որն ավարտել է 1958 թ.։ Այդ տարվանից էլ մասնակցել է մի շարք ցուցահանդեսների, ցուցադրելով գերազանցապես խեցեգործական ստեղծագործություններ՝ «Գեյբալով աղջիկը», «Դեկորատիվ պանոս», «Աղջիկներ», «Բնանկարներ Վրաստանից» և այլն։

ՆՈՐ-ԱՅՐ (ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ) *(1912—1981)*.— Գրող։ Ծնվել է Կարսի մարզի Մավրակ գյուղում։ Միջնակարգ կրթությունն ստացել է Նոր Բայազետում *(այժմ՝ Կամո)*։ 1930-ական թվականների սկզբներից աշխատել է Ղարաքիլիսայի *(Կիրովական)* «Սոցարշավ», Եղեգնաձորի և Աղիզբեկովի «Կոլտնտեսական» թերթերի խմբագրություններում։ 1938-ից վարել է կուսակցական պաշտոններ։ Ծառայել է խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո նշանակվել է Արտաշատի «Բոլշևիկյան կոլխոզ» թերթի խմբագիր։ 1951-ից աշխատել է Կիրովականի «Կայծ» թերթի խմբագրությունում։ 1957—1974 թթ. եղել է Հայաստանի գրողների միության Կիրովականի բաժանմունքի պատասխանատու քարտուղար։ Առանձին գրքերով լույս տեսած երկերն են՝ «Ճարտարապետուհին» *(Երևան, 1932)*, «Փրկության փարոսը» *(1940)*, «Հյուրանոցի աղջիկը» *(1946)*, «Նովելներ և վիպակներ» *(1949)*, «Լույսեր» *(1950)*, «Անտառի երգը» *(1959)*, «Լոռվա աստղեր» *(1962)*, «Նվիրական սրտեր» *(1965)*, «Անապատի առավոտը» *(1966)*, «Արամ» *(1970)*, «Պատմություն գրված քարի վրա» *(1978)*։ Նրա «Արամ» վեպը, «Իմ ծաղկած այգին» և «Անմահություն» գրքերը լույս են տեսել նաև ռուսերեն, իսկ վրացերեն՝ «Լոբենու տակ» պատմվածքների ժողովածուն։

ՆՈՐԱՏՈՒՆԿՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ *(1852—1936).*— Պետական, մշակութային գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում։ Նախնական կրթությունն ստացել է Սկյուտարի ճեմարանում և Կաղը գյուղի ֆրանսիական դպրոցում, որտեղ սովորել է 1865—1869 թթ., հիմնովին տիրապետելով ֆրանսերենին։ Ապա մեկնել է Փարիզ, Սորբոնի համալսարանում հետևել է իրավաբանության և քաղաքական գիտությունների։ 1875 թ. վերադարձել է Թուրքիա, որպես իրավագետ-խորհրդական աշխատել Արտաքին գործերի մինիստրությունում։ Հետագայում վարել է պետական բազմաթիվ պաշտոններ, հասնելով մինչև արտաքին գործերի նախարարի բարձր դիրքի՝ բալկանյան պատերազմի նախօրյակին (1912)։ Եղել է բազմակողմանի զարգացման տեր, մի քանի լեզուների իմացությամբ հմուտ դիվանագետ։ Ունեցել է բանասիրական և գիտական գործունեություն։ Հայերեն «Փունջ» շաբաթաթերթում տպագրել է դեպի Կովկաս կատարած ճանապարհորդության նկարագրությունը։ Հրատարակել «Recueil d'actes internationaux de l'Empire Ottoman» քառահատոր աշխատությունը, որը հանդիսանում է Օսմանյան կայսրության կնքած միջազգային դաշնագրերի հավաքածոն, հնագույն ժամանակներից սկսած։

ՆՈՐԵՆՑ ՎԱՂԱՐՇԱԿ *(1903—1973).*— Բանաստեղծ։ Ծնվել է Սասունի դավառի Շենիկ գյուղում (Արևմտյան Հայաստան)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում և Իշխանաձոր գյուղի դպրոցում։ 1916 թ. գաղթել է Անդրկովկաս, ապաստան գտել Ալեքսանդրապոլի և Թիֆլիսի որբանոցներում։ Ավարտել է Թիֆլիսի հայկական գիմնազիան և Ներսիսյան դպրոցը։ Գրել սկսել է պատանեկան տարիներից։ Առաջին բանաստեղծությունը՝ «Մասնո սարերին» տպագրվել է Թիֆլիսում լույս տեսնող «Հայաստան» թերթում, 1917 թ.։ Եղել է 1925 թ. Ե. Չարենցի նախաձեռնությամբ կազմակերպված «Նոյեմբեր» գրական խմբակի հիմնադիր անդամներից։ 1925 թ. Դիլիջանում լույս է ընծայել բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Օրերի համփին» խորագրով։ Հաջորդ տարի տպագրել է «Իրիկուն» պոեմը։ Հետագայում հրատարակել է մի շարք նոր ժողովածուներ։ «Երկրորդ գիրք» (1930), «Լիրիկական ֆրոնտ» (1932), «Բանաստեղծություններ» (1936)։ 1954 թ. լույս է ընծայել «Գիրք քնարական» ժողովածուն, որին հաջորդել է «Ճանապարհներ» (1956), «Իմ աշխարհը» (1958), «Պոեմներ» (1960)։ 1963 թ. նրա երկերը լույս են տեսել երկու հատորով, իսկ 1971—1973 թթ.՝ երեք հատորով, 1968 թ.՝ «Հուշեր և արձագանքներ» և այլն։ 1956 թ. լույս է տեսել նրա ընտիր բանաստեղծությունների ռուսերեն թարգմանությունը՝ «Լիրիկա» խորագրով, իսկ 1957 թ.՝ Մոսկվայում, բանաստեղծությունների մի նոր ժողովածու։ Կատարել է բազմաթիվ թարգմանություններ եվրոպական և ռուսական դասական գրականությունից, ինչպես Ն. Սիմոնովից, Վ. Մայակովսկուց, Ն. Տիխոնովից, Հ. Հայնեից, Ի. Գրիշաշվիլուց, Վ. Բրյուսովից, Հաֆիզից, Ի. Աբաշիձեից, Դ. Բեգնուց և ուրիշներից։ Նրա այդ թարգմանությունների մի մասը լույս է տեսել առանձին գրքույկներով, մի մասը՝ համապատասխան ժողովածուներում։

ՆՈՐԻԿՅԱՆ ԿԻՐԿՈՐ *(ծն. 1942).*— Նկարիչ։ Ծնվել է Բեյրութում։ Կրթությունն ստացել է տեղի Սեն Կրեկուար կոլեջում։ 1960 թվականից նվիրվել է գեղանկարչության։ Անհատական առաջին ցուցահանդեսը ունեցել է 1966-ին։ Նույն տարում մեկնել է Իտալիա, Ռավեննայի խճանկարի ակադեմիայում կատարելագործել է իր արվեստը։ 1967—1968 թթ. աշխատել է Փարիզի գեղարվեստների ակադեմիայում։ Հետագայում իր նկարները ցուցադրել է տարբեր քաղաքներում։ Օտար մամուլը բարձր է գնահատել նրա գործերից «Մտորումները», «Մայր և որդին» և այլն։

ՆՈՐՈՒՆԻ ՀԱԿՈԲ (ՆՈՐԱՇԽԱՐՀՅԱՆ) *(1926—1985).*— Գրող. հրապարակախոս, խմբագիր։ Ծնվել է Մուսա լեռան Ցողուն-Օլուք գյուղում։ Նախնական կրթությունն ստացել է Մուսա լեռան Նոր Զեյթուն և Բիթիաս գյուղերում, միջնակարգը՝ Հալեպի Մխիթարյան վարժարանում, ապա սովորել է նույն քաղաքի «Լիսե Լայիք» ֆրանսիական կոլեջում, իսկ 1948-ին ավարտել է Բեյրութի ֆրանսիական համալսարանը։ Աշխատել է Բեյրութում լույս տեսնող «Զարթոնք» և «Արարատ» թերթերի խմբագրություններում։ 1956—1965 թթ. խմբագրել է «Արարատ-գրական» պարբերականը։ Աշխատակցել է սիրիահայ

տասնյակ թերթերի ու հանդեսների («Միացեալ», «Նոր Լուսաբեր», «Սուրիա», «Առավոտ», «Պայքար», «Արև», «Ջահակիր», «Շիրակ» և այլն)։ 1975 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Դողդոջ կայծեր» (բանաստեղծություններ) (Հալեպ, 1943), «Իշխանը» (դրամա) (1944), «Սահմանագլուխ» (բանաստեղծություններ) (Բեյրութ, 1959), «Երջանկության ճամփան» (Բեյրութ, 1966), «Ինչ շուտ փոխվեցար» (դրամա, 1966), «Նամակ ամերիկահայ բարեկամիս» (1966), «Հրաշյա Քոչարի «Սպիտակ գիրքը» (1967), «Վարձու սպայրիկներ» (պատմվածքներ) (Բեյրութ, 1970), «Վերապրում» (բանաստեղծություններ) (Երևան, 1973), «Մեղքի արահետներ» (պատմվածքներ) (Երևան, 1977)։

ՆՎԱՐԴ ՄԱՐԻ (ԹԱՐԱՅԱՆ) *(1853—1885).*— Դրամատիկ դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ Նախնական կրթությունն ստացել է Պերա թաղամասի կաթոլիկական մայրապետական դպրոցում։ Բեմական ասպարեզ է մտել 17 տարեկան հասակում, 1870 թ.։ Թ. Ֆասուլաճյանի խմբի հետ ուղևորվել է Նոր Նախիջևան, որտեղ նանգես է եկել դրամատիկական մի շարք դերերում. այստեղ էլ ստացել է Մարի-Նվարդ բեմական անունը։ Վերադառնալով Կ. Պոլիս, 1871—1872 թատերաշրջանից խաղացել է Մաղաքյանի խմբում, իսկ 1874 թվականից՝ Հակոբ Վարդովյանի խմբում, դառնալով նրա հիմնական ուժերից մեկը։ Պոլսահայ թատրոնի փակումից, հայերեն ներկայացումների արգելքից հետո, 1881 թ., ի թիվս այլ արվեստագետների, եկել է Կովկաս, մեկ թատերաշրջան խաղացել Թիֆլիսի հայկական խմբում։ 1882 թ. ամռանը վերադարձել է Պոլիս, խաղացել Մ. Մեկայանի օսմանյան դրամատիկ խմբում, որն իր ներկայացումները տալիս էր Թուրքերեն լեզվով։ Այստեղ դարձել է խմբի պրիմատոնան, վայելել հայ և թուրք մտավորականության ջերմ համակրանքը։ Ժամանակի մամուլը հիացմունքով է գրել նրա մի շարք դերերի մասին, որոնցից են Ջեսիկան՝ «Վենետիկի վաճառականում», Նատալիան՝ «Խելքից պատուհասում», Աննա Անդրեևնան՝ «Ռևիզորում» և այլն։ Դյուրգործոց դերը եղել է Մարգարիտ Գոթիեն «Ամելիաղարդ կինը» պիեսում։ Եղել է այդ դերի առաջին մարմնավորողը հայ և թուրք բեմերում։ Մահացել է նույն դերը կատարելիս՝ նախօրոք ընդունած լինելով թույն, արդյունք սիրային հողի վրա առաջացած հոգեկան տանջանքների։

ՆՈՒՊԱՐ ՊՈՂԱՍ (ՓԱՇԱ) *(1851—1930).*— Հասարակական, քաղաքական, մշակութային գործիչ, մեկենաս։ Ծնվել է Կ. Պոլսում, 1851 թ. օգոստոսի 2-ին։ Որդին է Եգիպտոսի վարչապետ, ականավոր պետական գործիչ Նուպար փաշա Նուպարի։ Հայկական և ֆրանսիական նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, միջնակարգն ու բարձրագույնը՝ Ֆրանսիայում և Շվեյցարիայում։ Ավարտելուց հետո զբաղվել է ինժեների իր մասնագիտությամբ։ Հնարել է ինքնաշարժ մի արոր, որը Փարիզի ցուցահանդեսում 1900 թ. արժանացել է առաջին մրցանակի։ Արժանացել է պատվո լեգեոնի ասպետության շքանշանի։ Մոտիկից կապված է եղել հայ իրականության հետ։ Նրա անմիջական նախաձեռնությամբ 1906 թ. Կահիրեում հիմնադրվել է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, որը հետագայում, հատկապես առաջին համաշխարհային պատերազմի աղետից հետո մեծ դեր է կատարել հայ որբերին ու աղքատներին խնամելու, կրթաթոշակներ տալու, Երևանում հանրօգուտ շենքեր կառուցելու ուղղությամբ։ Երկար տարիներ եղել է այդ միության նախագահ։ Տարբեր առիթներով նրա կատարած նվիրատվությունների ընդհանուր գումարը հասնում է մեկ միլիոն ոսկուի։

ՆՈՒՊԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ *(1842—1929).*— Բանաստեղծ, թարգմանիչ, բառարանագիր։ Ծնվել է Զմյուռնիայում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Մեսրոպյան վարժարանում, հմտանալով ֆրանսերենի մեջ։ Աշակերտական տարիներից թարգմանություններ է կատարել Շաթոբրիանից և Ռասինից։ Ապա թարգմանել է Վ. Հյուգոյի «Փարիզի աստվածամոր տաճարը» հայտնի վեպը, որը լույս է տեսել Զմյուռնիայում, 1868 թ.։ Միաժամանակ Գր. Մսերյանի հետ խմբագրել է «Մեղեորա» պարբերականը, որն իր առաջավոր գաղափարների պատճառով փակվել է սուլթանական կառավարության կողմից 1882 թ.։ Նույն տարում լույս է ընծայել «Բառարան ֆրանսերենն հայ-աշխարհիկ» բառ-

գիրքը։ Հետագայում հրատարակել է նույնի համառոտը՝ «Առձեռնը» (1911 թ.)։ Այդ տարիներին թարգմանել է Մոլիերի կատակերգությունները, լույս ընծայել երկու առանձին հատորներով։ Թարգմանել է նաև Լաֆոնթենի առակները, Ֆ. Նանսենի «Դեպի բևեռը», Գյոթեի «Ֆաուստը», Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետը», բոլորն էլ ֆրանսերենից։ Նրա թարգմանություններից մի քանիսն էլ տպագրվել են մամուլում։ Դրանցից են Բենժամեն Կոստանի «Ադոլֆ» վեպը, Բուալոյի «Գրականը» և այլն։ Զմյուռնիայի ադեմից հետո (1922) մեկնել է Ֆրանսիա, իր կյանքի վերջին տարիներն անց կացրել Մարսելում։ 1939 թ., հետմահու, Փարիզում լույս է տեսել նրա արժեքավոր հուշագրությունը՝ «Սգավոր տարիներ» խորագրով։ Երկար տարիներ աշխատակցել է արևմտահայ մամուլին («Աբեղյան մամուլ», «Բյուզանդիոն», «Շանթ», «Ծաղիկ», «Կոչնակ» և այլն)։

ՆԻՐԻԹՅԱՆ ՄԻՆԱՍ (1854—1929).— Պատմաբան։ Ծնվել է Տրապիզոնում։ Կրթությունն ստացել է Վենետիկի Մխիթարյանների վանքում, գրաձել է այդ միաբանության անդամ։ Ունեցել է կրթական, բանասիրական բեղուն գործունեություն։ Եղել է Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի ուսուցչապետ։ 1902 թ. ընտրվել է Մխիթարյան միաբանության աթոռակալ, վարել է վարչական պաշտոններ։ Գրել է պատմագրական մի շարք հետազոտություններ, որոնք տպագրվել են «Բազմավեպում» և առանձին գրքերով։ Նրա ամենածավալուն աշխատությունն է «Ժամանակակից պատմությունը», բաղկացած երեք ստվար հատորներից, որոնցում խոսվում է վերջին հարյուրամյակի համաշխարհային պատմության հիմնական դրվագների մասին։ Ա. հատորը ընդգրկում է 1814—1848 թթ. ժամանակաշրջանը և լույս է տեսել Վենետիկում, 1881 թ., Բ. հատորը (1848—1867)՝ 1896-ին, նույնի Բ. տպ. 1915, իսկ Գ. հատորը (1868—1878)՝ 1908-ին։ Գրել է Մխիթար Սեբաստացու կենսագրությունը իտալերեն լեզվով (Վենետիկ, 1914)։ Նույնի անգլերեն թարգմանությունը լույս է տեսել 1915 թ., ֆրանսերենը՝ 1922-ին։ Սրանցից բացի՝ գրել է «Թեոդոր Մայհունի» և «Գուրգեն և Դերենիկ» դրամաբան պիեսները։ Առաջինը լույս է տեսել 1882-ին, աշխարհաբար թարգմանությունն էլ՝ 1902-ին, երկրորդը տպագրվել է 1879 թ.։ Ֆրանսերենից և իտալերենից կատարել է թարգմանություններ։

ՆՈՒՐԻԿՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ (ծն. 1894).— Գրող։ Ծնվել է Խարբերդի գավառի Հյուսեյնիկ գյուղում (Արևմտյան Հայաստան)։ Կրթությունն ստացել է Խարբերդում, Թլկատինցու դպրոցում, ավարտել 1913 թ.։ Նույն տարում մեկնել է Ամերիկա, որպես բանվոր աշխատել գործարանում, երեկոները հաճախել ամերիկյան դպրոց։ Հետագայում սովորել է Նյու Յորքի Կոլումբիա համալսարանում, ավարտել 1921-ին՝ արվեստի մագիստրոսի վկայականով։ Գրական ասպարեզ է մտել 1920-ական թվականների կեսերից, ամերիկահայ մամուլում տպագրելով պատմվածքներ՝ ծննդավայրի կյանքը և ամերիկյան բարքերը պատկերող, նաև թարգմանություններ անգլերենից։ Աշխատակցել է «Հայաստանի կոչնակ», «Պայքար» և այլ պարբերականներին։ 1935 թ. Նյու Յորքում հիմնադրել է «Նոր գիր» գրական հանդեսը, որը մի քանի տարվա ընդմիջումով, շարունակել է մինչև 1955 թ., խմբագրելով 16 տարի։ Առանձին գրքերով հրատարակած երկերն են՝ «Այգեկութք» (պատմվածքների ժողովածու, Նյու Յորք, 1937), «Պանդուխտ հոգիներ» (պատմվածքներ, Երևան, 1958)։ Բնագրից թարգմանել է Մարկ Տվենի «Իշխանն ու աղքատը», տպագրել Նյու Յորքում, 1930 թ.։ Գրել է իր ծննդավայր Հյուսեյնիկի պատմությունը, որ գնահատված է Վ. Հայկի կողմից «Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը» գրքում։ 1981 թ. այցելել է Խորհրդային Հայաստան, մասնակցել Հայաստանի գրողների 5-րդ համագումարին։

Շ

ՇԱԲՈՅԱՆ ԱՂԱՍԻ (ծն. 1921).— Բալետմեյստր։ Ծնվել է Լենինականում։ 1940 թվականից աշխատել է Լենինականի պիոներների պալատում որպես երգի-պարի անսամբլի գեղարվեստական ղեկավար։ Միաժամանակ աշխատել է Լենինականի ֆիլհարմոնիայում որպես բալետմեյստր և մենապարող։ 1950 թվականից աշխատում է Սեռյանի անվան կուլտուրայի պալատում որպես երգի-պարի գեղարվեստական մասի ղեկավար և պալատի դիրեկտոր։ Բեմադրել է մի շարք պարեր, ինչպես՝ «Փառք հայրենիքին» սյուիտը, «Գյումրվա հարսանիքը», «Ալագյազ», «Արարատ», «Կարոն ու Մարոն» և այլն։ 1965 թ. նրա անսամբլը նկարահանվել է «Շիրակի մեղեդիներ» կինոնկարում։

ՇԱՊԱՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴԻՐ (ծն. 1908).— Դերասան, Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Կարսի գավառի Մազրա գյուղում։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ընկել է Ալեքսանդրապոլի մանկատները։ Միջնակարգ կրթությունն ստացել է նույն քաղաքում։ 1928 թվականից խաղացել է Լենինականի պետական թատրոնում, հանդիսանալով այդ թատրոնի հիմնադիր դերասաններից։ Հետագայում տեղափոխվել է Երևան, խաղացել բանվորական թատրոնում, ապա՝ Կիրովականի թատրոնում։ Տարիների ընթացքում կատարել է մի քանի տասնյակ դերեր, որոնցից են՝ Օթելլո, Ռագո («Օթելլո»), Ֆրանց Մոոր («Ավազակներ»), Բալաբեկ («Փորձաքաշ») և այլն։

ՇԱՋԻԿ (ՔԵՈՅԼՈՒՅԱՆ) (1854—1895).— Օպերետային երգչուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ Ստացել է թերի կրթություն, զբաղվել ձեռագործով։ Դերասանապետ Պետրոս Մաղաքյանը պատահաբար լսելով նրա ձայնը և ծանոթանալով բեմական տվյալներին, կապել է թատրոնի հետ։ Մաղաքյանի խմբում մի քանի սուրբեա դերեր կատարելուց հետո 1874 թվականից հանդես է եկել Տ. Զուխաջյանի և արևմտաեվրոպական օպերետներում, իր դերերում հասնելով պրոֆեսիոնալ մակարդակի և արժանանալով այնպիսի օվացիաների, որոնց նմանը քչերին է վիճակվել հայ թատրոնում։ Նախ հանդես է եկել Մերիմեի դերում Տ. Զուխաջյանի «Արիֆի խարդախությունը» օպերետում։ Գլխագործոցը եղել է Ֆաղիմեն «Լեպլեպիճի Հորհոր աղայում»։ Նա այդ դերը կատարել է 1878-ից՝ թե Կ. Պոլսում և թե Աղրիանապոլսում, Ս. Պենկլյանի և Տ. Զուխաջյանի օպերետային խմբում։ Ռուսական բանակի սպաները այնքան են հմայվել նրա կատարողական արվեստով, որ ներկայացումներից հետո օվացիաներով նրան տարել են իր բնակարանը, մի բան, որ աննախադեպ է եղել Թուրքիայի պայմաններում։ Կարևոր դերերով հանդես է եկել նաև «Զենկիլեր», «Զեյրեկներ», «Բարեկենդանի հարսը» օպերետներում և երաժշտախառն վոդևիլներում։ Արևմտաեվրոպական օպերետներում նվաղ հաջողություն է ունեցել։

ՇԱԹԻՐՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ (ծն. 1945).— Թարգմանչուհի։ Ծնվել է Երևանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտում, որի թարգմանչական բաժինն ավարտել է 1972-ին։ 1974 թվականից աշխատել է Հայկական Խորհրդային հանրագիտարանում, 1976-ից՝ Հայաստանի գրողների միությունում որպես խորհրդական։ Նրա թարգմանությամբ ռուսերեն լույս են տեսել Գ. Սևանի «Վառվող ձիթենիները» (Մոսկվա, 1973), Վ. Պետրոսյանի «Դեղատուն Անին» (1973), Ա. Այվազյանի «Ընտանիքի հայրը» (1975), Մ. Մնացականյանի «Նահանջ տարին» (Երևան, 1979), «Կանչը» (1980) և այլն։

ՇԱԹԻՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (1916—1985).— Գրող։ Ծնվել է Թիֆլիսում։ Սովորել է նախ Երևանում, ապա՝ Մոսկվայի գրաբարանային ինստիտուտում, ավարտել 1939-ին։ Վերադառնալով Եր-

վան, զբաղվել է լրագրությամբ։ Հայրենական պատերազմի տարիներին ծառայել է Խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո վարել է տարբեր պաշտոններ, 1950—1951 թթ.՝ Գ. Սունդուկյանի անվան թատրոնի դիրեկտոր, 1951—1953 թթ.՝ Արվեստի վարչության պետի տեղակալ, 1953—1955 թթ.՝ Կինեմատոգրաֆիայի գլխավոր վարչության պետ, 1966—1969 թթ.՝ Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար և «Գրական թերթի» խմբագիր և այլն։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Պատմվածքներ» (Երևան, 1950), «Զինվորներ» (վեպ, 1955), «Գարունը նորից եկավ» (1960), «Ասք արմավենու մասին» (վեպ, 1967), «Հեղափոխության գեներալը» (1978), «Արծաթե դար» (գիրք 1-ին և 2-րդ, 1983—1985), ռուսերեն՝ «Զինվորներ» (Մոսկվա, 1958, 1963), «Կամուրջի մոտ» (1964), «Երաժշտախումբը» (1970—1976)։ «Ասք արմավենու մասին» վեպը լույս է տեսել նաև գերմաներեն (Բեռլին, 1975)։ Նրա սցենարով է նկարահանվել «Նվագախմբի տղաները» ֆիլմը (1960)։ Գրել է «Անխորտակելի կամուրջներ», «Կովկասի արտակարգ Կոմիսարը» պիեսները, որոնք բեմադրվել են հանրապետության շրջանային թատրոններում։ Թարգմանել է Ա. Հեյլի «Օդանավակայանը» (Երևան, 1974)։

ՇԱՔԻՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ (1907—1959).— Կոմպոզիտոր, դիրիժոր։ Ծնվել է Ալեքսանդրապոլում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի կոնսերվատորիայում։ Ապա ուսումը շարունակել է Լենինգրադի կոնսերվատորիայում, որի դիրիժորական ֆակուլտետն ավարտել է 1934 թ.։ Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում ղեկավարել է «Անուշի» առաջին, նոր բեմադրությունը, որը ցուցադրվել է մինչև 1939 թ.։ Զուգահեռ օպերայի աշխատանքին՝ ղեկավարել է Երևանի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբը, դասավանդել Երևանի կոնսերվատորիայում։ 1936 թ. մեկնել է Լենինգրադ, աշխատել որպես Լենինգրադի ռադիոյի սիմֆոնիկ մեծ նվագախմբի գլխավոր դիրիժոր։ Հայրենական պատերազմի տարիներին ծառայել է Խորհրդային բանակում։ 1946—1947 թթ. ղեկավարել է Մոլդավիայի ֆիլհարմոնիայի նվագախումբը։ 1947—1948 թթ. աշխատել է Երևանում որպես Հայֆիլհարմոնիայի գեղարվեստական ղեկավար և սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր։ 1948—1950 թթ.՝ Լենինգրադում որպես գիտահանրամատչելի և դոկումենտալ ֆիլմերի ստուդիայի երաժշտական ղեկավար։ 1950—1956 թթ. Լենինգրադի կոնսերվատորիայում վարել է դիրիժորական դասարանը։ Քսանական թվականների վերջերին գրել է Լարային կվարտետը, որը արժանացել է ուսուցչի՝ Ալ. Սպենդիարյանի գնահատմանը։ Ապա գրել է երկու սյուիտ, մեկը՝ հայկական ժողովրդական երգերի, մյուսը՝ ադրբեջանական մոտիվներով։ Գրել է նաև սյուիտ լենինական, լենական և հունգարական թեմաներով (1949), «Թուլզարական սյուիտ» (1950), «Սյուիտ ԽՍՀՄ ժողովուրդների թեմաներով»։ 1953 թ. գրել է «Ֆանտազիա», որը կատարվել է Լենինգրադում, 1954 թ. (տպ. 1957)։ Գրել է մոտ 80 թատերական ներկայացումների և 40 ֆիլմերի երաժշտություն։

ՇԱՔԻՐՅԱՆ ԼԵՎՈՆ (1880—1937).— Հրապարակախոս-խմբագիր, գրող։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթություն։ Երկար տարիներ որպես ուսուցիչ աշխատել է հայկական դպրոցներում։ 1922 թ. մեկնել է Հունաստան, որտեղ 1923 թ. հրատարակել է «Մեղու» երգիծաթերթը։ Հետագայում ապրել է Բուխարեստում (Ռումինիա), շարունակելով գրական գործունեությունը։ Աշխատակցել է Կ. Պոլսի «Վերջին լուր», Բուխարեստի «Պայքար» և այլ թերթերի ու հանդեսների։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Ցավին տունը» (Կ. Պոլիս, 1907), «Բերայի հովարտաները» (1913)։ Խմբագրել է նաև «Շավիղ» երգիծաթերթը։

ՇԱՒՐ ԽԱՉԱՏՈՒՐ (ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ) (1846—1890).— Աշուղ։ Ապրել է Դերբենդում։ Հորինել և կատարել է սիրային, բարոյախոսական և կենցաղային երգեր, որոնցից լայն ժողովրդականություն են վայելել «Ով մարդ», «Աբի ես կաց», «Էս ինչ տեսակ աշխարհ ա», «Այսոր դո պատկերն տեսա» և այլ երգերը։ Նա իր ստեղծագործություններից լավագույնները 1889-ին լույս է ընծայել առանձին «Ծաղիկ ժամանակի երգեր» խորագրով, մի քանիսն էլ տպագրվել են 1890 թ. «Հանդես գրականական և պատմական»-ի Բ գրքում։

ՇԱՅՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (1895—?).— Հրապարակագիր։ Ծնվել է Խարբերդում (Արևմտյան Հայաստան)։ Կրթությունն ստացել է տեղի Եփրատ կոլեջում։ 1912 թվականին մեկնել է Ամերիկա, բարձրագույն ուսում ստացել Հարվրդի և Նյու Յորքի համալսարաններում, հետևելով գրականության դասընթացներին։ Զբաղվել է հայ և Մերձավոր արևելքի ժողովուրդների պատմությամբ և բանահյուսությամբ։ Հայկական և ամերիկյան գիտական հանդեսներում տպագրել է բանասիրական հոդվածներ։ 1938 թ. լույս է ընծայել «Էնթանոս հովվերգություն» անգլերեն գիրքը, որտեղ յոթը պատմվածքներով ծանոթացնում է Աղամի և Եվայի առասպելը, Վարդի և Սոխակի միջնադարյան սիրավեպը, Վարդավառի ու Անահիտի պաշտամունքի տոնակատարությունները, Աստղիկի պաշտամունքը, Լեյլի Մեջնունը և այլ սիրավեպեր։ Հրատարակել է նաև այլ աշխատություններ՝ Արտավազդ Բ-ի, Արայի ու Շամիրամի մասին, ինչպես և «Մի ակարի հայ բանասիրության վրա» մենագրությունը, բոլորն էլ անգլերեն։ Հրատարակել է նաև գեղարվեստական ստեղծագործություններ՝ «Պատանի երգը», «Աստված՝ ստեղծագործելիս», «Արտնում» պիեսները։ Ընտրվել է անդամ «Ամերիկյան արևելագիտական ընկերության»։ 1957 թ. մասնակցել է Արևելագետների միջազգային 24-րդ կոնգրեսին՝ Մյունխենում։ Հայերենից անգլերեն կատարել է թարգմանություններ։

ՇԱՂՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (1898—1970).— Դրամատուրգ։ Ծնվել է Վանում։ Կրթությունն ստացել է տեղի Երամյան վարժարանում։ 1915 թ. ընտանիքով գաղթել է Կովկաս, բնակվել Երևանում։ 1920—1923 թթ. ծառայել է կարմիր բանակում։ Զորացրվելուց հետո աշխատել է Լենինականում, վարել տարբեր պաշտոններ։ 1927—1929 թթ. եղել է Լենինականի թատրոնի, 1929—1931 թթ. Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնի դիրեկտոր, 1931—1934 թթ.՝ Թալինի շրջգործկոմի նախագահ, 1936—1939 թթ.՝ Հայաստանի խորհրդային գրողների միության գրական ֆոնդի դիրեկտոր, 1939—1941 թթ. Հայգրատիպի դիրեկտոր։ Գրել է մի շարք պիեսներ, որոնք բեմադրվել են հանրապետության տարբեր թատրոններում, թարգմանվել են ադրբեջաներեն, թրքերեն։ Հայկինոն 1938 թ. նրա սցենարով նկարահանել է «Լեռնային հեղեղ» ֆիլմը։ Առանձին գրքույկներով լույս ընծայած երկերն են՝ «Հարձակում» (Երևան, 1931), «Ուսերության ճանապարհին» (1935), «Բարձրացող ամրոցներ» (պիես) (1936) և այլն։

ՇԱԽԿՅԱՆ ԳԱՌՆԻԿ (ծն. 1937).— Ճարտարապետ։ Ծնվել է Թումանյանի շրջանի Շնող գյուղում։ 1955—1961 թթ. սովորել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում, իսկ 1970—1974 թթ. նույն ինստիտուտի ասպիրանտուրայում։ 1975 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ Աշխատել է որպես Ալավերդու գլխավոր ճարտարապետ, «Հայկոմունտեսգիծ» ինստիտուտի գլխավոր մասնագետ, ապա՝ ճարտարապետա-շինարարական բաժնի վարիչ։ Նախագծել է մեկ տասնյակից ավելի հասարակական, կոմունալ և այլ շենքեր, այդ թվում՝ գրողների հանգստյան տունը Ծաղկաձորում, Հոկտեմբերյան քաղաքի հյուրանոցը (երկուսն էլ Հ. Ազյանի հետ), Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին նվիրված կոթող Ալավերդիում, Հայրենական պատերազմում զոհված մարտիկներին նվիրված հուշարձանները և այլն։ 1978-ից դասավանդում է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ամբիոնում։ Գիտական մամուլում տպագրել է հոդվածներ հայ ճարտարապետության տարբեր հարցերի մասին։ Գրել է «Ալավերդին մեծ Հոկտեմբերի ծնունդն է» աշխատությունը (Երևան, 1967) և «Ծնունդ» մենագրությունը։

ՇԱՀԱԶԻԶ ԵՐՎԱՆԴ (1856—1951).— Բանասեր, բանասիրական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Աշտարակում։ Նախնական կրթությունն ստացել է Երևանի գավառական դպրոցում։ 1870 թ. հորեղբոր՝ բանաստեղծ Սմբատ Շահազիզի օժանդակությամբ ընդունվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը։ 1882 թ. մեկնել է Նոր Նախիջևան, 35 տարի պաշտոնավարել է թեմական դպրոցում։ 1880-ական թվականների վերջերից զբաղվել է նաև բանասիրությամբ, հմտալից հոդվածներով աշխատակցել «Հանդես գրականական և պատմական», «Լոմա», «Տարազ» և այլ պարբերականներին։ 1888 թ. Մոսկվայում առանձին գրքով լույս է ընծայել «Միքայել Ղազարյան-Նալբանդյան» (արտատպություն՝ «Հանդես գրականական և պատմականից»), որը առաջին ծավալուն հետազոտությունն էր հայ

1931—1941 թթ. աշխատել է տարբեր թերթերի խմբագրություններում, ժողովրդական ստեղծագործության տանը, Հայկական հեռագրական գործակալությունում։ Մասնակցել է Հայրենական պատերազմին և զոհվել է։ Խորհրդահայ մամուլում տպագրել է արձակ և չափածո երկեր, որոնք հետմահու լույս են տեսել «Ակնարկներ և պատմվածքներ» (Երևան, 1951) և «Ակնարկներ և չափածո էջեր» (1955) ժողովածուներով։

ՇԱՀԲԱԶ ՀԱԿՈԲ (1865—1915).— Բանաստեղծ։ Ծնվել է Վասպուրականում։ Նախնական կրթությունն ստացել է Վանում։ Կարճ ժամանակ զբաղվել է ուսուցչությամբ, ապա մեկնել է արտասահման, շրջագայել մի շարք երկրներում, եղել նաև Կովկասում։ Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո՝ 1911 թ. մեկնել է Կ. Պոլիս, 1913-ից դարձել պատրիարքարանի քարտուղարը։ Ունեցել է գրական-հրապարակախոսական բեղուն գործունեություն։ Աշխատակցել է պոլսահայ մի շարք թերթերի ու հանդեսների։ Առանձին գրքով 1911 թ. Կ. Պոլսում լույս է ընծայել «Քրդոհայ պատմությունը», բաղկացած երկու մասից, որտեղ տրվում է քուրդ ժողովրդի պատմությունը, անգիր բանահյուսությունը, տեղագրական և աղգագրական տեղեկություններ և այլն։ Մի աշխատություն էլ գրել է հայ և քուրդ երգերի ընդհանրության մասին։ Օգտագործել է Շահրազի ծածկանունը։ Սպանվել է մեծ եղեռնի օրերին, Տեր-Զորի ճանապարհին։

ՇԱՀԲԱԶՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ծն. 1924).— Նկարիչ։ Ծնվել է Աշտարակում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Լենինականի գեղարվեստական ստուդիայում, Երևանի գեղարվեստական ուսումնարանում և Գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել 1954 թ.։ Նույն տարվանից մասնակցել է ցուցահանդեսների։ Ապրում և ստեղծագործում է Կրասնոդարում։ 1957 թ. Մայկոպում ունեցել է անհատական ցուցահանդես։ Լավագույն գործերից են՝ «Նովոռոսիյսկի նավահանգիստը», «Գելենջիկցի ձկնորսը», «Հովիվը» և այլն։

ՇԱՀԲԱԶՅԱՆ ԵՐԱՆՈՒՀԻ (ՕԼԳԱ).— Թատերական, մշակութային գործիչ։ Ծնվել է Նոր Նախիջևանում, որտեղ ստացել է հայկական և ռուսական կրթություն։ 1870-ական թվականների սկզբներից նկատելի դեր է կատարել Նոր Նախիջևանի մշակութային կյանքում։ 1870—1871 թատերաշրջանում մասնակցել է Թ. Ֆասուլյանի ներկայացումներին, այդ առիթով էլ մտերմական կապերով կապվել է գերասան Պետրոս Ադամյանի հետ, հետագայում երկար տարիներ ունեցել է նամակագրական կապ նրա հետ, օգնել նրան խորհուրդներով։ Եղել է Նոր Նախիջևանի կրթական, մշակութային, մասնավորապես թատերական կյանքի ակտիվ դեմքերից, համարվել համայնքի «պատվո տիկին»։ Նրան ներ պարտական Պ. Ադամյանի բազմաթիվ նամակների բնագրերն անվնաս պահպանումը, նամակներ, որոնք հետագայում Ե. Շահազիզի ջանքերով տեղափոխվել են Հայաստան և այժմ պահվում են Ե. Չարենցի անվան թանգարանում և տպագրված են «Պ. Ադամյանի նամակների» ժողովածուում (Երևան, 1959)։ Մեռել է խոր ծերության հասակում, 1920-ական թվականների կեսերին։

ՇԱՀԲԱԶՅԱՆ ԿԱՌԱ (ծն. 1910).— Դերասանուհի։ Ծնվել է Թավրիզում (Իրան)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանում, 1934—1938 թթ. Վ. Վարդանյանի ղեկավարած թատերական ստուդիայում, ավարտելուց հետո երկար տարիներ աշխատել է Երևանի պատանի հանդիսատեսի պետական թատրոնում, որտեղ նրա կատարած դերերից են՝ Բեատրիչե («Երկու տիրոջ ծառա»), Անահիտ (համանուն պիեսում), Կրուչինինա («Անմեղ մեղավորներ»), Վիշնևսկայա («Եկամտավոր պաշտոն»), Տաճատուհի («Սամվել») և այլն։

ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԵՆՐԻԿ (ծն. 1938).— Քանդակագործ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում և Գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել է 1966 թ.։ 1967 թվականից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Առատություն», «Քույրեր», «Քաբեկամություն», «Պատանու դիմաքանդակը», «Մարմնամարզուհին», «Արգիշտի», Ա. Խաչատրյան և այլն։

ՇԱՀԲԱԶՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (ծն. 1904).— Նկարիչ։ Ծնվել է Արտերիլում (Իրանական Ադրբեջան)։ Փոքր հասակից ընտանիքով տեղափոխվել է Փհլևի, որտեղ ստացել է նախնական կրթությունը։ Հետագայում ուսումը շարունակել է Թեհրանի հայկական դպրոցում, ապա հինգ տարի էլ սովորել է Թեհրանի գեղարվեստի ուսումնարանում։ 22 տարեկանում ստեղծել է իր արհեստանոցը։ Հիմնականում զբաղվել է պատմական հուշարձանների նկարումով։ Նրա այդ կարգի նկարներից են «Քարվանսարայից Վարիչ», «Ս. Թադեի վանքը», «Բերման քաղաքի ընդհանուր տեսարանը» և այլն։ Իր նկարներն ստորագրում է Միշա և այդ անունով էլ հայտնի է Իրանում։ 1948 թ. մասնակցել է ՎՈԿՍ-ի կողմից Իրանում կազմակերպված ցուցահանդեսին։ Դեղանկարչական մյուս գործերից են՝ «Գյուղական տեսարան», «Առու», «Ռեզաք» և այլն։

ՇԱՀԲԱԶՅԱՆ ՇԱՔԵ.— Երգչուհի։ Ծնվել է Ամերիկայի Սան-Ֆրանցիսկո քաղաքում։ Մասնագիտական կրթությունն ստացել է ծննդավայրի կոնսերվատորիայում։ 1955 թվականից սկսած համերգներ է տվել ամերիկյան և արտասահմանյան բազմաթիվ քաղաքներում, այդ թվում՝ Կ. Պոլսում, Թեհրանում և այլն։ 1961 թ. եկել է նաև Խորհրդային Հայաստան, երգել Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում, Երևանի ռադիոյից և հեռուստատեսությամբ։ Ծրագրում բացի ամերիկյան և եվրոպական երաժշտությունից ունեցել է հայկական երգեր՝ «Ցար Նազանի», «Սիրուհիս» և այլն։ Որպես երաժշտության դասատու պաշտոնավարում է Լոս-Անջելեսի ամերիկյան դպրոցներից մեկում, որտեղ նաև ղեկավարում է մի մեծ երգչախումբ։ Մասնակցել է Սան-Ֆրանցիսկոյի օպերային խմբի ներկայացումներին։

ՇԱՀԲԱԶՅԱՆ ՌՈՒԲԵՆ (ծն. 1934).— Քանդակագործ։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել է 1962 թ.։ Հաջորդ տարվանից մասնակցել է հանրապետական ցուցահանդեսների։ Ստեղծագործություններից հիշատակության արժանի են՝ «Աղջիկն ու մահը», «Սայաթ-Նովա», «Գլանող բանվորը», «Խաղաղություն», «Պայքար գնդակի համար» և այլն։ 1976 թ. ցուցադրվել են նրա դրվագագործական ստեղծագործությունները, որոնք բարձր են գնահատվել մամուլի և արվեստագետների հասարակության կողմից։

ՇԱՀԲԱԶՅԱՆ ՍՏԵՓԱՆ (1883—1923).— Հրապարակախոս, խմբագիր։ Հեղափոխական գործիչ։ Ծնվել է Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում, որտեղ ստացել է քառամյա կրթություն հայկական դպրոցում, ապա սովորել է Բուլղարական գիմնազիայում։ Աշակերտական տարիներից խանդավառվել է հեղափոխական գաղափարներով, եղել հայ սոցիալիստների խմբակի եռանդուն անդամներից։ 1901 թ. ընդունվել է Բուլղարական բանվորական սոցիալ-դեմոկրատական կուսակցության շարքերը, ունեցել կուսակցական բեղուն գործունեություն։ 1909 թ. մի քանի ընկերներով ստեղծել են «Նոր հոսանք» հայկական սոցիալ-դեմոկրատական խմբակը։ 1910 թ. գրել է մի գրքույկ, բացատրել այդ խմբակի նպատակները։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ծառայել է բուլղարական բանակում, հեղափոխական աշխատանք է կատարել զինվորների մեջ։ Պատերազմից հետո առավել մեծ աշխատանք է կատարել բուլղարական Կոմունիստական կուսակցության շարքերում, կազմակերպել է ցույցեր, գրել կոչեր։ Նրա մասնակցությամբ 1919 թ. Պլովդիվում ստեղծվել է «Հայ բանվորական կոմունիստական միությունը»։ Գրել է այդ միության կոչը, որտեղ հայ ժողովրդի փրկությունը դնում է Հայաստանի խորհրդայնացման մեջ։ Նույն 1919 թ. նրա ջանքերով ստեղծվել է «Մամուլի կոմիտե», որը 1920 թվականից լույս է ընծայել «Նոր հոսանք» հայերեն կոմունիստական թերթը՝ խմորատիպ, ապա նույն տարվա հուլիսից «Նոր հոսանքի» փոխարեն լույս է տեսել «Կարմիր լուրեր» տպագիր թերթը, որի առաջին համարում տպագրած «Կեցցե խորհրդային Հայաստանը» առաջնորդող հոդվածով ողջունել է Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը։ Հոդվածներ է տպագրել «Կարմիր լուրերում» և նրան հաջորդող «Նոր աշխարհ» թերթերում։ Նրա ջանքերով 1922 թ. Պլովդիվում հիմնադրվել է «Մտեփան Շահումյան» ընթերցարանը։ Ցանկվի սեակցիոն խմբակի իշխանության գլուխ անցնելուց հետո, ի թիվս այլ կոմունիստների, ձերբակալվել է և գնդակահարվել։

ՇԱՀԳԱԼԴՅԱՆ ԱՐՏԵՄ (ծն. 1910).— Դիրիժոր, կոմպոզիտոր. Կաբարդինոբալկարական Ինքնավար Հանրապետության ժողովրդական արտիստ (1964)։ Ծնվել է Ռուսաստանի Պրոխլատնի քաղաքում։ 1928—1929 թթ. Դոնի Ռոս-

տովի երաժշտական դպրոցում հետևել է ջութակի, 1930—1932 թթ. սովորել է Մոսկվայի պետական կոնսերվատորիայում, իսկ 1951—1953 թթ.՝ Լենինգրադի կոնսերվատորիայում, որտեղ հետևել է դիրիժորության։ Հիմնականում ապրել և գործել է Նալչիկում։ 1924—1942 թթ. աշխատել է Նալչիկի ռադիոյում իբրև մենակատար ջութակահար, նաև դիրիժոր, 1942—1947 թթ.՝ Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնում իբրև դիրիժոր, ապա կրկին մեկնել է Նալչիկ։ 1947—1967 թթ. եղել է տեղի պետական ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժորը և գեղարվեստական ղեկավարը, իսկ 1967—1970 թթ. Նալչիկի օպերայի և բալետի պետական թատրոնի գլխավոր դիրիժորը։ Գրել է բազմաթիվ երգեր, գերազանցապես կաբարդինյան և ռուս գրողների տեքստերով։ Տպագրված գործերից են՝ «Կաբարդինյան քայլերգ»՝ փողային նվագախմբի համար (Մոսկվա, 1958), «Ֆարիզատ»՝ ձայնի և նվագախմբի համար (Մոսկվա, 1969), «14 երգ» (ժողովածու) (Նալչիկ, 1960) և այլն։ Նրա երգերից նմուշներ թարգմանվել են հայերեն և տպագրվել մեր երգարաններում։

ՇԱՀԵՆ (ՍԱՐԳՍՅԱՆ) (ծն. 1909).— Գուսան. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ (1967)։ Ծնվել է Ղուրդուբուլաղ գյուղում (այժմ՝ Ղուկասյանի շրջան, Կրասար)։ 1930—1937 թթ. աշխատել է ծննդավայրում, 1937—1941 թթ. Հայֆիլհարմոնիայի երգի-պարի պետական անսամբլում որպես մենակատար։ Հայրենական պատերազմի տարիներին ծառայել է խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո՝ 1945 թվականից զեկավարել է «Շիրակ» գուսանական անսամբլը։ Մասնակցել է հայ արվեստի Մոսկվայում կայացած երկու տասնօրյակներին (1939, 1956) և մի քանի փառատոների։ Հորինել է գուսանական մի շարք երգեր, որոնք կատարվում են ուրիշ երգիչների կողմից։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Գուսան Հայաստանի» (Երևան, 1964), «Գուսան Հայաստանի» (1977)։

ՇԱՀԵՆ ԵՆԻՎՔ (1881—1915).— Դերասան, թատերական գործիչ։ Ծնվել է Պարտիզակում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Կ. Պոլսում։ 1900-ական թվականների կեսերից մասնակցել է դպրոցական ներկայացումների և աչքի ընկել արտասանական կաթողությամբ։ 1908 թ. օսմանյան սահմանադրության հռչակումից անմիջապես հետո ստեղծել է «Աղատ թատրոն» խումբը և ավել մի շարք ներկայացումներ, մրցելով նույն տարում բեմական ասպարեզ մտած Վահրամ Փափազյանի հետ։ Ներկայացրել է գերազանցապես գյուղական պիեսներ՝ Վ. Հյուգոյի «Արքայն զրոսնու», Մոլիերի «Ակամա բժիշկը», «Բանի ամուսնությունը», Ջիռկոմանիի «Ոճրագործի ընտանիքը», Ա. Դյումայի «Քինը» և այլն, որոնց բոլորի մեջ գլխավոր դերերը կատարել է ինքը։ Հետագայում խաղացել է Ա. Վրույրի կազմակերպած խմբում։ Վ. Փափազյանի հետ շրջագայել է Զմյուռնիայում և այլուր, նրա ներկայացրած «Օթելլոյում» Հանդես գալով որպես Յագո։ 1915 թ. սկզբներին կազմակերպել է նոր թատերախումբ, բայց հազիվ մեկ ներկայացում տված («17 տարեկանները») մեծ եղեռնի օրերին, ի թիվս հարյուրավոր մտավորականների՝ նրան էլ ձերբակալել են, աքսորել և տանջամահ արել։

ՇԱՀԵՆ ԷԼՉԱ (1895— ?).— Դերասանուհի։ Աբխազական ԻԽՍՀ ժողովրդական արտիստ։ Վրացական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Կինն է դերասան Հմայակ Շահենի։ Բեմական ասպարեզ է մտել 1914 թ.։ Ամուսնու կազմած թատերախմբով շրջագայել է Հյուսիսային Կովկասի մի շարք քաղաքներում, նաև Ղրիմում։ Այնուհետև խաղացել է Սուխումում, դարձյալ Հմայակ Շահենի ստեղծած թատերախմբում։ Խորհրդային իշխանության հաստատումից հետո իր բախտը կապել է Սուխումի հայկական թատրոնի հետ, գտնելով նրա հիմնական ուժերից մեկը։ Լավագույն դերերից են՝ Իշխանուհի («Հին աստվածներ»), Զեյնաբ («Գավաճանություն»), Ռոզալիա («Կորրագո») և այլն։

ՇԱՀԵՆ (ՇԱՀԻՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ) (1883—?).— Դերասան, ռեժիսոր։ Ծնվել է Ախալցխայում (այժմ՝ Վրացական ԽՍՀ)։ Տարրական կրթությունն ստացել է ծննդավայրում, մասնագիտական՝ Օդեսայում, որտեղ 1906—1907 թթ. սովորել է Գոլինովի դրամատիկական կուրսերում։ 1908—1910 թթ. զեկավարել է Նուխի, Ախալցխայի, Նուշի քաղաքների սիրողական թատերախմբերի աշխատանքները։ 1914 թ. կազմել է թատերախումբ, ներկայացումներ տվել Հյուսիսային Կովկասի հայաշատ քաղաքներում, նաև Ղրիմում։ Ապա իր տիկնոջ՝ Էլզա Շահենի հետ մեկնել է Աբխազիա, Սուխումում ստեղծել է թատերախումբ, հյուրախաղերով եղել ծովափնյա հայաշատ բոլոր կենտրոններում, ցուցադրելով Ալ. Շիրվանզադեի «Նամուսը», Լ. Շանթի «Հին Աստվածները», Ա. Յուժին Սումբատովի «Գավաճանությունը» և այլ պիեսներ։ Որպես դերասան աչքի է ընկել դրամատիկ դերերում, որոնցից են՝ Սուլեյման խան («Գավաճանություն»), Ռուստամ, Բարխուդար («Նամուս»), Կորրագո («Ոճրագործի ընտանիքը»), Օթելլո, Վանահայր («Հին աստվածներ»), Կրիլինսկի («Կրիլինսկու հարսանիքը»), Գաղուն («Բեկում») և այլն։

ՇԱՀԵՆ ՍԵԴՐԱԿ (1887—1975).— Գրող, հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Քղիի գավառի Օրոր գյուղում։ Կրթությունն ստացել է Խարբերդի Եփրատ կոլեջում։ Ավարտելուց հետո, 1908 թվականից որպես ուսուցիչ աշխատել է նախ Տիգրանակերտում, ապա՝ Արաբկիրում, Մալաթիայում, Տարոնում, Քղիում։ 1913 թ. մեկնել է Ամերիկա։ 1915 թ. եկել է Կովկաս, մասնակցել կամավորական շարժումներին։ 1919 թ. անցել է Փարիզ, հաջորդ տարի վերադարձել Ամերիկա, որտեղ ունեցել է գրական, հրապարակախոսական բեղուն գործունեություն։ Մոտ 10 տարի եղել է «Երիտասարդ Հայաստան» թերթի խմբագիրը, այդ թերթի էջերում տպագրել է բազմաթիվ հոդվածներ։ Աշխատակցել է նաև այլ պարբերականներին։ Գրել է դրամատիկական մի շարք երկեր, ինչպես «Տանջվածները», «Թալաթի անկումը», «Զեյթուն», «Հայաստանի հարսանիք», «Կարկառուն կամարներ», «Կարմիր աղջիկը», «Քսան կախաղաններ», «Մացակ բիձա», «Կիլիկիո ձախողանքը» և այլն, որոնց մի մասը բեմադրվել է տեղում։ 1963 թ. այցելել է Հայաստան։ Վերադառնալով Ամերիկա, տպագրությունները լույս է ընծայել 1965-ին՝ «Հայաստանի հայակազ նվաճումները» գրքում։ 1965 թ. Բեյրութում լույս է տեսել նրա «Քար Թորոս» երկը, որը հանդիսանում է «Սասնա ծռեր» դյուցազնավեպի մի նոր պատումը։

ՇԱՀԻԿՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒ (1901—1965).— Սագումով հայ ռումինական գրող։ Ծնվել է Բուխարեստում, Մելքոն Շահիկյանի ընտանիքում։ Եղբայրն է Յոն Շահիկյանի։ Կրթությունն ստացել է Բուխարեստի գեղարվեստի ակադեմիայում։ 1924 թվականից հոդվածներ է տպագրել ռումինական մամուլում։ 1936 թ. խմբագրել է «Ատլաս» ռումիներեն շաբաթաթերթը։ 1943-ին ընդունվել է Ռումինիայի կոմկուսի շարքերը։ Ռումինիայի ազատագրումից հետո (1944) 12 տարի գլխավորել է «Ռեվյու Ռումենե» ֆրանսերեն պարբերականը։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Հանքագործների գործադուլը» (1929), «Գրիվիցա» (1933). երկուսն էլ պոեմներ են։ 1959 թ. լույս է տեսել նրա «Դանուբյան պատմվածքներ» ժողովածուն։ Տպագրել է մի քանի պիես՝ «Գեորգե», «Ջուրջուլի եղբորորդին», «Ջայլամի փետուրներով գլխարկը», «Խորտակում» և այլն, որոնք բոլորն էլ բեմադրվել են ռումինական թատրոններում։ Գրել է նաև մանկական երկեր, որոնցից նմուշներ թարգմանվել են հայերեն։

ՇԱՀԻԿՅԱՆ ԱՆՔԱ.— Ռումինական բեմի դրամատիկ դերասանուհի։ Կրթությունն ստացել է Բուխարեստի կոնսերվատորիայում։ Խաղացել է ռումինական ազգային թատրոնում, որտեղ նրա կատարած դերերից են՝ Շիմենա («Սիդ»), Լեդի Մակբեթ («Մակբեթ»), Ջիլբի («Ֆաննի») և այլն։

ՇԱՀԻԿՅԱՆ ԼԻԱ.— Ռումինական բեմի դրամատիկ դերասանուհի։ Ծնվել է Բուխարեստում։ Դուստրն է Յոն Շահիկյանի, քույրը՝ Անքա Շահիկյանի։ Մասնագիտական կրթությունն ստացել է Բուխարեստի կոնսերվատորիայում։ Խաղացել է ռումինական ազգային թատրոնում, որտեղ նրա կատարած դերերից են՝ Դեզդեմոնա («Օթելլո»), Թագուհի («Ջրով գավաթ»), Լեդի Էնն («Ռիչարդ 3-րդ»), Կլեոպատրա («Անտոնիոս և Կլեոպատրա») և այլն։

ՇԱՀԻԿՅԱՆ ՅՈՆ (1897—1965).— Ռեժիսոր, Ռումինական ժողովրդական Հանրապետության վաստակավոր արտիստ։ Հայրն է դերասանուհիներ Անքա և Լիա Շահիկյանների։ Կրթությունն ստացել է Բուխարեստում։ Սովորել է Կինոարվեստի ինստիտուտում։ Ավարտելուց հետո, 1920-ական թվականների կեսերից նվիրվել է բեմարվեստին։ Նախ որպես դերասան խաղացել է ռումինական ազգային թատրոնում, հանդես եկել դրամատիկ մի շարք դերերում, դասական պիեսներում, ապա նվիրվել է ռեժիսորության։ Բուխարեստի պետական թատրոնում

բեմադրել է տասնյակ պիեսներ, գերազանցապես դասական հեղինակների գործեր (Եվրիպիդես, Շեքսպիր, Կորնեյլ, Բերնարդ Շոու, Տոլստոյ, Գոգոլ և այլն)։ Ռումինական մամուլը բացառիկ հիացմունքով է խոսել Շեքսպիրի «Ռիչարդ 3-րդի», նաև «Վերոնայի երեք երկվորյակների» նրա բեմադրությունների և ինքնատիպ մեկնաբանությունների մասին։ Ունեցել է նկատելի գործունեություն ռումինական կինոյում։ Նրա ռեժիսորությամբ նկարահանվել են գեղարվեստական մի քանի ֆիլմեր։ Երկար տարիներ որպես պրոֆեսոր դասախոսել է «Քարահիալե» թատերական ինստիտուտում, ավանդելով բեմական արվեստ։ Նրան աշակերտած բազմաթիվ մարդիկ հետագայում դարձել են ռումինական թատրոնի ականավոր դեմքերը, ինչպես դերասանուհի Իրինա Փեթրեսկուն։ Համարվել է ռումինական թատրոնի և կինոյի ռահվիրաներից։ Բեմադրած պիեսներից մի քանիսը ինքն է թարգմանել բնագրերից, ինչպես «Ռիչարդ 3-րդը», «Վերոնայի երեք երկվորյակները»։

ՇԱՀԻՆ ԷԴԳԱՐ (1874—1947).— Նկարիչ։ Ծնվել է Վիեննայում, Փոքր հասակից ապրել է Կ. Պոլսում։ Միջնակարգ կրթությունն ստացել է տեղի Մխիթարյանների դպրոցում, ապա ուսումը շարունակել է Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, որտեղ 1890—1892 թթ. աշակերտել է պրոֆեսոր Անտոնիո Պառլետտիին։ Հետագայում մեկնել է Փարիզ, մասնագիտությունը կատարելագործել Ժյուլիենի ակադեմիայում։ Այնտեղ նկարչության նրա ուսուցիչներն են եղել Բենժամին Կոնստան և Ժան-Պոլ-Լորանը։ 1896-ին Փարիզում ցուցադրվել է նրա առաջին գործը՝ «Զբաղվոր մուրացիկը», հաջորդ տարի՝ «Փողոցի մի անկյուն» կտավը, իսկ 1898—1899 թթ.՝ «Փողոցային մարդը», «Ճնշահեղձ կինը», «Մի փողոց Մոնմարտրում»։ Յուղաներկ այս գործերից հետո, դարասկզբից անցել է օֆորտին, աստիճանաբար հռչակվելով ամբողջ Եվրոպայում։ Նրան հետաքրքրող աշխարհը մնացել է նույնը՝ թշվառների կյանքը, ինչպես «Փոքրիկ կարուհին», «Կնոջ շահագործողը», «Խափշիկ կինը» և այլն։ Ֆրանսիացի արվեստագետները բացառիկ հիացմունքով են խոսել նրա արվեստի մասին։ Գլուխգործոց ստեղծագործություններից են համարվել «Քնածներ կամուրջի տակ», «Մուրացիկ ծեր կինը և կեղեցու գուանը», «Անգործը», «Մաղրաժուներ», «Գուշակուհին», «Գետնախնձոր ասպարելիքս» և այլն։ Նույն այդ տարիներին ստեղծել է Անատոլ Ֆրանսի, Ալֆրեդ Սուլենի, Օգյուստ Միրբոյի, դերասանուհի Լուիզ Ֆրանսի, դերասան Լերանի և այլոց դիմանկարները։ Նկարազարդել է Ա. Ֆրանսի «Կատակերգական պատմություն», Գաբրիել Մուրեյի «Փարիզի ռոմանտիկաի մարդիկ», Օգյուստ Միրբոյի «Նախասենյակում» գրքերը։ Նրա բնանկարներից են՝ «Վիլեռի ջրանցքը», «Հին Փարիզը», «Փոքր ռոմանտիկաը», «Լյուքսեմբուրգի պուրակում», «Պուա դը Բուլոնյեն», «Ուռենիները» և այլն։ Նրա գործերը ցուցադրվել են տասնյակ ցուցահանդեսներում, տարբեր երկրներում, արժանացել մրցանակների։ Ունեցել է անհատական ցուցահանդեսներ։ Երևանում նրա գործերը ցուցադրվել են 1936, 1938, 1954 և այլ տարիների, Թբիլիսիում՝ 1936-ին, Լենինգրադում՝ 1940-ին, Մոսկվայում՝ 1964-ին։ Իր լավագույն գործերը նվիրել է Հայաստանին և այժմ Երևանի պետական պատկերասրահի սեփականությունն են։

ՇԱՀԻՆՅԱՆ ԱԶԱՏ (ծն. 1928).— Գրող։ Ծնվել է Բաքվում։ Փոքր հասակից նրանց ընտանիքը տեղափոխվել է Երևան, որտեղ ստացել է կրթություն։ 1944 թ. ավարտել է թատերական տեխնիկումը։ Գրել է «Սուրի և Սամի արկածները», «Փոքր բակի մեծ հոգեները», «Իմ սիրելի փոքրիկը», «Արագիլ բարով եկար», «Թող զողանչեն զանգերը» պիեսները, որոնք բեմադրվել են հանրապետության տարբեր թատրոններում։ «Տրամվայը պարկ է գնում» պիեսը բեմադրվել է Մոսկվայում, Մոսսովետի թատրոնում, 1974 թ., իսկ «Արգելված երազներ» պիեսը՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, 1980 թ.։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Ջմեռային գիշերվա երազը» (Երևան, 1955), «Մեր գիշերային արկածները» (1956), «Սուրի և Սամի արկածները» (1959, 1975), «Թատրոնը սառույցի վրա» (1962), «Անհայտ մարդիկ» (1962), «Տղան և նրա բարի թռչունները» (1968), նույնը ռուսերեն (1971), «Տրամվայը պարկ է գնում» (1981) և այլն։

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐՇԱՄ (ծն. 1918).— Քանդակագործ. Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ (1972)։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստական

ուսումնարանում և գեղարվեստական ինստիտուտում, որի քանդակի բաժինն ավարտել է 1951-ին։ 1940-ից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների։ Ստեղծել է բազմաթիվ քանդակներ, որոնք զարդարում են Երևանում և հանրապետության այլ վայրերում։ Դրանցից են՝ Վահան Տերյան (մարմար, Վ. Տերյանի անվան դպրոցում), Թորոս Ռոսլին (Մատենադարանի մուտքի մոտ), Ծովակալ Բաքունի կիսանդրին (Երևան, Հայրենական մեծ պատերազմի թանգարան), Տիգրան Չուխաջյան (Երևան, Չուխաջյանի անվան երաժշտական դպրոց), Մեսրոպ Մաշտոց (Դիլիջան), Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշակոթող (Հրազդանի շրջանի Մեղրաձոր գյուղ), ինչպես և մի շարք դիմաքանդակներ։ 1969-ից դասավանդում է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում։

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱԳԴԱԼԻՆԱ (?—1961).— Նկարչուհի, երաժշտագետ։ Ծնվել է Նոր Նախիջևանում։ Քույրն է գրող Մարիետա Շահինյանի։ Կրթությունն ստացել է Մոսկվայի համալսարանում, հետևել նկարչության և երաժշտության։ Ուսման ընթացքն ավարտելուց հետո զբաղվել է մանկավարժական աշխատանքով, միաժամանակ ստեղծագործել։ Խորհրդային կարգերի հաստատումից հետո Ռոստովում հիմնադրել է Վրուբելի անվան Գեղարվեստների դպրոց, որտեղ աշխատել է մի քանի տարի որպես դիրեկտոր և դասատու։ Այդ դպրոցում սովորել են բազմաթիվ նկարիչներ, քանդակագործներ, ճարտարապետներ, ինչպես ճարտարապետ Մարկ Գրիգորյանը։ Հետագայում մասնագիտությունը կատարելագործել է Լենինգրադի Գեղարվեստների ակադեմիայում, ավարտել 1926-ին։ Հաջորդ տարի եկել է Երևան, երկու տարի դասավանդել միջնակարգ դպրոցում, նորից վերադարձել Մոսկվա, որտեղ ապրել է մինչև կյանքի վերջը։ Թողել է մի շարք նկարներ, քանդակներ, երաժշտական ստեղծագործություններ։ Լավագույն գործերից են՝ «Սերմնացանը» քանդակը, Մ. Շահինյանի դիմանկարը, «Երևան», «Երեխաներ» նկարաշարքը։ Դաշնամուրի համար նրա գրած երեք պիեսները 1962-ին լույս են տեսել Պրագայում։ Ձևավորել է գրքեր, պատրաստել տիկնիկներ՝ Մոսկվայի թատրոնների համար։

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ (1888—1982).— Գրող, բանասեր, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր (1946), Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ (1950)։ Ծնվել է Մոսկվայում, բժիշկ Սերգեյ Շահինյանի ընտանիքում։ Մայրը՝ Փեփրոնեն, եղել է նորնախիջևանցի։ Կրթությունն ստացել է Մոսկվայում՝ Գերլեի կանանց բարձրագույն դասընթացներում, ավարտել պատմա-փիլիսոփայական բաժինը։ 15 տարեկան հասակից գրել է բանաստեղծություններ, որոնք տպագրվել են ռուսական մամուլում։ 1909 թ. լույս է ընծայել չափածո երկերի առաջին ժողովածուն՝ «Առաջին հանդիպումներ» խորագրով, իսկ 1913 թ.՝ «Ozientalia» ժողովածուն։ 1914 թ. մեկնել է Գերմանիա՝ Հայդելբերգում մագիստրոսական աստիճան ստանալու, սակայն վրա հասնելով առաջին համաշխարհային պատերազմը, վերադարձել է Ռուսաստան։ 1916 թ. լույս է ընծայել «Իր ճակատագիրը» վեպը, որն ամբողջացված վերահրատարակվել է 1923-ին։ 1922-ին տպագրել է «Փոփոխություն» վեպը, ապա՝ «Բարձր դասի տիկնոջ արկածները»։ 1923—1925 թթ. մասմաս հրատարակել է «Մես-Մենդ» արկածային եռահատոր վեպը՝ Ջիմ Դոլլար ծածկանունով։ Այդ վեպը 1926-ին վերածվել է ֆիլմի, նրա վերջին մասն ավարտել է 1935 թ.։ Ունեցել է մեծ հաջողություն, թարգմանվել մի քանի լեզուներով, այդ թվում հայերեն (Երևան, 1971)։ 1927-ից մի քանի տարի ապրել է Հայաստանում, ուսումնասիրել Զորագէսի շինարարությունը, 1931-ին հրատարակել է «Հիտրոցենտրալ» վեպը, որի հայերեն թարգմանությունը լույս է տեսել հաջորդ տարի։ Դեռևս 1930-ական թվականների կեսերից ձեռնարկել է եռամաս մի վեպ-ժամանակագրության ստեղծմանը, նվիրված Վ. Ի. Լենինին։ Առաջին հատորը՝ «Ուլյանովների ընտանիքը», տպագրվել է 1937-ին, նոր խմբագրությամբ կրկին հրատարակվել 1957 թ. (հայերենը՝ 1961-ին), երկրորդ հատորը՝ «Առաջին համառուսականը» լույս է տեսել 1965-ին (հայերենը՝ 1970-ին), ապա տպագրել է «Պատմության հարցատումը» վեպի էպիզոդը (1970) և «Զորս դաս Լենինից» (1970), (հայերենը՝ 1976)։ Նրա բազմահատոր այս ստեղծագործությունը 1972-ին արժանացել է Լենինյան մրցանակի։ Մյուս երկերից հիշատակության

արժանի են՝ «Մեռյալներից հարություն առածը» (1964), նվիրված չեխ կոմպոզիտոր Իոսիֆ Միսլեիչիկի կյանքին։ Այդ գրքի համար Չեխոսլովակիայի կառավարության կողմից պարգևատրվել է ոսկե մեդալով։ Քանական թվականների սկզբներից աշխատակցել է «Իզվեստիա», «Պրավդա», «Լիտերատուրնայա գազետա», «Գուդոկ» և այլ պարբերականների, տպագրելով հրապարակախոսական հոդվածներ, ճանապարհորդական տպավորություններ և այլ բնույթի նյութեր։ Նրա «Ճանապարհորդություն Խորհրդային Հայաստանում» գիրքը (1940) արժանացել է պետական մրցանակի, թարգմանվել մի քանի լեզուներով (հայերեն՝ 1952)։ Այդ բնույթի գրքերից են՝ «Հնդամյակի ուղիներով», «Արտասահմանյան նամականի» (1964) և այլն։ Գրականագիտական աշխատություններից են՝ «Տարաս Շևչենկո» (հանդիսանում է նրա դոկտորական դիսերտացիան), «Նիզամի Գյանջեի», «Գյոթե» և այլն։ Վերջինս նույնպես թարգմանվել է շատ լեզուներով և բարձր գնահատվել Գերմանիայում։ Մենագրական աշխատություններ է տպագրել Մ. Նալբանդյանի, Խ. Աբովյանի, Ալ. Շիրվանզադեի և այլ հայ գրողների մասին։ Տարբեր լեզուներից ռուսերեն է թարգմանել գեղարվեստական ստեղծագործություններ. հայերենից՝ նմուշներ Հովհ. Թումանյանի, Հովհ. Հովհաննիսյանի, Ա. Ծատուրյանի, Ս. Շահազիզի երկերից, ադրբեջաներենից՝ Նիզամի Գյանջեիի որոշ ստեղծագործությունները, անգլերենից՝ Ռ. Քոլինզից և այլն։ 1980 թ. լույս է տեսել նրա «Մարդը և ժամանակը» հուշագրությունը։ Պարգևատրվել է Լենինի 2, Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի 3, Ժողովուրդների բարեկամության և այլ շքանշաններով։

ՇԱՀԻՆՅԱՆ ՍՈՓԻԱ (19-րդ դ.).— Դերասանուհի։ Ծնվել է Թիֆլիսում։ 1860 թվականից մասնակցել է Թիֆլիսում կազմակերպված հայկական ներկայացումներին, փաստորեն հանդիսանալով արևելահայ առաջին դերասանուհին։ 1863 թ. խաղացել է «Հազար թումանանոց կաբա» վոդևիլում և ունեցել է մեծ հաջողություն։ Հետագայում թողել է թատրոնը, մերթ ընդ մերթ միայն երևալով Գ. Սունդուկյանի կատակերգություններում։ 1882 թ. Գ. Զմշկյանի խնդրանքով հանդես է եկել «Քանդած օջախ» պիեսում։ Վախճանվել է 1890-ական թվականների կեսերին։

ՇԱՀԻՆՅԱՆ ՎԱՀԱՆ (1873—1962).— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսի Պեշիկթաշ թաղամասում։ Կրթությունն ստացել է Մաքրիդյուղի Արծրունյաց և ապա՝ առևտրական վարժարաններում։ 1891 թվականից որպես սիրող դերասան մասնակցել է Սամսոնում տրված հայերեն ներկայացումների։ Ապա խաղացել է Թ. Ֆասուլաճյանի թատերախմբում, աչքի ընկել Արման Դյուվալի դերում՝ «Քամելիաղարդ կին» պիեսում, որպես Մարգարիտ Գոթիե խաղընկեր ունենալով Սիրանույշին։ Հետագայում աշխատել է Ա. Պենկլյանի օպերետային խմբում, որպես տենոր երգիչ և ունեցել է նկատելի հաջողություն։ Կարճ ժամանակ էլ համագործակցել է Մ. Մնակյանին։ Նրա խմբում կատարած դերերից են՝ Օգսավ Կավա («Փարիզի ոճիրները»), Այբեր («Հավատ, հույս, սեր»), Ֆիլիբ («Գարնոցապետը») և այլն։ 1918 թ. Զմյուռնիայում կազմել է թատերախումբ, տվել մի քանի ներկայացում։ Մասնակցել է նաև Ֆելեկյան քույրերի խմբի ներկայացումներին։ 1923 թ. մեկնել է Բուլղարիա։ Վառնայում իր Պերճ և Նուպար որդիների ու մի քանի սիրողների հետ ստեղծել է թատերախումբ, տվել ներկայացումներ, որոնցից «Վեպլեպիճի Հորհոր աղան» արժանացել է ոչ միայն հայ, այլև բուլղարական մամուլի գնահատմանը։

ՇԱՀԻՊՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ (ծն. 1941).— Դերասանուհի։ Ծնվել է Լենինականում։ 1960—1969 թթ. սովորել է Երևանի «Հայֆիլմ» կինոստուդիային կից դերասանական ստուդիայում։ Առաջին անգամ նկարահանվել է «Մեր թաղի ձայները» ֆիլմում, իսկ ուսանելու տարիներին՝ «Մորգանի խնամին», «Կարինե» ֆիլմերում։ 1969-ից խաղում է Երևանի դրամատիկական թատրոնում, որտեղ նրա կատարած դերերից են՝ Նելա («Աստվածային կատակերգություն»), Վարդուհի («Մեր և ծիծաղ»), Լուիզա («Ֆիլոմենա Մարտուրանո»), Վալենտին («Ուղևորն առանց ծանրոցի»), Քեռոլի («Մթին պատմություն»), Հիտել («Երկուսը ճոճանակին»), Ինգա («Երբ սոխակներն են երգում»), Տանյա («Համանուն պիեսում») և այլն։ Մասնակցել է մի շարք ռադիոբեմադրությունների։

ՇԱՀԼԱՄՅԱՆ ՆԵՐՍԵՍ (1860—1904).— Ուսուցիչ։ Տենոր։ Ծնվել է Գանձակում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա սովորել է Թիֆլիսում։ Որպես ուսուցիչ աշխատել է Գանձակում և Շուշիում։ 1880-ական թվականներին որպես մենակատար երգել է Քրիստափոր Կարա-Մուրզայի երգչախմբում։ Հետագայում մեկնել է Իտալիա, ճանապարհին հանդիպել Պոլիս, տվել համերգներ, կատարելով հիմնականում հայկական ժողովրդական երգեր, որոնք չերմ գնահատականի են արժանացել պոլսահայ մամուլում։ Մայթա կղզու արքունական թատրոնում մասնակցել է Վերդիի «Տրուբատուր» օպերայի ներկայացմանը։ Իտալիայում կրթությունն ավարտելուց հետո 1892 թ. վերադարձել է Ռուսաստան։ Նույն թվականի մարտ ամսին Պետերբուրգում հանձնել է քննություն, ընդունվել Պետերբուրգի արքայական օպերային թատրոնը, երգել է «Ջիոգոնդա» օպերայում։ Ունկնդիրների մեջ եղել է ցարը։ Ռուսաստանի բազմաթիվ քաղաքներում տվել է համերգներ (Մոսկվա, Թիֆլիս, Բաքու և այլն), ամենուր արժանանալով մամուլի չերմ գնահատմանը։

ՇԱՀԽԱԹՈՒՆԻ ԱՐՇԱՎԻՐ (1885—1957).— Դերասան։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Սովորել է Թիֆլիսի զինվորական դպրոցում։ Ավարտելուց հետո աշխատել է Բաքվում, որտեղ էլ սկսել է բեմական գործունեությունը։ Մասնակցել է Բաքվի կուլտուրական ընկերությանը կից գործող սիրողական թատրախմբի ներկայացումներին։ Ապա տեղափոխվել է Ալեքսանդրապոլ, որտեղ նույնպես մասնակցել է հայերեն ներկայացումներին։ 1908 թ. առաջին անգամ Թիֆլիսում հանդես է եկել պրոֆեսիոնալ թատերախմբում՝ Օթար բեկի դերով՝ «Դավաճանություն» պիեսում։ 1910 թ. Թիֆլիսի հայկական խմբի հետ եղել է Հյուսիսային Կովկասում։ 1911-ին Սիրանույշի խմբի հետ խաղացել է Բաքվում։ Հաջորդ տարի մեկնել է Մոսկվա, սովորել Գեղարվեստական թատրոնին կից գործող ստուդիայում, աշակերտել Ստանիսլավսկուն, Վախթանգովին։ 1913—1914 թթ. Ա. Խանժոնկովի կինոֆիրմայի հրավերով նկարահանվել է «Բելա», «Կովկասի նվաճումը» (Շամիլի կենսագրական դերում), «Խանդ», «Փոթորիկ» և այլ ֆիլմերում։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ծառայել է կովկասյան ռազմաճակատում։ 1917 թ. նշանակվել է Երևանի զինվորական պարետ։ 1920 թ. վերջերին մեկնել է Պոլիս, խաղացել «Պոլսո հայ դրամատիկ» թատերախմբում, կատարելով հիմնականում գլխավոր դերեր։ 1922 թ. մեկնել է Բուլղարիա, երկու տարի խաղացել բուլղարական թատրոնում։ 1924-ից ապրել է Փարիզում, դարձել փարիզահայ բեմի հիմնական ուժերից մեկը։ Հետագայում մղվել է դեպի կինոն, խաղացել ֆրանսիական մի քանի ֆիլմերում՝ «Միշել Ստրոգոֆ», «Նապոլեոն» և այլն։ Խոսուն ֆիլմերի ասպարեզ գալուց հետո հարկադրված զբաղվել է դիմահարդարությամբ, շարունակելով մասնակցել հայերեն ներկայացումների։ 1929 թ. նկարահանել է «Անդրանիկ» հայերեն ֆիլմը, ինքն էլ կատարել է Անդրանիկի դերը։ Հայ բեմում նրա խաղացած դերերից են՝ Դաթո («Դավաճանություն»), Աբեղա («Հին աստվածներ»), Ռոմեո («Ռոմեո և Ջուլիետա»), Քին (համանուն պիեսում), Սեյրան («Նամուս»), Նեզնամով («Անմեղ մեղավորներ»), Սվենգալի («Տրիլբի») և այլն։ Գրել է «Առաքել Աղա» և «Հայրենիքը զողանջում է» պիեսները, չերմորեն արձագանքելով ներգաղթի շարժմանը։ Երկուսի մեջ էլ գլխավոր դերերը կատարել է ինքը։ «Հայրենիքը զողանջում է» պիեսը բեմադրել է Փարիզում, Լիոնում, Մարսելում և հայաշատ այլ քաղաքներում, մեծ խանդավառություն առաջացնելով հանդիսականների մոտ և նպաստելով ներգաղթի ծավալմանը։

ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1799—1849).— Կրթական, մշակութային գործիչ, բանաստեղծ։ Ծնվել է Հայաստանի Շահրիար գյուղում։ Նախնական կրթությունն ստացել է Էջմիածնում, ապա մեկնել է Կ. Պոլիս, շարունակել ուսումը՝ 1816—1826 թթ.։ Այնտեղ ընդունել է հոգևորական կոչում, վերադարձել է Էջմիածին, դարձել այդ վանքի միաբանության անդամ, տեղի ժառանգավորաց վարժարանի ուսուցիչ և տեսուչ։ 1834—1835 թթ. եղել է Երևանի թեմի առաջնորդ։ Էջմիածնի Սինոդի հանձնարարությամբ 1837 թ. կազմել է Մատենադարանի ձեռագրերի ցուցակը։ Գրել է պատմա-բանասիրական մի քանի աշխատություն, ինչպես՝ «Մատենագրություն կաթողիկե Էջմիածնի և հինգ գաւառացն Այրարատայ» (երկու հատոր, Էջմիածին, 1842), «Պատմություն գետնաշարժին ի 1840 ամի» և այլն։

ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ *(1843—1892)*.— Դերասան։ Ծնվել է Երևանի Նահանգի Շահրիար գյուղում։ Կրթությունն ստացել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, որը չի ավարտել հիվանդության պատճառով։ Բեմական առաջին փորձերը կատարել է ճեմարանում սովորելու տարիներին, մասնակցելով աշակերտական ներկայացումներին։ 1850-ական թվականների վերջերին վերադարձել է Կովկաս։ Ունեցել է բեմական նկատելի գործունեություն։ Եղել է Պ. Պռոշյանի շանքերով 1863 թ. ստեղծված արևելահայ առաջին պրոֆեսիոնալ թատերախմբի հիմնադիր կազմում։ Խմբի առաջին ներկայացման մեջ («Արշակ Բ.») կատարել է Արշակ թագավորի դերը և ունեցել է մեծ հաջողություն։ Ապա հանդես է եկել Սամելի դերում՝ Պեշիկթաշլյանի համանուն ողբերգությունում, Արտաշեսի դերում («Արտաշես աշխարհակալ»)։ Նրա խաղացած մյուս դերերից են՝ Դարաշիշկյան («Դալալ Ղազո»), Տրդատ (համանուն պիեսում) և այլն։ 1864 թ. ծնողների հարկադրանքի տակ թողել է բեմը, մեկնել դավառ, մտել պետական ծառայության, հաղվադեպ մասնակցելով թատերական ներկայացումներին։ 1865 թ. եղել է Ալեքսանդրապոլի հայկական առաջին ներկայացումների կազմակերպողներից և մասնակիցներից։ Մեկ էլ նա այդ թատերախմբի աշխատանքները ղեկավարել է 1867—1868 թատերաշրջանում։ 1870-ական թվականների սկզբներից այլևս չի խաղացել։

ՇԱՀՄԻՐՅԱՆ ԱԼԻՍ *(ծն. 1945)*.— Երգչուհի. մեցցո-սոպրանո։ Ծնվել է Ֆրանսիայում։ Կրթությունն ստացել է Մարսելի կոնսերվատորիայում, ավարտելուց հետո ձայնը մշակել է երգիչ Ժորժ Կոմբի մոտ։ Միաժամանակ Մարսելի օպերային թատրոնում երկրորդական դերերերով մարզվելուց հետո, 1966-ից առաջնակարգ դերերգերով հանդես է եկել Նիցցայի, Բուլոնի, Արլի և ֆրանսիական այլ քաղաքների օպերային թատրոններում։ Ապա հրավիրվել է Ժնև։ Գլխավոր դերերից են՝ Մարգարիտ («Ֆաուստ»), Շառլոտ («Վերթեր»), Մինոն, Կարմեն (համանուն օպերաներում), Էբոլի («Դոն Կառլոս») և այլն։ Տվել է բազմաթիվ համերգներ, ծրագրում ունենալով Բավել, Բելլինի, Դեբյուսի և այլ կոմպոզիտորներ։ Կատարել է Անուշի դերը «Անուշ» օպերայում։ Այդ դերերգով նա քանիցս հանդես է եկել Մարսելում, Փարիզում, իսկ 1973 և 1974 թթ. Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայում։

ՇԱՀՄՈՒՐԱԹՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ *(1878—1939)*.— Երգիչ. տենոր։ Ծնվել է Մուշում (Արևմտյան Հայաստան)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի թաղային վարժարանում և Միացյալ բարձրագույն նախակրթարանում։ Փոքր հասակում զրկվել է հորից, տեղի հոգևոր առաջնորդի միջնորդությամբ ուղարկվել է Էջմիածին։ Մոտ երեք տարի սովորել է Գևորգյան ճեմարանում։ Աշակերտական խռովությունների պատճառով ինքն էլ հեռացվել է ճեմարանից, ուղարկվել Թիֆլիս։ Կրթությունը շարունակել է Ներսիսյան դպրոցում, ավարտել 1897-ին։ Թիֆլիսում այդ տարիներին երգել է Մակար Եկմալյանի երգչախմբում որպես մենակատար, ապա դարձել է խմբի ղեկավարը։ 1897 թ. որպես քաղաքականապես անբաղձալի տարր արտաքսվել է Թուրքիա, Կարսի վիլայեթ հասել է Մուշ։ 1898—1900 թթ. երաժշտություն է դասավանդել տեղի ս. Կարապետ վանքի ժառանգավորաց վարժարանում։ 1900-ին հրավիրվել է Կարին՝ աղջկանց երկսեռ դպրոցում դասավանդելու և վարելու եկեղեցու դպրապետի պաշտոնը։ Չորս տարի այնտեղ պաշտոնավարելուց հետո մի կերպ հասել է Տրապիզոն, նավ նստել և հասել Մարսել, այնտեղից՝ Փարիզ։ Որպես դպրապետ աշխատել է Փարիզի հայոց նորակառույց եկեղեցում, միաժամանակ երկու տարի նախապատրաստվել կոնսերվատորիայի քննություններին՝ մասնավոր դասեր առնելով Մկոյա Կանտորումում, կոմպոզիտոր Վենսան Դ'Էնդիի հակողությամբ։ Նրա ձայնի մշակմանը անվճար օժանդակել է երգչուհի Պոլին Վիարդոն։ Ընդունվել է կոնսերվատորիա, չորս տարվա ուսումնառության շրջանում արժանանալով մի քանի մրցանակների։ Կոնսերվատորիան ավարտել է 1910 թ. և երկու տարվա պայմանագիր կնքել Փարիզի օպերային թատրոնի հետ։ Հաջորդ տարվա հունվարին հանդես է եկել «Ֆաուստ» օպերայում, երիտասարդ Ֆաուստի դերերգով։ Երկու տարի Փարիզում մնալուց հետո՝ 1913-ին մեկնել է Կ. Պոլիս, Կոմիտասի հետ մասնակցել հայ գրերի դյուտի 1500-ամյակի տոնակատարություններին։ Այդ առիթով, Կոմիտասի նվագակցությամբ ձայնապնակների վրա են վերցվել նրա կատարած մի քանի երգերը՝ «Հայաստան, երկիր դրախտավայր», «Քամ փիրոտանց», «Կռունկ», «Մայր Արաքսի ափերով», «Հով արեք սարեր», «Արտն ու տատրակը», «Անտունի», «Խորհուրդ խորին», «Քրիստոս պատարագյալ» և այլն։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո մեկնել է Ամերիկա։ 1919-ից համերգներ է տվել Ամերիկայի հայաշատ մի շարք քաղաքներում։ Այնտեղ ձայնապնակների վրա են վերցվել քսանից ավելի նոր երգեր, որոնցից են՝ «Կանչն կռունկ», «Կիլիկիա», «Հայրիկ հայրիկ», «Ես լսեցի մի անուշ ձայն», «Սիրուհիս», «Անտունի», «Տեր կեցո» և այլն։ Սրանցից մի քանիսը առաջ էին վերցվել ձայնապնակների վրա, առանց Կոմիտասի ընկերակցության։ 1926—1930 թթ. շրջագայել է Եվրոպայում, եղել նաև Եգիպտոսում, տասնյակ քաղաքներում տալով համերգներ։ 1930-ական թվականների սկզբներից կրկին ապրել է Ամերիկայում։

ՇԱՀՄՈՒՐԱԹՅԱՆ ՎԱՐՈՒՍ *(1940—1977)*.— Նկարիչ։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Մոսկվայի բարձրագույն գեղարվեստաարդյունաբերական ուսումնարանում, ավարտել է 1967 թ.։ 1963 թվականից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Ռեքվիեմ», «Աշուն», «Իմ նախնիները», «Ջահելություն», «Հովվերգություն», «Երեք նավելիներ», «Սարերում», «Հին օրհնություն» և այլն։

ՇԱՀՆԱԲԱԹՅԱՆ ԱՆԺԵԼԱ *(ծն. 1925)*.— Մեներգչուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ *(1959)*։ Ծնվել է Աշտարակի շրջանի Օշական գյուղում։ Փոքր հասակից պարային նյութերով մասնակցել է դպրոցական հանդեսների։ 1941—1970 թթ. անընդմեջ աշխատել է Թ. Ալեքսանյանի ղեկավարած Հայկական ԽՍՀ ժողովրդական երգի պարի պետական անսամբլում իբրև մենապարուհի։ Ատիճանաբար ձեռք է բերել լայն ժողովրդականություն և դարձել խմբի առաջնակարգ ուժերից մեկը։ 1956 թ. մասնակցել է հայ գրականության և արվեստի Մոսկվայում կայացած տասնօրյակին, իսկ 1957 թ.՝ Երիտասարդության համաշխարհային 6-րդ փառատոնին, արժանացել դափնեկրի մեդալի ու դիպլոմի։ Կատարել է հիմնականում հայկական կանացի մենապարեր («Ուզուն դարա», «Նազ պարա», «Նազելի», «Նարիյան աղջիկ», «Զեյրանի» և այլն)։ Հռչակվել է մասնավորապես «Ուզուն դարա» պարով։ Մասնակցել է երգի ու պարի պետական անսամբլի հյուրախաղային բոլոր շրջագայություններին, Հայաստանի գլխավոր կենտրոններում, ավաններում, խորհրդային Միության տասնյակ քաղաքներում և արտասահմանյան բազմաթիվ երկրներում (Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Արգենտինա, Եգիպտոս, Իրաք, Սիրիա, Իրան և այլն), ամենուր արժանանալով բարձր գնահատման և օտար մամուլի դրվատանքներին։

ՇԱՀՆԱԶԱՐ *(17-րդ դ.)*.— Ճարտարապետ։ 1660 թ. նրա նախագծով վերանորոգվել է Լոռու Ջանախլի գյուղի եկեղեցին։

ՇԱՀՆԱԶԱՐ ԳՈՒՐԳԵՆ *(1914—1978)*.— Գրող։ Ծնվել է Բարսում գյուղում (այժմ՝ Աղրքեչանական ԽՍՀ Շամխորի շրջան)։ Կրթությունն ստացել է Կիրովաբադի մանկավարժական տեխնիկումում։ Ավարտել 1933-ին, իսկ 1937-ին՝ Մոսկվայի Կրուպսկայայի անվան կոմունիստական դաստիարակության ակադեմիան։ 1941—1944 թթ. ծառայել է խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը Երևանի Խ. Աբովյանի անվան Հայկական մանկավարժական ինստիտուտում, որի պատմագրական ֆակուլտետն ավարտել է 1946-ին։ 1946—1952 թթ. որպես ուսուցիչ աշխատել է Վեդու և Շամխորի շրջաններում։ Այնուհետև երկու տարի աշխատել է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտում որպես մեթոդիստ, իսկ 1954—1976 թթ. Հայկական ԽՍՀ հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեում։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են «Հողը կանչում է» (Երևան, 1958), «Քեզնով հպարտ» (1963), «Այսպես եմ սիրում» (1969)։

ՇԱՀՆԱԶԱՐ ԳԻՎԻ *(ծն. 1933)*.— Թարգմանիչ։ Ծնվել է Թբիլիսիում, բարձրագույն կրթությունն ստացել է Թբիլիսիի համալսարանի արևելագիտության ֆակուլտետի հայկական բաժնում։ Ուսանողական տարիներից հայերենից վրացերեն կատարել է թարգմանություններ, իսկ հետագայում ամբողջովին նվիրվել է այդ գործին։ Թարգմանել է Միքայել Նալբանդյանի «Ազատությունը», Սայաթ-Նովայի մի շարք երգերը, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Հովհ. Շիրա-

զի, Ս. Կապուտիկյանի, Պ. Սեակի բազմաթիվ բանաստեղծությունները, որոնք տպագրվել են վրացական մամուլում, ժողովածուներում, քրեստոմատիաներում։ Թարգմանել է նաև արձակ գործեր, ինչպես Պ. Զելինսկայանից մի պատմվածք։ 1972 թ. Թբիլիսիում լույս է տեսել Սայաթ-Նովայի հայերեն երգերի վրացերեն ժողովածուն՝ նրա թարգմանությամբ։

ՇԱՀՆԱԶԱՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1857—1942).— Հրապարակախոս, հասարակական գործիչ։ Ծնվել է Տրապիզոնում։ Փոքր հասակից ընտանիքով տեղափոխվել է Կ. Պոլիս, որտեղ ստացել է կրթություն։ Ապա մեկնել է Փարիզ, Սորբոնի համալսարանում հետևել իրավաբանության։ Վերադառնալով Կ. Պոլիս, 1880-ական թվականների կեսերից զբաղվել է իրավաբանությամբ, միաժամանակ ունեցել է գրական-հրապարակախոսական նկատելի գործունեություն։ Եղել է Կ. Պոլսի հայտնի Կեղրոնական վարժարանի հիմնադիրներից։ 1891 թ. հիմնադրել է «Հայրենիք» ժողովրդական օրաթերթը, որը Ա. Արփիարյանի խմբագրությամբ մեծ դեր է կատարել հայ հասարակական կյանքում, և փակվել է սուլթանական կառավարության կողմից, 1896 թ.։ Հետագայում, օսմանյան սահմանադրության հռչակումից հետո, 1909 թ. վերահրատարակել է «Հայրենիքը», իր շուրջը համախմբելով լավագույն գրողներին։ 1914—1918 թթ. պաշտոնավարել է Պոլսի Իգդիկ պետական դպրոցում։ 1920-ական թվականների սկզբներից ապրել է Ֆրանսիայում։ Ընթացիկ հարցերի շուրջ հրատարակել է մի քանի գրքույկ, ինչպես «Վենետիկի Մխիթարյան միաբանության սպառնացող վտանգը»։ 1937 թվականից խնամվել է Կ. Պոլսի ազգային հիվանդանոցում, որտեղ էլ մեռել է։

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԱՍԼԱՆ (1877—1955).— Պատմաբան-դրամագետ։ Ծնվել է Լեռնային Ղարաբաղի Քյուրաթաղ գյուղում։ Սովորել է Շուշու թեմական դպրոցում, ապա՝ էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ավարտելուց հետո նվիրվել է մանկավարժական աշխատանքի։ Պաշտոնավարել է նախ Շուշու թեմական դպրոցում, ապա՝ 1900—1904 թթ. էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ Դրանից հետո սովորել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում։ 1910 թ. մեկնել է արտասահման, մեկ տարի հետևել Բեռլինի համալսարանի դասընթացներին։ Վերադառնալով Կովկաս՝ 1914—1918 թթ. դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ապա եղել է Թիֆլիսի Ղուկասյան օրիորդաց դպրոցի դիրեկտոր։ 1920 թ. մեկնել է Իրան, որպես ուսուցիչ աշխատել տարբեր քաղաքների հայկական դպրոցներում։ Վերադառնալով Հայաստան՝ 1933 թվականից աշխատել է Երևանի պետական պատմական թանգարանում, նախ որպես հնագիտական, ապա՝ դրամագիտական բաժնի վարիչ։ Միաժամանակ դասավանդել է Երևանի պետական համալսարանում, պոլիտեխնիկական ինստիտուտում, էջմիածնի ճեմարանում։ Դեռևս 1910-ական թվականներից պատմա-բանասիրական երկեր է տպագրել պարբերական մամուլում և առանձին գրքույկներով, ինչպես՝ «Զաքարյան (երկայնաբազուկ) տոհմի ծագումը» («Շողակաթ» ժողովածու, 1913), «Դվին» (պատմա-աշխարհագրական ակնարկ, Երևան, 1940), «Արմավիր» (1955), «Բագրատունյաց նախարարական տոհմի ծագումը» (Պատմական թանգարանի աշխատություններ, հատ. 1, 1948) և այլն։

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՇԱԿ (1872—1942).— Գրող։ Ծնվել է Աշտարակում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, ապա սովորել է Երևանի թեմական դպրոցում և էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ Գրական ասպարեզ է մտել 1898 թվականին՝ «Մշակ» թերթում տպագրելով «Աղա բժիշկը» պատմվածքը, որին հաջորդել են գյուղական կյանքը պատկերող մի քանի նոր պատմվածքներ («Աղբեր ջոմարդ», «Վարոսի հաճախորդները», «Կարմիր ճիպոտը» և այլն)։ 1910 թ. Երևանում լույս է ընծայել «Խավարի աշխարհում» պատմվածքների ժողովածուն, դարձյալ գյուղական կյանքը պատկերող։ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո առանձին գրքերով լույս են տեսել նրա մի շարք նոր երկերը, ինչպես «Ագատարը» (Երևան, 1926), «Երրորդության գաղտնիքը» (1930), «Գյուղական պատկերներ» (1933)։

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԵՐՎԱՆԴ (ծն. 1908).— Դերասան. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1956)։ Ծնվել է Թիֆլիսում, որտեղ ստացել է միջնակարգ կրթությունը, իսկ մասնագիտական՝ նախ Թիֆլիսի Հայարտան կից թատերական ստուդիայում, ապա՝ 1934 թվականից՝ Մոսկվայում, Ռուբեն Սիմոնովի թատերական ստուդիայում։ Մի քանի տարի խաղացել է Թիֆլիսի Հայկական թատրոնում, իսկ Մոսկվայի դասընթացները ավարտելուց հետո, Երևանի Երաժշտական Կոմեդիայի թատրոնում, որտեղ աշխատել է երկար տարիներ։

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ (1901—1978).— Օպերային երգչուհի, մանկավարժ, Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Բաքվում, դուստրն է գրող Կ. Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանում, նախ սովորել է երաժշտական ստուդիայում, ապա՝ Երևանի պետական կոնսերվատորիայում, որի մեներգի դասարանն ավարտել է 1931-ին։ Հաջորդ տարվանից աշխատել է նորաստեղծ օպերային թատրոնում որպես մենակատար։ 1933-ին, առաջինը հայ երգչուհիներից, կատարել է Այմաստի դերերգը Ալ. Սպենդիարյանի «Այմաստ» օպերայում։ Այդ տարիներին նրա կատարած մյուս դերերգերից են՝ Զիբել («Ֆաուստ»), Սուզանի («Զիո-Զիո-Սան»), Մերսեդես («Կարմեն»), Ակսենիա («Խաղաղ Դոն»)։ Ունեցել է մանկավարժական բեղուն գործունեություն։ 1935—1945 թթ. դասավանդել է երաժշտական ուսումնարանում, իսկ 1945-ից մինչև կյանքի վերջը՝ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որտեղ աճեցրել է երաժիշտների մի քանի սերունդ։ Երկար տարիներ որպես պրոֆեսոր ղեկավարել է կոնսերվատորիայի մեներգի ամբիոնը։ Կազմել է մեթոդական ձեռնարկներ, վոկալ ժողովածուներ։

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (1814—1865).— Բանաստեղծ, հրատարակիչ, կրթական գործիչ։ Ծնվել է Պարսկաստանի Համադան քաղաքում։ Կրթությունն ստացել է էջմիածնի ժառանգավորաց վարժարանում, ապա սովորել է Թիֆլիսի Արղանովների գիշերօթիկ դպրոցում, որտեղ տիրապետել է ռուսերենին։ Վերադառնալով էջմիածին, ընդունել է հոգևորական կոչում, նշանակվել ժառանգավորաց վարժարանի տեսուչ և դասատու։ Հոգևորական մի շարք պաշտոններ վարելուց հետո, 1849 թ. մեկնել է Կ. Պոլիս, մի քանի տարի աշխատել խասգյուղ և այլ թաղամասերում։ Հանդիպելով հետագա տարբերի հալածանքներին, 1856 թ. մեկնել է Փարիզ, որտեղ հաջորդ տարի հիմնել է տպարան, հրատարակել հայ մի քանի մատենագիրների երկերը, ինչպես՝ «Ղևոնդ Երեց», «Ստեփանոս Տարոնեցի», «Ստեփանոս Օրբելյան», «Վահրամ Բարունի», «Մովսես Կաղանկատվացի», «Թովմա Մեծոփեցի» և այլն։ Ղևոնդ Պատմիչի գիրքը թարգմանել է ֆրանսերեն և հրատարակել նույն տպարանում։ Հայ հին մատենագրությանը վերաբերող հոդվածներ է տպագրել ֆրանսիական մամուլում։ 1862 թ. ընտրվել է Ֆրանսիական Ակադեմիայի գեղեցիկ գրության բաժնի պատվո անդամ։ Յոթ տարի Փարիզում գործելուց հետո մեկնել է Մանչեստր, որտեղ նույնպես ստեղծել է հայկական տպարան, հրատարակել «Երկրագունտ» պարբերականը՝ 1864 թվականից։ 59 համար հրատարակելուց հետո հիվանդացել է, վերադարձել Փարիզ, այնտեղից անցել է Կիպրոս, ի վերջո Պոլիս, որտեղ էլ վախճանվել է։ Իր հարստությունը հատուկ կտակով տրամադրել է Կ. Պոլսի Խասգյուղ թաղամասում հայկական դպրոց հիմնադրելու նպատակին։ Պակասած դրամն էլ տրամադրել է նույնպես փաշան և հիմնադրված դպրոցը կոչվել է Նուպար-Շահնազարյան։ Դպրոցը մեծ դեր է կատարել պոլսահայերի կրթական կյանքում։ Այնտեղ սովորել են բանաստեղծ Եղիա Տեմիրճիպաշյանը, գրող Մինաս Չերազը և շատ ուրիշներ. կազմել է Հայ-ֆրանսերեն և Ֆրանս-հայերեն բառարաններ, որոնք մնացել են անտիպ։ Գրել է «Տեղագրութիւն Հայաստանի» երկը։

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՍԻՄՈՆ (1866— ?).— Մշակութային գործիչ։ Կրթությունն ստացել է Մոսկվայում, որտեղ էլ բնակություն է հաստատել և գործել։ Պարբերական մամուլում և առանձին գրքերով լույս է ընծայել մի շարք աշխատություններ, նվիրված զեղազնցապես կրթական և կրոնական հարցերին, ինչպես՝ «Մեդրակ Մանդինյանը իբրև տեսուչ Երևանի թեմական հոգևոր դպրանոցի», «Երեցփոխության հարցը Մոսկվայում» (Մոսկվա, 1894), «Բանաստեղծ քաղաքացին» (1908), «Վեհափառ Իզմիրլյանը» (1910), «Մարգասիրության և աշխատասիրության ազնիվ գինվոր Յուրի Ալեքսանդրովիչ Վեսելովսկի» (1899) և այլն։ Նրա ամենածավալուն աշխատությունն է «Հայոց եկեղեցու վարչությունը և ծուխը ըստ ռուսական պետական օրենքի 11-րդ հատորի 1-ին մասի» (Մոսկվա,

1896). պարունակում է մի շարք հավելվածներ, կապված հայ եկեղեցու ծիսակատարությունների հետ։

ՇԱՀՆԱԶԱՐՈՎ ԲՈՐԻՍ (ծն. 1905).— Նկարիչ։ Մնվել է Ղարսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Լենինգրադի Ի. Ռեպինի անվան գեղարվեստների ակադեմիայում, ավարտել է 1939 թ.։ 1941 թվականից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Սախալինի ձկները», «Սախալինի բանջարեղենը», «Մովարշերի խորշերը», ինչպես և մի շարք նատյուրմորտեր և բնանկարներ։ Ապրում և ստեղծագործում է Խարարովսկում։

ՇԱՀՆՈՒՐ ՇԱՀԱՆ (ՔԵՐԵՍՏԵՃՅԱՆ) (1903—1974).— Գրող։ Մնվել է Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, ապա սովորել է Պերպերյան միջնակարգ դպրոցում, ավարտել 1922-ին։ Նույն տարում մեկնել է Ֆրանսիա, Փարիզում զբաղվել է լուսանկարչությամբ, միաժամանակ աշխատակցել է փարիզահայ մամուլին։ 1929 թ. նախ մամուլում, ապա առանձին գրքով հրատարակել է «Նահանջ առանց երգի» վեպը, որը լայն արձագանք է գտել սփյուռքում ու ճանաչում բերել հեղինակին։ Գրել է պատմվածքներ, որոնք ամփոփել է «Հարալեզներու դավաճանությունը» ժողովածուում (Փարիզ, 1933)։ 1930-ական թվականների վերջերից գրել է միայն ֆրանսերեն՝ ընտրելով Արմեն Լյուբեն ծածկանունը։ Այդ ստորագրությամբ ֆրանսիական մամուլում տպագրել է արձակ և չափածո բազմաթիվ ստեղծագործություններ, որոնցից ուշագրավ են 1939-ին «Լը Նուվել ռեֆյու Ֆրանսեզում» տպագրած գեղարվեստական հուշերը, որոնք ֆրանսիական գրական շրջանակներում հետաքրքրություն են ստեղծել հայ գրողի նկատմամբ։ Ֆրանսերեն լեզվով և առանձին գրքերով հրատարակած երկերն են՝ «Գաղտագողի անցորդը», «Սուրբ համբերություն», «Գիշերային փոխադրություն», «Բարձրավանդակ», «Հուր ընդ հրոյ», որոնցից մի քանիսը արժանացել են գրական մրցանակների։ Հետագայում, կյանքի վերջին տարիներին, կրկին վերադարձել է դեպի մայրենի լեզուն և հաջորդաբար լույս ընծայել «Պարզ տոմար», «Վաղը» և «Կրակը կողքին» գրքերը, որոնցում տեղ են գտել նաև նրա հին ու նոր հոդվածները։ Նրա «Նահանջ առանց երգի» վեպը և լավագույն պատմվածքները վերահրատարակվել են Երևանում, 1962 թ. հեղինակի երկերի մի հատորյակում։

ՇԱՀՈՅԱՆ ԼԵՎՈՆ (1907—1978).— Գրող։ Մնվել է Սալմաստի Հաֆթվան գյուղում, որտեղ ստացել է նախնական կրթությունը։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո մեկնել է Սիրիա, շարունակել ուսումը Բաքուպայի ամերիկյան դպրոցում։ Այնուհետև ապրել է Բաղդադում, ապա 1937 թ. տեղափոխվել Ամերիկա։ Աշխատակցել է սփյուռքահայ մամուլին։ Չափածո երկերը լույս է ընծայել «Փոնը մը ստանավորներ» ժողովածուում, իսկ արձակը՝ «Տիգրիսի ափին» գրքում, որը պարունակում է համանուն վիպակը ու պատմվածքներ։ Վերահրատարակվել է Երևանում, 1971 թ.։

ՇԱՀՊԱԶ ԲԱՐՍԵՂ (1883—1915).— Հրապարակախոս-խմբագիր։ Մնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է տեղի Կեդրոնական վարժարանում։ Ավարտելուց հետո ուսումը շարունակել է Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանում։ Վերադառնալով Կ. Պոլիս, զբաղվել է ուսուցչությամբ և հրապարակախոսությամբ։ Մ. Շամտանճյանի հետ հրատարակել է «Մանիկ» պարբերականը։ Հետագայում մեկնել է Եգիպտոս, ապրել Ալեքսանդրիայում, որտեղ հրատարակել է «Մարակ» պարբերականը։ Աշխատակցել է մի քանի թերթերի։ Ապա երկու տարի Փարիզում հետևել է իրավաբանության, միաժամանակ աշխատել «Պրո Արմենիա» թերթի խմբագրությունում։ Պատերազմի նախօրյակին վերադարձել է Կ. Պոլիս, սակայն վրա է հասել մեծ եղեռնը և նա էլ մյուս մտավորականների հետ բանտարկվել է, աքսորվել և խոշտանգվել։ Առանձին գրքով Ալեքսանդրիայում հրատարակել է «Ազլասերություն և եաասիրություն» աշխատությունը։

ՇԱՀՊԱԶ ՍՏԵՓԱՆ (ծն. 1900).— Գրող, հրապարակախոս, բանաստեղծ։ Մնվել է Ադանայում (Կիլիկիա)։ Նախնական կրթությունն ստացել է տեղի Արգարյան վարժարանում, բարձրագույնը՝ Փարիզի համալսարանում, որի իրավաբանական բաժինն ավարտել է 1925-ին։ Հետևել է նաև Հաղեի միջազգային իրավագիտության ակադեմիայի դասընթացներին։ 1926 թվականից ապրել է Ալեքսանդրիայում (Եգիպտոս), զբաղվել իրավաբանությամբ։ Ունեցել է գրական, հրապարակախոսական, բանասիրական բեղուն գործունեություն։ Աշխատակցել է սփյուռքահայ տասնյակ թերթերի ու հանդեսների («Արև», «Անահիտ», «Արեգ», «Անի», «Գեղումի», «Պայքար» և այլն)։ Մասնավորապես «Արև» օրաթերթում տպագրել է ծավալուն հետազոտություններ, բազմաթիվ հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Վարագուրին ետևեն» (վեպ, Վենետիկ, 1946), «Մենք՝ հայերս» (Բեյրութ, 1959), «Գրիգոր Զոհրապ» (մենագրություն, 1960), «Հայերը Եգիպտոսում» (ֆրանսերեն, նախ լույս է տեսել ֆրանսիական մի հանդեսում, ապա՝ առանձին գրքով, հայերեն թարգմանությունն էլ տպագրվել է Եգիպտահայ մամուլում), «Տողանցք» (Նշմարներ, 1967), «Օրերուն հետ» (պատմվածքներ, Կահիրե, 1971)։ Սրանցից բացի՝ ընդարձակ աշխատություններ է տպագրել «Պայքար» տարեգրքում և մեծ եղեռնի 50-ամյակին նվիրված ու Բեյրութում տպագրված «Հուշամատյան» գրքում։

ՇԱՀՊԱՐՈՆՅԱՆ ԺԵՆՅԱ (1900—1952).— Օպերետի երգչուհի, դաշնակահարուհի։ Մնվել է Կ. Պոլսում։ Մայրը եղել է իտալուհի, հայրը՝ հայ։ Բուն ազգանունն է Մարտիրոսյան։ Երաժշտական կրթությունն ստացել է ծննդավայրում։ 1920-ական թվականների սկզբներին ամուսնացել է թառահար Ժորժ Շահպարոնյանի հետ, միասին մեկնել են Փարիզ, որտեղ ունեցել է բեմական նկատելի գործունեություն։ Մասնակցել է փարիզահայ թատերախմբերի ներկայացումներին թե որպես երգչուհի, թե դերասանուհի և թե դաշնակահարուհի։ Խաղացել է Մ. Աղնավուրյանի և Սուրբյան ամուսինների օպերետային խմբերում, կատարելով գլխավոր դերեր՝ «Արշին մալ ալան», «Աշուղ Ղարիբ», «Ղարաբաղի մելիքները», «Ուշ լինի, նուշ լինի» և այլ օպերետներում։ Հետագայում ամուսնու հետ մեկնել է Ամերիկա, որտեղ նույնպես խաղացել է Սուրբյանների խմբում, մասնակցել հայերեն ներկայացումներին՝ Ամերիկայի տարբեր քաղաքներում։ Մեռել է Ֆրեզնոյում։

ՇԱՀՊԱՐՈՆՅԱՆ ԺՈՐԺ (1897—1956).— Երաժիշտ, թառահար։ Մնվել է Դանձակում (այժմ՝ Ազրբեջանական ԽՍՀ, Կիրովաբադ)։ Փոքր հասակից նվագել է թառ։ 1910-ական թվականներից հանդես է եկել երեկույթ-ցերեկույթներում։ 1919 թվականից նվագել է Սուրբյանների օպերետային խմբում, այդ խմբի հետ շրջագայել Հյուսիսային Կովկասում, Պոլսում, որտեղ ամուսնացել է ժենյա Մարտիրոսյանի հետ և միասին մեկնել են Փարիզ։ Նվագել է Մ. Աղնավուրյանի, Սուրբյան ամուսինների օպերետային խմբերում, եղել այդ խմբերի գեղարվեստական ղեկավարը, հանդես եկել երեկույթ-ցերեկույթներում։ 1927-ին իր տիկնոջ՝ ժենյա Շահպարոնյանի հետ մեկնել է Ամերիկա, մոտ 25 տարի ապրել Նյու Յորքում, ապա՝ Լոս-Անջելեսում, նվագել Սուրբյանների թատերախմբում, տվել համերգներ, որոնք արձագանք են գտել նաև ամերիկյան մամուլում։ Ղեկավարել է ամերիկյան այն կինոֆիլմերի երաժշտական բաժինը, որոնք ունեցել են կովկասյան երաժշտություն։ Հորինել է կովկասյան մեղեդիներ, որոնք կատարվել են թե իր կողմից և թե այլ երաժիշտների։

ՇԱՀՊԱՐՈՆՅԱՆ ՎԱՐՈՒՆ (? —1946).— Գրող, հրապարակախոս։ Մնվել է Ախալքալաքում (Վրացական ԽՍՀ)։ Կրթությունն ստացել է ծննդավայրում։ Ունեցել է կրթական, գրական գործունեություն։ Աշխատակցել է արևելահայ մամուլին։ 1910-ական թվականներից որպես ուսուցիչ աշխատել է Ախալքալաքում։ 1913—1916 թթ. հրատարակել է «Ջավախք» գրական-քաղաքական շաբաթաթերթը։ 1909 թ. Ալեքսանդրապոլում տպագրել է «Աշխեն» և «Արմեն և Ֆաթմա» պիեսները։ Գրել է նաև այլ պիեսներ, ինչպես՝ «Անտոն Միմոնիչ», «Արցունքի ծովարյան գետեր», «Գող, սիրտը գող» և այլն։

ՇԱՀՍՈՒՎԱՐՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ (1903—1978).— Երգչուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստուհի։ Մնվել է Նախիջևանի շրջանի Ասատպատ գյուղում։ Միջնակարգ կրթությունն ստացել է Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցում, ավարտել 1922 թ.։ Ապա սովորել է Թիֆլիսի կոնսերվատորիայի վոկալ բաժնում, ավարտել 1929 թ.։ Երգել է Թբիլիսիի ֆիլհարմոնիայում որպես մենակատար։ 1936-ից աշխատել է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում, իսկ 1941-ից՝ Երևանի ռադիոյում և Հայֆիլհարմոնիայում որպես մենակատար։ Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնի ստեղծման առաջին տար-

վանից երգել է այնտեղ և հետագայում իր բախտը կապել այդ թատրոնի հետ, հանդես գալով գլխավոր դերերով տասնյակ օպերետներում։ Լավագույն դերերից են՝ Սիրվա, Բայադերա (համանուն օպերետներում), Թեոդորա («Կրկեսի իշխանուհին»), Գոհար («Մեծ հարսանիք»), Զիպրա («Գնչուների բարոնը»), Շողիկ («Ուշ լինի, նուշ լինի») և այլն։ Նկարահանվել է Հայֆիլմի մի քանի ֆիլմերում։ Ունեցել է մանկավարժական գործունեություն։ Վոկալ առարկաներ է դասավանդել Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում։

ՇԱՀՎԵՐԻՏՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ (1903—1954).— Երաժշտագետ. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Վրաստանի Սղնախի քաղաքում։ Երաժշտական բարձրագույն կրթությունն ստացել է Լենինգրադի և Մոսկվայի կոնսերվատորիաներում, ավարտել 1930 թ.։ Աշխատել է Համամիութենական ռադիոկոմիտեում, Արվեստի գործերի կոմիտեում, երկար տարիներ զեկավարել է ԽՍՀՄ կոմպոզիտորների միության երաժշտագիտական հանձնաժողովի աշխատանքները։ Գրել է արժեքավոր աշխատություններ։ Դրանցից են՝ «Բեթհովենի սիմֆոնիաները» (ռուսերեն, Մոսկվա, 1936), «Բեթհովենի «Ֆիդելի օպերան» (Մոսկվա, 1937), «Ա. Ա. Սպենդիարով. կյանքը և ստեղծագործությունը» (1939), «Դ. Շոստակովիչի յոթերորդ սիմֆոնիան (հայերեն և ռուսերեն, Երևան, 1942), «ԽՍՀՄ մեծ թատրոնը» (Մոսկվա, 1952), «Կոմիտասը և հայ երաժշտական կուլտուրան» (Երևան, 1956), «Հայ երաժշտության պատմության ակնարկներ. 19—20-րդ դդ.» (հայերեն ծավալուն հետազոտություն, Երևան, 1959), ինչպես և բազմաթիվ այլ աշխատություններ, որոնք տպագրվել են գիտական հանդեսներում և ժողովածուներում։ Գրել է «Խորհրդային երաժշտության զարգացման ուղիները» գրքի 2, 6, 9, 10, 11-րդ գլուխները (Մոսկվա, 1948)։

ՇԱՀՎԵՐԻՏՅԱՆ ԴԱՆԻԵԼ (ԴԱՆՈՒՇ) (1882—1941).— Կուսակցական, պետական գործիչ, լրագրող։ Ծնվել է Հայաստանի Այգեհատ գյուղում (այժմ՝ Թումանյանի շրջան, Դանուշավան)։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի ռուսական գիմնազիայում և Պետերբուրգի համալսարանում, որի իրավաբանական ֆակուլտետն ավարտել է 1911-ին։ 1902 թ. ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը։ Մասնակցել է «Հայ սոցիալ-դեմոկրատների միության», «Պրոլետարի» թերթի ստեղծման աշխատանքներին։ 1904-ից գործել է Պետերբուրգում և Թիֆլիսում։ Մասնակցել է «Կայծ», «Մեր խոսքը» և «Բանվորի կոչ» թերթերի հրատարակման աշխատանքներին։ 1918—1920 թթ. աշխատել է Վրաստանում և Հայաստանում։ Եղել է Հայաստանի Հեղկոմի անդամ։ 1924—1928 թթ. աշխատել է որպես ԱԽՄՍՀ առևտրական ներկայացուցիչ Թուրքիայում։ Մեծ դեր է կատարել սիրիահայերի հայրենադարձության գործում։ 1928—1929 թթ. եղել է Հայկական ԽՍՀ կարմիր խաչի ներկայացուցիչ Անգլիայում, Գերմանիայում և Բելգիայում։ Հետագայում աշխատել է ԽՍՀՄ արտաքին առևտրի ժողկոմատում։

ՇԱՀՎԵՐԻՏՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ.— Օպերային երգչուհի։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, ավարտել 1973 թ.։ Դեռևս ուսանելու շրջանում հանդես է եկել Պոլինայի դերերգով «Պիկովայա դամա» օպերայում, մասնակցել է «Անուշի» ներկայացմանը։ Ավարտելուց հետո երգել է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, որտեղ նրա կատարած դերերից են՝ Լյուբաշա («Թագավորի հարսնացուն»), Գայանե («Այմաստ»), Լաուրա («Բոյանդա»), Դեգի («Դիքոր»), Մասնա գեղջկուհի («Սասունցի Դավիթ») և այլն։ Հանդես է եկել նաև որպես համերգային երգչուհի, ելույթ ունեցել ռադիոյով, հեռուստատեսությամբ։

ՇԱՀՎԵՐԻՏՅԱՆ ՌՈՒԲԵՆ (1900—1976).— Նկարիչ. Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ։ Ծնվել է Սղնախիում (Վրացական ԽՍՀ)։ Կրթությունն ստացել է Թիֆլիսում։ 1919—1923 թթ. սովորել է Թիֆլիսի նկարչության և քանդակագործության դպրոցում, որտեղ աշակերտել է նկարիչ Եղիշե Թադևոսյանին։ 1925-ից մասնակցել է ցուցահանդեսների՝ գեղարվեստական նատյուրմորտներով և գրքի նկարազարդումներով։ 1933—1940 թթ. ապրել և ստեղծագործել է Թիֆլիսում, 1941 թվականից՝ Երևանում։ 1933 թվականից հետևել է խեցեգործական արվեստին։ Նրա նախագծումներով պատրաստվել են մի շարք սկուտեղներ, գինու և այլ սկահակներ, գինու փարչեր, դեկորատիվ զարդեր, որոնք բազմացվել են և լայնորեն տարածվել հանրապետությունում ու նրանից դուրս։ Գեղանկարչական գործերից լավագույններն են՝ «Սասունցի Դավիթ», «Աղատագրված աուլում», «Կիրովականի բիմկոմբինատը», «Բնանկար Մխչյան գյուղից», «Շոթա Ռուսթավելի» և այլն։

ՇԱՀՎԵՐԻՐՈՎԱ ՍՈՒՍԱՆՆԱ (1888—1985).— Մանկավարժ. Հայկական ԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Թիֆլիսում, որտեղ ստացել է կրթությունը, ավարտել իգական գիմնազիան, ապա՝ կանանց բարձրագույն դասընթացները։ Աշխատել է որպես ուսուցչուհի Թիֆլիսի տարբեր դպրոցներում։ Վարել է պետական պաշտոններ Վրաստանում և Հայաստանում։ 1939—1945 թթ. եղել է Հայպետհրատի դասագրքերի և ռուս գրականության բաժնի վարիչ։ 1949 թվականից դասախոսել է Երևանի հայկական մանկավարժական և ռուսական մանկավարժական ինստիտուտներում։ 1957—1961 թթ. կեկավարել է Երևանի պետական համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնը, ապա՝ Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի ամբիոնը։ Կազմել և խմբագրել է հայկական դպրոցների և բուհերի ռուսաց լեզվի մի քանի դասագրքեր։

ՇԱՀՎԵՐԻՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ծն. 1947).— Նկարիչ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել է 1970 թ.։ 1968 թվականից մասնակցել է ցուցահանդեսներին։ Հետևում է կիրառական արվեստին։ Լավագույն գործերից են՝ «Քաջ Նազար», «Հերիաթ», «Մսրա Մելիք» և այլ էսքիզներ։

ՇԱՀՎԵՐԻՏՅԱՆ ՎԱՀԵ (ՖԼՈՐԻՐ) (ծն. 1945).— Ռեժիսոր։ Ծնվել է Կիրովականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի ռեժիսորական ֆակուլտետն ավարտել է 1971-ին։ Նույն տարում որպես դիպլոմային աշխատանք Գ. Սունդուկյանի անվան թատրոնում բեմադրել է Գ. Սունդուկյանի «Ամուսինները» Վ. Աճեմյանի զեկավարությամբ։ Հաջորդ տարվանից հանդես է գալիս Կիրովականի Հովհ. Աբելյանի անվան թատրոնի գլխավոր ռեժիսոր։ Այնտեղ նրա բեմադրած պիեսներից են՝ Դումբաձեի «Մի վրշտանա, մայրիկ», Էֆտիմիուի «Մահ տեսած մարդը», Դիկկենսի «Դավիթ Կոպերֆիլդը» և այլն։ Նրա բեմադրություններից «Մահ տեսած մարդը» և «Շնորհակալություն քաղաքացի դատավորը» արժանացել են ռեժիսորական լավագույն աշխատանքի մրցանակին։

ՇԱՀՐԻԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ԱՏՈՄ) (1860—1915).— Հրապարակախոս։ Ծնվել է Շապին Գարահիսարում (Թուրքիա), որտեղ ստացել է նախնական կրթությունը, ապա, տեղափոխվելով Կ. Պոլիս, շարունակել է ուսումը Կալաթա-Սերայի լիցեյում։ Ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատել է Պոլսի հայկական դպրոցներում, միաժամանակ աշխատակցել «Հայրենիք», «Արևելք» և այլ թերթերի։ 1896 թ. կոտորածներից հետո եկել է Կովկաս, աշխատել նախ Բաթումում, ապա՝ Թիֆլիսում, որտեղ սովորել է ռուսերեն, հետևել իրավաբանության։ Օսմանյան սահմանադրությունից հետո վերադարձել է Կ. Պոլիս, զբաղվել հրապարակախոսությամբ։ Նինի, Վաղինակ, Ատոմ ծածկանուններով հոդվածներ է տպագրել «Ազատամարտ» օրաթերթում և այլ պարբերականներում։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններից են՝ «Պետական նորոգությունն ու հողային հարցը», «Մեր հավատամքը», «Ազգային սահմանադրությունը», «Բարենորոգումների հարցը», «Օսմանյան կայսրության անկման պատմությունը» և այլն։ Եղել է 1915 թ. ապրիլյան մեծ եղեռնի զոհերից։

ՇԱՀՈՒՄՅԱՆ ԲԱԲԿԵՆ (ծն. 1906).— Գրող, թարգմանիչ։ Ծնվել է Դիլիջանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի պատմության ֆակուլտետն ավարտել է 1931-ին։ Աշխատել է տարբեր թերթերի խմբագրություններում՝ «Ավանգարդ», «Պիոներ կանչ», «Բանվորական Երևան», «Խորհրդային Հայաստան», 1954-ից՝ «Ոգնի» երգիծաթերթում, որտեղ եղել է խմբագրի տեղակալ։ Վերոհիշյալ պարբերականներում տպագրել է բազմաթիվ հոդվածներ, ակնարկներ, երգիծական գործեր։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Մարդիկ», «Հաստ Թորոսի արկածները», «Աստղերը կմնան երկնքում», «Ճրագթթի ծմակը», «Որին ապտակես», «Մարդիկ իմ ճանապարհին»։ Ռուսերենից կատարել է թարգմանություններ։

ՇԱՀՈՒՄՅԱՆ ԼԵՎՈՆ *(1904—1971)*.— Կուսակցական գործիչ, վետերան լրագրող։ Ծնվել է Թիֆլիսում։ Որդին է Ստեփան Շահումյանի։ Կրթությունն ստացել է Բաքվում և Մոսկվայում։ Պատանեկան տարիքից ընդգրկվել է հեղափոխական շարժումների մեջ։ 1919 թ. ընդունվել է ԽՄԿԿ շարքերը։ 1924—1932 թթ. կուսակցական, խմբագրական աշխատանքներ է կատարել Բաքվում, Ցարիցինում, Դոնի Ռոստովում, Մոսկվայում։ Ավելի քան քսան տարի եղել է «Խորհրդային հանրագիտարան» հրատարակչության ղեկավարներից, նրա գրական խմբագրական խորհրդի նախագահի առաջին տեղակալը։ Մեծ աշխատանք է կատարել «Խորհրդային մեծ հանրագիտարանի», «Խորհրդային փոքր հանրագիտարանի», Փիլիսոփայության, մշակույթի, տեխնիկայի հանրագիտարանների հրատարակման գործում։ Հրատարակել է մենագրական աշխատություններ լեգենդար հերոս Կամոյի, Բաքվի ականավոր կոմունիստների մասին։ Տպավորն հոդվածներ է տպագրել գիտական ժողովածուներում, հանրագիտարաններում։ Պարգևատրվել է Լենինի և Աշխատանքային կարմիր դրոշի երկու շքանշաններով։

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿ *(ծն. 1941)*.— Նկարիչ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի գեղանկարչության ֆակուլտետն ավարտել է 1967-ին։ Հաջորդ տարվանից մասնակցել է հանրապետական, միութենական և արտասահմանյան ցուցահանդեսների։ Տարբեր տարիներին Երևանում ցուցադրված գործերից են՝ «Գեղեցի Ալմաստ տատը», «Նախաշավիղ», «Կեսօր», «Շինարարներ», «Բարեկամության կենացը» և այլն։ Մոսկվայում ցուցադրվածներից են՝ «Ուսանողական շինջոկատներ», «Խոպանավաններ», «Օլիմպիադա—80»։ Նրա «Գյուղի հին կամուրջը» նկարը 1977-ին ցուցադրվել է Լոս Անջելեսում (Ամերիկա)։ Կատարել է դիմանկարներ, բնանկարներ։ 1976-ից աշխատել է Երևանի քաղաքվեստում որպես քաղաքի գլխավոր նկարչի տեղակալ, հետագայում՝ գլխավոր նկարիչ։

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՍԵՐԳԵՅ *(1914—1977)*.— Պատմաբան. Հայկական ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1974)։ Ծնվել է Աստրախանում։ Որդին է Ստեփան Շահումյանի։ Բարձրագույն կրթությունն ստացել է ԽՄԿԿ կենտկոմին կից կուսակցական բարձրագույն դպրոցում, ավարտել 1948 թ., իսկ 1951-ին ավարտել է հասարակական գիտությունների ակադեմիան։ 1934 թվականից վարել է պատասխանատու պաշտոններ Համկենտ կենտկոմում։ Հայրենական պատերազմի տարիներին ծառայել է խորհրդային բանակում որպես քաղաշխատող։ 1952-ից եղել է ԽՄԿԿ ԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի գիտաշխատող, ԽՄԿԿ ԿԿ-ին կից հասարակական գիտությունների ակադեմիայի կուսակցության ամբիոնի վարիչի տեղակալ։ Մասնակցել է Ստեփան Շահումյանի և Պ. Ա. Ջափարիձեի գիտական ժառանգության հրատարակման աշխատանքներին։

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՍՏԵՓԱՆ *(1878—1918)*.— Կուսակցական, հեղափոխական գործիչ, հրապարակախոս, խմբագիր։ Ծնվել է Թիֆլիսում, 1878 թ. հոկտեմբերի 1-ին։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի ռեալական դպրոցում, ավարտել 1898-ին։ 1898—1899 թթ. սովորել է Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտում։ Աշակերտական տարիներից մասնակցել է մարքսիստական-երիտասարդական կազմակերպությունների աշխատանքներին, ստեղծել է «Միաձայն» աշակերտական խմբակը, հրատարակել նույնանուն խմբագրատիպ ալմանախ։ 1898 թ. ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը։ Ռիգայից վերադառնալուց հետո աշխատել է «Նովոյե օբոզրենիե» թերթում որպես սրբագրիչ։ 1899 թ. Ջալալօղլիում (այժմ՝ Ստեփանավան) կազմակերպել է առաջին մարքսիստական խմբակը Հայաստանում։ 1900-ից շարունակել է ուսումը Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտում, միաժամանակ կապեր հաստատել տեղի սոցիալ-դեմոկրատների հետ. մասնակցել է հեղափոխական ելույթների։ 1901-ին հայ առաջադեմ ուսանողների հետ ստեղծել է «Թեորետիկ» մարքսիստական խմբակը, մասնակցել է ուսանողական համառուսաստանյան համագումարին (1902 թ. փետրվար)։ Նույն տարում հեռացվել է ինստիտուտից հեղափոխական գործունեության համար և աքսորվել է Անդրկովկաս։ Նույն 1902-ին նրա ղեկավարությամբ ստեղծվել է «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» որպես ՌՍԴԲԿ բաղկացուցիչ մասը։ Միությունը հրատարակել է «Պրոլետարիատ» պարբերաթերթ, որտեղ նրա գրած «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստը» արժանացել է Վ. Ի. Լենինի գնահատմանը։ 1902 թ. աշնանից սովորել է Բեռլինի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում։ Այնտեղ նա կապեր է հաստատել Կ. Կաուցկու, Ա. Բեբելի, Ֆ. Մերինգի, Կ. Լիբկնեխտի, Ռ. Լյուքսեմբուրգի և այլ գործիչների հետ, իսկ 1903-ի գարնանը Շվեյցարիայում հանդիպել է Վ. Ի. Լենինին։ Նրա հանձնարարությամբ 1904-ին գլխավորել է այն հանձնաժողովի աշխատանքները, որի նպատակն էր լույս ընծայել հայերեն և վրացերեն մարքսիստական գրականություն։ 1905 թ. ապրիլ ամսին վերադարձել է Թիֆլիս, խմբագրել «Պրոլետարիատի կոչը», աշխատակցել բոլշևիկյան «Վպերյոդ», «Պրոլետարի» թերթերին։ Խմբագրել է «Կավկազսկի ռաբոչի լիստոկ» ռուսերեն, «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր» հայերեն թերթերը։ 1906 թ. մասնակցել է ՌՍԴԲԿ IV (միավորիչ) համագումարին, հաջորդ տարի՝ V համագումարին։ 1907-ից գործել է Բաքվում։ Այնտեղ նա հիմնադրել է «Բակինսկի բաբոչի», «Դուդոկ» թերթերը, «Վոլնա» ամսագիրը։ 1911 թ. ձերբակալվել է, 1912-ի հունիսին աքսորվել Աստրախան, որտեղից նամակագրական կապ է հաստատել Վ. Ի. Լենինի հետ, աշխատակցել է «Պրավդա» թերթին։ 1914 թ. վերադարձել է Անդրկովկաս, աշխատել Բաքվում։ 1916 թ. աքսորվել է Սարատով, որտեղ մնացել է մինչև փետրվարյան հեղափոխությունը։ 1917 թ. դեկտեմբերին ՌԽՍՀ ժողկոմխորհը նրան նշանակել է Կովկասի գործերի արտակարգ կոմիսար։ 1918 թ. ապրիլ ամսին մուսաֆաթական ապստամբության ճնշումից հետո նրա գլխավորությամբ կազմվել է Բաքվի ժողկոմխորհը։ Բաքվի կոմունայի անկումից հետո անգլիական ինտերվենտները նրան 25 ընկերների հետ գնդակահարել են 1918 թ. սեպտեմբերի 20-ին։ Կուսակցական, հեղափոխական աշխատանքին զուգահեռ ունեցել է գրական-հրապարակախոսական բեղուն գործունեություն։ Բացի իր խմբագրած կամ աշխատակցած վերոհիշյալ թերթերում տպագրած բազմաթիվ հոդվածներից, գրել է գրականագիտական տեսական երկեր։ Դրանցից բացառիկ արժեք է ներկայացնում 1914-ին տպագրած «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» երկը։ Խոշոր դեր է կատարել հայ մարքսիստական քննադատական մտքի զարգացման գործում, նրա այդ կարգի երկերից են 1902 թ. Ղ. Ալշանի գրական գործունեության 40-ամյակի առիթով գրած ճառը, 1911-ին գաղտնակցական Վարանդյանի դեմ գրած «Տիեզերական թութակ» հոդվածը, «Վ. Փափազյանը պատմագետի դերում» գրախոսությունը, 1916-ին «Պայքարում» տպագրած «Հայ գրականության ժողովածուի մասին» հոդվածը և այլն։ Նրա երկերը խորհրդային տարիներին արժանացել են մի քանի հրատարակության, թե առանձին գրքերով և թե բազմահատորյակներով, որոնցից են «Երկերի» երեքհատորյակը (1955—1958), «Երկերի» հինգ հատորյակը (1975—1978) և այլն։

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ *(1902—1936)*.— Զինվորական գործիչ։ Ծնվել է Թիֆլիսում. ավագ որդին է Ստեփան Շահումյանի։ Կրթությունն ստացել է Աստրախանի և Բաքվի գիմնազիաներում։ Կոմունիստական կուսակցության շարքերն է ընդունվել 1917-ին։ Հաջորդ տարի կարմիր գվարդիականների շարքերում կռվել է մուսաֆաթականների դեմ։ Բաքվի կոմունայի անկումից հետո ձերբակալվել է։ 1919-ից աշխատել է Վրաստանում։ Խորհրդային կարգերի հաղթանակից հետո ստացել է զինվորական կրթություն, ավարտել Մոսկվայի զինվորական ակադեմիան։ Վարել է զինվորական պաշտոններ։ Գրել է «Ստեփան Շահումյան» փաստագրական և կենսագրական ուսումնասիրությունը և «Բաքվի կոմունան» գիրքը։

ՇԱՄԻԼՈՎ ԱՐԱԲ (ԱՐԱԲԵ ՇԱՄԻԼ) *(1897—1978)*.— Գրող. Հայկական ԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ (1967)։ Ծնվել է Կարսի մարզի Սուսուզ գյուղում։ 1912-ից ապրել է Թիֆլիսում։ 1920 թ. մեկնել է Մոսկվա՝ Լազարյան ճեմարանում սովորելու։ 1924-ից Երևանում վարել է տարբեր պաշտոններ։ Ապա ուսումը շարունակել է Լենինգրադում, սովորել ԽՍՀՄ ԳԱ ասպիրանտուրայում, ղեկավար ունենալով ակադեմիկոս Հովսեփ Օրբելուն։ Ունեցել է գրական, բանասիրական բեղուն գործունեություն։ Առանձին գրքերով հրատարակած երկերն են՝ «Քուրդ հովիվը» (Երևան, 1931), նույնը հայերեն (1971), «Ալագյազի քրդերը» (1932), նույնը հայերեն (1932), «Լուսաբաց» (1958), «Երջանիկ կյանք» (1959), նույնը հայերեն՝

«Բախտի ճանապարհին» խորագրով, հատոր 1—2 (1961—1964), «Քրդական ժողովրդական հեքիաթներ» (1967), «Դրմ-դրմ» վեպ (1966), նույնը հայերեն՝ «Դրմ-դրմ բերդը» խորագրով (1978)։ Նրա «Քուրդ հովիվը» լույս է տեսել նաև ռուսերեն, վրացերեն, ադրբեջաներեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն։ Գրել է «Հայաստանի քրդերը» ֆիլմի սցենարը։

ՇԱՄԻՐԱՄ (1870—1955).— Երգչուհի-պարուհի։ Մնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է տարրական կրթություն, նվիրվել պարարվեստին։ 1890-ական թվականների վերջերից հանդես է եկել պարային համարներով և ժողովրդական երգերով, թուրքերեն լեզվով։ Ելույթներ է ունեցել հիմնականում ժողովրդական վայրերում, զբոսայգիներում, Հորինել ու կատարել է բազմաթիվ երգեր, որոնք լայնորեն տարածված են եղել ամբողջ Մերձավոր Արևելքում, հետագայում նաև սփյուռքահայ կենտրոններում (Եգիպտոս, Սիրիա, Լիբանան, Հունաստան և այլն)։ Այդ երգերից են «Թելեգրաֆքն Թելլերի», «Գուզուլարըմ» և այլն։ Գլխավոր դերերգերից է եղել Լեյլան՝ «Լեյլի Մեջնուն» օպերետում։

ՇԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՏԻՐԱՆ (1899—1952).— Ռեժիսոր, դերասան. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ (1949)։ Մնվել է Շուշիում։ Կրթություն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ավարտել 1918-ին։ Այդ տարիներից մասնակցել է հայկական ներկայացումներին։ 1921—1922 թթ. սովորել է Մոսկվայի հայկական դրամատիկական ստուդիայում։ Վերադառնալով Կովկաս՝ նախ խաղացել է Թիֆլիսում, ապա՝ Երևանի առաջին պետական թատրոնում, որտեղ նրա կատարած դերերից են՝ Սանչո Պանսա («Ազատագրված Դոն Կիխոտ»), Սկանարել («Դոն Ժուան»), Դիքո («Պեպո»), Քաջ Նազար և այլն։ 1931-ից սովորել է Մոսկվայի թատերական արվեստի պետական ինստիտուտում (ԳԻՏԻՍ), որի ռեժիսորական ֆակուլտետն ավարտել է 1934-ին։ 1934—1943 թթ. որպես ռեժիսոր աշխատել է Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, որտեղ 1937—1940 թթ. եղել է նաև դիրեկտոր և գեղարվեստական ղեկավար։ 1943-ից որպես գլխավոր ռեժիսոր աշխատել է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում։ Բեմադրել է մի քանի տասնյակ պիես, որոնցից են՝ «Պայթյուն», «Քարե հյուրը», «Կապուտան», «Բամբասանք և սեր», «Դավաճանություն», «Ամառային գիշերվա երազը», «Երիտասարդ գվարդիա», «Երկու տիրոջ ծառա», «Երևակայական հիվանդ» և այլն։ 1944 թվականից դերասանի վարպետություն և ռեժիսորա է դասավանդել Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում։ Հրատարակել է «Դերասանական արվեստի հիմունքները» ուսումնական ձեռնարկը (Երևան, 1938)։

ՇԱՄԼՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ (? — 1963).— Գրող, հրապարակախոս-խմբագիր։ Մնվել է Կարինում (Արևմտյան Հայաստան)։ Կրթություն ստացել է Ծննդավայրում։ Երիտասարդ տարիքում մեկնել է Ամերիկա, որտեղ ունեցել է գրական-հրապարակախոսական գործունեություն։ Աշխատակցել է ամերիկահայ մի շարք թերթերի. այդ թվում՝ «Լրաբեր», «Երիտասարդ Հայաստան», «Վերածնություն» և այլն։ Միաժամանակ խմբագրել է «Երիտասարդ Հայաստան» օրաթերթը։ Գրել է բազմաթիվ բանաստեղծություններ, պատմվածքներ, որոնց մի մասը հետագայում ամփոփել է «Գրական փունջ» ժողովածուում, լույս ընծայել 1960 թ.։ Ուշագրավ են հատկապես այդ գրքում զետեղված նրա հուշագրությունները։

ՇԱՄԼՅԱՆ ԶՈՀՐԱԳ (ծն. 1941).— Կոմպոզիտոր։ Մնվել է Հալեպում (Սիրիա)։ Կրթություն ստացել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում, Անթիլիասի դպրոցում և Էջմիածնի հոգևոր ճեմարանում, զուգահեռ հետևել Երևանի կոնսերվատորիայի դասընթացներին։ Ճեմարանն ավարտելուց հետո մեկնել է Լոնդոն, սովորել արքայական երաժշտական ակադեմիայում, հետևելով դաշնամուրի և կոմպոզիցիայի։ Հորինել է դաշնամուրային պիեսներ, երգեր և այլ գործեր։

ՇԱՄԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ (1899—1951).— Հրապարակախոս-խմբագիր։ Մնվել է Կեյվեի (Թուրքիա) գյուղերից մեկում։ Կրթություն ստացել է Կ. Պոլսում, Հ. Հինդլյանի Նոր-դպրոցում։ Գրական-հրապարակախոսական ասպարեզ մտել 1918—1920-ական թվականներին, աշխատակցելով «Արևելյան մամուլ», «Ժողովուրդի ձայն» և այլ պարբերականների։ Միաժամանակ աշխատակցել է «Ազգամ», «Վաղրիվ», «Ջյումհյուրիեթ» թուրքական թերթերին։ Եղել է Կ. Պոլսում լույս տեսնող հայերեն «Մարմարա» թերթի հիմնադիրներից ու նրա երկարամյա խմբագիրներից։ 1928 թ. հիմնել է «Շեփոր» օրաթերթը, ապա՝ «Շարժում» շաբաթաթերթը, բացի դրանից էլ Կ. Պոլսում։ 1940 թվականից մինչև մահը դարձյալ խմբագրել է «Մարմարա» օրաթերթը։ Իմացել է եվրոպական մի քանի լեզու։ Եղել է անգլիական «Դեյլի էքսպրես», «Դեյլի մեյլ» թերթերի Կ. Պոլսի թղթակիցը։ Գրել է վեպեր, պատմա-բանասիրական երկեր։ 1930 թ. Կ. Պոլսում տպագրել է «Դարդանելի պատերազմը» գիրքը։ Մեռել է ժենևում։

ՇԱՄՇԵՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (1856—1914).— Նկարիչ։ Մնվել է փետրվարի 9-ին, Թիֆլիսում, որտեղ ստացել է կրթությունը։ 1868 թ. ընդունվել է Թիֆլիսի գիմնազիան։ 1874 թվականից, գիմնազիայում սովորելուն զուգընթաց՝ հաճախել է Կովկասի՝ Արվեստը խրախուսող ընկերության նկարչական դասընթացներին։ 1877 թվականից սովորել է Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիայում, որտեղ աշակերտել է նկարիչ Պ. Պ. Զիստյակովին, իսկ անմիջական դեկավարը եղել է նկարիչ պրոֆեսոր Վերեշչագինը։ Ուսանողական այդ տարիներից ստեղծել է գրաֆիկական նկարներ, որոնցից են Զիստյակովի, Նեկրասովի դիմանկարները։ Ակադեմիայում սովորելու տարիներին մեկնել է արտասահման, եղել Փարիզում, Մյունխենում, Վիեննայում, ծանոթացել է համաշխարհային նկարչական արվեստի կոթողներին։ 1885 թ. վերադարձել է Թիֆլիս, նվիրվել մանկավարժական և ստեղծագործական աշխատանքի։ Մանկավարժական աշխատանքին զուգընթաց ստեղծել է բազմաթիվ նկարներ, որոնք ցուցադրվել են տարբեր ցուցահանդեսներում։ Հիմնականում պատկերել է Անդրկովկասի ժողովուրդների մարդկանց, նրանց կյանքն ու կենցաղը։ Այդպիսի նկարներից են՝ «Թիֆլիսցի ջրկիրը», «Պարսիկ մաշկակարը», «Փողոց հին Թիֆլիսում», «Շեյխան բաղարը», մանավանդ հայտնի «Ղեյնարան», որը պատկերում է ժողովրդական տոնակատարությունը Թիֆլիսի փողոցներում, մարդկանց քեֆը, պարը։ Աշխատավորական խավի կյանքը պատկերող լավագույն գործերից են՝ «Ներունու դիմանկարը», «Դեղատան սեղանի մոտ»։ Ստեղծել է հայ և ռուս ականավոր մի շարք գործիչների դիմանկարները՝ ինչպես Ե. Աբովյանի, Պ. Պռոշյանի, դերասանուհի Մարիա Սավինայի, կոմպոզիտոր Անտոն Ռուբինշտեյնի և ուրիշների։ Բնանկարներից հիշատակության արժանի են՝ «Սանահինի կամուրջը», «Սամուր գետի ակունքներում», «Քյոռ օղլու բերդը»։ 1904 թ. լույս է ընծայել «Գծագրության և նկարչության տարրական դասընթացը» (ռուսերեն), որն օգտագործվել է Կովկասի դպրոցներում։

ՇԱՄՇԵՆՔԻ (17-րդ դ.).— Աշուղ։ Նրա երգերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանում, № 10208 ձեռագրում։

ՇԱՄՍ (16-րդ դ.).— Տաղերգու։ Նրա տաղերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանում, № № 284, 2003, 2079, 3498, 5306, 5623, 7688 և այլ ձեռագրերում։

ՇԱՄՇՅԱՆ ԱՐԱՄ (ծն. 1925).— Ջութակահար, մանկավարժ. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1975)։ Մնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Խարկովի և Մոսկվայի կոնսերվատորիաներում։ 1951-ին ավարտել է ուսման ընթացքը և նույն տարվանից ավելի քան 30 տարի պաշտոնավարել է Երևանի պետական կոնսերվատորիայում, 1976-ից՝ պրոֆեսորի ատիճանով։ 1965-ից զեկավարել է նվագախմբային ֆակուլտետի աշխատանքները։ Մանկավարժական աշխատանքին զուգընթաց հանդես է եկել որպես մենակատար ջութակահար։ Կազմել է երկու ուսումնական ձեռնարկ՝ սկսնակ ջութակահարների համար։ Ջութակի և դաշնամուրի համար հորինել է մանրանվագներ։ Ունի բազմաթիվ մշակումներ, փոխադրություններ, որոնք կատարվում են ականավոր ջութակահարների կողմից՝ մեր հանրապետությունում և նրանից դուրս։ Նմուշներ տեղ են գտել Երևանի կոնսերվատորիայի ուսումնական ծրագրերում։ Հրատարակել է մեթոդական բնույթի մի քանի աշխատություն։

ՇԱՄՇԻ ՄԵԼՔՈ (ԹՈՒԼՔԱՆՅԱՆ ՄԵԼՔԻՍԵԹԵԿ) (1750—1821).— Աշուղ։ Մնվել է Վրաստանի Մառնեուլի գյուղում։ Զբաղվել է մոմագործությամբ։ Եղել է հարուստ, անգամ ճորտեր է ունեցել, որոնք հետագայում, 1801-ին նվիրել է Էջմիածնի վանքին։ Պատանի հասակից սիրել է աշուղական արվեստը, տարվել հատկապես Սայաթ-Նովայի երգերով։ Նրա նման ինքն էլ ստեղծագործել ու կատարել է երեք լեզվով՝ հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն։ Եղել է ժա-

մանակի սիրված երգիչներից։ Նրանից մեզ հասել է 8 վրացերեն, 15 հայերեն երգ։ Վրացերեն խաղերից ոչ բոլորն են տպագրված, իսկ հայերեն երգերից նմուշներ լույս են տեսել 1850-ական թվականներից։ 1859 թ. «Նոր քնար Հայաստանի» երգարանում զետեղվել է նրա «Ի վերա աւերման Տփխիս քաղաքի» երգը, նվիրված Աղա Մահմեդ խանի արշավանքներին ու Թիֆլիսի ավերմանը։ 1885 թ. Գ. Տեր-Ալեքսանդրյանը նրանից մի քանի երգ զետեղել է իր «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» գրքում։ Գ. Ախվերդյանի կազմած, բայց հետագայում, 1903 թ. լույս տեսած «Հայ աշուղների» Բ ժողովածուում տեղ են գտել նրա երգերից յոթը։ Մնացածները տպագրվել են մեր օրերում, Գ. Լևոնյանի, Գ. Ասատուրի, Գ. Թարվերդյանի, Լ. Մելիքսեթ-Բեկի և ուրիշների շնորհիվ։ Նրա հայերեն տաղերը անհրաժեշտ ծանոթագրություններով լույս է ընծայել պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկը «Շամշի Մելքոն և նրա հայերեն խաղերը» վերնագրով (Երևան, 1958)։

ՇԱՄՏԱՆՃՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (1874—1926).— Հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ։ Սընվել է Կ. Պոլսում։ Կրթություն ստացել է նախ թաղային դպրոցում, ապա Կենտրոնական վարժարանում, որը չավարտած՝ 1893 թ. մեկնել է Գերմանիա, բարձրագույն կրթություն ստացել Լայպցիգի և Բեռլինի համալսարաններում։ 1898 թ. վերադարձել է Պոլիս, զբաղվել ուսուցչությամբ, հայկական դպրոցներում դասավանդելով գերմաներեն։ Ունեցել է գրական-հրապարակախոսական բեղուն գործունեություն, աշխատակցել է «Մասիս», «Մաղիկ», «Լույս» և այլ պարբերականների, մասնավորապես օսմանյան սահմանադրության տարիներին։ 1898—1899 թթ. խմբագրել է «Մասիս» հանդեսը, իսկ 1903—1904 թթ.՝ «Մաղիկը»։ Սահմանադրությունից հետո, 1911 թ. հիմնադրել է «Ոստան» նոմայա հանդեսը, շարունակել մինչև 1912 թ. վերջը, ընդհատել, մեկ էլ վերահրատարակել է 1919 թվականից մինչև 1921 թ.։ Այդ տարիներին հիմնել է «Ազգային քաղաքական մատենաշարը» և լույս ընծայել Հ. Բարբի «Սարսափի երկրի մեջ», Լեփսիուսի «Գաղտնի տեղեկագիր» գրքերը, ինչպես և ամերիկյան դեսպան Մորգենթաուի հիշողությունները, նաև իր գրչին պատկանող «Հայ մտքին տուրքը եղեռնին» հիշողությունները աքսորի տարիներից։ 1923 թ. մեկնել է Բուլղարիա, այնտեղից՝ Բեյրութ, որտեղ հրատարակել է «Հայ կյանք» պարբերականը։ Ունեցել է թարգմանչական գործունեություն։ Ինքն է թարգմանել վերեում հիշատակված գրքերի մի մասը, ինչպես նաև գեղարվեստական երկեր, որոնք լույս են տեսել «Ոստան»-ում։ Դրանցից հիշատակության արժանի է Հաուպտմանի «Արևածագից առաջ» դրամատ։ Հրատարակել է դասագրքեր։ Կյանքի վերջին տարիներին ապրել է հոգեկան վիճակը խախտված, արդյունք աքսորի տարիներին կրած տարատիպների։

ՇԱՄՏԱՆՃՅԱՆ ՎԻԿՏՈՐ (1858—1882).— Դերասանուհի։ Սնվել է Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում։ 1871-ից փոքր դերերով մասնակցել է Հ. Վարդովյանի «Օսմանյան թատրոնի» ներկայացումներին, ստանձնաբար դարձել ճանաչված դերասանուհի։ Հետագայում խաղացել է Տ. Զուխաջյանի և Ս. Պենկլյանի օպերետային խմբում, մասնակցել Ազգրիանապոլսում, Աթենքում այդ խմբի տված ներկայացումներին («Լեպլեպիճի Հորհոր ազա», «Գեղեցկուհի Հղինե», «Մադամ Անգո» և այլն)։

ՇԱՅԲՈՆ ԱՇՈՏ (ԴԱՍՊԱՐՅԱՆ) (1905—1982).— Գրող։ Սնվել է Թիֆլիսում, որտեղ ստացել է միջնակարգ կրթությունը, 1924 թ. ավարտել է Ներսիսյան դպրոցը, զբաղվել մանկավարժական աշխատանքով։ 1930 թ. տեղափոխվել է Երևան, սովորել Պետական Համալսարանում, սակայն չավարտած մեկնել է Մոսկվա, շարունակել ուսումը կինեմատոգրաֆիայի բարձրագույն ինստիտուտի սցենարական բաժնում, ավարտել 1935 թ.։ Վերադարձել է Երևան, նվիրվել սցենարական աշխատանքի։ Գրել է «Սևանի ձկնորսները» ֆիլմի սցենարը (1936), նաև «Հայաստանի 25-ամյակը» (1945)։ Գրել է մի քանի պիես, որոնցից «Երշանիկ սերունդը» և «Սովորական մարդիկը» բեմադրվել են Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում։ Հանրապետական թատրոններում բեմադրվել են նաև նրա «Պարաշյուտով փնտացուն» և «Խանդարող հանգամանքը» պիեսները։ Դեռևս Թիֆլիսում ապրելու տարիներին, 1925 թ. լույս է ընծայել մի քանի գրքույկ, 1931—1938 թթ. հրատարակել է «Զրահավոր գարուն», «Վերելքի երգեր» գրքույկները։ Մասնակցել է Հայրենական պատերազմին։ Զորացրվելուց հետո ընտրել է գրական մի նոր բնագավառ՝ դիտաֆանտաստիկական վիպագրությունը։ Միմյանց հետևից լույս է ընծայել մի քանի նման վեպեր՝ «Սպիտակ նավերների աշխարհում» (Երևան, 1951), «Գիշերային ծիածան» (1954), «Տիեզերական օվկիանոսի կապիտանները» (1956), «Երկիր մոլորակի գաղտնիքները» (1960), «Անսովոր պատմություն» (1965) և այլն։ Նրա «Գիշերային ծիածան» և «Սպիտակ ստվերների աշխարհում» վեպերը վերահրատարակվել են 1959 և 1963 թթ.։ Վերջինը լույս է տեսել նաև ուկերեն թարգմանությամբ (Երևան, 1952 թ.)։

ՇԱՆԹ ԼԵՎՈՆ (ՍԵՂԲՈՍՅԱՆ) (1869—1951).— Գրող։ Սնվել է Կ. Պոլսում։ Բուն ազգանունը եղել է Նահապետյան։ Հոր՝ Սեղբոսի մահից հետո դպրոցում գրվել է Սեղբոսյան, իսկ գրական ասպարեզ մտնելուց հետո օգտագործել է Շանթ ծածկանունը։ 1883 թ. ավարտել է Սկյուտարի ճեմարանը, հաջորդ տարի պոլսեցի մի խումբ աշակերտների հետ ուղարկվել է Էջմիածին, ուսումը շարունակել Գևորգյան ճեմարանում։ 1891 թ. վերադարձել է Պոլիս, աշխատել որպես ուսուցիչ։ Նույն այդ տարիներից գրական երկերով աշխատակցել է Ա. Արփիարյանի «Հայրենիք» օրաթերթին, որտեղ լույս են տեսել նրա արձակ և չափածո մի քանի ստեղծագործությունները, այդ թվում «Մնաք բարով իրիկունը» վեպը, նաև Պուշկինից, Լերմոնտովից կատարած թարգմանությունները, ինչպես Լերմոնտովի «Մծիրին»։ 1892 թ. վերջերին մեկնել է Գերմանիա, յոթ տարի սովորել Լայպցիգի, Ենայի և Մյունխենի համալսարաններում, հետևելով մանկավարժության, հոգեբանության և գրականության։ Ուսանողական այդ տարիներին գրել է «Լեռան աղջիկը» պոեմը և «Երազ օրեր» վիպակը, որը տպագրվել է Աբսոխանյանի «Մուրճ» ամսագրում։ «Մուրճում» են լույս տեսել նաև նրա «Դուրսեցիները» վեպը (1894), «Վերժինը» (1896), «Դարձը» (1897), «Գերեզմանուհին» (1898), որոնք բոլորն էլ հրատարակվել են նաև առանձին գրքերով։ 1899 թ. ավարտել է ուսման ընթացքը, վերադարձել Կոստանդնուպոլիս, զբաղվել ուսուցչությամբ։ Գրել է «Եսի մարդը» (1901), «Ուրիշի համար» (1903), «Ճամբուն վրա» (1904) պիեսները։ 1906—1908 թթ. պաշտոնավարել է Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցում որպես տեսուչ։ Մեկ տարի էլ աշխատել է Երևանի թեմական դպրոցում։ Մտերմական կապերի մեջ է եղել Հովհ. Թումանյանի, Ղ. Աղայանի, Ավ. Իսահակյանի հետ։ Մասնակցել է նրանց «Վերնատան» գրական հավաքույթներին։ Նրա անունը ավելի է հռչակվել «Հին աստվածներ» պիեսի հրապարակ գալուց հետո։ գրվել է 1909 թ., լույս տեսել Կ. Պոլսում, 1913 թ., բեմադրվել է Կովկասում և Պոլսում։ 1911 թ. մեկնել է Կ. Պոլիս, որպես ուսուցիչ աշխատել Էսայան և Կեդրոնական վարժարաններում։ 1913 թ. մեկնել է Եվրոպա, 1915 թ. վերադարձել Կովկաս։ Գրել է «Կայսրը» պիեսը, որը նույնպիսի ընդունելության է արժանացել, ինչպես «Հին աստվածները»։ 1919 թ. ընտրվել է դաշնակցական պառլամենտի անդամ, ունեցել քաղաքական գործունեություն։ 1921 թ. մեկնել է արտասահման։ Այդ տարիներին գրել է «Շղթայվածը» (1918), «Ինկած բերդի իշխանուհին» (1921) և այլ գործեր։ Արտասահմանում հիմնականում զբաղվել է մանկավարժական աշխատանքով։ 1928 թ. Ն. Աղբալյանի հետ Կահիրեում հիմնել են «Հայ կրթական համազգային ընկերությունը», որը հաջորդ տարի Բեյրութում բաց է արել Հայ ճեմարանը։ Այնտեղ էլ պաշտոնավարել է մինչև կյանքի վերջը։ Նրա դրամատիկական վերջին երկն է «Օշին Պայլը», որը քանիցս բեմադրվել է Փարիզում և սփյուռքահայ այլ կենտրոններում։ Գրել է «Հոգիները ծարավի» վեպը (1945), որ նախ լույս է տեսել մամուլում, ապա՝ առանձին գրքով։ Նրա երկերը հետմահու լույս են տեսել մի քանի հատորներով, իսկ ընտիր երկերը նաև Երևանում, 1968 թ.։

ՇԱՆՇՅԱՆ ՊԵՏՐՈՍ (1819—1889).— Մանկավարժ։ Սնվել է Թիֆլիսում։ Կրթությունն ստացել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ավարտել 1837 թ., իսկ 1843 թ. ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ Մեկնել է արտասահման, եղել Վիեննայում, Վենետիկում, Փարիզում, որտեղ Սորբոնի համալսարանում հետևել է փիլիսոփայության դասընթացներին։ Մասնակցել է 1848 թ. հեղափոխական խմորումներին։ 1849 թ. վերադարձել է Ռուսաստան, պաշտոնավարել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում որպես տեսուչ, բայց երկու ամսից հեռացվել է որպես լութերական։

Նրա կողմնակիցներին հաջողվել է 1851 թ. կրկին ընդունել տալ այդ պաշտոնում, որ շարունակել է մինչև 1857 թվականը, արմատապես վերակառուցելով դպրոցի ուսումնական ծրագիրը՝ ըստ եվրոպական նորագույն մանկավարժության, 1863—1864 թթ. որպես տեսուչ աշխատել է Շուշիի թեմական դպրոցում, որտեղ նույնպես նրա դաստիարակչական մեթոդները հանդիպել են պահպանողական խավերի դժգոհությանը, առաջացրել մեծ աղմուկ։ Համակրական վերաբերմունք է ունեցել համբյարական շարժումների նկատմամբ։ 1866-ին Կ. Պոլսում լույս է տեսել նրա «Համառոտություն քրիստոնեական ուսման» դասագիրքը։ 1857-ին ռուսերեն լեզվով հրատարակել է «Երկու խոսք համբյարների մասին» աշխատությունը, իսկ 1870-ին՝ «Ուսումն պարտուց» գիրքը։

ՇԱՊԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ (1864—1949).— Նկարիչ։ Ծնվել է Կարնո մոտակայքում գտնվող Սյունենց գյուղում։ Նախնական կրթությունն ստացել է Կարինում, ապա՝ 1879—1883 թթ. սովորել է Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում. ավարտելուց հետո հետևել է նկարչության, աշակերտել իտալացի նկարիչ Պաուլետտիին։ 1883 թ. վերադարձել է Կարին, դարձել գրասենյակային աշխատող։ 1890 թ. մեկնել է Բաթում, ծառայել բանկում։ Ապա կրկին մեկնել է Եվրոպա, ուսումը շարունակել Փարիզում, Ժյուլիենի ակադեմիայում, աշակերտելով Ժան Պոլ Լորանսին և Բենժամին Կոնստանին։ Այդ տարիներից ստեղծել է բազմաթիվ նկարներ, որոնք ցուցադրվել են փարիզյան տարբեր ցուցահանդեսներում՝ սկսած 1900 թվականից։ Եղել է ֆրանսիական ծովանկարիչների միության հիմնադիր անդամներից, նաև անդամ՝ գեղարվեստական և գրական մի շարք ընկերություններ։ Մամուլը բարձր է գնահատել նրա հետևյալ գործերը՝ «Ծովափ», «Ծովը լուսնյակ գիշերով», «Կարիդոս որսացող կանայք», «Ալիքը», «Լուսնի լույսով» և այլ. վերջինս գնվել է Փարիզի Լյուքսեմբուրգի թանգարանի կողմից։ «Ֆիգարո», «Թան» և այլ թերթեր նրան համարել են նոր ժամանակի լավագույն նկարիչներից մեկը։ Նրա արվեստը գնահատողներից է եղել Հովհ. Այվազովսկին։ Մասնակցել է Փարիզում, Լոնդոնում, Կահիրեում և այլ քաղաքներում կազմակերպված մի շարք ցուցահանդեսների։ Ստեղծագործությունների նմուշներ պահվում են Փարիզի, Ֆիլադելֆիայի, Վաշինգտոնի, Նյու Յորքի, Բուենոս Այրեսի, Միդելլի և այլ քաղաքների թանգարաններում։ Երևանի պատկերասրահում է գտնվում նրա «Նորմանդացի ձկնորսներ» գործը։

ՇԱՊԱՆՅԱՆ ՀՐԱՆՏ (1887—1939).— Նկարիչ։ Ծնվել է Կարինում։ Որդին է նկարիչ Արսեն Շապանյանի։ Փոքր հասակից ընտանիքով տեղափոխվել են Փարիզ, որտեղ ստացել է մասնագիտական կրթությունը՝ նախ հորից, ապա՝ Փարիզի գեկորատիվ արվեստների ուսումնարանում։ Հետևել է հիմնականում ժողովրդագրության, բնանկարչության և դիմանկարչության։ Զբաղվել է նաև գրքի ձևավորումով։ Լավագույն գործերից են՝ «Կրկես», «Տխուր գյուղը», ինչպես և հոլանդական ու բելգիական ծովափերը ներկայացնող նկարները։ Իր կյանքին վերջ է տվել ինքնասպանությամբ։

ՇԱՊՈՇՆԻԿՈՎ ԻԼԻԱ (ՓԱՓԱԼԶՅԱՆ ԵՂԻԱ) (1895—1953).— Կոմպոզիտոր, դիրիժոր։ Ծնվել է Նոր Նախիջևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Կիևի կոնսերվատորիայում, իսկ 1924 թ. ավարտել է Դոնի Ռոստովի պետական համալսարանի հասարակական գիտությունների ֆակուլտետը։ Այդ տարիներից սկսել է երաժշտական գործունեությունը։ Նրա հիմնադրվել է Դոնի Ռոստովի հայկական երաժշտական թատրոնը, եղել է նրա առաջին դիրիժորը։ Ունեցել է ստեղծագործական բեղուն գործունեություն։ Գրի է առել, մշակել հայ ժողովրդական երգեր, պարեղանակներ, որոնց մի մասը օգտագործել է «Նախիջևանյան էսքիզներում»։ Ուսումնասիրել և օգտագործել է նաև Կովկասյան այլ ժողովուրդների երաժշտությունը, որոնց հիման վրա գրված երկերից են՝ «Լենսային ֆրագմենտները», «Օսեթական երգեր ու պարեր», «Ադիգեյյան պար», «Դաղստանյան ռապսոդիա», «Դաղստանյան լեզգինկա», «Ադրբեջանական ֆանտազիա», «Վրացական պար», «Ղազախական սյուիտ» և այլն։ Առավել ծավալուն գործերից է «Բախչիսարայի շատրվանը» օպերան, որը հաճախ է հնչել հանրապետական կատարմամբ։ 1942 թ. տեղափոխվել է Երևան, գրել է «Երևանյան էսքիզները»։ Ապա մեկնել է Միջին Ասիա։ Ունեցել է նաև մանկավարժական գործունեություն։

ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ (10-րդ դ.).— Մատենագիր։ Գրել է Աշոտ Ա-ի պատմությունը՝ նրա որդու՝ Դավթի խնդրանքով։ Այս գիրքը մեզ չի հասել, նրա մի մասն է համարվում «Ցաղզաց Թագին երանելոյն Կոստանդինոսի» գրվածքը, որ տպագրվել է «Ճառաքաղում», 1861 թ.։ Գրել է նաև «Բան վասն պահոց» աշխատությունը։

ՇԱՊՈՒՀ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ (13-րդ դ.).— Քարկոփ վարպետ։ Վայոց Ձորի Սալլան գյուղում պահպանվել է նրա քանդակած մի խաչքարը իր անվան հիշատակությամբ։

ՇԱՊՈՅԱՆ ԳԱՐՍԵՎԱՆ (ծն. 1906).— Պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Նոր Բայազետում (այժմ՝ Կամո)։ Միջնակարգ կրթությունն ստացել է ծննդավայրում, իսկ բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանում, որի պատմագրական ֆակուլտետն ավարտել է 1931 թ.։ 1932—1934 թթ. աշխատել է Դոնի Ռոստովի «Խորհրդային Հայաստան» հայկական դպրոցում որպես ուսումնական մասի վարիչ և պատմության դասատու։ 1934—1937 թթ. շարունակել է ուսումը Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայում։ Նշանակվել է ԽՍՀՄ պատմության դասախոս Երևանի պետական համալսարանում։ 1939—1941 թթ. միաժամանակ աշխատել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի խմբագրությունում որպես պրոպագանդայի բաժնի վարիչ։ 1941—1945 թթ. ծառայել է խորհրդային բանակում, եղել է «Խորհրդային ռազմիկ» հայկական թերթի պատասխանատու քարտուղար։ 1947 թվականից շարունակել է դասախոսական աշխատանքը Երևանի պետական համալսարանի ԽՍՀՄ պատմության ամբիոնում, նախ որպես դասախոս, հետագայում ամբիոնի վարիչ։ 1967 թ. պաշտպանել է դիսերտացիա, ստացել պատմական գիտությունների դոկտորի աստիճան՝ «Հողային հարաբերությունները Խորհրդային Հայաստանում, 1920—1929 թթ.» աշխատության համար։ Խորհրդահայ մամուլում տպագրել է պատմագրական բազմաթիվ հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հողաշինարարությունը Խորհրդային Հայաստանի ազգային փոքրամասնությունների շրջանում, 1921—1927 թթ.» (1960), «Սոցիալիստական հող օգտագործումը Հայաստանում, 1920—1929 թթ.» (1962), «Գյուղի ներքին հողաբաժանությունը Խորհրդային Հայաստանում, 1921—1929 թթ.» (1965) և այլն։

ՇԱՌՈՅԱՆ ՌՈԼԱՆԴ (ծն. 1952).— Գրող։ Ծնվել է Հայկական ԽՍՀ Թալինի շրջանի Աշնակ գյուղում։ Բարձրագույն կրթություն ստացել է Երևանի պետական համալսարանում։ 1977-ից աշխատում է «Ծիծեռնակ» ամսագրի խմբագրությունում։ Առանձին գրքերով հրատարակած երկերն են՝ «Հաբյուր կոունկ» (վիպակ և պատմվածքներ) (Երևան, 1979), «Մառախուղ» (պատմվածքներ, վիպակներ, 1985), «Խաղաղ կեսօր» (1985)։

ՇԱՎԱՐՇՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ (1884—1960).— Մանկավարժ. Հայկական ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ։ Ծնվել է Նոր Բայազետում։ Տարրական կրթություն ստացել է Իգդիրում։ 1896—1898 թթ. սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1898—1906 թթ.՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ 1910 թ. մեկնել է Գերմանիա, սովորել Ենայի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի մանկավարժական բաժնում։ Վերադառնալով Կովկաս՝ 1914—1918 թթ. պաշտոնավարել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում որպես մանկավարժության և հոգեբանության դասատու։ 1918—1920 թթ. աշխատել է Երևանում որպես տարրական դպրոցների տեսուչ։ 1921—1934 թթ. մանկավարժություն և հոգեբանություն է դասավանդել Երևանի պետական համալսարանի տարբեր ֆակուլտետներում։ 1934—1943 թթ. դասավանդել է Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտում։ 1940 թվականից սկսած՝ քսան տարի՝ ղեկավարել է այդ ինստիտուտի մանկավարժության ամբիոնը։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Ղազարոս Աղայանը որպես մանկավարժ» (Երևան, 1939), «Առաքել Բահաթրյանի մանկավարժական հայացքները» (1957), «Իսահակ Հարությունյանը որպես մանկավարժ» (1953) և այլն։ 1958 թ. հրատարակել է «Հայ մանկավարժներ» ծավալուն քրեստոմատիայի Ա. հատորը (19-րդ դ), իսկ 1961 թ.՝ հետմահու լույս է տեսել Բ. հատորը (19—20-րդ դդ.)։

ՇԱՏՎՈՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (ծն. 1933).— Խեցեգործ նկարիչ։ Ծնվել է Բուխարեստում (Ռումինիա)։ 1946 թ. նրանց ընտանիքը ներգաղ-

թել է Խորհրդային Հայաստան։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում և գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի բանգակագործական ֆակուլտետի խեցեգործության բաժինն ավարտել է 1965-ին։ 1960 թվականից մասնակցել է հանրապետական, միութենական և արտասահմանյան ցուցահանդեսների։ Նրա խեցեգործական աշխատանքները ցուցադրվել են Երևանում, Մոսկվայում (1970), Վիլնյուսում (1971, 1973), Ճապոնիայում (1972), Հունգարիայում և Լեհաստանում (1973)։ Զբաղվում է նաև փայտափորագրությամբ։

ՇԱՐԱԲԽԱՆՅԱՆ ՊԱՎԵԼ (ծն. 1927).— Լեզվաբան։ Ծնվել է Ստավրապոլի երկրամասի Կուրսկոյի շրջանի Եղեսիա հայկական գյուղում։ Միջնակարգ կրթությունն սկսել է նույն գյուղում, բայց ավարտել Էջմիածնում, 1946 թ.։ Հաջորդ տարվանից սովորել է Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, ավարտել 1952 թ.։ 1955—1958 թթ. սովորել է համալսարանի ասպիրանտուրայում, գրաբարի մասնագիտությամբ։ 1959 թվականից աշխատում է Պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնում, որպես գրաբարի դասախոս։ 1961 թ. պաշտպանել է դիսերտացիա «Գրաբարի շաղկապները» վերնագրով և ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան։ Պարբերական մամուլում հրատարակել է հոդվածներ, գերազանցապես հայոց լեզվի հին շրջանին վերաբերող։ Առանձին գրքով 1960 թ. լույս է ընծայել «Գրաբարի շաղկապները» գիրքը։

ՇԱՐԱՄԲԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1926—1986).— Նկարիչ. Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ (1967)։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարանում և գեղարվեստական ինստիտուտում, որտեղ սովորել է ընդհատումներով, ավարտել՝ 1951 թ.։ Ուսումնառության տարիներից (1943-ից) աշխատել է Դիլիջանի պետական թատրոնում իբրև նկարիչ-ձևավորող։ Ձևավորել է 30-ից ավելի բեմադրություններ, ինչպես «Անմեղ մեղավորներ», «Պաղտասար աղբար», «Պլատոն Կրեչետ», «Մորդանի ինամին», «Մադրա» և այլն։ 1947-ին Դիլիջանում [illegible] է նկարչական ստուդիա, որը գործել է 25 տարի, 1970-ից վերածվել նկարչական դպրոցի։ 1972-ից եղել է Հայաստանի ժողովրդական արվեստի պետական թանգարանի տնօրեն։ 1946-ից մասնակցել է հանրապետական, միութենական և արտասահմանյան ցուցահանդեսների։ Ունեցել է անհատական մի քանի ցուցահանդես։

ՇԱՐԱՍԱՆ (տե՛ս Թյուրինճյան Սարգիս)։

ՇԱՐԲԱԲՋՅԱՆ ԳՐԻԳՈՐ (ԳՐԻՇՈ) (1884—1942).— Նկարիչ. Վրացական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Թբիլիսում, որտեղ ստացել է միջնակարգ կրթությունը, իսկ մասնագիտությունը՝ Փարիզի Ժյուլիենի ազատ արվեստների ուսումնարանում, որտեղ աշակերտել է Ժան Պոլ Լորանսին։ Այդ տարիներից էլ ստեղծագործել է։ 1910 թ. վերադարձել է ծննդավայրը, ամբողջովին նվիրվել նկարչությանը։ 1913 թ. Թբիլիսում կազմակերպել է անհատական առաջին ցուցահանդեսը, որին լայնորեն անդրադարձել է մամուլը։ Մասնակցել է «Հայ արվեստագետների միության» ստեղծմանը՝ 1916 թ.։ Աստիճանաբար մղվել է դեպի պատմա-կենցաղային նկարչությունը, հին Թբիլիսի պատկերումը։ Մասնակցել է Հայաստան կազմակերպած բոլոր ցուցահանդեսներին։ 1921 թվականի ցուցահանդեսից հարյուրից ավելի գործեր տեղափոխել է Երևան, ցուցադրել այստեղ, ապա տարել Կ. Պոլիս՝ ցուցադրել նկարիչ Ս. Խաչատրյանի հետ։ Վերադառնալով Թբիլիս՝ ավելի քան երկու տասնամյակ ապրել է այնտեղ, ունենալով անհատական ցուցահանդեսներ թե Թբիլիսում և թե Երևանում։ 1935 թ. մասնակցել է Լոս Անջելեսում (Ամերիկա) կազմակերպված էքսլիբրիսների միջազգային ցուցահանդեսին։ Լավագույն գործերից են՝ «Ծովախորշը», «Հին Ագուլիսը», «Սևան», «Տաթևի մատուռը», «Ցխալտուբա», «Վանո Խոջաբեկյանի գերեզմանի վրա», «Ղեյնոբաս» և այլն, գրաֆիկական գործերից են՝ «Փարվանա», «Թմկարերդի առումը», «Սայաթ-Նովա», «Անուշ»։ Զբաղվել է նաև թատերական նկարչությամբ։ Նրա ձևավորումներով բեմադրվել են՝ «Պետո», «Խալիսի նոքար Սայաթ-Նովա» և այլ պիեսներ։

ՇԱՐԹ (ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ) (ծն. 1927).— Նկարիչ։ Ծնվել է Բեյրութում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, իսկ մասնագիտությունը՝ Փարիզում։ Վերադառնալով Բեյրութ՝ 1953 թ. ունեցել է անհատական առաջին ցուցահանդեսը։ 1956-ին մասնակցել է Մյունզեն դե լ'Ամ Մոդեռնի սրահներում բացված մեծ ցուցահանդեսին, արժանացել մամուլի գնահատմանը։ 1958 թ. անհատական ցուցահանդես է ունեցել Փարիզում և մեծ հետաքրքրություն է ստեղծել իր անվան շուրջ։ Այդ ցուցահանդեսում ներկայացրած նկարներից 10-ը նույն օրերին գնվել են տարբեր թանգարանների և անհատների կողմից։ Ֆրանսիական մամուլը բացառիկ գովեստով է խոսել բրիտանացի ձկնորսներին ներկայացնող նկարի մասին։ Հետագայում անհատական ցուցահանդեսներ է ունեցել կրկին Փարիզում, Լոս Անջելեսում, Նյու Յորքում, Միլանում և այլ քաղաքներում։ Համարվում է միջազգային չափանիշով հայտնի նկարիչ, վարպետ՝ հատկապես դիմանկարների և բնանկարների։ 1962 թ. արժանացել է Շերբուրգի մեծ մրցանակին, 1964-ին մրցանակ է շահել Բեյրութի միջազգային ցուցահանդեսում, 1967-ին՝ Տալերն քաղաքի ցուցահանդեսում և այլն։ Լավագույն գործերից են՝ «Փոքրիկ գեղեցկուհին», «Աբու լալա Մահարի», «Հողագործը», «Մանող կինը», «Քաղաքային տեսարան», «Պապիկը»։

ՇԱՐՈՒՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ (ծն. 1931).— Բանասեր. բանասիրական նգիտությունների դոկտոր (1973)։ Ծնվել է Երևանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 1954-ին։ 1962 թվականից դասավանդում է նույն համալսարանում։ Մամուլում տպագրել է բանասիրական մի շարք հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Սրբուհի Տյուսաբ, կյանքը և ստեղծագործությունը» (Երևան, 1963), «Պետրոս Դուրյան, կյանքը և գործը» (1972), «Սկյուտարի սոխակը» (Պետրոս Դուրյանի կյանքը և գրական գործունեությունը) (1977)։ Տեքստը պատրաստել և ծանոթագրել է՝ Պ. Դուրյանի «Երկերի ժողովածուի» երկհատորյակի (1971—1972), Մ. Մեծարենցի «Երկերի լիակատար ժողովածուի» (1981), Դուրյանի «Երկերի» (1981. Հայ դասականների մատենաշար), «Պետրոս Դուրյանը վավերագրերում և ժամանակակիցների հուշերում» ժողովածուի (1982)։ Համահեղինակներից է «Գրականություն» դպրոցական դասագրքի (VI դասարանի համար) (1971) և այլն։

ՇԱՔԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ (1912—1984).— Թատերական նկարիչ. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Բաքվում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Արմավիրի գեղարվեստական ուսումնարանում՝ 1925—1929 թթ., ապա՝ 1930—1934 թթ. ուսումը շարունակել է Լենինգրադի Ի. Ռեպինի անվան գեղարվեստների ակադեմիայում։ 1937 թվականից ապրել և գործել է Երևանում։ 1951—1964 թթ. աշխատել է Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնում որպես գլխավոր նկարիչ։ Ձևավորել է բեմադրություններ նաև Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի, Երաժշտական կոմեդիայի, Պատանի հանդիսատեսի և այլ թատրոններում։ Նրա կատարած ձևավորումների թիվը անցնում է 70-ից։ Դրանցից են՝ «Կարապի լիճը», «Ֆաուստ», «Նամուս», «Դոն Քիշոտ», «Ռևիզոր», «Երեք քույրեր», «Քաղքենիներ», «Անոժիտը», «Ջար ոգի», «Ամպրոպ», «Իրկուտսկյան պատմություն», «Աննա Կարենինա», «Ապուշը», «Գնչուական բարոն», «Արշակ Բ»։ Մասնակցել է մի շարք ցուցահանդեսների։ 1962 թ. ունեցել է անհատական ցուցահանդես։

ՇԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՉՅԱ (ծն. 1930).— Փիլիսոփ. փիլիսոփայական գիտությունների դոկտոր (1970)։ Ծնվել է Ստեփանակերտի շրջանի Ուլուբաբ գյուղում (Ադրբեջանական ԽՍՀ)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, հետևելով հոգեբանության և տրամաբանության։ 1954-ին ավարտել է համալսարանը, շարունակել ուսումը ասպիրանտուրայում։ 1957-ից աշխատել է Հայպետհրատի քաղաքական գրականության խմբագրությունում, 1960-ից պետական համալսարանի փիլիսոփայության ամբիոնում, նախ իբրև ասիստենտ, 1960-ից ավագ դասախոս, 1973-ից՝ դիալեկտիկական մատերիալիզմի ու տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր։ 1973—1977 թթ. աշխատել է Մալիի Հանրապետությունում՝ որպես Բամակոի բարձրագույն նորմալ դպրոցի փիլիսոփայության ֆակուլտետի պրոֆեսոր։ 1979-ից աշխատել է Հայկական ԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրությունում

որպես հասարակական դիտությունների դասավանդման բաժնի պետ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Ա. Գարագաշյանի աշխարհայացքը» (Երևան, 1962), «Ողջախոհության տեղը իմացության պրոցեսում» (1965), «Մետաֆիզիկայի իմացաբանական էությունը» (1967) և այլն։

ՇԱՔԱՐՅԱՆ ՎԻԱՄՇԱՊՈՒՀ *(1906—1982).*— Նկարիչ, մանկավարժ, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1967)։ Ծնվել է Բաքվում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Մոսկվայում։ Դասախոսել և ստեղծագործել է Օմսկում, Կրասնոդարում, Քիշնևում, որտեղ 1944 թ. ստեղծել է գեղարվեստական ուսումնարան։ 1946-ին եկել է Խորհրդային Հայաստան, դասախոսել Նորաստեղծ Գեղարվեստական ինստիտուտում։ 1934 թվականից մասնակցել է ցուցահանդեսների, ունեցել անհատական ցուցահանդես։ Լավագույն գործերից են՝ «Վ. Ի. Լենինի դիմանկարը», «Վերածնված Հայաստան», «Զանգվի ձորը», «Հին Երևանը», «Մեր գյուղացին», «Ներկարար Հակոբը», «Մալոմե», «Ողիսևոր», «Կայենն ու Աբելը», «Մարան ու Վեներան» և այլն։ Գրել է ուսերեն աշխատություններ մասնագիտական հարցերի մասին։

ՇԱՔԱՐՅԱՆ ՖԵԼԻՔՍ *(ծն. 1939).*— Գրող։ Ծնվել է Ալավերդու շրջանի Ուղունլար գյուղում (այժմ՝ Թումանյանի շրջան՝ Օձուն), բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում, ավարտել 1965 թ.։ 1973—1975 թթ. սովորել է Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի գրական բարձրագույն դասընթացներում։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Իմ կանաչ պատուհանը» (Երևան, 1968), «Վարդաստան իջավ լեռներից» (1975), «Պարզկա գիշեր» (1982)։

ՇԱՔԼՅԱՆ ԱՐԻՍ *(1900—1959).*— Գրող, հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Կիլիկիայի Ջորք Մարզան (Դյորդ յոլ) քաղաքում։ Կրթությունն ստացել է ծննդավայրի հայկական դպրոցում։ Ավարտելուց հետո զբաղվել է ուսուցչությամբ, աշխատել Ալեքսանդրիայի, Դամասկոսի հայկական դպրոցներում։ Գրական ասպարեզ է մտել 1920-ական թվականների սկզբներին, պոլսահայ մամուլում տպագրելով արձակ և չափածո երկեր։ Հետագայում աշխատակցել է սիյուռքահայ բազմաթիվ պարբերականների («Անահիտ», «Նոր գիր», «Անի» և այլն)։ Մի քանի տարի Հալեպում խմբագրել է «Եփրատ» պարբերականը։ 1927 թ. լույս է ընծայել բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Դեղին երգեր» խորագրով, ապա տպագրել է «Միջինք» գիրքը և հեքիաթների մի ժողովածու՝ «Կար ու չկար» խորագրով։ 1947 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան, շարունակել ստեղծագործական աշխատանքը։ Առանձին գրքերով Երևանում լույս ընծայած երկերն են՝ «Մեր Հայաստանն է» (1949), «Բախան ու աշխատանքը» (1956), «Ինձնից քեզ խրատ» (հեքիաթներ և զրույցներ, 1957), «Ֆելլահներ» (վեպ, 1958), «Հեքիաթներ» (1960)։

ՇԵԼԿՈՎՆԻԿՈՎ ԲԻՇԲՈՒԴ *(1897—1975).*— Արվեստաբան։ Ծնվել է Գյոկթափայում (Նվյոխի մոտ)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Լենինգրադի համալսարանում, ավարտել է 1930-ին։ Հիմնականում զբաղվել է Անիի, Դվինի խեցեղենի և ապակու ուսումնասիրությամբ։ 1941—1945 թթ. աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում, ապա՝ մինչև 1967 թ.՝ Լենինգրադի էրմիտաժում, որպես գիտաշխատող, շարունակելով զբաղվել կիրառական արվեստով։ Լենինգրադի համալսարանում դասավանդել է ռուսական և հայկական կիրառական արվեստներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Խեցեգործությունն ու ապակին՝ ըստ Դվին քաղաքի պեղումների» (Երևան, 1952, ռուսերեն), «Զնարակված կերամիկան ըստ Անիի պեղումների» (1957, ռուսերեն)։

ՇԵԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ *(ծն. 1953).*— Գրող։ Սրբազան է Երևանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 1974-ին։ 1983—1985 թթ. սովորել է Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի գրական բարձրագույն դասընթացներում։ Առանձին գրքերով հրատարակած բանաստեղծությունների ժողովածուներն են՝ «Զեզ հետ միասին» (1979), «Անձրև, անձրև, մի արի» (1982), «Ճոճք» (1984)։

ՇԵԿՈՒՆՑ ԱՐԿԱԴԻ *(ծն. 1935).*— Կոմպոզիտոր։ Ծնվել է Գորիսի շրջանի Տեղ գյուղում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, ավարտել դիրիժորության և կլառնետի դասարանները։ 1962-ից աշխատել է Հայաստանի հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեում, նախ որպես խմբագիր, 1972-ից՝ գլխավոր խմբագիր։ Հրատարակել է երաժշտական մի քանի ստեղծագործություն, որոնցից են՝ «Երգ երիտասարդության» (1972), «Գովքի երգեր» (1973), «Ժողովածու կլառնետի համար» (1972) և այլն։ Գրել է երաժշտություն «Քարե հյուրը» և «Վրշից փախչողը բախտ չի տեսնի» բեմադրությունների համար։ Կատարել է երաժշտական ձևավորումներ հեռուստատեսային ֆիլմերի համար։

ՇԵՀՐԻՄԱՆՅԱՆ ՋԱՔԱՐԻԱ *(1708—1784).*— Մագտմով հայ իտալական գրող, փիլիսոփա։ Ծնվել է Վենետիկում, որտեղ ստացել է կրոնական դաստիարակություն, սակայն նվիրվել է գրականության և փիլիսոփայության։ 1744-ին լույս է տեսել նրա «Արիստիպպոս» երկը։ Հետագայում հրատարակել է «Կայոս Մարտիոս Կորիոլանոս» պատմական դրաման (1747), «Ամենախ ի պետս իմաստակների» փիլիսոփայական աշխատությունը։ Գրել է նաև բժշկական երկեր, սակայն նրան ավելի մեծ հռչակ է բերել «Էնրիկո Վանտոնի ճանապարհորդությունը կապիկների և շնագլուխների աշխարհում» արկածային վեպը՝ բաղկացած 4 հատորից (1764)։ Այս վեպը նախ հրատարակել է անստորագիր, ապա վերահրատարակել է 1748-ին՝ արդեն իր անունով։ Նրա երկերից մի քանիսը թարգմանվել են անգլերեն, իսպաներեն և այլ լեզուներով։ Նրա մասին մենագրական աշխատություն է գրել անգլիացի Մաքսվել Ուայթը։

ՇԵՀՐԻՄԱՆՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ *(1766—1830).*— Մատենագիր-բժիշկ։ Ծնվել է Թիֆլիսում հայտնի Շահրիմանյան կամ Շահրիմանյան գերդաստանում։ Բժշկական մասնագիտական կրթությունն ստացել է Իտալիայում։ 1780-ական թվականների վերջերին ապրելիս է եղել Իտալիայի Լիվոռնո քաղաքում, որտեղից մեկնել է Կ. Պոլիս, 1791 թ. ուսումնասիրել է համաճարակ դարձած ժանտախտը։ 1796 թ. գրել է իր հայտնի «Անդեղայ ժանտախտի» հայերեն աշխատությունը, որը համարվել է ժամանակի բժշկագիտության նվաճումներից։ Պատմական Հայաստանի մի շարք վայրերում ճանապարհորդելուց հետո 1804 թ. վերադարձել է Թիֆլիս, շարունակել Պոլսում սկսած մի այլ աշխատություն՝ «Տնկաբանութիւն կամ փլորա Հայաստանի»։ Նրա այս գիրքը հանդիսանում է Հայաստանի բուսական աշխարհի առաջին մանրակրկիտ հետազոտությունը, որից օգտվել են Ղ. Ալիշանը «Հայ Բուսակը» գրելիս, Նորայր Բյուզանդացին՝ «Ֆրանսահայ բառարանը» կազմելիս։ Ձեռագիրը պահվում է Տյուբինգենի համալսարանի հայկական ձեռագրերի բաժնում։ Երկու արտագրություն էլ պահված է եղել Մոսկվայի Լաղարյան ճեմարանում։ Մահացել է Թիֆլիսում։

ՇԵՌԱՄԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(ծն. 1910).*— Կրթական գործիչ, թարգմանիչ։ Ծնվել է Այընթապում (Թուրքիա)։ Հայկական միջնակարգ կրթությունն ստացել է Հալեպում (Սիրիա), իսկ բարձրագույնը՝ Բեյրութի ամերիկյան համալսարանում։ Ուսանելու տարիներից որպես անգլերենի ուսուցիչ աշխատել է Հալեպի և Բեյրութի հայկական դպրոցներում։ Անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն կատարել է թարգմանություններ։ Նրա թարգմանությամբ լույս են տեսել Վիլյամ Սարոյանի պատմվածքների մի ստվար ժողովածու և «Մարդկային կատակերգությունը»։ Հայերենից անգլերեն է թարգմանել և լույս ընծայել հայկական հեքիաթների մի ժողովածու։ Կազմել է անգլերեն լեզվի դասագրքեր։ 1980 թ. Երևանում, Սիյուռքահայության հետ մշակութային կապի հայկական ընկերությունում նշվել է նրա ծննդյան 70, մանկավարժական գործունեության 50-ամյակը իր մասնակցությամբ։

ՇԵՐԱՄ (ՏԱՂՅԱՆ ԳՐԻԳՈՐ) *(1857—1938).*— Աշուղ։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական), Տալյան հայտնի ընտանիքում։ Փոքրը հասակից զբաղվել է հյուսնությամբ, միաժամանակ հետաքրքրվել է աշուղական արվեստով, Ջիվանու խորհրդով թողել է հյուսնությունը, նվիրվել աշուղական արվեստին։ Կազմակերպել է երգիչների և արևելյան գործիքների նվագողների մի խումբ, տվել հրապարակային համերգներ։ Հետագայում արդեն ինքն է հորինել երգեր, երգել իր սեփական ստեղծագործությունները։ Ունեցել է ձայնական հա-

բուստ տվյալներ։ Նրա «Ալ ու ալվան» երգը գրավել է Կոմիտասի ուշադրությունը, որը քաջալերել է, մղել դեպի ժողովրդական երաժշտությունը։ Դրանից հետո է, որ նա գրել է իր հայտնի՝ «Բաղը մտա», «Իրիկնահովին», «Աչքդ խումար», «Հազար երնեկ» և այլ երգերը։ Գրել է մոտ 200 երգ, որի մեծ մասը տպագրված է։ 1905 թ. հրատարակել է «Գանգատի շանթեր» խորագիրը կրող ժողովածուն, տոգորված հակաբռնապետական գաղափարախոսությամբ։ Հետագայում՝ 1907-ին լույս է ընծայել «Մեր և կռիվ» ժողովածուն, որտեղ զգալի տեղ են գրավում սիրային երգերը։ Հենց դրանք էլ լայնորեն տարածել են նրա անունը ժողովրդի մեջ։ Սիրային երգերից են՝ «Դու իմ մուսան ես», «Էսօր Արարն ես գնացել», «Մարալ ջան», «Սիրուններ, մեր նեղանա», «Նա մի նազ ունի», «Ալ ու ալվան ես հագել», «Շորոբա» և այլն, որոնք արժանի տեղ են գրավել նաև մեր համերգային երգացանկերում։ 1913 թ. Ալեքսանդրապոլում լույս է տեսել նրա «Անչուր պարտեզ» ժողովածուն, իսկ 1969 թ.՝ «Երգերը»։

ՇԵՐԱՆՅԱՆ ՌԸՆԵ.— Տավղահար, երգչուհի։ Ծնվել է Լոս Անջելեսում (Ամերիկա), Թուրքիայից այնտեղ գաղթած Շերանյանների ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ամերիկյան դպրոցում, իսկ մասնագիտականը՝ Նյու Յորքի «Ջուլիարդ սկուլ» կոնսերվատորիայում, աշակերտել նշանավոր տավղահար, կոմպոզիտոր Մարսել Գրանդիանիին։ Ավարտելով ուսման ընթացքը, ամերիկյան տարբեր քաղաքներում տվել է համերգներ, հանդես գալով հայտնի նվագախմբերի հետ։ 1959 թ. փայլուն հաջողություն է ունեցել Մյունխենում (Գերմանիա)։ Նույն տարում հրավեր է ստացել Խորայելից՝ մասնակցելու Թել Ավիվում կայանալիք տավղահարների միջազգային փառատոնին։ Մրագրում միշտ ունեցել է հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ և ժողովրդական երգեր։

ՇԵՐԵՆՑ ԱԶԱՏ (ծն. 1913).— Դերասան. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1965)։ Ծնվել է Թիֆլիսում։ Մանկությունն անց է կացրել Լենինականի և Ստեփանավանի որբանոցներում։ 1929—1931 թթ. աշխատել է որպես ցրիչ տարբեր հիմնարկներում, ապա կապվել է Երևանի առաջին պետական թատրոնի հետ։ 1934 թվականից սովորել է Մոսկվայում, Ռ. Սիմոնովի գլխավորած հայկական թատերական ստուդիայում, որն ավարտելուց հետո 1937-ից սկսած՝ երկար տարիներ խաղացել է Լենինականի Ա. Մռավյանի անվան պետական թատրոնում։ Այնտեղ նա կատարել է մի քանի տասնյակ դերեր, որոնցից են՝ Համբո («Գիքոր»), Սիմոն («Պրոֆեսոր Մամլոկ»), Գուգարաց իշխան («Գեորգ Մարզպետունի»), Սիլվիո («Երկու տիրոջ ծառան»), Բոնֆուա («Երևակայական հիվանդ»), Անտոնիո («Տասներկուերորդ գիշեր»), Սամսոն («Պեպո»), Կլեշշ («Հատակում»), Դարչո («Քանդած օջախ»), Հոֆմարշալ («Սեր և խարդավանք»), Ժանդարմ («Ռևիզոր») և այլն։ 1970 թվականից նվիրվել է կինոարվեստին, աշխատել է Հ. Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիայում։ Նկարահանվել է մի շարք ֆիլմերում՝ «Մենք ենք մեր սարերը», «Այստեղ, այս խաչմերուկում», «Հայրիկ», «Սերոբի ծառը», «Նորից եկավ ամառը», «Խանարհվիր վաղվա օրվան», «Կտոր մը երկինք» և այլն։

ՇԵՐԵՆՑ ԳԵՎՈՐԳ (1848—1921).— Կրթական գործիչ, բանասեր։ Ծնվել է Վանում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Արարուց վարժարանում, ապա սովորել է Վանի Հիսուսյան վարժարանում։ 1872 թ. եկել է Կովկաս, մոտ տասը տարի պաշտոնավարել է հայկական տարբեր դպրոցներում, ապա՝ վերադառնալով Վան՝ շարունակել է ուսուցչական աշխատանքը։ 1896 թ. շարդերից հետո վերջնականապես տեղափոխվել է Թիֆլիս։ Կրթական աշխատանքին զուգընթաց ունեցել է գրական-բանասիրական գործունեություն։ Աշխատակցել է կովկասահայ մի շարք թերթերի։ 1884 թ. Թիֆլիսում լույս է տեսել նրա բանաստեղծությունների ժողովածուն՝ «Սրտի թարգման» խորագրով։ Ավելի ուշագրավ է նրա բանասիրական գործունեությունը։ Երկար տարիներ գրի է առել Վանի ժողովրդական բանահյուսության նմուշները, որոնք հետագայում լույս է ընծայել Թիֆլիսում, «Վանա սաղ» խորագրով (Ա. հատ.՝ 1885, Բ. հատ.՝ 1899)։ Պարունակում են Վանի բարբառով ստեղծված երգեր, հեքիաթներ, առածներ, հանելուկներ, օրհնություններ, անեծքներ և այլն։ 1902 թ. Թիֆլիսում լույս է ընծայել «Սրբավայրեր» տեղագրական աշխատությունը, իսկ 1910

թ.՝ «Այթուն դերեսի կամ մի գիշեր Բաղեշի բանտում» գրքույկը։

ՇԵՐՈՒՇՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (1852—1926).— Թարգմանիչ։ Ապրել և գործել է Եգիպտոսում։ Խեդիվ Իսմայիլ փաշայի օրոք ունեցել է պետական գործունեություն, ձեռք բերել մեծ հարստություն։ Խեդիվի առաջարկով ֆրանսերենից թարգմանել է «Ահիդա» ողբերգության տեքստը՝ նրա առաջին ներկայացումից (1871) անմիջապես հետո և հրատարակել է Զմյուռնիայում, 1872 թ.։ Մոտիկից մասնակցել է հայ հասարակական կյանքին։ Եղել է Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադիրներից (1906)։

ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ (1807—1891).— Գրող, թատերական գործիչ։ Ծնվել է Ջուղայում։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Եղել է այդ դպրոցի առաջին տնտեսներից՝ Խ. Աբովյանի, Ստ. Նազարյանցի և այլոց հետ։ Աշակերտական տարիներից գրել է բանաստեղծություններ, որոնցից նմուշներ տպագրվել են «Երախայրիք Ներսիսյան դպրոցի» ժողովածուում, 1829 թ.։ Նույն այդ շրջանում գրել է մի վեպ, որի ձեռագիրը մեզ չի հասել, սակայն նրա նյութի հիման վրա գրված «Ասրի բեգ և Գիքի» պիեսից, որը տպագրվել է «Կռունկ Հայոց աշխարհի» ամսագրում 1860 թ., երևում է, որ վեպը պատկերել է պարսկական բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած պայքարը, ինչպես այդ արել է նաև նրա դասընկերը՝ Խ. Աբովյանը, «Վերք Հայաստանի» վեպում։ Նույն «Կռունկում» տպագրվել է նրա մի ուրիշ պիեսը՝ «Իմ նշանածն Արարն ա»։ Բացի վերոհիշյալ երկերից առանձին գրքերով հրատարակել է «Անեկդոտներ, վարձալի զրույցներ, համառոտ դեպքեր և տարակներ» ժողովածուների երկու գրքույկներ, «Նորեր աղգային պատմության համար», «Ճանապարհորդություն Հայաստանում» և այլն, որոնք բոլորն էլ լույս են տեսել Թիֆլիսում։ Նրա անունը սերտորեն կապվում է արևելահայ թատրոնի սկզբնավորման հետ։ Դեռևս Ներսիսյան դպրոցում սովորելու տարիներին, 1824—1828 թթ. մասնակցել է այդ դպրոցում կազմակերպված հայերեն ներկայացումներին։ 1840-ական թվականների սկզբներին իր շքեղ ապարանքում ստեղծել է փոքրիկ թատրոն, որը հայ թատրոնի պատմության մեջ հայտնի է Շերմազանյան դարպաս անունով և որտեղ հայերեն ներկայացումներ են տրվել մինչև 1860-ական թվականների վերջերը։ Այդ թատրոնում ներկայացվել են նրա պիեսները, այդ թվում «Ինչ ինչ գործոց կարապետ եպիսկոպոսի» պամֆլետային կատակերգությունը։ Այս պիեսը համարվել էր կորած և միայն մեր օրերում, բանասեր Աս. Մնացականյանի ջանքերով հայտնաբերվեց և տպագրվեց Երևանի Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածուի» 2-րդ հատորում։ Եղել է Թիֆլիսի քաղաքագլուխ, ունեցել շատ հարուստ գրադարան, որը հրո ճարակ է դարձել 1866 թ. համքարական շարժման օրերին։

ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ ՎԱՍԻԼ (1843—1917).— Թատերական գործիչ։ Ծնվել է Թիֆլիսում։ Եղբորորդին է Գալուստ Շերմազանյանի։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի գիմնազիայում։ Երկար տարիներ ծառայել է երկաթուղային վարչությունում։ Մոտիկից հետաքրքրվել է հայկական թատրոնով։ Եղել է Միքայել Պատկանյանի հիմնադրած «Փոքրիկ տնային թատրոնի» անդամներից, նրա հուշաբարը (1859)։ Օժանդակել է Գ. Զմշկյանին՝ կազմակերպելու թատերախումբ՝ 1860-ական թվականների կեսերին։

ՇԵՔԵՐՃՅԱՆ ՊՈՂՈՍ (ՓՈՂ) (? — 1940).— Թարգմանիչ։ Ծնվել է Արաբկիրի գավառի Քուշնա գյուղում (Արևմտյան Հայաստան)։ Երիտասարդ հասակից մեկնել է Ամերիկա, կատարել տարբեր աշխատանքներ, միաժամանակ ստացել ամերիկյան կրթություն, հիմնովին տիրապետել անգլերենին և ֆրանսերենին, 1910-ական թվականների կեսերից ունեցել է թարգմանչական նկատելի գործունեություն։ Անգլերենից հայերեն է թարգմանել Լ. Տոլստոյի, Գրիմ եղբայրների, Շեքսպիրի և այլ հեղինակների մեծ ու փոքր մի շարք երկերը, որոնք լույս են տեսել գերազանցապես ամերիկահայ մամուլում («Կոչնակ», «Երիտասարդ Հայաստան» և այլն)։ Առանձին գրքերով էլ ունի հրատարակություններ, ինչպես «Նվեր հայ աղջիկներին» խորագրով պատմվածքների ժողովածուն։ Առհասարակ թարգմանել է արևելահայերենով։

ՇԻԼԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ (ծն. 1900).— Նկարիչ։ Ծնվել է Նոր Նախիջևանում, որտեղ ստացել է

նախնական կրթությունը։ 1918 թ. մեկնել է Իտալիա, մասնագիտական հիմնավոր կրթություն ստացել Հռոմի գեղարվեստների ակադեմիայում, աշակերտել հայտնի նկարիչներին։ 1924 թ. Հռոմում բաց է արել առաջին անհատական ցուցահանդեսը, գրավելով իտալական մամուլի ուշադրությունը։ 1925—1929 թթ. ապրել է Փարիզում, որտեղ նույնպես ունեցել է ճոխ ցուցահանդես։ Լյուքսեմբուրգի թանգարանը գնել է նրա «Մաղիկներ ծախող աղջիկը» նկարը։ Բրյուսելում կազմակերպած ցուցահանդեսի օրերին Բելգիայի արքայական թանգարանը գնել է նրա «Մինարեթը» նկարը։ 1930 թ. վերադարձել է Իտալիա, բնակություն հաստատել Միլանում։ Նրա համբավը արագորեն տարածվել է ամբողջ Եվրոպայում, ապա արդեն՝ աշխարհում։ Ցուցահանդեսներ է կազմակերպել Լոնդոնում, Նյու Յորքում, Բուլինում և այլ քաղաքներում։ Նրա դիմանկարները, նատյուրմորտները, կոմպոզիցիոն կտավները գնվել են աշխարհի խոշորագույն թանգարանների, հավաքածու պահողների կողմից։ Հռոմի եկեղեցիներից մեկի գմբեթը զարդարված է նրա՝ Հիսուսի մկրտությունը խորհրդանշող ինը մեծադիր նկարներով, իսկ «Հայկական տիրամայրը» դրված է էջմիածնի Մայր տաճարի խորանի վրա։ Կատարել է նաև թատերական ձավորումներ։ Միլանի հայտնի «Լա Սկալա» օպերայում նրա բեմանկարներով են ցուցադրվել Վերդիի «Աբու Հասանը», Շուբերտի «Ընտանեկան պատերազմը», Դոնիցետտիի «Դեղագործի զանգակը», իսկ Ֆլորենցիայի օպերային թատրոնում՝ Ս. Պրոկոֆիևի «Պատերազմ և խաղաղություն»։ Իտալերեն լեզվով հրատարակել է արվեստաբանական գրքեր, որոնցից «Ռեալիստական նկարչությունը, գեղագիտությունը և տեխնիկան» լույս է տեսել նաև Փարիզում։ 1951 թ. Միլանում լույս է տեսել նրա լավագույն ստեղծագործությունները պարունակող մի ճոխ ալբոմ, ֆրանսիացի տեսաբան Վ. Ժորժի առաջաբանով։ Հրատարակել է իր ինքնակենսագրությունը։ 1966 թ. Փարիզում բացվել է նրա մի մեծ ցուցահանդես։

ՇԻԿԱՀԵՐ ՆԵՐՍԵՍ (1865—1943).— Հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Վանի Այգեստան արվարձանային թաղամասում, Պեղենց մեծ գերդաստանում։ Պեղ — շեկ բառից ստեղծել է Շիկահեր ազգանունը։ Կրթությունն ստացել է ծննդավայրում, ավարտելուց հետո զբաղվել է ուսուցչությամբ։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո եկել է Կովկաս, ապա անցել Պարսկաստան, այնտեղից՝ Ամերիկա, որտեղ ունեցել է գրական-հրապարակախոսական նկատելի գործունեություն։ Աշխատակցել է սփյուռքահայ մի շարք թերթերի ու հանդեսների («Արև», «Առյուծ», «Ժողովրդի ձայն», «Պայքար» և այլն)։ Ամերիկայում խմբագրել է «Արծուի Վասպուրական» պարբերականը։

ՇԻԿԱՆՅԱՆ ԴՄԻՏՐԻ (1901—1986).— Բալետի մենակատար, դիրիժոր, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1950)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թբիլիսի Մ. Ի. Պերիների բալետի ստուդիայում, որն ավարտել է 1920-ին, իսկ 1938-ին ավարտել է Թբիլիսիի կոնսերվատորիան։ 1921—1936 թթ. աշխատել է Թբիլիսիի օպերայի և բալետի թատրոնում որպես մենակատար, 1936-ից՝ դիրիժոր։ 1941 թ. տեղափոխվել է Հայաստան, աշխատել Երևանի օպերայի և բալետի թատրոնում որպես դիրիժոր։ Դերակատարներից են Ֆրանց («Կոպելիա»), Իվանուշկա («Սապատավոր ձիուկը») և այլն։ Դեկավարել է «Բախչիսարայի շատրվանը», «Լեռների սիրտը», «Երջանկություն», «Գայանե», «Անդուրա», «Կարապի լիճը», «Դոն Կիխոտ» և այլ բալետներ։ Ունեցել է նաև մանկավարժական գործունեություն։

ՇԻՄՈՆՈՎԻՉ ՅՈՒՐԻ (ԷԼԵՖՏԵՐ) (1660—1711).— Ծագումով հայ լեհական նկարիչ, փորագրող։ Ծնվել է Լվովում (այժմ՝ Ուկրաինական ԽՍՀ)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Իտալիայում, սովորել Հռոմի Գեղարվեստների ակադեմիայում։ Վերադառնալով ծննդավայրը՝ ստեղծել է մի շարք դիմանկարներ, կոմպոզիցիոն կտավներ, սրբապատկերներ, նաև պատմական և դիցաբանական թեմաներով գործեր։ Հետագայում ապրել է Վիլնյուսում, որտեղ պատրաստել է չորս այլաբանական պանոներ նույն քաղաքի ամրոցներից մեկի համար։ Նրա լավագույն գործերից են համարվել «Արիադնա», «Մրբազան ընտանիքը»։ Վերջինս պահվում է Լվովի պատկերասրահում։ Կատարել է փորագրական մի շարք գործեր։

ՇԻՄՈՆՈՎԻՉ ՇԻՄՈՆ (ԲԵՆԻՊՈՆՍԿԻ) (1559—1629).— Ծագումով հայ լեհական գրող։ Սովորել է Լվովում (այժմ՝ Ուկրաինական ԽՍՀ)։ Նախնական կրթությունն ստացել է ընտանիքում և Լվովի լեհական դպրոցներում։ Ապա մեկնել է արտասահման, սովորել Իտալիայում և Ֆրանսիայում։ 1583 թ. վերադարձել է ծննդավայրը, զբաղվել ուսուցչությամբ, միաժամանակ գրել չափածո երկեր լատիներեն լեզվով։ Գրել է նաև պոեմներ Բիբլիական թեմաներով, ինչպես «Հովսեփ գեղեցիկը», որ լույս է տեսել 1587 թ.։ Հմուտ է եղել հունահռոմեական անտիկ գրականության։ Թարգմանություններ է կատարել Օվիտեսից, Վիրգիլիոսից, իր երկերի մի մասի նյութն էլ վերցրել է հունական էպոսից։ 1588 թ. Կրակովում լույս է ընծայել «Նախանձի աստվածը» լատիներեն բանաստեղծությունների ժողովածուն, որը նրան հռչակել է Եվրոպայում։ Լեհաստանի թագավոր Սիգիսմունդ 3-րդը նրան շնորհել է արքունի բանաստեղծի տիտղոս (1590 թ.), անունն էլ դարձրել Բենդոնսկի։ Այնուհետև Բիբլիական թեմայով, դարձյալ լատիներեն, գրել է «Հովել մարգարե» պոեմը (1593), որը հետագայում մի այլ լեհահայ՝ Իոսիֆ Մինասովիչը, թարգմանել է լեհերեն՝ (տպ. 1772)։ Նրա պոեզիայով հմայված իշխաններից Յա. Զամոյսկին նրան նվիրել է մի գյուղ, որտեղ առանձնացել է և շարունակել ստեղծագործել, միաժամանակ ուսուցանել լեհ երիտասարդների, որոնցից մեկն էլ եղել է իր բարերար Զամոյսկու միակ որդին։ Այնտեղ գրել է բանաստեղծությունների մի նոր գիրք, լույս ընծայել 1606 թ.։ Ապա հրատարակել է «Աելենիական» երկը, որտեղ պատկերված են թուրք թաթարական հորդաների դեմ լեհ ժողովուրդի մղած կռիվները (1595)։ 1602 թ. հրատարակել է «Հերկուլես» պոեմը, իսկ 1614 թ.՝ «Հովվերգություն» լատիներեն ժողովածուն։

ՇԻՆՇՃՅԱՆ ՄԵԼԻՆԵ (1892 — ?).— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում, դուստրն է թատերական նկարիչ Սերովբե Շիշեճյանի։ Տարրական կրթությունն ստացել է ծննդավայրում։ Բեմական ասպարեզ է մտել 1908 թ.՝ Վ. Փափազյանի ներկայացրած առաջին «Օթելլոյում», կատարելով Դեզդեմոնայի դերը։ Ազգագրերում հայտնաբերվել է օրիորդ Շաբե։ Հետագայում խաղացել է Ա. Պենկլյանի օպերետային խմբերում, ինչպես նաև թուրքական խմբերում։ Թուրքական մամուլը հաճախ է անդրադարձել նրա բեմական տվյալներին։

ՇԻՆՇՃՅԱՆ ՍԵՐՈՎԲԵ (1854—1910).— Թատերական նկարիչ։ Ծնվել է Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում, որտեղ աշակերտել է նկարիչ Տելեմաք Էքսերճյանին, ապա մասնագիտություն կատարելագործել է իտալացի հայտնի թատերական նկարիչ Մեոլոյի մոտ, որը Հ. Վարդովյանի խմբի նկարիչն է եղել և նրա հետ ունեցած գրավոր պայմանավորվածությամբ պարտավորված էր հայ աշակերտներ պատրաստել։ Մեոլոյի հայրենիք մեկնելուց հետո, 1872 թ. դարձել է Վարդովյանի թատերախմբի գլխավոր նկարիչը։ Հետագայում աշխատել է Մնակյանի խմբում։ Ձևավորել է բազմաթիվ ներկայացումներ նաև օտար խմբերի համար և արժանացել օտար մամուլի բարձր գնահատականը։ Դրանցից հիշատակության արժանի է 1883 թ. իտալական մի խմբի ներկայացրած «Աիդայի» համար նրա պատրաստած 162 բեմանկարները (բուրգեր, սֆինքս, պալատներ, մեհյաններ, դահլիճներ, արձաններ, կուռքեր, բնանկարներ և այլն)։ Նրա լավագույն նկարները այրվել են հրդեհի հետևանքով։ Հետագայում Սառա Բերնարը Պոլսի Օդեոն թատրոնում տեսնելով «Տոսկայի» նրա ձևավորումը, հայտնել է իր հիացմունքը։ Ձևավորել է Աբդուլ Համիդի պալատի թատրոնները։

ՇԻՆԿՈՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (ՁԱԲԼԻ ԱԼԵՔՍԱՆԴՐ) (1892 — ?).— Փայտագործ արվեստագետ։ Ծնվել է Վանում (Արևմտյան Հայաստան)։ 1912 թ. մեկնել է Ամերիկա, զբաղվել արհեստներով և լուսանկարչությամբ։ 1923—1924 թթ. երևանյան դպրոցներում հետևել է գեղարվեստական կահույքագործության։ Պատրաստել է սատափպատ մի նարդի, որը հիացմունք է պատճառել բոլորին։ Հաջորդ տարի պատրաստել է մի սափոր՝ փայտի 1448 կտորներից։ Ամերիկյան մամուլը նրա այդ գործը համարել է մոզայիկ արվեստի փայլուն նմուշ։ Գնվել է Ուսումնական խորհրդի կողմից։ Հետագայում ամբողջովին նվիրվել է այդ արվեստին, մասնակցել բազմաթիվ ցուցահանդեսների։

ՇԻՆՄԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ (1849—1911).— Նկարիչ։ Ծնվել է Տիգրանակերտում, որտեղ ստացել է նախնական կրթություն, սովորել Հայրենասիրաց դպրոցում։ Հետագայում մեկնել

է Ամերիկա, հետևել նկարչության։ Նախ ծաղրանկարներով աշխատակցել է Հ. Էկինյանի «Ազատություն» թերթին, հետագայում ամերիկյան մի շարք պարբերականների՝ «Տրիբուն», «Թայմզ», «Պրեսս» և այլն։ 1895 թ. ջարդերի ազդեցությամբ գրել է «Ողբ մայր Հայաստանի», «Ահռելի ողջակեզը», «Ակամա բարերար» պիեսները, որոնք բեմադրվել են ամերիկահայ թատրոնում։

ՇԻՇՄԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ (1879—1950).— Դերասան-ռեժիսոր, դրամատուրգ։ Մնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթություն։ 1900-ական թվականների սկզբներից որպես կատակերգակ դերասան խաղացել է տարբեր խմբերում։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո մեկնել է Եգիպտոս, խաղացել է եգիպտահայ բեմում։ Գրել է մի քանի զավեշտ պոլսահայ և եգիպտահայ կյանքից։ Դրանք են «Վարձված սենյակը», «Գիշերազգեստը», «Կուգա օր մը», «Մոդային փորձանքները», «Պայրախտար կեսարը», «Քառակուսի գլուխներ» և այլն, որոնք բեմադրվել են հայկական տարբեր գաղութներում, իսկ մի մասը նաև լույս է տեսել։ Բեմադրած պիեսներից են՝ «Փարիզի աղքատները», «Վարժապետին աղջիկը», «Տայի Կարապետ», «Զարշրլը Արթին աղա» և այլն, որոնց բոլորի մեջ գլխավոր դերերը կատարել է ինքը։ Եգիպտահայ մամուլում տպագրել է բազմաթիվ հոդվածներ իր ստորագրությամբ կամ Առյուծ-կատու ծածկանունով։

ՇԻՇՄԱՆՅԱՆ ՂԵՎՈՆԴ (1843—1901).— Մըշակութային գործիչ։ Մնվել է Կ. Պոլսի Խասգյուղ թաղամասում։ Կրթությունն ստացել է տեղի Ներսիսյան վարժարանում, ավարտելուց հետո զբաղվել է ուսուցչությամբ։ 1874 թ. ընդունել է հոգևորական կոչում, վարել կրոնական պաշտոններ։ Աշխատակցել է արևմտահայ և արևելահայ մի շարք թերթերի։ Կ. Պոլսի «Արևելք» օրաթերթում տպագրել է բազմաթիվ հոդվածներ Վրույր ծածկանունով, իսկ «Մշակ» թերթում՝ Գիրկ ծածկանունով։ Գրել է բանաստեղծություններ, որոնք լույս են տեսել Կահիրեում, 1902 թվականին՝ «Ցավերդ հայրենյաց» խորագրով, Հայրդի ծածկանունով։ Կարինում որպես առաջնորդ աշխատելու տարիներին հայկական հարցի մասին գաղտնի հոդվածներ է ուղարկել Փարիզ, որտեղ դրանք տպագրվել են «Թան» և այլ թերթերում։ Մատնության հետևանքով ձերբակալվել է, տարվել Կ. Պոլիս, այնտեղից աքսորվել է Երուսաղեմ, որտեղ էլ վախճանվել է։

ՇԻՇՄԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ (1885—1959).— Նկարիչ, արվեստաբան. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ։ Մնվել է Ակնա գավառի Լիճք գյուղում (Արևմտյան Հայաստան)։ 1895 թ. հայկական կոտորածներից հետո նրանց ընտանիքը տեղափոխվել է Բուլղարիա, որտեղ ստացել է նախնական կրթություն։ 1897 թ. մեկնել է Կ. Պոլիս, շարունակել ուսումը Պեշիկթաշի Մաքրուհյաց և Կեդրոնական վարժարաններում։ Ապա 1902-ից մասնագիտական հիմնավոր կրթություն է ստացել Փարիզի գեղարվեստների և զարդարվեստի բարձրագույն դպրոցում, հաճախել Ժյուլիենի ակադեմիայի դասընթացներին։ Ապրել և ստեղծագործել է Փարիզում։ 1912 թվականից մասնակցել է ցուցահանդեսների, եղել է Հայ արվեստագետների «Անի» միության հիմնադիրներից։ 1931—1947 թթ. եղել է «Հայ ազատ արվեստագետների միություն» նախագահը։ Հետևել է հիմնականում բնանկարչության և գրքի ձևավորման։ Նրա նկարչական ձևավորումով են լույս տեսել Ա. Զոպանյանի «Հայ էջեր» (Փարիզ, 1912), Ֆ. Մակլերի հայ մանրանկարչությանը նվիրված հատորը և այլ բազմաթիվ գրքեր։ 1947 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան։ 1948 թ. Երևանում ունեցել է անհատական ցուցահանդես։ Լավագույն գործերից են՝ «Նկարիչների հանգստյան տունը Մաղկաձորում», «Աշտարակի հին կամուրջը», «Գյուղական փողոց», «Մողել գետի տեսարանը», «Զկնորսական տներ», «Ավինյոնի հին կամուրջը», «Արևոտ ճանապարհ» և այլն։ Դեռևս 1900-ական թվականներից արևմտահայ հանդեսներում տպագրել է հայ կերպարվեստին նվիրված հետազոտություններ։ Երևանում աղբելու տարիներին հրատարակել է «Էդգար Շահին» (Երևան, 1956) և «Բնանկարն ու հայ նկարիչները» (1958) մենագրությունները։

ՇԻՇՅԱՆ ԱՂԱՍ (ծն. 1912).— Կոմպոզիտոր, մանկավարժ, Հայկական ԽՍՀ վաստակավոր ուսուցիչ։ Մնվել է Բաբերդում (Արևմտյան Հայաստան)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի երաժշտական ուսումնարանում և

պետական կոնսերվատորիայում, որի ստեղծագործական բաժինն ավարտել է 1937 թ.։ Նույն տարում Երևանում և Թբիլիսիում կատարվել է նրա առաջին սիմֆոնիան դիրիժոր Կ. Սարաջևի ղեկավարությամբ։ Հետագայում գրել է երեք նոր սիմֆոնիա, սիմֆոնիկ պոեմներ, կոնցերտ ջութակի և նվագախմբի համար, խմբերգեր, երգեր, ռոմանսներ, դաշնամուրային պիեսներ և այլն։ 1934 թվականից դասավանդել է Երևանի երաժշտական ուսումնարանում, իսկ 1938-ից՝ Լենինականի Կարա Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանում։

ՇԻՏԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ (1870—1932).— Գրող։ Մնվել է Վանի Այլյուր գյուղում, որտեղ ստացել է նախնական կրթություն։ Ապա մեկնել է Կ. Պոլիս, ուսումը շարունակել Կեդրոնական վարժարանում։ 1888 թվականից որպես ուսուցիչ աշխատել է Կ. Պոլսի և Ադրիանապոլսի հայկական դպրոցներում։ 1895—1896 թթ. կոտորածներից հետո անցել է Բուլղարիա, բնակություն հաստատել Ֆիլիպե քաղաքում, շարունակելով ուսուցչական աշխատանքը Ֆիլիպեի և Բուրգասի հայկական դպրոցներում։ Այդ տարիներից էլ սկսել է գրական գործունեությունը։ Գրել է մի շարք վեպեր, որոնց բոլորի նյութը հայ ժողովրդի մղած պայքարն է սուլթանական բռնապետության դեմ։ Այդ վեպերն են՝ «Կարիպ ախպեր», «Թիապարտը», «Ավազակապետը», «Սուլթան Համիդ», «Անդունդը», որոնց մեծ մասը լույս է տեսել Վառնայում հրատարակվող «Իրավունք» պարբերականում որպես թերթոն և հետագայում, օսմանյան սահմանադրությունից հետո, վերահրատարակվել են առանձին գրքերով, Կ. Պոլսում, 1909—1912 թվականներին։ Առանձին գրքերով տպագրված մյուս վեպերն են՝ «Վաշխառուն», «Աքսորականը», «Թափառական հայը» (հայրը), «Թափառական հայը» (որդին) և այլն։ Գրել է նաև պիեսներ, ինչպես «Վանի հայդուկները», «Աբապա», «Անդրանիկ», որոնք բեմադրվել են ոչ միայն Բալկանյան երկրների հայ թատերախմբերի կողմից։ Մեռել է Վառնայում։

ՇԻՐԱԶ ԱՐԱ (ծն. 1941).— Քանդակագործ. Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ։ Մնվել է Երևանում։ Որդին է Հովհ. Շիրազի։ Մասնագիտական կրթությունն ստացել է նախ Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում, ապա՝ գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել է 1966 թ.։ 1965 թվականից մասնակցել է ցուցահանդեսների։ Առաջին տարիների գործերից են՝ «Անուշի», «Ներերող», «Կինը ծաղկի հետ»։ Հետագայում հետևել է մոնումենտալ քանդակագործության։ Քանդակագործել է Դվին հյուրանոցի ճակատը, որի համար արժանացել է Հայկական ԽՍՀ պետական մրցանակի։ Լավագույն գործերից են՝ Ե. Չարենցի արձանը դրված Չարենցավանում, Ալ. Մյասնիկյանի արձանը Երևանի Կարմիր բանակի փողոցում, Վ. Սարոյան, Պ. Պիկասո, Հր. Ներսիսյան և այլն։ Նրա գործերից մի քանիսը զարդարում են մայրաքաղաքի զբոսայգիները, հրապարակները, ինչպես Պարույր Սևակի հուշարձանը Երևանի համանուն դպրոցի պատին։ 1987 թ. ընտրվել է Հայաստանի նկարիչների միության նախագահ։

ՇԻՐԱԶ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ԿԱՐԱՊԵՏՅԱՆ) (1914—1984).— Բանաստեղծ. Հայկական ԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր (1975)։ Մնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Փոքրը հասակից զրկվել է հորից, մեծացել մոր խնամքի տակ, կրելով ծանր զրկանքներ։ 1932-ին ավարտել է 7-ամյա դպրոցը, աշխատել Լենինականի տեքստիլ գործարանում, որտեղ էլ սկսել է գրական առաջին փորձերը։ Նույն՝ 1932-ից բանաստեղծություններ է տպագրել գործարանի բազմատիրաժ «Մանածագործ» թերթում։ Կարճ ժամանակ որպես ուսուցիչ աշխատել է Հաչի Նազար (այժմ՝ Կամո) գյուղում։ 1937—1941 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում։ Ավարտելուց հետո ամբողջովին նվիրվել է գրական աշխատանքի։ Պարբերական մամուլում տպագրել է բազմաթիվ բանաստեղծություններ, պոեմներ։ Բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Գարնանամուտը», լույս է տեսել Երևանում, 1935-ին։ Հետագա տարիներին առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Սիամանթո և խաչեղարեն» (1935, 1947, 1955, 1957, 1970, 1979, նույնը՝ Բլյուրթ, 1955, 1957), «Արևի երկիր» (1938), «Երգ Հայաստանի» (1940), «Բանաստեղծի ձայնը» (1942), «Երգերի գիրք» (1942), «Վիրիկա» (1946), «Հատընտիր» (1949), «Գիրք խաղաղության և սի-

ро» (1950), «Հատընտիր» (1954), «Բանաստեղծություններ» (1954), «Քնար Հայաստանի» (գիրք 1, 1958, գիրք 2, 1964, գիրք 3, 1974), «Շեղթայված մեղեդիներ» (1962), «Հայոց Դանթեականը» (Բեյրութ, 1965), «Հուշարձան մայրիկիս» (1968, նույնը՝ Բեյրութ, 1968), «Բանաստեղծություններ» (1971), «Հատընտիր» (Բեյրութ, 1971), «Հուշարձան մայրիկիս» (1972), «Յոթնապատում» (1977), «Հուշարձան մայրիկիս» (1980), «Երկերի ժողովածու 5 հատորով (1961—1966) և այլն։ Նրա երկերը թարգմանվել են ԽՍՀՄ և արտասահմանյան տասնյակ լեզուներով՝ ռուսերեն, ուկրաիներեն, վրացերեն, ադրբեջաներեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, չեխերեն, պարսկերեն, արաբերեն և այլն։

ՇԻՐԱՁ ՆԱԶԻ (ՄԱՆՈՒԿՅԱՆ) (ծն. 1928).— Կրկեսի արտիստուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստուհի (1958)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Մոսկվայի էստրադային ստուդիայում, որն ավարտել է 1940-ին, 1954-ին պատրաստել է ճոպարարական հատուկ համար, կազմված հայկական և քրդական պարերի ու երաժշտության հենքով։ Մասնակցել է հայկական կրկեսի կոլեկտիվի հիմնադրմանը (1956)։

ՇԻՐԻՆ (1827—1857).— Աշուղ։ Ծնվել է Երևանի գավառի Կողբ գյուղում։ Բուն անուն-ազգանունը եղել է Հովհաննես Կարապետյան։ Փոքրը հասակում ծաղիկ հիվանդությունից կուրացել է, ապա զրկվել մորից, մնացել որբ։ Հայրը նրան ուղարկել է Ալեքսանդրապոլ, որտեղ հետևել է աշուղության, ապա եղել է Կարինում և այլ քաղաքներում։ Սկզբում հորինել է միայն հայերեն երգեր, հետագայում՝ նաև թուրքերեն։ Նրա հայերեն երգերից մի քանիսը Մ. Միանսարյանը տպագրել է «Քնար հայկական» ժողովածուում (Պետերբուրգ, 1868), իսկ Գ. Ախվերդյանը դրանցից 14-ը զետեղել է «Հայ աշուղների» Բ հատորում (Թիֆլիս, 1903)։ Զ. Մարգսյանը 1891 թ. նրա լավագույն երգերը լույս է ընծայել «Նոր քնար» խորագրով։ Նմուշներ տպագրվել են տարբեր ժողովածուներում, երգարաններում։

ՇԻՐԻՆԻ ՕՀԱՆ (19-րդ դ.).— Աշուղ։ Ծնվել է Տիգրանակերտում, 19-րդ դարի սկզբներին։ Երիտասարդ հասակից հորինել և կատարել է հայերեն և թուրքերեն սիրային, կենցաղային երգեր, տաղի նվագակցությամբ։ Աչքի է ընկել հատկապես թուրքերեն երկխոսատ բառախաղերով, որոնց պատճառով հաճախ է կանչվել թուրքական դատարան, բայց իր սրամիտ բացատրություններով շնորհիվ անպատիժ արձակվել, ապացուցելով, թե տգետ մարդիկ իր երգերի իմաստը չեն հասկացել։ Նրա երգերից նմուշներ և նման բառախաղեր տպագրված են Տ. Մկունդի «Ամիտայի արձագանքներ» գրքում։

ՇԻՐԻՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ (19-րդ դ.).— Կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը։ 1870-ական թվականներից երկար տարիներ որպես ուսուցիչ պաշտոնավարել է Պարտիզակում, միաժամանակ աշխատակցել «Մասիս» և այլ թերթերի։ 1872 թ. Կ. Պոլսում լույս է տեսել նրա «Երկու աշակերտք» գրքույկը։ Ավելի ուշագրավ է նույն տարում տպագրված «Աղքատություն և իր դարմանները ի գյուղս» աշխատությունը, որտեղ խոսվում է երկրագործության օգտակարության մասին, մեջբերումներ արվում Միք. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքից, գրաքննչական նկատառումով առանց հեղինակի անվան հիշատակության։ 1912 թ. էլ հրատարակել է իր ինքնակենսագրությունը։

ՇԻՐԻՆՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ (1860 — ?).— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է տարրական կրթություն։ Բեմական ասպարեզ է մտել 1874 թ.։ Խաղացել է Հակոբ Վարդովյանի «Օսմանյան թատրոնում», հավասար հաջողությամբ հանդես է եկել թե հայերեն և թե թուրքերեն ներկայացումներում։ Կատարել է սուբրետ դերեր։ Իր երգ ու պարով, կատակերգակի տվյալներով աչքի է ընկել մասնավորապես թարգմանական գործերում, այդ թվում Մոլիերի կատակերգություններում։ Մասնակցել է Հ. Վարդովյանի խմբի օպերետային ներկայացումներին, ի հայտ բերելով նաև ձայնական հարուստ տվյալներ։ Գլխավոր դերերով հանդես է եկել «Ժիրոֆլե ժիրոֆլա», «Մադամ Անգո» և այլ օպերետներում, նաև Զուխաչյանի «Վեպլիպիճի Հորհոր ազա» և «Արիֆի խարդախությունը» օպերետներում։ Հետագայում խաղացել է Ս. Պենկլյանի օպերետային խմբում, 1878-ից նրա հետ շրջագայել բազմաթիվ քաղաքներ (Զմյուռնիա, Ադրիանապոլիս, Սալոնիկ, Կահիրե, Ալեքսանդրիա, Աթենք, Պիրեա և այլն)։

Համարվել է Ֆաթիմեի («Վեպլիպիճի Հորհոր ազա») լավագույն դերակատարներից մեկը հայ բեմում։ Պենկլյանի խմբի վերջնական քայքայումից հետո խաղացել է տարբեր թատերախմբերում, իսկ 1900 թվականից մնացել է Բեյրութ Թրավանի կատակերգական խմբին։

ՇԻՐԻՆՅԱՆ ԵՂԻՍԱԲԵԹ (? —1947).— Նկարչուհի։ Ծնվել է Խարբերդում (Արևմտյան Հայաստան)։ Փոքր հասակից ծնողների հետ գաղթել է Ամերիկա, որտեղ ստացել է մասնագիտական կրթությունը, 1911 թ. ավարտել Մեսչուսեթի գեղարվեստների կոլեջը, ստացել նկարչության և քանդակագործության վկայական։ Երկար տարիներ որպես նկարչության դասատու պաշտոնավարել է ամերիկյան դպրոցներում, միաժամանակ ստեղծագործել։ Մասնակցել է Ամերիկայի տարբեր քաղաքներում կազմակերպված բազմաթիվ ցուցահանդեսների։ Եղել է անդամ Կոնեկտիկըտի գեղարվեստների ակադեմիայի, Արևելյան գեղարվեստների ընկերության և այլն։ Նրա նկարներից նմուշներ պահվում են տարբեր թանգարաններում, այդ թվում՝ Վենետիկի Մխիթարյանների վանքի թանգարանում։

ՇԻՐԻՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (ծն. 1924).— Քանդակագործ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել 1959 թ.։ 1957 թվականից մասնակցել է հանրապետական ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Հ. Կարմիրյանի դիմաքանդակը», «Տղամարդու դիմաքանդակը», «Հրաժեշտ» և այլն։ Ապրում և ստեղծագործում է Մոսկվայում։

ՇԻՐԽՈՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ (1827 — ?).— Բժիշկ-մատենագիր։ Ծնվել է Կալկաթայի մոտակայքում գտնվող Զիլա ավանում (Հնդկաստան)։ Կրթությունն ստացել է Կալկաթայի հայոց Մարգասիրական ճեմարանում և բժշկական ուսումնարանում։ Հետագայում մասնագիտությունը կատարելագործել է Լոնդոնի համալսարանի բժշկական բաժնում։ 1849 թ. վերադարձել է Հնդկաստան, աշխատել որպես բժիշկ։ Աշխատակցել է հնդկահայ մամուլին։ Մ. Թաղիադյանի «Ազդասեր» հանդեսում տպագրել է «Կենդանական մագնիսականություն» մասին հոդված, նաև «Մեսմերականություն» ուսումնասիրությունը։ Հոդվածներ է տպագրել Հնդկաստանում լույս տեսնող անգլերեն պարբերականներում։ Դրանցից մի քանիսը արձագանք են գտել Անգլիայում։ Լոնդոնում լույս տեսնող «Թայմզ» թերթը նրա մասին խոսել է մեծ գովասանքով։

ՇԻՐՈՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ (1893—1968).— Դրող, դերասան։ Ծնվել է Վանում (Արևմտյան Հայաստան)։ Կրթությունն ստացել է տեղի Երամյան վարժարանում։ 1915 թ. մասնակցել է Վանի ինքնապաշտպանական կռիվներին։ Նույն տարում գաղթել է Կովկաս, որպես ուսուցիչ աշխատել Երևանում, ապա՝ Լենինականում, Սուխումում և Աշխաբադում։ Վերադառնալով Հայաստան, մղվել է դեպի բեմական ասպարեզը։ 1928-ից խաղացել է Ա. Խարազյանի շրջիկ թատրոնում, իսկ 1929—1948 թթ.՝ Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնում։ 1948—1953 թթ. վարել է նույն թատրոնի գրական բաժինը։ Դեռևս 1917 թվականից բանաստեղծություններ է տպագրել մամուլում, իսկ խորհրդային տարիներին գրել է մի շարք պիեսներ, որոնք բեմադրվել են Երևանի Պատանի հանդիսատեսի և Տիկնիկային թատրոններում։ Այդ պիեսներից են՝ «Ճամբարում», «Թմկաբերդի առումը», «Տերն ու ծառան». վերջիններս՝ Հովհ. Թումանյանի համանուն երկերի իր բեմականացումներն են։ Բեմականացրել է նաև Ալ. Շիրվանզադեի «Արտիստը»։ Առանձին գրքույկներով լույս ընծայած երկերն են՝ «Մոկաց Միրզա» (Հայկական ժողովրդական վեպ, Երևան, 1939), «Միլ ու ծաղիկ» (1955), «Հանելուկներ, առակներ» (1956), «Առակներ և առածներ» (1958), «Ակունքներ» (1959) և այլն։

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ ԱԼԵՔՍԱՆԴՐ (ՄՈՎՍԻՍՅԱՆ) (1858—1935).— Դրող։ Ծնվել է Շամախիում (այժմ՝ Ադրբեջանական ԽՍՀ), 1858 թ. ապրիլի 7-ին։ Կրթությունն ստացել է տեղի հայոց թեմական և ռուսական գավառական երկդասյա դպրոցներում։ 1875 թ. մեկնել է Բաքու, երեք տարի աշխատել նահանգական վարչությունում որպես գրագիր, ապա՝ նավթարդյունաբերական ընկերություններում իբրև հաշվապահ։ Մի քանի տարի էլ աշխատել է գրադարանում, որը մեծապես նպաստել է նրա ինքնազարգացմանը։ 1878 թվականից սկսած տեղեկատու հոդվածներով աշխատակցել է «Մշակ» թերթին, գրելով Բաքվի հայերի մշակութային կյանքի մասին։ 1883 թ. ձեռնարկել է ծավալուն մի վեպ, սա-

կայն չհավանելով գրած հատվածները, ոչնչացրել է, միայն մի փոքրիկ մաս տպագրել է «Մշակում»՝ «Հրդեհ նավթագործարանում» խորագրով, որն իր վրա է հրավիրել գրական շրջանակների ուշադրությունը, արժանացել թերթի խմբագիր Գրիգոր Արծրունու գնահատանքը։ Նույն տարում տեղափոխվել է Թիֆլիս, ամբողջովին գրականությանը նվիրվելու ցանկությամբ։ Այնտեղ ծանոթացել ու բարեկամացել է ժամանակի բոլոր ականավոր հայ գրողների հետ՝ Բաֆֆի, Ղ. Աղայան, Պ. Պռոշյան, Հովհաննես Հովհաննիսյան, Գ. Սունդուկյան և ուրիշներ։ 1884-ին մասնակցել է Մ. Հախումյանի «Գործ» ամսագրի խմբագրական աշխատանքներին, այդ հանդեսում տպագրել է պատմվածք, որը հետագայում վերամշակել և դարձրել է «Նորերից մեկը»։ Նույն տարում «Արձագանքում» տպագրել է «Խնամատար» վիպակը և «Օրիորդ Լիզա» պատմվածքը, իսկ հաջորդ տարի «Նամուս» վեպը, որն ավելի է հռչակել նրա անունը որպես գրողի։ Այնուհետև վեց տարի (1886—1891 թթ.) աշխատել է Ա. Հովհաննիսյանի «Արձագանք» շաբաթաթերթի խմբագրությունում։ Եղել է նրա քարտուղարն ու թարգմանիչը, թատերախոսականների հեղինակը։ Նա այդ շաբաթաթերթում տպագրել է հարյուրից ավելի հոդվածներ թատրոնի, գրականության և մշակութային այլ հարցերի մասին, իսկ գեղարվեստական երկերից այնտեղ լույս են տեսել «Ֆաթման և Ասաթը», «Տասնուհինգ տարի անցած», «Արամբին», «Լոռվա ձորերում», «Ջուր հույսեր», «Թանկագին կապանք» և այլն։ 1891 թ. թողել է խմբագրական աշխատանքը, ապրուստը հայթայթել հաշվապահությամբ, շարունակել ստեղծագործել։ Գրել է «Արսեն Դիմաքսյան» վեպը, որը տպագրվել է նախ «Մուրճ» ամսագրում մաս-մաս, ապա, նույն տարում լույս է տեսել նաև առանձին գրքով։ 1890-ական թվականների սկզբներից աշխատակցել է «Նովոյե օբոզրենիե» ռուսերեն պարբերականին և հայերեն «Տարազին»։ 1895 թ. բանտարկվել է որպես հնչակյան։ Մետեխի բանտում գրել է «Բանտի հիշատակարանը»։ 1896—1897 թթ. հիմնականում զբաղվել է «Քաոս» մեծ վեպով, տպագրել է 1898 թ., նշանավորելով հայ ռեալիստական գրականության մի նոր ստեղծանք։ Նույն տարում աքսորվել է Օդեսա, որտեղ ապրելու շրջանում գրել է «Մելանյա» վիպակը, «Վարգան Ահրումյան» վեպը և նշանավոր «Արտաքսք»։ Դարասկզբից թերթել է դեղի գրամատուրգիան։ 1901—1905 թթ. գրել է «Ենկենեն», «Ուներ իրավունք» և «Պատվի համար» պիեսները։ 1905 թ. մեկնել է արտասահման, շրջագայել մի շարք երկրներում, սակայն մինչև 1910 թ. հիմնականում ապրել է Փարիզում։ Այդ տարիներին գրել է «Ավերակների վրա», «Արմենուհի», «Կործանվածը» դրամաները և «Շուշանանը» կատակերգությունը։ Դրամայի վերածել «Նամուս» և «Զարթոնք» վիպակները։ 1910 թ. վերադարձել է Կոստիկաս։ Հաջորդ տարի թե՛ արևելահայերը և թե՛ պոլսահայերը մեծ շուքով նշել են նրա գրական գործունեության 30-ամյակը։ Այդ առիթով Կ. Պոլսում լույս է տեսել շքեղ մի ժողովածու, որտեղ նրա երկերի վերլուծությամբ հանդես են եկել արևմտահայ ականավոր բոլոր գրողները։ Առաջին համաշխարհային պատերազմի ցնցող ազդեցության տակ գրել է «Աբշավիրքի օրերին» դրաման և «Որն է մայրը», «Հերոսի վերադարձը» երկերը։ 1919—1926 թթ. կրկին ապրել է արտասահմանում, հիմնականում՝ Փարիզում։ Վերադառնալով հայրենիք՝ գրել է «Մորգանի խնամին» կատակերգությունը և «Կյանքի բովից» հիշողությունները, որի Ա. հատորը լույս է տեսել 1932 թ. Երևանում, Բ. հատորը՝ հետագայում։ Նրա վերջին ստեղծագործությունն է «Վերջին շաղափանը» կինոսցենարը, Բաքվի հեղափոխական կյանքից։ Մեր օրերում նրա երկերը արժանացել են բազմաթիվ հրատարակությունների։ Բազմահատորյակային առաջին հրատարակությունը տեղի է ունեցել 1930—1932 թթ. (ութ հատորով), երկրորդ հրատարակությունը՝ 1957, 1959 թթ. ինը հատորով, Գ. հրատարակությունը 10 հատորով, 1959—1962 թթ. և այլն։ «Քաոս» վեպը թարգմանվել է ռուսերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներով, վերածվել պիեսի։ «Պատվի համար» թարգմանվել է ռուսերեն, թուրքերեն և այլն։ Նրա մասին ստեղծված վիթխարի գրականության մեջ առավել ծանրակշիռներից են Ա. Տերտերյանի «Շիրվանզադեի գրական տիպերի հանրագիտարանը», Հր. Թամրազյանի «Շիրվանզադե» մենագրությունը։

ՇԻՐՎԱՆՅԱՆ ՆՇԱՆ (1840—1900).— Հասարակական, կրթական գործիչ, գրող։ Մնվել է Վանում։ Կրթությունն ստացել է Վարագա վանքի ժառանգավորաց վարժարանում։ 15 տարեկան հասակում մեկնել է Կ. Պոլիս, ինքնազարգացմամբ սովորել թուրքերեն, արաբերեն, ֆրանսերեն, պարսկերեն, անգլերեն։ 1870 թ. վերադարձել է Վան, նվիրվել մանկավարժական աշխատանքի։ Լեզուներ է դասավանդել Վանի հայկական դպրոցներում։ Մասնակցել է «Մխիթարյան փրկություն» հակաբռնապետական հայտնի գաղտնի կազմակերպության աշխատանքներին։ 1872-ին նորից է մեկնել Պոլիս, այնտեղից ընկել է Փարիզ, դարձել իր խաբեբա ազգականի՝ Ոստանիկ Տեր-Մարգարյանի քարտուղարը, նրա հետ միասին ենթարկվել վիպային արկածների և երբ ի վերջո բացահայտվել է կեղծ իշխանի գաղտնիքը ու ձերբակալվել է, ինքն էլ բանտարկվել է։ Ազատվելուց հետո մեկնել է Պոլիս, որտեղ 1874-ին հրատարակել է «Վիշտք իմ ի Փարիզ, յերեսաց Ոստանիկի Տեր-Մարգարյանց» չափածո գիրքը, որտեղ նկատելի հումորով պատմվում է Տեր-Մարգարյանի արկածները Փարիզում, նրա դրամաշորթությունները, իշխանավայել կենցաղը, հարստանալը, կեղծիքի բացահայտվելը, իրենց բանտարկվելը, դատարանի առաջ կանգնելը։ Նրա այս շատ հետաքրքիր գիրքը հետագայում, 1908-ին արտատպվել է Ա. Անտոնյանի «Լույս» շաբաթաթերթի մի շարք համարներում։ Գրել է նաև չափածո այլ երկեր, որոնք զետեղված են նրա հիշյալ գրքում։ Կյանքի վերջին տարիներին աշխատել է Վանի անգլիական հյուպատոսարանում որպես թարգմանիչ։

ՇՄԱՎՈՆ ԱԲԵՂԱ (15-րդ դ.).— Ծաղկող։ 1483 թվականից առաջ նկարազարդել է մի Ավետարան, որը պահվում է Երևանի Մատենադարանում, № 6438 ձեռագրում։

ՇՄԱՎՈՆ ՎԱՐՊԵՏ (15-րդ դ.).— Քարկոփ վարպետ։ 1452 թ. քանդակել է մի գեղեցիկ խաչքար, որը գտնվում է Մարտունու շրջանի Ջոլախաչ գյուղում։

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՇԱԿ (1864—1922).— Մշակութային գործիչ։ Մնվել է Խարբերդում։ Կրթությունն ստացել է ծննդավայրի Եփրատ կոլեջում, ավարտելուց հետո մեկնել է արտասահման, Շվեյցարիայում ստացել բարձրագույն կրթություն։ Վերադառնալով Թուրքիա, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին պաշտոնավարել է Կ. Պոլսի ամերիկյան դեսպանատանը որպես խորհրդական, պատերազմից հետո մեկնել է Ամերիկա։ Նկատելի դեր է կատարել հայ ժողովրդի մեծ ողբերգության մութ ծալքերը ամերիկյան դեսպան Մորգենթաուին հաղորդելու գործում։ Այդ նյութերի օգտագործմամբ է, որ պատերազմից հետո Մորգենթաուն հրատարակեց իր ցնցող հիշողությունները հայկական ջարդերի մասին։ Այդ գիրքը թարգմանվել է շատ լեզուներով, նաև հայերեն, կրկնակ թարգմանությամբ։ Հայկական հարցին նվիրված հոդվածներով աշխատակցել է ամերիկյան մամուլին։

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ (? — 1940).— Հրապարակախոս։ Մնվել է Խարբերդում (Արևմտյան Հայաստան), որտեղ ստացել է կրթություն։ 1910-ական թվականներին որպես քարտուղար աշխատել է Կ. Պոլսի Պերա թաղամասում։ Ականատես է եղել 1915 թ. մեծ աղետին։ Պատերազմից հետո մեկնել է Ամերիկա, որտեղ ունեցել է գրական-հրապարակախոսական նկատելի գործունեություն։ 1920-ական թվականների կեսերից մինչև մահվան տարին աշխատակցել է «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթին։ Ըստ էության եղել է նրա խմբագիրներից։ «Արևելյան թղթակցություն» ընդհանուր խորագրի տակ տպագրել է կիսաերգիծական բարոյախոսական հոդվածներ, որոնք կարող են կազմել ստվար մի հատոր։ Ունի նաև առանձին գրքերով բարոյախոսական, թարգմանական հրատարակություններ։ Եղբայրն է Շմավոնյան Արշակի։

ՇՄԱՎՈՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (1750—1796).— Խմբագիր-հրատարակիչ. հիմնադիր հայ առաջին պարբերական «Ազդարարի»։ Մնվել է Շիրազում (Պարսկաստան), որտեղ ստացել է նախնական կրթություն, ամուսնացել, ընտանիք է կազմել, ունեցել երեխաներ, սակայն կորցրել է բոլորին, մատնվել հուսահատության, 7 տարի ապրել Բաքուի սարի վրա բնակվող դերվիշների կացարաններում։ Ապա մեկնել է Հնդկաստան, կապվել մշակութային կյանքի հետ, մասնավորապես հետաքրքրվել տպարանական գործով։ 1785 թ. Մադրաս քաղաքում հիմնել է սեփական տպարան, տպագրել հայերեն գրքեր, որոնցից են՝ «Պատմութիւն սրբոյ

կուսին Մարիանե» (1789), որի վերջում որոշ տեղեկություններ է տվել իր մասին, «Գիրք պատմութեան կայսեր Փոնցիանոսի» (1790), «Տաղարան» Սիմեոն Երևանցու (1791), Թադեոս Սոգինյանցի «Տեարակ որ կոչի ողբ Հայաստանեայց» (1791), Պաղտասար Դպիրի «Գիրք քերականութեան» (1791), նույնի բ. հատորը, Հակոբ Ջուղայեցու «Գրքուկ երկրաչափականը» (1792), Ներսես Շնորհալու «Յիսուս որդին» (1792), «Գիրք Պորփիւրի, որ կոչի Ներածութիւն» (1793), «Գիրք Սահմանաց Դաւթի Անյաղթի» (1797) և այլն։ Հայ մշակույթի պատմության մեջ իր բացառիկ տեղն ունի որպես հայ անգրանիկ պարբերականի՝ «Աղդարարի» խմբագիր-հրատարակիչ։ Նա այդ հանդեսը հիմնադրել է 1794 թ. Մադրասում։ Սկզբնական շրջանում ունեցել է 28 բաժանորդ։ «Աղդարարում» տպագրվել են արձակ և չափածո մի շարք ստեղծագործություններ, բարոյախոսական առակներ, բանասիրական հետազոտություններ, նաև նմուշներ հայ մատենագրությունից, ինչպես Խաչատուր Ջուղայեցու «Պատմութիւն պարսից» գիրքը։ «Աղդարարը» լույս է տեսել ընդամենը երկու տարի, մինչև 1796 թվականը, հրատարակվել է 18 համար։

ՇՄԱՎՈՆՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ (1833—1892).— Կրթական գործիչ, գրող։ Ծնվել է Խարբերդի գյուղերից մեկում (Արևմտյան Հայաստան)։ Տարրական կրթությունն ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում, 1852 թ. մեկնել է Կ. Պոլիս, սովորել Համլենի հայանի գիշերօթիկ վարժարանում, որտեղ հիմնովին տիրապետել է անգլերենին։ Վերադառնալով Խարբերդ, նվիրվել է մանկավարժական աշխատանքի։ 1878 թ., երբ Խարբերդում հիմնադրվել է «Արմենիա» կոլեջը (հետագայում՝ Եփրատ կոլեջ), եղել է նրա առաջին ուսուցիչներից։ Տասը տարի այնտեղ դասավանդել է հայ գրականություն, տրամաբանություն և այլ առարկաներ։ 1887 թվականից մինչև մահը ապրել է Կ. Պոլսում, որտեղ ունեցել է գրական-հրապարակախոսական գործունեություն։ Աշխատակցել է պոլսահայ մի քանի թերթերի, գրելով թե՛ հրապարակախոսական հոդվածներ և թե՛ բանաստեղծություններ։

ՇՆԱՎՈՐԻԿ (13-րդ դ.).—Քարգործ վարպետ։ Նրա քանդակած խաչքարերից մեկը պահվում է Ախուրյանի շրջանի Մարմաշեն վանքի մոտ։

ՇՆՈՐՀԱՎՈՐ (կամ՝ Շնոհոր) (13-րդ դ.).— Ճարտարապետ, քարկոփ վարպետ։ Ապրել է 13-րդ դարի երկրորդ կեսին։ Նրա նախագծերով կամ ղեկավարությամբ են կառուցվել Ախտալայի շրջանում մի կոթող, մի եկեղեցի, Մարտիրոս գյուղի աղբյուրը, գրանիտե խաչքարեր, Խաչի Ձորի խաչքարը և այլն։

ՇՆՈՖՈՐՇԱՀ (14-րդ դ.).— Փորագրիչ-արվեստագետ։ Ապրել է Ղրիմում։ 1371 թ. Կաֆայում (Թեոդոսիա) փորագրել է Ս. Մարգարեկեղեցու ընկուզյա դուռը։ Հետ Հ. Աճառյանի՝ անունը առաջացել է Շնորհավորշահ բառերից։

ՇՈՂԵՆՑ ՅԱԿԱՆ (ՅԱԿԱՆՅԱՆ) (1909—1969).— Գրող։ Ծնվել է Բաքվում։ 1930—1931 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանում։ Գրական առաջին փորձերը կատարել է 1920-ական թվականների վերջերից, մամուլում տպագրելով բանաստեղծություններ։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Հայրենի լեռներում» (Երևան, 1945), «Վերադարձ» (1948), «Բարի ճանապարհ» (1953), «Սիրո գիրք» (1956), «Կյանք» (վեպ, 1959), «Տարիների երթը» (1964), «Մեր և գեղեցկությունը» (1971)։ Ռուսերենից կատարել է թարգմանություններ։

ՇՈՂԵՐՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ (ծն. 1916).— Գրող։ Ծնվել է Սուրմալուի գավառի Փանիկ գյուղում։ 1949 թ. ավարտել է Երևանի Մարքսիզմ-Լենինիզմի երեկոյան համալսարանը, 1951-ին՝ Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի գրական դասընթացները, 1953-ին՝ Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը։ Գրել է պիեսներ՝ «Գնացք», «Հայրենիքի դուռը», «Մելիք Ադամ», «Մեծ սիրտ», «Մի որ հոսպիտալում», «Ջավահիր»։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Կարոտ» (Երևան, 1946), «Ցերմայի վարիչը» (1958), «Մայրեր և որդիներ» (պիեսների ժողովածու) (1971), «Դրամատիկական երկեր» (1979), ինչպես և մի շարք գրքույկներ։

ՇՏԻԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ծն. 1930).— Բանաստեղծ։ Ծնվել է Երևանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 1954 թ.։ Հետակայել է Հայկական ԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի

ասպիրանտուրայում։ 1957 թվականից աշխատում է նույն ինստիտուտում որպես գիտաշխատող։ 1961 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ Պարբերական մամուլում տպագրել է բանաստեղծություններ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Վահագ Ալիշանի հայրենասիրական պոեզիան» (Երևան, 1959), «Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը» (1967), «Հայ նոր գրականության ժամանակագրությունը» (1801—1850) (Երևան, 1973), նույնի Բ հատորը (1851—1865) (1983), «Ալիշանը ժամանակակիցների հուշերում» (կազմել և ծանոթագրել է) (1974)։ Հրատարակության է պատրաստել և ծանոթագրել Ց. Խանզադյանի «Հոդվածների ժողովածուն» (Երևան, 1963) և Ղ. Ալիշանի «Նամակները» (1969)։ Մասնակցել է «Հայ նոր գրականության պատմության» բազմահատորյակի ստեղծմանը, որի համար արժանացել է Հայկական ԽՍՀ պետական մրցանակի։

ՇՈՒՇԱՆՅԱՆ ՎԱԶԳԵՆ (1903—1941).— Գրող։ Ծնվել է Ռոդոստոյում (Թուրքիա), որտեղ ստացել է տարրական կրթությունը։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կորցրել է ծնողներին, ընկել Հալեպ։ Պատերազմից հետո մեկնել է Կ. Պոլիս, 1919 թ. ընդունվել Արմաշի երկրագործական վարժարանը։ Որբերի հետ եկել է Երևան, նորից մեկնել Պոլիս, այնտեղից Փարիզ, աշխատել որպես բանվոր, միաժամանակ սովորել գյուղատնտեսական մի վարժարանում։ 1920-ական թվականների սկզբներից սփյուռքահայ մամուլում տպագրել է արձակ և չափածո գեղարվեստական երկեր, ստորագրելով Վարոս Զաքարյան, Հովհ. Թրակացի, Վազգեն Շուշանյան։ Աշխատակցել է սփյուռքահայ մի շարք պարբերականների։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Գարնանային», «Ամռան գիշերներ», «Մահվան առագաստ», «Սիրո և արկածի տարբը», «Օրերը գեղեցիկ չեն», «Անկարելի օրագիր», «Երկիր հիշատակաց» և այլն։ Նրա ընտիր երկերի միհատորյակը լույս է տեսել Երևանում, 1966 թ.՝ «Երկիր հիշատակաց» ընդհանուր խորագրով։

Ո

ՈՆՈՓՐԻՈՍ ՔԱՀԱՆԱ *(17-րդ դ.).*— Ծաղկող։ 1673 թ. Բաբերդում նկարազարդել է մի Ավետարան, որը պահվում է Երևանի Մատենադարանում, № 3712 ձեռագրում։

ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ *(1614—1674).*— Տպագրիչ, հրատարակիչ։ Ծնվել է Իսպահանում (Պարսկաստան), Երևանից այնտեղ գաղթած ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի հայ քահանաներից մեկի մոտ, ապա ուսումը շարունակել է Նոր Ջուղայի Ամենափրկիչ դպրեվանքում։ Հետագայում Փիլիպոս կաթողիկոսը հրավիրել է նրան էջմիածին և հանձնել Ուշիի վանքի ղեկավարությունը։ Այնտեղ նա Պողոս Պիրոմալլի լատին քահանայից սովորել է լատիներեն։ 1662 թ. մեկնել է Եվրոպա՝ նպատակ ունենալով տպարան հիմնել և տպագրել հայերեն Աստվածաշունչը։ Եղել է Իտալիայում, Ֆրանսիայում, հաղթահարել մեծ դժվարություններ, մինչև որ շուղայեցի երեք հայ վաճառականների նյութական օժանդակությամբ Ամստերդամում (Հոլանդիա) կարողացել է ձուլել տալ հայերեն տառեր և 1666 թ. տպագրել նախ մի «Այբբենարան», ապա՝ ձեռնարկել Աստվածաշնչի առաջին տպագրության ծանր գործին։ Աստվածաշնչից բացի՝ նույն քաղաքում տպագրել է Առաքել Դավրիժեցու «Հայոց պատմությունը» (1669), Մ. Խորենացուն վերագրվող «Աշխարհացույցը», մի «Քերականութիւն» և այլն, ընդամենը 19 գիրք։ 1670 թ. տառերը տեղափոխել է Լիվոռնո (Իտալիա), տպագրել է երկու գիրք։ 1673 թ. մեկնել է Մարսել (Ֆրանսիա), սակայն, ենթարկվելով կաթոլիկ եկեղեցու հալածանքներին, հնարավորություն չի ունեցել շարունակելու իր սիրած գործը և մեռել է հաջորդ տարի։

ՈՍԿԱՆ ԵՐՎԱՆԴ *(1855—1914).*— Նկարիչ, քանդակագործ։ Ծնվել է Կ. Պոլսում, բանաստեղծ Հակոբ Ոսկանի ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է Պեշիկթաշի և Պերայի հայկական դպրոցներում։ 1866—1872 թթ. սովորել է Վենետիկի Ռաֆայելյան վարժարանում, ավարտելուց հետո մեկնել է Հռոմ, սովորել Հռոմի գեղարվեստների կայսերական ակադեմիայում, հետևելով քանդակագործության։ Աշակերտել է քանդակագործներ Բեկենտինին և Ջ. Մազերին։ 1872 թ. ավարտել է ուսման ընթացքը, մեկնել է Փարիզ, կատարելագործել արվեստը։ Մասնակցել է ցուցահանդեսների, արժանացել արծաթյա մեդալի։ 1881 թ. վերադարձել է Կ. Պոլիս, տեղի թուրքական թանգարանի տնօրեն Համդի բեյի հետ 1883 թ. բաց են արել գեղարվեստների առաջին դպրոցը Թուրքիայում։ Միասին Կ. Պոլսի Պերա թաղամասում կազմակերպել են ցուցահանդես։ Եղել է վերոհիշյալ թանգարանի դիրեկտորը և դպրոցի քանդակագործության դասատուն, այդ պաշտոնում մնացել մինչև մահը։ Նրան աշակերտել են Ա. Ֆեթվաճյանը, Մ. Խաչատրյանը և ուրիշներ։ Համդի բեյի հետ ճանապարհորդել է երկրի խորքերը, Մալաթիայի (պատմական Մելիտինե) մոտակայքում գտնվող Նեմրութ լեռան լանջերին կատարել են պեղումներ, արդյունքները տպագրել «Նեմրութ լեռան գերեզմանոցը» ֆրանսերեն գրքում (Կ. Պոլիս, 1883)։ Թողել է բազմաթիվ քանդակներ, որոնցից առավել կարևորներն են՝ «Զեյբեկը», «Զեյբեկի կինը», «Զեյբեկի պարը թրով», Պիեր Քիյարի և այլ ականավոր գործիչների կիսանդրիները, «Մուրացկանը» և այլն։ Վերականգնել է Ալեքսանդր Մակեդոնացուն վերագրվող մի դամբարան։

ՈՍԿԱՆ ՀԱԿՈԲ *(1824—1907).*— Բանաստեղծ, կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է նախ Վենետիկի Ռաֆայելյան վարժարանում, ապա Մխիթարյանների վանքում, սակայն, չցանկանալով հոգևորական դառնալ, 1839 թ. վերադարձել է ծննդավայրը, ինքնաուսումնասիրությամբ սովորել անգլերեն և ֆրանսերեն։ Ունեցել է կրթական երկարամյա գործունեություն։ Որպես ուսուցիչ կամ տեսուչ աշխատել է Կ. Պոլսի հայկական դպրոցներում։ Նրան աշակերտել են բանաստեղծներ Վահան Մալեզյանը, Հովհաննես Սեթյանը, հրապարակախոս Բ. Քելչյանը և այլ գործիչներ։ Ունեցել է գրական գործունեություն։ Արձակ և չափածո երկերով աշխատակցել է պոլսահայ մամուլին։ Առանձին գրքով լույս է ընծայել «Դատափարկություն. Ա. Կրթական վիճակ մեր. Բ. Հայ վարժիչք և վարժարանք ի Կ. Պոլիս» աշխատությունը (Կ. Պոլիս, 1887)։

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ *(ծն. 1914).*— Աշխարհագրագետ։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Միջնակարգ կրթությունն ստացել է ծննդավայրում, իսկ բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանում, որի աշխարհագրական ֆակուլտետն ավարտել է 1940 թ.։ Ապա ուսումը շարունակել է նույն համալսարանի ասպիրանտուրայում և ԴԱ փիլիսոփայության սեկտորի ասպիրանտուրայում, ավարտել 1951 թ.։ 1953 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ 1948—1954 և 1956—1960 թթ. աշխատել է ԴԱ փիլիսոփայության սեկտորում որպես ավագ գիտաշխատող։ 1960 թվականից եղել է «Պատմա-բանասիրական հանդես» պատասխանատու քարտուղարը։ Եղել է ԴԱ հրատարակչության գլխավոր խմբագիր, ակադեմիայի նախագահության գիտական քարտուղար և այլն։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Աշխարհագրական միջավայրը և հասարակական զարգացումը» (Երևան, 1956), «Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և մեր երկրի բնության սոցիալիստական վերափոխումը», «Աշխարհամասերի ֆիզիկական աշխարհագրություն» (պրակ Ա. Եվրոպա. ուսումնական ձեռնարկ բարձրագույն ուսումնական հաստատությունների համար (Կ. Ս. Օհանյանի հեղինակակցությամբ) (1964), նույնի Բ. պրակը՝ 1965։

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ *(ծն. 1938).*— Գրող։ Ծնվել է Մալկայի շրջանի Ղզլքիլիսա գյուղում (Վրացական ԽՍՀ)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում։ Աշխատել է Հայկական Խորհրդային Հանրագիտարանի խմբագրությունում, սկզբում որպես բաժնի վարիչ, 1977—1979 թթ.՝ գլխավոր խմբագրի տեղակալ, իսկ 1979-ից՝ «Խորհրդային գրող» հրատարակչությունում որպես մանկապատանեական գրականության բաժնի վարիչ։ Մամուլում տպագրել է արձակ և չափածո երկեր։ Առանձին գրքերով լույս ընծայած գործերն են՝ «Կաթնծիր» (բանաստեղծությունների ժողովածու) (Երևան, 1967), «Կարմ միացում» (1980), «Կարոտի կայմ» (1985)։

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՈՒԽ *(1889—1943).*— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Օրիորդական ազգանունը եղել է Դարպասյան։ Կրթությունն ստացել է Պերայի էնայան վարժարանում։ Ավարտելուց հետո երկու տարի հաճախել է Սեն Վենսանի ֆրանսիական դպրոցը, հիմնովին սովորել ֆրանսերեն։ Ապա երկու տարի որպես ուսուցչուհի աշխատել է հայկական մի դպրոցում։ Բեմական ասպարեզ է մտել 1908 թ.։ Երբ Պոլիս է ժամանել Աբելյան-Արմենյան թատերախումբը, ամուսնացել է այդ խմբի դերասաններից Հովսեփ Ոսկանյանի հետ, 1909 թ. միասին եկել են Բաքու։ Ոսկանյան ամուսինները 1910 թվականից խաղացել են Բաքվում նույն տարում ստեղծված հայկական թատերախմբում, որտեղ գրավել է դերասանուհի Հրաչյայի ուշադրությունը։ Վերջինս մեծապես նպաստել է նրա բեմական զարգացմանը, 3 տարի նրա հետ պարապելով բեմական արվեստի գիտելիքները՝ արտասանություն, առոգանություն, դիմախաղ։ Մինչև 1916 թ. մնացել է Բաքվում։ Նույն թվականի գարնան և ամռան ամիսներին մասնակցել է հայկական խմբի շրջագայություններին Երևան, Շուշի, Շամախի, Հյուսիսային Կովկաս, Պարսկաստան։ Այդ տարիներին նրա կատարած դերերից են՝ Սուսան («Նամուս»), Սոնա («Զարոգի»), Սեգա («Հին աստվածներ»), Դեզդեմոնա («Օթելլո»), Օֆելյա («Համլետ») և այլն։ 1917—1921 թթ. խաղացել է Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերության թատերախմբում, որը գործել է Օվի Սեմյանի ղեկավարությամբ։ Այդ թատերաշրջանում նրա կատարած դերերից են՝ Եվնիկե («Հո երթաս»), Մոննա Վաննա (համանուն պիեսում), Թուրքյա («Դավաճանություն»)։ Հաջորդ թատերաշրջանում ևս խաղացել է Թիֆլիսում։ 1921 թ. աշնանը հրավիրվել է Երևանի պետական թատրոն։ Այդ տարվանից մինչև մահը խաղացել է Երևանում, հիմ-

նականում Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնում, աստիճանաբար ձեռք բերելով այնպիսի լայն ժողովրդականություն, որի նմանը հազվադեպ ենք հանդիպում հայ թատրոնի պատմության մեջ։ Կատարել է մի քանի տասնյակ դերեր, որոնցից են՝ Ռաուդենդելա («Զրաստյոզ զանգ»), Նորա («Նորա»), Անտիգոնե («Անտիգոնե»), Սալոմե («Սալոմե»), Դեզդեմոնա («Օթելլո»), Մարգարիտ («Պատվի համար»), Դիանա («Կարմիր դիմակ»), Ռիմա («Թույն»), Իրինա («Հրե կամուրջ»), Ինգա («Ինգա»), Մանյա («Ուրիշի երեխան»), Տուանետ («Երևակայական հիվանդ»), Կրուչինինա («Անմեղ մեղավորներ»), Անուշ («Պաղտասար աղբար») և այլն։

ՈՍԿԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ (1913—1942).— Գրականագետ, խմբագիր։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի շրջանի Ղարաքիլիսե գավառում։ Միջնակարգ և բարձրագույն կրթությունն ստացել է Երևանում, 1938 թ. ավարտել Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժինը։ Դեռևս համալսարանում սովորելու տարիներին գրականագիտական հոդվածներ է տպագրել մեր մամուլում և առանձին ժողովածուներում։ Հայրենական պատերազմի առաջին օրերից մեկնել է ռազմաճակատ, մարտընկալ առաջավոր դիրքերում և զոհվել։ «Խորհրդային Հայաստան», «Գրական թերթ» և այլ պարբերականներում թողել է գրականագիտական արժեքավոր հոդվածներ։ Եղբայրն է գրող Հմայակ Սիրասի։

ՈՍԿԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ծն. 1923).— Նկարիչ, դերասան. Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ։ Ծնվել է Աշտարակում, որտեղ ստացել է միջնակարգ կրթությունը, ավարտել 1940 թ.։ Հաջորդ տարվանից աշխատել է Աշտարակի շրջանային թատրոնում որպես դերասան, իսկ 1945-ից նաև ձևավորող նկարիչ։ Ինքնազարգացմամբ աստիճանաբար խորացել է նկարչության մեջ։ Երբ 1961 թ. Աշտարակում ստեղծվել է ժողովրդական թատրոն, նշանակվել է նրա նկարիչ-ձևավորողը, շարունակելով դերասանությունը։ Նրա խաղացած գլխավոր դերերից են՝ Պեպո, Ասլան Ամի («Օղակում»), Կառլ Մոր («Ավազակներ»), Շմադա («Անմեղ մեղավորներ»), Նազար («Քաջ Նազար»), Թափառնիկոս («Ատամնաբույժն արևելյան»), Օթարյան («Պատվի համար»), Սեյրան («Նամուս») և այլն։ Նրա ձևավորումներով են բեմադրվել «Օղակում», «Սոս և Վարդիթեր» և այլ պիեսներ։ Բացի թատերական ձևավորումներից ստեղծել է բազմաթիվ նատյուրմորտներ, բնանկարներ, կոմպոզիցիոն կտավներ, որոնք 1962 թ. ցուցադրվել են Երևանի ժողովրդական ստեղծագործության հանրապետական տանը բացված նրա ցուցահանդեսում։ Լավագույն գործերից են՝ «Տեղերի վանքը», «Զմեռը Աշտարակում», «Արայի լեռը Աշտարակից» և այլն։

ՈՍԿԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ (1818—1895).— Հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Կ. Պոլսում։ Մասնավոր ուսուցիչների մոտ ստացել է տարրական կրթությունը և սովորել մի քանի լեզու (թուրքերեն, հունարեն, ֆրանսերեն, իտալերեն)։ 1834 թ. ամերիկյան միսիոներների օժանդակությամբ մեկնել է Ամերիկա, վեց տարի սովորել Նյու Յորքի համալսարանում, հիմնովին սերտացել անգլերենին։ 1840 թ. վերադարձել է Կ. Պոլիս և նույն տարվա նոյեմբեր ամսից հրատարակել «Ազդարար Բիւզանդեան» թերթը։ Ամերիկյան հարուստ խավի և հետադեմ տարրերի դեմ մղած սուր պայքարի պատճառով, վերջիններիս միջամտությամբ թերթը փակվել է։ 1841 թվականի վերջերին։ Այդ թերթը առաջին շաբաթներին լույս է տեսել միայն հայերեն, 5-րդ համարից՝ հայատառ թուրքերեն։ Մի քանի տարի Պոլսում ուսուցչությամբ զբաղվելուց հետո 1854 թ. կրկին մեկնել է Ամերիկա, ապրել Նյու Յորքում և զբաղվել լրագրությամբ։ Արևելքը ներկայացնող հոդվածներով աշխատակցել է «Նյու Յորք Հերալդ» թերթին։ Եղել է Նյու Յորքի մամուլի ակումբի («Պրես կլուբ») նախագահը։ Ամերիկյան թերթերում գրած հոդվածները ստորագրել է Ռոկան Խրիստաֆոր։ Մեռել է Նյու Յորքում, ըստ ոմանց՝ 1895-ին, ըստ ուրիշների՝ 1900-ին։

ՈՍԿԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ (ծն. 1924).— Դիրիժոր։ Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ (1977)։ Ծնվել է Թբիլիսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Մոսկվայի կոնսերվատորիայում, որի գինվորական-դիրիժորական ֆակուլտետն ավարտել է 1947-ին, իսկ 1952-ին ավարտել է Երևանի պետական կոնսերվատորիան։ 1958-ից որպես դիրիժոր աշխատել է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի

պետական թատրոնում, որտեղ նրա ղեկավարած օպերաներից ու բալետներից են՝ «Ժիզելը», «Պայացցները», «Խանդուքը», «Դոն Կիխոտը», «Ռոմեո և Ջուլիետա», «Երեք արտավնեի», «Անտուանը», «Սասունցի Դավիթը», «Գայանեն», «Բժիշկ Այբոլիտ» և այլն։ 1966-ին Կահիրեում ղեկավարել է «Բախչիսարայի շատրվանը», 1969-ին Կատովիցեում՝ «Պրոմեթեոսը», 1973-ին՝ Վրոցլավում՝ «Սպարտակը», 1976-ին Գդանսկում՝ «Գայանեն»։

ՈՍԿԱՆՅԱՆ ՀՈՎՍԵՓ (1883—1939).— Դերասան. Ադրբեջանական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Բաքվում, որտեղ ստացել է տարրական կրթությունը, 1902 թվականից խաղացել է սիրողական խմբերում։ 1905 թ. մեկնել է Մոսկվա, սովորել տեղի ֆիլհարմոնիայի օպերային բաժնում, միաժամանակ որպես ազատ ունկնդիր հետևել է գեղարվեստական թատրոնի դասընթացներին։ Վերադառնալով Բաքու՝ 1908 թ. վերջերին միացել է Աբելյան-Արմենյան թատերախմբին, մեկնել է Թուրքիա։ Պոլսում 1909 թ. ամուսնացել է Արուսյակ Դարպասյանի հետ, որն հետագայում գրվել է Ոսկանյան։ Վերադառնալով Կովկաս՝ նույն տարվանից ծառայել է թատերական նկատելի գործունեություն Բաքվում։ Կազմակերպել է ներկայացումներ բանվորական ավաններում, ապա ստեղծել է կայուն թատերախումբ, շրջագայել է Կովկասի և Հյուսիսային Կովկասի մի շարք քաղաքներում։ Խորհրդային տարիներին որպես ռեժիսոր աշխատել է Բաքվի հայկական դրամատիկ թատրոնում, հանդես գալով նաև կարևոր դերերով։ Տարիների ընթացքում նրա կատարած դերերից են՝ Տոկերամո («Տայֆուն»), Պետեր («Դոկտոր Ստոկման»), Արքենին («Դիմակահանդես»), Քին («Դերասան Քին»), Մինոու («Մորգանի խնամին»), Նազար («Քաջ Նազար») և այլն։ Դրել կամ բեմականացրել է մի շարք պիեսներ, որոնք բեմադրվել են իր կամ ուրիշ թատերախմբերի կողմից։ Այդ պիեսներից են՝ «Թաթոս Իվանիչ», «Հենրի» (ըստ Բաֆիու համանուն վեպի), «Ճանճուր Իվանիչ» (ըստ Բաֆիու «Զահրումար» վեպի), «Սոս և Վարդիթեր» (ըստ Պոռշյանի) և այլն։

ՈՍԿԱՆՅԱՆ ՍՏԵՓԱՆ (1825—1901).— Հրապարակախոս, խմբագիր, գրող։ Ծնվել է Զմյուռնիայում։ Կրթությունն ստացել է ծննդավայրի Մեսրոպյան վարժարանում, ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատել է նույն դպրոցում։ 1846 թ. մեկնել է Փարիզ, սովորել Սորբոնի համալսարանում։ Ականատես է եղել և մասնակցել 1848 թ. հեղափոխական դեպքերին, ձերբակալվել է և բանտարկվել։ Ազատ արձակվելուց հետո ավելի ամուր է կապվել նոր գաղափարներին, 1853 թ. վերադարձել է Թուրքիա, Կ. Պոլսում լույս ընծայել «Ներքին համոզում» գրքույկը։ Հաջորդ տարի Զմյուռնիայում տպագրել է «Հռոմեական պարգև» գրքույկը, ուղղված Վատիկանի համակատար հայ կաթոլիկ հոգևորականության դեմ։ Իր դեմ սկսված հալածանքների պատճառով կրկին մեկնել է Փարիզ, 1855 թ. այնտեղ հիմնել «Արևելք» հանդեսը դեմոկրատական ուղղությամբ, սակայն նյութական դժվարությունների պատճառով չի կարողացել շարունակել, դադարեցրել է և զբաղվել ուսուցչությամբ։ 1859 թ. կրկին նետվել է հրապարակախոսական ասպարեզը, Փարիզում հիմնելով «Արևմուտք» պարբերականը, ավելի շեշտված գաղափարական դիրքորոշումով և ձայնակցելով Մոսկվայի «Հյուսիսափայլի» դեմոկրատական թևին։ Միքայել Նալբանդյանը «Հյուսիսափայլի» էջերից ողջունել է այդ նոր հանդեսը։ Առաջինը արևմտահայ իրականությունում հոդվածաշարք է տպագրել Խ. Աբովյանի մասին, Դրվատել նրա «Վերք Հայաստանի» վեպը։ Հետադեմ տարրերի նոր հալածանքների պատճառով 1860 թ. հարկադրված է եղել փակել «Արևմուտքը» և մեկնել Իտալիա, որտեղ աշխատակցել է «Իտալիա» թերթին։ Այդ թերթում տպագրած հոդվածները գրավել են կոմս Քավուրի ուշադրությունը, որը հրավիրել է նրան ֆրանսերեն դասեր տալու իր որդուն։ Քավուրի մահից հետո նորից է մեկնել Փարիզ, վերահրատարակել «Արևմուտքը», շարունակել մինչև 1865 թ.։ Հաջորդ տարի վերադարձել է Զմյուռնիա, պաշտոնավարել Մեսրոպյան վարժարանում, միաժամանակ 1867 թվականից խմբագրել «Լուսեֆորմ» ֆրանսերեն թերթը, որը շարունակել է մինչև կյանքի վերջին տարիները։ Գրական հրապարակախոսության վաղ տարիներին գրել է նաև արձակ և չափածո երկեր, որոնցից հիշատակության արժանի է «Հայ դյուցազնուհի մը» վիպակը, նախ լույս է տեսել

«Արևմուտքում», ապա՝ առանձին գրքույկով։ Ֆրանսերենից թարգմանել է Էժեն Սյուի «Թափառական հրեա» մեծ վեպը, սակայն հնարավորություն չի ունեցել ավարտելու։

ՈՍԿԱՆՅԱՆ ՎԱՉԻՆ (ծն. 1911).— Պատմաբան։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Կրթությունն ստացել է Լենինականի մանկավարժական տեխնիկումում։ 1933 թ. մեկնել է Մոսկվա, շարունակել ուսումը Պատմափիլիսոփայության ինստիտուտում։ 1943 թ. ընդունվել է ԳԱ-ի ասպիրանտուրան, ղեկավար ունենալով ակադեմիկոս Հ. Մանանդյանին։ 1948 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա, աշխատել ԳԱ պատմության ինստիտուտում, նախ որպես գիտաշխատող, ապա բաժնի վարիչ, զուգահեռ դասախոսելով տարբեր ինստիտուտներում։ 1953—1956 թթ. սովորել է դոկտորանտուրայում, ղեկավար ունենալով ակադեմիկոս Մ. Ն. Տիխոմիրովին։ Գիտական մամուլում տպագրել է պատմագրական հոդվածներ, գերազանցապես հայ-ռուս պատմական կապերի մասին։ Առանձին գրքերով հրատարակած կամ գիտական ժողովածուներում լույս տեսած աշխատություններն են «Հայերի դերը ռուս-պարսկական առևտրում» (Երևան, 1948), «Հայ-ռուսական հարաբերությունները XVII դարում» (ռուսերեն, ժողովածու, Վ. Պարսամյանի և Ս. Տեր-Ավակիմովայի հետ, Երևան, 1953) և այլն։ Մասնակցել է «Հայ ժողովուրդի պատմության» բազմահատորյակի ստեղծմանը, գրելով առանձին հատվածներ։

ՈՍԿԵՄԱՏ ՆԵՎՐԻԿ-ՍԱԹԵՆԻԿ (1857—1910).— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը։ Բեմական ասպարեզ է մտել 1877 թ.։ Նախ խաղացել է Թ. Ֆասուլաճյանի խմբում, ապա՝ այլ թատերախմբերում։ Աչքի է ընկել մասնավորապես զրամատիկ դերերում։

ՈՍԿԵՐՉՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ (ծն. 1908).— Գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Կարսի մարզի Բաշ Շորագյալ գյուղում։ 1930-ին ավարտել է Երևանի Ա. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, 1935-ին՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, 1941-ին՝ Մոսկվայի պատմության, փիլիսոփայության և գրականության ինստիտուտի ասպիրանտուրան։ 1930-ական թվականների սկզբներից վարել է տարբեր պաշտոններ, եղել Հայաստանի պրոլետ երգիչների ասոցիացիայի քարտուղար, աշխատել «Ավանգարդ», «Գրական թերթ» պարբերականների խմբագրություններում, Արվեստի վարչությունում։ 1941—1943 թթ. աշխատել է Երևանի Ա. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում որպես ռուս գրականության ամբիոնի վարիչ և դասախոս։ 1943—1946 թթ. ծառայել է խորհրդային բանակում, ղեկավարելով հետո աշխատել Հայպետհրատում և ԳԱ գրականության ինստիտուտում, շարունակելով դասախոսական աշխատանքը բարձրագույն ուսումնական հաստատություններում։ 1966 թ. պաշտպանել է դոկտորական դիսերտացիա։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Երաժշտական հարցեր» (Երևան, 1937), «Ստեփան Շահումյանի գրական հայացքները» (1947), «18-րդ դարի ռուս գրականություն» (քրեստոմատիա) (1952), «Ռուս մեծ քննադատներ և հրապարակախոսներ» (1957), «Խորհրդահայ գրականության և գրական ժառանգության հարցեր» (1954), «Հայ մարքսիստական քննադատության հիմնադիրները» (1962), «Քննադատություն և հրապարակախոսություն» (1968), «Մյասնիկյանը և գրական հարցերը» (1974), «Ռուս գրականություն. ակնարկներ» (1977), «Ռուս և հայ գրականության հարցեր» (1982)։

ՈՍԿԵՐՉՅԱՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ-ՄԱՇՏՈՑ (1886—1963).— Կրթական գործիչ։ Ծնվել է Զեյթունում։ Կրթությունն ստացել է տեղի Կենտրոնական վարժարանում, ավարտելուց հետո սովորել է Սիսի Ժառանգավորաց վարժարանում, որտեղ էլ ընդունել է հոգևորական կոչում, անունը փոխել Մաշտոց, զբաղվել ուսուցչությամբ։ Ունեցել է գրական, հրապարակախոսական բուռն գործունեություն։ Աշխատակցել է սփյուռքահայ բազմաթիվ թերթերի, հանդեսների, տարեցույցների՝ օգտագործելով Ուլնեցի, Զգոն, Սնապուհ, Սուր գրիչ, Մ. Կիլիկեցի, Մշակ և այլ ծածկանուններ։ Ունի նաև առանձին գրքերով հրատարակություններ, որոնցից են «Տաճապանքի օրերեն» (1923), «Կիլիկյան հուշեր», «Սուրիահայ տարեցույց» և այլն։

ՈՍԿԱՆ ԳԵՂԱՄ (1915—1977).— Դերասան. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1977)։ Ծնվել է Ռուսեում (Բուլղարիա)։ Փոքր հասակից ծնողների հետ տեղափոխվել է Ռումինիա։ Միջնակարգ կրթությունն ստացել է Բուխարեստում, 1934-ին ավարտել է լիցեն, 1935-ից իրեն սիրող դերասան մասնակցել է հայերեն ներկայացումների։ ՀՕԿ-ի շրջանակներում կազմակերպել ու ղեկավարել է թատերական խմբակ։ 1946-ին ներգաղթել է Խորհրդային Հայաստան, Նույն տարվանից մինչև կյանքի վերջը խաղացել է Երևանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում, որտեղ նրա կատարած լավագույն դերերից են՝ Թովմաս («Առատամնարույժն արևելյան»), Արթին աղա («Զարշելը Արթին»), Կարապետ («Ադբյուրի մոտ»), Օհան («Ուշ լինի, նուշ լինի»), Զուպան («Գնչուական բարոն»), Ալբերիկո («Պարերի ուսուցիչը»), Ֆլորինդո («Վենետիկյան երկվորյակներ»), Բապտիստա («Կամակոր կնոջ սանձահարումը»), Ֆիշեր («Բայադերա») և այլն։ Նկարահանվել է «Մոսֆիլմի» «Բարև ձեզ, երեխաներ» ֆիլմում, ֆրանսերենով կատարելով ֆրանսիացի բժշկի դերը։ Ուզբեկֆիլմի արտադրած «Ինքնաթիռները վայրէջք չեն կատարում» ֆիլմում խաղացել է Պրեֆեկտի դերը։

ՈՍԿԱՆ ԳԵՎՈՐԳ (1894—1949).— Բանաստեղծ։ Ծնվել է Բանդրմայում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Վենետիկի Մխիթարյանների ս. Ղազար վանքում, որտեղ սովորել է 1908 թվականից։ Հետագայում Հռոմի համալսարանում հետևել է աստվածաբանության, ավարտել 1920 թ., նվիրվել կրթական աշխատանքի։ Ունեցել է նկարչական և երաժշտական հակումներ։ Բանաստեղծական հոդվածներով, գրախոսականներով աշխատակցել է «Բազմավեպ» հանդեսին։ Հրատարակել է «Այբբենարան» և այլ դասագրքեր, որոնք արժանացել են մի քանի տպագրության։

ՈՍԿԱՆ ԿԱՐԱՊԵՏ (1866—1901).— Գրող։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է ծննդավայրում։ 1880-ական թվականների կեսերից «Բուրատան մանկանց», «Արևելք», «Պատկեր», «Մասիս» և այլ պարբերականներում տպագրել է արձակ և չափածո երկեր։ Առանձին գրքով, եմմահու, 1911 թ. Կ. Պոլսում լույս է տեսել նրա «Սրտի ժամեր» բանաստեղծությունների ժողովածուն, բանաստեղծուհի Միպիլի առաջաբանով։

ՈՍԿԱՆ ԿՈՄԻՏԱՍ (1863—1911).— Կրթական գործիչ, բառարանագիր։ Ծնվել է Կ. Պոլսի Օրթագյուղ թաղամասում, որտեղ ստացել է կրթությունը. երկար տարիներ զբաղվել է ուսուցչությամբ։ Հետագայում որպես տեսուչ աշխատել է Ադանայի և Անկարայի հայկական դպրոցներում, դասավանդել թուրքերեն և ֆրանսերեն։ Կազմել և հրատարակել է մի քանի դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, բառարաններ, որոնցից հիշատակության արժանի են «Առձեռն բառարան հայերենե ի գաղիերեն» (Կ. Պոլիս, 1887—1895), «Նոր ընթացք գաղիերենե ի հայ թարգմանության» (5 հատոր, Կ. Պոլիս, 1889), «Առաջնորդ գաղիերեն լեզվի» (տարրական, միջին, բարձրագույն և լրացուցիչ դասընթաց. Կ. Պոլիս. 1908)։ Եղբայրն է Կարապետ Ոսկյանի։

ՈՍԿԱՆ ՀԱՄԱՍԱՍՊ (1895—1968).— Բանասեր-հայագետ, կրթական գործիչ, խմբագիր։ Ծնվել է 1895 թ. հուլիսի 1-ին, Արևմտյան Հայաստանի Կարնո նահանգի Խոտրջուր ավանում։ Կրթությունն ստացել է Վիեննայի Մխիթարյանների վանքում և Վիեննայի համալսարանում, որն ավարտել է աստվածաբանության դոկտորի աստիճանով, 1922 թ.։ Ունեցել է կրթական, մանկավարժական երկարամյա գործունեություն Մխիթարյան վանքում և այլ երկրների Մխիթարյան դպրոցներում, ինչպես Պլովդիվում (Բուլղարիա)՝ 1928—1937 թթ., Բեյրութում՝ 1947—1960 թթ. և այլն, հիմնականում վարելով դպրոցների տնօրենի և ուսուցչի պաշտոններ։ Մանկավարժական գործունեության հետ է կապվում մի քանի դասագրքերի և ուսումնական ձեռնարկների ստեղծումը նրա կողմից, ինչպես «Շողակաթ» հայերեն ընթերցարանների հինգ հատորները, Հայոց պատմության հինգ հատորները, որոնք արժանացել են մի քանի տպագրության։ Հրատարակել է նաև մանկապատանեկան գրքույկներ։ Երկար տարիներ եղել է «Հանդես ամսօրյա» հայագիտական հանդեսի խմբագրապետը, այդ պարբերականի էջերում տպագրել է պատմաբանասի-

բական, հայագիտական տասնյակ ուսումնասիրություններ, հայրուրավոր հոդվածներ։ Ծավալուն հետազոտություններից են պատմական Հայաստանի հաղարավոր վանքերին նվիրված հատորները, որոնք լույս են տեսել նախ «Հանդես ամսօրյայում» ապա՝ առանձին գրքերով, «Աղգային մատենաշարով»։ Դրանք են «Վասպուրական-Վանի վանքերը» (Ա. մաս. Վիեննա, 1940. Բ. մաս 1942, Գ. մաս 1947), «Բարձր Հայքի վանքերը» (1951), «Տարոն-Տուրուբերանի վանքերը» (1953), «Արցախի վանքերը» (1953), «Կիլիկիայի վանքերը» (1957), «Գուգարքի վանքերը» (1960), «Սեբաստիայի, Խարբերդի, Տիարբեքիրի և Տրապիզոնի նահանգների վանքերը» (1962)։ Նույն մատենաշարով լույս տեսած նրա մյուս ուսումնասիրություններն են՝ «Հովհաննես Վանական և իր դպրոցը» (Վիեննա, 1922), «Երգ երգոցի առաջին և երկրորդ թարգմանությունք» (1924), «Մատենագրական քննություններ» (1926), «Եղիա Ասվածատուրյան-Մուշեղյան և իր գրական արտադրությունները» (1927), «Սարդիկեի ժողովքի հայերեն կանոնները. բնագիր և ուսումնասիրություն» (1945), «Ուսումնասիրություններ հայ նախաբարներու մասին» (1955), «Ցուցակ հայերեն Ձեռագրաց Մխիթարյան Մատենադարանին ի Վիեննա. հատ. Բ. (1963), (Ա. հատորը կազմել է Հ. Տաշյանը), «Ստեփանոսի Թաշրա՝ ժամանակագրություն կամ տարեկանք եկեղեցականք» (1964), «Յովհաննէս Ղրիմեցւոյ «Պատմութիւն հուլակաւոր վանից Հաղբատայ ս. Նշանէն» (1965), «Զորս հայ տաղասացներ և անոնց տաղերը» (1966) և այլն։ Կատարել է հայագիտական թարգմանություններ, որոնք նույնպես լույս են տեսել «Հանդես ամսօրյա» պարբերականում։

ՈՍԿՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ (1892—1920).— Գրող, հրապարակախոս։ Ծնվել է Հաճնի գյուղերից մեկում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է ծննդավայրում։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ապրել է Եգիպտոսում, որտեղ ունեցել է գրական-հրապարակախոսական գործունեություն։ 1917—1920 թթ. որպես օգնական խմբագիր աշխատել է «Արև» թերթում։ Այդ թերթում, ինչպես և «Հայ ձայն», «Հուսաբեր» և այլ պարբերականներում տպագրել է բանաստեղծություններ, հրապարակախոսական հոդվածներ։ Կազմել է «Եգիպտահայ տարեցույցի» 1919 թ. հատորը։ Նույն տարում Ալեքսանդրիայում լույս է ընծայել «Խռովքի և հարության երգեր» բանաստեղծությունների ժողովածուն։ 1920 թ. մեկնել է Կիլիկիա, որտեղ էլ սպանվել է երիտասարդ հասակում։

ՈՐԲԵՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ (1874—1931).— Բանաստեղծ։ Ծնվել է Մալաթիայում (Թուրքիա)։ Տարրական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա սովորել է Խարբերդի Եփրատ կոլեջում, հմտացել անգլերենին։ 1895—1896 թթ. ջարդերից հետո մեկնել է Զմյուռնիա, որպես ուսուցիչ աշխատել տեղի հայկական դպրոցում։ 1904 թվականից՝ 16 տարի ծառայել է Ջիբուտի նավահանգստում, անգլիական մի ընկերության գրասենյակում։ Աֆրիկյան այդ օտար միջավայրում է գրել իր չափածո և արձակ ստեղծագործությունների մի մասը, տպագրելով պոլսահայ թերթերում, հանդեսներում և տարեցույցներում։ Հետագայում դրանցից առավել կարևորները և մի շարք անտիպ ստեղծագործություններ ամփոփել է «Օվասիս» ժողովածուի մեջ և տպագրել Փարիզում, 1920 թ.։ Առանձին գրքերով լույս ընծայած մյուս երկերն են՝ «Հիշատակաց ծաղիկներ» (1893), «Ծփանքներ» (պոեմ, գրված Բայրոնի «Չայլդ Հարոլդի» ազդեցությամբ)։

ՈՐԲՈՒՆԻ ՉԱՐԵՀ (1902—1981).— Գրող։ Ծնվել է Օրդուում (Թուրքիա)։ Բուն ազգանունը եղել է Էոքսյուզյան։ Կրթությունն ստացել է ծննդավայրի Մովսիսյան վարժարանում։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ 1919 թ. մեկնել է Պոլիս, ուսումը շարունակել Պերպերյան միջնակարգ դպրոցում։ 1922 թվականից ապրել է Փարիզում։ Այդ տարիներից մտել է գրական ասպարեզ։ Արձակ երկերով աշխատակցել է «Նավասարդ», «Անահիտ», «Մշակույթ», «Կյանք և արվեստ», «Զվարթնոց» և այլ պարբերականների։ 1929 թ. Փարիզում առանձին գրքով լույս է ընծայել «Փորձը» վեպը։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ծառայել է ֆրանսիական բանակում։ Զորացրվելուց հետո շարունակել է գրական աշխատանքը։ 1946 թ. եկել է Հայաստան, մասնակցել Հայաստանի խորհրդային գրողների երկրորդ համագումարին։ Վերադառնալով Ֆրանսիա, իր տպավորությունները հրատարակել է «Ժողովուրդ» առաջադիմական թերթում։ Հետագայում հիմնականում աշխատակցել է «Աշխարհ» շաբաթաթերթին, որի էջերում տպագրած ծավալուն երկերից է «Ասֆալթ» վեպը։ Առանձին գրքերով հրատարակած մյուս երկերն են՝ «Վարձու սենյակ» (պատմվածքների ժողովածու, Փարիզ, 1947), «Անձրևոտ օրեր» (1958), «Դեպի երկիր» (1947), «Եվ եղև մարդ» (1964), «Պատմվածքներ» (Բեյրութ, 1966) և այլն։ Նրա «Փորձը» և «Եվ եղև մարդ» վեպերը, ինչպես նաև մի քանի պատմվածքներ վերահրատարակվել են Երևանում, 1967 թ. «Եվ եղև մարդ» ժողովածուում։

Զ

ԶԱԳԻՐՃՅԱՆ ԵՓՐԵՄ *(1824—1911).*— Բանաստեղծ։ Ծնվել է Կ. Պոլսում։ 1839 թվականից սովորել է Վիեննայի Մխիթարյանների վանքում, 1845 թ. ընդունել հոգևորական կոչում, եղել է այդ միաբանության գործուն անդամներից։ 1853—1856 թթ. պաշտոնավարել է Զմյուռնիայում, ապա կրկին վերադարձել է Վիեննա, դարձել միաբանության տպարանի վարիչ և «Եվրոպա» պաշտոնաթերթի խմբագիրը։ Այդ պարբերականի էջերում տպագրել է բանաստեղծական մի շարք երկեր, իսկ հետագայում, 1887 թվականից, երբ հրատարակվել է «Հանդես ամսօրյան», աշխատակցել է նրան։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Համառոտ բառարան հայերենե տաճկերեն» (Վիեննա, 1851, բ. տպ. 1872), «Արվեստախոսություն» (Վիեննա, 1857, բ. տպ. 1869, գ. տպ. 1884)։ Կատարել է թարգմանություններ, ինչպես Կիկերոնի «Խօսք վասն բարեկամութեան» (Վիեննա, 1852), «Ճավայի դատապարտյալը» (վեպ, 1858)։ Ունեցել է գեղեցիկ ձայն, երիտասարդ տարիքում երգած երգերից մի քանիսը, այդ թվում հայտնի «Ակոռի մեծ կարասը» նոտաներով տպագրել է «Եվրոպա» թերթում, 1858 թ.։

ԶԱԳԻՐՃՅԱՆ (ԹՈՒՐԹՈՒՐԻՆՃՅԱՆ) ԼՅՈՒՍԻ *(ծն. 1931).*— Նկարչուհի։ Ծնվել է Կահիրեում (Եգիպտոս)։ Կրթությունն ստացել է տեղի հայկական վարժարանում և անգլիական կոլեջում։ Նկարչության է հետևել Բյուզանդ Կոճամանյանի և Աշոտ Զորյանի մոտ։ 1963 թ. Բելգիայում կազմակերպել է իր առաջին ցուցահանդեսը, արժանացել մամուլի գնահատմանը։ Ճանապարհորդել է մի շարք երկրներում (Իտալիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Անգլիա, Գերմանիա, Ճապոնիա և այլն), ներշնչվել այդ վայրերի բնությամբ ու մարդկանցով։ Ստեղծել է բազմաթիվ գործեր, որոնցից են «Ճապոնական բնանկար», «Երիտասարդ Ճապոնուհիներ», «Կախարդական հեքիաթ», «Վերադարձ դաշտից», «Զբոսայդում» և այլն։ Ապրում և ստեղծագործում է Բելգիայում։

ԶԱԳԻՐՃՅԱՆ ՈՍՍԻՏԱ.— Պարուսույց։ Ծնվել է Մոնթեվիդեոյում (Ուրուգվայ)։ Կրթությունն ստացել է ծննդավայրում, փոքր հասակից հակում ունեցել դեպի պարարվեստը։ Այցելել է Խորհրդային Հայաստան, մտադիր ծանոթացել հայ ժողովրդական պարին։ Վերադառնալով Մոնթեվիդեո, այնտեղ ստեղծել է «Մարալիկ» հայկական պարի խումբը, սովորեցրել հայկական պարեր, ցուցադրել դրանք նախ հայերի կազմակերպած երեկույթ-ցերեկույթներում, ապա լայն հասարակությանը՝ առանձին համերգներով կամ հեռուստատեսությամբ, «Հայկական պարի ժամին»։ Տրագրում ունեցել է հիմնականում հայկական գեղչկական պարեր՝ «Մարերի հովին մեռնեմ», «Ցաման յար», «Կակաչների պարը», «Զանգեզուր», «Էրզրումի պար» և այլն։ Այդ պարախմբում ընդգրկված են Մոնթեվիդեոյում ծնված հայ տղաներ ու աղջիկներ։ Նրա պարախմբի աշխատանքներին նկատելի օժանդակություն է ցույց տվել Հայաստանի երգի պարի պետական անսամբլի ելույթները Ուրուգվայում, Վ. Խանամիրյանի ղեկավարությամբ։ Դրանից հետո նա կրկին այցելել է Հայաստան, իր հետ տարել նոր պարերի նախագծումներ և ժողովրդական գործիքներ՝ դուդուկ, դհոլ և այլն։

ԶԱԳՄԱԳՃՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ-ՀԱՎԱՆՆԵՍ *(1878—1973).*— Բառարանագիր, մշակութային գործիչ։ Ծնվել է Ադանայում (Կիլիկիա), որտեղ ստացել է նախնական կրթությունը։ 1901 թ. մեկնել է Կիպրոս, իսկ 1904 թ.՝ Ամերիկա, Բոստոնի կոլեջում հետևել քիմիաբանության։ Ավարտելուց հետո պաշտոնավարել է նույն ինստիտուտում երկար տարիներ, մինչև 1944 թ. որպես պրոֆեսոր։ Կինը եղել է ամերիկուհի։ 1908—1918 թթ. խմբագրել է հայերեն թերթեր։ Զուգահեռ դասախոսական և խմբագրական աշխատանքին, ունեցել է բանասիրական գործունեություն։ 1917 թ. լույս է ընծայել «Ընդարձակ պատմություն հայոց» աշխատությունը։ Գլուխգործոցն է «Ընդարձակ բառարան անգլերեն-հայերեն» բառգիրքը, որը լույս է տեսել Բոստոնում, 1922 թ. և հետագայում վերահրատարակվել է 1952 և 1960 թթ.։ Համարվում է անգլերենից հայերեն լավագույն բառարաններից մեկը։ Պարունակում է 199.000 բառ և բառահոդված։ Հայրն է աշխարհահռչակ կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի։

ԶԱԳՄԱԳՃՅԱՆ ՏԻԳՐԱՆ-ՍԵՊՈՒՀ *(1894—?).*— Նկարիչ։ Ծնվել է Այնթապում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է տեղի Հայկազյան վարժարանում և Վարդանյան կրթարանում, ավարտել է 1912-ին։ Երկու տարի էլ սովորել է Կիլիկյան ճեմարանում։ Որպես նկարչության ուսուցիչ աշխատել է Այնթապի դպրոցներում։ Նկարազարդել է տեղի հայոց եկեղեցու մարմարյա խորանը։ 1915 թ. շարքերի օրերին ապրել է Բելգրադում և Հալեպում, պատրաստել արյա մի քանի նշանավոր բեկերի դիմանկարները և վայելել նրանց հովանավորությունը։ 1923 թ. մեկնել է Ամերիկա, Նյու Յորքում բաց է արել գեկորատիվ արվեստների արվեստանոց և ունեցել է հաջողություն։ Պատրաստել է հայ և ամերիկացի մի շարք հայտնի մարդկանց դիմանկարները։ Մասնակցել է ցուցահանդեսների, արժանացել ամերիկյան մամուլի գնահատմանը։

ԶԱԳՈՒՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ *(ծն. 1928).*— Երաժշտագետ։ Ծնվել է Բելգրադում (Լիբանան)։ 1946 թ. ընտանիքով ներգաղթել են Խորհրդային Հայաստան։ Երաժշտական կրթությունն ստացել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որի վոկալ բաժինն ավարտել է 1961-ին, երկու տարի երգել է Հայկական ժողովրդական երգի-պարի պետական անսամբլում, ապա աշխատել է Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի երաժշտական հաղորդումների խմբագրությունում նախ իբրև խմբագիր, ապա՝ ավագ խմբագիր, հետագայում՝ ռադիոյի երաժշտական հաղորդումների բաժնի վարիչ։ Մամուլում տպագրել է երաժշտագիտական հոդվածներ, գրել է հաղորդումներ հայ և օտար երգիչների, երաժիշտ կատարողների և կոմպոզիտորների մասին, ինչպես «Մարդկային մեծ ձայներ» հաղորդաշարը՝ համաշխարհային հռչակի տեր երգիչների մասին։

ԶԱԼԵՆՅԱՆ ՎՐԹԱՆԵՍ *(1803—1834).*— Մանկավարժ, բանաստեղծ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է Վիեննայի Մխիթարյանների վանքում, դարձել այդ միաբանության անդամ։ Ունեցել է կրթական, բանասիրական գործունեություն։ 1825 թ. Կ. Պոլսի Պերա թաղամասում հիմնել է տարրական դպրոց, որը գործել է երկար տարիներ։ 1827 թ. Վիեննայում լույս է ընծայել «Քերականություն հայկազյան լեզվի» ուսումնական ձեռնարկը, որը հետագայում արժանացել է տասը տպագրության (10-րդ տպ. 1885)։ Օգտագործվել է թե արևմտահայ և թե արևելահայ դպրոցներում։ 1829 թ., դարձյալ Վիեննայում տպագրել է «Կրթություն գործնական, հայկական դրոց բարբառոյ» դասագիրքը։

ԶԱԼԻԿՅԱՆ ԳՐԻԳՈՐ *(ծն. 1920).*— Դերասան, դրող։ Ծնվել է Իզմիրում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Երևանի թատերական ստուդիայում, ավարտել 1941-ին։ Խաղացել է Աշտարակի շրջանային թատրոնում, ապա շարունակել ուսումը Երևանի թատերական ինստիտուտում, որի դերասանական ֆակուլտետն ավարտել է 1949-ին։ 1946—1951 թթ. խաղացել է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում, 1951—1959 թթ.՝ Գ. Սունդուկյանի անվան թատրոնում։ 1960-ից որպես գլխավոր ռեժիսոր աշխատել է Երևանի ռադիոհաղորդումների խմբագրությունում։ Պատանի հանդիսատեսի թատրոնում կատարած դերերից են՝ Ժան Վալժան («Թշվառներ»), Նեզնամով («Անմեղ մեղավորներ»), Օլեգ Կոշևոյ («Երիտասարդ գվարդիա»), Ալեքսանդր («Ժայռ»), Խաչատուր Աբովյան (համանուն պիեսում)։ Գրել է պիեսներ, որոնցից «Երազիկը» և «Մարսեցի փեսան» բեմադրվել են Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնում, «Մենք, նրանք, մյուսները»՝ Գրամատիկական թատրոնում (1970)։ Կատարել է ռադիոբեմականացումներ, որոնցից Ե. Օտյանի «Արդուլ Համիդ և Շերլոկ Հոլմսը» կրկնվել է քանիցս։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Բարախումներ» (բանաստեղծություններ, Երևան, 1954), «Իմ սիրտը» (1958), «Խաղաղ ամպեր» (1964)։

ԶԱԼԻԿՅԱՆ ՆՈՒՐԱՐ *(ծն. 1928).*— Դերասան, Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1971)։ Ծնվել է Աթենքում (Հունաստան)։ 1932 թ. նրանց ընտանիքը ներգաղթել է Հայաստան։ Միջնակարգ և բարձրագույն կրթությունն ստացել է Երևանում. 1953 թ. ավարտել է Երևանի թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆա-

կուլտուրը և խաղացել Երևանի պատանի հանդիսատեսի պետական թատրոնում, որտեղ նրա կատարած դերերից են՝ Ռյարինին («Հայրերի պատանեկությունը»), Ալեքսեյ («Բարի հաջողություն»), Գենադի («Երջանկության ուղին»), Նեղնամով («Անմեղ մեղավորներ»), Ֆերդինանդ («Սեր և խարդավանք»), Դիժ Դանին («Զարգի»), Անդրեյ Պետրովիչ («Զանգահարեցեք և եկեք») և այլն։

ՉԱԼԵՈՒՇՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1861—1931).— Հասարակական, մշակութային գործիչ, բանաստեղծ։ Ծնվել է Նոր Նախիջևանում։ Կրթությունն ստացել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում և Մոսկվայի համալսարանում, որտեղ հետևել է իրավաբանության։ Վերադառնալով ծննդավայրը՝ զբաղվել է իր մասնագիտությամբ, միաժամանակ ունեցել գրական, հասարակական բեղուն գործունեություն։ Մեծ դեր է կատարել Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքի բակում Մինասյել Նալբանդյանի և Ռաֆայել Պատկանյանի արձանները կանգնեցնելու և Նալբանդյանի երկերի նախիջևանյան հրատարակությունը գլուխ բերելու գործում։ Հրատարակել է ռուսերեն մի քանի գրքեր, բոլորն էլ կապված հայ իրականության հետ, ինչպես՝ «Հայկական բանաստեղծությունը հանձին Ռաֆայել Պատկանյանի» (1886), «Ռոստով քաղաքի պատմությունը» և այլն։ 1909 թ. Նոր Նախիջևանում հրատարակել է իր կազմած «Հայի կոտ Զեյթունցուն» ժողովածուն։ Իր ընտիր հոդվածների ժողովածուն էլ տպագրել է Թիֆլիսում, 1914 թ.՝ «Մտքեր, խոհեր, դեմքեր» խորագրով։

ՉԱԼԵՈՒՇՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ (ՄԱՌ) (1901—1965).— Գրող, թարգմանչուհի։ Ծնվել է Նոր Նախիջևանում։ Դուստրն է Գ. Չալխուշյանի։ Տարրական կրթությունն ստացել է ծննդավայրում։ 1913 թվականից սովորել է Մոսկվայի մարզի պանսիոնատներից մեկում։ Վերադառնալով Նոր Նախիջևան, սովորել է գիմնազիայում, ապա ավարտել Ռոստովի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ 1921 թվականից մինչև կյանքի վերջը ապրել է Մոսկվայում։ Երիտասարդ տարիքից գրել է բանաստեղծություններ։ 1922 թ. Մոսկվայում լույս է ընծայել բանաստեղծությունների ժողովածու «Սուսաննա Մառ» խորագրով։ Հետագայում ամբողջովին նվիրվել է թարգմանչական աշխատանքի։ Թարգմանել է մի քանի լեզու։ 1920 թ. լույս է ընծայել աշխարհի տարբեր լեզուներից թարգմանած պատմվածքների մի ժողովածու, որի մասին բարձր կարծիք են հայտնել Ա. Լունաչարսկին, Ալ. Ջիվելեգովը, Ավ. Իսահակյանը, Մ. Ռիլկին և ուրիշներ։ Հրատարակել է թարգմանությունների մոտ քսան գիրք։ Հայերենից թարգմանել է Հ. Հովհաննիսյանի, Ավ. Իսահակյանի, Ն. Զարյանի և այլ գրողների երկերից նմուշներ։

ՉԱԼՈՅԱՆ ՎԱՉԵՆ (1905—1981).— Փիլիսոփա, Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ (1965)։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Միջնակարգ և բարձրագույն կրթությունն ստացել է Երևանում։ 1926 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի հասարակական գիտությունների ֆակուլտետը և նվիրվել դասախոսական աշխատանքի։ 1930—1934 թթ. Երևանի պետական համալսարանում դասավանդել է դիալեկտիկական և պատմական մատերիալիզմ։ 1934-ից շարունակել է ուսումը Մոսկվայի պատմափիլիսոփայական ինստիտուտի փիլիսոփայության ասպիրանտուրայում։ 1938 թվականից աշխատել է ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի պատմության ինստիտուտում, շարունակելով դասախոսությունը պետական համալսարանում։ 1939 թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա Եղնիկ Կողբացու փիլիսոփայության մասին, իսկ 1945 թ. դարձյալ Մոսկվայում՝ դոկտորական դիսերտացիա՝ Դավիթ Անհաղթի մասին։ Այդ նույն տարիներից աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ փիլիսոփայության ինստիտուտում, հիմնականում զբաղվելով հայ փիլիսոփայական մտքի պատմությամբ, որի վերաբերյալ տասնյակ ուսումնասիրություններ է տպագրել գիտական մամուլում, ժողովածուներում, հանրագիտարաններում և առանձին գրքերով։ Աշխատակցել է ԳԱ հասարակական գիտությունների «Տեղեկագրին», «Պատմա-բանասիրական հանդեսին», «Վոպրոսի իստորիին», «Վիզանտիյսկի վրեմեննիկին» և այլ հանդեսների։ Պատրաստել և հրատարակել է հայ հին փիլիսոփայական մտքի կարևոր ներկայացուցիչներից մի քանիսի երկերը՝ գրաբար և ռուսերեն, անհրաժեշտ ներածականներով։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Եղնիկ Կողբացու ուսմունքի հարցի շուրջ» (ռուսերեն, Երևան, 1940), «Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը» (ռուսերեն, 1946), «Հայ փիլիսոփայության պատմություն» (ռուսերեն, 1959), «Հայկական ռենեսանսը» (ռուսերեն, 1964), «Հայոց փիլիսոփայության պատմություն» (1975) և այլն։ Հրատարակել է «Յովհաննու Որոտնեցւոյ վերլուծութիւն «Մատրագրութեանց» Արիստոտելի» փիլիսոփայական երկը (Հավաքական տեքստ, առաջաբան և ծանոթագրություններ, ռուսերեն թարգմանության հեղինակակից. Երևան, 1956)։

ՉԱԽԻՐՅԱՆ ՍԵՐԳԵՅ (ծն. 1907).— Նկարիչ։ Ծնվել է Նոր Նախիջևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Գեղարվեստի ինստիտուտում, ավարտել 1929 թ.։ Մի քանի տարի աշխատելուց հետո, 1935—1939 թթ. սովորել է Մոսկվայի նկարիչների որակավորման ինստիտուտում։ 1929 թվականից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների գեղարվեստական գրաֆիկական գործերով, որոնցից հիշատակության արժանի են «Մասունցի Դավիթ» նկարաշարերումները։ Ապրել և ստեղծագործել է Մոսկվայում։

ՉԱԽՈՅԱՆ ԷԼԱԴԱ (ծն. 1949).— Երգչուհի. մեցցո-սոպրանո. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում, ապա՝ 1965-ից՝ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում (Գ. Դասպարյանի դասարան)։ Ուսման ընթացքն ավարտել է 1972 թ. և աշխատանքի ընդունվել Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում, որտեղ նրա կատարած դերերգերից են՝ Վիոլետտա («Տրավիատա»), Լիու («Տուրանդոտ»), Ռոզինա («Սեվիլյան սափրիչ»), Չիլդա («Ռիգոլետտո»), Մարֆա («Թագավորի հարսնացուն»), Անուշ («Համանուն օպերայում»), Օլիմպիա («Արշակ Բ.») և այլն։ Դափնեկրի կոչման է արժանացել 1972-ին՝ Երիտասարդ կատարողների Անդրկովկասյան 4-րդ մրցույթում, իսկ 1973-ին՝ Գլինկայի անվան համամիութենական մրցույթում։ Իրավունք է նվաճել Միլանի Լա Սկալա թատրոնում փորձաշրջան անցնելու (1977—1978)։ Իտալիայում ունկնդիրների ափիթով արժանացել է «Երգեցողության և ժողովրդականության համար» հուշամեդալի և Միլանի կուլտուրայի մինիստրության Ջ. Վերդիի անվան կոնսերվատորիայի վկայականին, որը կոչվում է «Իտալիայի մեծ վարպետների ստեղծագործությունների հիանալի մեկնաբանության համար»։ 1981 թ. Աթենքում մասնակցել է Մարիա Կալասի անվան միջազգային մրցույթին և արժանացել է երկրորդ մրցանակի։ Օպերային ներկայացումներում կամ համերգներով հանդես է եկել խորհրդային Միության տասնյակ քաղաքներում, նաև արտասահմանյան բազմաթիվ երկրներում (Իտալիա, Ֆրանսիա, Նվիյցարիա, Ճապոնիա, Իսպանիա, Լեհաստան, Չեխոսլովակիա, Կանադա, Ամերիկա, Հունաստան)։

ՉԱՂԱՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (—1942).— Կոմպոզիտոր։ Ծնվել է Բաքվում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, ավարտելուց հետո նվիրվել է ստեղծագործական աշխատանքի։ Գրել է մի շարք երգեր, պարեղանակներ, գործիքային պիեսներ։ Զբաղվել է ժողովրդական երգերի ու պարեղանակների հավաքմամբ ու մշակմամբ։ Նրա մի պարեղանակը՝ գրված երգի-պարի անսամբլի համար, արժանացել է մրցանակի։ Լայն տարածում են գտել երգձայն ու բառաձայն «Հորովելը», «Թեավոր աղջիկը», «Մարտական քայլերգը» և այլն։ Զոհվել է Հայրենական պատերազմում։

ՉԱՄԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (ծն. 1908).— Դրամատուրգ. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Ախալցխայում (Վրացական ԽՍՀ)։ 1924 թ. ավարտել է տեղի ինամյա հայկական դպրոցը, իսկ 1934 թ.՝ Մոսկվայի կինեմատոգրաֆիայի ինստիտուտի գրականագենարական ֆակուլտետը։ Աշխատել է կինոյի բնագավառում։ Հետագայում սովորել է ԽՄԿԿ կենտկոմին կից բարձրագույն կուսակցական դպրոցում, ավարտել 1954-ին։ 1934—1942 թթ. աշխատել է «Ժոյուզդետֆիլմ», «Վոստոկֆիլմ», «Հայֆիլմ» կինոստուդիաներում, 1942—1949 թթ. Երևանի «Կոմունիստ» ռուսերեն թերթի խմբագրությունում, մի քանի տարի կուլտուրայի մինիստրությունում, 1958—1969 թթ. եղել է Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության քարտուղար, 1969—1970 թ.՝ Երևանի վավերագրական և փաստագրական ֆիլմերի ստուդիայի դիրեկտոր և այլն։ Գրել է մի քանի կինոֆիլմերի սցենարը, ինչպես «Արարատյան դաշտի աղջիկը» (1949), «Ումն է ժպտում կյանքը»

(1949), «Հանդիպում ցուցահանդեսում» (1968), «Երգ հայրենյաց» (1970)։ Նրա «Արարատյան դաշտի աղջիկը» պիեսը բեմադրվել է Գ. Սունդուկյանի անվան թատրոնում և Թիֆլիսի հայկական թատրոնում, իսկ «Մեր թանկագին հյուրերը» պիեսը՝ Երևանում և Լենինականում։ 1951 թ. լույս է տեսել նրա «Պիեսների ժողովածուն»։

ՉԱՄՉՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (1738—1823).— Պատմաբան, բանաստեղծ։ Ծնվել է Կ. Պոլսում։ 1751 թ. ուղարկվել է Վենետիկի Մխիթարյանների ս. Ղազար վանքը, որտեղ ստացել է կրթություն, հմտացել հին և նոր մի շարք լեզուների մեջ, դարձել այդ միաբանության ամենահմուտ անդամներից մեկը։ Տարիներ շարունակ ուսումնասիրելով Վենետիկի, Հռոմի և այլ քաղաքների մատենադարաններում պահվող ձեռագրերը, նաև տպագիր բազմաթիվ աղբյուրներ, ձեռնարկել է հայ ժողովրդի պատմության մանրամասն շարադրանքին, ինչպես և գրաբարի ընդարձակ քերականության պատրաստմանը։ 1779 թ. Վենետիկում լույս է տեսել նրա «Քերականութիւն հայկազեան լեզուի» աշխատությունը, որը հետագայում լրիվ կամ համառոտ շարադրանքով վերահրատարակվել է թե Վենետիկում և թե հայաշատ այլ քաղաքներում, Թիֆլիսում՝ 1821 թ., Կալկաթայում՝ 1830 թ., Մոսկվայում և այլն։ 1784 թ. Վենետիկում լույս է տեսել նրա գլուխգործոց եռահատոր «Հայոց պատմութեան» Ա. հատորը, հաջորդ տարի՝ Բ. հատորը, 1786 թ.՝ Գ. հատորը, մեծածավալ մի հետազոտություն, որը հանդիսանում է հայ ժողովրդի պատմության առաջին սիստեմատիկ շարադրանքը։ Նա այդ աշխատության համառոտ շարադրանքն էլ լույս է ընծայել 1811 թ. «Խրախճան պատմութեան հայոց» խորագրով, իսկ 1812 թ.՝ նույնը՝ հայատառ թուրքերեն՝ թուրքախոս հայերի համար «Կիւլզարի թվարիխ» խորագրով։ Երկուսն էլ հետագայում վերահրատարակվել են։

ՉԱՉԱՆՅԱՆ ԿԱՐԼԵՆ (ԿԱՐԼԵՆՆ ՉԱՉԱՆԵ) (ծն. 1930).— Գրող, պատմաբան։ Ծնվել է Ապարանի շրջանի Զարշարիս գյուղում։ 1952-ին ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը։ Հայերեն և քրդերեն լեզուներով հրատարակել է պատմագիտական և գեղարվեստական գրքեր։ Հայերեն՝ «Խորհրդային Հայաստանի քրդերը 40 տարում» (Երևան, 1960), «Հայկական պարբերական մամուլը քրդերի մասին» (1980). (նույնը՝ ռուսերեն), «Եղբայրական հայ ժողովրդի ընտանեքում» (1980), «Հայ մտավորականության դերը քրդական մշակույթի զարգացման գործում» (1987). քրդերեն՝ «Հերոս Ահմեդը» (1958), «Վարդը», «Արյունն ու աղավնին» (1961), «Ձիեր» (1984), «Միածան» (Մոսկվա, ռուսերեն, 1983) և այլն։ Հանդիսանում է Հայաստանի գրողների միության քրդական սեկցիայի նախագահը։

ՉԱՂԱՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (?—1942).— Կոմ. 1937).— Բանաստեղծ։ Ծնվել է Կարսում։ Կրթություն ստացել է ծննդավայրի հայկական դպրոցում և ռուսական տեղական դպրոցում։ Գրական ասպարեզ է մտել 1912—1914 թթ.՝ «Պատանի» ալմանախում տպագրելով առաջին բանաստեղծությունները Եղիշե Սողոմոնյան ստորագրությամբ։ 1914 թ. Կարսում լույս է ընծայել բանաստեղծությունների առաջին ժողովածուն «Երեք երգ տխրագալուկ աղջկան» խորագրով, իսկ հաջորդ տարի «Կայսուտայլա հայրենիք» ժողովածուն՝ Թիֆլիսում։ Նույն 1915 թ. ծառայել է հայկական կամավորական գնդում, այդ գնդի հետ հասել մինչև Վան։ Վերադառնալով Կովկաս՝ 1916 թ. հրատարակել է «Գանթեական առասպել» պոեմը։ Մեկնել է Մոսկվա, սովորել Շանյավսկու անվան գրական համալսարանում։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ 1918 թ. ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը, մասնակցել քաղաքացիական կռիվներին՝ կարմիր բանակի շարքերում։ 1919 թ. աշնանը որպես ուսուցիչ աշխատել է Կարսի մարզի Բաշքյաղիկլար գյուղում, իսկ հաջորդ տարվա սկզբից Հայաստանի որբանոցներից մեկում որպես դաստիարակ։ Հեղափոխության առաջին տարիներին առանձին գրքույկներով հրատարակած երկերն են՝ «Սամա» (Թիֆլիս, 1918), «Ամբոխները խելագարված» (1919), «Բոլորին, բոլորին, բոլորին» (Երևան, 1920)։ 1922 թ. մեկնել է Մոսկվա, սովորել Բրյուսովի հիմնադրած գրական ինստիտուտում, միաժամանակ ունեցել ստեղծագործական եռուն գործունեություն։ Նույն 1922-ին Մոսկվայում լույս է ընծայել իր «Երկերի ժողովածուն» երկու սյուժար հատորով, ինչպես և մի քանի փոքր ժողովածուներ։ 1924—1925 թթ. գործուղումով եղել է արտասահմանում (Թուրքիա,

Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա և այլուր)։ 1923-ին Կ. Պոլսում տպագրվել է նրա «Պոեմներ» ժողովածուն, 1924-ին՝ «Ստամբոլ» պոեմը, 1925-ին՝ Բեռլինում՝ «Երեք փոքրիկ պոեմ «Լենին» շարքից»։ Արտասահմանյան ուղևորությունից վերադառնալով Հայաստան՝ հիմնադրել է «Նոյեմբեր» գրական միությունը։ 1928—1935 թթ. աշխատել է Պետհրատում որպես գեղարվեստական գրականության բաժնի վարիչ։ Այդ տարիներին է, որ Պետհրատը լույս է ընծայել հայ դասական գրողների մեծ մասի երկերը՝ շրջ. տպագրությամբ։ 1932 թ. Ա. Բակունցի և Ե. Չուբարի հետ կազմել և խմբագրել է «Հոկտեմբեր-Նոյեմբեր» սյուժար տարեգիրքը։ 1926—1936 թթ. առանձին գրքերով լույս ընծայած երկերից են՝ «Երկիր Նաիրի» (վեպ, 1926, 1934. նախապես տպագրված «Նորք» հանդեսի 1922—1923 թթ. համարներում), «Հիշողություններ Երևանի ուղղիչ տնից» (Թիֆլիս, 1927), «Ժողովածու պոեմներից» (Թիֆլիս, 1927), «Էպիքական լուսաբաց» (Երևան, 1930), «Երկեր» (1932), «Գիրք ճանապարհի» (1934), «Պոեմներ» (1936) և այլն։ Հետագա տարիներին տասնյակ հրատարակությունների են արժանացել նրա երկերը։ Ինչպես՝ «Ընտիր երկեր» (Երևան, 1954), «Ընտիր երկեր» (1955), «Ընտիր երկեր» (1957), «Գրականության մասին» (հոդվածներ, նամակներ, ճառեր) (1957), «Երկերի ժողովածու» (վեց հատորով, 1962—1968), «Քնարերգական» (1967), «Ընտիր երկեր» (1973), «Երկիր Նաիրի» (1977), «Ընտիր երկեր» (1977), «Երկեր» (1983), «Անտիպ երկեր» (1983) և այլն։ Նրա երկերը բազմաթիվ հրատարակությունների են արժանացել նաև սփյուռքահայ կենտրոններում։ Կատարել է թարգմանություններ Ս. Մարշակից, Ն. Ագնիվցևից, Ս. Ասեևից, Մ. Գորկուց, Ա. Ս. Պուշկինից և այլ գրողներից։ Դրանցից առավել ուշագրավներն են՝ Մ. Գորկու «Բանաստեղծություններ և լեգենդները» (Երևան, 1934), Հ. Կոչոյանի նկարագրությամբ), Է. Ռեմարկի «Արևմտյան ֆրոնտում անփոփոխ է» վեպը (1932)։ Նրա երկերը թարգմանվել են Խորհրդային Միության և աշխարհի այլ ժողովուրդների տասնյակ լեզուներով։

ՉԱՐԵՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ (1901—1979).— Դիրիժոր. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ (1956)։ Ծնվել է Թիֆլիսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Լենինգրադի կոնսերվատորիայում։ Ուսանողական տարիներից ունեցել է դիրիժորական գործունեություն, ղեկավարել է Լենինգրադի օպերային ստուդիայի ներկայացումները, ապա դարձել նրա երաժշտական ղեկավարը։ 1930-ական թվականների սկզբներից ղեկավարել է Լենինգրադի Կիրովի անվան, Կիևի Շևչենկոյի անվան, Թբիլիսիի Փալիաշվիլու անվան օպերաների մի շարք ներկայացումները։ 1932 թվականին տեղափոխվել է Երևան, ղեկավարել պետական կոնսերվատորիայի նվագախմբային և օպերային դասարանները։ Եղել է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի հիմնադիր ուժերից և մինչև իր կյանքի վերջը կապված է եղել այդ թատրոնի հետ։ Երկար տարիներ եղել է նրա գլխավոր դիրիժորը։ 1937—1940 թթ. որպես գլխավոր դիրիժոր աշխատել է Տաշքենդի պետական օպերայում։ Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում նրա ղեկավարած օպերաներից են՝ «Կարմեն», «Աիդա», «Պիկովայա դամա», «Տրավիատա», «Տոսկա», «Արշակ Բ.», «Սևիլյան սափրիչ», «Ռոմեո Ջուլիետա» և այլն։

ՉԱՐԵԳ ԱՐԱՄ (1875—1947).— Բանաստեղծ։ Ծնվել է Կարինում (Արևմտյան Հայաստան)։ Սովորել է ծննդավայրի Արծնյան դպրոցում։ Ապա ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Հետագայում մեկ տարի էլ սովորել է Լայպցիգի (Գերմանիա) համալսարանում, իսկ Փարիզում հետևել է Սորբոնի համալսարանի գրականության դասընթացներին։ 1900 թ. Վենետիկում լույս է ընծայել «Բանաստեղծություններ» ժողովածուն։ Որպես ուսուցիչ աշխատել է Բուլղարիայում։ 1909 թ. վերադարձել է ծննդավայրը, ստանձնել Կարնո դաշտի 46 գյուղերի հայկական դպրոցների շրջան տեսչի պաշտոնը։ 1912 թ. մեկնել է Կ. Պոլիս, որպես տնօրեն աշխատել Օրթագյուղի դպրոցում։ Պատերազմից հետո վերջնականապես բնակություն է հաստատել Փարիզում, շարունակել գրական գործունեությունը։ 1946 թ. մասնակցել է Հայաստանի խորհրդային գրողների երկրորդ համագումարին։ Զբաղվել է նաև թարգմանությամբ։ 1932 թ. Փարիզում լույս է ընծայել Օմար Խա-

յամի քառյակների թարգմանությունը շքեղ տպագրությամբ։

ՉԱՐԳ ՂԱԶԱՐ (1890—1966).— Բանաստեղծ, կրթական գործիչ։ Ծնվել է Կարինում։ Կրտսեր եղբայրն է Արամ Չարքգի։ Կրթությունն ստացել է տեղի Սանասարյան վարժարանում։ Ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատել է նույն դպրոցում և այլ վարժարաններում։ 1919 թ. նշանակվել է Ադանայի հայկական դպրոցի տնօրեն, միաժամանակ աշխատակցել է «Կիլիկիա» և այլ պարբերականներին։ 1923 թվականից ապրել է Բելգիայում, որտեղ հինգ տարի վարել է Սահակյան վարժարանի տնօրենի պաշտոնը, ապա իբրև տնօրեն աշխատել է այլ դպրոցներում։ 25 տարի էլ պաշտոնավարել է Էշրեֆիեի եփրեմյան վարժարանում որպես տնօրեն։ Աշխատակցել է սիյոնքահայ մամուլին։ Առանձին գրքով 1957 թ. Բելգիայում հրատարակել է «Կարինապատում» ստվար հատորը։

ՉԱՐԽՉՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ (1916—1942).— Բանաստեղծ, լրագրող։ Ծնվել է Աթաբեկյանում (Վրացական ԽՍՀ)։ Ծննդավայրում միջնակարգ կրթությունն ստանալուց հետո աշխատել է շրջանային թերթի խմբագրությունում։ Հետագայում շարունակել է ուսումը Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո մեկնել է ռազմաճակատ, մասնակցել մարտերի։ Երիտասարդական տարիքից գրել է բանաստեղծություններ, որոնք տպագրվել են Թիֆլիսի և Երևանի մամուլում։ Դրանցից մի քանիսը եղանակավորվել են և տարածվել ժողովրդի մեջ։ Նրա բանաստեղծությունները զետեղվել են «Բանաստեղծություններ» (Երևան, 1950), «Գալիքի բարեկամ» (1959) ժողովածուներում։

ՉԱՐՔՅԱՆ ՄԿՐՏԻՉ (ԲԵՍԻՄՃԻ) (1799—1899).— Ճարտարապետ։ Ծնվել է Մուշուում ավանում (Կեսարիա, Թուրքիա)։ Հայրը և մեծ հայրը եղել են ճանաչված ճարտարապետներ. նրանց մոտ է ստացել նախնական գիտելիքները։ Կառուցել է կամուրջներ, աղբյուրներ։ 1820-ական թվականներին մեկնել է Կ. Պոլիս, աշխատել արքունի ճարտարապետ Գրիգոր Պալյանի մոտ որպես օգնական։ Մասնակցել է պետական մի քանի հիմնարկների նախագծմանը, այդ թվում՝ հայանի Ցանկի Կուլեսիի (հրգեղ ազդարարող աշտարակ), «Թոփհանեի մեջիդիե»։ 1838—1840 թթ. Պոլսում աշակերտել է իտալացի ճարտարապետ Պ. Կարելին։ Իր նախագծերն ստեղծել է արևելյան և եվրոպական ոճերի համադրումով։ Նրա նախագծերով են կառուցվել Կ. Պոլսում Պերայի հայոց ս. Երրորդություն և լատինաց Սանտա Մարիա եկեղեցիները։ 1854—1857 թթ. աշխատել է Աղբիանապոլսում (Էդիրնե), որպես պետական ճարտարապետ։ Վերադառնալով Կ. Պոլիս, մասնակցել է Դոլմաբահչեի հայանի պալատի կառուցմանը, որի հիմնական նախագծողներից մեկն էլ ինքն է եղել։ Հետագայում նախագծած շենքերից է Կադը գյուղի ս. Թադավոր եկեղեցին։ Ապրել է ուղիղ 100 տարի։

ՉԱՈՒՇՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴԻՐ (ծն. 1917).— Երաժիշտ, կրթական գործիչ. Հայկական ԽՍՀ վաստակավոր ուսուցիչ։ Ծնվել է Դիլիջանում։ Մասնագիտական կրթությունն ստացել Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում և Թբիլիսիի կոնսերվատորիայում, հետևելով թավջութակի։ Ավարտել է 1941 թ.։ Վերադառնալով Երևան՝ աշխատել է № 2 երաժշտական դպրոցում, միաժամանակ աշխատել Հայֆիլհարմոնիայի նվագախմբում։ 1943 թվականից դասավանդել է Երևանի Չայկովսկու անվան 10-ամյա դպրոցում, իսկ 1949-ից՝ Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում։ Նրա աշակերտներից մի քանիսը հետագայում դարձել են ճանաչված ջութակահարներ, ինչպես համաշխարհային մրցույթների եռակի դափնեկիր Վահրամ Սարաջյանը։ Գրել է թավջութակի մի ձեռնարկ, որը տպագրվել է Երևանում, 1968-ին։ Կատարել է մշակումներ թավջութակի համար։ Համերգներով հանդես է եկել Թբիլիսիում, Բաքվում և այլ քաղաքներում։

ՉԱՈՒՇՅԱՆ ԼԵՎՈՆ (ծն. 1946).— Կոմպոզիտոր։ Ծնվել է Երևանում։ Որդին է Ալ. Չաուշյանի, երաժշտական բարձրագույն կրթություն ստացել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որի ստեղծագործական բաժինն ավարտել է 1969-ին, դաշնամուրայինը՝ 1970-ին, ասպիրանտուրան՝ 1973-ին։ 1973 թվականից պաշտոնավարել է նույն կոնսերվատորիայում որպես ավագ դասախոս։ Գրել է տարբեր ժանրի բազմաթիվ երկեր, որոնցից առանձին լույս տեսածներից են՝ «Վարպետի կվարտետ № 1» (1966), «Կոնցերտ ջութակի համար», («Սիմֆոնիկ պոեմ») (1969), «Օրատորիա-խաղաղություն աշխարհին» (1972), «Սոնատ մենանվագ թավջութակի համար» (Մոսկվա, 1978), «Կոնցերտ ֆլեյտայի և կամերային նվագախմբի համար» (1979), Ռոմանսների շարք Ավ. Իսահակյանի տեքստերով և այլն։

ՉԱՓՐԱՍՏՃՅԱՆ ԴԱՐԵԿԻՆ (1831—1862).— Թատերական գործիչ, գրող։ Ծնվել է Կ. Պոլսում։ Որդին է կրթական գործիչ Գևորգ Չափրաստճյանի։ Նախնական կրթությունն ստացել է Ծննդավայրում. ապա ընտանիքով տեղափոխվելով Ռումինիա, ուսումը շարունակել է Բուխարեստում, որտեղ սովորել է ֆրանսերեն, հունարեն, ռումիներեն։ Վերադառնալով Կ. Պոլիս, ստացել է բժշկական կրթություն և աշխատել այդ մասնագիտությամբ։ 1850-ական թվականների կեսերից մասնակցել է արևմտահայ լուսավորական շարժմանը։ Գրել է բանաստեղծություններ, որոնք տպագրվել են մամուլում, երգարաններում։ Գրել է նաև «Վարդան Մամիկոնյան» և «Աղատն Արմավրա» պատմական ողբերգությունները, որոնք քանիցս բեմադրվել են Կ. Պոլսում և այլուր՝ հայկական թատերախմբերի կողմից։ Ֆրանսերենից կատարել է թարգմանություններ, ինչպես Շաթոպրիանի «Ատալա» վեպը, Ալ. Դյումայի «Գոթական մատուռը»։

ՉԱՓՐԱՍՏՃՅԱՆ ԳԵՎՈՐԳ (? — 1861).— Կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Երկար տարիներ պաշտոնավարել է Պոլսի տարբեր թաղամասերի հայկական դպրոցներում որպես հայոց լեզվի ու մատենագրության ուսուցիչ։ Նրա աշակերտներից են եղել հետագայում Թուրքիայի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը, երաժշտագետ Ե. Մելիքյանը և ուրիշներ։ Գրել է հայոց լեզվի մի քերականություն, որը մնացել է անտիպ, սակայն իր ժամանակին օգտագործվել է հայկական դպրոցներում։ Կա կարծիք, որ այդ աշխատությունը որոշ փոփոխություններով հետագայում տպագրել է իր անունով՝ նրա աշակերտներից Ստեփան Փափազյանը։ Աշակերտներին հայրենասիրական երգեր սովորեցնելու մեղադրանքով Թուրքերը խոշտանգել են նրան և կուրացրել մի աչքը, որի համար կոչվել է նաև Միաչյա պատվելի։ Այդ դեպքից հետո ընտանիքով տեղափոխվել է Ռումինիա։ Հայրն է Միքայել Չափրաստճյանի։

ՉԱՓՐԱՍՏ ԷԴՈՒԱՐԴ (1891—1974).— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսի Սկյուտարի թաղամասում։ Որդին է կատակերգակ դերասան Միքայել Չափրաստճյանի։ Կրթությունն ստացել է Սկյուտարի ճեմարանում։ Բեմական ասպարեզ է մտել օսմանյան սահմանադրության հռչակումից հետո։ 1909 թվականից խաղացել է Ե. Շահենի «Ազատ թատրոն» խմբում, իսկ 1910 թ.՝ Չարիֆյանի խմբում։ Հետագայում խաղացել է Փափազյանի Հայ Դրամատիկ, Ա. Պենկլյանի օպերետային և այլ թատերախմբերում։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ 1918 թ. Մ. Չանանի և այլ դերասանների հետ հիմնադրել են Պոլսո հայ դրամատիկ թատերախումբը, որի գործուն անդամներից է եղել։ Այդ խմբում նրա կատարած դերերից են՝ Նալբանդ Ոսկան («Չար ոգի»), Հայրապետ («Նամուս»), Քիլոնիտես («Հո երթաս»), Պոլոնիուս («Համլետ»), իսկ օպերետային ներկայացումներում կատարած դերերից են՝ Բենուա («Քլերեթ»), Լորիս («Մամզել Նիթուշ»), Քեոսե Չաքար («Քեոսե Քեհյա») և այլն։ Վ. Փափազյանի և Մ. Չանանի հետ 1922 թ. եկել է Կովկաս, մեկ թատերաշրջան Սուխումում, Բաթումում խաղալուց հետո մի քանի տարի աշխատել է Երևանում, ապա մեկնել է Իրան, այնտեղից՝ Իրաք, Սիրիա, Լիբանան։ Հետագայում գործել է Կիպրոսում, Հունաստանում, Բուլղարիայում, Ամերիկայում, ամենուր կազմակերպել է ներկայացումներ, որոնցում գլխավոր դերերը կատարել է ինքը։ Գրել է մի քանի պիես, որոնցից տպագրվածներն են՝ «Մեծն Տիգրան», «Արտավազդ և Կլեոպատրա»։ Մյուսները բեմադրվել են սիյոնքահայ կենտրոններում, բայց մնացել են անտիպ։ 1966 թ. Բելգիայում հրատարակել է «Կյանքի մը 70 տարին» հիշողությունների Ա. հատորը, իսկ 1968 թ.՝ Բ. հատորը։

ՉԱՓՐԱՍՏՃՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (ԵՐԱՆՈՍ) (1846—1907).— Դերասան, պարուսույց։ Ծնվել է Բուխարեստում (Ռումինիա)։ Կրտսեր որդին է Գևորգ Չափրաստճյանի։ Փոքր հասակից տեղափոխվել է Կ. Պոլիս, որտեղ ստացել է կրթություն, աշխատել է որպես կեղծամ պատրաստող։ Այդ զբաղմունքի բերումով էլ կապեր է հաստատել օտար թատերախմբերի հետ, միաժամանակ հետևել է եվրոպական պարերին։ 1869-ին հիմնել է պարի մասնավոր դպրոց։

Նույն տարվանից խաղացել է Հ. Վարդովյանի «Օսմանյան թատրոնում», միաժամանակ եղել խմբի պարուսույցը տասը տարի։ Այդ խմբում կատարել է հիմնականում կատակերգակ դերեր, ինչպես՝ Ժան («Ժամագործի գլխարկը»), Ջեզար («Թղթե վզնոցով սիրահարը»), Ծառա Ալեքսան («Համեստության վարձատրությունը»), Դոն Վուալո («Երկու խուլեր») և այլն։ 1878 թ. Աստղիկի և Սիրանույշի հետ մեկնել է Ադրիանապոլիս, տվել ներկայացումներ։ Ապա խաղացել է Ս. Պենկլյանի օպերետային խմբում, կարևոր դերերով մասնակցել է Տ. Զուլաբյանի, Լրբոքի, Օֆենբախի օպերետներին՝ Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Ադրիանապոլսում, Կահիրեում, Ալեքսանդրիայում։ Օպերետային դերերից են՝ Այաքս («Գեղեցկուհի Հելենն»), Վելի («Քնոսե Քեհյա»), Գեորգ («Արիֆի խարդախությունը»), Ճինկյոզ («Լեպելեպիճի Հորհոր աղա») և այլն։ Հետագայում մոտ տասը տարի խաղացել է Մ. Մնակյանի «Օսմանյան դրամատիկ» թատերախմբում։

ՉԱՔՄԻՇՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ (ծն. 1906).— Երաժշտագետ, խմբավար. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Միջնակարգ և բարձրագույն կրթությունն ստացել է Երևանում. 1941 թ. ավարտել է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը, 1960 թ.՝ Հեռակա մանկավարժական ինստիտուտը։ Որպես երգիչ և գեղարվեստական ղեկավարի օգնական՝ աշխատել է Հայաստանի պետական երգչախմբում, որպես խմբավար՝ Երաժշտական կոմեդիայի թատրոնում և ռադիոյում, որպես տնօրեն՝ Հանրապետական ժողովրդական ստեղծագործության տանը։ Դեռևս 1930 թ. Լենինականում կատարել է Սաթոյի դերերգը «Անուշ» օպերայում, իսկ Երաժշտական կոմեդիայի թատրոնում (1943)՝ Սաթոյի («Ուշ լինի, նուշ լինի»), Էմիլի («Ռոզ-Մարի»), Ոստիկանապետի («Կարմեն») դերերգերը։ Մամուլում տպագրել է երաժշտագիտական հոդվածներ։ Շարա Տալյանի հետ կազմել է մի «Երգարան» (Երևան, 1966)։ 1971 թ. տպագրել է իր կազմած «Միրված երգեր» և «Երգարան» ժողովածուները։ Գրել է մի շարք երգեր, ինչպես՝ «Հայաստանի աղջիկները» (խոսք՝ Շիրազի), «Երգեմ ու երգեմ» (խոսք Գ. Սարյանի) և այլն։ Ունի ժողովրդական երգերի մշակումներ՝ «Կայնի գամ», «Աղջի Մարան», «Վալվարա ջուրը սառն ա» և այլն։

ՉԱՔԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ (ծն. 1908).— Մանրանկարիչ, փորագրող։ Ծնվել է Թուրքիայում։ 1922 թ. տեղափոխվել է Հունաստան, այնտեղից՝ Բուլղարիա, որտեղ ստացել է կրթությունը, հետևել նկարչության։ Սովորել է Սոֆիայի պետական ակադեմիայում։ Զբաղվել է մինիատյուրի սրբանկարչությամբ։ Հայկական և բուլղարական եկեղեցիների համար նկարել է սրբապատկերներ։ 1930 թ. տեղափոխվել է Ֆրանսիա, հետևել Փարիզի էկոլ դե Լուվրի գեղարվեստի դասընթացներին։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին մասնակցել է ֆաշիզմի դեմ մղված պայքարին, որպես դիմադրական շարժման գործուն մասնակիցներից։ Մի քանի տարվա ընդմիջումից հետո, 1960-ական թվականների սկզբներից մղվել է դեպի հայ մանրանկարչությունը, ընտրելով փայտափորագրության բնագավառը։ Պատրաստել է փայտի վրա փորագրված հիանալի գործեր, որոնք ցուցադրվել են Փարիզում՝ իր անհատական ցուցահանդեսում և արժանացել են ֆրանսիական մամուլի բարձր գնահատականը։ Նույն գործերը 1970 թ. ցուցադրվել են Լոնդոնում։ Դրանց համար հիմք են ծառայել 9—16-րդ դարերի հայ մանրանկարչության գլուխգործոցները, այդ թվում՝ Թորոս Ռոսլինի գործերը, Էջմիածնի 981 թ. հայտնի Ավետարանը և այլն։

ՉԵՐՈՏԱՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ (ծն. 1918).— Կոմպոզիտոր, երաժշտագետ, դաշնակահարուհի, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1965)։ Ծնվել է Դոնի Ռոստովում, որտեղ ստացել է երաժշտական նախնական և միջնակարգ կրթություն։ 1943 թ. ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիայի ստեղծագործական և դաշնամուրային ֆակուլտետներ (Ք. Ս. Քուշնարյանի և Մ. Յա. Խայֆինինի դասարաններ)։ Նույն տարում տեղափոխվել է Երևան։ 1943—1947 թթ. երաժշտական տեսական առարկաներ է դասավանդել Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, իսկ 1947-ից մինչև այժմ բալմաձայնության իր մշակած հատուկ դասընթացն է կարդում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում՝ 1968-ից դոցենտի, 1977-ից՝ պրոֆեսորի աստիճանով։ Հորինել է տարբեր ժանրի բազմաթիվ գործեր,

որոնցից են՝ «Հայաստան» կանտատ պոեմը՝ սիմֆոնիկ նվագախմբի և երգչախմբի համար (1947), «Տոնական»՝ սիմֆոնիկ պատկերներ (1950), «Կոնցերտ դաշնամուրի համար՝ նվագախմբի հետ» (1980), «Դաշնամուրային տրիո» (1945), «Դաշնամուրային սոնատ» (1943), պրելյուդներ և ֆուգեր՝ հայկական լադերով (1979), «Բազմաձայնության ալբոմ» (1972), «Վեց պրելյուդներ» (1948), «Երեք կոնցերտային էտյուդ» (1963), «Վարիացիաներ հայկական ժողովրդական թեմաներով» (1939), նաև բազմաթիվ ռոմանսներ, երգեր, պիեսներ՝ տարբեր գործիքների համար, հայ ժողովրդական երգերի մշակումներ և այլն։ Գրել է երաժշտություն՝ կինոֆիլմերի համար։ Նրա ստեղծագործությունների մեծ մասը տպագրվել է, վերցվել ձայնապնակների վրա, կատարվում են Խորհրդային Միության և արտասահմանյան տարբեր քաղաքներում։ Գրել է երաժշտագիտական մի շարք աշխատություններ, որոնցից են՝ «Բազմաձայնությունը Արամ Խաչատրյանի ստեղծագործություններում» (Երևան, 1969), «Բազմաձայնության նոր գպրոցի հիմնադիրը» («Ք. Ս. Քուշնարով» ժողովածու, Մ—Լ, 1967), «Արամ Խաչատրյանի պոլիֆոնիկ լեզուն» («Արամ Խաչատրյան» ժողովածու, Երևան, 1972, արտատպվել է Մոսկվայում, 1975 թ., ֆրանսերեն թարգմանություններ՝ Մոսկվա, 1981) և այլն։ Հեղինակել է գիտամեթոդական ձեռնարկներ, ինչպես՝ «Պոլիֆոնիայի քրեստոմատիա՝ հայ դասական և ժամանակակից երաժշտության նմուշներով» (Երևան, 1981)։ Առաջինը Հայաստանում ստեղծել է ուսումնական մեթոդական ձայնապնակներ՝ պոլիֆոնիա սովորողների համար (1978)։

ՉԵՄԲԵՐՋԻ ՆԻԿՈԼԱՅ (1903—1948).— Կոմպոզիտոր. Բաշկիրական ԻԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1944)։ Ծնվել է Ցարսկոյե սելոյում (այժմ՝ Պուշկինո), Կարապետ Չեմբիրջյանի ընտանիքում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Մոսկվայի կոնսերվատորիայում։ Ավարտելուց հետո աշխատել է նույն կոնսերվատորիայում։ Եղել է 1925 թ. Մոսկվայի կոնսերվատորիայի կոմպոզիտորների ուժերով ստեղծված «Պրոկոլ» ստեղծագործական կոլեկտիվի անդամներից, մասնակցել է «Հոկտեմբերի ալիքով» կոլեկտիվ ստեղծագործության հորինման աշխատանքներին, Հիմնականում ապրել և գործել է Մոսկվայում, մի քանի տարի էլ Հայաստանում և Բաշկիրիայում։ Գրել է տարբեր ժանրի բազմաթիվ երկեր, ինչպես «Միհեռնան» օպերան, որը բեմադրվել է Ուֆայում, 1942 թ., «Դրեմովիլի երազը» մանկական օպերան (1943), «Հայաստան» պոեմը (1944), «Սիմֆոնիետա» (1947) սյուիտներ, կոնցերտ՝ ջութակի և նվագախմբի համար, քայլերգեր, «Հայկական երգեր», ռոմանսներ և այլն։

ՉԵՌԿՅՈՒՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ (1884—1915).— Բանաստեղծ։ Ծնվել է Տրապիզոնի գավառի Գյումյուշխանա գյուղաքաղաքում։ Կրթությունն ստացել է Կ. Պոլսի Պերպերյան դպրոցում, ավարտել 1907 թ.։ Որպես ուսուցիչ աշխատել է նույն դպրոցում։ 1910—1912 թթ. եղել է Եվրոպայում (Իտալիա, Հոլանդիա, Ֆրանսիա)։ Գրական առաջին փորձերը կատարել է 1900-ական թվականների կեսերից, պոլսահայ մամուլում տպագրելով արձակ երկեր։ 1911 թ. Կ. Պոլսում հրատարակել է «Հայրենի ձայներ» պատմվածքների ժողովածուն։ 1911—1912 թթ. գործակցել է Միքայել Շամտանճյանին՝ «Ոստան» գրական հանդեսի խմբագրման գործում։ Այդ հանդեսի էջերում տպագրել է ինքնուրույն և թարգմանական երկեր։ Թարգմանություններից են Մոպասանի «Ճարպագունդը», Լ. Անդրեևի «Կարմիր ծիծաղը»։ 1913 թ. Կ. Պոլսում տպագրել է իր լավագույն գործը՝ «Վանքը» վիպակը, որը հետագայում, 1933 թ. վերահրատարակվել է Փարիզում, «Հերոսը» վիպակի հետ մի հատորում։ «Վանքը» հրատարակվել է նաև Երևանում, Պետհրատի կողմից։

ՉԵՌՄԼԵԿՃՅԱՆ ԱՐՇԱԿ (1880—1930).— Երաժիշտ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Աշակերտել է ականավոր երաժիշտ կատարողների, նվագել է ուդ, քեմանչե, քանոն և վայելել է լայն ժողովրդականություն։ Երկար տարիներ որպես երաժշտության դասատու պաշտոնավարել է թուրքական և հայկական դպրոցներում։ Հեղինակել է երաժշտական բազմաթիվ գործեր՝ բեշրեֆներ, սեմայիներ և այլն։

ՉԵՌՄԼԵԿՃՅԱՆ ՊԵՏՐՈՍ (1785—1840).— Երաժիշտ, ջութակահար։ Ծնվել է Կ. Պոլսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է երաժշտագետ Համբարձում Լիմոնճյանի մոտ, համարվել նրա լավագույն աշակերտներից։ Մեծ համբավ է ձեռք բերել որպես ջութակահար։

Նվագել է պալատական շրջանակների համար, հայ ամիրաների խնջույքներում։ Ունեցել է հասուկ արվեստանոց-դրասենյակը, որտեղ ջութակի դասեր է տվել բազմաթիվ աշակերտներին։ Հետագայում ղեկավարել է Սկյուտարի ս. Խաչ եկեղեցու դպրաց դասը, ուսուցանելով Հ. Լիմոնճյանի մեթոդով և խազերով։

ՉԵՈՄԼԵԿՃՅԱՆ ՍԻՄՈՆ (1870—1929).— Հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է ծննդավայրի Պալաթ թաղամասի հայկական դպրոցում, ավարտելուց հետո, 1890-ական թվականների սկզբներից նվիրվել է հրապարակախոսության։ Աշխատակցել է պոլսահայ տասնյակ թերթերի («Ճերմտեի շարքիե», «Մանղոմեի էֆքյար», «Բյուզանդիոն», «Մաղիկ», «Սուրհանդակ», «Ժողովուրդի ձայնը», «Ժամանակ», «Վերջին լուր» և այլն)։ Խմբագրել է «Ժամանակ» օրաթերթը, որի էջերում ունի հարյուրավոր հոդվածներ՝ տարբեր հարցերի շուրջ։ Առանձին գրքով հրատարակել է «Վաճառականին ձեռագիրքը»։ Ֆրանսերենից թարգմանել է ծավալուն վեպեր, որոնք լույս են տեսել պոլսահայ մամուլում։ Հրապարակախոսական հոդվածների մեծ մասը ստորագրել է Հայր Վարդան, Հաճի Օգսեն, Սիմոն ծերունի ծածկանուններով, իսկ թարգմանությունները՝ Շիրայր Շիրակացի։

ՉԵՈՐՏԻՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ (1877—1943).— Ճարտարապետ։ Ծնվել է Կեսարիայի գյուղերից Ջյուղյունում (Թուրքիա)։ Նախնական կրթությունն ստացել է Թոմարզայի ս. Աստվածածին վանքում, ապա սովորել է Տարսոնի Սենտ Պոլ կոլեջում։ Հետագայում մեկնել է Ամերիկա, Կոլումբիա համալսարանում հետևել ճարտարապետության, ավարտել 1911-ին։ Նրա նախագծերով Ամերիկայի տարբեր քաղաքներում կառուցվել են անհատական և հասարակական օգտագործման բազմաթիվ շենքեր։ Ունեցել է գրական-հրապարակախոսական գործունեություն։ Պարզման ծածկանունով աշխատակցել է ամերիկահայ մի շարք պարբերականների։ Անգլերենից կատարել է թարգմանություններ, որոնք տպագրվել են մամուլում։

ՉԵՊՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ծն. 1927).— Դերասան, Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1972)։ Ծնվել է Դոնի Ռոստովում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի դերասանական ֆակուլտետն ավարտել է 1948-ին։ Մեկ տարի աշխատել է Շահումյանի շրջանի դրամատիկ թատրոնում, 1949—1954 թթ.՝ Երևանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում, իսկ 1954-ից՝ Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնում։ Տարբեր թատրոններում նրա կատարած լավագույն դերերից են՝ Նիկո («Ամուսնաբույժն արևելյան»), Առլեկին («Վենետիկյան երկվորյակներ»), Միքայել («Էլի մեկ զոհ»), Սեյրան («Նամուս»), Պարիս («Ռոմեո և Ջուլիետա»), Պալևոյ («Բենկում»), Գանյա Իվոլգին («Ապուշը») և այլն։ Նկարահանվել է «01—99», «Երաժշտախմբի տղաները», «Սաննիկովի երկիրը» և այլ ֆիլմերում։

ՉԵՐԱԶ ՄԻՆԱՍ (1852—1929).— Գրող, հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Կ. Պոլսի Խասգյուղ թաղամասում։ Սովորել է ծննդավայրի Ներսիսյան, ապա՝ Նուպար-Շահնազարյան վարժարաններում։ Ավարտելուց հետո նվիրվել է ուսուցչական և խմբագրական աշխատանքի։ 1870 թ. խմբագրել է «Երկրագունտ» հանդեսը, ընտրվել ուսումնական խորհրդի անդամ։ Եղել է 1876 թ. Կ. Պոլսում հիմնադրված «Արարատյան» ընկերության գործուն անդամներից։ 1878 թ. որպես քարտուղար ուղեկցել է Բեռլին մեկնող հայկական պատվիրակությանը, որը գլխավորել է Խրիմյան Հայրիկը։ Պատվիրակության ձեռնունայն վերադարձից հետո լույս է ընծայել «Ինչ շահեցանք Բեռլինի վեհաժողովեն» և «Հայաստան և Իտալիա» գրքույկները (1879)։ 1886—1889 թթ. վարել է Կ. Պոլսի Կենտրոնական վարժարանի տնօրենի պաշտոնը։ Համիդյան հալածանքներից խուսափելով 1889 թ. մեկնել է Լոնդոն, որտեղ հիմնել է «Լ՝ Արմենիե» ֆրանսերեն պարբերականը, նպատակ ունենալով արծարծել հայկական հարցը։ 1896 թվականին թերթը տեղափոխել է Փարիզ, շարունակել պայքարը Թուրքական բռնապետության դեմ։ 1908—1910 թթ.՝ օսմանյան սահմանադրության տարիներին Կ. Պոլսում գործելուց հետո, կրկին մեկնել է արտասահման, իսկ 1918 թվականից ապրել է Փարիզում։ Դեռևս 1870-ական թվականներից պոլսահայ մամուլում տպագրել է բանաստեղծություններ, արձակ էջեր, որոնք հետագայում զետեղել է «Գրական փորձեր» ժողովածուում (Կ. Պոլիս, 1874)։ Հրատարակել է նաև նովելների մի ժողովածու ֆրանսերեն «Արևելյան նովելներ» խորագրով։ Առանձին գրքերով հրատարակած մյուս աշխատություններն են՝ «Ազգային դաստիարակություն» (Կ. Պոլիս, 1872), «Գրիչ և սուր» (1881), «Հայ բանաստեղծներ» (ֆրանսերեն), «Կենսագրական մուսեոններ» (Փարիզ, 1928) և այլն։ Հայկական հարցին նվիրված բազմաթիվ հոդվածներ է տպագրել օտար մամուլում։

ՉԵՐԱԶ ՀՈՎՍԵՓ (1840—1913).— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է նախնական կրթությունը։ Բեմական ասպարեզ է մտել 1860-ական թվականների սկզբներին։ Խաղացել է հայ առաջին պրոֆեսիոնալ թատերախմբում՝ «Արևելյան թատրոնում», աչքի ընկնելով մասնավորապես կատակերգակ դերերում։ Ստեփան Էջշյանի հետ 1863 թ. մեկնել է Զմյուռնիա, մասնակցել «Արևելյան թատրոնի» այդ քաղաքում տված բոլոր ներկայացումներին և արժանացել մամուլի դնահատանքի։ 5—6 տարի խաղալուց հետո՝ թողել է բեմը և զբաղվել առևտրով։

ՉԵՐՉՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ (1828—1901).— Երաժշտագետ, մշակութային գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է հայտնի երաժշտագետ Արիստակես Հովհաննիսյանի մոտ։ Հմտացել է մասնավորապես արևելյան և հայկական եկեղեցական երաժշտության մեջ։ 1843—1848 թթ. եղել է Կ. Պոլսի Պերա թաղամասի հայոց եկեղեցու երաժշտապետ։ Հետագայում նույն պաշտոնը վարել է այլ եկեղեցիներում և դպրոցներում, ամեցնելով մեծ թվով երաժիշտներ։ Երկար տարիներ պաշտոնավարել է Թուրքիայի գավառական քաղաքներում (Կաստեմոնի, Սիվրի Հիսար, Աֆիոն Կարահիսար, Բանդրմա, Ադաբազար և այլն)։ Նկատելի դեր է կատարել գավառական այդ վայրերում հայ եկեղեցական երաժշտության մասնագետներ պատրաստելու գործում։

ՉԵՐՔԵԶ ՔՐԻՍՏՈՖԻ (1872—1955).— Ճարտարապետ։ Ծնվել է Բուխարեստի գյուղերից մեկում (Ռումինիա)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Միլանում (Իտալիա)։ Երեք տարի սովորելուց հետո վերադարձել է Բուխարեստ, որտեղ գործել է մինչև կյանքի վերջը։ Նրա նախագծերով Բուխարեստում և Ռումինիայի այլ քաղաքներում կառուցվել են անհատական և հասարակական բազմաթիվ շենքեր, որոնցից մի քանիսը զարդարում են Ռումինիայի մայրաքաղաքը։ Դրանցից է Դոկտոր Մինովիչի հայտնի վիլլան, շենքեր՝ Ռեմուս, Փորումպարու, Մոտրովկա և այլ փողոցներում։ Համարվում է ռումեն ազգային ոճի ճարտարապետության լավագույն ներկայացուցիչներից։ Մագումով հայ է։

ՉԵՐՔԵԶՅԱՆ ԲԱԼ (ծն. 1924).— Նկարիչ։ Ծնվել է Բուդապեշտում (Հունգարիա), հունգարահայ Չերքեզյան ընտանիքում։ Նախնիները այնտեղ են գաղթել Անի քաղաքից։ Մասնագիտական կրթությունն ստացել է Բուդապեշտի գեղարվեստների ակադեմիայում, ավարտել է 1953 թ.։ Զբաղվել է հիմնականում գրքերի նկարազարդումով։ Նկարազարդել է հունգարերեն կամ այլ լեզուներով հրատարակված ավելի քան 200 գիրք, որոնցից մի քանիսի համար արժանացել է մրցանակների։ 1953 թ. ստացել է «Ոսկե դափնի», իսկ 1955 թ.՝ Նիվո մրցանակը։ Հունգարական մամուլում տպագրել է հարյուրավոր գրաֆիկ գործեր, համարվել է գրաֆիկայի իշխան՝ Հունգարիայում։ 1960-ական թվականների վերջերից զբաղվել է որսորդական նկարչությամբ։ 1969 թ. բաց է արել որսորդական իր նկարների առաջին ցուցահանդեսը, ունեցել փայլուն հաջողություն։ Մի շարքում գնվել են բոլոր նկարները, որոնցից 2-ը հունգարական կառավարության կողմից։ Այդ նկարներն այժմ զարդարում են պառլամենտի որսորդական շքեղ դահլիճը։ Մեծ թվով նկարներ էլ գնվել են Գերմանիայի կողմից։ 1970 թ. նրան հրավիրել են Փարիզ՝ մասնակցելու համաշխարհային ցուցահանդեսի։

ՉԵՐՔԵԶՅԱՆ ԼԵՎՈՆ (ծն. 1927).— Ճարտարապետ. Հայկական ԽՍՀ վաստակավոր ճարտարապետ։ Ծնվել է Թբիլիսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, որի ճարտարապետության բաժինն ավարտել է 1959-ին։ Նույն տարվանից աշխատել է «Հայպետնախագիծ» ինստիտուտում, 1979-ից որպես արվեստանոցի ղեկավար։ Նրա նախագծերով Երևանում, Դիլիջանում, Գագարյում, Սևանի ափին, Արզնիում, Աբովյանում և այլուր 1964—1981 թթ. կառուցվել են առողջարաններ, պանսիոնատներ, մշակութային և վարչական կենտրոններ, Հայրենական մեծ

պատերազմում զոհված մարտիկների հուշարձաններ՝ Օձունում, Քանաքեռում։ Համահեղինակ է Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի նախագծի (1981)։ Ունեցել է նաև մանկավարժական գործունեություն։ 1966—1972 թթ. դասավանդել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում։

ՉԵՐՔԵԶՅԱՆ ՀՈՎՍԵՓ *(1813—1865)*.— Գրող, հրապարակախոս, կրթական գործիչ։ Ծնվել է Աստրախանում։ Կրթությունն ստացել է Լաղարյան ճեմարանում և Մոսկվայի համալսարանում։ Ավարտելուց հետո զբաղվել է ուսուցչությամբ։ Ուսանելու տարիներից գրել է գրաբար բանաստեղծություններ, որոնցից նմուշներ տպագրվել են «Մուղալք Արարատեան» ժողովածուում (Մոսկվա, 1829)։ 1860-ական թվականների սկզբներից աշխատակցել է արևելահայ մամուլին։ «Մեղու Հայաստանի», «Ճռաքաղ», «Մասյաց աղավնի» պարբերականների էջերից կրթության պայքար է մղել «Հյուսիսափայլի» ու նրա խմբագիր Ստեփանոս Նազարյանցի դեմ, երբեմն հարձակման թիրախ դարձնելով նաև Միք. Նալբանդյանին։ Եղել է մոլի պահպանողական։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Սկզբունք քրիստոնեական վարդապետության» (Մոսկվա, 1833), «Դասագիրք հայոց պատմության» (Թեոդոսիա, 1861)։

ՉԵՐՔՈՉ ՕՂԼԻ (ՍԿԻՏԻՉ) *(1763—1845)*.— Աշուղ։ Ծնվել է Աստրախանում։ Մասնագիտությամբ եղել է քարտաշ։ Հորինել ու կատարել է հայերեն բազմաթիվ երգեր, որոնք մեծ ժողովրդականություն են վայելել Աստրախանում և նրանից դուրս։ Նրա երգերից մեկը նոտաներով լույս է տեսել Աստրախանում հրատարակված «Աղիատսկիյ մուզիկալնի ժուռնալ»-ի առաջին համարում, 1816 թ. և հետագայում արտատպվել է Գրիգոր Գրիգորյանի «Սոխակ Հայաստանի» երգարանում, 1875 թ., նաև Գ. Լևոնյանի «Հայ աշուղներ» գրքում (Ալեքսանդրապոլ, 1892)։

ՉԵՔԻՋՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(ծն. 1929)*.— Դիրիժոր-խմբավար. ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1978). ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր։ Ծնվել է Իստանբուլում (Թուրքիա)։ Հայկական կրթությունն ստացել է ծննդավայրի Մխիթարյանների վարժարանում, ապա սովորել է ֆրանսիական Սեն Միշել կոլեջում, իսկ մասնագիտական ուսումը ստացել է Իստանբուլի պետական կոնսերվատորիայում, 1951—1953 թթ. շարունակել է Փարիզի երաժշտական բարձրագույն դպրոցի դիրիժորական բաժնում, աշակերտել Ժան Ֆուրնեին։ 15 տարեկանում եղել է Իստանբուլի պետական երգչախմբի ղեկավարի օգնականը, իսկ ուսման շրջանն ավարտելուց հետո դարձել է նույն երգչախմբի գեղարվեստական ղեկավար և առաջին դիրիժոր։ 1947 թվականից ելույթներ է ունեցել երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի հետ, վարել է սիմֆոնիաներ, նախերգանքներ։ 1961 թ. տեղափոխվել է Խորհրդային Հայաստան, նշանակվել Հայաստանի պետական երգչախմբի գեղարվեստական ղեկավար, սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր։ 1961 թ. նոյեմբեր ամսին Երևանի Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում ղեկավարել է Կոմիտասի ստեղծագործությունները, Բեթհովենի 7-րդ սիմֆոնիան և այլ գործեր։ Պետական երգչախումբը հետագայում աստիճանաբար ընդլայնվեցրել է ծրագիրը, ներառել արևմտաեվրոպական դասական հեղինակների (Շուման, Մենդելսոն, Բրամս, Հենդել, Սեն Սանս, Վերդի, Մասկանի և ուրիշներ) ստեղծագործությունները։ Նրա ղեկավարած այդ երգչախումբը ելույթներ է ունեցել Խորհրդային Միության և արտասահմանյան բազմաթիվ քաղաքներում, արժանանալով համաշխարհային ճանաչման։ Այդ խմբի կատարմամբ պատրաստված «Հայաստանի երգեր» խորագիրը կրող 12 ձայնասկավառակները Փարիզում շահել են «Գրան պրի» մրցանակ։ 1965 թ. նրան շնորհվել է Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստի կոչում, իսկ 1978 թ.՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստի։ Տարբեր ժամանակներում վարել է Խորհրդային Միության սիմֆոնիկ նվագախումբը, նաև՝ Լենինգրադի Մրավինսկու նվագախումբը, Մոսկվայի և Լենինգրադի ֆիլհարմոնիաների, Կիևի, Ռիգայի, Տալլինի, Վիլնյուսի, Մինսկի, Լվովի, Օդեսայի, Բրիլիսիի, Բաքվի և այլ քաղաքների սիմֆոնիկ նվագախմբերը։ Հայաստանի պետական երգչախումբը նրա ղեկավարությամբ ելույթներ է ունեցել 21 տարբեր լեզուներով, կատարել ավելի քան 200 ստեղծագործություն։ Հեղինակել է մի շարք երգեր՝ սիմֆոնիա, մոտետ (երգչախմբի և նվագախմբի համար), «Մեկիկ մեկիկ», «Իմ մայրը», հարսանեկան խմբերգեր՝ 15 մասից

ունի ժողովրդական մի շարք երգերի մշակումներ՝ «Կռուուկեսս» և այլն։

ՉՔՉՅԱՆ ԴԵՂՈՒՆԻ *(ծն. 1929)*.— Կոմպոզիտոր. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Զայկովսկու անվան երաժշտական դպրոցում և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որի գիտական-ստեղծագործական բաժինն ավարտել է 1953 թ.։ Գրել է տարբեր ժանրի բազմաթիվ երգեր, որոնցից են «Կոնցերտ ձայնի համար», «Կոնցերտ ջութակի համար», «Բալետային սյուիտա», սիմֆոնիկ պատկերներ, սիմֆոնիկ նախերգանքներ, գործիքային սոնատներ՝ շեփորի և դաշնամուրի, թավջութակի և դաշնամուրի համար, խմբերգային կանտատներ՝ «Իմ Հայաստան», «Տարվա եղանակներ», պոեմներ՝ «Զոհված զինվորին», «Հայոց ծառը», «Հայկական խորհրդանշաններ», «Հինգ ռոմանս Շիրազի խոսքերով» (Երևան, 1956, Մոսկվա, 1961), «Հինգ ռոմանս Չարենցի խոսքերով» (Մոսկվա, 1961), «Հինգ ռոմանս Կապուտիկյանի խոսքերով» (Մոսկվա, 1966, 1970), «Հինգ ռոմանս Պ. Սևակի խոսքերով» (1972), «Հինգ երգ» (Երևան, 1966), «Ռամզոտ» (Երգերի շարք, 1972)։ Գրել է մանկական բազմաթիվ երկեր, որոնցից հրատարակվածներն են՝ «Մանկական էջեր» (Երևան, 1958), «Պիեսներ երեխաների համար» (1958), «Մանկական երգեր» (1959), «Պիեսներ դաշնամուրի համար» (1969)։ Իր երկերի կատարմամբ հանդես է եկել Միության տարբեր քաղաքներում, նաև Լեհաստանում, Լիբանանում, Սիրիայում, մասնակցել է միութենական և համաշխարհային մրցույթների, արժանացել մրցանակների։ Նրա «Արի լույս» սիմֆոնիկ նախերգանքը 1968-ին արժանացել է առաջին մրցանակի համամիութենական մրցույթում և կատարվել է տարբեր երկրներում։ Ունեցել է մանկավարժական գործունեություն։ Հեղինակակից է հանրակրթական դպրոցների երաժշտության դասագրքի։

ԿՈՉԱՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(1898—1974)*.— Կրթական գործիչ. Հայկական ԽՍՀ վաստակավոր ուսուցիչ։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում։ Ունեցել է կրթական մանկավարժական հիանալի գործունեություն։ Վարել է ռադիոդասընթացներ, հեռուստատեսային հանրամատչելի հաղորդումներ աշակերտության համար։ Առանձին գրքերով լույս ընծայած գործերից են՝ «Զվարճալի աշխարհագրություն» (Երևան, 1959), «Աշխարհագրական հանելուկներ, խաղեր» (1977)։ Պարգևատրվել է Լենինի և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով։ Հայրն է Դեղունի Չթչյանի։

ՉՔՉՅԱՆ ՍԱՀԱԿ *(1882—1957)*.— Հրապարակախոս, թարգմանիչ։ Ծնվել է Վանում։ Կրթություն ստացել է ծննդավայրի հայկական և ամերիկյան դպրոցներում։ 1895—1896 թթ. կոտորածներից հետո մեկնել է Պարսկաստան, այնտեղից եկել Կովկաս, մեկ տարի սովորել Երևանի թեմական դպրոցում, ապա՝ էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որտեղ աշակերտել է ականավոր հայագետներ Մ. Աբեղյանին, Հ. Աճառյանին, Հ. Մանանդյանին։ 1902 թվականին ավարտել է ճեմարանի դասարանական բաժինը։ 1905 թ. մեկնել է Ամերիկա, շարունակել ուսումը Բոստոնի Տեխնոլոգիական ինստիտուտում և Չիկագոյի համալսարանում։ Զբաղվել է թարգմանություններով, օգնել է Ալիս Բիլեուլին՝ հայերենից նրա կատարած թարգմանություններում։ Գեղարվեստական երկերով և հրապարակախոսական հոդվածներով աշխատակցել է արևելահայ և արևմտահայ մի շարք պարբերականների («Արեգ», «Բանվոր», «Փյունիկ», «Պայքար» և այլն)։ 1915 թվականին հրատարակել է գրպանի «Վազգեն» երգարանը։ Ամերիկայում երկար տարիներ զբաղվել է թարգմանությամբ։ Թարգմանել է Բասիլիոդրանատ Տագորի «Պարտիզպանը», Օմար Խայամի «Քառյակները», որ բացառիկ շքեղ տպագրությամբ և նկարիչ Դարվիշի գունավոր նկարազարդումներով հրատարակել է Լոս Անջելեսում, 1953 թ.։

ՉԹԻՈՒՆԻ (ՉԹՃՅԱՆ) ՏԻԳՐԱՆ *(1861—1960)*.— Բանահավաք, բանաստեղծ։ Ծնվել է Վանում, որտեղ ստացել է կրթությունը։ Երեք տարի էլ սովորել է Կարնո Սանասարյան վարժարանում, ավարտելուց հետո կարճ ժամանակ զբաղվել է ուսուցչությամբ։ Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո, 1910 թ. ընտանիքով տեղափոխվել է Պոլիս, որտեղ աշխատակցել է պոլսահայ մամուլին, գրելով գեղագեղեցիկ աղգագրական նյութերի մասին։ Օգտագործել է Վրույր, Շեմիր, Ես, Հեռագիր ծածկանունները։

1923 թ. մեկնել է Փարիզ, որտեղ ապրել է մինչև մահը։ Մամուլում տպագրել է հարյուրավոր հոդվածներ, մեծ մասամբ կապված ժողովրդական բանահյուսության հետ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Սասունց տուն» (Կ. Պոլիս, 1910), «Միրաքար աստղեր կամ Լեյլի Մեջնում» (Մարզվան, 1911), «Մայրենի աշխարհ» (Կ. Պոլիս, 1913), «Հուշիկք Հայաստանի» (Հայաստանի քարտեզներ, նկարներ) (Կ. Պոլիս, 1919), «Արևելյան խաղաշխարհ» (2 հատոր, Կ. Պոլիս, 1919), «Գողթան երգեր» (1920), «Միրերգ» (Վիեննա, 1922), «Պճինկո» (Բոստոն, 1929), «Բյուրակ, հազարակ» (պատմվածքներ, Փարիզ, 1942), «Զույգ սիրահարներ» (Փարիզ) և այլն։ Նրա ամենաստվար աշխատությունն է «Սասունական — Սասունցի Դավիթին յոթը ճյուղին տաղաչափյալ ամբողջական պատմությունը» բաղկացած 1168 էջից, ընդարձակ առաջաբանով։ Թողել է բազմաթիվ անտիպ երկեր, որոնցից են «Վանբարբառը» (2500 էջ), «Հերանթուրան», «Հայ բուսան», «Վանաշխարհ», «Արևելյան վիպաշխարհ» (հեքիաթներ), «Հայ քնար», «Անձեր ու անցքեր», «Հայ ավանդարան» և այլն։

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ (1910—1986).— Նկարիչ. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1960)։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Մասնագիտական կրթություն ստացել է Լենինգրադի Ի. Ռեպինի անվան գեղարվեստների ակադեմիայում։ 1931—1937 թթ. աշխատել է Երևանի առաջին պետական թատրոնում (այժմ՝ Գ. Սունդուկյանի անվան)՝ նախ որպես նկարիչ ձևավորող, ապա՝ գլխավոր նկարիչ։ 1938 թ. եղել է Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի հայկական տաղավարի գլխավոր նկարիչը, 1962—1967 թթ. Հայաստանի պետական պատկերասրահի դիրեկտոր, 1966-ից՝ Երևանի Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի գլխավոր նկարիչ։ Վերոհիշյալ թատրոններում նրա ձևավորումներով բեմադրվել են «Սեր և խարդավանք», «Պատվի համար», «Քաջ Նազար», «Օթելլո», «Պարտիզպանի շունը», «Քաղքենին ազնվական» և այլ պիեսներ։ 1938-ից մասնակցել է հանրապետական և համամիութենական ցուցահանդեսների։ Գեղանկարչական լավագույն գործերից են՝ «Փախստականներ», «Թախծոտ ժայռեր», «Ընթերցող աղջիկը», «Մտորումներ», «1915 թվականը», Ա. Գաբրիելյանի, Վ. Փափազյանի, Հ. Ստեփանյանի և այլոց դիմանկարները։

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ծն. 1918).— Նկարիչ։ Ծնվել է Կարսում։ Մասնագիտական կրթություն ստացել է Երևանում։ 1939 թ. ավարտել է Երևանի Գեղարվեստաարդյունաբերական տեխնիկումը, իսկ 1950 թ. Գեղարվեստական ինստիտուտը։ 1953 թ. մասնակցել է հանրապետական, հետագայում նաև միութենական ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Գետակ Մաղկաձորում», «Հովիվը ու հովվուհին», «Արոտավայրում», «Արոտի լեռը», «Խաղաղ երեկո», «Փողոց Օշականում» և այլն։

ՉԻԼԻՆԳԻՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1839—1923).— Հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ։ Ծնվել է Զմյուռնիայում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Մեսրոպյան վարժարանում, ավարտելուց հետո ինքնազարգացմամբ կատարելագործել է ֆրանսերենը, սովորել հունարեն, իտալերեն և այլ լեզուներ, ծանոթացել անտիկ և ժամանակակից դասական գրականության նմուշներին։ Գրական ասպարեզ է մտել 1860-ական թվականների սկզբներին հունարենից և ֆրանսերենից կատարած թարգմանություններով։ Հունարենից թարգմանել է «Ֆերդինանտս և վիտրիա» վեպը, ֆրանսերենից՝ Շատոպրիանի «Վերջին Աբենսերաժի արկածները» (հայատառ թուրքերեն)։ 1861—1867 թթ. Ա. Հայկունու հետ Զմյուռնիայում հրատարակել է «Մագիկ պարբերականը՝ առաջադիմական ուղղությամբ, միաժամանակ որպես ուսուցիչ աշխատել Մեսրոպյան վարժարանում։ Վերնախավի դեմ մղած սուր պայքարի հետևանքով հեռացվել է ուսուցչական պաշտոնից, 1865 թ.։ Հարկադրված «Մագիկը» տեղափոխել է Պոլիս, շարունակել պայքարը պահպանողական հոսանքի դեմ, որի հաջողվել է ի վերջո փակել տալ թերթը։ Վերադառնալով Զմյուռնիա, նվիրվել է թարգմանչության։ Նախ թարգմանել է Վ. Հյուգոյի «Թշվառներ» բազմահատոր վեպը, որը համարվում է հայ թարգմանական գրականության գոհարներից և հետագայում արժանացել է կրկին ապագրության։ Այդ թարգմանության առիթով նամակագրություն է ունեցել Վ. Հյուգոյի հետ։

Նույն այդ տարիներին թարգմանել է բազմաթիվ այլ վեպեր, ինչպես Լամարտինի «Ռաֆայելը», Ֆ. Սյուի «Մաթիլդը», Ժորժ Սանի «Օրիորդ Լաբենիքները», Ա. Պրևոյի «Մանոն Լեսկոն», Օ. Նոյի «Պարոն դը Կոմարը» և այլն, որոնք հետաքրքրությամբ ընթերցվել են ամբողջ մեկ հարյուրամյակ, մի քանիսը նաև վերահրատարակվել են։ 1881—1882 թթ. եղել է Կ. Պոլսում, իր տպավորությունները մաս-մաս տպագրել Մամուրյանի «Արևելյան մամուլում», ապա՝ 1883 թ. ամփոփել առանձին հատորի մեջ «Ուղևորություն ի Կոստանդնուպոլիս» խորագրով, 1880-ական թվականների կեսերից քաղաքական խստությունների պատճառով թողել է գրականությունը, զբաղվել իրավաբանությամբ։ 1920 թ. Զմյուռնիայում լույս է ընծայել «Վիպակներ և ցանուցիր գրվածքներ» ժողովածուն։

ՉԻԼԻՆԳԻՐՅԱՆ ԼԵՎՈՆ (1862—1932).— Երաժշտագետ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Երաժշտական կրթությունն ստացել է Նիկողոս Թաշճյանի մոտ։ Որպես երաժշտության ուսուցիչ աշխատել է Կ. Պոլսում և Զմյուռնիայում։ Ապա 12 տարի ծառայել է շոգենավային ընկերությունում։ 1896 թ. եկել է Կովկաս, մեկ տարի երաժշտություն դասավանդել Բաքվի հայկական դպրոցներում, ապա կրկին մեկնել է Զմյուռնիա, աշխատել երկար տարիներ։ Այստեղ նա հեղինակել ու ղեկավարել է եռաձայն պատարագը։ Նա է Կ. Պոլսի եկեղեցիներում մտցրել բազմաձայն երգեցողությունը, 1904 թ.։ Ստեղծել և ղեկավարել է Կ. Պոլսի Կենտրոնական վարժարանի երգչախումբը։ 1922 թ. մեկնել է Երուսաղեմ, աշխատել որպես երաժշտության ուսուցիչ։ Այնտեղ էլ տպրել է կյանքի վերջին տարիները։

ՉԻԼԻՆԳԻՐՅԱՆ ՊԵՍՏՈՒՄ-ԱՐԱՔՍԻ (1852—1882).— Դերասան-ուսուցիչ։ Ծնվել է Կ. Պոլսի Պերա թաղամասում, կրթությունն ստացել է ֆրանսիացի միսիոներների դպրոցում։ Բեմելի առաջին փորձը կատարել է փոքր հասակում, 1863—1864 թատերաշրջանում «Արևելյան թատրոնում». սակայն չի շարունակել։ 1867 թ. կենտրոնական մի տեղով երևացել է Նաումի թատրոնում, իսկ հաջորդ 1868—1869 թատերաշրջանից խաղացել է Ա. Վարդովյանի «Օսմանյան թատրոնում», ի դեպ բերելով դրամատիկ և կատակերգակ դերասանուհու լայն տվյալներ։ Իր բեմական արժանիքներով լուրջ մրցորդ է հանդիսացել խմբի պրիմադոննա Երանուհի Գարագաշյանի համար։ Լավագույն դերերից են համարվել Բամելան (Համանուն պիեսում), Լեոնի Պերոն («Կարծեցյալ հոմանուհի») և այլն։ Հաջողությամբ խաղացել է Մոլիերի կատակերգություններում. մամուլում բարձր է գնահատվել Անժելիքի դերը «Ժորժ Դանդենում»։ 1872-ից խաղացել է Ս. Պենկլյանի օպերետային խմբում, այդ խմբի հետ շրջագայել է մի շարք քաղաքներ։ Այդ շրջանի նրա դերակատարումներից գրվատանքով է խոսվել Հուտիթի մասին, որ նա կատարել է Ադրիանապոլսում, տեղական հրեական խմբի հետ, եբրայերեն լեզվով, հայերեն տառերով գրելով եբրայերեն տեքստը։ Աչքի է ընկել հայերենի և թուրքերենի ընտիր առոգանությամբ, արտաքին գեղեցկությամբ։

ՉԻԼՈՅԱՆ ՍԼԱՎԻԿ (1940—1975).— Բանաստեղծ, թարգմանիչ։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, ավարտել ռոմանագերմանական բաժինը։ Սովորել է հին ու նոր ֆրանսերեն։ Գրել է բանաստեղծություններ, որոնք տպագրվել են մամուլում։ Բնագրից թարգմանել է «Ռոլանդի երգը», Ժան Ռասինի «Էսթեր» և «Անդրոմաքե» չափածո ողբերգությունները, բանաստեղծություններ Վ. Հյուգոյից, Ժակ Բրելից։ 1971 թ. լույս է ընծայել Բորիս Վիանի բանաստեղծությունների ժողովածուն իր թարգմանությամբ։

ՉԻՐԱԽՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (1877—1914).— Նկարիչ։ Ծնվել է Նոր Նախիջևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիայում, որտեղ աշակերտել է Ռեպինին։ Վերադառնալով ծննդավայրը, զբաղվել է նկարչությամբ։ Ստեղծել է բազմաթիվ դիմանկարներ, բնանկարներ և կոմպոզիցիոն կտավներ։ Լավագույն գործերից են՝ «Կանայք երեխաներով», «Օգոստոս կայսեր վերադարձը Եգիպտոսից» և այլն։

ՉԻՖԼԻԿՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ (ծն. 1913).— Նկարիչ. Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ (1970)։ Ծնվել է Ախալցխայում (Վրացական ԽՍՀ)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում, ավարտել է 1936 թվականին և նույն տարվանից նկարչություն է դասավանդել Ախալցխայի հայկական դպրոցում,

միաժամանակ աշխատել է տեղի թատրոնում որպես նկարիչ-ձևավորող։ 1953 թ. նույն պաշտոնով տեղափոխվել է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնը, իսկ 1956 թվականից աշխատել է Երևանի հեռուստատեսության ստուդիայում որպես նկարիչ։ 1934 թվականից մասնակցել է ցուցահանդեսների՝ գեղանկարչական գործերով և թատերական ձևավորումներով։ Լավագույն գործերից են՝ «Նշենին», «Ցասման Մհերը», «Հերոսի վերադարձը», «Ախալցխայի աղջիկը» և այլն։ Կատարել է մոտ 300 բեմադրությունների և հեռուստատեսային հաղորդումների ձևավորումներ, որոնցից են՝ «Ավազակներ», «Քաջ Նազար», «Ոսկի քաղաք», «Սայաթ-Նովա», «Փարվանա»։ Գրել է «Անիծյալը», «Դիոգենես» և «Եվպատոր» պիեսները։

ՉՄՇԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ (1837—1915).— Դերասան, թատերական գործիչ։ Ծնվել է Թիֆլիսում, Մուշից այնտեղ գաղթած ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ս. Սարգիս եկեղեցու ծխական դպրոցում, ավարտելուց հետո սովորել է Թիֆլիսի Արքունական հոգաբարձական դպրոցում։ Որպես հոգաբարձ աշխատել է Կովկասի տարբեր քաղաքներում, մինչև 1862 թ.։ 1863 թվականից կապվել է թատրոնի հետ, այնուհետև մինչև կյանքի վերջը ծառայել հայ բեմին։ Եղել է արևելահայ թատրոնի սկզբնավորողներից ու կազմակերպողներից։ Բեմ է բարձրացել 1863 թ. հունվար ամսին, արևելահայ պրոֆեսիոնալ առաջին թատերախմբի կազմում և կատարել է Վարդան Մամիկոնյանի դերը «Նուշանիկ» պատմական ողբերգությունում։ Ապա, մի քանի այլ ներկայացումների մասնակցելուց հետո իր շուրջը համախմբելով խոստումնալից ուժերի (Մ. Ամրիկյան, Ա. Մանդինյան, Ա. Սուքիասյան և ուրիշներ) ստեղծել է մշակական խումբ, զարկ տվել բեմական արվեստի զարգացմանը, տեսական պայքար մղելով ռոմանտիկական խաղառաքի դեմ։ Հանդես է եկել Գ. Սունդուկյանի բոլոր կատակերգություններում, անմահանալով մասնավորապես Պեպոյի դերում, որը մնացել է անկրկնելի հայ թատրոնի պատմության մեջ։ Այդ տարիներին նրա կատարած մյուս դերերից են՝ Միքայել, Բրիլիանտով և Սուրաթով («Էլի մեկ զոհ»), Արշակ Բ (համանուն պիեսում), Կրիչինսկի («Կրիչինսկու հարսանիքը»), Սկալոզուբ («Խելքից պատուհաս»), Ռեշիլե («Կարդինալ Ռեշիլե»), Դոն Ժուան (համանուն պիեսում), Կառլ Մոր («Ավազակներ»), Էնոնի և այլն։ Նկատելի դեր է կատարել 1879 թ. Թիֆլիսի հայկական մշտական խմբի ստեղծման և համալրման գործում։ Մեկնել է Կ. Պոլիս, այնտեղից իր հետ բերել Պ. Ադամյանին, Աստղիկ և Սիրանույշ քույրերին, որոնք մի քանի տարի փայլ են տվել Թիֆլիսի հայ բեմին։ Եղել է խմբի ռեժիսորը, բեմադրել տասնյակ պիեսներ։ Ունեցել է նաև գրական գործունեություն։ Գրել է պիեսներ, որոնք բեմադրվել են Թիֆլիսում և այլուր, ինչպես՝ «Միթոմ ոչխար» (դրամա), «Վարժուհի» (կատակերգություն), «Խենթ Մկո» և այլն։ Ֆրանսերենից և ռուսերենից թարգմանել է պիեսներ, ինչպես Մոլիերի «Բռնի ամուսնությունը», «Կանանց կրթարանը», Հյուգոյի «Անջելոն», Վ. Շեքսպիրի «Օթելլոն», «Վենետիկի վաճառականը»։ Հայ մամուլում տպագրած նրա հոդվածները և հիշողությունները ամփոփվել են «Իմ հիշատակարանը» խորագրով ժողովածուի մեջ (Երևան, 1953)։

ՉՄՇԿՅԱՆ ՄԱՐԻԱ (ծն. 1916).— Օպերային երգչուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Թիֆլիսում, որտեղ ստացել է կրթությունը։ 1946 թ. երգել է Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում։ Գլխավոր դերերից են՝ Կարմենը (համանուն օպերայում), Փառանձեմ («Արշակ Բ»), Աշմաստ, Թամար («Դև»), Պոլինա («Գիկովայա դամա»), Աղուշինա («Տրուրաղուր»), Շուշան («Արծվաբերդ») և այլն։

ՉՄՇԿՅԱՆ ՍԱՖՈՆԻԿ (1849—1907).— Դերասանուհի։ Ծնվել է Թիֆլիսում։ Բուն անունը եղել է Եղիսաբեթ Տեր-Աբրահամյան։ Նախնական կրթությունն ստացել է Պ. Պոռշյանի հիմնադրած Գայանյան օրիորդաց դպրոցում. եղել է նրա առաջին աշակերտուհիներից։ Պոռշյանը նրան մասնակից է դարձրել թատերական ներկայացումների։ Հետագայում, ամուսնանալով դերասան Գ. Զմշկյանի հետ, իր բախտը ընդմիշտ կապել է հայ թատրոնին։ Ըստ էության եղել է արևելահայ առաջին դերասանուհիներից։ 1868 թ. մի քանի փոքր դերերով երևացել է հայ բեմում, իսկ 1865 թվականից արդեն հանդես է եկել կենտրոնական դերերով, փայլել մասնավորապես Գ. Սունդուկյանի կենցաղային կատակերգություններում։ 1866 թ. կատարել է Համփերիի դերը՝ «Խաթաբալա» կատակերգությունում, ապա՝ Անանիի դերը՝ «Էլի մեկ զոհում», իսկ 1871-ին՝ Եփեմիայի դերը՝ «Պեպոյի» երկրորդ ներկայացմանը։ Մեկ ամբողջ տասնամյակ եղել է Թիֆլիսի հայկական թատրոնի կենտրոնական ուժերից։ Խաղացել է նաև պատմական ողբերգություններում և թարգմանական պիեսներում։ Ժամանակի մամուլը գրվատանքով է արտահայտվել մասնավորապես հետևյալ դերերի մասին՝ Կոմսուհի («Քին»), Էլիզաբեթ («Դոն Կարլոս»), Թագուհի («Համլետ»), Անա Անատոլա («Կրիչինսկու հարսանիքը»)։ Որոնցից Թագուհու դերը նա կատարել է որպես Համլետ խաղընկեր ունենալով Պետրոս Ադամյանին, 1880 թ.։ 1890-ական թվականների սկզբներից հազվագյուտ է երևացել բեմում։

ՉՈԼԱԿՅԱՆ (ՉՈԼԱԿՅԱՆ) ԴԻՄԻՏՐԻՈՍ (1838—1907).— Մագումով հույն հայագետ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը, հավատարակս սովորելով հայերեն և հունարեն լեզուները։ Ուսումն ավարտելուց հետո զբաղվել է մանկավարժական աշխատանքով, միաժամանակ խորապես ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը։ Հունական և հայկական մամուլում տպագրել է տասնյակ հոդվածներ հայ մշակույթի տարբեր բնագավառների մասին, հայերեն հոդվածները ընդհանրապես տարարգրելով Զոլակյան, ինչը տեղի է տվել որոշ թյուրիմացության՝ նրա ազգային պատկանելության վերաբերյալ։ Հայերենից հունարենի է թարգմանել հայ եկեղեցու պատմությանը վերաբերող գրքեր, հունարենից էլ հայերենի է թարգմանել հույների ամուսնական օրենքները պարունակող մի գիրք։ Եղել է Կ. Պոլսի հայ և հույն պատրիարքների մշտական թարգմանը՝ նրանց պաշտոնական հանդիպումների ժամանակ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Բառարան հայերեն-հունարեն» (Կ. Պոլիս, 1868), «Հունարեն քերական» (1894), «Տարերք քերականության արդի հունարեն լեզվի» (1895) և այլն։

ՉՈՍԱՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ (1873—1941).— Երաժշտագետ-խմբավար։ Ծնվել է Ախալքալաքում (այժմ՝ Վրացական ԽՍՀ)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում։ 1892 թ. տեղափոխվել է Թիֆլիս, սովորել երաժշտական դասընթացներում, աշակերտելով Կարա-Մուրզայի։ 1900 թվականին ավարտել է ուսման ընթացքը, խմբավարի իրավունք ձեռք բերել։ Ստեղծել է երգչախումբ և համերգներ տվել Կովկասի տարբեր քաղաքներում։ Միաժամանակ որպես սիրող դերասան մասնակցել է Հ. Աբելյանի և այլ դերասանների կազմակերպած հայերեն ներկայացումներին։ Համերգներ է տվել Թեհրանում, նաև Շահի պալատում, արժանացել բարձր պարգևների։ 1911 թ. տեղափոխվել է Երևան, զբաղվել ուսուցչությամբ։ Խորհրդային կարգերի հաստատումից հետո աշխատել է Թիֆլիսում, նկատելի դեր կատարելով Հայարտասան երաժշտական բաժնում։

ՉՈՊԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ (1872—1954).— Բանաստեղծ, հրապարակախոս. խմբագիր, թարգմանիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, 1872 թ. հուլիսի 15-ին։ Կրթությունն ստացել է նախ Պեշիկթաշ թաղամասի Մաքրուհյաց վարժարանում, ապա՝ 1887 թվականից՝ Կեդրոնական վարժարանում, որի առաջին շրջանավարտներից է եղել։ Աշակերտական տարիներից պոլսահայ մամուլում տպագրել է չափածո երկեր և ֆրանսերենից կատարված թարգմանություններ։ 1891 թ. լույս է ընծայել իր արձակ, չափածո և գրականագիտական երկերը պարունակող «Արշալույսի ձայներ» ժողովածուն։ Նույն տարում տպագրել է «Թուղթի փաթը» վիպակը, իսկ 1893 թ.՝ «Քրբրումներ» բանաստեղծությունների ժողովածուն։ Դարձյալ 1893 թ. գրել է «Մութ խավեր» դրաման, որը բեմադրվել է և մամուլում բարձր գնահատվել, սակայն մնացել է անտիպ, լույս տեսել տասնյակ տարիներ անց, 1950 թ. «Բամբասանք» նոր խորագրով։ 1895 թվականի սկզբից հրատարակել է «Մաղիկ» գրական հանդեսը, սակայն վերահաս քաղաքական դեպքերի պատճառով մեկ տարուց դադարեցրել է և մեկնել Փարիզ, որտեղ 1898 թ. հիմնել է «Անահիտ» ամսագիրը. հրատարակել է երկու շրջանով 1898—1911 և 1929—1949 թթ.։ Այդ պարբերականի էջերում տպագրել է ինքնուրույն և թարգմանական մի շարք երկեր, այդ թվում նրա հմտալից հետազոտությունները հայ գրողների, տաղերգուների, արվեստագետների մասին, որոնք հետագայում ամփոփվել են «Դիմքեր» ժողովածուի երկու հատորներում (Ա. հատ. Փարիզ, 1923, Բ. հատ. 1929)։ «Անահիտ» հանդե-

սին աշխատակցել են հայ ականավոր շատ գրողներ, հայագետներ, բանասերներ։ Ունեցել է բանասիրական բեղուն գործունեություն, դեռևս 1894 թ. Թիֆլիսում տպագրել է «Պետրոս Դուրյան» աշխատությունը, որը վերահրատարակվել է մեր օրերում, Երևանում, 1968 թ. ժամանակի գրաքննության կողմից կատարված կրճատումների վերականգնումով։ 1907 թ. հրատարակել է «Մկրտիչ Պեշիկթաշլյան—կյանքը և գործը» մենագրությունը։ Նկատելի դեր է կատարել միջնադարյան հայ տաղերգուների երկերի հայտնաբերման, հետազոտման և հրատարակման գործում։ Հրատարակել է «Նահապետ Քուչակի դիվանը» (Փարիզ, 1902), «Նաղաշ Հովնաթան» (1910), «Հայ էջեր» (1912), «Հայրեններու Բուրաստանը» (Փարիզ, 1940)։ Միջնադարյան հայ տաղերգուների և հայ նոր գրողների լավագույն գործերը թարգմանել է ֆրանսերեն և հրատարակել առանձին ժողովածուներով, որոնցից են՝ «Հին և նոր բանաստեղծներ» (Փարիզ, 1902), «Հայկական ժողովրդական երգեր» (1903), «Հայ աշուղներ» (1906), նաև «Վարդենիք Հայաստանի» եռահատոր ստվար ժողովածուները (հատ. Ա. Փարիզ, 1918, հատ. Բ. 1923, հատ Գ. 1929)։ Մրցանակի է արժանացել «Նարեկի» նրա դասական թարգմանությունը։ Բացի նշված գրքերից տարբեր տարիներ լույս է ընծայել նաև իր գեղարվեստական երկերի հետևյալ ժողովածուները՝ «Քերթվածներ» (Փարիզ, 1908), «Տղու հոգիներ» (1923), «Պատկերներ» (1940), «Կյանք և երազ» (1945) և այլն։ «Կյանք և երազ» և «Տղու հոգիներ» ժողովածուները լույս է ընծայել նաև ֆրանսերեն թարգմանությամբ, առաջինը Էմիլ Վերհարնի առաջաբանով։

ՉՈՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1861—1939).— Գեղասան։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը, բժշկական ասպարեզ է մտել 1877—1878 թուականներում։ Նախ խաղացել է Հ. Վարդովյանի «Օսմանյան թատրոնում», ապա՝ 1880-ական թվականների կեսերից՝ Մ. Մնակյանի «Օսմանյան դրամատիկ» թատերախմբում։ Հաջողություն է ունեցել մասնավորապես կատակերգություններում, որոշ դերերում մրցելով Դ. Թրյանցի հետ։ Օսմանյան սահմանադրության հաստատումից հետո (1908) խաղացել է Ֆելեկյան քույրերի խմբում։ 1923 թ. մեկնել է Ամերիկա, որտեղ հաղվագեպ է երևացել հայկական բեմերում։

ՉՈՐԵՔՉՅԱՆ ԱՆԻՐԱՆԻԿ (ծն. 1918).— Նկարիչ։ Ծնվել է Մարաշում (Թուրքիա)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Ամերիկայում, 1947 թ. ավարտել է Նեպոլիսի առևտրա-ռեկլամային ինստիտուտը։ Ներգաղթելով Խորհրդային Հայաստան, 1948 թվականից աշխատել է Պետհրատում, Երևանի տպարաններում որպես նկարիչ, 1963 թվականից՝ Համամիութենական տեխնիկական ինստիտուտի հայկական մասնաճյուղում։ 1964 թվականից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Հեղափոխության 50-ամյակ», «Միասնություն» պլակատները։ Գծագրել է ապրանքանիշերի նմուշներ, ձևավորել երաժշտական հրատարակություններ։

ՉՈՐԵՔՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ (1868—1954).— Հոգևորական, կրթական գործիչ։ Ծնվել է Նոր Նախիջևանում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, ապա ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան հեմարանում (1880—1889)։ Հետագայում մեկնել է Գերմանիա, սովորել Լայպցիգի համալսարանի փիլիսոփայության և աստվածաբանության ֆակուլտետներում, նաև նույն քաղաքի կոնսերվատորիայում, ավարտել է 1894 թ.։ Վերադառնալով Ռուսաստան, նվիրվել է կրթական աշխատանքի։ Երկար տարիներ (1894—1913) պաշտոնավարել է Էջմիածնի Գևորգյան հեմարանում և Նոր Նախիջևանի թեմական դպրոցում, դասավանդել հիմնականում երաժշտական առարկաներ։ Հավաքել է բազմաթիվ երաժշտներ, որոնց թվում՝ կոմպոզիտոր Ռուբանոս Մելիքյանը։ Նա այդ տարիներին ստեղծել և ղեկավարել է երկսեռ երգչախումբ։ 1913 թ. ձեռնադրվել է վարդապետ, նշանակվել Նոր Նախիջևանի թեմի առաջնորդական փոխանորդ։ Ապա ընտրվել է ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական տեղակալ։ Խորեն կաթողիկոսի մահից հետո 1938—1945 թթ. փաստորեն վարել է կաթողիկոսի պաշտոնը, իսկ 1945 թ. ընտրվել է ամենայն հայոց կաթողիկոս։ Հայրենական պատերազմի տարիներին մեծ դեր է կատարել սփյուռքահայությանը մայր հայրենիքի հետ կապելու ուղղությամբ։ Դրա ցայտուն արտահայտություններից մեկը եղավ «Մասունք Դավիթ» տանկային շարասյան հանգանակությունը սփյուռքում։ Նրա կաթողիկոսության տարիներին Խորհրդային՝ կառավարության թույլտվությամբ վերաբացվեց Էջմիածնի հոգևոր հեմարանը, հիմնադրվեց «Էջմիածին» ամսագիրը։ Ունեցել է գրական-բանասիրական գործունեություն։ Արևելահայ մամուլում, հետագայում «Էջմիածին» ամսագրում տպագրել է բազմաթիվ հոդվածներ։

ՉՈՐԵՔՉՅԱՆ ԹՈՐԳՈՄ (1910—1977).— Քանդակագործ. Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ (1963)։ Ծնվել է Սեբաստիայում (Արևմտյան Հայաստան)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի հայկական դպրոցում, 1918—1922 թ.։ 1922 թ. տեղափոխվել է Հունաստանի որբանոցները, 1925 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան։ Մասնագիտական նախնական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստական տեխնիկումում։ Մեկ տարի Լենինականում որպես ուսուցիչ աշխատելուց հետո մեկնել է Լենինգրադ, շարունակել ուսումը Ի. Ռեպինի անվան գեղարվեստների ակադեմիայում, ավարտել 1937 թ.։ 1929 թվականից մասնակցել է հանրապետական, հետագայում նաև միութենական ցուցահանդեսների։ Լավագույն քանդակներից են՝ «Մ. Նալբանդյան», «Հովհ. Թումանյան», «Շ. Տալյան», «Լ. Հովհաննիսյան», «Վ. Համբարձումյան», «Ա. Մնջոյան», «Արուս Ոսկանյան», մոր հուշարձանը, կանգնեցված Թոխմախլուի գերեզմանատանը, Արսեն Տերտերյանի հուշարձանը՝ Պանթեոնում և այլն։

ՉՈՓՈՒՐՅԱՆ (ՏԵՓՈՅԱՆ) ՄԱՐԻՅԱ (1891—?).— Կրթական գործիչ, գրող։ Ծնվել է Խարբերդի գյուղերից մեկում (Արևմտյան Հայաստան)։ Կրթությունն ստացել է Խարբերդի Ֆիրատ կոլեջում, ավարտել 1911 թ.։ Որպես ուսուցչուհի պաշտոնավարել է նույն դպրոցի իգական բաժնում։ Մեծ եղեռնի օրերին աքսորվել է Տեր-Զոր, ենթարկվել անլուր տանջանքների։ Տառապանքի այդ օրերին էլ շարունակել է ուսուցչությունը, անապատի ավազի վրա փայտիկներով մեսոպյան տառերը դրոշմելով՝ սովորեցրել է որբ երեխաներին։ 1918—1919 թթ. Տեր Զորից սրատաճմլիկ նամակներ է ուղարկել Ամերիկա, որոնք տպագրվել են «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթում, ականատեսի վկայությամբ պատկերացում տալով կատարված ահավոր ոճրի մասին։ Հետագայում մեկնել է Ամերիկա, զբաղվել ուսուցչությամբ, շարունակելով տպագրել պատմվածքներ, ակնարկներ, որոնց մեծ մասի նյութը հայ ժողովրդի կրած տառապանքն է։ Բացի «Հայաստանի կոչնակից», որի մնայուն աշխատակիցն է եղել երկար տարիներ, արձակ երկեր է տպագրել նաև «Այգի», «Պայքար» և այլ պարբերականներում։

ՉՐԱՔՅԱՆ ԵՂԻՇԵ (1901—?).— Կրթական, մշակութային գործիչ։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Արաբկիրի շրջանի Ծագ գյուղում։ 1912 թ. մեկնել է Ամերիկա՝ հոր մոտ։ Կրթությունն ստացել է Ուոթրթաունի ամերիկյան նախակրթարանում և բարձրագույն վարժարանում։ Ավարտել է նաև Բոստոնի, Բրաունի և Հարվրդի համալսարանները, վերջինից ստացել փիլիսոփայության դոկտորի աստիճան։ 1925—1968 թթ. պաշտոնավարել է Բրաունի, Վիսկանսինի համալսարաններում և բարձրագույն այլ հաստատություններում։ Անգամ է ընտրվել ամերիկյան փիլիսոփայական մի քանի ընկերություններ։ Ունեցել հասարակական, մշակութային գործունեություն։ Մոտիկից մասնակցել է Խորհրդային Հայաստանին համակիր միությունների, այդ թվում ՀՕԿ-ի աշխատանքներին։ Աշխատակցել է ամերիկահայ և ամերիկյան մամուլին, խմբագրել է հայ ռամկավար կուսակցության օրգան, «Տիրը Արմենյան Միրոր» անգլերեն թերթը։ Արաբկիրի հայրենակցական միության գործուն անդամներից է։ Հրատարակել է պատմաբանասիրական գրքեր։ Հայերենից անգլերենի թարգմանելով Ամերիկայում լույս է ընծայել խորհրդահայ պատմաբաններ Ե. Սարգսյանի և Ռ. Մահակյանի «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ» աշխատությունը։ Անգլերենի է թարգմանել նաև Ավ. Իսահակյանի բազմաթիվ բանաստեղծություններ։ 1967 թ. այցելել է Խորհրդային Հայաստան։

ՉՐԱՔՅԱՆ ՏԻՐԱՆ (ԻՆՏՐԱ) (1875—1921).— Գրող։ Ծնվել է Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, ապա սովորել է Պերպերյան վարժարանում։ Աշակերտական տարիներից ցուցաբերել է գրելու և նկարելու հակում, գրավել Հովհ. Այվազովսկու ուշադրությունը, վերջինիս Պոլիս այցելելու օրերին։ Ավարտելով ուսման ընթացքը, զբաղվել է նկարչությամբ, որպես նկարչության

ուսուցիչ աշխատել է հայկական դպրոցներում, միաժամանակ նկարագրել թուրքական որոշ թերթեր։ Հետագայում ամբողջովին նվիրվել է գրականության։ 1890-ական թվականների կեսերից շափածո ստեղծագործություններով աշխատակցել է «Արևելք» և այլ պարբերականների, կրելով միստիկ բանաստեղծ Ե. Տեմիրճիպաշյանի նկատելի ազդեցությունը։ 1904—1905 թթ. ճանապարհորդել է Եվրոպայում։ Վերադառնալով Կ. Պոլիս, 1906 թ. լույս է ընծայել 1898—1900 թվականներին գրած հուշագրական խոհական բնույթ կրող արձակ էջերը՝ «Ներաշխարհ» խորագրով, ներծծված հոգեբանական վերլուծություններով։ 1908 թ. հրատարակել է շափածո գործերի «Նոճաստան» փոքրիկ ժողովածուն։ Մեծ եղեռնի օրերին, ի թիվս այլ մտավորականների, նա էլ ձերբակալվել է, ենթարկվել խոշտանգումների, որոնք խախտել են նրա հոգեկան հավասարակշռությունը, հասցրել կիսախելագար վիճակի։

ՉՐԱՔՅԱՆ ՔԵՐՈՎԲԵ (1877—1970).— Բանաստեղծ, կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Նախնական կրթությունն ստացել է տեղի Մխիթարյանների վարժարանում, 1889 թվականից սովորել է Վենետիկի Մխիթարյանների ս. Ղազարի վանքում։ Ուսման շրջանն ավարտել է 1895 թվականին, դարձել այդ միաբանության անդամ։ Ունեցել է կրթական երկարամյա գործունեություն։ 1899—1916 թթ. եղել է դաստիարակ նույն վանքում, ապա՝ 1921—1927 թթ. և 1930—1932 թթ. տեսուչ Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանում։ 1936 թ. Ալեքսանդրիայում (Եգիպտոս) հիմնադրել է Մխիթարյան վարժարանը և վարել է մինչև 1946 թ.։ 1946—1970 թթ. եղել է ընդհանուր աթոռակալ Վենետիկի Մխիթարյան միաբանության։ Ունեցել է գրական-բանասիրական գործունեություն։ 1920—1921 թթ. խմբագրել է «Բազմավեպ» հանդեսը, որի էջերում ունի բանասիրական բազմաթիվ հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են. «Հայ մատենագիրներ ԺԹ դարու. մասն Ա. Ռուսահայ գրողներ» (Վենետիկ, 1904), «Անկանոն գիրք առաքելականք» (1905), «Խիքիոսի Մեկնութիւն Յովբայ» (1913), «Նանայի Ասորւոյ վարդապետի «Մեկնութիւն Յովհաննու աւետարանին» (1920), «Գրիգորիս Արշարունւոյ Մեկնութիւն ընթերցուածոց» (1964) ինչպես և մի քանի այլ գրքեր։

ՋՈՒԲԱՐ ԳԵՎՈՐԳ (1864—1930).— Գրող, հրապարակախոս։ Ծնվել է Նոր Նախիջևանում։ Հայկական նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա սովորել է Լազարյան ճեմարանում և Մոսկվայի համալսարանում, որի իրավաբանական բաժինն ավարտելուց հետո վերադարձել է Նոր Նախիջևան։ Գործուն մասնակցություն է ունեցել համայնքի կրթական, մշակութային կյանքին։ Եղել է Նոր Նախիջևանի հայկական թատրոնի կազմակերպիչներից, թատերական կոմիտեի նախագահը, հետագայում գրել է հիշողություններ Պետրոս Ադամյանի ներկայացումների մասին։ Ինքն էլ մասնակցել է այդ ներկայացումներին որպես դերասան։ Ուսանողական տարիներից մամուլում տպագրել է պատմվածքներ։ «Նոր Դար» թերթում տպագրել է «Փշրված կյանք» վիպակը և «Ուստա Սարգիսը», վերջինս լույս է տեսել նաև առանձին գրքով, 1905 թ.։ Աշխատակցել է «Աղբյուր», «Տարազ», «Հանդես գրականական և պատմական», «Լույս», «Գաղութ», «Մեր ձայնը» և այլ պարբերականների, ինչպես և ռուսական թերթերի։ Իսկ 1930-ական թվականներին՝ Փարիզի «Անահիտ» հանդեսին։ Գրել է «Սանդուխտ», «Փառանձեմ թագուհի», «Ոսկի և սեր» պիեսները մի ծավալուն՝ «Արևելքի աստղը» խորագրով։

ՋՈՒԲԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1888—1962).— Իրավաբան, մշակութային գործիչ։ Ծնվել է Նոր Նախիջևանում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, իսկ բարձրագույնը՝ Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում։ Սովորել է նաև Յարոսլավլի համալսարանի իրավաբանական բաժնում։ Վերադառնալով ծննդավայրը, զբաղվել է իր մասնագիտությամբ, զուգահեռ ունեցել գրական-հասարակական բուռն գործունեություն։ Աշխատակցել է արևելահայ մի շարք պարբերականների, մասնավորապես Նոր Նախիջևանում լույս տեսնող «Համայնքին», եռանդուն մասնակցություն է ունեցել հեղափոխական շարժումներին, համագործակցել է Մտ. Շահումյանի, Ս. Օրջոնիկիձեի և Ս. Կիրովի հետ։ 1920 թ. տեղափոխվել է խորհրդային Հայաստան, վարել իրավաբանական պատասխանատու պաշտոններ։ Եղել է կենտգործկոմի գլխավոր իրավախորհրդատու։ Նա է կազմել

խորհրդային Հայաստանի անդրանիկ Սահմանադրության տեքստը։ Երկար տարիներ իրավաբանական առարկաներ է դասավանդել Երևանի պետական համալսարանում։

ՋՈՒԲԱՐ ԵՂԻԱ (1897—1937).— Գրող, հրապարակախոս-խմբագիր, պետական գործիչ։ Ծնվել է Նոր Նախիջևանի Թուիթի գյուղում (այժմ՝ Ռոստովի մարզ, Մյասնիկյանի շրջան)։ Կրթությունն ստացել է Նոր Նախիջևանի թեմական դպրոցում և Ռոստովի արական գիմնազիայում։ 1918-ին ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը։ Վարել է կուսակցական, խմբագրական պաշտոններ Ռոստովում, Բաքվում։ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո եկել է Հայաստան։ Խմբագրել է ՀԿԿ Կենտկոմի օրգան «Կոմունիստ» օրաթերթը, «Կարմիր ռանչպարը», «Մանկալը», ինչպես նաև «Վերելք», «Նոր ակոս» և այլ հանդեսներ։ 1925 թ. գործուղվել է Փարիզ, որտեղ խմբագրել է «Երևան» թերթը և «Վերելք» տեսական հանդեսը։ 1927 թ. վերադարձել է Հայաստան, շարունակել խմբագրական աշխատանքը։ Գրել է «Մեքսիկական դիպլոմատներ» կինոնկարի սցենարը (1931), հուշագրություններ, ակնարկներ, որոնք ամփոփված են 1957 թ. Երևանում լույս տեսած «Սկզբում» ժողովածուում։

ՋՈՒԲԱՐՅԱՆ ՂՈՒԿԱՍ (ծն. 1923).— Քանդակագործ. ԽՍՀՄ գեղարվեստների ակադեմիայի թղթակից անդամ։ Ծնվել է Երևանում։ Որդին է իրավաբան Գրիգոր Զուբարի։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանում։ 1943 թ. ավարտել է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանը, 1950 թ.՝ Երևանի գեղարվեստական ինստիտուտը։ 1942 թվականից մասնակցել է հանրապետական, հետագայում նաև միութենական և արտասահմանյան բազմաթիվ ցուցահանդեսների, այդ թվում՝ 1957 թ. Մոսկվայում կայացած երիտասարդական համաշխարհային 6-րդ փառատոնի ցուցահանդեսին, հաջորդ տարի՝ Բրյուսելում կազմակերպված ցուցահանդեսին։ Բրոնզից կերտած նրա «Մարտիրոս Սարյան» դիմաքանդակը արժանացել է ԽՍՀՄ գեղարվեստաների ակադեմիայի արծաթե մեդալին, իսկ Հովհաննես Թումանյանի քանդակը կանգնեցված է բանաստեղծի ծննդավայրում։ Նրա լավագույն ստեղծագործություններից է Երևանի Մատենադարանի մուտքը զարդարող Մեսրոպ Մաշտոցի արձանը։ Մյուս գործերից են՝ «Խ. Աբովյանը», «Անահիտը», «Անընկճելին», «Թորոս Ռոսլինը», «Զուլոը», «Մխիթար Հերացի», «Թիկունքի հերոսը», «Ե. Չարենց», «Մահերը դուրս է գալիս Ագռավաքարից», Հովհաննես Հովհաննիսյանի հուշարձանը՝ դրված էջմիածնում, Ալ. Սպենդիարյանի հուշարձանը (Երևան, համահեղինակ՝ Արա Սարգսյան) և այլն։ 1970 թ. ընտրվել է ԽՍՀՄ գեղարվեստների ակադեմիայի թղթակից անդամ, 1972 թ. նրան շնորհվել է Հայկական ԽՍՀ ժողովրդական նկարչի կոչում։

ՋՈՒԲԱՐՅԱՆ ՕՇԱՆ (1908—1976).— Գրադարանագետ-մատենագետ, մանկավարժական գիտությունների դոկտոր (1972), ՌԽՖՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ (1968)։ Ծնվել է Նոր Նախիջևանում։ Կրթությունն ստացել է Մոսկվայի բարձրագույն մատենագիտական դասընթացներում, ավարտել է 1930-ին։ Աշխատել է ՌԽՖՍՀ պետական կենտրոնական գրադարանում, Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարանում, Վ. Ի. Լենինի անվան ԽՍՀՄ պետական գրադարանում, ամենուր վարելով պատասխանատու պաշտոններ։ Միութենական մամուլում տպագրել է գրադարանագիտության և մատենագիտության վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններից «Ընդհանուր գրադարանագիտությունը» տպագրված 1960, 1968, 1976 թվականներին, թարգմանվել է ԽՍՀՄ և արտասահմանյան բազմաթիվ լեզուներով, այդ թվում հայերեն (Երևան, 1963)։ Գրադարանային ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի 32-րդ նստաշրջանում (1966) ընտրվել է այդ կազմակերպության մատենագիտական հանձնաժողովի նախագահ, իսկ 1969-ին՝ գրադարանագիտական հանձնաժողովի նախագահ։

ՋՈՒԹԱՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ (ծն. 1923).— Բանաստեղծ։ Ծնվել է Թավրիզում։ Նախնական կրթությունն ստացել է տեղի Հայկազյան-Թամարյան և Արամյան դպրոցներում, իսկ 1942-ին ավարտել է Ֆիրդուսու անվան պարսկական միջնակարգ դպրոցը։ 1946-ին ընտանիքով ներգաղթել են Հայաստան։ Նույն տարվանից շարունակել է ուսումը Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, 1950—1954 թթ. աշխատել է Պետական համալսարանի

հրատարակչությունում, 1954—1957 թթ. սովորել Հայկական ԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում՝ հայ հին գրականության մասնագիտությամբ։ 1962-ին պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ 1958—1965 թթ. աշխատել է ԳԱ գրականության ինստիտուտում, նախ իբրև գիտական քարտուղար, իսկ 1963-ից՝ դիրեկտորի տեղակալ՝ գիտական գծով։ 1965-ից աշխատում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում իբրև դիրեկտորի տեղակալ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հայ-իրանական գրական կապերը 5—18-րդ դարերում» (Երևան, 1963), ինչպես և՝ «Խորատ Նուշիրվանի» (1966), Հովհաննես Սեբաստացու «Պատմութիւն Սեբաստիոյ» (1973) և 13-րդ դարի ձեռագիր «Բժշկարան ձիոյ» (1980) երկերի քննական բնագրերը՝ ներածական հոդվածներով, ծանոթագրություններով և բառարաններով։ Նրա ջանքերով հրատարակվել են Սայաթ-Նովայի «Խաղերի» (Հայանի Դավդարի), հայերեն առաջին տպագիր գրքերից «Ուրբաթագրքի» և «Տաղարանի», Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկի նմանահանությունները (ֆաքսիմիլիե)։ Մասնակցել է համամիութենական և միջազգային արևելագիտական գիտաժողովների՝ Երևանում, Մոսկվայում, Տաշքենդում, Բաքվում, Հալլեում, ԳԴՀ-ում։ Այցելել է մի շարք երկրներ, հավաքել նկատելի թվով հին ձեռագրեր, փոխադրել Երևանի Մատենադարան։ Անդամ է ԽՍՀՄ—Բրիտանական ընկերության վարչության (Մոսկվա)։ ԽՍՀՄ—Իրան մշակութային կապերի ընկերության հայկական բաժանմունքի փոխնախագահն է։

ՉՈՒԴԱՍՉՅԱՆ ԼԻԼԻ (ծն. 1921).— Օպերային երգչուհի, կոնտրալտո։ Ծնվել է Չիկագոյում (ԱՄՆ), սեբաստացի գրող, հրապարակախոս Վահան Չուդասչյանի ընտանիքում։ Մի քանի տարի ձայնը մշակել է հայտնի երաժիշտ Ֆիլիպ Մանուելի մոտ, ապա երգել է եկեղեցական երգչախմբերում և զանազան նվագախմբերի հետ, գրավելով երաժշտագետների ուշադրությունը։ 1959 թ. Արկանզաս քաղաքի «Էլի Ռոկ» օպերային թատրոնում կատարել է Ադալջիսայի դերը՝ «Նորմա» օպերայում։ Նույն տարում այդ դերով մասնակցել է Իտալիայի Սպոլետո քաղաքում կայացած փառատոնին։ Այնտեղ նրա ձայնով հիացողներից է եղել Նյու Յորքի ֆիլհարմոնիայի դիրիժոր Թոմաս Շիպպերսը, որը հրավիրել է նրան որպես մենակատար երգել իր ղեկավարած նվագախմբում։ Տեղափոխվելով Նյու Յորք, այնտեղ հանդես է եկել Պրոկոֆիևի «Ալեքսանդր Նևսկի» օպերայում։ Այդ կատարել է Հելովդիայի դերերգը «Սալոմե» օպերայում։ «Կոլումբիա» ընկերությունը ձայնասկավառակների վրա է վերցրել նրա այդ դերերգերը, որոնք սպառվել են մեծ քանակությամբ, հաշակելով երգչուհու անունը։ 1962 թ. Նյու Յորքի հայտնի «Մետրոպոլիտեն» օպերային թատրոնը պայմանագիր է կնքել նրա հետ երգելու այդ թատրոնում։ Առաջնակարգ ձեռք է բերել մեծ համբավ իր կատարած պատասխանատու դերերով, որոնց թիվը, այդ թատրոնում, անցնում է 30-ից։ Ամերիկյան մամուլը բացառիկ հիացմունքով է խոսել նրա կատարողական արվեստի մասին, նրա մատ տանելով «խելք, սիրտ, հայկական ձայն», «անհավասարի մեծության մի կոնտրալտո», «զլխապտույտ տվող գինու ուժգնությամբ» արվեստ, «մագնիսացնող ձայնը»։ Մասնակցել է «Չիկոնդա», «Աիդա», «Եվգենի Օնեգին», «Տրուբատուր» օպերաների ներկայացումներին։ Երգել է համաշխարհային ճանաչում ունեցող նվագախմբերի հետ, ինչպես Ջոն Կուրայանի նվագախմբի՝ Բեռլինում։ Երգել է Նյու Յորքում, Մոնրեալում, Մեխիկոյում։ Բացառիկ հաջողությամբ երգել է Վերդիի «Ռեքվիեմը» Թոմաս Շիպպերսի նվագախմբի հետ։ Այցելել է Խորհրդային Հայաստան, Երևանի պետական օպերայում հանդես է եկել «Աիդա» և «Արշակ երկրորդ» օպերաներում։

ՉՈՒԴԱՍՉՅԱՆ ՎԱՀԱՆ (1885—1961).— Գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ։ Սրված է Արևմտյան Հայաստանի Սեբաստիա քաղաքում։ Կրթությունն ստացել է ծննդավայրի Թարգմանչաց և Արամյան վարժարաններում, ապա՝ ֆրանսիական կոլեջում։ Գրական առաջին փորձերը կատարել է օսմանյան սահմանադրության առաջին տարիներին՝ 1908—1909-թվականներին, աշխատակցելով Կ. Պոլսի «Արեւելք» թերթին։ 1909 թ. մեկնել է Ամերիկա, որտեղ ունեցել է գրական, հասարակական երկարամյա գործունեություն։ Աշխատակցել է սփյուռքահայ տասնյակ թերթերի ու հանդեսների («Հնչակ», «Երիտասարդ Հայաստան», «Կոչնակ», «Նոր երկիր», «Արձագանք Փարիզի», «Սուրիական մամուլ», «Արարատ», «Ուսանողաց տարեգիրք» և այլն, մեծ մասամբ հնչակյան հրատարակություններ։ Եղել է ջերմ համակիր խորհրդային Հայաստանի։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Ռոմբը» (չափածո, 1911), «Ցեղիս գողգոթան» (պիես, 1923), «Ազատության արշալույսը» (պիես, 1930), «Հոգեհատորիկ» (բանաստեղծություններ, 1951) և այլն։ Հայրն է օպերային երգչուհի Լիլի Չուդասչյանի։

ՉՈՒԼՈՅԱՆ ԺԻՐԱՅՐ (ծն. 1918).— Նկարիչ-ծրագրագործ արվեստագետ։ Ծնվել է Կահիրեում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, աշխատել որպես ոսկերիչ։ 1948 թ. տեղափոխվել է Խորհրդային Հայաստան, զբաղվել իր մասնագիտությամբ։ Հանրապետական մամուլում բարձր են գնահատվել նրա մոդելներով պատրաստված կոնյակի, գինու սպասքները, կանացի զարդեղենները։ Մասնակցել է մի շարք ցուցահանդեսների, այդ թվում՝ Նյու Յորքում, Բրյուսելում և Մեխիկոյում կազմակերպված ցուցահանդեսներին։ Լավագույն գործերից են Վազգեն Ա. կաթողիկոսի համար պատրաստած գավազանը և խնամանը, «Հորելյանականը»՝ նվիրված ԽՍՀՄ կազմավորման 50-մյակին և այլն։

ՉՈՒԽԱՋՅԱՆ ԱՆՆԻԿ (1855—?).— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ 1870-ական թվականների սկզբներից խաղացել է Հ. Վարդովյանի թատերախմբում։ Մասնակցել է այդ խմբի թե հայերեն և թե թուրքերեն ներկայացումներին։ Առաջին տարիներին կատարել է միայն էնժենյու և սուբրետ դերեր, հետագայում արդեն՝ դրամատիկ դերեր։ Ունեցել է հաճելի ձայն և մասնակցել է Տ. Չուխաջյանի, Լրոքի և Օֆենբախի օպերետների ներկայացումներին։ Լավագույն դերերից են համարվել Պաուլն («Կեսար Բորջիա»), Կլոդետը («Փարիզի աղքատները»), Դաֆնեն («Անջելո Մալիբիերին»), Մարթան («Հավատք, հույս, սեր»), Լուիզան («Թըղթե վզնոցով սիրահարը»), Կլիտանդրը («Ժորժ Դանդեն»)։ Ամուսնացել է դերասան Տիգրան Թոսպատյանի հետ։

ՉՈՒԽԱՋՅԱՆ ԹԵՐԶԱ (1852—?).— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ Աննիկ Չուխաջյանի քույրն է։ Ստացել է թերի կրթություն։ 1871 թվականից խաղացել է Հ. Վարդովյանի

«Օսմանյան թատրոնում»։ Երկար ժամանակ համարվել է այդ խմբի ամենաաչքի ընկնող ուժերից։ Հավասար հաջողությամբ հանդես է եկել թե թուրքերեն և թե հայերեն ներկայացումներում։ Խուսափել է կատակերգական դերերից. հակումը եղել է մայրական դերերը։ Մամուլը բարձր է գնահատել նրա Թերեզան («Կեսար Բորջիա»), Կատերինը («Ներոնի տասնապետը») և այլն։ 1880-ական թվականների կեսերից չի խաղացել։

ՉՈՒԽԱՋՅԱՆ ՀԱՅԿ (1878—1944).— Դերասան։ Ծնվել է Կեսարիայում (Թուրքիա)։ 1890-ական թվականների վերջերից խաղացել է Ա. Պենկլյանի օպերետային խմբում։ Հաջողությամբ կատարել է հատկապես Իբիշի դերը Տ. Չուխաջյանի «Լեպլեպիճիում»։ Հետագայում խաղացել է տարբեր խմբերում։ 1923 թվականին մեկնել է Ամերիկա, Կալիֆոռնիայում կազմակերպել օպերետային խումբ, բեմադրել Տ. Չուխաջյանի օպերետները։ 1933 թ. Ամերիկայից մեկնել է Փարիզ, ներկայացրել «Լեպլեպիճի Հորհոր աղա», «Նասրեդդին Հոճա» և այլ օպերետներ։ Հորհոր աղայի դերով համեմատվել է Ա. Պենկլյանի հետ։ Նյու Յորքում, Փարիզում և այլ քաղաքներում նրա «Լեպլեպիճին» դիտել են ոչ միայն հայեր, այլև շատ օտարներ։ Պատերազմի տարիներին, հուսահատ մի պահին կյանքին վերջ է տվել անձնասպանությամբ։

ՉՈՒԽԱՋՅԱՆ ՄԱՏԹԵՈՍ (1802—1865).— Հոգևորական, մշակութային գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը, ընդունել հոգևորական կոչում, վարել կրոնական պաշտոններ։ 1844—1848 թթ. եղել է Կ. Պոլսի պատրիարք։ 1858 թ. ընտրվել է ամենայն հայոց կաթողիկոս, տեղափոխվել Էջմիածին։ Եղել է ուսումնասեր, զարգացած հոգևորական, զարկ տվել կրթական գործին։ Նրա պատրիարքության տարիներին է հիմնադրվել Սկյուտարի հայտնի ճեմարանը, «Հայաստան» շաբաթաթերթը, որը հետագայում վերանվանվեց «Մասիս»։ Կաթողիկոսության տարիներին կարգի է բերել ծխական դպրոցները, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Էջմիածնի մատենադարանը։ Գրել է կրոնական աշխատություններ, ինչպես՝ «Ներածություն աստվածաբանական գիտելեաց», «Բարի մարդ և բարի քրիստոնյա» (Կ. Պոլիս, 1856)։

ՉՈՒԽԱՋՅԱՆ ՏԻԳՐԱՆ *(1837—1898).*— Կոմպոզիտոր։ Մնվել է Կ. Պոլսի Պերա թաղամասում, սուլթան Մեջիդի արքունի ժամագործարվեստագետ Գեորգ Չուխաջյանի ընտանիքում։ Երաժշտական նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսում ապրող իտալացի երաժիշտների մոտ։ 1850-ական թվականների վերջերից հանդես է եկել որպես դաշնակահար և կոմպոզիտոր։ Եղել է 1859 թ. Խասգյուղ թաղամասում հիմնադրված հայկական թատրոնի երաժշտապետը։ Այդ թատրոնի բացման օրը կատարվել է նրա եղանակավորած «Օն մեր նախնի դարուց» ներբողը։ 1861 թվականից կապվել է հայ առաջին պրոֆեսիոնալ թատրոնի՝ «Արևելյան թատրոնի» հետ, գրել է մի քանի պիեսների երաժշտությունը, եղանակավորել որոշ երգեր, որոնք տարածվել են ժողովրդի մեջ։ 1862 թ. նրա անմիջական մասնակցությամբ հիմնադրվել է «Քնար հայկական» երաժշտական ընկերությունը։ Աշխատակցել է նույն այդ ընկերության օրգան «Քնար հայկական» հանդեսին։ 1862 թ. վերջերին մեկնել է Իտալիա, մեկ տարի Միլանում կատարելագործել արվեստը։ Այնտեղ էլ, Զեյթունի ապստամբության, իտալական ազատագրական շարժման գաղափարական ազդեցությամբ Թ. Թերզյանի լիբրետոյի վրա գրել է «Արշակ Բ» օպերան և մաս-մաս ուղարկել է Կ. Պոլիս։ Վերադառնալով ծննդավայրը, շարունակել է ստեղծագործական աշխատանքը, գրել մի քանի ողբերգությունների երաժշտությունը, ինչպես՝ Ռ. Սեբեոֆճյանի «Վարդան Մամիկոնյան», Մ. Պեշիկթաշլյանի «Արշակ Բ» ողբերգությունների։ Ավարտել է «Արշակ Բ»-ի նախերգանքը, որը կատարվել է 1868 թ.։ Քաղաքական խստությունների պատճառով միառժամանակ հրաժարվել է ազգային բովանդակություն ունեցող երկերից։ Գրել է մի քանի նոր պիեսների երաժշտությունը, ինչպես Դուբյանի «Վարդ և Շուշանի», իսկ 1870-ական թվականների սկզբներից մղվել է դեպի օպերետի ժանրը։ 1872 թ. աշնանը ավարտել է «Արիֆի խարդախությունը» օպերետը՝ Հովհ. Աճեմյանի լիբրետոյի հիման վրա։ «Արիֆը» բեմադրվել է նույն այդ թատերաշրջանում և ունեցել բացառիկ հաջողություն։ Խանդավառված դրանից՝ երաժշտագետ Ե. Մելիքյանի պատվերով գրել է «Քեոսն քեհյա» և «Հեպլեպիճի Հորհոր ագա» օպերետները։ Նույն Մելիքյանի հետ ստեղծել է «Օսմանյան օպերային թատերախումբը», որը նրա ղեկավարությամբ բեմադրել է վերոհիշյալ երեք օպերետները։ «Հեպլեպիճի Հորհոր ագան» առաջին անգամ ներկայացվել է 1875 թ. նոյեմբեր ամսին, հետագայում կրկնվել բազմաթիվ անգամներ ոչ միայն Թուրքիայում, այլև Բալկանյան երկրներում, Եգիպտոսում, Հունաստանում, Կովկասում, մեր օրերում՝ Երևանում, նաև վերածվել կինոնկարի («Կաքքեն»)։ Այդ օպերետը բեմադրվել է Թուրքերեն, հայերեն, հունարեն, բուլգարերեն, ռուսերեն, գերմաներեն և այլ լեզուներով։ Հետագայում Ս. Պենկլյանի հետ ստեղծել է օպերետի ալբոմի մեծ խումբ, 1878 թ. մեկնել Ագրիանոպոլիս, ներկայացրել իր երեք օպերետները, նաև Օֆենխաբի, Լեքոքի մի քանի օպերետները՝ ռուս սպաների համար։ Ապա այդ խմբով մեկնել է Հունաստան, Եգիպտոս, Եգիպտոս, ամենուր ունեցել բացառիկ հաջողություն։ 1880-ական թվականների սկզբներից արգելվել են նրա օպերետները Թուրքիայում։ Գրել է «Զեմիրե» օպերետը, որը բեմադրվել է Կ. Պոլսում, 1893 թ.՝ ֆրանսիական մի խմբի կողմից, իսկ 1898 թ.՝ իտալական խմբի կողմից։ 1894 թ. մեկնել է Փարիզ, որտեղ կատարել է «Արշակ Բ»-ի նախերգանքը։ Մեկ տարուց վերադարձել է Պոլիս, ապա՝ Զմյուռնիա, որտեղ գրել է վերջին ստեղծագործությունը՝ «Ինդիանան»։ Գրել է մի շարք երգեր հայ հեղինակների տեքստերով, ինչպես՝ «Ո՜հ, ինչ անուշ», «Մայր Արաքսի», «Գոհարիկ»։ Մշակել է «Խորհուրդ խորհին», «Սուրբ սուրբ», «Հայր մեր» կրոնական երգերը։

ՉՈՒՉԻ ԿԱԶՄՈՂ *(17-րդ դ.).*— Քարգործ վարպետ։ Նրանից մեզ հասել է գեղարվեստական քանդակներ պարունակող մի քանի տապանաքար, որոնք գտնվում են Հրազդանի շրջանի Ներքին Քախսի, Վերին Քախսի և Վերին Ախտա գյուղերում։ Դրանցից ուշագրավ է հատկապես Վերին Ախտայի եկեղեցու պատին ամրացված և հարանոի տեսարան պարունակող տապանաքարը։

ՉՈՒՊՈՒՂ ՕՂԼԱՆ *(18—19-րդ դդ.).*— Աշուղ։ Նրա երգերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № № 1990 և 9271 ձեռագրերում։

Պ

ՊԱԴԱԼՅԱՆ ԱՐԱՄ *(1874—1959).*— Նկարիչ։ Մնվել է Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, շարունակել Պերպերյան միջնակարգ դպրոցում։ Մասնագիտական ուսումն ստացել է Կ. Պոլսի Գեղարվեստների ուսումնարանում, որտեղ աշակերտել է իտալացի ճանաչված նկարիչների։ 1895 թ. կոտորածներից հետո մեկնել է Փարիզ, սովորել նախ Ժյուլիենի ակադեմիայում, ապա՝ Փարիզի գեղարվեստների բարձրագույն դպրոցում, աշակերտել նկարիչներ Պոլ Լորանսին և Կաբրիել Ֆերրիեին։ 1907 թ. մասնակցել է Սալոն դե Օդեոնի մեծ ցուցահանդեսին, արժանացել ֆրանսիական մամուլի գնահատմանը։ Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո (1908) վերադարձել է Կ. Պոլիս, զբաղվել նկարչությամբ։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո կրկին մեկնել է Ֆրանսիա, ապրել Փարիզում։ Մասնակցել է Փարիզում բացված մի շարք ցուցահանդեսների։ 1932 թ. Փարիզում ունեցել է անհատական ցուցահանդես, որը լայն հետաքրքրություն է ստեղծել նրա անվան շուրջ։ Ֆրանսիական կառավարությունը նրան շնորհել է «Պալմ դե զԱկադեմի օֆիսիե» պատվո նշանը։ Հետևել է դասական նկարչության դպրոցին։ Ստեղծագործությունների մեջ նկատելի թիվ են կազմում հայ իրականությունից ներշնչված գործերը, որոնցից են՝ «Հայ որբուհին», «Հայ որբուհիները լեռներում» և այլն։ Լավագույն գործերից է նաև «Ինքնանկարը»։

ՊԱԴԱԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ *(ծն. 1911).*— Դերասան, հրապարակախոս։ Մնվել է Ալեքսանդրիայում (Եգիպտոս)։ Նախնական կրթությունն ստացել է տեղի Պողոսյան վարժարանում։ 1931 թ. մեկնել է Ամերիկա, որտեղ ունեցել է բեմական երկարամյա գործունեություն։ Մոտ քառասուն տարի խաղացել է «Անդրանիկ», Գ. Սիմոնովի, Խ. Չուխաճյանի, Էդ. Պողոսյանի և այլ թատերախմբերում։ Կատարել է թե կատակերգակ և թե դրամատիկական դերեր։ Մասնակցել է Նյու Յորքի «Հայ ռադիո» կայանի երաժշտական ներկայացումներին՝ 1932 թ.։ Եղել է Կահիրեում լույս տեսնող «Արև» օրաթերթի Ամերիկայի թղթակիցը։ Աշխատակցել է նաև Ալեքսանդրիայի «Արաքս» շաբաթաթերթին և ամերիկահայ մի շարք պարբերականների («Լրաբեր», «Պայքար» և այլն)։

ՊԱԶԱՐՃՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ *(1877—1923).*— Փիլիսոփա, գրականագետ։ Մնվել է Արևմտյան Հայաստանի Երզնկա քաղաքի գյուղերից Սուրբ Օհանում։ Նախնական կրթությունն ստացել է Երզնկայում։ 1896 թ. ջարդերի նախօրյակին մեկնել է Վենետիկ, ուսումը շարունակել Մուրատ-Ռաֆայելյան վարժարանում, ավարտելուց հետո Պատուաստի համալսարանում հետևել է բժշկության։ Միաժամանակ հետաքրքրվել է փիլիսոփայությամբ և գրականությամբ, լսել համապատասխան ֆակուլտետների դասընթացները։ Եղել է բաղմակողմանի զարգացման տեր անձնավորություն, մոտիկից կապված հայ իրականության հետ։ Նամակագրական և անձնական սերտ կապերի մեջ է եղել Դանիել Վարուժանի և այլ գրողների հետ։ 1910-ական թվականների սկզբներից փիլիսոփայական, գրականագիտական հոդվածներով աշխատակցել է գերմանական և հայկական մամուլին, այդ թվում՝ Կ. Պոլսի «Բյուզանդիոն» օրաթերթին, որտեղ տպագրվել են նրա փիլիսոփայական մի քանի հոդվածաշարքերը։ Առանձին գրքերով, գերմաներեն լեզվով լույս է ընծայել փիլիսոփայական աշխատություններ, ինչպես «Շոպենհաուերը լավատեսության փիլիսոփա» (Լայպցիգ, 1909), «Քննադատություն Իբսենի դրամատուրգիայի» (Լայպցիգ, 1910), «Ֆրիտրիխ Նիցշե. մեծ շաուլատանը» (1911)։ Այս աշխատություններն իրենց համարձակ վերաձևումներով մեծ աշխուժություն են առաջաց-

բել գերմանական մամուլում։ Գրվել են թեր ու դեմ բազմաթիվ հոդվածներ։ Գրել է մի վեպ՝ «Առաջին սերը» խորագրով։

ՊԱԼԱԳՅԱՆ ԱՆԱՀԻՏ *(ծն. 1912).*— Գրականագետ, կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, դուստրն է Տիրան Պալագյանի։ Կրթությունն ստացել է Վիեննայում և Ժնևում։ 1926 թ. նրանց ընտանիքը տեղափոխվել է Ամերիկա, որտեղ շարունակել է ուսումը, 1936 թ. ավարտել Նյու Յորքի Հընթըր կոլեջը։ Աչքի է ընկել անգլերենի և ֆրանսերենի հավասար խորացությամբ, վարել է կոլեջի ֆրանսերեն թերթի խմբագրի պաշտոնը։ Մամուլում տպագրել է քնարական բանաստեղծություններ ֆրանսերեն։ Ապա ուսումը շարունակել է Կոլումբիա համալսարանում, ավարտել 1943-ին փիլիսոփայության մագիստրոսի աստիճանով։ Ուսանողական այդ տարիներին մասնակցել է Կորնելի մահվան 300-ամյակի առիթով 1936 թ. Նյու Յորքում կազմակերպված «Սիտի» ներկայացմանը՝ գլխավոր հերոսուհու դերով, արժանացել Նյու Յորքի ֆրանսիական հյուպատոսի, Ալլան Լոբենսի կառավարիչի և ֆրանսիացի այլ հյուրերի բացառիկ գնահատմանը։ Երկար տարիներ ֆրանսերեն լեզու և ֆրանսիական գրականություն է դասավանդել ամերիկյան բարձրագույն դպրոցներում, այդ թվում Սիրակուզի համալսարանում՝ պրոֆեսորի աստիճանով։ Ամերիկյան գրական հանդեսներում տպագրել է հետազոտություններ ֆրանսիական գրականության մասին։ 1947-ին առանձին գրքով լույս է ընծայել «Գերիրապաշտության սկիզբը. մի նոր խորհրդապաշտություն ֆրանսիական գրականության մեջ» անգլերեն մենագրությունը։ Կարդացել է զեկուցումներ միջազգային գիտաժողովներում։

ՊԱԼԱԳՅԱՆ ԳՐԻԳՈՐԻՍ *(1879—1934).*— Բանաստեղծ, հոգևորական գործիչ։ Ծնվել է Եվդոկիայում (Թոքաթ)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա ուսումը շարունակել է Կարսո Սանասարյան վարժարանում, ավարտելուց հետո մեկնել է Գերմանիա, սովորել Բեռլինի համալսարանում։ Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց անմիջապես հետո վերադարձել է Պոլիս։ 1915 թ. ապրիլի 24-ի աղետավոր գիշերը, ի թիվս հարյուրավոր այլ մտավորականների, ձերբակալվել է, աքսորվել Չանկրի։ Կոմիտասի հետ եղել է նույն վայրերում, ականատես՝ հայ մտավորականության անլուր տանջանքներին, իսկ ականատեսներից ու ջարդի մասնակիցներից լսել է ընկերների սպանությունների վայրենական մանրամասնությունները։ Մի կերպ ազատվելով սպանդից, վերադարձել է Կ. Պոլիս, պատերազմից հետո, նորից անցել Եվրոպա, գրել է իր վերհիշյալ տպավորությունները, տպագրել Վիեննայում, 1922 թվականին, «Հայ զոհգոթա» խորագրով (Ա. հատ.), ցնցող բազմաթիվ լուսանկարներով, հանված հենց ջարդերին մասնակից գերմանացի սպաների կողմից։ Այդ գրքում մանրամասնորեն նկարագրված են մասնավորապես Չանկրիի ու Այնաշի ճանապարհներին սպանված մտավորականների (Դ. Վարուժան, Սիամանթո, Ռ. Սեակ և ուրիշներ) վերջին օրերը աքսորավայրում, Կոմիտասի հոգեկան վիճակը և այլն։ Այդ գրքի Բ. հատորը լույս է տեսել հեղինակի մահից հետո, որը սակայն չունի նախորդի գրական և ճանաչողական արժեքը։ Կյանքի վերջին տարիներին եղել է ֆրանսահայ գաղութի հոգևոր առաջնորդը։ Մի քանի տարի մամուլում, տարեգրքերում տպագրել է բանաստեղծական հոդվածներ։

ՊԱԼԱԳՅԱՆ ՆՈՆԱ *(ծն. 1918).*— Անգլիագիր լրագրող։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրտսեր քույրն է Անահիտ Պալագյանի։ Փոքր հասակից ծնողների հետ տեղափոխվել է Ամերիկա։ Ավարտել է Կոլումբիա համալսարանի լրագրության բաժինը՝ գիտության մագիստրոսի աստիճանով։ Աշխատել է որպես լրագրող։ 1943 թ. նշանակվել է «Նյու Յորք Թայմզ» օրաթերթի գրախոսությունների բաժնի օգնական խմբագիր և գրքենադատ։ Երկար տարիներ վարել է այդ պաշտոնը, թերթում տպագրելով նաև խմբագրական հոդվածներ։ Աշխատակցել է ամերիկյան այլ թերթերի ու հանդեսների («Թու մորոու», «Նյու ռեպուբլիկ» և այլն)։ Գրական նյութերի շուրջ դասախոսություններ է կարդացել Կոլումբիա համալսարանում, Բերնարդ և Սիտի կոլեջներում։ 1958 թ. լույս է ընծայել «Ամերիկահայ գրողներ» աշխատությունը, նվիրված անգլիագիր հայ գրողներ Վ. Սարոյանին, Լ. Սյուրմելյանին, Էլ. Վարանդյանին և Մերջրի Հուսեփյանին։

ՊԱԼԱԳՅԱՆ ՍԻԼՎԻԱ.— Երգչուհի։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է հայկական նախնական կրթությունը։ 13 տարեկանից երգել է «Կոմիտաս» երգչախմբում, որը ղեկավարել է էդգար Մանասը։ Նրա խորհրդով էլ մեկնել է Եվրոպա, տարբեր քաղաքներում մասնավոր ուսուցիչների մոտ մշակել ձայնը, ապա բնակություն հաստատել Բուենոս-Այրեսում (Արգենտինա), որտեղ շարունակել է երաժշտական ուսումը Ռոզա Ադելի և Ֆրանկա Թելիպպելիի մոտ։ Տվել է համերգներ, արժանացել նշանավոր արվեստագետների գնահատմանը։ Համերգներ է ունեցել Նյու Յորքում (1957 թ. աշնանը) և Ամերիկայի մի շարք այլ քաղաքներում։ Նյու Յորքում երգել է նաև համաշխարհային ցուցահանդեսում, արժանացել «Նյու Յորք հերալդ տրիբյուն» և այլ թերթերի գնահատմանը։ Երկար տարիներ եղել է Արգենտինայի ռադիոյի մենակատարներից, ելույթներ ունենալով սիմֆոնիկ նվագախմբի հետ։ Երգարվեստ ունեցել է Հենդել, Գլյուկ, Սկարլատտի, Մոցարտ, Շուբերտ, Բրամս, Կոմիտաս, Սայաթ-Նովա, Ռ. Մելիքյան, Սաթյան, Ա. Խաչատրյան և ուրիշներ։ Երգել է անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն, հայերեն։

ՊԱԼԱԳՅԱՆՑ ՍԱՐԳԻՍ *(1831—1923).*— Գրող-հրապարակախոս, խմբագիր։ Ծնվել է Զմյուռնիայում, որտեղ ստացել է կրթությունը, սովորել տեղի Մխիթարյան վարժարանում։ 13 տարեկան հասակից աշխատակցել է «Արշալույս Արարատյան» թերթին, տպագրելով գեղարվեստական գրական բանաստեղծություններ։ Ավարտելով կրթությունը, մի քանի տարի ըստ բավականի է առատրով։ 1855 թվականից մինչև կյանքի վերջին տարին եղել է Զմյուռնիայի Հայոց առաջնորդարանի քարտուղարը։ Այդ ժամանակաընթացքում զուգահեռ վարել է նաև այլ պաշտոններ, երկու տարի խմբագրել է «Արշալույս Արարատյան» թերթը։ Աշխատակցել է Զմյուռնիայի, Կ. Պոլսի, Կալկաթայի հայերեն մի շարք պարբերականների։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Տրամաբանություն», «Տքուր Սովամուն», «Եղած զրպարտությանց», «Ընթերցարան մանկանց», «Զարուհի կամ համբերության պակը»։ Թողել է մի քանի անտիպ երկեր, որոնցից ուշագրավ են իր ընդարձակ ինքնակենսագրությունը և «Զմյուռնիո առաջնորդաց պատմական հիշատակությունք» գիրքը, որը ընդգրկում է 1688—1911 թթ. ընդարձակ մի ժամանակաշրջան։

ՊԱԼԱԳՅԱՆՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ *(1879—1954).*— Գրող, հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ։ Ծնվել է Մակեդոնիայում (այժմ՝ Հարավսլավիա), Ակնից գաղթած հայ ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է Սկյուպում (Հարավսլավիա), ապա սովորել է Սալոնիկում (այժմ՝ Հունաստան)։ Մեկ տարի էլ Սոֆիայի (Բուլղարիա) գիմնազիայում ուսանելուց հետո մեկնել է Գերմանիա, հետևել դասական գրականության, բանասիրության և լեզուների, իմացել է հին հունարեն, գրաբար և այլ լեզուներ։ Ավարտելով ուսման ընթացքը, վերադարձել է Բուլղարիա, որտեղ ունեցել է գրական, հրապարակախոսական բեղուն գործունեություն։ 1906 թ. խմբագրել է «Խուտոժնիկ» բուլղարերեն արվեստաբանական պարբերականը, իսկ 1907 թ.՝ «Վրեմե» օրաթերթը։ Նա է հիմնադրել և խմբագրել Բուլղարական առաջին գրական շաբաթաթերթը՝ «Ռազվիկորը» 1921—1927 թթ.։ Գրել է գեղարվեստական ստեղծագործություններ, մեծ մասամբ պատմվածքներ, որոնք լույս են տեսել մամուլում։ Բուլղարական մամուլը բարձր է գնահատել նրա «Բուրենի» պոեմը։ Գլուխգործոցն է Գյոթեի «Ֆաուստի» ամբողջական և տաղաչափյալ թարգմանությունը բուլղարերեն։ Թարգմանել է հատվածներ Հոմերոսի «Իլիականից» և «Ոդիականից»։ Արժանացել է Գյոթեի մեդալի, որը շատ քչերին է տրվել, ինչպես գրող Կնուտ Համսունին։

ՊԱԼԱՍԱՆ ԿԱԶՄՈՂ *(17-րդ դ.).*— Քարգործ վարպետ։ 1665 թ. Մելիքսեթեկ կալմոզի հետ քանդակել է մի գեղեցիկ խաչքար, որն այժմ գտնվում է Մարտունու շրջանի Վերին Զարանլուխ գյուղի եկեղեցու բակում։

ՊԱԼԱՍԱՆՅԱՆ ՍՏԵՓԱՆ *(1837—1889).*— Պատմաբան, կրթական գործիչ։ Ծնվել է Ռումինիայի Պոթուշան քաղաքում։ Կրթությունն ստացել է Փարիզի Մուրատյան վարժարանում, ավարտել 1858 թ.։ Հրավիրվել է Թեոդոսիա պաշտոնավարելու Խալիպյան դպրոցում։ Այնտեղ որպես ուսուցիչ աշխատելու տարիներին «Մասսյաց աղավնի» պարբերականում տպագրել է հոդվածներ։ Հետագայում, գժտվելով դպրոցի տեսուչ Գաբրիել Այվազովսկու հետ,

մեկնել է Նոր Նախիջևան, ապա 17 տարի հայոց լեզու և գրականություն է դասավանդել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, դաստիարակել է բազմաթիվ աշակերտների, որոնցից շատերը հետագայում դարձել են հայ մշակույթի ականավոր դեմքեր։ Միաժամանակ ֆրանսերեն է դասավանդել Թիֆլիսի ռուսական դպրոցներում։ 1881 թ. Գևորգ կաթողիկոսի հրավերով եկել է Էջմիածին, մինչև կյանքի վերջը պաշտոնավարել Գևորգյան ճեմարանում։ «Գրիչ» ծածկանունով բանասիրական հոդվածներ է տպագրել «Փորձ» հանդեսում։ Վերջինիս դադարումից հետո աշխատակցել է «Արարատ», «Վարժարան» և այլ պարբերականների։ Հրատարակել է հայոց լեզվի, գրականության և պատմության դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ինչպես՝ «Մայրենի լեզու», «Գործնական քերականություն», «Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրավոր լեզվի հայոց», «Փորձ քերականության գավառական հայ լեզվի», «Ընթերցարան մանկանց», «Այբբենարան հայ և ֆրանսերեն» և այլն, բոլորն էլ տպագրված Թիֆլիսում։ Լույս է ընծայել «Պատմություն հայ գրականության» աշխատության Ա. մասը։ Նրա առավել արժեքավոր աշխատություններից է «Հայոց պատմությունը», որը լույս է տեսել հեղինակի մահից հետո, Թիֆլիսում, արժանացել է վերահրատարակության և երկար տարիներ օգտագործվել է որպես ուսումնական ձեռնարկ հայկական դպրոցներում։

ՊԱԼԸԳՃՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ԼՈՒԹՖԻ) *(1838—1898).*— Հրապարակախոս, խմբագիր, գրող։ Ծնվել է Կեսարիայում (Թուրքիա)։ Պատանի հասակից տեղափոխվել է Կ. Պոլիս, որտեղ ստացել է կրթություն։ Գրական-հրապարակախոսական ասպարեզ է մտել 1860-ական թվականների սկզբներին, աշխատակցելով հիմնականում Պոլսում լույս տեսնող հայատառ Թուրքերեն մամուլին։ 1863 թ. տպագրել է իր անդրանիկ վեպը՝ «Գառնիկ, Կյուլյունիա վն Տիգրանը հիքեայեսի» (Գառնիկի, Կյուլյունիայի և Տիգրանի վեպը) հայերեն տառերով, Թուրքերեն լեզվով, Թուրքախոս հայերի համար։ 1881—1883 թթ. Կ. Պոլսում հրատարակել է «Ցելեք» (ճակատագիր) հանդեսը, որի էջերում տպագրել է գրական, հրապարակախոսական մի շարք երկեր։ Դրանցից հիշատակության արժանի է մասնավորապես «Գայլերինին աթիք գոճապաշլըղը» (Կեսարիայի ջոջերը) վեպը, որը լույս է տեսել նաև առանձին գրքով, 1883 թ. և ներկայացնում է գրական որոշակի արժեք։ «Ցելեքից» արտատպելով նույն 1883 թ. առանձին գրքով հրատարակել է նաև «Սեատեթի ինանիե» («Մարդկային երջանկություն») երկը։ Գրել է հայատառ Թուրքերեն աշուղական բազմաթիվ երգեր, որոնք լույս են տեսել Լութֆի ծածկանունով։

ՊԱԼԸԳՃՅԱՆ ՍԱՀԱԿ (ԴԱՆԻԱ) *(1849—1914).*— Ճարտարապետ։ Ծնվել է Կեսարիայում, որտեղ ստացել է կրթությունը, հետևել ճարտարապետության։ 1877 թ. նրա նախագծով և ղեկավարությամբ կառուցվել է Կեսարիայի Նեվշեհիր բնակավայրի հայոց եկեղեցին, որը զարդարել է քանդակներով։ Կեսարիայում նրա նախագծերով կառուցվել են տասնյակ տներ, վարժարաններ, եկեղեցիներ, այդ թվում հայ կաթոլիկների եկեղեցին, Թուրքական զորանոցը։ Հմուտ է եղել փայտափորագրության, որոնցով զարդարել է իր կառուցած շենքերից մի քանիսը։

ՊԱԼԸԳՃՅԱՆ ՍԱՀԱԿ *(ծն. 1916).*— Հրապարակախոս, գրող։ Ծնվել է Կահիրեում (Եգիպտոս)։ Կրթությունն ստացել է տեղի Թաշճյան տարրական և Պերպերյան միջնակարգ դպրոցներում, ավարտել է 1934-ին, իսկ 1936-ին՝ ֆրանսիական լիցեն։ 1938-ից ապրել է Բրազիլիայում։ Աշխատակցել է սփյուռքահայ, նաև ֆրանսերեն, անգլերեն բազմաթիվ պարբերականների։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Պատմություն անսկիզբ և անվախճան» (պատմվածքների ժողովածու, Հալեպ, 1980), «Մինչև Ամերիկա» (Կահիրե, 1941), «Օտար ու հին ճամփուն վրա» (1940), նաև մոտ տասը գրքույկ Հ. Թրուայայից, Վ. Սարոյանից իր կատարած թարգմանությունները պարունակող։ Թարգմանություններից մի քանիսն էլ տպագրվել են «Արև» օրաթերթում որպես թերթոն։

ՊԱԼԸԳՃՅԱՆ ՎԱՀԵՐԱՄ *(1896—1961).*— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը։ Բեմական ասպարեզ է մտել 1889 թվականից, որպես սիրող մասնակցել Կ. Պոլսում տրվող ներկայացումների։ 1893 թվականին խաղացել է Թ. Ֆասուլաքյանի խմբում։ Ապա, հայերեն ներկայացումների կրկին արգելքից հետո մտել է Ահմեդ Ֆեհֆիի խումբը։ Հետագայում, Ֆելեկյան քույրերի հետ Բալկանյան երկրներում կատարած մի շրջագայությունից հետո, վերադարձել է Կ. Պոլիս, իր բախտը կապել Մ. Մնակյանի «Օսմանյան դրամատիկ»-ի հետ։ Միաժամանակ էլ խաղացել է Արշակ Պենկլյանի օպերետային խմբում, մասնակցել «Էնպլեսիֆի Հորհոր աղա», «Մամզել Նիթուշ» և այլ օպերետների։ Մինչև Պենկլյանի մահը (1923) այս խմբում խաղալուց հետո, աշխատել է Թուրքական խմբերում։ 1952 թ. Կ. Պոլսում նշվել է նրա բեմական գործունեության 60-ամյակը։ Լայն ժողովրդականություն է ձեռք բերել մասնավորապես օպերետային մի քանի դերերում, ինչպես Բոստանջի բաշի («Էնպլեսիֆի Հորհոր աղա»), Սուլթան բեկ («Արշին մալ ալան») և այլն։

ՊԱԼԹԱԶԱՐՅԱՆ ՂՈՒԿԱՍ *(1810—1878).*— Հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Զմյուռնիայում։ Կրթությունն ստացել է Հովհան քհ. Վանանդեցու մոտ, ապա ինքնազարգացմամբ խորացրել է գիտելիքները, սովորել լեզուներ։ 1840 թ. Զմյուռնիայում հիմնադրել է «Արշալույս Արարատյանը», որն առաջին աշխարհաբար թերթն է հայ իրականությունում։ Այն խմբագրել է մինչև մահը, 38 տարի։ «Արշալույս Արարատյանը» 1840-ական թվականներին նկատելի դեր է կատարել լուսավորական գաղափարների տարածման գործում, սակայն 1860-ական թվականներից աստիճանաբար դարձել է պահպանողական և խստորեն քննադատվել դեմոկրատական մամուլի կողմից։

ՊԱԼԹԱՅԱՆ ՍԱՐԳԻՍ *(1897—?).*— Կոմպոզիտոր, խմբավար։ Ծնվել է Մալկարայում (Թուրքիա)։ Փոքր հասակից ծնողների հետ գաղթել է Բուլղարիա։ Երաժշտական նախնական կրթությունն ստացել է Պլովդիվում։ Ավարտելուց հետո որպես երաժշտության ուսուցիչ միաժամանակ աշխատել է Հունաստանում, ապա Պլովդիվում, որտեղ էլ ապրել է ընդմիշտ, ունեցել մանկավարժական երկարամյա գործունեություն։ Կազմակերպել է հայկական երգչախմբեր։ Նրա ղեկավարած «Արամ Խաչատուրյան» երգչախումբը նկատելի դեր է կատարել գաղութում, շահել է առաջնություն Բուլղարիայում կազմակերպված ստուգատեսներում։ Պարգևատրվել է «Կիրիլի և Մեթոդիի» 2-րդ աստիճանի շքանշանով։ Մշակել է ժողովրդական երգեր, մեներգեր, խմբերգեր, պարեղանակներ, գրել քայլերգեր, «Միդանուշների պարը» պա-

ղացել է Գարագաշի խմբում։ Հետագայում կապվել է հայկական և Թուրքական մի շարք թատերախմբերի հետ, այդ թվում՝ Նաբլը Կափուի բացօթյա թատրոնի։ 1958 թ. աշխատել է Էսայան Սանուց միության թատերախմբում որպես դերասան։ Հայկական թատրոնում նրա խաղացած դերերից են՝ Ռոդրիգո («Օթելլո»), Ռոզենկրաց («Համլետ»), Կոկիկ («Սալոնի օձը») և այլն։

ՊԱԼԹԱԶԱՐ ԱԲԴԱՐ *(1880—1909).*— Նկարիչ։ Ծնվել է Բուխարեստում (Ռումինիա)։ Տարրական կրթությունն ստացել է ծննդավայրի հայկական դպրոցում, ապա սովորել է Բուխարեստի Մաթեյ Բասարաբ լիցեում, իսկ մասնագիտական հիմնավոր կրթությունն ստացել է Բուխարեստի գեղարվեստների դպրոցում, որտեղ սովորել է 1896—1901 թթ.։ Ստեղծագործել է ընդամենը ութը տարի։ Նկարել է հիմնականում չքավոր խավի մարդկանց ու նրանց կյանքից դրվագներ, նաև բնանկարներ, դիմանկարներ։ Ռումինացի արվեստագետները նրա ստեղծագործություններում նկատել են հայկական մանրանկարչության շեշտված ազդեցություն։ 1907 թ. ունեցել է անհատական երկու ցուցահանդես, որտեղ ցուցադրել է 200 յուղաներկ, ջրաներկ, գրաֆիկական և մանրանկարչական գործեր, որոնցից են՝ «Քոլոմբա», «Արևի տակ», «Բաղակայի վաճառականուհին», «Սերմնացանը», «Ձերբեզուհին», «Բյուզանդական խշխանուհիներ», «Աշնանային տպավորություններ» և այլն։ Նրա գործերից նմուշներ պահվում են ռումինական պետական պատկերասրահում, Կլուժի արվեստի թանգարանում, Զամպաքճյանի, դոկտոր Սևերինյանուի, Օփրեսկուի հավաքածուներում, նաև այլ երկրների հավաքածուներում, ինչպես դոկտոր Դիեոլաֆուայի (Փարիզ)։

ՊԱԼԹԱԶԱՐ ՊԵՏՐՈՍ *(1866—1953).*— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է նախնական կրթությունը։ Բեմական ասպարեզ է մտել 1889 թվականից, որպես սիրող մասնակցել Կ. Պոլսում տրվող ներկայացումների։ 1893 թվականին խաղացել է Թ. Ֆասուլաքյանի խմբում։ Ապա, հայերեն ներկայացումների կրկին արգելքից հետո մտել է Ահմեդ Ֆեհֆիի խումբը։ Հետագայում, Ֆելեկյան քույրերի հետ Բալկանյան երկրներում կատարած մի շրջագայությունից հետո, վերադարձել է Կ. Պոլիս, իր բախտը կապել Մ. Մնակյանի «Օսմանյան դրամատիկ»-ի հետ։ Միաժամանակ էլ խաղացել է Արշակ Պենկլյանի օպերետային խմբում, մասնակցել «Էնպլեսիֆի Հորհոր աղա», «Մամզել Նիթուշ» և այլ օպերետների։ Մինչև Պենկլյանի մահը (1923) այս խմբում խաղալուց հետո, աշխատել է Թուրքական խմբերում։ 1952 թ. Կ. Պոլսում նշվել է նրա բեմական գործունեության 60-ամյակը։ Լայն ժողովրդականություն է ձեռք բերել մասնավորապես օպերետային մի քանի դերերում, ինչպես Բոստանջի բաշի («Էնպլեսիֆի Հորհոր աղա»), Սուլթան բեկ («Արշին մալ ալան») և այլն։

ՊԱԼԹԱԶԱՐՅԱՆ ՂՈՒԿԱՍ *(1810—1878).*— Հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Զմյուռնիայում։ Կրթությունն ստացել է Հովհան քհ. Վանանդեցու մոտ, ապա ինքնազարգացմամբ խորացրել է գիտելիքները, սովորել լեզուներ։ 1840 թ. Զմյուռնիայում հիմնադրել է «Արշալույս Արարատյանը», որն առաջին աշխարհաբար թերթն է հայ իրականությունում։ Այն խմբագրել է մինչև մահը, 38 տարի։ «Արշալույս Արարատյանը» 1840-ական թվականներին նկատելի դեր է կատարել լուսավորական գաղափարների տարածման գործում, սակայն 1860-ական թվականներից աստիճանաբար դարձել է պահպանողական և խստորեն քննադատվել դեմոկրատական մամուլի կողմից։

ՊԱԼԹԱՅԱՆ ՍԱՐԳԻՍ *(1897—?).*— Կոմպոզիտոր, խմբավար։ Ծնվել է Մալկարայում (Թուրքիա)։ Փոքր հասակից ծնողների հետ գաղթել է Բուլղարիա։ Երաժշտական նախնական կրթությունն ստացել է Պլովդիվում։ Ավարտելուց հետո որպես երաժշտության ուսուցիչ միաժամանակ աշխատել է Հունաստանում, ապա Պլովդիվում, որտեղ էլ ապրել է ընդմիշտ, ունեցել մանկավարժական երկարամյա գործունեություն։ Կազմակերպել է հայկական երգչախմբեր։ Նրա ղեկավարած «Արամ Խաչատուրյան» երգչախումբը նկատելի դեր է կատարել գաղութում, շահել է առաջնություն Բուլղարիայում կազմակերպված ստուգատեսներում։ Պարգևատրվել է «Կիրիլի և Մեթոդիի» 2-րդ աստիճանի շքանշանով։ Մշակել է ժողովրդական երգեր, մեներգեր, խմբերգեր, պարեղանակներ, գրել քայլերգեր, «Միդանուշների պարը» պա-

տանեկան բալետը (1921), «Վարդ և սեր» (1932), «Անառակ որդին» (1942) պատանեկան օպերաները, «Սոնա», «Մոլորված ամուսիններ» (1947), «Կարմիր զինվոր» (1948) օպերետները և այլն։

ՊԱԼՃՅԱՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ *(1814—1884).*— Կրթական գործիչ, բանասեր։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է Վիեննայի Մխիթարյանների վանքում, դարձել այդ միաբանության անդամ։ Ունեցել է կրթական, բանասիրական երկարամյա գործունեություն։ Մանկավարժական պաշտոններ է վարել թե նույն վանքում և թե Մխիթարյան այլ դպրոցներում։ Աշխատակցել է Վիեննայի Մխիթարյանների «Եվրոպա» պաշտոնաթերթին (1847—1863)։ Հրատարակել է մի շարք դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, բանասիրական ուսումնասիրություններ, ինչպես՝ «Վայելչագրություն ի շրջս հատվածս» (գիրք Ա, Բ, Գ և Դ, Վիեննա, 1838), «Ընդհանուր տեսություն երկրագնդոյ» (1839), «Հրահանգ աստեղագիտության ի վերա երկրագնդոյ» (1845), «Աշխարհագրություն ուսումնական և բնական և տեսություն երկրագնդոյ» (1849), նույնը վերափոխված՝ 1860 և այլն։ Թարգմանել է «Մոլորություն բողոքականության» գիրքը (Վիեննա, 1866)։ 1836 թ. պատրաստել է հայատառ մի երկրագունդ (գլոբուս)։

ՊԱԼՃՅԱՆ ՎԱԶԳԵՆ *(տե՛ս* **ՎԱԶԳԵՆ Ա.***)*։

ՊԱԼՃՅԱՆ ԳՐԻԳՈՐ *(1764—1831).*— Ճարտարապետ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Որդին է ճարտարապետ Պալի Գալֆայի։ Եղել է արքունի ճարտարապետ Սուլթան Աբդուլ 1-ինի, նրա հաջորդ Սուլթան Սելիմ 3-րդի և Սուլթան Մահմուտ 2-րդի գահակալության տարիներին։ Նրա նախագծերով Կ. Պոլսում կառուցվել են բազմաթիվ պալատներ, բնակելի և պետական շենքեր, որոնցից առավել կարևորներն են՝ Սարա Բուրնուի պալատը, Պեշիկթաշի հին պալատը, Սուլթանուհիների պալատը Առնավուտ գյուղում, Թեֆթերդարի Սուլթան սարայը (Ոսկեղջյուրում), Սկյուտարի Սելամիե զորանոցը, Տավուտ փաշայի զորանոցը, Սուլթան Մահմուտի ապարանքը, հայկական մի եկեղեցի Կեսարիայում և այլն։ Եղել է բազմակողմանի զարգացման տեր անձնավորություն, սուլթանները նրան օգտագործել են նաև որպես խորհրդական՝ եվրոպական պետությունների հետ ունեցած հարաբերություններում։ Սուլթան Մահմուտ 2-րդը 1808 թ. մի հրովարտակով նրան շնորհել է այնպիսի արտոնություններ, որոնցից առհասարակ զուրկ են եղել քրիստոնյաները Թուրքիայում, ինչպես ձի նստելու, ծառաներ, մորուք ունենալու, երկթի նավակ ունենալու արտոնություններ։ Այդ նույն հրովարտակով ինքը և նրա որդիները ազատվել են գլխահարկից։ Սուլթանն այս արտոնությունները տալը պատճառաբանել է այն բանով, որ «հնարավոր չէ սովորական անհատների շարքը դասել» այդ մեծ անձնավորությանը։ Պալատական շրջանակների հետ ունեցած կապերն օգտագործել է պոլսահայ համայնքի տնտեսական և մշակութային կարիքներին օգնելու համար։ Նյութապես օժանդակել է հայկական կրթական, հանրային հաստատություններին, Երուսաղեմի հայոց վանքին, որտեղ եղել է իր մոր հետ և նվերներ տվել վանքին։

ՊԱԼՅԱՆ ԵՐՎԱՆԴ *(1869—1945).*— Հրապարակախոս, խմբագիր, հասարակական գործիչ։ Ծնվել է Թեոդոսիայում (Ղրիմ)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ռուսական դպրոցում, ապա սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ Հետագայում մեկնել է արտասահման, ժնևի համալսարանում հետևել սոցիալական գիտությունների դասընթացներին։ Այնտեղ էլ սկսել է գրական հասարակական գործունեությունը։ 1900 թ. ժնևում հրատարակել է «Հանդես» ամսագիրը՝ սոցիալիստական ուղղությամբ, սակայն հինգ համար լույս ընծայելուց հետո դադարեցրել է նյութական դժվարությունների պատճառով։ 1904 թ. փորձել է հրատարակել «Բանվոր» հանդեսը, որը ավելի կարճ կյանք է ունեցել։ Վերադառնալով Կովկաս՝ աշխատել է Բաքվում։ Այնտեղ խմբագրել և տպագիր հրատարակել է «Սոցիալ դեմոկրատ», «Էկոնոմիկա», «Շեփոր» պարբերականները։ Նախ պատկանել է հնչակյան կուսակցության, հետագայում հարել է սպեցիֆիկներին։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Հայ սոցիալ-դեմոկրատ միությունը և յուր «Պրոլետարիատ» օրգանը» (ժնև, 1903), «Հնչակյան կուսակցությունը և հայ սոցիալ-դեմոկրատիան» (ժնև, 1903)։ Առավել արժեքավոր է նրա «Միքայել Նալբանդյանի տնտեսական թեորիան»

գիրքը (Բաքու, 1911), որտեղ ընդարձակ խոսվում է Մ. Նալբանդյանի և ռուս վաթսունականների գաղափարական կապերի մասին։ 1921 թվականից ապրել է Երևանում, կարճ ժամանակ պաշտոնավարել է Երևանի պետական համալսարանում, սակայն առողջական պատճառով թողել է դասախոսությունը։ Գրել է իր ընդարձակ հիշողությունները, որոնք մնացել են անտիպ։

ՊԱԼՅԱՆ ԽՈՐԵՆ *(ծն. 1935).*— Երգիչ։ Ծնվել է Տրիպոլիում (Լիբանան)։ 1946 թ. նրանց ընտանիքը տեղափոխվել է Խորհրդային Հայաստան։ Միջնակարգ կրթությունն ստացել է Լենինականում։ 1955-ից սովորել է Էջմիածնի հոգևոր ճեմարանում։ Զբաղվել է դասախոսական աշխատանքով։ Գրաբար է դասավանդել համալսարանի բանասիրական ֆակուլտետում, միաժամանակ երգել է համալսարանի և այլ երգչախմբերում, կատարելով հիմնականում Կոմիտասի, Եկմալյանի մշակումները։ Աստիճանաբար ընդարձակել է երգացանկը Ալ. Սպենդիարյանի, Ռ. Մելիքյանի, Ա. Տիգրանյանի, Գ. Ալեմշահի գործերով, իսկ հետագայում մղվել է դեպի միջնադարյան երգը (Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի)։ Ունեցել է մենահամերգներ հանրապետության տարբեր քաղաքներում։ Հոգևոր երգերի կատարմամբ մասնակցել է «Պեպո» ֆիլմի վերականգնված օրինակի պատրաստմանը, նաև «Տերտերին ուխտը» ֆիլմին։ Նրա առավել գնահատված կատարումներից են «Մոկաց Միրզան», «Լոռվա գութաններգը», «Հովիկը», «Արոր և տատրակը», «Հոլ արա եղոն» և այլն։

ՊԱԼՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ *(1800—1866).*— Ճարտարապետ։ Ծնվել է Բաբերդում (Արևմտյան Հայաստան)։ Որդին է արքունի ճարտարապետ Գրիգոր Պալյանի։ Մասնագիտական կրթությունն ստացել է հոր մոտ։ Վերջինիս մահից հետո (1831) հաջորդել է նրան որպես սուլթանական պալատի ճարտարապետ։ Նրա նախագծերով Կ. Պոլսում կառուցվել են պետական և հանրային օգտագործման բազմաթիվ շենքեր, ինչպես Դոլմաբահչեի պալատը, Զրաղանի հին պալատը, Սալը բազարի պալատը (այժմ՝ գեղարվեստների ակադեմիա), Յըլդըզի հին պալատը, Սուլթան Մահմուտի, Սուլթան Մեջիդի և Սուլթան Ազիզի դամբարանները, մի քանի գործարան, ինչպես և հայոց ս. Փրկչի հիվանդանոցի շենքը և մի քանի հայկական եկեղեցիներ։ Մոտիկից կապված է եղել հայ կյանքի հետ։ Օգնել է Հարություն ամիրա Պեզճյանի ծախքով կառուցված Ազգային հիվանդանոցի շինությանը։ Նրա նյութական օժանդակությամբ է հիմնադրվել Կ. Պոլսի Դուզլու չեշմե թաղամասի ս. Հակոբ վանքի ժառանգավորաց վարժարանը։ Եդիկուլեի ազգային որբանոցում ստեղծել է երկրագործական դասընթացներ։ Եղել է բազմակողմանի զարգացման տեր անձնավորություն։ Այցելել է Անի, դիտել այդ քաղաքի ճարտարապետական կոթողները։ Կա կարծիք, որ օգտագործել է հայ ճարտարապետության որոշ ավանդույթները իր նախագծած շենքերում։

ՊԱԼՅԱՆ ԿԱՐՈ *(1871—1961).*— Ճարտարապետ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Կ. Պոլսի գեղարվեստների դպրոցում, Թորոս Թորամանյանի հետ միասին։ Ուսման ընթացքն ավարտելուց հետո մեկնել է նախ Բուլղարիա, այնտեղից՝ Եգիպտոս, բնակություն հաստատել Կահիրեում, որտեղ էլ գործել է մինչև կյանքի վերջը։ Նրա նախագծերով Եգիպտոսի տարբեր քաղաքներում կառուցվել են հանրային օգտագործման և մասնավոր բազմաթիվ շենքեր, այդ թվում՝ Սիկուռելի, Շեմլայի, Մաթոսյանի, Յաղուպյանի առևտրական շենքերը, Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատության շենքը և այլն։ Ճարտարապետության հարցերի նվիրված բազմաթիվ հոդվածներ է տպագրել հայ և օտար մամուլում։ Գրել է «Եգիպտոս և արաբական ճարտարապետությունը» գիրքը, որը տպագրվել է Կահիրեում, նաև «Դեպի լույս» աշխատությունը, նվիրված դպրոցական շենքերի կառուցմանը։

ՊԱԼՅԱՆ ՀԱԿՈԲ *(1837—1875).*— Ճարտարապետ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Որդին է ճարտարապետ Կարապետ Պալյանի։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, մասնագիտականը՝ Փարիզում։ Ավարտելուց հետո եղել է Վենետիկում, Վիեննայում, ուսումնասիրել այդ քաղաքի ճարտարապետական կառույցները։ Վերադառնալով Պոլիս՝ աշխատել է որպես ճարտարապետ։ Եղբոր՝ Սարգիս Պալյանի հետ նախագծել է Բոսֆորի երկու ափերին կառուցված բազմաթիվ պալատներ (Զրաղան, Բեյլրոզ և այլն)։ Անմիջապես իր նախագծած և կառուցած շենքերից են՝ Պեյքոզի Թոքաթի շենքը, Վալիտե

Սուլթանի քեռշկը, խոխվի՝ արաբական ոճով շինել տված քեռշկը և այլ տասնյակ շինություններ։ Եղել է ժամանակի զարգացած ու արվեստասեր մարդկանցից, մեծ սեր է ունեցել դեպի հայ թատրոնն ու երաժշտությունը։ Հովանավորել, նյութապես օգնել է շատ հայ գրողների ու արվեստագետների, այդ թվում՝ Մ. Պեշիկթաշլյանին, Պետրոս Ագամյանին, Տիգրան Չուխաջյանին, Աղնիվ Հրաչյային և այլոց։ Նրա տունը եղել է գրական յուրահատուկ մի սալոն, որտեղ հավաքվել են ժամանակի ականավոր գրողներն ու արվեստագետները, մտքերի փոխանակություն ունեցել, ընթերցել իրենց ստեղծագործությունները։ Իր ծախսով ու նախագծով 1867 թ. Կ. Պոլսի Օրթագյուղ թաղամասում կառուցել է փոքրիկ թատրոն, նվիրել Բարեսիրաց միությանը։ Այդ թատրոնում է, որ Պ. Մաղաքյանը՝ Պ. Ադամյանի, Աղնիվ Հրաչյայի հետ ունեցել է թատերական փայլուն գործունեություն, դարձ տալով ազգային բեմարվեստին, բեմական լեզվի ստեղծմանը, որի համար նյութական միջոցներ չի խնայել ճարտարապետը։ Չնայած դեռևս 1859 թ. նշանակված է եղել պետական ճարտարապետ, սակայն ավելի շատ կապված է մնացել հայկական միջավայրին ու մշակույթին, քան պալատական կյանքին։

ՊԱՅՏԱՆ ՀԱՇԵՐ *(19-րդ դ.).*— Աշուղ։ Ծնվել է Մարաշում (Թուրքիա), որտեղ ապրել և ստեղծագործել է։ Գրել է հայատառ Թուրքերեն բազմաթիվ երգեր, որոնք լայն ժողովրդականություն են վայելել։ Նմուշներ տպագրված են Գր. Գալուստյանի «Մարաշ կամ Գերմանիկ» գրքում (Նյու Յորք, 1934)։

ՊԱՅՏԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ.— Բանաստեղծ։ Ծնվել է Կարինում։ Եղբայրն է Մկրտիչ Պայլանի (Պալին)։ Հայկական կրթությունն ստացել է ծննդավայրում։ Գրել է բանաստեղծություններ, որոնք տպագրվել են «Բազմավեպ» և այլ պարբերականներում։ Չեխովից, Պուշկինից, Լերմոնտովից և այլ գրողներից կատարել է թարգմանություններ, որոնք նույնպես տպագրվել են «Բազմավեպի» 1900-ական թվականների համարներում։

ՊԱՅՏԱՆ ՀՐԱՉՅԱՆ *(ծն. 1913).*— Ճարտարապետ։ Ծնվել է Կահիրեում (Եգիպտոս)։ Որդին է ճարտարապետ Կարո Պայլանի։ Տարրական կրթությունն ստացել է Կահիրեի Գալուստյան հայկական վարժարանում, միջնակարգը՝ ֆրանսիական լիցեում, իսկ մասնագիտականը՝ Փարիզի ճարտարապետական բարձրագույն դպրոցում, որը բարձր ցուցանիշներով ավարտել է 1937-ին։ Վերադարձել է Կահիրե, գործել իր հոր ճարտարապետական արվեստանոցում, նրա ղեկավարությամբ։ Նրա առաջին գործերից են եղել «Սիկուրել» առևտրական տան և «Դե Ռոզ» հյուրանոցի հին շենքերի վերանորոգումը, մի քանի առանձնատների նախագծումը։ 1940—1944 թթ. ծառայել է անգլիական բանակում որպես քարտեզների գծագրիչ։ Պատերազմից հետո նրա նախագծերով Կահիրեում և այլուր կառուցվել են տասնյակ բարձրահարկ, արդիական ոճով շենքեր, մենատներ, հանրային օգտագործման շենքեր, եկեղեցիներ։ 1947-ին շահել է առաջին մրցանակ՝ հրեական մի աղոթատեղիի կառուցման համար հայտարարված մրցույթում։ 1-ին մրցանակ է շահել նաև 1956-ին Ռիադում (Սեուդի Արաբիա) կառուցվելիք մեծ համալսարանի նախագծման համար՝ երկու արաբ ճարտարապետների հետ միասին։ Նրա նախագծերով են կառուցվել Հելիոպոլսի Նուպարյան հայկական վարժարանը, Վիեննայի Մխիթարյանների վարժարանը Հելիոպոլսում (1959), Կահիրեի ուսի հարկանի «Հայաստանը», որտեղ զետեղված են Հայ գեղարվեստասիրաց միության սրահները, «Արև» օրաթերթի խմբագրությունը և տպարանը։ Եգիպտոսի դեղորայքի մեծ գործարանի նախագծմանը մասնակցելու համար արժանացել է եգիպտական կառավարության Տեխնիկայի 1-ին շքանշանի։ 1978-ին մասնակցել է Երևանում կայացած հայ արվեստի 2-րդ գիտաժողովին, կարդացել է զեկուցում՝ եգիպտական արդի ճարտարապետության մասին։

ՊԱՅՏԱՆ ՄԱԿԱՐ *(18-րդ դ.).*— Ճարտարապետ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է հոր՝ Մինաս Պայլանի մոտ, որը եղել է արքունի ճարտարապետ։ Վերջինիս մահից հետո՝ 1703-ին ժառանգել է նրա պաշտոնը։ Նախագծել է հանրային, պետական մի շարք շենքեր, որոնցից է Նոր Օսմանիե մեջիդը Կ. Պոլսում։ Սուլթան Մահմուդ Ա-ն, տեղի տալով նրա հակառակորդների զրպարտություններին, ազատել է պետական ճարտարապետի պաշտոնից, աքսորել Հայաստանի Բաբերդ քաղաքը, որտեղից ընտանիքով մեկնել է Փարիզ։ Այնտեղ նա իր մասնագիտությունը սովորեցրել է որդուն՝ Գրիգոր Պայլանին։ Սուլթանի մի նոր հրամանագրով վերականգնվել է պաշտոնում, մեծ շուքով վերադարձել Պոլիս, շարունակել նախագծումները։ Նոր ծերությանը նորից է մեկնել Բաբերդ, որտեղ էլ վախճանվել է, իր պաշտոնը թողնելով որդուն՝ Գրիգորին։

ՊԱՅՏԱՆ ՄԿՐՏԻՉ (ՊԱՅՐԵՎ ՆԻԿԻՏԱ) *(1877—1936).*— Դերասան, ռեժիսոր, թատերական գործիչ։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Կարին (Էրզրում) քաղաքում։ 12 տարեկան հասակում ծնողների հետ տեղափոխվել է Նոր Նախիջևան, որտեղ ստացել է տարրական կրթություն. ապա սովորել է Մոսկվայի առևտրի ուսումնարանում, ավելի ուշ՝ Մոսկվայի կոնսերվատորիայում։ Հայերեն լեզուն կատարելագործել է մասնավոր ուսուցիչների մոտ, սակայն նվիրվել է ռուսական բեմարվեստին։ 1904 թ. զորակոչվել է բանակ։ Վերադառնալով Մոսկվա, դարձել է Կ. Ստանիսլավսկու քարտուղարը, վերջնականապես իր բախտը կապելով թատրոնի հետ։ Առողջանությունը հայկական լինելու պատճառով սկզբում նրան հանձնարարվել են միայն համր դերեր՝ գեղարվեստական թատրոնում։ Շուտով թողել է գեղարվեստական թատրոնը, վարձել մի տուն, հիմնել հայտնի «Ջրդեղիկ» թատրոնը, որը գնալով մեծացել է, համալրել կարող ուժերով, դարձրել լայն ժողովրդականություն վայելող մի թատրոն։ 1920 թ. մեկնել է Կ. Պոլիս, հաստատել իր հայ լինելը, որպեսզի հեշտությամբ անցնի արտասահման։ 1921 թ. անցել է Փարիզ, որտեղ ռուս դերասան-դերասանուհիներից ստեղծել է թատերախումբ, տվել ներկայացումներ, իր նորարարական ոճով շահելով ֆրանսիացի հանդիսականների համակրանքը։ Այնուհետև իր «Ջրդեղիկ» խմբով եղել է Անգլիայում, Բելգիայում, Ամերիկայում, ամենուր ունենալով բացառիկ հաջողություն։ Ամերիկայում նա ընդունվել և գրույց է ունեցել Միացյալ Նահանգների այն ժամանակվա նախագահ Գուլիջի հետ. բացի ռուսերենից իմացել է ֆրանսերեն, անգլերեն, շատ թույլ՝ հայերեն։ Մեռել է Նյու Յորքում։

ՊԱՅՏԱՆ ՆԻԿՈՂՈՍ *(1826—1858).*— Ճարտարապետ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Որդին է Կարապետ Պայլանի։ Նախնական կրթությունն ստացել է ընտանիքում։ 1842-ին մեկնել է Փարիզ, Սենտ Բարբի դպրոցում հետևել ճարտարապետության։ Հիվանդության պատճառով 1845-ին վերադարձել է Կ. Պոլիս և նույն տարում սուլթանի առաջարկով Զրաղանի արքայական պալատում կառուցել է գրատուն, որի համար արժանացել է շքանշանի։ Դրանից հետո նախագծել և կառուցել է պետական մի քանի այլ շենքեր, ինչպես Կեոկ-Սուի քեռշկը, Ըհլամուրի քեռշկը, Թոփհանեի ժամացույցի աշտարակը, Օրթագյուղի և Զրաղանի մեջիդները։ Նախագծել է Զրաղանի մեծ պալատը, սակայն չի տեսել նրա ավարտվելը (կառուցվել է 1861—1865 թթ., այրվել է 1910-ին)։ Մոտիկից կապված է եղել հայ համայնքի կրթական, մշակութային կյանքին։ Եղել է պոլսահայերի առաջին ուսումնական խորհրդի անդամ, Ն. Բուսինյանի և Գր. Օտյանի հետ միասին։ Վախճանվել է երիտասարդ հասակում։

ՊԱՅՏԱՆ ՆՇԱՆ *(1892—?).*— Զարդաքանդակող-հախճապակեգործ արվեստագետ։ Ծնվել է Քյոթահիայում (պատմական Կուտինա)։ Եղել է Կուտինայի համբավավոր հախճապակեգործների տոհմերից մեկի վերջին շառավիղը։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում և զբաղվել հորենական այդ արվեստով։ Արվեստագետ մի այլ ընկերոջ՝ Մ. Գարագաշյանի հետ առաջին համաշխարհային պատերազմից հետո աշխատելիս են եղել Կուտինայում, Հաջի Մինասյանների հախճապակու գործարանում։ Նրանց արվեստի նմուշներով հիացած անգլիացի պաշտոնյաներ 1919 թ. երկուսին էլ հրավիրել են Երուսաղեմ՝ նույն գործը շարունակելու, 1922 թ. այնտեղ բաց են արել հախճապակու գործարան և արտադրել սպասքեղեններ, զարդեր։ Նրանց հիմնական առաջադրանքն է եղել Սողոմոն Իմաստունի տաճարի (Էմների մզկիթ) վերանորոգումը, որ կատարել են մեծ վարպետությամբ և հիացմունք պատճառել բոլորին։ Սերնդից սերունդ փոխանցված մասնագիտությունը նշանի ծերանալուց հետո շարունակել են երկու որդիները՝ Հակոբ և Սեդրակ Պայլանները։

ՊԱՅՏԱՆ ՍԱՐԳԻՍ *(1835—1899).*— Ճարտարապետ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, 1847 թ. ուղարկվել է Փարիզ, որտեղ մասնագիտական հիմնավոր կրթություն է ստացել Սենտ Բարբի դպրոցում։ Ապա սովորել է Էքոլ Սանթրալում և Էքոլ դը

Բոզարում, հետևելով նաև մեքենագիտության։ 1855-ին վերադարձել է Կ. Պոլիս, աշխատել հոր՝ արքունի ճարտարապետ Կարապետ Պալյանի մոտ։ Վերջինիս մահից հետո Սուլթան Ազիզը նրան դարձրել է արքունի ճարտարապետ։ Նախագծել և կառուցել է պետական տասնյակ շինություններ, որոնցից առավել հայտնիներն են՝ Բեյլերբեյլի նոր պալատը, Զրաղանի պալատը, որի նախագիծը կազմել է Նիկողոս Պալյանը, Ցըլդզի նոր քեռկը, Էոժենի կայսրուհու համար Բեյքոզում կառուցված շքեղ պալատը, Քյաղըտխանեի պալատը, Ղալաթա Սերայի լիցեն և այլն, ինչպես և մի շարք դպրոցներ, զորանոցներ, բնակելի թաղամասեր, որոնք զարդարում են Բոսֆորի երկու ափերը։ Սրանցից բացառիկ գեղեցիկներն են եղել Զրաղանի պալատը (այրված 1910-ին) և Բեյլեր բեյի պալատը, որ կառուցել է եղբոր՝ Հակոբ Պալյանի հետ, 1865 թ., արտակարգորեն շքեղ մի պալատ՝ ոսկեզօծ ու քանդակազարդ ձեղունների, մարմարյա ցայտաղբյուրներով, բազմահարկ պարտեզներով։ Այդ պալատում են ընդունվել Էօժենի կայսրուհին, Իրանի շահ Նասրեդդինը, Ռուսաց մեծ դուքս Նիկոլայը և այլ պետական հյուրեր։ Եղել է ականավոր գյուտարար, հնարել մեքենաներ, որոնց համար ստացել է մի քանի շքանշան՝ եվրոպական տարբեր պետություններից։ Եղել է նաև դաշնակահար, կոմպոզիտոր։ Գրել է «Քրիստափոր Կոլումբոս» օպերան, «Մայր Արաքսի» երգի երաժշտությունը, Հովհ. Այվազովսկին Պոլիս այցելելիս նրա տանն է իջևանել և նրա միջոցով ներկայացվել սուլթանին։ Մոտիկից կապված է եղել հայ իրականության հետ։ Իր ծախսով դպրոցներ է կառուցել Կ. Պոլսում, Վանում, Պոլսում կառուցել է Մաքրուհյաց դպրոցը, ի հիշատակ իր Մաքրուհի տիկնոջ։

ՊԱԼՅԱՆ ՍԵՆԵՔԵՐԻՄ (?—1833).— Ճարտարապետ։ Ծնվել է Կ. Պոլսում, Կրտսեր եղբայրն է ճարտարապետ Գրիգոր Պալյանի, որդին՝ Պալի Գալֆայի։ Աշխատել է եղբոր հետ, մասնակցել նրա մի շարք նախագծումներին ու դրանց իրականացմանը։ Նախագծել է հանրային օգտագործման շենքեր, որոնցից բացառիկ արժեք ներկայացնողն է Պայազետի հրդեհի աշտարակը (Յանկին կուլեսի) Կ. Պոլսում, որը կառուցվել է 1828-ին։ Ունեցել է 257 աստիճան։ Համարվել է մայրաքաղաքը զարդարող ճարտարապետական կոթողներից։ Այդ շինության մասին ստեղծվել է մեծ գրականություն։ Կյանքի վերջին տարիներն անց է կացրել Ս-բուսաղեմում, որտեղ էլ վախճանվել է։

ՊԱԼՅԱՆ ՍԻՄՈՆ (1846—1897).— Ճարտարապետ, նկարիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Որդին է ճարտարապետ Կարապետ Պալյանի։ Մասնագիտական կրթությունն ստացել է Փարիզում, որտեղ հետևել է ճարտարապետության և նկարչության։ Վերադառնալով Կ. Պոլիս, հիմնականում զբաղվել է Պալյանների նախագծումներով կառուցվող պալատների նկարազարդումներով։ Մեծ վարպետությամբ կատարել է գունավոր բազմաթիվ որմնանկարներ Ցըլդզի պալատում և այլ շինություններում. եղբոր՝ Հակոբ Պալյանի մահից հետո (1875) սուլթանական հրամանագրով նշանակվել է երկրորդ արքունի ճարտարապետ։

ՊԱԼՅԱՆ ՏՐԻԱՏ (1850—1923).— Բանաստեղծ, հոգևորական գործիչ։ Ծնվել է Թալասում (Թուրքիա)։ Նախնական կրթությունն ստացել է Զմյուռնիայում, ապա սովորել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում։ Ընդունել է հոգևորական կոչում, նվիրվել է կրթական, բանաստեղծական աշխատանքի։ Ս. Կարապետի վանքում հիմնել է ճոխ գրադարան, գիշերօթիկ վարժարան։ 1880-ական թվականների սկզբներից արևմտահայ մամուլում տպագրել է պատմաբանասիրական հոդվածներ, հատկապես տարբեր քաղաքների ու գավառական կենտրոնների վանքերի, եկեղեցիների, նրանցում պահվող հայերեն ձեռագրերի վերաբերյալ։ Նման հոդվածներ է լույս ընծայել «Հանդես ամսօրյա», «Բանասեր», «Բյուզանդիոն», «Բյուրակն» և այլ պարբերականներում։ Առանձին գրքերով լույս տեսած աշխատություններն են՝ «Նկարագրություն ս. Երուսաղեմի և սրբազան տեղյաց» (Կ. Պոլիս, 1892), «Ցուցակ հայերեն ձեռագրաց ի Թուրքիա, Տետրակ Ա. ցուցակ հայերեն ձեռագրաց ս. Սարգսի Վանուց ի Կեսարիա» (Կ. Պոլիս, 1892), նույնի Բ. տետրը՝ «Ցուցակ հայերեն ձեռագրաց ս. Աստվածածնա եկեղեցվո Կեսարիո և ս. Գևորգ եկեղեցվո Գրշեհիրի» (1893), «Ցուցակ հայերեն ձեռագրաց ս. Սիոն և ս. Լուսավորիչ եկեղեցյաց ի Մաղնիսա» (Զմյուռնիա, 1898), «Նշանագիրք հայոց»

(Վիեննա, 1898)։ Առավել արժեքավոր է նրա «Հայ աշուղներ» բազմահատոր ժողովածուն, որի Ա. և Բ. հատորներն են միայն լույս տեսել 1914 թ. և ընդհատվել է առաջին համաշխարհային պատերազմի պատճառով։ Իզմիրի աղետից հետո (1922) մեկնել է Աթենք, որտեղ էլ մեռել է։

ՊԱՀԱՐԵ ՀԱՅԿ (ՊԵՏՐՈՍՅԱՆ) (1895—1968).—Դերասան, գրող. Վրացական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Նոր Բայազետում։ Փոքր հասակից ծնողների հետ տեղափոխվել է Թբիլիս, որտեղ ստացել է կրթությունը, 1913 թ. ավարտել է Ներսիսյան դպրոցը։ Նույն տարվանից աշխատել է հայերեն թերթերի խմբագրություններում որպես սրբագրիչ, ոճաբան, գրական աշխատող։ Միաժամանակ հետաքրքրվել է թատրոնով, 1917 թ. ընդունվել է Թբիլիսի դրամատիկական ստուդիան, որը գործել է Օվի Սեռմյանի ղեկավարությամբ։ Մասնակցել է Թբիլիսի ժողովրդական տան հայկական սեկցիայի ներկայացումներին։ 1919 թվականից հանդես է եկել որպես պրոֆեսիոնալ դերասան։ Խորհրդային կարգերի հաստատումից հետո խաղացել է Թբիլիսի հայկական թատրոնում, տարբերի ընթացքում կատարել մի քանի տասնյակ դերեր, որոնցից են՝ Բոբչինսկի («Ռևիզոր»), Շմագա («Անմեղ մեղավորներ»), Պերչատկին («Ուրիշի երեխա»), Հոֆմարշալ («Սեր և խարդավանք»), Բալաբեկ («Փորձագաշտ») և այլն։ Ունեցել է գրական գործունեություն։ Հրապարակախոսական հոդվածներով, չափածո և արձակ երկերով աշխատակցել է մամուլին, օգտագործելով Բարեկամ, Գիժ Մկո և այլ ծածկանունները։ 1925 թ. լույս է ընծայել «Գյուղերի կանչը», 1928 թ.՝ «Գեղարքունիք» ժողովածուները, ինչպես և մի պոեմ՝ «Կոմերիտ Վաղոն»։ Հետագայում, 1958 թ. հրատարակել է «Հայրենիք» բանաստեղծությունների ժողովածուն, 1960 թ.՝ «Թատերական հուշերը», 1962 թ.՝ «Մատենի Քափանակյանը» գրքույկը։

ՊԱՀՐԻ ԶԱՐՈՒՀԻ (1880—1958).— Գրող։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթություն։ Ունեցել է գրական-հրապարակախոսական գործունեություն։ Աշխատակցել է Կ. Պոլսի «Հայ կին» հանդեսին, 1920-ական թվականների սկզբներին։ Հետագայում ապրել է Փարիզում։ Գրել է երեք վեպ՝ «Ոսփորի ափերուն վրա» ընդհանուր խորագրով։ Այդ վեպերն են՝ «Տայան Գևորգ պեյ կամ պատրիարքարանի փողոցին բնակիչները», «Տագրը» (1946) և «Խավարին մեջ»։ Սրանցից բացի՝ գրել է «Լուսիզիթ» և «Ամպրոպը» վեպերը՝ ֆրանսահայ կյանքից, «Փառանձեմը»՝ մեծ եղեռնից։

ՊԱՂԻ ԿԱԶՄՈՂ (18-րդ դ.).— Քարգործ վարպետ։ 1706 թ. Հունան վարպետի հետ միասին քանդակազարդել է գեղեցիկ մի խաչքար, որն այժմ գտնվում է Մարտունու շրջանի Լիճք գյուղում։

ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ (1683—1768).— Մանկավարժ, տաղերգու, գիտնական։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը, սովորել Աստվածատուր Աղավնի վարդապետի մոտ։ Եղել է Կում Կափու թաղամասի մայր դպրատան ղեկավարը։ Երկար տարիներ դասավանդել է այդ դպրոցում, աճեցրել բազմաթիվ աշակերտներ։ Գրել և հրատարակել է մի շարք ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, կապված իր դասավանդած առարկաների հետ։ Առավել ուշագրավներն են՝ «Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիւրիմաց» (2 հատոր, Կ. Պոլիս, 1736. արժանացել է մի քանի հրատարակության, տպագրվել Կ. Պոլսում և Մադրասում), «Գիրք քերականութեան» (գրաբարի քերականություն է, գրված աշխարհաբարով, Կ. Պոլիս, 1760), «Օրինակք բարեագրաց» (նամակ գրելու ձևեր, արժանացել է բազմաթիվ տպագրությունների), «Համառօտ իմն մեկնութիւն յաղագս տրամաբանութեան» (1824) և այլն։ Մի քանի գրքեր էլ հրատարակել է հայատառ թուրքերեն՝ թուրքախոս հայերի համար։ Դրանցից «Գրիգոր Լուսավորչի վարքը» պարունակում է ուշագրավ դրվագներ հայ ժողովրդի պատմությունից և արժանացել է տասից ավելի հրատարակության։ Ձեռագրերի հետ համեմատելով, անհրաժեշտ առաջաբաններով կամ վերջաբաններով հրատարակել է մատենագրական մի շարք երկեր, այդ թվում Սիմեոն Ջուղայեցու «Գիրք տրամաբանութեան»-ը, Գր. Տաթևացու «Գիրք հարցմանցը» (1729), Զենոբ Գլակին վերագրված «Գիրք պատմութեանց երկրին Տարօնայ որ կոչի Զենոբ», Գր. Նարեկացու «Մատեան ողբերգութեանը» (1726) և այլն։ Գրել է մի «ժամանակագրութիւն», որը գտնվում է Վ. Հակոբյանի «Մանր ժամանակագրություններ»-ի Ա.

հատորում։ Առավել հայտնի է որպես տաղերգու։ Գրել է մոտ 185 տաղ, որոնք արտագրվել են տասնյակ տաղարաններում, 1760-ական թվականներից տպագրվել ու վերահրատարակվել, մեր օրերում էլ ամփոփվել է «Տաղիկներ սիրոյ և կարօտանաց» ժողովածուում (Երևան, 1958, հրատարակության պատրաստեցին Շուշանիկ Նաղարյան, Ասատուր Մնացականյան)։ Նրա տաղերից նմուշներ թարգմանվել են ռուսերեն, ֆրանսերեն, իսկ «Ի ննջմանեդ արքայական» երգը ավելի քան մեկ դար է, որ կատարվում է և հասել է մեր օրերը։

ՊԱՂՏԱՍԱՐՅԱՆ ԱՐՇԱԿ *(1874—1953).*— Հրապարակախոս-խմբագիր, դինվորական գործիչ։ Ծնվել է Կեսարիայում (Թուրքիա)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, բարձրագույնը՝ Փարիզում։ Վերադառնալով Թուրքիա, ունեցել է գրական, հրապարակախոսական գործունեություն։ Օսմանյան սահմանադրության տարիներին Կ. Պոլսում հրատարակել է «Լիբերալ» ֆրանսերեն թերթը։ 1912—1913 թթ. ծառայել է բուլղարական բանակում, կռվել Թուրքերի դեմ։ 1914—1915 թթ. մասնակցել է կամավորական շարժումներին որպես գնդապետ։ 1920—1922 թթ. ծառայել է հունական բանակում։ Իզմիրի ազատից հետո մեկնել է Հունաստան, որտեղ ապրել է 15 տարի, նախ Սալոնիկում, ապա՝ Աթենքում, որտեղ հրատարակել է հայերեն «Կիլիկիա» թերթը, ֆրանսերեն «Լ' Արմենիե»-ն։ Մի գրքույկ էլ տպագրել է Բալկանյան պատերազմի մասին։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներից ապրել է Անգլիայում։ Հայտնի է Զորավար Թորգոմ անունով։

ՊԱՂՏԱՍԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ *(1845—1919).*— Կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը։ Երկար տարիներ որպես ուսուցիչ աշխատել է Կ. Պոլսի հայկական դպրոցներում։ Հիմնադրել է «Արևելյան որբանոց» դպրոցը։ Կրթական, բանասիրական հոդվածներով աշխատակցել է «Բյուզանդիոն», «Մուրհանդակ» և այլ պարբերականներին։ Առանձին գրքերով հրատարակած գործերն են՝ «Առաջնորդ ընտանեկան» (Կ. Պոլիս, 1872), «Լապտեր ծնողաց» (1874), «Աշնան տերևներ կամ գաղտնիք երիտասարդաց» (1873) և այլն։

ՊԱՂՏԱՍԱՐՅԱՆ ԶԱՐԵՀ *(ծն. 1907).*— Ճարտարապետ։ Ծնվել է Ատանայում, կրթությունն ստացել է ֆրանսիական համալսարանում, որն ավարտելուց հետո նվիրվել է ճարտարապետության։ Նրա նախագծերով Լիբանանում, Սիրիայում, Սեուդական Արաբիայում, Հորդանանում, Քուվեյթում, Լիբիայում և այլուր կառուցվել են հանրային օգտագործման բազմաթիվ շենքեր, որոնցից է Բեյրութի Միջազգային օդանավակայանը։

ՊԱՂՏԱՍԱՐՅԱՆ ՀԱԿՈԲ *(1873—1932).*— Արվեստագետ-ոսկերիչ։ Ծնվել է Վանում։ Նախնական կրթությունն ստացել է տեղի Տիրամայր եկեղեցու ծխական դպրոցում, հետևել ոսկերչության և Վանում ձեռք բերել նկատելի հմտություն։ Կատարել է արժեքավոր փորագրություններ արծաթե ծխատուփերի, ափսեների, ինչպես և կանացի զարդերի վրա։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Եթովպիայի կայսեր հրավերով մեկնել է Ադիս Աբեբա, գործել Մենելիքի փողերանոցի պետը, շարունակել զարդեր պատրաստել արքայական տան և այլ մեծամեծների համար։

ՊԱՂՏԱՍԱՐՅԱՆ ՌՈՍ (ԱՆԴՐԱՆԻԿ) *(1929—1972).*— Կինոդերասան։ Ծնվել է Ամերիկայում։ Զարմիկն է գրող Վիլյամ Սարոյանի։ Երիտասարդ հասակից խաղացել է Վ. Սարոյանի մի պիեսում և իր վրա ուշադրություն հրավիրել։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո իրեն նվիրել է կինոարվեստին, խաղացել մի շարք ֆիլմերում, փայլել հատկապես 1950-ական թվականների սկզբներին «Սենչրի քոքս» ընկերության ֆիլմերում։ Ամերիկյան մամուլը շատ բարձր է գնահատել հատկապես «Թեդ Ուինդու» ֆիլմում կատարած նրա մի դերը։ Հետագայում նվիրվել է երաժշտության, հորինել և կատարել մի շարք երգեր, որոնք լայնորեն տարածել են նրա անունը ոչ միայն Ամերիկայում, այլև Ամերիկայից դուրս։ Վ. Սարոյանի տեքստի վրա նրա հորինած մի երգը վերցվել է ձայնապնակների վրա և տարածվել միլիոնավոր օրինակներով։ Հետագայում, արդեն 1960-ական թվականների կեսերից ավելի է հաշակվել իր հեռուստատեսային ծրագրերով, որոնք նույնպես վերցվել են ձայնապնակների վրա և տարածվել տասնյակ միլիոններով։ Նրա տարածած երգերից մեկն էլ կոչվում է «Վհուկ բժիշկը»։ Ունեցել է շազի անձնական խումբ, որի մեջ նվագել են մի քանի հայեր։ Մայրենի լեզուն սովորել է ընտանիքում և խոսել ամերիկյան առոգանությամբ։

ՊԱՂՏԱՍԼՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ *(1800—1870).*— Թատերական նկարիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է տարրական կրթությունը, հետևել նկարչության։ Եղել է «Արամյան թատրոնի» նկարիչ ձևավորողը 1846 թվականից։ Մեծ քնականությամբ և տաղանդով նկարել է կամուրջներ, դղյակներ, պարտեզներ, բնանկարներ, որոնք հայ և օտար հանդիսականների վրա թողել են խոր տպավորություն։ Կատարել է նաև դիմանկարներ, որոնցից հիշատակվել է «Վանեցի վաճառականը», «Աղջկա գլուխը»։ Իրավամբ համարվում է հայ առաջին թատերական նկարիչը։

ՊԱՅԱԶԱՏ ՍԵՐԳՈ *(1909—1971).*— Գրող։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ 1930 թ. ավարտել է Թբիլիսիի հայկական մանկավարժական տեխնիկումը։ 1926—1931 թթ. աշխատել է «Պրոլետար» թերթի խմբագրությունում, ապա տեղափոխվել է Լենինական, աշխատել «Բանվորի» խմբագրությունում։ 1934—1941 թթ. աշխատել է Հայկինոյում որպես սցենարիստ։ Ծառայել է խորհրդային բանակում։ Պատերազմից հետո հիմնականում զբաղվել է գրականությամբ։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Երկու երգ գյուղերին» (Թիֆլիս, 1926), «Հողաշեն» (Թիֆլիս, 1929), «Մանր մարդիկ» (Երևան, 1931), «Կաղնուտի սիրահարները» (1948), «Գետը վարդեր է բերում» (1981), թարգմանություններ՝ Ա. Պ. Չեխով, «Շնիկով տիկինը» (Երևան, 1946), «Լեհական նովելներ» (1955), Հ. Իբսեն, «Պիեսներ» (1968), Ա. Չեխով, «Ավագ այգեպանի զրույցը» (1969)։ Գրել է «Հարսանիք» պիեսը, որը բեմադրվել է Լենինականում, 1939 թ., նաև «Մեր կոլխոզի մարդիկ» ֆիլմի սցենարը։ Նրա «Կաղնուտի սիրահարները» գիրքը լույս է տեսել նաև ռուսերեն (Երևան, 1956)։

ՊԱՅԾԱՌԵ *(1859—1904).*— Աշուղ։ Ծնվել է Լոռու գավառի Գուլգազարակ գյուղում։ 7 տարեկան հասակում ընտանիքով տեղափոխվել են Ալեքսանդրապոլ (այժմ՝ Լենինական), որտեղ հետևել է աշուղական արվեստին։ Հորինել է միայն հայերեն երգեր, որոնք կատարել է թառի և չոնգուրի նվագակցությամբ։ Բուն անունը եղել է Վարշամ Տրդատյան։ Նրա երգերի մի մասը լույս է տեսել առանձին գրքով, Թիֆլիսում, 1895 թ.՝ «Երգեր. առաջին հատոր» խորագրով։

ՊԱՅՔԱՐ ԶԱՎԷՆ *(1888—?).*— Գրող, հրապարակախոս, ճարտարապետ։ Ծնվել է Խարբերդի գավառի Քեսերեկ գյուղում (Արևմտյան Հայաստան)։ Փոքր հասակում ծնողների հետ տեղափոխվել է Ամերիկա, որտեղ ստացել է միջնակարգ և ճարտարապետական բարձրագույն կրթությունը։ Ունեցել է գրական հրապարակախոսական գործունեություն։ Աշխատակցել է «Զայն հայրենեաց», «Ազգ», «Պայքար», «Կոչնակ» և այլ պարբերականների։ Եղել է ճանաչված ճարտարապետ։ Նրա նախագծերով Ամերիկայում կառուցվել են բազմաթիվ շենքեր, այդ թվում հայկական մի եկեղեցի Բոստոնում, որի համար Վազգեն Ա. Կաթողիկոսից 1962 թ. ստացել է հատուկ կոնդակ։

ՊԱՊԱՅԱՆ ԱՇՈՏ (ԱՐԱՄԱՇՈՏ) *(ծն. 1911).*— Դրամատուրգ, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Բաթումում, որտեղ ստացել է 7-ամյա կրթությունը։ 1930—1932 թթ. սովորել է Դոնի Ռոստովի մանկավարժական ինստիտուտում, 1931—1940 թթ. խաղացել է Հյուսիս-Կովկասյան հայկական թատրոնում։ 1940 թ. տեղափոխվել է Հայաստան, աշխատել Աշտարակի թատրոնում։ 1942—1943 թթ. ծառայել է խորհրդային բանակում, ապա շարունակել բեմական գործունեությունը Կիրովականի, Էջմիածնի թատրոններում։ 1949-ին ավարտել է Երևանի Մարքսիզմ-լենինիզմի համալսարանը, 1951-ին՝ Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտին կից գրականության դասընթացները։ Դեռևս 1932 թ. Ռոստովի հայկական թատրոնում բեմադրվել է նրա դրամատիկական առաջին գործը՝ «Երազը»։ Հետագայում գրել է «Մեր կռիվը արդար է», «Դեպի Արևմուտք», «Բարձունք», «Կյանքի գրնով», «Շշմեցուցիչ հարված», «Անաղուհաց փեսան», «Խանդից պատուհաս», «Սուտը թակարդում», «Կենդանի հանգուցյալ», «Ախ իմ քուֆթան», «Համեցեք Հակոբ Նշանիչի ծննդին», «Արտասահմանյան փեսացու» և այլ պիեսներ, իսկ եղբոր՝ Արամ Պապայանի հետ գրել է «Մեծ հարսանիք» կատակերգությունը։ Նրա վերոհիշյալ ստեղծագործությունները բեմադրվել են հանրապետության տարբեր քաղաքներում, մի քանիսը նաև այլ հանրապետությունների, նաև սփյուռքահայ կենտրոնների թատրոններում։ Վերջին տարիների պիեսներից

«Աշխարհը, այո, շուռ է եկել» կատակերգությունը մեծ հաջողությամբ բեմադրվել է Գ. Սունդուկյանի անվան թատրոնում (1967-ից) և այլ թատրոններում, անգամ Լոս Անջելեսում, «Գնա մեռիր, արի սիրեմը» բեմադրվել է Վիտեբսկի թատրոնում (Բելոռուսիա), «Արկածներ կես գիշերինը» Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնում։ Նրա սցենարներով նկարահանվել են «Մանրուք», «Փեսատես», «Իմ ընկերոջ մասին» ֆիլմերը։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Պիեսներ» (1951), «Պիեսների ժողովածու» (1952), «Շշմեցուցիչ հարված» (Երևան, 1955), «Մեծ հարսանիք» (1960), «Կատակերգություններ» (1962), «Միջաղ» (1965), «Աշխարհը, այո, շուռ է եկել» (1962, 1972), ռուսերեն՝ «Աշխարհն, այո, շուռ է եկել» (Մոսկվա, 1974), բուլղարերեն՝ «Փարիզյան փեսացու» (Սոֆիա, 1973)։ Նրա մի շարք պիեսները թարգմանվել են ԽՍՀՄ ժողովուրդների տարբեր լեզուներով։

ՊԱՊԱՅԱՆ ԱՐԱՄ *(1918—1945).*— Դրամատուրգ, լրագրող։ Ծնվել է Բաքումում, եղբայրն է Աշոտ Պապայանի։ 9-ամյա հայկական կրթությունն ստացել է Նովոռոսիյսկի հայկական դպրոցում, ապա աշխատել է Երևանի Ռադիոկոմիտեում և «Կոմսոմոլեց» թերթի խմբագրությունում։ 1941—1943 թթ. ծառայել է խորհրդային բանակում։ Իր եղբոր՝ Աշոտ Պապայանի հետ գրել է «Մեծ հարսանիք» և «Սեր առանց խարդավանքի» դրամատիկական գործերը։

ՊԱՊԱՅԱՆ ՆԱԴԵԺԴԱ *(1868—1906).*— Օպերային երգչուհի։ Ծնվել է Աստրախանում։ Երաժշտական նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա շարունակել է Պետերբուրգի կոնսերվատորիայի օպերային դասարանում։ Զգիմանալով Պետերբուրգի խոնավ կլիմային, չորրորդ տարում ընդհատել է ուսումը. մեկնել Իտալիա, Նեապոլում և Միլանում աշակերտել նշանավոր երգիչների։ 1893 թ. գարնանը վերադարձել է Կովկաս, համերգներ տվել Կոջորի ամառանոցում և Թիֆլիսի արքունական թատրոնում։ Ապա հրավիրվել է երգելու Թիֆլիսի օպերային թատրոնում, որտեղ աշխատել է մի քանի տարի, հանդես եկել արևմտաեվրոպական և ռուսական դասական օպերաներում պատասխանատու դերերով։ Մի քանի անգամ մեկնել է Փարիզ, ձայնը մշակել պրոֆեսոր Մարկեզիի վոկալ ստուդիայում, միաժամանակ հանդես եկել համերգներում և ներկայացումներում, արժանացել ֆրանսիական մամուլի գնահատանքը։ 1899 թ. ամռանը Պետերբուրգի «Արկադիա» թատրոնը հրավիրել է նրան հյուրախաղային ներկայացումների։ Այնտեղ նախ հանդես է եկել Լիզայի դերերգով «Պիկովայա դամա» օպերայում, ապա կատարել է Միմիի («Բոհեմա»), Մարգարիտայի («Ֆաուստ»), Ջուլիետայի («Ռոմեո և Ջուլիետա»), Զիլդայի («Ֆիգոլետտո»), Վիոլետայի («Տրավիատա») դերերը, արժանանալով Պետերբուրգի խստապահանջ արվեստագետների հիացմունքին։ Հենց այդ հաջողությունն էլ ճանապարհ է հարթել դեպի Մարինյան թատրոնը, որտեղ երգել է 1902—1904 թթ.։ Պայմանագիրը լրանալուց հետո վերադարձել է Աստրախան, ապա մեկնել է Փարիզ, պայմանավորվել այնտեղ երգելու։ Վերադարձել է Աստրախան և սպասել պաշտոնական հրավերի։ Մի գիշեր կողոպուտի նպատակով ենթարկվել է ավազակների հարձակմանը, ծանր վիրավորվել և վախճանվել է հիվանդանոցում։

ՊԱՊԱՅԱՆ ՎԱՀԱՆ *(1867—1927).*— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում։ Բեմական ասպարեզ է մտել 1880-ական թվականներին։ Խաղացել է Մնակյանի «Օսմանյան դրամատիկ» թատերախմբում։ 1895—1896 թթ. հայկական կոտորածներից հետո մեկնել է Բուլղարիա, ստեղծել թատերախումբ և Վառնայում, Սոֆիայում ու այլ քաղաքներում ներկայացրել է մի շարք պիեսներ՝ հայերեն և թուրքերեն լեզուներով։ Գլխավոր բոլոր դերերում հանդես է եկել թերը։ Ապա միացել է Արշակ Պենկլյանի օպերետի խմբին, նրա հետ շրջագայել Բուլղարիայի, Ռումինիայի, Եգիպտոսի մի քանի քաղաքներում, ի հայտ բերելով նաև օպերետային արվեստագետի տվյալներ։ Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո նույն խմբի հետ վերադարձել է Պոլիս, խաղացել թե Պենկլյանի և թե այլ խմբերում, աշքի ընկնելով մասնավորապես հայրական դերերում։ Մամուլը բարձր է գնահատել նրա Վարժապետը՝ Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը» պիեսում։ Օպերետային դերերից Հորհոր աղայում համեմատվել է Ս. Պենկլյանի, Մ. Մնակյանի և Ա. Պենկլյանի հետ։ Այդ դերով նա հանդես է եկել հարյուրից ավելի անգամներ, տասնյակ քաղաքներում։

ՊԱՊԱՋԱՆՅԱՆ ՎԱՍԱԿ *(1847—1893).*— Հասարակական, կրթական գործիչ, հրապարակախոս, խմբագիր։ Ծնվել է Երևանում։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի կլասիկական գիմնազիայում, ապա մեկնել է Գերմանիա, ուսումը շարունակել Հայդելբերգի, Բոնների, Լայպցիգի համալսարաններում, վերջինս ավարտել է գիտության դոկտորի աստիճանով։ 1876 թ. վերադարձել է Կովկաս։ Աշխատել է Շուշիի թեմական դպրոցում որպես տեսուչ, սակայն իր առաջադեմ հայացքների պատճառով հալածվել է պահպանողական տարրերի կողմից, 1878 թ. ազատվել է պաշտոնից։ Աշխատակցել է «Հայկական աշխարհ», «Մշակ» պարբերականներին։ 1880—1884 թթ. Երևանում հրատարակել է «Պսակ» թերթը, դնելով տպագիր մամուլի սկիզբը գավառական այս քաղաքում։ Նույն այդ շրջանում (1882—1883) Էջմիածնի Գևորգյան ճեմարանում դասավանդել է փիլիսոփայություն և մանկավարժություն։ Քաղաքական գործունեության համար 1885-ին արտաքսվել է Կովկասից։ Վերադարձել է 1889-ին, բնակություն հաստատել Ծաղկաձորում, որտեղ էլ վախճանվել է կարճ ժամանակից։

ՊԱՊԵՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(1886—1968).*— Կրթական գործիչ։ Ծնվել է Ամասիայի Սիմ Հաջի ավանում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է ծննդավայրում։ Ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատել է Ամասիայում, Թոքատում և Ադրիանապոլսում։ 1912 թվականին մեկնել է Շվեյցարիա, հետևել լեզվաբանության և մանկավարժության։ Սովորել է արաբերեն, ֆրանսերեն, գերմաներեն։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո մի քանի տարի որպես ուսուցիչ աշխատել է Պոլսում, ապա մեկնել է Փարիզ, որտեղ մնացել է 12 տարի։ 1940 թվականից ապրել է Հյուսիսային Ամերիկայում։ Կազմել է մի քանի դասագիրք, ինչպես՝ «Աշխարհագրություն» (բաղկացած հինգ գրքից. տպագրվել է Փարիզում, արտատպվել այլ գաղութներում, լայնորեն օգտագործվել հայկական դպրոցներում, «Հանրագիտակ ընդարձակ». արժանացել է երկու տպագրության, «Հայ արբենարան մանուկներու» (Ա, Բ, Գ տարիներ), «Հայ ատլաս նկարազարդ», «Քարտեզ Հայաստանի» և այլն, բոլորն էլ ուսումնական ձեռնարկներ։

ՊԱՊԻԿՅԱՆ ԱԼԲԵՐՏ *(ծն. 1925).*— Նկարիչ։ Ծնվել է Սպիտակի շրջանի Նալբանդ գյուղում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Լենինգրադի Ի. Ռեպինի անվան գեղարվեստների ինստիտուտում, ավարտել 1949-ին։ Հաջորդ տարվանից մասնակցել է ցուցահանդեսների։ Ունեցել է անհատական ցուցահանդես Լենինգրադում։ Լավագույն գործերից են՝ «Սևանշինի ստախանովականները», «Հիվանդ բարեկամի մոտ», «Գործադուլ», «Հաց», «Լեռներում» և այլն։ Ապրում և ստեղծագործում է Մոսկվայում։

ՊԱՊԻԿՅԱՆ-ԱՆՏԵՔՅԱՆ ԱՐԱՔՍԻ *(1899—?).*— Երգչուհի-բանաստեղծուհի։ Ծնվել է Սոֆիայում (Բուլղարիա)։ Կրթությունն ստացել է Կ. Պոլսի էսայան վարժարանում։ Կարճ ժամանակ աշակերտել է Կոմիտասին՝ 1912—1913 թվականներին։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո մեկնել է Շվեյցարիա, Լոզանի համալսարանում հետևել մանկավարժության և հոգեբանության, ավարտել մագիստրոսի կոչումով։ Վերադառնալով Կ. Պոլիս, 1923—1938 թթ. պաշտոնավարել է էսայան վարժարանում որպես հայոց լեզվի և ֆրանսերենի ուսուցչուհի։ Զուգահեռ հետևել է երաժշտության՝ տեղի կոնսերվատորիայում. ամռան ամիսներին մշակել է ձայնը Փարիզում՝ Մ. Բաբայանի, Նինոն Վալենտիի և այլ արվեստագետների մոտ։ 1947 թ. մեկնել է Ամերիկա, երգել Չիկագոյի, Նյու Յորքի, Դիտրոյդի երգչախմբերում։ 1950-ից ապրել է Լոս Անջելեսում. 1953—1967 թթ. զբաղվել է մանկավարժական աշխատանքով, դասավանդելով երաժշտական առարկաներ Փասատինայի Սիտի կոլեջում։ 1961—1973 թթ. հայոց լեզու է դասավանդել Կալիֆոռնիայի համալսարանում։ Զափածո երկերով աշխատակցել է «Լրաբեր», «Նոր օր», «Նաիրի» և այլ պարբերականների։ 1969-ին Փարիզում լույս է ընծայել «Ես ինձի հետ» բանաստեղծությունների ժողովածուն։

ՊԱՊԻԿՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ *(ծն. 1936).*— Նկարիչ։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում և գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի գեղանկարչության բաժինն ավարտել է 1966-ին։ Մասնակցել է հանրապետական մի շարք ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Ընդ-

տած կինը», «Հարսանիք», «Վրեժ», «Հայելու առաջ», «Հեղափոխության մարտիկը», «Աշուն» և այլն։

ՊԱՊԻԿՅԱՆ ՀՄԱՅԱԿ (1827—1880).— Կրթական գործիչ, խմբագիր։ Ծնվել է Տրապիզոնում։ Կրթությունն ստացել է Վենետիկի Մխիթարյանների վանքում, 1848 թ. դարձել է այդ միաբանության անդամ։ Թվաբանության, բնագիտության վերաբերյալ հոդվածներ է տպագրել «Բազմավեպում», որի խմբագիրն է եղել 1856—1857 թթ.։ Ունեցել է կրթական գործունեություն։ Հրատարակել է թվաբանական դասագրքեր. ինչպես՝ «Թվաբանություն ընդարձակ», «Տարերք թվաբանության», «Տարերք գրահաշվի», «Տարերք երկրաչափության» և այլն։

ՊԱՊԻԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ (1860—1882).— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում։ 1878 թվականից խաղացել է Հ. Վարդովյանի «Օսմանյան թատրոն» խմբում, աչքի ընկել մասնավորապես կատակերգակ դերերում։ Այդ թատերախմբի քայքայումից հետո կարճ ժամանակ էլ խաղացել է օպերետի խմբում և թողել բեմական ասպարեզը։ Մեռել է երիտասարդ հասակում։

ՊԱՊԻԿՅԱՆ ՊԵՏՐՈՍ (ՊԻԵՐ) (1891—1968).— Ճարտարապետ։ Ծնվել է Տրապիզոնում։ Կրթությունն ստացել է ծննդավայրի Մխիթարյանների վարժարանում, շարունակել Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, ավարտել 1915 թ.։ Պաշտոնավարել է նույն դպրոցում որպես ուսուցիչ։ Ապա Պատուի համալսարանում հետևել է ճարտարապետություն։ Նախագծել է բնակելի տներ, հանրային օգտագործման շենքեր, կամուրջներ։ Հայանպաստ հոդվածներով աշխատակցել է իտալական մամուլին, նաև Ն. Տեր-Ստեփանյանի «Արմենիա» իտալերեն թերթին։ Լույս է ընծայել իտալերեն մի գրքույկ՝ հայկական հարցի մասին։

ՊԱՊԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ (1886—1918).— Ոսկերիչ-արվեստագետ, հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Վանում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, նվիրվել ոսկերչության, միաժամանակ ունեցել գրական-հրապարակախոսական գործունեություն։ Համիդյան բռնապետության տարիներին Վանում խմբագրել է «Կայծ» ընդհատակյա թերթը։ 1912—1914 թթ. եղել է Վանում լույս տեսնող «Վանտոսպ» պարբերականի օգնական խմբագիրը, իսկ 1916—1918 թթ.՝ նույն շաբաթաթերթը խմբագրել է Թիֆլիսում։ Մեծ համբավ է ունեցել որպես ոսկերիչ-արվեստագետ։ Արծաթյա ծխատուփերի վրա հմտորեն փորագրել է Աղթամարի, Լիմի, Կտուցի, Էջմիածնի վանքերը, Վարդան Մամիկոնյանի, Խրիմյան Հայրիկի և այլ նշանավոր մարդկանց դիմանկարները։ Մասնակցել է Վանի 1915 թ. ինքնապաշտպանական կռիվներին։

ՊԱՊԻԿՅԱՆ ՅՈՒԱԿ.— Մաղրանկարիչ։ Ծնվել է Կահիրեում։ Հայկական նախնական կրթությունն ստացել է Հելիոպոլիսի Նուպարյան վարժարանում, որի տնօրենը եղել է իր հայրը։ Ապա սովորել է ֆրանսիական դպրոցում։ Փոքր հասակից հակում է ցույց տվել դեպի երգիծանկարչությունը և ականավոր ծաղրանկարիչ Ալ. Սարուխանի հորդորներով նվիրվել է այդ բնագավառին։ Մամուլում տպագրել է ծաղրանկարներ։ 1960-ական թվականների վերջերին տեղափոխվել է Կանադա, ապրել և ստեղծագործել է Մոնրեալում։ Կանադական թերթերում ցուցակ ստորագրությամբ տպագրել է բազմաթիվ ծաղրանկարներ։ Ստեղծել է «Քաջ Նազարի» շարքը, որն առանձին ալբոմով լույս է ընծայել և արժանացել է կանադական մամուլի գնահատմանը։

ՊԱՊՅԱՆ ԱՆԱՏՈԼԻ (ծն. 1924).— Նկարիչ. Հայկական ԽՍՀ ժողովրդական նկարիչ (1983)։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել 1950-ին։ 1951—1953 թթ. մասնագիտությունը կատարելագործել է Մոսկվայում, Բ. Վ. Իոգանսոնի մոտ։ 1950 թվականից մասնակցել է հանրապետական, հետագայում նաև Միութենական և արտասահմանյան ցուցահանդեսների։ Ունեցել է անհատական ցուցահանդեսներ։ Լավագույն գործերից են՝ «Մեսրոպ Մաշտոց», «Էլդայի դիմանկարը», «Բարեկամներ», «Երիտասարդություն», «Մեղեդի», «Զարուհի Դոլուխանյան», «Մեկնում են ուսման», «Պատանեկություն», Ինքնանկար՝ որդիների հետ, «Առավոտ» և այլն։ Դրանց մի մասը պահվում են Հայաստանի պետական պատկերասրահում, «Որդիները»՝ Մոսկվայի Արևելքի ժողովուրդների արվեստի պետական թանգարանում։

ՊԱՊՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ (ծն. 1924).— Ճարտարապետ. Հայկական ԽՍՀ վաստակավոր ճարտարապետ (1968)։ Ծնվել է Թիֆլիսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, որի ճարտարապետության բաժինն ավարտել է 1949-ին։ Աշխատել է նախագծային կազմակերպություններում։ 1964—1971 թթ. եղել է Երևանի գլխավոր ճարտարապետը։ Ապա աշխատել է «Երևանանախագիծ» ինստիտուտում։ Հիմնականում զբաղվել է քաղաքաշինարարական նախագծումներով։ Պատրաստել է Արարատ քաղաքի գլխավոր հատակագիծը (1951), Աղիզբեկովի ավանի նախագիծը (1957, ճարտարապետներ Ա. Ծատուրյանի և Ն. Շաքարյանի հետ)։ Մասնակցել է Երևանի գլխավոր հատակագծի ստեղծմանը՝ ճարտարապետներ Մ. Մաղմանյանի, Գ. Մարգայի, Ց. Զախալյանի հետ։

ՊԱՊՅԱՆ ՅԱԿՈՎ (ծն. 1939).— Երաժիշտ-կատարող. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում, Ռ. Մելիքյանի անվան ուսումնարանում, իսկ 1968-ին ավարտել է Մոսկվայի Գնեսինների անվան երաժշտական ինստիտուտի թավջութակի բաժինը։ Աշխատել է տարբեր նվագախմբերում։ 1967-ին շահել է առաջին մրցանակ՝ համամիութենական մրցույթում։ 1970-ից դասավանդել է Երևանի պետական կոնսերվատորիայում, միաժամանակ շարունակել ուսումը և 1976-ին ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիայի ասպիրանտուրան։ 1968—1975 թթ. նվագել է Ռուսաստանում, 1976-ից՝ Կոմիտասի անվան կվարտետում։ Այդ կվարտետի հետ եղել է բազմաթիվ երկրներում՝ Ամերիկա, Կանադա, Պորտուգալիա, Ավստրիա և այլն։

ՊԱՊՈՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ (ծն. 1928).— Լեզվաբան. բանասիրական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Անդիժանում (Ուզբեկական ԽՍՀ)։ Փոքր հասակում ընտանիքով տեղափոխվել է Իրան։ Միջնակարգ կրթությունն ստացել է Սուլթանաբատի պարսկական դպրոցում, ավարտել 1946-ին։ Նույն տարում ներգաղթել է Հայաստան։ 1948—1953 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում։ Ավարտելուց հետո մինչև 1957 թ. աշխատել է Մարտունու շրջանում իբրև ուսուցիչ, 1958—1963 թթ.՝ Երևանի պետական համալսարանի հրատարակչությունում իբրև գլխավոր խմբագիր, 1963 թվականից՝ համալսարանի հայոց լեզվի ամբիոնում իբրև դասախոս։ Գիտական մամուլում տպագրել է լեզվաբանական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում (Երևան, 1968), «Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը» (1970) և այլն։

ՊԱՊՈՎՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ (ծն. 1918).— Դերասան։ Ծնվել է Թիֆլիսում։ Բեմական ասպարեզ է մտել 1942 թվականին։ Հիմնականում խաղացել է Թբիլիսիի Ստ. Շահումյանի անվան հայկական թատրոնում։ Կատարել է թե դրամատիկական և թե կատակերգական դերեր, որոնցից են՝ Կասիո («Օթելլո»), Օթարյան («Պատվի համար»), Ֆերդինանտ («Սեր և խարդավանք»), Կակուլի («Պեպո»), Էրեկլե («Դավաճանություն»), Օսեփ («Քանդած օջախ»), Սեյրան («Նամուս»), Օրսինո («Տասներկուերորդ գիշեր») և այլն։

ՊԱՌՆԱՍՅԱՆ ՆԱՎԱՐԴ (ծն. 1930).— Լեզվաբան. բանասիրական գիտությունների դոկտոր (1972)։ Ծնվել է Երևանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 1951-ին։ 1963-ից աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, 1979-ից՝ դիրեկտորի տեղակալ։ Գիտական մամուլում, ժողովածուներում և առանձին գրքերով հրատարակել է լեզվաբանական մի շարք հետազոտություններ, ինչպես՝ «Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում» (Երևան, 1961), «Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում» (1970), «Քերականական համանունները ժամանակակից հայերենում» (1979) և այլն։ Մասնակցել է քառահատոր «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանի» կազմման ու խմբագրման աշխատանքներին։ Գրել է ընդարձակ գլուխներ «Ժամանակակից հայոց լեզու» եռահատոր աշխատությունում (1974—1979)։

ՊԱՌՆԱՍՅԱՆ ՊՈՂՈՍ (1839—1902).— Հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Արաբկիրում

(Արևմտյան Հայաստան)։ Կրթությունն ստացել է նախ ծննդավայրում, ապա՝ Կ. Պոլսում, որտեղ հմտացել է թուրքերենին, արաբերենին և եվրոպական մի քանի լեզուներիր։ Աշխատել է որպես կայսերական պալատի թարգման։ Աշխատակցել է հայերեն «Սեր» հանդեսին և «Մասիս» թերթին՝ 1860-ական թվականներին։ 1864 թվականից սկսած՝ քսան տարի խմբագրել է թուրքերեն թերթեր, որոնց թվում՝ լայն տարածում ունեցող «Թարիքը»։ Աշխատակցել է նաև «Օսմանլը» թուրքերեն թերթի ֆրանսերեն բաժնին։ 1876—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին բազմաթիվ խմբագրականներ է տպագրել հայերեն «Մասիս» թերթում, դրանց ֆրանսերեն թարգմանություններն էլ տալով «Լա Թյուրք» ֆրանսերեն թերթին։

ՊԱՍՄԱՃՅԱՆ ԿԱՐԻԿ *(ծն. 1950).*— Բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր։ Ծնվել է Երևանում։ Սովորել է տեղի անգլիական դպրոցում, հետագայում երեք տարի էլ՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում։ Ավարտելուց հետո ապրել է Փարիզում, զբաղվել գրականությամբ և թարգմանությամբ։ Եղել է Հայկական բարեգործական ընդհանուր միության հրատարակությունը հանդիսացող «Նոր շինարար» պարբերականի գլխավոր խմբագիրը։ Ուսանելու տարիներից գրել է անգլերեն բանաստեղծություններ, որոնք լույս են տեսել լոնդոնյան թերթերում։ Հայաստանում հմտացել է նաև մայրենի լեզվին, գրել չափածո ստեղծագործություններ, որոնք տպագրվել են սփյուռքահայ և խորհրդահայ մամուլում։ Ե. Չարենցի, Պ. Սևակի և խորհրդահայ այլ գրողների երկերից կատարել է թարգմանություններ, հրատարակել առանձին ժողովածուներով։ Կազմել, թարգմանել և լույս է ընծայել Ամերիկայի անգլիախոսի հայ բանաստեղծների երկերի մի ժողովածու, որն արժանացել է երկրորդ տպագրության։ 1978 թ. հրատարակել է «Իրանահայ բանաստեղծներ» ժողովածուն, իսկ 1982-ին՝ «Անավարտ խաղ» բանաստեղծությունների իր ժողովածուն, որտեղ զետեղել է նաև Հայաստանում գրած ոտանավորները։ Պատրաստել է «Հայ բանաստեղծությունը դարերու մեջեն» անգլերեն մեծ ժողովածուն, որի նյութերի զգալի մասը ինքն է թարգմանել հայերենից անգլերեն։

ՊԱՎԼՈՍ *(13-րդ դ.).*— Քարգործ վարպետ։ Նրա պատրաստած երեք խաչքարերը պահված են եղել Գոշավանքում։ Դրանցից մեկն այժմ տեղափոխվել է Հայաստանի պետական պատմական թանգարանը և համարվում է հայ խաչքարային արվեստի լավագույն նմուշներից մեկը։

ՊԱՏԿԱՆՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ *(1802—1889).*— Հոգևորական, կրթական գործիչ, խմբագիր։ Ընտրվել է Թիֆլիսում։ Հայրն է բանաստեղծ Ռ. Պատկանյանի։ Կրթությունն ստացել է Աստրախանում, իր հոր՝ Սերովբե Պատկանյանի պաշտոնավարած Աղաբաբյան դպրոցում։ 1826 թ. ընդունել է հոգևորական կոչում, հաջորդ տարվանից որպես ուսուցիչ պաշտոնավարել է Նոր Նախիջևանի քաղաքային դպրոցում։ 1836-ին բաց է արել իր մասնավոր դպրոցը, որտեղ նրան աշակերտել է Միքայել Նալբանդյանը։ Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Հարությունի Խալիբյանը, չհանդուրժելով նրա առաջավոր գաղափարները, հեռացնել է տվել այդ քաղաքից, ուղարկել է Թիֆլիս։ Այնտեղ բաց է արել գիշերօթիկ դպրոց, աշակերտներին սովորեցրել է հայերեն, վրացերեն, ռուսերեն, ֆրանսերեն և գերմաներեն։ 1850-ին նշանակվել է Ներսիսյան դպրոցի տեսուչ։ Նույն տարում հիմնել է «Արարատ» պարբերականը, որի էջերում տպագրվել են Միքայել Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի առաջին բանաստեղծությունները։ 1851-ին նորից է մեկնել Նոր Նախիջևան, սակայն Խալիբյանին հաջողվել է բանտարկել տալ նրան։ Բանտից ազատվել է 1860 թ.։ 1863-ից ապրել է Պետերբուրգում։ Ունեցել է գրական-բանասիրական բեղուն գործունեություն։ Հրատարակել է գեղարվեստական և պատմա-բանասիրական մի շարք երկեր։ Առանձին գրքերով լույս ընծայած գործերն են՝ «Հայկերգ» (1854), «Արամերգ» (1855), «Անուշավան» (1875), «Մահ Պարետի», «Զավեն և Փառնակ» (1858), «Հոգիսիմե կամ փրկություն Հայաստանի» (1875), «Պարույր կամ առումն Նինուեի» (1876), «Հայոց ազգի պատմությունը» (1863) և այլն։

ՊԱՏԿԱՆՅԱՆ ԵՂԻՍԱԲԵԹ *(1862—1942).*— Նկարչուհի։ Ծնվել է Պետերբուրգում։ Դուստրն է Ռ. Պատկանյանի եղբոր՝ նկարիչ Հովհաննես Պատկանյանի։ Մասնագիտական նախնական կրթությունն ստացել է ընտանիքում, հոր մոտ, ապա սովորել է Պետերբուրգի Ալեքսանդրյան

իգական գիմնազիայում, 1883—1886 թթ.։ Ուսման ընթացքն ավարտելուց հետո ինը տարի զբաղվել է Վարշավայի հայկական եկեղեցու նկարազարդումներով իր հոր ղեկավարությամբ և մասնակցությամբ։ Աշխատել է նաև Դորպատի հայկական եկեղեցու նկարազարդման վրա։ 1901 թ. գեղանկարչական մի քանի գործեր ներկայացնելով Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիայի քննական հանձնաժողովին, ստացել է իրավունք գիմնազիաներում նկարչություն դասավանդելու։ Աշխատել է Թիֆլիսի հայկական և ռուսական դպրոցներում։ Ստեղծել է մի շարք դիմանկարներ, նատյուրմորտներ, կատարել է գրքի ձևավորումներ։ Մեզ հասել է 1914 թ. նրա նկարած «Վարդեր» գործը։ Գրաֆիկական գործերից է «Հայկական նշանագրեր հարթակարի համար» ալբոմը, որ լույս է տեսել Թիֆլիսում, 1899 թ.։ Որպես նկարչության ուսուցչուհի աշխատել է նաև Նալչիկում և Պյատիգորսկում։ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո տեղափոխվել է Հայաստան։

ՊԱՏԿԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(1828—1896).*— Նկարիչ։ Ծնվել է Նոր Նախիջևանում։ Մեծ եղբայրն է բանաստեղծ Ռափայել Պատկանյանի։ Նախնական կրթությունն ստացել է հոր՝ Գաբրիել քահանա Պատկանյանի մոտ, ապա ուսումը շարունակել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում։ Մասնագիտական բարձրագույն ուսումն ստացել է Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիայում։ Ավարտելուց հետո, 1850-ական թվականների կեսերից զբաղվել է նկարչությամբ։ Այդ տարիների նրա ստեղծագործություններից են՝ «Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատին», «Հովհաննես Մկրտիչ» և այլն։ Նա է նկարազարդել «Գամառ Քաթիպա» հայտնի տետրերի շապիկները, ինչպես և Դ. Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոյի» Ռ. Պատկանյանի թարգմանությունը՝ գեղարվեստական մի քանի նկարներով։ 1880-ական թվականների կեսերին իր աղջկա՝ Եղիսաբեթ Պատկանյանի հետ մեկնել է Վարշավա, կատարել տեղի հայկական եկեղեցու նկարազարդումները։ Այդ աշխատանքն ավարտելուց հետո եկել են Կովկաս, նկարազարդել Գորու հայկական եկեղեցին։

ՊԱՏԿԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ *(1814—1895).*— Դրամատուրգ, թատերական գործիչ։ Ծնվել է Թիֆլիսում։ Կրթությունն ստացել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում։ Ավարտելուց հետո Մոսկվայի համալսարանում հետևել է բժշկության։ 1842 թ. վերադարձել է Կովկաս, պաշտոնավարել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ 1846—1847 թթ. Հակոբ Կարենյանի հետ Թիֆլիսում խմբագրել է «Կովկաս» պարբերականը, որին աշխատակցել է Խաչատուր Աբովյանը։ 1850-ական թվականների վերջերից նկատելի դեր է կատարել արևելահայ թատրոնի ստեղծման գործում։ Հ. Կարենյանի և Ս. Արամալիքյանի հետ Ներսիսյան դպրոցում կազմակերպել է հայերեն թատերական ներկայացումներ, ցուցադրելով գերազանցապես պատմական ողբերգություններ։ Ի հակադրություն բեմական ռոմանտիզմի և դասական ուղղության հետևող Հ. Կարենյանի, պաշտպանել է ռեալիզմը, զարկ տվել կենցաղային պիեսների ստեղծմանը։ Գրել է մի քանի կատակերգություն, դավեշտներ, ինչպես «Միջի մարդ կամ մոցիքալ», որը թարգմանվել է նաև վրացերեն, բեմադրվել երկու լեզուներով։ Ապա հորինել է «Մեկը նշանած, մյուսը կին», «Սատանի փայ» (1861), «Քաղքի հանաք» (գրված ֆրանսիական մի վոդևիլի նմանողությամբ), «Վարժապետ» (փոխադրություն ռուսերենից), «Մուտ բարեկամ» և այլն։ Գրել է «Նուշանիկ» պատմական ողբերգությունը, ի հակադրություն Կարենյանի համանուն գործի։ Նրա կատակերգությունների մեծ մասը բեմադրվել են իր հիմնած «Ազգային թատրոնում», 1859—1861 թթ.։ Գրել է քննադատական հոդվածներ, որոնց մեջ բացառիկ արժեք է ներկայացնում 1860 թ. «Մեղու Հայաստանի» թերթի մի քանի համարներում տպագրված և առանձին գրքույկով հրատարակված «Կրիտիկան» Հ. Կարենյանի «Նուշանիկ» ողբերգության դեմ։ Առաջավոր դիրքերից գրված այդ հոդվածաշարքում նա օգտագործել է Վ. Գ. Բելինսկու մի շարք մտքերը։ Նրա կատակերգությունների մեծ մասը լույս են տեսել նաև առանձին գրքերով։

ՊԱՏԿԱՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ (ԴԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ) *(1830—1892).*— Բանաստեղծ։ Ծնվել է 1830 թ. նոյեմբերի 8-ին, Նոր Նախիջևանում։ Նախնական կրթությունն ստացել է իր հոր՝ մանկավարժ Գաբրիել քահանա Պատկանյանի մոտ։ 1843 թվականից ուսումը շարունակել է Մոսկ-

վայի Լազարյան ճեմարանում։ 1849 թ. հոր դեմ սկսված հալածանքների պատճառով և կաթողիկոսի թելադրանքով ազատվել է ճեմարանից։ Տեղափոխվել է Թիֆլիս, որպես ուսուցիչ աշխատել է Ներսիսյան դպրոցում։ 1850 թ. «Արարատ» պարբերականում տպագրվել են նրա չափածո անդրանիկ ստեղծագործությունները՝ «Զարմայր Նահապետի մահը», «Շինականի առավոտյան երգը», «Շինականի երեկոյան երգը» և այլն։ 1851 թ. մեկնել է Դորպատ՝ ուսումը շարունակելու, սակայն նյութական պատճառներով թողել է համալսարանը, անցել Մոսկվա։ Այնտեղ 1854 թ. իր ընկերներից Գեվորգ Քանանյանի և Մնացական Թեմուրյանի հետ ստեղծել են Գամառ Քաթիպա գրական խմբակը, որի անունը վերցված է այդ երեք ընկերների անուն-ազգանվան սկզբնատառերից։ Հետագայում նա Գամառ Քաթիպան դարձրել է իր գրական ծածկանունը և այդ անունով էլ հայտնի դարձել։ 1855—1860 թթ. սովորել է Պետերբուրգի համալսարանում, հետևելով արևելագիտության, միաժամանակ ձեռնարկել է Գամառ Քաթիպա գրական խմբակի անդամների բանաստեղծությունների հրատարակությանը առանձին ժողովածուներով, նույն անունով։ Առաջին տետրը լույս է ընծայել 1855 թ., Բ. տետրը՝ հաջորդ տարի, որտեղ առաջին անգամ տպագրվել է նրա հայտնի «Արաքսի արտասուքը»։ Հետագայում լույս է ընծայել Գամառ Քաթիպա ժողովածուների 3-րդ, 4-րդ և 5-րդ տետրերը, որոնցում մեծ մասամբ տեղ են գտել իր չափածո երկերը։ 1860 թ. հիմնադրել է տպարան, հրատարակել զանազան գրքեր, իսկ 1863—1864 թթ. «Հյուսիս» շաբաթաթերթը, աշխատակցելով նաև «Հյուսիսափայլ», «Կռունկ հայոց աշխարհին» և այլ պարբերականների։ 1866 թ. տեղափոխվել է Նոր Նախիջևան, բաց արել պանսիոն, զբաղվել մանկավարժությամբ, շարունակելով գրել։ 1878—1879 թթ. որպես ուսուցիչ պաշտոնավարել է Նոր Նախիջևանի թեմական դպրոցում, միաժամանակ աշխատակցել «Մեղու Հայաստանի», «Փորձ», «Արձագանք» և այլ պարբերականների։ «Փորձ» հանդեսում Միք. Վայելլյան և Մյուլլրուկ ծածկանուններով տպագրել է «Ես նշանած էի», «Փառասերը» վիպակները, «Տիկին և նաժիշտ» վիպակը։ Ռուս թուրքական պատերազմին նախորդող տարիներին, պատերազմի ընթացքում և պատերազմից հետո գրել է հայրենասիրական իր լավագույն բանաստեղծությունները՝ որոնցից մի քանիսը եղանակավորվելով տարածվել են հայ իրականությունում։ Այդ երգերից են «Վանեցոց աղոթքը», «Վանեցոց հայրենիքը», «Բողոք առ Եվրոպա», «Հայի գանգատը», «Նոր տարի», «Արի իմ սոխակ» և այլն, որոնք բոլորն էլ արտատպվել են տասնյակ երգարաններում։ Մի շարք ուսանավորներ էլ գրել է Նոր Նախիջևանի բարբառով, որոնք լույս են տեսել «Նոր Նախիջևանի քնար» խորագրով։ Այդ բարբառով գրել է նաև արձակ գործեր՝ «Զախու», «Տրացինս», «Պաղ աղբար», «Բարեգաթիր», «Խաղաղհաթը որինն է» և այլն։ Նրա երկերը թե նախախորհրդային տարիներին և թե մանավանդ մեր օրերում արժանացել են բազմաթիվ հրատարակությունների։ Նախախորհրդային շրջանի լավագույն հրատարակությունն է Վարվառա Քանանյանի ծախսով կատարված Պետերբուրգյան հրատարակությունը, բաղկացած երկու շքեղ հատորներից (1893)։ Հետագայում Ռոստովում 1903 թ. լույս է տեսել նրա երկերի 3-րդ հատորը։ Երևանում քանիցս լույս են տեսել նրա երկերը առանձին ժողովածուներում, իսկ 1963—1974 թթ. հրատարակվել է «Երկերի ժողովածուն» 8 հատորով։

ՊԱՏԿԱՆՅԱՆ ՍԵՐՈՎԲԵ *(1769—1836)*.— Բանաստեղծ, կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, հայրն է Գաբրիել Պատկանյանի։ Կրթությունն ստացել է ծննդավայրում, որտեղ հետևել է նաև երաժշտության, ապա 1783-ից շարունակել է Վենետիկի Մխիթարյանների վանքում, իսկ 1788-ից՝ Տրիեստի ս. Մարինոսի վանքում, որտեղ նույնպես հետևել է երաժշտության։ Իմացել է չուրեկ նվագել։ 1792-ին վերադարձել է Կ. Պոլիս, Պերա թաղամասում հիմնել է դպրոց, դասավանդել հայոց լեզու, պատմություն, խոսքերեն և երաժշտություն։ Սակայն ենթարկվելով հալածանքի, հաջորդ տարի մեկնել է Թիֆլիս, հիմնել հայկական առաջին դպրոցը։ Այդ դպրոցը, որտեղ սովորել են նաև վրացի երեխաներ, գործել է մինչև 1805 թ.։ Դրանից հետո դպրոց է բաց արել Նոր Նախիջևանում։ 1809 թվականից ապրել է Աստրախանում, դասավանդել Աղաբաբյան դպրոցում, իր աշակերտների թվում ունենալով նաև որդուն՝ Գաբրիել Պատկանյանին։ 1796-ին գրել է «Համառոտ պատմութիւն աւերեցման Փայտակարան մայրաքաղաքի ի խանէն Աղա Մահմուդի ի 1795 և ի 11 սեպտեմբերի» գիրքը, որը տպագրվել է հետագայում, 1910-ին։ Գրել է կրոնական և աշխարհիկ բովանդակությամբ բանաստեղծություններ, որոնք տպագրվել են ետմահու՝ 1857-ին, Մոսկվայում, «Երգք Սերովբէ վարժապետի Պատկանեան» խորագրով։

ՊԱՏԿԱՆՅԱՆ ՔԵՐՈՎԲԵ *(1833—1889)*.— Հայագետ։ Ծնվել է Նոր Նախիջևանում։ Նախնական կրթությունն ստացել է Ստամբուլի հայկական դպրոցում, ապա ուսումը շարունակել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, որն ավարտել է 1849-ին։ Միաժամանակ էլ հետևել է Պետերբուրգի մանկավարժական ինստիտուտի դասընթացներին։ 1861-ից զբաղվել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ամբիոնը, որը դարձել է հայագիտության զարգացման յուրահատուկ դարբնոց։ Տարբեր ժամանակներում այնտեղ սովորել են հայագետներ Ն. Յա. Մառը, Ն. Ադոնցը, Հ. Օրբելին և ուրիշներ։ Կրթական, մանկավարժական աշխատանքին զուգընթաց՝ ունեցել է հայագիտական բեղուն գործունեություն։ Հրատարակել է հայ մի քանի պատմիչների երկերը, ինչպես՝ Սեբեոսի, Անանիա Շիրակացու, Թովմա Արծրունու, Մխիթար Այրիվանեցու և ուրիշների։ Գրաբար բնագրերից ռուսերեն թարգմանել և հրատարակել է Մովսես Կաղանկատվացու, Սեբեոսի, Ղևոնդ Երեցի, Թովմա Արծրունու Պատմությունները։ Հետազոտական աշխատանքներից են «Մոնղոլների պատմությունն ըստ հայկական աղբյուրների» (2 հատոր, 1873—1875), «Մասանյան արքայական պատմության փորձ՝ ըստ հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների» (1863), «Դեպի Հնդկաստանի ափերը Թգլատպալասարի կարծեցյալ արշավանքի մասին» (1879), «Մի քանի խոսք հին հայկական ամսանունների մասին», «Վանի արձանագրությունները և դրանց նշանակությունը Առաջավոր Ասիայի պատմության համար» (1881), «Ռուսաստանի սահմաններում հայտնաբերված Վանի համակարգի սեպագիր արձանագրությունների մասին» (1882—1883), բոլորն էլ գրված ռուսերեն, մի մասը տպագրված գիտական հանդեսներում, ինչպես կայսերական աշխարհագրական ընկերության «Տեղեկագրում»։ Հայագիտական առավել մեծ նշանակություն ունի նրա «Հետազոտություն հայոց լեզվի կազմության մասին» աշխատությունը (1864), որի համար նրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան, իսկ Դյուլորիեն նրա ֆրանսերեն թարգմանությունը հրատարակել է «Ժուռնալ Ազիատիկ» հանդեսում։ Նույնքան արժեքավոր են նրա «Հետազոտություն հայոց լեզվի բարբառների մասին» (1869), «Հայոց լեզվի զբաղեցրած տեղը հնդեվրոպական լեզուների շրջանում (1879) գործերը։ Մյուս աշխատություններից են՝ «Ցուցակ հայ գրականության 4-րդ դ. մինչև 17-րդ դ. կեսը» (1860, ֆրանսերեն), «Հայոց պատմական գրականության մատենագիտական ակնարկ» (1880), «Նշխարք մատենագրության հայոց» (1884) և այլն։ Մասնակցել է Արևելագետների 1873 թ. Փարիզի և 1874 թ. Լոնդոնի կոնգրեսներին։

ՊԱՏՄԱԳԻՏՅԱՆ ԱՇՈՏ *(1898—1981)*.— Երաժիշտ, կոմպոզիտոր, խմբավար։ Ծնվել է Թավրիզում, որտեղ ստացել է նախնական կրթություն։ 1913 թվականից սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ավարտել 1918 թ.։ 1921 թ. մեկնել է Բեռլին, մասնագիտական կրթություն ստացել Շտենլեսի մասնավոր կոնսերվատորիայում։ Զուգահեռ կայսերական հավայարանում էլ հետևել է գեղագիտության և արվեստի պատմության դասընթացներին։ 1925 թ. վերադարձել է Թիֆլիս, որտեղ ամուսնացել է երգչուհի Ռոզի հետ, մեկնել են Փարիզ։ Այնտեղ նա զբաղվել է «Գուսան» երգչախումբը։ 1933 թ. վերադարձել է Թավրիզ, ստեղծել 70 հոգուց բաղկացած երգչախումբ և տվել համերգներ, որոնք անցել են բացառիկ հաջողությամբ։ 1936—1941 թթ. ապրել է Կահիրեում, որտեղ լույս է ընծայել «Գանձարան հայ երգերի» շարքը՝ բաղկացած վեց ստվար հատորներից։ 1941 թ. վերադարձել է Թեհրան և պրոֆեսորի աստիճանով պաշտոնավարել է պետական կոնսերվատորիայում։ Պատերազմից հետո մեկնել է Ամերիկա, ապա՝ ապրել Փարիզում։ Գրել է «Ժողովրդական արվեստի տարրերի գործածությունը հայ եկեղեցական երգի մեջ» հետազոտությունը։ Այդ աշխատության համար Լոս Անջելոսի համալսարանը նրան արժանացրել է պատվավոր դոկտորի աստիճանի։ Կնոջ մահից հետո (1959) հիմնականում ապրել է

Բեյրութում։ Գրել է մեներգեր, խմբերգեր, մշակել է ժողովրդական երգեր, հորինել է օպերաներ, մանկական երկեր։ Մշակած խմբերգերից են՝ «Ցար Դյուլա», «Դուդուլ», «Դիլբար», «Նինամի հարսանիքը», «Լուսնակը ցոլաց գնաց», «Զեյթունցիները», երգերից լայն տարածում են գտել «Իմ գարուն», «Օրոր», «Սիրտս», «Ցնորք» և այլն։ 1932 թ. գրել է «Հեքիաթ» օպերան, 1935 թ.՝ «Պիժոնը Կիվը», որի նյութը վերցված է «Շահնամեից»։ Առանձին գրքով հրատարակել է իր ընդարձակ հիշողությունները։

ՊԱՏՄԱԳԻՐՅԱՆ ՌՈԶ (1900—1959).— Երգչուհի։ Ծնվել է Թավրիզում, որտեղ ստացել է նախնական կրթությունը։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ծնողների հետ եկել է Թիֆլիս, սովորել Հովնանյան օրիորդաց դպրոցում, միաժամանակ Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում մշակել ձայնը։ 1921 թվականից ուսումը շարունակել է Մոսկվայի կոնսերվատորիայում, պրոֆեսոր Երշովի վոկալ դասարանում։ 1925 թ. ամուսնացել է երաժշտագետ կոմպոզիտոր Աշոտ Պատմագրյանի հետ և միասին Թիֆլիսից մեկնել են Փարիզ։ Ապա շրջագայել են սփյուռքահայ մի շարք կենտրոններում, ամենուր տվել համերգներ։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նրանք ապրել են Թեհրանում, կազմակերպել սիմֆոնիկ և կամերային համերգներ։ Եղել է սփյուռքահայության սիրված երգչուհիներից, մասնակցել հայկական երեկույթ-ցերեկույթների։ Վախճանվել է Յոյուրիխում՝ երկարատև հիվանդությունից հետո։

ՊԱՏՅԱՆ ՄԱՅԱ (ծն. 1946).— Կոմպոզիտոր, կրթական գործիչ։ Ծնվել է Բուխարեստում (Ռումինիա)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Բուխարեստի կոնսերվատորիայում, ուսման 3-րդ տարվանից ընտրել կոմպոզիտորական ճյուղը, ավարտել 1968 թ.։ Ստեղծագործել է ուսանողական տարիներից։ 1970 թ. ընդունվել է Ռումինիայի կոմպոզիտորների միության մեջ։ Աշխատել է Ռումինական հեռուստատեսությունում որպես ռադիոներկայացումների երաժշտական ձևավորող։ Գրել է բալադաթիվ երգեր, պարեղանակներ, սիմֆոնիաներ, որոնք կատարվել են Ռումինիայում, Հունգարիայում, Լեհաստանում և այլուր։ Նրա առավել տարածված երկերից են՝ «Դիալոգները»՝ փողային նվագախմբի, գործիքի և կոնտրաբասի համար, «12 երգ՝ նախադպրոցականների համար», «Դեպի բարձունք»՝ Աննա Պլանտիանայի տեքստերով և այլն։

ՊԱՏՐԻԿ ԱՌԱՔԵԼ (1894—1984).— Նկարիչ, բանաստեղծ։ Ծնվել է Սեբաստիայում (Արևմտյան Հայաստան)։ Կրթությունն ստացել է տեղի Արամյան վարժարանում, որի ավարտական դասարանում աշակերտել է բանաստեղծ Դ. Վարուժանին։ 1912—1914 թթ. որպես ուսուցիչ աշխատել է Սեբաստիայում և Եվդոկիայում (Թոքաթ)։ Հայկական կոտորածների օրերին Կոնիայում զբաղվել է Թուրքական մի հին ազոթատեղիի վերանորոգման գործով։ Պատերազմից հետո ապրել է Կ. Պոլսում։ 1920—1922 թթ. Հռոմում հետևել է բժշկության, ապա՝ Միլանում և Փարիզում՝ նկարչության։ 1926 թ. հրավիրվել է Եգիպտոս, որպես ազգային դպրոցների նկարչության ուսուցիչ։ 1927 թ. Կահիրեում կազմակերպվել է Նրա և Ալ. Սարուխանի ստեղծագործությունների մեծ ցուցահանդեսը։ 1932—1936 թթ. պաշտոնավարել է Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունում որպես նկարչության ուսուցիչ։ 1937 թ. վերադարձել է Կահիրե, որտեղ 1939—1947 թթ. եղել է հիմնադիրներից մեկը և նախագահը «Հայ գրքի բարեկամների միության»։ 1946 թ. հրատարակել է «Համայնապատկեր հայ մշակույթի» գիրքը։ 1947 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան և մինչև 1958 թ. աշխատել է Պետական պատմական թանգարանում որպես նկարիչ, 1965-ին հրատարակել է «Դանիել Վարուժանն իմ հուշերում» գիրքը, որը արտատպվել է սփյուռքում։ Նրա առավել նշանակալից և երկար տարիների տքնաջան աշխատանքի արդյունքն է «Հայկական տարազ» նկարազարդ ուսումնասիրությունը (Երևան, 1967)։ Պատրաստել է «Պատմագիրք-հուշամատյան Սեբաստիա և գավառի հայության» երկհատոր աշխատությունը (Ա. հատ. Բեյրութ, 1974) (Բ. հատ. ՆյուՅորքի, 1983)։ Անտիպ աշխատություններից է «Հայկական խաչքարերի արվեստը»։

ՊԱՏՐԻԿ ՎԱՐԴ (1898—1959).— Դերասան, թատերական գործիչ։ Ծնվել է Վանում (Արևմտյան Հայաստան)։ Կրթությունն ստացել է ծննդավայրում։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո մեկնել է Կ. Պոլիս, այնտեղից՝ Սիրիա, որտեղ ունեցել է թատերական գործունեություն։ Հալեպում կազմակերպել է հայերեն ներկայացումներ, գլխավոր դերերը կատարել ինքը։ Հետագայում գործել է Լիբանանում, Հունաստանում, Ռումինիայում, Ֆրանսիայում, ամենուր տեղական ուժերից ստեղծել թատերախմբեր, տվել ներկայացումներ, դերազանցապես օպերետներ («Արշին մալ ալան», «Ուշ լինի, նուշ լինի», «Սոս և Վարդիթեր», «Սայաթ-Նովա»), նաև դրամաներ («Հին աստվածներ», «Նամուս» և այլն)։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ապրել է Սան Պաուլոյում (Արգենտինա) և զբաղվել է առևտրով։ Բուն ազգանունը եղել է Տեր-Հակոբյան։

ՊԱՐԹԵՎՅԱՆ ԱՐԱ (ծն. 1903).— Կոմպոզիտոր։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է միջնակարգ կրթությունը, սովորել էսայան և Կեդրոնական վարժարաններում։ 1924 թ. մեկնել է Փարիզ, երաժշտական հիմնավոր ուսում ստացել «Սկոլա կանտոր» երաժշտական բարձրագույն դպրոցում։ Ուսանողական շրջանում, 1929-ին հրատարակել է «Նոր երգեր» շարքը, բաղկացած 12 երգից։ 1932-ից հանդես է եկել նաև որպես դիրիժոր-խմբավար։ Նույն տարում Փարիզի Գավո սրահում ղեկավարել է առաջին սիմֆոնիկ համերգը, ծրագրում ունենալով Բեթհովենի, Շուբերտի ստեղծագործությունները, նաև իր երկերից մի քանիսը։ Այնուհետև տվել է տասնյակ համերգներ Փարիզում, Մարսելում, Լիոնում, Պոլսում և այլ քաղաքներում, արգեն իր ծրագիրը հարստացնելով Ալ. Սպենդիարյանի, Ա. Մելիքյանի, Կոմիտասի և այլ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններով։ Երկար տարիներ ղեկավարել է Փարիզի հայկական երգչախումբը, եղել Փարիզի հայոց եկեղեցու երգեհոնահարը։ Գրել է քսանից ավելի խմբերգեր Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Պ. Դուրյանի, Մ. Մեծարենցի, Ա. Չոպանյանի և այլ բանաստեղծների տեքստերով։ Կ. Զարյանի «Տատրագոմի հարսը» վերածել է օպերայի։

ՊԱՐԹԵՎՅԱՆ ՍՈՒՐԵՆ (1876—1921).— Գրող, հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Կ. Պոլսի Կադը գյուղ Թաղամասում։ Բուն անուն ազգանունը եղել է Սիսակ Պարտիզպանյան։ Կրթությունն ստացել է Կ. Պոլսի Պերպերյան միջնակարգ վարժարանում։ 1895 թ. կոտորածներից հետո մեկնել է արտասահման, Փարիզում հետևել Սորբոնի համալսարանի գրականության դասընթացներին։ 1898 թ. Մանչեստրում (Անգլիա) խմբագրել է «Վաղվան ձայնը» թերթը։ Ապա մեկնել է Ամերիկա, որտեղ 1899—1900 թթ. խմբագրել է «Ձայն հայրենյաց» թերթը։ 1901 թ. Լոնդոնում ստանձնել է «Նոր կյանք» հնչակյան պարբերականի խմբագրությունը։ 1903 թ. կրկին մեկնել է Ամերիկա, խմբագրել է «Ազգ» թերթը։ Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո (1908) վերադարձել է Կ. Պոլիս, աշխատակցել տասնյակ թերթերի, հանդեսների, տարեգրքերի։ Կիլիկիայի հայտնի կոտորածներից հետո մեկնել է Ադանա, իր ցնցող տպավորությունները տպագրել պոլսահայ մամուլում, ապա ամփոփել է «Կիլիկյան արհավիրքը» հատորում (Կ. Պոլիս, 1909)։ 1910 թ. Զմյուռնիայում տպագրել է «Քայքայում» պատմվածքների ժողովածուն, 1911 թ. Կ. Պոլսում՝ «Հայուհին» ժողովածուն, իսկ 1915 թ. Կահիրեում՝ «Արյունի մատյանը»։ Գրել է երկու պիես՝ «Անմահ բոցը» և «Ձայնը հնչեց», որոնք քանիցս բեմադրվել են սփյուռքահայ թատրոններում, հատկապես Եգիպտոսում։ 1912 թ. Կահիրեում խմբագրել է «Դաշինք» շաբաթաթերթը, 1914—1916 թթ.՝ «Եգիպտահայ տարեցույցը»։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո մի քանի տարի ապրել է Զմյուռնիայում, որտեղ կրկին հրատարակել է «Դաշինք» թերթը։ Օգտագործել է Տերունի ծածկանունը։

ՊԱՐԻԿՅԱՆ ՀԱՅԿ (ծն. 1914).— Գրող, խմբագիր, կրթական գործիչ։ Ծնվել է Յոզգատում (Թուրքիա)։ Տարրական և միջնակարգ կրթությունն ստացել է Հալեպում (Սիրիա)։ Ունեցել է կրթական, մանկավարժական, գրական-խմբագրական բեղուն գործունեություն։ 1936—1978 թթ. որպես ուսուցիչ կամ տնօրեն պաշտոնավարել է Հայկազյան, Կիլիկյան, Հոիսիսիյանց և այլ դպրոցներում։ 1948—1949 թթ. խմբագրել է «Եփրատ» թերթը, 1951—1958 թթ.՝ «Բուրաստան» երկամյա հանդեսը, 1957—1963 և 1971 թթ. «Բարձունք» տարեգիրքը, ապա ձեռնարկել է «Գեղարդ» ճոխ տարեգրքի պատրաստմանը, որի Ա. գիրքը լույս է տեսել Հալեպում 1975-ին, Բ. գիրքը՝ 1979-ին, Գ. գիրքը՝ 1985-ին։ Դրանցում լայն տեղ է տրված խորհրդահայ գրականության ու մշակույթին։ Առանձին գրքերով լույս ընծայած գործերն են՝

«Այգեկութք» (բանաստեղծություններ, Հալեպ, 1963), «Լևոն Բաշալյան» (ուսումնասիրություն, 1972), «Պատմություն Սուրբ հայ տպարաններու» (1974), «Երգեր հողի և մարդոց մասին» (բանաստեղծություններ, 1985)։ 1963 թ. այցելել է Խորհրդային Հայաստան, վերադարձին «Զարթոնք» և «Պայքար» թերթերում տպագրել է հայրենական ընդարձակ տպավորությունները։ Օգտագործել է Պահակ, Հայ-Պետ, Շահան Նուռյան, Բակուր Տաթևյան և այլ ծածկանուններ։

ՊԱՐԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ (1897—1962).— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը, սովորել Սամաթիայի Սահակյան, ապա Կեդրոնական վարժարաններում, Բեմական ասպարեզ է մտել 1914 թվականին։ Խաղացել է նախ «Նոր բեմ» թատերախմբում, ապա՝ 1918-ից հետո՝ Մկրտիչ Ջանանի, Տրդատ Նշանյանի և ուրիշների հետ Կոնյա քաղաքում ստեղծել են թատերախումբ, տվել ներկայացումներ՝ մինչև 1924 թվականը՝ կազմի նկատելի փոփոխությամբ։ 1924-ին մեկնել է Հալեպ, դարձել Հակոբ Առաքելյանի ղեկավարած «Անդրանիկ» թատերախմբի հիմնական ուժերից մեկը։ Ապա կազմել է Հալեպահայ դրամատիկ թատերախումբը, բեմադրել «Վարդանանց պատերազմը», «Նամուս», «Պատվի համար», «Զար ոգի», «Հին աստվածներ», «Օթելլո», «Մոննա-Վաննա», «Մարվող ճրագներ», «Ոճրագործի ընտանիքը», «Տոսկա» և այլ պիեսներ։ Աչքի է ընկել հատկապես բացասական դերերում, ինչպես՝ Յագո («Օթելլո»), Էլիզաբրով («Պատվի համար»), Բարխուդար («Նամուս») և այլն։

ՊԱՐՈՆ (8-րդ դ.).— Տաղասաց։ Նրան է վերագրվում Հայոց եկեղեցու պատարագի մի հատվածը՝ «Գոհանամք»։

ՊԱՐՈՆ-ՍԱՐԳԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ (1863—1915).— Դերասան։ Ծնվել է Կոլկասում։ Կրթությունն ստացել է Թիֆլիսում։ Բեմական ասպարեզ է մտել 1880-ական թվականների սկզբներին։ Հիմնականում խաղացել է Թիֆլիսի հայկական թատերախմբերում։ Աչքի է ընկել Գ. Սունդուկյանի կատակերգություններում, մասնավորապես Կակուլիի («Պեպո») դերով արժանացել է կոլկասահայ մամուլի բարձր գնահատանքի։ Նա այդ դերով հանդես է եկել նաև Բաքվում, 1889 թ. Գ. Սունդուկյանի բեմական գործունեության 25-ամյակին նվիրված հոբելյանական երեկոյին։ 1889—1890 թատերաշրջանում խաղացել է Բաքվի հայկական խմբում, մասնակցել «Էլի մեկ զոհ» և այլ պիեսների ներկայացումներին։ Ապա կրկին խաղացել է Թիֆլիսում Գեորգ Պետրոսյանի խմբում, Հ. Աբելյանի, Սիբանույշի և այլ ականավոր դերասանների հետ։

ՊԱՐՈՆԻԿՅԱՆ ՄԱՅՐԱՆՈՒՇ (ծն. 1910).— Դերասանուհի. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Վանում։ Կրթությունն ստացել է Երևանում, 1927 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան դպրոցը, ապա երեք տարի սովորել է պարի դպրոցում, Վահրամ Արիստակեսյանի մոտ։ 1929 թվականից սովորել է Երևանի 1-ին պետական թատրոնին կից գործող թատերական տեխնիկումում, ավարտել է 1932 թ.։ Նույն տարվանից խաղացել այդ թատրոնում։ Տարիների ընթացքում կատարել է 150-ից ավելի դերեր, որոնցից են՝ Օֆելյա («Համլետ»), Կորդելիա («Լիր արքա»), Լուիզա («Սեր և խարդավանք»), Կեկել («Պեպո»), Մարգարիտ («Պատվի համար»), Թերեզա («Ժայռ»), Անանի («Էլի մեկ զոհ») և այլն։ Նկարահանվել է 4—5 կինոֆիլմերում։

ՊԱՐՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ծն. 1924).— Նկարիչ։ Ծնվել է Գորիսում։ Մասնագիտական կրթությունը ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում և Գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի գեղանկարչության բաժինն ավարտել է 1954-ին։ 1954—1959 թթ. աշխատել է Գորիսի պետական թատրոնում որպես գլխավոր նկարիչ, 1959—1975 թթ.՝ Գորիսի Ա. Բակունցի անվան դպրոցում որպես նկարչության դասատու, ապա՝ նույն քաղաքի մանկական գեղարվեստի դպրոցում իբրև դիրեկտոր։ Ստեղծել է տարբեր ժանրի գործեր։ 1954-ից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների։ Ունեցել է անհատական ցուցահանդեսներ։ Լավագույն գործերից են՝ «Առավոտը Գորիսում», «Առաջին ձյունը» և մի շարք այլ բնանկարներ, նատյուրմորտներ։

ՊԱՐՈՆՅԱՆ ՀԱԿՈԲ (1843—1891).— Նրգիծաբան։ Ծնվել է Ագրիանապոլսում (Թուրքիա) 1843 թ. նոյեմբերի 28-ին։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Արշակունյաց դպրոցում. կարճ ժամանակ էլ սովորել է նույն քաղաքի հունական դպրոցում, տիրապետել հունարենին և ֆրանսերենին։ 1864 թ. տեղափոխվել է Կ. Պոլիս, որպես թարգմանաշխատել ֆրանսիական «Հավաս» հեռագրական գործակալության Պոլսի թղթակցի մոտ։ 1870—1871 թթ. ուսումնական տարվա սկզբից ուսուցչական պաշտոնի է հրավիրվել Սկյուտարի ճեմարանում, սակայն մեկ տարուց թողել է և ամբողջովին նվիրվել գրական, հրապարակախոսական ասպարեզին։ 1865 թ. գրել է «Երկու տերով ծառա մը» զավեշտը, որը ոչ տպագրվել է, ոչ էլ բեմադրվել։ 1868 թ. լույս է ընծայել «Ատամնաբույժն արևելյան» կատակերգությունը։ 1870 թ. վերջերից Քամ ծածկանունով աշխատակցել է Հ. Սվաճյանի «Մեղու» երգիծաթերթին, իսկ հաջորդ տարվա աշնանից՝ «Նփրատ» թերթին։ Ապա ստանձնել է վերջինիս խմբագրությունը, սակայն վեց ամսից թողել է։ 1872 թ. նոյեմբեր ամսին Հ. Սվաճյանը «Մեղու» երգիծաթերթի խմբագրությունը հանձնել է Նրան։ Այս պարբերականի էջերից նա մոլեգին պայքար է սկսել հետադիմական խավերի դեմ, որի հետևանքով երկու տարվա ընթացքում չորս անգամ փակվել է թերթը՝ օրինազանցության մեղադրանքով։ 1874 թ. մարտ ամսին հարկադրված է եղել վերջնականապես փակել թերթը, հիմնել «Թատրոնը», որտեղ ավելի համարձակ շարունակել է պաշտպանել աշխատավոր ժողովրդի շահերը։ Այս թերթում նա սկսել է տպագրել իր երկու նշանավոր երկերի՝ «Ազգային ջոջեր» և «Պրոտույտ մը Պոլսո թաղերում մեջ» առաջին տարբերակները։ 1877 թվականի հունիս ամսին հարկադրված է եղել դադարեցնել նաև «Թատրոնը», որ նույնպես քանիցս ենթարկվել էր խափանումների։ «Թատրոնի» հրատարակման տարիներին՝ 1874—1875 թթ. լույս է ընծայել նաև «Թիլաթրո» արաբատառ թուրքերեն երգիծաթերթը՝ թուրք ընթերցողների համար, և «Թատրոն մանկանց» (1876) նկարագրդ մանկական ամսագիրը։ «Թատրոնի» վերջնական փակումից հետո միաժամանակ աշխատակցել է «Մասիսին». «կամիթներ» խորագրով շարունակելով քաղաքական քրոնիկները, որ նա սկսել էր «Թատրոնում»։ Մեկ տարի իր ծննդավայրում գործելուց հետո՝ 1879 թ. վերադարձել է Պոլիս, ստանձնել «Լույս» շաբաթաթերթի խմբագրությունը։ Այստեղ շարունակել է ընթացիկ

կյանքը արտացոլող քրոնիկները «Խաղտում» խորագրով, և բոլորովին նոր սկզբունքով սկսել է լույս ընծայել «Ազգային ջոջեր» դիմանկարների շարքը, որոնք ամփոփել է երկու փոքր հատորների մեջ 1880 թ.։ Նույն տարվա գարնանից թողել է «Լույսը», աշխատակցել Թիֆլիսի «Փորձ» հանդեսին՝ «Հոսհոսի ձեռատետրը» քաղաքական քրոնիկներով, որոնք հետագայում արժանացել են բազմաթիվ հրատարակությունների։ Նույն այս շրջանում առանձին տետրերով հրատարակել է «Պտույտ մը Պոլսո թաղերուն մեջ» երկի նոր շարադրանքը և «Մեծապատիվ մուրացկանները»։ 1883 թվականի հունվար ամսից լույս է ընծայել «Ծիծաղը», հաջորդ տարի՝ ձեռք բերելով կառավարական արտոնություն՝ հիմնադրել է «Խիկար» հանդեսը, որի էջերում են լույս տեսել «Պատտասար աղբար» կատակերգությունը, «Քաղաքավարության վնասները», «Առտնին տեսարանները»։ 1888 թ. փակվել է նաև «Խիկարը»։ Առողջական ծանր վիճակի պատճառով թողել է գրական ասպարեզը և հաշվապահություն դասավանդել Պոլսի Կեդրոնական վարժարանում, որտեղ նրան աշակերտել է Հրաչյա Աճառյանը։ Գրել է նաև հայատառ թուրքերեն գեղարվեստական երկեր, որոնցից «Լեռը մարգարեին քովը չերթա նե՝ մարգարեն լեռան քովը կերթա» երգիծավեպը Գ. Ստեփանյանի արևմտահայ թարգմանությամբ տպագրվել է «Գարուն» հանդեսում (1972, № 11)։ Ռեժիսոր Վ. Խաչյանը այն բեմականացրել է և ներկայացրել Բեյրութում, Հալեպում և Լենինականում (1980)։ Վախճանվել է 1891 թ. մայիսի 27-ին։ Նրա ստեղծագործությունները դեռևս նախախորհրդային տարիներից արժանացել են բազմաթիվ հրատարակությունների։ Խորհրդային տարիներին 1932—1948 թթ. լույս է տեսել «Երկերի լիակատար ժողովածուն»՝ 11 հատորով, 1962—1979 թթ. «Երկերի ժողովածուն»՝ տասը հատորով։ Նրա ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն, իսպաներեն, թուրքերեն և այլ լեզուներով, իսկ «Պատտասար աղբարը» և «Մեծապատիվ մուրացկանները» բեմականացումը ներկայացվել են մի շարք լեզուներով, այդ թվում՝ ռուսերեն, ֆրանսերեն, արաբերեն։

ՊԱՐՈՆՅԱՆ ՀԱՅԿ (1898—1983).— Լրագ-

բող-խմբագիր. Հայկական ԽՍՀ վաստակավոր ուսուցիչ։ Ծնվել է Զանգեզուրի Մուզրա գյուղում (այժմ՝ Բարձրավան)։ Կրթությունն ստացել է Էջմիածնի Գևորգյան Ճեմարանում, որտեղ սովորել է 1912—1917 թթ., աշակերտել Մ. Աբեղյանին, Հ. Մանանդյանին և այլ ականավոր հայագետների։ Ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատել է Նոր Բայազետում։ Դեռևս 1920 թ. հեղափոխական ոգով տոգորված բանաստեղծություններ է տպագրել «Կարմիր զինվոր» թերթում։ 1928-ից աշխատակցել է «Մանկաց» և այլ թերթերի։ Սովորել է Երևանի պետական համալսարանում, շարունակել Դոնի Ռոստովի ինժեներա-տնտեսագիտական ինստիտուտում, ավարտել է 1932 թ.։ Եղել է Հյուսիսային Կովկասի ԽՄԿԿ Երկրկոմի «Հյուսիսային Կովկաս» հրատարակչության բաժնի վարիչ և պատասխանատու խմբագիր, երկրկոմի օրգան «Գրոհ» հայերեն թերթի խմբագիր։ 1936 թ. տեղափոխվել է Երևան, աշխատել Արմֆանում որպես հրատարակչության դիրեկտոր։ 1938 թ. նշանակվել է ՀԿ(բ)Կ կենտկոմի մամուլի և հրատարակչության բաժնի վարիչ, «Խորհրդային Հայաստան» օրաթերթի պատասխանատու խմբագիր։ Հետագայում աշխատել է Հայպետհրատում որպես բաժնի վարիչ, դիրեկտորի տեղակալ։ Հայրենական պատերազմի տարիներին ծառայել է Խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո եղել է Հայաստանի պետական բժշկական հրատարակչության (Մեդգիզ) դիրեկտոր, զարկ ավել մայրենի լեզվով դասագրքերի պատրաստման և հրատարակման գործին։ Այնուհետև ութ տարի խմբագրել է «Խորհրդային մանկավարժ» ամսագիրը։ Պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով։ Կատարել է թարգմանություններ ռուսերենից։

ՊԱՐՈՆՅԱՆ ՀԱՅԿԱՆՈՒՇ (ծն. 1918).— Նկարչուհի։ Ծնվել է Մայկոպում։ Մասնագիտական կրթությունն ստացել է նախ Երևանի Գեղարդտեխնիկումում, ապա գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի գեղանկարչության ֆակուլտետն ավարտել է 1950 թ.։ 1942 թվականից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Բերքահավաք», «Պարտիզաններ», «Հանդիպում հերոսի հետ», «Մանկապարտեզում», «Ցասմաններ», պրոֆ. Ռ. Պարոնյանի, Վ. Խմարայի, Պ. Պետրոսյանի, Աննա Նշանյանի և ուրիշների դիմանկարները։

ՊԱՐՈՆՅԱՆ ՍԻՄՈՆ (1850—1915).— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում։ 1870-ական թվականների կեսերից խաղացել է Հ. Վարդովյանի «Օսմանյան թատրոնում», հետագայում՝ Մ. Մնակյանի «Օսմանյան դրամատիկ» թատերախմբում։ Հաջողություն է ունեցել մասնավորապես դրամատիկական դերերում, արևմտաեվրոպական մելոդրամաներում («Լիոնի սուրհանդակը», «Արյան բիծ», «Պիեր ու Արեցցո» և այլն)։

ՊԱՐՈՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ (ծն. 1929).— Նկարիչ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել 1956 թ.։ Նույն տարվանից մասնակցել է հանրապետական, ապա նաև միութենական ցուցահանդեսներին։ Լավագույն գործերից են՝ «Աշուն», «Երեկո», «Բջնիի դաշտերը», «Բյուրական», «Գարնան զարթոնքը», «Օշական», «Ամպամած օր», «Վերին Դվին», «Հայրենի լեռներ» և այլն։

ՊԱՐՈՆՅԱՆ ՍՈՒՔԻԱՍ (ՀՈՎՀԱՆՆԵՍ) (1831—1903).— Բանաստեղծ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է Վիեննայի Մխիթարյանների վանքում, դարձել այդ միաբանության անդամ։ Կարճ ժամանակ այդ միաբանությունում գործելուց հետո թողել է կաթոլիկական դավանանքը, եկել է Կովկաս, դարձել Էջմիածնի միաբանության անդամ։ 1895 թ. նշանակվել է Մանչեստրի (Անգլիա) հայերի հոգևոր առաջնորդ։ Ունեցել է գրական-բանասիրական գործունեություն։ Բանասիրական հոդվածներով աշխատակցել է «Հանդես ամսօրյա», «Բանասեր» և այլ պարբերականների։ Եղել է Փարիզի, Լոնդոնի և այլ քաղաքների մատենադարաններում, կազմել է հայերեն ձեռագրերի ցուցակներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հայաստանյայց եկեղեցին», «Մեսրոպյան տառը», «Քաղկեդոնի ժողովը» և այլն։

ՊԱՐՈՆՅԱՆ ՎԱՐԴԵՍ (ծն. 1933).— Կոմպոզիտոր, երաժշտագետ։ Ապրում և ստեղծագործում է Հարավսլավիայում, որտեղ ստացել է կրթությունը, եղել է «Նոտա» երաժշտական ժուռնալի խմբագիրը, ռադիոհեռուստատեսության երաժշտական հաղորդումների վարիչ, Հարավսլավիայի կոմպոզիտորների միության քարտուղար։ Հորինել է տարբեր ժանրի բազմաթիվ

երգեր, օգտագործելով հայ ժողովրդական երաժշտության մեղեդին։ Լավագույն գործերից են համարվում «Դիվերտիսմենտը» նվագախմբի համար, սիմֆոնիկ համերգը, դաշնամուրային սոնատը, վարիացիաներ, որոնք հաճախ են կատարվել Հարավսլավիայում և այլուր։

ՊԱՐՈՆՅԱՆ ԷՐԱՍՄ (1859—1928).— Ինժեներ, արվեստասեր։ Ծնվել է Լվովում (այժմ՝ Ուկրաինական ԽՍՀ), Պարոնյանների հայտնի ընտանիքում։ Կրթությունն ստացել է Ավստրիայի Լեռներն քաղաքում, ավարտել 1880 թ.։ Եղբոր՝ բանդակագործ Թադեուշ Պարոնյանի ազդեցությամբ մղվել է դեպի արվեստը, տարիների ընթացքում ստեղծել գեղանկարչական գործերի, բանդակների, հին և արժեքավոր իրերի, արեալյան, այդ թվում հայկական գործվածքների շատ հարուստ հավաքածո, որը 1922 թ. նվիրել է Կրակովի ազգային թանգարանին, որտեղ ստեղծվել է հատուկ բաժին արվեստի այդ գործերի համար և բաժինն էլ կոչվել է նրա անունով։

ՊԱՐՈՆՅԱՆ ԹԱՔԵՈՒՇ (1849—1905).— Քանդակագործ։ Ծնվել է Լվովում (այժմ՝ Ուկրաինական ԽՍՀ), հայկական ընտանիքում։ 1860—1864 թթ. սովորել է Համբուրգում (Գերմանիա), ապա վերադարձել է ծննդավայրը, ավարտել տեղի սեմինարիան դպրոցը, իսկ 1868—1869 թթ. հաճախել է Կրակովի գեղարվեստների դպրոցը։ Այնուհետև երեք տարի էլ սովորել է Մյունխենում։ Ուսանելու տարիներից ստեղծել է բանդակներ, որոնցից «Պատերազմը» արժանացել է պարգևի։ Պատրաստել է Ռիչարդ Վագների կիսանդրին, «Հրեշտակը սնանկացած», «Գեթին», «Գրոշների պաշտպանումը» գործերը։ 1872—1875 թթ. եղել է Իտալիայում, որտեղ ստեղծել է «Վեներան և սերը» մարմարյա արձանը, Տարաս Շևչենկոյի կիսանդրին և այլ գործեր։ Վերադառնալով Լվով, ստեղծել է իր հատուկ արվեստանոցը, պատրաստել բազմաթիվ քանդակներ, որոնցից են «Ցան Կամինսկին», «Լեոն Սապեգին»՝ Լվովի թանգարանի համար, նաև իր ծնողների ու այլոց կիսանդրիները՝ մեծ մասամբ մարմարից։ Նրա պատրաստած արձաններից մի քանիսը զարդարել են Լվովի փողոցները, թատրոնի հրապարակը, գերեզմանատունը։ 1891 թ. մասնակցել է Բեռլինի միջազգային մրցույթին, արժանացել պատվոգրի, իսկ հաջորդ տարի Չիկագոյում (Ամերիկա) բացված ցուցահանդեսում արժանացել է առաջին մրցանակի։ Լվովում էլ Ա. Միցկեվիչի արձանի համար արժանացել է 2-րդ մրցանակի։

ՊԱՐՈՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ (1847—1913).— Բանաստեղծ, խմբագիր։ Ծնվել է Սուչավայում (Հունգարիա)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում։ 1867 թ. ընդունվել է Վիեննայի Մխիթարյանների վանքը, ուսման շրջանն ավարտելուց հետո դարձել այդ միաբանության անդամ։ Եղել է վանքի թանգարանի տեսուչը և նկատելի դեր է կատարել նրա հարստացման գործում։ «Հանդես ամսօրյա» պարբերականի հրատարակության առաջին տարվանից (1887) եղել է նրա խմբագրապետը՝ մինչև կյանքի վերջին տարիները։ Այդ հանդեսում տպագրել է չափածո ստեղծագործություններ, բանասիրական և այլ բնույթի հոդվածներ։ 1891 թ. առանձին գրքով լույս է ընծայել «Առակներ և առածներ» գերմաներեն ժողովածուն, որը հաջորդ տարվանից թարգմանաբար տպագրվել է նաև «Հանդես ամսօրյայում»։ Գերմանական մամուլը բարձր գնահատական է տվել նրա այդ աշխատությանը։ Մասնակցել է Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» գերմաներեն թարգմանությանը, օժանդակելով թարգմանիչ Շմիդտին։ Կյանքի վերջին տարիներին տառապել է հոգեկան հիվանդությամբ և իր օրերը անց կացրել վանքի խցիկներից մեկում, կատարյալ լրված վիճակում, որը պատճառ է դարձել օտար մամուլի լայն արձագանքներին։

ՊԱՐՈՆՅԱՆ ՍԱՂՈՄ (ԳՐԻԳՈՐԻ) (1814—1892).— Պատմաբան։ Ծնվել է Գալիցիայի (Լեհաստան) Սառնիսլավ քաղաքում (այժմ՝ Իվանո-Ֆրանկովսկ, Ուկրաինական ԽՍՀ)։ Գիմնազիական կրթությունն ստացել է ծննդավայրում, 1821—1830 թթ., ապա երեք տարի սովորել է Լվովի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում, բայց չի ավարտել և զբաղվել է ուսուցչությամբ։ 1855 թ. ընդունվել է Լվովի կաթոլիկական դոմինիկյան վանքը, որտեղ նրա Գրիգորի անունը փոխել են Սաղոմի։ Եղել է այդ վանքի գրադարանապետը, ձեռք բերել լայն գիտելիքներ։ Ունեցել է երկարամյա մանկավարժական գործունեություն Լեհաստանի տարբեր քաղաքներում։ 1855 թվականից դասավանդել է Լվովի մարդի Պոտկամենկի վանքում,

որտեղ էլ վախճանվել է։ Հրատարակել է արխիվային տասնյակ փաստաթղթեր, պատմագրական երկեր։ Չնայած գրել է լեհերեն, սակայն հիմնականում ուսումնասիրել է հայ ժողովրդի, մասնավորապես լեհահայերի պատմությունը։ Գլուխգործոց աշխատությունն է «Լեհահայ ականավոր հայերի կենսագրությունները» մեծածավալ գիրքը, որը լույս է տեսել Վարշավայում, 1856 թ. և պարունակում է 14—19-րդ դարերում ապրած ավելի քան 300 նշանավոր լեհահայերի (հասարակական քաղաքական գործիչներ, գրողներ, նկարիչներ, երաժիշտներ) կենսագրությունները։ 1869 թ. էլ հրատարակել է «Ակնարկներ հայերի պատմության» գիրքը։ Սրանցից բացի՝ ավելի քան քսան աշխատություն է տպագրել Լեհաստանի դոմինիկյան վանքերի, դրանցում պահվող արխիվների, Լեհաստանի պատմության և այլ հարցերի մասին։

ՊԱՐՈՆՋ ՍՏԱՆԻՍԼԱՎ *(19-րդ դ.).*— Թարգմանիչ։ Ծնվել է Լվովում (այժմ՝ Ուկրաինական ԽՍՀ), հայտնի Պարոնչների հայկական ընտանիքում։ Փոքր հասակից կուրացել է։ Այդ վիճակում սովորել է գերմաներեն, հայերեն, կատարել թարգմանություններ այդ լեզուներից լեհերեն։ Գրաբարից թարգմանել է հայ հին մատենագրությունից նմուշներ, գերմաներենից՝ Գյոթեի «Ֆաուստը»։

ՊԱՐՍԱՄ *(16-րդ դ.).*— Տաղերգու։ Գրել է աշխարհիկ բովանդակությամբ տաղեր, որոնցից մեկը՝ «Ակռաներս հալ մի չունի», պահվում է Երևանի Մատենադարանում, № 7717 ձեռագրում։

ՊԱՐՍԱՄ *(17-րդ դ.).*— Տաղերգու։ Ստեփանոս Նախիջևանցի վանքում 1669 թ. ընդօրինակել ու ծաղկել է մի ժողվածու, որը պահվում է Երևանի Մատենադարանում, № 3895 թվահամարի տակ։

ՊԱՐՍԱՄ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ *(14-րդ դ.).*— Նկարազարդել է մի Մաշտոց, որը պահվում է Մատենադարանում, № 5454 թվահամարի տակ։

ՊԱՐՍԱՄ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ *(15-րդ դ.).*— Աղթամարում նկարազարդել է երկու Ավետարան, որոնք պահվում են Երևանի Մատենադարանում, № № 4937 և 9660 թվահամարների տակ։

ՊԱՐՍԱՄ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ *(15—16-րդ դդ.).*— Ապրել է Մոկսում, 15-րդ դարի վերջերին և 16-րդ դարի սկզբներին։ Եղել է քահանա։ 1509 թ. այդ քաղաքում ընդօրինակել ու նկարազարդել է մի Ավետարան, որը պահվում է Երևանի Մատենադարանում, № 5145 թվահամարի տակ։

ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ *(ծն. 1935).*— Նկարիչ։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել է 1959 թ.։ Հաջորդ տարվանից մասնակցել է հանրապետական ցուցահանդեսների։ Ստեղծել է դիմանկարներ, բնանկարներ, որոնցից են՝ «Գարունն» ու «Աշունը»։

ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱՆԱՀԻՏ *(ծն. 1947).*— Բանաստեղծուհի։ Ծնվել է Երևանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 1969 թ.։ 1970—1979 թթ. աշխատել է «Հայրենիքի ձայն» թերթի խմբագրությունում։ 1979 թվականից սովորում է Մոսկվայում, ԽՍՀՄ գրողների միությանն առընթեր գրական բարձրագույն դասընթացներում։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Փյունիկ» (բանաստեղծություններ) (Երևան, 1973), «Արքայադուստրը» (հեքիաթներ և պատմվածքներ) (1975), «Խոստովանանք» (բանաստեղծություններ) (1977), «Երկնագույն ափսեն» (հեքիաթներ) (1980), «Օրվա հեքիաթներ» (1982), «Ինչ են խոսում կեռասները» (1985) և այլն։

ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱՐՓԵՆԻԿ *(1914—1971).*— Նկարչուհի։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Գեղարդտեխնիկումում, ապա սովորել է Լենինգրադի Ի. Ռեպինի անվան գեղարվեստների ինստիտուտում, ավարտել 1947 թ.։ 1954 թվականից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Վերադարձ շուկայից», «Պատրաստվում են քննությունների», «Մրգեր», «Գյուղական բակ», «Արարատը Արտաշատից» և այլն։ Կատարել է թատերական ձևավորումներ Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնում և Զափանի շրջանային թատրոնում։ Երևանի հարտարապետների տանը բացվել է նրա հետմահու ցուցահանդես։

ՊԱՐՍԱՄՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ *(1883—1944).*— Գրող, խմբագիր, հրապարակախոս։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքի Ապուչեխ գյուղում։ Կրթությունն ստացել է Արմաշի դպրեվանքում։ Գրական ասպարեզ է մտել 1900-ական թվականների սկզբներին, արևմտահայ մամուլում տպագրելով քնարական բանաստեղծություններ, որոնց մի մասը 1904 թ. լույս է ընծայել Պոլսում, «Անրշանք» խորագրով։ Օսմանյան սահմանադրությունից հետո, 1908 թ. հրատարակել է «Պատրանքի ծաղիկներ» և «Քրիզանթեմ» նոր ժողովածուները, ապա՝ «Բանաստեղծի սիրտը»։ 1911 թվականից հրատարակել է «Շանթ» գրական-գեղարվեստական պատկերազարդ շաբաթաթերթը, որը ընդհատվել է պատերազմի տարիներին, վերահրատարակվել 1918—1919 թթ.։ 1911—1913 թթ. հրատարակել է «Մեր տարեցույցը» տարեգիրքը։ 1919 թ. լույս է ընծայել բանաստեղծությունների մի նոր ժողովածու «Մարմնեղություն» խորագրով։ Քեմալական շարժման հաղթանակից հետո ի թիվս այլ գրողների, նա էլ հեռացել է Կ. Պոլսից, ապրել Ֆրանսիայում, որտեղ 1930-ական թվականների սկզբներին իր եղբոր՝ Մկրտիչ Պարսամյանի հետ հիմնադրել է «Կյանք և արվեստ» գեղարվեստական պարբերականը, որը նախ՝ 1930—1935 թթ. լույս է տեսել որպես տարեգիրք, ապա որպես ամսագիր։ 1944 թ. լույս է ընծայել «Մարդկային» գիրքը։ Կյանքի վերջին տարիներին գերազանցապես գրել է ֆրանսերեն բանաստեղծություններ, որոնք լույս են տեսել «La Deu Mort», «Elle et moi», «L'home et la femme» և այլ ժողովածուներով։ Նրա ֆրանսերեն այդ ստեղծագործությունների մասին հատուկ ուսումնասիրություն է գրել ֆրանսիացի քննադատ էմիլ Վան Լոն։

ՊԱՐՍԱՄՅԱՆ ՄԿՐՏԻՉ *(1886—1965).*— Գրող, հրապարակախոս, խմբագիր։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքի Ապուչեխ գյուղում, որտեղ ստացել է նախնական կրթություն, ապա սովորել է Մեզիրեի (Խարբերդ) կենտրոնական վարժարանում և Կարնո Սանասարյան վարժարանում։ 1905 թվականից որպես ուսուցիչ աշխատել է Մեզրեի, Կարնո, Տրապիզոնի, Կոնիայի և Կ. Պոլսի հայկական դպրոցներում։ 1922 թ. եղբոր՝ Մերուժան Պարսամյանի հետ մեկնել է Փարիզ, որտեղ էլ ապրել է մինչև կյանքի վերջը։ Գրականությամբ զբաղվել է 1907 թվականից, գերմաներենից կատարելով թարգմանություններ, որոնք, ինչպես և նրա արձակ և չափածո շատ երկերը, տպագրվել են պոլսահայ մամուլում («Շանթ», «Արևելք» և այլն)։ Օգտագործել է Կայծակ և Արաքս ծածկանունները։ 1912 թ. առանձին գրքով հրատարակել է «Արյունի տոնը» ժողովածուն։ 1930 թ. Փարիզում լույս է ընծայել «Ավետիս Ահարոնյան» մենագրությունը, 1937 թ.՝ «Արևմտյան բանաստեղծներ» շարքը։ 1931—1939 թթ. եղբոր՝ Մերուժան Պարսամյանի հետ հրատարակել է «Կյանք և արվեստ» պարբերականը, նախ տարեգիրք, ապա՝ ամսագիր։ Այդ պարբերականի մի շարք համարներում տպագրել է «Մեռնող գյուղին պատմությունը» արձակ գործը, որի նյութը վերցված է իր ծննդավայրի գեպքերից։ Կազմել է դասագրքեր, ինչպես «Արարատ» այբբենարանը, որի Ա. տպագրությունը կատարվել է Փարիզում, 1945 թ., Բ. տպագրությունը՝ 1946 թ.։

ՊԱՐՍԱՄՅԱՆ ՊԵՐՃՈՒՀԻ *(1888—1956).*— Բանաստեղծուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ Օրիորդական ազգանունը եղել է Ցազրճյան։ Գրական ասպարեզ է մտել 1900-ական թվականների սկզբներին, «Մասիս» շաբաթաթերթում տպագրելով գեղարվեստական երկեր։ Հետագայում աշխատակցել է իր ամուսնու՝ Մ. Պարսամյանի խմբագրած «Շանթ» գեղարվեստական հանդեսին (1911—1914) և այլ պարբերականների։ 1920-ական թվականների սկզբներին ընտանիքով մեկնել են Փարիզ, որտեղ աշխատակցել է «Կյանք և արվեստ», «Անահիտ» և այլ պարբերականների, տարեցույցների։ Առանձին գրքով հրատարակել է «Հոգիի երազներ» ժողովածուն։

ՊԱՐՍԱՄՅԱՆ ՌՈՒԲԵՆ *(ծն. 1920).*— Արվեստաբան. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Մոսկվայի Ն. Չերնիշևսկու անվան պատմության, փիլիսոփայության և գրականության ինստիտուտում, որի արվեստի պատմության և տեսության բաժինն ավարտել է 1941 թ.։ Վերադառնալով Հայաստան, վարել է մի շարք պաշտոններ՝ 1953—1962 թթ. եղել է Հայաստանի պետական պատկերասրահի դիրեկտորը, 1959—1967 թթ.՝ Հայաստանի նկարիչների միության նախագահ, միաժամանակ ԳԱ արվեստի ինստիտուտի դի-

աշխատող, 1967—1972 թթ. Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության նախագահ, 1972—1979 թթ.՝ Հայկական ԽՍՀ կուլտուրայի մինիստր և այլն։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հայաստանի պետական պատկերասրահը» (Մոսկվա, 1960), «Խորհրդային Հայաստանի կերպարվեստը» (Երևան, 1956, Մոսկվա, 1957, ռուսերեն), «Ստեփան Ադաչանյան» (1963)։ Նրա սցենարներով նկարահանվել են «Գևորգ Բաշինջաղյան», «Մարտիրոս Սարյան», «Հակոբ Կոջոյան» և այլ վավերագրական ֆիլմեր։

ՊԱՐՍԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ (ծն. 1909).— Պատմաբան. պատմական գիտությունների դոկտոր (1946)։ Ծնվել է Հրազդանի շրջանի Արզական գյուղում։ Բարձրագույն կրթություն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի պատմագրական ֆակուլտետն ավարտել է 1931 թ., ասպիրանտուրան՝ 1934-ին։ 1932—1936 թթ. աշխատել է Հայկական ԽՍՀ պետական արխիվում իբրև գիտաշխատող, գիտահետազոտական բաժնի վարիչ, ապա՝ դիրեկտորի տեղակալ՝ գիտական գծով, 1934—1942 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալում (Արմֆան), իսկ 1943—1954 թթ. ԳԱ պատմության ինստիտուտում որպես նոր պատմության սեկտորի վարիչ։ 1938—1954 թթ. ԽՍՀՄ, հայ ժողովրդի պատմություն և պատմագրություն է դասավանդել Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, որտեղ եղել է նաև ամբիոնի վարիչ, իսկ 1954—1976 թթ. եղել է Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ։ Նրա նախաձեռնությամբ և ղեկավարությամբ ստեղծվել է հայ ժողովրդի պատմության բուհական առաջին դասագիրքը։ Նկատելի աշխատանք է կատարել դպրոցական դասագրքերի ստեղծման գործում։ 1977-ից կրկին աշխատել է պատմության ինստիտուտում։ Գիտական մամուլում և առանձին ժողովածուներում տպագրել է պատմագրական բազմաթիվ հոդվածներ։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում» (Երևան, 1940), «Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները» (1947), «Հեղափոխական շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.» (1955), «Հայ աղատագրական շարժումների պատմությունից» (1958), «Դեկաբրիստները Հայաստանում» (1959), «Հայ ժողովրդի պատմություն» (հատ. 3, 1967), «Հայ ժողովրդի պատմություն, 1801—1900 թթ.» (1972, ռուսերեն), «Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը» (1978) և այլն։ Մասնակցել է մի շարք կոլեկտիվ աշխատությունների ստեղծմանը։ Աշխատակցել է Խորհրդային մեծ հանրագիտարանին, Հայկական Խորհրդային հանրագիտարանին։

ՊԱՐՍԿՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ (ԱՃԵՄՅԱՆ) (ծն. 1923).— Գրող։ Ծնվել է Վառնայում (Բուլղարիա)։ Տարրական կրթությունն ստացել է Ռուսենի Մեսրոպյան վարժարանում։ Պատանեկան տարիներից գրել է բանաստեղծություններ, որոնք տպագրվել են բուլղարահայ «Երևան» թերթում և Բեյրութի «Արարատում»։ Բուլգարական դասական և ժամանակակից գրողներից կատարել է թարգմանություններ, ինչպես բուլգար հեղափոխական բանաստեղծ Նիկոլա Վապցարովի «Մատռային երգերը», «Յավրովի «Հայեր» բանաստեղծությունը։ 1977 թ. Երևանում տպագրվել է նրա բանաստեղծությունների «Հայրենի հող» ժողովածուն։

ՊԱՐՍՈՒՄՅԱՆ ԵՐՎԱՆԴ (ծն. 1910).— Գրող։ Ծնվել է Հալեպում (Սիրիա)։ Կրթությունն ստացել է տեղի Հայկազյան վարժարանում և Թերրա Սանթա ֆրանսիական դպրոցում։ 1931 թ. ավարտել է Մարսելի համալսարանի ճարտարապետական բաժինը և զբաղվել իր մասնագիտությամբ։ 1927 թվականից Ե. Ներսեսի ծածկանունով բանաստեղծություններ է տպագրել սփյուռքահայ մամուլում։ 1944 թ. Հալեպում լույս է ընծայել բանաստեղծությունների առաջին ժողովածուն «Ես ինձի հետ» խորագրով, 1964-ին՝ Փարիզում՝ «Երգ երգոց» պոեմը, իսկ 1966 թ.՝ «Պրիսմակ» բանաստեղծությունների ժողովածուն։ Առանձին գրքերով հրատարակած մյուս ժողովածուներն են՝ «Մանուկն ու մարդը», «Ծագե ի ծագ» (արձակ գործեր)։ 1974 թ. Երևանում լույս է տեսել նրա ընտիր երկերի ժողովածուն՝ «Քառուղի» խորագրով։

ՊԱՐՏԱԳՃՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ծն. 1942).— Բանասիրական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Բեյրութում (Լիբանան)։ Միջնակարգ կրթությունն ստացել է Դամասկոսում (Սիրիա), բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 1969-ին։ 1970—1974 թթ. որպես մասնագիտ աշխատել է Օքսֆորդի համալսարանում, որտեղ պաշտպանել է դոկտորական դիսերտացիա՝ Հ. Պարոնյանի մասին։ 1974—1987 թթ. որպես ավագ դասախոս պաշտոնավարել է Հարվրդի համալսարանի (ԱՄՆ) Մաշտոցի անվան հայագիտական ամբիոնում, իսկ 1987-ից՝ Միչիգանի համալսարանում որպես հայոց լեզվի ու գրականության ամբիոնի վարիչ։ Հրատարակել է պատմաբանասիրական մի շարք աշխատություններ անգլերեն և հայերեն լեզվով, ինչպես «Մխիթարյանների նպաստը հայ մշակույթին ու հայագիտությանը» (1976), «Ժամանակակից արևմտահայերենի դասագիրք» (հեղինակակից՝ Ռ. Թոմսոն, 1977), «Հ. Պարոնյանի այլաբանական կարգ մը երկերուն պատմական դեմքերն ու դեպքերը» (Բոստոն, 1980, հայերեն), «Հիտլերը և հայկական ցեղասպանությունը» (1986), ինչպես և անգլերեն ընդարձակ հոդվածներ՝ ամերիկյան հանդեսներում։

ՊԱՐՏԻԶՊԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ (1809—1856).— Մանկավարժ, մշակութային գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, ապա ինքնակրթությամբ սովորել է մի քանի լեզու, ձեռք բերել լայն գիտելիքներ։ 1840-ական թվականների սկզբներին մեկնել է Փարիզ, որպես այնտեղ ուսանելու մեկնած Նիկողոս Պալյանի հսկիչ խորհրդատու։ 1846 թ. վերադարձել է Կ. Պոլիս, Մայր Եկեղեցու ուսումնարանում ավանդել հայոց լեզու և իտալերեն։ Այնուհետև Սկյուտարի ճեմարանում դասավանդել է ֆրանսերեն և մաթեմատիկա։ Նրա աշակերտների թվում են եղել այնպիսի ականավոր մարդիկ, ինչպես Գրիգոր Օտյանը, որին տվել է մասնավոր դասեր։ Համարվել է ժամանակի ամենահմուտ մանկավարժներից մեկը։

ՊԱՐՏԻԶՊԱՆՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ (1887—1932).— Նկարիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Կ. Պոլսի գեղարվեստների դպրոցում։ 1923 թ. մեկնել է Եգիպտոս, ապրել և ստեղծագործել Կահիրեում։ Հիմնականում ստեղծել է բնանկարներ, որոնցով մասնակցել է Կահիրեում կազմակերպված ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են համարվել իր ծննդավայրից վերցված Բոսֆորյան տեսարանները։

ՊԱՐՏԻԶՈՒՆԻ ՎԱՉԵ (ԹԱԴԵՎՈՍՅԱՆ) (ծն. 1915).— Գրականագետ. բանասիրական գիտությունների դոկտոր (1957)։ Ծնվել է Ղարահամզլու (այժմ՝ Արտաշատի շրջանի Բուրաստան) գյուղում։ 1935—1940 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետում, ապա երկու տարի էլ՝ Երևանի մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրայում, ավարտել է 1940 թ.։ Նույն տարվանից դասախոսել է այդ ինստիտուտում, 1951 թվականից եղել է հայ գրականության ամբիոնի վարիչը պրոֆեսորի աստիճանով։ Դասախոսական աշխատանքին զուգընթաց ունեցել է գրականագիտական, բանասիրական բեղուն գործունեություն։ Երկար տարիներ զբաղվել է Վահան Տերյանի ստեղծագործությունների ուսումնասիրությամբ և նրա երկերի գիտական հրատարակության պատրաստությամբ։ Տեքստերը պատրաստել, կազմել և ընդարձակ ծանոթագրություններով օժտել է Տերյանի երկերի չորս հատորները (1972—1979)։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Խաչատուր Աբովյան» (Երևան, 1952), «Մուրացան» (կյանքը և ստեղծագործությունը, 1956), «Գրականության ուժն ու հմայքը» (1963), «Վահան Տերյան» (1968), «Ավ. Իսահակյանը և Վ. Տերյանը» (1975), «Տաղանդի ուժը» (1977), «Տերյանի կենսապատումը» (1984) և այլն։

ՊԱՐՏՈՒՆԻ ՀՐԱՆՏ (1883—?).— Գերասան, նկարիչ։ Ծնվել է Եվդոկիայում (Արևմտյան Հայաստան)։ Պատանեկան տարիներից թուրքական սարսափներից փախչելով՝ եկել է Ռուսաստան, այնտեղից մեկնել Հունաստան, ապա՝ Ֆրանսիա, որտեղ հետևել է նկարչության։ Պատրաստել է կանանց նորաձևության էսքիզներ, ձեռք բերել նկատելի ճանաչում։ Ավարտել է Փարիզի էկոլ Նատիոնալեն դպրոցը։ 1911-ին մեկնել է Ամերիկա, որտեղ մեծ համբավ է ձեռք բերել որպես ամերիկյան բեմի դերասան։ Նյու Յորքի Հուսքին էյլի թատրոնում բեմադրված Գայ Բոլդրնի «Անաստասիա» պիեսում,— որի նյութը վերցված է եղել ռուսական կյանքից,— կատարել է խնամակալ մուժիկի դերը, արժանացել ամերիկյան մամուլի բարձր

գնահատմանը։ «Հուսաբն քրոնիկլ» թերթի թատերախոսը գրել է, թե հայ դերասանը ստեղծել է այնպիսի տեսարաններ, որոնք ստիպել են հանդիսականներին «Զեռները գեպի թաշկինակները տանել...»։ Այդ դերակատարման ուրիթով հեռուստատեսությամբ էլ խոսվել է նրա մասին։

ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅԿԱԶՆ (4-րդ դ.).— Հռետոր։ Ծնվել է Փոքր Հայքում։ Կրթությունն ստացել է Անտիոքում։ 308 թ. մեկնել է Աթենք, աշակերտել նշանավոր հռետոր Հուլիանոսին։ Որպես հռետոր այնպիսի համբավ է ձեռք բերել, որ Հռոմում կանչեցրել են նրա արձանը, կոչելով նրան «Թագավոր ճարտասանության»։ Ունեցել է բազմաթիվ աշակերտներ, որոնցից է հայտնի մատենագիր Բարսեղ Կեսարացին։ Եվնոպիոս անունով մի պատմաբան գրել է նրա կենսագրությունը։ Սրա կյանքն է, որ Բաֆֆին դարձրել է «Պարույր Հայկազն» վիպակի նյութը։

ՊԵՏՐԻՃՅԱՆ ՍՈՓՈՆ (1837—1919).— Նկարիչ, քանդակագործ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը, փոքր հասակից հետևել նկարչության, աշակերտել է իտալացի նկարիչների։ 1858 թ. նրան հանձնարարվել է Զմյուռնիայի պալատներից մեկի նկարազարդումը, որը և նրան ծանոթացրել է պալատական շրջանակներին և նշանակվել է պետական արքունիքի դեկորատոր։ Այդ շրջանում զեղազարդել է Քյաղըտհանեի, սուլթան Ազիզի, Զրաղանի պալատները՝ արևելյան ճոխությամբ ու գունագեղությամբ։ Դրանք հիացմունք են պատճառել Հովհ. Այվազովսկուն, Պոլիս կատարած նրա առաջին այցի օրերին։ 1863 թ. նկարազարդել է Զմյուռնիայի հայոց եկեղեցին, այդ առիթով մտերմացել է հյուրախաղերով այնտեղ գտնվող «Արևելյան թատրոնի» առաջին դերասանուհի Արուսյակ Փափազյանի հետ և ամուսնացել են։ Չնայած եղել է թատերասեր, զարգացած անձնավորություն, չի հանդուրժել կնոջ բեմական գործունեությունը։ Այդ հողի վրա առաջացած տևական վեճերից հետո, 1880-ական թվականների սկզբներին բաժանվել է կնոջից, երեխաներին (տղա և աղջիկ), վերցրած մեկնել է արտասահման, ապրել է Եգիպտոսում, վայելել խեդիվի (փոխարքա) համակրությունը։ 1900 թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում զարդանկարել է թուրքական և պարսկական տաղավարները։ Խեդիվանի հրավերով եկել է Կահիրե՝ էշմիածնի տաճարը նկարազարդելու, տակավին ցարական կառավարության արգելքի պատճառով ձեռնունայն վերադարձել է Եգիպտոս։ Մի քանի տարի էլ ապրել է Լոնդոնում, որտեղ նրա աշխատանքներով հիացողներից է եղել Վիկտորիա թագուհու դուստր Քրիստինեն։ Փարիզում լույս է ընծայել մրցանակի արժանացած իր լավագույն ստեղծագործությունների ալբոմը, որի առաջաբանը գրել է ժյուրիի նախագահ Ժուլենը։ Զբաղվել է նաև քանդակագործությամբ։ Նրա պատրաստած արձաններից և շիրմաքարերից մի քանիսը զարդարում են Կահիրեի հայոց Մարմինայի գերեզմանատունը։

ՊԵՏՃԵՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (1771—1834).— Մեծահարուստ ամիրա, մեկենաս։ Ծնվել է Կ. Պոլսի Ենի Կապու թաղամասում, կարսեցի Մահտեսի Պողոս Պեղճիի ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի հայկական ծխական դպրոցում. ավարտելուց հետո աշխատել է հոր մոտ, զբաղվել մետաքսի առևտրով։ 1802 թ., երբ Հովհ. Տյուզյան ամիրան օսմանյան կառավարությունից ստացել է մետաքսի մաքսի մենաշնորհը, նրան նշանակել է այդ գործի վերակացու։ 1819 թ. դարձել է պալատական գանձի վերատեսուչ, 10 տարի վարելով այդ գործը, ձեռք է բերել սուլթան Մահմուտի բացառիկ վստահությունը, դարձել փաստորեն նրա անմիջական խորհրդականը։ Օսմանյան կառավարության մատուցած ծառայությունների համար սուլթանից ստացել է «Թասվիրի հյուսայունի» պատվո նշան։ Մոտիկից կապված է եղել հայ իրականության հետ։ Իր ծախսով Պոլսում կառուցել է արական և իգական հայկական մի շարք դպրոցներ, հիմնադրել է առաջին աղքատախնամ ընկերությունը, նվիրաբերելով մեծ գումարներ։ Նրա ամենամեծ գործը Կ. Պոլսի ս. Փրկիչ ազգային հիվանդանոցի կառուցումն է, 1834 թվականին, որ մինչև այժմ էլ գործում է և բուժել, խնամք է տվել հազարավոր անօգնական հայերի, այդ թվում տասնյակ մտավորականների, որոնք իրենց ծերության տարիներին ապրել են այդ հիվանդանոցում։ Նրա ծախսով տպագրվել են հայագիտական գրքեր, ինչպես Գեորգ Դպիրի «Պարսկահայ բառգիրքը»։ Օժանդակել է հայտնի «նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատոր բառարանի տպագրությանը (1837)։ Նրա մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ, անգամ վեպեր։

ՊԵԿԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ծ. 1920).— Երաժշտագետ, դիրիժոր։ Ծնվել է Պոնտիակում (Ամերիկա)։ Կրթությունն ստացել է Ուելզի և էնն Արբորի համալսարաններում, հետևել երաժշտության։ Որպես երաժշտագիտության դասատու պաշտոնավարել է Քարա Թեքնիքլ բարձրագույն դպրոցում, միաժամանակ ղեկավարել է Միշիգեն Օպերայի նվագախումբը։ 1961 թ. այդ օպերայում ղեկավարել է Պուչինիի «Բոհեմա» օպերան և արժանացել է ամերիկյան մամուլի ջերմ գնահատմանը։ Երաժշտագիտական հոդվածներ է տպագրել ամերիկյան մամուլում։ Գրել է «Կոմիտասի կյանքն ու ստեղծագործությունը» հետազոտությունը, որը պաշտպանել է որպես դոկտորական դիսերտացիա և հրատարակել առանձին գրքով, մեծ հետաքրքրություն ստեղծելով հայ կոմպոզիտորների շուրջ։

ՊԵԿԿԱՆ ՆՇԱՆ (1887—1942).— Կրթական գործիչ։ Ծնվել է Շապին Գարահիսարի գյուղերից մեկում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Խարբերդի Եփրատ կոլեջում, ապա Շվեյցարիայում հետևել է երաժշտության։ Երկար տարիներ որպես ուսուցիչ կամ տեսուչ պաշտոնավարել է Սեբաստիայի հայկական և ամերիկյան դպրոցներում։ 1926 թ. նշանակվել է Ժնևի հայ որբանոցի տնօրեն։ 1935 թ. մեկնել է Նյու Յորք, որտեղ ունեցել է գրական գործունեություն։ Աշխատակցել է ամերիկահայ թերթերին, մասնավորապես «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթին, օգտագործելով նաև Նիգեր ծածկանունը։ Հրատարակել է իր ուսուցիչ Կարապետ Սողիկյանի բանաստեղծությունները՝ «Հույզեր և խոյզեր» խորագրով, ինչպես և բարոյախոսական մի քանի գրքույկ։

ՊԵԿԿԱՆ (ՍՈՂԻԿՅԱՆ) ՎԱՐՍԵՆԻԿ.— Կրթական գործիչ։ Ծնվել է Խարբերդում։ Կրթությունն ստացել է Եփրատ կոլեջի օրիորդաց բաժնում, ավարտել 1901 թվականին և ավելի քան 15 տարի որպես ուսուցչուհի պաշտոնավարել է նույն դպրոցում։ 1918—1922 թթ. ամուսնու՝ Նշան Պեկկանի հետ աշխատել է Սեբաստիայի ամերիկյան որբանոցում։ 1922 թ. որբերի հետ մեկնել են Հունաստան, 1930-ական թվականների սկզբներին՝ Ամերիկա, որտեղ ունեցել է գրական, հրապարակախոսական և մշակութային նկատելի գործունեություն։ Արձակ և չափածո երկերով աշխատակցել է «Հայաստանի կոչնակ», «Պայքար», «Արմինյան միրոր», «Երիտասարդ Հայաստան» և այլ պարբերականների։ Որպես ծածկանուն օգտագործել է Վարդենի, Հայուհի։ Անգլերենից և ֆրանսերենից կատարել է թարգմանություններ, որոնք տպագրվել են սփյուռքահայ մամուլում։

ՊԵՅԶԱՏ ՈՒՄԵՏ (1809—1874).— Նկարիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը, սովորել իտալացի նկարիչներից։ 1830-ական թվականների սկզբներից ձեռք է բերել լայն ճանաչում որպես սրբապատկերներ պատրաստող նկարիչ։ Ժամանակագրական կարգով մեզ հայտնի առաջին նկարը Հիսուսի դիմանկարն է, կատարված 1836 թ. Կուզկունջուկ թաղամասի հայոց ս. Լուսավորիչ եկեղեցու համար։ Հաջորդ տարի նկարել է Գրիգոր Լուսավորիչին Սկյուտարի ս. Խաչ եկեղեցու պատվերով։ 1834—1844 թթ. արքունի ճարտարապետ Կարապետ ամիրա Պայլանի պատվերով պատրաստել է տասը առաքյալների դիմանկարները Պեշիկթաշի հայոց եկեղեցու համար։ 1844 թ. նկարել է Ս. Ստեփանոսին՝ Սկյուտարի ս. Կարապետ եկեղեցու պատվերով։ 1850-ին ստեղծել է «Զորս Ավետարանիչները», 1866-ին՝ Թադեոս և Բարդողիմեոս առաքյալների դիմանկարները։ Արվեստի գլուխգործոց է համարվել նրա «Վերջին ընթրիքը» (1853), կատարված ս. Խաչ եկեղեցու համար։ Վավերական գործերից են «Հիսուսի ցած իջեցումը խաչից», «Հիսուսը Գեթսեմանում» (1872), որ համարվում է նրա վերջին գործը։ Կատարել է ընդօրինակումներ իտալացի դասական նկարիչներից, ինչպես Ռաֆայելի Մադոննան։ Ստեղծել է հայ և թուրք ականավոր մի շարք մարդկանց յուղաներկ դիմանկարները, ինչպես Սկյուտարի կառավարիչ Թոսուն փաշայի, Միքայել ամիրա Փիշմիշյանի, Հարություն ամիրա Պեզճյանի և ուրիշների։ Նկարել է նաև Հովհաննես Այվազովսկուն (լուսանկարից), ուղարկել նվեր, ստացել նրանից Թեոդոսիայի մի բնանկարը։ Նրա համբավը այնքան է տարածվել, որ Սուլթան Մեջիդը դարձրել է պալատական նկարիչ։ Եղել է նաև Մեջիդի հաջորդ սուլթան Ազիզի

պալատական նկարիչը։ Պալատական նկարչի տարիներին (1840—1860) ստեղծել է Թուրքիայի պատմությունից ու Թուրքական կյանքից վերցված գործեր, ծովային ու ցամաքային պատերազմներ։ Նկարազարդել է Կյոկ Սուի, Զրաղանի, Դոլմա բահչեի պալատները։ Նրա «Նիագարայի ջրվեժը» կտավը ցուցադրվել է Ֆիլադելֆիայի միջազգային ցուցահանդեսում և գնահատվել է 300 նապոլեոն, իսկ «Պոլսի բարեկարգումը» գործը՝ 1000 օսմանյան ոսկի։

ՊԵՅԼԵՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (1840— ?).— Բանաստեղծ, բանահավաք։ Ծնվել է Վանում։ Կրթությունն ստացել է Վարագա վանքի ժառանգավորաց վարժարանում։ Ավարտելուց հետո աշխատել է որպես ուսուցիչ, միաժամանակ ուսումնասիրել Վասպուրականի հայերի կենցաղը, ծիսակատարությունները։ Գրել է «Գեղջկական հարսանիք ի Հայաստան» աղգագրական գիրքը, ապագրել Կ. Պոլսում, 1870 թ.։

ՊԵՅԼԵՐՅԱՆ ՄԱՐԻ (1877—1915).— Հրապարակախոս, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Նախնական կրթությունն ստացել է Պերա թաղամասի Նարեկյան վարժարանում, ապա սովորել է Նուբարյանի արվեստագիտական ուսումնարանում։ Աշակերտական տարիներից Կալիպսո ծածկանունով աշխատակցել է Կ. Պոլսի «Արևելք» օրաթերթի՝ կանանց աղատագրության հարցին նվիրված հոդվածներով, որոնցից մեկը արտատպվել է Թիֆլիսի «Արձագանք» շաբաթաթերթում։ Ուսումնարանի վերջին դասարանում կում-կափուի 1890 թ. հայանի ցույցից մի քանի օր առաջ ընդունվել է Հնչակյան կուսակցության մեջ, դարձել «Հնչակ» թերթի Կ. Պոլսի թղթակիցը, մեծ եռանդով մասնակցել ընդհատակյա շարժումներին։ Եղել է 1895 թ. Բաբ Ալիի հայանի ցույցի ոգեշնչողներից, ըստ էության ցույցը սկսվել է նրա հուղիչ մի ճառով, որից հետո ժողովուրդը շարժվել է դեպի սուլթանական պալատը։ Ցույցին հաջորդող ձերբակալությունների օրերին մեկ տարի ապրել է ընդհատակում, ապա փախել է արտասահման, ապրել Եգիպտոսում։ Այնտեղ, Ալեքսանդրիայում 1902 թ. հիմնադրել է «Արտեմիս» թերթը, խմբագրել երկու տարի, շարունակելով պայքարը սուլթանական բռնակալության դեմ։ Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո, 1909 թ. մեկնել է Թուրքիա, որպես տեսուչ պաշտոնավարել Եվդոկիայի դպրոցում, միաժամանակ ունեցել գրական-հրապարակախոսական գործունեության, աշխատակցել տասնյակ թերթերի, հանդեսների, տարեգրքերի։ Զոհ է դարձել մեծ եղեռնին։

ՊԵՅԼԵՐՅԱՆ ՏԱՃԱՏ (1850—1934).— Կրթական գործիչ, հրապարակախոս։ Ծնվել է Նիկոմիդիայի գյուղերից մեկում (Թուրքիա)։ Նախնական կրթությունն ստացել է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում, բարձրագույնը՝ Հայդելբերգի (Գերմանիա) համալսարանում, հետևելով գրականության և լեզվի ճյուղին։ Վերադառնալով Թուրքիա, որպես ուսուցիչ աշխատել է Վանի Վարժապետանոցում, ապա՝ նույն քաղաքի Կենտրոնական վարժարանում։ 1885 թ. մեկնել է Բուլգարիա, որտեղ ավելի քան երկու տասնամյակ աշխատել է հայկական և բուլգարական դպրոցներում, որպես գերմաներենի և ֆրանսերենի ուսուցիչ։ Ունեցել է գրական-հրապարակախոսական գործունեություն։ Աշխատակցել է պոլսահայ թերթերին («Արևելք», «Բյուզանդիոն» և այլն), նաև Մ. Փորթուգալյանի «Արմենիա» շաբաթաթերթին (Մարսել, Ֆրանսիա)։

ՊԵՅՅԱՆ ԱՅՎԱԶ ԽԱՆ (17-րդ դ.).— Նկարիչ-փորագրող։ Ապրել է 17-րդ դարի կեսերին, հավանաբար Կ. Պոլսում։ Զբաղվել է գեղարվեստական փորագրությամբ, մեծահարուստ ընտանիքների համար պատրաստել է փղոսկրյա զարդեր, նուրբ փորագրություններով։ 25 տարեկանում՝ ի հարգանս իր մոր՝ սատափի վրա փորագրել է «Վերջին ընթրիքը», այն զարդարել թանկագին քարերով։ Այդ գործը, որի վրա նա աշխատել է երկար տարիներ, մինչև 1901 թվականը պահված է եղել նրանց գերդաստանում, ապա գողացվել է և վաճառվել օտարերկրացի հնասերների։ 1929-ին Ամերիկայում վաճառվել է մեծ գնով, սակայն վրայի ադամանդները հանված։ Գնողն է եղել Ջոն Խորենյանը։ 1933 թ. ցուցադրվել է Չիկագոյի համաշխարհային ցուցահանդեսում և արժանացել է բացառիկ հետաքրքրության՝ կատարողական մեծ արվեստի շնորհիվ զարմանք պատճառել օտար արվեստագետներին։

ՊԵՅՈՒՔՅԱՆ ԶԱՐԵՀ (1890—1917).— Նկարիչ, քանդակագործ։ Ծնվել է Զմյուռնիայում (Թուրքիա)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, մասնագիտականը՝ նախ քանդակագործ Հակոբ Փափազյանի մոտ, ապա կատարելագործել է Իտալիայում (Վենետիկ, Հռոմ) և Ֆրանսիայում (Փարիզ, 1908)։ Մասնակցել է եվրոպական տարբեր քաղաքներում կազմակերպված ցուցահանդեսների, դերազանցապես դիմանկարներով և բնանկարներով։ Ախճանվել է երիտասարդ հասակում։

ՊԵՆԿԼՅԱՆ (ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ) ԱՐՇԱԿ (1868—1923).— Դերասան, ռեժիսոր։ Ծնվել է Կ. Պոլսում, Վանից գաղթած ընտանիքում։ Ունեցել է թերի կրթություն։ 1880-ական թվականների վերջերից մասնակցել է Թուրքական ժող. ներկայացումների, կարճ ժամանակ էլ խաղացել է Մնակյանի «Օսմանյան դրամատիկ» թատերախմբում։ 1895 թ. կոտորածներից հետո մեկնել է Բուլգարիա, հայ և հույն դերասան-դերասանուհիներից ստեղծել է օպերետային մի խումբ, տվել ներկայացումներ Ռուսչուկում, Սոֆիայում, Ֆիլիպեում և այլ քաղաքներում։ Հետագայում մեկնել է Վառնա, խաղացել «Վեսելո» թատերախմբում։ Բուլգարական մամուլը («Վեչերնա պոստա», «Սվաբոդեն», «Դեննիկ» և այլն), բարձր են գնահատել նրա բեմական տվյալները։ 1897 թ. ստեղծել է մի նոր թատերախումբ հայ դերասաններից (Արշակ Սվաճյան, Լևոն Շաքարյան, Վահան Պապայան, Գր. Հակոբյան և այլն), մի քանի տարի հաջողությամբ գործել է Վառնայում, ապա 1907 թ. մեկնել Եգիպտոս, ներկայացրել օպերետներ և դավեշտներ։ Ամուսնացել է իր խմբում խաղացող բուլգարուհի Ռոզալիի հետ և այնուհետև գործել են միասին։ Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո մեկնել է Կ. Պոլիս, որտեղ Բրտվան բեյի հետ ստեղծել են օպերետային մեծ խումբ, տվել կանոնավոր ներկայացումներ, խաղացանկում ունենալով հիմնականում Տ. Զուխաջյանի «Հեպլեպիճի Հորհոր աղա», «Քեռան Քեհյա», «Աբիֆի խարդախությունը» օպերետները, եվրոպական հեղինակների մի շարք գործեր («Միլվա», «Մամզել Նիթուշ» և այլն), ինչպես և Թուրքական կյանքից վերցված դավեշտներ, որոնց բոլորի մեջ գլխավոր դերերով հանդես է եկել ինքը, արժանանալով հայ, Թուրք, հույն և օտար մասնակի միահամուռ հիացմունքին։ Նա իր գործունեությունը շարունակել է մինչև մահվան տարին։ Համարվում է Հորհոր աղայի լավագույն դերակատարը։

ՊԵՆԿԼՅԱՆ ԵՐՎԱՆԴ (1857—1900).— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթություն։ 1873 թվականի սկզբներից խաղացել է Հակոբ Վարդովյանի «Օսմանյան թատրոնում», 1878 թվականից՝ հորեղբոր՝ Սերովբե Պենկլյանի օպերետային խմբում, այդ խմբի հետ շրջագայել մի շարք քաղաքներ։ Մասնակցել է նրա բոլոր ներկայացումներին, կարճ ժամանակ էլ եղել խմբի վարիչը։ Ութսունական թվականների վերջերին մի քանի տարի Մ. Մնակյանի թատերախմբում խաղալուց հետո, թողել է բեմական ասպարեզը, զբաղվել նկարչությամբ։ 1895 թվականի ջարդերից հետո մեկնել է Եգիպտոս, ապրել Կահիրեում, որտեղ էլ վախճանվել է և թաղվել Մարմինայի գերեզմանատանը։

ՊԵՆԿԼՅԱՆ ՀԱԿՈԲ (1851— ?).— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում. եղբայրն է Միքայել և Երվանդ Պենկլյանների։ 1883 թվականից մասնակցել է Հ. Վարդովյանի թատերախմբի օպերետային ներկայացումներին. ապա խաղացել է հորեղբոր՝ Մ. Պենկլյանի օպերետի խմբում, 1880-ական թվականների վերջերից՝ Մ. Մնակյանի խմբում, իսկ հաջորդ տասնամյակի վերջերից՝ Արշակ Պենկլյանի օպերետի խմբում։ Տասնյակ անգամներ խաղացել է Տ. Զուխաջյանի օպերետներում, փայլել Մանսարի դերում՝ «Հեպլեպիճի Հորհոր աղա» օպերետում։

ՊԵՆԿԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ (1850—?).— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում։ Եղբայրն է Պենկլյան Երվանդի։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում։ 1873 թ. եղբոր՝ Երվանդի հետ մասնակցել է Հ. Վարդովյանի թատերախմբի օպերետային ներկայացումներին։ Հետագայում խաղացել է Մ. Մնակյանի «Օսմանյան դրամատիկ» թատերախմբում, մասնակցելով հիմնականում կատակերգական ներկայացումներին։ Երիտասարդ տարիքում կյանքին վերջ է տվել անձնասպանությամբ։

ՊԵՆԿԼՅԱՆ ՌՈԶԱԼԻ (1880—?).— Օպերետային դերասանուհի, ծագումով բուլգարուհի։ Ծնվել է Բուլգարիայում. 1890-ական թվականների կեսերից խաղացել է Արշակ Պենկլյանի օպերետային խմբում, այդ խմբի հետ շրջագա-

յել բուլղարական մի քանի քաղաքներում։ Ա-բրագորեն սովորելով հայերեն, երեկույթ-ցերեկույթներում երգել է «Բամ փորոտան», «Հայաստան», «Ազատություն», «Ո՜հ, ինչ անուշ» և այլ երգեր, ձեռք բերելով լայն ժողովրդականություն։ Ամուսնացել է Արշակ Պենկլյանի հետ, այնուհետև իր բախտը կապել է նրա օպերետային խմբին։ Նրա հետ 1906 թ. մեկնել է Եգիպտոս, 1909 թ. Կ. Պոլիս, 1911 թ. Լոնդոն, կրկին Պոլիս և այլն, մինչև 1923 թ., երբ Ա. Պենկլյանի մահից հետո թողել է բեմական ասպարեզը և մեկնել Բուլղարիա։ Մոտ 25 տարի կապված լինելով օպերետային խմբի հետ, հանդես է եկել տասնյակ օպերետներում և երաժշտական կատակերգություններում, միշտ կենտրոնական դերերով։ Բացառիկ հաջողություն է ունեցել Տ. Զուխաջյանի երեք օպերետներում («Լեպլեպիճի Հորհոր աղա», «Քեռոսի Քեհյա», «Արիֆի խարդախությունը»)։ Համարվել է Ֆաֆիմեի լավագույն դերակատարներից մեկը «Լեպլեպիճիում»։ Մասնակցել է «Մեմիշ Զելերի», «Գլերեթ», «Սիլվա», «Մամզել Նիթուշ» և այլ օպերետների, միշտ կենտրոնական դերերով, որոնց հաճախ է անդրադարձել հայկական, թուրքական, հունական մամուլը և միշտ արտահայտվել դրական։ Նրա արվեստով հիացողներից է եղել Վահրամ Փափազյանը, որի մասին համակրական տողեր է գրել «Սրտիս պարքը» գրքում։

ՊԵՆԿԼՅԱՆ ՍԵՐՈՎԲԵ *(1835—1900)*.— Դերասան, թատերական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսի Պերա թաղամասում։ Կրթություն չի ստացել, հետևել է արհեստների, սակայն 1850-ական թվականների կեսերից խանդավառվել է թատրոնով, որպես սիրող մասնակցել թաղային թատրոնների ներկայացումներին, իր դերերը պատրաստել ուրիշների ընթերցումով։ «Արևելյան թատրոնի» գործունեության առաջին տարվանից (1861) եղել է նրա հիմնական ուժերից, դրամատուրգ Ռ. Սեսեֆճյանից սովորել հայերեն գրել կարդալ։ Այդ խմբում նրա կատարած դերերից են՝ «Բոնակալ էշրեֆ Շապան («Կործանումն Ռուբինյան թագավորության»), Վիլբեռն («Փարիզի աղքատները»), Միլլեր («Հավատք, հույս, սեր») և այլն։ 1863—1864 թթ. նույն խմբի հետ խաղացել է Զմյուռնիայում, ապա՝ մինչև 1867 թ.՝ Կ. Պոլսում։ 1862—1878 թթ. աշխատել է Հ. Վարդովյանի «Օսմանյան թատրոնում» որպես դերասան, բեմահարդար, պարուսույց։ Իր դերակատարումներով ձեռք է բերել այնպիսի համբավ, որի նմանը քչերն են ունեցել։ Կատարել է, հիմնականում, բռնապետի, հերոսական, հայրական և այլ ամպլուայի մի քանի տասնյակ դերեր, որոնցից առավել կարևորներն են՝ Ռոբերտ Ավազակապետ, Արտաշես աշխարհակալ (համանուն պիեսներում), Էդմոն Դանդես («Մոնթե Քրիստո»), Մեծ ինկվիզիտոր («Հավատաքննության գաղտնիքները»), Մարզան («Լյուսի Դիդիե»), Ռոդեն («Թափառական հրեա») և այլն, մեծ մասամբ սարսափազդու բացասական դերեր, որ նա կատարել է բացառիկ տաղանդով։ Հ. Վարդովյանի թատերախմբի քայքայման շրջանում նա ստեղծել է Օպերետային մի թատերախումբ, և 1878-ից սկսած, մոտ մեկ տասնամյակ օպերետային ներկայացումներ է տվել Թուրքիայում, Հունաստանում, Եգիպտոսում և այլուր։ Հյուրախաղերն սկսել է 1878-ին Ադրիանապոլսից, ներկայացումներ տալով ռուսական սպաների համար, ապա մեկնել է Ադանա, Սելանիկ, այնտեղից Եգեյան կղզիները, անցել Հունաստան, եղել Աթենք, Պիրեա, Բաղրաս և այլ քաղաքներ, ամենուր արժանանալով բացառիկ ընդունելության։ Խաղացանկը բաղկացած է եղել Տ. Զուխաջյանի «Լեպլեպիճի Հորհոր աղա», «Քեռոսի Քեհյա», «Արիֆի խարդախությունը» օպերետներից և Լքոքի, Օֆենբախի մի քանի գործերից, որոնց բոլորի մեջ արական կենտրոնական դերերը կատարել է ինքը, կանացի դերերը՝ Սիրանույշը։ Հունական, եգիպտական տասնյակ թերթեր բացառիկ գովեստով են խոսել նրա ներկայացումների մասին։ 1890-ական թվականների կեսերից հաղվադեպ է երևացել բեմում։

ՊԵՆԿԼՅԱՆ ՏԻՐՈՒՀԻ *(1852—1883)*.— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ Քույրն է Միքայել, Երվանդ և Հակոբ Պենկլյանների։ Բեմական ասպարեզ է մտել 1873 թ.։ Խաղացել Հ. Վարդովյանի «Օսմանյան թատրոնում», կատարելով հիմնականում սուրբեռ և էնժենյու դերեր։ Ավելի շատ երևացել է կատակերգություններում, հավասար հաջողությամբ խաղալով թե հայերեն և թե թուրքերեն։ Մասնակցել է նաև Վարդովյանի խմբի տված օպերետներին։ Հետագայում, երբ Ս. Պենկլյանը ստեղծել է իր օպերետի

խումբը, դարձել է նրա հիմնական ուժերից, փայլելով Տ. Զուխաջյանի օպերետներում։

ՊԵՆՆԵՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ *(1864—1944)*.— Հրապարակախոս, խմբագիր, կրթական գործիչ։ Ծնվել է Խարբերդում (Արևմտյան Հայաստան)։ Կրթությունն ստացել է Խարբերդի Եփրատ կոլեջում, ավարտել է 1884 թ., որպես ուսուցիչ պաշտոնավարել է նույն դպրոցում, ավելի քան 20 տարի։ 1896 թ. մեկնել է Ամերիկա, Կլարժ համալսարանում ստացել բարձրագույն կրթություն։ 1907 թվականից սկսած երկար տարիներ Բոստոնում և Նյու Յորքում խմբագրել է «Կոչնակ» շաբաթաթերթը, որի էջերում տպագրել է հարյուրավոր հոդվածներ, առաջնորդողներ, թարգմանություններ։ 1937 թ. Ամերիկայում նշվել է նրա գրական-հրապարակախոսական գործունեության 50-ամյակը։ Օգտագործել է Մենտոր, Քնար և այլ ծածկանուններ։

ՊԵՆՆԵՅԱՆ ՓԻԼԻՊՈՍ *(1889—?)*.— Երգիչ-բարիտոն։ Ծնվել է Խարբերդում։ Պատանի հասակում հոր հետ տեղափոխվել է Ամերիկա, որտեղ ստացել է միջնակարգ կրթությունը, հետևել երաժշտության, Նյու Յորքում աշակերտելով երաժիշտ Ֆերնանտո Թունարային։ 1914 թ. մեկնել է Իտալիա, մշակել ձայնը։ Իտալական օպերաներից մեկում հանդես է եկել «Մեկիլան սափրիչից» դերահատվածների կատարումով և արժանացել է Իտալական մամուլի գնահատանքը։ 1918—1920 թթ. ծառայել է ամերիկյան բանակում։ Զորացրվելուց հետո համերգներ է տվել Նյու Յորքում, Բոստոնում և այլ քաղաքներում։ Ապա երգել է Հավանայի ազգային օպերայի խմբում, այդ խմբի հետ 5 տարի շրջագայել է Կուբայի և հարավային Ամերիկայի տասնյակ քաղաքներում, հանդես գալով պատասխանատու դերերգերով, ինչպես Ֆիգարոյի դերերգը համանուն օպերայում։ Հետագայում երգել է Սան Կառլո օպերային խմբում, հասնելով ավելի մեծ համբավի։

ՊԵՆՏԵՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ *(1835—1901)*.— Փորագրիչ-արվեստագետ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է հայկական կրթություն, իսկ մասնագիտականը՝ Փարիզում, 1849—1856 թթ.։ Վերադառնալով Կ. Պոլիս, զբաղվել է փորագրությամբ և ձեռք բերել մեծ համբավ։ Հրավիրվել է մասնավորապես Թանկագին քարերի, արծաթյա իրերի վրա կատարած նուրբ փորագրություններով։ Սուլթանական արքունիքը, թուրք բարձրաստիճան գործիչները և հայ մեծահարուստները հաճախ են դիմել նրան պատրաստելու մեծարժեք նվերներ, կանացի զարդեր, կենցաղային իրեր և այլն։

ՊԵՆՏՈՆՍԿԻ ՍԻՄՈՆ *(1553—?)*.— Ծագումով հայ լեհական գրող։ Ծնվել է Լյուբլինում (Լեհաստան), որտեղ ստացել է նախնական կրթությունը, ապա սովորել է Կրակովի համալսարանում։ Հիմնովին սովորել է այդ տարիներին Լեհաստանում գրական լեզու համարվող լատիներենը։ Հետագայում մեկնել է Իտալիա, հմտացել անտիկ գրականությանն ու փիլիսոփայությանը։ Վերադառնալով Լեհաստան, զբաղվել է գրականությամբ։ Հրատարակել «Բանթեսիելա դյուցազներգությունը, որի նյութը վերցված է եղել Տրոյայի պատերազմի շրջանից։ Գրել է բազմաթիվ բանաստեղծություններ, դրամատիկական ստեղծագործություններ, որոնցից իր ժամանակին լայն ճանաչում է ունեցել «Պարկեշտ Հովսեփը»։ Նրան համեմատել են անտիկ շրջանի հույն ողբերգուների հետ։

ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ ՄԿՐՏԻՉ *(1828—1868)*.— Գրող։ Ծնվել է Կ. Պոլսում։ Նախնական կրթությունն ստացել է Պերա թաղամասի Մխիթարյան դպրոցում, ապա սովորել է Պադուայի Մուրադյան վարժարանում։ Ավարտելուց հետո վերադարձել է Կ. Պոլիս, զբաղվել ուսուցչությամբ։ Աշակերտական տարիներից գրել է բանաստեղծություններ, որոնք տպագրվել են «Բազմավեպ» հանդեսում։ 1846 թ. նրա մասնակցությամբ Կ. Պոլսում հիմնադրվել է «Համազգաց» միությունը, որը նկատելի դեր է կատարել լուսավորական գաղափարների տարածման, հայ ժողովրդի դավանական տարբեր հատվածների միավորման գործում։ Այդ նպատակն է հետապնդել նրա «Եղբայր ենք մեք» գեղեցիկ բանաստեղծությունը, որը, վերածվելով երգի, հասել է մինչև մեր օրերը։ Քաղաքական նույն նպատակն է հետապնդել նաև նրա թատերական գործունեությունը։ 1856 թ. նա Կ. Պոլսի Օրթագյուղ թաղամասում հիմնադրել է հայկական թատրոն, որտեղ բեմադրվել են նրա գրած և թարգմանած մի քանի ողբերգությունները։ Ինքնուրույն երկերից են «Կոռնակ», «Արշակ Բ.», «Վահե», «Վահան Մամիկոնյան» ողբերգությունները, որոնք բոլորն էլ երկար տա-

բիներ բեմադրվել են հայ թատրոնում։ 1860-ական թվականների սկզբներից, Զեյթունի ապըստամբության ազդեցության տակ գրել է ազատասիրական բանաստեղծությունների շարքը («Հայ քաջորդին», «Մահ քաջորդվույն», «Թագուհի քաջորդվույն», «Հայ քաջուհին»), որոնք նույնպես եղանակավորվելով լայնորեն տարածվել են ժողովրդի մեջ։ Գրել է նաև քնարական երգեր՝ «Ուր էր թե զեփյուռիկ», «Գնացեք իմ տաղք», «Առ զեփյուռն Ալեմտաղի», «Գարուն» և այլն, որոնց մի մասը թարգմանվել է ռուսերեն և այլ լեզուներով։ Նրա չափածո և դրամատիկական ստեղծագործությունները առաջին անգամ լույս են տեսել Կ. Պոլսում, 1870 թ., «Մատենագրություն» խորագրով, որտեղ զետեղված են նաև Ալֆիերի «Սավուղ», Վոլտերի «Մահ Կեսարու» պիեսների նրա թարգմանությունները, տարբեր առիթներով արտասանած ճառերը։ Չափածո ստեղծագործությունները հետագայում վերահրատարակվել են քանիցս, նաև խորհրդային տարիներին մի քանի անգամ։

ՊԵՇԿԻԹԱՇՅԱՆ ՆՇԱՆ *(1896—1972).*— Գրող, բանաստեղծ, թատերական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է նախնական կրթությունը։ Գրական առաջին փորձերը կատարել է քսանական թվականների սկզբներին, մամուլում տպագրելով արձակ և չափածո ստեղծագործություններ։ 1922 թ. մեկնել է Ֆրանսիա, ապրել Փարիզում, նվիրվել գրականությանը։ Աշխատակցել է սփյուռքահայ տասնյակ պարբերականների, գրելով հիմնականում երգիծական գործեր։ 1927 թ. տպագրել է «Ընկեր Շահազարի» երգիծական գործը։ 1928—1932 թթ. փորձել է գրական մի այլ սեռ՝ գրել է «Սիդոնիա», «Մարիամ Մագդալինացի» և «Ռապսի» եռագրությունը, նյութ դարձնելով Ավետարանի գլխավոր դեմքերի սիրային կյանքը։ Հետագայում նորից է անցել երգիծանքի, լույս ընծայելով տասից ավելի գրքեր, ինչպես՝ «Երգիծական» (1933), «Հիվանդոտես» (1936), «Մաղրանկարներ» (1938), «Հայ աղբրտիք» (1941), «Երգիծավեպեր», «Հուլուտի» (1942), «Միրանի գոտի», «Զեն ու զարդ» (1946), «Մեր պարտեզեն» (1947), «Մեր գրախտեն» (1948), «Նոր ծաղրանկարներ» (1952), «Մոմիաներ» (1954), «Մագայելին պոչին տակ» (1954) և այլն։ Բացի սրանցից հրատարակել է «Հակոբ Օշական» (1947), «Գրիգոր Նարեկացի և Սմբատ Բ» գրքերը։ Երիտասարդական տարիներին ունեցել է նաև դերասանական գործունեություն։ 1919—1921 թթ. խաղացել է Կ. Պոլսի հայ դրամատիկ թատերախմբում։ Մամուլում արևմտահայ դերասանների մասին հրատարակել է ընդարձակ դիմանկարներ, որոնք հետագայում ամփոփել է «Թատերական դեմքեր» ստվար հատորում (Անթիլիաս, 1969)։

ՊԵՇԿԵՈՒՅՈՒՐՅԱՆ ԱԶՆԻՎ *(1878—?).*— Կրթական գործիչ։ Ծնվել է Խարբերդում։ Կրթությունն ստացել է Եփրատ կոլեջի օրիորդաց բաժնում, ավարտել է 1847 թ. և մեկնել է Ամերիկա, ստացել բարձրագույն ուսում։ 1902 թվականից որպես ուսուցչուհի աշխատել է ամերիկյան դպրոցներում։ Հետագայում հիմնել է աղջիկների դպրոցներ։ Աշխատակցել է ամերիկյան մամուլին։ 1909 թ. Բոստոնում լույս է տեսել նրա «Առաջնորդ անգլերեն լեզվի դյուրին խոսակցության դասեր» հայերեն ձեռնարկը, որը պարունակում է նաև նամակագրական նմուշներ։ Հրատարակել է անգլերեն լեզվի մի ձեռնարկ, որը երկար տարիներ օգտագործվել է ամերիկյան դպրոցներում։ Հետագայում Նորդհերն համալսարանում հետևել է իրավաբանության, ավարտել է 1939 թ.։

ՊԵՇԿԵՈՒՅՈՒՐՅԱՆ ԴԱՐԵԳԻՆ *(1868—1891).*— Բանաստեղծ։ Ծնվել է Խարբերդում։ Կրթությունն ստացել է Եփրատ կոլեջում, ավարտելուց հետո որպես ուսուցիչ քաջատնավարել է հայկական դպրոցներում, միաժամանակ գրել բանաստեղծություններ, որոնցից մեկը՝ «Սրինգը» եղանակավորվելով լայնորեն տարածվել է արևմտահայերի մոտ, զետեղվել տասնյակ երգարաններում, ժողովածուներում։ 1920-ական թվականներին սփյուռքահայ մամուլում տպագրվել են նրա այլ բանաստեղծություններն էլ, սակայն դրանք նոր բան չեն ավելացնում «Սրինգի» վրա։

ՊԵՇԿԵՈՒՅՈՒՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ *(1861—1941).*— Հրապարակախոս, կրթական գործիչ։ Ծնվել է Խարբերդում։ Կրթությունն ստացել է Եփրատ կոլեջում, ավարտելուց հետո մոտ 40 տարի որպես ուսուցիչ աշխատել է Խարբերդի, Մալաթիայի, Սեբաստիայի, Իզմիրի և այլ քաղաքների հայկական դպրոցներում։ 1920 թ. մեկնել է Ամերիկա, զբաղվել տարբեր աշխատանքներով։ 1890-ական թվականներից ունեցել է

գրական, հրապարակախոսական բեղուն գործունեություն։ Գեղարվեստական ստեղծագործություններով, հրապարակախոսական հոդվածներով աշխատակցել է «Արևելյան մամուլ», «Ավետարեր», «Բյուրակն» և այլ պարբերականների, իսկ Ամերիկա մեկնելուց հետո՝ «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթին, «Զանազանին», «Պայքարին» և այլն։ Բանաստեղծությունների մի մասը լույս է ընծայել ժողովածուով, «Բարոյաշունչ քերթվածներ» խորագրով։

ՊԵՊԵՔՅԱՆ (ԴՈՒԼԱԳԱՍՔՅԱՆ) ՊԵՏՐՈՍ *(ծն. 1936).*— Դերասան։ Ծնվել է Մեն Շամոնում (Ֆրանսիա)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ֆրանսիական դպրոցում, մասնագիտակը՝ Սենթ Էդիենի դրամատիկական դասընթացներում։ 1958 թվականից խաղացել է ֆրանսիական թատերախմբերում, կատարելով հիմնականում կատակերգակ դերեր։ Ապա տեղափոխվել է Փարիզ, միաժամանակ աշխատել կապարներում, իր վրա հրավիրել ականավոր ռեժիսորների ուշադրությունը։ Առաջարկել են խաղալ Մոլիերի «Երևակայական հիվանդ» պիեսում. ունեցել է հաջողություն։ Ապա հանդես է եկել «Ափսոս որ պոռնիկ էր» պիեսում։ Դրանից հետո, արդեն երևացել է ֆրանսիական մի քանի ֆիլմերում («Օգոստոս», «Հորաս 62», «Նորմանդիա» և այլն), խաղընկեր ունենալով Շառլ Ազնավուրին։ Հետագայում կրկին մղվել է դեպի թատրոնը, մասնակցել հեռատատեսային ներկայացումների։

ՊԵՐԵՆՑ ԹՈՎՄԱՍ *(1825—1875).*— Թատերական գործիչ, դրամատուրգ։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքի Կամարակապ գյուղում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, ապա տեղափոխվել է Կ. Պոլիս, ուսումը շարունակել Օրթագյուղի հայկական դպրոցում։ 1850-ական թվականների կեսերից եռանդուն մասնակցություն է ունեցել մշակութային, լուսավորական կյանքին։ Եղել է Օրթագյուղի «Բարեսիրաց» ընկերության հիմնադիրներից։ Մ. Պեշիկթաշլյանի հետ նկատելի աշխատանք է կատարել տեղի թաղային թատրոնի ստեղծման ուղղությամբ։ Ինքն էլ որպես դերասան մասնակցել է Օրթագյուղում կազմակերպված հայերեն ներկայացումներին, կատարելով հիմնականում կատակերգակ դերեր՝ կենցաղային զավեշտներում։ Գրել է մի քանի կատակերգություն («Ծեր սիրահարը», «Խաբված ակնոցին», «Հաճի Մանկասար», «Խաչատուրին խաչը», «Շինծու հարս» և այլն), որոնք բեմադրվել են։ Գրել է նաև պատմական մի ողբերգություն՝ «Վարդան» խորագրով։ 1862 թ. հիմնել է «Վարդ Մեսրոպյան» պարբերականը, որն ունեցել է կարճ կյանք։

ՊԵՍՈՅԱՆ ՌԻԿ *(ծն. 1924).*— Երգիչ, կոմպոզիտոր, դերասան։ Ծնվել է Ամերիկայում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Կալիֆոռնիայի համալսարանում, ապա սովորել է Լոնդոնի երաժշտական կոլեջում։ 1950-ական թվականների կեսերից ստեղծագործել է։ Գրել է երաժշտական կատակերգություններ և այլ ժանրի ստեղծագործություններ։ Դրանցից են՝ «Այս աշխարհից դուրս», «Փոքրիկ Մերին», որոնք մեծ հաջողությամբ ներկայացվել են Նյու Յորքում, Լոնդոնում և այլ քաղաքներում։ Արժանացել է Մերընը Ռայ և այլ մրցանակների։ Ամերիկյան մամուլը նրա «Փոքրիկ Մերին» համեմատել է Յոհան Շտրաուսի և Վիկտոր Հերբերտի օպերետների հետ։

ՊԵՏԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ *(1894—?).*— Երաժիշտ, խմբավար, կրթական գործիչ։ Ծնվել է Ադանայում (Կիլիկիա)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա սովորել է Տարսոնի ամերիկյան կոլեջում, հետևել երաժշտության։ Նվագել է այդ կոլեջի նվագախմբում։ 1921 թ. տեղափոխվել է Կիպրոս, որտեղ ունեցել է մանկավարժական, խմբավարական երկարամյա գործունեություն։ 1927—1932 թթ. շարունակել է մասնագիտական կրթությունը Փարիզի կոնսերվատորիայում, ապա կրկին վերադարձել է Կիպրոս։ Որպես երաժշտության ուսուցիչ աշխատել է Կիպրոսի անգլիական դպրոցում և հայկական Մելքոնյան կրթական հաստատությունում։ Աճեցրել է բազմաթիվ երաժիշտ կատարողներ, որոնցից է շուրջակահար Մանուկ Բարիկյանը։ Նիկոզիայում ստեղծել է 120 հոգուց բաղկացած երգչախումբ և ավելի բազմաթիվ համերգներ, ծրագրում լայն տեղ տալով հայ ժողովրդական երգերին։ Հորինել է խմբերգեր, զբոսղական երգեր։

ՊԵՏԻԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ *(1885—1980).*— Հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Պարտիզակում (Թուրքիա)։ Որդին է Առաքել Պետիկյանի։ Կրթությունն ստացել է ծննդավայրի բարձրա-

գույն վարժարանում, շարունակել է Կ. Պոլսի Բոբերա կոլեջում, ավարտել 1907 թ.։ 1907—1912 թթ. պաշտոնավարել է նույն կոլեջում, ապա մեկնել է Ամերիկա, բարձրագույն կրթություն ստացել Չիկագոյի համալսարանում։ Ունեցել է գրական-հրապարակախոսական գործունեություն։ Երկար տարիներ խմբագրել է Նյու Յորքում լույս տեսնող «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթը, որի էջերում տպագրել է հայրենասիրական հոդվածներ, առաջնորդողներ, արձակ գործեր։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Մտքիս պրիսմակեն» (1927), «Աստվածաշունչի աշխարհարարի թարգմանության վրա պատմական ակնարկ» (1953), «Ճրագներ», «Գրչանկարներ Պարտիզակի» Փարիզ, 1950)։ Վերջինս յուրահատուկ հուշագրություն է իր ծննդավայր Պարտիզակի մասին։

ՊԵՏԻԿՅԱՆ ԱՌԱՔԵԼ (ԳԻՍԱԿ) *(1859—1902).*— Կրթական գործիչ։ Ծնվել է Խարբերդում, հայախոս ասորի ընտանիքում։ Կրթությունն ստացել է Խարբերդի Սմբատյան վարժարանում և Պարտիզակի ամերիկյան դպրոցում։ Ավարտելուց հետո պաշտոնավարել է նույն հաստատությունում որպես հայոց լեզվի ուսուցիչ։ 1878 թ. մեկնել է Պոլիս, աշխատել որպես ավետարանական քարոզիչ։ Հետագայում դարձյալ զբաղվել է ուսուցչությամբ, պաշտոնավարելով Պարտիզակում և Նիկոմեդիայում։ Ունեցել է գրական, հրապարակախոսական բեղուն գործունեություն։ 1880-ական թվականներից սկսած աշխատակցել է արևմտահայ տասնյակ թերթերի ու հանդեսների («Ավետարեր», «Բյուրակն», «Բյուզանդիոն», «Սուրհանդակ» և այլն)։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են. «Մտածություն տոնական օրերու, հայոց ս. Եկեղեցվո» (2 հատոր) և «Աշխարհարար քերականություն»։ Իմացել է հայերեն, անգլերեն, թուրքերեն, ասորերեն։ Օգտագործել է Գիսակ ծածկանունը։

ՊԵՏԻԿՅԱՆ ԳՐԻԳՈՐ *(ծն. 1908).*— Նկարիչ։ Ծնվել է Անկարայում։ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում կորցրել է ծնողներին, ապրել Կ. Պոլսի և Հունաստանի մանկատներում։ 1927 թ. մեկնել է Փարիզ, հետևել նկարչության։ Նախ սովորել է Լուսիեն Սիմոնի արվեստանոցում, ապա Ժյուլիենի Ակադեմիայում, ավարտել 1935 թ.։ Հաջորդ տարվանից մասնակցել է Փարիզում կազմակերպված ցուցահանդեսների։ 1945 թ. անհատական ցուցահանդես է ունեցել Լոնդոնում, 1949-ին՝ Կահիրեում և Ալեքսանդրիայում, 1950-ին և 1952-ին՝ Փարիզում, Լոնդոնում, Նյու Յորքում։ Օտար մամուլը լայնորեն արձագանքել է նրա ցուցահանդեսներին, կանգ առնելով հատկապես մի քանի գործերի վրա, ինչպես «Նեապոլցի տղան», «Մերկ կինը», «Խոտ կրող երեխան», «Զկնորսները», «Երազկոտ մանուկը», «Փողհար», «Բնակարանազուրկը», «Քնած երեխան» և այլն։ Վերոհիշյալ նկարներից մի քանիսը նա ցուցադրել է Փարիզում, 1957 թ. և արժանացել ֆրանսիական մամուլի աշխույժ վերաբերմունքին։ Նախասիրությունը կյանքից հալածված, հատակի մարդկանց պատկերումն է։

ՊԵՏԻԿՅԱՆ ՂԱԶԱՐ *(1887—1957).*— Խեցեգործ արվեստագետ։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Արաբկիր քաղաքի Անջրդի գյուղում։ 14 տարեկանում ծնողների հետ տեղափոխվել է Հալեպ (Սիրիա), որտեղ ստացել է կրթությունը, հետևել փորագրության արվեստին։ Ունեցել է իր սեփական արհեստանոցը, որտեղ աշխատել են 50 բանվորներ։ Նրա պատրաստած գեղարվեստական իրերը, կահույքները, կանացի զարդերը հռչակված են եղել ողջ Եվրոպայում, մասնավորապես՝ Իտալիայում։ Դրանցից մեկը դնվել է Վաշինգտոնի Սպիտակ տան կողմից և պահվում է այնտեղ։ Մասնակցել է Դամասկոսի (Սիրիա) 1923 և 1946 թթ. ցուցահանդեսներին և երկուսում էլ արժանացել է առաջին մրցանակների։ Եղել է Հալեպի արվեստագետների վարպետների ընկերության հիմնադիրներից, Սիրիական հնագիտական ընկերության անդամ։ Մոտիկից մասնակցել է հայ հասարակական, մշակութային կյանքին։ Հիմնադիրներից է ՀԲԸ Միության Հալեպի մասնաճյուղի։

ՊԵՏԻԿՅԱՆ (ՊԱՇՅԱՆ) ՄԱՐԻԱՄ *(ծն. 1898).*— Երգչուհի, դրամատիկական սոպրանո։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է ծննդավայրի ամերիկյան օրիորդաց կոլեջում, որտեղ սովորել է մինչև 1915 թ.։ Այդ տարիներին (1913—1914 թթ.) աշակերտել է նաև Կոմիտասին։ 1915 թ. մեկնել է Ամերիկա, սովորել Կոլումբիա համալսարանում, իսկ մասնագիտական կրթությունն ստացել է Բոստոնի կոնսերվատորիայում։ 1917 թվականից եղել է տարբեր

համերգներում, իսկ 1922-ից մենահամերգներ է տվել ամերիկյան մի շարք քաղաքներում։ Նրա ձայնական հարուստ տվյալների մասին գրել են ամերիկյան տասնյակ թերթեր ու հանդեսներ («Նյու Յորք Իվնինգ պոստ», «Քեմբրիջ տրիբյուն», «Մորնինգ տելեգրաֆ» և այլն), կանգ առնելով մասնավորապես հայկական երգերի վրա։ Նյու Յորքի արվեստների և գիտության ինստիտուտի դիրեկտորը դրանց մասին արտահայտվելով ասել է, թե նա «այդ գեղեցիկ ձայնով երգելով Հայաստանի երգերը, անում է լավագույն պրոպագանդա հայ ժողովուրդի դատին»։ Նրա վերոհիշյալ երգերից շատերը վերցվել են ձայնապնակների վրա և լայնորեն տարածվել ամենուր։ Երաժշտագիտական հոդվածներով աշխատակցել է «Հայաստանի կոչնակ» և այլ պարբերականների։

ՊԵՏԻԿՅԱՆ ՄԿՐՏԻՉ *(19-րդ դ.).*— Փորագրիչ, արվեստագետ։ Ապրել և գործել է Կ. Պոլսում, 19-րդ դարի երկրորդ կեսին։ Արքայական ընտանիքների, մեծահարուստների համար պատրաստել է զարդեր, տնային օգտագործման իրեր։ Նա է գծագրել թուրքական առաջին թղթադրամները։ Մի մատանու քարի վրա փորագրել է Ղուրանից մի ամբողջ հատված, որը հիացմունք է պատճառել եվրոպացի արվեստագետներին։

ՊԵՏՐՈՍ *(12-րդ դ.).*— Ծաղկող։ 1194 թ. ծաղկել է մի «Տօնական», զրված Տյուրկի նեղկուկ գյուղում։

ՊԵՏՐՈՍ *(13-րդ դ.).*— Քարգործ վարպետ։ Մասնակցել է Կեչառիսի հուշարձանների քանդակազարդմանը, իր եղբայրներ Վեցիկի, Հովհաննեսի և Ազարիայի հետ։

ՊԵՏՐՈՍ *(15-րդ դ.).*— Մանրանկարիչ։ Նկարազարդել է 1422 թ. գրված մի Ավետարան, որը պահվում է Երևանի Մատենադարանում։

ՊԵՏՐՈՍ *(17—18-րդ դ.).*— Տաղերգու։ Նրա «Աստվածային սուրբ կույս» տաղը պահվում է Երևանի Մատենադարանի № 3263 ձեռագրում։

ՊԵՏՐՈՍ *(17-րդ դ.).*— Տաղերգու։ Նրա տաղերից նմուշներ՝ «Ես կանցնիմ քո դիմաց», «Ի խորոց կարդալով» և այլն, պահվում է Երևանի Մատենադարանի № 9597 ձեռագրում։

ՊԵՏՐՈՍ *(17—18-րդ դ.).*— Տաղերգու։ Գրել է կրոնական բովանդակությամբ տաղեր, որոնցից նմուշներ՝ «Պաղատելով գոչեմ», «Պաղատիմք առ քեզ», «Պատճառք կարգիս» և այլն, պահվում են Երևանի Մատենադարանում։

ՊԵՏՐՈՍ ԱԲԵՂԱ *(16-րդ դ.).*— Ծաղկող։ 1574 թ. Փարաջանց գյուղում ծաղկել է մի Ավետարան, որն այժմ պահվում է Նոր Ջուղայի վանքում։

ՊԵՏՐՈՍ ԱԲԵՂԱ *(18-րդ դ.).*— Տաղասաց։ Գրել է մի շարք տաղեր, որոնցից մեկը՝ «Գովեստ էջմիածնի», պահվում է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի ձեռագրերից մեկում։

ՊԵՏՐՈՍ ԱՍՏԱՊԱՏՅԻ *(15-րդ դ.).*— Քերական։ 1481 թ. գրել է «Համառոտ մեկնութիւն քերականութեան Սիմեոնի Ջուղայեցւոյ» երկը, որի բնագիրը պահվում է Երևանի Մատենադարանում, № 2349 թվահամարի տակ։

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԳԱՐՁ *(11-րդ դ.).*— Հոգևորական գործիչ, տաղերգու։ Կրթությունն ստացել է Տրապիզոնի վանքերից մեկում։ 1019—1058 թթ. եղել է Հայոց կաթողիկոս։ Դավաճանական դեր է կատարել Անի քաղաքը հույներին հանձնելու գործում։ Հորինել է մի շարք շարականներ, որոնք ընդհանուր առմամբ կոչվում են «Մանկունք»։

ՊԵՏՐՈՍ-ՍԱՐԳԻՍ ԳԷԱՆԵՆՑ *(18-րդ դ.).*— Հասարակական-քաղաքական գործիչ, մատենագիր։ Ծնվել է Նոր Ջուղայում։ Գործել է Իրանի Ռաշտ քաղաքում, զբաղվել առևտրով։ Մոտիկից հետաքրքրվել է հայ ազգային ազատագրական շարժումներով, հայերի ազատագրությունը տեսել է Ռուսաստանի օգնության մեջ։ Խանդավառված այդ ծրագրով, թողել է առևտուրը, իր ծախսով կազմել 100 հոգուց բաղկացած հեծելազորային ջոկատ, որը կոչվել է հայկական էսկադրիոն և ռուսական բանակի հետ մասնակցել է կասպիական պատերազմներին։ Նա այդ կռիվների ընթացքում էլ զոհվել է։ 1723 թ. Պարսկաստանի Ռաշտ քաղաքում գրել է այդ տարիներին տեղի ունեցած դեպքերի և ռուսաց պատերազմների շատ արժեքավոր հիշատակարանը՝ Նոր Ջուղայի բարբառով։ Լույս է տեսել նախ «Կռունկ հայոց աշխարհին» հանդեսի 1863 թ. համարներում, ապա՝ առանձին գրքով։

ՊԵՏՐՈՍ ԳՅՈՒՄՈՒՇԽԱՆԵՑԻ *(17-րդ դ.).*— Ծաղկող։ 1665 թ. Գյումուշխանեում ընդօրինակել ու նկարազարդել է մի Շարակնոց, որի ձե-

ռագիրը պահվում է Երևանի Մատենադարանում, 2463 թվահամարի տակ։

ՊԵՏՐՈՍ ԶԻՍԵԹՑԻ *(16-րդ դ.).*— Տաղերգու։ Նրա տաղերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № № 3699, 8274 ձեռագրերում։

ՊԵՏՐՈՍ ԹԻՖԼԻՍԵՑԻ *(18-րդ դ.).*— Թարգմանիչ։ Ծնվել է Թիֆլիսում, հավանաբար 17-րդ դարի վերջերին։ Կրթությունն ստացել է Վենետիկում, հմտացել լատիներենի մեջ։ Որպես կաթոլիկ հոգևորական պաշտոնավարել է Կ. Պոլսում։ Լատիներենից թարգմանել է կրոնական մի քանի գիրք, որոնք տպագրվել են Վենետիկում կամ Կ. Պոլսում։ Դրանցից են՝ «Գիրք մեկնութեան յայտնութեան սրբոյ Յովհաննու» (Կ. Պոլիս, 1700), «Գիրք մատծական աղօթից» (1701), (որի Բ. տպագրությունը տեղի է ունեցել 1708 թ.), «Գիրք որ կոչի աղբիւր բարի» (1722), «Յարացոյց ապաշխարհոգաց» (1731), Ա. Ռոդրիկվեզի «Կրթութիւն կատարելութեանը» բաղկացած երեք հատորից (Վենետիկ, 1741—1742), Կ. Ռիսոլի «Ճշմարտութիւն հաւատենական» (1750) և այլն։

ՊԵՏՐՈՍ ԽԱՆԶԿԵՑԻ *(17-րդ դ.).*— Հոգևորական, մշակութային գործիչ։ 1647 թվականից՝ Դանձասարի կաթողիկոս։ Եղել է շինարար և մշակույթ սիրող ու գնահատող։ Իր իրավասության տակ գտնվող թեմերում կառուցել է վանքեր, եկեղեցիներ, բարեկարգել է հները, ստեղծել գրչատուներ, ընդօրինակել տվել ձեռագրեր։ Ալեքսեյ Միխայլովիչ ցարին հղած հատուկ նամակով խնդրել է ապահովել հայ վաճառականների երթևեկը Ռուսաստան, հովանավորել հայ ժողովրդին։ Վախճանվել է 1675-ին։

ՊԵՏՐՈՍ ԽՂՈՒԱՐԵԼԻՍԵՑԻ *(19-րդ դ.).*— Մատենագիր։ Գրել է «Պատմութիւն պատերազմին Ռուսաց» երկը, որի ձեռագիրը պահվում է Երևանի Մատենադարանում, № 8789 թվահամարի տակ։

ՊԵՏՐՈՍ ԾԱՂԿՈՂ *(17-րդ դ.).*— *1653 թ.* Աղբերիկ գյուղում նկարազարդել է մի Ավետարան, պահվում է Երևանի Մատենադարանում, № 8692 թվահամարի տակ։

ՊԵՏՐՈՍ ԾԱՂԿՈՂ *(17-րդ դ.).*— *1691 թ.* Կաֆայում (Թեոդոսիա, Ղրիմ) ընդօրինակել ու նկարազարդել է մի Ավետարան. պահվում է Երևանի Մատենադարանում, № 8365 թվահամարի տակ։

ՊԵՏՐՈՍ ՂԱՓԱՆՑԻ *(18-րդ դ.).*— Տաղերգու։ Գործել է *1750—1780*-ական թվականներին։ *1753—1756 թթ.* եղել է Էջմիածնի միաբան։ Որպես Էջմիածնի նվիրակ եղել է Պոլսում, Ադրիանապոլսում, Արմաշում, Ղրիմում։ Հետագայում հիմնականում ապրել է Պոլսում։ *1780 թ.* նշանակվել է Նիկոմեդիայի թեմի առաջնորդ։ Գրել է բազմաթիվ տաղեր, որոնք լույս են տեսել *1772*-ին «Գրքույկ կոչեցեալ երգարան» խորագրով։ Պարունակում է *110* երգ, որոնցից մի քանիսը՝ «Մել ծիլ ոսկի են վարդի թերթերն», «Հաստաբեր զբրօնին ի վարդի» և այլն, տեղ են գտել ժողովրդական երգարաններում, եղանակավորված հասել են մինչև մեր օրերը։

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՈՎԻՉ *(17-րդ դ.).*— Լեհահայ ոսկերիչ արվեստագետ։ Նրա պատրաստած ոսկեզարդված ու գունեղդույն լարերով պրճնված սպասասարքերը հռչակված են եղել ամբողջ Լեհաստանում։

ՊԵՏՐՈՍ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ *(14-րդ դ.).*— Նկարիչ, ծաղկող։ Ծնվել է Վասպուրականում։ Մեկ հասել է Վանում նրա նկարազարդած Ավետարաններից մեկը, որն ունի գունավոր լուսանցազարդեր, ծաղկագիր գեղեցիկ սկզբնատառեր և չորս Ավետարանիչների նկարները, ինչպես և պատվիրատու տիկնոջ՝ Մարջիկի նկարն իր զրուցեր հետ։

ՊԵՏՐՈՍ ՆԱԽԻՋԵՎԱՆՑԻ (ԱՂԱՄԱՅԱՆ-ԲԵՐԴՈՒՄՅԱՆ) *(18-րդ դ.).*— Մատենագիր։ Ծնվել է Նախիջևանում։ Կրթությունն ստացել է Էջմիածնում, հավանաբար *1760*-ական թվականներին։ Եղել է Էջմիածնի միաբանության անդամ։ Գրել է մի շարք աշխատություններ՝ որոնք լույս են տեսել հաջորդ դարում, տարբեր քաղաքներում. ինչպես «Աստուածանմանութիւն» (Կալկաթա, 1827, լույս է ընծայել Մեսրոպ Թաղիադյանցը), «Աղբիւր բացեալ» (Էջմիածին, 1845), «Մեկնութիւն յայտնութեան ս. Յովհաննու առաքելոյ» (Կալկաթա, 1846), «Մեկնութիւն Թղթոյն Պողոսի առ Եփեսացիս» (Երուսաղեմ, 1850) և այլն։

ՊԵՏՐՈՍ ՈՐԴԻ ՄԻՀՐԱՆԻ (ՄԻՐԱՆԴԻ) *(14-րդ դ.).*— Վաճառական, մեկենաս։ Ծնվել է Պիզայում (Իտալիա), Կիլիկիայից այնտեղ գաղթած վաճառական Միհրանի ընտանիքում։ Տիրացել է մեծ հարստության։ Մահվանից առաջ *(1366)* հարստության մեծ մասը կտակել է Պիզայից *10* կիլոմետր հեռու գտնվող Կարթոսյան վանքի կառուցմանը, որ սկսվել է նույն *1366*-ին և համարվում է իտալական ճարտարապետության փայլուն նմուշներից մեկը։ Վանքի հյուսիսային սրահում մինչև այժմ էլ դրված է այն կառուցող Պետրոսի նկարը, ներքևում հետևյալ մակագրությունը՝ «Պետրոս որդի Միրանդի, հայ վաճառական պիզացի, հիմնադիր այս Կարդուսին»։

ՊԵՏՐՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ (ՔԵՐԹՈՂ) *(6-րդ դ.).*— Մատենագիր, թարգմանիչ։ Եղել է Սյունյաց եպիսկոպոս՝ *547—556 թթ.*։ Մասնակցել է Դվինի *554 թ.* ժողովին։ Գրել է պատմագրական մի քանի երկեր, որոնցից որոշ հատվածներ պահպանվել են Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից» և Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն Նահանգին Սիսական» գործերում։ Ամբողջական վիճակում մեզ հասած երկերն են՝ «Գովեստ ի սուրբ աստուածածինն», «Յաղագս հաւատոյ», «Հարցմունք յաղագս մարմնաւորութեանն տեառն զանազանք Վաչագանի Ազուանից իշխանի ընդ Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի և իմաստասիրի»։ Վերջինս տպագրվել է «Արարատ» ամսագրում, *1902*-ին։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱԼԱՐԴ *(ծն. 1946).*— Գրող։ Ծնվել է Երևանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է *1968*-ին։ *1968—1975 թթ.* աշխատել է Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեում, որպես երիտասարդական հաղորդումների խմբագիր, *1975—1978 թթ.*՝ «Հայաստանի աշխատավորուհի» հանդեսի խմբագրությունում։ *1960*-ական թվականների վերջերից մամուլում տպագրել է պատմվածքներ։ *1977 թ.* հրատարակել է «Երկրի պապերը» պատմվածքների ժողովածուն, *1981*-ին՝ «Թռչնականչ», «*1984*-ին՝ «Ես մի ծառ եմ ծիրանի»։ Նրա սցենարով է նկարահանվել «Կար ու չկար մի ոնի» մուլտիպլիկացիոն ֆիլմը, որն արժանացել է մրցանակի։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՄԱՅԱՆ *(ծն. 1930).*— Արվեստաբան։ Ծնվել է Թիֆլիսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թբիլիսիի գեղարվեստական ուսումնարանում, ավարտել է *1952 թ.* նկարիչ-քանդակագործի որակավորումով։ Հետագայում մասնագիտությունը կատարելագործել է Լենինգրադի Գեղարվեստների ակադեմիայի պատմության և տեսության հեռակա բաժնում։ Այդ նույն տարիներին աշխատել է Երևանի Տրիկոտաժի ֆաբրիկայում և Մետաքսի կոմբինատում, որպես նկարիչ-մոդելիստ։ Ակադեմիան ավարտել է *1959 թ.*, աշխատել Լենինականի Ղարաբաղի խանյար քաղաքի թանգարանում որպես դիրեկտոր։ Հետագայում տեղափոխվել է Երևան, աշխատել Հայաստանի պետական պատկերասրահում և գեղարվեստաթատերական ինստիտուտում։ Զբաղվում է Հովնաթանյան նկարիչների արվեստի ուսումնասիրությամբ։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆՆԱ *(ծն. 1935).*— Դերասանուհի, դրամատուրգ։ Ծնվել է Լենինականում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել *1957 թ.*։ *1960—1967 թթ.* աշխատել է Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեում որպես հաղորդավար։ *1966*-ից խաղում է Երևանի դրամատիկական թատրոնում, որտեղ նրա կատարած դերերից են՝ Մեդեա (համանուն պիեսում), Թագուհի Եղիսաբեթ («Ռիչարդ երրորդ»), Ռոդոպիս («Ամազոնները») և այլն։ Գրել է պիեսներ, որոնցից «Ամազոնները» բեմադրվել է Երևանի դրամատիկական թատրոնում, իսկ «Խոր շրհորներ», «Հանիր, խնդրում եմ դիմակս», «Միլիփոսի քարը», «Աբգար դպիր Թոխատեցին»՝ հեռուստատեսությամբ, *1969—1980 թթ.*։ Ռուսերենից թարգմանել է պիեսներ, որոնք բեմադրվել են Երևանի դրամատիկական թատրոնում։ Առանձին գրքույկներով հրատարակած երկերն են՝ «Արևը քայլում է ինձ հետ» (Երևան, *1968*), «Մի քիչ արև» (*1971*), «Եկա, որ մնամ» (պիեսների ժողովածու *(1986)*։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՎԱԳ *(ծն. 1912).*— Օպերային երգիչ, տենոր. Հայկական ԽՍՀ ժողովրդական երգիչ, տենոր. Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ *(1956)*։ Ծնվել է Հայաստանի Գյումրեզ գյուղում (այժմ՝ Աբովյանի շրջան, Կամարիս)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի երաժշտական ուսումնարանում, Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայում և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որի վոկալ բաժինն ավարտել է *1942 թ.*։ *1941*-ից մինչև այժմ երգում է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի

պետական թատրոնում որպես մենակատար։ 1947 թ. արժանացել է Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստի կոչման, 1951-ին՝ ԽՍՀՄ պետական մրցանակի։ Հայկական դասական և ժամանակակից օպերաներում կատարած դերերգերից են՝ Սանթուր («Դավիթ Բեկ»), Տիրիթ («Արշակ Բ.»), Կարո («Արծվաթերդ»), Սեյրան («Նամուս»), Աշուղ («Ալմաստ»)։ 1944-ից սկսած ավելի քան 600 անգամ կատարել է Սարոյի դերերգը («Անուշ»), որը նրա լավագույն կատարումներից է։ Օպերային մյուս դերերգերից են՝ Ռաուլ («Հուգենոտներ»), Ռադամես («Ամիդա»), Կավարադոսի («Տոսկա»), Քեռու օղլի՝ համանուն օպերայում և այլն։ Հյուրախաղերով երգել է Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում և այլ քաղաքներում, նաև Ամերիկայում, Կանադայում, Հնդկաստանում։ Նրա կատարումներից մի քանիսը՝ Սարոյի, Սանթուրի, Տիրիթի դերերգերը և 60-ից ավելի ժողովրդական երգեր, ռոմանսներ վերցվել են ձայնապնակների վրա և լայնորեն տարածվել ամենուր։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐԱՄ (ծն. 1904).— Գրող, թատերական գործիչ։ Մնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է Սամաթիայի Սահակյան, ապա՝ Մայր վարժարաններում, իսկ առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ Կենտրոնական վարժարանում։ 1922-ին մեկնել է Հունաստան, 1924-ին՝ Ֆրանսիա, ապրել և ստեղծագործել Փարիզում, միաժամանակ շարունակել ուսումը։ 1929-ից աշխատակցել է ամիսուքսահայ տասնյակ թերթերի, հանդեսների, տարեգրքերի («Պոլսի «Արևելք», «Ժամանակ», «Մարմարա», «Քուլիս», Փարիզի «Նոր երկիր», «Ժողովուրդ», «Արևմուտք», Հալեպի «Գեղարդ տարեգիրք» և այլն)։ Վերոհիշյալ պարբերականներում տպագրել է ծավալուն վեպեր, վիպակներ, պիեսներ, պատմվածքներ, թատերագիտական և գրականագիտական հոդվածներ։ Գեղարվեստական երկերով և հրապարակախոսական հոդվածներով աշխատակցել է նաև ֆրանսերեն պարբերականների։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Շամիրամ և Արա Գեղեցիկ» (ֆրանսերեն, Փարիզ, 1947, նույնը իտալերեն թարգմանությամբ, Հռոմ, 1959), «Լևոն 5-րդ Լուսինյան» (հայերեն լույս է տեսել «Նոր երկիրում», 1934 թ., ֆրանսերեն թարգմանությունը՝ Փարիզում, 1962-ին, Այֆոնս Մեղեի առաջաբանով), «Լա Սիրեն դը Միթիլեն» (քնարական վեպ, Փարիզ, 1964, հայերեն թարգմանությունը՝ «Մարմարա», 1967-ին, «Տրդատ թագավոր» (ֆրանսերեն, 1975) և այլն։ Ունեցել է թատերական, երաժշտական գործունեություն։ 1921-ին որպես մենակատար երգել է Գր. Մյունիի երգչախմբում։ Փարիզում մասնակցել է Տ. Նշանյանի «Փարիզահայ դրամատիկ» թատերախմբի ներկայացումներին։ 1938-ին Փարիզում բեմադրել է իր գրած «Վեղարավոր Դոնժուանը» կատակերգությունը։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ (ծն. 1933).— Նկարիչ։ Մնվել է Խանլարում (այժմ՝ Ադրբեջանական ԽՍՀ)։ Մասնագիտական կրթությունն ստացել է նախ Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում, ապա գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել է 1965 թ.։ 1959 թվականից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են՝ «Փողոց Շինոայրում», «Հին տունը», «Նավասարդ», «Շինարարներ», «Մենամարտ», «Սասունցի Դավիթ» և «Սուտլիկ որսկանի» նկարազարդումները և այլն։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ (ծն. 1924).— Ինքնուս խճանկարիչ։ Մնվել է Հայաստանում։ 1941 թ. մեկնել է Խորհրդային բանակ, մասնակցել ռազմաճակատային կռիվներին, ծանր վիրավորվել և կորցրել է ձախ ձեռքը։ Վերադառնալով հայրենիք, նվիրվել է իր սիրած արվեստին։ Տարիների ընթացքում քարից ու փայտից պատրաստել է տասնյակ գործեր, որոնք 1950-ական թվականների կեսերին ցուցադրվել է Երևանի ժողովրդական ստեղծագործության տանը և արժանացել են բարձր գնահատման։ Այդ գործերից են Ստեփան Շահումյանի, Վ. Համբարձումյանի, Սայաթ-Նովայի խճանկար դիմանկարները, «Մեսրոպ Մաշտոց», «Երշանիկ հովիվը», կոմպոզիցիոն գործերը, առաջինը՝ քարից, երկրորդը՝ փայտից։ Նրա աշխատանքներով հիացողներից են եղել Ավ. Իսահակյանը և Մարտիրոս Սարյանը։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ (1907—1975).— Լրագրող, խմբագիր։ Մնվել է Հայկական ԽՍՀ Արտաշատի շրջանի Ներքին Ղամարլու գյուղում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, աշխատել որպես խրճիթ-ընթերցարանի վարիչ։ 1925 թվականից աշխատել է մամուլի ասպարեզում։ Մի քանի տարի՝ «Մանկաց» թերթում որպես բաժնի վարիչ, ապա՝ պատասխանատու քարտուղար։ 1929—1930 թթ. եղել է «Բատրակ» և «Գյուղատնտեսական բանվոր» թերթերի պատասխանատու խմբագիր։ 1930—1935 թթ. խմբագրել է Հոկտեմբերյանի շրջանային թերթը։ Այնուհետև, 1935—1962 թթ. աշխատել է «Խորհրդային Հայաստան» թերթում, որպես բաժնի վարիչ, ապա՝ պատասխանատու քարտուղար, խմբագրի տեղակալ։ 1967—1972 թթ. աշխատել է Հայաստանի ժուռնալիստների միությունում որպես ստեղծագործական բաժնի վարիչ։ Վերոհիշյալ թերթերում լույս է ընծայել հարյուրավոր հոդվածներ ընթացիկ հարցերի մասին։ Հրատարակել է նաև մի քանի գրքույկ։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏՅՈ (1909—1985).— Գրականագետ, գրող։ Մնվել է Շուշիում (Լեռնային Ղարաբաղ)։ 1922—1927 թթ. ապրել է Բաքվում, որտեղ ստացել է տարրական կրթությունը։ 1927 թ. մեկնել է Լեռնային Ղարաբաղ, վարել կոմերիտական պաշտոններ, ապա աշխատել է մարզային թերթի խմբագրությունում որպես պատասխանատու քարտուղար։ Դեռևս Բաքվում ապրելու տարիներին պատմվածք է տպագրել «Վիշկա» հանդեսում։ 1928—1931 թթ. Ստեփանակերտի «Կայծ», «Խորհրդային Ղարաբաղ», Բիֆլիսի «Նա լիտերատուրնամ պոստու», Բաքվի «Կոմունիստ» պարբերականներում տպագրել է գեղարվեստական արձակ երկեր, հոդվածներ։ 1931-ից սովորել է Մոսկվայի ժուռնալիստների կոմունիստական ինստիտուտում, ապա՝ Կարմիր պրոֆեսուրայում։ 1946-ին նշանակվել է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր արվեստի գործերի պետի տեղակալ։ 1951 թ. պաշտպանել է դիսերտացիա, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան։ 1955—1970 թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ համաշխարհային գրականության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, գլխավորել ԽՍՀՄ ժողովուրդների ազգային գրականության մատենաշարի հրատարակությունը, խորհրդային գրականության պատմության վեցհատորյակի հրատարակությունը։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխությունը և համաշխարհային գրականությունը», «Գրականագիտության և լեզվաբանության արդի խնդիրները», «Ազգայինը և միջազգայինը գրականության մեջ», «Կովկասի ժողովուրդների էպոսը» և այլն, բոլորն էլ ռուսերեն։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԵՆԻԿ (ծն. 1939).— Քանդակագործ, գրվագող։ Մնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում և գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի քանդակի բաժինն ավարտել է 1965-ին։ 1959 թվականից մասնակցել է ցուցահանդեսների, գեղաքանդակային գրվագման աշխատանքներով։ Ունեցել է անհատական ցուցահանդեսներ 1969-ին, 1971-ին (Երևան), 1975-ին (Հարավսլավիա), 1980-ին (Երևան) և այլն։ 1971-ին և 1976-ին մասնակցել է Ճապոնիայում կազմակերպված ցուցահանդես-վաճառքներին։ Նրա գործերը ցուցադրվել են նաև Հոլանդիայում, Գերմանիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում և այլ երկրներում։ Գրվագման աշխատանքներով մասնակցել է Երևանի երիտասարդական պալատի, «Փարոս» ռեստորանի, Դիլիջանի կոմպոզիտորների տան և այլ շենքերի ձևավորմանը։ Լավագույն գործերից են՝ «Արագիլներ», «Երաժշտություն», «Քուրքեր», «Մարմնամարզուհին», «Մհեր», «Զանգեզուրցի կինը» և այլն։ Ունեցել է մանկավարժական գործունեություն։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ (ծն. 1902).— Մաթեմատիկայի պատմաբան, կրթական գործիչ, ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, Հայկական ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ։ Մնվել է Հայաստանի Գորիս գյուղում։ 1929 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը։ 1931—1934 թթ. շարունակել է ուսումը Մոսկվայի պետական համալսարանի ասպիրանտուրայում։ Վերադառնալով Երևան, դասախոսել է պետական համալսարանում։ 1934—1936 թթ. եղել է ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան և համալսարանի պրոռեկտոր, իսկ 1938—1941 և 1949—1957 թթ.՝ ռեկտոր, 1944—1949 թթ.՝ ԳԱ նախագահության գիտնական քարտուղար։ 1958-ից գլխավորել է ԳԱ նախագահության առընթեր բնագիտության ու տեխնիկայի պատմության խորհուրդը։ 1940-ական թվականներից զբաղվել է մաթեմատիկայի պատ-

մությամբ։ Գրել է մի շարք աշխատություններ, նվիրված հայ մաթեմատիկայի պատմության։ Դրանցից առավել կարևորն է «Մաթեմատիկան Հայաստանում, հին և միջին դարերում» մենագրությունը, որը և պաշտպանել է որպես դոկտորական դիսերտացիա, տպագրել առանձին գրքով (Երևան, 1959)։ 1962 թ. լույս է ընծայել Էվկլիդեսի երկրաչափության («Սկզբունքներ») հայերեն հնագույն թարգմանությունը։ Վերոհիշյալ նյութերի շուրջ զեկուցումներ է կարդացել միջազգային գիտաժողովներում։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ *(1859—1906)*.— Դերասան, ռեժիսոր, թատերական գործիչ։ Ծնվել է Օրդուբադում (այժմ՝ Ադրբեջանական ԽՍՀ)։ Նախնական կրթությունն ստացել է Վերին Ագուլիսի ծխական դպրոցում. ապա մեկնել է Մոսկվա՝ Լազարյան ճեմարանում սովորելու, սակայն կարճ ժամանակից վերադարձել է Կովկաս, ուսումը շարունակել ռեալական դպրոցում։ Աշակերտական տարիներից մասնակցել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և այլ վայրերում կազմակերպված հայկական ներկայացումներին, ոֆիշաներում գրվելով Օրդուբադյան։ Ապա խաղացել է Թիֆլիսի հայկական թատրոնում, Պ. Ադամյանի, Սիրանույշի, Աստղիկի, Հրաչյայի հետ, մասնակցել է «Ռուզանի» առաջին ներկայացմանը՝ 1882 թ., կատարելով Զաքարի դերը։ Դրանից հետո խաղացել է մի շարք դերեր՝ Լյապկին-Տյապկին («Ռևիզոր»), Թեոդոր («Քույր Թերեզա»), Զվեզդիչ («Դիմակահանդես») և այլն։ 1883 թ. մեկնել է Պետերբուրգ՝ Տեխնոլոգիական ինստիտուտում սովորելու, սակայն տարվել է բեմական արվեստով։ Յոթ տարի մնացել է Պետերբուրգում և Մոսկվայում, մոտիկից ծանոթացել ռուսական թատերական արվեստին, ինքն էլ մասնակցել է ռուսական ներկայացումների։ 1890 թ. վերադարձել է Թիֆլիս, հաջորդ տարի կազմակերպել է մի թատերախումբ և սկսել ներկայացումներ տալ վրաց Աղնվականական թատրոնում, գլխավոր դերերում հանդես գալով ինքը («Ուրիել Ակոստա», «Օթելլո», «Էրնանի», «Արքա Լիր», «Ավազակներ» և այլն)։ Աչքի է ընկել Կորրադոյի, Կառլ Մորի, Ուրիել Ակոստայի և այլ դերերում, Ապա թատերական գործիչ Նապոլեոն Ամատունու օժանդակությամբ ստեղծել է մի նոր թատերախումբ և երեք տարի կանոնավոր տվել հայերեն ներկայացումներ։ 1896—1897 թատերաշրջանից սկսած՝ մի քանի տարի ղեկավարել է Բաքվի հայկական թատերախմբի աշխատանքները որպես ռեժիսոր։ Այդ նույն տարիների ամռան ամիսներին իր խմբով շրջագայել է Անդրկովկասի գավառական կենտրոններում (Շուշի, Գանձակ, Երևան, Ալեքսանդրապոլ և այլն)։ 1903—1904 թատերաշրջանում Թիֆլիսում աշխատելուց հետո մեկնել է Բաքու, այնտեղից՝ Նոր Նախիջևան։ Բեմական կյանքի վերջին տարիների լավագույն դերերից են եղել՝ Պետրուչիո («Անսանձի սանձահարումը»), Միլլեր («Սեր և խարդավանք»), Քաղաքապետ («Ռևիզոր»), Նապոլեոն («Մադամ Սան-Ժեն»)։ Մեռել է Նոր Նախիջևանում։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ *(1912—1961)*.— Գրող։ Ծնվել է Բաքվում։ Կրթությունն ստացել է Բաքվի մանկավարժական ինստիտուտում։ Երկար տարիներ աշխատել է Բաքվի հայերեն «Կոմունիստ» օրաթերթի խմբագրությունում։ Այդ և այլ պարբերականներում տպագրել է գեղարվեստական ստեղծագործություններ։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Պատմվածքներ» (1939), «Ծաղիկ» (1947), «Թիկունքում» (1952), «Համբը» (1955), «Ծովի վրա» (1957), «Հետքերը մնում են» (1960), մեծ մասամբ տպագրված Բաքվում։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ *(1912—1982)*.— Բանաստեղծ. բանասիրական գիտությունների դոկտոր (1970)։ Ծնվել է Մանազկերտում (Արևմտյան Հայաստան)։ Տարրական կրթությունն ստացել է Լենինականի և Երևանի մանկատներում, բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 1939-ին։ Երկար տարիներ աշխատել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում որպես հայ նոր գրականության դասախոս։ Կազմել է Ռ. Սևակի, Ռ. Որբերյանի, Չիֆթե Սարաֆի երկերի ժողովածուներ և գրել առաջաբաններ։ Գրել է դիմանկարներ՝ Թլկատինցուն, Ռ. Զարդարյանին, Ծրուխանին, Սիամանթոյին նվիրված ու ամփոփել է «Գրական դեմքեր» գրքում։ Առանձին գրքերով հրատարակած մյուս աշխատություններն են՝ «Բաֆֆի — կյանքը և ստեղծագործությունը» (Երևան, 1959), «Հայ գրականություն» (ուսումնական ձեռնարկ, 1960), «Հայ գրականություն» (դասագիրք, 1972)։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ *(ծն. 1940)*.— Լրագրող, բանաստեղծ։ Ծնվել է Ալագյազի շրջանի Ղըրխոգագիրման (այժմ՝ Հնաբերդ) գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, որի բանասիրական ֆակուլտետն ավարտել է 1963-ին։ 1966-ից աշխատել է Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեում։ Առանձին գրքույկներով լույս ընծայած երկերն են՝ «Պատուհան» (Երևան, 1968), «Անվախճան օր» (1977), «Ժամանակի ծառը» (1982), «Վերջաբանից Արարատ» (1986)։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՋՈՅԱ *(ծն. 1929)*.— Ջութակահար. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1963)։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում և Մոսկվայի պետական կոնսերվատորիայում, ավարտել 1953-ին։ Նույն տարվանից որպես մենակատար շուքակահարուհի աշխատել է Հայֆիլհարմոնիայում։ Համերգներ է տվել ՌԽՖՍՀ-ում, Մերձբալթյան հանրապետություններում, Ուկրաինայում, Միջին Ասիայում և այլուր։ Նվագախմբի կազմում եղել է արտասահմանյան մի շարք երկրներում։ 1962-ից դասավանդում է Երևանի պետական կոնսերվատորիայում, 1979-ից՝ պրոֆեսորի ատեստանով։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷԼԻԶ *(ծն. 1909)*.— Գրականագետ։ Ծնվել է Բալըքեսիրում (Թուրքիա)։ Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսում։ 1925 թ. եկել է Խորհրդային Հայաստան, շարունակել ուսումը Երևանի պետական համալսարանում, որի պատմալեզվագրական ֆակուլտետն ավարտել է 1930 թ.։ 1934-ից արտասահմանյան գրականություն է դասավանդել պետական համալսարանում։ 1938—1956 թթ. վարել է համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչի պաշտոնը։ Մամուլում տպագրել է գրականագիտական հոդվածներ։ 1941 թ. առանձին գրքով լույս է ընծայել «Բայրոնի կյանքն ու ստեղծագործությունը» աշխատությունը։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԻՍՐԱՅԵԼ *(ծն. 1909)*.— Լրագրող։ Ծնվել է Ստեփանակերտի շրջանի Ղշլաղ գյուղում (Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ)։ Կրթությունն ստացել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում։ 1938—1941 թթ. եղել է Ստեփանակերտի «Երիտասարդ բոլշևիկ» թերթի պատասխանատու քարտուղարը։ Երկար տարիներ աշխատել է մարզային «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությունում։ Մամուլում և առանձին գրքույկներով հրատարակել է արձակ և չափածո երկեր, ինչպես «Ձավակները» (պատմվածք, Ստեփանակերտ, 1943), «Առակներ» (Բաքու, 1955, 1961), «Ամեն մեկն իր դերում» (1976), «Կաղնին և քամին» (1982) և այլն։ Առակներից նմուշներ լույս են տեսել նաև ռուսերեն։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆԴԻՆ *(ծն. 1946)*.— Կոմպոզիտոր։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, իսկ 1965—1971 թթ. սովորել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում։ 1973—1976 թթ. աշխատել է հանրապետական ժողովրդական ստեղծագործության տանը իբրև դիրիժորի տեղակալ և գեղարվեստական ղեկավար։ 1976—1980 թթ. եղել է Հեռուստատեսության և ռադիոյի էստրադային սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր։ Հորինել է տարբեր ժանրի բազմաթիվ ստեղծագործություններ, որոնցից են՝ «Սոնատ ջութակի և դաշնամուրի համար», «Լարային կվարտետ», romանսներ խորհրդահայ բանաստեղծների տեքստերով, «Տաղեր» վոկալ շարք Պ. Դուրյանի տեքստերով, գործիքային պիեսներ, երգեր, «Կոնցերտ կամերային նվագախմբի համար», «Կամերային սիմֆոնիա» և այլն։ Գրել է երաժշտություն հեռուստատեսային բեմադրությունների համար։ Նրա երկերից մի քանիսը վերցվել են ձայնապնակների վրա։ Դասավանդում է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ *(ծն. 1914)*.— Նկարիչ։ Ծնվել է Շամախիում (Ադրբեջանական ԽՍՀ)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Բաքվի գեղարվեստական ուսումնարանում։ Ավարտելուց հետո որպես նկարիչ աշխատել է «Կոմունիստ» հայերեն թերթի խմբագրությունում, Բաքվի հայկական թատրոնում և Մ. Ախունդովի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում։ Ձևավորել է բազմաթիվ բեմադրություններ։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ *(1882—1958).— Բանաստեղծ, կրթական գործիչ։ Ծնվել է Սուրմալուի գավառի Դաշբուրուն գյուղում (այժմ՝ Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ավարտել 1904 թ. և աշխատել Շուշիի թեմական դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ։ Հետագայում նույն առարկաները դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և Երևանի դպրոցներում։ 1936 թվականից մինչև կյանքի վերջը գրաբար է դասավանդել Երևանի պետական համալսարանում։ 1927 թ. հրատարակել է «Հայոց լեզվի գործնական քերականություն» ձեռնարկը, որը հետագայում արժանացել է հինգ հրատարակության։ Բնագրից թարգմանել է Գյոթեի, Շիլլերի, Հայնեի մի շարք բանաստեղծությունները։*

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ *(1892—1961).— Բանաստեղծ-մատենագիր։ Ծնվել է Երևանում։ Կրթությունն ստացել է Երևանի թեմական դպրոցում։ Երկար տարիներ աշխատել է որպես ուսուցիչ։ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո վարել է կուսակցական և կրթական պաշտոններ։ 1930-ական թվականների սկզբներին աշխատել է Երևանի բանվորական համալսարանում։ Կյանքի վերջին տասնամյակներին եղել է Հայաստանի պետական գրապալատի դիրեկտոր։ Հրատարակել է մատենագիտական մի շարք աշխատություններ, որոնցից են՝ «Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա» (Երևան, 1941), «Խորհրդահայ գեղարվեստական գրականության բիբլիոգրաֆիա» (1949), «Հայ գրականության բիբլիոգրաֆիա. 19-րդ դարից մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը» (1953), «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» (հայ բոլշևիկյան մամուլը 1902—1920 թթ.), «Խորհրդահայ մամուլը 1920—1954» (Երևան, 1954), «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» (հատ. 1, 1956, հատ. 2., 1957), «Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ» (1960) և այլն։*

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՐԱՆՏ *(ծն. 1927).— Լեզվաբան. բանասիրական գիտությունների դոկտոր (1973)։ Ծնվել է Լենինական Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում։ Միջնակարգ կրթությունն ստացել է ծննդավայրում։ 1946 թ. ավարտել է Ստեփանակերտի ուսուցչական (երկամյա) ինստիտուտը, 1951 թ.՝ Երևանի պետական համալսարանի լեզվի, հոգեբանության և արտաբանության բաժինը, իսկ 1954-ին՝ ասպիրանտուրան։ 1959—1963 թթ. աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում որպես գիտաշխատող, 1963-ից՝ դասախոսում է Երևանի պետական համալսարանում։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Գոյականի առումները հայերենում» (Երևան, 1960), «Գոյականի թվի կարգը հայերենում» (1972), «Լեզվաբանական բառարան» (հեղինակակից) (1975), «Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության» (1976) և այլն։*

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՂԱԶԱՐ *(ծն. 1904).— Դերասան, ռեժիսոր. Աջարական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Թեմական ասպարեզ է մտել Բաթումում, 1923 թ.։ Երկար տարիներ խաղացել է Բաթումի հայկական թատրոնում։ Գլխավոր դերերից են՝ Մելքան («Նամուս»), Քիպար, Օգանեն («Պաղտասար ագրար»)։ Բեմադրել է մի շարք պիեսներ, ինչպես՝ «Վարդեր և արյուն», «Պաղտասար ագրար», «Սևիլ», «Արշին մալ ալան», «Ուշ լինի, նուշ լինի», «Առատմնաբույժն արևելյան» և այլն։*

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱԴԱՔ *(1867—1944).— Գրող։ Ծնվել է Իշևանի շրջանի Կոթի գյուղում։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի Արհեստավորաց դպրոցում, ավարտել 1886 թ.։ Գրական ասպարեզ է մտել 1890-ական թվականների կեսերին։ «Մուրճ» ամսագրի 1896—1898 թթ. համարներում տպագրել է «Կոթի գյուղ» ակնարկների շարքը։ Հետագայում, դարձյալ «Մուրճում», տպագրել է «Մի կտոր հացի համար» և «Լուսի» պատմվածքները, որոնք թարգմանվել են նաև ռուսերեն։ 1905 թ. հեղափոխության շրջանում գրել է «Կապույտ շապիկ», «Պահակը» և այլ պատմվածքներ։ Խորհրդային իշխանության տարիներին շարունակել է գրական գործունեությունը։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Պատմվածքներ» (Թիֆլիս, 1906), «Պատմվածքներ» գրքույկ երկրորդ (1911), «Նոր դարբնոց» (1925), «Պատմվածքներ» (1926), «Պատմվածքներ» (Երևան, 1930), «Պատմվածքներ» (1931), «Գիոնները հնգամյակում» (1932), «Պատմվածքներ» (Թիֆլիս,*

1935), «Մանկություն» (Թիֆլիս, 1935), «Մանկական պատմվածքներ» (1940), «Պատմվածքներ» (Երևան, 1949) և այլն։ Վախճանվել է Թիֆլիսում։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԻԱ *(1911—1971).— Փիլիսոփա. փիլիսոփայական գիտությունների դոկտոր (1964)։ Ծնվել է Բաքվում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Բաքվի խորհրդային շինարարության և իրավունքի ազգբեջանական ինստիտուտում, որի իրավաբանական ֆակուլտետն ավարտել է 1932-ին։ 1933-ից դասախոսել է Մոսկվայի, հետագայում Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում։ 1945—1946 թթ. եղել է արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության վարչության նախագահ, 1952—1954 թթ. Երևանի Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի դիրեկտոր, 1954—1964 թթ. Մոսկվայի Ս. Օրջոնիկիձեի անվան ինժեներա-տնտեսագիտական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնի վարիչ։ Ռուսական գիտական հանդեսներում տպագրել է փիլիսոփայության պատմության, պատմական մատերիալիզմի ու բարոյագիտության հարցերին նվիրված աշխատություններ։ Առանձին գրքով 1964 թ. Մոսկվայում լույս է տեսել նրա «Հումանիզմ» ռուսերեն գիրքը։*

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԻԱՄ *(ծն. 1912).— Նկարչուհի։ Ծնվել է Կարսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թբիլիսիի գեղարվեստների ակադեմիայում և Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել 1954-ին։ 1954—1968 թթ. աշխատել է նույն ինստիտուտում իբրև դիպլոմային ներկայացումների թատերական նկարիչ-ձևավորող։ Թատերական ձևավորումներ է կատարել նաև Երևանի Կ. Ստանիսլավսկու անվան թատրոնում։ Պատրաստել է պարային տարազների էսքիզներ Հայֆիլհարմոնիայի, Հայաստանի երգի-պարի անսամբլի, սասունցիների «Աշնակ» պարախմբի, Լենային Ղարաբաղի պարի պետական անսամբլի և այլ խմբերի համար։ Գեղանկարչական գործերից են՝ «Կարս», «Վան», «Հայկական պարեր» նկարաշարքերը, «Կոմիտաս», «Թումանյան», «Նարեկացի» կոմպոզիցիոն ստեղծագործությունները, «Թոռնիկներ» դիմանկարները և այլն։ 1955 թվականից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների։*

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ *(ծն. 1936).— Նկարիչ։ Ծնվել է Սպիտակի շրջանի Ծաղկաշեն գյուղում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում, ավարտել է 1958-ին։ 1967 թվականից մասնակցել է ցուցահանդեսների։ 1976 թ. Երևանում ունեցել է անհատական ցուցահանդես։ Լավագույն գործերից են՝ «Երեք ծաղիկ», «Անահիտի դիմանկարը», «Մեր ընտանիքը», «Արեգակներ», «Կեսօր», «Զոհաբերություն Արգիշտի արքային», «Եղնիկը սարերում», «Ինքնանկար աղջիկների հետ», «Սայաթ-Նովա» և այլն։ Կատարել է գրքերի նկարազարդումներ, ինչպես Հովհ. Թումանյանի «Գառնիկ ախպեր» հեքիաթը, Վ. Այգեկցու «Առակները», «Պապը և շաղգամը» հեքիաթը և այլն։*

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՅՈՒՐԻ *(ծն. 1930).— Պատմաբան. պատմական գիտությունների դոկտոր (1970)։ Ծնվել է Դոնի Ռոստովում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Լենինգրադի համալսարանում, որի արևելագիտության ֆակուլտետն ավարտել է 1952-ին։ 1956-ից աշխատել է ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում, նախ որպես գիտաշխատող, 1963-ից՝ բաժանմունքի վարիչ, այնուհետև՝ ինստիտուտի դիրեկտոր։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Երիտթուրքերի շարժումը 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբին» (Մոսկվա, 1970), «Նոր Օսմանները և պայքարը 1876 թ. սահմանադրության համար Թուրքիայում» (1958) և այլն։ Թուրքիայի պատմությանը վերաբերող բազմաթիվ հոդվածներ է տպագրել գիտական հանդեսներում, ժողովածուներում, կոլեկտիվ աշխատություններում։*

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՊԱՐԳԵՎՈՒՐԻ (ՕՐՅԱ) *(?—1980).— Բանաստեղծուհի, պարուհի, նկարչուհի։ Ծնվել է Ուրֆայում (Թուրքիա)։ 1915 թ. չարդերի օրերին կորցրել է ծնողներին, պատերազմից հետո ընկել է Հունաստանի մանկատները։ 1928 թ. Աթենքում մասնակցել է Հովհ. Զարիֆյանի կազմակերպած հայերեն ներկայացումներին։ 1929-ին մեկնել է Փարիզ, հետևել պարարվեստի դասընթացներին։ Բալետային մենապարերով հանդես է եկել Փարիզի օպերայում, Օպերա-կոմիկում, տիկին ժան Ռոնսերի պարի-*

ստուդիայում։ Սակայն կարճ ժամանակից թողել է պարի բնագավառը և նվիրվել նկարչության ու գեղարվեստական գրականության, ընտրելով Օրֆա գրական անունը ի հուշ իր դժբախտ, կործանված ծննդավայր Ուրֆայի։ Գրել է արձակ և չափածո բանաստեղծություններ, չափածոներն ամփոփել է «Ցոլքեր» ժողովածուում, արձակ բանաստեղծությունները՝ «Տեր կեցո դու զհայս» հատորում։ Բանաստեղծությունների մի այլ շարք ամփոփել է «Արմենույշ» ժողովածուում։ Վերոհիշյալ երեք գրքերից «Ցոլքերն» ու «Արմենույշը» լույս են տեսել ֆրանսերեն, արժանացել ֆրանսիացի ականավոր քննադատների գնահատմանը։ Ինքն է նկարազարդել այդ հրատարակությունները, ինչպես նաև ամուսնու՝ Արամ Պետրոսյանի մի քանի պատմվածքները, որոնք նույնպես լույս են տեսել ֆրանսերեն։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ *(ծն. 1930).*— Կոմպոզիտոր։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որի ստեղծագործական բաժինն ավարտել է 1962-ին։ 1967-ից աշխատել է Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնում որպես երաժշտական մասի ղեկավար։ 1967—1971 թթ. դասավանդել է Ռ. Մելիքյանի անվան ուսումնարանում։ Հորինել է տարբեր ժանրի բազմաթիվ երկեր՝ սիմֆոնիա՝ «Դասական», չորս մասից, «Լարային կվարտետ № 1», «Լարային կվարտետ № 2», «Պարային սյուիտ», «Տոնական քայլերգ», բազմաթիվ երգեր, ռոմանսներ՝ խորհրդահայ բանաստեղծների տեքստերով, ժողովրդական երգերի մշակումներ և այլն։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈԶԱ *(ծն. 1924).*— Գրող։ Ծնվել է Լենինականում։ Բուն անունը եղել է Քնարիկ։ Կրթությունն ստացել է ծննդավայրում։ 1953-ից ապրում է Երևանում։ Գրական առաջին փորձերը կատարել է 1940-ական թվականների կեսերից, Լենինականի «Բանվոր» թերթում, հետագայում այլ թերթերում և հանդեսներում տպագրել է բանաստեղծություններ և արձակ երկեր։ Առանձին գրքերով լույս ընծայած գործերն են՝ «Միածան» (Երևան, 1955), «Սրտի ճամփան» (1958), «Տարբեր ճակատագրեր» (1960), «Սրտի տավիղ» (1962), «Ծաղկալանջ» (վեպ) (1968), «Ճերմակ թռչուններ» (վիպակներ և պատմվածքներ) (1974), «Ցրագմենտ իմ Զվարթնոցից» (1978), «Աշխարհի լույսն ու մութը» հատ. 1 (1982), հատ. 2 (1985)։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍԵՐՈՎԲԵ *(1859—?).*— Մանկավարժ։ Ծնվել է Շապին-Գարահիսարում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է ծննդավայրի Մուշեղյան վարժարանում։ Ավարտելուց հետո, 1880-ական թվականների սկզբներից մինչև խոր ծերություն ունեցել է մանկավարժական բեղուն գործունեություն ծննդավայրում և այլ քաղաքներում։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին մեկնել է Եգիպտոս՝ ավելի քան տասը տարի պաշտոնավարել է Ալեքսանդրիայի Պողոսյան վարժարանում։ Աշխատակցել է եգիպտահայ մամուլին («Արև», «Արաքս» և այլն)։ Կազմել է դասագրքեր՝ «Այբբենարան ընթերցարան», «Նոր պարտեզ» և այլն։ Գրել է «Ավարայրի դյուցազները» պատմական ողբերգությունը։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ *(ծն. 1932).*— Գրող, հրապարակախոս։ Ծնվել է Աշտարակում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինն ավարտել է 1954-ին։ 1955—1957 թթ. աշխատել է «Խորհրդային Հայաստան» թերթի, 1957—1961 թթ. «Ավանգարդի», 1961—1966 թթ. «Պիոներ կանչի» խմբագրություններում, իսկ 1966—1975 թթ. եղել է «Գարուն» ամսագրի գլխավոր խմբագիրը։ 1975-ից եղել է Հայաստանի գրողների միության վարչության առաջին քարտուղարը, այնուհետև՝ նախագահը։ 1988-ից ԽՍՀՄ կուլտուրայի ֆոնդի հայկական բաժանմունքի նախագահն է։ Վերոհիշյալ և այլ պարբերականներում տպագրել է գեղարվեստական բազմաթիվ ստեղծագործություններ։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են. «Բալլադ մարդու մասին» (բանաստեղծություններ, Երևան, 1958), «Վերջին գիշերը» (1959), «Անավարտ դիմանկարներ» (1963), «Հայկական էսքիզներ» (1969), «Ապրած և չապրած տարիներ» (1970), «Դեղատուն «Անի» (1973), «Հավասարում բազմաթիվ անհայտներով» (1977), «Վերջին ուսուցիչը» (1980), «Կրակե շապիկ» (1987), «Ընտիր երկեր» 2 հատորով (1983) և այլն։ Ռուսերեն լեզվով լույս տեսած գրքերն են՝ «Մամա, ես արդեն մեծացել եմ» (Մոսկվա, 1960), «Քաղաքի կիսաբաց լուսամուտները» (1973), «Դեղատուն «Անի» (1973), «Կրակե շապիկ» (1987) և այլն։ Նրա ստեղծագործություններից թարգմանություններ են կատարվել բազմաթիվ լեզուներով։ Գրել է «Ծանր է Հիպոկրատի գլխարկը» պիեսը, որը բեմադրվել է Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, իսկ «Վերջին ուսուցիչը», «Հայկական էսքիզները»՝ Երևանի դրամատիկական թատրոնում։ Նրա երկերից մի քանիսը թարգմանվել են տարբեր լեզուներով՝ անգլերեն, չեխերեն, վրացերեն և այլն։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱԼԱԴԻՄԻՐ (ՕՀԱՆ) *(ծն. 1941).*— Բանդակագործ։ Ծնվել է Լենինգրադի մարզի Ստարայա Ռուսա քաղաքում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի քանդակագործության բաժինն ավարտել է 1964-ին։ Հաջորդ տարվանից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների։ Կատարել է թատերական ձևավորումներ Երևանի, Լենինականի, Ղափանի, Կամոյի թատրոններում, ձևավորել է հեռուստատեսային ֆիլմեր։ Լավագույն գործերից են՝ Ֆրանց Վերֆելի, Նանսենի, Հր. Մաթևոսյանի, Դ. Դեմիրճյանի և այլոց դիմանքանդակները, նաև «Սայաթ-Նովա», «Վարդան Մամիկոնյան», «Մովսես Խորենացի» և այլ գործերը։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ *(1929—1984).*— Լրագրող, խմբագիր, փիլիսոփա, շախմատիստ, ԽՍՀՄ և Միջազգային գրոսմայստեր (1952), ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ (1960)։ Ծնվել է Թբիլիսում, որտեղ ստացել է կրթությունը, հետևել է շախմատի, Հաղթող է դուրս եկել շախմատային մի շարք մրցություններում, իսկ 1963—1969 թթ. եղել է շախմատի աշխարհի չեմպիոն, 1958—1979 թթ.՝ ԽՍՀՄ շախմատային ֆեդերացիայի նախագահության անդամ, 1968—1977 թթ. «Սովետսկի սպորտ» թերթի հավելված «64» շաբաթաթերթի խմբագիր։ 1968 թ. լույս է ընծայել «Շախմատը և փիլիսոփայությունը» աշխատությունը։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՖԻ *(ծն. 1925).*— Դաշնակահար։ Ծնվել է Ֆրանսիայում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Փարիզի կոնսերվատորիայում, աշակերտել պրոֆեսոր Ռայմոնդ Տիբերժին։ 9—10 տարեկան հասակում համերգներ է տվել եվրոպական մի շարք քաղաքներում։ Կոնսերվատորիան ավարտելուց հետո համերգներով հանդես է եկել Ֆրանսիայում, Հոլանդիայում, Բելգիայում, Անգլիայում, Ամերիկայում, արաբական մի քանի երկրներում, Հնդկաստանում, Պակիստանում և այլ երկրներում։ Ականավոր դիրիժորների հետ նվագել է Լիստի, Բեթհովենի դաշնամուրային կոնցերտները, նաև Արամ Խաչատրյանի և այլ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ։ Եղել է նաև Երևանում և Հալֆիրհարմոնիայի մեծ դահլիճում տվել համերգներ, կատարել Բախի, Սկարլատտի, Լիստի, Շոպենի, Սկրյաբինի և այլ կոմպոզիտորների ստեղծագործությունները, ինչպես և Ա. Խաչատրյանի «Տոկկատան»։

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐ *(1866—1916).*— Դերասան, թատերական գործիչ։ Ծնվել է Օրդուբադում (Ադրբեջանական ԽՍՀ)։ Եղբայրն է դերասան Գեորգ Պետրոսյանի։ Ստացել է ռուսական կրթություն։ 1880-ական թվականների վերջերից խաղացել է ռուսական տարբեր թատերախմբերում։ Երկար տարիներ աշխատել է Մոսկվայի գեղարվեստական թատրոնում և համարվել նրա աչքի ընկնող ուժերից։ Հանդես է եկել ռուսական և արևմտաեվրոպական պիեսներում կենտրոնական դերերով։

ՊԵՏՐՈՎԻՉ ԳՐԻԳՈՐ *(ծն. 1916).*— Պատմաբան։ Ծնվել է Ստեցովա գյուղում (այժմ՝ Ուկրաինական ԽՍՀ, Իվանո-Ֆրանկովսկի մարզ)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Հռոմում։ 1941-ին ավարտել է Գրիգորյան համալսարանը, 1948-ին՝ Արևելագիտության ինստիտուտը։ Հաջորդ տարվանից դասավանդել է Գրիգորյան համալսարանում, (1972-ից պրոֆեսորի աստիճանով) և Արևելագիտության ինստիտուտում։

Հրատարակել է հայերեն և իտալերեն պատմագրական բազմաթիվ աշխատություններ Լեհաստանի և Ուկրաինայի հայկական գաղթօջախների եկեղեցիների պատմության վերաբերյալ, ինչպես՝ «Ստեփանոս Ե. Սալմաստեցի, կաթողիկոս Էջմիածնի» (հայերեն, 1964), «Հայ եկեղեցին Լեհաստանում» (իտալերեն, 1971), որոնցում շոշափվում են նաև հայ ազատագրական շարժման հետ կապված հարցեր՝ կաթոլիկական եկեղեցու դիրքերից։ Մյուս գործերից են՝ «Միաբանող եղբայրները և հայ եկեղեցին»

(Վենետիկ, 1971), «Հայ եկեղեցին Լեհաստանի մեջ» (1350—1624) (Վենետիկ, 1980) և այլն։

ՊԵՐՊԵՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ (?—1870).— Պատմաբան, կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը։ 1840-ական թվականներից ունեցել է կրթական, գրական, բանասիրական բեղուն գործունեություն։ Համարվել է հմուտ մանկավարժ։ Աշխատակցել է «Հայաստան», «Մասիս» և այլ պարբերականների, գրելով հիմնականում բանասիրական հարցերի մասին։ Եռանդուն մասնակցություն է ունեցել կաթոլիկական պրոպագանդայի դեմ մղվող պայքարին։ 1869 թ. լույս է ընծայել «Կայծակ բրգակործան» բանավեճային գիրքը, որտեղ փորձել է հերքել Հռոմի պապի անսխալականության առասպելը, ի պաշտպանություն հայ լուսավորչական եկեղեցու ավանդությունների։ Նրա ամենածավալուն աշխատությունն է «Պատմություն հայոց» գիրքը, որն ըստ էության շարունակում է հայոց պատմությունը այն տարիներից (1772), ուր հասցնում է Մ. Չամչյանը իր «Հայոց պատմության» Գ հատորում։ Լույս է տեսել 1870 թ.։ Հայ ժողովրդի մեկ դարի պատմությունն ընդգրկող այս աշխատության արժանիքներից մեկն է գրքի վերջում զետեղված ժամանակագրական ընդարձակ աղյուսակները, որոնք փաստորեն համառոտ շարադրանքն են ընդգրկված նյութի՝ դեպքերի, վայրերի, մարդկանց, տարեթվերի թվարկմամբ։

ՊԵՐՊԵՐՅԱՆ ԱՐԱ (ծն. 1928).— Օպերային երգիչ։ Ծնվել է Դիտրոյտում (Ամերիկա)։ Փոքր հասակից երգել է եկեղեցական երգչախմբերում։ Բարձրագույն ուսումն ստացել է Միչիգանի համալսարանում, հետևել տնտեսագիտության և իրավաբանության։ Երգել է համալսարանի ուսանողական երգչախմբում, զուգահեռ ձայնը մարզել պրոֆեսոր Քենիֆ Ռեստերմանի մոտ։ Մասնակցել է համալսարանի ուսանողների ուժերով կազմակերպված «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերայի ներկայացմանը՝ դոկտոր Բարտոլոյի դերերգով։ Դրանից հետո նրան ընդունել են համալսարանի օպերայի խմբի մեջ, 1953 թ. մասնակցել է Ան Արբորի փառատոնին։ Ապա ծառայել է ամերիկյան բանակում։ Երգել է բանակային երգչախմբում, 1958-ից՝ Նյու Յորքի Ուստոկի օպերային խմբում։ Նույն տարում հանդես է եկել Աբրահամի դերերգով «Սատա» օպերայում՝ հեռուստատեսային ներկայացման մեջ։ Հաջորդ տարվանից երգել է Նյու Յորքի «Նյու Օրլեանս» օպերային թատրոնում, Ջուլիարդի թատրոնում, որտեղ հանդես է եկել «Կոմս Օրի» օպերայում։ Հետագայում մասնակցել է տասնյակ օպերային ներկայացումներին, կատարելով նշանավոր դերեր, որոնցից են՝ Նիկանորը («Լակմե»), Մեֆիստոֆել («Ֆաուստ»), Թիոդալիական թագավոր («Աիդա»), Արեմելիկ («Մատան և Դալիլա»), Լեպորելլը («Դոն Ժուան»)։ Ունեցել է համերգային բեղուն գործունեություն, մասնակցել է ամերիկյան տասնյակ փառատոներին։ 1962-ին, երբ Նյու Յորքում բացվել է Լինքոլն համերգային մեծ սրահը, բացման հանդիսավոր երեկոին հրավիրված 10 երգիչներից մեկը եղել է նա։ Հյուրախաղերով եղել է բազմաթիվ քաղաքներում, այդ թվում Երևանում, որտեղ կատարել է նաև Կոմիտասի, Արմեն Տիգրանյանի, Այան Հովհաննեսի ստեղծագործությունները։

ՊԵՐՊԵՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ (ծն. 1923).— Նկարիչ։ Ծնվել է Բուլղարիայի Վառնա քաղաքում։ Փոքր հասակից ծնողների հետ տեղափոխվել է Կահիրե (Եգիպտոս), որտեղ ստացել է կրթությունը իր հոր՝ Շահան Պերպերյանի մասնավոր դպրոցում։ Հետագայում շարունակել է ուսումը Երուսաղեմի հայոց վանքի թարգմանչաց վարժարանում։ Ավարտելուց հետո սովորել է նույն քաղաքի անգլիական կոլեջում։ Ապա՝ տեղափոխվելով Բեյրութ, զբաղվել է նկարչությամբ։ 1948 և 1949 թթ. Բեյրութում և Հալեպում կազմակերպել է անհատական ցուցահանդեսներ։ Նույն այդ տարիներին Անթիլիասի դպրեվանքում դասավանդել է նկարչություն։ 1949 թ. մեկնել է Փարիզ, կատարելագործել արվեստը, միաժամանակ մասնակցել ցուցահանդեսի։ Մասնակցել է նաև Վարշավայում կազմակերպված ֆրանսիական արդիական արվեստի ցուցահանդեսին։ 1956 թ. կատարել է Անթիլիասի մայր տաճարի նկարազարդումները («Խաչելություն», «Հարություն», «Աստվածաշնչի թարգմանությունը», «Էջմիածնի հիմնադրումը» և այլն)։ Լավագույն գործերից են՝ «Բանվորը հանգստանալիս», «Նավակներ», «Աղքատ երեխան», «Հանքափորը», ինչպես և Մովսես Խորենացու, Մեսրոպ Մաշտոցի, Մխիթար Հերացու, Մխիթար Գոշի և այլոց դիմանկարները, որոնք, ի թիվս այլ գործերի, ցուցադրվել են Երևանում, 1968 թ. դեկտեմբեր ամսին։

ՊԵՐՊԵՐՅԱՆ ԾԱՏՈՒՐ (ծն. 1905).— Գրող։ Ծնվել է Խարբերդի շրջանի Գոմք գյուղում։ Կրթությունն ստացել է տեղի հայկական դպրոցում, Առաջին համաշխարհային պատերազմի օրերին ընկել է Հալեպ, այնտեղից անցել Բեյրութ, ապա Ֆրանսիա, բնակվել Մարսելում։ 1927 թ. մի խումբ ընկերներով Մարսելում ստեղծել են «Հայ գրասիրաց միությունը», հրատարակել «Հայ գիր» պարբերականը, որի էջերում կատարել է գրական նախափորձերը։ 1955 թ. Փարիզում լույս է ընծայել «Խալին ճամփան» խորագրով մի գիրք, նվիրված 1915—1918 թթ. հայկական կոտորածներին։ Առանձին գրքերով լույս ընծայած մյուս գործերն են՝ «Հայրենի գյուղը», «Որդիք հայոց» (վեպ), «Յոթը պատմվածքներ», «Մաղկափունջ» (թարգմանական հեքիաթներ), «Նամակներ ճամփուս եզերեն», «Գոմք գյուղը» և այլն։

ՊԵՐՊԵՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ (1905—?).— Կոմպոզիտոր, խմբավար։ Ծնվել է Ադանայում (Կիլիկիա)։ Նախնական կրթությունն ստացել է տեղի ֆրանսիական դպրոցում, Առաջին համաշխարհային պատերազմի օրերին կորցրել է ծնողներին, ապրել արաբների մոտ։ Ապա տեղափոխվել է Հալեպի ամերիկյան որբանոցը, դարձել որբանոցի երգչախմբի ղեկավար։ 1918 թ. որպես երաժշտության ուսուցիչ աշխատել է Ադանայի Աբգարյան վարժարանում։ Այնտեղից մեկնել է Զմյուռնիա, 1923 թ.՝ Հունաստան։ Սովորել է Աթենքի կոնսերվատորիայում, ավարտել 1930 թ.։ Կարճ ժամանակ պաշտոնավարել է Կիպրոսի հունական երաժշտական դպրոցում։ 1932 թ. մեկնել է Հալեպ, աշխատել որպես ուսուցիչ և խմբավար։ Հետագայում բնակություն է հաստատել Բեյրութում, շարունակել խմբավարական աշխատանքը, միաժամանակ ստեղծագործել։ 1951 թ. մեկնել է Ամերիկա. համերգներ տվել մի շարք քաղաքներում։ 1962 թվականից ապրում է Ամերիկայում, որտեղ նույնպես ունեցել է խմբավարական լայն գործունեություն։ Հորինել է տարբեր սեռի բազմաթիվ ստեղծագործություններ, որոնցից են «Մանուկը բնության մեջ», «Արեգնազան», «Շողիկ» օպերաները, «Վարդանանք» կանտատան, «Նարեկյան խմբերգը», «Եկեղեցին հայկական» օրատորիան (Վ. Թեքեյանի խոսքերով), «Տո լաո», «Գովք Հայաստանի», «Հայոց համբարձումը», «Հովվուհու երգը», «Գյուղացի գեղեցկուհին» խմբերգերը, «Հայ աղջիկ», «Զմրուխտ տարեր», «Ախ, ես ինչ անեմ», «Կանձրևե տղաս» մեներգերն ու զուգերգերը, «Վասն Վարդանանց» (ջութակի և նվագախմբի համար)։ Սրանցից շատերը լույս են տեսել տարբեր քաղաքներում, ինչպես «Եկեղեցին հայկական» օրատորիան (Անթիլիաս, 1950)։ 1976 թ. Նյու Յորքում լույս է տեսել նրա «Ռեքվիեմը», նվիրված Կոմիտասին՝ ըստ Ե. Չարենցի համանուն պոեմի։ Այցելել է Երևան, Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում ունեցել ստեղծագործական համերգ։

ՊԵՐՊԵՐՅԱՆ ՀԱՅԿ (1887—1978).— Բանաստեղծ, հայագետ։ Ծնվել է Կ. Պոլսում, տպարանատեր-հրատարակիչ Նշան Պերպերյանի ընտանիքում։ Կրթությունն ստացել է Օրթագյուղի դպրոցում և կեդրոնական վարժարանում։ 1915 թ. մեկնել է Աթենք (Հունաստան), հաջորդ տարի՝ Եգիպտոս, որտեղ մինչև 1918 թ. աշխատել է որպես զինվորական թարգմանիչ։ Հետագայում ապրել է Փարիզում, ամբողջովին նվիրվել բանասիրական աշխատանքի։ Ն. Ադոնցի հետ, մի խումբ ֆրանսիացի հայագետների համագործակցությամբ, 1920 թ. Փարիզում հիմնադրել են «Հայագիտական ընկերությունը», հրատարակել «Ռեվյու դեզ Էթյուտս Արմենիեն» հայագիտական հանդեսը, որտեղ տպագրել է բանասիրական արժեքավոր հոդվածներ։ Աշխատակցել է «Հանդես ամսօրյա», «Ապագա», «Արևմուտք», «Աշխարհ» և այլ պարբերականների։ Եղել է ֆրանսերեն վերոհիշյալ հայագիտական հանդեսի նոր շրջանի (1964-ից) քարտուղարը. հիմնականում նրա ջանքերով են լույս տեսել հանդեսի վերջին 12 ամբողջ հատորները, հարուստ բովանդակությամբ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Արշակ Բ. և Քեռու օղլի» (Փարիզ, 1939), «Վարդան Արևելցու «Աշխարհացույցը» (1960), «Նյութեր Կ. Պոլսո հայոց պատմության համար» (Վիեննա, 1965)։ Մ. Կանարի հետ ֆրանսերեն է թարգմանել Արիստակես Լաստիվերտցու «Պատմությունը»։ Մեծապես օժանդակել է Գ. Կյուլպենկյան հիմնադրամով լույս տեսնող հայագիտական գրքերի ընտրության և հրատարակության գործին։ Հայերենից ֆրանսերեն, ֆրանսերենից հա-

յերեն է թարգմանել հայագիտական աշխատություններ։

ՊԵՐՊԵՐՅԱՆ ՄԱՆՆԻԿ *(1883—1960).*— Բանաստեղծուհի, երգչուհի։ Ծնվել է Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում։ Դուստրն է հայտնի մանկավարժ Ռեթեոս Պերպերյանի։ Նախնական կրթությունն ստացել է Ժնևում, ապա սովորել է Կ. Պոլսի ամերիկյան կոլեջում։ Աշակերտական տարիներից գրել է քնարական բանաստեղծություններ, որոնք տպագրվել են «Մասիս» պարբերականում։ 1908 թ. մեկնել է Փարիզ, հետևել Սորբոնի համալսարանի գրական դասընթացներին։ Վերադառնալով Կ. Պոլիս, շարունակել է շափածո երկեր տպագրել մամուլում։ 1911 թ. լույս է ընծայել «Արձակ երգեր» ժողովածուն։ Այդ տարիներին բնագրից թարգմանել է Օսկար Ուայլդի «Սալոմեն», որը տպագրվել է Մ. Շամտանճյանի «Ոստան» հանդեսում, 1912 թ.։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո հեռացել է Ժնևդավայրից, շրջագայել է մի շարք երկրներում. եղել է Ամերիկայում, Ֆրանսիայում, Եգիպտոսում։ 1931 թ. հրատարակել է երկրորդ ժողովածուն՝ «Արևոտ ճամբա» խորագրով։ 1933—1946 թթ. ապրել է Եգիպտոսում։ 1946 թ. Ալեքսանդրիայում լույս է ընծայել «Հեթանոս տղա» հատորը, որը պարունակում է մի քանի վիպակներ։ Փարիզում ստացել է երաժշտական կրթություն, աշակերտելով դաշնակահար-երաժշտագետ Մարգարիտ Բարայանին։ 1919 թվականի աշնանից նա համերգներ է տվել Ամերիկայի մի շարք քաղաքներում։ Որպես երգչուհի հանդես է եկել նաև օպերաներում («Կավալերիա Ռուստիկանա», «Կարմեն» և այլն)։ Փայլել է հատկապես Կարմենի դերում։ «Նյու Յորք Հերալդ», «Նյու Յորք Ուորլդ», «Ֆիլադելֆիա պրես», «Ֆիլադելֆիա ռեքորդ», «Մյուզիկլ էդվենս» և այլ պարբերականներ ընդարձակ հոդվածներ են տպագրել նրա կատարողական արվեստի մասին։

ՊԵՐՊԵՐՅԱՆ ՆՇԱՆ *(1842—1907).*— Տպարանատեր-հրատարակիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը, մի քանի տարի աշխատել որպես ուսուցիչ։ Աշխատակցել է պոլսահայ մամուլին։ 1882 թ. հիմնել է իր սեփական տպարանը, որտեղ տպագրվել են մի քանի տասնյակ գրքեր, նաև «Բուրաստան մանկանց» պատկերազարդ հանդեսը, նկարազարդ, աննախադեպ տպագրությամբ։ Լինելով լավ փորագրիչ, ինքն է պատրաստել վերոհիշյալ հանդեսի բոլոր նկարները։ 1894—1908 թթ. հրատարակել է իր կազմած «Ժողովրդական տարեցույցներ» շարքը, որոնցում ունի բազմաթիվ հոդվածներ, թարգմանություններ, մեծ մասամբ ծաղիկաքաղ ֆրանսիական հրատարակություններից։

ՊԵՐՊԵՐՅԱՆ ՇԱՀԱՆ *(1891—1956).*— Արվեստաբան։ Ծնվել է Կ. Պոլսում, որդին է հայտնի մանկավարժ Ռեթեոս Պերպերյանի։ Նախնական կրթությունն ստացել է Ժնևում, ապա սովորել է Կ. Պոլսում, իր հոր բաց արած Պերպերյան միջնակարգ դպրոցում, ավարտել 1906 թ.։ Հոր մահից հետո (1907) միաժամանակ պաշտոնավարել է նույն դպրոցում, ապա մեկնել է Փարիզ, ուսումը շարունակել Սորբոնի համալսարանում։ Վերադառնալով Կ. Պոլիս, ստանձնել է Պերպերյան վարժարանի տնօրենի պաշտոնը և վարել մինչև 1922 թվականը Կ. Պոլսում, այնուհետև՝ Կահիրեում, մինչև 1934 թ.։ Այդ թվականին մեկնել է Երուսաղեմ, պաշտոնավարել որպես ուսուցիչ։ Գրական ասպարեզ է մտել 1911 թվականին, աշխատակցելով «Ոստան» պարբերականին։ Հետագայում գեղագիտական հարցերի նվիրված հոդվածներ է տպագրել «Բարձրավանք», «Զվարթնոց», «Սիոն», «Հապակ», «Անի» և այլ պարբերականներում։ Նրա առավել ծավալուն հետազոտություններն են «Կոմիտաս վարդապետ. անձը և գործը», որ լույս է տեսել Երուսաղեմում, «Գեղագիտական հարցեր», «Երկու ժամանակներ», «Կոմիտաս վարդապետ և հայ երաժշտությունը» և այլն, որոնց մի մասը մնում է անտիպ։

ՊԵՐՊԵՐՅԱՆ ՊԻՍՏՈՍ (ԱՐԱՐԻՍՅԱԿ) *(1858—1921).*— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ 1878 թվականից խաղացել է Թ. Ֆասուլաճյանի թատերախմբում, մասնակցել նրա մոլիերյան բեմադրություններին։ Հետագայում խաղացել է Մ. Մնակյանի «Օսմանյան դրամատիկում», կատարելով առաջին սիրուհու դերեր։ Խաղացել է միայն թուրքերեն լեզվով։ 1890-ական թվականների կեսերից թողել է թատրոնը։

ՊԵՐՊԵՐՅԱՆ ՌԵԹԵՈՍ *(1848—1907).*— Մանկավարժ, գրող։ Ծնվել է Կ. Պոլսի Խասգյուղ թաղամասում։ Կրթությունն ստացել է Ժնևդավայրի Ներսիսյան վարժարանում. ավարտելուց հետո նվիրվել է ուսուցչական աշխատանքի։ 1876 թ. Կաղը գյուղ թաղամասում հիմնադրել է Պերպերյան միջնակարգ դպրոցը, որը հետագայում տեղափոխել է Սկյուտար։ Այն իր գոյությունը շարունակել է երկար տարիներ։ Մահից հետո վարժարանը ղեկավարել են նրա որդիները՝ Շահան և Օննիկ Պերպերյանները՝ սկզբում Պոլսում՝ ապա Կահիրեում։ Նրա հիմնադրած վերոհիշյալ դպրոցը անեցրել է մայրենի լեզվի ու մատենագրությանը հմուտ հարյուրավոր մարդիկ, որոնք նկատելի դեր են կատարել հայ մշակույթի տարբեր բնագավառներում։ Մանկավարժական աշխատանքին զուգընթաց՝ պարբերական մամուլում և գրքերով հրատարակել է բազմաթիվ աշխատություններ, գերազանցապես նվիրված կրթական հարցերի։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Դաստիարակի մը խոսքերը» (Կ. Պոլիս, 1901), «Դպրոց և դպրություն» (1907), «Քաղաքական տնտեսություն» (1883), «Դրամ» (1886) և այլն։ Առավել ուշագրավ է նրա «Մարդիկ և իրք» գիրքը (Կ. Պոլիս, 1885)), որը պարունակում է նրա փիլիսոփայական խոհերը, գեղագիտական բմբռնումները։ Գրել է նաև շափածո երկեր, որոնցից պատանեկան տարիների գործերը ամփոփված են «Առաջին տերեւք» ժողովածուում (1877), հասուն տարիքում գրածները՝ «Խոհք և հուշք» ժողովածուում։

ՊԵՐՊԵՐՅԱՆ ՍԲԲՈՒՀԻ *(ծն. 1904).*— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթություն։ Բեմական առաջին փորձերը կատարել է 1920 թ., մասնակցելով Հ. Աբելյանի, Վ. Փափազյանի կազմակերպած մի քանի ներկայացումներին։ 1922 թ. մեկնել է Հունաստան, Աթենքում ամուսնացել երաժշտագետ Համբարձում Պերպերյանի հետ, շարունակել խաղալ հունահայ բեմում։ Մասնակցել է Ալ. Շիրվանզադեի «Ջար ոգի», «Ավերակների վրա» և այլ պիեսների ներկայացումներին։ Հանդես է եկել նաև որպես երգչուհի։ Կատարել է ամուսնու հորինած կամ մշակած երգերից մի քանիսը և գնահատվել մամուլում։ Հետագայում նրանց ընտանիքը ապրել է Հալեպում, որտեղ նույնպես մասնակցել է հայերեն ներկայացումներին։ Հանդես է եկել Անուշի դերում «Անուշ» օպերայում (1946), Մանամի դերում՝ «Աշուղ Ղարիբում»։ Մասնակցել է «Սայաթ-Նովա», «Ուշ լինի, նուշ լինի» և այլ օպերետների ներկայացումներին։

ՊԵՐՊԵՐՅԱՆ ՔԵԹԻ *(1925—1983).*— Երգչուհի, մեցցոսոպրանո։ Ծնվել է Ստելբորոյում (Ամերիկա)։ Փոքր հասակից նրանց ընտանիքը տեղափոխվել է Նյու Յորք, որտեղ ստացել է մասնագիտական նախնական կրթությունը, սովորել ազգագրական պարերի հայկական խմբում, զուգահեռ մշակել ձայնը։ 1949 թվականից ապրել է Միլանում (Իտալիա), որտեղ աշակերտել է երգիչ Ջորջինե դել Վիգոյին։ Այնտեղ էլ ամուսնացել է երաժշտագետ կոմպոզիտոր Լուչիանո Բերիոյի հետ։ Երգել է եվրոպական, ասիական և ամերիկյան տասնյակ քաղաքներում՝ 1960-ական թվականների կեսերից, արժանանալով համաշխարհային ճանաչման։ Ժամանակակից շատ կոմպոզիտորներ (Բուսոտի, Մադերնա, Միլո, Քեիչ, Ստրավինսկի և ուրիշներ) ստեղծագործություններ են գրել նրա համար։ Ի. Ստրավինսկին նրան է նվիրել «Եղերգ ի հիշատակ Ջոն Քենեդիին» գործը, որ նա փայլուն հաջողությամբ կատարել է 1971 թ. Նյու Յորքում, ի հարգանս Ստրավինսկու տրված համերգում։ Ամերիկյան մամուլը, այդ թվում «Նյու Յորք Թայմզ» օրաթերթը դրվատանքով են խոսել նրա կատարողական արվեստի մասին։ Մասնակցել է միջազգային մի շարք փառատոների, այդ թվում 1974 թ. Վարշավայում կազմակերպված «Վարշավայի աշուն» փառատոնին, Իրանի Շիրազ քաղաքում կազմակերպված երաժշտական փառատոնին, երգացանկում միշտ ունեցել է հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները։ Կոմիտասի երգերը նրա կատարմամբ ձայնապնակների վրա են վերցվել 1969-ին Կոմիտասի ծննդյան 100-ամյակի առիթով Նյու Յորքում թողարկված ձայնապնակների վրա. Լ. Ամարայի և Լ. Զուգասյանի կողքին։ Ունեցել է մանկավարժական գործունեություն։ Կանադայի Վանկուվերի համալսարանում, Տորոնտոյի, Քյոլնի, Միլանի կոնսերվատորիաներում կարդացել է դասախոսություններ։ 1976 թ. Փարիզի հեռուստատեսության մի կայանից կարդացել է դասախոսություն երաժշտության մասին։ Երգում է 20 լեզուներով։ Համարվում է իմիտացիոն արվեստի վարպետ։ Հաջողությամբ երգում է Շայլապինի սիրած Մուսորգսկու «Երգ Լվի մասին», «Ստրավինսկու «Զվարճասությունը» և այլն։

ՊԵՐՊԵՐՅԱՆ ՕՆՆԻԿ *(1888—1959)*.— Կոմպոզիտոր, դիրիժոր, կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որդին է մանկավարժ Ռ. Պերպերյանի։ Կրթությունն ստացել է հոր հիմնադրած Պերպերյան միջնակարգ դպրոցում։ Ապա մեկնել է Փարիզ, յոթ տարի հետևել երաժշտության։ Աշակերտական այդ տարիներին գրել է դաշնամուրային վեց պիեսները, ձոնել իր ուսուցիչներին։ Մեկ տարի սովորել է Լոզանում, ապա՝ Հռոմում, որտեղ մասնակցել է մրցույթի, շահել «Հռոմի մրցանակը», 1919 թ. վերադարձել է Կ. Պոլիս։ 1922-ին՝ եղբոր՝ Շ. Պերպերյանի հետ Պերպերյան վարժարանը տեղափոխել են Կահիրե։ 10 տարի դասավանդել է այդ դպրոցում, միաժամանակ ստեղծագործել։ Գրել է «Պատարագը», «Վարդանանք», «Ժամերի թայլը», «Գրիգոր Լուսավորիչ» բալետները, որոնք բեմադրվել են դպրոցի աշակերտների ուժերով։ 1938 թ. տեղափոխվել է Փարիզ, ստեղծել է երգչախումբ, համերգներ է տվել Ֆրանսիայում, Ամերիկայի տարբեր քաղաքներում, Լիբանանում, Սիրիայում։ Հետագայում մեկնել է Ամերիկա, որտեղ ապրել է մինչև կյանքի վերջը։ Մյուս երկերից հիշատակության արժանի են «Հայրենիք» սիմֆոնիան, բաղկացած երեք մասից. ա) «Ոգեկոչում», պատկերում է հայ ժողովրդի տոհմիկ կենցաղը, սիրո, աշխատանքի պահերը, բ) «Մարտիրոսություն», պատկերում է մեծ եղեռնը, գ) «Հույսնք», պատկերում է հայ ժողովրդի զարթոնքը։ Սփյուռքահայ մամուլում տպագրել է երաժշտական բազմաթիվ հոդվածներ։

ՊԶՏԻԿՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ *(ծն. 1943)*.— Նկարիչ։ Ծնվել է Բեյրութում (Լիբանան)։ Նախնական կրթությունն ստացել է տեղի ֆրանսիական դպրոցում, իսկ մասնագիտականը՝ իտալական մշակույթի տանը։ Ուսանողական տարիներից մասնակցել է ցուցահանդեսների, շահել մրցանակներ։ 1962 թ. մեկնել է Իտալիա, սովորել Պերուջիա քաղաքի գեղարվեստների դպրոցում։ Վերադառնալով Բեյրութ, 1964 թ. կազմակերպել է անհատական ցուցահանդես։ Հետագայում սովորել է նաև Փարիզի Արվեստների ազգային դպրոցում։ Լավագույն գործերից են՝ «Սպասում», «Խաչից իջեցնելը», «Երկու քույրեր», «Մտորումներ», «Լռություն», «Մայիսյան ծաղիկ», «Երեկոյի պսեղիան» և այլն։ Ապրում և ստեղծագործում է Փարիզում։ 1969-ին ոսկե մեդալի է արժանացել Ֆլորենցիայում։ Ընտրվել է Փարիզի Մայիսյան սալոնի ժյուրիի անդամ։ Նրա գործերից մի նմուշ՝ «Կույսը», պահվում է Հայաստանի պետական պատկերասրահում։

ՊԶՏԻԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ.— Նկարիչ, կրթական գործիչ։ Ծնվել է Բեյրութում։ Կրթությունն ստացել է Վենետիկի Մխիթարյանների վանքում։ Ունեցել է կրթական, մանկավարժական գործունեություն։ Պաշտոնավարել է Սերի (Փարիզ) Մուրադյան վարժարանում որպես ուսումնական։ 1971 թ. Վազգեն Ա. կաթողիկոսի հրավերով եկել է Էջմիածին, դասախոսել հոգևոր ճեմարանում։ Զուգահեռ կրթական աշխատանքին, զբաղվել է նկարչությամբ և լայն ճանաչում ձեռք բերել Ֆրանսիայում ու նրա սահմաններից դուրս։ 1960-ական թվականների կեսերից նրա նկարները ցուցադրվել են Բեյրութում, Հալեպում, Վենետիկում, Փարիզում, Միլանում և այլ քաղաքներում։ Ունեցել է անհատական մի քանի ցուցահանդես Փարիզում և արժանացել է «Լը Նուվել լիթերեր», «Ֆիգարո», «Կոմբա» և այլ թերթերի գնահատմանը, նաև մի քանի շքանշանի, Ֆրանսիայի Գեղարվեստների ակադեմիայի նկարչության տարեկան մրցանակին (1979)։ Դառնալուց, Զ. Մուրադյանից հետո երրորդ հայն է, որ արժանացել է այդ մրցանակին։ 1969 թվականից խմբագրել է Վենետիկի Մխիթարյանների «Ընտանիք» ամսագիրը։

ՊԶՏԻԿՅԱՆ ՊՈՂՈՍ *(1897—1967)*.— Կրթական գործիչ։ Ծնվել է Մարաշում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է հայ կաթոլիկների Զմմառի վանքում, ավարտել է 1924 թ.։ Այդ տարվանից մինչև կյանքի վերջը աշխատել է որպես ուսուցիչ՝ 1924—1928 թթ. Բեյրութում, ապա մի քանի տարի Զմմառի ընծայարանում, եղել է Բեյրութի Բուրջ-Համուտ թաղամասի Մեսրոպյան վարժարանի տնօրեն 1939—1952 թթ., հետագայում աշխատել է Պողոսյան վարժարանում։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Ուրախ զվարթ» և «Հայոց լեզու» դասագրքերի շարքը, որ արժանացել է մի քանի տպագրության։

ՊԸԼԸ ՊՈՒԶԻ (ԽԵՆԹ ՊՈՂՈՍ) *(1731—1810)*.— Զվարճախոս, առակախոս։ Ծնվել է Լեռնային Ղարաբաղի Ավետարանոց գյուղում (այժմ՝ Առաքելանի շրջանի Զանախչի գյուղ)։ Եղել է Վարանդայի իշխան Մելիք-Շահնազարի կատակարան զվարճացնողը։ Հորինել է զվարճալի գյուլլեներ, առակներ, որոնք լայնորեն տարածվել են ժողովրդի մեջ, լրացվել և բանավոր հասել են մինչև մեր օրերը։ Նրա առակները և զվարճալիքները ժողովրդից լսելով՝ գրի են առել և հրատարակել են Մ. Բարխուդարյանը, Ս. Խորայելյանը, մեր օրերում՝ կոմպոզիտոր Հարո Սահեփանյանը և ուրիշները։ Ա. Աբելյանը գրել է պիես՝ «Պլի Պուզի կամ Ղարաբաղի մելիքները» խորագրով, որը երկար տարիներ բեմադրվել է հայ թատրոնում։

ՊԸՅԸԼՈՒ ԳՐԻԳՈՐ *(1840—1912)*.— Բանաստեղծ։ Ծնվել է Ռումինիայի Ցաշ քաղաքում։ Կրթությունն ստացել է Փարիզի Մուրադյան վարժարանում։ Հետագայում սովորել է Փարիզի և Ցաշի համալսարաններում, հետևել իրավաբանության։ Երկար տարիներ իրավաբանական բարձր պաշտոններ է վարել Ռումինիայում։ Ունեցել է գրական-բանասիրական գործունեություն, հայերեն և ռումիներեն լեզվով լույս է ընծայել Մինաս Թոխաթեցու «Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուս» աշխատությունը, նաև Կամենից քաղաքում գրված ընդարձակ մի հիշատակարան-քրոնիկ, որի 1430—1621 թթ. վերաբերող մասը հայերեն է, 1611—1621 թթ. մասը՝ հայատառ թուրքերեն։ Աշխատակցել է «Բազմավեպ» հանդեսին։

ՊԸՅԸԼՈՒ ԹԵՈԴՈՐ *(1837—1897)*.— Նկարիչ։ Ծնվել է Ռումինիայի Ցաշ քաղաքում։ Կրթությունն ստացել է Փարիզի Մուրադյան վարժարանում, միաժամանակ հետևել նկարչության, զբաղվել նկարների ընդօրինակմամբ։ Ուսման ընթացքն ավարտելուց հետո վերադարձել է Ռումինիա, զբաղվել նկարչությամբ։ Եղել է 1874 թ. ստեղծված «Ժունիմիա» նկարչական ստուդիայի հիմնադիրներից։ Ամեն տարի իր գործերը ցուցադրել է այս կամ այն վաճառատան ցուցափեղկում, քանի որ այդ տարիներին դեռևս ցուցահանդեսներ կազմակերպելու սովորություն չի եղել։ Հետագայում արդեն կանոնավոր մասնակցել է Ցաշի և Բուխարեստի ցուցահանդեսներին։ Ռումինական մամուլը մեծ գովեստով է խոսել նրա գործերի մասին, մասնավորապես «Միշեշորի գետափը» նկարի, որը գնվել է Ցաշի քաղաքապետարանի կողմից և

ցուցադրվել է այդ հաստատության մեծ սրահում։ 1880 թ. նշանակվել է Ցաշի գեղարվեստական դպրոցի ուսուցիչ։

ՊԻԼԵԶԻԿՃՅԱՆ ԲԱՌՆԱԲԱՍ (ՊՈՂՈՍ) *(1867—1921)*.— Բանաստեղծ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է Վիեննայի Մխիթարյանների վանքում, դարձել այդ միաբանության անդամ։ «Հանդես ամսօրյա» պարբերականի հրատարակության առաջին տարվանից (1887)՝ 25 տարի եղել է նրա խմբագրական կազմում։ Այդ հանդեսի էջերում տպագրել է ինքնուրույն և թարգմանական բազմաթիվ գործեր, մեծ մասամբ անստորագիր կամ Բառնաբաս ստորագրությամբ։ Օտար լեզուներից կատարած թարգմանություններից են Ստրշիգովսկու «Էջմիածնի Աշվեստարանը» ուսումնասիրությունը (1892), Մ. Շտրեկի «Հայաստան, Քրդստան և արևմտյան Պարսկաստան՝ բաբելական ասորեստանյան սեպագրերի համաձայն» (Վիեննա, 1904)։

ՊԻՆԵՄԵՃՅԱՆ ԱՂԱՎՆԻ *(1859—1922)*.— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է տարրական կրթություն։ Օրիորդական ազգանունը եղել է Զիլինկիրյան։ Բեմական ասպարեզ է մտել 1870-ական թվականների վերջերին, իր քրոջ՝ Պիստոս Արաքսիից մի քանի տարի հետո։ Խաղացել է նախ Հակոբ Վարդովյանի խմբում, ապա վերջինիս փակվելուց հետո՝ Մարտիրոս Մնակյանի «Օսմանյան դրամատիկ» թատերախմբում։ 1886 թ. ամուսնացել է դերասան Ռուբեն Պինեմեճյանի հետ և այնուհետև գրվել նրա ազգանունով, ամբողջովին նվիրվել բեմական ասպարեզին։ Համարվել է Մնակյանի թատերախմբի աչքի ընկնող ուժերից որպես դրամատիկ դերասանուհի։ Խաղացել է հիմնականում թուրքերեն տեքստով, քանի որ այդ տարիներին արգելված են եղել հայերեն ներկայացումները։ Թուրքական մամուլը քանիցս անդրադարձել է նրա դերակատարումներին։ Բարձր է գնահատվել մասնավորապես նրա Բլանշը «Թափառական հրեա» վեպի բեմականացումը հանդիսացող համանուն պիեսում։ Մայրն է դերասանուհիներ Էլիզ Գոլանի և Ատրինե Տերուանի։

ՊԻՆԵՄԵՃՅԱՆ ԱՏՐԻՆԵ-ՏԵՐՈՒԱՆ *(1898—?)*.— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում. Ռուբեն և Աղավնի դերասանների ընտանիքում։ Կրթությունն ստացել է ծննդավայրում։ Բեմա-

կան ասպարեզ է մտել 1919 թվականին։ Խաղացել է Պոլսո հայ դրամատիկ թատերախմբում, հանդես գալով դասական մի շարք դերերում, ինչպես՝ Աննա Դեմրի («Քին»), Անուշ («Պաղատասար աղբար»), Լիդիա («Հո երթաս»), Սուսան («Նամուս»), Էմմա («Ոճրագործի ընտանիքը») և այլն։ «Պոլսո հայ դրամատիկի» քայքայումից հետո իր բեմական ընկերներից մի քանիսի հետ մեկնել է Փարիզ, երկար տարիներ խաղացել է Տ. Նշանյանի «Փարիզահայ դրամատիկ» թատերախմբում, դերացանկի վրա ավելացնելով տասնյակ նոր անուններ, գերազանցապես ֆրանսիական ժամանակակից դրամատուրգիայից։ Վ. Փափազյանի փարիզյան հյուրախաղերի օրերին «Օթելլոյում» կատարել է էմիլիայի դերը։ 1940-ական թվականներից հաղվադեպ է երևացել բեմում։

ՊԻՆԵՄԵՃՅԱՆ ԷԼԻԶ (ԹՈՎԱՆ) (1887—1962).— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսում, դերասան Պինեմեճյանների ընտանիքում։ Կրթություն ստացել է ֆրանսիացի մայրապետների դպրոցում։ Բեմական ասպարեզ է մտել օսմանյան սահմանադրության հռչակումից հետո՝ 1909 թ. «Արքայն զբոսնու» պիեսում կատարելով Բլանշի կենտրոնական դերը։ Մինչև 1914 թ. խաղացել է մերթ հայկական, մերթ թուրքական խմբերում, իսկ այդ տարում, երբ ստեղծվել է թուրքական պետական թատրոնը, դարձել է նրա պրիմատոնները։ 1920 թ. ռեժիսոր Օվի Սելումյանի հրավերով խաղացել է Պոլսո հայ դրամատիկ թատերախմբում, երկու թատերաշրջան եղել այդ խմբի կենտրոնական ուժերից, հանդիսականներին հմայելով մասնավորապես ֆրանսիական թարգմանական պիեսներում կատարած դրամատիկ դերերով։ 1922 թ. վերջերին, երբ փակվել է Պոլսահայ թատրոնը, կրկին խաղացել է թուրքական «Դար ալ բեդա» պետական խմբում, հմայելով թուրք մտավորականությանը մասնավորապես Մարգարիտ Գոթիեի («Կամելիաազարդ կինը»), «Աննա Դեմրիի («Քին») և այլ դերակատարումներով։ Նկատելի դեր է կատարել թուրք առաջին դերասանուհիների (Աֆիֆե, Շավրե) պատրաստման գործում։ 1925-ին վերջնականապես թողել է թուրքական բեմը, մեկնել է նախ Բելգիա, ապա՝ Ֆրանսիա, որտեղ էլ ապրել է մինչև վերջ։ Փարիզում ապրելու տարիներին պարբերաբար մասնակցել է փարիզահայ թատերախմբի հայերեն ներկայացումներին, կատարել Սեղալի դերը՝ «Հին ատվածներում»։ Թարգմանական պիեսներում կատարած դերերից են՝ Ան Մար («Սամսոն»), Մոնկլար («Խամաճիկներ»), Մոնիկա («Բոց»), Կրասա («Հարսանեկան քայլերգ»), Աննա Դեմրի («Քին») և այլն։ Եղել է բացառիկ հմայքի ու տաղանդի տեր դերասանուհի։ Թուրք ականավոր գրող Նազըմ Հիքմեթը, ռեժիսոր Ահմետ Ֆեհիմը մեծ հիացմունքով են արտահայտվել նրա մասին։

ՊԻՆԵՄԵՃՅԱՆ ՌՈՒԲԵՆ (1860—1910).— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը։ Բեմական ասպարեզ է մտել 1877-ին։ Նախ խաղացել է Հ. Վարդովյանի «Օսմանյան թատրոնում», ապա՝ վերջինիս փակումից հետո՝ 1880-ական թվականների սկզբներից՝ Մ. Մնակյանի «Օսմանյան դրամատիկ» թատերախմբում, որն իր ներկայացումները տվել է Թուրքերեն։ Տասնյակ տարիներ եղել է այդ խմբի հիմնական ուժերից, կատարելով գերազանցապես դրամատիկ դերեր, որոնցից հիշատակության արժանի են Արման Դյուվալը «Կամելիաազարդ կինը» պիեսում, Ֆիլիպը «Դարբնոցապետում», Անդրե Բերնիեն «Փարիզի աղքատներում» և այլն։ Ամուսինն է Աղավնի Պինեմեճյանի, հայրը Էլիզ, Ատրինե և Օնիկ Պինեմեճյանների։

ՊԻՊԵՌՃՅԱՆ ԱՌԱՔԵԼ (1854—1923).— Կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ 1871-ին ավարտել է Օրթագյուղի Թարգմանչաց վարժարանը։ Որպես ուսուցիչ պաշտոնավարել է Կ. Պոլսի տարբեր թաղամասերի հայկական դպրոցներում։ 1876 թ. եղբոր՝ Հակոբ Գուրգենի հետ հիմնադրել են Օրթագյուղի «Հայկական կրթարան» մասնավոր դպրոցը, որտեղ պաշտոնավարել է նաև ինքը։ Հետագայում զբաղվել է գրավաճառությամբ։ Աշխատակցել է «Աբելեք», «Բյուզանդիոն» և այլ թերթերի։ Առանձին գրքով հրատարակել է «Ճաշակ արդի հայ մատենագրության» անթոլոգիան, որը արժանացել է հինգ տպագրության։ Օսմանյան սահմանադրության տարիներին զբաղվել է քարտեզագրությամբ։ Հրատարակել է «Ընդարձակ քարտեզ օսմանյան պետության» (Կ. Պոլիս, 1913), «Գունավոր ընդարձակ քարտեզ Հայաստանի», «Քարտեզ Հայաստանի ըստ բնեռագիր

արձանագրության», ինչպես և գրպանի մի տետր։ Սրանցից բացի տպագրել է աշխարհագրության մի դասագիրք և ֆրանսերենի մի քերականություն։ Առավել արժեքավոր է նրա «Հուշարձան Մ. Պեշիկթաշլյանի» գիրքը, որը լույս է տեսել պատերազմի նախօրյակին, 1914 թ.։

ՊԻՊԵՌՅԱՆ ՉԱՎԵՆ (1921—1984).— Գրող, հրապարակախոս, խմբագիր։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը. սովորել տեղի հայկական և ֆրանսիական դպրոցներում։ Գրական առաջին փորձերը կատարել է 1940 թ. «Ժամանակ» օրաթերթում։ Աշխատակցել է պոլսահայ բոլոր թերթերին, հանդեսներին, տարեգրքերին, այդ թվում «Երջանիկի տարեգրքին», գրելով գերազանցապես պատմվածքներ և հրապարակախոսական հոդվածներ։ Եղել է նոպտերազմյան տարիներին լույս տեսած «Նոր օր», «Ճառագայթ» և այլ առաջադիմական թերթերի խմբագրական կազմում։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Ծովը», «Անկուտի սիրահարները»։ Հետմահու՝ 1984 թ. լույս է տեսել նրա «Մրջյուններու վերջալույսը» ծավալուն վեպը։ Ֆրանսերենից կատարել է թարգմանություններ։ Օգտագործել է Նեմեսիս, Անի Ազատ, Սևանի մակուռավարը, Շիրակ և այլ ծածկանուններ։

ՊԻՊՈՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ծն. 1922).— Նկարիչ։ Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ (1972)։ Ծնվել է Նոր Բայազետում (այժմ՝ Կամո)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում և գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի գեղանկարչության բաժինն ավարտել է 1953-ին։ Հաջորդ տարվանից մասնակցել է հանրապետական, հետագայում նաև միութենական և արտասահմանյան ցուցահանդեսների։ Նրա գործերը ցուցադրվել են Ուլանբաատորում, Փարիզում, Մոնրեալում և այլ քաղաքներում։ Մի քանիսը արժանացել են մրցանակների։ Լավագույն գործերից են՝ «Զ. Ազիզյանի դիմանկարը», «Այրիվանք», «Գարնանային ջրեր», «Հրազդանի կամուրջը», «Թռչում են կռունկները», «Խաղաղության պաշտպանության դիրքերում», «Կիևի գրավումը», «Ազատագրում», «Դեպի նոր Հայաստան», «Ճանապարհ» (Կոմիտաս), «Աստրոֆիզիկոսներ» և այլն։ 1972—1975 թթ. եղել է Հայաստանի նկարիչների միության գեղանկարչական բաժնի նախագահ։

ՊԻՎԱԶՅԱՆ ԷՄԱՆՎԵԼ (ծն. 1920).— Բանաստեղծ։ Ծնվել է Նոր Բայազետում (այժմ՝ Կամո)։ Միջնակարգ և բարձրագույն կրթությունն ստացել է Երևանում։ 1941 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը։ Ծառայել է Խորհրդային բանակում։ 1943-ից շարունակել է ուսումը Հայկական ԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում՝ հայ հին գրականության մասնագիտությամբ։ 1947 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա «Մխիթար Գոշի առակները» թեմայով։ 1969-ից աշխատում է Երևանի պետական համալսարանում իբրև հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայի վարիչ։ Գիտական մամուլում և ժողովածուներում տպագրել է հայ հին գրականությանը նվիրված հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հովհաննես Բլկուրանցի. Տաղեր» (Երևան, 1960), «Մխիթար Գոշ», «Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» բանասիրական քննություն» (1987)։ Կազմել և խմբագրել է Գալուստ Տեր-Մկրտչյանի «Հայագիտական հետազոտություններ» ժողովածուն (Պ. Հակոբյանի հետ միասին), (Երևան, 1979), Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն (գրաբար, աշխարհաբար, ռուսերեն և անգլերեն) (Երևան, 1981), «Հայ մշակույթի նշանավոր գործիչները» (հայերեն՝ 1976, ռուսերեն՝ 1981) և այլն։

ՊԻՏՈԵՎ ԺՈՐԺ (ՓԻԹՈՅԱՆ) (1884—1939).— Ռեժիսոր, թատերական գործիչ, դերասան։ Ծնվել է Թիֆլիսում, հայանի հայ մեծահարուստ, թատերական գործիչ Նայի Փիթոյանի ընտանիքում։ 1905-ից սովորել է Փարիզի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում։ Վերադառնալով Ռուսաստան, խաղացել է Պետերբուրգի թատերախմբերում։ 1912 թ. Պետերբուրգում հիմնադրել է «Մեր թատրոնը», որը հյուրախաղերով շրջագայել է Ռուսաստանում, բեմադրել Մոլիերի, Շեքսպիրի, Գոլդոնիի, Պուշկինի, Տոլստոյի պիեսները։ 1915—1922 թթ. ապրել է Շվեյցարիայում, որտեղ նույնպես կազմակերպել է ներկայացումներ։ Ապա ընդմիշտ ապրել է Փարիզում և իր տիկնոջ՝ դերասանուհի Լյուդմիլա Պիտոեվայի հետ ծավալել բեմա-

կան լայն գործունեություն։ 1926-ին ականավոր ռեժիսորներ Շ. Դյուլենի, Գ. Բատի հետ ստեղծել է «Կարտել» թատրոնը, որն ունեցել է անանխընթաց հաջողություն. խաղացանկում նախապատվությունը տվել է Ա. Չեխովի, Լ. Պիրանդելլոյի, Հ. Իբսենի, Բ. Շոուի, Շեքսպիրի պիեսներին. ինքնատիպ մեկնաբանությամբ ներկայացնելով այդ հեղինակների գործերը։ Հետևելով Կ. Ստանիսլավսկու, Ա. Անթուանի ուսմունքներին, աշխատել է լայն տեղ տալ բեմական պայմանականությանը, ճնշող ու ճոխ դեկորացիաներին հակադրելով երաժշտության, լույսի, ռիթմի համադրությունը։ Բեմադրությունների մեծ մասի պարզ դեկորացիաներն էլ պատրաստել է ինքը։ Արտասահմանում նրա ունեցած լավագույն բեմադրություններից են համարվել Շեքսպիրի «Համլետը», Ա. Չեխովի «Ճայը», Լ. Տոլստոյի «Կենդանի դիակը», Լ. Պիրանդելլոյի մի քանի պիեսները, Հ. Իբսենի «Ժողովրդի թշնամին» և այլն, որոնց բոլորի մեջ գլխավոր դերերը կատարել են ինքը և Լյուդմիլա Պիտոևան։ Համարվում է ֆրանսիական արդի թատրոնի ռահվիրաներից։

ՊԻՏՈԵՎ ՍԱՆԱ *(ծն. 1920).*— Ռեժիսոր։ Ծնվել է Ժնևում։ Որդին է ռեժիսոր Ժորժ Պիտոևի։ 1922 թվականից նրանց ընտանիքը ապրել է Փարիզում, որտեղ ստացել է կրթությունը և ունեցել թատերական նկատելի գործունեություն։ Ստեղծել է թատերախմբեր և տվել բազմաթիվ ներկայացումներ, հոր նման նախապատվությունը տալով ռուսական դասական դրամատուրգիային, մասնավորապես Չեխովի գործերին, այն տարբերությամբ, որ հայրը Չեխովին ներկայացրել է ռուսերեն, ինքը՝ ֆրանսերեն։ 1939—1949 թթ. հիմնականում հանդես է եկել որպես դերասան, ապա՝ ռեժիսոր։ Ունեցել է սեփական թատրոն, որը կոչվել է «Պիտոև ընկերության թատրոն»։ Եղել է նաև «Մոդեռն» թատրոնի տնօրենը, որտեղ նրա ներկայացրած պիեսներից բացառիկ հաջողություն է ունեցել «Հների 4-րդը»։

ՊԼՊՈՒԼ ԶԱՐԵՀ (ՊԱՐՈՆՅԱՆ) *(1892—1961).*— Բանաստեղծ, կրթական գործիչ։ Ծնվել է Ադրբաղարում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է ծննդավայրի կենտրոնական վարժարանում։ Ավարտելուց հետո աշխատել է որպես ուսուցիչ։ Պատանի հասակից գրել է բանաստեղծություններ, որոնք տպագրվել են «Բյուրանխա», «Երկիր», «Կոհակ» և այլ պարբերականներում։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ապրել է Բուլղարիայում։ Երկար տարիներ որպես ուսուցիչ աշխատել է Սոֆիայի, Ռուսչուկի, Բուրգասի և Սիլիստրայի հայկական դպրոցներում, միաժամանակ շարունակել գեղարվեստական երկերով աշխատակցել սփյուռքահայ մամուլին։ Առանձին գրքերով հրատարակած գործերն են՝ «Ընդվզում» (բանաստեղծություններ) (Կ. Պոլիս, 1909), «Ճակատագրին փուշին վրա» (Սոֆիա, 1927), «Բաժակ մը երգ» (Բուխարեստ, 1941), «Մեր ժամուն սուրբերը» (1946), «Փնջիկ» և այլն։

ՊԼՈՒՋՅԱՆ ԱՐՓԻԱՐ *(1900—1973).*— Մանկավարժ, Հայկական ԽՍՀ վաստակավոր ուսուցիչ։ Ծնվել է Վանում (Արևմտյան Հայաստան)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանում, ավարտել է 1925 թ. և նվիրվել մանկավարժական աշխատանքի։ Որպես ուսուցիչ, ապա ուսմասվար աշխատել է տարբեր դպրոցներում։ 1930—1936 թթ. աշխատել է Լուսժողկոմատում, այնուհետև՝ Երևանի Սպանդարյանի շրջանի ժողկրթբաժնում։ Մի քանի տարի էլ որպես դիրեկտոր աշխատել է № 1 բաներիտ դպրոցում, իսկ 1948 թ. նշանակվել է Քաղժողկրթբաժնի մանկավարժական կաբինետի վարիչ։ 1968-ից մինչև կյանքի վերջը պաշտոնավարել է Երևանի ուսուցիչների կատարելագործման քաղաքային ինստիտուտում։ «Խորհրդային մանկավարժ» և այլ պարբերականներում տպագրել է բազմաթիվ հոդվածներ կրթական հարցերի մասին։ Կազմել ու հրատարակել է մասնայական դպրոցների 1-ին դասարանի ընթերցարան, 1-ին, 2-րդ և 3-րդ դասարանների վայելչագրության ձեռնարկներ, խուլ-համր երեխաների համար այբբենարան, ընթերցարան, բաներիտ դպրոցի համար՝ «Դպրոցի վերակառուցման ուղիով» գրքույկը և այլն։

ՊՅՈՒՍՊՅՈՒԼՅԱՆ ԻՐԻՍ.— Երգչուհի, լիրիկական սոպրանո։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունը ստացել է էսայան վարժարանում։ Այդ վարժարանի տարեվերջի հանդեսներում էլ առաջին անգամ երգել է և գրավել ուշադրություն։ 1922 թ. մեկնել է Փարիզ՝ ձայնը մշակելու։ Հետևել է հայտնի երաժիշտ, տենոր Մարգարիտ Բաբայանի դասընթացներին, միաժամանակ ստացել ընդհանուր երաժշտական կրթություն և 1938 թ. ստացել պրոֆեսիոնալ երգչուհու վկայական։ 1930-ից երգել է հայկական երեկույթներում, 1932-ին դարձել Փարիզի ռադիոյի մենակատարներից, 1932 թ. Փարիզում տվել է իր առաջին մեծ մենահամերգը, որին անդրադարձել են ֆրանսիական թերթերը մեծ գովեստով։ Երգել է հայերեն, ֆրանսերեն, գերմաներեն, պարսկերեն, որոնք վերցվել են ձայնապակիների վրա և լայնորեն տարածվել Եվրոպայում ու Մերձավոր Արևելքում։ Երգացանկում լայն տեղ է տվել հայ կոմպոզիտորներին՝ Կոմիտաս, Ալեմշահ։

ՊՈՒՐՊՈՄՈՎ ՎԱԼԵՆՏԻՆ *(ծն. 1924).*— Նկարիչ։ Ծնվել է Երևանում, որտեղ ստացել է կրթությունը, հետևել նկարչության։ 1940 թվականից աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում իբրև նկարիչ-մուլտիպլիկատոր, իսկ 1951-ից որպես բեմադրող նկարիչ։ Ձևավորել է «Լեռնային լճի գաղտնիքը», «Ուրվականները հեռանում են լեռներից», «Առաջին սիրո երգը», «Արտակարգ հանձնարարություն», «Ճանապարհ դեպի կրկես», «Կարինե» և այլ ֆիլմեր։ 1960—1964 թթ. աշխատել է իբրև Երքաղխորհրդի նկարիչ։ Թատերական ձևավորումներից են՝ «Մի դիշեր», «Ոսկե բանալի» և այլ բեմադրությունները։ «Ոզնի» երգիծաթերթի հրատարակման առաջին տարվանից նրա էջերում, ինչպես նաև այլ պարբերականներում, տպագրել է հարյուրավոր ծաղրանկարներ։ Վերջին տարիներին մղվել է դեպի գեղանկարչությունը, ստեղծել մեծարժեք մի քանի կտավներ։ Մամուլը բարձր է գնահատել մասնավորապես նրա «Կոմիտասը», «Հորովելը», «Ռեքվիեմ. 1915», «Յո երթաս», «Պայքար» և ազգային հերոս Անդրանիկը։

ՊՈՅԱՃՅԱՆ ԲՅՈՒԶԱՆԴ *(1852—1933).*— Խմբագիր, կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը։ 1870-ական թվականների վերջերից հրապարակախոսական հոդվածներով աշխատակցել է պոլսահայ մամուլին։ Միաժամանակ «Մասիս» թերթի խմբագրությունում աշխատելուց հետո խմբագրել է «Լույս» պարբերականը, որի էջերում տպագրած հոդվածների համարձակ բովանդակությունից վախենալով, «Լույսի» արտոնատեր Հմայակ եպ. Դիմաքսյանը ետ է վերցրել թերթը նրանից։ 1890-ական թվականների վերջերից կապվել է «Բյուզանդիոն» օրաթերթի հետ։ Հետագայում հիմնել է իր հրատարակությունը, տպագրել մի շարք դասագրքեր, որոնցից մի քանիսը ինքն է կազմել, ինչպես՝ «Տնական և գործնական քերականություն աշխարհիկ լեզվի» (Կ. Պոլիս, 1890)։ Ունեցել է կրթական, մանկավարժական բեղուն գործունեություն։ Ֆրանսերենից թարգմանել է մի շարք վեպեր, որոնք որպես թերթոն տպագրվել են պոլսահայ թերթերում։ Օգտագործել է խարազան, Մտրակ ծածկանունները։

ՊՈՂՈՍՅԱՆ ՀԱԿՈԲՈՍ *(1808—1883).*— Բանաստեղծ, բառարանագիր։ Ծնվել է Անկարայում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Վիեննայի Մխիթարյանների վանքում, դարձել այդ միաբանության անդամ։ Վարել է հոգևորական, կրթական պաշտոններ։ 1855 թ. ընտրվել է նույն միաբանության արքեպիսկոպոս։ Ունեցել է բառարանագրական նկատելի գործունեություն։ Տարբեր լեզուներից հայերեն և հայերենից այլ լեզուներ կազմել է և հրատարակել մի քանի աշխատություն, ինչպես՝ «Քերականություն իտալական լեզվի» (Վիեննա, 1836), «Համառոտ բառարան ի հայ և ի տաճիկս» (1838), «Բառարան համառոտ ի տաճկականն ի հայ» (հատ. բ.) (1841), «Տաճկերեն-հայերեն բառարան» (1858) և այլն։

ՊՈՂՈՍՊԱՅԱՆ ԼՈՒԻԶԱ *(ծն. 1936).*— Օպերային երգչուհի։ Ծնվել է Բելգիայում, որտեղ ստացել է կրթությունը։ 1959 թ. ավարտել է Բելգիայի կոնսերվատորիան, ամուսնացել է նույնպես Պողոսպայլյանի հետ։ Օրիորդական ելույթներ ազգանունը փոխել է Պողոսպայլյանի։ Ձայնը մշակել է Միլանում։ 1960 թ. Բելգիայում կազմակերպված վոկալիստների մրցույթում շահել է էլիզաբեթ թագուհու մրցանակը, արժանացել բելգիական մամուլի ջերմ գնահատանքի։ Հաջորդ տարի տեղի ունեցած մի մրցույթում էլ շահել է արծաթե մրցանակ։ Այնուհետև շրջագայել է մի շարք երկրներում, երգել է Լոնդոնի «Քովենդ գարդեն», Փարիզի «Գրանդ օպերա», Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» օպերային թատրոններում։ 1967 թվականից պայմանագրով երգել է Համբուրգի օպերային թատրոնում։ Երգել է նաև Հռոմում, Վիեննայում, Մյունխենում, Բեռլինում, Մոնրեալում և այլ քաղաքներում։ Օպերային իր նախասիրած

գերերից են՝ Ենուքա (համանուն օպերայում), Դեղդեմոնա («Օթելլո»)։ Համերգային ծրագրում լայն տեղ է տալիս հայ կոմպոզիտորների ստեղծագործություններին (Կոմիտաս, Եկմալյան, Կանաչյան, Խաչատրյան և այլն)։ 1968 թ. մարտ ամսին այցելել է Հայաստան, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում հանդես եկել «Օթելլո», «Տրուբատուր» օպերաներում։

ՊՈՉԱՊԱՅԱՆ ՆՈՒՊԱՐ-ՀՈՎՀԱՆՆԵՍ (ծն. 1935).— Թատերական նկարիչ։ Ծնվել է Բեյրութում (Լիբանան)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Միլանում (Իտալիա), 1960—1964 թթ. սովորել է Բրերայի գեղարվեստների Ակադեմիայում։ Մասնակցել է մի շարք ցուցահանդեսների։ Իսկ 1965 թ. Միլանում ունեցել է անհատական ցուցահանդես, Որպես նկարիչ աշխատել է Համբուրգի թատրոնում, որտեղ, ինչպես և Բրյուսելում, ձևավորել է բազմաթիվ բեմադրություններ։

ՊՈՂԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1897—1975).— Բանաստեղծ, կրթական գործիչ, խմբագիր։ Ծնվել է Այնթապում։ Կրթությունն ստացել է Ծննդավայրի Վարդանյան կրթարանում և Կիլիկյան ճեմարանում, որտեղ սովորել է 1912—1915 թթ.։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Սիրիայում ունեցել է հասարակական գործունեություն, զբաղվել որբահավաքման գործով։ 1929—1957 թթ. 28 տարի որպես տնօրեն պաշտոնավարել է Հալեպի կրթասիրաց վարժարանում։ 1962—1971 թթ. խմբագրել է «Հայ Այնթապ» եռամսյա պարբերականը։ 1950—1957 թթ. եղել է «Բուրաստան» երկամսյա հանդեսի խմբագրության անդամներից։ 1973 թ. լույս է տեսել նրա «Ցեղասպան Թուրքը» գիրքը, 1974-ին «Այնթապականք» գրքի Ա. հատորը, ապա Բ. հատորը։

ՊՈՂԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ (ծն. 1904).— Բանաստեղծ։ Ծնվել է Այնթապում։ Կրթությունն ստացել է Երուսաղեմի ս. Հակոբա վանքի վարժարանում, ընդունել է հոգևորական կոչում, դարձել այդ միաբանության անդամ։ Ունեցել է գրական-բանասիրական գործունեություն։ Աշխատակցել է այդ միաբանության պաշտոնաթերթ «Սիոն» ամսագրին և այլ պարբերականների։ Կազմել է Երուսաղեմի հայոց ս. Հակոբա վանքի ձեռագրերի ցուցակը, որի 1—9 հատորները լույս են տեսել 1966—1979 թթ.՝ «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց» ընդհանուր խորագրով։ Առանձին գրքերով լույս ընծայած մյուս աշխատություններն են՝ Հովհ. Թլկուրանցու «Տաղագիրքը» (1958), «Հայ գրողներ (ԺԺ դար)» (1971), Գրիգոր Ակներցու «Թաթարաց պատմությունը» (1974)։

ՊՈՂՈՍ (16—17-րդ դդ.).— Քարգործ վարպետ։ Նրա քանդակած երկու խաչքարերը ամրացված են եղել Արցախի Դաղի վանքի գլխավոր տաճարի արևմտյան պատին։

ՊՈՂՈՍ ԱԴՐԻԱՆԱՊՈԼՍԵՑԻ (?—1853).— Մատենագիր. հոգևորական գործիչ։ Ապրել է 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի առաջին կեսին։ Ծնվել է Ադրիանապոլսում (Էդիրնե, Թուրքիա), Թուրքախոս ընտանիքում։ 28 տարեկանից հետևել է ուսման, սովորել հայերեն, ապա՝ արաբերեն, պարսկերեն։ Ապրել է Եգիպտոսում, Իրաքում. ապա մեկնել է Երուսաղեմ, ընդունել հոգևորական կոչում, դարձել Երուսաղեմի հայոց պատրիարքի քարտուղարը։ 1814 թ. եկել է Էջմիածին, ձեռնադրվել Եպիսկոպոս։ 1815 թ. ընտրվել է Կ. Պոլսի պատրիարք, պաշտոնավարել մինչև 1823 թ.։ Հաջորդ տարվանից նորից աշխատել է Երուսաղեմում։ Ունեցել է մատենագրական կրթական գործունեություն։ Գրել է կրոնական երկեր, որոնցից է նրա «Զանազանութիւն հինգ դարուց» հայատառ թուրքերեն գիրքը, բաղկացած մի քանի հատորից։ (Ա. հատ. Երուսաղեմ, 1838, բ. հատ. 1839, գ. հատ. 1840)։ Այդ գրքի բ. տպագրությունը կատարվել է Երուսաղեմում, 1840 թ.։ Հետագայում Երիմյան կաթողիկոսի առաջարկով թարգմանվել է հայերեն։ Սրանցից բացի ունի տպագրված հետևյալ երկերը՝ «Թանգարան խրատու» (հատ. Ա.՝ «Օգուտն առաքինութեանց», Կ. Պոլիս, 1824, հատ. բ.՝ «Վասն մոլութեանց», 1924) և այլն։

ՊՈՂՈՍ ԱԿՆԵՐՑԻ ԿԱՄ ԿԻԼԻԿԵՑԻ (14-րդ դ).— Մատենագիր։ Կրթությունն ստացել է Կիլիկիայի Ակներ վանքում, որտեղից մեկնել է Գլաձոր, սովորել Եսայի Նշեցու մոտ։ Դարձել է այդ վանքի աչքի ընկնող ուժերից մեկը։ Նկարագրել է մի Ավետարան, 1313 թ., որն այժմ պահվում է Երևանի Մատենադարանում, մի Ավետարան էլ նկարագրել է 1314 թ.։

ՊՈՂՈՍ ԱՐԶԲՈՒՄՅԻ (18-րդ դ.).— Մատենագիր։ Գրել է «Հիմն և պատճառ որոշման եկեղեցւոյն հայոց ի Հռոմայ եկեղեցւոյն» և «Վասն հաւատոյ ընդդէմ Հռոմոց» դավանաբանական երկերը։

ՊՈՂՈՍ ԳԱՌՆԵՑԻ (15-րդ դ.).— Հոգևորական, կրթական գործիչ։ Աշակերտել է Գրիգոր Տաթևացուն։ Վարել է հոգևորական բարձր պաշտոններ։ Եղել է Երուսաղեմի հայոց պատրիարք, զարկ է տվել կրթական, մշակութային կյանքին։ Արտագրել է տվել մի քանի ձեռագիր։ 1423 թ. Սիս քաղաքում կառուցել է մի վանք, դարձրել գրչագրական կենտրոն։ Այնտեղ ուսուցանել է հիմնականում Արևելքից բերված աշակերտներին։ Լատինամոլ հոգևորականները թունավորել են նրան և սպանել 1430 թ.։

ՊՈՂՈՍ ԳԻՒՂ (13-րդ դ.).— Գրիչ, մանրանկարիչ։ Եղել է Արքայակաղնի վանքի միաբան։ Զբաղվել է ձեռագրեր արտագրելով և ծաղկելով։ 1284 թ. Կոստանդին քահանայի համար արտագրել և նկարազարդել է մի Ավետարան։

ՊՈՂՈՍ ԳՊԻՐ (17-րդ դ.).— Մանրանկարիչ։ Նկարազարդել է 1691 թ. գրված մի Ավետարան։

ՊՈՂՈՍ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ (18-րդ դ.).— Տաղերգու։ Հորինել է հայերեն և հայատառ թուրքերեն բազմաթիվ տաղեր, մեծ մասամբ խրատական, կրոնաբարոյախոսական բովանդակությամբ։

ՊՈՂՈՍ ԿԱՂՁՎԱՆՑԻ (18-րդ դ.).— Մատենագիր, տաղերգու։ Գրել է «Կոտակ Աւագ ուրբաթու» և «Պատմութիւն Զաքարիա պատրիարքի Կ. Պոլսոյ» երկերը, ինչպես նաև հայերեն և հայատառ թուրքերեն երգեր, որոնցից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանում։

ՊՈՂՈՍ ԿՈՍՏԱՆԴԻՆ.— Երաժշտագետ։ Ընտրվել է Ռումինիայում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Բուխարեստի «Զիփրիան Փորումբեսկու» կոնսերվատորիայում, որի երաժշտագիտական բաժինն ու Բուխարեստի համալսարանի անգլերեն լեզվի բաժինն ավարտելուց հետո չորս տարի աշխատել է Թիմիշոարայի «Բանաստուր» ֆիլհարմոնիայում որպես քարտուղար, 1964-ից աշխատել է Ազգագրության և բանահյուսության ինստիտուտում, իսկ 1969-ից՝ Բուխարեստի արվեստի պատմության ինստիտուտում որպես գիտաշխատող։ Այդ ինստիտուտի հրատարակությամբ լույս տեսնող «Արվեստի պատմության ուսումնասիրություններ ու հետազոտություններ» պարբերականում տպագրել է երաժշտագիտական հետազոտություններ, ինչպես՝ «Համաշխարհային երաժշտությունը 19-րդ դարի հայտագրով» աշխատությունը։ Հարյուրից ավելի հոդվածներ է տպագրել ռումինական մասնագիտական պարբերականներում։ Պատրաստել է երկհատոր մի աշխատություն, նվիրված ռումինացի կոմպոզիտոր Ջորջե Էնեսքուին։ Մի մենագրություն էլ ունի անգլիացի կոմպոզիտոր Հենրի Պերսելի մասին։ Զբաղվել է նաև Արամ Խաչատրյանի «Սպարտակ», «Գայանե» բալետներով, ինչպես և Ալան Հովհաննեսի, Կոմիտասի ստեղծագործություններով։

ՊՈՂՈՍ ՂԱՐԱԴԱՂՑԻ (18—19-րդ դդ.).— Մանկավարժ։ Կրթությունն ստացել է Տաթևի վանքում, դարձել այդ միաբանության անդամ։ Ունեցել է մանկավարժական երկարամյա գործունեություն։ Ներսես կաթողիկոսի հրավերով 1816 թ. եկել է Թիֆլիս, որտեղ Տաթևի թաղամասի վանքարանում բաց է արել դպրոց։ Այդ դպրոցում են սովորել Խաչատուր Աբովյանը, Ստեփանոս Նազարյանը և ուրիշներ։ 1824 թ., երբ բացվել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, տեղափոխվել է այնտեղ՝ իր հիսուն աշակերտներով, պաշտոնավարել երկու տարի։ 1827 թվականից աշխատել է Շուշիի Ավետարանական ընկերության դպրոցում, ապա՝ Էջմիածնի ժառանգավորաց դպրոցում, որտեղ էլ նրան աշակերտել է Մեսրոպ Թաղիադյանը։ Կյանքի վերջին տարիներին պաշտոնավարել է Ագուլիսում։ Համարվել է ժամանակի հմուտ մանկավարժներից։

ՊՈՂՈՍ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ (10-րդ դ.).— Ճարտարապետ։ Նրա նախագծով է կառուցվել Վրաստանի Գորի քաղաքի մոտակայքում գտնվող Սբ Են գյուղի Սիոնի եկեղեցին, որը նման է Հռիփսիմեի վանքին։

ՊՈՂՈՍ ՄԵԼՏԵՆՅԻ (16-րդ դ.).— Մաղկող։ Եղել է Երից մանկանց վանքի եպիսկոպոսներից։ Այդ վանքում 1582 թ. նկարազարդել է մի «Հայսմավուրք», իսկ 1586 թ.՝ Մելիտինեի (այժմ՝ Մալաթիա) Մոշակա գյուղում ընդօրինակել ու նկարազարդել է մի Ավետարան, որը պահվում է Երևանի Մատենադարանում, 9584 թվահամարի տակ։

ՊՈՂՈՍ ՄՈԿԱՑԻ *(17-րդ դ.).*— Կրթական գործիչ։ Ծնվել է Մոկաց աշխարհի Բար գյուղում։ Կրթությունն ստացել է Վանի Վարագա վանքում։ Ունեցել է կրթական, մանկավարժական երկարամյա գործունեություն։ Շոռոթում և Աստապատում բաց է արել դպրոցներ։ Հալածվել է Մելիքսեթեկ կաթողիկոսի կողմից, դադարեցրել է կրթական աշխատանքը, քաշվել Մեծ անապատ վանքը, որտեղ վախճանվել է 1621 թ.։

ՊՈՂՈՍ ՆԱԽԻՋԵՎԱՆՑԻ *(17-րդ դ.).*— Մատենագիր։ Եղել է Նախիջևանի եպիսկոպոսը՝ Շահ-Աբասի արշավանքների օրերին։ Գրել է վերջինիս ուղղված մի թուղթ՝ «Պատասխանի յաղագս հաւատոյ քրիստոնէից», որի ձեռագիրը պահվում է Նոր Ջուղայում։

ՊՈՂՈՍ ՏԱՂԱՍԱՑ *(13-րդ դ.).*— Գրել է կրոնական բովանդակությամբ տաղեր, որոնցից նմուշներ պահվում են Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում։

ՊՈՂՈՍ ՏԱՂԱՍԱՑ *(18-րդ դ.).*— Ապրել է Ալաշկերտում։ Գրել է մի տաղ՝ խանում Նահատակուհու մասին, որին սպանել են թուրքերը 1755 թ.։ Լույս է տեսել «Հայոց նոր վկաներ» ժողովածուում։ Մի տաղ էլ ունի «Տուի խնկեալ անուշահոտ» սկզբնատողով։

ՊՈՂՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ *(12-րդ դ.).*— Մատենագիր։ Եղել է Մուշի Ղազարու վանքի միաբաններից։ Մասնակցել է Սասնո իշխաններից Զորտուանելի հրամանով գրել է «Թուղթ ընդդէմ Թէոփիստէս հայ-հոռոմ փիլիսոփայի» երկը, 1101 թ.։ Հետագայում ընդարձակել է այն, դարձրել առանձին գիրք։ Տպագրվել է Կ. Պոլսում, 1752 թ.։ Գրել է նաև «Վերլուծութիւն կարգաց եկեղեցւոյ», «Ճառ յաղագս Քառասնորդաց պահոց», «Ճառ յաղագս Առաջաւորաց պահոց» երկերը։ Համարվել է ժամանակի զարգացած մարդկանցից, կոչվել «մեծ իմաստասէր», «երկրորդ Լուսավորիչ»։

ՊՈՂՈՍ ՏԻՎՐԻԿԵՑԻ *(18-րդ դ.).*— Տաղերգու։ Գրել է տաղեր, որոնցից նմուշներ՝ «Զարթիր, ակր իմ», «Ի հրեշտակաց», «Ի սուրբ երկիրս» և այլն, պահվում են Երևանի Մատենադարանում։

ՊՈՂՈՍ ՓԱԼԲԹԼԵՑԻ *(19-րդ դ.).*— Աշուղ։ Ծնվել է Ամասիայի գավառի Փալբթիլը գյուղում։ Երիտասարդ տարիքից նվագել է ջութակ։ Հորինել է խրատական, երգիծական երգեր, որոնք կատարել է ջութակի նվագակցությամբ։ Շրջագայել է Թուրքիայի մի շարք քաղաքներում, եկել է նաև Կովկաս, եկել Երևանում։ Նրա երգերից մի նմուշ տպագրված է «Հուշամատյան պանտական Ամասիա» գրքում (Վենետիկ, 1966)։ Ենթադրվում է, որ վախճանվել է 1910-ական թվականներին։

ՊՈՂՈՍ ՔԱՀԱՆԱ *(18-րդ դ.).*— Մատենագիր։ Գրել է «Հրկիզութիւնք ի Կ. Պոլիս», «Հրաշագործութիւն ի ժամանակս Զաքարիա պատրիարքի», «Անուանք աշակերտաց Զաքարիա պատրիարքի», «Պատերազմ օսմանցւոց ընդ Ռուսաց և ընդ գերմանացւոց» երկերը։

ՊՈՂՈՍ ՔԱՍՏՈՂԱՆՑԻ *(16-րդ դ.).*— Ծաղկող։ Ապրել և գործել է Կեսարիայում, որտեղ 1552 թ. արտագրել և ծաղկել է մի Ավետարան, կատարել մոտ 200 լուսանցազարդեր, թռչնագիր սկզբնատառեր։

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՇՈՏ *(ծն. 1922).*—Օպերետային դերասան։ Ծնվել է Բաքվում։ Նախնական կրթությունն ստացել է տեղի հայկական դպրոցներից մեկում։ Ապա նրանց ընտանիքը տեղափոխվել է Թավրիզ (Իրան), որտեղ հետևել է երաժշտության։ Երգել է Թեհրանում գործող «Կոմիտաս» երգչախմբում։ Այնուհետև խաղացել է իրանահայ թատերախմբերում։ Մասնակցել է հայկական օպերետային ներկայացումներին, կատարել է հետևյալ դերերը՝ Ջումշուդ («Ղարաբաղի մելիքները»), Սարո («Անուշ»), Ղարիբ («Աշուղ Ղարիբ»), Սայաթ-Նովա (հանրային օպերայում), Ասկյար և Սուլեյման բեկ («Արշին մալ ալան») և այլն։

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ *(ծն. 1922).*— Գրող։ Ծնվել է Հաղբատի շրջանի Խծաբերդ գյուղում (Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ)։ Կրթությունն ստացել է ծննդավայրի մանկավարժական ուսումնարանում, ավարտել 1941-ին։ Հետագայում տեղափոխվել է Երևան, շարունակել ուսումը Երևանի պետական համալսարանում։ 1958—1960 թթ. սովորել է Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի գրական դասընթացներում։ Ավարտելուց հետո մինչև 1967 թ. աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում որպես խմբագիր, 1967—1971 թթ.՝ Հայկական ԽՍՀ մամուլի պետական կոմիտեում, ապա՝ «Հայաստան» հրատարակչությունում։ Գրել է արձակ և չափածո

երկեր, ռուսերենից կատարել թարգմանություններ։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Փոթորկից հետո» (Երևան, 1955), «Պոեմներ» (1967), «Արյունոտ լուսաբաց» (1969), «Կապույտ հանդրվան» (1972), «Հիմն հողի և արևի» (1975), «Հրաժեշտ անցյալին» (վեպ) (1978), «Հորովել» (բանաստեղծություններ) (1980), «Բանաստեղծություններ և պոեմներ» (1983)։ Թարգմանություններ՝ Տվարդովսկի՝ «Վասիլի Տյորկին» (1965), Վ. Թելեթելյան՝ «Գրանիտը չի հալվում» (վեպ) (1966), Ա. Բլոկ՝ «Լիրիկա» (1968), Անթեոս Պետրոս՝ «Բյուրեղապակյա քաղաք» (պոեմ) և այլն։

ՊՈՂՈՍՅԱՆ ԲԱՋԻԼ (ԲԱՐՍԵՂ) *(ծն. 1900).*— Նկարիչ։ Ծնվել է Կեսարիայում (Թուրքիա)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Կ. Պոլսի գեղարվեստների վարժարանում, ապա կատարելագործել է Փարիզում, 1927 թ.։ Հիմնականում ստեղծել է ջրաներկի գործեր, որոնք ցուցադրվել են տարբեր ցուցահանդեսներում, 1931 թ. անհատական ցուցահանդես է ունեցել Փարիզի Դրան Պալե սրահում, հետագայում «Շանթ» պատկերասրահում։ Ֆրանսիական մամուլը հաճախ է անդրադարձել նրա գործերին և դրվատանքով արտահայտվել։ Բնանկարներ ունի Կ. Պոլսից, Անգլիայից, Բելգիայից, Ֆրանսիայից։

ՊՈՂՈՍՅԱՆ ԴԱՎԻԹ *(ծն. 1911).*—Օպերային երգիչ։ Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ (1947)։ Ծնվել է Թբիլիսում, որտեղ ստացել է նախնական կրթությունը։ Պատանի հասակից երգել է Թբիլիսի Հայարտաս երգչախմբում։ 1932 թ. եկել է Երևան, սովորել կոնսերվատորիայում, ապա երգել նախ պետական օպերայի երգչախմբում, ապա հանդես է եկել առանձին դերերգերով, աստիճանաբար հասնելով պատասխանատու դերերի։ Թատրոնը գործուղել է նրան Մոսկվա՝ Հայկական կուլտուրայի տանը կից երաժշտական դրամատիկական ստուդիայում մշակելու ձայնը։ Վերադառնալով Երևան, ավելի քան երեք տասնամյակ է, որ երգում է Երևանի օպերայի և բալետի թատրոնում, կերտելով դասական մի շարք կերպարներ՝ Նազիր շահ («Այմասա»), Ամոնասրո («Ախդա»), Մեֆիստոֆել («Ֆաուստ»), Արքա Ռենե («Ռոլանդա»), Դոն Բազիլիո («Սևիլյան սափրիչ»), Մոսի («Անուշ»), Նիլականթա («Լակմե») և այլն։ Հայֆիլմի նկարահանած «Կարինե» ֆիլմում կատարել է Հորհոր աղայի դերերգը։ Ունեցել է նաև մանկավարժական գործունեություն։ Երկար տարիներ ղեկավարել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի օպերային դասարանը։

ՊՈՂՈՍՅԱՆ ԵՓՐԵՄ *(1897—1972).*— Բանաստեղծ։ Ծնվել է Ախալցխայի գավառի Խաշուտ գյուղում (այժմ՝ Վրացական ԽՍՀ) Տարրական կրթությունն ստացել է ծննդավայրում, ապա՝ 1910 թվականից սովորել է Վիեննայի Մխիթարյանների վանքում, 1921 թ. դարձել այդ միաբանության անդամ։ Զբաղվել է կրթական աշխատանքով և բանասիրությամբ։ Քսան տարի պաշտոնավարել է Բուլղարիայի Պլովդիվ քաղաքի Մխիթարյանների դպրոցում։ Այնտեղ աշխատելիս կազմել և հրատարակել է հայոց լեզվի դասագրքեր և այլ գրքեր։ 1948 թվականին վերադարձել է Վիեննա, աշխատել Մխիթարյանների վանքում։ «Հանդես ամսօրյա» պարբերականում տպագրել է բանասիրական բազմաթիվ հոդվածներ, որոնցից առավել ծավալունները լույս են տեսել նաև առանձին գրքերով։ «Ազգային մատենադարան» մատենաշարով, ինչպես՝ «Կարապետ Արթին փաշա Տավուտյան» (Վիեննա, 1949), «Գուլումճյան և Թընկըրյան գերդաստանները» (1951), «Նոր տարվա տոնը հին և նոր հայոց քով» (1952), «Ոսկան և Մարլյան գերդաստանները» (1953)։ «Հայ խմբագրուհիներ» (1953), «Համարձման տոնը և հայ ժողովրդի վիճակախաղը» (1956), «Ալլահվերդյան գերդաստանը» (1957), «Կեռչեյան գերդաստանը» (1961), «Պիլեզիկճյան գերդաստանը» (1963), «Տատյան գերդաստանը» (1968), «Պատմություն հայ մշակութային ընկերությունների» (հատ. Ա, 1957, հատ. Բ.՝ 1963, հատ. Գ.՝ 1969), «Պալյան գերդաստանը» (1972) և այլն։ Թողել է նաև ձեռագիր աշխատություններ, որոնցից է «Մխիթարյան վարժարաններու պատմությունը»։

ՊՈՂՈՍՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ *(ծն. 1900).*— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը, սովորել Կեդրոնական վարժարանում։ Բեմական ասպարեզ է մտել 1918 թ.։ Նախ խաղացել է պոլսահայ դրամատիկ թատերախմբում, ապա հիմնել է «Արևելյան թատրոն», «Նոր բեմ» թատերախմբերը և ներկայա-

ցումներ տվել Պոլսի գրեթե բոլոր թաղամասերում, ցուցադրել գերազանցապես մելոդրամաներ։ Խաղացել է նաև Ա. Պենկլյանի օպերետային խմբում և Ֆելեկյան քույրերի խմբում։ 1922 թ. մեկնել է Ամերիկա, ստեղծել թատերախումբ, գործել երկար տարիներ, շրջագայել հայաշատ մի շարք քաղաքներ։ Այնտեղ նա մասնակցել է Հ. Աբելյանի, Հ. Զարիֆյանի, Սուրբյան ամուսինների կազմակերպած ներկայացումներին։ 1927 թ. Ու. Հաջիբեկովի «Արշին մալ ալան» օպերետը հայերենից թարգմանել է հունարենի, բեմադրել հունական մի թատերախմբի ուժերով, ինքն էլ հունարեն լեզվով կատարել է Վեզիրի դերը։ Կատարել է մի քանի տասնյակ դերեր, թե ինքնուրույն և թե թարգմանական պիեսներում։ Հորինել է հայերեն ուրախ երգեր, որոնք վերցվել են ձայնապնակների վրա, տարածվել սփյուռքահայ գաղթօջախներում։ Դրանցից «Սուտ է, սուտ է» կատակերգը թարգմանվել է անգլերեն, հունարեն, արաբերեն։ Գրել է վոդևիլներ, որոնք բեմադրվել են իր կամ այլ թատերախմբերի կողմից։ Հաջողություն է ունեցել մասնավորապես «Կիներեն պետք չէ խաբվիլ» վոդևիլը։

ՊՈՂՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ (ծն. 1912).— Գրականագետ, թարգմանիչ։ Ծնվել է Ղլթամուր գյուղում (այժմ՝ Հայկական ԽՍՀ Աշտարակի շրջան, Ոսկեվազ)։ Բարձրագույն կրթություն ստացել է Մոսկվայում և Երևանում. 1950 թ. ավարտել է ԽՍՀՄ գրողների միության տարբեր գրականության բարձրագույն դասընթացները, իսկ 1959-ին՝ Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտը։ 1931—1936 թթ. աշխատել է որպես ուսուցիչ, հետագայում պաշտոնավարել է «Խորհրդային արվեստ», «Խորհրդային գրականություն» ամսագրերի, «Գրական թերթի» և «Խորհրդային Հայաստանի» խմբագրություններում, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերությունում, իսկ 1953-ից՝ «Հայաստան» հրատարակչությունում։ Մամուլում տպագրել է գրականագիտական հոդվածներ, թարգմանություններ։ Առանձին գրքերով լույս ընծայած գործերն են՝ «Վեպեր և կերպարներ» (խորհրդահայ արձակի քննական տեսություն, Երևան, 1961), «Երկու գրամա» (1978)։ Թարգմանություններ՝ Վ. Կոժինով, «Արվեստի տեսակները» (Երևան, 1962), Թուր Հեյերդալ, «Դրախտի որոնումները» (1965)։

ՊՈՂՈՍՅԱՆ ՀԱԿՈԲ (1890—?).— Հոգեբան, բանաստեղծ։ Ծնվել է Կիլիկիայում։ Հայկական նախնական կրթությունն ստացել է Հաճընում, ապա շարունակել է ուսումը Տարսոնի և Կոնիայի ամերիկյան դպրոցներում։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին մեկնել է Ամերիկա, սովորել Կոլումբիայի համալսարանում, ավարտել է 1917-ին՝ փիլիսոփայության դոկտորի աստիճանով։ 1920 թ. ընտրվել է Լոնդոնի աշխարհագրական ընկերության անդամ՝ անգլերեն լեզվով հրատարակած աշխատությունների համար։ Մոտիկից կապված է եղել հայ կյանքին։ Առանձին գրքերով հրատարակած և հայ իրականության հետ կապված աշխատություններն են՝ «Հայ ցեղը և հայածանքները հոգեբանության լույսի տակ», «Ռամկավարության ոգին կամ անհատականության զարգացումը», «Հաճընի ընդհանուր պատմությունը»։ Նրա ամենածավալուն երկասիրությունն է «Ներածություն հայ հոգեբանության» գիրքը, բաղկացած մոտ 1000 էջից, որը լույս է տեսել Կահիրեում, 1958 թ.։

ՊՈՂՈՍՅԱՆ ՀԱՅԿԱՆՈՒՇ (ծն. 1924).— Պատմաբան. պատմական գիտությունների դոկտոր (1972)։ Ծնվել է Երևանում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, որի պատմության ֆակուլտետն ավարտել է 1948-ին։ 1957—1975 թթ. վարել է կուսակցական և պետական տարբեր պաշտոններ։ 1975—1979 թթ. եղել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ռեկտոր՝ 1979-ից՝ Հայկական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի նոր և նորագույն պատմության բաժնի ավագ գիտաշխատող։ Զուգահեռ ունեցել է դասախոսական գործունեություն։ Պատմական առարկաներ է դասավանդել Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում։ Առանձին գրքերով հրատարակած առավել ծավալուն գիտական հետազոտություններն են՝ «Հայաստանի Լենինյան կոմերիտմիության պատմությունից» (Երևան, 1961), «Զեյթունի պատմությունը» (1969), «Մասունի պատմությունը» (1985) և այլն։

ՊՈՂՈՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ՀԱՏԻԿ) (ծն. 1917).— Նկարիչ. Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ։ Ծնվել է Երևանում, որտեղ ստացել է կրթությունը, նվիրվել միկրոգրավյուրայի և մոզայիկի արվեստին։ 1947-ից մասնակցել է հանրապետական և միութենական ցուցահանդեսների՝ բրնձի հատիկի վրա կատարած նուրբ փորագրական գործերով։ 1959-ին ժողովրդական տնտեսության զարգացման ցուցահանդեսում արժանացել է մրցանակի։ Խճանկարային լավագույն գործերից են՝ «Մարտիրոս Սարյան», «Հովհաննես Թումանյան», «Ավետիք Իսահակյան», «Եղիշե Չարենց» և այլն։ Վերջին տարիներին աշխատել է էլեկտրոշաղափի մեքենաների ինստիտուտում որպես նկարիչ-կոնստրուկտոր։ Նրա ձեռագործած մեքենաներից են՝ «Աբաքաս», «Նաիրի», «Հրազդան» և այլ մեքենաներ։

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՄԱՅԱԿ (ծն. 1909).— Ճարտարապետ. Հայկական ԽՍՀ վաստակավոր շինարար (1967)։ Ծնվել է Թիֆլիսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, որն ավարտել է 1937-ին։ Նրա նախագծերով հանրապետության տարբեր վայրերում կառուցվել են արդյունաբերական մի շարք մասնաշենքեր, ինչպես Երևանի էլեկտրատեխնիկական գործարանի գլխավոր մասնաշենքը (1956-ից), հացի № № 2 և 5 գործարանների համալիրները, Ձերժինսկու անվան հասատոցաշինական գործարանի վարչական մասնաշենքը (ճարտարապետ Վ. Աճեմյանի հետ, 1955-ից), Կիրովականի քիմիական մանրաթելի գործարանի 2-րդ հերթը (ճարտարապետ Բ. Հարությունյանի հետ, 1971-ից), էշմիածնի գինու գործարանի գլխավոր մասնաշենքը (1954-ից) և այլն։

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1889—1972).— Հրապարակախոս-խմբագիր, գրող։ Ծնվել է Կեսարիայում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Ծննդավայրի Կյոմյուշյան և Ս. Կարապետի վարժարաններում, ավարտել 1904 թ.։ Որպես ուսուցիչ պաշտոնավարել է Նեվշեհիր, Կոնիա, Աֆիոն Կարահիսար քաղաքների հայկական դպրոցներում։ 1908 թվականից աշխատել է Կ. Պոլսի «Արևելք», «Հայրենիք», «Ժամանակ», «Լուսաբաձակ» թերթերի խմբագրություններում։ 1919—1920 թթ. խմբագրել է Կ. Պոլսի «Ժողովուրդի ձայն» օրաթերթը, իսկ 1923-ից՝ Փարիզի «Ապագա» թերթը։ 1930 թ. այցելել է Խորհրդային Հայաստան, վերադարձին լույս ընծայել «Երկու ամիս Հայաստանի մեջ» հայրենաշունչ տպավորություններ։ 1932-ից խմբագրել է Կահիրեի «Արև» օրաթերթը, ապա Փարիզի «Այսօրը»։ Դեռևս 1912-ին Կ. Պոլսում լույս է ընծայել «Ստեվիա» վիպակը, 1914-ին «Միրաժներուս համար» արձակ բանաստեղծությունների ժողովածուն, 1920-ին՝ «Փոթորկի երգեր» բանաստեղծությունների ժողովածուն, 1934-ին՝ «Արդի Հայաստանը» դասագիրքը, ավելի ուշ՝ «Ինչպես գտա Ամերիկան» գիրքը։

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1895—1948).— Կրթական, մշակութային գործիչ, խմբագիր։ Ծնվել է Թիֆլիսում։ Կրթությունն ստացել է Ներսիսյան դպրոցում և Էջմիածնի Գեորգյան ճեմարանում։ Աշխատել է Թիֆլիսում։ 1917 թ. ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը։ 1921—1924 թթ. վարել է կուսակցական, ուսուցչական պաշտոններ։ 1932 թ. խմբագրել է «Պրոլետար» թերթը։ 1934 թ. տեղափոխվել է Հայաստան, նշանակվել «Խորհրդային Հայաստան» օրաթերթի խմբագիր։ Եղել է Լուսավորության ժողովրդական կոմիսար, Արվեստի գործերի վարչության կոմիտեի պետ, ռադիոկոմիտեի նախագահ, իսկ 1946—1948 թթ.՝ Երևանի պետական համալսարանի ռեկտոր։ Ունեցել է մանկավարժական բեղուն գործունեություն։ Երկար տարիներ դասախոսել է Թիֆլիսի և Երևանի պետական համալսարաններում և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում։

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՓՍԻՄԵ (1899—1972).— Բանաստեղծուհի։ Ծնվել է Թիֆլիսում, մանկավարժ Մ. Ասիլյանի ընտանիքում։ Միջնակարգ կրթությունն ստացել է Թիֆլիսի 3-րդ գիմնազիայում, ապա սովորել է Անդրկովկասյան համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետում, սակայն չի ավարտել՝ այդ համալսարանի փակման պատճառով։ Գրական ասպարեզ է մտել 1918 թ.։ Սկզբում գրել է ռուսերեն բանաստեղծություններ, որոնցից մեկը տպագրվել է 1919-ին՝ «Ցեխ պոետով» գրական կազմակերպության «Ակմե» ժողովածուում։ Հետագայում արդեն գրել է հայերեն բանաստեղծություններ, որոնք 1930-ական թվականների սկզբներին լույս են տեսել Թիֆլիսում հրատա-

բակվող «Մանկական ծիլեր» ամսագրում և առանձին ժողովածուներով, ինչպես՝ «Բանաստեղծություններ» (1930), «Մեռաքս» (1931), «Մեքենաների երգը» (1932)։ 1934 թ. տեղափոխվել է Երևան։ 1937—1938 թթ. եղել է Հայաստանի խորհրդային գրողների միության մանկական սեկցիայի նախագահը։ 1936—1948 թթ. լույս է ընծայել մանկական մի քանի գրքույկներ։ Հետագա տարիներին առանձին գրքերով լույս ընծայած երկերից են՝ «Բանաստեղծություններ» (Երևան, 1950), «Հավատարմություն» (1954), «Անձրևից հետո» (1958), «Անթառամը» (1961), «Աստղային ճամփորդը» (1963), «Երեկո» (1966), «Արձագանք» (հետմահու, 1973) և այլն։ Ռուսերեն լույս ընծայած գրքերն են՝ «Մեր փողոցը» (Երևան, 1952), «Հավատարմություն» (1956), «Հարազատ մարդիկ» (Մոսկվա, 1960)։ Ռուսերենից կատարել է թարգմանություններ, որոնցից առավել ծավալուններն են՝ Պուշկին, «Հեքիաթներ, բանաստեղծություններ, արձակ էջեր» գրքի մեջ մտնող գործերի մի մասը (Երևան, 1937), Ն. Գրիբաչև, «Գարունը «Պորեդայում» (1950), Լոպե-դե Վեգա, «Սևիլիայի աստղը» (1959) և այլն։

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ (ծն. 1935).— Ճարտարապետ. Հայկական ԽՍՀ վաստակավոր ճարտարապետ (1975)։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, որի ճարտարապետության բաժինն ավարտել է 1959-ին։ 1965 թվականից աշխատել է «Հայպետնախագիծ» ինստիտուտում, 1980-ից որպես արվեստանոցի ղեկավար։ Համահեղինակակից է մի շարք շենքերի նախագծումների, ինչպես՝ Երևանի «Ռոսիա» կինոթատրոնի (1970—1974), Երիտասարդական պալատի (1979), Մարզահամերգային համալիրի (1978), ԽՍՀՄ կինեմատոգրաֆիայի ստեղծագործական տան (1974-ից) և այլն։ Նրա նախագծով կառուցվել է բնակելի թաղամաս Գորիսում։

ՊՈՂՈՍՅԱՆ ՆՈՒՆՈՒՖԱՐ (1895—1982).— Նկարչուհի։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է հայկական կրթությունը, սովորել էսայան վարժարանում։ 1915 թ. մեկնել է Ամերիկա, մասնագիտական կրթություն ստացել Պասատինայի (Կալիֆոռնիա) գեղարվեստների կոլեջում, սակայն նկարել սկսել է շատ ուշ, 65 տարեկանից հետո։ Մասնակցել է մի շարք ցուցահանդեսների, լայն ճանաչում ձեռք բերել Ամերիկայում և Եվրոպայում։ Նկարել է իր մանկական տպավորությունների հետ կապված մարդկանց և տեսարաններ, նաև հայ ժողովրդի տառապանքը արտահայտող գործեր, ինչպես «Սեազգետա տատիկը», «Կոմիտաս վարդապետի մանկությունը», տեսարաններ Կ. Պոլսից և այլն։ 1972 թ. նրա գործերը ցուցադրվել են նաև Երևանում և բարձր գնահատվել մեր մամուլում։

ՊՈՂՈՍՅԱՆ ՊՈՂՈՍ (ծն. 1924).— Լեզվաբան։ Ծնվել է Գորիսի շրջանի Տաթև գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում։ 1956-ից դասավանդում է Երևանի պետական համալսարանում։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Բալի եղանակային ձևերի ոճական կիրառություններն արդի հայերենում» (Երևան, 1959), «Հայոց լեզու. օժանդակ ձեռնարկ բուհ ընդունվողների համար» (1969, բ. տպ. 1976), «Հռետորական արվեստի մասին» (1974), «Ոճագիտական ըմբռնումների ծագումն ու զարգացումը հին Հունաստանում և Հռոմում» (1975), «Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան» (հեղինակակից) (1975), «Հայոց լեզվի հանգաբառարան» (հեղինակակից) (1976) և այլն։

ՊՈՂՈՍՅԱՆ ՌԱԶՄԻԿ (ծն. 1937).— Գրող։ Ծնվել է Հայկական ԽՍՀ Սպիտակի շրջանի Քարաձոր գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, որի պատմության ֆակուլտետն ավարտել է 1969-ին։ 1961—1964 թթ. աշխատել է Կիրովականի № 6 տեխնիկական ուսումնարանում որպես դիրեկտորի տեղակալ, իսկ 1974-ից՝ աշխատել է Հայաստանի խորհրդային գրողների միության Կիրովականի բաժանմունքում որպես պատասխանատու քարտուղար։ Առանձին գրքերով լույս ընծայած ժողովածուներն են՝ «Գարնանային նվագներ» (Երևան, 1965), «Բանաստեղծություններ» (1974), «Մի ափ հող» (բանաստեղծություններ) (1980)։

ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ (1886—1946).— Հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Կեսարիայում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է ծննդավայրի ս. Կարապետի վանքում։ Ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատել է Կեսարիայում, Կանյայում, Բյութանիայում։ Պատերազմի տարիներին ծառայել է թուրքական բանակում։ Պատերազմից հետո մեկնել է Եգիպտոս, 1919 թ. Կահիրեում լույս է ընծայել «Տխուր գրվագներ» գիրքը։ 1923 թվականից բնակություն է հաստատել Փարիզում, զբաղվել լրագրությամբ։ Աշխատել է Փարիզի «Ապագա» թերթի խմբագրությունում։ Հրատարակել է «Արագած» շաբաթաթերթը։ 1941 թ. Փարիզում լույս է տեսել նրա «Թրքահայ սպայի մը օրագիրը» գիրքը, որտեղ ներկայացված է 1916 թ. հեղինակի կյանքի գրվագները թուրքական բանակում, կապված հայկական կոտորածների սարսափների հետ։ Այս գրքի Բ. հատորն էլ տպագրվել է 1947 թ.։

ՊՈՂՈՍՅԱՆ ՍԵՐՈԲ (1904—1983).— Պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Բիթլիսի վիլայեթի Սպարկերտ գավառի Վերին Հյուրուկ գյուղում, որտեղ ստացել է տարրական կրթություն։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նրանց ընտանիքը գաղթել է Արևելյան Հայաստան, բնակություն հաստատել Կոտայքի շրջանի Ելփնան գյուղում։ Միջնակարգ կրթությունն ստացել է Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան դպրոցում։ 1926—1931 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնում, ապա՝ Մանկավարժական ինստիտուտի պատմագրական ֆակուլտետում։ 1937-ից համալսարանում դասավանդել է հայ ժողովրդի պատմություն։ 1938—1941 թթ. վարել է համալսարանի պատմության ֆակուլտետի դեկանի և հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչի պաշտոնները։ Այդ տարիներին միաժամանակ եղել է Պատմության թանգարանի դիրեկտորը։ 1941—1946 թթ. ծառայել է խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո շարունակել է գիտա-մանկավարժական աշխատանքը համալսարանում։ 1956 թ. պաշտպանել է դոկտորական դիսերտացիա, 1959 թ. ստացել պրոֆեսորի կոչում։ 1955—1960 թթ. և 1964—1968 թթ. վարել է պատմության ֆակուլտետի դեկանի պաշտոնը։ Գիտական մամուլում և առանձին ժողովածուներում տպագրել է պատմագրական հոդվածներ։ Առանձին գրքերով հրատարակած առավել ծավալուն հետազոտություններն են՝ «Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դարերում» (Երևան, 1956), «Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի շրջանում», «Հայաստանը 13—17-րդ դարերում», «Հայաստանը 17—18-րդ դարերում» և այլն։

ՊՈՂՈՍՅԱՆ ՍՏԵՓԱՆ (ծն. 1932).— Պատմաբան։ Ծնվել է Թալինի շրջանի Ահագյի (այժմ՝ Զովասար) գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի պատմության ֆակուլտետն ավարտել է 1955-ին։ Վարել է կոմերիտական և կուսակցական պատասխանատու պաշտոններ։ 1970—1988 թթ. եղել է Հայկական ԽՍՀ հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի նախագահ, 1988-ից՝ Արմենպրեսի դիրեկտոր։ Մամուլում տպագրել է պատմագրական ծավալուն հոդվածներ։ 1988-ին հրատարակել է «Գոյատևման պայքարի քառուղիներում» աշխատությունը։

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՀԷ (ծն. 1944).— Լրագրող, արձակագիր։ Ծնվել է Երևանում։ 1970 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը։ 1970—1971 թթ. աշխատել է Կիրովականի «Կայծ» թերթի խմբագրությունում, ապա՝ «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», «Հայաստանի աշխատավորուհի», «Գարուն» ամսագրերի խմբագրություններում, իսկ 1974—1976 թթ. «Հայաստան» հրատարակչությունում։ Առանձին գրքերով հրատարակած երկերն են՝ «Կանգառում և սլացքի մեջ» (Երևան, 1972), «Ասպետի կացարանը» (1977), «Երկնային պատիժ» (1983), «Ճերմակ գառների ամառը» (1985)։

ՊՈՂՈՍՅԱՆ ՅՈՒԼԱԿ (1925—1978).— Լրագրող, թարգմանիչ։ Ծնվել է Վրացական ԽՍՀ Ախալքալակի շրջանի Զամդուրա գյուղում։ 1951—1957 թթ. սովորել և ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտը՝ հեռակա կարգով։ Վարել է կուսակցական պաշտոններ։ Եղել է «Հայաստանի ժողովրդական տնտեսություն» ամսագրի, «Խորհրդային մանկավարժ» խմբագրի տեղակալ, «Հայաստան» հրատարակչության թարգմանական գրականության խմբագրության վարիչ, Երևանի պոլիգրաֆկոմբինատի դիրեկ-

տոր։ Ռուսերենից կատարել է թարգմանություններ, որոնցից են է. Կրուտեն, «Գարնան որոնումներ» (1964), Գ. Մոլնար, «Մարթա» (վեպ, 1969), Թ. Կոնստանտին, «Կեսգիշերին կընկնի աստղը» (1969), Վ. Արզամասկի, «Հատուցում» (1971), Ալ. Զակովսկի, «Բլոկադա», հատ. 1—3 (1973, 1974, 1977), Ս. Դանգուլով, «Կուզնեցկի մոստ», գիրք 1—2 (1975—1976)։

ՊՈՂՈՍՅԱՆ ՕՆԻԿ (ծն. 1912).— Թատերական նկարիչ։ Ծնվել է Վանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի գեղարվեստական տեխնիկումում, ապա՝ Լենինգրադի Ի. Ռեպինի անվան գեղարվեստների ակադեմիայում, որն ավարտել է 1946-ին։ 1946—1947 թթ. աշխատել է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում, որտեղ ձևավորել է «Գնդի որդին», «Հատակում» պիեսները։ 1947 թվականից աշխատել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում որպես գծանկարի դասատու։ 1969-ից մասնակցել է ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են Վ. Անանյանի, Վ. Գալբատյանի, Ջուլհակուհու դիմանկարները, «Անասունների ջրելը», «Զկնորսներ», «Կիթ», «Ցամաքաբերդ» և այլն։

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՅՎԵՄՆԻԿ (ծն. 1909).— Քանդակագործուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ Դուստրն է գրավաճառ հրատարակիչ Վահան Զարդարյանի։ 1923 թ. ծնողների հետ տեղափոխվել է Կահիրե (Եգիպտոս), որտեղ հետևել է քանդակագործության՝ Կահիրեի գեղարվեստների ուսումնարանում։ Մասնակցել է մի շարք ցուցահանդեսների։ Լավագույն գործերից են իր հոր՝ Վահան Զարդարյանի արձանը՝ դրված Կահիրեի հայոց Մարմինայի գերեզմանատանը, Եղիշե Դուրյանի քանդակը՝ Երուսաղեմի հայոց վանքում և հայ ու օտար մի քանի ականավոր մարդկանց կիսանդրիները։ Ունեցել է նաև բեմական գործունեություն։ Մասնակցել է եգիպտահայ դրամատիկ թատերախմբի ներկայացումներին։ Հաջողությամբ հանդես է եկել «Պատվի համարում» Մարգարիտի դերում, «Նամուսում»՝ Սուսանի։

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԱ (ծն. 1942).— Կոմպոզիտոր։ Ծնվել է Բեյրութում (Լիբանան)։ Նախնական կրթությունն ստացել է Դամասկոսում (Սիրիա), իսկ մասնագիտականը՝ ավտորիացի ջութակահար Կառլ Հոլդոնիի մոտ։ 1959 թվականից սկսած ստեղծագործել է։ Հորինել է մի շարք երգեր, որոնք լայն ժողովրդականություն են վայելել արաբական երկրներում։ Իր երկերում նկատելի չափով օգտագործել է հայ ժողովրդական մեղեդին։ Նրա «Դեմուազել չա-չա-չան», «Հայկական չա-չա-չան» և այլ երգեր հաճախ են հաղորդվել Լիբանանի, Սիրիայի, Հորդանանի, Իրաքի, Եգիպտոսի ռադիոկայաններից։

ՊՈՅԱՃՅԱՆ ԳԵՎՈՐԳ (1944—1985).— Օպերային երգիչ. տենոր։ Ծնվել է Ստամբուլում (Թուրքիա)։ Փոքր հասակից երգել է հայկական եկեղեցիներում ու երգչախմբերում, իսկ 1962-ից՝ Ստամբուլի Քաղաքապետական երգչախմբում։ Առաջին անգամ որպես մենակատար հրաբացել է «Լուլիա գելամերմուր» օպերայում՝ 1968-ին։ Իր ձայնը մշակել է ականավոր երգիչ-մանկավարժների մոտ։ 1972-ին Թուրքական Արվեստի խորհրդի որոշմամբ նրան իրավունք է տրվել հանդես գալ պետական օպերայում որպես մենակատար։ Գլխավոր դերերգերով մասնակցել է «Դոն Պասկուալե», «Ռիգոլետտո», «Չիո Չիո սան», «Մանոն Լեսկո», «Դոն Ջովանի», «Ֆաուստ», նաև մի քանի թուրքական օպերաներում, տենորի գլխավոր դերերգերով՝ հանդես է եկել Կառլ Օրֆի «Կարմինա», «Բուրինա» և այլ օրաթորիաներում։ 1973-ին մասնակցել է Մալզբուրգի փառատոնին և Ստանբուլի արվեստի առաջին փառատոնին, ունեցել է մեծ հաջողություն՝ Մոցարտի «Առևանգում պալատից» օպերայում Բելմոնտեի դերում, որի առիթով անգլիական «Թայմզ» թերթը գրել է, թե Ստամբուլը բախտավոր է, որ ունի Մոցարտի այդպիսի տաղանդավոր մեկնաբան։ Հրավեր է ստացել Լոնդոնի Քրիստոֆոր Հընթ երաժշտական ընկերությունից, մասնակցելու 1974 թ. Իռլանդիայի Ուեքսֆորդ քաղաքի փառատոնին, ստանձնելու Նուրեդդինի դերը «Բաղդատի սափրիչը» օպերայում։ Հետագայում մեկնել է Իտալիա։

ՊՈՅԱՃՅԱՆ ԶԱՊԵԼ (1871—1957).— Նկարիչ, գրող, մշակութային գործիչ։ Ծնվել է Տիգրանակերտում (այժմ՝ Ուրֆա, Թուրքիա)։ Հայրը՝ Թովմաս Պոյաճյանը եղել է այդ քաղաքի անգլիական հյուպատոսը, մայրը՝ անգլուհի։

Ստացել է հայկական և անգլիական կրթություն, հավասարապես տիրապետել երկու լեզուներին, իմացել է նաև թուրքերեն, ֆրանսերեն, իտալերեն։ Մանկությունից փորձել է նկարել, ներշնչվելով հայրենի բնությունից։ 1895 թ. ջարդերի օրերին զոհվել է հայրը, մոր հետ անցնելով տաժանակիր ճանապարհ, հասել է Պոլիս, այնտեղից Ֆրանսիա, ի վերջո ապրել մոր ծննդավայրում՝ Լոնդոնում, որտեղ էլ ունեցել է նկարչական, գրական բեղմնավոր գործունեություն։ Միաժամանակ հաճախել է նկարչական դասընթացների, աշակերտել ականավոր նկարիչների։ Այդ տարիներից մասնակցել է ցուցահանդեսների։ Նրա վաղ շրջանի ստեղծագործություններից են՝ «Շավարշանի Շուշանը» (Սանդուխտ), «Վարդը», «Պարուհին» (Արմեն Օհանյան), «Արի, սիրելիս» և այլն։ Հետագայում ստեղծած կտավներից առավել կարևորներն են՝ «Զորավար Անդրանիկ», «Հայ պատանին», «Զարահճին», «Վալոնի սրճարանը», «Ջրաղաց», «Խարբերդ», «Միս Յոաննա Դետմոնդ» և այլն։ Նկարազարդել է «Համլետ» հայերեն՝ Մասեհյանի թարգմանությունը (Վիեննա, 1922), «Հայկական լեգենդներ և բանաստեղծություններ» անգլերեն շքեղ հատորը (Լոնդոն, 1916) և այլն։ 1895 թ. ջարդերի ցնցող տպավորության տակ գրել է «Եսթեր» անգլերեն վեպը (Լոնդոն, 1901)։ Հրատարակել է պատմական մի վեպ՝ «Հավիտենական իրձի երազը» խորագրով, որի մասին դրվատանքով է խոսել անգլիական մամուլը։ 1930-ական թվականներին ճանապարհորդել է Հունաստանում. վերադարձին լույս ընծայել իր տպավորությունները «Գրիչով և երանգապնակով Հունաստանում» նկարազարդ հատորում։ Նրա վերջին և լավագույն գործերից է «Գիլգամեշ» էպոսի մշակումը, որ լույս է ընծայել իր նկարազարդումներով։ Եղել է Լոնդոնի հայ գաղութի գործուն դեմքերից։

ՊՈՅԱՃՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (1837—1911).— Կրթական գործիչ։ Ծնվել է Ռուսչուկում (Բուլղարիա)։ Կրթությունն ստացել է ծննդավայրում. ավարտելուց հետո երկար տարիներ զբաղվել է ուսուցչությամբ. եղել է Ռուսչուկի հայկական դպրոցի տեսուչը։ Իմացել է հին հունարեն, ֆրանսերեն և այլ լեզուներ։ Նրա ջանքերով Ռուսչուկում բացվել է հայկական օրիորդաց վարժարան։ Մեծ դեր է կատարել քաղաքի թուրքախոս հայերին մայրենի լեզուն սովորեցնելու գործում։ Ունեցել է գրական-հրապարակախոսական գործունեություն։ Աշխատակցել է Մանչեստրի (Անգլիա) «Հայ եկեղեցի» հանդեսին և այլ պարբերականներին։ Հրատարակել է մի գրքույկ՝ Ռուսչուկի հայոց եկեղեցու մասին։ Գրել է նույն քաղաքի հայ գաղութի ընդարձակ պատմությունը, որը մնացել է անտիպ։ Հավաքել է հայերեն հին ձեռագրեր, որոնց մի մասը նվիրել է Էջմիածնի Մատենադարանին, մի մասը՝ Վենետիկի Մխիթարյանների վանքին։

ՊՈՅԱՃՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ (ծն. 1946).— Երգիչ-բարիտոն։ Ծնվել է Բեյրութում։ Մասնագիտական կրթությունն ստացել է ծննդավայրի կոնսերվատորիայում, ապա կատարելագործել է Բոլոնիայի (Իտալիա) կոնսերվատորիայում. միաժամանակ ձայնը մշակել է ականավոր երգիչ-մանկավարժների մոտ։ 1974 թ. մասնակցել է Իտալիայում կազմակերպված մրցույթների և արժանացել է առաջին մրցանակի։ Նույն տարում, Թուրինի օպերային թատրոնի բացման երեկոյին երգել է «Ռիգոլետտո» օպերայում։ Ապա հանդես է եկել Տրիեստում։ 1975 թ. հրավեր է ստացել Վերոնայի Արենայից՝ Վերդիի «Ճակատագրի ուժը» օպերայում կատարելու Դոն Կառլոսի դերերգը։ Էսկամիլյոյի դերերգն էլ կատարել է «Կարմենում», արժանացել իտալական մամուլի գնահատմանը։ Ապա Վիեննայում երգել է «Ռիգոլետտոյում», Մյունխենում՝ «Ճակատագրի ուժը» օպերայում, Շտուտգարդում՝ «Տարուրրո» օպերայում, ատիճանաբար լայն ճանաչում գտնելով Եվրոպայում։

ՊՈՅԱՃՅԱՆ ՀԱԿՈԲ (1837—1914).— Մշակութային գործիչ, արվեստագետ, տպագրիչ։ Ծնվել է Տիգրանակերտում։ Կրթությունն ստացել է Կ. Պոլսում, Համլենի հայտնի միսիոներական դպրոցում, որտեղ սովորել է անգլերեն։ Ղրիմի պատերազմից հետո՝ 1856 թ. մեկնել է Ամերիկա, ուսումնասիրել տպագրական գործը. վերադառնալով Կ. Պոլիս, 1859 թ. հիմնել է տպարան, օժտել արդիական մեքենաներով և հրատարակել է տարբեր լեզուներով, այդ թվում՝ հայերեն գրքեր։ Նրա այդ տպարանում են տպագրվել թուրքական թղթադրամները։ Մոտիկից մասնակցել է պոլսահայ մշակութային կյանքին, աշխատակցել է «Մասիս» և այլ թեր-

թերի։ Նա է առաջինը երկգույն տպագրությունը մացրել Թուրքիա՝ վերոհիշյալ պետական թղթադրամները տպագրելու առիթով։

ՊՈՅԱՃՅԱՆ ՎԱՀԷ (?—1973).— Դերասան, ռեժիսոր։ Ծնվել է Կ. Պոլսում։ Ապրել և գործել է Եգիպտոսում։ Եղել է 1913 թ. Կահիրեում ստեղծված «Արծիվ» թատերախմբի հիմնադիրներից և աշքի ընկնող դերասաններից։ Տասը տարի խաղացել է Օնիկ Դալֆայանի ղեկավարությամբ գործող թատերախմբում, որը ներկայացումներ է տվել թե Կահիրեում և թե Ալեքսանդրիայում։ Այդ խմբի ուժերով 1921—1922 թատերաշրջանում մասնակցել է «Աբելյան-Անդրանիկ» թատերախմբի ներկայացումներին։ Ապա ինքն է ղեկավարել «Արծիվ» թատերախումբը։ Եղել է Գեղարվեստասիրաց միության հիմնադիրներից, կազմել ու ղեկավարել է այդ միության թատերախումբը։ Ունեցել է բեմական 50-ամյա գործունեություն։

ՊՈՅԱՃՅԱՆ ՏԻԳՐԱՆ (1895—1975).— Բանաստեղծ, հասարակական գործիչ։ Ծնվել է Արևմտյան Հայաստանի Բալուի գավառի Արմուտան գյուղում, որտեղ ստացել է հայկական տարրական կրթությունը։ Հետագայում մեկնել է Ամերիկա, ունեցել է գրական, բանաստեղծական և հասարակական նկատելի գործունեություն։ Եղել է Հայկական բարեգործական ընդհանուր միության գործուն և ղեկավար անդամներից։ Աշխատակցել է ամերիկահայ մի շարք թերթերի։ 1965 թ. լույս է ընծայել «Հայկական լեգեոնը» (պատմական հուշագրություն) հայերեն գիրքը, իսկ 1972-ին «Armenia the case for a forgotten genocide» անգլերեն հետազոտությունը շքեղ ու նկարազարդ տպագրությամբ։ Հայերենից անգլերեն կատարել է թարգմանություններ, ինչպես Եղիշեի «Վարդանանց պատերազմը»։ Անգլերենից հայերեն կատարած թարգմանություններից են Մորիս լը Կլակի «Ոսկի եռանկյունը», գնդապետ Բրեմենի «Կիլիկիան 1919—1920-ին», Արթուր Բրեյնի «Կույր արդարությունը» և այլն, որոնք տպագրվել են ամերիկահայ մամուլում որպես թերթոն։

ՊՈՅՆՈՒԷՅՐԻՅԱՆ ՊՈՂՈՍ (1805—?).— Հոգևորական, կրթական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ 1820 թվականից սովորել Բեյրութի Անտոնյան կաթոլիկական վանքում, հմտացել հայերենին, լատիներենին, իտալերենին։ 1836-ից հոգևորական և կրթական պաշտոններ է վարել Կ. Պոլսում։ Հասունյան-հակահասունյան պայքարի տարիներին Մ. Պեշիկթաշլյանի, Ներենցի և այլ առաջավոր կաթոլիկ մտավորականների հետ բուռն պայքար է մղել Հռոմի գործակալ Անտոն Հասունյանի և նրա համախոհ մարդկանց դեմ, դարձել հակահասունյան շարժման ղեկավարներից։ Հովհաննես Ասկերյան ծածկանունով Թիֆլիսում տպագրել է «Հասունյան քաղաքականություն» ծավալուն գիրքը, որը պարունակում է արժեքավոր փաստեր ու վավերագրեր՝ հայ ժողովրդի դեմ Հռոմի վարած քայքայիչ քաղաքականությունը մերկացնող։ Ավելի ուշագրավ են նրա «Առաջին քայլ բարվոքման ազգիս հայոց ի Հայաստան աշխարհի» (1878) և «Գործ կա, գործող չկա» (1879) գրքերը, որոնցից առաջինի վրա նկատելի է Միքայել Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» ծրագրային աշխատության ազդեցությունը։ Հ. Պարոնյանը «Ազգային ջոջերում» հատուկ գլուխ է հատկացրել նրան և խոսել է բացառիկ հարգանքով։

ՊՈՆՃՈՒԿՅԱՆ ՀԱԿՈԲ (1851—1928).— Կրթական գործիչ, հրապարակախոս, խմբագիր։ Ծնվել է Մոսուլում (Իրաք)։ Նախնական կրթությունն ստացել է Եվդոկիայում, ապա ուսումը շարունակել է Կ. Պոլսում, Ե. Տեմիրճիպաշլյանի հետ սովորել Խաչատուրի Շահնազարյան վարժարանում։ Հետագայում մեկնել է Գերմանիա, Մյունխենում և Հայդելբերգում հետևել մանկավարժության, իրավաբանության։ Վերադառնալով Թուրքիա, աշխատել է Եվդոկիայում, Պոլսում, իսկ 1895 թ. կոտորածներից հետո՝ Բուլղարիայում, որտեղ 30 տարի զբաղվել է կրթական աշխատանքով։ 1896—1897 թթ. Վառնայում խմբագրել է «Իրավունք» թերթը։ Հրատարակել է «Նոր ընթերցարան» հայոց լեզվի դասագրքի Ա, Բ, Գ տարիները։ Գերմաներենից կատարել է թարգմանություններ, որոնք տպագրվել են Հ. Սիմոն ծածկանունով։ 1912—1921 թթ. ուսուցչական պաշտոններ է վարել Կ. Պոլսում։ 1921-ին մեկնել է Եգիպտոս, որտեղ պարբերաբար աշխատակցել է «Արև» օրաթերթին։

ՊՈՆՃՈՒԿՅԱՆ ՀՐԱՆՏ.— Անգլիագիր բանաստեղծ։ Ծնվել է Բոստոնում (Ամերիկա)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, բարձրագույնը՝ Այովայի համալսարանում, ավարտել 1967-ին՝ գեղարվեստի մագիստրոսի աստիճանով։ Ապա սովորել է Բոստոնի Նորդ Հյուսթքն համալսարանում, ավարտել անգլերեն լրագրության պսակավորի աստիճանով։ Աշխատել է որպես օգնական հրատարակիչ Բոստոնի Էլին և Բեյքն հրատարակչությունում։ 1960-ական թվականների սկզբներից ամերիկյան մամուլում («Նյու Յորքեր», «Սաթրդեյ ռեվյու», «Հարբրրդ մեգազին» և այլն) տպագրել է բանաստեղծություններ, որոնք 1967, 1968 թթ. շահել են Քենսն Միթիի գրական մրցանակը։ Վերջին մրցանակը շահել է «Կանգ առ» ոտանավորի համար։ 1969-ին լույս է ընծայել իր բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Ջրի վրա պար» խորագրով։ Նրա երկերին լայն տեղ են տվել «Ամերիկայի երիտասարդ բանաստեղծներ» և «Ժամանակակից ամերիկյան ազգագրական գրականություն» ժողովածուներում։

ՊՈՆՏԱՅԻ ՊԵՏՐՈՍ (1888—1960).— Հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Նիքսարում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Մարզվանի ամերիկյան կոլեջում. ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատել է Նիքսարի, Եվդոկիայի, Կ. Պոլսի հայկական դպրոցներում, Եվդոկիայում 1910 թ. խմբագրել է «Իրիս» պարբերականը։ Պատերազմից հետո մասնակցել է Կ. Պոլսի «Երկիր» թերթի խմբագրման աշխատանքներին։ 1922 թ. մեկնել է Ամերիկա, որտեղ 1923—1928 թթ. որոշ ընդմիջումներով խմբագրել է «Երիտասարդ Հայաստան» թերթը։ Աշխատակցել է սիյուռքահայ տասնյակ թերթերի, ամսագրերի և տարեգրքերի։

ՊՈՇՆԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ (ծն. 1904).— Նկարչուհի։ Ծնվել է Կ. Պոլսում։ Մասնագիտական առաջին գիտելիքներն ստացել է նկարիչ Փանոս Թերլեմեզյանից, վերջինիս Կ. Պոլսում ապրելու տարիներին՝ 1919—1920 թթ.։ Ապա Փարիզում հետևել է գեղարվեստների ակադեմիայի դասընթացներին։ Յոթ տարի աշխատել է ֆրանսիացի հայտնի նկարիչների մոտ։ Այդ տարիներին նրա նկարները ցուցադրվել են Փարիզում կազմակերպված մի քանի ցուցահանդեսներում և արժանացել են ֆրանսիական մամուլի գնահատմանը։ Ուշադրություն են գրավել մանավանդ Արևելքը ներկայացնող բնանկարները, նատյուրմորտները, դիմանկարները, նաև բյուզանդական հնությունների վերարտադրությունները։ Վերադառնալով Կ. Պոլիս, մղվել է դեպի ծովանկարչությունը։ 1930 թ. մասնակցել է Կալաթա Սարայի լիցեյում կազմակերպված ցուցահանդեսին։

ՊՈՍՈՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ (1902—1968).— Հրապարակախոս-խմբագիր, հասարակական գործիչ։ Ծնվել է Պարտիզակում (Թուրքիա)։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ 1920 թ. մեկնել է Պոլիս, 1922-ին՝ Բուլղարիա, հաջորդ տարի՝ Փարիզ, որտեղ էլ ունեցել է գրական-հրապարակախոսական բեղուն գործունեություն։ 1924-ին մի խումբ ընկերներով հիմնել են «Հայ բանվոր» առաջադիմական թերթը, որը կարճ ժամանակից միացել է «Բանվոր-Պարիզ» թերթին։ Նույն 1924-ին ընդունվել է Ֆրանսիական կոմունիստական կուսակցության շարքերը, որի եռանդուն անդամներից է եղել 35 տարի և 1960-ին արժանացել է Վետերանի կոչման։ Եղել է ՀՕԿ-ի Ֆրանսիայի մասնաճյուղի, նրա լուծարքից հետո՝ Ֆրանսահայ ժողովրդական միության հիմնադիրներից։ Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին եղել է Ֆրանսիայի հյուսիսային գոտու հայ դիմադրական շարժման անդամներից, պատերազմից հետո՝ Ֆրանսահայ ազգային ճակատի հիմնադիրներից ու կենտրոնական վարչության անդամ։ Աշխատակցել է սիյուռքահայ առաջադիմական մամուլին, եղել է Մ. Մանուշյանի «Զանգու» շաբաթաթերթի հրատարակության պատասխանատու։

ՊՈՍՈՒԻՑԱՆ ՄԿՐՏԻՉ (1881—1959).— Բանաստեղծ, հրապարակախոս-խմբագիր։ Ծնվել է Պարտիզակում (Թուրքիա)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Ներսիսյան վարժարանում, ապա՝ 1897-ից սովորել է Վենետիկի Մխիթարյանների ս. Ղազար վանքում, ուսման շրջանն ավարտել է 1903 թ., դարձել այդ միաբանության անդամ։ Նույն տարվանից որպես հսկիչ ուսուցիչ աշխատել է Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում։ 1909 թ. վերադարձել է վանք, ստանձնել «Բազմավեպ» հանդեսի խմբագրի և մատենադարանապետի պաշտոնները։ Ունեցել է գրական-հրապարակախոսական և բանաստեղծական բեղուն գործունեություն։ Տարբեր ժամանակներում

խմբագրել է մի շարք թերթեր, ամսագրեր, տարեգրքեր, ինչպես «Բազմավեպը», «Աստղիկ» կիսամյա հանդեսը (Վենետիկ, 1911), «Մասիս» շաբաթաթերթը (Բուխարեստ, 1920—1922), «Գաղութի ձայնը» (Բուխարեստ, 1923), «Փարոս» շաբաթաթերթը (1924), «Երկիր» (1925-ից), «Հայ մամուլ» (1934), «Ռումինահայ տարեցույց» (1925), «Գաղութահայ տարեցույց» (1939, 1940, 1941), բոլորն էլ հրատարակված Բուխարեստում։ Վերոհիշյալ և այլ պարբերականներում տպագրել է բանասիրական բազմաթիվ հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Կոստանդին Երզնկացի և իր քերթվածները» (Վենետիկ, 1905), «Ադամագիրք Առաքել Սյունեցվո» (1907), «Հայ մամուլը տասնըհինգ տարվա մեջ» (1894—1908), «Մխիթար և Մխիթարյանք» (1922), «Հայ հանրագիտակ» (Բուխարեստ, 1938—1940. Ա—Ը տառեր)։ Գրել է նաև գեղարվեստական երկեր։ 1910 թ. Վենետիկում լույս է ընծայել «Սև էջը» և «Կարմիր լուսին» ժողովածուները։

ՊՈՐՏՆՈՎ ԳԵՎՈՐԳ (1892—?).— Նկարիչ։ Ծնվել է Աստրախանում, որտեղ ստացել է հայկական նախնական կրթությունը, իսկ մասնագիտականը՝ Կազանի գեղարվեստական դպրոցում, 1911—1914 թթ.։ 1926 թվականից մասնակցել է Մոսկվայում, Կույբիշևում, Վոլգոգրադում և այլ քաղաքներում կազմակերպված ցուցահանդեսների։ Անհատական ցուցահանդեսներ է ունեցել 1952 և 1962 թվականներին։ Լավագույն գործերից են՝ «Պատահար Վոլգայի վրա», «Կույբիշևը Աստրախանում», «Ինքնանկար», «Կնոջ դիմանկար» և այլն։ Ապրել և ստեղծագործել է Աստրախանում։

ՊՁԱՔՃՅԱՆ ՄՈՎՍԵՍ (ծն. 1940).— Գրող, թարգմանիչ։ Ծնվել է Հալեպում (Սիրիա)։ Նախնական կրթությունն ստացել է տեղի կրթասիրաց վարժարանում, միջնակարգը՝ Քարեն Եփիփե ազգային ճեմարանում։ Ապա Դամասկոսի պետական համալսարանում հետևել է անգլերեն լեզվի ու գրականության դասընթացներին։ Ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատել է Քարեն Եփիփե ճեմարանում, ավանդել հայերեն, անգլերեն։ Աշխատակցել է լիբանանահայ և սիրիահայ մամուլին, գրելով հրապարակախոսական հոդվածներ և գեղարվեստական գործեր։ Թարգմանել է Էրիկ Սեգալի «Սիրո պատմություն» վեպը, գրել է «Կույս ավազներ» վեպը՝ սիյուռքի կյանքից։

ՊՈՒՌՅԱՆ ՊԵՐՃ (1837—1907).— Գրող։ Ծնվել է 1837 թ. հունիսի 3-ին Աշտարակում։ Մկրտության անունը եղել է Հովհաննես Տեր-Առաքելյան։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում՝ Շապուհ վարժապետի դպրոցում։ 1849 թ. ընդունվել է Մուղնու վանքի դպրոցը, ապա սովորել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Նկատելի դեր է կատարել իգական սեռի դաստիարակության ուղղությամբ։ Թիֆլիսում, Շուշիում, Ագուլիսում բաց է արել հայկական օրիորդաց դպրոցներ։ Գրականությամբ զբաղվել է 1858 թվականից, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի լույս ընծայման տարուց, որը մեծ ազդեցություն է թողել նրա վրա։ Նրա «Սոս և Վարդիթեր» առաջին վեպը լույս է տեսել 1860 թ. «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի մի շարք համարներում։ Մի քանի տարի իրեն նվիրել է արևելահայ թատրոնի ստեղծման գործին։ Իր շուրջը համախմբելով խոստումնալից ուժեր՝ 1863 թվականից Գ. Զմշկյանի ակտիվ մասնակցությամբ տվել է հայերեն ներկայացումներ, շարունակելով ուսուցչական աշխատանքը, զբաղվելով նաև լուսանկարչությամբ։ 1878 թվականից կրկին երևացել է մամուլում ծավալուն մի քանի վեպերով։ Նույն այդ տարում «Փորձ» հանդեսում տպագրել է «Կռվածաղիկը», 1879 թ.՝ «Հացի խնդիրը», որին հաջորդել է «Շահենը»։ Մի քանի տարվա ընդմիջումից հետո սկսել է իր վեպերը տպագրել Ա. Արասխանյանի «Մուրճում», որտեղ լույս են տեսել նրա «Ցեցերը» (1889), «Բղդեն» (1890), «Սկիզբն երկանց» (1892), «Հունոն» (1900)։ «Արաքս», «Հանդես գրականական և պատմական», «Թատրոն» հանդեսներում էլ տպագրել է հուշեր, պատմվածքներ։ Մամուլում տպագրված վերոհիշյալ բոլոր վեպերը, հետագայում լույս են տեսել առանձին գրքերով, արժանացել կրկնակի տպագրության։ Այսպես՝ «Սոս և Վարդիթերը» տպագրվել է 1860 թ. (բ. տպ. Երևան, 1887, գ. տպ. Բաքու, 1905 և այլն), «Կռվածաղիկը» (բ. տպ. 1897), «Հացի խնդիրը»՝ 1880 և այլն։ Նրա արժեքավոր հիշողություններն էլ առանձին գրքով լույս են տեսել Թիֆլիսում, 1894 թ. «Հուշիկներ» խորագրով։ Գրել է «Աղասի» պիեսը՝ ըստ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի։ Թարգմանել է «Վաղարշապատցի Հարություն Արարատյանի կյանքը» (Թիֆլիս, 1892), Լ. Տոլստոյի «Մանկություն և պատանեկություն»։ Նրա բոլոր վեպերը քանիցս վերահրատարակվել են խորհրդային տարիներին, ամփոփվել 8 հատորների մեջ (1955—1966)։

ՊՏՈՒԿՅԱՆ ԶԱՐԵՀ (ծն. 1911).— Դրամագետ-պատմաբան։ Ծնվել է Սեբաստիայում (Արևմտյան Հայաստան)։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ապաստան է գտել Կ. Պոլսի որբանոցներում։ Ապա մեկնել է Բուլղարիա, երկու տարի սովորել Մեսրոպյան ճեմարանում։ 1926-ին մեկնել է Կանադա, որտեղ ավարտել է միջնակարգ կրթությունը, շարունակել ուսումը Մոնրեալի համալսարանում, ավարտել 1936-ին։ Ապրել է Նյու Յորքում և հիմնականում նվիրվել հայկական հին դրամների հավաքման և հետազոտման աշխատանքին։ 1962-ին Նյու Յորքում անգլերեն, հաջորդ տարի Վիեննայում հայերեն լույս է տեսել նրա «Կիլիկյան Հայաստանի դրամները» աշխատությունը, իսկ 1969-ին՝ «Արտաշեսյան հարստության դրամները»։ Հետագայում «Հանդես ամսօրյայում» (1970—1972) տպագրել է դրամագիտական նոր հետազոտություններ։ 1968 թ. հին դրամների մի մեծ հավաքածո նվիրել է Հայաստանի պետական պատմական թանգարանին։

ՊՐՈՆՅԱՆ (ՊԱՐՈՆՅԱՆ) ՍԱՀԱԿ (1749—1806).— Կրթական, հոգևորական գործիչ։ Ծնվել է Հալեպում։ Կրթությունն ստացել է Վենետիկի Մխիթարյանների վանքում, եղել այդ միաբանության անդամ։ Ունեցել է կրթական, մանկավարժական բեղուն գործունեություն։ Երկար տարիներ մաթեմատիկական առարկաներ է դասավանդել նույն վանքում և Մխիթարյան այլ դպրոցներում։ Իր դասավանդած առարկաների վերաբերյալ ստեղծել է հմտալից դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ինչպես «Երկրաչափություն» (1794), «Եռանկյունաչափություն» (1810), որոնք համարվում են հայերեն տպագիր առաջին ուսումնական ձեռնարկները։

ՊՈՒՃԻԳԻԱՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ (ծն. 1914).— Երաժշտագետ-խմբավար։ Ծնվել է Խարբերդում

(Արևմտյան Հայաստան)։ Նախնական կրթությունն ստացել է Բեյրութի ս. Նշան հայկական դպրոցում, բարձրագույնը՝ Սեն Ժողեֆ համալսարանում, մասնագիտականը՝ նույն քաղաքի կոնսերվատորիայում, ավարտել ջութակահարի վկայականով։ Բեյրութում ստեղծել է երգչախմբեր, որոնք նրա ղեկավարությամբ տվել են բազմաթիվ համերգներ, եղել է Լիբանանի պետական կոնսերվատորիայի վարչության անդամ։ Լիբանանահայ մամուլում տպագրել է երաժշտագիտական հոդվածներ։

ՊՈՒՃԻԳԻԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ (1873—1915).— Մանկավարժ։ Ծնվել է Խարբերդի գավառի Զընգուշ գյուղում (Արևմտյան Հայաստան)։ Կրթությունն ստացել է Եփրատ կոլեջում. ավարտելուց հետո միաժամանակ որպես ուսուցիչ աշխատել է նույն դպրոցում, ապա մեկնել է Գերմանիա, Էդինբուրգի համալսարանում ստացել բարձրագույն ուսում։ Վերադառնալով Խարբերդ՝ կրկին պաշտոնավարել է Եփրատ կոլեջում՝ պրոֆեսորի ատիճանով։ Ունեցել է գրական-հրապարակախոսական բեղուն գործունեություն։ Պատմաբանասիրական, կրթական և այլ բնույթի հոդվածներով աշխատակցել է «Բյուրակն», «Ավետարեր», «Լույս», «Եփրատ» և այլ պարբերականների։ Սպանվել է մեծ եղեռնի օրերին։ Թողել է բազմաթիվ ձեռագիր երկեր, որոնցից մի քանիսը հրատարակվել են հետագայում, նրա հարազատների ջանքերով։ Այդ երկերն են՝ «Ընտանիքի վերլուծումները» (Բեյրութ, 1953), «Տիպար քաղաքացին» (Անթիլիաս, 1953) և այլն։

ՊՈՒՐԱՏ ԹԵՈԴՈՐ (1839—?).— Երաժշտագետ։ Ծնվել է Ցաշում (Ռումինիա), երաժշտական և իրավաբանական կրթությունն ստացել է Փարիզում։ Ավարտելով ուսման ընթացքը՝ վերադարձել է Ցաշ, 1866-ից աշխատել որպես դատավոր, ապա եղել է Վերաքննիչ ատյանի նախագահ։ Հետագայում զբաղվել է երաժշտական ֆոլկլորի հավաքման և մշակման աշխատանքով։ 1878 թ. լույս է ընծայել «Եղերերգեր» ժողովածուն՝ ռումիներեն լեզվով, որին հաջորդել են «Թաղմանական սովորությունները» (1882), «Հարսանեկան սովորությունները» (1889) և այլն։ 1908 թ. մեկնել է Կ. Պոլիս, որտեղ հայտնաբերել է ռումին կոմպոզիտոր Տ. Կանտեմիրի երկերից նմուշներ՝ Համբարձում

Լիմոնճյանի նոտաներով։ Այդ մասին հաղորդում է տվել Ռումինական ակադեմիայում, 1911 թ.։ Գտել է հայկական երգերի, պարերի հետքեր Մոլդավիայում, ինչպես Արմենյասկ պարը, որն այդ տարիներին շատ տարածված է եղել Մոլդավիայում։ Վերոհիշյալ պարի եղանակը հետագայում հրատարակել է ռումիններեն բացատրությամբ։

Ջ

ՋԱԳՈՒՆՈՎԱ ՄԱՐԻԱՄ *(1897— ?)*.— Նկարչուհի։ Ծնվել է Արմավիրում, Մարկոսյանների ընտանիքում։ Մասնագիտական կրթությունը ստացել է Պետրոգրադում, Գեղարվեստը քաջալերողների ընկերության նկարչական ուսումնարանում՝ 1916—1917 թթ.։ Հետագայում սովորել է նկարիչ Մալևիչի էքսպերիմենտալ խմբում։ 1934 թվականից մասնակցել է ցուցահանդեսների՝ Լենինգրադում, Պերմում, Սվերդլովսկում, Մուրմանսկում, Ստոկհոլմում, Լոնդոնում։ Նրա նկարներից պահվում են Լենինգրադի, Մուրմանսկի, Վաշինգտոնի, Քեմբրիջի և այլ քաղաքների թանգարաններում։ Լավագույն գործերից են՝ էվելինայի, Յակովլևայի, Նավթագործի և այլոց դիմանկարները, ինչպես և մի շարք բնանկարներ Ղրիմից, Բաքվից և այլն։ Ապրել և ստեղծագործել է Լենինգրադում։

ՋԱԼՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ *(1913—1985)*.— Կինոօպերատոր. Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1966)։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Մոսկվայում, սովորել կինեմատոգրաֆիայի համամիութենական ինստիտուտում, որի օպերատորական ֆակուլտետն ավարտել է 1934-ին։ Աշխատել է «Հայֆիլմ» ստուդիայում։ Նկարահանել է մոտ 25 գեղարվեստական ֆիլմ, որոնցից են՝ «Առաջին աբրա երգը» (1957), «Հյուսիսային ծիածան» (1961), «Փառքի օղակներ» (1962), «Արտակարգ հանձնարարություն» (1965), «Պայքարն կենդանիներից հետո» (1969) և այլն։ Նրա նկարահանած վավերագրական ֆիլմերից են՝ «Խաչատուր Աբովյան», ««Գիտությունը ծառայում է ժողովրդին» և այլն։ 1978-ին նկարահանել է «Հեղկոմի նախագահը» հեռուստատեսային ֆիլմը։

ՋԱԼԱԼՅԱՆ ՄԱՐԴԱՐԻՏ *(ծն. 1916)*.— Օպերային երգչուհի։ Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստուհի։ Ծնվել է Բաքվում։ Մասնագիտական կրթությունն ստացել է ծննդավայրում։ 1943 թվականից երգել է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, որտեղ հանդես է եկել պատասխանատու մի շարք դերերում, ինչպես՝ Կարմեն (համանուն օպերայում), Ամներիս («Աիդա»), Ալմաստ (համանուն օպերայում), Էմիլիա («Օթելլո»), Մալիկա («Լակմե»), Թամար («Դավիթ բեկ») և այլն։

ՋԱԽՋԱԽՅԱՆ ՄԱՆՎԵԼ *(1770—1835)*.— Բանաստեղծ, թարգմանիչ։ Ծնվել է Գյումուշխանեում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Վենետիկի Մխիթարյանների ս. Ղազար վանքում, աշակերտել հայագետ Գ. Ավգերյանին, եղել է այդ միաբանության գործուն անդամներից։ Գրել է գրաբար բանաստեղծություններ, որոնց մի մասը տպագրվել է «Տաղք Մխիթարյան վարդապետացն» ժողովածուների բ. հատորում։ Հայ մշակույթի պատմության մեջ ավելի արժանավոր տեղ է գրավել իր բանասիրական, բառարանագրական գործունեությամբ։ Կազմել և հրատարակել է «Բառարան յիտալական լեզուէ ի հայ և ի տաճիկ բարբառ» (Վենետիկ, 1804), «Բառարան համառօտ յիտալականե ի հայ և ի տաճիկ» (1829), «Բառգիրք ի բարբառ հայ իտալական» բառարանները։ Տիրապետել է հին և նոր մի շարք լեզուների (հունարեն, իտալերեն, լատիներեն, անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն և այլն)։ Կատարել է թարգմանություններ, ինչպես Ֆենելոնի «Տելեմաքը» (Վենետիկ, 1826, բ. տպ. 1863, գ. տպ. 1882), Կեսների «Ի մահն Աբելի» (1825) և այլն։ Ֆրանսերեն

բնագրի հետ համեմատելով խմբագրել է Ռուլենի «Պատմութիւն Հռոմեական» բազմահատոր աշխատության իտալերենից գրաբար կատարված թարգմանությունը։

ՋԱՀՈՒԿՅԱՆ ԴԵՎՈՐԳ *(ծն. 1920)*.— Լեզվաբան. բանասիրական գիտությունների դոկտոր (1958), Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1977), Հայկական ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1965)։ Ծնվել է Ստեփանավանի շրջանի Շահնազար գյուղում։ 1927—1935 թթ. սովորել է Ստեփանավանի աշխատանքային դպրոցում, 1935—1937 թթ.՝ Երևանի Շահումյանի անվան միջնակարգ դպրոցում, իսկ 1941 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, շարունակել ուսումը ասպիրանտուրայում։ 1942-ից ծառայել է խորհրդային բանակում, հաջորդ տարի զորացրվել է և 1944-ից շարունակել ուսումը ասպիրանտուրայում, ավարտել 1947 թ.։ 1945 թվականից դասախոսել է Երևանի պետական համալսարանում. դասավանդել է ժամանակակից հայոց լեզու, գրաբար, ընդհանուր լեզվաբանություն, համեմատական քերականություն։ 1948 թ. ստանձնել է պետական համալսարանի օտար լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնը։ 1956 թ. պաշտպանել է դիսերտացիա, ստացել բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան։ 1957 թ. ընտրվել է համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ամբիոնի վարիչ, 1962 թ. նշանակվել ԳԱ լեզվի ինստիտուտի դիրեկտոր։ Հրատարակել է լեզվաբանական տասնյակ հետազոտություններ, որոնցից մի քանիսը արժանացել են համաշխարհային ճանաչման։ Առանձին գրքերով տպագրած աշխատություններն են՝ «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» (V—XV դդ.), (Երևան, 1954), «Խաչատուր Աբովյանը որպես լեզվաբան քերականագետ» (1954), «Հայ լեզվաբանական միտքը և աշխարհարարի հարցերը (XVIII—XIX դդ.) (1955, հանդիսանում է նրա դոկտորական դիսերտացիան), «Հայոց լեզվի զարգացման փուլերը», «Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» (1959), «Լեզվաբանության պատմություն» (հատ. I, 1960, հատ. II, 1962), «Հայասայի լեզուն և նրա առնչությունը հնդեվրոպական լեզուների հետ» (1964). «Ուրարտերենը և հնդեվրոպական լեզուները» (1963), «Ակնարկներ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության» (ռուսերեն, 1967), «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» (1969), «Հայ բարբառագիտության ներածություն» (1972), Գրաբարի քերականության պատմություն» (XVII—XIX դդ.)., «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (1974), «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» և այլն։ Լեզվաբանական ծանրակշիռ հոդվածներ է տպագրել հանրապետական, միութենական և արտասահմանյան գիտական հանդեսներում։ Մասնակցել է լեզվաբանների միջազգային գիտաժողովների։

ՋԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ *(ծն. 1921)*.— Լեզվաբան։ Ծնվել է Կրասնոդարում։ Նույն 1921-ին նրանց ընտանիքը տեղափոխվել է Երևան, որտեղ ստացել է միջնակարգ և բարձրագույն կրթությունը։ 1945 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի ու գրականության բաժինը։ 1945-ից շարունակել է ուսումը Լենինգրադի համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնում, ղեկավար ունենալով պրոֆեսոր Ս. Բարխուդարովին։ Նրա թեկնածուական դիսերտացիայի նյութը եղել է Մինաս Բժշկյանի, Աբրահամ Վաղարշապատեցու, Հարությունն Ալամդարյանի և Խ. Աբովյանի ռուսաց լեզվի քերականական աշխատությունները։ 1950-ից որպես ավագ դասախոս դասավանդել է Երևանի պետական համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնում, իսկ 1962-ից եղել է նույն ամբիոնի վարիչը։ Գիտական մամուլում, ժողովածուներում տպագրել է լեզվաբանական հոդվածներ։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Հայերի համար ռուսերեն գրված առաջին քերականական աշխատությունների լեզվաբանական հիմունքները» (Երևան, 1957), «Ռուսաց լեզվի ձեռնարկ» (Հայկական ԽՍՀ Բուհերի համար, (Երևան, 1965, բ. տպ. 1970, հեղինակակից), «Հայոց լեզվի ձեռնարկ» (Բուհերի համար), (1965, 1970, (հեղինակակից), Խ. Աբովյանի երկերի 9-րդ (լրացուցիչ) հատորի (ռուսերեն աշխատություններ) տեքստի պատրաստում (1959) և այլն։

ՋԱՂԵԹՅԱՆ ԱՆՆԱ *(ծն. 1899)*.— Նկարչուհի։ Ծնվել է Թիֆլիսում։ Կրթությունն ստացել է

ծննդավայրի ռուսական գիմնազիայում, ավարտել 1915 թ., ապա սովորել է Թիֆլիսի նկարչական դպրոցում։ 1919 թվականից մասնակցել է ցուցահանդեսների, ժամանակի մամուլը բարձր է գնահատել մասնավորապես նրա նատյուրմորտները, նվիրված Վրաստանի բնաշխարհից։ Ունեցել է մանկավարժական երկարամյա գործունեություն։ Թիֆլիսի մի շարք դպրոցներում դասավանդել է նկարչական առարկաներ։

ՋԱՂԵԹՅԱՆ ԳՐԻԳՈՐ *(1885—1938)*.— Թարգմանիչ։ Ծնվել է Հայաստանի Քարվանսարա գյուղում (այժմ՝ Հայկական ԽՍՀ Իջևան քաղաք)։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ավարտել 1903 թ.։ Ապա մեկնել է Գերմանիա, Լայպցիգի համալսարանում ստացել է բարձրագույն կրթություն, ավարտել 1909 թ.։ Վերադառնալով Կովկաս՝ աշխատել է որպես ֆինանսիստ։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո պաշտոնավարել է Անդրկովկասյան սեյմի ֆինանսական կոմիսարիատում, իսկ դաշնակների կառավարության օրոք եղել է ֆինանսների մինիստրի օգնական։ 1921 թ. մեկնել է Իրան, որտեղ հրաժարվել է դաշնակցությունից և այդ կուսակցության դեմ հոդվածներ տպագրել «Ռանչպար Իրանի» պարբերականում։ 1922-ին վերադարձել է Հայաստան, աշխատել Պետբանկում։ 1931-ից զբաղվել է գրական-թարգմանական աշխատանքով։ Բնագրից թարգմանել է Ֆ. Էնգելսի «Անտի Դյուրինգ», «Գյուղացիական պատերազմը Գերմանիայում», «Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում» երկերը, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակների մի հատորյակը և այլն։

ՋԱՄԱԼԻ *(1848—1921)*.— Աշուղ։ Ծնվել է Աղեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Բուն անունը եղել է Մկրտիչ։ Հայրն է երգիչ Շարա Տալյանի։ Երիտասարդ հասակից հետևել է աշուղության։ 1872-ից ընկերակցել է Աշուղ Ջիվանիին, եղել նրա մտերիմներից։ Հորինել է գերազանցապես հայերեն երգեր, որոնք կատարել է սանթուրի նվագակցությամբ։ Դրանցից նմուշներ տպագրվել են «Սոխակ Հայաստանի» ժողովածուի Գ. գրքում։ Առանձին գրքերով լույս են տեսել՝ «Երգիչ Ջամալու քնարական երգերը» *(1892)*, «Բանաստեղծություններ» *(1967)*։

ՋԱՆԱՆ ԱՏՐԻՆԵ.— Դերասանուհի։ Ծնվել է Կ. Պոլսի Կետիկ փաշա թաղամասում, որտեղ ստացել է նախնական կրթությունը։ Միաժամանակ որպես ուսուցչուհի աշխատել է գավառներում։ Օսմանյան սահմանադրությունից հետո *(1908)* իր քրոջ՝ Հրաչյա Դերձակյանի հետ (ապա՝ տիկին Վ. Փափազյան) նվիրվել է թատերական ասպարեզին, մասնակցել է Սիրանույշի թատերախմբի ներկայացումներին, իսկ երբ 1912-ին հիմնադրվել է Վ. Փափազյանի «Հայ դրամատիկ» թատրոնը, խաղացել է այնտեղ։ 1914 թվականին խաղացել է Ա. Ազյանի խմբում։ Նույն տարում ամուսնացել է դերասան Մկրտիչ Ջանանի հետ, գրվել նրա ազգանունով։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին աշխատել է Թուրքական խմբերում, պատերազմից հետո՝ *1919*-ից Պոլսո հայ դրամատիկ թատերախմբում։ *1923* թ. ամուսնու՝ Ջանանի, Վ. Փափազյանի և Հ. Ներսիսյանի հետ եկել է Խորհրդային Հայաստան, խաղացել նախ առաջին պետական թատրոնում, ապա՝ Բանվորական շրջիկ թատրոնում, ավելի ուշ՝ Երևանի ադրբեջանական թատրոնում, դարձել այդ խմբի կենտրոնական ուժերից մեկը, շնորհիվ Թուրքերենի իր առոգանության հստակության։ Տարիների ընթացքում կատարել է մի քանի տասնյակ դերեր, որոնցից առավել կարևորներն են՝ Դեզդեմոնա *(«Օթելլո»)*, Եվնիկե *(«Ցո երթաս»)*, Սոնա *(«Ջար ոգի»)*, Ռուքայա *(«Դավաճանություն»)* և այլն։

ՋԱՆԱՆ ԹՈՐԳՈՄ *(1890—1946)*.— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում։ Մեծ եղբայրն է դերասան Մ. Ջանանի։ Կրթությունն ստացել է ծննդավայրում։ Բեմական ասպարեզ է մտել 1909 թ.։ 1909—1913 թթ. խաղացել է տարբեր թատերախմբերում, մասնակցել կովկասահայ թատերախմբերի ներկայացումներին, հաջողությամբ կատարել է Սաղաթելի դերը «Պատվի համարում», ապա՝ Գրիգոր Հակոբյանի հետ մեկնել է Ադաբազար, 1913-ին՝ Բուլղարիա, որտեղ կազմել է թատերախումբ և տվել մի շարք ներկայացումներ։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներն անց է կացրել Բալկաններում։ 1918 թ. վերադարձել է Կ. Պոլիս, 1920 թվականից խաղացել է Գրիգոր Հակոբյանի «Արևելյան թատերախմբում»։ Հետագայում աշխատել է Թուրքական տարբեր խմբերում, իսկ 1929—1941 թթ. Շ.

Գաբագաշի «Ազգային դրամատիկ» թատերախմբում։

ՋԱՆԱՆ ՄԿՐՏԻՉ *(1892—1938)*.— Դերասան, ռեժիսոր, գրող։ Ծնվել է Կ. Պոլսի Սամաթիա թաղամասում, նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Սահակյան և Կարապետյան վարժարաններում, ապա սովորել է իրավաբանական դպրոցում, սակայն չի ավարտել՝ պատերազմի օրերին բանակ զորակոչվելու պատճառով։ Բեմական առաջին քայլերը կատարել է *1911* թ., մասնակցելով հայերեն մի քանի ներկայացումների։ *1914* թվականի սկզբներից խաղացել է Ավո Ազյանի թատերախմբում, մամուլի ուշադրությունը գրավել Սերոբի դերով՝ «Մարվող հրազեներ» պիեսում։ Պատերազմից հետո ջանադրորեն մասնակցել է Պոլսո հայ դրամատիկի ստեղծման աշխատանքներին և եղել է նրա հիմնական ուժերից։ *1919* թ. մեկնել է Փարիզ, հետևել Սորբոնի համալսարանի գրականության դասընթացներին, միաժամանակ տեղի ուժերից կազմել է սիրողների թատերախումբ, ներկայացրել Լ. Շանթի «Հին աստվածները», Շիրվանզադեի «Պատվի համարը», «Ջարոգին», Ա. Չեխովի «Առաջարկությունը»։ *1920* թ. այցելել է Անգլիա, այնտեղից կրկին վերադարձել Փարիզ, շարունակել խաղալ ֆրանսահայ բեմում։ *1921—1922* թթ. Պոլսո հայ դրամատիկում գործելուց հետո, իր տիկնոջ՝ Ատրինեի, Վ. Փափազյանի հետ եկել է Խորհրդային Հայաստան։ 15 տարի խաղացել է Երևանի պետական առաջին թատրոնում, ինչպես և Բանվորական շրջիկ թատրոնում, հանդես գալով պատասխանատու մի շարք դերերում, ինչպես՝ Յագո *(«Օթելլո»)*, Մակբեթ *(համանուն պիեսում)*, Սատին *(«Հատակում»)*, Քաղաքագլուխ *(«Ռեվիզոր»)*, Շուրուպով *(«Թույն»)*, Ռագին *(«Կարմիր դիմակ»)* և այլն։ Նկատելի դեր է կատարել Հայաստանի ադրբեջանական թատրոնի ստեղծման գործում, որտեղ բեմադրել է մի շարք պիեսներ։ Ունեցել է գրական գործունեություն։ *1929* թ. գրել է «Բանվոր քեռին Աբևելքում» մանկական օպերան, իսկ *1935* թ. «Շահնամե» պիեսը, որը խորհրդային պիեսների համամիութենական մրցույթում շահել է երկրորդ մրցանակ և բեմադրվել Երևանում ու Միությունը բազմաթիվ այլ քաղաքներում, թարգմանվել է ռուսերեն և այլ լեզուներով, տպագրվել *1935*-ին։ Մասնակցել է «Խաստուշ, քրդերը և եզդիները» ֆիլմերին՝ կարևոր դերերով։

ՋԱՆԲԱԶՅԱՆ ԱՎԵՏԻՍ *(ծն. 1932)*.— Կոմպոզիտոր։ Ծնվել է Արմավիրում (Հյուսիսային Կովկաս)։ Փոքր հասակից ծնողների հետ տեղափոխվել է Թեհրան, որտեղ ստացել է նախնական կրթությունը։ *1952* թ. մեկնել է Վիեննա, սովորել տեղի երաժշտական ակադեմիայում, աշակերտել Կառլ Շիշկեին և այլ պրոֆեսորներին։ Վերադառնալով Իրան, նվիրվել է ստեղծագործական աշխատանքի։ Գրել է 1-ին, 2-րդ, 3-րդ սիմֆոնիաներ, մի ուվերտյուր, դաշնամուրային կոնցերտ, կվինտետներ, մեծ եղեռնին նվիրված մի սիմֆոնիա և այլն։ Նրա այս վերջին գործը *1972*-ին կատարվել է Վիեննայի «Գրոսսեն Զինդերսալ» մեծ համերգասրահում սիմֆոնիկ նվագախմբի կողմից, Կարլ Ռանդոլֆի ղեկավարությամբ։ Նույն տարում կատարվել է նաև Փարիզում։

ՋԱՆԻԲԵԿՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ *(1897—1978)*.— Դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ։ Ծնվել է Երևանում, որտեղ ստացել է կրթությունը, սովորել նախ ռուսական ուսումնարանում, ապա՝ ուսուցչական սեմինարիայում, ավարտել *1917* թ.։ Այդ տարիներից մասնակցել է Երևանում կազմակերպված հայերեն ներկայացումների, նաև Մկրտիչ և Սյուզան Գարագաշ ամուսինների օպերետային բեմադրություններին, իսկ *1919* թ.՝ Ջարիֆյան—Աբելյան խմբի ներկայացումներին *(«Համլետ», «Ցո երթաս», «Նամուս» և այլն)*, *1921* թ. մեկնել է Իրան, սակայն շուտով վերադարձել է հայրենիք, *1922—1923* թթ. խաղացել է Լենինականի Ա. Արմենյանի խմբում, մեկ թատերաշրջան էլ Թիֆլիսի Հայկական դրամայում, իսկ *1924—1925* թատերաշրջանից ընդմիշտ կապվել է Երևանի պետական առաջին թատրոնի հետ (հետագայում Գ. Սունդուկյանի անվան)։ Քսանական թվականների նրա լավագույն դերակատարումներից է եղել Մասիսյանը Գ. Սունդուկյանի «Խաթաբալայում»։ Հետագա տարիներին կատարած դերերից են Պավլե Սոթլիկյանը՝ «Ցասումում», Մակդուֆը՝ «Մակբեթում», մանավանդ Ֆիգարոն՝ Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնությունը» պիեսում։ *1934* թ. հանդես է եկել Օթելլոյի դերում, որպես Դեզդեմոնա խաղընկեր ունենալով Ուրուս Ոսկանյանին, Յագո՝ Միքայել Մանվելյանին։ Դրան

հաջորդել են մի շարք նոր գերեր, որոնց մամուլը անդրադարձել է բարձր գնահատականներով, դրանք են Սեյրանը՝ «Նամուսում», Շահ Զեիրը Ջանանի «Շահնամեում», Բագրատը «Պատվի համարում», Քարեզամը Դ. Դեմիրճյանի «Նապոլեոն Կորկոտյան» կատակերգությունում, որը համարվել է 1930-ական թվականների խորհրդահայ թատրոնի նվաճումներից։ Հայրենական պատերազմի առաջին տարիներին հանդես է եկել Համլետի (1942), Ռոզենբերգի («Ռուս մարդիկ») (1942) դերերում։ Նրա գլուխգործոց դերակատարումը եղել է այդ տարիներին կերտած Գրիգոր աղան՝ «Ժայռը» պիեսում։ Այս դերում նա չի ունեցել ոչ իր նախորդը և ոչ էլ հաջորդը։ 1950—1960-ական թվականների լավագույն դերերից են Պրոտոսովը «Կենդանի դիակում», Գառնակերյանը «Փորձադաշտում», Ջեյմս Բրոուտին «Բրոուտիի ամրոցում», Գաևը «Բալենու այգին» պիեսում, Վասակը՝ իր գրած և բեմադրած «Վարդանանք» ողբերգությունում (1962)։ Վերջին փայլուն դերակատարումը եղել է Վարպետ Սահակը Արամ-Աշոտ Պապայանի «Աշխարհն այդ, շուտ է եկել» կատակերգությունում։

ՋԱՆԻԿՅԱՆ ԳՐԻԳՈՐ (ծն. 1944).— Գրող, թարգմանիչ։ Ծնվել է Բուլգարիայի Խասկովո քաղաքում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտում, որի ֆրանսիական բաժինն ավարտել է 1965 թ., աշխատել որպես լրագրող։ 1966—1973 թթ. աշխատել է «Գարուն» ամսագրի խմբագրությունում, 1973 թվականից՝ «Գրական» թերթի խմբագրությունում։ Մամուլում տպագրել է արձակ երկեր, գեղարվեստական ակնարկներ, թարգմանություններ։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Խսկապես ինչպիսին է աշխարհը» (Երևան, 1964), «Մահին հաղթողները» (1968), «Հորիզոնի կանչող գույները» (1975), «Հավատարիմ երազանքին» (1979), «Ալեհեր լեռն ու իր թոռները» (1987)։ Ֆրանսերենից թարգմանել է Պ. Դամառայի «Տրիկուարի գանձը» վիպակը, որը լույս է տեսել նույն հեղինակի «Փետրավոր օձի գաղտնիքը» խորագրով ժողովածուում (Երևան, 1968)։

ՋԱՆՅԱՆ (ՕՀԱՆՋԱՆՅԱՆ) ԲՈԲԴԱՆ (ծն. 1917).— Գրող։ Ծնվել է Տումի գյուղում (այժմ՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Հադրութի շրջան)։ Բարձրագույն կրթությունն ստացել է Բաքվի՝ Ազրբեջանի մանկավարժական ինստիտուտում, որի բանասիրական ֆակուլտետի հայկական բաժինն ավարտել է 1938 թ.։ Հաջորդ տարվանից աշխատել է Ստեփանակերտի «Երիտասարդ բոլշևիկ» թերթի խմբագրությունում, ապա՝ Լեռնային Ղարաբաղի գրողների միության մարզային բաժանմունքում որպես պատասխանատու քարտուղար։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Իմ լուսաբացը» (Բաքու, 1948), «Ճամփաներ» (1957), «Իմ Երևանը» (1960), «Խաղաղ եղերքներ» (1963), «Ես մենակ չեմ» (1964), «Լեռներն արձագանքում են» (1967), «Իմ մոտիկ հեռուն» (1969), «Կանչող հեռուներ» (1974), «Արմատների հավատով» (1979), «Անտառը լռում է» (1983), «Իշխանաձորի կանչը» (1986)։ Ռուսերենից կատարել է թարգմանություններ։

ՋԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ-ՍԱՀԱԿ (1874—1956).— Գրող։ Ծնվել է Վանում, որտեղ ստացել է կրթությունը, զբաղվել ուսուցչությամբ։ Հետագայում մեկնել է Ամերիկա, բնակություն հաստատել Սան Ֆրանցիսկոյում։ Գրական-հրապարակախոսական հոդվածներով աշխատակցել է ամերիկահայ մամուլին։ Այցելել է Խորհրդային Հայաստան, իր տպավորությունները տպագրել Ամերիկայում լույս տեսնող «Մշակ» և «Նոր օր» թերթերում։ Գրել է բանաստեղծություններ, որոնք տպագրվել են մամուլում և ամփոփվել «Ուղերձներ» և «Մաղկեփունջ» ժողովածուներում։

ՋԱՆՈՅԱՆ ԳՈՒԻԴԵՆ (ծն. 1912).— Դերասան. Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1957)։ Ծնվել է Կարսում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Դ. Սունդուկյանի անվան պետական թատրոնին կից թատերական ստուդիայում։ 1932—1935 թթ. խաղացել է Ստեփանակերտի (Լեռնային Ղարաբաղ) պետական թատրոնում, 1935-ին՝ Երևանի Մ. Գորկու անվան բանվորական թատրոնում, 1936-ից՝ Ամո Խարազյանի անվան շրջիկ թատրոնում։ Այնուհետև աշխատել է Էջմիածնի, Կամոյի, ապա՝ Արտաշատի թատրոններում, վերջինում որպես դիրեկտոր և դերասան։ Վերոհիշյալ թատրոններում տարիների ընթացքում կատարել է տասնյակ դերեր, որոնցից առավել կարևորներն են՝ Նեկնամով («Անմեղ մեղավորներ»), Ժադով («Եկամտաբեր պաշտոն»), Կրիչինսկի («Կրիչինսկու հարսանիքը»), Պեպո («Համանուն պիեսում»), Գառնակերյան («Փորձադաշտ»), Ֆերդինանտ («Սեր և խարդավանք»), Օգսեն («Պաղտասար աղբար»), Կորբաղո («Ոճրագործի ընտանիքը»), Սեյրան («Նամուս»), Օթարյան («Պատվի համար») և այլն։

ՋԱՆՇՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1851—1900).— Բանաստեղծ, հրապարակախոս։ Ծնվել է Թիֆլիսում։ Կրթությունն ստացել է նախ ծննդավայրի ռուսական գիմնազիայում, կարճ ժամանակ էլ Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ապա՝ Մոսկվայի համալսարանում, որի իրավաբանական բաժինն ավարտել է 1874-ին և զբաղվել իրավաբանությամբ ու հրապարակախոսությամբ։ Ռուսական թերթերում և հանդեսներում տպագրե է պատմաբանասիրական բազմաթիվ հոդվածներ, գերազանցապես եռեռֆորմյան շրջանի Ռուսաստանի պատմության և հայ իրականության հետ կապված հարցերի մասին։ Եղել է «Ռուսսկայա վեդոմոստի» թերթի մնայուն աշխատակիցներից, նաև խմբագիրներից։ Այդ թերթի էջերում տպագրել է համիդյան բռնապետական կարգերը քննադատող հոդվածներ։ Դրանցից մի քանիսը թարգմանաբար լույս են տեսել հայ մամուլում («Արաքս» և այլն)։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններից են՝ «Մեծ ռեֆորմների էպոխայից», որն արժանացել է 7 հրատարակության։ 1895 թ. Մոսկվայում լույս է ընծայել «Հայերի վիճակը Թուրքիայում» ստվար ժողովածուն, որը պարունակում է փաստական հարուստ նյութ Թուրքիայի տիրապետության տակ ապրող հայերի ծանր վիճակի մասին։ Հաջորդ տարի տպագրել է «Եղբայրական օգնություն Թուրքիայի տառապյալ հայերին» ստվար ժողովածուն, որը պարունակում է հայ գրականության լավագույն նմուշների թարգմանությունը, բազմաթիվ հոդվածներ հայ ժողովրդի պատմության, մշակույթի տարբեր բնագավառների վերաբերյալ, նաև առանձին հայ նշանավոր գործիչների մասին։ Այս գիրքը արժանացել է երկրորդ տպագրության (1898)։ Աշխատակցել է նաև «Վեստնիկ Եվրոպի», «Պետերբուրգսկայա վեդոմոստի», «Ժիզն» և այլ պարբերականների։

ՋԱՍԸՄԵ ՋԱԼԻԼ (ծն. 1908).— Գրող, թարգմանիչ։ Ծնվել է Կարգի մարզի Ղըզըլզալա գյուղում։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ապաստան է գտել Լենինականի և Ստեփանավանի մանկատներում։ 1927—1930 թթ. սովորել է Բաքվում, Անդրկովկասյան զինվորական նախապատրաստական դպրոցում, ապա՝ Անդրկովկասյան զինվորական հետևակային դպրոցում (Թիֆլիս)։ Հետագայում սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, որի լեզվագրական ֆակուլտետն ավարտել է 1941 թ.։ 1972 թվականից աշխատել է «Հայաստան» հրատարակչությունում։ Կազմել է քրդերեն դասագրքեր, ինչպես՝ «Իմ օրերը» (Երևան, 1960), «Լեռների երգը» (1970), «Քրդի օդա» (1975)։ 1968 թ. Մոսկվայում լույս է տեսել նրա «Ժամանակների ճամփաներով» ռուսերեն գիրքը։ Հայերեն լեզվով հրատարակած երկերն են՝ «Ալագյազ» (Երևան, 1954), «Քրդական սիրավեպեր» (1955), «Մայրենի աղբյուր» (1957), «Իմ օջախը» (1966)։

ՋԱՎԱԽԵՏԻ (ՂԱԶԱՐՈՍ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ) (1874—1937).— Գրող, գյուղագիր։ Ծնվել է Գանձա գյուղում (այժմ՝ Վրացական ԽՍՀ, Բոգդանովկայի շրջան)։ Մեծ եղբայրն է բանաստեղծ Վահան Տերյանի։ Կրթությունն ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Որպես ուսուցիչ աշխատել է նախ ծննդավայրում, ապա Ուզբեկստանում։ Գրական ասպարեզ է մտել 1890-ական թվականների վերջերին «Մշակ» և այլ պարբերականներում տպագրելով գյուղական կյանքից վերցված արձակ էջեր։ 1900 թ. առանձին գրքով տպագրել է «Ջավախքի աղետը», 1903-ին՝ «Կրակը», 1905 թ.՝ «Պատկերներ» ժողովածուն, բոլորն էլ Թիֆլիսում։ Խորհրդային շրջանում առանձին գրքերով հրատարակած երկերն են՝ «Պատկերներ» (Երևան, 1930), «Պատկերներ» (1936) և այլն։

ՋԱՐԴԱՅԵՏ ԳԵՆՋՈ (ԱՐՄԵՆԱԿ ԳԵՆՋԵՑՅԱՆ) (1904—1945).— Գրող, թարգմանիչ։ Ծնվել է Կարսի մարզի Յամանլար գյուղում։ 1924—1929 թթ. կոմերիտական աշխատանքներ է կատարել Հայաստանի մի քանի շրջաններում։ Եղել է քրդերեն առաջին թերթի՝ «Ռիյա Թազայի» խմբագիրներից, Ալագյազի քրդական թատ-

ռոնի դիրեկտոր։ Գրել է քրդերեն պատմվածքներ։ Ռուսերենից քրդերեն է թարգմանել Դ. Ֆուրմանովի «Խռովություն» վեպը, իսկ հայերենից՝ Խ. Աբովյանի, Շիրվանզադեի, Դ. Դեմիրճյանի առանձին գործերը։

ՋԱՍԻԱՐԻ ՋՆԴԻ ՀԱՋԻԵ (ծն. 1908).— Գրող, բանաստեղծ, բանահավաք. Բանասիրական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Կարսի մարզի Ցամանչաիր գյուղում։ 1929 թ. ավարտել է Լենինականի մանկավարժական տեխնիկումը, 1933 թ.՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը։ Ապա շարունակել է ուսումը Նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում։ 1936—1959 թթ. աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում, համատեղության կարգով, 1930—1938 թթ.՝ նաև քրդական մանկավարժական տեխնիկումում և «Ռյա Թազա» թերթի խմբագրությունում։ 1959 թվականից առայսօր աշխատում է ԳԱ արևելագիտության ինստիտուտում, միաժամանակ քրդական ժողովրդական բանահյուսություն է դասավանդում Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում։ 1940 թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1964-ին՝ դոկտորի գիտական աստիճան։ Կազմել է քրդերեն լեզվի բազմաթիվ դասագրքեր, ժողովրդական հեքիաթների ժողովածուներ։ Գրել է քրդերեն գեղարվեստական երկեր, ինչպես «Նոր առավոտ» (պատմվածքների ժողովածու, Երևան, 1947), «Օգնություն» (վեպ, 1967), «Քրդական վիպերգեր» (ռուսերեն, Մոսկվա, 1962)։ Հայերենից քրդերեն է թարգմանել Հովհ. Թումանյանի «Գիքորը» (հեղինակակից Ա. Ավդալ, Երևան, 1932), Հ. Սիրասի «Մամե և Աշեն» (1935), Ավ. Իսահակյանի «Քուրդ Ամոն» (1963), Սայաթ-Նովայի մի շարք երկերը, Գ. Սունդուկյանի «Պեպոն», Ալ. Շիրվանզադեի «Նամուսը», «Չար ոգին», Վ. Փափազյանի «Ժայռը», Դ. Դեմիրճյանի «Թաջ Նազարը» և այլն։ Հայերեն լեզվով առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Քրդական հեքիաթներ» (1940, 1952), «Քրդական ֆոլկլորը» (1947, 1957), «Յոթ օղլի էպոսի քրդական պատումները» (1953), «Մամե և Զինե» (1956), «Քրդական հերոսական վիպերգեր», «Ակնարկ Խորհրդային Հայաստանի քրդական գրականության» (1970), «Քրդական ժողովրդական հեքիաթներ» (1973) և այլն։ 1979 թ. ընտրվել է Իրաքի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ։

ՋԻԳԱՐԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ (ծն. 1935).— Դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ։ Ծնվել է Երևանում, որտեղ ստացել է միջնակարգ և բարձրագույն մասնագիտական կրթությունը։ Սովորել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, որի դերասանական ֆակուլտետն ավարտելուց հետո (1958), մինչև 1967 թ. աշխատել է Երևանի Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական պետական թատրոնում։ Այնտեղ նա հանդես է եկել գլխավոր հերոսների մոտ 25 դերերով, որոնցից են՝ Սերգեյ («Երկուսուկյան պատմություն»), Թեոդոս («Պահանջվում է ստախոս»), Ռիչարդ III (Շեքսպիրի համանուն ողբերգությունում)։ Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում կատարել է Վ. Ի. Լենինի դերը՝ «Հանուն հեղափոխության» պիեսում։ 1967—1969 թթ. աշխատել է Մոսկվայի Լենինյան կոմերիտմիության թատրոնում, ապա՝ Մայակովսկու թատրոնում։ 1960-ական թվականների սկզբներից մշվել է դեպի կինոարվեստը։ Նկարահանվել է Խորհրդային Միության տարբեր կինոստուդիաների պատրաստած ավելի քան 40 ֆիլմերում, «Հայֆիլմի» նկարահանածներից մասնակցել է «Փյուզուֆ», «Արևածագից առաջ», «Ջրերը բարձրանում են» և այլ ֆիլմերի։ Ավելի լայն ճանաչում է ձեռք բերել «Բարև, ես եմ», «Սուանկյունի» ֆիլմերում կատարած իր կենտրոնական դերերով։ Նրա լավագույն դերակատարումներից են Ազարիան՝ «Լքված հեքիաթների կիրճը» ֆիլմում։ Մասնակցել է նաև այլ ֆիլմերի («Երբ գալիս է սեպտեմբերը», «Անորսալի վրիժառուներ», «Տղամարդիկ», «Հարսնացուն հյուսիսից» և այլն)։ Գլխավոր հերոսի դերով հանդես է եկել «Սգավոր ձյունը» ֆիլմում (ըստ Հ. Թրուայայի համանուն գործի)։ «Արտակարգ կոմիսար» ֆիլմում («Ուզբեկֆիլմ») և այլն։

ՋԻՆԱՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ (ծն. 1906).— Գրող, կրթական գործիչ. Վրացական ԽՍՀ վաստակավոր ուսուցիչ։ Ծնվել է Աբխազիայի գյուղերից մեկում։ Միջնակարգ և բարձրագույն կրթությունն ստացել է Երևանում։ Սովորել է Երևանի պետական համալսարանում, իսկ 1928-ից՝ Լենինգրադի Դերցենի անվան մանկավարժական ինստիտուտում, որն ավարտել է 1930-ին։ Վերադառնալով Աբխազիա, աշխատել է Սուխումում նախ որպես ժողկրթբաժնի վարիչ, ապա՝ 1932—1939 թթ. Սուխումի հայկական մանկավարժական ուսումնարանի և 4-րդ միջնակարգ դպրոցի դիրեկտոր։ 1941—1945 թթ. ծառայել է խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո՝ 1945—1954 թթ. աշխատել է Երևանում որպես լուսավորության մինիստրության ավագ տեսուչ, միաժամանակ դասավանդել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական, գեղարվեստաթատերական ինստիտուտներում։ 1954—1967 թթ. եղել է Սուխումիի հայկական միջնակարգ դպրոցի դիրեկտոր։ Սուխումում կազմակերպել է հայկական թատերախմբեր, «Համշեն» գրական միավորումը, որը ղեկավարել է ինքը։ 1959 թ. Սուխումիում բեմադրվել է նրա «Կյանքի գնով» հայերեն դրաման։ Առանձին գրքերով լույս ընծայած երկերն են՝ «Արևածագ» (բանաստեղծություններ), (Սուխում, 1934), «Պապը» (պոեմ, 1936), «Արևի հովանու տակ» (1941), «Նոսի շունը» (1950), «Ինչպես տեսել եմ» (1968)։

ՋԻԼԱՎՅԱՆ ԹԱԴԵՎՈՍ (1892—1937).— Գրող։ Ծնվել է Ջալալօղլիում (այժմ՝ Ստեփանավան)։ Կրթությունն ստացել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ 1910-ական թվականների կեսերից Թիֆլիսի հայկական մամուլում տպագրել է գեղարվեստական երկեր։ 1926 թ. Թիֆլիսում առանձին գրքույկով հրատարակել է «Անխնամը» պատմվածքը։ Հաջորդ տարի մրցանակի է արժանացել նրա «Փրկիչ կոոպերատիվը» պատմվածքը։ 1929-ին լույս է ընծայել «Բատրակ Սամուելը», 1935-ին՝ պատմվածքների առաջին ժողովածուն, իսկ 1936-ին՝ երկրորդ ժողովածուն։ 1964 թ. Երևանում վերահրատարակվել են նրա լավագույն պատմվածքները առանձին գրքով։

ՋԻՆԱՆՅԱՆ ՀՐԱԶՈՒՀԻ (ծն. 1919).— Ասմունքող արվեստագետ, Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ։ Ծնվել է Կ. Պոլսում։ 1925 թ. նրանց ընտանիքը ներգաղթել է Խորհրդային Հայաստան, բնակություն հաստատել Երևանում, որտեղ ստացել է կրթությունը։ 1936 թվականից սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի եվրոպական գրականության և լեզվի բաժնում։ Չավարտած սկսվել է Հայրենական պատերազմը և 1941 թ. մոբիլիզացվել է Երևանի ռադիոյում աշխատելու. այնտեղ նա սկզբում եղել է հաղորդավար, ապա գրական հաղորդումների խմբագիր, 1951-ից գլխավոր խմբագիր, 1953-ից՝ ռադիոհաղորդումների ռեժիսոր, 1956 թ.՝ մենակատար, 1971-ից ռեժիսորական և դիրեկտորական խմբի գեղարվեստական ղեկավար։ Ունեցել է բազմաթիվ ռադիոբեմադրություններ, դերակատարումներ այդ բեմադրություններում, ֆոնդային ձայնագրություններ։ 1944 թվականից համատեղությամբ աշխատել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, դասավանդել «Բեմական խոսք» առարկան։ Մասնակցել է մի քանի կինոֆիլմերի կրկնօրինակմանը։ Որպես ասմունքող հանդես է եկել Հայֆիլմհարմոնիայի համերգներում մեր հանրապետության և միության տարբեր քաղաքներում, նաև արտասահմանյան հայաշատ կենտրոններում (Եգիպտոս, Ֆրանսիա, Ամերիկա և այլն), արժանանալով սփյուռքահայ մամուլի ջերմ գնահատականը։ Հանրապետական մրցություններում արժանացել է մրցանակների, ինչպես 1963-ին Սայաթ-Նովայի անվան մրցույթում, 1960 թ. ստացել է Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստի, 1977-ին ժողովրդական արտիստի կոչում։

ՋԻՎԱՆԻ (ՍԵՐՈԲ ԼԵՎՈՆՅԱՆ) (1846—1909).— Ժողովրդական բանաստեղծ։ Ծնվել է Ախալքալաքի շրջանի Կարզախ գյուղում (այժմ՝ Վրացական ԽՍՀ)։ Փոքր հասակից զրկվել է ծնողներից։ 1861 թ. հորեղբոր հետ մեկնել է Թիֆլիս, այնտեղից՝ Ալեքսանդրապոլ, որը եղել է աշուղական արվեստի կենտրոնը Կովկասում։ Ապա՝ որոշ ժամանակ ծննդավայրում և Թիֆլիսում ապրելուց հետո վերջնականապես բնակություն է հաստատել Ալեքսանդրապոլում, հետևել աշուղական արվեստին։ Հորինել է հայերեն բազմաթիվ երգեր, կատարել հասարակության առաջ, հոր կողմից իրեն տրված Ջիվանի փաղաքշական անունն էլ դարձրել է աշուղական անուն, Աստիճանաբար սիրված և փնտրված երգիչ է դարձել և՛ ժողովրդական լայն խավերի, և՛ մտավորականության շրջանում։ Գրել է մեծ քանակությամբ սիրային, կենցաղային,

հայրենասիրական երգեր, որոնք լայնորեն տարածվել են հայ իրականությունում, Կովկասից մինչև հեռավոր հայ գաղութները։ Նրա «Ձախորդ օրեր», «Խելքի աշեցեք», «Մայրիկ», «Բարի գեղեցիկ» և այլ երգերը սերնդե սերունդ փոխանցվելով հասել են մեր օրերը և կատարվում են ամենուր։ Նրա երգերը նախախորհրդային տարիներին և մեր օրերում արժանացել են բազմաթիվ հրատարակությունների։ Առավել ամբողջական ժողովածուն բանաստեղծ Աղասի Սահակյանի կազմած «Ջիվանու քնարը» հատորն է (Երևան, 1959)։ Արևելյան մի քանի սիրավեպեր թարգմանել է հայերեն և հրատարակել է, ինչպես «Շահ Իսմայիլի հեքիաթը» (1895), «Ասլի Քյարամի հեքիաթը» (1895), «Աշուղ Ղարիբի հեքիաթը», որն ունեցել է մի քանի տպագրություն, քեմականացվել է և ներկայացվել որպես օպերետ տասնյակ քաղաքներում։ Հայրն է բանաստեղծ Գ. Լևոնյանի։

ՋԻՎԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ *(ծն. 1936).*— Ճարտարապետ, նկարիչ։ Ծնվել է Լենինականում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, որի շինարարական ֆակուլտետի ճարտարապետության բաժինն ավարտել է 1961-ին։ 1972-ից եղել է Լենինականի գլխավոր նկարիչը։ Նրա նախագծերով 1962—1973 թթ. Լենինականում կառուցվել են բնակելի մի քանի շենքեր, աղբյուր-հուշարձաններ հանրապետության տարբեր վայրերում, ինչպես Ղուկասյանի շրջանի Թորոս գյուղում, Անիի շրջանի Բագրավան գյուղում, Ախուրյանի շրջանի Ազատանում և այլն։ Տարտուում էլ նրա նախագծով աղբյուր-հուշարձան է կառուցվել նվիրված Խ. Աբովյանին (1978)։ Գեղանկարչական գործերից են՝ «Գյուղական անդորր», «Աշնանային ակնթարթ», «Երեկո», «Բակ Լենինականում» և այլն։

ՋԻՎԵԼԵԿՈՎ ԱԼԵՔՍԵՅ *(1875—1952).*— Արվեստաբան, գրականագետ, թարգմանիչ. Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ (1945)։ Ծնվել է Նոր Նախիջևանում։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի հայկական թեմական դպրոցում, Ե. Շահազիզի տեսչության տարիներին։ Ապա ուսումը շարունակել է Մոսկվայի համալսարանում, որի պատմագրական ֆակուլտետն ավարտել է 1897-ին։ Ունեցել է գիտական, մանկավարժական բեղուն գործունեություն։ Տպագրել է Արևմտաեվրոպական երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությանը վերաբերող աշխատություններ՝ «Միջին դարերի քաղաքային համայնքը» (1907), «Միջնադարյան քաղաքները Արևմտյան Եվրոպայում» (1902), «Գյուղացիական շարժումները Արևմուտքում» (1920), «Ժամանակակից Գերմանիայի պատմություն» (2 հատոր, 1908), «Ժան Պոլ Մարատ» (1923) և այլն։ Հետագայում ամբողջովին նվիրվել է Վերածննդի շրջանի գրականության ու արվեստի ուսումնասիրմանը, դառնալով ճանաչված հեղինակություն այդ բնագավառում։ Առավել ակնառու հետազոտություններից են՝ «Իտալական Վերածննդի ակնարկներ» (1929), «Դանթե Ալիգիերի» (1933), «Դրամայի տեսությունը XVI դարի Իտալիայում» (1953), «Ֆրանսիական թատրոնի ժողովրդական հիմքերը» (1955), «Իտալական ժողովրդական կատակերգությունը» (1954)։ Նրա առաջաբաններով են լույս տեսել Ա. Պոլիցիանոյի, Ն. Մաքիավելիի, Կ. Գոլդոնիի, Պ. Բոմարշեի երկերի ռուսերեն մի քանի թարգմանությունները։ Գրել է «Արևմտաեվրոպական թատրոնի պատմությունը սկզբից մինչև 1789 թ.» գիրքը (1941, Գ. Բոյաջիի հետ)։ Կատարել է թարգմանություններ Կ. Գոլդոնիից և ուրիշներից։ 1898-ից եղել է «Գրանատ» հանրագիտական բառարանի պատասխանատու քարտուղարը։ Այդ բառարանում նա տպագրել է մեծ ու փոքր հարյուրավոր հոդվածներ, որոնց մի մասը վերաբերում է հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին։ Երկար տարիներ դասախոսել է Մոսկվայի համալսարանում և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում։ 1939-ից եղել է Մոսկվայի համաշխարհային գրականության ինստիտուտի արևմտաեվրոպական գրականության բաժնի վարիչը, իսկ 1945-ից՝ Արվեստի պատմության ինստիտուտի թատերական սեկտորի վարիչը։

ՋԻՐԴԻՋ (ԳԵՐԳԵՋ) ՀՈՎՍԵՓ *(18-րդ դ.).*— Նկարիչ, որդի Անանիա Մուսավիրի։ Ապրել և ստեղծագործել է Հալեպում (Սիրիա)։ Հիմնականում զբաղվել է սրբանկարներ պատրաստելով հույն օրթոդոքս եկեղեցիների համար։ Նրա գործերից պահպանվել են «Համբրիչով աստվածամայրը», «Անաղարտ հղությունը»։

ՋՆՏՈՅԱՆ ՆԵՐՍԵՍ.— Բանաստեղծ, հոգևորական գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում։ Կրթությունն ստացել է Վենետիկի Մխիթարյանների վանքում, գարձել այդ միաբանության անդամ։ Ունեցել է կրթական, գրական-բանասիրական գործունեություն։ Աշխատակցել է «Բազմավեպ» հայագիտական հանդեսին, պատմաբանասիրական հոդվածներով։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Պատմություն արևելյան ազգաց և հունաց» (Վենետիկ, 1849), «Առձեռն ընդհանուր ժամանակագրություն հին և նոր տերությանց» (Վենետիկ, 1880) և այլն։

ՋՈՒԹՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ *(1913—1954).*— Գրող։ Ծնվել է Հայաստանի Մեծ Պարնի գյուղում (այժմ՝ Հայկական ԽՍՀ Սպիտակի շրջան)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, 1934 թ. ավարտել է Կիրովականի միջնակարգ դպրոց, 1941 թ. Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը։ Մասնակցել է Հայրենական պատերազմին։ Զորացրվելուց հետո կարճ ժամանակ եղել է ուսուցիչ Ալավերդու շրջանում՝ ապա՝ 1944 թվականից աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող։ 1949—1950 թթ. սովորել է ԽՍՀՄ գրողների միության կից Մոսկվայի դասընթացներում։ 1946 թ. լույս է տեսել նրա «Գերված աղջիկը» վեպը, 1950 թ.՝ «Անտառում» գրքույկը։ Անավարտ է մնացել Խ. Աբովյանին նվիրված վեպը։

ՋՐԱՂԱՅՊԱՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ *(ծն. 1917).*— Դերասան, Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ (1967)։ Ծնվել է Երևանում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնին կից Արմեն Գուլակյանի ղեկավարած թատերական ստուդիայում, ավարտել է 1936-ին։ Նույն տարվանից աշխատել է այդ թատրոնում։ Տարիների ընթացքում կատարել է մի քանի տասնյակ դերեր, որոնցից են՝ Ալոսով («Ռևիզոր»), Բժիշկ («Եգոր Բուլըչև»), Սահակ («Այս աստղերը մերն են»), Գալուստ («Ժայռ»), Գրագիր («Կենդանի դիակ»), Պետրո («Ռոմեո և Ջուլիետա»), Զարզանդ («Աշխարհն, այո, շուտ է եկել») և այլն։ Մասնակցել է հեռուստատեսային մի շարք բեմադրությունների։

ՋՐԱՍՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ *(19-րդ դ.).*— Տնտեսագետ, հրապարակախոս։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, իսկ բարձրագույնը՝ Փարիզի կայսերական երկրագործական վարժարանում։ Ավարտելուց հետո վերադարձել է ծննդավայրը և 1860-ական թվականների սկզբներից ունեցել է հրապարակախոսական նկատելի գործունեություն։ Պարբերական մամուլում տպագրել է տնտեսագիտական արժեքավոր հոդվածներ, որոնք նորություն են եղել այդ տարիներին հայ իրականությունում։ Գրել է «Տնտեսական» խորագրով մի ուսումնասիրություն, որը տպագրվել է «Մասիս» թերթի 1864 թ. տասնյակ համարներում։ Այդ աշխատությունում, որտեղ ի հայտ է գալիս նրա իրազեկությունը ուտոպիստական սոցիալիզմի գրականությանը, նկատելի է Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» հայտնի գրքի որոշակի ազդեցությունը։

ՋՐԲԱՇՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ *(ծն. 1923).*— Գրականագետ, Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1982), բանասիրական գիտությունների դոկտոր (1965), Հայկական ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1970)։ Ծնվել է Երևանում։ Միջնակարգ կրթությունն ավարտել է 1941 թ., զորակոչվել խորհրդային բանակ։ Սովորել է Բաքվի հրամանատարական դպրոցում, ապա Թբիլիսիի հրամանատարական կազմի կատարելագործման Անդրկովկասյան դասընթացներում։ 1943—1944 թթ. ծառայել է տարբեր զորամասերում, մասնակցել մարտական գործողությունների, ծանրորեն վիրավորվել։ Զորացրվելուց հետո 1945 թվականից սովորել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինն ավարտել է 1950 թ., շարունակել ուսումը ասպիրանտուրայում։ 1950-ից դասախոսել է համալսարանի բանասիրական ֆակուլտետում։ 1954-ին պաշտպանել է թեկնածուական, 1965-ին՝ դոկտորական դիսերտացիա։ Դասախոսական աշխատանքին զուգընթաց՝ 1953—1954 թթ. աշխատել է «Գրական թերթում» որպես խմբագրի տեղակալ, 1961—1962 թթ. «Խորհրդային գրականություն» ամսագրում որպես գլխավոր խմբագիր։ 1966—1970 թթ. եղել է ԳԱ Մ. Ա-

բեղյանի անվան գրականության ինստիտուտի գրականության տեսության բաժնի վարիչ, 1972—1978 թթ.՝ պետական համալսարանի գրականության տեսության և գեղագիտության ամբիոնի վարիչ։ Հասարակական կարգով 1967—1977 թթ. «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի գլխավոր խմբագիր։ 1977-ից Հայկական ԽՍՀ Դա Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտաշխատող է։ Առանձին գրքերով լույս ընծայած գրականագիտական աշխատություններն են՝ «Պոեմի ժանրը խորհրդահայ գրականության մեջ» (Երևան, 1955), «Միսաք Մեծարենց» (1958, 1977), «Գրականության տեսություն» (1961, 1962, 1967, 1972, 1980), «Թումանյանի պոեմները» (1964), «Ռուբեն Սևակ» (1965), «Աշխարհայացք և վարպետություն» (1967), «Թումանյանի բալլադները» (1969), «Գրականագիտական բառարան» (հեղինակակից Հ. Մախչանյան) (1972), «Պոետիկայի հարցեր» (1976), «Գեղագիտություն և գրականություն» (1983), «Միքայել Նալբանդյանը և արդիականությունը» (1984)։ Ընդարձակ գլուխներով մասնակցել է «Հայ նոր գրականության պատմության 5-րդ հատորի ստեղծման աշխատանքներին։ Նրա «Թումանյանի պոեզիան» աշխատությունը լույս է տեսել նաև ռուսերեն (Մոսկվա, 1969)։ 1974 թ. արժանացել է Հայկական ԽՍՀ պետական մրցանակի «Գրականության տեսություն» ուսումնական ձեռնարկի համար, իսկ 1980 թ.՝ «Հայ գրականության պատմության» կոլեկտիվ աշխատության համար։

ՋՐԲԱՇՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ (ծն. 1923).— Ռեժիսոր։ Ծնվել է Կիսլովոդսկում, որտեղ ստացել է միջնակարգ կրթությունը, իսկ բարձրագույնը՝ Թբիլիսիի համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժնում, որը չի ավարտել։ 1942—1945 թթ. ծառայել է խորհրդային բանակում։ 1950-ին ավարտել է Երևանի թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետը։ 1954—1968 թթ. որպես ռեժիսոր աշխատել է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում, որտեղ ունեցել է բեմադրություններ թե ականավոր ռեժիսորների հետ և թե ինքնուրույն։ Դրանցից են՝ «Պիկովայա դամա» (Ռ. Սիմոնովի հետ), «Արծվաբերդ» (Վ. Վարդանյանի հետ), «Լուսաբացին» (Ա. Գուլակյանի հետ)։ 1969-ից աշխատել է հանրապետության տարբեր թատրոններում՝ Լենինականի, Կիրովականի, Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոններում։ Եղել է Կիրովականի Հ. Աբելյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար և գլխավոր ռեժիսոր։ Վերոհիշյալ թատրոններում բեմադրել է տասնյակ պիեսներ («Անտառը», «Անհանգիստ ծերություն», «Մակբեթ» և այլն)։ 1956 թվականից աշխատել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, որտեղ Վ. Վարդանյանի ղեկավարությամբ նկատելի աշխատանք է կատարել ԽՍՀՄ ժողովուրդների համար ռեժիսորական ազգային կադրեր պատրաստելու ուղղությամբ։ Դրա արտահայտություններից մեկն է եղել Դաղստանի ժողովուրդներից դարգիններ թատրոնի բացումը Մախաչկալայում։

ՋՐԲԱՇՅԱՆ ՍՏԵՓԱՆ (1917—1973).— Կոմպոզիտոր, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ։ Ծնվել է Բաքվում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Թբիլիսիի պետական կոնսերվատորիայում, որի ջութակի դասարանն ավարտել է 1943 թ. և աշխատել Վրաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբում։ 1948 թ. տեղափոխվել է Երևան, շարունակել ուսումը Կոմիտասի անվան կոնսերվատորիայի կոմպոզիտորական ֆակուլտետում։ Այդ տարիներից էլ ստեղծագործել է։ Գրել է սոնատ՝ թավջութակի և դաշնամուրի համար, դաշնամուրային կվինտետ և այլն։ 1953 թ. մեկնել է Մոսկվա, սովորել Հայաստանի կուլտուրայի տանը առընթեր ստուդիայում։ Վերադառնալով Երևան՝ ամբողջովին նվիրվել է ստեղծագործական աշխատանքի։ Գրել է մեներգեր, զուգերգեր, ռոմանսներ, սիմֆոնիկ և վոկալ սիմֆոնիկ երգեր, երաժշտություններ թատերական ներկայացումների և կինոֆիլմերի համար, երաժշտական կատակերգություններ («Ես, իմ հարսնացուն և...», «Մարսից եկած փեսացուն»), «Երազիկ» օպերետը, որը հաջողությամբ բեմադրվել է Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնում և Խորհրդային Միության այլ հանրապետություններում։ Երկար տարիներ աշխատել է Հայկական ԽՍՀ մինիստրների խորհրդի հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի Ա. Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անսամբլում, սկզբում որպես գիրիժոր, ապա՝ գեղարվեստական ղեկավար։ Մի շարք պիեսներ էլ գրել է այդ անսամբլի համար։ Ունեցել է մանկավարժական գործունեություն։ Դասավանդել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում և Չայկովսկու անվան երաժշտական տասնամյա դպրոցում։ Հրատարակած գործերից են՝ «Տոնական կոնցերտային պիես՝ ջութակի և դաշնամուրի համար» (1957), «Երկու զուգերգ-դաշնամուրի նվագակցությամբ» (1956), «Գարնանային մեղեդիներ» (1958) և այլն։

ՋՈՒԴԱՅԻ (18—19-րդ դ.).— Աշուղ։ Նրա երգերից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանի № № 6438, 10295 ձեռագրերում։

ՋՈՒՀԱՐՅԱՆ ԹՈՐԳՈՄ (ծն. 1909).— Մանկավարժ. մանկավարժական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Կարսի մարզի Ղզլչախչի գյուղում։ Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի պատմագրական ֆակուլտետն ավարտել է 1930 թ.։ 1930—1936 թթ. քաղաքատնտեսություն է դասավանդել Երևանի պետական համալսարանում, ապա աշխատել է Ազիզբեկովի շրջանում որպես ժողկրթբաժնի վարիչ։ 1940—1941 թթ. պաշտոնավարել է Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեում։ 1941—1945 թթ. ծառայել է խորհրդային բանակում։ 1945—1949 թթ. աշխատել է Լուսավորության մինիստրությունում որպես տեսուչ, 1949—1967 թթ. Մանկավարժական գիտահետազոտական ինստիտուտում, նախ իբրև գիտաշխատող, ապա՝ հայոց լեզվի ու գրականության մեթոդիկայի սեկտորի վարիչ, 1967-ից՝ Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնում, նախ որպես դասախոս, ապա՝ ամբիոնի վարիչ։ Առանձին գրքերով հրատարակած աշխատություններն են՝ «Հայրենագիտական աշխատանքը դպրոցում», «Խորհրդային Հայաստանի պատմական հուշարձանները», «Գրականության մեթոդիկայի ուրվագծեր», «Հայ գրականության մեթոդիկա» (ուսուցիչների համար), «Հայ գրականության մեթոդիկա» (բուհական ձեռնարկ), ինչպես և հայոց լեզվի ու գրականության մի շարք դասագրքեր, մեթոդական գրքույկներ։

ՋՈՒՆԴ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ (1825—1897).— Կրթական գործիչ, հայագետ։ Ծնվել է Սուչավայում (Մոլդավիա)։ Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի հայկական և գերմանական դպրոցներում։ 1837—1847 թթ. սովորել է Վիեննայի Մխիթարյանների վանքում, որտեղ սովորել և կատարելագործել է մի քանի լեզու՝ հայերեն, ֆրանսերեն, լատիներեն, իտալերեն, գերմաներեն, հունարեն։ Ավարտելուց հետո երկու տարի որպես ուսուցիչ աշխատել է Զմյուռնիայի հայկական դպրոցում, ավանդելով աշխարհագրություն, հայոց պատմություն, գեղագրություն և այլ առարկաներ։ 1850 թ. վերադարձել է Սուչավա. ստանձնել տեղի հայկական դպրոցի տեսչի պաշտոնը, նկատելի դեր կատարել դպրոցի կրթական գործի բարելավման, աշակերտների թվի մեծացման գործում։ 1856-ից Պոլսում զբաղվել է առևտրով, միաժամանակ մոտիկից մասնակցել հայ հասարակական կյանքին, եղել է Ազգային հիվանդանոցի հոգաբարձության ատենապետ, նյութապես օգնել թե այդ հիվանդանոցին և թե պոլսահայ դպրոցներին։ Աշխատակցել է «Մասիս» թերթին։ Այդ տարիներին առանձին գրքով լույս է ընծայել «Մուրադյան վարժարան» աշխատությունը։ Եղել է Կ. Պոլսի Ավստրիական դաղութի նախագահը, Ավստրիայի ներկայացուցիչը միջազգային դատարանում։ Այս ծառայությունների համար Ավստրիական կառավարությունը նրան շնորհել է ժառանգական ազնվականություն՝ կայսրության ասպետի տիտղոսով։ Փարիզում ապրելու տարիներին ֆրանսերեն է թարգմանել Առաքել Դավրիժեցու «Պատմությունը», այն օժտել հմտալից ծանոթագրություններով, սակայն լույս չի ընծայել՝ Բրոսեի թարգմանությունը հրապարակի վրա լինելու պատճառով։ Լատիներենից հայերեն է թարգմանել Ֆլորուսի «Հռոմեական պատմությունը»։ 1890 թ. Կ. Պոլսում լույս է ընծայել մի գրքույկ իր տիկնոջ՝ Նեկտար դր Ջունդին նվիրված, Մահվանից առաջ մոտ 100 000 ֆրանկ է կտակել չքավոր հայ ուսանողներին եվրոպական համալսարաններում ուսում տալու համար։ Այդ կտակով բազմաթիվ հայ ուսանողներ ստացել են կրթաթոշակներ և սովորել Եվրոպայի տարբեր համալսարաններում։

Ռ

ՌԱԹԼ ՋԵՏՐԱՆ (ԵՐԿԱՆՅԱՆ).— Երգչուհի, խմբավար։ Ծնվել է Կ. Պոլսում, երաժշտական գործիքներ վաճառող Սամիկ Երկանյանի ընտանիքում։ Մասնագիտական կրթությունն ստացել է Կահիրեի (Եգիպտոս) կոնսերվատորիայում, կատարելագործել Միլանի կոնսերվատորիայում, ավարտել է 1951 թ.։ Վերադառնալով Եգիպտոս, աշխատել է Կահիրեի իտալական կոնսերվատորիայում, դասավանդել դրամատիկ և լիրիկական արտասանություն։ Զուգահեռ աշխատել է Կահիրեի պետական կոնսերվատորիայում որպես երգի պրոֆեսոր։ Կահիրեի համալսարանի ուսանողներից ստեղծել է երգչախումբ և տվել համերգներ։ Նրան է վստահվել Կահիրեի պետական օպերայի համար մենակատարներ պատրաստելու գործը։ Նրա աշակերտներից շատերը դարձել են հռչակված երգիչ-երգչուհիներ և աշխատել են Ամերիկայում, Շվեյցարիայում, Հունաստանում և այլ երկրներում, ինչպես Ամերիկայի հեռուստատեսության աստղերից Սառա Հելը, Եգիպտական կինոաստղերից Լորնա Արդել Ազիզը։ Տվել է հրապարակային մի շարք համերգներ։ 1944—1957 թթ. երգել է Կահիրեի ռադիոյում։

ՌԱՇՄԱՃՅԱՆ ՍԵՐԳԱԿ *(1907—1978).*— Նկարիչ։ Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ (1967)։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Որդին է մանկավարժ Տիգրան Ռաշմաճյանի։ Նախ սովորել է Մոսկվայի Լաղարյան հեմարանում, ապա մասնագիտական կրթություն է ստացել Երևանի գեղարվեստական ուսումնարանում, Համամիութենական գեղարվեստական թատերական արվեստանոցում, Լենինգրադի Գեղարվեստների ակադեմիայում, որը ավարտել է 1931 թ.։ Հաջորդ տարվանից մասնակցել է ցուցահանդեսների։ Ստեղծել է գեղանկարչական և գծանկարչական բազմաթիվ գործեր, որոնցից նմուշներ պահվում են Հայաստանի պետական պատկերասրահի ու այլ թանգարանների մշտական էքսպոզիցիաներում։ Լավագույն գործերից են՝ «Գործագուլավորների միտինգը», «Գործազուրկները», «Ալավերդու պղնձաձուլարանը», «Սևան», «Սասունցի Դավիթ» էպոսի նկարազարդումները, «Գորգագործ Հրաչուհին», «Գիշերապահը»։ 1966 թ. Երևանի նկարչի տանը բացվել է նրա անհատական մեծ ցուցահանդեսը։

ՌԱՇՄԱՃՅԱՆ ՏԻԳՐԱՆ *(1861—1946).*— Մանկավարժ։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Կրթությունն ստացել է ծննդավայրում և 1880-ական թվականների կեսերից նվիրվել է մանկավարժական աշխատանքի։ Մոտ 60 տարի որպես ուսուցիչ և տեսուչ պաշտոնավարել է Անդրկովկասի ու Պարսկաստանի մի շարք քաղաքների հայկական դպրոցներում։ 1921—1929 թթ. Երևանի պետական համալսարանում դասախոսել է մանկավարժություն և հոգեբանություն։ Դասավանդել է նաև Երևանի մանկավարժական ինստիտուտում և այլ ուսումնական հաստատություններում։ Հրատարակել է դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ հայոց լեզվի ուսուցման վերաբերյալ։ Մանկավարժական հոդվածներ է տպագրել պարբերական մամուլում։

ՌԱՇՈՅԱՆ ՊԵՏՐՈՍ *(1913—1965).*— Քանդակագործ, քարգործ վարպետ։ Մասնագիտական կրթությունն ստացել է Լենինգրադի գեղարվեստների ակադեմիայում՝ 1930-ական թվականների սկզբներին։ 1932—1936 թթ. աշխատել է Ալ. Թամանյանի մոտ, մասնակցել է կառավարական տան, «Երևան» հյուրանոցի և այլ շենքերի քանդակազարդումներին։ 1957 թվականից ապրել է Կիրովականում։ Լավագույն գործերից են՝ «Երաժիշտը», «Տղամարդու դիմանկար», Ալեքսանդր Մյասնիկյանի հուշարձանը (Կիրովական)։ Նա է կատարել Կիրովականի քաղաքապետարանի շենքի բարձրաքանդակները (հեղինակ՝ Ղ. Զուբարյան)։

ՌԱՍՏԻ *(19-րդ դ.).*— Աշուղ։ Ծնվել է Գորիսում։ Բուն անունը եղել է Սերոբ։ Հորինել և կատարել է հայերեն երգեր, որոնցից նմուշներ տպագրված են Գ. Թարվերդյանի «Հայ աշուղներ» ժողովածուում (Երևան, 1936)։

ՌԱՍՏԿԱԼԵՆՅԱՆ ԹՈՐՈՍ *(ծն. 1934).*— Ինքնուս քանդակագործ։ Ծնվել է Հալեպում (Սիրիա)։ Մինչև 1962 թ. աշխատել է որպես երգչախմբի կատարող, կապվել է Սարյան ակադեմիայի հետ, ցերեկներն աշխատել, իսկ երեկոները քանդակել է։ 1965-ին Հալեպի արդյունաբերական ցուցահանդեսի վարչությունը նրան է վստահել տոնավաճառի ձևավորման գործը։ 1967-ին մեկնել է Փարիզ, ուսումնասիրել դասական արվեստի գործերը, բնակություն հաստատել Վալանս-Ռոմանի քաղաքում, զբաղվել փորագրական քանդակագործությամբ։ Հիմնականում աշխատել է մետաղի վրա։ Ցուցահանդեսներ է ունեցել Լիոնում, Վալանսում, նաև Փարիզում, 1969-ին և 1978-ին։ Նա է կերտել 1915 թ. ցեղասպանության կոթող-հուշարձանը Փրատոյի Հայոց եկեղեցու բակում։ Լավագույն գործերից են «Պարմանուհին», «Ֆիգուրա» և այլն։

ՌԱՖԱՅԵԼ ՂԱՐԱՄՅԱՆ *(1730—1795).*— Մշակութային գործիչ, մեկենաս։ Ծնվել է Նոր Ջուղայում (Իրան)։ Պատանի հասակից վաճառական հոր հետ տեղափոխվել է Հնդկաստան։ Կրթությունն ստացել է Կալկաթայի Փոնտիչերի անգլիական դպրոցում։ 1761 թ. մեկնել է Մադրաս, զբաղվել առևտրով։ Ուղևորվել է Չինաստան, Ֆիլիպինյան կղզիներ, Բենգալիա։ Մոտիկից կապված լինելով Վենետիկի Մխիթարյանների հետ, մեծապես նպաստել է նրանց հայագիտական և այլ հրատարակություններին։ Նրա նյութական միջոցներով են լույս տեսել Ռոլենի «Հռոմեական պատմության» 6 ստվարածավալ հատորների հայերեն գրաբար թարգմանությունները՝ 1816—1817 թթ., Մ. Չամչյանի «Հայոց պատմության» երեք հատորները և այլն։ Հայ դպրոցի պատմության մեջ տեղ է գրավել հատկապես այն մեծ նվիրատվությամբ, որով հիմնադրվել է Վենետիկի Ռաֆայելյան վարժարանը։ Այդ վարժարանը, որ հետագայում կոչվեց Մուրադ-Ռաֆայելյան, իր ավելի քան մեկդարյա գոյության ընթացքում խոշոր դեր է կատարել հայ երիտասարդությանը մայրենի կրթություն տալու, եվրոպական լեզուներին ու մշակույթին ծանոթացնելու գործում։ Այնտեղ են սովորել արևմտահայ գրականության, հրապարակախոսության, թատրոնի շատ դեմքեր։

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՄԱՅԻՍ *(ծն. 1939).*— Ռեժիսոր։ Ծնվել է Ստեփանավանի շրջանի Շահնազար գյուղում։ Մասնագիտական կրթություն ստացել է Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտում, ավարտել է 1964-ին և աշխատել Կիրովականի Հովհ. Աբեղյանի անվան պետական թատրոնում որպես ռեժիսոր։ 1968—1970 թթ. կատարելագործվել է Մոսկվայի Գեղարվեստական թատրոնում, Մ. Կեդրովի ղեկավարությամբ։ 1970 թ. նշանակվել է Արտաշատի Ամո Խաչատրյանի անվան պետական թատրոնի գլխավոր ռեժիսոր, իսկ 1973-ից աշխատել է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում որպես ռեժիսոր։ Վերոհիշյալ և այլ թատրոններում նրա բեմադրած պիեսներից են՝ «Բոռ», «Մեծապատիվ մուրացկաններ», «Մի բուռ մանրուք», «Աշխարհն, այո, շուռ է եկել», «Եղովպոս», «Սատանայի աշտարակը», «Արտասահմանյան փեսացուն», «Պատվի համար» և այլն։

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՄԿՐՏԻՉ *(1837—?).*— Դեբասան։ Ծնվել է Տրապիզոնում։ Կրթությունն ստացել է Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում։ Ավարտելից հետո վերադարձել է ծննդավայրը, զբաղվել ուսուցչությամբ։ 1861—1862 թթ. եղել է Տրապիզոնի հայկական թատրոնի նախաձեռնողը և գլխավոր դերակատարը՝ իր ներկայացրած մի շարք պիեսների։ Գրել է մի կատակերգություն, որը նույնպես բեմադրել է։ Աշխատակցել է «Մեղու», «Օրագիր», «Մեհմուտի ախպար», «Արևելք», «Բյուզանդիոն» և այլ պարբերականների։

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԻՄՈՆ *(1845—1908).*— Մշակութային գործիչ։ Ծնվել է Կ. Պոլսում, որտեղ ստացել է կրթությունը, զբաղվել ուսուցչությամբ, լրագրությամբ։ 1870-ական թվականներից հոդվածներ է տպագրել պոլսահայ մամուլում։ Կարճ ժամանակ խաղացել է Վարդովյանի թատերախմբում։ Հետագայում մեկնել է Փարիզ, հետևել բժշկության։ Այնտեղ մի քանի ընկերների հետ հիմնել է «Փարիզի Հայկազյան ուսումնասիրաց» ընկերությունը, որի նպատակն

է եղել օգնել աղքատ հայ ուսանողներին։ Ֆրանսերենից կատարել է թարգմանություններ, գերազանցապես պիեսներ («Կոմս Մոնթե Քրիստո», «Մարիոն Դելորմ», «Թափառական հրեա» և այլն), որոնք բեմադրվել են Հ. Վարդովյանի թատրոնում, 1870-ական թվականներին։

ՌԵԳԻՍՏԱՆ (ԷԼ-ՌԵԳԻՍՏԱՆ) ԳԱԲՐԻԵԼ (ՈՒՐԲԵՔՅԱՆ) (1899—1945).— Լրագրող, գրող։ Ծնվել է Սամարղանդում։ Երիտասարդ հասակից ապրել է Բաքվում, որտեղ մասնակցել է հորհրդային կարգերի հաղթանակի համար մղված կռիվներին։ Բաքվի կոմունայի անկումից հետո տեղափոխվել է Հայաստան։ 1924-ին Թիֆլիսի «Մաքոչայա պրավդա» թերթում տպագրվել է նրա առաջին գեղարվեստական ստեղծագործությունը։ Այդ տարիներից աշխատակցել է ռուսական մի քանի պարբերականների։ Հետագայում աշխատել է Սամարղանդում և Տաշքենդում որպես «Ուզբեկստանսկայա պրավդա» թերթի թղթակից, նաև «Իզվեստիայի» հատուկ թղթակիցը Միջին Ասիայում։ Ճանապարհորդել է Պամիր, Տյան-Շան, Ալթայ, Կարա-Կում, Կզըլ Կում։ Այդ վայրերից ստացած և գրի առած տպավորությունների հիման վրա են ստեղծվել «Սև լեռների գաղտնիքը», «Երբ մեռնում են էմիրները», «Վտարանդին» և «Ջուլբարս» կինոֆիլմերը։ Հրատարակել է «Պողպատե ճանկ» պատմվածքների և «Ֆերգանայի մեծ ջրանցքը», «Մոսկվա—Կարա—Կում—Մոսկվա» և այլ ակնարկների ժողովածուները։ Հանդիսանում է ԽՍՀՄ հիմնի հեղինակը (Ս. Միխայլկովի հետ)։

ՌԵԳԻՍՏԱՆ (ԷԼ-ՌԵԳԻՍՏԱՆ) ՀԱՐՈՒԴ (ծն. 1924).— Գրող, թարգմանիչ։ Ծնվել է Մոսկվայում։ Որդին է Գաբրիել Էլ-Ռեգիստան Ուրեքբյանի։ 1951-ին ավարտել է Մոսկվայի Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտը։ 1955—1975 թթ. վարել է «Սովետկի պիսատել» հրատարակչության ԽՍՀՄ ժողովուրդների պոեզիայի խմբագրությունը։ Հրատարակել է չափածո երկերի մի քանի ժողովածուներ՝ ռուսերեն լեզվով, ինչպես «Սեր և երգ» (1959), «Պարտքի ձայնը» (1972), «Երկրային ճանապարհ» (1980), «Ակնթարթ և հավերժություն» (1981) և այլն։ Նրա տեքստերով ստեղծվել են բազմաթիվ երգեր, որոնցից 35-ը գրված կինոֆիլմերի համար։ Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի թարգմանության համար 1982 թ. նրան շնորհվել է Հայկական ԽՍՀ Ե. Չարենցի անվան գրական մրցանակ։ Նրա որոշ ժողովածուները լույս են տեսել նաև հայերեն, ինչպես «Առաջին տերևաթափը» (Երևան, 1971), «Աստղերը ձյան մեջ» (1981) և այլն։

ՌԻԶԱԵՎ ՍԱԲԻՐ (1924—1980).— Թատերագետ, արվեստաբանության դոկտոր։ Ծնվել է Երևանում։ Յոթնամյա կրթությունն ստացել է Երևանում, միջնակարգն ավարտել է Մոսկվայում։ 1942—1945 թթ. ծառայել է խորհրդային բանակում։ Զորացրվելուց հետո վերադարձել է Երևան։ Աշխատել «Կոմունիստ» ռուսերեն թերթի խմբագրությունում։ 1947 թվականից սովորել է Երևանի թատերական ինստիտուտում, ավարտել 1951 թ., շարունակել ուսումը Լենինգրադի թատերական գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրայում։ Այնտեղ էլ պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ Վերադառնալով Երևան, 1954-ից աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում, նախ որպես ավագ խմբագիր սցենարական բաժնում, ապա նույն բաժնի վարիչ։ 1955 թվականից մինչև կյանքի վերջը աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում, նախ իբրև ավագ գիտաշխատակից, իսկ 1965-ից՝ դիրեկտորի տեղակալ՝ գիտական գծով։ Պաշտպանել է դոկտորական դիսերտացիա՝ «Ռեժիսուրան Հայաստանում» թեմայով։ Հայկական և ռուսական դիտական մամուլում, ժողովածուներում, կոլեկտիվ աշխատություններում տպագրել է ծավալուն հետազոտություններ, գերազանցապես խորհրդահայ թատրոնի և ռեժիսուրայի մասին։ Առանձին գրքերով, հայերեն և ռուսերեն լեզուներով լույս է ընծայել տասնյակ մենագրություններ, որոնցից են՝ «Մաքսիմ Գորկու դրամատուրգիան հայ բեմում» (Երևան, 1956), «Վավիկ Վարդանյան» (1957), «Ազգրնչանական թատրոնը Հայաստանում» (1963), «Հայկական գեղարվեստական կինեմատոգրաֆիան» (1963), «Բարեկամության էջերից» (Բաքու, 1964), «Ռեժիսուրան Հայաստանում» (1968), «Հրաչյա Ներսիսյան» (Մոսկվա, 1968), «Հրաչյա Դափլանյան» (1969), «Վարդան Աճեմյան» (1972) և այլն։ Գրել է «Հայ խորհրդային թատրոնի պատմություն» կոլեկտիվ աշխատության

ռեժիսուրային նվիրված ընդարձակ հատվածները և ռեժիսորներին նվիրված դիմանկարները։ Հեղինակն է «ԽՍՀՄ ժողովուրդների կինոն» բառահատոր աշխատության՝ Հայաստանի կինոյին նվիրված հատվածի։ Գրել է սցենարներ մի քանի ֆիլմերի համար։

ՌՇՏՈՒՆԻ ԱՆՏՈՆ.— Դերասան։ Ծնվել է Կ. Պոլսում։ Բեմական ասպարեզ է մտել 1873-ին։ Խաղացել է Հ. Վարդովյանի «Օսմանյան թատրոնում»։ Մասնակցել այդ խմբի թե հայերեն և թե թուրքերեն ներկայացումներին, կատարելով հիմնականում կատակերգական դերեր՝ արևմտատիպ պարոպական թարգմանական պիեսներում։ Մասնակցել է նաև մելոդրամաների («Պիեր տ'Արեցցո», «Լիոնի սուրհանդակը», «Մոնթե Քրիստո», «Թուլը Թերեզա» և այլն։ Ժամանակի մամուլը բարձր է գնահատել նրա Դանգլարը «Մոնթե Քրիստոյում»։ 1878—1879 թթ. Օրթագյուղի թատրոնում խաղալուց հետո թողել է բեմական ասպարեզը։

ՌՇՏՈՒՆԻ ԱՐԱՄ (ԲԵՐՈՅԱՆ) (1888—1963).— Դերասան, Հայկական ԽՍՀ վաստակավոր արտիստ։ Ծնվել է Թիֆլիսում։ Եղբայրն է դերասան Արտեմ Բերոյանի։ Կրթությունն ստացել է ծննդավայրում։ Բեմական ասպարեզ է մտել 1906 թ.։ Խաղացել է Թիֆլիսի հայկական տարբեր խմբերում, իսկ խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ Թիֆլիսի հայ դրամայում։ 1920-ական թվականների վերջերից երկար տարիներ աշխատել է Լենինականի Ա. Մռավյանի անվան պետական թատրոնում, որտեղ նրան շնորհվել է հանրապետության վաստակավոր արտիստի կոչում։ Տարիների ընթացքում կատարել է մի քանի տասնյակ դերեր, որոնցից են՝ Լենին («Հրացանավոր մարդը»), Հարպագոն («Ագահը»), Ռուլան («Առերեսում»), Լաերտ («Համլետ»), Կասիո («Օթելլո»), Օթարյան («Պատվի համար»), Մասիսյան («Խաթաբալա»), Հոֆմարշալ («Սեր և խարդավանք»), Կակուլի («Պեպո»), Սահակ աղա («Ժայռ»), Հիլդոն («Խնդության փողոց») և այլն։

ՌՇՏՈՒՆԻ ԳԱՐԵՆԻՆ (1840—1879).— Դերասան, դրամատուրգ։ Ծնվել է Բուխարեստում (Ռումինիա)։ Փոքր հասակից ծնողների հետ տեղափոխվել է Կ. Պոլիս, որտեղ ստացել է կրթություն, սովորել ս. Փրկչի ազգային հիմնադպրոցի դպրոցում։ 1858 թ. մեկնել է ծննդավայրը, զբաղվել ուսուցչությամբ։ 1860 թ. նորից է եկել Պոլիս, մի քանի տարի աշխատել դեղագործի մոտ, ապա իր բախտը կապել հայ թատրոնի հետ, ընդունվել է Հ. Վարդովյանի թատերախումբը, կատարել բացառապես կատակերգակ դերեր, աստիճանաբար դառնալով հայ բեմի լավագույն կատակերգակ դերասաններից մեկը։ Մեծ վարպետությամբ է խաղացել Մոլիերի կատակերգությունների գլխավոր հերոսների դերերը՝ Ժորժ Դանդեն, Արգան, Հարպագոն, պարոն Բուրսոնյակ և այլն։ Գրել է մի քանի կատակերգություն և զավեշտ, ինչպես «Վեցուկես պորտի ժառանգ մնացած սնդուկը», որ բեմադրվել է հաճախ իր մասնակցությամբ և տպագրվել է 1843 թ., «Թղթե վզնոցով սիրահարը», գրված ֆրանսերեն մի կատակերգության նմանությամբ, «Աղջկա մը օժիտը», «Նիքս, Նիքս», «Հայր Զոհրապ կարկատանյան» և այլն, որոնք բոլորն էլ բեմադրվել են Վարդովյանի թատրոնում, հեղինակի մասնակցությամբ։ Նա է գրել Տ. Զուխաջյանի «Քեռուն քեհյա» օպերետի լիբրետտոն և մասնակցել է նրա առաջին բեմադրությանը։ Հորինել է մի շարք կատակերգեր, որոնք իր ժամանակին հաճախ են կատարվել և վայելել լայն ժողովրդականություն, անգամ զետեղվել են երգարաններում, ինչպես «Կրամբամբուլի», «Զինվորի կորուստը», «Գեղ ատենն։ Մեռել է Թոքախտից, Սելանիկ քաղաքում, ծայր աստիճան թշվառության մեջ։

ՌՇՏՈՒՆԻ ԵՂԻԱԶԱՐ (1881—?).— Կրթական գործիչ։ Ծնվել է Ռշտունյաց գավառի Նոր գյուղում (Արևմտյան Հայաստան)։ 1895—1896 թթ. կոտորածների օրերին զրկվել է ծնողներից, 1896-ի աշնանից ապաստան գտել Վանի ամերիկյան միսիոներական որբանոց-դպրոցում։ Ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատել է Նարեկ գյուղում, ապա՝ Արճեշում։ Հետագայում 1903—1907 թթ. ուսումը շարունակել է Մարզվանի Անատոլիա կոլեջում, ավարտելուց հետո վերադարձել է Վան, որպես ուսուցիչ աշխատել ամերիկյան դպրոցում։ Հետագայում մեկնել է Անգլիա, Էդինբուրգի համալսարանում ստացել է բարձրագույն ուսում։ 1913-ին կրկին վերադարձել է Վան, պաշտոնավարել ամերիկյան նորաբաց կոլեջում և հայկական դպրոցում։ Առաջին համաշխարհա-

յին պատերազմից հետո ընտանիքով գաղթել է Ամերիկա։ Ունեցել է գրական-հրապարակախոսական բեղուն գործունեություն։ Երկար տարիներ աշխատակցել է «Հայաստանի կոչնակ», «Նոր օր», «Մշակ», «Արծուի Վասպուրական», «Լույս», «Ջահակիր» և այլ պարբերականների, գրելով պատմաբանասիրական-գեղարվեստական երկեր, թարգմանություններ, որոնք մնացել են մամուլի էջերում։

ԹՇՏՈՒՆԻ ՎԵՈՆԻԴ (1916—1971).— Դերասան։ Ծնվել է Թեհրանում (Իրան), որտեղ ստացել է նախնական կրթությունը։ 1931-ից ապրել է Երևանում։ Նույն տարվանից խաղացել է Երևանի Մ. Գորկու անվան բանվորական թատրոնում։ Հետագայում աշխատել է Հայաստանի և Ադրբեջանի հայկական տարբեր թատրոններում (Բաքու, Ստեփանակերտ, Աշտարակ, Ալավերդի, Կիրովական և այլն), իսկ ավելի ուշ՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվան և Պատանի Հանդիսատեսի թատրոններում։ Տարիների ընթացքում կատարել է մի քանի տասնյակ դերեր, որոնցից են՝ Պոլնվոյ («Բեկում»), Կոչակով («Ամուսնություն»), Ցիկ Ամրամ («Գեվորգ Մարզպետունի»), Ֆերդինանդ («Սեր և խարդավանք»), Սեաշերյան («Նույն հարկի տակ»), Թագավոր («Ոսկի քաղաք»), Նեգր Ջիմ («Թոմ Սոյերի արկածները») և այլն։

ԹՇՏՈՒՆԻ ՀԵԿՏՈՐ (ծն. 1915).— Բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր։ Ծնվել է Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում։ Միջնակարգ կրթությունն ստացել է Նոր Բայազետում (այժմ՝ Կամո), բարձրագույնը՝ Երևանի պետական համալսարանում, որի լեզվագրական ֆակուլտետի գրական բաժինն ավարտել է 1937-ին։ 1937—1949 թթ. հայոց լեզու է դասավանդել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում։ 1949—1961 թթ. դասախոսել է Լենինականի Մ. Նալբանդյանի անվան ինստիտուտում, 1974-ից՝ պրոֆեսորի աստիճանով։ 1972 թ. պաշտպանել է դոկտորական դիսերտացիա։ Առանձին գրքերով լույս ընծայած աշխատություններն են՝ «Գեղամ Սաբյան» (Երևան, 1958), «Դանիել Վարուժան» (1961), «Միամանթո» (1970, 1979) և այլն։

ԹՇՏՈՒՆԻ (ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ) ՊՈՂՈՍ (1875—1907).— Դերասան։ Ծնվել է Թիֆլիսում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, սովորել ռուսական գիմնազիայում, սակայն չավարտած մեկնել Պետերբուրգ, վեց ամիս հետևել դրամատիկական ստուդիայի դասընթացներին։ Վերադառնալով Թիֆլիս՝ խաղացել է հայկական տարբեր թատերախմբերում, սկսած 1900—1901 թատերաշրջանից։ Լավագույն դերերից են՝ Կասիո («Օթելլո»), Օթարյան («Պատվի համար»), Սենդի («Տրիլբի», Օսվալդ («Վիրաբան»)։

ԹՇՏՈՒՆԻ ՎԱՀԱՆ (1894—1970).— Պատմաբան. պատմական գիտությունների դոկտոր։ Հայկական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ։ Ծնվել է Վաղարշապատում։ Կրթությունն ստացել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որի լրիվ դասընթացն ավարտել է 1915 թ., զբաղվել ուսուցչությամբ։ Պաշտոնավարել է Թավրիզի, Ախալցխայի, Սուխումի, Թիֆլիսի հայկական դպրոցներում։ 1919—1924 թթ. սովորել է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի անտեսագիտական ֆակուլտետում։ 1924 թ. եկել է Երևան, աշխատել կուսակցական դպրոցում, միաժամանակ Սոցիալիզմի պատմություն դասավանդել Երևանի պետական համալսարանում։ 1930—31 ուսումնական տարվանից մինչև իր կյանքի վերջը եղել է պետական համալսարանի ԽՍՀՄ ժողովուրդների պատմության ամբիոնի վարիչը։ Եղել է համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, ուսումնական մասի վարիչ։ 1938—1954 թթ. համատեղության կարգով աշխատել է Արմֆանի, իսկ 1943 թվականից գիտությունների ակադեմիայի, պատմության ինստիտուտում։ 1957 թ. ընտրվել է Հայկական ԽՍՀ ԳԱ-ի թղթակից անդամ։ 1940 թվականից սկսած լույս է ընծայել պատմագրական աշխատություններ։ Առանձին գրքերով հրատարակած հետազոտություններն են. «Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում 1870 թվականին (Երևան, 1947, ռուսերեն), «Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության» (Ա. մաս, 1960, Բ. մաս, 1968), «Հայ հասարակական հոսանքների պատմությունից» (1956)։ Հրատարակել է նաև «Գյուղացիական շարժումը Հայաստանում XIX դարում» (1948, ռուսերեն) և «Ցարիզմի ագրարային քաղաքականությունը և գյուղացիական շարժումը Հայաստանում XX դարի սկզբին (1951, ռուսերեն) արխիվային փաստաթղթերի ժողովածուները։ Հեղինակակից է «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի V և VI հատորների։

ՌՈՍՏՈՄ (ՄԱԴԱԹՈՎ) (19-րդ դ.).— Աշուղ։ Գրել է հայերեն տաղեր, որոնցից նմուշներ պահվում են Երևանի Մատենադարանում։ Նրա մի նվագ-երգն էլ ուղղված ոմն Իսայու, տպագրվել է Գ. Ախվերդյանի «Հայ աշուղներ» ժողովածուի Բ. գրքում (Թիֆլիս, 1903)։

ՌՈՍՏՈՄՅԱՆ ԴԱՎԻԹ (1815—1869).— Հասարակական, մշակութային գործիչ, բանաստեղծ։ Ծնվել Թիֆլիսում, որտեղ ստացել է նախնական կրթությունը, իսկ բարձրագույնը՝ Մոսկվայի հանրապետանում, որի բժշկական ֆակուլտետն ավարտել է 1840 թ.։ Վերադարձել է Կովկաս աշխատել Բաքվում որպես նահանգային բժշկ։ Ունեցել է հասարակական, մշակութային գործունեություն։ Աշխատակցել է Կովկաս ռուսական և հայկական մամուլին։ Գրել է «Տեղագրություն Բաքվա» հետազոտությունը, որը տպագրվել է արևելահայերի առաջին թերթում՝ «Կովկասում», 1847 թ. և նույն տարում արտատպվել է Պոլսի «Հայաստան» թերթում հեղինակին ծանոթացնող գրվատական բառերությունններով։ Ավելի արժեքավոր է նրա «Ասարակաց բժշկականություն» աշխատությունը, որը լույս է տեսել նախ «Կռունկ հայոց Խարհին» ամսագրում, ապա՝ առանձին գրքույկ (1862)։ Ռուսերենից կատարել է թարգմանություններ, որոնք նույնպես տպագրվել «Հյուսիսափայլում» և «Կռունկում»։ Դրանցից՝ «Մոհամմեդը և Իսլամի ծունդը», Ժուկովսկու «Տասներկու քնած աշշիկները»։ Հիմնականում նրա ջանքերով է, որ 1862-ին հիմնադրվել Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը, որը գործել է երկար տարիներ և խոշոր դեր է կատարել արևելահայերի հասարակականությանում։

ՌՈՍԱ (14-րդ դ.).— Մանրանկարիչ։ Ապրել Լասպուրականում։ Նկարազարդել է 1397 թվականին գրված մի Ավետարան, որը պարունակում է «Պետրոսի ուրացումը», «Քրիստոսի երբրակալությունը» և այլ նկարներ, կատարվրարձր որակով։

ՌՈՍԻԿ ԴԱՍԳԱՐ.— Ճարտարապետ։ Ծնվել է Նիկայի Ուստր քաղաքում, որտեղ ստացել սանագիտական բարձրագույն կրթությունը։ Կատել ամերիկյան նախագծային մի ընկերությունում։ Նախագծել է տասնյակ շենքեր՝ եկեղեցիներ, դպրոցներ, հասարակական օգտագործման վայրեր։ Մասնակցել է Ուստրի քաղաքապետարանի կողմից 1930 թ. այդ քաղաքի ամենամեծ շենքերից մեկի Մունիցիպալ մեմորիալ օդիթորիումի նախագծման համար հայտարարված մրցույթին։ Մրցման մասնակցող 21 ընկերությունների պատկանող ճարտարապետներից չորսն է շահել մրցանակը, որոնցից մեկը եղել է նա։ Ամերիկյան մամուլը գովեստով է խոսել նրա այդ նախագծման մասին։

ՌՈՒԻԿՅԱՆ ՀՐԱՉՅԱ (ծն. 1915).— Նկարիչ։ Հայկական ԽՍՀ վաստակավոր նկարիչ։ Ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Մասնագիտական կրթությունն ստացել է Երևանի Գեղարվեստեխնիկումում։ 1936-ից շարունակել է Վրաստանի գեղարվեստների ակադեմիայում, որի վերջին կուրսից մեկնել է խորհրդային բանակ, մասնակցել մարտական գործողություններին։ 1945 թ. Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակի առթիվ հայտարարված մրցույթում նրա «Սայաթ-Նովա» դիմանկարը արժանացել է առաջին մրցանակի։ 1948-ից մասնակցել է հանրապետական, հետագայում նաև միութենական և արտասահմանյան բազմաթիվ ցուցահանդեսների։ Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երևանում՝ 1951-ին, 1962-ին, 1966-ին և այլն, Մոսկվայում՝ 1963-ին և 1967-ին, Թիֆլիսում՝ 1971-ին։ Նրա գործերը ցուցադրվել են Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներում (Լենինական, Կիրովական, Ստեփանավան, Ալավերդի, Ղափան և այլն)։ Լավագույն գործերից են՝ «Ստեփան Շահումյանի առաջին հանդիպումը Վ. Ի. Լենինի հետ Շվեյցարիայում», Գյումուշգեխի, Աթաբեկյանի, Արզնի հիդրոէլեկտրակայանների կառուցումներին նվիրված նկարաշարքը, արդյունաբերության և գյուղատնտեսության առաջավոր բազմաթիվ մարդկանց՝ ինչպես և Ստ. Շահումյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Կոմիտասի, Ա. Պուշկինի, Սայաթ-Նովայի, Մեսրոպ Մաշտոցի, Գր. Նարեկացու, Մ Խորենացու, Ա. Շիրակացու, Սահակ Պարթևի, այլ ականավոր դեմքերի դիմանկարները, Մեծամոր Արևելք կատարած ճանապարհորդության տպավորությունները ներկայացնող նկարաշարքը, բնանկարներ, կոմպոզիցիոն գործեր, Հայաստանի պատմական

հուշարձանների շարքը, որից 16 նկարներ 1974-ին տպագրվել են բացիկների վրա։ Նույն տարում Երևանում տպագրվել է նրա ստեղծագործությունների հոխ ալբոմը։

ՌՈՒՍԻՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ *(1819—1876)*.— Հասարակական, մշակութային գործիչ, բանաստեղծ։ Ծնվել է Կեսարիայի գավառի Էֆքերե գյուղում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Կ. Պոլսի Սկյուտար թաղամասի հայկական դպրոցում։ Հետագայում Պալյան և Սերվերյան ամիրաների նյութական օժանդակությամբ մեկնել է Ֆրանսիա, սովորել Փարիզի Սեն Բարբի կոլեջում, ապա ավարտել է բժշկական համալսարան։ Այնտեղից էլ սկսել է հասարակական գործունեությունը, խանդավառված 1848 թ. ֆրանսիական հեղափոխության գաղափարներով։ 1849 թ. Հակոբ Պալյանի, Հովսեփ Շիշմանյանի և այլ ուսանողների հետ Փարիզում հիմնել է «Արարատյան» ընկերությունը, որի ծրագիրն է եղել նպաստել հայ ժողովրդի առաջադիմությանը։ 1850 թ. վերադարձել է Պոլիս, ամբողջովին նվիրվել կրթական լուսավորական աշխատանքի, դառնալով այդ շարժման ղեկավար դեմքերից մեկը՝ Գր. Օտյանի և այլոց հետ։ Ընտրվել է Ուսումնական խորհրդի անդամ։ Այդ խորհրդի համաձայնությամբ, պատրիարքարանից գաղտնի, 1853 թ. հրատարակել է «Ուղղախոսություն» գիրքը, որտեղ առաջարկել է գրաբարի փոխարեն աշխարհաբարին զարկ տալ և առաջարկել է աշխարհաբարի իր համառոտ քերականությունը։ Նրա այդ գիրքը իր հախուռն առաջարկներով մեծ աղմուկ է բարձրացրել ոչ միայն պահպանողական, այլև առաջադիմական շրջանակներում։ Հակառակ այդ ընդդիմությանը՝ 1855 թ. հրատարակել է մի «Տարեցույց», որտեղ ֆրանսիական հեղափոխության առաջին շրջանի նորամուծությունների օրինակով՝ հայացրել է ամսանունները և տարվա չորս եղանակների անունները։ Պատրիարքարանը արգելել է նրա «Տարեցույցը», իսկ մամուլը ծաղրել նրա քմահաճ նորամուծությունները։ Հարկադրված՝ միաժամանակ քաշվել է մշակութային կյանքից, աշխատել «Դաղետ մետիցիկլ ի Օրիան» բժշկական հանդեսի խմբագրությունում։ Արևմտահայերի ազգային սահմանադրության նախապատրաստման շրջանում՝ 1860-ից կրկին մղվել է գեպի հայ կյանքը, եղել է այդ սահմանադրության տեքստի ստեղծողներից Գրիգոր Օտյանի հետ միասին, նաև նույն սահմանադրության հետագա մշակումների հեղինակը։ Մասնակցել է «Բարեգործական» և «Հայ երաժշտական ընկերության» աշխատանքներին։ 1872 թ. նորից է հրատարակել «Տարեցույցը»։ Կազմել է փիլիսոփայության մի դասագիրք, որը լույս է տեսել հետմահու՝ 1879 թ.՝ Գրիգոր Օտյանի առաջաբանով։ Գրել է հայրենասիրական և քնարական բանաստեղծություններ, որոնցից հայտնի «Կիլիկիան» ավելի քան մեկ դար է, որ երգվում է ամենուր։

ՌՈՒՍՏԱՄ (ՌՈՍՏՈՄ ՌԱԶԱ) *(1780—1845)*.— Զինվորական, պետական գործիչ։ Նվել է Թիֆլիսում՝ զարբաղցի հայ վաճառական Հովնանի ընտանիքում։ Պատանի հասակում թիվա հազարավոր հայերի, տարվել է Պարսկաստան, վաճառվել որպես գերի։ Այնտեղից նրն տեղափոխել են Կ. Պոլիս, վաճառել ։ բեգի։ Վերջինս նրան տարել է Մեքքա, ապ Կահիրե (Եգիպտոս), վաճառել Շելխ Ալ աքրիին։ 1798-ին, երբ Նապոլեոն 1-ինը հարկվել է Եգիպտոսի վրա, պատերազմել մամլուքների դեմ, Ալ Բաքրին նրան նվիրել է Նապոլեոնին։ Վերջինս, իմանալով նրա քրիստոնյա լինելը, միաժամանակ հրապուրվելով առնական գեղեցկությամբ, մարտունակությամբ, իր ո տարել է Փարիզ, դարձրել թիկնապահը՝ տարի բացառիկ հավատարմությամբ ծառայել է Նապոլեոնին։ Ուղեկցել է նրան բոլոր ավանքների ընթացքում։ 1814 թ., երբ կաը աքսորվել է Էլբա կղզին, ցանկացել է, փր հետ լինի նաև հավատարիմ թիկնապահը։ Սակայն վերջինս մերժել է ուղեկցել նրան։ Ացել է Փարիզում։ Կա ենթադրություն, թե դրից հետո նա մեկնել է Իրան, այնտեղից՝ ովկաս, Թիֆլիսում ընդունվել է Ա. Երմոլովյոդմից, նրա համաձայնությամբ մասնակ ռուսպարսկական պատերազմին, Ղարաբ։ ազատագրումից հետո միաժամանակ ել է Շուշիում։ Մեկ էլ նա Փարիզում ացել է 1840 թվականին, Նապոլեոնի աճյուս. Հեղինե կղզուց Փարիզ տեղափոխող լարկավորական թափորում։ Դրանից հետոտանիքի հետ ապրել է Ֆրանսիայի Դուրդանակավայրում։ Գրել է իր արժեքավոր հիշողությունները, որոնք լույս են տեսել մա *(1845)*

հետո՝ 1866-ին, Փարիզում, «Նապոլեոն 1-ինի մամլուկ Ռուստամի հուշերը» խորագրով, ստորագրված Ռ. Ռ.։ Նրա այդ հուշերը հետագայում արտատպվել են քանիցս, թարգմանվել այլ լեզուներով, օգտագործվել նապոլեոնագետների կողմից։ Հայերեն մասնակի թարգմանությունը տես՝ «Բազմավեպ», 1911, սեպտեմբեր-հոկտեմբեր, ԳԱ «Տեղեկագիր», 1983։

ՌՈՒՍՏԵՄԱՍ ՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ) *(1760—1835)*.— Ծագումով հայ լեհական նկարիչ։ Ծնվել է Կ. Պոլսի Պերա թաղամասում, Հայրը եղել է հայ, մայրը՝ ֆրանսուհի։ 1774 թ. հայրը նրան հանձնել է կաթոլիկ հոգևորական Ադամ Զերտորիյսկուն, որպեսզի տանի Լեհաստան և կրթություն տա։ Այս նոր վայրում՝ Վարշավայում նա իր Հովհաննես անունը դարձրել է լեհական Յան։ Վարշավայում ստացել է բազմակողմանի կրթություն, աշակերտել հայտնի նկարիչ Նորիլենին։ Նախ ընդօրինակումներ է արել Միքելանջելոյից և Ռաֆայելից, խորապես ազդվելով Վերածնդի դարաշրջանի իտալական արվեստից, հետո արդեն մշակել է իր ուրույն ոճը և ստեղծել բազմաթիվ դիմանկարներ։ 1798 թ. նրան հրավիրել են Վիլնյուս՝ նկարչական դպրոցում դասավանդելու, տալով վիցեպրոֆեսորի կոչում։ 1803 թ. նկարչական այդ դպրոցը դարձել է Վիլնյուսի համալսարանին կից՝ բարձրագույն դասընթաց, իսկ ինքը 1807 թ. նշանակվել է համալսարանի նկարչական բաժնի ղեկավար։ 1825-ին նրան շնորհվել է վաստակավոր պրոֆեսորի կոչում։ Այդ համալսարանում նրան աշակերտել են լեհ, լիտվացի և բելոռուս շատ նկարիչներ, որոնք հետագայում տիրացել են մեծ համբավի։ Կա կարծիք, որ նրան աշակերտել է նաև Տարաս Շևչենկոն։ 1832 թ. ցարական կառավարությունը փակել է Վիլնյուսի համալսարանը՝ նախորդ տարի բռնկված ապստամբության պատճառով։ Նրա նկարներից մի քանիսի արտատպությունը տես «Սովետական արվեստ» ամսագրի 1970 թ. մայիսի համարում։

հուշարձանների շարքը, որից 16 նկարներ 1974-ին տպագրվել են բացիկների վրա։ Նույն տարում Երևանում տպագրվել է նրա ստեղծագործությունների ճոխ ալբոմը։

ՌՈՒՍԻՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ *(1819—1876)*.— Հասարակական, մշակութային գործիչ, բանաստեղծ։ Ծնվել է Կեսարիայի գավառի Էֆքերե գյուղում (Թուրքիա)։ Կրթությունն ստացել է Կ. Պոլսի Սկյուտար թաղամասի հայկական դպրոցում։ Հետագայում Պալյան և Սերվերյան ամիրաների նյութական օժանդակությամբ մեկնել է Ֆրանսիա, սովորել Փարիզի Սեն Բարբի կոլեջում, ապա ավարտել է բժշկական համալսարան։ Այնտեղից էլ սկսել է հասարակական գործունեությունը, խանդավառված 1848 թ. ֆրանսիական հեղափոխության գաղափարներով։ 1849 թ. Հակոբ Պալյանի, Հովսեփ Շիշմանյանի և այլ ուսանողների հետ Փարիզում հիմնել է «Արարատյան» ընկերությունը, որի ծրագիրն է եղել նպաստել հայ ժողովրդի առաջադիմությանը։ 1850 թ. վերադարձել է Պոլիս, ամբողջովին նվիրվել կրթական լուսավորական աշխատանքի, դառնալով այդ շարժման ղեկավար դեմքերից մեկը՝ Գր. Օտյանի և այլոց հետ։ Ընտրվել է Ուսումնական խորհրդի անդամ։ Այդ խորհրդի համաձայնությամբ, պատրիարքարանից գաղտնի, 1853 թ. հրատարակել է «Ուղղախոսություն» գիրքը, որտեղ առաջարկել է գրաբարի փոխարեն աշխարհաբարին զարկ տալ և առաջարկել է աշխարհաբարի իր համառոտ քերականությունը։ Նրա այդ գիրքը իր հախուռն առաջարկներով մեծ աղմուկ է բարձրացրել ոչ միայն պահպանողական, այլև առաջադիմական շրջանակներում։ Հակառակ այդ ընդդիմությանը՝ 1855 թ. հրատարակել է մի «Տարեցույց», որտեղ ֆրանսիական հեղափոխության առաջին շրջանի նորամուծությունների օրինակով՝ հայացրել է ամսանունները և տարվա չորս եղանակների անունները։ Պատրիարքարանը արգելել է նրա «Տարեցույցը», իսկ մամուլը ծաղրել նրա քմահաճ նորամուծությունները։ Հարկադրված՝ միաժամանակ քաշվել է մշակութային կյանքից, աշխատել «Գազետ մետրիկել դ Օրիան» բժշկական հանդեսի խմբագրությունում։ Արևմտահայերի ազգային սահմանադրության նախապատրաստման շրջանում՝ 1860-ից կրկին մղվել է դեպի հայ կյանքը, եղել է այդ սահմանադրության տեքստի ստեղծողներից Գրիգոր Օտյանի հետ միասին, նաև նույն սահմանադրության հետագա մշակումների հեղինակը։ Մասնակցել է «Բարեգործական» և «Հայ երաժշտական ընկերության» աշխատանքներին։ 1872 թ. նորից է հրատարակել «Տարեցույցը»։ Կազմել է փիլիսոփայության մի դասագիրք, որը լույս է տեսել հետմահու՝ 1879 թ.՝ Գրիգոր Օտյանի առաջաբանով։ Գրել է հայրենասիրական և քնարական բանաստեղծություններ, որոնցից հայտնի «Կիլիկիան» ավելի քան մեկ դար է, որ երգվում է ամենուր։

ՌՈՒՍՏԱՄ (ՌՈՍՏՈՄ ՌԱԶԱ) *(1780—1845)*.— Զինվորական, պետական գործիչ։ Ծնվել է Թիֆլիսում՝ զարաբաղցի հայ վաճառական Հովնանի ընտանիքում։ Պատանի հասակում, ի թիվս հազարավոր հայերի, տարվել է Պարսկաստան, վաճառվել որպես գերի։ Այնտեղից նրան տեղափոխել են Կ. Պոլիս, վաճառել մի բեգի։ Վերջինս նրան տարել է Մեքքա, ապա՝ Կահիրե (Եգիպտոս), վաճառել Շեյխ Ալ Բաքրիին։ 1798-ին, երբ Նապոլեոն 1-ինը հարձակվել է Եգիպտոսի վրա, պատերազմել մամլուկների դեմ, Ալ Բաքրին նրան նվիրել է Նապոլեոնին։ Վերջինս, իմանալով նրա քրիստոնյա լինելը, միաժամանակ հրապուրվելով առնական գեղեցկությամբ, մարտունակությամբ, իր հետ տարել է Փարիզ, դարձրել թիկնապահը։ 16 տարի բացառիկ հավատարմությամբ ծառայել է Նապոլեոնին։ Ուղեկցել է նրան բոլոր արշավանքների ընթացքում։ 1814 թ., երբ կայսրը աքսորվել է Էլբա կղզին, ցանկացել է, որ իր հետ լինի նաև հավատարիմ թիկնապահը, սակայն վերջինս մերժել է ուղեկցել նրան։ Մնացել է Փարիզում։ Կա ենթադրություն, թե դրանից հետո նա մեկնել է Իրան, այնտեղից՝ Կովկաս, Թիֆլիսում ընդունվել է Ա. Երմոլովի կողմից, նրա համաձայնությամբ մասնակցել ռուս-պարսկական պատերազմին, Ղարաբաղի ազատագրումից հետո միաժամանակ ապրել է Շուշիում։ Մեկ էլ նա Փարիզում երևացել է 1840 թվականին, Նապոլեոնի աճյունը ս. Հելենե կղզուց Փարիզ տեղափոխող հուղարկավորական թափորում։ Դրանից հետո ընտանիքի հետ ապրել է Ֆրանսիայի Դուրդան բնակավայրում։ Գրել է իր արժեքավոր հիշողությունները, որոնք լույս են տեսել մահից (1845)

հետո՝ 1866-ին, Փարիզում, «Նապոլեոն 1-ինի մամլուկ Ռուստամի հուշերը» խորագրով, ստորագրված Ռ. Ռ.։ Նրա այդ հուշերը հետագայում արտատպվել են քանիցս, թարգմանվել այլ լեզուներով, օգտագործվել նապոլեոնագետների կողմից։ Հայերեն մասնակի թարգմանությունը տես՝ «Բազմավեպ», 1911, սեպտեմբեր-հոկտեմբեր, ԴԱ «Տեղեկագիր», 1983։

ՌՈՒՍՏԵՄԱՍ ՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ) *(1760—1835)*.— Ծագումով հայ լեհական նկարիչ։ Ծնվել է Կ. Պոլսի Պերա թաղամասում։ Հայրը եղել է հայ, մայրը՝ ֆրանսուհի։ 1774 թ. հայրը նրան հանձնել է կաթոլիկ հոգևորական Ադամ Զերտորիսկուն, որպեսզի տանի Լեհաստան և կրթություն տա։ Այս նոր վայրում՝ Վարշավայում նա իր Հովհաննես անունը դարձրել է լեհական Յան։ Վարշավայում ստացել է բազմակողմանի կրթություն, աշակերտել հայտնի նկարիչ Նորիլենին։ Նախ ընդօրինակումներ է արել Միքելանջելոյից և Ռաֆայելից, խորապես ազդվելով Վերածննդի դարաշրջանի իտալական արվեստից, հետո արդեն մշակել է իր ուրույն ոճը և ստեղծել բազմաթիվ դիմանկարներ։ 1798 թ. նրան հրավիրել են Վիլնյուս՝ նկարչական դպրոցում դասավանդելու, տալով վիցեպրոֆեսորի կոչում։ 1803 թ. նկարչական այդ դպրոցը դարձել է Վիլնյուսի համալսարանին կից՝ բարձրագույն դասընթաց, իսկ ինքը 1807 թ. նշանակվել է համալսարանի նկարչական բաժնի ղեկավար։ 1825-ին նրան շնորհվել է վաստակավոր պրոֆեսորի կոչում։ Այդ համալսարանում նրան աշակերտել են լեհ, լիտվացի և բելոռուս շատ նկարիչներ, որոնք հետագայում տիրացել են մեծ համբավի։ Կա կարծիք, որ նրան աշակերտել է նաև Տարաս Շևչենկոն։ 1832 թ. ցարական կառավարությունը փակել է Վիլնյուսի համալսարանը՝ նախորդ տարի բռնկված ապստամբության պատճառով։ Նրա նկարներից մի քանիսի արտատպությունը տես «Խորհրդային արվեստ» ամսագրի 1970 թ. մայիսի համարում։

Գրական-գեղարվեստական հրատարակություն

Գառնիկ Խաչատուրի Ստեփանյան

Կենսագրական բառարան 3 հատորով

Հատոր 3-րդ

Литературно-художественное издание

Гарник Хачатурович Степанян

БИОГРАФИЧЕСКИЙ СЛОВАРЬ В 3-х ТОМАХ

том 3-й

Ереван, издательство «Хорурдаин грох»

На армянском языке

Խմբ. վարիչ՝ **Ստ. Է. Թոփչյան**

Խմբագիր՝ **Ռ. Կ. Ղարիբյան**

Նկարիչ՝ **Հ. Մ. Մատուրյան**

Գեղ. խմբագիր՝ **Հ. Ս. Մալխասյան**

Տեխն. խմբագիր՝ **Մ. Է. Ճանճապանյան**

Վերատուգող սրբագրիչ՝ **Հ. Ն. Զորյան**

ՀԱԲ 6408

Հանձնված է շարվածքի՝ 19.04.1989 թ.։ Ստորագրված է տպագրության՝ 15.08.1990 թ.։ ՎՖ 06462։ Ֆորմատ՝ 70×90¹/₁₆։ Թուղթ՝ տպագրական № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 23,4 պայմ. տպ. մամ., 29,0 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 5000։ Պատվեր՝ 1093։ Գինը՝ 2 ռ. 50 կոպ.։

«Խորհրդային գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Хорурдаин грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван-9, ул. Теряна, 91.